ՌՈՒՍ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

БИБЛИОТЕКА РУССКОЙ КЛАССИКИ

Н. В. ГОГОЛЬ



Избранные произведения

ИЗДАТЕЛЬСТВО
«СОВЕТАКАН ГРОХ», ЕРЕВАН—1982

Ն. Վ. ԳՈԳՈԼ



ԳԱՏԻՐ ԵՐԿԵՐ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ, 1982

ԳՄԴ 84Ռ1
Գ 726

Կազմեց և վերլուծանը գրեց՝
Կարեն Մկրտչյանը

Գոգոլ, Ն. Վ.։
Գ 726 Ընտիր երկեր. Թարգմ. ռուս. (Կազմ. Կ. Մկրտչյանը)։ Եր.։ Սովետ. գրող, 1982, 752 էջ.
Ժողովածուն ընդգրկում է ռուս մեծ գրողի «Մեռած հոգիները» պոեմը, «Տարաս Բուլբա» վիպակը, «Շինելը» պատմվածքը և «Ռևիզոր» կատակերգությունը։

4702010100 (882)
Գ ——————— 82 «Տ»
705 (01) 82

ԳՄԴ 84Ռ1
Գ1

© «Սովետական գրող» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1982

ՄԵՌԱԾ ՀՈԳԻՆԵՐ

Հատոր առաջին

ԳԼՈՒԽ I

N N նահանգական քաղաքի հյուրանոցի դարպասից ներս մտավ բավական գեղեցիկ, ռեսորավոր և ոչ մեծ մի բրիչկա, որ բանեցնում են ամռան պաշտոնաթող փոխգնդապետները, շտաբսկապիտանները, հարյուր հոգու չափ գյուղացի ունեցող կալվածատերերը, մի խոսքով՝ բոլոր նրանք, որոնց ասում են միջին կարողության տեր մարդիկ։ Բրիչկայի մեջ նստած էր մի պարոն՝ ոչ գեղեցիկ, բայց և ոչ վատ արտաքինով, ո՛չ չափազանց գեր, ո՛չ չափազանց նիհար։ Չէր կարելի ասել ծեր, բայց ոչ էլ այնպես՝ թե չափազանց երիտասարդ։ Նրա քաղաք մտնելը կատարելապես ոչ մի աղմուկ չառաջացրեց և ոչ մի առանձին բանի հետ չզուգադիպեց, միայն երկու ռուս մուժիկ, որ կանգնել էին հյուրանոցի դեմի փենետան դռանը՝ ինչ-ինչ դիտողություններ արին, որ սակայն ավելի կառքին էր վերաբերում, քան նրա մեջ նստողին։ «Տեսնո՞ւմ ես», ասաց մեկը մյուսին. «մտի՛կ էն ակին. խելքդ ի՞նչ է կտրում, էդ ակը տեզն եկած տեղը մինչև Մոսկվա կհասցնի՞ թե չի հասցնի»։— «Կհասցնի»,— պատասխանեց մյուսը։ «Իսկ Կազան հո՝ իմ խելքով, վայ թե չհասցնի»։ «Կազան չի հասցնի»,— պատասխանեց մյուսը։— Դրանով էլ զրույցը վերջացավ։ Եվ մեկ էլ, երբ բրիչկան մոտեցավ հյուրանոցին, պատահեց մի երիտասարդ՝ հագին սպիտակ կանիֆասե շատ նեղ ու կարճ անդրավարտիք, ֆրակ՝ մոդայի հավակնություններով, որի տակից երևում էր շապիկի օձիքը՝ կոճկած Տուլայի քորո-

ցով, վրան՝ բրոնզե ատրճանակ։ Երիտասարդը շուռ եկավ ետ, նայեց կառքին, ձեռքով բռնեց կարտուզը[1], որ քիչ էր մնում քամին թռցնի, և գնաց իր ճամփով։

Երբ կառքը մտավ բակը, պարոնին ընդառաջ եկավ պանդոկի ծառան կամ «պոլովոյը», ինչպես նրանց անվանում են ռուսական տրակտիրներում, այն աստիճան ժիր ու արագաշարժ, որ չէր կարելի որոշել, թե ի՛նչ տեսակ դեմք ուներ։ Նա արագ դուրս վազեց անձեռոցիկը ձեռին, ինքը երկարահասակ և մի երկար կիսակոտոն սերթուկ էլ հագին, որը թիկունքում քիչ էր մնում ծոծրակին հասնի, թափահարեց մազերը և պարոնին արագ վեր տարավ տախտակե միջանցքով՝ նրան ցույց տալու աստծուց առաքված օթևանը։— Սենյակը հայտնի տեսակի էր, քանի որ հյուրանոցն էլ հայտնի տեսակի էր, այսինքն այնպես, ինչպես լինում են հյուրանոցները նահանգական քաղաքներում, ուր օրական երկու ռուբլով ուղևորներն ստանում են մի հանգստի սենյակ՝ բոլոր անկյուններից սևաշլորների պես մոխիկ տվող տարականներով և միշտ կամողը առջևը դրած դռնով դեպի հարևան սենյակը, ուր տեղավորվել է հարևանդ՝ մի լռակյաց ու հանգիստ մարդ, բայց չափազանց հետաքրքրասեր, որ ուզում է իմանալ քեզ վերաբերող բոլոր մանրամասնությունները։ Հյուրանոցի արտաքին ճակատը համապատասխան էր նրա ներքին մասերին. երկար էր շատ, երկհարկանի. ներսը սվաղած չէր և մութ կարմիր աղյուսները բաց էին մնացել, որ ավելի խունացել էին եղանակի փոփոխություններից և ինքնըստինքյան արդեն կեղտոտ էին. վերևի մասը ներկված էր մշտատև դեղին գույնով. ներքևում ձիալուծի, թոկերի և սրնքակապերի խանութներ էին։ Դրանցից անկյունի խանութում՝ կամ լավ է ասենք՝ պատուհանում, տեղավորված էր մեղրաթերմոն ծախողը, կարմիր պղնձե, երեսն էլ հենց ինքնաեռի պես կարմիր, այնպես որ հեռվից կարելի էր կարծել, որ պատուհանում՝ երկու ինքնաեռ էր դրված, եթե նրանցից մինը կուպրի պես սև մորուք չունենար։

Մինչ եկվոր պարոնը զննում էր իր սենյակը՝ նրա իրերը ներս բերին. նախ և առաջ՝ մի սպիտակ կաշվե ճամպրուկ՝ մի քիչ քաշքշած-բանեցրած, որ ցույց էր տալիս, թե առաջին

[1] կարտուզ — գլխարկի մի տեսակը։

անգամը չէ, որ ճանապարհ է գնացել ճամպրուկը ներս բերին. կառապան Սելիֆանը՝ մի կարճահասակ տուլուպավոր մարդ, և ծառա Պետրուշկան՝ երեսուն տարեկան մի տղա, հագին լայնեղ մաշված մի սերթուկ, ինչպես երևում էր՝ պարոնի բանեցրածը, մի երիտասարդ, որ խիստ մարդու տպավորություն էր թողնում, շատ խոշոր շրթունքներով ու քթով։ Ճամպրուկից հետո ներս բերվեց մի փոքր, կարմիր փայտե արկղիկ՝ կարելյան կեչիի տեսակ-տեսակ դրվագներով, կոշիկի կաղապարներ ու կապույտ թղթով փաթաթած մի տապակած հավ։ Երբ այդ ամենը ներս էր բերված՝ կառապան Սելիֆանը ուղղվեց դեպի ախոռը՝ ձիերին նայելու, իսկ ծառա Պետրուշկան սկսեց իր տեղը սարքել փոքրիկ հաշտում, շատ մութ մի շինարնում, ուր արդեն քարշ էր տվել իր շինելը և նրա հետ միասին ինչ-որ մի սեփական հոտ, որը հաղորդվել էր նաև նրանից հետո ներս բերած տոպրակին, ծառայի զանազան արդուզարդի պարագաները մեջը։ Այդ շինարնում նա պատի մոտ հարմարեցրեց մի նեղ եռոտանի մահճակալ, վրան փռեց դոշակի նման մի փոքրիկ բան, որ տրորված ու տափակած էր բլինի պես ու կարող էր պատահել բլինի պես էլ ճենճոտվել էր, որը և նրան հաջողվեց ստանալ հյուրանոցատիրոջից։

Մինչ ծառաները կարգադրում էին և դես-դեն էին ընկած՝ պարոնը անցավ ընդհանուր դահլիճը։ Թե ի՛նչ տեսք են ունենում այդ ընդհանուր դահլիճները՝ ամեն մի ուղևոր դա շատ լավ գիտե. նույն պատերն են, ձիթաներկով ներկած, վերևը ծխամորճի ծխից խունացած, ներքևն էլ պլպլում է զանազան ուղևորների մեջքերի քսմսվելուց և ավելի շատ տեղական վաճառականների մեջքերից, որովհետև վաճառականները շուկայի օրերը այստեղ էին գալիս՝ իրենով վեց, իրենով յոթ հոգով՝ խմելու իրենց որոշ բաժին թեյը, էլի նույն հիստոտած առաստաղը, էլի նույն հիստոտած ջահը իր բազմաթիվ կախկխված մանրիկ ապակիներով, որ ցնցվում ու զրնգում էին ամեն անգամ, երբ հյուրանոցի ծառան վազում էր մաշված մոմլաթի վրայով՝ ճարպկորեն թափահարելով մատուցարանը, որի վրա դրած էր լինում այնքան թեյի գավաթներ, որքան թուչուն՝ ծովափին. էլի նույն պատկերներն ամբողջ պատի վրա, յուղաներկով նկարած, մի խոսքով՝ ամեն բան այնպես, ինչպես ամեն տեղ, միայն տարբերությունն այն էր, որ մի պատկերի վրա

հավերժահարսը նկարված էր այնպիսի ահագին ստինքներով, որ ընթերցողը երևի թե ոչ մի տեղ տեսած չլինի։ Բնության այդպիսի խաղ ասենք՝ պատահում է զանազան ս֊ատմական նկարների մեջ, հայտնի չէ թե ի՛նչ ժամանակ, ո՛րտեղից և ո՛ւմ ձեռքով բերված մեզ մոտ՝ Ռուսաստան, երբեմն մինչև անգամ մեր ազնվատոհմ արվեստասերների ձեռքով, որ գնել են Իտալիայում, նրանց ման ածող սուրհանդակների խորհրդով։ Պարոնը վեր բերեց իր կարտուզը և ետ արեց վրի բրդե, ծիածանագույն շարֆը, որ ամուսնացածների համար իր ձեռքով պատրաստում է կինը, հետը օրինավոր խրատներ տալով, թե ի՛նչպես պետք է փաթաթել, իսկ ամուրիների համար՝ ճիշտը չեմ կարող ասել, թե ո՛վ է գործում, աստված գիտե նրանց, ես երբեք այդպիսի շարֆ չեմ գործածել։ Շարֆը ետ անելուց հետո պարոնը հրամայեց, որ իրեն ճաշ բերեն։ Մինչ նրան հրամցնում էին տրակտիրներում սովորական դառած զանազան կերակուրներ, ինչպես են շչի՝ շերտավոր պիրոժոկով, հատուկ պահված ուղևորների համար մի քանի ֆարաթվա քնթացքում, ուղեղ՝ սիսեռով, նրբերշիկ՝ կաղամբով, տապակած վառեկ, թթու վարունգ ու մշտական շերտավոր քաղցր կարկանդակը՝ միշտ պատրաստ ծառայելու։ Մինչ նրան այդ ամենը հրամցնում էին և՛ առաջացրած, և՛ ուղղակի սառը, նա ստիպում էր ծառային կամ «պոլովոյին» պատմել այլ և այլ մանրուքները, թե ո՛վ էր առաջ պահում տրակտիրը և ո՛վ հիմա, և արդյոք, շա՞տ էր եկամուտ տալիս, և արդյոք տերը մե՞ծ սրիկա է, որին ծառան ըստ սովորության պատասխանում էր. օ՛, պարոն, խոշոր ավազակ է։ Ինչպես լուսավորված Եվրոպայում, այնպես էլ լուսավորված Ռուսաստանում այժմ կան խիստ շատ հարգելի մարդիկ, որոնք չեն կարող ճաշ անուշ անել տրակտիրում առանց այն, որ մի զրույց չսկսեն ծառայի հետ, երբեմն էլ մինչև անգամ զվարճալի կերպով ձեռ չառնեն նրան։ Սակայն եկվորը միայն դատարկ հարցեր չէր տալիս. նա արտակարգ ճշտությամբ հարցուփորձ արեց, թե ո՞վ է քաղաքում նահանգապետը, ո՞վ՝ ատյանի նախագահը, ո՞վ՝ դատախազը, մի խոսքով՝ աչքաթող չարեց ո՛չ մի կարևոր պաշտոնյայի, այլ դեռ ավելի ճշգրիտ կերպով, չասենք անգամ կարևկցաբար, հարցուփորձ արեց բոլոր աչքի ընկնող կալվածատերերի մասին, ո՛վ քանի հոգի գյուղացի ունի, ո՛րքան

հեռու է տպրում քաղաքից, մինչև անգամ ի՛նչ բնավորության տեր է և քե՛ն որքան հաճախ է քաղաք գալիս. հարցուփորձ արեց ուշադիր կերպով այդ կողմերի դրության մասին, արդյոք նահանգում հիվանդություններ չե՞ն եղել, համաճարակ չերմախտ, մահացու որևէ տենդ, ծաղիկ կամ դրանց նման մի բան, և ամեն ինչ այնպես, այնքան ճշգրտությամբ, որ ցույց էր տալիս ավելին, քան միայն հասարակ հետաքրքրություն։ Պարոնն իր շարժուձևերի մեջ ինչ-որ ծանրակշիռ մի բան ուներ և խնչում էր չափազանց բարձր։ Հայտնի չէ, քե ի՛նչպես էր նա այդ անում, բայց նրա քիթը փողի նման ձայն էր հանում։ Այդ ըստ երևույթին կատարելապես անմեղ արժանիքը, սակայն, մեծ հարգանք շահեց տրակտիրի ծառայի աչքում, այնպես որ՝ ամեն անգամ, երբ սա լսում էր այդ ձայները, թափահարում էր մազերը, շտկվում ավելի հարգալիր կերպով և վերից վար խոնարհելով իր գլուխը՝ հարցնում էր, արդյոք որևէ բան պետք չէ՞ պարոնին։ Ճաշից հետո պարոնը մի գավաթ սուրճ խմեց և նստեց բազմոցի վրա, մեջքի ետև դնելով բարձը, որի մեջ ռուսական տրակտիրներում ճկուն բրդի տեղ լցնում են ինչ-որ մի բան՝ չափազանց նման աղյուսի և ճալաքարի։ Այստեղ նա սկսեց հորանջել և հրամայեց տանել իրեն իր համարը, ուր պառկելով քնեց երկու ժամ։ Հանգստանալով, նա տրակտիրի ծառայի խնդիրքով մի կտոր թղթի վրա գրեց իր աստիճանը, անունը, ազգանունը՝ հաղորդելու համար ուր հարկն է,— ոտիկանատանը։ Սանդուղքներից իջնելիս ծառան թղթում հեգելով կարդաց հետևյալը. կոլեգիական խորհրդատու[1] Պավել Իվանովիչ Չիչիկով, կալվածատեր, իր գործերով։ Երբ ծառան դեռ շարունակում էր հեգելով չոկել գրությունը, ինքը՝ Պավել Իվանովիչ Չիչիկովը ուղևորվեց քաղաքը դիտելու, որից, ինչպես երևում է, գոհ մնաց, որովհետև ըստավ, որ քաղաքը ոչ մի բանով ետ չի մնում այլ նահանգական քաղաքներից, խիստ աչքի էր զարկում դեղին ներկը քարե տների վրա և համեստ մգանում էր գորշը փայտե տների վրա։ Տները մեկ, երկու և երկու ու կես հարկանի էին մշտական մեզոնինով[2], որը շատ գեղեցիկ էր նահանգական ճարտարապետների կարծիքով։ Տեղ-տեղ այդ տները կորե-

1 Ցարական ծառայության աստիճանավոր

2 Կիսահարկ, կիսավերնահարկ

չոմ էին գաշտի նման լայն փողոցում ու փայտե անվերջ ցանկապատերի մեջ, տեղ-տեղ խմբվում էին, և այստեղ ավելի նկատելի էր լինում մարդկանց շարժումն ու կենդանությունը։ Պատահում էին անձրևից համարյա լվացված ցուցանակներ կրենդելներով ու կոշիկներով, ինչ-որ մի տեղ՝ նկարած կապույտ շալվարով և տակին ինչ-որ մի Արշավյան[1] դերձակի անուն գրած, կամ մի այլ տեղ կարտուզների ու գդակների խանութ կար և վրան ցուցանակ՝ «Օտարերկրացի Վասիլի Ֆեոդորով», մի այլ տեղ էլ նկարած էր մի բիլիարդ երկու ֆրակավոր խաղացողներով, ինչպես հագնում են մեր թատրոններում հյուրերը, որ վերջին գործողության մեջ բեմ են դուրս գալիս։ Խաղացողները նկարված էին փայտերը նշան բռնած, մի քիչ ետ շրջված ձեռքերով և ծուռ ոտներով, որոնցով հենց նոր են օդում անտրաշա[2] արել։ Այդ բոլորի տակ գրված էր՝ «Ահա ձեզ զվարճատուն»։ Ինչ-որ մի տեղ, հենց փողոցում, դրված էին սեղաններ, վրան ընկուզ, օճառ ու քաղցր խմորեղեն, որ նման էր նույն օճառին, մի տեղ՝ հասարակ ճաշարան, վրան նկարած մի հաստ ձուկ՝ պատառաքաղը մեջը խրած։ Ամենից շատ նկատելի էին իրենց գույնը գցած երկգլխանի պետական արծիվները, որոնք հիմա արդեն փոխարինված են հակիրճ գրությամբ՝ գինետուն։ Սալահատակներն ամենուրեք վատ էին։ Նա նայեց նաև քաղաքային այգին, որը զարդարված էր լղարիկ ծառերով, որ լավ չէին բռնել, ուստի և պատվարված էին եռանկյունաձև նեցուկներով, որ շատ գեղեցիկ ներկած էին կանաչ յուղաներկով։ Ասենք՝ թեև այդ փոքրիկ ծառերը եղեգնից բարձր չէին, նրանց մասին ասվել էր լրագրերում՝ հրավառության նկարագրության մեջ, որ մեր քաղաքը զարդարված է՝ շնորհիվ քաղաքի կառավարողի հոգատարության, այգիով, ստվերախիտ, լայնաճյուղ ծառերով, որ հով են անում շոգ օրերին և որ շատ սրտառուչ էր նայել, ինչպես քաղաքացիների սրտերը տրոփում էին զեղուն շնորհակալությամբ և հոսում էին արտասուքների հեղեղներ ի նշան երախտագիտության՝ հանդեպ պարոն քաղաքապետը։ Մանրամասն հարցնելով պահակ ոս-

1 Դիտավորյալ գռեհկաբանություն՝ Վարշավյանի փոխարեն։

2 Պարի ժամանակ ցատկ դեպի վեր և խոսույն ևթ օդում ոտների խաչաձևում։

տիկանին, թե ինչպես պետք է ավելի կարճ ճանապարհով հասնել տաճարին, պաշտոնատեղիներին, նահանգապետին, նա ճամփան ծռեց դեպի գետը, որ հոսում էր քաղաքի միջով, ճամփին պոկեց սյանը փակցրած աֆիշան, որպեսզի տուն վերադառնալով մի լավ կարդա, շեղս մտիկ տվեց փայտե մայթով անցնող ոչ վատ արտաքինով մի տիկնոջ, որի ետևից մի տղա էր գնում զինվորական լիվրեյով[1], ձեռին մի կապոց, և մի անգամ էլ ամեն բանի վրա աչք ածելով, կարծես նպատակով, որ լավ հիշի տեղի դիրքը, վերադարձավ տուն, ուղղակի իր համարը, ուր սանդուղքի վրա պանդոկի ծառան թևը մտավ՝ օգնելու թեյ անուշ անելով, նա նստեց սեղանի մոտ, հրամայեց, որ իրեն մոմ բերեն, հանեց գրպանից աֆիշան, մոտեցրեց մոմին և սկսեց կարդալ, աջ աչքը քիչ կուչ ածելով։ Սակայն ուշագրավ քիչ բան կար աֆիշայում. տրվում էր Գ. Կոցեբուի դրաման, որի մեջ Ռոլլին խաղում էր Գ. Պապլևինը, Կորային՝ օրիորդ Զյաբլովան, մնացյալ անձինք ավելի քիչ աչքի ընկնողներից էին, սակայն նա կարդաց նրանց բոլորի անուննները, հասավ մինչև պարտերի գները ու իմացավ, որ աֆիշան տպված է նահանգական վարչության տպարանում, հետո շուռ տվեց մյուս երեսը նայելու, թե այնտեղ էլ որևէ բան կա՞, բայց ոչինչ չգտնելով, սրբեց աչքերը, մաքուր ծալեց աֆիշան ու դրեց իր արկղիկը, ուր սովորություն ուներ դարսելու ամեն բան, ինչ որ պատահում էր։ Օրը, ըստ երեվույթին, լրացավ մի բաժին սառը հորթենիով, մի շիշ թթու շչիով և խորը մրափով՝ ինչքան որ քթապոմպը կդիմանար, ինչպես ասում են որոշ տեղերում լայնածավալ ռուսական պետության մեջ։

Հետևյալ ամբողջ օրը նվիրվեց այցելություններին. երկվորը այցելության գնաց քաղաքի բոլոր բարձրաստիճանավորներին։ Հարգանքի հավաստիացում մատուցեց նահանգապետին, որը, ինչպես դուրս եկավ, Ջիչիկովի նման ո՛չ գեր էր, ո՛չ նիհար, վզին Աննայի շքանշան ուներ, և խոսք կար մինչև անգամ, որ ներկայացված է աստղանշանի. ինչևէ, շատ բարի մարդ էր և մինչև անգամ ինքը երբեմն շղարշ էր սեղնագործում։ Հետո գնաց փոխնահանգապետի մոտ, ապա եղավ դատախազի

[1] Սպասավորի համազգեստ։

մոտ, դատական ատյանի նախագահի մոտ, ոստիկանապետի մոտ, պետական կապալառուի մոտ, պետական գործարանների պետի մոտ... ափսոս, որ մի քիչ դժվար է հիշել այն աշխարհի բոլոր ուժեղներին, բայց բավական է ասել, որ եկվորն արտասովոր գործունեություն ցույց տվեց այցելությունների մեջ. նա մինչև անգամ գնաց իր հարգանքը հավաստելու բժշկական վարչության տեսչին և քաղաքի ճարտարապետին։ Հետո էլ դեռ երկար նստել էր բրիչկայի մեջ, միտք անելով, թե էլ ո՞ւմ այցի գնա, բայց քաղաքում այլևս պաշտոնյա չգտնվեց։ Այս մեծամեծների հետ ունեցած խոսակցությունների ժամանակ նա շատ վարպետորեն կարողացավ շողոքորթել յուրաքանչյուրին։ Նահանգապետին մի տեսակ թեթև ակնարկեց, որ նրա նահանգը մտնում ես ինչպես դրախտ, ճանապարհներն ամենուրեք թավիշ են, և որ այն կառավարությունները, որոնք նշանակում են իմաստուն բարեբաստիճան պաշտոնյաների, արժանի են մեծ գովասանքի։ Ոստիկանապետին ասաց ինչ-որ մի շողոքորթիչ բան քաղաքի պահակ ոստիկանների մասին, իսկ երբ խոսակցություն ունեցավ փոխնահանգապետի և դատական ատյանի նախագահի հետ, որոնք միայն պետական խորհրդականներ էին, մինչև իսկ երկու անգամ ասաց սխալմամբ՝ ձերդ գերազանցություն, որ նրանց շատ դուր եկավ։ Դրա հետևանքն այն եղավ, որ նահանգապետը նրան հրավիրեց շնորհ բերել իր մոտ՝ նույն օրը ընտանեկան երեկույթի, մնացած պաշտոնյաներն իրենց կողմից նույնպես՝ ո՛րը ճաշի, ո՛րը բոստոն խաղալու, ո՛րը թեյի։

Իր մասին եկվորը, ինչպես երևում էր, խուսափում էր շատ բան խոսելուց, եթե խոսում էլ էր՝ ապա ինչ-որ ընդհանուր կերպով, նկատելի համեստությամբ, և նրա խոսակցության մեջ այդպիսի դեպքերում գրքի դարձվածքներ էին մտնում. որ նա այս աշխարհի աննշան որդն է և արժանի չէ, որ նրա մասին շատ հոգան, որ իր կյանքում շատ նեղություններ է քաշել, ծառայության մեջ տուժել է ճշմարտության համար, ունեցել է շատ չարակամներ, որ անգամ նրա կյանքին սպառնացել են, և որ այժմ կամենալով հանգստանալ, վերջապես մի տեղ է որոնում բնակվելու և որ, հասնելով այս քաղաքը, պարտք է համարել հավաստել իր հարգանքը նրա առաջին

բարձրաստիճան պաշտոնյաներին։— Ահա այն բոլորը, ինչ որ քաղաքում իմացան այդ նոր անձի մասին, որը երկար չսպասեցրեց իրեն ցույց տալու նահանգապետի երեկույթում։ Այդ երեկույթին գնալու պատրաստությունը երկու ժամից ավելի տևեց և այստեղ եկվորն այնպիսի ուշադրություն ցուցաբերեց դեպի տուալետը, որ մինչև անգամ ո՛չ ամեն տեղ տեսնված է։ Մի փոքրիկ ճաշավերջի քնից հետո նա հրամայեց, որ լվացվելու ջուր տան և չափազանց երկար էր սապոնով տրորում այտերը, տակից լեզուն դեմ տալով, ապա տրակտիրի ծառայի ուսից երեսսրբիչն առնելով՝ նրանով ամեն կողմից սրբեց իր գիրուկ երեսը, սկսելով ականջներից և առաջ դեռ մի երկու անգամ ծառայի հենց դեմքին փչացնելով։ Հետո, հայելու առաջ հագավ կրծկալը, պոկեց քթից դուրս ցցված երկու մազիկ և անմիջապես հայտնվեց մուգ կարմիր, պեծին տվող ֆրակի մեջ։ Այսպես ահա հագնվելով, սեփական կառքով ճամփա ընկավ անվերջ լայն փողոցներով, որ լուսավորված էին այս ու այնտեղ հայտնվող պատուհանների տակար լույսով։ Սակայն նահանգապետի տունը այնպես էր լուսավորված, որ պարահանդեսի համար էլ կասկեր. լապտերավոր կառքեր, մուտքի մոտ երկու ժանդարմ, հեռվից ֆորեյտորների[1] աղաղակներ, մի՛ խոսքով՝ ամեն բան այնպես, ինչպես հարկավոր է։ Մտնելով սրահը՝ Ջիչիկովն ստիպված էր մի րոպե աչքերը կուչ ածել, որովհետև մոմերի, լապտերների և տիկինների հագուստների փայլը սարսափելի էր։ Ամեն ինչ լուսով էր ողողված։ Սև ֆրակները սլանում ու աչքից փախչում էին՝ և ցրիվ և խմբված այստեղ ու այնտեղ, ինչպես սլանում են ճանճերը սպիտակ փայլուն շաքարի վրա հուլիսին, ամռան շոգ ժամանակ, երբ պառավ մառանապետուհին կոտորում ու բաժան-բաժան է անում նրա փայլուն կտորները բաց պատուհանի առջև. երեխաները ամբողջ ժամանակ մոտիկ են տալիս չորս բոլորը հավաքված, հետաքրքիր կեղպով հետևելով նրա կոշտ ձեռներին, որ մուրճը բարձրացնում է վեր, իսկ ճանճերի օդային էսկադրոնները, թեթև օդից բարձրացված՝ թռչում են համարձակ՝ ինչպես լիակատար տերեր, և օգտվելով պառավի աչքերի տկարությունից և

---

[1] Իրար նոսից լծած ձիերի առաջին զույգը բշողը։

արևից, որ անհանգիստ են անում նրան, թափվում են անուշ կտորների վրա՝ մի տեղ ցրիվ, մի տեղ կույտերով։ Թեև նրանք կուշտ էին, որովհետև առատ ամառը առանց այն էլ ամեն քայլափոխին նրանց առջև դնում է անուշ կերակուրներ, և ներս թռան ո՛չ թե նրա համար, որ ուտեն, այլ որ ցույց տան իրենց, ետ ու առաջ անցնեն շաքարի կույտի վրայով, իրար քսեն առջևի կամ ետևի ոտիկները, կամ քորեն նրանցով իրենց թևիկների տակը, կամ մեկնելով երկու առջևի թաթիկները՝ շփեն գլուխները, շուռ գան ու կրկին դուրս ու ներս թռչեն նոր, ձանձրացնող էսկադրոններով։

Ջիչիկովը դեռ չէր նայել չորս կողմը, որ արդեն նահանգապետը նրա թևը մտավ և հենց տեղն ու տեղը ներկայացրեց իր տիկնոջը։ Եկվոր հյուրն այստեղ էլ իրեն չնեղմացքեց, մի հաճոյախոսություն արեց, միանգամայն պատշաճ ձեչին տարիքի մարդուն, որի աստիճանը ո՛չ չափազանց մեծ է, ո՛չ էլ չափազանց փոքր։ Երբ պարոնների կազմած զույգերը պատին սեղմեցին ամենքին, նա ձեռները հետևը դրած՝ մի երկու րոպե շատ ուշադիր նրանց նայեց։ Տիկիններից շատերը լավ էին հագնված և մոդայով, մյուսները հագել էին այն, ինչ որ աստված տվել էր նահանգական քաղաքին։ Տղամարդիկ այստեղ, ինչպես և ամեն տեղ, երկու տեսակ էին. ոմանք նիհար էին, որ շուռումուռ էին գալիս տիկինների շուրջը. նրանցից ոմանք այն տեսակիցն էին, որ դժվարությամբ կաթելի էր զանազանել պետերբուրգցիներից, ունեին նույնպիսի, ըստ ամենայնի մտածված և ճաշակով սանրած այտամորուքներ, կամ ուղղակի բարեդեմ, շատ հարթ ածիլած դեմքի ձվաձևություններ, նույնպես անփույթ նստում էին տիկինների մոտ, նույնպես խոսում էին ֆրանսերեն և տիկիններին ծիծաղեցնում էին այնպես, ինչպես Պետերբուրգում։ Տղամարդկանց մյուս տեսակը կազմում էին գիրուկները կամ հենց այնպիսիները, ինչպես Ջիչիկովն էր, այսինքն՝ ո՛չ շատ հաստամարմին, սակայն և ո՛չ լղարիկ։ Սրանք, ընդհակառակը, ծուռ էին նայում տիկիններին և ընկրկում էին նրանցից և միայն դեսուդեն էին նայում, թե արդյոք նահանգապետի սպասավորը մի տեղ պատրաստո՞ւմ է կանաչ սեղանը՝ վիստի[1] համար։ Նրանց դեմքերը լիքն էին ու կլոր, ոմանց դեմքերի

[1] Թղթախաղ։

Վրա գորտնուկներ կային, մի քանիսն էլ ծաղկատար էին. գլխներին նրանք մազ չէին պահում՝ ո՛չ քաքուլ, ո՛չ փունջ, ո՛չ էլ՝ «գրողն ինձ տանի» ձևով, ինչպես ֆրանսիացիք են ասում. նրանց մազերը կա՛մ տակից-խուզած էին, կա՛մ սղալած էին, իսկ դիմագծերն ավելի բոլորուն ու ամրապինդ։ Դրանք քաղաքի պատվավոր պաշտոնյաներն էին։ Ավա՛ղ, գիրուկներն ավելի լավ են իրենց գործերն այս աշխարհում բռնում, քան նիհարները։ Նիհարները ծառայում են ավելի հատուկ հանձնարարություններով կամ միայն մի որևէ գործում տեղ են բռնում և պոչ են խաղացնում. նրանց գոյությունը մի տեսակ չափազանց թեթև է, օդային ու բոլորովին անհույս։ Գիրուկները, սակայն, երբեք կոմնակի պաշտոն չեն ստանձնում, այլ հիմնական, և եթե արդեն մի տեղ նստում են, ասել է՝ նստում են հուսալից ու հաստատ, այնպես որ, ավելի շուտ՝ տեղը կճարճատի և կծռվի նրանց տակ, բայց նրանք չեն թոչի տեղից։ Արտաքին փայլ նրանք չեն սիրում, նրանց վրայի ֆրակը այնպես հաջող չի կարած, ինչպես նիհարներինը, բայց դրա փոխարեն նրանց գզրոցները լի են աստծու բարիքով։ Նիհարի մոտ երեք տարում մի հոգի էլ չի մնում, որ լոմբարդում գրավ դրած չլինի, իսկ գիրուկը մեկ էլ տեսար արդեն մի տուն ունի քաղաքի մյուս ծայրում, կնոջ անունով գնած, հետո մի ուրիշ տուն՝ մյուս ծայրում, ապա քաղաքին մոտիկ մի փոքրիկ շեն, հետո էլ մի գյուղ բոլոր անդ ու ջան-դաստանով։ Վերջապես գիրուկը ծառայելով աստծուն և թագավորին, արժանանալով ընդհանուրի հարգանքին, թողնում է ծառայությունը, տեղափոխվում, դառնում է կալվածատեր, ռուս փառահեղ բարին, հյուրասեր մարդ, և ապրում է, և լավ է ապրում։— Իսկ նրանից հետո կրկին նիհար ժառանգները, ըստ ռուսական սովորության՝ քամուն են տալիս հոր կարողությունը։ Չի կարելի թաքցնել, որ գրեթե այս տեսակ խոհեր էին զբաղեցնում Չիչիկովին այն ժամանակ, երբ նա դիտում էր հասարակությունը, և դրա հետևանքն այն եղավ, որ վերջապես ճիշացավ գիրուկներին, ուր հանդիպեց համարյա բոլոր ծանոթ դեմքերին. դատախազին՝ չափազանց սև, խիտ հոնքերով և մի փոքր ակնարկող ձախ աչքով, որ կարծես ասում էր. «Գնանք, բարեկամ, մյուս սենյակը, այնտեղ քեզ մի բան կասեմ», բայց և այնպես լուրջ և լռակյաց մի մարդու, փոս-

տապետին, կարճահասակ մի մարդու, բայց սրախոս ու փիւ-
լիսոփա—դատական ատյանի նախագահին, շատ խելամիտ
և սիրալիր մարդու, որոնք բոլորը նրան ողջունեցին ինչպես
հին ծանոթի. Ջիչիկովը պատասխանում էր բարևներին գլու-
խը խոնարհեցնելով մի փոքր կողքանց, սակայն ոչ առանց
հաճույքյան։ Եվ հենց այստեղ նա ծանոթացավ շատ վարվեցող
ու քաղաքավարի կալլուժստեր Մանիլովի և ըստ երևույթին
մի փոքր անճկուն Սորակևիչի հետ, որ հենց առաջին անգա-
մից կոխեց նրա ոտը, ասելով. «Ներեցեք, խնդրեմ»։ Հենց
այստեղ էլ նրա ձեռը հյուսեցին վիլուի խաղաթուղթը, որ նա
ընդունեց նույնպես քաղաքավարի գլուխ խոնարհեցնելով։
Նրանք նստեցին կանաչ սեղանի մոտ և վեր չկացան մինչև
ընթրիք։ Բոլոր խոսակցությունները կատարելապես դադարե-
ցին, ինչպես պատահում է միշտ, երբ վերջապես մարդիկ
իրենց տալիս են լուրջ գործի։ Թեև փոստապետը շատ խոսող
էր, բայց նա ևս, խաղաթղթերը ձեռքն առնելով, հենց նույն
րոպեին իր դեմքին խոհուն կերպարանքի արտահայտություն
տվեց, ներքին շրթունքով ծածկեց վերևինը և նույն դրությու-
նը պահեց խաղի ամբողջ ժամանակ։ Պատկերաթղթով խաղա-
լիս ձեռքով ամուր խփում էր սեղանին, ասելով՝ հիմա դամա էր՝
«Գնա՛ց պառավ տերտերակինը», իսկ եթե թագավոր էր՝
«Գնա՛ց Տամբովի մուժիկը»։ Իսկ նախագահը վրա էր բերում.
«Իսկ ես կշրփացնեմ բեղի՛ն, իսկ ես կշրփացնեմ բեղի՛ն»։
Երբեմն էլ խաղաթղթերը սեղանին խփելիս այսպիսի արտա-
հայտություններ էին դուրս թռչում. աա՛, չէր գալիս, չէր գա-
լիս՝ բուբնա բերեց, կամ էլ պարզապես բացականչություն-
ներ. չերվի՛, չերվոտո՛չինան, պիկենցիան, կամ պիկե՛նդրասը,
պիչուրուչչո՛ւխ, պիչուրա. կամ մինչև իսկ պարզապես՝ պի-
չո՛ւկ,— անուններ, որով կնքում էին նրանք խաղաթղթերի
տեսակներն իրենց հասարակության մեջ։

Թղթախաղը վերջացնելուց հետո վիճում էին, ինչպես ո-
լինում է՝ բավական բարձր։ Սկզբոր հյուրն էլ էր վիճում, բայց
մի տեսակ չափազանց ճարպիկ, այնպես որ ամենքը տեսնում
էին, որ նա վիճում էր, բայց, այնուամենայնիվ, հաճելի էր
վիճում։ Երբեք նա չէր ասում՝ դուք խաղացիք, այլ՝ դուք բա-
րեհաճեցիք խաղալ, ես պատիվ ունեցա խփել ձեր երկուսա-
նոցին և այլն։ Որպեսզի մի որևէ բանում էլ ավելի համոզի

իր հակառակորդներին, նա ամեն անգամ բոլորին մատուցում էր արծնապակով զարդարված իր արծաթե ծխատուփը, որի հատակին նկատեցին երկու մանուշակ՝ դրած այնտեղ հոտի համար։ Եկվորի ուշադրությունը առանձնապես գրավեցին Մանիլով ու Սոբակևիչ կալվածատերերը, որոնց մասին վերևը հիշվեց։ Նա իսկույն ևեթ տեղեկացավ նրանց մասին՝ տեղն ու տեղը թեթևակի մի կողմ կանչելով նախագահին ու փոստապետին։ Մի քանի հարց, որ նա տվեց, երևաց, որ հյուրի մեջ կա ո՛չ միայն հետաքրքրություն, այլև հիմնավոր մարդ է նա, քանի որ նախ և առաջ հարցուփորձ արեց, թե նրանցից յուրաքանչյուրը քանի՛ հոգի գյուղացի ունի, և ի՛նչ դրության մեջ են նրանց կալվածքները, իսկ հետո արդեն տեղեկացավ, թե ի՛նչ է նրանց անուն-ազգանունը։ Քիչ ժամանակամիջոցում նա կատարելապես հաջողեց նրանց հիացնել։ Կալվածատեր Մանիլովի— դեռ բոլորովին ոչ հասակավոր մարդ՝ որ շաքարի պես քաղցր աչքեր ուներ և դրանք կուչ էր ածում ամեն անգամ, երբ ծիծաղում էր,— խիլքը գնում էր նրանից։ Նա շատ երկար ժամանակ սեղմում էր նրա ձեռքը և թանխանձագին խնդրում էր պատիվ անել իրեն՝ գալով իր գյուղը, որ նրա ասելով՝ միայն տասնհինգ վերստ էր հեռու քաղաքի ուղեփակից։ Չիչիկովը գլխի հույժ քաղաքավարի խոնարհումով ու ձեռքի անկեղծ սեղմումով պատասխանեց, որ նա ո՛չ միայն մեծ հաճույքով պատրաստ է կատարել այդ, այլ մինչև անգամ կհամարի սրբազնագույն պարտականություն։ Սոբակևիչն էլ մի փոքր լակոնական ձևով ասաց. «Նաև ինձ մոտ, խնդրեմ», քստացնելով ոտը, որն այնպիսի մի հսկայական չափի կոշկի մեջ էր, որին համապատասխան ոտ հազիվ թե ուրիշ պեղ կարելի լիներ գտնել, առանձնապես ներկա ժամանակ, երբ Ռուսիայումն էլ սկսում են հաղթանդամներն անհետանալ։

Հետևյալ օրը Չիչիկովը գնաց ոստիկանապետի մոտ ճաշի և երեկույթի, ուր ճաշից հետո ժամը երեքից նստեցին վիստ խաղալու և խաղացին մինչև գիշերվա ժամը երկուսը։ Այնտեղ նա ի միջի այլոց ծանոթացավ կալվածատեր Նոզդրյովի, երեսուն տարեկան մի ժիր երիտասարդի հետ, որը երեք-չորս խոսքից հետո սկսեց նրան դու ասել։ Ոստիկանապետի և դատախազի հետ ևս Նոզդրյովը դուով էր խոսում և քննկերաբար

էր վարվում հետները, բայց երբ նստեցին մեծ քղթախաղի՝ ոստիկանապետն ու դատախազը չափազանց ուշադիր նայում էին նրա տարածին և հետևում էին նրա վեր եկած համարյա ամեն մի խաղաթղթին։ Հետևյալ օրը Ջիչիկովը երեկոն անցկացրեց դատական ատյանի նախագահի մոտ, որն իր հյուրերին ընդունում էր խալաթը հագին, որը մի փոքր յուղոտել էր։ Հյուրերի թվում ինչ-որ երկու տիկիններ կային։ Հետո նա մի երեկո եղավ փոխնահանգապետի մոտ, մեծ ճաշի՝ պետական կնպալառուի մոտ, փոքր ճաշի՝ դատախազի մոտ, որը սակայն արժեր մեծին, եղավ ճաշիկի՝ քաղաքագլխի մոտ՝ պատարագից հետո, որը նույնպես արժեր մի ճաշ։ Մի խոսքով՝ ո՛չ միժամ չեղավ, որ նա տանը մնար, և հյուրանոց էր գալիս միայն քնելու։ Ծկվորն ամեն քանում կարողանում էր գլուխ հանել և ցույց տվեց, որ փորձված, աշխարհիկ մարդ է։ Ինչի մասին էլ որ խոսք բացվեր, նա միշտ կարողանում էր աշխուժորեն մասնակցել։ Ջիաբուծարանի վրա՞ էր խոսքը՝ նա խոսում էր ձիաբուծարանի մասին, ևս։ Խոսք էր բացվում լավ շների մասին՝ այստեղ էլ նա հաղորդում էր շատ բանիմաց դիտողություններ։ Քննարկում էին արքունական ատյանի հետաքննությունը՝ նա ցույց էր տալիս, որ նրան անհայտ չեն և դատավարական խորամանկությունները։ Դատողությունն՞ր էին անում բիլիարդի խաղի մասին՝ բիլիարդի խաղի մեջ էլ չէր վրիպում. խոսում էին առաքինությա՞ն մասին, առաքինության մասին էլ էր նա շատ լավ խոսում, մինչև անգամ արցունքներն աչքերին. թունդ գինի քաշելո՞ւ մասին՝ թունդ գինուց էլ էր բան հասկանում. մաքսային վերահսկիչների և պաշտոնյաների մասին, նրանց մասին էլ էր այնպես դատում, կարծես ինքը եղել է թե՛ պաշտոնյա և թե՛ վերահսկիչ— Բայց նշանակալից էր, որ նա կարողանում էր այդ բոլորը պարուրել ինչ-որ մի լրջությամբ, կարողանում էր լավ պահել իրեն։ Խոսում էր ո՛չ բարձր, ո՛չ ցածր, այլ կատարելապես այնպես, ինչպես հարկն է։ Մի խոսքով՝ ո՛ր կողմ կուզես, շուռ տուր, շատ կարգին մարդ էր։ Բոլոր պաշտոնյաները դոհ էին նոր անձնավորության ժամանումով։ Նահանգապետը նրա մասին արտահայտվեց, որ նա բարեմիտ մարդ է. դատախազը՝ որ նա խելքը գլխին մարդ է. ժանդարմական գնդապետն ասաց, որ նա գիտնական մարդ է. ատյանի նախագա-

հը՝ որ նա բանիմաց և հարգելի մարդ է. ոստիկանապետը՝ որ նա հարգելի և սիրալիր մարդ է. ոստիկանապետի կինը՝ որ նա ամենասիրալիր և ամենավարվեցող մարդն է։ Մինչև անգամ ինքը՝ Սոբակևիչը, որ հազվադեպ էր որևէ մեկի մասին լավ խոսում, բավական ուշ տուն վերադառնալով քաղաքից և արդեն բոլորովին հանվելով ու պառկելով մահճակալին իր չոր ու ցամաք կնոջ կողքին՝ ասաց նրան. «Ես, հոգյակըս, նահանգապետի մոտ երեկույթի էի, ոստիկանապետի մոտ էլ ճաշեցի, ծանոթացա կոլեգիական խորհրդատու Պավել Իվանովիչ Ջիչիկովի հետ. խի՛ստ հաճելի մարդ է», որի վրա կինը պատասխանեց. «հը՛մ» և ոտով հրեց նրան։

Այսպիսի կարծիք, որ հույժ շոյիչ էր հյուրի համար, կազմվեց նրա մասին քաղաքում և դա մնաց այնքան ժամանակ, մինչև որ հյուրի մի տարօրինակ հատկությունը և ձեռնարկությունը կամ, ինչպես գավառներում ասում են, պասսաժը[1], որի մասին ընթերցողը շուտով կիմանա, կատարյալ տարակուսանքի մեջ գցեց համարյա ամբողջ քաղաքը։

ԳԼՈՒԽ II

Արդեն մի շաբաթից ավելի էր, որ եկվոր պարոնն ապրում էր քաղաքում, կառքով գնալով երեկույթների ու ճաշերի և, այսպիսով, ինչպես ասում են, շատ հաճելի ժամանակ անցկացնելով։ Վերջապես նա վճռեց իր այցերը տեղափոխել քաղաքից դուրս և տեսության գնալ կալվածատեր Մանիլովին և Սոբակևիչին, որոնց խոսք էր տվել։— Թերևս սույն բանին դրդեց նրան ուրիշ ավելի էական պատճառ, մի ավելի լուրջ գործ, որ մոտ էր նրա սրտին... Բայց այդ ամենի մասին ընթերցողը կիմանա աստիճանաբար և իր ժամանակին, եթե միայն համբերություն ունենա կարդալու ներկա վեպը, որ շատ երկար է և դեռ հետո է՛լ ավելի պիտի ընդարձակվի՝ հետզհետե մոտենալով գործը պսակող վախճանին։ Կառապան Սելիֆանին հրաման տրվեց առավոտյան վաղ լծել ձիերը հայտնի բրիչկային, Պետրուշկային հրամայվեց մնալ տանը՝ սենյակին և ճամպրուկին հսկելու։ Ընթերցողի համար

[1] Գործի անակնկալ ընթացք ընդունելը։

ավելորդ չի լինի ծանոթանալ մեր հերոսի այս երկու ճորտերի հետ։ Թեև նրանք, իհարկե, այնքան էլ աչքի ընկնող անձեր չեն, և այն էլ, ինչպես ասում են, երկրորդական կամ մինչև անգամ երրորդական մարդիկ են, թեև պոեմի գլխավոր անցքերն ու զսպանակները նրանց վրա չեն հաստատված և դուցե տեղ-տեղ են դիպչում և թեթևակի քսվում նրանց, բայց հեղինակը չափազանց սիրում է ամեն բանում հանգամանալից լինել, և այդ կողմից, չնայած որ ինքը ռուս մարդ է, կամենում է ճշտապահ լինել գերմանացու պես։ Դա, ասենք, շատ տեղ ու ժամանակ չի պահանջի, որովհետև շատ բան չպիտի ավելացնել նրան, որ ընթերցողն արդեն գիտե, այսինքքն, որ Պետրուշկան հագին ուներ պարոնի բանեցրած մի քիչ լայն դարչնագույն սերթուկը և իր կոչման մարդկանց սովորության համաձայն, խոշոր քիթ ու շրթունքներ ուներ։ Բնավորությամբ ավելի լռակյաց էր, քան ասող-խոսող։ Մինչև անգամ ազնիվ ձգտում ուներ լուսավորության, այսինքն գրքերի ընթերցանության, որոնց բովանդակության հարցում դժվարություն չէր կրում. Ֆրա համար կատարելապես միևնույն էր՝ սիրահար հերոսի արկած, հասարակ այբբենարան կամ աղոթագիրք, նա ամեն ինչ կարդում էր հավասար ուշադրությամբ։ Եթե նրա ձեռքը տային քիմիա, նա դրանից էլ չէր հրաժարվի։ Նրան դուր էր գալիս ո՛չ այն, ինչի մասին որ կարդում էր, այլ ավելի հենց ընթերցումը, կամ ավելի ճիշտ՝ հենց ընթերցման պրոցեսը, որ ահա տառերից միշտ ինչ-որ խոսք էր ստացվում, որը երբեմն սատանան գիտե, թե ի՛նչ է նշանակում։ Այդ ընթերցումը կատարվում էր ավելի պատկած դիրքով՝ նախասենյակում, մահճակալին, ներքնակի վրա, որ այդ հանգամանքից տրորվել ու բարակել էր բլիթի պես։ Բացի ընթերցասիրությունից, նա ուներ նաև երկու սովորություն, որ կազմում էին նրա երկու բնութագիծը՝ քնել առանց հանվելու, այնպես, ինչպես կա, հենց նույն սերթուկով և միշտ հետը ման ածել որպես ինչ-որ իր առանձին օդը, իր սեփական հոտը՝ որ խիտ բնակեցված սենյակի օդի բնույթ ուներ, այնպես որ բավական էր միայն, որ իր մահճակալը մի որևէ տեղ դներ, անգամ մինչ այդ անբնակ սենյակում և փոխադրեր այնտեղ իր շինելն ու իրերը, և արդեն թվում էր, որ այդ սենյակում տասը տարի մարդ է ապրել։ Ջիչիկովը,

լինելով շատ դյուրազգաց և երբեմն էլ քմահաճ մարդ՝ առավոտը թարմ քթի մեջ քաշելով օդը, միայն կնճռոտվում էր ու մեկ էլ գլուխը թափահարում՝ ասելով. «Ծղրայր, սատանան տանի քեզ, քրտնո՞ւմ ես, ի՛նչ է, մի բաղնիս գնայիր գոնե»։ Իրին Պետրուշկան ոչինչ չէր պատասխանում և աշխատում էր հենց տեղն ու տեղը մի որևէ գործով զբաղվել կամ խոզանակը ձեռին մոտենում էր պարոնի կախած ֆրակին, կամ հենց այնպես մի բան էր կարգի բերում։ Թե ի՛նչ էր մտածում նա այդ ժամանակ, երբ լռում էր,— գուցե նա մտքում ասում էր. «դու էլ բարի պտուղն ես, հա, զահլադ էլ չգնաց՝ քառասուն անգամ հենց միևնույն բանը կրկնելուց»— աստված գիտե, դժվար է ասել, թե ի՛նչ է մտածում ճորտ ծառան այն ժամանակ, երբ պարոնը նրան խրատ է տալիս։ Ահա այս է, ինչ որ առաջին պահ կարելի է ասել Պետրուշկայի մասին։ Կառապան Սելիֆանը բոլորովին ուրիշ տեսակ մարդ էր... Բայց հեղինակը շատ է մեղքանում ընթերցողներին՝ նրանց այսքան երկար զբաղեցնելով ստորին դասակարգի մարդկանցով, փորձով իմանալով, թե ի՛նչ տհաճությամբ են նրանք ծանոթանում ստորին դասերի հետ։ Այսպես է արդեն ռուսը. սաստիկ սիրում է ծանոթանալ այն մարդու հետ, որը թեկուզ մի աստիճանով բարձր է իրենից, և մի կոմսի կամ իշխանի հետ գլխարկի ծանոթությունը ավելի լավ է մտերիմ ընկերական հարաբերություններից։ Հեղինակը մինչև անգամ երկյուղ է կրում իր հերոսի համար, որը միայն կոլեգիական խորհրդատու է։ Արքունի խորհրդատուները թերևս ծանոթանան նրա հետ, բայց նրանք, որոնք արդեն իրենց հասցրել են գեներալի աստիճանի, նրանք, աստված գիտե, կարող է պատահել, թերևս նետեն այն արհամարհական հայացքներից մեկը, որ մարդս հպարտորեն նետում է այն ամենի վրա, ինչ իր ոտի տակ սողում է, կամ, որ դեռ ավելի վատ է, թերևս մոտովը անց կենան հեղինակի համար սպանիչ անուշադրությամբ։ Սակայն, որքան էլ ցավալի է թե՛ այս, թե՛ այն, բայց էլի հարկավոր է անդրադառնալ հերոսին։ Այսպես ուրեմն, դեռ երեկոյից տալով բոլոր հարկ եղած պատվերները, դարձնելով առավոտյան շատ վաղ, լվացվելով, մաքրելով ոտից գլուխ թաց սպունգով, որ արվում էր միայն կիրակի օրերը, իսկ այն օրը պատահմամբ

կիրակի էր, ածիլվելով այնպես, որ այտերը դարձան իսկական ատլաս՝ ողորկության ու փայլի տեսակետից, հագնելով պեծին տվող մուգ կարմիր ֆրակը և ապա մեծ արջամորթու շինելը՝ նա իջավ սանդուղքներից՝ տրակտիրի ծառան թևն ընկած՝ մեկ այս, մեկ այն կողմից, և նստեց բրիչկան։ Բրիչկան որոտալով դուրս եկավ հյուրանոցի դարպասից փողոց։ Մոտով անցնող տերտերը հանեց գլխարկը, մի քանի լակոտներ կեղտոտ շապիկները հագներին՝ ձեռները մեկնեցին՝ ասելով. «Պարոն, մի բան բաշխի որբերիս»։ Կառապանը նկատելով, որ նրանցից մինը մեծ ախորժակ ունի կառքի ետևը բարձրանալու, շրխկացրեց նրան մտրակով և բրիչկան գնաց քարերի վրա ոստոստալու։ Մ՚չ առանց ուրախության հեռվում նկատվեց զոլավոր ուղեփակը, որն իմաց էր տալիս, թե սալահատակը, ինչպես առհասարակ բոլոր չարչարանքները, շուտով կվերջանա, և մի քանի անգամ էլ գլուխը բրիչկայի թափքին բավական պինդ զարկելուց հետո՝ Չիչիկովը վերջապես սլացավ փափուկ գետնի վրայով։ Հենց որ քաղաքը մնաց հետևում, արդեն ճանապարհի երկու կողմից սկսեցին, ինչպես սովորաբար լինում է մեր երկրում, նկատվել անհեթեթ ու խոպան տեղեր՝ ճախուտի չիմեր, եղևնուտ, մատաղ սոճիների կարճ, ցանցառ թփեր, նրանցից մեծերի այրված բները, վայրի ցախի և նման հիմար բաներ։ Պատահում էին թոկի նման երկարուձիգ գյուղեր, իրար վրա դարսած հին փայտերի նմանվող տներով, որ ծածկված էին մոխրագույն կտուրներով՝ իրենց ներքո ունենալով փորագրած փայտե զարդարանքներ, որ նման էին կախ արած զարդանախշած երեսսրբիչների։ Մի քանի մուժիկներ, ըստ սովորության, հորանջում էին դռների առաջ, նստարանների վրա նստած, ոչխարի մուշտակները հագներին։ Խոշոր դեմքերով կնանիք, կրծքները փաթաթած՝ մտիկ էին տալիս վերևի պատուհաններից. ներքևինից նայում էր հորթը, կամ խոզն էր իր կույր մուրճը հանում դուրս։ Մի խոսքով, հայտնի տեսարաններ։ Տասնհինգ վերստ անցնելուց հետո նա հիշեց, որ Մանիլովի ասածով՝ այստեղ պիտի լինի նրա գյուղը, բայց տասնվեցերորդ վերստն էլ թռավ, դարձյալ գյուղը չէր երևում, և եթե երկու մուժիկը չլինեին, որ դեմից պատահեցին, հազիվ թե կարողանային գործը գլուխ բերել։

Այն հարցին, թե արդյոք հեռո՞ւ է Զամանիլովկա գյուղը, մուժիկները գոռկները հանեցին և նրանցից մեկը, որ ավելի խելացի էր և սեպաձև մորուք ուներ, պատասխանեց. «Կարող է պատահել Մանի՛լովկա և ո՛չ թե Զամանիլովկա»։

— Հա, էլի՛, Մանիլովկա։

— Մանի՛լովկա. այ, հենց որ մի վերստ էլ գնաս, ա՛յն է, այսինքն՝ շիփ-շիտակ դեպի աջ։

— Դեպի ա՞ջ,— հարց տվեց կառապանը։

— Դեպի աջ,— ասաց մուժիկը։— Հենց այդ էլ Մանիլովկայի ճամփան է, որ կա. իսկ Զամանիլովկա՝ այդպես բան չկա։ Անունն այդ է, այսինքն՝ ասում են Մանիլովկա, իսկ Զամանիլովկա իսկի չկա այստեղ։ Այնտեղ հենց սարի գլխին մի տուն կտեսնես, քարե՝ երկու էտաժանի, պարոնի տունն է, նրա միջին հենց ինքը պարոնն էլ կենում է։ Այ, հենց այդ Մանիլովկան է որ կա, իսկ Զամանիլովկա այստեղ երբեք չկա ու չի էլ եղել...

Ճամփա ընկան Մանիլովկան գտնելու։ Երկու վերստ անցնելուց հետո հանդիպեցին, գյուղամեջ տանող մի ճանապարհի, բայց արդեն երկու վերստ էլ, երեք էլ, չորս էլ կարծես անցան, իսկ քարաշեն երկհարկանի տունը չկար ու չկար։ Այստեղ Չիչիկովը հիշեց, որ եթե բարեկամ մարդը հրավիրում է իր մոտ՝ գյուղը տասնհինգ վերստի վրա, այդ կնշանակի, որ մինչև այնտեղ հաստատ երեսուն է։ Մանիլովկա գյուղը ո՛չ շատերին կարող էր գրավել իր տեղի դիրքով։ Պարոնի տունը մեն-մենակ կանգնած էր բաց տեղում, այսինքն մի բարձրության վրա՝ ամեն տեսակ քամու բերան, ո՛ր կողմից որ սրանք կուզենան փչել. զառիվայրը, որի վրա կանգնած էր տունը՝ ծածկված էր խոտը խուզած ճիմով։ Նրա վրա ցրված էին անգլիական ձևով երկու-երեք ծաղիկների ածուներ՝ շեփորուկի թփերով ու դեղին ակացիաներով։ Հինգ-վեց կեչի, ոչ մեծ խմբերով, տեղ-տեղ ցցում էին իրենց մանրատերև, ցանցառ կատարները։ Նրանցից երկուսի տակին մի տաղավար կար՝ տափակ կանաչ գմբեթով, փայտե կապույտ սյուներով և վերտառությամբ՝ «Տաճար մենավոր խորհրդածության». ավելի ներքև մի լիճ կար, կանաչով ծածկած, որ ասենք հազվագյուտ բան չէ ռուս կալվածատերերի անգլիական այգիներում։ Այդ բարձունքի ստո-

բոտում և մատամբ էլ զառիվայրին մթագնում էին լայնք ու երկայնքով մոխրագույն գերանավոր խրճիթներ, որ մեր հեքիաթների հայտնի չէ ի՛նչ պատճառով, հենց նույն րոպեին սկսեց հաշվել ու հաշվեց ավելի քան երկու հարյուր. նրանց մեջ ոչ մի տեղ բաց ծառ կամ որևէ բուսականություն չկար. ամեն կողմ միայն գերանն էր աչքի ընկնում։ Տեսարանն աշխուժացնում էին երկու կնանիք, որոնք հագուստները տալավորիչ քշտած և ամեն կողմից ճխտած, մինչև ծնկները լճակի մեջ ծանր շարժվում էին՝ ետևից քարշ տալով երկու ձողին կապած պատառոտուն ուռկանը, ուր երևում էին երկու խճճված խեցգետին և փայլում էր որսված մանրածածանը։ Կնանիք, երևում էր, որ իրար հետ խոռված էին և ինչ-որ մի բանի համար իրար հայհոյում էին։ Փոքր-ինչ հեռու, մի կողմ սևին էր տալիս տխուր-կապտավուն գույնով սոճիների անտառը։ Մինչև անգամ եղանակը ինքը շատ տեղին ծառայություն էր մատուցում, օրը ո՛չ քե պարզ, ո՛չ քե մռայլ էր, այլ ինչ-որ մի տեսակ բաց մոխրագույն, ինչպես լինում են բերդապահ զինվորների հին մունդիրները, այդ, ասենք, խաղաղ զորքի, որը սակայն մասամբ հարբում է կիրակի օրերը։ Պատկերը լրացնելու համար չէր զգացվում և աքաղաղի պակասությունը; փոփոխական եղանակի այդ գուշակողի, որը, չնայած գլուխը մինչև ուղեղը ծակծկվել էր ուրիշ աքաղաղների կատուներով՝ իգամոլության հայտնի գործերի պատճառով, աղաղակում էր շատ բարձր և մինչև անգամ թափահարում էր թևերը, որ փետուած էին ինչպես ճիլոպներ։ Կառքով մոտենալով բակին, Ջիլիկովը դռան սանդուղքի վրա նկատեց իրեն՝ տանտիրոջը, որը կանգնել էր կանաչ շալոնե[1] սերթուկը հագին, ձեռքը ճակատին հովանի բռնած; որպեսզի ավելի լավ տեսնի մոտեցող կառքը։ Բրիչկայի մոտենալու հետ նրա աչքերը ուրախագին ապրտահայտություն ստացան, և ժպիտը ավելի ու ավելի լայնացավ։

— Պա՛վել Իվանովիչ,— բացականչեց նա վերջապես, երբ Ջիլիկովը վայր իջավ բրիչկայից։— Հազի՛վ մեր հիշեցիք։

Երկու բարեկամները շատ պինդ համբուրվեցին, և Մանիլովն իր հյուրին սենյակ տարավ։ Թեև այն միջոցը, որի ընթացքում նրանք պիտի անցնեն հաշտը, նախասենյակ և սե-

[1] Բրդե կտորի տեսակ։

ղանատունը, մի փոքր կարճ է, բայց փորձենք, արդյոք չե՞նք կարող մի կերպ օգտվել դրանից և բան ասել տանտիրոջ մասին։ Բայց այստեղ հեղինակը պիտի խոստովանի, որ այդ ձեռնարկությունը շատ դժվար է։ Շատ ավելի հեշտ է պատկերել մեծ մասշտաբի բնավորություններ. այնտեղ ուղղակի ամբողջ ձեռքով նետիր ներկերը կտավի վրա. սև, բոցավառ աչքեր, կախված հոնքեր, կնճիռով ակոսված ճակատ, ամբողջ ուսովը գցած սև կամ կրակի պես ալ լոդիկ, և պատկերը պատրաստ է. բայց արի տես, որ բոլոր այս պարոնները, որոնք շատ են աշխարհիս երեսին, որոնք դռսից շատ նման են իրար, բայց այնուամենայնիվ, երբ մոտից ես մտիկ տալիս՝ տեսնում ես շատ ամենաանորոշալի մասնահատկություններ,— այդ պարոնները սոսկալի դժվար են նկարագրելու համար։ Այստեղ հարկավոր է խիստ լարել ուշադրությունը, մինչև որ կստիպես առջևդ դուրս ցայտելու բոլոր նուրբ, համարյա անտեսանելի գծերը, և ընդհանրապես մարդ ստիպված է լինում արդեն շատ հեռուն-խորացնել զննելու գիտության մեջ մարզված հայացքը։

Միայն աստված գուցե կարող էր ասել, թե ի՛նչ բնավորության տեր է Մանիլովը։ Կան մի տեսակ մարդիկ, որ հայտնի են այս անուններով. հենց այնպես, ո՛չ այս, ո՛չ այն, ո՛չ քաղաքում Բոգդան, ո՛չ գյուղում Սելիֆան, ինչպես առածն է ասում։ Թեքևս նրանց թվում պետք է դասվի և Մանիլովը։ Արտաքինից տեսքով մարդ էր. նրա դիմագծերը զուրկ չէին դուրեկանությունից, բայց այդ դուրեկանության մեջ թվում էր թե չափազանց շաքար կար. նրա վարվեցողության ձևերի դարձվածքների մեջ կար մարդու տրամադրություն ու ծանոթություն ձեռք բերելու ինչ-որ ճիգ։ Նա ժպտում էր գրավիչ կերպով. խարտյաշ էր, կապուտաչյա։ Նրա հետ ծանոթության առաջին րոպեին չես կարող չասել՝ ի՛նչ հաճելի և բարի մարդ է։ Հետևյալ րոպեին ոչինչ չես ասի—իսկ երրորդին կասես, գրողը տանի, ի՛նչ բան է սա, և հեռու կքաշվես, իսկ եթե չես քաշվի հեռու, մահացու ձանձրույթ կզգաս։ Նրանից չես կարող սպասել ոչ մի կենդանի կամ գոնե ցասկոտ խոսք, որ կարող ես լսել համարյա յուրաքանչյուրից, եթե դիպչես նրան վիրավորող որևէ հարցի։ Ամեն մարդ իր կիրքն ունի. մեկը կիրքը տվել է բարակի շներին. մյուսը կարծում՞է, թե ինքը

հույժ սիրում է երաժշտություն և զարմանալի զգում է նրա բոլոր խոր տեղերը. երրորդը վարպետ է կտրիճավարի ճաշելու, չորրորդը՝ թեկուզ մի վերշոկ բարձր խաղալու այն դերը, որ նշանակված է նրա համար. հինգերորդը, մեծի սահմանափակ ցանկությամբ, քնում և երազում է այն մասին, թե ինչպես անի՝ զրոսանքի ժամանակ ֆլիգել-ադյուտանտի[1] հետ քայլի՝ ի ցույց բարեկամների, ծանոթների և անգամ անծանոթների. վեցերորդն արդեն օժտված է այնպիսի ձեռքով, որը գերբնական ցանկություն է զգում մի որևէ քարփինջի մեկնեցի կամ երկուսանոցի անկյունը ծալելու, այն ժամանակ, երբ յոթերորդի ձեռը հենց մի գլուխ մեջ է ընկնում որևէ տեղ կարգ ու կանոն մտցնելու, գաղտագողի մոտենալու կայարանի վերակացուի անձնավորությանը կամ կառապաններին, մի խոսքով՝ ամեն մարդ ունի իրենը, բայց Մանիլովը ոչինչ չուներ։ Տանը նա շատ քիչ էր խոսում և մեծ մասամբ խորհում էր ու մտորում, բայց թե ինչի մասին էր մտորում, դարձյալ թերևս աստծուն է հայտնի։ Տնտեսությամբ չի կարելի ասել թե պարապում էր, նա մինչև անգամ չէր էլ գնում դաշտերը, տնտեսությունը մի տեսակ ինքնիրեն կառավարվում էր։ Երբ գործակատարն ասում էր՝ «լավ կլինի, պարոն, այս ու այն բաներն անենք», «այո, վատ չէ», պատասխանում էր նա սովորաբար ծխամորճը ծխելով, որ սովորություն էր արել ծխել, երբ դեռ ծառայում էր բանակում, ուր նա համարվում էր ամենահամեստ, ամենաքաղաքավարի և ամենազարգացած սպան. «Այո, իսկապես, վատ չէ» — կրկնում էր նա։ Երբ նրա մոտ գալիս էր մի մուժիկ և ծոծրակը քարելով ասում էր՝ «Պարոն, իրավունք տուր գործով հեռանամ, հարկի համար փող աշխատեմ», «գնա՛», ասում էր նա ծխամորճը ծխելով և մինչև անգամ նրա մտքով չէր էլ անց կենում, որ մուժիկը գնում էր հարբելու։ Երբեմն, դռան սանդուղքից դեպի բակն ու լճակը նայելիս, նա խոսում էր այն մասին, թե որքան լավ կլիներ, եթե հանկարծ տանից մի ստորերկրյա անցք բաց արվեր, կամ լճակի վրայով շինվեր քարե կամուրջ, որի երկու կողմը խանութներ լինեին և նրանց մեջ վաճառականներ նըս-

---

1 Ֆլիգել-ադյուտանտ— ցարի կամ ցարական ընտանիքի որևէ անդամի ադյուտանտ։

տեին ու ծախեին զանազան մանր ապրանքներ, որ պետք են գյուղացիներին։— Այդ պահին նրա աչքերը նայում էին ծայրահեղ քաղցրորեն և դեմքն ընդունում էր ամենագոհ արտահայտություն. ասենք՝ բոլոր այդ ծրագիրները հենց այնպես էլ վերջանում էին միմիայն խոսքերով։ Նրա կաբինետում միշտ ընկած էր ինչ-որ գիրք, 14-րդ էջի վրա նշան արած, որ ահա երկու տարի շարունակ կարդում էր նա։ Նրա տանը միշտ ինչ-որ մի բան պակաս էր. հյուրասենյակում հրաշալի կահավորություն կար, պճնատես մետաքսե կտոր վրան քաշած, որը հավանորեն շատ էժան չարժեր, սակայն երկու բազկաթոռի համար այդ կտորից պակասում էր և բազկաթոռները խսիրներով էին փաթաթած. ասենք՝ տանտերը մի քանի տարի էր, ինչ ամեն անգամ նախազգուշացնում էր իր հյուրին այսպիսի խոսքերով. մի՛ նստեք այդ բազկաթոռներին, նրանք դեռ պատրաստ չեն։ Մի ուրիշ սենյակում բոլորովին էլ կահավորություն չկար, թեպետև ամուսնանալուց հետո առաջին օրերը ասվել էր. «Հոգյակս, հարկավոր է վաղը հոգ տանել, որ այս սենյակում գոնե ժամանակավորապես կահավորություն լինի»։ Երեկոյան սեղանի վրա դրվում էր շատ պճնատես մի մոմակալ՝ մուգ բրոնզից՝ երեք անտիկ գրացիաներով, սադաֆե պճնատես վահանով, և նրա կողքին դրվում էր ուղղակի պղնձե մի հաշմանդամ, կաղ, մի կողմ ծռված և ամբողջովին ճարպի մեջ կորած, թեև այդ չէին նկատում ո՛չ տանտերը, ո՛չ տանտիկինը, ո՛չ սպասավորները։ Նրա կինը... ասենք՝ նրանք բոլորովին գոհ էին իրարից։ Չնայած որ ութ տարուց ավելի էր անցել նրանց ամուսնությունից, նրանցից յուրաքանչյուրը դարձյալ մյուսին կա՛մ մի կտոր խնձոր, կա՛մ կոնֆետ, կա՛մ ընկույզ էր բերում և սրտաշարժ քնքուշ ձայնով, որ կատարյալ սեր էր արտահայտում, ասում էր. «Հոգյակս, բերանիկդ բաց արա, այս կտորը դնեմ մեջը»— Ինքնին հասկանալի է, որ բերանիկն այս դեպքում բացվում էր շատ գողտրիկ կերպով։ Ննդյան օրը սյուրպրիզներ էին պատրաստվում, որևէ մանրահուլուն պատենիկ՝ ատամի խոզանակի համար։ Եվ շատ հաճախ բազմոցի վրա նստած ժամանակ հանկարծ կատարելապես անհայտ պատճառով նրանցից մեկը՝ թողնելով իր ծխամորճը, իսկ մյուսը՝ ձեռագործը, եթե միայն այդ միջոցին նրա ձեռքին լինում էր դա, նրանք

իրարու այնպիսի քնքշանվաղ ու երկարատև համբույր էին դրոշմում, որ այդ ժամանակամիջոցում կարելի էր մի փոքրիկ ծղոտե սիգար ծխել։ Մի խոսքով՝ նրանք, ինչպես ասվում է, երջանիկ էին։ Իհարկե, կարելի էր նկատել, որ տանը կային շատ ուրիշ զբաղմունքներ՝ բացի երկարատև համբույրներն ու սյուրպրիզները, և կարելի է զանազան շատ հարցումներ տալ։ Օրինակ՝ ինչո՞ւ հիմար և անմիտ կերպով է խոհանոցում ճաշը պատրաստվում. ինչո՞ւ բավական դատարկ է մառանը. ինչո՞ւ է մառանապետուհին գող. ինչո՞ւ են սպասավորները կեղտոտ և հարբեցող. ինչո՞ւ են տան ծառաներն ու աղախիններն անխիղճ կերպով քնում և մնացած ամբողջ ժամանակ փչություններ անում։ Սակայն այդ բոլորը հասարակ բաներ են, իսկ Մանիլովան լավ է դաստիարակված։ Իսկ լավ դաստիարակությունը, ինչպես հայտնի է, ստացվում է գիշերօթիկ դպրոցներում։ Իսկ գիշերօթիկներում, ինչպես հայտնի է, երեք գլխավոր առարկաներ կազմում են մարդկային ամբողջ ուսումնասիրությունների հիմքը. ֆրանսերեն լեզուն, որ անհրաժեշտ է ընտանեկան կյանքի երջանկության համար, դաշնամուրը՝ ամուսնուն հաճելի րոպեներ տալու համար և, վերջապես, իսկական տնտեսության մասը. դրամի քսակները և այլ սյուրպրիզներ գործելը։ Ասենք՝ մեթոդներին մեջ լինում են զանազան կատարելագործություններ և փոփոխություններ, մանավանդ ներկա ժամանակ. այդ բոլորը կախված է հենց իրենց՝ գիշերօթիկների վարժուհիների շրջահայեցությունից ընդունակությունից։ Ուրիշ գիշերօթիկներում այնպես է լինում, որ առաջ դաշնամուրն է, ապա ֆրանսերենը, իսկ վերջը արդեն տնտեսության մասը։ Երբեմն էլ այնպես է լինում, որ առաջ տնտեսության մասն է, այսինքն՝ սյուրպրիզներ գործելը, ապա ֆրանսերենը, իսկ վերջն արդեն դաշնամուրը։ Զանազան տեսակ են լինում մեթոդները։ Չի խանգարում մի դիտողություն ևս անել, որ Մանիլովան... բայց, խոստովանում եմ, տիկիններուն մասին շատ եմ վախենում խոսելուց, և հետո, ժամանակն է դառնալու մեր հերոսներին, որոնք արդեն մի քանի րոպե կանգնել էին հյուրասենյակի դռների առջև՝ փոխադարձաբար իրար խնդրելով առաջ անցնելու։

— Շնո՛րհ արեք, մի՛ անհանգստացեք ինձ համար, ես հետո կանցնեմ,— ասում էր Չիչիկո֊վ։

— Ո՜չ, Պավել Իվանովիչ, ո՜չ, դուք հյուր եք,— ասում էր Մանիլովը՝ մատով դուռը ցույց տալով։

— Մի՛ նեղվեք, խնդրում եմ, մի՛ նեղվեք։ Անցե՛ք խընդրում եմ,— ասում էր Չիչիկովը։

— Ո՜չ, արդեն ներեցեք, թույլ չեմ տա, որ ձեզ պես հաճելի, կրթված հյուրը ետևից գա։

— Ինչպե՞ս թե կրթված... անցե՛ք, խնդրում եմ։

— Դե ուրեմն բարեհաճեցեք անցնել դուռ։

— Բայց ինչո՞ւ համար։

— Դե հենց նրա համար,— ասաց քաղցր ժպիտով Մանիլովը։

Վերջապես երկու բարեկամները կողե-կող մտան դռնով և փոքր-ինչ սեղմեցին իրար։

— Թույլ տվեք ներկայացնել ձեզ իմ կնոջը,— ասաց Մանիլովը.— հոգյա՛կս, Պավել Իվանովիչը։

Չիչիկովն իսկապես տեսավ տիկնոջը, որին նա բոլորովին չէր նկատել՝ դռների մեջ Մանիլովին ողջունելիս։ Տիկինը լավիկն էր, հագնված էր սազական։ Նրա վրա լավ նստում էր մետաքսե դժգույն կապոտը. նրա նուրբ, փոքրիկ ձեռքը ինչոր մի բան արագ նետեց փեղանին և սեղմեց ասեղնագործված անկյուններով բատիստե թաշկինակը։ Նա վեր կացավ բազմոցից, որի վրա նստած էր։ Չիչիկովը ոչ առանց բավականության մոտեցավ նրա ձեռքին։ Մանիլովան մինչև անգամ փոքր-ինչ թլվատելով ասաց, որ նա շատ ուրախացրեց իր գալուստով, և որ ամուսինը օր չէր անցնում, որ նրա մասին չհիշեր։

— Այո՛,— ասաց Մանիլովը.— տիկինս ինձ հենց մի գլուխ հարցնում էր. «Այս քո բարեկամն ինչո՞ւ չի գալիս»։ «Սպասի՛ր, հոգյակս, կգա»։ Եվ ահա վերջապես դուք արժանացրիք մեզ ձեր այցելությանը։ Ճշմարիտ, արդեն այնպիսի հաճույք պատճառեցիք, մայիսյան օ՛ր, սրտի տո՛ն...

Չիչիկովը լսելով, որ բանն արդեն հասավ սրտի տոնին, մինչև անգամ մի փոքր շփոթվեց և համեստորեն պատասխանեց, որ ոչ հռչակված անուն ունի, ոչ էլ անգամ նկատելի աստիճան։

— Դուք սաեն ինչ ունե՛ք,— ընդհատեց Մանիլովը նույն-

պիսի հաճելի ժպիտով,— ամեն ինչ ունե՞ք, մինչև անգամ ավելին։

— Ինչպե՞ս գտաք մեր քաղաքը,— հարցրեց Մանիլովան։— Արդյոք հաճելի՞ անցկացրիք ժամանակը։

— Շա՜տ լավ քաղաք է, հրաշալի՜ քաղաք է,— պատասխանեց Չիչիկովը.— ժամանակն էլ հաճելի անցկացրի, հասարակությունն էլ շատ վարվեցող է։

— Իսկ ինչպե՞ս գտաք մեր նահանգապետին,— ասաց Մանիլովան։

— Ճշմարիտ է, չէ՞, որ չափազանց հարգելի և չափազանց հաճելի մարդ է,— ավելացրեց Մանիլովը։

— Բոլորովին ճշմարիտ է,— ասաց Չիչիկովը.— չափազա՜նց հարգելի մարդ։ Եվ ինչպե՜ս է խորացել իր պարտականությունների մեջ, ինչպես է հասկանում գործը։ Ցանկալի կլիներ, որ շատ լինեին այդպիսի մարդիկ։

— Ի՜նչպես է կարողանում, գիտե՞ք, ընդունել ամենքին, իր վարմունքների մեջ լինել նրբանկատ,— ավելացրեց Մանիլովը ժպտալով և զոհունակությունից համարյա բոլորովին կուչ ածեց աչքերը կատվի պես, որի ականջները թեթևակի խուտուտ են տալիս մատներով։

— Շատ վարվեցող և հաճելի մարդ է,— շարունակեց Չիչիկովը,— և ի՜նչ ճարտարն է, ես մինչև անգամ ոչ մի կերպ չէի կարող ենթադրել այդ։ Ի՜նչ լավ է ասեղնագործում զանազան տնային նախշեր։ Նա ցույց տվեց ինձ իր ասեղնագործած քսակը. հաղիվ թե մի տիկին կարող լինի այդքան ճարտար ասեղնագործել։

— Իսկ փոխնահանգապետը, ճշմարիտ է, չէ՞, որքա՜ն սիրելի մարդ է,— ասաց Մանիլովը՝ կրկին մի փոքր աչքերը կուչ ածելով։

— Շա՜տ, շա՜տ արժանավոր մարդ է,— պատասխանեց Չիչիկովը։

— Թույլ տվեք, իսկ ինչպե՞ս գտաք ոստիկանապետին։ Ճշմարիտ է, չէ՞, որ շատ հաճելի մարդ է։

— Չափազա՜նց հաճելի է և ի՜նչ խելացի, ի՜նչ կարդացած մարդ է։ Մենք նրա մոտ վիստ խաղացինք դատախազի և դատական ատյանի նախագահի հետ մինչև ամենավերջին աքլորականչը։ Շա՜տ, շա՜տ արժանավոր մարդ է։

— Լավ, իսկ ի՞նչ կարծիք ունեք դուք ոստիկանապետի կնոջ մասին,— ավելացրեց Մանիլովան, ճշմարիտ է, չէ՞, հաճելացույն կին է։

— Օ՛, դա մեկն է իմ ճանաչած արժանավորագույն կանանցից,— պատասխանեց Չիչիկովը։

Հետ այսու բաց չթողին դատական ատյանի նախագահին, փոստապետին, և այսպես կարգով հիշեցին քաղաքի համարյա բոլոր պաշտոնյաներին, որոնք ամենքն էլ դուրս եկան ամենաարժանավոր մարդիկ։

— Դուք միշտ գյուղո՞ւմն եք ժամանակ անցկացնում,— իր կողմից վերջապես հարց տվեց Չիչիկովը։

— Ավելի շատ՝ գյուղում,— պատասխանեց Մանիլովը։— Երբեմն, ասենք, գալիս ենք քաղաք միայն նրա համար, որ տեսակցենք կրթված մարդկանց հետ։ Վայրենանում է մարդ, գիտեք, երբ ամբողջ ժամանակ փակված է ապրում։

— Ճշմարիտ է, ճշմարիտ,— ասաց Չիչիկովը։

— Իհարկե,— շարունակեց Մանիլովը,— ուրիշ բան է, եթե մարդ լավ հարևանություն ունենա, օրինակ, այնպիսի մարդ, որի հետ կարելի լինի, ենթադրենք, խոսել սիրալիրության, լավ վարվեցողության մասին, հետևել մի որևէ գիտության, որը մի տեսակ մարդու հոգին փառավորի, մարդու տա, այսպես ասած, մի տեսակ սլացք...— Այստեղ նա ուզում էր ինչ-որ բան ևս արտահայտել, բայց նկատելով, որ փոքր-ինչ խճողեց խոսքը, ձեռքով օդում քշփորեց և շարունակեց.— իհարկե, այն ժամանակ գյուղն ու առանձնությունը կարող էին շատ հաճելի լինել։ Բայց բացարձակապես ոչ ոք չկա... Այ, երբեմն միայն կարդում ես «Сын отечества»[1]։

Չիչիկովը դրան համաձայնեց կատարելապես, ավելացնելով, որ ոչինչ ավելի հաճելի չէ, քան ապրել առանձնության մեջ, վայելել բնության տեսարանները և երբեմն կարդալ մի որևէ գիրք...

— Բայց գիտե՞ք,— ավելացրեց Մանիլովը,— այնուամենայնիվ, երբ ընկեր չունես, որի հետ կարելի լիներ սրտակցել...

— Օ՛, դա արդարացի՛ է, դա կատարելապե՛ս արդարացի

[1] «Сын отечества» (Հայրենյաց զավակ)՝ պահպանողական ամսագիր, հրատարակվել է 1812—1818 թվերին։

է,— ընդհատեց Ջիլիկովը.— ի՞նչ են այն ժամանակ աշխարհիս բոլոր գանձերը։ Մի՛ ունենար դրամ, ունեցիր լավ բարեկամներ վարվեցողության համար,— ասել է մի իմաստուն։

— Ով գիտե՞ք, Պավել Իվանովիչ,— ասաց Մանիլովը, դեմքին տալով ո՛չ միայն քաղցր, այլև մինչև անգամ մեղմ մի արտահայտություն, նման այն դեղին, որ ճարպիկ աշխարհիկ բժիշկը անխիղճ կերպով քաղցրացրել է՝ Նրևակայելով, որ նրանով կուրախացնի հիվանդին։— Այն ժամանակ զգում ես ինչ-որ մի տեսակ հոգեկան վայելք... Այ, ինչպես հիմա, երբ ինձ դիպվածն արժանացրեց, կարելի է ասել, նախանձելի բախտի՝ խոսել ձեզ հետ և վայելել ձեր հաճելի զրույցը...

— Շնորհ արեք, ի՛նչ հաճելի զրույց... Ջնչին մարդ եմ ես և ուրիշ ոչինչ,— պատասխանեց Ջիլիկովը։

— Օ, Պավել Իվանովիչ, թույլ տվեք ինձ անկեղծ լինել, ես ուրախությամբ իմ կարողության կեսը կտայի, միայն թե ունենայի մի մասն այն արժանիքների, որ դուք ունեք...

— Ընդհակառակը, ես իմ կողմից ամենամեծ բախտը կհամարեի...

Հայտնի չէ, թե մինչև ո՛ւր կհասներ երկու բարեկամների զգացումների զեղումը, եթե ներս մտնող սպասավորը չզեկուցեր, որ սեղանը պատրաստ է։

— Խոնարհաբար խնդրում եմ,— ասաց Մանիլովը։— Ներեցեք, եթե այնպիսի ճաշ չունենք, ինչպես ապարանքներում և մայրաքաղաքներում. մեզ մոտ ուղղակի ռուսական սովորության համաձայն շչի է, բայց տրվում է անկեղծ սրտով։ Խոնարհաբար խնդրում եմ։

Այստեղ նրանք դեռ մի առժամանակ վիճեցին այն մասին, թե ո՛վ պետք է առաջինը ներս մտնի, և վերջապես Ջիլիկովը կողքանց մտավ սեղանատուն։

Սեղանատանն արդեն կանգնած էին երկու տղաները՝ Մանիլովի զավակները, որոնք այն տարիքի էին, երբ երեխաներին սեղան են նստեցնում, բայց դեռ բարձր աթոռների վրա։ Նրանց մոտ կանգնած էր ուսուցիչը, որ քաղաքավարի խոնարհելով՝ ժպտում էր։ Տանտիկինը նստեց իր սուպի ափսեի մոտ։ Հյուրին նստեցրին տանտիրոջ ու տիկնոջ մեջտեղը։ Սպասավորը երեխաների վրին անձեռոցիկներ կապեց։

— Ի՜նչ սիրունիկ երեխաներ են,— ասաց Չիչիկովը՝ նայելով նրանց.— քանի՞ տարեկան են։

— Մեծը՝ ութ, իսկ փոքրը միայն երեկ դարձավ վեց տարեկան,— ասաց Մանիլովը։

— Թեմիստոկլյուս,— ասաց Մանիլովը՝ դառնալով մեծին, որն աշխատում էր կզակն ազատել լակեյի կապած անձեռոցիկից։ Չիչիկովը հոնքերը մի փոքր բարձրացրեց՝ լսելով մի այդպիսի մասամբ հունական անուն, որին, հայտնի չէ թե ինչո՛ւ, Մանիլովը յուս վերջավորություն տվեց, բայց աշխատեց իսկույն ևեթ դեմքին տալ սովորական դիրքը։

— Թեմիստոկլյուս, ասա, ո՞րն է Ֆրանսիայի ամենալավ քաղաքը։

Այստեղ ուսուցիչն իր ամբողջ ուշադրությունը դարձրեց Թեմիստոկլյուսի վրա և, թվում էր, թե ուզում էր ցատկել նրա աչքերի մեջ, բայց վերջապես կատարելապես հանգստացավ և գլխով արեց, երբ Թեմիստոկլյուսն ասաց.— Փարիզը։

— Իսկ մեզ մոտ ամենալավ քաղաքը ո՞րն է,— դարձյալ հարցրեց Մանիլովը։

Ուսուցիչը դարձյալ սրեց ուշադրությունը։— Պետերբուրգը,— պատասխանեց Թեմիստոկլյուսը։

— Էլի ո՞րը։

— Մոսկվան,— պատասխանեց Թեմիստոկլյուսը։

— Խելո՜ք, հոգյա՜կս,— ասաց Չիչիկովը։— Ասացեք սակայն...— շարունակեց նա՝ այստեղ ևեթ փոքր-ինչ զարմացած դեմքով դառնալով Մանիլովին.— ես պետք է ձեզ ասեմ, որ այս երեխան մեծ ընդունակություններ պիտի ունենա։

— Օ, դուք նրան դեռ չեք ճանաչում,— պատասխանեց Մանիլովը,— նա չափազանց սրամիտ է։ Այ, կրտսերը, Ալքիդեսը, նա այնքան ժիր չէ, բայց սա իսկույն, հենց մի բանի պատահում է թե չէ, ժժմակ, բողոճ, արդեն աչքերը պսպտացնում է. ետևից կվազի և փսկույն ուշադրություն կդարձնի։ Ես նրան դիպլոմատիական մասի համար եմ կանխատեսում։ Թեմիստոկլյուս,— շարունակեց նա, կրկին դառնալով նրան,— կուզե՞ս դեսպան լինել։

— Կուզեմ,— պատասխանեց Թեմիստոկլյուսը՝ հացը ծամելով և գլուխը աջ ու ձախ շարժելով։

Այդ րոպեին ետևում կանգնած լակեյը սրբեց դեսպանի

քիթը, և շատ լավ արեց, այլապես՝ սուպի մեջ պիտի կաթեր մի բավական խոշոր կողմնակի կաթիլ։ Սեղանի շուրջ խոսակցություն սկսվեց ընտանեկան անդորր կյանքի հաճույքի մասին, ընդհատվելով տանտիկնոջ նկատողություններով քաղաքի թատրոնի և դերասանների մասին։ Ուսուցիչը շատ ուշադիր դիտում էր խոսակիցներին և հենց նկատում էր, որ նրանք պատրաստ են ծիծաղելու, նույն րոպեին բաց էր անում բերանը և ջանասիրությամբ ծիծաղում էր։ Հավանորեն նա երախտապարտ մարդ էր և ուզում էր տանտիրոջը վարձահատույց լինել լավ վերաբերմունքի փոխարեն։ Մի անգամ սակայն նրա դեմքը դաժան տեսք ընդունեց, և նա խստորեն թխկացրեց սեղանը՝ աչքերը չհեռլով դիմացը նստած երեխաների վրա։ Դա տեղին էր, որովհետև թեմիստոկլյուսը կծեց Ալքիդեսի ականջը, և Ալքիդեսը աչքերը կուչ ածելով և բերանը բանալով, պատրաստ էր ամենաաղիողորմ կերպով հեկեկալ, բայց զգալով, որ այդ պատճառով հեշտությամբ կարող էր զրկվել ատելիքից՝ բերանին տվեց նախկին դիրքը և սկսեց արցունքներն աչքերին կրծել ոչխարի ոսկորը, որից նրա երկու այտերը ճարպոտվելով փայլեցին։ Տանտիկինը շատ հաճախ դիմում էր Չիչիկովին, ասելով. «Դուք ոչինչ չեք ուտում, դուք շատ քիչ վերցրիք», որին Չիչիկովն ամեն անգամ պատասխանում էր. «Ամենախոնարհաբար շնորհակալ եմ, ես կուշտ եմ, հաճելի խոսակցությունը լավ է ամեն տեսակ կերակուրից»։

Արդեն վեր էին կենում սեղանից։ Մանիլովը չափազանց գոհ էր և ձեռքը հյուրի մեջքին տանելով պատրաստվում էր այդպես առաջնորդել նրան հյուրասենյակ, երբ հանկարծ հյուրը շատ նշանակալից դեմքով հայտնեց, որ նրա հետ մատղիր է խոսել մի շատ կարևոր գործի մասին։

— Այդ դեպքում թույլ տվեք առաջնորդել ձեզ իմ առանձնասենյակը,— ասաց Մանիլովը և տարավ մի փոքրիկ սենյակ, որի պատուհանը նայում էր կապտին տվող անտառին։— Ահա՛ իմ անկյունը,— ասաց Մանիլովը։

— Հաճելի սենյակ է,— ասաց Չիչիկովը՝ աչք ածելով սենյակին։ Սենյակն իսկապես անհաճելի չէր. պատերը ներկած էին ինչ-որ մոխրագույնի տվող երկնակապույտ ներկով, չորս աթոռ, մի բազկաթոռ, մի սեղան, ուր դնված էր տեղը նշան

արած գիրքը, որի մասին մենք արդեն առիթ ունեցանք հիշելու, մի քանի գրոտած թղթեր, բայց ամենից շատը թուխունն էր։ Այն զանազան տեսակ էր. թղթե տուփերի մեջ և թուխունի քսակում, և վերջապես ուղղակի շեղջով թափած էր սեղանի վրա։ Երկու պատուհաններին էլ տեղավորված էին ծխամորճից թափած մոխրի բլրակները, որ ոչ առանց ջանքի դասավորված էին գեղեցիկ շարքերով։ Նկատելի էր, որ դա երբեմն տանտիրոջ համար ժամանց էր դառնում։

— Թույլ տվեք ձեզ խնդրել տեղավորվելու այս բազկաթոռի վրա,— ասաց Մանիլովը։— Այստեղ ձեզ համար ավելի հանգիստ կլինի։

— Թույլ տվեք, ես կնստեմ աթոռին։

— Թույլ տվեք թույլ չտալ այդ,— ասաց Մանիլովը ժպտալով։— Այդ բազկաթոռը ես արդեն պատվիրագրել եմ հյուրի համար, ուրախ եք, թե ուրախ չեք, բայց պետք է նստեք։

Չիչիկովը նստեց։

— Թույլ տվեք ձեզ պատվել ծխամորճով։

— Ոչ, չեմ ծխում,— պատասխանեց Չիչիկովը փաղաքշանքով և մի տեսակ կարծես ափսոսանքի արտահայտությամբ։

— Ինչո՞ւ,— ասաց Մանիլովը նույնպես փաղաքշանքով և ափսոսանքի արտահայտությամբ։

— Սովորություն չեմ դարձրել. վախենում եմ. ասում են՝ ծխամորճը չորացնում է։

— Թույլ տվեք ձեզ նկատել, որ դա նախապաշարմունք է։ Ես ենթադրում եմ մինչև անգամ, որ ծխամորճ ծխելը շատ ավելի առողջարար է, քան քթախոտ քաշելը։ Մեր գնդում մի պորուչիկ կար, ամենասքանչելի և ամենազարգացած մի մարդ, որը բերանից վայր չէր դնում ծխամորճը ո՛չ թե միայն սեղանի վրա, այլ մինչև անգամ, թույլ տվեք ասել, ամեն տեսակ տեղերում։ Եվ ահա նա այժմ քառասունից շատ անց է, բայց փառք աստծո, մինչև հիմա այնքան առողջ է, որ ավելին անկարելի է։

Չիչիկովը նկատեց, որ դա իրոք պատահում է և որ բնության մեջ լինում են շատ բաներ՝ անբացատրելի մինչև անգամ լայնածավալ խելքի համար։

— Թույլ տվեք սակայն մի բան խնդրել...— խոսեց նա

մի ձայնով, որի մեջ լսվեց ինչ-որ մի տարօրինակ կամ հա-մարյա տարօրինակ արտահայտություն, և դրանից հետո, հայտնի չէ ի՛նչ պատճառով, ետ նայեց Մանիլովը ևս, հայտնի չէ ի՛նչ պնտճառով, ետ նայեց։— Որքա՞ն վաղուց է, որ բարեհաճել եք տալ վերստուգման մարդահամարը[1]։

— Արդեն վաղուց, բայց ավելի լավ է ասեմ՝ չեմ հիշում։

— Իսկ այդ ժամանակից հետո շա՞տ գյուղացի է մեռել ձեզ մոտ։

— Այդ չեմ կարող ասել, դրա մասին, ներեցեք եմ, որ պետք է հարցնել գործակատարին։ Է՛յ, տղա՛, կանչի՛ր գործակատարին, նա պետք է որ այսօր այստեղ լինի։

Հայտնվեց գործակատարը։ Դա քառասունի մոտ մի մարդ էր, մորուքը ածիլած, սերթուկը հագին, և, ըստ երևույթին՝ մի մարդ, որ շատ հանգիստ կյանք էր վարում, որովհետև նրա դեմքը մի տեսակ փափուկ գիրուքյուն ուներ, իսկ մորթու դեղնավուն գույնը և մանր աչքերը ցույց էին տալիս, որ նա շատ լավ գիտեր, թե ի՛նչ բան է բմբուլե և փետուրե անկողիններ։ Կարելի էր իսկույն տեսնել, որ նա իր գործունեության աստիճանին անցել է այնպես, ինչպես անցնում են բոլոր տերերի գործակատարները. առաջ տանը պարզապես եղել է զրագետ տղա, հետո ամուսնացել է մի որևէ մատանապետուհի Ագաշկայի հետ, տիկնոջ սիրելիի, ինքն է դառել մատանապետ, այդտեղից էլ՝ գործակատար։ Բայց դառնալով գործակատար, հասկանալի է, որ վարվել է ինչպես բոլոր գործակատարները.

---

1 Անվանացուցակ այն ճորտ գյուղացիների, որ կալվածատերերը ներկայացնում էին կառավարական օրգաններին ամեն վերստուգման, մարդահամարի ժամանակ։ Պետական հարկը վերցվում էր համաձայն հասակավոր ճորտ գյուղացիների թվի։ Ճորտ գյուղացիների հաշվառման համար էլ նշանակված էին վերստուգումները, և այդ պատճառով էլ գյուղացի-ճորտերը կոչվում էին «վերստուգման հոգիներ» («ревизские души»)։ Այդ «վերստուգման հոգիների»-ի թիվը, որոնց ցուցակը կալվածատերերը ներկայացնում էին կառավարությանը, համարվում էր անփոփոխելի և մնում էր այդպես էլ հաստատ վճռակում մինչև հետևյալ վերստուգումը, անգամ եթե այդ ցուցակի մեջ մտած գյուղացիների որոշ մասը մեռներ։ Այսպիսով՝ մեռած գյուղացիները, «մեռյալ հոգիները», մեկ ստուգումից մինչև հետևյալ ստուգումը՝ պաշտոնական թղթերի գործությամբ համարվում էին կենդանի, և կառավարությունը նրանց հաշվին եղած հարկը վերցնում էր որպես կենդանի գյուղացիների հարկ։

շփվում էր և քավորություն էր անում նրանց հետ, ովքեր գյուղում ավելի հարուստ էին, ավելացնում էր ավելի չքավորների տուրքը, և զարթնելով առավոտը ժամը ութից ինը՝ սպասում էր ինքնաեռին և թեյ խմում։

— Լսի՛ր, սիրելիս, որքա՞ն գյուղացի մեռավ մեզ մոտ այն ժամանակից ի վեր, երբ տվել ենք վերստուգման մարդահամարը։

— Ինչպե՞ս ինչքան։ Շատերն են մեռել այն ժամանակից ի վեր,— ասաց գործակատարը և այդ ասելով զկոտաց՝ բերանը ձեռքով թեթևակի ծածկելով վահանի պես։

— Այո, ճիշտն ասած, ես ինքս էլ էի այդպես կարծում,— վրա բերեց Մանիլովը.— իսկապես շատ շատերն էին մեռնում։— Այստեղ նա շուռ եկավ Չիչիկովի կողմը և դարձյալ ավելացրեց.— ճիշտ է, շատ շատերը։

— Իսկ թի՞վը, օրինակ, որքա՞ն է,— հարեց Չիչիկովը։

— Իսկապես, թիվը որքա՞ն է,— վրա բերեց Մանիլովը։

— Դե ինչպե՞ս ասենք թիվը։ Ախր հայտնի չէ, թե ո՛րքան են մեռել, նրանց ոչ ոք չի հաշվել։

— Այո, իսկապես,— ասաց Մանիլովը դիմելով Չիչիկովին,— ես ևս ենթադրում էի, մեծ մահացություն էր. բոլորովին հայտնի չէ, թե ո՛րքան են մեռել։

— Դու, խնդրում եմ, հաշվիր,— ասաց Չիչիկովը,— և կազմիր բոլորի մանրամասն ցուցակը անվանական կարգով։

— Այո, բոլորին անվանական կարգով,— ասաց Մանիլովը։

Գործակատարն ասաց՝ աչքիս վրա, և դուրս գնաց։

— Իսկ ի՞նչ պատճառների համար է ձեզ այդ պետք,— հարցրեց Մանիլովը գործակատարի հեռանալուց հետո։

Այդ հարցը, ըստ երևույթին, դժվարության մեջ դրեց հյուրին. նրա դեմքին հայտնվեց ինչ-որ մի լարված արտահայտություն, որից նա մինչև անգամ կարմրեց, մի լարվածություն՝ ինչ-որ բան արտահայտելու, բառերին ոչ բոլորովին ենթարկվող մի բան։ Եվ իսկապես, Մանիլովը վերջապես լսեց այնպիսի տարօրինակ և արտասովոր բաներ, որ երբեք չեն լսել մարդկային ականջները։

— Դուք հարցնում եք՝ ի՞նչ պատճառների համար. ահա

— Քե ի՛նչ պատճառներ են, ես կուզենայի գյուղացիներ գնել...— ասաց Չիչիկովը, կակազեց և խոսքը չվերջացրեց։

— Բայց թույլ տվեք հարցնել ձեզ,— ասաց Մանիլովը,— ինչպե՞ս եք կամենում գնել գյուղացիներին, հողի հետ միասի՞ն, թե՞ պարզապես տեղափոխության համար, այսինքն՝ առանց հողի։

— Ոչ, իմ ցանկացածը այն չէ, թե բոլորովին գյուղացիներին,— ասաց Չիչիկովը, —ես ուզում եմ ունենալ մեռածներին...

— Ինչպե՞ս, ներեցեք... ես մի փոքր ծանր եմ լսում, ինձ թվաց, թե տարօրինակ խոսք լսեցի...

— Ես կամենում եմ ձեռք բերել մեռածներին, որոնք սակայն վերտուգման մեջ նշանակված լինեին իբրև կենդանի,— ասաց Չիչիկովը։

Մանիլովն այստեղ հենց տեղն ու տեղը չլիուխը ծխամորճի հետ վայր գցեց հատակին, և ինչպես որ բերանը բաց էր արել՝ այնպես էլ մի քանի րոպե բերանը մնաց բաց։ Երկու բարեկամները, որ դատողություններ էին անում բարեկամական կյանքի հաճելիությունների մասին, անշարժ մնացին՝ հայացքը մեխած միմյանց աչքերի մեջ, ինչպես այն պատկերները, որոնք հնում կախվում էին մեկը մյուսի դիմաց՝ հայելու երկու կողմում։ Վերջապես Մանիլովը բարձրացրեց չիբուխն ու ծխամորճը և վարից վեր նայեց նրա դեմքին, աշխատելով տեսնել, թե արդյոք նրա շուրթերին նկատվո՞ւմ է որևէ ծիծաղ, արդյոք կատակ չարե՞ց նա, բայց ոչինչ այնպիսի բան չէր երևում, ընդհակառակը՝ մինչև անգամ նրա դեմքը թվում էր սովորականից ավելի լրջմիտ. հետո մտածեց, թե չլինի՞ հյուրը մի տեսակ հանկարծ խելքը թոցրեց, և վախով նրան նայեց աչքերը վրան սևեռած. բայց հյուրի աչքերը կատարելապես պարզ էին, նրանց մեջ չկար այն վայրի, անհանգիստ կրակը, որ շարժվում է խելագար մարդու աչքերում. ամեն բան վայելուչ էր և կարգին։ Ինչքան էլ միտք էր անում Մանիլովը, թե ի՛նչ անի և ի՛նչպես վարվի, ուրիշ ոչինչ չկարողացավ գտնել, քան միայն այն, որ մնացած ծուխը բարակ շիթով բերանից բաց թողեց։

— Այսպես ահա, ես կկամենայի իմանալ, թե կարո՞ղ եք դուք արդյոք այդպիսիներին, իրականության մեջ ոչ կենդա-

նի, բայց օրենքի առջև կենդանի մարդկանց ինձ տալ, զիջել, կամ՝ այնպես, ի՛նչպես դուք կբարեհաճեիք ավելի լավ ձևով։— Բայց Մանիլովն այնքան ամաչեց և շփոթվեց, որ միայն մտիկ էր տալիս նրան։

— Ինձ թվում է՝ դուք դժվարանում եք,— նկատեց Չիչիկովը։

— Ե՞ս... ոչ միտքս այդ չէ,— հարեց Մանիլովը.— բայց ես չեմ կարող հասու լինել... ներեցեք... ես, իհարկե, չկարողացա ստանալ այնպիսի փայլուն կրթություն, ինչպիսին, այսպես ասած, երևում է ձեր բոլոր շարժուձևերի մեջ. չունեմ բարձր արվեստ՝ արտահայտվելու... Կարող է պատահել այստեղ... այս բանում, ձեր այս՞ րոպեիս արտահայտած բաքատրության մեջ... թաքնված է ուրիշ մի բան... Միգուցե դուք բարեհաճեցիք արտահայտվել այդպես սոսկ գեղեցիկ ոճի համա՞ր։

— Ոչ,— վրա բերեց Չիչիկովը,— ոչ, ես նկատի ունեմ առարկան այնպես, ինչպես այն կա, այսինքն այն հոգիները, որոնք իսկապես արդեն մեռել են։

Մանիլովը կատարելապես շփոթվեց։ Նա զգում էր, որ ինքը պետք է մի որևէ բան անի, հարց անաչարկի, իսկ թե ի՛նչ հարց,— սատանան գիտե։ Վերջապես նա ավարտեց նրանով, որ կրկին ծուխ բաց թողեց, բայց միայն արդեն ո՛չ թե բերանից, այլ քթածակերից։

— Այսպես՝ ահա, եթե ապրելը չկա՝ ուրեմն աստծո օգնությամբ կարելի է անցնել կայքագրին,— ասաց Չիչիկովը։

— Ինչպես, մեռյալ հոգիներին՝ կայքագի՞ր։

— Է՛, ո՛չ,— ասաց Չիչիկովը։— Մենք կգրենք, թե նրանք կենդանի են, այնպես, ինչպես որ իրոք նշանակված է վերստուգման մարդահամարում։ Ես սովոր եմ ոչ մի բանում չշեղվել քաղաքացիական օրենքներից, թեև դրա համար էլ տուժել եմ ծառայության մեջ, բայց արդեն ներեցեք, պարտականությունն ինձ համար սրբազան գործ է, օրենք—ես պապանձվում եմ օրենքի առաջ։

Վերջին խոսքերը դուր եկան Մանիլովին, բայց դարձյալ այդ գործը նրա խելքին չնստեց և նա պատասխանի փոխարեն սկսեց այնպես ուժեղ ծծել իր չիբուխը, որ սա սկսեց վերջապես խոխոջացնել ֆագոտի պես։ Թվում էր, թե նա ուզում

էր նրանից կարծիք դուրս քաշել այսպիսի մի չլսված հանգամանքի վերաբերմամբ, բայց չիբուխը խռխռացնում էր և ոչինչ։

— Գուցե դուք որևէ կասկածի մե՞ջ եք։

— Ծ՛, շնորհ արեք, ամենևին՛։ Ես չեմ ասում, թե որևէ բան ունեմ, այսինքն քննադատական պահարակում ձեր անձի մասին։ Բայց թույլ տվեք հայտնելու՝ արդյոք այդ ձեռնարկումը կամ ավելի ճշգրիտ ասած՝ համաձայնությունը, ահա այդ համաձայնությունն արդյոք անհամապատասխան չի՞ լինի քաղաքացիական հրահանգներին և Ռուսաստանի հետագա նպատակներին։

Այստեղ Մանիլովը, գլխով մի տեսակ շարժում անելով, շատ ուշադիր նայեց Չիչիկովի դեմքին՝ իր բոլոր դիմագծերի և սեղմած շրթունքների մեջ երևցնելով այնպիսի մի խոր արտահայտություն, որպիսին, կարող է պատահել, բոլորովին չի տեսնված մարդկային դեմքի վրա, թերևս գուցե տեսնված է մի որևէ չափազանց խելացի մինիստրի դեմքին՝ այն էլ իսկապես մի գլուխ տրաքեցնող գործի րոպեին։

Բայց Չիչիկովը պարզապես ասաց, որ նման ձեռնարկումը կամ համաձայնությունը ոչ մի կերպ չի կարող անհամապատասխան լինել քաղաքացիական հրահանգներին և Ռուսաստանի հետագա նպատակներին, իսկ մի րոպե հետո ավելացրեց, որ գանձարանը մինչև անգամ օգուտ կստանա, քանի որ կստանա օրինական հարկեր։

— Այդպե՞ս եք դուք ենթադրում...

— Ես ենթադրում եմ, որ դա լավ կլինի։

— Դե, եթե լավ կլինի՝ գա ուրիշ բան է. ես դրա դեմ ոչինչ չունեմ,— ասաց Մանիլովը և կատարելապես հանգստացավ։

— Հիմա մնում է համաձայնել գնի մասին...

— Ինչպե՞ս թե գնի մասին,— ասաց կրկին Մանիլովը և կանգ առավ։— Մի՞թե դուք ենթադրում եք, թե ես ձեզանից դրամ կվերցնեմ այն հոգիների համար, որոնք, կարելի է ասել, վերջացրել են իրենց գոյությունը։ Եթե ձեր մեջ ծնել է այդպիսի, այսպես ասած ֆանտաստիկ ցանկություն, ապա ես իմ կողմից նրանց կտամ ձեզ անշահորեն և կայքագիրը վերցնում եմ ինձ վրա։

Մեջ կշտամբանք կլիներ սույն դեպքերի պատմագրի համար՝ եթե նա թերանար ասելու, որ գոհունակությունը հաղթահարեց հյուրին՝ Մանիլովի արտասանած այսպիսի խոսքերից հետո։ Որքան էլ նա լրջմիտ էր ու դաստող, բայց այստեղ քիչ մնաց մինչև անգամ մի ոստյուն գործեր այծի նման, որ ինչպես հայտնի է՝ արվում է միայն ուրախության ամենաուժեղ պոռթկումների ժամին։ Նա բազկաթոռի մեջ այնպես ուժգին շուռ եկավ, որ բարձի վրա քաշած բրդե կտորը տեքաքեց. ինքը Մանիլովը մի տեսակ տարակուսանքով նայեց նրան։ Երախտագիտությունից դրդված, նա այստեղ ևեթ այնքան շնորհակալություններ հայտնեց, որ սա շփոթվեց, ամբողջովին կարմրեց, գլխով բացասական նշան արեց, և վերջապես արդեն հայտնեց, որ դա ոչնչից ոչինչ չարժի, որ նա, իսկապես, կամենում էր որևէ բանով ապացուցել իր սրտի ձգտումը, հոգու մագնետիզմը, իսկ մեռյալ հոգիները որոշ չափով կատարելապես փուչ բան են։

— Բոլորովին փուչ բան են, —ասաց Չիչիկովը՝ սեղմելով նրա ձեռքը։ Այստեղ մի շատ խոր հոգոց հանվեց։ Թվում էր, որ նա տրամադիր էր սրտի գեղումների. ո՛չ առանց զգացմունքի և արտահայտչության՝ նա վերջապես արտասանեց հետևյալ խոսքերը.

— Եթե իմանայիք, թե ի՛նչ ծառայություն մատուցեցիք սույն՝ ըստ երևույթին՝ փուչ բանով մի անցեղ ու անգերդաստան մարդու։ Այո, իսկապես ինչե՞ր չեմ քաշել ես, ինչպես որևէ նավակ կատաղի ալիքների մեջ... Ինչպիսի՞ հալածանքների, ինչպիսի՞ հետապնդումների չեմ հանդիպել, ի՛նչ ցավեր չեմ քաշել. և ինչի՞ համար. նրա համար, որ ճշմարտությունն եմ պաշտպանել, որ խղճով մաքուր եմ եղել, որ ձեռ եմ մեկնել և՛ անօգ որբևայրուն, և՛ թշվառ որբին...— այստեղ նա մինչև անգամ-թաշկինակով սրբեց ցայտած արցունքը։

Մանիլովը բոլորովին զգացվել էր։ Երկու բարեկամները երկար ժամանակ սեղմում էին իրար ձեռք և երկար ժամանակ լուռ նայում էին իրար աչքերի, որոնց մեջ երևում էին դուրս հոսած արցունքները։ Մանիլովը ոչ մի կերպ չէր ուզում բաց թողնել մեր հերոսի ձեռքը և այնպես ջերմ էր շարունակում սեղմել, որ սա չէր իմանում ի՛նչպես ազատի։ Վերջապես կամացուկ դուրս հանելով՝ նա ասաց, որ վատ չէր լինի շուտով

կայքագիրը պատրաստել, և լավ կլիներ, որ նա ինքը չգլանար այցելել քաղաքը՝ կայքագիրը հաստատելու գործով։ Հետո վերցրեց գլխարկը և սկսեց հրաժեշտի բարևները։

— Ինչպե՞ս, դուք ուզում եք գնա՞լ,— ասաց Մանիլովը՝ հանկարծ սթափվելով և համարյա վախենալով։

Այդ ժամանակ առանձնասենյակ մտավ Մանիլովան։

— Լիզանկա,— ասաց Մանիլովը մի փոքր խղճալի դեմքով,— Պավել Իվանովիչը թողնում է մեզ։

— Որովհետև մենք ձանձրացրինք Պավել Իվանովիչին.— պատասխանեց Մանիլովան։

— Տիկին, այստեղ,— ասաց Չիչիկովը,— այստեղ, ահա թե ո՛րտեղ,— նա ձեռը դրեց սրտի վրա,— այո՛, այստեղ մըշտապես կապրի հաճելությունը այն ժամանակի, որ անցկացրի ձեզ հետ. և հավատացեք, ինձ համար ավելի մեծ երջանկություն չէր լինի, քան ապրելը ձեզ հետ, եթե ո՛չ միևնույն տան մեջ, ապա գոնե ամենամոտ հարևանությամբ։

— Բայց գիտե՞ք, Պավել Իվանովիչ,— ասաց Մանիլովը, որին շատ դուր եկավ այդ միտքը,— ինչքա՜ն, իսկապես, լավ կլիներ, եթե ապրեինք այսպես միասին, մի հարկի տակ, կամ մի որևէ ծփփի տակ փիլիսոփայեինք որևէ բանի մասին, խորանայինք...

— Օ՛, դա կլիներ դրախտային կյանք,— ասաց Չիչիկովը հառաչելով։— Մնաք բարյավ, տիկի՛ն,— շարունակեց նա մոտենալով Մանիլովայի ձեռիկին։— Մնաք բարյա՛վ, ամենահարգելի բարեկամ, չմոռանա՛ք խնդիրքս։

— Օ՛, վստահ եղեք,— պատասխանեց Մանիլովը,— ես ձեզանից բաժանվում եմ ոչ ավելի, քան երկու օրով։

Բոլորը դուրս եկան սեղանատուն։

— Մնաք բարյա՛վ, սիրելի մանկիկներ,— ասաց Չիչիկովը՝ տեսնելով Ալքիդեսին և Թեմիստոկլյուսին, որոնք զբաղված էին ինչ-որ մի փայտե հուսարով, որի ո՛չ ձեռքը կար և ո՛չ էլ քիթը,— մնաք բարյա՛վ, իմ պստլիկներս։ Դուք ներեցեք ինձ, որ ես ձեզ ոչ մի ընծա չբերի, որովհետև, խոստովանում եմ, մինչև անգամ չգիտեի, թե արդյոք ապրում եք աշխարհում. բայց հիմա, երբ գամ, անպատճառ կբերեմ։ Քեզ՝ Թուր, ուզո՞ւմ ես, Թուր կբերեմ։

— Ուզում եմ,— պատասխանեց Թեմիստոկլյուսը։

— Իսկ քեզ՝ թմբուկ, ճշմարիտ է, չէ՞, քեզ՝ թմբուկ,— շարունակեց նա՝ թեքելով Ալքիդեսի գլխին։

— Տմպուկ,— պատասխանեց Ալքիդեսը շշունջով և գլուխը կախեց։

— Լավ, ես քեզ թմբուկ կդերեմ։ Այնպիսի՜ հիանալի թմբուկ, այ, այսպես կլինի. տո՛ւռռ... ռո՛ւ... տրա՛ տա՛ տա՛, տա՛, տա՛, տա՛... Մնաս բարյա՛վ, հոգյակս, մնաս բարյա՛վ,— այստեղ նա համբուրեց նրա գլուխը և դիմեց Մանիլովին ու նրա ամուսնուն մի թեթև ծիծաղով, որով սովորաբար դիմում են ծնողներին՝ իմացնելով նրանց իրենց երեխաների ցանկությունների անմեղությունը։

— Ճշմարիտ, մնացե՛ք, Պավել Իվանովիչ,— ասաց Մանիլովը, երբ բոլորն արդեն դուրս էին եկել դռան սանդուղքի գլուխը։— Նայեցեք, ի՛նչ ամպեր են։

— Այդ փոքրիկ ամպեր են,— պատասխանեց Չիչիկովը։

— Իսկ գիտե՞ք արդյոք Սոբակևիչի մոտ տանող ճամփան։

— Դրա մասին ուզում եմ հարցնել ձեզ։

— Թույլ տվեք, ես իսկույն կբացատրեմ ձեր կառապանին։— Այստեղ Մանիլովը նույնպիսի սիրալիրությամբ կառապանին բացատրեց գործը և մինչև անգամ նրան մի անգամ «դուք» ասեց։ Կառապանը լսելով, որ պետք է երկու ոլոր բաց թողնել և թեքվել երրորդի վրա՝ ասաց.— գլուխ կհանենք, ձերդ բարեծննդություն,— և Չիչիկովը մեկնեց՝ երկար ժամանակ ուղեկցվելով ոտների մատների վրա բարձրացած տանտերերի թաշկինակի թափահարումներով և բարևի նշաններով։

Մանիլովը բավական ժամանակ կանգնած էր դռան սանդուղքի գլխին՝ աչքերով ճամփու դնելով հեռացող բրիչկան, և երբ սա արդեն սկսեց բոլորովին չերևալ, նա դեռ կանգնած էր՝ ծխամորճը բերանին։ Վերջապես նա սենյակ մտավ, նրա-տեց աթոռին և անձնատուր եղավ մտածմունքներին, հոգեպես ուրախանալով, որ իր հյուրին մի փոքրիկ բավականություն պատճառեց։ Հետո նրա մտքերը աննկատելիորեն անցան ուրիշ առարկաների և վերջապես քշվեցին աստված գիտե թե ո՛ւր։ Նա մտածում էր ընկերական կյանքի բարօրության մասին, այն մասին, թե որքան լավ կլիներ ընկերոջ հետ ապրել որևէ

գետի ափին, հետո այդ գետի վրայով նրա գլխում մի կամուրջ շինվեց, ապա մի հսկայատեսիլ տուն այնպիսի բարձր բելվեդերով[1], որ այնտեղից կարելի էր մինչև անգամ Մոսկվան տեսնել, և այնտեղ երեկոները թեյ խմել բաց օդում և դատողություններ անել զանազան հաճելի առարկաների մասին։— Հետո մտածում էր նա, որ նրանք Չիչիկովի հետ միասին լավ կառքեր նստած հասան մի ինչ-որ հասարակության, որտեղ բոլորին հմայում են իրենց հաճելի վարվեցողությամբ, և որ իբրև թե թագավորը իմանալով նրանց այդպիսի բարեկամության մասին՝ նրանց գեներալի աստիճան շնորհեց և ապա, վերջապես, է՛լ աստված գիտե թե ի՛նչ բաներ, որ նա ինքն էլ ոչ մի կերպ չէր կարող գլուխ հանել։ Չիչիկովի տարօրինակ խնդիրքը հանկարծ ընդհատեց նրա երազանքը։ Այդ միտքը նրա գլխում բնավ չէր նստում. ի՛նչքան էլ նա շուռումուռ էր տալիս՝ բայց ո՛չ մի կերպ չկարողացավ իրեն բացատրել այդ, և բոլոր ժամանակ նստել էր և ծխամորճ էր քաշում, որ տևեց մինչև ընթրիք։

ԳԼՈՒԽ III

Իսկ Չիչիկովը հոգեկան լավ տրամադրության մեջ նստել էր իր բրիչկան, որ վաղուց սլանում էր փոստի խճուղու վրայով։ Նախորդ գլխից արդեն հայտնի է, թե ի՛նչն էր նրա ճաշակի և հակումների գլխավոր առարկան և ուստի զարմանալի չէր, որ շուտով հոգով-մարմնով ամբողջովին խորասուզվեց նրա մեջ։ Ենթադրությունները, նախագծերը և նկատառումները, որ թափառում էին նրա դեմքին, երևում էր, որ շատ հաճելի էին, որովհետև ամեն րոպե իրենցից հետո գոհունակ ժպիտի հետքեր էին թողնում։ Զբաղվելով դրանցով, նա ոչ մի ուշադրություն չդարձրեց այն բանի վրա, որ նրա կառապանը՝ Մանիլովի տան սպասավորների ընդունելությունից գոհ՝ շատ բանիմաց նկատողություններ էր անում կողքի խայտավոր ձիուն, որ լծված էր աջ կողմից։ Այդ խայտավոր ձին շատ տակետակն էր և միայն ցույց էր տալիս, թե քաշում է, մինչդեռ միջին աշխատը և կողքի քուրանը, որ Ատենակալ էր կոչ-

[1] Տան վրայի վերնաշեն տնակ՝ աշտարակի նման։

Վոմ, որովհետև ձեռք էր բերված ինչ-որ ատենակալից, ամբողջ սրտով աշխատում էին, այնպես որ, մինչև անգամ նրանց աչքերում երևում էր այն բավականությունը, որ նրանք ստանում էին դրանից։ «Ֆանդե՛ր բանեցրու, ֆանդե՛ր բանեցրու. տես ո՛նց եմ ֆանդերը բռնում»,— ասում էր Սելիֆանը, տեղից կիսովին վեր կենալով և ծույլին մտրակով ձաղկելով։ «Դու քո գործն իմացիր, նեմչեցի շալվար։ Աշխատը նամուսով ձի է, իրա պարտքը իմանում է, նրան սիրով մի չափ էլ ավել կեր կտամ, նրա համար, որ նամուսով ձի է, Ատենակալն էլ լավ ձի է... Հլա՛, հլա՛, ի՞նչ ես ականջներդ թափ տալիս։ Սարսաղի մինը. բանը որ ասում են՝ իմացի, հայվա՛ն, ես քեզ փիս բան չեմ սովորեցնում։ Հլա մի տես ո՛ւր է ճղում»։ Այստեղ նա դարձյալ ձաղկեց նրան մտրակով՝ ավելացնելով. «Ա՛յ դու բարբարոս։ Անիծա՛ծ Բոնապարտ...»։ Հետո բոլորի վրա բղավեց. «Ա՛յ ձեր հոգուն մատաղ, հա՛» և երեքին միասին մտրակեց արդեն ո՛չ քե իբրև պատիժ, այլ որ ցույց տա, թե գոհ է նրանցից։ Այս բավականությունը պատճառելուց հետո նա կրկին ճառն ուղղեց խալավորին. «Դու հենց իմանում ես՝ արարմունքդ չեմ տեսնո՞ւմ։ Չէ, դու ճշմարի՛տ գործ բռնիր, թե որ ուզում ես քեզ պատիվ տան։ Ա՛յ, տես, կալվածատերի մոտ որ էինք, նրա մարդիկ լավն են. մարդ որ լավն է լինում՝ հոգով սրտով ես նրա հետ եմ։ Լավ մարդու հետ, լավ ընկեր եմ, հոգեկից բարեկամ. թե՞ է պետք խմել, հա՞ց ուտել, աչքի՛ս վրա, մենակ թե՝ լավ մարդ լինի։ Լավ մարդուն էլ ամեն մարդ էլ պատիվ կտա։ Այ, մեր պարոնին ամեն մարդ էլ պատիվ է տալիս, նրա համար որ, լսո՞ւմ ես, թագավորին ծառայություն է արել, բարձր աստիճան ունի...»։

Այսպես դատողություններ տալով Սելիֆանը ընկավ վերջապես ամենահեռավոր վերացականությունների մեջ։ Թե Չիչիկովն ականջ դներ, անձամբ իրեն վերաբերյալ շատ մանրամասնություններ կիմանար, բայց նրա մտքերն այնպես զբաղված էին իր առարկայով, որ որոտի ուժեղ հարվածը միայն ստիպեց նրան սթափվել և իր շուրջը նայել. ողջ երկինքը կատարելապես ծածկվել էր ամպերով և փոշոտ փոստային ճանապարհը՝ անձրևի կաթիլներով։ Վերջապես որոտի հարվածը լսվեց կրկին անգամ ավելի ուժեղ և ավելի մոտ, և անձրևը հանկարծ հորդեց, ինչպես դույլից։ Սկզբում ընդու-

նիլով շեղ ուղղություն՝ նա ծեծում էր բրիչկայի ծածկի մի կողմը, հետո մյուս, ապա հարձակման կերպը փոխելով և բոլորովին ուղիղ ձև ընդունելով՝ թմբկահարից ուղղակի ծածկի գլխին. ցալքուններըը վերջապես սկսեցին թուլել Չիչիկովի երեսին։ Դա նրան հարկադրեց ծածկվել կաշվե վարագույրներով՝ երկու կլոր պատուհանիկներով, որ շինված էին ճամփի տեսարանները դիտելու համար, և հրամայել Սելիֆանին, որ ավելի արագ քշի։ Սելիֆանը, որ նույնպես խոսքի հենց կեսին խանգարվել էր, գլխի ընկավ, որ իսկապես չի կարելի ուշանալ, հենց տեղն ու տեղը կառքի ուսից հանեց ինչ-որ մոխրագույն մահուդի մի ցնցոտի, թևքերը մեջը կախեց, սանձերը ձեռը գցեց և բղավեց իր ձիերի վրա, որոնք հազիվհազ էին ոտք փոխում, որովհետև խրատական ճառերից հետո զգում էին հաճելի մի թուլություն։ Բայց Սելիֆանը ոչ մի կերպ չէր կարողանում հիշել՝ երկո՞ւ քե երեք ոլորան անցավ։ Շշուռատելով և մի քիչ ճամփան հիշելով՝ նա գլխի ընկավ, որ ոլորներ շատ եղան, բայց բոլորը նա բաց թողեց, անցավ։ Որովհետև ուս մարդը դժվար րոպեներին մի բան կհնարի անելու, էլ չընկնելով երկար ու բարակ դատողությունների մեջ՝ ծռելով դեպի աջ առաջին խաչաձև կտրող ճանապարհը, ձայն տվեց. «ա՛յ ձեզ մատաղ, հա՛» և չափ գցեց ձիերին, քի՛չ մտածելով այն մասին, թե ո՛ւր է տանելու բռնած ճամփան։

Սակայն անձրևն ըստ երևույթին երկար ժամանակ պաշար ուներ։ Ճանապարհի վրա նստած փոշին արագ հունցվեց, գարձավ ցեխ և ձիերի համար րոպե առ րոպե ավելի դժվար ոտ գառնում բրիչկան քաշելը։ Չիչիկովն արդեն սկսում էր խիստ անհանգստանալ՝ այսպես երկար ժամանակ չտեսնելով Սոբակևիչի գյուղը։ Նրա հաշվով վաղուց ժամանակն էր տեղ հասնելու։ Նա նայեց դուրս՝ դեսուդեն, բայց այնպես մութն էր, որ թևկուղ մատ կոխի աչքը։

— Սելիֆան,— ասաց նա վերջապես բրիչկայից դուրս ցցվելով։

— Ի՞նչ է, պարոն,— պատասխանեց Սելիֆանը։

— Ապա մի մոխկ տուր, գրուզ չի՞ երևում։

— Ոչ, պարոն, ոչ մի տեղ չի երևում։

Սրանից հետո Սելիֆանը մորակը շարժելով՝ ձայն տվեց մի երգ, ասենք՝ ո՛չ թե երգ, այլ ինչ-որ մի երկար բան, որի

վերջը չկար։ Այնտեղ ամեն բան մտնում էր. բոլոր քաջալերական և դրդիչ աղաղակները, որով մեծարում են ձիերին ամբողջ Ռուսաստանում մի ծայրից մյուսը, ամեն տեսակ ածականներ առանց խտրության, հենց ինչ առաջին անգամ լեզվին եկավ։ Այսպիսով բանը հասավ այնտեղ, որ նա նրանց սկսեց քարտուղարներ անվանել։

Այնինչ Չիչիկովն սկսեց նկատել, որ բրիչկան ճոճվում էր դեսուդեն և ուժգին հարվածներ էր հասցնում իրեն։ Դա նրան զգալ տվեց, որ իրենք Հանապարհից դուրս են եկել և հավանորեն քաշ են գալիս տափանած դաշտի վրայով։ Սելիֆանը, թվում էր, թե ինքն էլ էր գլխի ընկել, բայց ոչ մի խոսք չէր ասում։

— Է՛յ, խարդախ, այս ի՞նչ ճանապարհով ես գնում,— ասաց Չիչիկովը։

— Բա ո՞նց անենք, պարոն, ժամանակն է էդպես. դամշին չի երևում, այնպես մութն է։

Այս ասելով նա այնպես ծռեց բրիչկան, որ Չիչիկովն ստիպված էր երկու ձեռքով իրեն պահել։ Այստեղ միայն նկատեց, որ Սելիֆանը կոնծած էր։

— Պահի՛ր, պահի՛ր, շո՛ւռ կտաս,— գոչեց նա նրան։

— Չէ, պարոն, ո՞նց կարելի է, որ շուռ տամ,— ասաց Սելիֆանը։ Էդ լավ բան չի շուռ տալը. ես ինքս իմանում եմ. իսկի շուռ չեմ տա։— Հետո սկսեց բրիչկան թնթևակի շրջել. շրջեց, շրջեց և վերջապես շուռ տվեց կողքի վրա։ Չիչիկովը ոտքով, ձեռքով շրմփաց ցեխի մեջ։ Սելիֆանը ձիերին, այնուամենայնիվ, պահեց, ասենք՝ նրանք իրենք էլ կկանգնեին, որովհետև սաստիկ ուժասպառվել էին։ Այս չնախատեսված հանգամանքը բոլորովին զարմացրեց նրան։ Իջնելով իր տեղից, նա կանգնեց բրիչկայի առջև, երկու ձեռները կանթեց կողքերին, մինչդեռ պարոնը թպրտում էր ցեխի մեջ՝ աշխատելով այնտեղից դուրս պրծնել, և մի փոքր մտածմունքից հետո ասաց. «Տեսա՞ր, շուռ եկավ»։

— Դու հարբած ես կոշկակարի պես,— ասաց Չիչիկովը։

— Ոչ, պարոն, ո՞նց կարելի է, որ հարբած լինեմ։ Ես իմանում եմ, որ լավ բան չի հարբած լինելը։ Բարեկամ մարդու հետ մի քիչ զրույց եմ արել, նրա համար, որ լավ մարդու հետ զրույց անել կարելի է, սրանում փիս բան չկա, մի

քիչ էլ մի բան կերա հետը։ Բան ուտելը ամոթ բան չի, լավ մարդու հետ կարելի է մի բան ուտել։

— Իսկ ես քեզ ի՞նչ ասացի վերջին անգամ, որ հարբեցիր։ Հը՞։ Մոռացե՞լ ես,— ասաց Չիչիկովը։

— Չէ, ձերդ բարեձննդություն, ո՞նց կարելի է, որ մոռանամ։ Ես իմ բանն իմանում եմ։ Ես իմանում եմ, որ խմելը լավ բան չի։ Լավ մարդու հետ մի քիչ զրույց արի, նրա համար որ...

— Այ, հիմի ես քեզ էնպես մի կթակեմ, կգնաս կիմանաս, թե լավ մարդու հետ ի՛նչպես մի քիչ զրույց արիր։

— Ոնց որ ձեր ողորմածության քեֆն ուզում է,— պատասխանեց ամեն բանի պատրաստ Սելիֆանը.— Թե թակելու է, դե պիտի թակի, ես դրա դեմ խոսք չունեմ։ Թե որ հախն է, ինչի՞ չպիտի թակես, տիրոջ կամքը չի՞։ Թակելը պետք է, նրա համար որ՝ մուժիկը երես է առնում, կարգ ու կանոն է պետք։ Թե որ տեղն է, էն է, թակի, ինչո՞ւ համար չթակես։

Այս դատողության դեմ պարոնը ոչինչ չգտավ պատասխանելու։ Բայց այդ ժամանակ կարծես ինքը բախտը վճռեց խրճաղ նրանց։ Հեռվից շան հաչոց լսվեց։ Չիչիկովն ուրախացած հրամայեց ձիերը առաջ քշել։ Ռուս կառապանը աչքի փոխարեն սուր հոտառություն ունի. դրանից պատահում է, որ նա աչքերը փակելով քշում է ամբողջ ուժով և միշտ մի որևէ տեղ հասնում է։ Սելիֆանը խավարի մեջ ոչինչ չտեսնելով՝ ձիերն այնպես շիփ-շիտակ քշեց գյուղի վրա, որ կանգնեց այն ժամանակ միայն, երբ բրիչկան լծափայտով դիպավ ցանկապատին և երբ էլ ամենևին տեղ չկար գնալու։ Չիչիկովը միայն թափվող անձրևի բանձր քողի միջով նկատեց ինչ-որ կտրան նման մի բան։ Նա Սելիֆանին ուղարկեց դարպասը որոնելու, որ անկասկած երկար կտևեր՝ թե Ռուսիայում շվեյցարների տեղակ չինեին ժիր շները, որոնք նրա մասին այնպես զիլ զեկուցեցին, որ նա մատներն ականջները տարավ։ Մի լույս սահեց պատուհաններից մեկում և մշուշոտ շիթով հասավ ցանկապատին՝ մեր ուղևորներին ցույց տալով ճամփան։ Սելիֆանն սկսեց դուռը ծեծել և շուտով դարպասի դռնակը բաց անելով դուրս ցցվեց արմյակը գլխին քաշած մի

կերպարանք, և պարոնը իր ծառայի հետ լսեց կնկա խոպոտ ձայն.— ո՞վ է դուռը ծեծում, ի՞նչ եք իրար անցել։

— Ճանապարհորդ ենք, մայրիկ, թուլլ տվեք գիշերենք,— ասաց Չիչիկովը։

— Տեսա՞ր ինչ թեթև ոտքեր ունի,— ասաց պառավը,— ի՛նչ ժամանակ է եկել. այստեղ պանդոկ չի, կալվածատիրուհի է ապրում։

— Ի՞նչ արած, մայրիկ, տեսնում ես՝ ճանապարհը կորցրել ենք, հո այսպիսի ժամանակ տափաստանում չենք գիշերելու։

— Ժամանակն էլ մութ, փիս ժամանակ,— ավելացրեց Սելիֆանը։

— Ձենդ կտրի, հիմար,— ասաց Չիչիկովը։

— Իսկ դուք ո՞վ եք,— հարցրեց պառավը։

— Ազնվական եմ, մայրիկ։

Ազնվական բառը պառավին ստիպեց կարծես մի փոքր մտածել. «Սպասեցեք, ես տիկնոջը կասեմ»,— ասաց նա և մի երկու րոպեից հետո արդեն վերադարձավ լապտերը ձեռին։ Դարպասը բացվեց։ Մի փոքրիկ կրակ փայլատակեց նրան մյուս պատուհանում։ Բրիչկան, մտնելով բակը, կանգ առավ մի փոքրիկ տան առջև, որը մթան պատճառով դժվար էր լավ տեսնել։ Միայն նրա մի կեսն էր լուսավորված պատուհանի լույսով. երևում էր նաև տան առաջ հավաքված ջուրը, որի վրա շիտակ խփում էր նույն լույսը։ Անձրևը զիլ թակում էր փայտե կտրանը և խոխոջուն առվակներով հոսում տակին դրած տակառի մեջ։ Իսկ այդ ժամանակ գամփռները ձգել էին իրենց բազմատեսակ ձայները. մեկը՝ գլուխը վեր բռնած այնպես էր ձգում և այնպիսի ջանասիրությամբ, կարծես դրա համար աստված գիտե, թե ի՛նչ ոռճիկ էր ստանում, մյուսը արագ-արագ վրա էր տալիս ժամկոչի պես. նրանց միջին փոստի զանգակի պես զնգում էր, հավանորեն, ջահել ձագի անդադրում դիսկանտը, և այդ ամենն ավարտում էր բասը, թերևս ծերունի, օժտված ուժեղ շնչին բնույթով, որովհետև խորդում էր, ինչպես խորդում է երգիչ խմբի կոնտրաբասը, երբ համերգի թունդ ժամանակն է, տենորները ոտների մատներին են բարձրանում բարձր նոտան հանելու խիստ ցանկությունից և շուրջն ամեն բան, ինչ որ կա, ձգտում է դեպի վեր՝

գլուխը ետ գցելով, և միայն նա, չածիլած կզակը փողկապի մեջ խոթելով, պպզած և համարյա մինչև գետին խոնարհված, այնտեղից բաց է թողնում իր նոտան, որից դողում և շրըխկում են ապակիները։ Արդեն միայն շների հաչոցից, որ կազմված էր այդպիսի երաժիշտներից՝ կարելի էր ենթադրել, որ գյուղը կարգին մեծ էր. բայց մեր թրջված ու մրսած հերոսը ոչ մի բանի մասին չէր մտածում, բացի անկողնուց։ Դեռ բրիչկան չէր կանգ առել բոլորովին, որ նա թռավ տանդուղքի գլուխը, երերաց և քիչ մնաց ընկներ։ Կրկին տանդուղքի գլուխը դուրս եկավ ինչ-որ մի կին, որ առաջվա եկողից երիտասարդ էր, բայց նրան շատ նման։ Նա Ջիլիկովին տարավ սենյակը։ Սա հարևանցի երկու հայացք նետեց. սենյակը փակցված էր հին, շերտավոր պաստառներով, ինչ-որ թռչուններին նկարներ, պատուհանների մեջտեղը փոքրիկ հայելիներ՝ մուգ գույնի շրջանակներով՝ ոլորած տերևների ձևով, ամեն մի հայելու ետև դրված էր կա՛մ նամակ, կա՛մ հին խաղաթղթի դարսակ, կա՛մ գուլպա, պատի ժամացույց՝ թվացույցին ծաղիկներ նկարած... Ավելին նկատելու ուժ չկար։ Նա զգում էր, որ աչքերն իրար էին կպել, կարծես մեկը նրանց վրա մեղր էր քսել։ Մի րոպե անց ներս մտավ տանտիկինը, մի տարեց կին, ինչ-որ ննջարանի գլխանոցով, շտապ հագած, ուսին էլ ֆլանել, մե՛կն այն կանանցից, ոչ մեծ կալվածատիրուհիներից, որոնք լաց են լինում երաշտից, վնասներից, և գլուխները մի փոքր ծուռ են բռնում, միևնույն ժամանակ քիչ-քիչ փող են հավաքում նախշուն քսակներում, որ դրված են լինում կամոդի արկղերում։ Մի քսակում հավաքում են ուրբաթանոցները, մյուսում՝ հիսուն կոպեկանոցները, երրորդում՝ քսանհինգ կոպեկանոցները, թեև այնպես է թվում, թե կամոդում ոչինչ չկա, բացի սպիտակեղենից, մեկ էլ՝ գիշերվա կոֆտաներից, մեկ էլ՝ կծիկներից, մեկ էլ՝ թելահան արած սպոպից, որ սահմանված է հետո հագուստ դառնալու, եթե հինը որևէ կերպ այրվի՝ տոնական թիվածքներ և զանազան շաքարահացեր թխելու ժամանակ կամ քրքրվի ինքնիրեն։ Բայց հագուստը չի այրվի և ինքնիրեն չի քրքրվի. խնայող է պառավը և սպոպին դեռ երկար ժամանակ վիճակված է թելահան վիճակում պառկած մնալու, իսկ ապա բոլոր մյու-

հնաոճի հետ կտակով բաժին հասնելու երրորդ ալորտի քրոջ աղջկան։

Չիչիկովը ներողություն խնդրեց, որ անհանգստացրեց՝ անսպասելի ժամանումով։ «Ոչի՛նչ, ոչի՛նչ,— ասաց տանտիկինը։— Ձեր ի՛նչ ժամանակ աստված ձեզ բերեց։ Այնպիսի անձրև ու փոթորիկ է, ճանապարհիյ եկած եք, հարկավոր էր մի բան ուտեք, բայց գիշեր է, պատրաստել չի կարելի»։

Տանտիկնոջ խոսքերն ընդհատվեցին մի տարօրինակ ֆշշոցով, այնպես որ, հյուրը քիչ էր մնում վախենա. աղմուկը նման էր այն բանին, որ կարծես ողջ սենյակը լցվեց օձերով, բայց վերև նայելով նա հանգստացավ, որովհետև գլխի ընկավ, որ պատի ժամացույցի քաշն ուզեց զարկել։ Ֆշշոցին թնկույն հետևեց խռխռոց, և վերջապես իր բոլոր ուժերը մի լավ հավաքելով՝ նա այնպիսի մի ձայնով ժամը երկուսը խփեց, կարծես մեկը փայտով ծեծեց կոտրած կճուճը, որից հետո ճոճանակը կրկին սկսեց հանգիստ չխկալ աջ ու ձախ։

Չիչիկովը շնորհակալություն հայտնեց տիկնոջը՝ ասելով, որ իրեն ոչինչ հարկավոր չէ, որ նա թող ոչ մի բանով չանհանգստանա, որ բացի անկողնուց նա ոչինչ չի պահանջում, և միայն հետաքրքրվեց իմանալու, թե ի՛նչ տեղեր է ընկել ինքը և արդյոք այստեղից հեռո՞ւ է կալվածատեր Սոբակևիչի մոտ գնալու ճանապարհը, որին պառավը պատասխանեց, որ չի էլ լսել այդպիսի՛մի անուն, և որ այդպիսի կալվածատեր բոլորովին չկա։

— Դոնե Մանիլովին ճանաչո՞ւմ եք,— ասաց Չիչիկովը։

— Իսկ Մանիլո՞վն ով է։

— Կալվածատեր է, մայրիկ։

— Չէ, չեմ իմացել, այդպիսի կալվածատեր չկա։

— Ապա ովքե՞ր կան։

— Բոբրով, Սվինին, Կանապատև, Խարպակին, Տրեպակին, Պլեշակով։

— Հարո՞ւստ մարդիկ են թե ոչ։

— Ոչ, որդի, շատ հարուստ չեն։ Մեկը քսան հոգի ունի, մեկը՝ երեսուն, իսկ այնպիսինները, որ հարյուր, ասենք, այդպիսիներ չկան։

Չիչիկովը նկատեց, որ կարդին խուլ անկյուն է ընկել։

— Դոնե հեռո՞ւ է այստեղից մինչև քաղաք։

— Մի վաքսուն վերստ կլինի, որքան ափսոսում եմ, որ քան չկա ուտեք, քեզ չէի՞ք կամենա, որդի՝

— Շնորհակալ եմ, մայրիկ, ոչինչ չեմ ուզում, բացի անկողնուց՝

— Ճիշտ է, այսպիսի ճանապարհից հետո շատ է հարկավոր հանգստանալ։ Այ, հենց այստեղ էլ տեղավորվեցեք, որդի, այս բազմոցի վրա։ Էյ, Ֆետինյա, բե՛ր փետրե ներքնակը, բարձերն ու սավանը։— Ի՜նչ ժամանակ աստված ձեզ ուղարկեց։ Ի՜նչ որոտմունք է, ամբողջ ժամանակ սրբապատկերի առաջ մոմը վառած եմ պահել։ Է՛, որդի, մեջքդ ու կողքդ ամբողջը ցեխակոլոլ է եղել վարազի պես. այդ որտե՞ղ ես բարեհաճել կեղտոտվել՝

— Դեռ փառք աստծո, որ միայն կեղտոտվեցի, պետք է շնորհակալ լինել, որ կողերս ամբողջովին չեմ ջարդել՝

— Տեր աստված, ի՜նչ սարսափելի է, արդյոք մի բանով պետք չէ՞ մաժել մեջքդ՝

— Շնորհակալ եմ, շնորհակալ, մի՛ անհանգստանաք։ Միայն հրամայեցեք ձեր աղջկան, որ հագուստներս չորացնի և սրբի՝

— Լսո՞ւմ ես, Ֆետինյա,— ասաց տանտիկինը դառնալով այն կնոջը, որ մոմով դուրս էր եկել սանդուղքի գլուխը, և որը արդեն փետրե ներքնակը քաշ էր տվել բերել ու երկու ՝ողքից ձեռներով քրքրելով այն՝ փետուրների հեղեղ բաց թողել ամբողջ սենյակում։ «Ինու վերցրու պարոնի կաֆտանը ներքնաշորթի հետ, նախ՝ չորացրու կրակի առաջ, ինչպես անում ևիր հանգուցյալ տիրոջդ համար, հետո՝ քերիր և մի լավ թա՛փ տուր՝

— Աչքիս վրա, տիկին,— ասաց Ֆետինյան, սավանը փռելով փետրե ներքնակի վրա և բարձերը դնելով՝

— Է՛, անկողինդ պատրաստ է,— ասաց տանտիկինը։— Յոեսուքյո՛ւն, որդի, ցանկանում եմ հանգիստ քուն։ Արդյոք ուրիշ բան պետք չէ՞։ Գուցե սովոր ես, որդի, որ մեկը քնելուց առաջ կրունկդ քորի, հանգուցյալս առանց դրան իսկի չէր քնում՝

Բայց հյուրը հրաժարվեց կրունկները քորելուց էլ։ Տանտիկինը դուրս գնաց և նա իսկույն շտապեց հանվել, Ֆետինյային տալով վրայից հանած հանդերձանքը, քե՛ վրայի, քե՛

տակի, և Ֆետինյան՝ իր կողմից նույնպես բարի գիշեր մաղթելով՝ քաշ տվեց տարավ այս թաց սպառազինությունը։ Մնալով մենակ՝ նա ոչ առանց բավականության՝ նայեց իր անկողնին, որը համարյա մինչև առաստաղ էր հասնում։ Ֆետինյան, ինչպես երևում էր, վարպետ էր փետրե ներքնակներ թափ տալու։ Երբ աթոռը ոտի տակ դնելով նա բարձրացավ անկողնի վրա, սա նրա տակին իջավ համարյա մինչև հատակը և փետուրներն՝ իրենց սահմանից քշված՝ թռան սենյակի բոլոր անկյունները։ Հանգցնելով մոմը՝ նա ծածկվեց չիթն վերմակով և նրա տակին կրենդելի նման կծկվելով՝ նույն րոպեին քնեց։ Արթնացավ հետևյալ օրն արդեն բավական ուշ առավոտյան։ Արևը պատուհանի միջով փայլում էր ուղիղ նրա աչքերի մեջ, և ճանճերը, որոնք երեկ հանգիստ քնած էին պատերին ու առաստաղին՝ բոլորը դիմեցին դեպի նա, մեկը նստեց նրա շրթունքին, մյուսը՝ ականջին, երրորդն առիթ էր փնտրում մի կերպ նստել ուղիղ նրա աչքի մեջ, իսկ նրան, որն անզգուշություն էր ունեցել մոտ նստել մեծ պնչին՝ նա քնաթաթախ ներս քաշեց քթի մեջ, որից սիրնդ փոշտաց—հանգամանք, որ պատճառ դարձավ նրա արթնանալուն։ Մի հայացք նետելով սենյակի չորս կողմը՝ հիմա նկատեց, որ պատկերների վրա բոլորը թռչուններ չէին, նրանց մեջ կախված էր Կուտուզովի պատկերը և յուղաներկով նկարած մի ինչ-որ ծերուկ՝ համազգեստի թևի վրա կարմիր ծալվածքով, ինչպես որ հագնում էին Պավել Պետրովիչի ժամանակ։ Ժամացույցը դարձյալ ֆշշաց և խփեց տասը. դռնից ներս նայեց մի կնոջ դեմք և նույն րոպեին էլ անհետացավ, որովհետև Չիչիկովը՝ ցանկանալով ավելի լավ քնել՝ վրայից դեն էր գցել ամեն ինչ։ Ներս նայող դեմքը նրան կարծես մի փոքր ծանոթ թվաց։ Նա սկսեց մտաբերել, տեսնես ո՞վ էր դա, և վերջապես հիշեց, որ դա տանտիկինն էր։ Նա հագավ շապիկը, զգեստներն արդեն չորացրած և սրբած դրած էին նրա կողքին։ Հագնվելով, նա մոտեցավ հայելուն և դարձյալ այնպես բարձր փոշտաց, որ այդ րոպեին պատուհանին մոտեցած հնդու աքաղաղը, պատուհանն էլ հո շատ մոտ էր գետնին, հանկարծ և խիստ արագ իր տաբօրինակ լեզվով նրան ուղղած մի բան դուրս տվեց, հավանորեն ցանկանում էր ողջունել, որի ձևրիվ Չիչիկովը նրան հիմար ասաց։ Մոտենալով պատուհանին, նա սկսեց մտիկ

տալ իր առջև եղած տեսարանին. պատուհանը համարյա բացվում էր հավանոցի վրա, համենայն դեպս նրա առջև գտնված նեղլիկ բակն ամբողջովին լցված էր թռչուններով և ամեն տեսակ տնային արարածներով։ Հնդուհավերին ու հավերին թիվ ու համար չկար։ Նրանց կողքին ման էր գալիս աքաղաղը հանգիստ քայլերով, կատարը թափահարելով և գլուխը մի կողքի բռնած՝ կարծես մի բանի ականջ դնելով. խոզն իր ընտանիքով հայտնվեց անմիջապես, հենց տեղն ու տեղն աղբի կույտը քանդելով՝ նա հարևանցիորեն կերավ հավի ձագը և չնկատելով այդ, շարունակեց իր կարգին լափել ձմերուկի կեղևները։ Այդ փոքրիկ բակը կամ հավանոցը պատած էր մի տախտակե ցանկապատով, որի եռևում ձգվում էին կաղամբի, սոխի, կարտոֆիլի, ճակնդեղի և տնտեսության համար այլ կարևոր բանջարեղենի ընդարձակ մարգերը։ Մարգերում տեղ-տեղ ցցված էին խնձորենիներ և այլ մրգատու ծառեր, ծածկված ցանցերով՝ կաչաղակներից և ճնճղուկներից պաշտպանելու համար, որոնցից վերջինները խոտորնակ ամպերի պես թռչում էին մի տեղից մյուսը։ Այդ իսկ պատճառով մի քանի խրտվիլակներ էին տնկած երկար ձողերի վրա՝ թևերը լայն չուած, նրանցից մեկի վրա հագցրել էին իրեն՝ տանտիկնոջ գլխանոցը։ Մարգերից այն կողմ ընկած էին գյուղացիների խրճիթները, որոնք թեև ցրիվ էին շինված և ուղիղ փողոցների մեջ չէին ամփոփված, բայց՝ ինչպես նկատեց Ջիչիկովը՝ ցույց էին տալիս բնակվողների ունևորություն, որովհետև խնամքով էին պահվել, ինչպես հարկն է։ Կտուրների հնացած տախտակը ամենուրեք փոխարինված էր նորով, դարպասները ոչ մի տեղ չէին ծռվել, իսկ երեսները դեպի իրեն դարձված չարդախների տակ նա՝ տեղ կար, որ նկատեց համարյա մի նոր պահեստի սայլ, կար որ և երկու։ «Է՛, սրա գյուղը փոքր չէ»,— ասաց նա և հենց տեղն ու տեղը վճռեց խոսք բանալ և մի լավ ծանոթանալ տանտիկնոջ հետ։ Նա մտիկ տվեց դռան արանքից, որից տանտիկինը քիչ առաջ գլուխը հանեց և տեսնելով նրան թեյի սեղանի մոտ նստած՝ ներս մտավ ուրախ և փաղաքշոտ դեմքով։

— Բարև, պարոնս, ինչպե՞ս քնեցիք,— ասաց տանտիկինը՝ տեղից վեր կենալով։ Նա հագնված էր երեկվանից լավ,

մուգ զգեստ, և աբդեն առանց ննջարանի պլխանոցի, բայց վզին կրկին մի բան փաթաթած էր։

— Լա՛վ, լա՛վ,— ասաց Ջիլիկովը՝ նստելով բազկաթոռին։— Դուք ինչպե՞ս եք, տիրուհիս։

— Վատ եմ, հարգելիս։

— Ինչո՞ւ այդպես։

— Անքնություն ունեմ։ Գոտկատեղս միշտ ցավում է, իսկ ատա ոսկրուկից վերև, հարգելիս, հենց այն է, չարդվում է։

— Կանցնի, տիրուհիս, կանցնի։ Չարժե ուշք դարձնել։

— Տա աստված՝ անցնի։ Խոզի ճարպ քսեցի և սկիպիդարով էլ թրջեցի։ Իսկ թեյն ինչո՞վ անուշ կանեք։ Շշի մեջ մրգի հյութ կա։

— Վնաս չունի, տիրուհի, մրգի հյութով էլ կխմենք։

Կարծում եմ՝ ընթերցողը արդեն նկատեց, որ Ջիլիկովը, չնայած փաղաքշական կերպարանքին՝ սակայն ավելի ազատ էր խոսում, քան Մանիլովի հետ և բոլորովին ձևականություններ եսևից չէր ընկնում։ Պետք է ասել, որ մեզ մոտ՝ Ռուսիայում, եթե օտարերկրացիներին որոշ բաներում դեռ չեն հասած, ապա գերազանցել են վարվեցողության մեջ։ Անհնարին է թվարկել մեր վարվեցողության երանգներն ու նրբությունները։ Ֆրանսիացին կամ գերմանացին հավիտյան գլխի չի ընկնի և չի հասկանա նրա առանձնահատկություններն ու տարբերությունները, նա համարյա միևնույն ձայնով և միևնույն լեզվով կսկսի խոսել և՛ միլիոնատերի հետ, և՛ մանր ծխախոտավաճառի հետ, թեև, իհարկե, հոգում կարգին կստորանա առաջինի հանդեպ։ Մեզանում այդպես չէ. մեզանում կան այնպիսի իմաստուններ, որոնք երկու հարյուր հոգի ունեցող կալվածատերերի հետ կխոսեն բոլորովին այլ կերպ, քան նրա հետ, որն ունի երեք հարյուր հոգի, իսկ նրա հետ, ով ունի երեք հարյուր, դարձյալ այնպես չեն խոսի, ինչպես հինգ հարյուր ունեցողի հետ, իսկ նրա հետ, ով ունի հինգ հարյուր, դարձյալ ո՛չ այնպես, ինչպես ութ հարյուր ունեցողի. մի խոսքով՝ թեկուզ հասիր մինչև միլիոն ունեցողը, միշտ կգտնվեն նրբերանգներ։ Ենթադրենք, օրինակի համար, գոյություն ունի մի պաշտոնատուն, ո՛չ այստեղ, այլ աշխարհի ծայրում եղած մի պետության մեջ, իսկ պաշտոնատան մեջ՝ ենթադրենք՝ գոյություն ունի պաշտոնատան մի վարիչ։ Խնդ-

թեմ նայեք նրան, երբ նա նստած է իր ստորադրյալների մեջ— ուղղակի վախիդ մի ծպտուն էլ չես կարողանա հանել։ Հսկարտություն և ազնվաբարոյություն, և էլ արդեն ի՞նչ չի արտահայտում նրա դեմքը. ուղղակի վերցրու վրձինը և նկարիր. Պրոմեթևս, վճռապես Պրոմեթևս։ Նայում է արծվի պես, քայլ է փոխում սահուն, չափով։ Հենց նույն արծիվը, հենց դուրս եկավ թե չէ իր սենյակից և մոտենում է իր պետի առանձնասենյակին, այնպես է կաքավի նման շտապում, թղթերը կռնատակին, ինչքան ուժ ունի։ Հասարակության մեջ և երեկույթում եթե բոլորը ոչ բարձր աստիճան ունեն՝ Պրոմեթևսն այնպես էլ մնում է Պրոմեթևս, իսկ եթե մի փոքր բարձր է աստիճանը՝ ապա Պրոմեթևսի հետ այնպիսի մի կերպարանափոխություն է կատարվում, որ Օվիդիոսն[1] էլ չի հնարի. ճանճ, ճանճից էլ փոքր, դարձավ ավազ։ «Սա իսկի Իվան Պետրովիչը չէ»,— ասում ես նայելով նրան։ «Իվան Պետրովիչը ավելի բարձրահասակ է, իսկ սա թե՛ կարճ է, թե՛ լղար, նա խոսում է բարձր, բասով և երբեք չի ծիծաղում, իսկ սա սատանան գիտե ի՛նչ բան է, թուշունի պես ծվում է և միշտ ծիծաղում է»։ Մոտենում ես, ավելի մոտ, նայում, իսկապես Իվան Պետրովիչն է։ «Է՛հ», մտածում ես ինքդ քեզ... Սակայն դառնանք գործող անձերին։ Չիչիկովը, ինչպես մենք արդեն տեսանք, վճռեց բոլորովին ձևականությունների ետևից չընկնել, ուստի վերցնելով թեյի բաժակը և մեջը լցնելով մրգի հյութը՝ սկսեց մի այսպիսի խոսակցություն.

— Լավ գյուղ ունեք, տիրուհիս։ Քանի՞ շունչ են։

— Շունչը, որդիս, ութսունից մի քիչ պակաս է,— ասաց տանտիկինը, —բայց ցավն այն է, որ ժամանակները վատ են. այ, հերու էլ այնպես երաշտ էր, որ աստված հեռու տանի։

— Սակայն մուժիկները տեսքով պինդ են, խրճիթներն ամուր են։ Բայց թուլլ տվեք իմանալ ձեր ազդանունը։ Ես այն պես ցրվեցի... եկա գիշեր ժամանակ...

— Կոռոբոչկա, կոլեգիական քարտուղարի այրի։

— Ներեցեք շնորհակալ եմ։ Իսկ անուն-հայրանո՞ւնը։

— Նաստասյա Պետրովնա։

---

[1] Հին հռոմեական բանաստեղծ Պուբլիոս Օվիդիոս Նազոն (43 թ. մ.թ.ա. 18 թ. մ.թ.), որը իր մյուս երկերի՝ հեղինակել է «Կերպարանափոխություններ» պոեմը։

— Նաստասյա Պետրո՞վնա. լավ անուն է Նաստասյա Պետրովնա։ Ես մի հարազատ մորաքույր ունեմ՝ Նաստասյա Պետրովնա։

— Իսկ ձեր անունն ի՞նչ է,— հարցրեց կալվածատիրուհին,— դուք երևի թե ատենակա՞լ եք։

— Ոչ, մայրիկ,— պատասխանեց Չիչիկովը քթի տակ ծիծաղելով.— ատենակալ չենք, բայց հենց այնպես մեր գործերով շրջում ենք։

— Հա, դուք ուրեմն գնո՛ղ եք։ Որքան ափսոս, իսկապես, որ մեղրը ծախեցի վաճառականներին այնպես էժան, այ, իսկ դու, պարոնս ինձնից երևի կգնեիր։

— Այ, տես որ մեղրը չէի գնի։

— Բայց էլ ուրիշ ի՞նչ։ Գուցե կանեփի թե՞լ։ Արի տես, որ կանեփի թելս էլ քիչ է. մի կես փութ կլինի։

— Ո՛չ, տիրուհիս, ուրիշ տեսակի ապրանք. ասացեք, ձեզ մոտ գյուղացիներ մեռե՞լ են։

— Է՛, պարոնս, տասնութ մարդ,— ասաց պառավը հառաչելով.— Այն էլ լավ տղամարդիկ մեռան, բոլորն աշխատող։ Դրանից հետո, ճիշտ է ծնվեցին, բայց նրանցում ի՞նչ կա. բոլորը մանր-մունր, բայց ատենակալը եկավ,— պետք է, ասում է, վճարվի ամեն հոգու համար։ Մարդիկ մեռած են, բայց եկ հարկ տուր, ոնց որ թե կենդանի են։ Անցյալ շաբաթ ինձ մոտ դարբինը այրվեց, այնպես վարպետ դարբին էր, իսկականագործի վարպետություն էլ գիտեր։

— Մի՞թե հրդեհ է եղել ձեզ մոտ, մայրիկ։

— Աստված փրկեց այդ փորձանքից. հրդեհն ավելի վատ կլիներ. ինքն այրվեց, որդի։ Իրեն մեջ մի տեսակ կրակ ընկավ, չափից ավելի խմեց, մենակ կապույտ կրակ դուրս եկավ նրանից, ողջ այրվեց, այրվեց և ածուխի պես սևացավ, բայց այնպիսի մի վարպետ դարբին էր, ու հիմի բան չունեմ, թե նստեմ մի տեղ գնամ, մարդ չկա՝ ձիերը պայտի։

— Աստծու կամքն է, տիրուհիս,— ասաց Չիչիկովը հառաչելով.— աստծու իմաստության դեմ ոչինչ չի կարելի ասել... Ինձ տվեք նրանց, Նաստասյա Պետրովնա։

— Ի՞նչը, պարոնս։

— Այ, հենց այդ բոլորը, որ մեռան։

— Բայց նրանց ո՞նց տամ ձեզ։

— Հենց այնպես, հասարակ կերպով։ Կամ կուզե՞ք, ծախեցեք։ Ես նրանց փոխարեն ձեզ փող կտամ։

— Բայց ինչպե՞ս ախր, ճշմարիտ, գլուխս չի մտնում։ Ջլինի՞ ուզում ես նրանց գետնից հանել։

Ջիչիկովը տեսավ, որ պառավը հեռուները գնաց, և որ անհրաժեշտ է հասկացնել, թե բանն ինչո՞ւմն է։ Մի քանի խոսքով նա բացատրեց նրան, որ հանձնումը կամ գնումը միայն պետք է թղթի վրա արձանագրել, և հոգիները կհաշվակից կլինեն իրեն կենդանի։

— Բայց ձեր ինչի՞ն են պետք նրանք,— ասաց պառավը՝ աչքերը նրա վրա չռելով։

— Այդ արդեն իմ գործն է։

— Բայց ախր նրանք մեռած են։

— Դե, ո՞վ է ասում, թե նրանք կենդանի են, դրա համար էլ վնասի մեջ եք, որ մեռած են. դուք նրանց համար վճարում եք, իսկ հիմա ես ձեզ կազատեմ հոգսից ու վճարումներից։ Հասկանո՞ւմ եք։ Եվ ո՛չ միայն կազատեմ, այլև դրանից բացի դեռ մի տասնհինգ ռուբլի էլ կտամ։ Հը, հիմա պա՞րզ է։

— Ճշմարիտ՝ չգիտեմ,— ասաց տանտիկինը, խոսքերը հատ-հատ արտասանելով։— Ախր ես երբեք մեռածներին չեմ ծախել։

— Բա՜ն ասաց։ Դա հրաշքի պես բան կլիներ, եթե դուք նրանց ծախեիք որևէ մեկին, կամ դուք կարծում եք, թե նրանցում իսկապես որևէ շա՞հ կա։

— Ոչ, ես այդ չեմ մտածում։ Ի՞նչ օգուտ պիտի լինի նրանցում. ոչ մի օգուտ էլ չկա։ Ինձ մենակ այն է դժվարացնում, որ նրանք մեռած են։

«Պնդաճակատն է երևում այս կնիկը»,— մտածեց ինքն իրեն Ջիչիկովը։— Լսեցի՛ք, մայրիկ։ Ախր մի լա՛վ մտածեցեք. ախր դուք քանդվում եք. նրա համար դուք հարկ եք տալիս, իբրև կենդանիի...

— Ախ, պարոնս, էլ մի՛ ասի այդ,— վրա բերեց կալվածատիրուհին։ Դեռ երեք շաբաթ առաջ մուծեցի հարյուր հիսունից ավելի։ Ատենակալին էլ յուղոտեցի։

— Ա՛յ տեսնո՞ւմ եք, մայրիկ։ Դե հիմա մի լավ քննեցեք միայն այն հանգամանքը, որ այլևս ատենակալին յուղոտել պետք չէ, որովհետև հիմա ես եմ վճարում նրանց համար. ես

և ոչ թե դուք. ես վերցնում եմ ինձ վրա բոլոր պարտավորությունները, մինչև անգամ կայքագիրը ես կազմել կտամ իմ փողով, հասկանո՞ւմ եք արդյոք այս։

Պառավը մտածմունքի մեջ ընկավ։ Նա տեսնում էր, որ գործը, իսկապես, կարծես շահավոր էր, բայց միայն շատ նոր էր ու արտասովոր. ուստի սկսեց խիստ վախենալ, որ որևէ կերպ չխաբի իրեն այս գնողը, եկել է աստված գիտե ո՛րտեղից. այն էլ դեռ գիշեր ժամանակ։

— Հը, մայրիկ, ձեռքներս խփե՞նք,— ասաց Չիչիկովը։

— Ճշմարիտ, որդի, դեռ իսկի չի եղել, որ մեռելները ծախեմ։— Կենդանի մարդկանց զիջեցի՝ այ, երեք տարի է՝ Պրոտոպոպովին, երկու աղջիկ՝ ամեն մեկը հարյուրական ռուբլով, և շատ էլ շնորհակալ եղավ, այնպես հիանալի աշխատողներ դուրս եկան. ինքներն անձեռոցիկներ են գործում։

— Դե, գործը կենդանի մարդկանց մասին չէ. աստված նրանց հետ։ Ես հարցնում եմ մեռածների մասին։

— Ճշմարիտ, առաջին անգամն է, վախենում եմ, որ որևէ կերպ վնասի մեջ չընկնեմ։ Գուցե, պարոնս, դու ինձ խաբում. ես, իսկ նրանք է՞ն... նրանք գուցե ավելի արժեն։

— Լսեցեք, տիրուհիս... ախ, ի՞նչ տեսակ մարդ եք դուք, ախր ի՞նչ կարող են արժենալ նրանք։ Մի լավ նայեցեք. ախր նրանք փոշի են։ Հասկանո՞ւմ եք արդյոք. դա ուղղակի փոշի է։ Դուք վերցրեք ամեն մի անպետք, վերջին բանը. օրինակ՝ մինչև անգամ հասարակ փալասը. փալասն էլ գին ունի. այդ գոնե կգնեն թղթի գործարանի համար, իսկ նրանք ախր ոչ մի բանի պետք չեն։ Դե ինքներդ ասեք, ինչի՞ են պետք նրանք։

— Այդ իսկապես ճիշտ է։ Ոչ մի բանի էլ պետք չեն. ախր ինձ մենակ մի բան է կանգնեցնում, որ նրանք արդեն մեռած են։

«է՛հ, ի՞նչ հաստագլուխն է»,— ասաց ինքն իրեն Չիչիկովը՝ արդեն սկսելով համբերությունից դուրս գալ։ «Արի՛ համոզի՛ր սրան. քրտինքը տվեց վրաս, անիծված պառավ»։ Այստեղ նա գրպանից թաշկինակը հանելով՝ սկսեց քրտինքը սրբել, որ իսկապես դուրս էր տվել ճակատին։ Ասենք՝ Չիչիկովն իղուր էր բարկանում. մի ուրիշ թե՛ հարգելի, թե՛ մինչև անգամ պետական մի մարդ իրականում դուրս է գալիս կատարյալ Կոռոբոչկա։ Հենց մի բան մեխվեց գլխի մեջ, էլ ոչ մի

կերպ չես կարող հանել, ինչքան կուզես՝ պատճառաբանություններ բեր, ցերեկվա պես պարզ, ամեն բան նրանից ետ է ցատկում ինչպես ռետինե գնդակը՝ պատից։ Քրտինքը սրբելով՝ Զիլիկովը վճռեց փորձել, թե արդյոք չի՞ կարելի սրան մի ուրիշ կողմից ճանապարհի վրա գցել։— Տիրուհիս,— ասաց նա,— դուք կա՛մ չեք ուզում իմ խոսքերս հպատականալ, կա՛մ դիտմամբ եք խոսում, միայն նրա համար, որ մի բան խոսեք... ես ձեզ փող եմ տալիս, տասնհինգ ռուբլի թղթադրամ։ Հասկանո՞ւմ եք այս։ Ախր սա փող է։ Դուք այդ չեք գտնի փողոցում։ Դե խոստովանեցեք, քանիսո՞վ ծախեցիք մեղրը։

— Փութը 12 ռուբլի։

— Հոգուդ վրա մի քիչ մեղք բարձեցիք, տիրուհիս։ Տասներկուսի չծախեցիք։

— Աստված վկա՝ ծախեցի։

— Դե, տեսնո՞ւմ եք։ Այդ նրա համար, որ մեղր է։ Դուք այդ հավաքել եք՝ կարող է պատահել, մոտ մի տարի, հոգ տանելով, աշխատելով, նեղություն կրելով. ման եք եկել, մեղուներին չարչարել եք, ամբողջ ձմեռ նրանց կերակրել եք նկուղում, իսկ մեռյալ հոգիների բանը սույն աշխարհի բան չէ։ Դուք ձեր կողմից ոչ մի ջանք չեք դրել, այստեղ աստծու կամքն է եղել, որ նրանք թողնեն սույն աշխարհը՝ վնաս հասցնելով ձեր տնտեսությանը։ Այնտեղ դուք աշխատանքի, ջանքի համար ստացել եք տասներկու ռուբլի այստեղ ո՛չ մի բանի համար ստանում եք, ձրիաբար, այն էլ՝ ո՛չ տասներկու, այլ տասնհինգ, այն էլ՝ ո՛չ թե արծաթ, այլ բոլորը կապույտ թղթադրամ։— Այսպիսի ուժեղ համոզմունքներից հետո Զիլիկովն արդեն համարյա չէր կասկածում, որ պառավը վերջապես կհակվի։

— Ճշմարիտ,— պատասխանեց կալվածատիրուհին.— որքանայրու անբախտ գործն էլ այսպես է, ավելի լավ կլինի՝ ես մի քիչ էլ սպասեմ, գուցե վաճառականներ կգան, գներին կհարմարվեմ։

— Ամո՛թ է, ամո՛թ, մայրիկ, ուղղակի՛ ամոթ է։ Ախր ի՞նչ եք ասում. մի ինքներդ մտածեցեք, ո՞վ կգնի նրանց։ Ի՞նչ կարող է նա նրանցից շինել։

— Տնտեսության մեջ կարող է մի բանի պետք գան...— առարկեց պառավը, բայց էլ խոսքը չվերջացրեց, բաց արեց

բերանը և նայում էր նրան՝ համարյա վախով, կամենալով իմանալ, թե դրան ի՞նչ կասի նա։

— Մեռածները տնտեսության մե՞ջ է՛, ո՞ւր գնացիք։ Ճնճղուկներ սիրտ վախեցնեն գիշերները ձեր մարգերում, ի՛նչ է։

— Աջն ու խաչը մեզ վրա. Ի՛նչ սարսափելի բաներ ես ասում,— ասաց պառավը երեսը խաչակնքելով։

— Ապա էլ ուրիշ ո՞րտեղ էիք ուզում նրանց գործի դնել։ Բայց իսկապես ախր ոսկորներն ու գերեզմանները բոլորը ձեզ կմնան, հանձնումը թղթի վրա է միայն։ Հիմա ինչպե՞ս է։ Ի՞նչ կասեք, պատասխան տվեք գոնե։

Պառավը կրկին մտածմունքի մեջ ընկավ։

— Ինչի՞ մասին եք մտածում, Նաստասյա Պետրովնա։

— Ճշմարիտ, ես չեմ իմանում, թե ո՛նց անեմ, էլի լավ է՝ ես ձեզ կանեփի թել ծախեմ։

— Ախր կանեփի թելն ի՞նչ բան է։ Չէ որ ես ձեզանից խնդրում եմ բոլորովին ուրիշ բան, իսկ դուք կանեփի թել եք կոխում բուռն։ Կանեփի թելը թող մնա իր տեղը, ուրիշ անգամ կգամ, կանեփի թելն էլ կառնեմ։ Ուրեմն ինչպե՞ս եք ասում, Նաստասյա Պետրովնա։

— Աստված վկա, ապրանքն այնպես տարօրինակ է, բոլորովին չեղած բան է։

Այստեղ Չիչիկովը իսպառ դուրս եկավ համբերության սահմաններից, աթոռը զայրացած խփեց հատակին և պառավին սպառնաց սատանայով։

Պառավը սատանայից արտասովոր կերպով վախեցավ։— Օխ, մի՛ հիշիր նրան, աստված նրա հետ,— ճչաց նա ամբողջովին գունատվելով,— նրան երեք օր առաջ երազում տեսա, այդ անիծվածին։ Խելքս փչեց գիշերը աղոթքից հետո թուղթ բաց անել, և երևում է՝ աստված պատժելու համար էլ ուղարկեց նրան։ Այնպես էլ գարշելի երևույթ ուներ. պոզերը՝ եզան պոզերից երկար։

— Ես զարմանում եմ, թե ի՛նչպես նրանք տանայնականերով չեն երևում ձեզ երազում։ Միմիայն քրիստոնեական մարդասիրությունից էի ուզում. տեսնում եմ՝ խեղճ այրի կին է, չարչարվում է, նեղության մեջ է... գետինն անցիր ու չորացի՛ր քո ամբողջ գյուղով...

— Ախ, այդ ի՛նչ ուշունցներ եք թափում,— ասաց պառավը՝ երկյուղով նայելով նրան։

— Ախր ձեզ հետ խոսելիս՝ էլ ուրիշ խոսք չի գալիս բերանս։ Ճշմարիտ, կարծես թե մի տեսակ, էլ վատ խոսք չասենք՝ բակի շուն լինեք, որ պառկել է ձեզի վրա. ո՛չ ինքն է ուտում, ո՛չ ուրիշին թողնում ուտի։ Ես ուզում էի ձեզանից զանազան տնտեսության մթերքներ առնել, որովհետև ես արքունական կապալներ էլ եմ վերցնում...։— Այստեղ նա մի փոքր ստեց, թեև ի միջի այլոց և առանց հեռուն մտածելու, բայց անսպասելի հաջող։ Արքունական կապալները ուժեղ կերպով ազդեցին Նաստասյա Պետրովնայինն, գոնե այն չափ, որ նա արդեն համարյա աղաչական ձայնով ասաց. «Դե էլ ի՞նչ այդպես տաքացար։ Եթե առաջուց իմանայի, որ դու այդպես բարկացկոտն ես՝ ես քեզ բոլորովին. էլ չէի հակաճառի»։

— Ախր բարկանալո՛ւ բան է։ Գործը երկու փուչ կաղին չարժի, իսկ ես դրա համար պիտի բարկանամ։

— Դե լավ, համեցեք, համաձայն եմ տասնհինգ թղթադրամով տալու, մենակ, տե՛ս, պարոնս, կապալի բանը. թե կպատահի հաճարի կամ հնդկացորենի ալյուր գնել, կամ ձավար, կամ մորթած անասուն, խնդրում եմ՝ սիրտս չկոտրես։

— Ոչ, սիրուհիս, չեմ կոտրի,— ասաց նա, իսկ մինչդեռ ձեռքով սրբում էր քրտինքը, որ առվի պես հոսում էր նրա երեսից, նա հարցրեց պառավին, թե արդյոք քաղաքում չունի՞ մի որևէ հավատարմատար կամ ծանոթ, որին կարողանա լիազորել կալքագիրը կազմելու և բոլորն աններու, ինչ հարկավոր էր։ «Ինչպե՞ս չէ, ավագ քահանա, հայր Կիրիլի որդին ծառայում է ատյանում»,— ասաց Կոռոբոչկան։ Չիչիկովը խնդրեց նրան հավատարմագիր գրել և որպեսզի ազատի ավելորդ դժվարություններից՝ ինքը հանձն առավ շարադրել։

— «Լավ կլիներ»,— մտածում էր այդ ժամանակ ինքնիրեն Կոռոբոչկան. «եթե նա արքունական կարիքների համար վերցներ ինձանից ալյուր և անասուն, պետք է նրա սիրտը շահել. երեկ երեկոյից դեռ խմորը մնում է, գնամ ասեմ Ֆետինյային, որ բլինի թխի, լավ կլինի մի անալի կարկանդակ էլ պատրաստի ձվով, ինձ մոտ փառավոր են պատրաստում, շատ ժամանակ էլ չի պահանջում»։ Տանտիրուհին դուրս գնաց, նրա համար, որ իր մտադրությունն ի կատար ածի

կարկանդակ պատրաստելու վերաբերյալ և հավանորեն լրացնելու, իսկ Ջիչիկովը դուրս եկավ հյուրասենյակ, ուր անց էր կացրել գիշերը, այն մտադրությամբ, որ իր արկղիկից հանի հարկավոր թղթերը։ Հյուրասենյակում վաղուց արդեն ամեն բան կարգի էր բերվել. ճոխ փետրե ներքնակը դուրս էր տարված. բազմոցի առջև դրած էր սփռոցով սեղանը։ Արկղիկը դնելով նրա վրա, նա մի փոքր հանգստացավ, որովհետև զգում էր, որ ամբողջովին քրտնել, ջուր է կտրել, վրան ի՛նչ ուներ չուներ, շապկից մինչև գուլպաները՝ բոլորը թաց էր։ «Ո՛ւֆ, ինչպես հոգնեցրեց, անիծված պառավ»,— ասաց նա մի փոքր հանգստանալով և բաց արեց գզրոցը։ Հեղինակը հավատացած է, որ կան այնպիսի հետաքրքրասեր ընթերցողներ, որոնք կկամենան մինչև անգամ իմանալ գզրոցի պլանն ու ներքին դիրքը։ Համեցե՛ք, ինչո՞ւ չբավարարենք։ Ահա՛ նա, ներքին դիրքը. ուղիղ մեջտեղը սապոնի ամանն է, սապոնի ամանի հետևը վեց-յոթ նեղ միջնորմներ են ածելիների համար. հետո՝ քառակուսի ծակուծուկեր ավազանոցի և քանաքամանի համար, նրանց աջ անկյունում բացվածք՝ փետրե գրիչների, զմուռսի և այն ամենի համար, որ ավելի երկարավուն է. հետո ամեն տեսակ միջնորմներ՝ խուփերով և առանց խուփերի, այն ամենի համար, որ ավելի կարճ է, լցված է այցի, թաղման, թատերական տոմսերով և այլն, որ դարսված էին հիշատակի համար։ Վերևի ամբողջ արկղն իր բոլոր միջնորմներով հանվում էր և նրա տակ մնում էր մի տարածություն, որ բռնված էր թերթածավալ թղթերի կապուկներով, հետո՝ գալիս էր մի փոքրիկ գաղտնի արկղ՝ փողի համար, որ գզրոցի կողքից աննկատելի դուրս էր քաշվում։ Ամեն անգամ նա տիրոջ ձեռքով այնպես արագ էր դուրս քաշվում ու ներս քշվում նույն րոպեին, որ ոտույգ չի կարելի ասել, թե միջին ո՛րքան փող կար։ Ջիչիկովը հենց իսկույն էլ զբաղվեց, և գրչի քիթը բանալով սկսեց գրել։ Այդ ժամանակ ներս մտավ տանտիկինը։

— Արկղիկդ լավն է, պարոնս,— ասաց նա՝ նստելով նրա մոտ։— Ասիմ՝ Մոսկվայումն ես գնել։

— Մոսկվայում,— պատասխանեց Ջիչիկովը, շարունակելով գրել։

— Ես այդ գիտեի, այնտեղ միշտ լավ բաներ են շինում։ Երեք տարի առաջ քույրս այնտեղից տաք կոշիկներ բերեց

երեխաների համար, այնքան դիմացկուն ապրանք է, մինչև հիմա հագնում են։ Տես, է՛, ինչքան դրոշմավոր թուղթ ունես,— շարունակեց նա՝ արկղիկի մեջ նայելով։ Եվ իսկապես, այնտեղ բավականին դրոշմավոր թուղթ կար։ «Մի թերթ էլ է ինձ նվիրեիր. ի՛նչքան կարիք ունեմ դրան. կպատմի՛ դաստարանը խնդիր պիտի տամ, չես իմանում ինչի՛ վրա գրեմ»։

Ջիչիկովը բացատրեց նրան, որ այդ թուղթն այն տեսակից չէ, որ դա կայքագրեր գրելու հա՞մար է, ոչ թե խնդիրքներ։ Բայց և այնպես, որպեսզի հանգստացնի նրան, տվեց նրան մի ինչ-որ թերթ մի ռուբլի արժեքով։ Նամակը գրելուց հետո՝ տվեց նրան ստորագրելու և խնդրեց մուժիկների մի փոքրիկ ցուցակ։ Բանից դուրս եկավ, որ կալվածատիրուհին չէր պահում ո՛չ մի գրություն, ո՛չ մի ցուցակ, այլ համարյա բոլորին անգի՛ր դիտեր։ Ջիչիկովն ստիպեց հենց այստեղ նեթ թելադրել նրանց անունները։ Մի քանի գյուղացիներ մի փոքր զարմացրին նրան իրենց ազգանուններով, իսկ ավելի ևս՝ մականուններով, այնպես որ նա ամեն անգամ, լսելով այդ, առաջ կանգ էր առնում և ապա արդեն սկսում էր գրել։ Առանձնապես զարմացրեց նրան ինչ-որ մի Պյոտր Սավելև Նեուվաժայ-Կոռիտո[1], այնպես որ նա չկարողացավ չասել՝ «երկար է, հա՛»։ Մյուսի անվանը կպցրած էր Կառովիյ Կիրպիչ[2], մյուսը դուրս եկավ պարզապես Կոլեսո Իվան[3]։ Վերջացնելով գրելը՝ նա մի քիչ օդը հոտվտաց և գրավիչ հոտ առավ՝ մի ինչ-որ յուղի մեջ պատրաստված տաք բանից։

— Խոնարհաբար խնդրում եմ նախաճաշել,— ասաց տանտիկինը։ Ջիչիկովը նայեց և տեսավ, որ սեղանի վրա արդեն դրված էին սունկեր, կարկանդակներ, պիրոժոկներ, շանիշկիներ, պոյագլիներ, բլիններ, ամեն տեսակ բլիճներ՝ միջուկներով. միջուկ՝ սոխով, միջուկ՝ խաշխաշով, միջուկ շոռով, միջուկ՝ սունկերով և է՛լ ի՛նչ ասես։

— Անալի կարկանդակ ձվով,— ասաց տանտիկինը։

Ջիչիկովը մոտեցավ ձվով անալի կարկանդակին և, տեղն ու տեղը կեսից մի փոքր պակաս ուտելով՝ գովեց այն։ Եվ

---

1 Բառացի՝ Պյոտր Սավելև—Մի՛ Հարգիր-Տաշտ։

2 Կովի աղյուս։

3 Ձեռի Իվան։

իսկապես, կարկանդակը ինքնին արդեն համեղ էր, իսկ պառավի հետ ունեցած գլխացավանքից և քաշքշուկից հետո ավելի համեղ թվաց։

— Իսկ բլիննե՞րը,— ասաց պառավը։

Դրան ի պատասխան Չիչիկովը երեք բլին ծալեց միասին և թաթախելով հալած յուղի մեջ՝ ուղարկեց բերանը, իսկ շրթունքներն ու ձեռները սրբեց անձեռոցիկով։ Կրկնելով այդ մի երեք անգամ՝ նա խնդրեց տանտիկնոջը, որ հրամայի բրիչկան լծեն։ Նաստասյա Պետրովնան իսկույն ևեթ ուղարկեց Ֆետինյային, հրամայելով միաժամանակ կրկին բերել տաք բլիններ։

— Ձեր բլինները շատ համեղ են, տիրուհիս,— ասաց Չիչիկովը՝ անցնելով բերած տաք բլիններին։

— Դե ինձ մոտ բլինները լավ են թխվում,— ասաց տանտիկինը.— բայց այ, դժբախտություն է, բերքը վատ է, ալյուրն էլ ընտիրներից չէ... Բայց ի՞նչ կա, պարոն, ինչո՞ւ եք շտապում,— ասաց նա՝ տեսնելով, որ Չիչիկովը գլխարկը վերցրեց,— ախր բրիչկան էլ դեռ լծված չէ։

— Կլծեն, մայրիկ, կլծեն։ Իմը շուտ են լծում։

— Ուրիմն, շատ եմ խնդրում, մի՛ մոռանաք կապալների մասին։

— Ջեմ մոռանա, չեմ մոռանա,— ասաց Չիչիկովը դուրս գալով հաշտը։

— Իսկ խոզի ճարպ չե՞ք գնում,— ասաց տանտիկինը նրա ետևից գնալով։

— Ինչո՞ւ չեմ գնի։ Կգնեմ, բայց հետո։

— Մենդյան տոներին խոզի ճարպ էլ կունենամ։

Կգնենք, կգնենք, ամեն ինչ կգնենք, խոզի ճարպ էլ կգնենք։

— Դուցե ձուկի փետուր պետք լինի։ Փիլիպոսի պասին ձուկի փետուր էլ կունենամ։

— Լավ, լավ— ասաց Չիչիկովը։

— Այ, տեսնո՞ւմ ես, պարոնս, քո բրիչկան էլ դեռ պատրաստ չէ,— ասաց տանտիկինը, երբ նրանք դուրս եկան սանդուղքի գլուխը։

— Կլինի, պատրաստ կլինի։ Բացատրեցեք ինձ միայն, թե ինչպե՞ս ընկնենք մեծ ճանապարհը։

— Ո՞նց անենք այդ,— առաց տա՛տիկինը,— բացատրելը դժվար է, ոլորաններ շատ կան. քի՞ հետդ պստիկ աղջիկ դնեմ, որ ճանապարհը ցույց տա։ Կարծեմ՝ կառապանի մոտ տեղ կա, որ նա նստի։

— Ինչպե՞ս չէ։

— Լավ, կտամ այդ պստիկ աղջիկը. նա գիտե ճանապարհը, բայց տես, հետդ չտանես, վաճառականները մեկին տարան։

Չիչիկովը վստահեցրեց նրան, որ չի տանի, և Կոռոբոչկան, հանգստանալով, սկսեց աչք ածել, թե ի՛նչ կար իր բակում. աչքը տնկեց մառանապետուհու վրա, որ փայտե ձմանով մեղր էր դուրս բերում մառանից, գյուղացու վրա, որ երևաց գարպասի մոտ, և կամաց-կամաց թաղվեց իր տնտեսության կյանքի մեջ։ Բայց ինչո՞ւ համար այսպես երկար զբաղվենք Կոռոբոչկայով։ Թե Կոռոբոչկան է, թե Մանիլովն է, թե տնտեսվար կյանքն է, կամ ոչ տնտեսվար — ա՛նց կենանք։ Չէ՞ որ զարմանալի են աշխարհիս բաները. ուրախ բանը վայրկենաբար տխուր է դառնում՝ եթե միայն երկար կանգնես նրա մոտ, և այն ժամանակ աստված գիտե, թե մի՛տքդ ինչե՛ր կընկնեն։ Դուցե սկսես անգամ մտածել թե՝ արդյոք իսկապե՞ս Կոռոբոչկան այդքան ցած է կանգնած մարդկային կատարելագործության անվերջ աստիճանների վրա։ Արդյոք իսկապե՞ս այդքան մեծ է անդունդը, որ նրան բաժանում է իր քրոջից, որն անհասկանալի կերպով շրջափակված է արիստոկրատիկ տան պատերով, մեջը անուշահոտ թուջե սանդուղքներ, փայլուն պղինձ, կարմիր փայտ և գորգեր, հորանջում է չավարտված գրքի վրա, սպասելով սրամիտ բարձրաշխարհիկ մի այլի, ուր նրան կտրամադրվի մի դաշտ՝ փայլելու խելքով և արտահայտելու անգիր արած մտքեր, մտքեր՝ որ մոդայի օրենքի համաձայն ամբողջ շաբաթ զբաղեցնում է քաղաքը, մտքեր՝ ո՛չ այն մասին, թե ի՛նչ է կատարվում իր տանը և իր կալվածներում, որոնց գործերը խճճված են և խանգարված՝ տնօրինի տնտեսության գործը չհասկանալու, այլ այն մասին, թե ի՛նչ ուղղություն է ընդունել նորաձև կաթոլիկությունը։ Բայց անցնե՛նք, անցնե՛նք. ինչո՞ւ խոսենք այդ մասին։ Բայց և ինչո՞ւ անմիտ, ուրախ, անհոգ րոպեներին, ինքնիրեն, հանկարծ անց է կենում մի որևէ հրաշալի կոհակ. դեռ

ծիծաղը չի փախել բոլորովին դեմքից, արդեն ուրիշ տեսակ ես դառնում հենց նույն մարդկանց մեջ, և արդեն ուրիշ լույսով է լուսավորվում դեմքը...

— Այ, բրիչկան, բրիչկան,— վեր թռավ տեղից Ջիչիկովը, տեսնելով վերջապես իր մոտեցող բրիչկան։

— Հը՞, հիմար, ի՞նչ էիր երկար մլուլ տալիս։ Երևում է՝ երեկվա խումարդ դեռ չես կոտրել։

Սելիֆանը դրան ոչինչ չպատասխանեց։

— Մնաք բարով, տիրուհիս է՛, ապա ո՞ւր է ձեր աղջիկը։

— Է՛յ, Պելագե՛յա,— ասաց կալվածատիրուհին սանդուղքի գլխին կանգնած մոտ տասնմեկ տարեկան մի փոքրիկ աղջկա, հագին ներկած քաթանի դերյա և ոտները բոբիկ, որ հեռվից կարելի էր կոշիկի տեղ ընդունել, այնպես նրանք թարմ ցեխի մեջ կոլոլվել էին։— Ապա մի պարոնին ցույց տուր ճանապարհը։

Սելիֆանն օգնեց աղջկանը կառապանի տեղը բարձրանալու, և նա մի ոտով կանգնելով աստիճանի վրա՝ առաջ կեղտոտեց ցեխով, իսկ հետո բարձրացավ վերև և տեղավորվեց նրա մոտ։ Աղջկա ետևից նաև ինքը Ջիչիկովը ոտը դրեց աստիճանի վրա և բրիչկան ծռելով աջ կողքի վրա, որովհետև բավական ծանր էր, վերջապես տեղավորվեց՝ ասելով. «Ահա, հիմա լա՛վ է, մնաք բարո՛վ, տիրուհիս»։ Ձիերը շարժվեցին։

Սելիֆանն ամբողջ ճանապարհին խիստ էր և միաժամանակ շատ ուշադիր դեպի իր գործը, որ նրա հետ պատահում էր միշտ այն բանից հետո, երբ նա կա՛մ մեղանչում էր, կա՛մ հարբած էր եղել։ Ձիերը զարմանալի էր, թե որքան մաքրված էին։ Նրանցից մեկի սարքը, որ մինչ այդ համարյա միշտ պատառոտված տեսք էր ունենում՝ այնպես որ կաշու տակից խծուծը երևում էր, ճարտարորեն կարված էր։ Ամբողջ ճանապարհին նա լուռ էր, միայն մտրակով ձաղկում էր և ոչ մի խրատական ճառով չէր դիմում ձիերին, թեև խայտավոր ձին, իհարկե, կուզեր լսել մի որևէ խրատական խոսք, որովհետև այդ միջոցին-սանձերը միշտ մի տեսակ ծուլորեն էին բռնել աստղ-խոսող կառապանի ձեռքերը, և մտրակը միայն ձևի համար էր ղրոսնում մեջքերի վրա։ Բայց մռայլ շրթունքներից այս անգամ լսելի էին լինում միայն միօրինակ անհաճո բացականչություններ. «Դե՛, սատկած, դե՛, քնի՛, քնի՛»

և ուրիշ ոչինչ։ Մինչև անգամ ինքը աշխատ ձին և ատենակալը կմգոհ էին, ոչ մի անգամ չլսելով ո՛չ հաճոյալից, ո՛չ հարգալից խոսքեր։ Խատուտիկ ձին զգում էր ամենահաճելի հարվածներ իր գիրուկ և լայն մասերի վրա։ «Տեսնո՜ւմ ես՝ ոնց է չարությունը բռնել,— մտածում էր նա ինքնիրեն՝ մի փոքր թափահարելով ականջները։ Ոնց էլ լավ գիտե որտե՛ղ խփի։ Չի ձաղկի ուղիղ մեջքիդ, հենց ջոկում է, թե ո՛րտեղն է ավելի զգայուն, ականջիդ կկպցնի կամ փորի տակ կձաղկի»։

— Դեպի աջ, հը՞,— չոր հարցով դիմեց Սելիֆանն իր մոտ նստած աղջկան՝ մտրակով ցույց տալով անձրևից սևացած ճանապարհը վառ կանաչ, թարմացած դաշտերի միջով։

— Ա՛չ, ո՛չ, ես ինքս ցույց կտամ,— ասաց աղջիկը։

— Բա ո՞ր կողմը,— ասաց Սելիֆանը, երբ ավելի մոտ գնացին։

— Ա՛յ, թե ո՛ր,— պատասխանեց աղջիկը՝ ձեռքով ցույց տալով։

— Դու էլ հա՛,— ասաց Սելիֆանը.— հենց աջ է, որ կա. չի իմանում աջը ո՛րն է, ձախը՝ ո՛րը։

Թեև օրը շատ լավ էր, բայց գետինն այն աստիճան թեխոտվել էր, որ բրիչկայի անիվները, բռնվելով հողով, շուտով կարծես թաղիքներով ծածկվեցին, որ նշանակալի չափով ծանրացնում էր կառքը։ Բացի այդ, կավահող էր, խիստ կպչուն։ Սա և մյուսը պատճառ դարձան, որ նրանք չկարողացան գյուղամիջի կողմնակի ճանապարհներից դուրս գալ կեսօրից առաջ։ Առանց աղջկա դժվար էր և այդքանն անել, որովհետև ճանապարհները սողում էին ամեն կողմ, ինչպես բռնված իւեցգետիններ, որոնց դուրս են թափում տոպրակից և Սելիֆանն ստիպված պիտի անիվները պտտեցներ ոչ իր մեղքով։ Շուտով աղջիկը ձեռքով ցույց տվեց հեռվից սկին տվող մի շենք, ասելով. «Ա՛յ, փոստի խճուղին»։

— Իսկ շե՞նքը,— հարցրեց Սելիֆանը։

— Պանդոկ է,— ասաց աղջիկը։

— Է՛,— հիմա մենք ինքներս կգնանք,— ասաց Սելիֆանը,— գնա՛ տուն։

Նա կանգ առավ և օգնեց աղջկան ցած իջնելու, քթի տակին մրթմրթալով. «Ա՛յ դու, սևատուտիկ»։

Ջիչիկովն աղջկան մի պղնձե գրոշ տվեց, և նա գնաց դեպի տուն, արդեն գոհ նրանով, որ կառապանի տեղում նըստել էր։

ԳԼՈՒԽ IV

Մոտ գնալով պանդոկին՝ Ջիչիկովը հրամայեց կանգնել՝ երկու պատճառով։ Մի կողմից, որ ձիերին հանգիստ տան, իսկ մյուս կողմից, որ ինքն էլ մի բան ուտի և պըրնդանա։ Հեղինակը պետք է խոստովանի, որ խիստ նախանձում է այդ տեսակ մարդկանց ախորժակին և ստամոքսին։ Նրա համար վճռապես ոչինչ չեն նշանակում բոլոր մեծ կարողության պարոնները, որ ապրում են Պետերբուրգ և Մոսկվա, և ժամանակն անց են կացնում մտածելու վրա, թե ի՛նչ ուտեն վաղը և ինչպիսի՛ ճաշ հնարեն վաղը չէ մյուս օրը, և որոնք այդ ճաշն սկսում են ոչ այլ կերպ, քան բերանը ճամփելով նայս դեղահատը, ապա կուլ են տալիս ոստրե, ծովային սարդեր և այլ տարօրինակ բաներ, և հետո ուղևորվում են Կարլսբադ կամ Կովկաս։ Ո՛չ, այդ պարոնները երբեք նրա՛ նախանձը չեն շարժել։ Բայց միջին կարողության տեր պարոնները, որ մի՛ կայարանում խոզապուխտ են պահանջում, մյուսո՛ւմ՝ խոճկոր, երրորդում՝ թառափի կտոր կամ որևէ սոխով եփած երշիկ, և ապա իբրև թե ոչինչ չի պատահել՝ նըստում են սեղան, ի՛նչ ժամանակ կուզես, և ահա դեղձահյութով և շերեփաձկնով գայլձկան ապուրը ֆշշում ու մոմոում է նրանց ատամների մեջ՝ ուտվելով ձկան կարկանդակով կամ լոքոյի պոչի կարկանդակով, այնպես որ, հոտն առնողի ախորժակը բաց է անում,— ահա այդ պարոններն իսկապես՝ օգտվում են երկնային նախանձելի պարգևով։ Շատ կարողության տեր պարոնը հենց այս րոպեին կզոհեր կեսը գրավ դրած և չդրած գյուղացիների և կալվածների՝ իր բոլոր բարեբախտություններով՝ թե՛ արտասահմանյան և թե՛ ռուսական այրեկերպի, միայն թե ունենար այնպիսի ստամոքս, որ ունի միջին կարողության տեր պարոնը, բայց ցավը նրանումն է, որ ո՛չ մի դրամով, անգամ ո՛չ մի կալվածով՝ իր բարեբախտություններով և առանց բարեբախտությունների, անկարելի է ձեռք բերել այնպիսի ստամոքս, որ ունենում է միջին կարողության տեր պարոնը։

Փայտաշին, խունացած պանդոկը ընդունեց Չիչիկովին իր նեղլիկ հյուրընկալ ծածկի տակ՝ շինված մաքուր տաշած սյուների վրա, որ նման էին եկեղեցիների հին մոմակալներին։ Պանդոկը մեծ չափի ռուսական իրճիթի նման մի բան էր։ Ջանազան ծաղկավոր ցնքեր, թարմ փայտից շինած՝ պատուհանների բոլորքը և կտրան տակին սուր և աշխույժ խատուտում էին նրա խանգրած պատերը. փեղկերի վրա նկարված էին ծաղիկներով լի սափորներ։

Նեղլիկ փայտե սանդուղքով բարձրանալով վեր, լայն հաշտը, նա հանդիպեց մի ճոռոցով բացվող դռան և խայտաճամուկ չիթ հագած մի հասնելիկ պառավի, որն ասաց. այստե՛ղ համեցեք։ Սենյակում պատահեցին բոլոր հին ծանոթները, որ պատահում են ամենքին փոքրիկ փայտե պանդոկներում, որոնցից քիչ չեն շինված ճանապարհներին, այսինքն՝ եղյամակալած ինքնաեռը, հարթ քերած սոճենու պատերը, անկյունում եռանկյունի պահարանը թեյամաններով և գավաթներով, ճենապակե ոսկեջրած ձվիկներ սրբապատկերների առաջ՝ կախված կապույտ և կարմիր ժապավեններից, նորերս ձագ բերած կատուն, հայելին՝ որ երկու աչքի տեղ չորս է ցույց տալիս, իսկ դեմքի տեղ՝ ինչ որ տափակ բլիթ, վերջապես փնջերով հոտավետ խոտեր և մեխակներ սրբապատկերների ետևը խրած, չորացած ա՛յն աստիճան, որ ո՛վ ցանկանում է հոտ քաշել՝ միայն փոշոտում է և ուրիշ ոչինչ։

— Խոճկոր կա՞,— այսպիսի հարցով դիմեց Չիչիկովը կանգնած պառավին։

— Կա։

— Ծովաբողկով և թթվասերո՞վ։

— Ծովաբողկով և թթվասերով։

— Բե՛ր։

Պառավն սկսեց ջանք թափել և բերեց ափսեն, անձեռոցիկ՝ ա՛յն աստիճան օսլայած, որ ցից կանգնում էր չորացած կեղևի պես, հետո մի դանակ՝ ոսկրե կոթը դեղնած, գրշահատի պես բարակ, երկճյուղ պատառաքաղ և աղաման, որ ոչ մի կերպ սեղանի վրա ուղիղ դնել չէր կարելի։

Մեր հերոսն իր սովորության համաձայն խոսուն նրա հետ խոսակցության բռնվեց և հարցուփորձ արեց, թե արդյոք նա ի՞նքն է պանդոկը պահում, թե՞ տեր ունի, և ինչքա՞ն

եկամուտ է բերում պանդոկը, և արդյոք նրա հե՞տ են ապրում զավակները, և մեծ տղան ամուրի՞ է թե ամուսնացած, և ինչպիսի՞ կին է առել, արդյոք մե՞ծ բաժինքով թե ոչ, և արդյոք գո՞հ է աները, և չբարկացա՞վ արդյոք, որ քիչ նվերներ ստացավ հարսանիքում, մի խոսքով, ոչ մի բան բաց չթողեց։ Ինքնին հասկանալի է, որ հետաքրքրվեց իմանալու, թե շրջակայքում նրանց մոտ ի՛նչ կալվածատերեր կան, և իմացավ, որ ամեն տեսակ կալվածատերեր կան. Բլոխինը, Պոչիտաևը, Միլնոյը, Զնոյրակով գնդապետը, Սոբակևիչը։ «Ա՛ Սոբակևիչին ճանաչո՞ւմ ես»,— հարցրեց նա և իսկույն իմացավ, որ պառավը ճանաչում է ոչ միայն Սոբակևիչին, այլև Մանիլովին, որ Մանիլովն ավելի քաղաքավարի է, քան Սոբակևիչը. կհրամայի իսկույն հավ խաշել, կուզի և հորթենի. եթե կա ոչխարի լյարդ, ոչխարի լյարդ էլ կուզի, և այդ ամենի համն է տեսնում միայն. բայց Սոբակևիչը կուզի մի որևէ բան, բայց արդեն բոլորը կուտի և մինչև անգամ էլի կպահանջի նույն գնով։

Երբ նա այսպես զրույց էր անում՝ ուտելով խոճկորը, որի վերջին կտորն էր արդեն մնում, լսեց մոտեցող կառքի անիվների թխկթխկոց։ Դուրս նայելով պատուհանից, նա տեսավ պանդոկի առջև կանգ առնող մի թեթև բրիչկա, երեք լավ ձի լծած։ Բրիչկայից դուրս էին գալիս երկու ինչ-որ տղամարդ։ Մեկը խարտյաշ, բարձրահասակ, մյուսը մի փոքր ցածրահասակ և թխագույն։ Խարտյաշը հագին մուգ կապույտ վենգերկա ուներ, թխագույնը՝ ուղղակի շերտավոր արխալուղ։ Հեռվից դանդաղ երևաց դարձյալ մի փոքրիկ կառք, դատարկ, որ քաշ էր տալիս մի ինչ-որ երկարամազ քառաձի՝ պատրուտած անրակներով և թոկե սարքով։ Խարտյաշը իսկույն սանդուղքներից վեր բարձրացավ, մինչդեռ թխագույնը դեռ մնաց և ինչ-որ բան էր տնտղում բրիչկայի մեջ, տեղն ու տեղը զրույց անելով ծառայի հետ և միաժամանակ թաշկինակը թափահարելով իր ետևից եկող կառքին։ Նրա ձայնը Չիչիկովին կարծես մի փոքր ծանոթ թվաց։ Մինչ նրան մի լավ կզնեներ, խարտյաշն արդեն շոշափեց դուռը և բաց արեց. դա մի տղամարդ էր բարձր հասակով, դեմքը նիհար, կամ ինչպես ասում են՝ սպառված մարդ, շեկ բեղիկներով։ Այրված դեմքից կարելի էր եզրակացնել, որ նա գիտեր թե ի՛նչ բան է ծուխը,

ևթե ո՛չ վառոդի, գոնե ծխախոտի։ Նա քաղաքավարի բարևեց Չիչիկովին, որին վերջինս պատասխանեց նույն կերպ։ Մի քանի րոպեից հետո նրանք, հավանորեն, լավ զրույցի կբռնվեին և կարգին կծանոթանային իրար հետ, որովհետև արդեն սկիզբն արված էր, և երկուսն էլ համարյա միաժամանակ գոհունակություն հայտնեցին, որ ճանապարհի փոշին լրոլորովին նստել է երեկվա անձրևից, և հիմա ճանապարհ գնալը և՛ հով է, և՛ հաճելի,— երբ ներս մտավ նրա թխադուլն ընկերը, գլխից ցած նետելով սեղանի վրա իր կարտուզը, ձեռքով կտրիճավարի խճճելով իր սև, խիտ մազերը։ Դա միջահասակ, բավականին գեղեցիկ կազմվածքով մի տղամարդ էր, լիքը, կարմիր այտերով, ձյան պես սպիտակ ատամներով և ձյութի պես սև այտամորուքով։ Նա թարմ բողկի պես էր. առողջությունը կարծես նրա դեմքից կաթում էր։

— Պա՛, պա՛, պա՛,— բացականչեց նա՝ հանկարծ տեսնելով Չիչիկովին ու երկու ձեռքը պարզելով։ «Այս ո՞ր քամին է բերել»։

Չիչիկովը ճանաչեց Նոզդրյովին, այն մարդուն, որի հետ միասին նա ճաշել էր դատախազի մոտ և որը նրա հետ մի քանի րոպեում այնքան մոտիկացավ, որ սկսեց արդեն դու-ով խոսել, թեպետ նա իր կողմից նրան ոչ մի առիթ չտվեց։

— Ո՞ւր էիր գնացել,— ասաց Նոզդրյովը, և չսպասելով պատասխանի՝ շարունակեց,— իսկ ես, բարեկամ, տոնավաճառից եմ գալիս։ Շնորհավորի՛ր. տարվել եմ խպառ։ Կհավատա՞ս, երբեք կյանքումս այդպես չեմ տարվել։ Ախր ես հասարակ կառքով եկա։ Այ, մտիկ տուր հենց պատուհանից։— Այստեղ նա ինքը Չիչիկովի գլուխը ծռեց, այնպես որ, սա քիչ մնաց շրջանակին դիպչեր։— «Տեսնո՞ւմ ես, ինչ անպիտան բան է զոռով քաշեցին բերին անիծվածները, ես արդեն ինձ գցեցի՝ այ, սրա բրիչկան»։—Այս ասելով Նոզդրյովը մատով ցույց տվեց իր ընկերոջը։— «Իսկ դուք դեռ ծանոթ չե՞ք։ Իմ փեսան է, Միժուևը։ Մենք միասին ամբողջ առավոտը քո մասին էինք խոսում։ Դե, հիմի դու տես, ասում եմ, թե Չիչիկովին չհանդիպենք։ Ապա՞, բարեկամս, եթե իմանաս, թե ո՛նց տարվեցի։ Կհավատա՞ս, որ ո՛չ թե մեննակ չորս վաղկաններիս ձեռքից բաց թողի, այլ բոլորը տուրը տվի։

Ախր վրաս-ո՛չ շղթա կա, ո՛չ ժամացույց»։— Չիչիկովը նայեց և իսկապես տեսավ, որ նրա վրա ո՛չ շղթա կար, ո՛չ ժամացույց։ Նրան մինչև անգամ ցավաց, որ նրա մի այտամորուքը ավելի փոքր էր և այնքան խիտ չէր, ինչպես մյուսը։— Բայց այ, եթե գրպանումս մի քսան ռուբլի լիներ,— շարունակեց Նոզդրյովը,— ուղղակի ո՛չ ավելի, քան քսան, ես բոլորը ետ կբերեի, այսինքն՝ բացի այն, որ ետ կբերեի, այ, ինչպես պատվավոր մարդ՝ երեսուն հազարը ձեռաց կդնեի գրպանս։

— Բայց դու այն ժամանակ էլ այդպես էիր ասում,— ափսոսանեց խարտյաշը,— իսկ երբ քեզ հիսուն ռուբլի տվեցի, հենց իսկույն տուրը տվիր։

— Ես տուրը չէի տա, աստված վկա, չէի տա։ Եթե և հիմարություն չանեի, ճշմարիտ, որ տուրը չէի տա։ Եթե պարոլեից հետո անիծած յոթնոցի վրա չծալեի՝ ես կարող էի ամբողջը բանկ անել[1]։

— Բայց չարիր,— ասաց խարտյաշը։

— Չարի, որովհետև ծալեցի ո՛չ իր ժամանակին։ Իսկ դու կարծում ես՝ քո մայորդ լա՞վ է խաղում։

— Լավ է, թե լավ չէ, բայց նա քեզ տարավ։

— Մե՛ծ բան էր,— ասաց Նոզդրյովը,— այդպես ես էլ նրան կտանեմ։ Ո՛չ, այ, թող նա փորձեր դուբլետ խաղալ, այ, այն ժամանակ ես կտեսնեմ, այն ժամանակ կտեսնեմ, թե ի՛նչ խաղացող է։ Բայց դրա փոխարեն, սիրելի Չիչիկով, ի՛նչ քեֆ արինք առաջին օրերը։ Ճիշտ է, տոնավաճառը ամենաքնտիրն էր։ Իրենք վաճառականներն ասում են, որ ոչ մի ժամանակ այդպիսի հավաքույթ չի եղել։ Իմս, ինչ որ բերել էին գյուղից՝ ծախեցին ամենաշահաբեր գնով։ Բայց ի՛նչ քեֆ արինք։ Հիմա, երբ մինչև անգամ հիշում ես... սատանան տանի, այսինքն՝ որքան ափսոս, որ դու չկայիր։ Երևակայի՛ր, որ քաղաքից երեք վերստի վրա կանդնել էր զրագունների գունդը։ Կհավատա՞ս, որ սպաները, ինչքան էլ պակաս ասենք, մենակ 40 սպա կար քաղաքում, որ մի սկսեցի՛նք, ասեմ քեզ, իմելը... Շտաբս-ռոտմիստր Պացելուեվը... ի՛նչ հիանալին է. բեղերը, ահա՛, այսպե՛ս։ Բորդոյին[2] ուղղակի ասում է

---

1 Պարոլե, ծալել, բանկ, դուբլետ — թղթախաղի տերմիններ են։

2 Բորդո — ֆրանսիական թեթև կարմիր գինի։

բուրդաչկա։ «Այ տղա, բե՛ր մի,— ասում է,— բուրդաշկա»։ Պորուչիկ Կուվշիննիկովը... Ախ, ի՛նչ անուշիկ մարդ է. ա՛յ, արդեն վստահ կարելի է ասել՝ կազմ ու պատրաստ խմող է։ Մենք ամբողջ ժամանակ միասին էինք նրա հետ։ Ի՞նչ գինի տվեց մեզ Պոնոմարյովը։ Պետք է իմանաս, որ նա անպիտանի մեկն է, և նրա խանութում ոչինչ չի կարելի գնել. գինու հետ ամեն աղբ խառնում է. ճանգան, այրած խցան և մինչև անգամ սրիկան շամբուկ է քերում, բայց դրա փոխարեն, երբ խորքի սենյակից, որ նա կոչում է առանձին, մի որևէ շիշ դուրս կբերի, այստեղ արդեն, բարեկամս, ուղղակի դրախտային երանության մեջ ես գտնվում։ Այնպիսի շամպայն ունենք, որ նրա մոտ ի՞նչ է նահանգապետինը. ուղղակի՝ կվաս։ Ծրևակայիր, կլիկո[1] չէր, այլ մի տեսակ մատրադուրա կլիկո էր, որ ասել է՝ կրկնակի կլիկո։ Հետո հանեց մի շիշ ֆրանսիական, անունը՝ բոնբոն։— Հո՞տը. վարդափունջ ասա ու պրծիր։ Ա՛յ թե ո՛նց քեֆ արինք... Մեզանից հետո եկավ մի ինչ-որ իշխան, ուղարկեց խանութ, որ շամպայն բերեն, ամբողջ քաղաքում մի շիշ էլ չկար, բոլորը սպաները խմել էին։ Կհավատա՞ս, որ միայն ես ճաշի ընթացքում խմեցի տասնյոթ շիշ շամպայն։

— Ասենք՝ տասնյոթ շիշ չես խմի,— նկատեց խարտյաշը։

— Ինչպես պատվավոր մարդ՝ ասում եմ, որ խմեցի,— պատասխանեց նոզդրյովը։

— Դու կարող ես ասել՝ ինչ որ ուզում ես, բայց ես քեզ ասում եմ, որ տասն էլ չես խմի։

— Ուզում ես՝ գրազ գանք, որ կխմեմ։

— Ինչի՞ համար գրազ գանք։

— Այ, գրազ գանք հրացանիդ վրա, որ գնել ես քաղաքում։

— Չեմ ուզում։

— Դե լավ, դի՛ր, փորձենք։

— Փորձել էլ չեմ ուզում։

— Առանց հրացանի կմնայիր, ինչպես առանց գդակի էլ, եղբայր Չիչիկով, այսինքն, ինչպե՞ս ափսոսում էի, որ դու այնտեղ չէիր։ Գիտեմ, որ դու չէիր բաժանվի պորուչիկ Կուվ-

---

[1] Կլիկո — շամպայնի մի տեսակ։

շիննիկովից։ Այ, թե կմտերմանայի՛ք։ Դա այն չէ, ինչ որ դատախազը և բոլոր նահանգական ժլատները մեր քաղաքում, որոնք ամեն մի կոպեկի վրա դողում են։ Դա սիրելիս, թե՛ գալբիկ կխաղա, թե՛ բանչիկ[1] և թե՛ ի՛նչ որ կուզես։ Էխ, Ջիչիկով, ախր քեզ համար ի՞նչ արժեր գալը։ Ճշմարիտ, խոզուկ ես դու, անասնաբարո մեկը. համբուրի՛ր ինձ, հոգի՛ս, չափազանց սիրում եմ քեզ։ Միժուև, նայի՛ր. բախտներս բերեց, դե նա իմ ի՞նչն է, կամ ես նրա ի՞նչը. նա եկել է աստված գիտե որտեղի՛ց, ես էլ ապրում եմ այստեղ... Բայց այնքան կառք կար, և այդ բոլորը en gros[2]։ *Վիճակ հանեցի, տարա երկու բանկա պոմադ, ճենապակե դավաթ և կիթառ, հետո էլի մի անգամ դրի և տուրը տվի—սրիկայութիւն, բացի դրանից՝ նաև վեց ռուբլի։ Բայց ինչպիսի՛, եթե կուզես իմանալ, կանանց ետևից ընկնող է Կուվշիննիկովը։ Նրա հետ եղա համարյա բոլոր պարահանդեսներում։ Մի կին կար այնպես զարդարված, վրան փոքեր, մոքեր և սատանան գիտե թե էլ ինչե՛ր... ես միտք եմ անում ինձ ու ինձ. սատանա՛ն տանի։ Իսկ Կուվշիննիկովը, այսինքն դա այնպիսի անասուն է, նստեց մուրը և ֆրանսերեն լեզվով նրան այնպիսի կոմպլիմենտներ է հրամցնում... Կհավատա՞ս, հասարակ կնանոց անգամ բաց չէր թողնում։ Դա, նրա ասելով, նշանակում է ելակի համն առնել։ Զկներ և բալըկներ էին բերել՝ հիանալի։ Եա, այնուամենայնիվ, հետս մի հատ բերի, լավ էր, որ խելք արի գնեցի, երբ դեռ փող կար մոտս։ Դու հիմա ո՞ւր ես գնում։*

— *Մարդու մեկի մոտ,— ասաց Ջիչիկովը։*

— *Է՛, մարդու մեկը ո՛րն է, վա՛զն անցիր, գնանք ինձ մոտ։*

— *Ոչ, չի կարելի, գործ կա։*

— *Է՛, գործս ո՛րն է. հնարեցիր. ա՛յ-դու, Օպոդելդոկ Իվանովիչ։*

— *Ճշմարի՛տ, գործ կա և այն էլ՝ կարևոր։*

— *Գրազ կգամ, որ ստում ես, դե ասա՝ ո՞ւմ մոտն ես գնում։*

— *Դե՛, Սոբակևիչի մոտ։*

---

1 *Գալբիկ, բանչիկ— թղթախազի տեսակներ։*

2 *Մեծ քանակով։*

Այստեղ Նոզդրյովը այնպիսի գիլ ծիծաղով հռհռաց, որով ծիծաղում է միայն թարմ, առողջ մարդը, որի բոլոր, մինչև վերջին՝ շաքարի պես սպիտակ ատամները երևում են, դողում և ցնցվում են այտերը, և երկու դռան ետևի հարևանը երրորդ սենյակում քնից վեր է թռչում՝ աչքերը չռելով և ասելով. «Ո՞նց է կորցրել իրեն»։

— Ի՞նչ կա այստեղ ծիծաղելու,— ասաց Չիչիկովը՝ մասամբ դժգոհ այդպիսի ծիծաղից։

Բայց Նոզդրյովը շարունակեց հռհռալ ամբողջ կոկորդով՝ ասելով. «Ա՛ֆ, խնայիր, ճշմարիտ, ծիծաղից կտրաքեմ»։

— Ծիծաղելի ոչինչ չկա, ես նրան խոսք եմ տվել,— ասաց Չիչիկովը։

— Ախր դու ծնվածդ օրը կանիծես, երբ գնաս մոտը. նա ուղղակի չհուդից էլ վատթար է։ Ախր ես գիտեմ քո բնավորությունը, դու կսխալվես՝ եթե կարծես, որ այնտեղ կգտնես բանչիկ և որևէ բոնբոնի մի լավ շիշ։ Լսի՛ր, սիրելիս, գրողի ծո՛ցը Սոբակևիչը, գնա՛նք ինձ մոտ, այնպիսի՛ բալըկով պատվեմ։ Պոնոմարյովը, սատանան, այնպես գլուխ էր վեր բերում, ասում է՝ «Ձեզ համար է մենակ, ամբողջ տոնավաճառը ման գաք,— ասում է.— սրա պես բալըկ չեք գտնի»։ Բայց անասելի սրիկա է։ Ես նրա երեսին ասացի այդ. դուք,— ասում եմ,— մեր կապալառուն առաջին սրիկաներն եք. ծիծաղում է սատանան՝ մորուքը շփելով։ Ես ու Կուվշիննիկովը ամեն օր նրա խանութումն էինք նախաճաշում. Հա՛, բարեկամս, մոռացա քեզ ասելու. գիտեմ, որ է՛լ պոկ չես դա, բայց տասը հազարով էլ չեմ տա, առաջուց եմ ասում։ է՛, Պորֆի՛րի,— կանչեց նա մոտենալով պատուհանին, իր մարդուն, որը մի ձեռքով դանակն էր բռնել, իսկ մյուսով՝ հացի կեղևը՝ զուրգելի կտորը մեջը, որ նրան հաջողվել էր անցողակի կտրել՝ բրիչկայից ինչ-որ բան հանելիս։— է՛յ, Պորֆի՛րի, կանչեց Նոզդրյովը, ապա լակոտը բեր մի։ Ի՞նչ լակոտ է,— շարունակեց նա՝ դառնալով Չիչիկովին.— դողացած է, իրա ականջի գնով էլ չէր տա տերը։ Ես նրան խոստացա մի քուրան զամբիկ, որը, հիշո՞ւմ ես, Խվոստիրյովի հետ փոխեցի...— Չիչիկովը սակայն իր օրում չէր տեսել ո՛չ քուրան զամբիկը, ո՛չ Խվոստիրյովին։

— Պարոն, ոչինչ չե՞ք ուզում ուտել,— ասաց այդ միջոցին նրան մոտենալով պառավը։

— Ուչինչ։ է՛հ, ախպերս, ինչպե՞ս քեֆ արինք։ Այնուամենայնիվ, տո՛ւր մի բաժակ օղի. որի՞ց ունես։

— Անիսոնի է,— պատասխանեց պառավը։

— Լավ, տո՛ւր անիսոնի,— ասաց Նոզդրյովը։

— Մի բաժակ էլ ինձ, որ այդպես է,— ասաց խարտյաշը։

— Թատրոնում մի դերասանուհի այնպես էր երգում անդամը, դեղձանիկի պես։ Կուվշիննիկովը, որ նստած էր կողքիս. «այ,— ասում է,— ախպերս, ելակի համն ա՛նեինք մի»։ Մենակ բալագաններ, կարծում եմ, հիսուն հատ կլիներ։ Ֆենադոնին[1] չորս ժամ պոտվում էր ջրաղացի պես։— Այստեղ նա ընդունեց բաժակը պառավի ձեռքից, որը դրա համար գլուխը ցած խոնարհեց։

— Հա՛, տո՛ւր դեսը,— գոչեց նա տեսնելով Պորֆիրիին, որը ներս մտավ լակոտը ձեռին։ Պորֆիրին էլ հագնված էր այնպես, ինչպես և իր պարոնը, ինչ-որ մի արխալուղ, բամբակի վրա բլանդած, բայց մի փոքր ավելի ճենճոտ։

— Բե՛ր, դի՛ր այստեղ, հատակին։

Պորֆիրին հատակին դրեց լակոտը, որը տփկելով չորս թաթերի վրա՝ հոտոտում էր գետինը։

— Ի՜նչ լակոտ է,— ասաց Նոզդրյովը՝ մեջքից բռնելով նրան և ձեռքով վեր բարձրացնելով։ Լակոտը բավականին աղիողորմ ոռնոց արձակեց։

— Բայց դու, այնուամենայնիվ, չես արել այն, ինչ որ քեզ ասել եմ,— ասաց Նոզդրյովը՝ դառնալով Պորֆիրիին և ուշադիր տնտղելով լակոտի փորը.— չես էլ մտածել սրան սանրե՞լ։

— Ո՛չ, ես սանրել եմ։

— Ապա որտեղի՞ց են լվերը։

— Չեմ կարող իմանալ։ Կարող է պատահել, ինչ-որ ձևով բրիչկայից են քաշվել։

— Ստում ես, ստում ես, կարծեմ, հիմար, մտքովդ չես էլ անցկացրել մի սանրել նրան, դեռ քո լվերից էլ վրան ես բաց թողել։ Ապա մի մտիկ տուր, Ջիլիկով, տես ի՛նչ ականջներ ունի, ապա մի՛ ձեռով շոշափիր։

[1] Ակրոքաին անուն։

— Ախր ինչո՞ւ համար, ես այնպես էլ տեսնում եմ, ազնիվ ցեղից է,— պատասխանեց Չիչիկովը։

— Ա՛յ, ապա մի հատկապես վերցրու, շոշափի՛ր ականջները։

Չիչիկովը նրա սիրտը շահելու համար շոշափեց ականջները՝ կամացուկ ասելով,— այո՛, լավ շուն կդառնա։

— Իսկ քիթը, գդո՞ւմ ես ինչ սառն է։ Ապա մի ձեռդ դիպցրու։— Չկամենալով նրա խոսքը կոտրել՝ Չիչիկովը ձեռը դիպցրեց նաև քթին՝ ասելով,— հոտառություն ունի։

— Իսկապես մորդաշ[1] է,— շարունակեց Նոզդրյովը,— և խոստովանանք լինի՝ վաղուց էի աչքս դրել մորդաշի վրա։ Ա՛ռ, Պորֆիրի, ե՛տ տար սրան։

Պորֆիրին լակոտը վերցնելով փորի տակով՝ տարավ նրան բրիչկա։

— Լսի՛ր, Չիչիկով, դու պետք է անպատճառ գաս ինձ մոտ, ընդամենը հինգ վերստ է, մի շնչում կհասնենք, իսկ հետո, համեցե՛ք, կարող ես նաև Սոբակևիչի մոտ գնալ։

— Է՛, ի՞նչ կա,— մտածեց ինքնիրեն Չիչիկովը,— իսկապես մի կանգնեմ Նոզդրյովի մոտ։ Ինչո՞վ է նա ուրիշներից վատ, նույնպիսի մարդ է, դեռ տարվել էլ է, ինչպես երևում է, ամեն բանի էլ ընդունակ է. ասել է՝ կարելի է նրանից մի բան ձրի խնդրել։— Համեցե՛ք,— ասաց նա,— բայց տես, չուշացնես, ժամանակս թանկ է։

— Ա՛յ, հոգի մարդ ես, ա՛յ, այդպես։ Ա՛յ, ինչ լավ է, կաց, մի համբուրեմ քեզ դրա համար։— Այստեղ Նոզդրյովն ու Չիչիկովը համբուրվեցին։— Եվ հիանալի բան, երեքով կթուչենք։

— Ոչ, ինձ որ, խնդրում եմ, բաց թողնես,— ասաց խարտյաշը,— ես պետք է տուն գնամ։

— Դատարկ բաներ, դատարկ բաներ, ախպերս, չեմ թողնի։

— Ճշմարիտ, կինս կբարկանա, հիմա դու կարող ես նստել, այ, սրանց բրիչկան։

— Չէ, չէ, չէ՛։ Մտքովդ չանցկացնես։

Խարտյաշը մեկն էր այն մարդկանցից, որոնց բնավորության մեջ՝ առաջին հայացքից, մի ինչ-որ համառություն կա։

[1] Մորդաշ, որ նշանակում է ցածրահասակ, մեծագլուխ շուն, որը ինչ որ բռնում է, կծում է և կախվում ատրուկի պես։

Դեռ բերանդ բաց չարած՝ նրանք պատրաստ են վիճելու և, թվում է, երբեք չեն համաձայնի այն բանին, որ ակներևորեն հակառակ է նրանց մտածելակերպին, երբե՛ք հիմարին խելոք չեն կոչի և առանձնապես չեն համաձայնի ուրիշի դուդուկի տակ պար գալու. բայց միշտ վերջանում է նրանով, որ նրանց բնավորության մեջ հայտնվում է մի փափկություն, որ նրանք կհամաձայնեն հենց այն բանին, որ հերքում էին, հիմար բանը կանվանեին խելացի և հետո էլ ուրիշի դուդուկի տակ հրաշալի կպարեն, մի խոսքով՝ քաղցր կսկսեն, դառը կվերջացնեն։

— Դատարկ բան է,— ասաց Նոզդրյովը ի պատասխան խարտյաշի ինչ-որ մի առարկության, կարտուզը հագցրեց նրա գլխին և խարտյաշը գնաց նրանց ետևից։

— Արաղի համար չվճարեցիք, պարոն...— ասաց պառավը։

— Հա՛, լավ, լավ, ա՛յ կնիկ։ Լսիր, փեսա՛, խնդրեմ վճարիր, ես գրպանումս մի կոպեկ չունեմ։

— Ինչքա՞ն պետք է տանք քեզ,— ասաց փեսան։

— Է՛, ի՞նչ, որդի, քսան կոպեկ ընդամենը,— ասաց պառավը։

— Ստում ես, ստում ես, տո՛ւր նրան կեսը, նրան այդ էլ շատ է։

— Քիչ է, պարոն,— ասաց պառավը, սակայն փողը վերցրեց շնորհակալությամբ և դեռ շնչակտուր վազեց նրանց համար դուռը բաց անելու։ Նա վնասի մեջ չէր, որովհետև չորս անգամ ավելի պահանջեց, քան արժեր օղին։

Ուղևորները նստեցին։ Ջիչիկովի բրիչկան գնում էր Նոզդրյովի և նրա փեսայի բրիչկայի կողքով, ուստի և նրանք երեքն ազատ կարող էին իրար հետ խոսել ամբողջ ճանապարհին։ Նրանց ետևից, շարունակ ետ մնալով, գալիս էր Նոզդրյովի պստլիկ կառքը՝ լղար, հասարակ ձիերով։ Նրա մեջ նստել էր Պորֆիրին՝ շան-լակոտի հետ։

Որովհետև ուղևորների ունեցած խոսակցությունը շատ էլ հետաքրքիր չէ ընթերցողի համար, ապա և լավ կանենք, եթե մի որևէ բան ասենք իր՝ Նոզդրյովի մասին, որին, կարող է պատահել, վիճակվի խաղալ բոլորովին ա՛չ վերջին դերը մեր պոեմում։

Նոզդրյովի դեմքը, կարծեմ թե, արդեն փոքր-ինչ ծանոթ է ընթերցողին։ Այդպիսի մարդիկ ամենքին էլ քիչ չեն պատահում։ Նրանք կոչվում են ժիր տղամարդիկ, դեռ մանկությունից և դպրոցից հայտնի են լինում իբրև լավ ընկերներ, և այդ բոլորով հանգերձ, շատ ծեծ են ուտում։ Նրանց դեմքին միշտ երևում է ինչ-որ մի բաց, շիտակ, կտրիճավարի բան։ Նրանք շուտ են ծանոթանում և հենց աչքդ բաց ու խուփ ես անում, արդեն քեզ դու են ասում։ Ընկերություն են սկսում անել, կարծես, հավիտյանս. բայց միշտ համարյա այնպես է պատահում, որ նրա հետ ընկերացողը նույն երեկո ընկերական խնջույքում հետը կկռվի։ Նրանք միշտ ասող-խոսող են, կոնծող, կտրիճ, աչքի ընկնող ժողովուրդ։ Նոզդրյովը երեսունհինգ տարեկան հասակում բոլորովին այնպես էր, ինչպես որ տասնևութ և քսան տարեկան հասակում. սիրում էր քեֆ անել։ Ամուսնությունը նրան բոլորովին չփոխեց։ Մանավանդ որ կինն էլ շուտ ընաց այն աշխարհը՝ թողնելով երկու երեխա, որոնք բոլորովին պետք չէին նրան։ Սակայն երեխաներին նայում էր գրավիչ դայակը։ Տանը նա մի օրից ավելի չէր կարողանում նստել։ Նրա հոտառու քիթը մի քանի տասնյակ վերստ վրա զգում էր, թե ո՛րտեղ տոնավաճառ կա՝ ամեն տեսակ հավաքույթներով և պարահանդեսներով. նա արդեն մի ակնթարթում այնտեղ էր լինում, վիճում և իրարանցում գցում կանաչ սեղանի շուրջը, որովհետև բոլոր այդպիսիների նման՝ կիրք ուներ դեպի թղթախաղը։ Թղթախաղ, ինչպես մենք արդեն տեսանք առաջին գլխում, նա խաղում էր ո՛չ բոլորովին առանց մեղանչումի, իմանալով զանազան տեսակի խորամանկություններ՝ թուղթ թաքցնել և այլ նրբություններ, ուստի և խաղը շատ հաճախ վերջանում էր ուրիշ խաղով, կա՛մ նրան կոշիկներով թակում էին, կա՛մ նրան ցույց էին տալիս թաքցնելը նրա։ Խիտ ու շատ գեղեցիկ այտամորուքների վրա, այնպես որ՝ երբեմն տուն էր վերադառնում միայն մի այտամորուքով և այն էլ բավական ցանցառ։ Բայց նրա առողջ և լիքը այտերը այնպես լավ էին ստեղծված և իրենց մեջ այնքան սնուցիչ ուժ էին պարունակում, որ այտամորուքները շուտով նորից աճում էին, դեռ նախկինից ավելի լավ։ Եվ ի՞նչն էր ամենից տարօրինակը, ինչ միայն կարող էր Ռուսիայում պատահել՝ նա մի որոշ ժամանակից հե-

Նա աբգեն կրկին պատահում էր նույն բարեկամներին, որոնք նրան դնքսել էին, և պատահում էր այնպես, կարծես ոչինչ չէր եղել, և ինչպես ասում են, սա էլ ոչինչ, նրանք էլ ոչինչ։

Նոզդրյովը որոշ չափով պատմական անձնավորություն էր։ Ոչ մի հավաքույթ՝ ուր նա լինում էր, չէր անցնում առանց պատմության։ Մի որևէ պատմություն պետք է ծագեր անպատճառ. կամ նրան բևերը բռնած դուրս կբերեին ժանդարմները, կամ ստիպված կլինեին նրան դուրս գցել հենց իր բարեկամները։ Եթե այդ էլ չպատահի, ապա, այնուամենայնիվ, մի որևէ այնպիսի բան կլինի, որ ոչ մի դեպքում ուրիշների հետ չի պատահում. կամ այնպես կհարբի բուֆետում, որ կսկսի անվերջ ծիծաղել, կամ մի այնպիսի թուեղ սուտ կպչի, որ վերջն ինքն էլ կամաչի։ Եվ կպչի բոլորովին առանց կարիքի. հանկարծ կպատմի, որ նա մի ձի ուներ ինչ-որ կապույտ կամ վարդագույն մազով, և դրա նման դատարկ բաներ, այնպես, որ լսողները վերջը հեռու են քաշվում՝ ասելով. է՛, բարեկամ, դու սկսիր ստերի տոպրակը բաց անել։ Կան մարդիկ, որ կիրք ունեն մերձավորին վատ բան անելու և դա երբեմն բոլորովին առանց պատճառի։ Մեկը, օրինակ, մինչև անդամ բարձրաստիճան մարդ՝ ազնիվ արտաքինով, աստղը կրծքին, ձեր ձեռքը կսեղմի, հետևերդ կխոսի լուրջ խորհրդածություններ առաջացնող առարկաների մասին, իսկ հետո մեկ էլ տեսար, հենց նույն միջոցին ձեր աչքի առաջ այլանդակություն թույլ կտա։ Եվ այնպես վատ բան կանի, ինչպես հասարակ մի կոլեգիական ռեգիստրատոր, և ոչ այնպես, ինչպես կրծքին աստղ ունեցող մարդը, որ խոսում էր խորհրդակցություններ առաջացնող առարկաների մասին. այնպես որ՝ միայն կանգնում, զարմանում ես ուսերդ թոթվելով, և ուրիշ ոչինչ։ Հենց այդպիսի տարօրինակ կիրք ուներ նաև Նոզդրյովը։ Որքան մեկը նրա հետ ավելի էր մոտենում, դրա հետ նա ամենից շուտ էր կեղտոտ արարքներ թույլ տալիս, այնպիսի հնարովի բաներ էր տարածում, որոնցից ավելի ցանցառ բան դժվար է հնարել, խանգարում էր հարսանիքը, առևտրական գործարքը և իրեն բոլորովին էլ չէր համարում ձեր ընկերնամին. ընդհակառակը, եթե դիպվածը նրան կրկին հանդիպեցներ ձեզ հետ, նա կրկին ընկերաբար կվարվեր և մինչև անգամ կասեր՝ ասա՛ դու այնպիսի սրիկան ես, որ երբեք ինձ

մոտ չես գա։ Նոզդրյովը շատ հարցերում բազմակողմանի մարդ էր, այսինքն՝ մի մարդ, որի ձեռից ամեն բան գալիս էր։ Միևնույն րոպեին նա ձեզ կառաջարկեր գնալ ո՛ւր կուզեք, քեկուզ աշխարհի ծայրը, ձեռք զարկել ի՛նչ ձեռնարկության ասես, փոխանակել ամեն բան, ի՛նչ ասես՝ ամեն բանի հետ, ի՛նչ կուզես։ Հրացան, շուն, ձի, ամեն բան փոխանակության առարկա էր, բայց բոլորովին ո՛չ նրա համար, որ շահի, այդ ամենը առաջ էր գալիս պարզապես բնավորության մի ինչ-որ անխոնջ ժրությունից և աշխուժությունից։ Եթե տոնավաճառում բախտի բերմունքով նրա ձեռքը պարզամիտ մարդ էր ընկնում և նրան տանում էր խաղի մեջ, նա կույտերով գնում էր այն ամենը, ինչ որ խանութներում աչքը տեսել էր— ձիասարքեր, անուշահոտ մոմեր, դայակի համար թաշկինակներ, քուռակ, չամիչ, արծաթե լվացարան, հոլանդական կտավ, շարմաղ ալյուր, թուրթուն, ատրճանակներ, հարինգ, պատկերներ, սրոց, պուտուկներ, կոշիկներ, հախճապակե ամանեղեն,— որքան փողը հերիք էր անում։ Բայց և հազիվ էր պատահում, որ դա հասներ տուն. համարյա հենց նույն օրը այդ ամենը մի ուրիշ ավելի բախտավոր թուղթ խաղացողի ձեռքն էր ընկնում, երբեմն մինչև անգամ վերադիր էր լինում սեփական ծխամորճը քսակի և մուշտակի հետ, իսկ ուրիշ անգամ՝ ամբողջ քառաձին բոլոր պարագաներով՝ կառքով և կառապանով, այնպես որ, ինքը տերը ուղևորվում էր մի կարճ սերթուկով կամ արխալուղով՝ որոնելու մի որևէ բարեկամի, որպեսզի օգտվի նրա կառքով։ Ահա՛ թե ինչպես էր Նոզդրյովը. թերևս նրան կանվանեն հնացած բնավորություն, կասեն թե՝ հիմա այլևս Նոզդրյով չկա։ Ավա՜ղ, անարդար կլինեն նրանք, ովքեր այդպես կասեն։ Նոզդրյովը դեռ երկար ժամանակ աշխարհից դուրս չի գա։ Նա ամենուրեք մեր միջին է և կարող է պատահել միայն՝ մանէ գալիս ուրիշ բաճկոնով. բայց թեթևամիտ-անխորաթափանց են մարդիկ, ուրիշ բաճկոն հագած մարդը նրանց թվում է ուրիշ մարդ։

Մինչ այս, մինչ այն՝ երեք կառքերը արդեն հասան Նոզդրյովի տան տանգամուտքին։ Տանը ոչ մի պատրաստություն չէր տեսնված նրանց ընդունելու։ Սեղանատան մեջտեղը հենակների վրա ամրացած տախտակներ էին դրած, և երկու մուժիկ նրանց վրա կանգնած պատերն էին սպիտակեցնում,

ձգելով ինչ-որ մի անվերջանալի երգ. ամբողջ հատակը ցանցըված էր գաջով։ Նոզդրյովը հրամայեց, որ գյուղացիներն ու մնացած բաները անմիջապես դուրս գնան, և վաղեց մյուս սենյակը հրամաններ տալու։ Հյուրերը լսեցին, թե ինչպես նա խոհարարին ճաշ էր պատվիրում. այդ հաշվի առնելով, Չիչիկովը, որն արդեն մի փոքր զգում էր ախորժակը, տեսավ, որ ժամը հինգից վաղ սեղան չեն նստի։ Նոզդրյովը վերադառնալով, հյուրերին տարավ նայելու ինչ գյուղում կար-չկար. և երկուսից քիչ ավելի ժամում կատարելապես բոլորը ցույց տվեց. այնպես որ, էլ ուրիշ բան չմնաց ցույց տալու, հետո մի աշխետ քուռակ՝ տեսքով ոչ-վայելուչ, բայց որի համար Նոզդրյովը երդվում էր, թե տասը հազար է տվել։

— Դրան տասը հազար չես տվել,— նկատեց փեսան։— Նա մի հազար էլ չարժե։

— Աստված վկա՝ տասը հազար եմ տվել,— ասաց Նոզդրյովը։

— Դու ինչքան կուզես քեզ համար երդվիր,— ասաց փեսան։

— Դե լավ, ուզում ես գրազ գանք,— ասաց Նոզդրյովը։ Փեսան չուզեց գրազ գալ։

Հետո Նոզդրյովը ցույց տվեց դատարկ ախոռը, ուր առաջ նույնպես լավ ձիեր էին եղել։ Հենց նույն ախոռում տեսան մի այծ, որը հին հավատալիքի համաձայն անհրաժեշտ էին համարում ձիերի մոտ պահել և որը, ինչպես երևում էր, նրանց հետ լավ էր, զբոսնում էր նրանց փորատակերին այնպես, ինչպես իր տանը։ Հետո Նոզդրյովը տարավ հյուրերին տեսնելու գայլի ձագը, որ կապված էր. «Ահա գայլի ձագը»,— ասաց նա, «էս նրան դիտմամբ հում մսով եմ կերակրում։ Ես ուզում եմ, որ նա կատարյալ գազան դառնա»։ Գնացին նայելու լճակը, որի մեջ, Նոզդրյովի ասելով, այնպիսի մեծություն ձկներ կային, որ երկու մարդ դժվարությամբ էին մի հստեր դուրս քաշում, որի առթիվ ազգականը չդայացավ կասկածել։ «Չիչիկո՛վ, ես քեզ,— ասաց Նոզդրյովը,— ցույց կտամ մի զույգ ամենաընտիր շներ. սև բդերի պնդությունը ուղղակի զարմացնում է, սուր դունչը ոնց որ՝ ասեղ»։ Եվ նրանց տարավ դեպի գեղեցիկ շինված մի փոքրիկ տնակ, որ ամեն կողմից շրջապատված էր բոլորաձև բակով։ Մտնելով բակը,

այնտեղ տեսան ամեն տեսակ շներ, թե թավամազ գամփռներ, թե նուրբ ու քնքուշ մազերով, ամեն գույնի և երանգի,— շիկակարմիր-թուխ, շագանակագույն, կարմիր դնչով, սևի վրա դեղին խայտերով... Այստեղ ամեն տեսակ անուն կար, բոլոր հրամայական խոնարհումները. նետիր, հայհոյիր, սավառնիր, հրդեհ, պճնամոլ, խղմզիր, հոգիդ հանիր, վառիր, անհամբեր, աանու ծիծեռ, պարգև, հոգաբարձուհի։ Նոզդրյովը նրանց մեջ ճիշտ այնպես էր, ինչպես հայրը ընտանիքի մեջ. նրանք բոլորը իսկույն բարձրացնելով պոչերը, ոը շուն պահողների լեզվով կոչվում է ուղղյակ, շիփ-շիտակ թռան հյուրերին ընդառաջ և սկսեցին նրանց ողջունել։ Մի տասը հատը նրանցից իրենց թաթերը դրին Նոզդրյովի ուսերին։ Հայհոյիրը ցույց տվեց նույնպիսի մի բարեկամություն Չիչիկովին և, բարձրանալով ետևի ոտների վրա, լիզեց ուղղակի նրա շրթունքները, այնպես որ, Չիչիկովն իսկույն թքեց։ Նայեցին շներին, որոնք զարմանք պատճառեցին սև բդերի պնդությամբ—լա՜վ շներ էին։ Հետո գնացին դիտելու Ղրիմի քած շունը, որն արդեն կույր էր և Նոզդրյովի ասելով՝ պետք է շուտով սատկեր, բայց երկու տարի առաջ շատ լավ քած էր. նայեցին քածին ևս, նա իսկապես կույր էր։ Հետո գնացին նայելու ջրաղացը, ուր պակասում էր ճախարակը, որի մեջ ամրանում է երկանացցի շուրջն արագ պտտվող վերևի քարը, ճախրողը՝ ըստ ռուս մուժիկի հրաշալի արտահայտության— Այ, շուտով այստեղ կտեսնենք նաև դարբնոցը,— ասաց Նոզդրյովը։ Մի քիչ անց, նրանք իսկապես տեսան դարբնոցը, նայեցին և դարբնոցը։

— Ահա այս դաշտում,— ասաց Նոզդրյովը մատով ցույց տալով դաշտը,— այնքան շատ գորշ նապաստակ կա, որ գետինը չի երևում. ես ինքս իմ ձեռքերով մեկը բռնել եմ ետևի ոտներից։

— Դե, գորշ նապաստակին դու ձեռքով չես բռնի,— նկատեց վիսան։

— Բայց արի տես, որ բռնել եմ, դիտմամբ բռնել եմ,— պատասխանեց Նոզդրյովը— Հիմա ես քեզ կտանեմ տեսնելու,— շարունակեց նա՝ դառնալով Չիչիկովին,— այն տեղը, որտեղ վերջանում է իմ հողը։

Նոզդրյովը տարավ իր հյուրին մի դաշտով, որը շատ տե-

ղեր բաղկացած էր գուղձերից։ Հյուրերը պետք է անցնեին անվար հողերի և ակոսած արտերի միջով։ Ջիլիկովն սկսեց հոգնություն զգալ։ Շատ տեղեր նրանց ոտների տակից ջուր էր դուրս գալիս, ա՛յն աստիճան տեղը ցածր էր։ Սկզբում նրանք պահում էին իրենց և զգույշ էին քայլերը դնում, բայց հետո, տեսնելով, որ դա ոչնչի չի ծառայում, սկսեցին ոտները քարշ տալ, առանց նայելու, թե ո՛րտեղ է մեծ և ո՛րտեղ է փոքր ցեխը։ Կարգին մի տարածություն անցնելուց հետո տեսան, իսկապես, սահմանը, որ բաղկացած էր մի փայտե սյունից և նեղլիկ արխից։

— Այ սահմանը,— ասաց Նոզդրյովը.— բոլորը, ինչ որ տեսնում ես այս կողմում, այդ բոլորն իմն է, և մինչև անգամ այն կողմում, ամբողջ այդ անտառը, որը, տե՛ս, կապտին է տալիս, և բոլորը, ինչ անտառի ետևին է, բոլորն իմն է։

— Ախր այդ անտառը ե՞րբ քոնը դարձավ,— հարցրեց փեսան։— Թերևս նորերս գնած լինես, բայց թե առաջ քոնը չէր։

— Այո, նորերս եմ գնել,— պատասխանեց Նոզդրյովը։

— Բայց ե՞րբ կարողացար այդպես շուտ գնել։

— Ինչպե՞ս թե, հրրորդ օրն է՝ գնել եմ, և թանկ գնով տվեց, սատանան տանի։

— Ախր դու այդ ժամանակ տոնավաճառումն էիր։

— Խելքի՛ տոպրակ։ Մի՞թե չի կարելի միաժամանակ լինել և՛ տոնավաճառում, և՛ հող գնել։ Լավ, տոնավաճառումն էի, բայց գործակատարս այստեղ առանց ինձ գնեց։

— Հա, գուցե գործակատարը,— ասաց փեսան, բայց և իսկույն կասկածեց և գլուխը շարժեց։ Հյուրերը նույն անպիտան ճանապարհով վերադարձան տուն։ Նոզդրյովը նրանց տարավ իր առանձնասենյակը, ուր սակայն չէր նկատվում հետքերը այն բաների, որ սովորաբար լինում են առանձնասենյակներում, այսինքն՝ դրքեր կամ թղթեր, կախված էին միայն սրեր և երկու հրացան, մեկը՝ երեք հարյուր, մյուսը՝ ութ հարյուր ռուբլիանոց։ Փեսան տնտղելով՝ միայն շարժում էր գլուխը։ Հետո ցույց տրվեցին տաճկական դաշույններ, որոնցից մեկի վրա սխալմամբ փորագրված էր՝ վարպետ Սավելի Սիբիրյակով։ Դրանից հետո հյուրերին ցույց տրվեց շարմանկան։ Նոզդրյովն իսկույն նրանց առջև մի բան պտտեց-

րեց։ Շարմանկան նվագում էր ո՛չ առանց դուրեկանության, բայց նրա ներսում թվում էր մի ինչ-որ բան էր պատահել, որովհետև մազուրկան վերջացավ երգով՝ «Մայլբրուգը կռիվ գնաց», իսկ «Մայլբրուգը կռիվ գնացը» անսպասելի կերպով վերջանում էր մի ինչ-որ վաղածանոթ վալսով։ Արդեն Նոզդրյովը վաղուց դադարել էր պտտեցնելը, բայց շարմանկայի մեջ մի շվի կար, շատ ծիր, որ ո՛չ մի կերպ չէր ուզում դադարել։ Նվ հետո երկար ժամանակ նա մենակ շվացնում էր։ Հետո ցույց տրվեցին չիբուխներ՝ փայտե, կավե, կոճղուկից, ծխած և չծխած, քարայծենիով պատած և չպատած, սաթի մուշտուկով չիբուխ՝ նորերս խաղաթղթում տարած, քսակ՝ ինչ-որ մի կոմսուհու կարած, որը մինչև ականջները սիրահարվել էր Նոզդրյովին՝ մի ինչ-որ փոստային կայարանում և որի ձեռքերը, նրա ասելով, ամենասուրբտիլային սուպերֆլյու էին, մի բառ, որը հավանորեն նրա բերանում նշանակում էր կատարելության ամենաբարձր կետը։ Մի քիչ բալրկ ուտելուց հետո նրանք սեղան նստեցին ժամը հինգին մոտ։ Ճաշը, ինչպես երևում էր, չէր կազմում Նոզդրյովի կյանքում գլխավոր բանը. կերակուրները մեծ դեր չէին կատարում. մի բան այրվել էր, մի բան բոլորովին չէր եփվել։ Երևում էր, որ խոհարարը ղեկավարվում էր ավելի ինչ-որ ոգևորությամբ և կաթսայի մեջ գցում էր ինչ ձեռքն էր ընկնում. պղպե՞ղ էր լինում մոտը, լցնում էր պղպեղ, կաղա՞մբ էր լինում, քրում էր կաղամբը, լցնում էր կաթ, խոզապուխտ, սիսեռ, մի խոսքով՝ չուր տու քշի, մենակ թե տաք լինի, որևէ համ երևի կբստացվի։ Դրա փոխարեն Նոզդրյովը զոռ տվեց գինիներին. դեռ չէին հրամցրել սուպը, որ նա հյուրերի համար լցրեց մեծ բաժակներով պորտվեյն և մի ուրիշ բաժակ՝ գոսոտերն, որովհետև նահանգական և գավառական քաղաքներում չի լինում հասարակ սոտերն[1]։ Հետո Նոզդրյովը հրամայեց բերել մի շիշ մադերա, որից լավագույնը չի խմել ինքը ֆելդմարշալը։ Մադերան, իսկապես, մինչև անգամ բերանում այրվում էր, որովհետև վաճառականներն արդեն գիտենալով կալվածատերերի ճաշակը, որ սիրում էին թունդ մադերա, վրան անխնա ռոմ էին ավելացնում, իսկ երբեմն էլ ցարական օղի

[1] *Սոտերն ու գոսոտերն — գինու տեսակներ։*

էին խառնում, հուսալով, որ ամեն բանի կդիմանա ռուսական ստամոքսը։ Հետո Նոզդրյովը հրամայեց բերել մի ինչ-որ առանձնահատուկ շիշ, որը, նրա ասելով, թե բուրգոնյոն էր և թե շամպայն։ Նա մեծ ջանքով լցնում էր երկու բաժակները՝ և աջ, և ձախ, թե փեսային, թե Չիչիկովին։ Չիչիկովը, սակայն, հարևանցի նկատեց, որ նա ինքն իրեն քիչ էր ալևլացնում։ Դա հարկադրեց նրան զգույշ լինել և հենց որ Նոզդրյովը մի փոքր խոսքով էր ընկնում կամ փեսայի բաժակն էր լցնում՝ հենց նույն րոպեին իր բաժակը շուռ էր տալիս ափսեի մեջ։ Մի քիչ ժամանակ անց հրամցրին ոյաբինովկա, որը Նոզդրյովի ասելով՝ ուներ կատարելապես շլորի համ, բայց որի մեջ, ի զարմանս, զգացվում էր ցքին իր բոլոր ուժով։ Հետո լամեցին մի ինչ-որ բալասան, որը մի այնպիսի անուն ուներ, որ մինչև անգամ դժվար էր միտը պահել և տանտերն ինքն էլ ուրիշ անգամ արդեն ա՛յլ անուն տվեց նրան։ Ճաշը վաղուց արդեն վերջացել էր, և գինիները բոլորը փորձված էին, բայց հյուրերը դեռ շարունակում էին նստել սեղանի մոտ։ Չիչիկովը բոլորովին չէր կամենում Նոզդրյովի հետ խոսել փեսայի ներկայությամբ գլխավոր առարկայի մասին։ Ինչ կուզի լինի, փեսան կողմնակի մարդ էր, իսկ առարկան պահանջում էր մեկուսի և բարեկամական խոսակցություն։ Բայց և փեսան հազիվ թե կարող էր վտանգավոր մարդ լինել, որովհետև, ըստ երևույթին, լիուլի բռնավորվել էր և նստած աթոռի վրա՝ րոպե առ րոպե տանձ էր կշռում։ Ինքն էլ նկատելով, որ գտնվում է ո՛չ հուսալի վիճակի մեջ, նա վերջապես սկսեց խնդրել, որ թույլ տան տուն գնալու, բայց այնպիսի ծույլ և թույլ ձայնով, կարծես՝ ըստ ռուսական արտահայտության՝ աքցանով ձիու վրա խամութ էր քաշում։

— Չէ՛ որ չէ՛, չեմ թողնի,— ասաց Նոզդրյովը։

— Ո՛չ, մի՛ նեղացնի ինձ, բարեկամս, ճշմարիտ, կգընամ,— ասաց փեսան.— դու ինձ շատ կվիրավորես։

— Դատարկ բաներ են, դատարկ բաներ, մենք հենց խոկույն բանչուկ կսարքենք։

— Ո՛չ, եղբայր, սարքիր ինքդ, իսկ ես չեմ կարող, կինս շատ կնեղանա, ճշմարիտ, ես պետք է նրան պատմեմ տոնավաճառի մասին։ Պետք է, եղբայր, ճշմարիտ, պետք է նրան բավականություն պատճառել։ Ոչ, մի՛ արգելիր ինձ։

— Ի՛, ճամփի՛ր նրան, կնոջդ գիտես ուր... իսկապե՞ս է, կարևոր գո՞րծ եք կատարելու միասին։

— Ո՛չ, եղբայր, նա այնպես հարդարժան է և հավատարիմ։ Այնպիսի ծառայություններ է ցույց տալիս... Կհավատա՞ս, աչքերս արցունքոտվում են։ Ո՛չ, մի՛ արգելիր ինձ, ձեզ ասում եմ իբրև ազնիվ մարդ, պիտի գնամ։ Ես քեզ մաքուր խղճով հավատացնում եմ այդ։

— Թող գնա, ի՞նչ օգուտ նրանից,— Նոզդրյովին կամաց ասաց Չիչիկովը։

— Եվ ճշմարիտ որ,— ասաց Նոզդրյովը,— անասելի չեմ սիրում այսպիսի փալասներին, և բարձրաձայն ավելացրեց.— դրողի ծոցը, գնա՛, մտիր կնկանդ փեշի տակ, ֆետյո՛ւկ[1]։

— Ո՛չ, եղբայր, դու ինձ ֆետյուկ ասելով մի՛ հայհոյիր,— պատասխանեց փեսան,— ես նրան կյանքովս եմ պարտական։ Ճշմարիտ, այնպես բարի՛ է, սիրելի, այնպիսի փաղաքշանքներ ունի... լացդ գալիս է. կհարցնի, թե ի՛նչ տեսա տոնավաճառում,՝ պետք է բոլորը պատմեմ, այնպես, իսկապես, անուշիկն է։

— Դե գնա՛, փչի՛ր նրան հիմար բաներ։ Ահա՛ գդակդ։

— Ո՛չ, եղբայր, դու չպետք է նրա մասին այդպես արտահայտվես, դրանով դու, կարելի է ասել, ինձ ես վիրավորում, նա այնքան անուշիկն է։

— Դե կորի՛ր, ու շուտ գնա նրա մոտ։

— Այո՛, եղբայր, կգնամ, ների՛ր, որ չեմ կարող մնալ։ Սրտով ուրախ կլինեի, բայց չեմ կարող։— Փեսան դեռ երկար ժամանակ կրկնում էր իր ներողությունները՝ չնկատելով, որ ինքը վաղուց նստել էր բրիչկան, վաղուց դուրս էր եկել դարպասից, և նրա առջև վաղուց դատարկ դաշտերն էին միայն։ Պետք է կարծել, որ կինը բի՛չ բան լսեց տոնավաճառի մանրամասնությունների մասին։

— Փո՛ւչ կենդանի,— ասաց Նոզդրյովը, կանգնելով պատուհանի առաջ և նայելով հեռացող կառքին։— Տե՛ս, ինչպե՞ս քաշվեց։ Կողքից լծած ձին վատը չէ, վաղուց ուզում էի ճանկ-

---

[1] Ֆետյուկ — Տղամարդու համար վիրավորական բառ և առաջանում է ֆ-ից, մի տառ, որ եմանք համարում են անվայելուչ տառ։ (Ծանոթություն Գոգոլի)։

գցեմ։ Բայց նրա հետ ո՛չ մի կերպ գործ չես կարող բռնել։ Ֆետյո՛ւկ է, ուղղակի՛ ֆետյուկ։

Դրանից հետո նրանք մտան սենյակ։ Պորֆիրին բերեց մոմերը, և Զիչիկովը տանտիրոջ ձեռին նկատեց խաղաթղթի կապուկը, որ հայտնի չէ՝ որտեղի՛ց էր ընկել նրա ձեռքը։

— Է, եղբայրս,— ասաց Նոզդրյովը՝ կապուկի կողերը մատներով սեղմելով և մի փոքր ծռելով այնպես, որ թուղթը տրաքեց և դուրս թռավ։— Է՛, ժամանակ անցկացնելու համար երեք հարյուր ռուբլի բանկ եմ վեր գալիս։

Բայց Զիչիկովը չլսելու տվեց, թե ինչի մասին էր խոսքը, և ասաց՝ իբրև թե հանկարծ մտաբերեց,— հա՛, չմոռանամ. քեզ խնդիրք ունեմ։

— Ի՞նչ։

— Առաջ խոսք տուր, որ կկատարես։

— Ախր ի՞նչ խնդիրք է։

— Ի՛նչ որ է, խոսք տուր։

— Համեցե՛ք։

— Ազնիվ խո՞սք։

— Ազնիվ խոսք։

— Այ, ի՛նչ խնդիրք է. դու կարծեմ շատ մեռած գյուղացիներ ունես, որոնք դեռ չեն դուրս գրված վերստուգումից։

— Լավ, ունեմ, ի՞նչ կա որ։

— Փոխանցիր ինձ, իմ անվանը։

— Բայց ինչի՞դ է պետք։

— Ի՛նչ որ է, պետք է ինձ։

— Ախր ինչի՞։

— Ի՛նչ որ է, պետք է... դա արդեն իմ գործն է, մի խոսքով՝ պետք է։

— Ճշմարիտ, մի քանի երևի սարքել ես։ Խոստովանի՛ր, ի՞նչ։

— Է, ի՞նչ եմ սարքել. այդպիսի մի դատարկ բանից ոչինչ չի էլ կարելի սարքել։

— Ախր ինչի՞դ են պետք։

— Ծ՛ֆ, ինչ հետաքրքրասեր ես, ամեն դատարկ բան կուզի ձեռքով տնտղել, դեռ հոտ էլ քաշել։

— Ախր ինչի՞ չես ուզում ասել։

— Ախր քեզ ի՞նչ օգուտ իմանալուց. է՛, պարզապես, այնպես, խելքիս փչեց։

— Որ այդպես է, մինչև չասես՝ չեմ անի։

— Ա՛յ, տեսնո՞ւմ ես, այ, դա արդեն անազնիվ բան է քո կողմից. խոսք տվիր և խոստումից հրաժարվեցիր։

— Ի՞նչ ուզում ես ասա, չեմ անի, մինչև չասես, թե ինչի՛ համար է։

«Ի՞նչ մի բան հնարեմ սրա համար»,— մտածեց Չիչիկովը և մի րոպե մտածմունքից հետո հայտնեց, որ մեռյալ հոգիները նրան պետք են հասարակության մեջ կշիռ ձեռք բերելու համար, որ նա մեծ կալվածներ չունի, ուստի և ուզում է գոնե մի քանի հոգի էլ՝ ունենա։

— Ստո՛ւմ ես, ստո՛ւմ ես,— ասաց Նոզդրյովը, թույլ չտալով, որ վերջացնի,— ստո՛ւմ ես, եղբայր։

Չիչիկովն ինքն էլ նկատեց, որ շատ էլ հարմար չհնարեց և պատրվակը բավականին թույլ է։— Դե լավ, ես քեզ ավելի ճիշտը կասեմ,— ասաց նա շտկվելով,— միայն խնդրում եմ, մարդու բան չասես։ Ես մտադրվել եմ ամուսնանալ, բայց դու պետք է իմանաս, որ հարսնացուի հայրն ու մայրը ամենապատվախնդիր մարդիկ են։ Ճշմարիտ, այնպիսի՛ մի փորձանքի մեջ եմ ընկել, ուրախ չեմ, որ կապվել եմ, անպատճառ ուզում են, որ փեսացուն ոչ մի կերպ երեք հարյուրից պակաս հոգի չունենա, մինչդեռ ինձ համարյա հարյուր հիսուն գյուղացի պակասում է...

— Է՛, ստո՛ւմ ես, ստո՛ւմ ես,— գոչեց կրկին Նոզդրյովը։

— Ա՛յ, այստեղ որ,— ասաց Չիչիկովը,— մի այսքան էլ չստեցի՛ր,— և բթամատով ցույց տվեց իր ճկույթի վրա ամենափոքր մասը։

— Ճիզվիտ-ճիզվիտ։ Գլխովս գրազ կգամ, որ ստում ես։

— Բայց դա վիրավորական է. ուրեմն ես ի՞նչ եմ այստեղ։ Ինչո՞ւ եմ անպատճառ ստում։

— Ախր ես քեզ լավ եմ ճանաչում. ախր դու խարդախ մարդ ես, թույլ տուր ինձ այդ բանը քեզ ասել բարեկամաբար։ Եթե ես քո պետը լինեի՝ ես քեզ կկախեի առաջին իսկ պատահած ծառից։

Չիչիկովը վիրավորվեց այսպիսի նկատողությունից։ Արդեն իսկ ամեն քիչ թե շատ կոպիտ կամ բարեվայելչությունը

վիրավորող արտահայտություն նրա համար անհաճո էր։ Նա մինչև անգամ չէր սիրում ո՛չ մի կերպ թույլ տալ իր հետ մտերմական վերաբերմունք, թեև միայն, եթե անձնավորությունը չափազանց բարձր դիրք ունենա։ Եվ այդ պատճառով հիմա նա կատարելապես վիրավորվեց։

— Աստված վկա, կկախեի,— ասաց Նոզդրյովը,— ես այդ քեզ անկեղծ եմ ասում, ո՛չ նրա համար, որ քեզ վիրավորեմ, այլ պարզապես ընկերաբար եմ ասում։

— Ամեն բան սահման ունի,— ասաց Չիչիկովը՝ արժանապատվության զգացումով։— Եթե ուզում ես պարծենալ նման խոսքերով՝ գնա՛ զորանոցները,— և ապա ավելացրեց,— չես ուզում նվիրել՝ ծախի՛ր։

— Ծախե՞մ։ Ախր ես քեզ լավ եմ ճանաչում, ախր դու սրիկա ես, ախր դու կարգին գին չես տա նրանց։

— Է, դու էլ մի բարի պտուղը չես. սրան նայիր, ի՞նչ է, նրանք բրիլիանտի՞ց են, ի՛նչ է։

— Այդպե՛ս է ու կա։ Քեզ ճանաչում էի, չէ՞։

— Շնորհ արա, եղբայրս, արդեն չհուզի դամարդ բանե՞ց։ Դու պետք է այդ հենց այնպես տայիր ինձ։

— Դե, լավ, լսիր. որպեսզի ապացուցեմ քեզ, որ ես մի ինչ-որ ձեռքը պինդ մարդ չեմ, դրանց համար ոչինչ չեմ վերցնի։ Գնի՛ր իմ քուռակը, ես քեզ դրանց վերադիր կտամ։

— Շնորհ արա, ինչի՞ս է պետք քուռակը,— ասաց Չիչիկովը, իսկապես զարմանալով այս առաջարկից։

— Ինչպե՞ս թե ինչիդ. ախր ես նրան տասը հազար եմ վճարել, իսկ քեզ կտամ չորս հազարով։

— Բայց ինչի՞ս է պետք քուռակը, ես ձիաբուծարան չեմ պահում։

— Ապա մի լսի՛ր, դու չես հասկանում. ախր ես քեզանից հիմա կվերցնեմ միայն երեք հազարը, իսկ մնացած հազարը ինձ կարող ես հետո վճարել։

— Քուռակն ինձ պետք չէ, աստված նրա հետ։

— Լավ, գնիր քուրան զամբիկը։

— Զամբիկն էլ պետք չէ։

— Զամբիկի և այն մոխրագույն ձիու համար, որ դու տեսար ինձ մոտ, ես քեզանից կվերցնեմ միայն երկու հազար։

— Բայց ինձ ձիերը իսկի էլ հարկավոր չեն։

— Ջիհրը կծախես. հենց առաջին տոնավաճառում նրանց համար կտան երեք անգամ ավելի։

— Դե ավելի լավ է հենց ինքդ ծախիր, եթե հավատացած ես, որ երեք անգամ ավելի կշահես։

— Գիտեմ, որ կշահեմ, բայց ուզում եմ, որ դու էլ օգուտ ստանաս։

Ջիլիկովը շնորհակալություն հայտնեց բարյացակամության համար և ուղղակի հրաժարվեց թե՛ մոխրագույն ձիուց և թե՛ քուրան զամբիկից։

— Դե լավ, շո՛ւն գնիր։ Ես քեզ կծախեմ մի այնպիսի զույգ, որ զարմանքից աչքերդ բաց կմնան. բրդոտ դնչով, բեղավոր, բուրդը ցից-ցից, խոզանակի պես։ Տակառաձև կողերքը մարդու խելքահան են անում, թաթը գնդիկ, գետնին չի դիպչում։

— Իմ ինչի՞ս են պետք շները, ես որսորդ չեմ։

— Ախր ես ուզում եմ, որ շուն ունենաս։ Լսի՛ր, դե որ շուն չես ուզում, գնի՛ր շարմանկաս, հրաշալի շարմանկա է։ Ինձ վրա՝ ինչպես ազնիվ մարդ՝ նստել է հազար հինգ հարյուր. քեզ կտամ 900 ռուբլով։

— Իսկ ինչի՞ս է պետք շարմանկան։ Ես հո գերմանացի չեմ, որ քաշ գալով դրա հետ՝ ճանապարհին փող հավաքեմ։

— Ախր դա այնպիսի շարմանկա չէ, որ գերմանացիներն են ունենում։ Սա երգեհոն է. ապա մի լավ նայիր—բոլորը իարմիր փայտից է։ Ա՛յ, ես քեզ մի անգամ էլ ցույց կտամ։ Այստեղ նուղդրյովը՝ խլելով Ջիլիկովի ձեռքը՝ սկսեց նրան քաշ տալ մյուս սենյակը, և որքան էլ սա ոտները դեմ էր տալիս հատակին և հավատացնում էր, որ արդեն գիտե, թե ի՛նչ տեսակ շարմանկա է, բայց պարտավոր եղավ դարձյալ մի անգամ լսելու, թե ինչպե՛ս Մայլբրուգը կռիվ գնաց։

— Դե, որ փողով չես ուզում, ահա թե ի՛նչ, լսի՛ր. ես քեզ կտամ շարմանկան, և մեռյալ հոգիները, ինչքան որ կան ինձ մոտ, իսկ դու ինձ տուր քո բրիչկան և՝ վերադիր երեք հարյուր ռուբլի։

— Այ քեզ բան, իսկ ես ինչո՞վ գնամ։

— Ես քեզ ուրիշ բրիչկա կտամ։ Այ, գնանք սարայը՝ ցույց տամ։ Դու միայն կնկերկես, կգառնա հրաշք բրիչկա։

«Սատանի ձիուն է նստել սա»,— մտածեց իր մեջ Ջիլի-

կովը և վճռեց՝ ի՛նչ էլ որ լինի, օձիքն ազատել ամեն տեսակ բրիչկաներից, շարմանկաներից և դանազան տեսակի շնե-րից՝ չնայած նրանց խելքահան անող տակառաձև կողերքի և թաթերի գնդիկությանը։

— Ախր բրիչկան, շարմանկան և մեռյալ հոգիները բո-լորը միասին է։

— Ջեմ ուզում,— ասաց մի անգամ ևս Ջիչիկովը։

— Ինչի՞ չես ուզում։

— Նրա համար, որ ուղղակի չեմ ուզում, և արդեն հերիք եղավ։

— Ճշմարիտ, ի՛նչ տեսակ մարդ ես. քեզ հետ, ինչպես տեսնում եմ, չի կարելի, ինչպես ընդունված է լավ բարեկամ-ների և ընկերների մեջ, այնպիսին ես, ճշմարիտ ասած... Խա-կույն երևում է, որ երկերեսանի մարդ ես։

— Ապա ի՞նչ, հիմա՞ր եմ, ի՞նչ եմ. ինքդ մտածիր. ինչի՞ համար եմ ձեռք բերում մի բան, որ ինձ բոլորովին պետք չէ։

— Լավ, խնդրում եմ, էլ մի՛ խոսի։ Հիմա ես շատ լավ եմ ճանաչում քեզ։ Այնպիսի, ճիշտ որ, անպիտա՜նն ես։ Դե, լսի՛ր, ուզում ես մի բանչիկ խփենք։ Ես կդնեմ բոլոր մե-ռածներին, շարմանկան ևս։

— Բայց բանկի համաձայնել՝ նշանակում է ենթարկվել անորոշության,— ասաց Ջիչիկովը և այդ արանքում կողքանց մտիկ տվեց նրա ձեռքի միջի խաղաթղթերին։ Երկու կապուկն էլ նրան թվացին արհեստականի շատ նման, իսկ վրայի բիծը ինքնին խիստ կասկածելի էր։

— Ինչո՞ւ համար անորոշության,— ասաց Նոզդրյովը,— ո՛չ մի անորոշություն. բախտդ որ բերեց՝ քամին ոսկին լուսա-մուտով կածի ներս։ Այ, տե՛ս, ինչ բախտ է, հա՛,— ասաց նա, սկսելով թուղթը բանալ գրգռելու համար,— ի՛նչ բախտ է, ի՛նչ բախտ է, ահա՛... ո՞նց է խփում, ահա այն անիծած ին-նանոցը, որի պատճառով տուրը տվի։ Գգում էի, որ դավաճա-նում է, բայց էլի աչքերս խփեցի ու միտք եմ անում. է՛հ, դավաճանի՛ր, անիծածդ։— Երբ Նոզդրյովը ասում էր այդ՝ Պորֆիրին մի շիշ բերեց։ Բայց Ջիչիկովը վճռապես հրա-ժարվեց ինչպես խաղից, նույնպես և գինուց։

— Ախր ինչո՞ւ չես ուզում խաղալ,— ասաց Նոզդրյովը։

— Հենց նրա համար, որ ասենք՝ տրամադիր չեմ։ Նվ խոստովանանք լինի՝ ես բոլորովին խաղալու սեր չունեմ։

— Ախր ինչո՞ւ սեր չունես։

Ջիչիկովն ուսերը թոթվեց և ավելացրեց. որովհետև սեր չունեմ։

— Անպետքի մեկն ես դու։

— Ի՞նչ աննենք, աստված այդպես է ստեղծել։

— Ֆետյուկ ես, պարզապես։ Առաջ՝ մեկ մտածեցի, որ դու գոնե փոքր-ինչ կարգին մարդ ես, այնինչ ո՛չ մի մարդավարություն չես հասկանում։ Քեզ հետ իսկի չի կարելի խոսել, ինչպես մոտ մարդու հետ... ո՛չ մի շիտակություն, ո՛չ մի անկեղծություն. իսկական Սոբակևիչ ես, նրա պես սրիկա։

— Այդ ինչո՞ւ համար ես հայհոյում ինձ։ Մեղավո՞ր եմ, որ չեմ խաղում։ Ծախիր միայն հոգիները, եթե արդեն դու այնպիսի մարդ ես, որ այդ դատարկ բանի վրա դողում ես։

— Ոտներս կստանաս, ուզում էլ էի ձրի տալ, բայց հիմա, այ, չե՛ս ստանա։ Աշխարհն էլ որ տաս՝ չեմ տա։ Գծուծի՛ մեկը, գարշելի՛։ Էլ սրանից դենը հետդ ո՛չ մի գործ չեմ ուզում ունենալ։ Պորֆի՛րի, գնա՛ ախոռապանին ասա, որ նրա ձիերին վարսակ չտա, թող մենակ խոտ ուտեն։

Վերջին եզրակացությունը Ջիչիկովն ամենևին չէր սպասում։

— Ավելի լավ էր՝ ուղղակի աչքիս չերևայիր,— ասաց Նոզդրյովը։

Սակայն, չնայած այս խոովելուն, հյուրն ու տանտերը միասին ընթրեցին, թեև այս անգամ սեղանի վրա չկար ո՛չ մի տեսակ գինի հնարիմաց անուններով։ Միայն մի շիշ էր տնկված ինչ-որ կիպրոսի գինով, որը, ինչպես ասում են, տեղովը քացախ էր։ Ընթրիքից հետո Նոզդրյովը Ջիչիկովին տանելով կողքի սենյակը, ուր նրա համար անկողին էր պատրաստված, ասաց. «Ահա՛ քեզ անկողին։ Բարի գիշեր էլ նույնիսկ չեմ ուզում ցանկալ քեզ»։

Ջիչիկովը Նոզդրյովի հեռանալուց հետո մնաց ամենաանախորժ տրամադրության մեջ։ Նա ներքուստ զայրացած էր իր վրա, հայհոյում էր իրեն, որ այստեղ եկավ և զուր տեղը ժամանակ կորցրեց։ Բայց է՛լ ավելի կշտամբում էր իրեն այն բանի համար, որ նրա հետ խոսք բաց աթեթ գործի մա-

սին, անզգույշ վարվեց, երեխայի պես, հիմարի պես. քանի որ գործը ամենևին այն տեսակից չէր, որ վստահվեր Նոզդրյովին... Նոզդրյովը անպիտան մարդ է... Նոզդրյովը կարող է ստեր ասել, ավելացնել, տարածել սատանան գիտե թե ի՛նչ բաներ, դեռ զանազան բամբասանքներ էլ կծագեն... Լավ չէ, լավ չէ։ Ուղղակի հիմար եմ ես,— ասում էր նա ինքն իրեն։ Գիշերը նա շատ վատ քնեց։ Ինչ-որ մանրիկ, շատ ժիր միջատներ կծում էին նրան անտանելի ցավեցնելով, այնպես որ նա ամբողջ բոով քորում էր խոցված տեղը՝ ասելով. «Ա՛յ սատկե՛ք դուք հա, Նոզդրյովի հետ միասին։ Զարթնեց առավոտը վաղ։ Առաջին գործը եղավ՝ գիշերազգեստն ու կոշիկները հագնելով՝ բակի միջով գնալ գոմը՝ Սելիֆանին հրամայելու որ իսկույն ևեթ բրիչկան լծի։ Բակի միջով վերադառնալիս նա պատահեց Նոզդրյովին, որը նույնպես գիշերվա զգեստով էր, ծխամորճը ատամների մեջ։

Նոզդրյովը բարեկամաբար բարևեց նրան և հարցրեց, թե ինչպե՞ս քնեց։

— Ոչինչ,— պատասխանեց Չիչիկովը շատ չոր։

— Իսկ ես, բարեկամս,— ասաց Նոզդրյովը,— այնպիսի մի գարշելի բանի մեջ էի ամբողջ գիշերը, որ զզվելի է պատմել, բերանումս էլ երեկվանից կարծես մի էակադրոն է գիշերել։ Երևակայի՛ր, երազումս տեսա, որ ինձ թակում էին, աստված վկա։ Ով երևակայիր, ո՞վ։ Այ, ոչ մի կերպ գլխի չեմ ընկնի. շտաբս-ռոտմիստր Պացելուևը՝ Կուվշիննիկովի հետ։

«Այո»,— մտածեց իր մեջ Չիչիկովը. «լավ կլիներ՝ եթե կաշիդ քերթեին արթուն ժամանակ»։

— Աստված վկա. և սաստիկ ցավեցրին։ Զարթնեցի, սատանան տանի, իսկապես ինչ-որ քոր է գալիս, երևի անիծած լվերն էին։ Դե, դու հիմա գնա հագնվիր, ես հիմա կգամ մոտդ։ Պետք է միայն սրիկա գործակատարին մի հայհոյեմ։

Չիչիկովը գնաց հագնվելու և լվացվելու։ Երբ դրանից հետո դուրս եկավ սեղանատուն, այնտեղ սեղանի վրա դրած էին թեյի պարագաները մի շիշ ռոմով։ Սենյակում մնացել էին երեկվա ճաշի և ընթրիքի հետքերը։ Ըստ երևույթին՝ հատակի խոզանակը բոլորովին չէր դիպել սենյակին։ Հատակին թափված էին հացի փշրանքներ, իսկ թութունի մոխիրը երևում էր մինչև անգամ սփռոցի վրա։ Ինքը տանտերը, որ չհապա-

չեց ներս մտնելու, գիշերապահի տակին ոչինչ չուներ, բացի բաց կծիկից, որի վրա բուսել էր ինչ-որ մորուք։ Ջիբուխը ձեռին, գավաթից խմելով, նա շատ լավ էր այն նկարչի համար, որ սաստիկ չի սիրում լիզած ու խուճուճած պարոններին՝ սափրիչների ցուցանակների պես, կամ սանրի տակով կիպ խուզածներին։

— Է՛, ի՞նչ ես մտածում,— ասաց Նոզդրյովը մի քիչ լռելուց հետո,— չե՞ս ուզում հոգիների վրա խաղալ։

— Ես քեզ ասացի, եղբայր, որ չեմ խաղում, գնել՝ համեցեք, կգնեմ։

— Մախել չեմ ուզում, դա կլինի ոչ ընկերական։ Ամեն առվից ջուր չեմ խմի։ Բանկը—ուրիշ բան է։ Մի անգամ էլ է՝ խաղանք։

— Ես արդեն ասացի, որ ոչ։

— Իսկ փոխանակել չե՞ս ուզում։

— Ջեմ ուզում։

— Դե լսի՛ր, ե՛կ շաշկի խաղանք, կտանես՝ բոլորը քոնն է։ Ախր ես շատ ունեմ այնպիսիներից, որոնց պետք է վերստուգումից հանել։ Է՛, Պորֆիրի, ապա մի շաշկիի արկղը բեր։

— Ջուր է աշխատանքդ, չեմ խաղալու։

— Բայց ախր սա բանկ չէ, այստեղ չի կարող լինել ո՛չ մի բախտ կամ կեղծիք. բոլորն ախր համաությունից է կախված։ Ես մինչև անգամ նախօրոք ասում եմ, որ բոլորովին չեմ իմանում խաղալ, թեև մի բան կտաս ինձ սկզբից։

«Նստեմ մի»,— մտածեց ինքնիրեն Ջիչիկովը,— «խաղամ շաշկի նրա հետ։ Ես շաշկի վատ չէի խաղում. իսկ բանման սարքելը նրա համար այստեղ դժվար կլինի»։

— Համեցե՛ք, թող այդպես լինի, շաշկի կխաղամ։

— Հոգիները հարյուր մանեթով վեր կգամ։

— Ինչո՞ւ. բավական է՝ եթե հիսունով էլ գաս։

— Ո՛չ, դա ի՞նչ վեր գալ է՝ հիսուն։ Ավելի լավ է՝ այդ գումարով գնեմ միջին գնի մի լակոտ կամ ժամացույցի ոսկե կնիք։

— Լավ, համեցե՛ք,— ասաց Ջիչիկովը։

— Իսկ ինչքա՞ն կտաս ինձ տառջուց,— ասաց Նոզդրյովը։

— Դա ինչի՞ համար. իհարկե՝ ոչինչ։

— Գոնե առաջին երկու քայլի հերթն իմն է։

— Չեմ ուզում, ես ինքս վատ եմ խաղում։

— Գիտենք ձեզ, թե ինչպե՞ս եք վատ խաղում,— ասաց Նոզդրյովը՝ շաշկին շարժելով։

— Վաղո՞ւց է որ ձեռս շաշկի չեմ առել,— ասաց Չիչիկովը՝ նույնպես շաշկին շարժելով։

— Գիտենք ձեզ, թե ինչպե՞ս եք վատ խաղում,— ասաց Նոզդրյովը՝ շաշկին առաջ մղելով։

— Վաղո՞ւց է որ ձեռս շաշկի չեմ առել,— ասաց Չիչիկովը՝ շաշկին շարժելով։

— Գիտենք ձեզ, թե ինչպե՞ս եք վատ խաղում,— ասաց Նոզդրյովը շաշկին շարժելով, բայց միաժամանակ էլ թևքի ծալվածքով շարժեց նաև մի ուրիշ շաշկի։

— Վաղուց է ձեռս չեմ առել... է՛, է՛, եղբայր, սա ի՞նչ է, ապա մի ե՛տ տուր դա,— ասաց Չիչիկովը։

— Ի՞նչը։

— Շաշկին, ի՞նչը,— ասաց Չիչիկովը և միաժամանակ համարյա հենց քթի տակին նկատեց մի ուրիշը, որ ինչպես երևում էր, դամկայի սահմանն էր անցնում. որտեղից դա լույս ընկավ՝ միայն աստված գիտեր։— Ո՛չ,— ասաց Չիչիկովը, սեղանի մոտից վեր կենալով,— քեզ հետ ոչ մի հնար չկա խաղալու։ Այդպես չեն խաղում, երեք շաշկի միանգամից։

— Ինչո՞ւ համար երեք։ Դա սխալմամբ է։ Մեկը պատահաբար շարժվեց. ես ետ կվերցնեմ, համեցե՛ք։

— Իսկ մյուսը որտեղի՞ց լույս ընկավ։

— Ո՞ր մյուսը։

— Այ սա, որ դամկայի սահմանն է անցնում։

— Այ քեզ բան, իբր թե չես հիշում։

— Ո՛չ, եղբայր, ես բոլոր խաղերը հաշվել եմ, և բոլորը հիշում եմ. դու սա միայն ինձ համար հարմարեցրիր։ Սրա տեղը ա՛յ որտեղ է։

— Ինչպե՞ս թե այստեղ է,— ասաց Նոզդրյովը կարմրելով.— դու, եղբայր, ինչպես տեսնում եմ, հնարող ես։

— Ո՛չ, եղբայր, թվում է, որ դու ես հնարող, բայց միայն՝ անհաջող։

— Դու ինձ ո՞ւմ տեղն ես դնում,— ասաց Նոզդրյովը,— մի՞թե ես խարդախություն կանեմ։

— Ես քեզ ո՛չ ոքի տեղ չեմ դնում, բայց թե՝ այս րոպեից հետո այլևս չեմ խաղա։

— Ո՛չ, դու չես կարող հրաժարվել,— ասաց Նոզդրյովը տաքացնալով,— խաղն սկսվա՛ծ է։

— Ես իրավունք ունեմ հրաժարվելու, քանի որ դու այնպես չես խաղում, ինչպես վայել է ազնիվ մարդուն։

— Ո՛չ,ստո՛ւմ ես, դու այդ չես կարող ասել։

— Ո՛չ, եղբայր, դու ի՛նքդ ես ստում։

— Ես խարդախություն չարի, և դու չես կարող հրաժարվել, դու պետք է վերջացնես խաղը։

— Դու չես կարող ինձ ստիպել,— ասաց Ջիչիկովը սառնարյուն և մոտենալով տախտակին՝ խառնեց շաշկինները։

Նոզդրյովը բռնկվեց և այնպես մոտ գնաց Ջիչիկովին, որ սա երկու քայլ ետ ընկրկեց։

— Ես քեզ կստիպեմ խաղալ։ Դա ոչինչ, որ դու շաշկին խառնեցիր, ես հիշում եմ բոլոր քայլերը։ Մենք նրանց կրկին կդնենք այնպես, ինչպես դրված էին։

— Ո՛չ, եղբայր, վերջացած բան է, ես քեզ հետ չեմ խաղա։

— Ուրեմն դու չե՞ս ուզում խաղալ։

— Դու ինքդ տեսնում ես, որ քեզ հետ հնար չկա խաղալու։

— Ո՛չ, ուղղակի ասա, դու չե՞ս ուզում խաղալ,— ասաց Նոզդրյովը, ավելի մոտ գալով։

— Չե՛մ ուզում,— ասաց Ջիչիկովը և սակայն երկու ձեռը համենայն դեպս մոտ բերեց դեմքին՝ քանի որ գործը իսկապես տաք կերպարանք էր ընդունում։ Այդ նախազգուշությունը շատ տեղին էր, որովհետև Նոզդրյովը ձեռքը թափահարեց... և շատ էլ կարող էր պատահել, որ մեր հերոսի հաճելի և լիքը այտերից մեկը կծածկվեր անչնչելի անպատվությամբ. բայց բախտավոր կերպով հարվածը հեռացնելով՝ նա խլեց Նոզդրյովի ժիր ձեռքերը և ամուր բռնեց։

— Պորֆի՛րի, Պավլո՛ւշկա,— գոչեց Նոզդրյովը կատաղության մեջ՝ չանալով դուրս պրծնել։

Լսելով այս խոսքերը, Ջիչիկովը, որպեսզի տան ծառաներին վկա չդարձնի գայթակղիչ տեսարանին, և միաժամանակ զգալով, որ Նոզդրյովին բռնելն անօգուտ էր՝ բաց թո-

ղեց նրա ձեռքերը։ Հենց այդ ժամանակ ներս մտավ Պորֆիրին և նրա հետ Պավլուշկան, ուժեղ մի տղամարդ, որի հետ գործ ունենալը բոլորովին անձեռնտու բան էր։

— Ուրեմն դու չե՞ս ուզում, որ խաղը վերջացնենք,— ասաց Նոզդրյովը,— պատասխանի՛ր ինձ ուղղակի։

— Խաղը հնար չկա վերջացնելու,— ասաց Չիչիկովը և նայեց պատուհանին։ Նա տեսավ իր բրիչկան, որը կանգնած էր բոլորովին պատրաստ, իսկ Սելիֆանն սպասում էր, ըստ երևույթին, նշանի, որ կառքը վազեցնի դռան առջև, բայց սենյակից դուրս պրծնելու ո՛չ մի հնար չկար, դռներում կանգնած էին երկու ուժեղ ճորտ հիմարներ։

— Ուրեմն դու չե՞ս ուզում խաղը վերջացնել,— կրկնեց Նոզդրյովը, որի դեմքը կրակի մեջ ասես այրվում էր։

— Թեև դու խաղալիր ինչպես վայել է ազնիվ մարդուն, բայց հիմա չեմ կարող։

— Հա՛, այդպե՛ս, դու չե՛ս կարող, սրիկա՛, երբ տեսար, որ խաղդ չի հաջողվում, ուրեմն և չես կարող, հա՞։ Ծեծեցե՛ք դրան,— գոչեց նա գաղազած՝ դառնալով Պորֆիրին և Պավլուշկային, իսկ ինքը ձեռը գցեց կեռասի չիբուխը։ Չիչիկովը գունատվեց քաթանի պես։ Նա ուզում էր մի բան ասել, բայց զգում էր, որ շրթունքները շարժվեցին առանց ձայն հանելու։

— Ծեծեցե՛ք դրան,— գոչեց Նոզդրյովը՝ մղվելով առաջ կեռասի չիբուխով, ողջ տաքացած, քրտնած, կարծես մոտենում էր անառիկ ամրոցի։ Ծեծեցե՛ք դրան,— գոչեց նա այնպիսի ձայնով, ինչպես մեծ գրոհի ժամանակ իր դասակի վրա գոչում է՝ «Տղե՛րք, առա՛ջ», մի որևէ կատաղի պորուչիկ, որի խենթ քաջությունը արդեն այնպիսի հռչակ է ստացել, որ հատուկ հրաման է տրվում՝ տաք կռիվների ժամանակ նրա փեշը քաշել։ Բայց պորուչիկն արդեն զգացել է ռազմի մոլուցքը, ամեն բան նրա գլխում խառնվում է իրար, նրա առջև արշավում է Սուվորովը, նա մղվում է դեպի մեծ մարտը։ «Տղե՛րք, առա՛ջ»,— գոչում է նա, մղվելով առանց մտածելու, որ վնասում է արդեն ընդհանուր գրոհի մտածված պլանին, որ միլիոնի չափ հրացանի փողեր դուրս են ուղղված մինչև ամպերը հասած ամրոցի պատերի անառիկ պատնեշների ծակերից, որ բմբուլի պես օդը կթռչի նրա անզոր դասակը, և որ արդեն սուլում է ճակատագրական գնդակը՝ պատ-

րաստվելով ծեփելու նրա ճղճղան կոկորդը։ Բայց եթե Նոզդրյովն իրենով արտահայտում էր ամրոցի վրա գնացող, կապտաղի, գլուխը կորցրած պորուչիկին, ապա ամրոցը, որի վրա գնում էր, ո՛չ մի բանով նման չէր անառիկի։ Ընդհակառակը, ամրոցն այնպիսի վախ էր գցում, որ հոգին դառել էր կորեկի հատ։ Արդեն աթոռը, որով նա մտածում էր պաշտպանվել, ճորտ ծառաները խլել էին նրա ձեռքից, արդեն աչքերը կուչ ածելով՝ ո՛չ կենդանի, ո՛չ մեռած, նա պատրաստվում էր ճաշակել տանտիրոջ չերքեզի չիբուխը և աստված գիտե, թե ինչ պիտի պատահեր նրա հետ, բայց բախտին հաճելի էր ազատել մեր հերոսի կողերը, ուսերը և բոլոր ցաբեկիրթ մասերը։ Անսպասելի կերպով ծլնգացին հանկարծ՝ կարծես ամպերի միջից՝ զանգակի դողդոջուն հնչյուններ, պարզ լսվեց դեպի դուռը սլացող կառքի անիվների դղրդոց, և մինչև անգամ հենց սենյակի մեջ արձագանքեց կանդ առած տրոյկայի տաքացած ձիերի ծանր փնչոցն ու ծանր շնչարգելությունը։ Բոլորն ակամա նայեցին պատուհանից դուրս։ Մի ինչ-որ մարդ, բեղերով, կիսագինվորական սերթուկ հագին, դուրս եկավ կառքից։ Հաշտում տեղեկանալով, նա հենց նույն րոպեին մտավ ներս, երբ Չիչիկովը դեռ ուշքի չէր եկել իր երկյուղից և ամենաողորմելի դրության էր, որի մեջ երբևիցե եղել է մահկանացուն։

— Թույլ տվեք իմանալ, ո՞վ է այստեղ պ. Նոզդրյովը,— ասաց անծանոթը՝ մի տեսակ տարակուսանքով նայելով Նոզդրյովին, որը կանգնել էր չիբուխը ձեռին, և Չիչիկովին, որը հազիվ էր սկսել խելքը գլուխը հավաքել իր անհարմար դրությունից։

— Թույլ տվեք նախ իմանալ՝ ո՞ւմ հետ պատիվ ունեմ խոսելու,— ասաց Նոզդրյովը, ավելի մոտենալով նրան։

— Ես կապիտան-ոստիկանն եմ։

— Եվ ի՞նչ եք կամենում։

— Ես եկել եմ ձեզ հայտարարելու ինձ հաղորդված ծանուցումը, որ դուք դատի տակ եք գտնվում մինչև ձեր գործի որոշման վերջը։

— Ի՞նչ տխմարություն, ի՞նչ գործ,— ասաց Նոզդրյովը։

— Դուք խառնե՛ք այն պատմության մեջ, որ կալվածա-

տեր Մաքսիմովին անձնական վիրավորանք եք հասցրել ճիպոտներով, հարբած վիճակում։

— Դուք սուտ եք, ես խակի չեմ էլ տեսել կալվածատեր Մաքսիմովին։

— Ողորմած պարո՛ն, թույլ տվեք ձեզ զեկուցել, որ ես սպա եմ, դուք այդ կարող եք ասել ձեր ծառային և ոչ թե ինձ։

Այստեղ Չիչիկովը չսպասելով, թե ի՛նչ կասի դրան նոզդրյովը՝ շուտով դռնակն առավ ու ոստիկանապետի մեջքի հետևով դուրս պրծավ շքամուտք, նստեց բրիչկան և Սելիֆանին հրամայեց քշել ձիերնամենայն արագությամբ։

ԳԼՈՒԽ V

Մեր հերոսը, սակայն, կարգին վախեցած էր։ Թեև բրիչկան սլանում էր խելքապատառ արագությամբ, և նոզդրյովի գյուղը վաղուց աչքից կորել էր՝ ծածկվելով դաշտերի, զառիվայրերի և բլրակների հետև, բայց նա շարունակ վախով հետ էր նայում՝ սպասելով որ ահա, ո՛ւր որ է՝ վրա կհասնի հետապնդումը։ Դժվարությամբ էր նա շունչ քաշում, և երբ փորձեց ձեռքը դնել սրտին, զգաց, որ թպրտում էր, ինչպես լորը՝ վանդակում։ «Այ թե ի՛նչ բերից գլուխս, տես-թե ի՛նչն է»։ Այստեղ նա նոզդրյովի հասցեին շատ ծանր և ուժեղ ցանկություններ հայտնեց. մինչև անգամ վատ խոսքեր էլ պատահեցին է՛, ի՞նչ արած։ Ռուս մա՛րդ, այն էլ՝ չարացած։ Պատահածն էլ բոլորովին կատակ բան չէր։ «Ի՛նչ ուզում ես՝ ասա՛»,— մտածեց նա ինքնիրեն,— «եթե ոստիկանապետը վրա չհասներ՝ կարող էր պատահել, որ լույս աշխարհը գլխիվայր թավարեր։ Կգնայի կկորչեի, ինչպես պղպջակ՝ ջրի վրա, առանց որևէ հետքի, չթողնելով սերունդներ, չհասցնելով ապագա երեխաներիս ո՛չ կարողություն, ո՛չ ազնիվ անուն»։— Մեր հերոսը շատ էր հոգում իր սերնդի մասին։

«Փխ պարոն էր, հա՛,— մտածում էր ինքնիրեն Սելիֆանը,— օրումս էդպես պարոն չեմ տեսել։ Ասեմ քեզ՝ քթել է պետք նրա երեսին դրա համար։ Լավ է՝ մարդու ուտելու բան մի տուր, բայց ձիուն դու պետք է կերակրես, որովհետև ձին

սիրում է վարսակ։ Դա նրա պարենն է. ոնց որ՝ խոսքի օրինակ՝ մեր ապրուստը, նրա համար էլ՝ վարսակը. դա նրա պարենն է»։

Ձիերն էլ, թվում է, թե լավ բան չէին մտածում Նոզդրյովի մասին. ոչ միայն աշխետի և ատենակալի, այլև իրեն՝ խայտավորի քեֆն էլ տեղը չէր։ Թեև միշտ վարսակից վատ բաժինը նրան էր հասնում, և Սելիֆանը ուրիշ կերպ չէր նրա մաղը լցնում, քան եթե սկզբից չասեր. «էյ, դու, ցածհոգի». բայց դե ինչքան չլինի՝ դա վարսակ էր, ոչ թե հասարակ խոտ, նա բավականությամբ ծամում էր և հաճախ իր երկար մռութը խոթում էր ընկերների մաղերը, համտեսելու համար, թե ինչպես էր նրանց պարենը, մանավանդ, երբ Սելիֆանը ախոռում չէր լինում, իսկ հիմա միայն խոտ էր տվածը. լավ չէ, բոլորը դժգոհ էին։

Սակայն շուտով բոլոր դժգոհների բոլոր զեղումները դադարեցին՝ հանկարծ և կատարելապես անսպասելի կերպով։ Բոլորը, չբացառելով նաև իրեն՝ կառապանին, ուշքի եկան և սթափվեցին միայն այն ժամանակ, երբ նրանց վրա քշած Նկավ մի վեցձիանի կառք, և համարյա նրանց գլխավերևում լսվեց կառքը նստած կանանց ճիչը, ուրիշ մի կառապանի հայհոյանքը, սպառնալիքները. «Ա՛յ սրիկայի մեկը, քեզ ախր գոռացի՝ շուռ տուր ա՛ջ, ավարա։ Հարբա՞ծ ես, ի՞նչ ես»։ Սելիֆանը զգաց իր սխալանքը, բայց քանի որ ռուս մարդը չի սիրում ուրիշների առաջ խոստովանել, որ ինքը մեղավոր է, ուստի և տեղն ու տեղը հպարտ դիրք ընդունելով՝ ասաց. «Իսկ դու ինչո՞ւ էսպես վրա քշեցիր. աչքերդ միկիտանո՞ւմ ես գրավ դրել, ի՛նչ է»։ Հետ այսու նա սկսեց բրիչկան ետ տալ, որ դրանով դուրս գա դիմացի ճանապարհից, բայց հնար չեղավ, ամեն ինչ խառնվեց իրար։ Խայտավորը հետաքրքրությամբ հոտոտում էր իր նոր բարեկամներին, որ հայտնվեցին նրա երկու կողմում։ Մինչդեռ կառք նստած տիկինները այդ բոլորի վրա նայում էին՝ դեմքներին վախի արտահայտությամբ։ Մեկը մի պառավ էր, մյուսը՝ մատաղահաս, տասնվեց տարեկան մի աղջիկ, ոսկեգույն մազերով, շատ ճարտար և սիրուն սղալած փոքրիկ գլխին։ Նրա դեմքի գեղեցիկ ձվածիրը կլորանում էր թարմ ձվի նման, և դրա նման ինչ-որ թափանցիկ անբծությամբ սպիտակ էր՝ երբ թարմ, հենց նոր ածած,

նրա զննող մառանապետուհու թուխ ձեռքերի մեջ բռնվում է լույսի դիմաց և միջից թափանցում են փայլող արևի ճառագայթները. նրա բարակ ականջիկները նույնպես թափանցում էին՝ շրխկանալով նրանց ողողող ջերմ լույսով։ Դրա հետևվախը՝ բաց, կանգ առած շրթունքներում, աչքերում արցունքներ— այդ բոլորը այնքան սիրելի էր, որ մեր հերոսը նրան էր նայում մի քանի րոպե, ոչ մի ուշադրություն չդարձնելով ձիերի և կառապանների միջև կատարվող իսոնաշփոթությանը։ «Դե, ետ տուր, է՛, Նիժնիգորոդի՛ ագռավ»,— գոռում էր մյուս կառապանը։ Սելիֆանը ետ քաշեց սանձերը, մյուս կառապանը արեց նույնը, ձիերը մի քիչ ետ-ետ գնացին և հետո կրկին իրար կպան՝ ձգափոկերի վրայից անցնելով։ Այս պարագայում խայտավոր ձիուն այնքան դուր եկավ նոր ծանոթությունը, որ նա ո՛չ մի կերպ չէր ցանկանում դուրս գալ այն տեղից, որի մեջ ընկավ աննախատեսելի բախտով, և մոուրը դնելով իր նոր բարեկամի վզին, թվում էր, թե ինչոր մի բան էր փսփսում նրա հենց ականջի մոտ, հավանորեն սարսափելի մի դատարկ բան, որովհետև նոր եկած ձին անդադար թափահարում էր ականջները։

Այս իրարանցման ժամանակ վրա հասան սակայն մուժիկները գյուղից, որը, բարեբախտաբար, մոտերքումն էր։ Որովհետև նման մի տեսարան մուժիկի համար իսկական երջանկություն է, բոլորովին այնպես, ինչպես գերմանացու համար լրագիրը կամ ակումբը, ուստի և շուտով կառքի մոտ լցվեցին նրանք և գյուղում մնացին միայն պառավ կնիկները և փոքրիկ երեխաները։ Լծափոկերը քանդեցին. մի քանի հարվածներ խայտավորի մոուրին՝ ստիպեցին նրան ետ-ետ գնալ. մի խոսքով՝ նրանց ջոկեցին և իրարից հեռացրին։ Բայց արդյոք տհաճությունի՞ց էր, որ զգացին եկվոր ձիերը՝ այն պատճառով, որ իրենց բաժանեցին բարեկամներից, թե՞ պարզապես հիմարությունից, միայն, որքան էլ կառապանը մտրակում էր, նրանք չէին շարժվում և կանգնած էին տեղում. մեխվածի պես։ Մուժիկների մասնակցությունը մնծացավ անհավատալի աստիճանի։ Ամեն մեկը իրար առաջ կտրելով մեջ էր ընկնում իր խորհրդով. «Գնա՛, Անդրյուշկա, մի դուրս հանիր կողքի լծվածին, որ աջից է, իսկ Միտյայ քեռին՝ թող նստի միջնաձիուն։ Նստի՛ր, Միտյայ քեռի»։ Ջոր ու ցամաք, եր-

կարահասակ և շեկ մորուքով Միտյայ քեռին հնծավ միջնաձիուն և նմանվեց գյուղական զանգակատան կամ ավելի ճիշտ՝ ձողի, որով չրհորներից ջուր են հանում։ Կառապանը խփեց ձիերին, բայց հնար չկար, ո՛չ մի օգուտ չտվեց Միտյայ քեռին։ «Կա՛ց, կա՛ց»,— գոռացին մուժիկները։— «ապա մի, Միտյայ քեռի, նստիր կողքի ձիուն, իսկ միջնաձիուն թող նստի Մինյայ քեռին»։— Մինյայ քեռին, լայնաթիկունք մի մուժիկ, ածուխի նման սև մորուքով և մի փորով՝ նման այն հսկայական ինքնաեռին, որի մեջ թերմոն են եփում ամբողջ մթաած շուկայի համար՝ հաճույքով նստեց միջնաձիուն, որ քիչ մնաց ճկուեր նրա տակ մինչև գետին։— «Հիմա գործը գլուխ կգա»,— գոռացին մուժիկները։— «Դաղի՛ր, դաղի՛ր դրան. մի լավ շրմփացրո՛ւ, այ է՛ն, է՛ն բաց դեղնին, էն, որ ոտները չռել է թամբալ մոծակի պես»։— Բայց տեսնելով, որ բան չի դուրս գալիս, և ոչ մի դաղոց չօգնեց, Միտյայ քեռին և Մինյայ քեռին երկուսով նստեցին միջնաձիուն, իսկ կողքի ձիուն նստեցրին Անդրյուշկային։ Վերջապես կառապանը, համբերանքը հատած, վռնդեց Միտյայ քեռուն էլ, Մինյայ քեռուն էլ, և լավ արեց, որովհետև ձիերի վրայից այնպիսի մի գոլորշի բարձրացավ, կարծես նրանք մի շնչով մի կայարան էին կտրել։ Նա թողեց, որ դրանք մի րոպե հանգստանան, որից հետո նրանք իրենք իրենց գնացին։ Այս ամբողջ անցուդարձի ընթացքում Չիչիկովը շատ ուշադիր նայում էր մատաղահաս անծանոթուհուն։ Նա մի քանի անգամ ուզեց փորձ անել, խոսել նրա հետ, բայց մի տեսակ՝ չհաջողվեց այդ։ Իսկ մինչդեռ տիկինները գնացին՝ սիրունիկ գլուխը՝ դեմքի նուրբ գծերով և բարակ իրանով, աներևութացավ, կարծես տեսիլք լիներ, և կրկին մնացին՝ ճանապարհը, բրիկան, ընթերցողին ծանոթ եռյակ ձիերը, Սելիֆանը, Չիչիկովը, շրջակա դաշտերի հարթությունը և դատարկությունը։ Ամենուրեք, ո՛րտեղ ուզում է լինի կյանքում, նրա խստասիրտ, խորդուբորդ աղքատ և փնթի-բորբոսնող ստորին շարքերում կամ միօրինակ-սառը և ձանձրալի-կոկիկ բարձր դասերում, ամենուրեք գոնե մի անգամ ճանապարհին մարդու հանդիպում է մի երևույթ, ո՛չ նման այն ամենին, որ տեսել է մինչ այդ, որը գոնե մի անգամ զարթեցնում է մի զգացմունք, ո՛չ նման նրանց, որ վիճակվել է նրան զգալ ողջ կյանքում։ Ամե-

նուրբք, ի՛նչպիսի տխրություններ կուզե լինի, որոնցով հյուսվում է մեր կյանքը, խաչաձև կարում, ուրախ սլանում է փայլող բերկրանքը, ինչպես երբեմն փայլուն կառքը ոսկյա ձիասարքով, պատկերանման երիվարներով և ապակիների շողացող փայլով, հանկարծ անսպասելի կերպով արագ անցնում է մի որևէ խուլ, խղճուկ գյուղի մոտով, որը ոչինչ չի տեսել, բացի գյուղական սայլը, և երկար ժամանակ մուժիկները կանգնում են, բաց բերաններով հորանջում, գդակները չեն դնում գլխներին, թեև արդեն վաղուց հեռացել և աչքից կորել է զարմանալի կառքը։ Այդպես և խարտյաշ աղջիկը հանկարծ միանգամայն անսպասելի կերպով երևաց մեր վիպագրության մեջ և նույնպես անհայտացավ։ Ապա՛ թող այդ պահին Ջիչիկովի տեղը լիներ քսան տարեկան մի պատանի, ասենք՝ հուսար, ասենք՝ ուսանող կամ պարզապես կյանքի ասպարեզը նոր մտնող մեկը, և աստվա՜ծ իմ, արդյոք ի՞նչ չէր արթնանա, չէր շարժվի, չէր սկսի խոսել նրա մեջ։ Երկար ժամանակ անզգա, նա կմնար կանգնած մի տեղում՝ աչքերը անմտորեն սուզելով հեռուն, մոռանալով թե՛ ճանապարհը և թե՛ բոլոր հետո նրան սպասող կշտամբանքներն ու շշպռոցները ուշանալու համար, մոռանալով թե՛ իրեն, թե՛ ծառայությունը, թե՛ աշխարհը և թե՛ ինչ որ կա ու չկա աշխարհում։

Սակայն մեր հերոսն արդեն միջին տարիքի մարդ էր և շրջահայաց, նստած քնավորության տեր։ Նա ևս մտքերի մեջ ընկավ և մտածեց, բայց ավելի դրական, ո՛չ այդպես անհաշիվ և անգամ մասամբ շատ հիմնավոր էին նրա մտքերը։— «Լավի՛կն է»,— ասաց նա բաց անելով քթախոտի տուփը և հոտ քաշելով։— «Բայց ախր ի՞նչն է գլխավորապես նրա մեջ լավ։ Լավն այն է, որ նա հիմա նոր է, ինչպես երևում է, դուրս բերած որևէ պանսիոնից կամ ինստիտուտից, որ նրա մեջ, ինչպես ասում են, դեռ կնիկային ոչինչ չկա, այսինքն՝ հենց այն, որ նրանց մեջ ամենատհաճ բանն է։ Նա հիմա երեխայի նման է, ամեն ինչ նրա մեջ պարզ է, նա կասի այն, ինչ որ խելքին կփչի, կծիծաղի՝ երբ կուզենա ծիծաղել։ Նրանից ամեն ինչ կարելի է ստանալ, նա կարող է դառնալ հրաշալի էակ, բայց գուցե և անպետք բան, և դուրս կգա անպետք բան։ Այ, ապա թող միայն մայրիկներն ու մորաքույրերն սկսեն

նրա վրա աշխատել։ Մի տարում այնպես նրա մեջ կլցնեն ամեն տեսակ կենդավարի բաներ, որ հարազատ հայրն անգամ չի ճանաչի նրան։ Արտեղի՜ց էլ ձեռք կբերի գոռոզություն, ծեքծեքունություն, կսկսի շարժվել սերտած հրահանգների համաձայն, կսկսի ղլուխ կոտրել և հնարել, թե ո՜ւմ հետ և ի՜նչպես և որքա՜ն հարկավոր է խոսել, ո՜ւմ ինչպես պետք է նայել, ամեն րոպե պիտի վախենա, որ չասի ավելի, քան հարկավոր է, վերջապես, ինքն էլ կխճճվի և բանը կվերջանա նրանով, որ կսկսի ստել ողջ կյանքում և դուրս կգա սատանա՜ն գիտե թե ի՜նչ»։ Այստեղ նա միառժամանակ լռեց և ապա ավելացրեց.— «Բայց հետաքրքիր էր իմանալ՝ ո՜ւմ աղջիկն է, ի՜նչ է, ո՜վ է նրա հայրը, արդյոք հարուստ կալվածատեր է, պատվավոր վարքի տեր, թե՞ պարզապես մի բարեմիտ մարդ է կապիտալով՝ ծառայությունից ձեռք բերած։ Չէ՞ որ եթե, ասենք, այս աղջկան մի երկու հարյուր հազար օժիտ տաս, նրանից կարող է դուրս գալ շատ, շատ անուշիկ մի պատառ։ Դա կարող էր դառնալ, այսպես ասած, երջանկություն՝ կարգին մարդու համար»։— Երկու հարյուր հազարը այնքան հրապուրիչ կերպով սկսեց նրա գլխում պտտկերվել, որ մտքում սկսեց բարկանալ իր վրա, թե ինչո՞ւ այն քաշքշուկի ժամանակ՝ կառքերի մոտ ֆորեյտորից[1] կամ կառապանից չիմացավ, թե ովքե՜ր էին կառքով գնացողները։ Սակայն հենց իսկույն էլ Սոբակևիչի երևացող գյուղը ցրեց նրա մտքերը և ստիպեց նրան դառնալ իր մշտական նյութին։

Գյուղը նրան բավական մեծ թվաց. երկու անտառներ՝ կեչու և սոճու՝ ինչպես երկու թևեր, մեկը ավելի մթին, մյուսը ավելի բացգույն, ձգված էին նրա աջ ու ձախ կողմում. մեջտեղում երևում էր մի փայտաշեն տուն կիսաշերնահարկով, կարմիր կտուրով և մուգ մոխրագույն կամ ավելի ճիշտ՝ վայրի պատերով, մի տուն նման այն տներին, որ մեզանում շինում են զինվորական բնակություններ և գերմանական գաղութներ համար։ Նկատելի էր, որ այն կառուցելիս ճարտարապետը անընդհատ պայքարել է տանտիրոջ ճաշակի հետ։ Ճարտարապետը ձեռապաշտ է եղել և կամեցել է համաչափություն պահպանել, իսկ տանտերը՝ հարմարություններ ունենալ և, ինչպես երևում էր, դրա հետևանքով մի կողմում մե-

[1] Ֆորեյտոր — լծած ձիերից մեկի վրա նստող ձիապան։

խել էր տվել բոլոր համապատասխան պատուհանները և դրանց փոխարեն ծակել տվել մի փոքրիկը՝ հավանորեն մութ մառանի համար։ Տան ֆրոնտոնը[1] ևս ոչ մի կերպ մեջտեղը չէր ընկնում, որքան էլ որ ճարտարապետը գլուխ կոտրեց, որովհետև տանտերը հրամայեց մի սյունը կողքից դուրս գցել, և դրանից էլ ստացվեց ո՛չ թե չորս սյուն, ինչպես նշանակված էր, այլ միայն երեք։ Բակը շրջապատված էր պինդ և չափազանց հաստ փայտե ճաղերով։ Կալվածատերը, թվում էր, որ շատ է հոգացել դիմացկունության մասին։ Ախոռի, սարայների և խոհանոցի համար գործ էին ածված լրիվ ծանր և հաստ գերաններ, որ սահմանված էին դարերով կանգուն լինելու։ Մուժիկների գյուղական խրճիթներն էլ կտրած-շինած էին զարմանալի. չկային ողորկ տաշած պատեր, փորագրած նախշեր և այլ հորինվածքներ, բայց ամեն բան տեղն էր բերած պինդ և ինչպես հարկն էր։ Մինչև անգամ ջրհորը շինված էր այնպիսի ամուր կաղնի փայտից, որը գործ է ածվում միայն ջրաղացների, մեկ էլ՝ նավերի համար։ Մի խոսքով, ինչի վրա որ նայում էր, դիմացկուն էր, հիմնավոր, ինչ-որ պինդ և անճոռնի շինած դրած։ Մոտենալով դռան սանդուղքներին՝ Չիչիկովը նկատեց պատուհանից համարյա միաժամանակ դուրս նայող երկու դեմքեր. մեկը՝ կանացի, չեպչիկով, նեղ, երկար, ինչպես վարունգ և մյուսը՝ տղամարդու, լայն, ինչպես մոլդավյան դդումները, որ դդմաշներ են կոչվում, որոնցից Ռուսիայում բալալայկաներ են շինում, երկլարանի, թեթև բալալայկաներ՝ զարդն ու խնդությունը ճարպիկ քսան տարեկան տղայի, աչքը պլշողի և պճնամոլի, և աչքով անողի, և շվացնողի՝ սպիտակակուրծք և սպիտակավիզ աղջիկներին, որ հավաքված են լինում լսելու նրա մեղմալար տնկտնկոցը։ Դուրս նայելով երկու դեմքերն էլ նույն րոպեին թաքնվեցին։ Դռան սանդուղքը դուրս եկավ լակեյը՝ հագին կապույտ, կանգնած օձիքով մոխրագույն կուրտկա, և Չիչիկովին ներս տարավ հաշտը, ուր արդեն դուրս եկավ ինքը՝ տանտերը։ Տեսնելով հյուրին՝ նա կտրուկ ասաց.— «Խընդրե՛մ»,— և առաջնորդեց նրան բնակարանի ներսը։

Երբ Չիչիկովը կողքանց նայեց Սորակևիչին՝ նա նրան

[1] Ֆրոնտոն — տան ճակատի մի մասը, որ ծածկված է երկու թեք կտուրներով՝ կազմելով եռանկյունի։

այս անգամ շատ նման թվաց միջին մեծության մի արջի։ Նմանությունը լրացնելու համար նրա ֆրակը կատարյալ արջի գույն ուներ, թևքերը՝ երկար, անդրավարտիքը՝ երկար, թաթերը դնում էր ծուռումուռ և անընդհատ տրորում ուրիշի ոտքերը։ Օրեսի գույնը շիկացած էր, տաք, ինչպես լինում է պղնձե հինգ կոպեկանոցը։ Հայտնի է, որ աշխարհիս երեսին շատ կան այնպիսի մարդիկ, որոնց կերտվածքը մշակելու վրա բնությունը երկար ժամաստություն չի թափել, չի գործածել ոչ մի տեսակ նուրբ գործիք, ինչպես օրինակ՝ խարտոցներ, գայլիկոններ և ուրիշ բաներ, այլ պարզապես կտրել է մի հարվածի թափով, կացնով հասցրել է մի հատ, դուրս է եկել քիթ, հասցրել է մի հատ էլ, դուրս են եկել շրթունքներ, մեծ շաղափով քչփորել է աչքեր և առանց ողորկելու բաց է թողել լույս աշխարհ՝ ասելով. «կապրի՛»։ Հենց այդպիսի անասելի պինդ և ապշեցուցիչ կերպով կարած-կպցրած կերպարանք ուներ Սոբակևիչը. նա այդ կերպարանքը ավելի շատ հակված էր պահում, քան վերև ուղղում, վիզը բոլորովին չէր դարձնում այս ու այն կողմ և այդ չդարձնելու պատճառով հազվադեպ էր նայում այն մարդուն, որի հետ խոսում էր, այլ միշտ՝ կա՛մ վառարանի անկյունը, կա՛մ դռանը։ Ջիչիկովը մի անգամ ևս կողքանց նայեց նրան, երբ նրանք անցնում էին սեղանատնով. ա՛րջ, իսկական արջ։ Հենց պե՛տք էր այսպիսի մի տարօրինակ զուգադրություն. մինչև անգամ նրան Միխայիլ Սեմյոնովիչ էին կանչում։ Դիտենալով նրա սովորությունը՝ ուրիշների ոտը կոխել, Ջիչիկովը շատ զգուշորեն էր փոխում իր քայլերը և նրան ճանապարհ էր տալիս առաջ անցնելու։ Տանտերը, երևում է, որ ինքն էլ էր զգում իր այդ մեղքը և հենց իսկույն հարցրեց.— «Արդյոք ձեզ նեղություն չպատճառեցի՞»։— Բայց Ջիչիկովը հնարհակալություն հայտնեց, ասելով, որ դեռ ոչ մի նեղություն չի եղել։

Մտնելով հյուրասենյակը՝ Սոբակևիչը ցույց տվեց բազկաթոռը, հրկին ասելով.— «խնդրե՛մ»։— Նստելով՝ Ջիչիկովը նայեց պատերին և նրանցից կախված պատկերներին։ Պատկերների մեջ բոլորը կտրիճներ էին, բոլորը հունական զորավարներ, ողջ հասակով փորագրած. Մավրոկորդատոն՝ կարմիր շալվարով և մունդիրով, ակնոցը քթի վրա, Կոլոկոտրո-

նին, Միաուլին, Կանարին[1]։ Այդ բոլոր հերոսները այնպիսի հաստ ազդրեր ունեին և չլսված ընչացքներ, որ մարդու մարմինը դող էր ընկնում։ Պնդակազմ հուլների մեջ էր ընկել չես հասկանում ի՛նչ կերպով և ինչո՛ւ՝ Բագրատիոնը, նիհար, բարակ, փոքրիկ դրոշակներով և հրանոթներով՝ ներքեվում և ամենանեղ շրջանակի մեջ։ Հետո կրկին գալիս էր հունական հերոսուհի Բոբելինան[2], որի մի ոտը թվում էր թե ավելի մեծ էր այն բոլոր պճնամոլների իրանից, որոնք լըցնում են այժմյան հյուրասենյակները։ Տանտերը ինքը լինելով առողջ և պնդակազմ, թվում էր, թե կամենում էր, որ իր սենյակը զարդարեին նույնպես պնդակազմ և առողջ մարդիկ։ Բոբելինայի կողքին հենց պատուհանի մոտ կախված էր մի վանդակ, որի միջից նայում էր կեռնեխը՝ մուգ գույնի, սպիտակ պիսակներով, նույնպես Սոբակևիչին շատ նման։ Հյուրը և տանտերը դեռ չէին հասցրել լուռ մնալ երկու րոպե, որ հյուրասենյակի դուռը բացվեց, և ներս մտավ տանտիկինը, խիստ բարձրահասակ, գլխին չեպչիկ՝ տնական ներկերով ներկած ժապավեններով։ Նա ներս մտավ ծանրաքայլ, գլուխը բարձր բռնած, ինչպես արմավենի։

— Սա իմ Ֆեոդուլիա Իվանովնան է,— ասաց Սոբակևիչը։

Չիչիկովը մոտեցավ Ֆեոդուլիա Իվանովնայի ձեռքին, որ սա համարյա կոխեց նրա շրթունքները, ընդ որում Չիչիկովը առիթ ունեցավ նկատելու, որ ձեռքերը լվացված էին վարունգի աղաչրով։

— Հոգյակս, ներկայացնում եմ քեզ,— շարունակեց Սոբակևիչը,— Պավել Իվանովիչ Չիչիկով։ Նահանգապետի և փոստատան պետի մոտ պատիվ ունեցա ծանոթանալ։

Ֆեոդուլիա Իվանովնան խնդրեց նստել՝ նույնպես ասելով, «խնդրե՛մ» և գլխով շարժում անելով այն դերասանուհիների նման, որ թագուհիներ են ներկայացնում։ Ապա նա նստեց բազմոցի վրա, ծածկվեց իր մերինոսե թաշկինակով և արդեն այլևս շարժում չարեց ո՛չ աչքով, ո՛չ հոնքով։

---

[1] Երեքն էլ հույն քաջագործներ 19-րդ դարի 20-ական թվերին, թուրքերի դեմ մղած հույն ժողովրդի ազատագրական պատերազմի ժամանակ։

[2] Բոբելինա — հունական ազատագրական պատերազմի ժամանակ հայտնի գործիչ կին։

Ջիլիկովը կրկին բարձրացրեց աչքերը և կրկին տեսավ կանարիին՝ հատ ազդրերով և անվերջանալի ընչացքներով, Բոբելինային և կեռնեխին՝ վանդակի մեջ։

Գրեթե ամբողջ մի հինգ րոպե նրանք բոլորը լռություն պահպանեցին. լսվում էր միայն տկտկոցը, որ առաջ էր գալիս, երբ կեռնեխը կտուցով խփում էր փայտե վանդակի փայտին, որի հատակին նա որսում էր հատիկներ։ Ջիլիկովը մի անգամ ևս աչք ածեց սենյակը և այնտեղ ինչ-որ կար, ամեն ինչ դիմացկուն էր, անճոռնի՝ վերին աստիճանի և ուներ մի ինչ-որ տարօրինակ նմանություն հենց իր՝ տանտիրոջ հետ. անկյունում դրած էր ընկուզի փայտից մի հաստատուն գրասեղան՝ չորս ամենաանհեթեթ ոտքերով, իսկական արջ։ Սեղանը, բազկաթոռները, աթոռները, բոլորը ամենածանր և ամենաանհանգիստ հատկության էին, մի խոսքով՝ յուրաքանչյուր առարկա, յուրաքանչյուր աթոռ, թվում է, ասում էր. ես էլ Սոբակևիչ եմ. կամ՝ ես էլ եմ շատ նման Սոբակևիչին։

— Մենք ձեզ հիշեցինք դատական ատյանի նախագահ Իվան Գրիգորևիչի մոտ,— ասաց վերջապես Ջիլիկովը, տեսնելով, որ ո՛չ ոք չի տրամադրվում սկսել խոսակցությունը,— անցյալ հինգշաբթի։ Շատ հաճելի անցկացրինք այնտեղ ժամանակը։

— Այո, ես չեղա այն ժամանակ նախագահի մոտ,— պատասխանեց Սոբակևիչը։

— Հիանալի էլ մարդ է։

— Այդ ո՞վ.— ասաց Սոբակևիչը՝ նայելով վառարանի անկյանը։

— Նախագահը։

— Դե կարող է այդտահել՝ դա ձեզ այդպես է թվացել. նա այն է միայն, որ մասոն է[1], բայց այնպիսի տխմարն է, որպիսին աշխարհում դեռ չի եղել։

Ջիլիկովը մի փոքր մտահոգվեց այդպիսի՝ մասամբ խիստ ձևակերպումից, բայց հետո, ինքն իրեն շտկելով, շարունակեց,— անշուշտ ամեն մարդ առանց թուլություննների չէ, բայց դրա փոխարեն նահանգապետը ի՞նչ ընտիր մարդ է։

---

[1] Մասոն — անգամ կրոնական-միստիկական ընկերության՝ Եվրոպայում և այլուր։

— Նահանգապետը ընտիր մա՞րդ է։

— Այո, մի՞թե ճշմարիտ չէ։

— Առաջին ավազակն է աշխարհիս երեսին։

— Ինչպե՞ս թե նահանգապետը ավազակ է,— ասաց Ջիչիկովը, և կատարելապես չէր կարողանում հասկանալ, թե ի՛նչ կերպ նահանգապետը կարող էր ավազակների շարքն ընկնել։— Խոստովանում եմ, ես այդ բնավ չէի կարող մտածել,— շարունակեց նա։— Թույլ տվեք սակայն նկատել. նրա վարմունքները բոլորովին այնպես չեն. ընդհակառակը, ավելի շուտ մինչև անգամ նրա մեջ անչափ մեղմություն կա։— Այստեղ նա իբրև ապացույց բերեց նույնիսկ այն դրամաքսակները, որ նա սեփական ձեռքերով է ասեղնագործել, և գովասանքով խոսեց նրա դեմքի շոյիչ արտահայտության մասին։

— Դեմքն էլ ավազակային է,— ասաց Սոբակևիչը։— Դանակ տվեք նրան միայն և բաց թողեք մեծ ճանապարհի վրա, կմորթի՛, կոպեկի համար կմորթի։ Նա և հետո պոլիցմեյստերը—դրանք Գոգ ու Մագոգ[1] են։

««Ո՛չ, սա նրանց հետ չունի»,— մտածեց ինքնիրեն Ջիչիկովը։— «Արի՛ մի սրա հետ խոսեմ ոստիկանապետի մասին. թվում է, թե նա սրա բարեկամն է»։— Ասենք՝ իմ ի՞նչ գործն է որ,— ասաց նա,— ինձ, խոստովանենք լինի, ամենից շատ դուր է գալիս ոստիկանապետը։ Ինչ-որ մի տեսակ շիտակ, բացսիրտ բնավորություն է. դեմքին մի ինչ-որ պարզասրտություն կա»։

— Սրիկա է,— ասաց Սոբակևիչը շատ սառնասրտորեն,— կդավաճանի, կխաբի, ու դեռ հետևերդ էլ կճաշի։ Ես դրանց բոլորին ճանաչում եմ. այդ բոլորը սրիկաներ են, ամբողջ քաղաքը այնտեղ այդպես է. սրիկան նստել է սրիկայի վրա և քշում է սրիկային։ Բոլորը քրիստոսավաճառներ են։ Մեկն է միայն կարգին մարդ այնտեղ. դատախա՛զը. բայց նա էլ, եթե ճիշտն ասենք՝ խոզ է։

---

[1] Գոգ և Մագոգ—բիբլիական անուններ իշխանի և ժողովրդի, որ Եզեկիելի մարգարեության համաձայն հյուսիսից պիտի գան և վերջ տան Իսրայելին։

Այսպիսի զովասանական, թնպետև մի փոքր կարճառոտ կենսագրականներից հետո Ջիչիկովը տեսավ, որ ուրիշ պաշտոնյաների մասին հիշեցնելու կարիք չկա էլ, և մտաբերեց, որ Սոբակևիչը չի սիրում ո՛չ ոքի մասին լավ արտահայտվել։

— Է՛, հոգյակս, գնանք ճաշենք,— ասաց Սոբակևիչին նրա տիկինը։

— Խնդրեմ,— ասաց Սոբակևիչը։ Դրանից հետո, մոտենալով սեղանին, ուր ուտելեղենն էր, հյուրը և տանտերը խմեցին, ինչպես պետք էր, մի-մի ըմպանակ օղի, ճաշակեցին, ինչպես ճաշակում է ամբողջ լայնատարած Ռուսաստանը քաղաքներում և գյուղերում, այսինքն՝ ամենատեսակ աղաբունվածքներ և այլ գրգռիչ բարիքներ, և բոլորը հոսեցին սեղանատուն. նրանց առջևից, ինչպես սագը ջրում, լողացնաց տանտիրուհին։ Փոքր սեղանը բացված էր չորս սպասքի համար։ Չորրորդ տեղը գրավելու եկավ շատ շուտով, դրժվար է հաստատապես ասել թե՛ ով՝ մի տիկին թե օրիորդ, ազգականուհի, տնտեսուհի կամ պարզապես տանը ապրող մեկը, ինչ-որ առանց չեպչիկի, մոտ երեսուն տարեկան, խայտաճամուկ հագուստով։ Կան անձնավորություններ, որոնք աշխարհիս երեսին գոյություն ունեն ո՛չ որպես առարկա, այլ որպես կողմնակի պիտակներ կամ բծեր առարկայի վրա։ Նրանք նստում են նույն տեղը, միատեսակ բռնում են գլուխները, նրանց համարյա պատրաստ ես ընդունել կահույքի տեղ և կարծում ես, որ ծնված օրից մի խոսք էլ՛չի դուրս եկել նրանց շրթունքներից. իսկ մի որևէ աղախնոցում կամ մառանում մի այնպիսին է դուրս գալիս որ՝ պա՜հ-պա՜հ։

— Շչին, հոգյակս, այսօր շատ լավն է,— ասաց Սոբակևիչը, խաշտեղով շչին և սկուտեղից իր ափսեն գցեց մի ահագին կտոր նյանյուգից, հայտնի ուտելիքից, որ մատուցվում է շչիի հետ և բաղկացած է լինում ոչխարի ստամոքսից՝ մեջը արինջի շիլա, ուղեղ և տոտիկներ։— Այսպիսի նյանյա,— շարունակեց նա, դառնալով Ջիչիկովին,— դուք չեք՝ ուտի քաղաքում, այնտեղ չեզ սատանան գիտե, թե ի՛նչ կմատուցեն։

— Նահանգապետի մոտ ճաշը վատ չէ,— ասաց Ջիչիկովը։

— Բայց գիտե՞ք այդ բոլորը ինչի՛ց է լինում պատրաստված. դուք այլևս չեք ուտի, երբ կիմանաք։

— Չգիտեմ թե ինչպե՞ս է պատրաստվում, դրա մասին չեմ կարող դատել, բայց խոզի կոտլետները և խաշած ձուկը գերազանց էին։

— Դա ձեզ այդպես է թվացել։ Չէ՞ որ ես գիտեմ, թե նրանք շուկայում ի՛նչ են գնում։ Կգնի այդ սրիկա խոհարարը, ինչպես որ սովորել է ֆրանսիացուց, մի կատու, կքերթի և սեղանին կմատուցի նապաստակի փոխարեն։

— Ֆո՛ւ, ինչ տհաճ բաներ ես խոսում.— ասաց Սոբակևիչի տիկինը։

— Ապա ի՞նչ, հոգիս, այդպես է նրանց մոտ արվում, ես մեղավոր չեմ, այդպես է նրանց բոլորի մոտ արվում։ Որքան անպետք բան կա, որ Ակուլկան մեզ մոտ թափում է, թույլ տվեք ասել, կեղտաջրի ամանը, նրանք հենց ուղի՛ղ սուպի մեջ, այո՛, սուպի մեջ. հենց այնտե՛ղ։

— Դու հացի սեղանի վրա միշտ այսպիսի բաներ ես պատմում,— հակաճառեց կրկին Սոբակևիչի տիկինը։

— Ի՞նչ կա որ, հոգիս,— ասաց Սոբակևիչը,— եթե այդ ես ինքս անեի, բայց ես այդ քեզ ուղիղ երեսիդ եմ ասում, որ զզվանք բաներ ես չեմ ուտի։ Ինձ համար գորտը թեկուզ շաքարով ծեփիր, բերանս չեմ առնի, ոստրեն էլ չեմ առնի. ես գիտեմ, թե ոստրեն ինչի՛ համար է։ Ոչխարի միս վերցրեք,— շարունակեց նա, դառնալով Չիչիկովին,— դա ոչխարի կող է կաշայով։ Դա այն ֆրիկասեները[1] չեն, որ շինում են մեծատուների խոհանոցներում այն ոչխարի մսերից, որ չորս օր վեր են ընկած լինում շուկաներում։ Այդ բոլորը հնարել են գերմանացի ու մեկ էլ ֆրանսիացի բժիշկները, ես նրանց այդ պատճառով բոլորին կկախեի։ Բա՛ն են գտել— դիետա, բժշկում են քաղցո՛վ։ Ինչ է թե՝ իրենք գերմանական ջրիկ բնույթ ունեն, կարծում են, թե ռուսական ստամոքսն էլ կգոհացնեն։ Ո՛չ, այդ բոլորը այն չէ՛, այդ բոլորը հնարովի բաներ են, այդ բոլորը...— Այստեղ Սոբակևիչը մինչև անգամ գլուխը բարկացած շարժեց։— Ասում են՝ լուսավորություն, լուսավորություն, իսկ այդ լուսավորությունը— փո՛ւհ։ Կասեի մի ուրիշ խոսք էլ, արի տես, որ սեղանի վրա վայելուչ չէ։ Ինձ մոտ այդպես չէ։ Ինձ մոտ, երբ խոզի միս է, բե՛ր ողջ խոզը դիր սեղանի վրա. ոչխարի մես

[1] Ֆրիկասե — մսի, որսի մսի մանր կտորներ սոուսով։

է, քա՛շ տուր ամբողջ ոչխարը, սագ է, ամբողջ սագը։ Ավելի լավ է՝ ես կուտեմ երկու տեսակ կերակուր, բայց կուտեմ այնքան, որքան սիրտս կուզի։— Սոբակևիչը այդ հաստատեց գործով. նա շուռ տվեց ոչխարի կողի կեսը իր ափսեի վրա, կեսրավ բոլորը, կրծեց, ծծեց մինչև վերջին ոսկորը։

«Այո,— մտածեց Չիչիկովը,— սա իր բերանի համը գիտե»։

— Ինձ մոտ այնպես չէ,— ասաց Սոբակևիչը՝ անձեռոցիկով սրբելով ձեռքերը.— ինձ մոտ այնպես չէ, ինչպես մի որևէ Պլյուշկինի մոտ. 800 հոգի ունի, բայց ապրում է, ճաշում է իմ հովվից էլ վատ։

— Ո՞վ է այդ Պլյուշկինը,— հարցրեց Չիչիկովը։

— Սրիկա,— պատասխանեց Սոբակևիչը,— այնպիսի կրծծի մարդ է, որ չի կարելի։ Բանտում կալանավորները ավելի լավ են ապրում, քան թե նա. իր բոլոր մարդկանց կոտորեց սովից։

— Ճշմարի՞տ,— վրա բնկավ Չիչիկովը կարեկցաբար,— և դուք ասում եք, որ նրա մոտ մարդիկ, իրոք, մեռնում են մեծ քանակությա՞մբ։

— Ճանճերի պես կոտորվում են։

— Մի՞թե ճանճերի պես։ Եվ թույլ տվեք հարցնել, որքա՞ն հեռու է նա ապրում ձեզանից։

— Հինգ վերստի վրա։

— Հինգ վերստի վրա՞,— բացականչեց Չիչիկովը և անգամ զգաց սրտի մի փոքրիկ խփոց։— Բայց եթե ձեր դարպասից դուրս գանք՝ դա ա՞յ կողմը կընկնի թե՞ ձախ։

— Ես ձեզ անգամ խորհուրդ չեմ տա այդ շան կողմը տանող ճանապարհը իմանալ,— ասաց Սոբակևիչը,— ավելի ներելի է գնալ մի որևէ անպատշաճ տեղ, քան նրա մոտ։

— Ո՛չ, ես հարցրի ո՛չ որևէ նպատակով, այլ միայն նրա համար, որ պարզապես հետաքրքրվում եմ, ամեն տեսակ տեղերի մասին էլ ուզում եմ իմանալ,— պատասխանեց Չիչիկովը։

Ոչխարի կողին հետևեց պանրակարկանդակը, նրանցից ամեն մեկը ավելի մեծ, քան ափսեն, հետո հնդկահավը հորթի հասակով, մեջը թխած ամեն տեսակ բարիք. ձու, բրինձ, լյարդ և չես իմանա էլ ի՛նչ, և բոլորը մի գունդ արած՝ լցրած

էր ստամոքսի մեջ։ Դրանով էլ ճաշը վերջացավ. բայց երբ վեր կացան սեղանից, Ջիչիկովը մի փութ ավելի ծանրություն ղգաց։ Ննջային հյուրասենյակը, ուր արդեն հայտնվեց պնակների մեջ քաղցրավենիք՝ ո՛չ տանձի, ո՛չ սալորի, ո՛չ այլ հատապտղի, սակայն, ձեռ չտվին ո՛չ հյուրը, ո՛չ տանտերը։ Տանտիրուհին դուրս գնաց, նրա համար, որ դնի այն նաև ուրիշ պնակների վրա։ Օգտվելով նրա բացակայությունից՝ Ջիչիկովը դիմեց Սոբակևիչին, որը սլաքած լինելով բազկաթոռին՝ միայն տնքտնքում էր այդպիսի կուշտ ճաշից հետո և բերանով բաց էր թողնում ինչ-որ անորոշ ձայներ, խաչակնքելով և ձնռքով փակելով այն ամեն րոպե։ Ջիչիկովը դիմեց նրան այսպիսի խոսքերով.

— Ես կկամենայի ձեզ հետ խոսել մի փոքրիկ գործի մասին։

— Ահա էլի քաղցրավենիք,— ասաց տանտիրուհին պնակը ձեռքին վերադառնալով,— բողկ՝ մեղրով եփած։

— Մենք դա հետո,— ասաց Սոբակևիչը։— Դու գնա հիմա քո սենյակը, մենք Պավել Իվանովիչի հետ ֆրակներս կնեհենք, մի փոքր կհանգստանանք։

Տանտիրուհին արդեն պատրաստակամություն էր հայտնում ուղարկել փետրե անկողիններ ու բարձեր բերելու, սակայն տանտերն ասաց.— ոչինչ, մենք կհանգստանանք բազկաթոռների վրա,— և տանտիրուհին դուրս գնաց։

Սոբակևիչը թեթևակի հակեց գլուխը՝ պատրաստվելով լսել, թե ինչո՛ւմն էր գործը։

Ջիչիկովն սկսեց ինչ-որ շատ հեռավոր կերպով, շոշափեց ընդհանրապես ամբողջ ռուսական պետությունը, և արտահայտվեց մեծ գովասանքով՝ նրա տարածության մասին, ասաց, որ ամեն մի հին հռոմեական միապետություն իսկ այնքան մեծ չի եղել, և օտարերկրացիները արդարացիորեն զարմանում են...— Սոբակևիչը բոլոր ժամանակ լսում էր գլուխը հակած։— Եվ որ այդ պետության գոյություն ունեցող օրինակարգերով, որի փառքին հավասարը չկա, վերստուգական հոգիները, ավարտելով կյանքի ասպարեզը, մինչև նոր վերստուգական ցուցմունքը, սակայն, հաշվվում են կենդանի մնացածների հետ հավասար, որ այդպիսով չծանրաբեռնեն պաշտոնատները բազմաթիվ մանր և անօգուտ տեղեկանքներով

և չմեծացնեն առանց այդ էլ պետության չափազանց բարդ մեխանիզմի բարդությունը...— Սոբակևիչը բոլոր ժամանակ լսում էր գլուխը հակած,— և որ, սակայն, այդ միջոցառումի ամբողջ արդարացիությամբ հանդերձ, այն ծանր է շատ սեփականատերերի համար, հարկադրելով նրանց մուծել հարկեր, որպես թե կենդանի առարկայի համար, և որ ինքը անձնական հարգանք տածելով դեպի նա՝ պատրաստ է մինչև անգամ մասամբ իր վրա վերցնել այդ, իրոք որ, ծանր պարտականությունը։ Գլխավոր հարցի մասին Չիչիկովը արտահայտվեց շատ զգուշորեն. ամենևին հոգիները չանվանեց մեռած, այլ միայն՝ գոյություն չունեցող։

Սոբակևիչը լսում էր առաջվա նման շարունակ գլուխը հակած, և գոնե որևէ արտահայտության նման մի բան երեվար նրա դեմքին։ Թվում էր, թե այդ մարմնի մեջ բոլորովին հոգի չկար կամ դա կար նրա մեջ, բայց բոլորովին ո՛չ այնտեղ, ուր հարկն էր, այլ ինչպես մի անմահ Կաշչեյի[1] մոտ՝ ինչ-որ մի տեղ սարերից այն կողմ և ծածկված է մի այնպիսի հաստ կճեպով, որ ամեն բան, ինչ որ նրա հատակում շուռումուռ էր գալիս՝ կատարելապես ո՛չ մի ցնցում չէր առաջացնում մակերեսում։

— Այսպես, ուրե՞մն...— ասաց Չիչիկովը, սպասելով պատասխանի՝ ո՛չ առանց որոշ հուզմունքի։

— Ձեզ հարկավոր են մեռած հոգինե՞ր,— հարցրեց Սոբակևիչը շատ հասարակ կերպով, առանց ամենափոքր զարմանքի, կարծես խոսքը հացի մասին էր։

— Այո,— պատասխանեց Չիչիկովը և կրկին մեղմացրեց արտահայտությունը, ավելացնելով,— «գոյություն չունեցող»։

— Կգտնվեն, ինչո՞ւ չէ...— ասաց Սոբակևիչը։

— Եթե կգտնվեն, ապա ձեզ, անկասկած... հաճելի կլինի ազատվել նրանցից։

— Համեցե՛ք, ես պատրաստ եմ ծախել,— ասաց Սոբակևիչը, արդեն մի փոքր տեղում ուղղվելով և գլխի ընկնելով, որ գնորդը այստեղ պետք է որ մի որևէ օգուտ ունենար։

— Սատանա՛ն տանի,— մտածեց Չիչիկովը ինքնիրեն,— սա արդեն ծախում է ավելի շուտ, քան ես խոսք բաց արի,— և ասաց լսելի կերպով,— իսկ, օրինակ, գի՞նը քանիս է, թեև,

[1] Կաշչեյ — առասպելական էակ։

ի միջի այլոց, դա այնպիսի մի առարկա է... որ գնի մասին մինչև անգամ տարօրինակ է...

— Դե որպեսզի ձեզանից ավելին չվերցնենք՝ հատը հարյուրական ռուբլի,— ասաց Սոբակևիչը։

— Հարյուրակա՞ն,— ճչաց Չիչիկովը, թերանը բանալով և նայելով նրան՝ ուղիղ աչքերի մեջ, չիմանալով՝ արդյոք ի՞նքը լավ չլսեց, թե՞ Սոբակևիչի լեզուն նրա ծանր բնույթի պատճառով այնպես չդառնալով, ինչպես հարկն է, թոցրեց մի խոսքի փոխարեն մի ուրիշ խոսք։

— Ի՞նչ կա, մի՞թե դա ձեզ համար թանկ է,— ասաց Սոբակևիչը և հետո ավելացրեց,— բայց ձեր գի՞նը որքան է ապա։

— Իմ գի՞նը։ Մենք, հիշտ որ, մի տեսակ սխալվեցինք կամ չենք հասկանում մեկմեկու, մոռացանք, թե բանն ինչումն է։ Ես իմ կողմից ենթադրում եմ, ձեռս դնելով սրտիս. հոգին ութական գրիվնա[1], դա ամենալավ գինն է։

— Է՛, ո՛ւր գնացիք... ութական գրիվնա։

— Ի՞նչ կա, իմ դատողությամբ, ինչպես կարծում եմ, ավելին չի կարելի։

— Չէ՞ որ իմ ծախածները տրեխներ չեն։

— Սակայն ինքներդ էլ համաձայնեցիք, չէ՞ որ դրանք նաև մարդիկ չեն։

— Այդպես դուք կարծում եք, թե կգտնեք այնպիսի մի հիմարի, որը ծախի վերստուգչական հոգին՝ մի քսան կոպեկով։

— Սակայն, թույլ տվեք, ինչո՞ւ եք դուք նրանց անվանում վերստուգչական, չէ՞ որ հոգիներն իրենք արդեն վաղուց մեռել են, մնացել է միայն զգայարանների համար անշոշափելի հնչյունը։ Սակայն, որպեսզի չմտնենք հետագա ավելորդ խոսակցության մեջ, մեկուկես ռուբլի, համեցեք, կտամ. ավելին՝ չեմ կարող։

— Ձեզ համար մինչև իսկ ամոթ է այդպիսի գումար առաջարկելը, սակարկեցեք, ասացեք իսկական գինը։

— Չեմ կարող, Միխայիլ Սեմյոնովիչ, հավատացեք իմ խղճին, չեմ կարող. ինչ որ արդեն հնարավոր չէ անել, ուրե-

---

[1] Գրիվնա — 20 կ.։

մրն հնարավոր չէ,— ասում էր Ջիչիկովը, բայց, այնուամե-նայնիվ, մի հիսուն կոպեկ էլ ավելացրեց։

— Ախր ինչո՞ւ եք ժլատություն անում,— ասաց Սոբա-կևիչը,— ճիշտ եմ ասում, քանկ չէ։ Ուրիշ մի սրիկա ձեզ կխաբի, կծախի ձեզ անպետք մի բան, և ոչ թե հոգիներ։ Իսկ իմս պինդ ընկույզի պես բոլորը ընտրովի է. արհեստա-վոր էլ չէ, այլ համենայն դեպս՝ ուրիշ մի որևէ առողջ մու-ժիկ։ Դուք ապա մի նայեցեք. ահա, օրինակ, կառագործ Մի-խեևը. չէ՞ որ ոչ մի այլ տեսակ կառք չէր շինում, բացի միայն ռեսորավորից։ Եվ ոչ էլ այնպես, ինչպես լինում է Մոսկվայում շինածը, որ մի ժամվա համար է, դիմացկունությո՞ւն մի այն-պիսի. ինքը և՛ երեսը կքաշի, և՛ լաքով կծածկի։

Ջիչիկովը բերանը բացեց նկատելու՝ որ այդ Միխեևը վա-ղուց աշխարհում գոյություն չունի. սակայն Սոբակևիչը, ինչ-պես ասում են, հափշտակվեց իր խոսքով, որտեղից առաջա-ցավ խոսքի շնորհք ու սլացք։

— Ապա Ստեպան Պրոբկան, հյո՞ւսնը, ես գլուխս գրավ կդնեմ, եթե դուք մի տեղ այդպիսի մուժիկ գտնեք։ Այ թե ուժի տեր էր, հա՛։ Ապա թող ծառայեր նա գվարդիայում, աստ-ված գիտե, թե նրան ինչ կտային. երեք արշին մի վերշոկ էր հասակը։

Ջիչիկովը կրկին ուզում էր նկատել, որ Պրոբկան էլ չկա աշխարհում, բայց Սոբակևիչը, ինչպես երևում էր՝ տարվել էր. խոսքի այնպիսի հեղեղ էր հոսում, որ պետք էր միայն լսել։

— Աղյուսագործ Միլուշկինը. ինչպիսի տան ասես, վա-ռարան կարող էր սարքել։ Մաքսիմ Տելյատնիկովը, կոշկա-կարը, ինչ բան որ բզով մի հատ ծակեր՝ դուրս էր գալիս սապոգ, մի սապոգ որ, կասես շնորհակալ եմ, և թեկուզ բերա-նը մի անգամ խմիչք առներ։ Ապա Երեմեյ Սորոկոպլյուխինը. մուժիկ էր է, մի հոգի, բայց բոլորին կծալեր. Մոսկվայում առևտուր էր անում, միայն հողաուտրքը հինգ հարյուր ռուբլի էր բերում։ Այ թե ինչպիսի ժողովուրդ էր։ Դա այն չի, ինչ որ ձեզ կծախի մի ոմն Պլյուշկին։

— Բայց թույլ տվեք,— ասաց վերջապես Ջիչիկովը, զար-մացած խոսքի այնպիսի առատ հեղեղումից, որին, թվում էր, թե վերջ չկար,— ինչո՞ւ համար եք դուք թվում դրանց բոլոր

հասկութիւնները, չէ՞ որ դրանց մեջ հիմա ոչ մի իմաստ չկա, չէ՞ որ այդ բոլորը մնռած մարդիկ են։ Մեռած մարմնով կուզես ցանկապատ սարքի, ասում է տատածը։

— Դե իհարկե մեռած են,— ասաց Սոբակևիչը մի տեսակ ուշադրութիւնով և հիշելով, որ նրանք իրոք որ արդեն մեռած են, ապա ավելացրեց,— ասենք՝ այն էլ կա, ի՞նչ մարդիկ են նրանք, որ հիմա ապրողի տեղ են հաշվվում։ Դրանք ի՞նչ մարդիկ են, ճանճե՞ր են և ոչ թե մարդիկ։

— Դե ինչ որ է՝ սրանք գոյութիւն ունեն, իսկ դա՝ չէ՞ որ ցնորք է։

— Է՛, ոչ, ցնորք չէ։ Ես ձեզ կասեմ, թե ինչպես էր Միխեևը, և դուք այդպիսի մարդիկ չեք գտնի. մի աժդահա էր, որ այս սենյակը չէր մտնի. ո՛չ, դա ցնորք չէ։ Վիթխարի ուսերի մեջ այնպիսի ուժ ուներ, որ ձին էլ չունի. կուզեի իմանալ, թե ուրիշ ի՞նչ տեղ դուք կգտնեիք այդպիսի ցնորք։— Վերջին խոսքերը նա արդեն ասաց դիմելով պատին կախած Բագրատիոնին և Կոլոկոտրոնիին[1], ինչպես սովորաբար պատահում է խոսակիցների հետ, երբ նրանցից մեկը հանկարծ, հայտնի չէ ինչո՛ւ, դիմում է ո՛չ այն անձին, որին վերաբերում են խոսքերը, այլ մի որևէ անակնկալորեն եկած երրորդին, մինչև անգամ բոլորովին անծանոթին, որից նա գիտե, որ չի՛սի ո՛չ պատասխան, ո՛չ կարծիք, ո՛չ խոսքի հաստատում, բայց որի վրա, այնուամենայնիվ, այնպես է սևեռում հայացքը, կարծես նրան կանչում է միջնորդության. և առաջին րոպեին մի փոքր շփոթված անծանոթը չգիտե՝ պատասխանե՞լ արդյոք նրան այդ գործի մասին, որի վերաբերյալ ոչինչ չի լսել, թե՞ այնպես կանգնի, պահպանելով հարկավոր ուշադրաձավարություն և հետո արդեն հեռանա գնա։

— Ո՛չ,երկու ռուբլուց ավելի չեմ կարող տալ,— ասաց Ջիչիկովը։

— Համեցե՛ք, որ պահանջ չունենաք ինձանից, իբր թանկ եմ վերցնում և չեմ էլ ուզում ձեզ ո՛չ մի շնորհ անել, համեցե՛ք, յոթանասունհինգ ռուբլի՝ հոգին, միայն ասիգնացիաներով, ճշմարիտ՝ միայն ծանոթության համար։

---

1 Կոլոկոտրոնի —Հունաստանի անկախության համար XIX դարի 20-ական թվերին Թուրքիայի դեմ մղվող պայքարի մասնակիցներից մեկը։

«Սա ի՞նչ բանի է,— ասաց ինքնիրեն Ջիչիկովը,— հիմա-
թի տե՞ղ է դնում ինձ, ի՛նչ է»,— և ապա բարձրացնելով
ավելացրեց,— զարմանում եմ, ճշմարիտ. թվում է, թե մեջ-
ներս ինչ-որ թատերական ներկայացում է տեղի ունենում կամ
կոմեդիա, այլապես ես չեմ կարող բացատրել ինձ... Դուք,
թվում է, բավական խելացի մարդ եք, տիրապետում եք զար-
գացողության գիտելիքներին։ Ախր բանը շատ հասարակ բան
է. ֆի-ֆի։ Ի՞նչ արժե նա, ո՞ւմ է պետք։

— Այ, դուք գնում եք, կնշանակի՝ պետք է։

Այստեղ Ջիչիկովը շրթունքը կծեց և բան չգտավ պատաս-
խանելու։ Նա հենց այն է, սկսեց խոսել ինչ-որ գերդաստա-
նային և ընտանեկան հանգամանքների մասին, բայց Սոբա-
կևիչը հասարակ կերպով պատասխանեց.

— Ինձ համար կարևոր չէ գիտենալ, թե ինչպիսի՛ հարա-
բերություններ ունեք. գերդաստանային գործերի մեջ չեմ
խառնվում, դա ձեր գործն է։ Ձեզ պետք են եկել հոգիներ, ես
էլ ծախում եմ ձեզ, և կզղջաք, որ չգնեցիք։

— Երկու ռուբլի,— ասաց Ջիչիկովը։

— է, ճշմարիտ որ, ծիտը յոթ հեքիաթ գիտեր, յոթն էլ
կորեկի մասին, ինչպես ասում է առածը. բռնել եք երկուսի
պոչից ու պոկ չեք գալիս։ Դուք մի իսկական գի՛ն տվեք։

«է, հերն անիծած»,— ասաց ինքնիրեն Ջիչիկովը,— «հի-
սունական կոպեկ կավելացնեմ, շան բերանը»,— համեցե՛ք,
հիսուն կոպեկ կավելացնեմ։

— Դե համեցեք. ես էլ ձեզ կասեմ վերջին խոսքս.— հի-
սուն ռուբլի. ճշմարի՛տ, վնաս է ինձ, ավելի էժան ուրիշ տեղ
չեք գնի՝ այդպիսի լավ ժողովուրդ։

«Ի՞նչ բռունցքն է»,— ասաց ինքնիրեն Ջիչիկովը և ապա
շարունակեց բարձրաձայն, մի փոքր բարկացած։— Դա ի՞նչ
բան է, իսկապես որ, կարծես հենց լուրջ գործ է. չէ՞ որ
ես մի ուրիշ տեղ ոչնչով կառնեմ։ Ամեն մարդ սիրով կծախի
դրանք, միայն թե շուտով ազատվի։ Հիմա՛րը թերևս մուռը
կպահի և դրանց համար հարկեր կվճարի։

— Բայց արդյոք գիտե՞ք, որ այսպիսի գնումները, ես այդ
ասում եմ մեր մեջ, բարեկամաբար, ո՛չ միշտ են թույլատրե-
լի, և բավական է պատմեմ ես կամ մեկ ուրիշը, այդպիսի
մարդու վերաբերյալ չի լինի ո՛չ մի վստահություն պայմանա-

գրերի վերաբերյալ կամ որևէ շահավետ պարտականություն վերցնելիս։

«Տես ո՛ւր է խփում սրիկան»,— մտածեց Չիչիկովը և հենց այստեղ ասաց ամենասառնարյուն հրևույթով.— ինչպես ուզում եք. ես գնում եմ ո՛չ թե մի որևէ հարկավորության համար, ինչպես դուք կարծում եք, այլ այնպես, սեփական մտքերի հակումներից դրդված։ Ծրկուս և հիւուն չենք ուզում, մնա՛ք բարով։

«Սրան չես կոտրի, տեղի տվող չի»,— մտածեց Սոբակևիչը,— է՛, աստված ձեզ հետ, տվեք երեսունական և վերցրեք դրանց։

— Ոչ, ես տեսնում եմ, որ չեք ուզում ծախել, մնաք բարով։

— Թույլ տվեք, թույլ տվեք,— ասաց Սոբակևիչը նրա ձեռքից բռնելով և դեպի հյուրասենյակ առաջնորդելով։ Ի՞նչ հարկ կա անհանգստանալու, ես ամեն ինչ ասացի։

— Թույլ տվեք, թույլ տվեք,— կրկնեց Սոբակևիչը, բաց չթողնելով նրա ձեռքերը և կոխելով նրա ոտքը, որովհետև մեր հերոսը մոռացավ հոդ տանել, որին ի պատիժ հարկադրված էր ֆշշալ և ցատկել մի ոտքով։

— Խնդրում եմ ներող լինեք, ես կարծես ձեզ անհանգստացրի։ Բարեհաճեցեք նստել այստեղ։ Խնդրե՛մ։— Այստեղ նա նրան նստեցրեց բազկաթոռին՝ մինչև անգամ մի փոքր ճարպկությամբ, ինչպես այնպիսի մի արջ, որն արդեն ձեռքի տակ հղել է, կարող է և պտույտ տալ և կատարել զանազան բաներ, երբ հարցնում են,— ապա՛, արջուկ, ցույց տուր, թե կնանիք ինչպես են շոգեբաղնիք ընդունում. կամ ապա՛, արջուկ, ինչպե՞ս են փոքրիկ երեխաները սիսեռ գողանում։

— Ճշմարիտ, ես զուր ժամանակ եմ կորցնում, ես պետք է շտապեմ։

— Մի րոպե էլ նստեցեք, ես հիմա ձեզ համար հաճելի բան կասեմ։— Այստեղ Սոբակևիչը ավելի մոտ նստեց և նրա ականջի մեջ ասաց՝ կարծես գաղտնիք լիներ,— անկյուն[1] ուզո՞ւմ եք։

— Այսինքն քսանհինգ ռուբլի՞։ Չէ՛, չէ՛, չէ՛, մինչև անգամ չորրորդ մասն էլ չեմ տա, մի կոպեկ չեմ ավելացնի։

[1] Քսանհինգ ռուբլի։

Սոբակևիչը լռեց։ Չիչիկովը նույնպես լռեց։ Լռությունը մի երկու րոպե տևեց։ Բաղրատիոնը իր արծվային քթով նայում էր պատից՝ չափազանց ուշադիր, սույն առուտուրին։

— Ո՞նչ է լինելու ձեր վերջին գինը,— ասաց վերջապես Սոբակևիչը։

— Երկուսուկես։

— Ճիշտն ասած, ձեզ համար մարդկային հոգին մի՛ևնույն է, թե խաշած շաղգամը։ Գոնե երեքական ռուբլի տվեք։

— Չեմ կարող։

— Է՛, ձեզ հետ գործ բռնել չի լինի, համեցեք։ Վնաս է, բայց տես, բնությա՛ն շան բնությո՛ւն է։ Չեմ կարող մերձավոր մարդուն բավականություն չպատճառել։ Հետո կարծեմ պետք է նաև կայքագիր կատարել, որ ամեն բան կարգին լինի։

— Հասկանալի է։

— Դե արի տես, հարկ կլինի գնալ քաղաք։

Գործը այսպիսով ավարտվեց։ Երկուսն էլ որոշեցին հաջորդ օրը լինել քաղաքում և կարգավորել կայքագիրը։ Չիչիկովը խնդրեց գյուղացիների ցուցակը։ Սոբակևիչը սիրով համաձայնեց և հենց իսկույն մոտենալով գրասեղանին, սեփական ձեռքով սկսեց արտագրել բոլորին՝ ոչ միայն անուն-անուն, այլև նշելով գովելի հատկություններըը։

Իսկ Չիչիկովը, պարապությունից զբաղվեց, գտնվելով ետևում, ամեն կողմից լավ նայելով նրա ընդարձակ կերպարանքին։ Հենց որ մտիկ տվեց նրա մեջքին՝ լայն, ինչպես վյատկայի ցածրահասակ ձիերինը, և նրա ոտքերին, որ այնպես էին, ինչպես թուջե արգելասյուներինը, որ դնում են մայթերի վրա, չկարողացավ ինքն իր մեջ չբացականչել,— համա թե աստված տվել է, չի խնայել. ա՛յ թե որտեղ է ճիշտ ասված՝ անհաղող է ձևած, բայց պինդ է կարած... Ծնվել ես դու արդեն ինչպես արջ կամ արջ է դարձրել քեզ ետ ընկած գավառի կյանքը, հացի ցանքսերը, մուժիկների հետ զբաղվելը, և դու նրանց պատճառով դարձար այն, որ կոչվում է մարդ-բռունցք։ Բայց ոչ. ես կարծում եմ, դու միշտ նույնը կլինեիր, եթե մինչև անգամ քեզ դաստիարակեին մոդայով, գործի դնեին, և ապրեիր դու Պետերբուրգում և ոչ թե ետ ընկած գավառում։ Բոլոր տարբերությունը այն է, որ դու հիմա լափում ես ոչխարի կողի կեսը՝ շիլայով, ճաշակելով ափսեի

մեծության վատրուշկա[1], իսկ այն ժամանակ դու կուտեիր որևէ կոտլետիկներ գետնասունկով։ Ա՛յ, տես, այժմ քո ձեռքի տակ մուժիկներ կան. դու նրանց հետ համերաշխ ես և իհարկե նրանց չես վիրավորի, որովհետև նրանք քոնն են, քեզ համար վատ կլինի, եթե նրանց հետ վատ վարվես, իսկ այն ժամանակ քեզ մոտ պաշտոնյաներ կլինեին, որոնց դու կրզեիր՝ գլխի ընկնելով, որ նրանք հո քո ճորտերը չեն, կամ կկողոպտեիր գանձարանը։ Ո՛չ, ով որ արդեն բռունցք է, այլևս նա բուռը բաց չի անի։ Ապա՛ թող բռունցքը բաց անի մի կամ երկու մատը, ավելի վատ դուրս կգա։ Թող փորձի նա թեթև կերպով մի որևէ գիտության հոտն առնել, հետո նա ցույց կտա, գրավելով ավելի աչքի ընկնող տեղ, բոլոր նրանց, որոնք իսկապես տեղյակ են որևէ գիտության։ Դեռ հետո էլ, ո՛վ գիտե, կասի,— արի՛ մի ինձ ցույց տամ։ Ու այնպիսի մի խորհրդաստ որոշում կհնարի, որ շատերի հերը կանիծի... է՛, եթե բոլոր կուլակները...

— Գրությունը պատրաստ է,— ասաց Սոբակևիչը՝ ետ շրջվելով։

— Պատրա՞ստ է, խնդրեմ։— Նա աչքերով մի անգամ անցավ գրության վրայից և զարմացավ ճշտապահության և ստուգության վրա. ո՛չ միայն հանգամանորեն մեջ էր բերված արհեստը, կոչումը, տարիքը և ընտանեկան դրությունը, այլև մինչև անգամ լուսանցքներում դրված էին առանձին դիտողություններ վարքի, զգաստության մասին, մի խոսքով՝ հաճելի էր նայել։

— Հիմա հաճեցեք կանխավճա՛րը,— ասաց Սոբակևիչը։

— Ինչո՞ւ է ձեզ պետք կանխավճարը։ Դուք քաղաքում կստանաք ամբողջ փողը միանգամից։

— Այդպես է, գիտեք, կարգը,— առարկեց Սոբակևիչը։

— Ես չգիտեմ ինչպե՛ս ձեզ տամ, ես հետս փող չեմ վերցրել։ Ահա, առե՛ք տասը ռուբլի։

— Տասն ի՞նչ է։ Տվեք, ծայրահեղ դեպքում, գոնե հիսուն ռուբլի։

Չիչիկովը հենց այն է, սկսում էր պատճառաբանքներ բերել, թե

---

1 Պանրակարկանդակ։

չկա, բայց Սոբակևիչը այնպես հաստատապես ասաց, որ մոտը փող կա, որ նա մի թղթադրամ ևս հանեց՝ ասելով.

— Համեցե՛ք, ահա ձեզ մի տասնհինգ ևս, ընդամենը քսանհինգ։ Միայն՝ խնդրեմ ստացագիր։

— Բայց ձեր ինչի՞ն է պետք ստացագիրը։

— Ավելի լավ է, գիտեք, ստացագրով։ Մարդ է, ով գիտե՝ ինչ կպատահի։

— Լավ, տվեք այստեղ փողը։

— Ինչո՞ւ համար՝ փողը։ Ահա, իմ ձեռքիս է, հենց որ կգրեք ստացագիրը՝ նույն րոպեին էլ փողը կվերցնեք։

— Ախր թույլ տվեք, ինչպե՞ս գրեմ ստացագիրը. նախ պետք է փողերը տեսնել։

Ջիչիկովը ձեռքից բաց թողեց թղթադրամները Սոբակևիչին, որը մոտենալով սեղանին և դրանք ծածկելով ձախ ձեռքի մատներով, մյուսով մի թղթի պատառի վրա գրեց, որ կանխավճարը քսանհինգ ռուբլու պետական թղթադրամներով ծախսած հոգիների համար, ստացավ լիովին։ Գրելով ստացագիրը՝ նա կրկին տնտղեց թղթադրամները։

— Թուղթը հին է,— ասաց նա, լույսի մեջ նայելով դրանցից մեկը,— մի փոքր պատռված է, բայց դե, բարեկամներ ենք, կարիք չկա դրան ուշադրություն դարձնել։

— Կծծի, կծծի,— մտածեց ինքն իրեն Ջիչիկովը,— և դրա հետ էլ՝ խորամանկ սատանա։

— Իսկ իգական սեռից չե՞ք ուզում։

— Ոչ, շնորհակալ եմ։

— Ես էժան էլ կտայի։ Ծանոթության համար՝ հատը մի ռուբլի։

— Ոչ, կանանց սեռի կարիք չունեմ։

— Դե, որ կարիք չունեք, չարժե էլ խոսել։ Ճաշակի համար օրենք չկա. մարդ կա՝ տերտեր է սիրում, մարդ կա՝ տերտերակին, ասում է առածը։

— Հետո ես ձեզ պիտի խնդրեի, որ այս գործարքը մնա մեր մեջ,— ասաց Ջիչիկովը հրաժեշտ տալով։

— Դե դա ինքնին հասկանալի է։ Երրորդ մարդուն այստեղ խառնելու կարիք չկա, ինչ որ անկեղծորեն տեղի է ունեցում երկու մտերիմ բարեկամների միջև, դա պետք է մնա նրանց փոխադարձ բարեկամության մեջ։ Գնաք բարով։ Շնոր-

հակալ եմ, որ այցելեցիք. խնդրում եմ՝ այսուհետև ևս չմոռանաք. եթե ազատ ժամ կգտնեք, եկեք ճաշելու, ժամանակ անցկացնելու։ Կարող է կրկին ուրիշ մեկմեկու մի որևէ բանով ծառայություն մատուցելու։

«Հա՜, ինչպե՜ս չէ»,— մտածեց ինքնիրեն Ջիլիկովը՝ նըստելով բրիչկան,— «երկուս ու հիսուն քերթեց մեռած հոգու համար, անիծվա՜ծ կծծի»։

Նա դժգոհ էր Սոբակևիչի վարմունքից։ Համենայն դեպս, ինչքան չլինի, ծանոթ մարդ էր, թե՛ նահանգապետի, թե՛ ոստիկանապետի մոտ տեսնվել էին, իսկ վարվեց ինչպես կատարելապես օտար, անպետք բանի համար փող վերցրեց։ Երբ բրիչկան բակից դուրս եկավ, նա ետ նայեց և տեսավ, որ Սոբակևիչը բոլոր ժամանակ կանգնած էր մուտքի սանդուղքի վրա և ինչպես թվում էր, մտիկ էր տալիս, կամենալով իմանալ, թե հյուրն ո՛ւր կգնա։

—Սրիկա, դեռ մինչև հիմա կանգնած է,— մռմռաց նա ատամների մեջ և Սելիֆանին հրամայեց, շրջվելով գյուղացիների խրճիթների կողմը, հեռանալ այնպես, որ կարելի չլինի կառքը տեսնել կալվածատիրոջ բակի կողմից։ Նա կամեցավ այցելել Պլյուշկինին, որի մոտ, Սոբակևիչի ասելով, մարդիկ մեռնում էին ճանճերի նման, բայց չէր կամենում, որ Սոբակևիչը այդ մասին իմանա։ Երբ բրիչկան արդեն գյուղի ծայրին էր, նա մոտ կանչեց առաջին պատահած մուժիկին, որը ուր-որ՝ ճանապարհից մի շատ հաստ գերան բարձրացրած, տանում էր ուսին դրած, նման անխոնջ մրջյունի, իր խրճիթը։

— Է՛յ, մորո՛ւք, ապա ասա, ինչպե՞ս պետք է գնալ Պլյուշկինի մոտ, այնպես, որ ձեր պարոնի տան մոտով չլինի։

Մուժիկը ըստ երևույթին դժվարացավ այս հարցին պատասխանել։

— Հա, ի՞նչ է, չգիտե՞ս։

— Ոչ, պարոն, չգիտեմ։

— Է՛խ, դո՛ւ։ Դեռ մազերիդ էլ ճերմակը դիպել է. ժլատ Պլյուշկինին չե՞ս ճանաչում, նրան, որ վատ է կերակրում իր մարդկանց։

— Հա՜, կարկատնած, կարկատնած,— բացականչեց մուժիկը։ Նրա կողմից կարկատնած բառին ավելացվեց նաև մի

դոյական, շատ հարմար, բայց աշխարհիկ խոսակցության մեջ ո՛չ գործածական, ուստի և մենք այդ բաց կթողնենք։ Բայց կարելի է կռահել, որ այն արտահայտված էր շատ դիպուկ, որովհետև Չիչիկովը, թեև մուժիկը վաղուց արդեն կորել էր տեսողությունից, և շատ էին առաջ գնացել, սակայն դեռ էլի քթի տակ ծիծաղում էր՝ բրիչկայում նստած։ Ուժեղ է արտահայտվում ռուս ժողովուրդը, և եթե մեկին մի խոսք է կպցնում, կգնա՞ այդ խոսքը կմտնի նրա սերնդի մեջ, քաշ կտա նա նրան իր հետ թե՛ ծառայության մեջ, թե՛ հրաժարական տված ժամանակ, թե՛ Պետերբուրգում, թե՛ աշխարհիս ծայրին։ Եվ հետո, ինչքան խելք կուզես՝ թափիր և ազնվացրու մականունդ, թեկուզ հարկադրիր գրող մարդուկներին՝ վարձու դրամով դուրս բերելու այն հին իշխանական տոհմից, ոչինչ չի օգնի. կկռավի ինքն իր մասին մականունը իր ամբողջ ագռավական կոկորդով և կասի պարզ, թե որտեղի՞ց դուրս թռավ թուչունը։ Դիպուկ արտասանվածը միևնույն է՝ թե գրված լինի, կացնով էլ չի չնչվի։ Եվ արդեն ի՞նչ դիպուկ է լինում այն բոլորը, ինչ որ դուրս է հկել Ռուսիայի խորքից, ուր չկան ո՛չ գերմանական, ո՛չ ֆրենսական, ո՛չ ամեն տեսակ զանազան ցեղեր, այլ ամբողջը բնածին ինքն է ու կա, կենդանի ու ժիր ռուսական խելքը, որին իսկի խոսքը չի պակասում, թուխս չի նստում վրան, ինչպես թխսկան հավը ճուտերի վրա, այլ ծնփում է միանգամից, ինչպես մշտական անձնագիր, և կարիք չկա այլևս վրան բան ավելացնել՝ թե ինչպե՛ս է քիթդ կամ շրթունքներդ—մի դծով նկարվա՛ծ ես դու ոտից գլուխ։

Ինչպես անհաշիվ կերպով եկեղեցիներ, վանքեր՝ գմբեթներով, գլուխներով, խաչերով ցրված են սուրբ, բարեպաշտ Ռուսիայում, այնպես անհաշիվ շատ են ցեղերը, սերունդները, ժողովուրդները խմբվում, խայտաբղետ վժժում և դեսուդեն ընկնում երկրի երեսին։ Եվ ամեն ժողովուրդ, կրելով իր մեջ ուժի գրավականը, ստեղծարար կարողություններ ունեցող հոգով, իր փայլուն առանձնահատկություններով և այլ աստվածային պարգևներով լցված, յուրատեսակ է աչքի ընկել, յուրաքանչյուրն իր սեփական խոսքով, որով արտահայտելով մի որևէ առարկա, արտացոլում է նրա արտահայտության մեջ իր սեփական բնավորության մի մասը։ Սրտագիտությամբ

և կյանքի իմաստուն ճանաչողությամբ է արտահայտվում անգլիացու խոսքը. թեթևամիտ պճնասերի փայլով կփայլի և կցնդի ֆրանսիացու ոչ երկարակյաց խոսքը. հնարամիտ կհորինի իր, ո՛չ ամենքին մատչելի խոսքը՝ խելքանիհար գերմանացին. սակայն չկա մի խոսք, որը լինի այնպես թափով, ժիր, այդպես հենց սրտի խորքից դուրս եկած, և այդպես եռա ու կենսաթրթիռ ապրի, ինչպես դիպուկ ասված ռուսական խոսքը։

ԳԼՈՒԽ VI

Առաջ, վաղուց, իմ պատանեկության տարիներին, իմ անդարձ անցած մանկության տարիներին, ուրախ էի լինում մոտենալ առաջին անգամ անծանոթ տեղի. միևնույն է՝ փոքրիկ գյուղ էր լինում դա, աղքատիկ, գավառական փոքրիկ քաղաք, մեծ շեն, արվարձան, հետաքրքրական շատ բան էր գտնում նրա մեջ մանկական հետաքրքիր հայացքը։ Յուրաքանչյուր շինություն, ամեն բան, որ միայն մի որևէ նկատելի առանձնահատկության տպավորություն էր թողնում, ամեն բան կանգնեցնում էր ինձ և զարմացնում։ Լիներ պետական մի տուն հայտնի ճարտարապետությամբ կառուցված, կեսը կեղծ պատուհաններով, մեն-մենակ տնկված քաղքենիական միահարկ, հղկուն գերաններով շինված տնակների կույտի մեջ, թե կլոր, կանոնավոր մի գմբեթ, ողջը պատած սպիտակ թերթավոր երկաթով, բարձրացած ձյունի նման սպիտակեցրած նոր եկեղեցու վրա, լիներ մի շուկա, գավառական մի ֆրանտ, քաղաքի մեջ աչքիդ ընկած, ոչինչ չէր փախչի իմ թարմ, նուրբ ուշադրությունից, և քիթս դուրս հանելով իմ ճամփորդական սայլից, մտիկ էի տալիս մինչ այդ չտեսած ձևի մի որևէ սերթուկի, և՛ փայտե արկղերին՝ մեխերով, ծծումբով, որ հեռվից դեղնին էր տալիս, չամիչով ու սապոնով, որ փայլկտում էին բանջարեղենի խանութի դռներից՝ մոսկովյան չորացած կոնֆետներով տուփերի հետ մեկտեղ, մտիկ էի տալիս նաև հեռվից անցնող հետևակ սպային, որ եկած էր լինում աստված գիտե ո՛ր նահանգից՝ դեպի գավառական ձանձրույթը, և վաճառականին, որ անցնում էր սիբիրական հագին, ձիաբշավի

սայլակով,— և մտքով գնում էի նրանց ետևից դեպի իրենց խղճուկ կյանքը։ Գավառական պաշտոնյան հենց կանցներ մոտից— ես արդեն մտածում էի, ո՞ւր է գնում նա, արդյոք որևէ մի եղբոր մոտ երեկո անցկացնելու, թե՞ ուղղակի իր տունը, որպեսզի մի կես ժամ դռան սանդուղքի գլխին նստելուց հետո, քանի դեռ բոլորովին չի թանձրացել երեկոյան աղջամուղջը, նստի վաղ ընթրիքի՝ մոր, կնոջ, քենու և ամբողջ ընտանիքի հետ, և թե ինչի՞ մասին կընթանա խոսակցությունը նրանց մոտ՝ այն ժամանակ, երբ տան աղջիկը մանյակը վզին կամ տղան՝ հաստ բաճկոնակը հագին կբերի սրդեն սուպից հետո ճարպամոմը տնական հարատև աշտանակով։ Կաթքով մի որևէ կալվածատիրոջ գյուղին մոտենալով, ես հետաքրքիր նայում էի բարձր ու նեղ դանգակատանը կամ լայն ու մութ փայտե հին եկեղեցուն։ Գրավիչ կերպով աչքի էին ընկնում հեռվից, ծառերի կանաչի միջով, կալվածատիրոջ տան կարմիր կտուրը և սպիտակ ծխնելույզները, և ես անհամբեր սպասում էի, թե ե՞րբ կբացվեն երկու կողմից նրա առաջը փակող այգիները, և այն տեսանելի կդառնա իր՝ այդ ժամանակ, ավա՛ղ, բոլորովին ոչ գեհենիկ արտաքինով, և այդ շենքով ես աշխատում էի գուշակել, թե ո՛վ է այդ կալվածատերն ինքը, արդյոք հաստամարմի՞ն է նա, որդիներ ունի՞ նա, թե՞ վեց աղջիկ՝ իրենց հնչուն աղջկական ծիծաղով, խաղերով և մշտապես գեղեցկուհի կրտսեր քույրիկով, և արդյոք նրանք սևաչյա՞ են, և ինքը զվարճախո՞ս է արդյոք, թե՞ մռայլ է ինչպես սեպտեմբերը իր վերջին օրերին, արդյոք տրացույցի՞ն է նայում, հետն էլ խոսում ջահելների համար ձանձրալի՛ հաճարի և ցորենի մասին։

Հիմա այլևս անտարբեր եմ մոտենում ամեն մի անծանոթ գյուղի և անտարբեր եմ նայում նրա գեհենիկ արտաքինին. իմ սառած հայացքի համար տհաճ է, ինձ համար ծիծաղելի չէ և այն, ինչ որ առաջվա տարիներին դեմքիս վրա կենդանի շարժում կառաջացներ, ծիծաղ և անլռելի խոսակցություն, հիմա սահում անցնում է կողքովս և իմ շրթունքները անտարբեր լռություն են պահպանում։ Օ՛, իմ ջահելություն, օ՛, իմ թարմություն։

Մինչդեռ Չիչիկովը մտածում և իր մտքում ծիծաղում էր մուժիկների՝ Պլյուշկինին կպցրած մականվան վրա, չնկատեց

Թե ինչպե՛ս հայտնվեց բազմաթիվ խրճիթներով և փողոցնե-
րով գյուղի մեջտեղը։ Սակայն շուտով նրան այդ բանը նկա-
տել տվեց մի կարգին հարված, որ պատճառեց նրան գերանե-
ներից շինած սալարկը, որի առաջ քաղաքի քարե սալարկը
ոչինչ էր։ Այդ գերանները, ինչպես դաշնամուրի ստեղներ՝
մերթ բարձրանում էին, մերթ իջնում, և կառքով անզգույշ
գնացողը կամ մի ուռուցք էր ձեռք բերում իր ծոծրակի վրա,
կամ մի կապույտ բիծ՝ ճակատին, կամ թե պատահում էր՝ իր
սեփական ատամներով ցավագնորեն կծում էր սեփական լեզ-
վի ծայրը։ Ինչ-որ մի առանձին հնամաշություն նկատեց նա
բոլոր փայտե շենքերի վրա. խրճիթների գերանները մթագույն
էին և հնացած. շատ կտուրներ ծակծկվել էին ցանցի նման.
մյուսների վրա մնացել էին վերևի փայտե ձիուկը և մեկ էլ՝
կողքի ձողանները երկու կողմից կողոսկրերի նման ցցված։
Թվում էր, թե իրենք տանտերերն են հանել սղոցած ու տա-
շած տախտակը, դատելով, և իհարկե իրավացի, որ անձրևի
ժամանակ խրճիթի համար դրանք ծածկ չեն, իսկ պարզ օրը
արդեն չի էլ կաթի, իսկ կնկա նման այնտեղ նստել էլ չարժե,
քանի որ արձակ տեղ կա թե՛ գինետանը և թե՛ ճանապարհի
վրա, մի խոսքով՝ ո՛ւր կուզես։ Փոքրիկ խրճիթների պատու-
հանները ապակի չունեին, մյուսներն էլ խցկված էին փալաքով
կամ հին արխալուղով. կտուրների տակ ճաղավոր փոքրիկ
պատշգամբները, որ հայտնի չէ թե ինչի համար շինված են
լինում հաճախ ռուսական խրճիթներին, թնքվել էին և սևա-
ցել մինչև անգամ ոչ գեղեցկատեսիլ կերպով։ Խրճիթների
ետևից շատ տեղերում շարքերով ձգվում էին հացահատիկի
ահագին շեղջեր, որոնք, ինչպես երևում է, երկար ժամանակ
էին մնացել ձեռք չտված. նրանք դույնով նման էին հին, վատ
թրծած աղյուսի. նրանց գագաթին բուսել էր ամեն տեսակ քոլ
ու քոս և մինչև անգամ կողքից կպել էր թփուտը։ Հացահա-
տիկը, ինչպես երևում է, կալվածատիրոջն էր։ Հացահատիկի
շեղջերի և խարխուլ կտուրների ետևից վերամբառնում էին և
աչքի խփում պայծառ օդի մեջ՝ մերթ աջ, մերթ ձախ, նույած
բրինձկայի պտույտներին՝ երկու գյուղական եկեղեցի, մեկը
մյուսի կողքին, մեկը արդեն թափուր դարձած՝ փայտաշեն էր,
մյուսը՝ քարե դեղնավուն պատերով, լաքայոտած, ճաքճքած։
Քաս-քաս սկսեց երևալ կալվածատիրոջ տունը և վերջապես

ամբողջովին եբևաց այն տեղում, որտեղ խրճիթների շղթան ընդհատվեց և նրանց տեղը բռնեց դատարկ բանջարանոցի կամ կաղամբանոցի տարածությունը շրջապատված ցածր, տեղ-տեղ կոտրտված ցանկապատով։ Մի տեսակ զառամյալ հաշմանդամի էր նմանվում սուլն տարօրինակ դղյակը, երկար էր, անչափ երկար։ Տեղ-տեղ այն միհարկանի էր, տեղ-տեղ՝ երկու. մթագույն կտուրի վրա, ո՛չ ամեն տեղ հուսալիորեն պաշտպանելով նրա հնությունը՝ տնկվել էին երկու բելվեդեր[1] մեկը մյուսի դիմաց, երկուսն էլ արդեն խախտված, վրայի՝ երբեմնի ներկերը թափված։ Տան պատերը տեղ-տեղ ճաքճքած՝ ցույց էին տալիս սվաղի մերկացած ցանցը և, ինչպես երևում էր, շատ էին վնասվել ամեն տեսակ վատ եղանակներից, անձրևներից, մրրիկներից և աշնանային օդի փոփոխություններից։ Պատուհաններից միայն երկուսն էին բաց, իսկ մյուսները փակված էին խուլ փեղկերով կամ մինչև իսկ մեխված էին տախտակներով։ Այդ երկու պատուհաններն էլ իրենց հերթին նույնպես կիսակույր վիճակումն էին. նրանցից մեկի վրա սևին էր տալիս շաքարի կապույտ թղթի մի եռանկյունի։

Տան ետևը ձգված հին, ընդարձակ պարտեզը, որ դուրս էր գալիս գյուղի հետևը և հետո կորչում էր խոտով լցված ու խճողված դաշտում, թվում էր, թե միակն էր, որ թարմացնում էր այդ ընդարձակ գյուղը և միակն էր, որ լիովին գեղեցիկ էր իր տպավորիչ ամայության մեջ։ Ինչպես կանաչագույն ամպեր և անկանոն, թրթռատերևավոր գմբեթներ, ընկած էին երկնքի հորիզոնի վրա՝ ազատության մեջ փարթամորեն աճած ծառերի միախառնված կատարները։ Կեչու սպիտակ, հսկայամարմին բունը, զրկված գագաթից, որ կոտրել էր փոթորիկը կամ ամպրոպը, վեր էր ցցվում այդ կանաչ թավուտից և կլորանում օդի մեջ, ինչպես ուղղաձև մարմարե փայլուն սյուն. թեք, սրածայր կոտրած տեղը, որով նա վերջանում էր վերևում, խոյակի փոխարեն, մթին էր տալիս՝ նրա ձյունաթույր սպիտակության վրա ինչպես գլխարկ կամ մի սև թռչուն։ Գայլուկը՝ ներքևում խեղդելով բանջրվենու, սրոսանու և վայրի կաղնիների թփերը, հետո վեր էր մագլցում ամբողջ ցանկապատի վրայով, վազում վերջապես և փաթաթ-

1 Բելվեդեր — դահլավանդ, աշտարակ, դիտատեղ տան վրա։

վում մինչև կեսը կոտրված կեչուն։ Հասնելով նրա մեջտեղին՝ նա այնտեղից ցած էր կախվում և սկսում արդեն կպչել ուրիշ ծառերի կատարներին կամ կախվում էր օդի մեջ, կապկպելով իր օղակներով բարակ, կաուչող կեռիկները, որ թեթևությամբ օրորվում էին օդի շարժումից։ Տեղ-տեղ բացվում էին խիտ թավուտներ, արևից լուսավորված, և ցույց էին տալիս իրենց արանքում մի խորություն, որ բացվում էր մութ երախի նման. այն ամբողջովին ստվերի մեջ էր և հազիվհազ աչքի էին ընկնում նրա սև խորության մեջ հեռացող նեղ շավիղը, քանդված ճաղերը, խախտված տաղավարը, ուռենու փչակավոր զառամյալ բունը, մոխրագույն քարինչը, որը, խիտ խոզաստևի պես, դուրս էր ցցել ուռենու ետևից իր՝ սարսափելի խեղվածության մեջ չորացած, խճճված և խաչաձևած տերևները և ոստերը, և վերջապես՝ քղկենու մատաղ ոստը, որ կողքից մեկնել է իր կանաչ թաթ տերևները, որոնցից մեկի տակից արևը՝ աստված գիտե քե ինչ կերպ ներս ընկնելով՝ հանկարծ դարձրել էր նրան քափանցիկ և հրեղեն, որ հրաշալիորեն փայլում էր այդ խիտ մթության մեջ։ Մի կողմում, պարտեզի հենց ծայրին, մի քանի բարձրահասակ՝ մյուսների հետ ոչ համաչափ կաղամախիներ իրենց դողդոջուն կատարների վրա բարձրացրած պահում էին ահագին ագռավաբներ։ Ծառերի մի քանիսի վրայից պոկված և ոչ ամբողջովին բաժանված ճյուղերը վար էին կախվել իրենց չորացած տերևներով։ Մի խոսքով, ամեն ինչ այնքան լավ էր, որից ավելի լավ չէին կարող հնարել ոչ բնությունը, ոչ արվեստը, բայց ինչպես պատահում է դա միայն այն ժամանակ, երբ դրանք միանում են, երբ մարդու հաճախ անմիտ կերպով կուտակած աշխատանքի վրայով իր քանդակագործը կանցկացնի բնությունը, կթեթևացնի ծանր կուտակվածությունները, կոչնչացնի կոպիտ-շշափելի կանոնավորությունը և խղճուկ ճեղքերը, որոնց միջով նշմարվում է չթաքցված, մերկ ուրվագիծը, և կհաղորդի հրաշալի չերմություն այն ամենին, որ ստեղծվել է չափված-ձևված մաքրության և հստակության սառնության մեջ։

Մի կամ մի քանի պտույտ անելով, մեր հերոսը վերջապես հայտնվեց հենց տան առաջ, որը հիմա ավելի տխուր երևաց։ Կանաչ բորբոսը արդեն ծածկել էր քանկապատի և դարպասի հնացած փայտը։ Ծառաներին, ամբարներին, մա-

ռաններին հատկացված բազմաթիվ շենքերը, որոնք պարզա-պես հնացել էին՝ լցրել էին բակը. նրանց մոտ աջ և ձախ երևում էին այլ դարպասներ, որոնք տանում էին ուրիշ բակեր։ Ամեն բան ասում էր, որ այստեղ երբեմնի տնտեսություն է փթթել ընդարձակ ծավալով, և ամեն ինչ այժմ մոայլ տեսք ուներ։ Պատկերը աշխուժացնող ոչ մի բան չէր նկատվում. ոչ բացվող դռներ, ոչ որևէ տեղից դուրս եկող մարդիկ, ոչ էլ առօրյա կենդանի եռուզեռ ու հոգս։ Միայն գլխավոր դարպասն էր բաց և այն էլ նրա համար, որ ներս մտավ մի մուժիկ՝ բարձած և թանձրալաթով ծածկած սայլով, կարծես դիտմամբ հայտնվելով, որպեսզի կենդանացնի սույն մեռած տեղը. ուրիշ ժամանակ այն ևս ամուր փակված էր լինում, քանի որ երկաթե օղակից կախված էր հսկա կողպեքը։ Շենքերից մեկի մոտ Ջիլիկովը շուտով նկատեց ինչ-որ մի կերպարանք, որը սկսեց կռվել սայլով եկած մուժիկի հետ։ Երկար ժամանակ նա չկարողացավ հասկանալ, թե ո՛ր սեռից էր կերպարանքը. կնի՞կ, թե՞ մուժիկ։ Նրա վայրի հագուստը բոլորովին անորոշ էր, շատ նման կնոջ կապոտի, գլխին ուներ թասակ, որ կրում են մեծատան բակում ծառայող գյուղացի կանայք, միայն՝ ձայնը նրան թվաց կնոջ համար մի փոքր խռպոտ։— «է՛հ, կնիկ է»,— մտածեց նա ինքնիրեն և հենց տեղն՝ու տեղը ավելացրեց,— «է՛, չէ՞»։ «Իհարկե կնիկ է»,— վերջապես ասաց նա, ավելի ուշով նայելով նրան։ Կերպարանքը ևս իր կողմից նայում էր նրան ուշի-ուշով։ Թվում էր, որ հյուրը նրա համար մի զարմանք բան էր, որովհետև նա աչքերով տընտղում էր ո՛չ միայն նրան, այլև Սելիֆանին և ձիերին՝ սկսած պոչից մինչև մուրթները։ Նրա գոտուց կախած բանալիներից և այն բանից, որ նա կշտամբում էր մուժիկին բավականին խայտառակ խոսքերով, Ջիլիկովը եզրակացրեց, որ նա մառանապետուհի էր։

— Լսիր, քույրիկ,— ասաց նա, դուրս գալով բրիչկայից,— ասա տեսնեմ, պարոնը...

— Տանը չի,— ընդհատեց մառանապետուհին՝ չսպասելով հարցի վերջանալուն, և հետո, մի րոպե անց, ավելացրեց,— իսկ ի՞նչ է ձեզ հարկավոր։

— Գործ կա։

— Գնացեք սենյակները,— ասաց մառանապետուհին,

ջուռ գալով և ցույց տալով նրան ալյուրով կեղտոտած մեջքը, որ մեծ կարքանդ եղած տեղ ուներ ավելի ներքևում։

Ջիլիկովը մոտավ մութ, լայն հաշտը, որտեղից փչեց սառն օդ, ինչպես մառանից։ Հաշտից նա ընկավ մի այլ սենյակ, որը նույնպես մութն էր՝ հազիվհազ լուսավորված լինելով դռան ներքև եղող լայն ճեղքից։ Բաց անելով այդ դուռը՝ նա վերջապես ընկավ լույս տեղ և զարմացավ՝ աչքի առջև պարզված անկարգությունից։ Քվում էր թե, կարծես տանը սենյակների հատակները լվանում էին և բոլոր կահ-կարասին առժամանակ այստեղ էին դիզել։ Մի սեղանի վրա մինչև անգամ մի կոտրած աթոռ էր դրած և նրա կողքին մի ժամացույց՝ կանգ առած ճոճանակով, որին սարդը արդեն կցել էր իր ոստայնը։ Հենց այդտեղ էլ կողքը պատին դեմ արած մի պահարան կար հին արծաթեղենով, շշերով և ճենապակիով։ Սադաֆե խճանկարով նախշած գրասեղանի վրա, որի սադաֆը տեղ-տեղ թափված էր և իրենից հետո թողել էր մերկ սոսնձալի փորակներ՝ հազար ու մի բան էր ածած. մանր գրոտած թղթերի դեզ, ծածկված մարմարե, կանաչ գույն ստացած մամուլով, ձվաձև կոթով, մի ինչ-որ հնոտի, կաշեկազմ, կարմիր եզրերով գիրք, բոլորովին չորացած լիմոն՝ կաղինից ոչ մեծ, բազկաթոռի կոտրած թև, մի ըմպանակ՝ ինչ-որ հեղուկով և երեք ճանճով՝ նամակով ծածկած, մի փոքրիկ կտոր ղմուռս, ինչ-որ տեղից վերցրած փալասի մի կտոր, երկու գրիչ՝ թանաքով կեղտոտած, կարծես թոքախտից չորացած՝ մի բոլորովին դեղնած ատամնափորիչ, որով գուցե տանտերը փորում էր ատամները նախքան ֆրանսիացիների՝ Մոսկվայի վրա հարձակվելը։

Պատերի վրա կախված էին բոլորովին կիպ իրար մոտ ու անհեթեթ կերպով մի քանի պատկերներ. ինչ-որ մի ճակատամարտի երկար, դեղնած գրավյուր ահագին թմբուկներով, եռանկյուն գլխարկներ դրած գոռացող զինվորներով և խեղդվող ձիաներով, առանց ապակու, որ դրված էր անկյուններում բրոնզե բարակ զոլերով և նույնպես բրոնզե կլորակներով կարմրափայտի շրջանակի մեջ։ Դրանց շարքում պատի կեսը բռնում էր մի ահագին սևացած պատկեր՝ նկարած յուղաներկերով, որ ներկայացնում էր ծաղիկներ, պտուղներ, մի կոտրած ձմերուկ, մի վարազի մուրճ և գլխիվայր կախված մի

բաղ։ Առաստաղի մեջտեղից կախած էր մի ջահ՝ կտավե տոպրակի մեջ, որ փոշուց նմանվում էր բոժոժի՝ չերամի որդը միջին։ Սենյակի անկյունում հատակի վրա կիտած էր այն ամենը, ինչ որ առավել կոպիտ էր և անարժան՝ սեղանի վրա դրվելու։ Թե ի՛նչ էր իսկապես կիտած այնտեղ, որոշել դժվար էր, որովհետև նրա վրա այնքան առատ փոշի կար, որ ամեն մի դիպչողի ձեռք դառնում էր ասես՝ ձեռնոց հագած. ամենից ավելի նկատելի կերպով դուրս էր ցցված այնտեղից փայտե թիակի վոտրած մի մաս և հին կոշկատակ։ Ո՛չ մի կերպ չէր կարելի ասել, որ այս սենյակում կենդանի արարած է ապրում, եթե նրա այդտեղ լինելը չմատներ հին, մաշված թասակը, որ ընկած էր սեղանի վրա։ Մինչ Ջիչիկովը դիտում էր այդ տարօրինակ կահավորությունը, բացվեց կողքի դուռը, և ներս մտավ այն միևնույն մառանապետուհին, որին նա պատահել էր բակում, բայց այստեղ նա տեսավ, որ դա ավելի շուտ մառանապետ է, քան մառանապետուհի. մառանապետուհին, համենայն դեպս, մորուքը չի ածիլում, իսկ սա հակառակ դրան՝ ածիլում էր և թվում էր՝ բավական ուշ-ուշ, որովհետև ամբողջ կզակը, այտի ներքևի մասի հետ միասին, նմանվում էր երկաթալարից շինած քերոցի, որով ախոռում ձիերին են թիմարում։ Ջիչիկովն իր դեմքին հարցական արտահայտություն տալով՝ անհամբեր սպասում էր, թե ի՛նչ է կամենում ասել մառանապետը։ Մառանապետն էլ իր հերթին էր սպասում, թե ի՛նչ է կամենում նրան ասել Ջիչիկովը։ Վերջապես վերջինս, այդպիսի տարօրինակ տատամսությունից զարմացած՝ վճռեց հարցնել.

— Ի՞նչ եղավ պարոնը, տա՞նն է։

— Պարոնն այստեղ է,— ասաց մառանապետը։

— Ապա ո՞ւր է,— կրկնեց Ջիչիկովը։

— Կո՞ւյր եք, ի՛նչ է,— ասաց մառանապետը։— Սրան տես, պարոնը հենց ե՛ս եմ։

Այստեղ մեր հերոսը ակամա ետ-ետ գնաց և սուր հայացքով նայեց նրան։ Նա ամեն տեսակի մարդ տեսել էր, մինչև անգամ այնպիսիներին, որոնց մեզ ու ընթերցողին դուրս եկբեք չի վիճակվի տեսնել. սակայն այդպիսին նա դեռևս չէր տեսել։ Նրա դեմքը մի առանձին բան չէր ներկայացնում, դա համարյա այնպես էր, ինչպես շատ նիհար ծերերինն է լի-

նում, միայն՝ ծնոտը շատ ավելի էր առաջ ցցված, այնպես որ նա ամեն անգամ պետք է թաշկինակով ծածկեր, որ վրան թուք չընկներ. փոքրիկ աչքերը դեռ չէին հանգել և սլվլում էին բարձր բուսած հոնքերի տակից, ինչպես մկներ, երբ մութ ծակերից սուր դնչերը դուրս հանած, ականջները սրած և բեղերը թարթելով, նրանք դուրս են նայում, թե արդյոք որևէ տեղ չի՞ թաքնվել կատուն կամ չարաճճի երեխան, և կասկածանքով նույնիսկ օդն են հոտոտում։ Ավելի նշանավորը նրա զգեստն էր. ո՛չ մի միջոցով և ջանքով չէր կարելի ըմբռնել, թե ինչի՛ց էր գլուխ բերված նրա խալաթը. թևքերն ու վերևի փեշերը այն աստիճան էին ճարպոտել, փայլում ու սլպլում, որ նմանվում էին յուֆտի[1], որ կոշկի համար են բանեցնում. ետևը, փոխանակ երկուսի, չորս փեշ էր քաշ գալիս, որոնցից բամբակը քուլա-քուլա դուրս էր պրծնում։ Նրա վիզը նույնպես փաթաթված էր ինչ-որ մի բանով, որ անկարելի էր որոշել՝ գուլպա՞ էր, կապի՞չ էր, թե՞ փորկապ, միայն ամենևին ո՛չ փողկապ։ Մի խոսքով, եթե Ջուչիկովը նրան պատահեր այդպես պճնավորված մի որևէ տեղ, զորօրինակ եկեղեցու դռների մոտ, ապա հավանորեն նրան մի պղնձե գրոշ կտար։ Որովհետև ի պատիվ մեր հերոսի, պետք է ասել, որ նրա սիրտը կարեկցող էր և նա երբեք ոչ մի կերպ չէր կարող դիմանալ, որ խեղճ մարդուն պղնձե գրոշ չտար։ Սակայն նրա առջև կանգնած էր ոչ մուրացիկ մեկը, նրա առջև կալվածատեր էր կանգնած։ Այդ կալվածատերը հազարից ավելի հոգիներ ուներ, և թող մեկը փորձեր մի ուրիշի մոտ գտնել այնքան հաց՝ հատիկով, ալյուր և պարզապես շեղջերով, որի մոտ մառանները, ամբարները և չորանոցները լիքը լցված լինեին այդքան կտավով, մահուդով, մշակած և թե՛ անմշակ ոչխարի կաշվով, չորացած ձկներով և ամեն տեսակ բանջարով կամ բուսեղենով։ Թող որևէ մեկը նայեր նրա աշխատանքի բակը, որտեղ պատրաստած ու պահեստի էր դրած ամեն տեսակ փայտեղեն և ամսնեղեն, երբեք չգործածվածը, նրան այնպես կթվար, թե արդյոք չի՞ ընկել Մոսկվայում որևէ առաղձագործական մի արհեստանոց, ուր ամեն օր գնում են ժիր զոքանչներն ու սկեսուրները՝ աղախիններ հետները գցած՝ իրենց տեհտեհալյան պատրաստությունները տեսնելու, ուր սարի

[1] Յուֆտ — հորթի կաշի։

պես իրար վրա են դիզած ամեն տեսակի փայտեղեն՝ կարաձ, տաշած, սարքած և հյուսած. տակառներ, հատած տակառներ, տաշտակներ, խփով դույլեր, տիփարներ քթով և առանց քթի, մեծ ամաններ, կողովներ, ջուլհակի սարք, որտեղ կնանիք դնում են իրենց գզած վուշի փնջիկները և այլ ամեն տեսակ այլին-օյին, արկղիկներ՝ նուրբ, թեքվող կորափիի փայտից, հյուսված կեղևամաններ թեղու փայտից և շատ ու շատ բաներ, որ ծառայում են հարուստ և չքավոր Ռուսիայի պետքերին։ Թվում էր, թե Պլյուշկինի ինչի՞ն է սիտք նման բաների այդ ահագին բեռը. ամբողջ կյանքում կարիք չէր լինի գործածել դրանց անգամ երկու այդպիսի կալվածքում, որ նա ուներ, բայց նրա համար այդքանն էլ քիչ էր։ Սրանով չբավականանալով՝ նա դեռ ամբողջ օրը ման էր գալիս իր գյուղի փողոցներում, աչք էր ածում կամուրջիկների տակը, առուների վրայի գերանների տակը և ամեն բան որ ձեռքն էր ընկնում՝ հին կոշկատակ, կնկա ջնջոց, երկաթե մեխ, խեցու կտոր, բոլորը կրում էր տուն և դարսում այն կույտի վրա, որ Ջիլիկովը նկատել էր սենյակի անկյունում։ «Հրեն ձկնորսը գնաց որսի»,— ասում էին մուժիկները, երբ տեսնում էին նրան գնալիս՝ մի բան ձեռքը գցելու եվ իրոք՝ նրանից հետո կարիք չկար փողոցն ավլելու. պատահեց, որ ձիով անցնող սպան կորցրեց խթանը. խթանը ձեռաց կտեղափոխվեր հայտնի տեղը. եթե մի կնիկմարդ պատահեր, որ ուշքը վրան չպահեր և ջրի դույլը մոռանար ջրհորի մոտ, նա թոցնում էր նաև ջրի դույլը։ Ասենք՝ եթե այդ բանը նկատած մուժիկը նրան տեղն ու տեղը մերկացնում էր, նա չէր վիճում և վերադարձնում էր հափշտակած իրը. բայց եթե այդ իրը ընկնում էր տեղը՝ այն ժամանակ ամեն բան կորած-պրծած էր. նա երդվում էր, որ դա իրենն է, և որը գնել է այսինչ ժամանակ, այսինչից կամ պապիցն է մնացել։ Իր սենյակում նա հատակից վերցնում էր ամեն բան, ինչ որ տեսնում էր. զմուռս, թղթի կտոր, փետուր, և այդ բոլորը դնում գրասեղանի կամ պատուհանի վրա։

Բայց չէ՞ որ կար ժամանակ, որ նա միայն խնայող տանտեր էր. ամուսնացած էր և ընտանիքի տեր, հարևանն էր գալիս նրա մոտ ճաշելու, լսելու և նրանից տնտեսություն և իմաստուն ժլատություն սովորելու։ Ամեն ինչ արագ էր հոսում և ամեն ինչ կատարվում էր չափված ընթացքով. բա-

նում էին ջրաղացները, թաղիքի արհեստանոցները, աշխատում էին մահուդի գործարանները, ատաղձագործական դազգահները, մանարանները. ամենուրեք, ամեն բանի մեջ թափանցում էր տանտիրոջ սուր հայացքը և նա, ջանասեր սարդի նման, վազում էր հոգածու և ժրաջան իր տնտեսության ոստայնի բոլոր ծայրերը։ Շատ էլ ուժեղ զգացմունքներ չէին արտացոլում նրա դիմագծերը, սակայն աչքերում երևում էր խելք, փորձառությամբ և աշխարհի բանիմացությամբ էր թափանցված նրա խոսքը, և հյուրի համար հաճելի էր նրան լսել. սիրաշահ և լեզվանի տանտիրուհին հռչակված էր իբրև աղուհացով կին. դեմ էին դուրս գալիս երկու սիրունատես դուստրերը, երկուսն էլ խարտյաշ և վարդի նման թարմ. դուրս էր վազում որդին, խիստ աշխույժ մի երեխա և համբուրվում էր ամենքի հետ, քիչ ուշադրություն դարձնելով, թե դրա համար ուրախ է կամ ուրախ չէ հյուրը։ Տանը բոլոր պատուհանները բաց էին լինում, կիսահարկը բռնված էր լինում ֆրանսիացի ուսուցչի բնակարանով, որը փառավորապես ածիլվում էր և քաջ նշանածիգ էր. միշտ ճաշին մայրահավեր կամ բադեր էր բերում, իսկ երբեմն էլ միայն ճնճղուկի ձվեր, որոնցից նա իր համար ձվածեղ էր պատվիրում, որովհետև ամբողջ տանը ո՛չ ոք այդ չէր ուտում։ Կիսահարկում ապրում էր նաև նրա հայրենակցուհին, երկու աղջիկների դաստիարակչուհին։ Ինքը տանտերը ճաշի էր նստում սերթուկով, որ թեև մի փոքր մաշված, բայց արմունկները կարգին էին. ո՛չ մի տեղ՝ ո՛չ մի կարկատան։ Սակայն բարի տանտիրուհին մեռավ. բանալիների և նրանց հետ միասին մանր հոգսերի մի մասը անցավ տանտիրոջը։ Պլյուշկինը ավելի անհանգիստ դարձավ և, ինչպես բոլոր այրիները՝ ավելի կասկածոտ և ավելի ժլատ։ Իր մեծ դստերը՝ Ալեքսանդրա Ստեպանովնային նա չէր կարող ամեն բանում վստահել և իրավացի էլ էր, որովհետև Ալեքսանդրա Ստեպանովնան շուտով փախավ աստված գիտե ո՛ր հեծելազորային գնդի շտաբս-ռոտմիստրի հետ և ձեռաց պսակվեց ինչ-որ մի տեղ, գյուղական եկեղեցում, գիտենալով, որ հայրը չի սիրում սպաներին՝ տարօրինակ նախապաշարմունքով, որ իբր թե բոլոր զինվորականները քրքրված են և գեխ։ Հայրը նրա ետևից անիծեց նրա ճանապարհը, բայց հետապնդելու հոգ չտարավ։ Տանը ավելի՛ դատարկ

կություն տիրեց։ Տանտիրոջ մեջ ավելի՛ նկատելի կերպով արտահայտվեց ժլատությունը, կոշտ մազերի մեջ փայլող սպիտակ ալիքները, դրա հավատարիմ ընկերուհին օգնեց, որ դա ավելի զարգանա. ֆրանսիացի ուսուցիչը արձակվեց, որովհետև որդու ծառայության ժամանակը հասավ. մադամը վռնդվեց, որովհետև հայտնի դարձավ, որ անմեղ չէ Ալեքսանդրա Ստեպանովնայի առևանգման մեջ. որդին ուղարկված լինելով նահանգական քաղաք, որպեսզի պետական ատյանում՝ հոր կարծիքով հիմնավոր պաշտոն ձեռք բերի, դրա փոխարեն տեղավորվեց գնդի մեջ և հորը գրեց արդեն տեղավորվելուց հետո, խնդրելով փող՝ համազգեստի համար. միանգամայն բնական է, որ նա դրա համար ստացավ այն, որ հասարակ ժողովուրդն ասում է. «ոտնե՛րս»։ Վերջապես վերջին աղջիկը, որ տանը մնաց նրա մոտ, մեռավ, և ծերունին մնաց մենակ՝ իբրև պահակ, իբրև պահպանող և իբրև տեր իր հարստություններին։ Միայնակ կյանքը առատ սնունդ տվեց ժլատությանը, որը, ինչպես հայտնի է, ունի գայլի ախորժակ և որքան շատ է լափում, այնքան ավելի է դառնում անհագ. մարդկային զգացմունքները, որոնք առանց այն էլ նրա մեջ խոր չէին, նվազում էին ամեն րոպե, և յուրաքանչյուր օր մի բան կորչում էր այդ մաշված ավերակի մեջ։ Հենց այդպես պիտի պատահեր այդ րոպեին, որ զինվորականների մասին նրա կարծիքը հակառակի պես հաստատվեր. նրա որդին խաղաթղթի մեջ տարվեց. նա նրան հոգու խորքից ուղարկեց իր հայրական անեծքը և արդեն երբեք չհետաքրքրվեց տեղեկանալու՝ գոյություն ունի՞ նա արդյոք աշխարհիս երեսին թե ոչ։ Տարեցտարի պատուհանները փակվում էին նրա տանը, վերջապես մնացին միայն երկուսը, որոնցից մեկը, ինչպես արդեն տեսավ ընթերցողը, թղթով էր ծածկված. տարեցտարի աչքից կորչում էին ավելի և ավելի նրա տնտեսության գլխավոր մասերը, և նրա կարճատես աչքին երևում էին փոքրիկ թղթերն ու փետուրիկները, որ նա հավաքում էր իր սենյակում. անզիջող էր դառնում նա գնորդների վերաբերմամբ, որոնք գալիս էին վերցնելու նրանից տնտեսության արտադրանքները. գնորդները սակարկում էին, սակարկում և վերջապես թողին նրան բոլորովին, ասելով, որ նա սատանա է և ո՛չ թե մարդ. խոտը և հացը փտում էին,

շեղջերն ու դեզերը դառնում էին ի՛սկ և իսկ աղբ, քեկուզ նրա վրա կաղամբ տնկիր, ալյուրը նկուղներում քար էր կտրում և հարկ էր լինում կոտրել այն, մահուդներին, կտավներին և տնային կտորեղեններին սարսափելի էր ձեռք տալը. նրանք փոշի էին դառնում։ Նա ինքը արդեն մոռանում էր, թե ինչի՛ց ո՛րքան ուներ և միայն հիշում էր, թե պահարանում ո՛ր տեղն էր դրած շիշը՝ ինչ-որ համեմուն խմիչքի մնացորդով, որի վրա նա նշան էր արել, որ ո՛չ ոք գողտուկ նրանից չխմի, հիշում էր նաև, թե որտե՛ղ է դրած փետուրը կամ զմուռսի կտորը։ Այնինչ՝ եկամուտը կալվածքում հավաքվում էր առաջվա պես. էլի նույնքան հողատուրք պետք է վճարեր մուժիկը, էլի նույնչափ ընկույզ էր պարտական բերելու ամեն մի կնիկ, նույնքան հաստոց կտավ պետք է գործեր ջուլհակուհին— այդ բոլորը լցվում էր ամբարները և բոլորը փտում ու ծակծկվում էր, և նա ինքը վերջապես դառնում էր պատուվածք՝ մարդկության վրա։ Ալեքսանդրա Ստեպանովնան ինչ-որ մի երկու անգամ եկավ իր փոքրիկ որդու հետ, փորձելով, թե կարո՞ղ է մի բան ստանալ. երևում էր թափառական կյանքը շտաբսոտմիստրի հետ այնքան էլ գրավիչ չէր, որքան թվում էր հարսանիքից առաջ։ Պլյուշկինը սակայն նրան ներեց և մինչև անգամ իր փոքրիկ քոռանը սեղանի վրա ընկած կոճակը տվեց խաղալու, բայց փող ոչինչ չտվեց։ Ուրիշ անգամ Ալեքսանդրա Ստեպանովնան երկու փոքրիկներով եկավ և նրան կուլիչ բերեց քեյի համար և նոր խալաթ, որովհետև հոր վրայի խալաթը այնպիսին էր, որին նայելը ո՛չ միայն արգահատելի էր, այլև անգամ՝ ամոթ։ Պլյուշկինը փայփայեց երկու քոռներին և նրանց նստեցնելով մեկին աջ ծնկանը, մյուսին ձախ՝ խաղացրեց նրանց հիշտ այնպես, որ կարծես նրանք ձի նստած լինեին, կուլիչն ու խալաթն առավ, բայց աղջկան բոլորովին ոչինչ չտվեց. Ալեքսանդրա Ստեպանովնան հենց այդպես էլ գնաց։

Եվ այսպես, ահա թե ինչպիսի՛ կալվածատեր էր կանգնած Չիչիկովի առաջ։ Պետք է ասել, որ այսպիսի երևույթ հազվադեպ է պատահում Ռուսիայում, ուր ամեն բան ավելի շատ սիրում է բացվել, քան կուչ գալ, և հենց նրանով էլ ապշեցուցիչ է լինում դա, որ հենց այդտեղ, հարևան տեղում կգտնվի մի կալվածատեր, որ քեֆ է անում ռուսական լիութ-

թյան լայնասրտությամբ և ձեռնբացությամբ, ինչպես ասում են՝ կայծերը հանում էր։ Անփորձ նետորդը զարմանքով կանգ է առնում՝ տեսնելով նրա կացարանը, տարակուսելով, թե այդ ի՞նչ մեծատոհմ իշխանազն է հայտնվել հանկարծ այս փոքրիկ, տգեղ տիրակալների մեջ. պալատների պես են նայում նրա սպիտակ, քարե տները՝ անթիվ ծխնելույզներով, բեկ-վեդերներով, հողմացույցներով, շրջապատված ֆլիգելների[1] նախիրով և ամեն տեսակ օթևաններով՝ նկվոր հյուրերի համար։ Ի՞նչ ասես չունի նա. թատրոններ, պարահանդեսներ, ամբողջ գիշերը փայլում է կրակներով և ճրագներով զարդարված, երաժշտության որոտով խլացած պարտեզը։ Նահանգի կեսը զուգված և ուրախ զբոսնում է ծառերի տակ, և ո՛չ ոք վայրենի և ահավոր չի գտնում այս բոնադատված լուսավորությունը, երբ թատերական շուքով ծառերի թավուտից կեղծ լույսով լուսավորված դուրս է ցցվում մի ճյուղ՝ զրկված իր պայծառ կանաչությունից, իսկ վերևում ավելի մթին և ավելի խստատեսք և քան անգամ ավելի ահավոր է երևում այդ լույսի միջով գիշերային երկինքը, և տերևները դողդողացնելով հեռու բարձունքում, կորչելով խոր, անղարթնելի խավարի մեջ՝ զայրանում են ծառերի դաժան կատարներն իրենց բները լուսավորող այս կեղծ փայլի վրա։

Արդեն մի քանի րոպե կանգնած էր Պլյուշկինը, առանց մի բառ ասելու, իսկ Չիչիկովը դեռ չկարողացավ խոսք բաց անել՝ տարված թե՛ տանտիրոջ տեսքով և թե՛ այն ամենով, ինչ որ նրա սենյակում կար։ Երկար ժամանակ չկարողացավ հնար գտնել, թե ի՛նչ խոսքերով բացատրել իր այցելության պատճառը։ Նա արդեն կամենում էր արտահայտվել այն մտքով, որ լսելով նրա առաքինության և նրա հոգու հազվագյուտ հատկությունների մասին, իր պարտքը համարեց անձամբ մատուցել նրան իր հարգանքի հավաստիքը, բայց իրեն զսպեց և զգաց, որ դա չափազանց էր։ Կողքից մի հայացք ևս նետելով այն բոլորի վրա, ինչ կար սենյակում, նա զգաց, որ առաքինություն բառը և հոգու հազվագյուտ հատկությունները կարելի է հաջողությամբ փոխարինել խնայողություն և կարդ բառերով. ուստի ե՞ր ճառը այդպես ձևափոխելով՝ նա ասաց, որ լսելով նրա խնայողության և կալվածները հազվագյուտ

[1] Ֆլիգել — հիմնական շենքի կողքին փոքրիկ կից շենք. կցաշենք։

կերպով կառավարելու մասին՝ նա պարտք համարեց ծանոթանալ և անձամբ մատուցել նրան իր հարգանքը։ Իհարկե կարելի էր ուրիշ ավելի լավ պատրվակ բերել, բայց այդ ժամանակ նրա միտքը ուրիշ բան չեկավ։

Այդ ասածի վրա Պլյուշկինը ինչ-որ բան փնթփնթաց շրթունքներով, որովհետև ատամներ չուներ, բայց թե ի՛նչ բան, հայտնի չէ, սակայն հավանորեն միտքն այս էր. «Գրողը տանի քեզ ու հարգանքդ էլ հետը»։ Բայց քանի որ հյուրասիրությունը մեզ մոտ այնպես է ընդունված, որ կծծին էլ անզոր է նրա օրենքներից դուրս գալ, ուստի և նա իսկույն տեղն ու տեղը ավելացրեց, մի փոքր ավելի պարզ. «Խոնարհաբար խնդրում եմ՝ նստեք»։

— Ես վաղուց է հյուրեր չեմ տեսնում,— ասաց նա,— և խոստովանանք լինի, նրանցից քիչ օգուտ եմ տեսնում։ Ամենաանվայել սովորություն են դարձրել իրար մոտ հյուր գնալ, իսկ տնտեսությունը երեսի վրա ընկած է... դեռ ե՛կ ու նրանց ձիերին էլ խոտով կերակրիր։ Ես վաղուց եմ արդեն ճաշել, իսկ խոհանոցս՝ ցածր և անպիտան, ծխնելույզն էլ բոլորովին թափվել է, վառես՝ հանկարծ հրդեհ կգցես։

«Ա՛յ թե բանը ինչպե՛ս է եղել»,— մտածեց ինքնիրեն Ջիչիկովը,— «լավ է, որ Սոբակևիչի մոտ վատրուշկայով ու մի կտոր ոչխարի կողով փորս պնդացրի»։

— Զզվելի դիպված է, որ ամբողջ տնտեսության մեջ մի փունջ խոտ էլ չկա,— շարունակեց Պլյուշկինը։— Ով իսկապես՝ ինչպե՞ս էլ տնտեսես խոտը. մի կտոր հող, մուժիկը ծույլ, աշխատել չի սիրում, մտածում է՝ ինչպե՞ս ոտը գցի գինետուն... մեկ էլ տեսար՝ օր ծերության՝ դռնեդուռ կընկնես հաց մուրալու։

— Ապա ինձ ասում էին,— համեստ դիտողություն արեց Ջիչիկովը,— որ դուք հազարից ավելի հոգիներ ունեք։

— Իսկ ո՞վ է այդ ասում։ Ա՛յ, մի թքեիք այդ ասողի երեսին։ Երևում է, որ կատակ անող մարդ է այդ ասողը, կամեցել է ձեզ հետ կատակ անել։ Ասում են, էլի՛, հազա՞ր մարդ, ապա մի գնա համարիր, ոչինչ չես գտնի։ Վերջին երեք տարին անիծած տենդը կոտորեց ու կոտորեց մուժիկներին։

— Ի՞նչ եք ասում, շա՞տ մեռան,— բացականչեց Ջիչիկովը կարեկցորեն։

— Այո, շատերին տարավ։

— Թույլ տվեք իմանալ՝ քանի՞ հոգի կլինեն։

— Ութսուն հոգի։

— Չէ՛։

— Հո չեմ խաբի, բարեկամ։

— Թույլ տվեք կրկին հարցնել. կարծեմ այդ հոգիները դուք հաշվում եք վերջին վերստուգումից սկսած։

— Էլի փառք է, որ այդպես լիներ,— ասաց Պլյուշկինը,— ցավն էլ հենց այն է, որ այդ ժամանակից սկսած մինչև հարյուր քսանի կհասնի։

— Ճշմարի՞տ, լրիվ հարյուր քսա՞ն,— բացականչեց Չիչիկովը և մինչև անգամ մի քիչ էլ զարմանքից բերանը բաց արեց։

— Ներացել եմ, բարեկամ, որպեսզի սուտ խոսեմ. յոթնեբդղդ տասնյակն եմ ապրում,— ասաց Պլյուշկինը։ Նա՝ երեվում էր, որ վիրավորվեց այդպիսի համարյա ուրախ բացականչությունից։ Չիչիկովը նկատեց, որ իսկապես անպատշաճ է այդպիսի անկարեկցություն գեպի ուրիշի վիշտը, ուստի և հենց տեղն ու տեղը հառաչեց և ասաց, որ ցավակցում է նրան։

— Է՛հ, ցավակցությունը գրպանդ հո չես դնի,— ասաց Պլյուշկինը։— Ահա իմ կողքին մի կապիտան է ապրում, սատանա՛ն գիտե որտեղի՛ց լույս ընկավ, ասում է՝ ազգականս է. քեռի, հա՛ քեռի. դեռ ձեռս էլ է համբուրում, իսկ երբ սկսում է ցավակցել՝ այնպիսի մի վայնասուն է գցում որ, ականջներդ փակիր։ Երեսը ողջ կարմրած. խմիչքի համար մեռած է։ Երևում է՝ սպայական ծառայության ժամանակ փողերը կերել է կամ թատրոնական դերասանուհին դուրս է քաշել, ահա հիմա էլ եկել՝ գլխիս ցավակցո՛ղ է դառել։

Չիչիկովը աշխատեց բացատրել, որ իր ցավակցությունը բոլորովին ուրիշ տեսակ է, քան կապիտանինը, որ նա ո՛չ գոտարկ խոսքերով, այլ գործով պատրաստ է ապացուցելու այդ և առանց գործը հետաձգելու, առանց պատեպատ բնկնելու հենց տեղն ու տեղը պատրաստակամություն հայտնեց իր վրա վերցնել վճարելու այն գյուղացիների հարկը, որոնք մեռել են այդպիսի գժբախտ պատճառներից։ Առաջարկությունը

ըստ երեւույթին բոլորովին ապշեցրեց Պլյուշկինին։ Նա ալքեր չռած՝ երկար նայում էր նրան և վերջապես հարցրեց.

— Դուք, բարեկամ, արդյոք զինվորական ծառայության մեջ եղե՞լ եք։

— Ոչ,— պատասխանեց Չիչիկովը բավականին խորամանկորեն,— քաղաքացիական պաշտոն եմ վարել։

— Քաղաքացիակա՞ն,— կրկնեց Պլյուշկինը և սկսեց շրթունքները լիլմորել, կարծես բան էր ուտում,— բայց ախր ինչպե՞ս. չէ՞ որ դա ձեզ վնաս է։

— Ձեր բավականության համար պատրաստ եմ վնաս էլ կրել։

— Ա՜խ, հոգի մարդ, ա՜խ, իմ բարեբարս,— բացականչեց Պլյուշկինը, ուրախությունից չկատելով, որ շատ անճոռնի կերպով քթից՝ թանձր սուրճի նման կախ ընկավ բռնոթին, և խալաթի փեշերը բացվելով երևցրին նրա հագուստը, որ այնքան էլ վայել չէր նայելու համար.— Այ քե մխիթարեցիք ծերուկիս. ա՜խ, ուեր աստված... ա՜խ, ուեր աստված...— Պլյուշկինը այլևս խոսել էլ չկարողացավ։ Բայց մի րոպե էլ չանցավ, և այդ ուրախությունը, որ այնպես վայրկենական երևացել էր նրա փայտե դեմքին, նույնպես վայրկենական էլ անցավ, կարծես բոլորովին էլ չէր եղել, և նրա դեմքը կրկին ընդունեց մտահոգ արտահայտություն։ Նա մինչև անգամ քաշկինակով քիթը սրբեց և քաշկինակը գունդ անելով սկսեց տանել-բերել վերին շրթունքի վրայով։

— Ինչպե՞ս ուրեմն, ձեր թույլտվությամբ, որպեսզի ձեզ չբարկացնեմ, ամեն տարի դուք հա՞նձն եք առնում նրանց համար հարկ վճարել, և փողերը ի՞նձ պիտի տաք, քե գանձարանին։

— Այ, մենք ինչպե՞ս կանենք. նրանց համար կայքագիր կկազմենք, իբրև քե նրանք կենդանի լինեն, և իբրև քե դուք նրանց ծախել եք ինձ։

— Այո՜, կայքագիր...— ասաց Պլյուշկինը, մտածմունքների մեջ ընկավ և սկսեց կրկին շրթունքներով լիլմորել,— բայց չէ՞ որ կայքագիրը դարձյալ ծախս է։ Շառայողները այնպիսի՜ անխիղճներն են։ Առաջներում մի հիսուն կոպեկ ան փողով և մի տոպրակ ալյուրով օձիքդ կազատեիր, իսկ հիմա մի ամբողջ սայլ ձավար ուղարկիր, դեռ մի կարմիր թղթա-

դրամ էլ հետը դիր. այնպիսի արծաթասիրություն էր: Չեմ հասկանում, թե ինչպե՛ս է, որ հոգևորականները սրա վրա ուշադրություն չեն դարձնում. մի որևէ խրատական խոսք կասեր: Ո՛վ ի՛նչ կուզի՝ ասի, աստծու խոսքի առաջ մարդ չի կարող դիմանալ:

«Ասենք՝ դու կդիմանաս»,— մտածեց ինքն իր մեջ Չիչիկովը և հենց իսկույն ևս բարձր ասաց, որ ի. հարըշանս նրա ինքը պատրաստ է անգամ կայքադրի ծախսերն էլ իր վրա վերցնել:

Լսելով, որ անգամ կայքադրի ծախսերն էլ է նա իր վրա վերցնում, Պլյուշկինը եզրակացրեց, որ հյուրը պետք է որ բոլորովին հիմար լինի և միայն ձևանում է, թե քաղաքացիական պաշտոն է վարել, իսկապես սպա է եղել և դերասանուհիների ետևից քաշ եկել: Սակայն, այսուամենայնիվ, նա չկարողացավ թաքցնել իր ուրախությունը և ամեն տեսակ մխիթարություն մաղթեց ո՛չ միայն նրա, այլև մինչև անգամ նրա զավակներին, չհարցնելով, թե ունի՞ նա զավակ թե ոչ: Մոտենալով պատուհանին՝ նա մատներով ծեծեց ապակին և կանչեց. «է՛, Պոռշկա»: Մի րոպեից հետո լսվեց, թե ինչպե՛ս մեկը շնչասպառ ներս վազեց հաշտը, երկար ժամանակ մլուլ էր տալիս և կոշիկներով թխկթխկացնում, վերջապես դուռը բացվեց և ներս մտավ Պոռշկան, մի տասներեք տարեկան տղա, այնպիսի մեծ կոշիկներով, որ քայլելիս քիչ էր մնում ոտները նրանց միջից դուրս գային: Թե ինչո՛ւ համար էին Պոռշկայի կոշիկները մեծ, այդ կարելի է հենց իսկույն իմանալ. Պլյուշկինը, որքան որ տաճը ծառաներ կային՝ բոլորի համար մի զույգ կոշիկ էր հատկացրել, որ պետք է գտնվեին միշտ հաշտում: Ով կանչվում էր պարոնի օթևանը, սովորաբար ամբողջ բակը տեղից տեղ ուռուցանելով անց էր կենում բոբիկ, բայց մտնելով հաշտ, հագնում էր կոշիկները և արդեն այդպես էր ներկայանում: Սենյակից դուրս գալիս էլ՝ նա կոշիկները թողնում էր հաշտում և դուրս էր գնում իր սեփական ներբաններով: Եթե մեկը աշուն ժամանակ պատուհանից նայեր, մանավանդ, երբ առավոտներն սկսում է եղյամ դնել, ապա կտեսներ, որ բոլոր ծառաները այնպիսի ցատկումներ են կատարում, որպիսին հազիվ թե կարողանա կատարել թատրոններում ամենաճարպիկ պարողը:

— Ապա՛ մի սրա ուխին մտիկ տվնք,— ասաց Պլյուշկինը Չիչիկովին՝ մատով Պոռշկայի դեմքը ցույց տալով,— հո հիմար է փայտի պես. բայց փորձի համար ապա մի բան դրեք, ձեռաց կթռցնի։ Չը՛, ինչո՞ւ եկար, հիմար, ասա՛, ինչո՞ւ։— Այստեղ նա մի փոքր լռեց, որին Պոռշկան պատասխանեց նույնպես լռությամբ։— «Ինքնաեռը գցի՛ր, լսո՞ւմ ես, ահա՛, ա՛ռ բանալին, տար տուր Մավրային, թող գնա մառանը, այնտեղ դարակում կուլիչի պաքսիմատ կա, Ալեքսանդրա Ստեպանովնայի բերածը,— թող թեյի հետ բերի... Սպասի՛ր, ո՞ւր ես քշում, հիմարի գլուխ, սատանա՞ է մտել ոտներդ քորում, դեռ ի՛նձ լսիր մի. կարելի է՝ պաքսիմատը երեսից փշացած լինի, թող դանակով քերի, միայն՝ փշրանքը դեն չածի, թող տանի հալանոց։ Ի՛նձ մտիկ, դո՛ւ, դո՛ւ, մի՛ մտնի, բարեկա՛մ, մառանը, թե չէ, գիտե՞ս թե ի՛նչ կանեմ քեզ, կեչու ցախավելով մի կշփեմ, որ համը իմանաս։ Հիմա, որ ախորժակդ փառավոր է, այն ժամանա՛կ ավելի լավ կլինի։ Ապա՛ մի փորձիր մառանը մտնել, հենց այդ ժամանակ ես պատուհանից մտիկ կտամ»։ Սրանց ոչ մի բան չպիտի հավատալ,— շարունակնց նա՝ դառնալով Չիչիկովին, երբ Պոռշկան արդեն քաշվեց գնաց իր կոշիկների հետ։ Դրանից հետո նա սկսեց Չիչիկովի վրա էլ կասկածանքով նայել։ Այդպիսի չտեսնված մեծահոգության նշանները նրան սկսեցին անհավատալի թվալ, և նա ինքնիրեն մտածեց,— սատանան գիտե, կարելի է սա պարծենկոտի մեկն է, ինչպես բոլոր շոայլողները, կփչի, կփչի, հենց միայն խոսելու համար, թեյն էլ կխմի ու վեր կկենա կգնա։ Ուստի և նախազգուշացման համար և հետո էլ կամենալով մի փոքր փորձել նրան, ասաց, որ վատ չէր լինի շուտով կայքագիրը կատարել, որովհետև մարդու վրա հույս դնել չի կարելի. այսօր կա, վաղը՝ աստված գիտե։

Չիչիկովը պատրաստակամություն հայտնեց թեկուզ հենց այդ րոպեին կատարել կայքագիրը և միայն պահանջեց բոլոր գյուղացիների ցուցակը։

Սա հանգստացրեց Պլյուշկինին։ Նկատելի էր, որ նա մտածում էր մի բան անել, և իսկապես, վերցնելով բանալիները, մոտեցավ պահարանին և դռնակը բանալով, երկար խառնըրտեց բաժակներն ու գավաթները և վերջապես խոսեց.— ահա

տե՛ս, չես կարողանում գտնել. հրաշալի լիկյոր ունեի, եթե միայն չեն խմել. գողեր են, հո ժողովուրդ չեն։ Ահա՛, մի՞թե սա չէ։— Ջիլիկովը տեսավ նրա ձեռքին մի շիշ, որ ամբողջովին փոշու մեջ կորել էր, ասես ֆուֆայկա հագած լիներ։— Դեռ ողորմածիկ կինս է պատրաստել,— շարունակեց Պլյուշկինը։— Անպիտան մառանապետուհին համարյա մոռացել էր այն, մինչև անգամ բերանն էլ չի խցել, անզգա՛մ։ Ի՛նչ մանր ու մժեղ ասես՝ լցվել էր մեջը, բայց ես բոլոր կեղտը հանեցի և հիմա տեսեք ինչքան մաքուր է. ես ձեզ համար մի ըմպանակ կլցնեմ։

Բայց Ջիլիկովը աշխատեց հրաժարվել այդպիսի լիկյորից՝ ասելով, որ նա արդեն և՛ կերել է, և՛ խմել։

— Արդեն կերե՛լ եք և խմե՛լ,— ասաց Պլյուշկինը։— Դե՛ իհարկե՛, լավ հասարակության մարդը որտե՛ղ ասես կճանաչվի. նա չի ուտի, բայց կուշտ է։ Իսկ այս գողերից մեկը որ լինի՝ որքան էլ կուզես՝ կերակրի՛ր նրան... Այ, հենց կապիտանը, մեկ էլ կգա, «քեռի,— կասի,— մի բան տվեք ուտեմ»։ Իսկ ես նրան այնքան քեռի եմ, որքան նա ինձ պապ։ Տանը ուտելու բան չունի, երևի, դրա համար էլ ընկնում է դեսուդեն։ Հա՛, ձեզ հարկավոր է այն բոլոր ձրիակերների ցուցակը։ Ինչպե՞ս չէ. ես նրանց ինչպես գիտեի, բոլոր նրանց անունները գրեցի առանձին թղթի վրա, որպեսզի հենց առաջիկա վերստուգման ժամանակ բոլորին չնչեն։

Պլյուշկինը ակնոցը դրեց և սկսեց թղթերը քրքրել։ Քանգելով ամեն տեսակի կապուկներ՝ նա իր հյուրին մեծարեց այնպիսի փոշիով, որ սա փռշտաց։ Վերջապես դուրս քաշեց մի թուղթ, ամբողջ երեսը գրոտած։ Դա ծածկված էր մժեղների նման մանր ու խիտ գրած գլուղացիների անուններով։ Այնտեղ կային ամեն տեսակ՝ է՛լ Պարամոնով, է՛լ Պիմոնով, է՛լ Պանտելեյմոնով, մինչև անգամ այնտեղից մտիկ տվեց ինչ-որ մի Գրիգորի Դոեզժայ-Նեդոեդեշ[1] էլ. բոլորը հարյուր քսանից ավելի կլիներ։ Ջիլիկովը ժպտաց այսպիսի մեծ թիվ տեսնելով։ Թուղթը գրպանը դնելով նա Պլյուշկինին հայտնեց, որ կայքագիրը կազմելու համար կարիք կլինի, որ նա գնա քաղաք։

— Քաղա՞ք։ Բայց ինչպե՞ս... Իսկ տունը՞մ թողնեմ։ Չէ՞

[1] *Չշիր՝ հասնես — չես հասնի։*

որ իմ մարդիկ կա՛մ գողեր են, կա՛մ սրիկաներ. մի օրում այնպես կարբեն, որ կաֆտան կախելու տեղ չի մնա։

— Իսկ որևէ ծանոթ մարդ չունե՞ք։

— Ախր ի՞նչ ծանոթ։ Բոլոր իմ ծանոթներս մեռել են կամ ծանոթությունը կտրել։ Հա՛, բարեկամս, ի՞նչ եմ ասում, ինչպե՞ս չունեմ, ունե՛մ,— բացականչեց նա։ Չէ՞ որ ինքը՝ նախագահը, ծանոթս է, առաջվա տարիներին մինչև անգամ մոտս էր գալիս, ինչպե՞ս չճանաչեմ. մի ամանից էինք ուտում, միասին էինք ցանկապատեր մագլցում, ինչպե՞ս ծանոթ չի. այնպիսի՛ ծանոթ է որ. չգրե՞մ նրան։

— Դե իհարկե, հենց նրան։

— Ինչպե՞ս չէ. այնպիսի՛ ծանոթ է, դպրոցում բարեկամներ էինք։

Եվ այդ փայտե դեմքի վրա սահեց ինչ-որ մի ջերմ ճառագայթ, արտահայտվեց ո՛չ թե զգացմունք, այլ զգացմունքի մի ինչ-որ գունատ արտացոլումն, մի երևույթ, նման ջրերի երեսին խեղդվողի անակնկալ հայտնվելուն, որ պատճառ է դառնում ափին խոնված ամբոխին արձակելու ուրախության աղաղակ։ Բայց իզուր են ուրախացած եղբայրներն ու քույրերը պարաններ նետում ափից և սպասում, թե արդյոք չի՞ երևա նորից մեջքը կամ պայքարելուց հոգնած ձեռքերը— վերջին երևալն էր։ Դատարկ է ջրի երեսը, և ավելի սարսափելի և ամայի է դառնում դրանից հետո տարերքի լռած մակերեսը։ Այդպես էր Գլյուշկինի դեմքը՝ մի պահ զգացմունքի մի նշույլ սահելուց հետո դարձավ ավելի՛ անզգա և ավելի՛ դեհերիկ։

— Սեղանի վրա քառորդ կտոր մաքուր թուղթ էր դրած,— ասաց նա,— չգիտեմ ո՛ւր կորավ, ծառաներս այնպիսի անպիտաննե՛րն են։— Այստեղ նա սկսեց որոնել թե՛ սեղանի տակին, թե՛ սեղանի վրա, ամեն տեղ քրքրեց և վերջապես գոռաց. «Մա՛վրա, ա՛յ Մավրա»։ Նրա ձայնին հայտնվեց մի կին՝ ձեռքին ափսե, որի վրա դրած էր պաքսիմատը, այն, որին ընթերցողը ծանոթ է։ Եվ նրանց մեջ տեղի ունեցավ այսպիսի խոսակցություն.

— Ի՞նչ ես արել թուղթը, գո՛ղ ավազակ։

— Ասուված վկա, պարոն, չեմ տեսել, մի՝ փոքր կտորիկ գաս, որով բարեհաճեցիք ըմպանակը ծածկել։

— Իսկ ես, ա՛յ, աչքերիցդ իմանում եմ, որ թոցրել ես։

— Ախր իմ ինչի՞ն է պետք, որ թոցնեմ։ Ես դրանից հո օգուտ չունեմ. ես գիր չեմ իմանում։

— Սուտ ես խոսում. ժամկոչին ես տարել. նա խազմզում է, դու էլ տարել տվել ես նրան։

— Ժամկոչը որ ուզենա՝ թուղթ կճարի իր համար։ Ձեր թղթի կտորին կարոտ չի։

— Դե լա՛վ, սպասիր. դատաստանի օրը սատանաները քեզ դրա համար կձաղկեն երկաթե ձողերով. ա՛յ, կտեսնես, թե ո՛նց կձաղկեն։

— Ախր թղթի կտորին որ ձեռ էլ չեմ տվել՝ ինչո՞ւ պիտի ձաղկեն։ Էլի ուրիշ տեսակ կնկա թուլություն ասես, հա՛, թե չէ, ո՛չ ոք ինձ ո՛չ մի բանում գող չի բռնել։

— Դե հիմա սատանաները քեզ հենց կձաղկեն, կասեն. «ա՛յ քեզ, անզգամ, նրա համար, որ պարոնիդ խաբեցիր». ու հենց տաք-տաք կձաղկեն։

— Իսկ ես էլ կասեմ. զուր տեղն է, աստված վկա, զուր տեղն է, չեմ վերցրել... Պա՛, հրե՛ն հա՝ սեղանի վրա ընկած է։ Մի գլուխ հենց անմեղ տեղը վրաս խոսում եք։

Պլյուշկինը, ճիշտ որ, տեսավ թղթի կտորը սեղանի վրա և մի րոպե կանգ առավ, շրթունքները լմլմորեց և ասաց.— լա՛վ, ի՞նչ լեզուդ շաղ տվիր այդպես, կովարարն ես, հա՛։ Սրան հենց մի խոսք ասա, մեկի տեղ, տասը պատասխան կտա։ Դե գնա կրակ բեր, նամակը դրոշմենք։ Բայց ո՛չ, սպասի՛ր, դու ճրագուի մոմը կվերցնես, ճրագուն հալվող բան է, կվառվի ու կվթջանա, վնաս է, դու գնա մարխը բեր։

Մավրան գնաց, իսկ Պլյուշկինը, նստելով բազկաթոռին և գրիչը վերցնելով, դեռ երկար ամեն կողմ շուռումուռ էր տալիս թղթի կտորը՝ մտածելով, թե արդյոք չի՞ կարելի նրանից բաժանել մի ութերորդ մասը ևս, բայց վերջապես համոզվեց, որ ո՛չ մի կերպ չի կարելի. գրիչը թաթախեց թանաքամանի մեջ, ինչ-որ բորբոսնած հեղուկով ու բազմաթիվ ճանճերով հատակը լիքը, և սկսեց գրել, դուրս բերելով այնպիսի տառեր, որ նման էին երաժշտական նշանների, ամեն վայրկյան զսպելով ամբողջ թղթի վրա ցնցվող ձեռքի արագ թափը, ժլատ կպցնելով տողը տողին և ո՛չ առանց ափսոսանքի մտածելով այն մասին, որ դեռ էլի շատ չգրված տեղ է մնում։

Եվ այս աստիճան ոչնչությա՞ն, մանրությա՞ն, գարշելիությա՞ն կարողացել է հասնել մարդը, կարողացել է փոխվե՞լ այսչափ։ Եվ նմա՞ն է սա ճշմարտության։ Ամե՛նը նման է ճշմարտության, ամե՛ն ինչ կարող է պատահել մարդուն։ Այսօրվա կրակոտ պատանին սարսափով ետ կդառնար, եթե նրան ցույց տային ի՛ր իսկ պատկերը ծերության ժամանակ։ Հետնե՛րդ վերցրեք քնքուշ պատանեկան հասակին անցնելիս դեպի դաժան այրական հասակը, հետնե՛րդ վերցրեք մարդկային բոլոր զգացումները, մի՛ թողեք դրանք ճանապարհին, չեք կարող վերցնել հետո։ Սպառնալի, սոսկալի է առաջիկայում սպասող ծերությունը, և ոչինչ չի տալիս ետ ու վերադարձ։ Գերեզմանը դժոխատ է նրանից. գերեզմանի վրա գրվում է. «Այստեղ մարդ է թաղված»։ Սակայն ոչինչ չես կարող կարդալ անմարդկային ծերության սառն, անզգա դեմքի վրա։

— Իսկ ձեր բարեկամներից այնպիսի՞ մեկին չե՞ք ճանաչում,— ասաց Պլյուշկինը՝ նամակը ծալելով,— որին հարկավոր լինեին փախստական հոգիներ։

— Իսկ ձեզ մոտ փախստական հոգիներ և՞ս կան,— հարցրեց Չիչիկովը սթափվելով։

— Բանն էլ հենց նրանումն է, որ կան։ Փեսաս տեղեկություններ հավաքեց, ասում է՝ հետքերն էլ կորել են, բայց նա ղինվորական մարդ է, վարպետ՝ խթաններ չխկչխկացնելու մեջ, իսկ թե դատարաններում գո՞րծ տեսնի...

— Իսկ թվով ինչքա՞ն կլինեն։

— Այսպես՝ մի յոթանասունի չափ էլ դրանք կլինեն։

— Չէ՛։

— Ասված է վկա, որ այդպես է։ Ախր տարի չի լինի, որ ինձանից մարդ չփախչի։ Խիստ որկրամոլ ժողովուրդ է, անգործությունից սովորություն է շինել տրաքվել, իսկ ես ինքս ուտելու բան չունեմ... Հիմա նրանց փոխարեն ինչ էլ տային՝ կվերցնեի։ Ապա խորհուրդ տվեք մի ձեր բարեկամին, ախր նրանցից մի տասը հոգի էլ որ գտնվի՝ արդեն նա ձեռին կարգին փող կունենա։ Չէ՞ որ վերստուգման ցուցակն ընկած մարդը մի հլնգ հարյուր ռուբլի արժի։

— «Ոչ, մենք ճույլ չենք տա, որ բարեկամը դրա հետն էլ առնի»,— ասաց Չիչիկովը ինքնիրեն և ապա բացատրեց, որ

այդպիսի բարեկամ բոլորովին չի ճարվի, որ այդ գործի հենց միայն ծախքերը ավելի կնստեն. քանի որ դատարաններից պետք է օձիքն ազատել ու փախչել հեռու։ բայց եթե որ նա արդեն իսկապես այդքան նեղության մեջ է, ուստի ինքը կարեկցությունից զրկված՝ պատրաստ է տալ... Բայց դա էլ այնպիսի չնչին բան է, որ դրա մասին մինչև անգամ խոսել չարժի։

— Իսկ դուք որքա՞ն կտայիք,— հարցրեց Պլյուշկինը և ինքը չհուզացավ, նրա ձեռքերը դողացին սնդիկի պես։

— Ես կտայի՝ հոգուն՝ քսանհինգ կոպեկ։

— Իսկ ինչպե՞ս եք գնում, կանխի՞կ դրամով։

— Այո, փողը հենց հիմա։

— Բայց իմ չքավորության համար գոնե մի քառասունական կոպեկ էլ է տայի՛ք։

— Մեծահարգո՛ տեր՛իմ,— ասաց Չիչիկովը,— ո՛չ միայն քառասունական կոպեկ, հինգ հարյուրական ռուբլի էլ կվճարեի հոգուն, հաճույքով կվճարեի, որովհետև տեսնում եմ, հարգելիս, բարի ծերունին նեղվում է սեփական բարեհոգության պատճառով։

— Է՛, աստված է վկա, որ ճշմարիտ էլ է,— ասաց Պլյուշկինը, գլուխը կախելով և մորմոքիչ կերպով շարժելով,— բոլորը բարեհոգության պատճառով։

— Ա՛յ, տեսնո՞ւմ եք, իսկույն հասկացա ձեր բնավորությունը։ Ինչո՞ւ իրոք՝ հոգուն հինգ հարյուրական ռուբլի չտայի, բայց... կարողություն չունեմ. հինգական կոպեկ, համեցե՛ք, պատրաստ եմ ավելացնել, որպեսզի յուրաքանչյուր հոգին այս ձևով նստի երեսուն կոպեկ։

— Լավ, սիրելի բարեկամ, ձեր կամքն է, գոնե երկուական կոպեկ էլ վրա եկեք։

— Երկուական կոպեկ վրա կգամ, համեցե՛ք։ Քանի՞ հոգի են ձեզ մոտ։ Դուք, կարծեմ, ասացիք՝ յոթանասուն։

— Ոչ։ Բոլորը միասին յոթանասուներեք հոգի կլինեն։

— Յոթանասուներեք, յոթանասունը, ամեն մի հոգին երեսուն կոպեկից՝ այդ քեզ կլինի...— այստեղ մեր հերոսը մի վայրկյան, ո՛չ ավելի, մտածեց և հանկարծ ասաց.— դա կլինի քսանչորս ռուբլի իննսունվեց կոպեկ,— նա թվաբանությունից ուժեղ էր։ Հենց այստեղ էլ նա Պլյուշկինին ստիպեց,

որ ստացականը գրի և փողերն էլ տվեց, որոնք սա ընդունեց երկու ձեռքով և տարավ արկղը դնելու այնպիսի զգուշությամբ, որ կարծես ինչ-որ մի հեղուկ էր տանում, ամեն վայրկյան վախենալով, որ կթափի։ Մոտենալով սեղանին, նա մի անգամ էլ տնտղեց փողերը և դրեց, նույնպես չափազանց զգույշ, արկղերից մեկի մեջ, ուր հավանորեն նրանց վիճակված էր թաղված լինել այնքան ժամանակ, մինչև հայր Կարպը և հայր Պոլիկարպը, նրա գյուղի երկու քահանաները, նրան կթաղեն աննկարագրելի ուրախացնելով փեսային և աղջկան, կարող է պատահել՝ անգամ նաև կապիտանին, որ իրեն նրան ազգական էր արձանագրել։ Փողերը թաքցնելուց հետո Պլյուշկինը նստեց բազկաթոռին և երևում էր, որ այլևս նյութ չէր գտնում խոսելու։

— Ի՞նչ, դուք արդեն պատրաստվում եք գնա՞լ,— ասաց նա՝ նկատելով այն փոքրիկ շարժումը, որ գործեց Չիչիկովը, միայն նրա համար, որ գրպանից թաշկինակը հանի։

Այդ հարցումը նրան հիշեցրեց, որ իսկապես կարիք չկար ավելի հապաղել։— Այո, ժամանակն է գնալու,— ասաց նա գլխարկը վերցնելով։

— Իսկ թե՞յը։

— Ո՛չ, թեյը արդեն ավելի լավ է՝ մնա մի ուրիշ անգամ։

— Ինչպե՞ս, ապա ես ինքնաեռ պատվիրեցի։ Ես, խոստովանանք լինի, թեյի հետ այնքան էլ գլուխ չունեմ, բանկ խմիչք է, շաքարի գինն էլ անխղճորեն բարձրացել է։ Ոռշկա, ինքնաեռը հարկավոր չի։ Պաքսիմատը տար Մավրային։ լսո՞ւմ ես. քող էլի առաջվա տեղը դնի. կամ թե ոչ, տո՛ւր ինձ, այստեղ, ես ինքս կտանեմ։ Գնաք բարո՛վ, սիրելիս, աստծո օրհնությունը ձեզ վրա լինի։ Իսկ նամակը դուք նախագահին տվեք։ Այո՛. քող կարդա, նա իմ հին ծանոթն է։ Ինչպե՞ս չէ, մի ամանից ենք կերել։

Այս խոսքերից հետո այդ տարօրինակ երևույթը, այդ կծկված ծերուկը բակի միջով ճանապարհ դրեց նրան, որից հետո հրամայեց դարպասը հենց իսկույն փակել, ապա մանկավարժանոցները, որ տեսնի, թե իրենց տեղերո՞ւմն են պահակները, որոնք կանգնած բոլոր անկյուններում՝ փայտե թրակներով թակում էին դատարկ տակառները՝ չուզենալ տախտակի փոխարեն։ Դրանից հետո նա մտավ խոհանոց,

ուր՝ ապա պատրվակով, որ իբր տեսնի, թե արդյոք ծառաները լա՞վ են ուտում, ինքը մի կուշտ շշի և կաշա կերավ և բոլորին մինչև վերջին մարդը նախատելով գողության և վատ վարքի համար՝ վերադարձավ իր սենյակը։ Մնալով մենակ՝ նա մինչև անգամ մտածեց այն մասին, թե ինչպե՞ս անի՝ մի շնորհակալ լինի հյուրին այդպիսի իսկապես որ անօրինակ մեծահոգության համար։ «Ես նրան կընծայեմ,— մտածեց նա ինքնիրեն,— գրպանի ժամացույց. ախր լավն է, արծաթ ժամացույց է, և ոչ թե որևէ ոսկեպղնձե կամ բրոնզե. մի փոքր փչացել է, բայց նա իրեն համար սարքել կտա. նա դեռ երիտասարդ մարդ է, ուրեմն և նրան պե՛տք է գրպանի ժամացույց, որպեսզի դուր գա իր հարսնացուին։ Կամ ո՛չ,— ավելացրեց նա մի փոքր մտածելուց հետո,— ավելի լավ է՝ թողնեմ մահիցս հետո, կտակ կանեմ իրենն, որ իմ մասին հիշի»։

Սակայն մեր հերոսը առանց ժամացույցի էլ հոգեկան ամենաուրախ տրամադրության մեջ էր։ Այդպիսի մի անսպասելի բան ձեռք բերելը մի իսկական նվեր էր։ Եվ իսկապես, ի՛նչ ուզում ես ասա, ո՛չ միայն մեռած հոգիներ, այլև դեռ փախստականներ, և բոլորը երկու հարյուրից ավելի մա՛րդ։ Անշուշտ, դեռ Պլյուշկինի գյուղին մոտենալիս նա արդեն նախազգում էր, որ ձեռք կբերի մի որոշ շահույթ, բայց այսպիսի օգտաբեր բան ոչ մի կերպ չէր սպասում։ Ամբողջ ճանապարհին նա արտասովոր կերպով ուրախ էր, սուլում էր, շրթունքներով մեղմ նվագում էր բռունցքը բերանին դեմ անելով, կարծես թե փող էր փչում, և վերջապես ձգեց մի եղանակ, ա՛յն աստիճան արտասովոր, որ ինքը Սելիֆանը լսեց, լսեց և ապա գլուխը թեթևակի շարժելով՝ ասաց. տեսնո՞ւմ ես ո՛նց է պարոնս երգում։ Արդեն երեկոյան թանձր աղջամուղջ էր, որ նրանք մոտեցան քաղաքին։ Ստվերը լույսի հետ միախառնվեց բոլորովին և թվում էր, թե առարկաներն իրենք ևս միախառնվեցին։ Խատուտիկ ուղեփակոցը ինչ-որ արտասովոր գույն էր ստացել. պահակ կանգնած զինվորի բեղերը թվում էին ճմկատի վրա և աչքերից ավելի բարձր, իսկ քիթ կարծես բոլորովին էլ չուներ։ Որոտն ու ցատկոտումները նկատել տվին, որ բրիչկան դուրս է եկել սալարկի վրա։ Լապտերները դեռ չէին վառվել, տեղ-տեղ նոր սկսել էին լուսավորվել տների պատուհանները, իսկ ներսափողոցներում և խուլ

փողոցներում տեղի էին ունենում տեսարաններ և զրույցներ, որ անխուսափելի են այդպիսի պահին բոլոր քաղաքներում, ուր կան շատ գինվորներ, կառապաններ, աշխատողներ և էակների մի առանձին ցեղ, այնպիսի տիկինների կերպարանքով, որ կարմիր շալով են ծածկվում և հագնում կոշիկներ առանց գուլպաների, որոնք չղջիկների պես դեսուդեն են ընկնում խաչփողոցներում։ Ջիչիկովը չէր նկատում նրանց և մինչև անգամ չնկատեց ձեռնափայտիկներ բանեցնող շատ բարակիկ աստիճանավորների, որոնք հավանորեն զբոսանք կատարելով քաղաքից դուրս՝ տուն էին վերադառնում։ Երբեմն նրա լսողության էին հասնում ինչ-որ, թվում էր, կանացի բացականչություններ. «Խաբում ես, հարբեցողի՛ մեկը, ես երբեք թույլ չեմ տվել նրան այդպիսի կոպտություն», կամ «Դու մի՛ կովիր, անտա՛շ, այլ գնա քաղաքամաս, ես այնտեղ քեզ կապացուցեմ...»։ Մի խոսքով՝ այն խոսքերը, որոնք հանկարծ եղջրի պես կշրփացնեն որևէ երազանքի մեջ ընկած քսանամյա պատանու վրա, երբ թատրոնից վերադառնալիս՝ գլուխը լցված է իսպանական փողոցով, գիշերով, կիթառ ածող գանգրահեր հրաշալի մի կնոջ կերպարանքով։ Ինչե՛ր չկան և ինչե՛ր չեն պատկերվում նրա գլխի մեջ. նա երկնքումն է և Շիլլերի մոտ է հյուր գնացել— և հանկարծ նրա գլխին որոտի պես թնդում են ճակատագրական խոսքերը և նա տեսնում է, որ կրկին իջել է երկիր, և անգամ Սեննա՛յա հրապարակում, և անգամ գինետան մոտ, և կրկին սկսե՛ց առօրյայի կարգով ճեմել նրա առջև կյանքը։

Վերջապես բրիչկան, մի բավականին մեծ ոստյուն գործելով, կարծես ընկավ փոսը՝ հյուրանոցի դարպասը, և Ջիչիկովին դիմավորեց Պետրուշկան, որը սակայն մի ձեռքով բռնել էր իր սերթուկի փեշը, որովհետև չէր սիրում, որ փեշերը բացվեն, իսկ մյուս ձեռքով սկսեց օգնել նրան բրիչկայից դուրս գալու։ Հյուրանոցի «պոլովոյը» ևս դուրս վազեց՝ մոմը ձեռքին և անձեռոցը ուսին։ Արդյոք Պետրուշկան ուրախացա՞վ, որ իր տերը եկավ, անհայտ է, համենայն դեպս Սելիֆանն ու նա իրար աչքով արին և նովորաբար նրա խոժոռ արտաքինը այս անգամ կարծես մի փոքր պարզվեց։

— Երկար ժամանակ հաճեցիք զբոսնել,— ասաց պոլովոյը լույս անելով սանդուղքի վրա։

— Այո՛,— ասաց Չիչիկովը՝ երբ ոտը դրեց սանդուղքի վրա.— հը՛, իսկ դո՞ւ։

— Փառք աստծո,— պատասխանեց պոլովոյը խոնարհվելով,— երեկ մի ինչ-որ պորուչիկ եկավ, զինվորական, տասնվեցերորդ համարը բռնեց։

— Պորուչի՞կ։

— Հայտնի չի ինչպիսի, Ռյազանից, ձիերն էլ՝ աշխեժ։

— Լա՛վ, լա՛վ, այսուհետև ևս քեզ լա՛վ պահի,— ասաց Չիչիկովը և մտավ իր սենյակը։ Անցնելով միջանցքը, նա քիթը ծռմռեց և Պետրուշկային ասաց. «Դոնե պատուհանը բաց անեիր»։

— Բաց արել եմ,— ասաց Պետրուշկան, բայց ստեց։ Ասենք՝ պարոնը ինքը ևս գիտեր, որ նա ստեց, բայց արդեն չէր ուզում ոչինչ առարկել։ Կատարած ուղևորությունից հետո նա խիստ հոգնածություն էր զգում։ Պահանջելով ամենաթեթև ընթրիք, որ բաղկացած էր միայն խոճկորից, նա հենց իսկույն հանվեց և վերմակի մեջ կոլոլվելով քնեց ուժեղ, պինդ, քնեց հրաշալի, ինչպես քնում են միայն այն բախտավորները, որոնք չգիտեն, թե ի՛նչ է ո՛չ հեմորոյը, ո՛չ լվերը, ո՛չ էլ լափազանց ուժեղ մտավոր կարողությունները։

ԳԼՈՒԽ VII

Երջանիկ է այն ճանապարհորդը, որը երկար, ձանձրալի ճանապարհից հետո՝ ճանապարհի ցրտերից, ցեխաջրերից, ցեխից, քնից չկշռադատած կայանի վերակացուներից, զանգուլակների զնգզնգոցներից, նորոգումներից, կովշտուքներից, կառապաններից, դարբիններից և ճանապարհի ամեն տեսակ սրիկաներից հետո վերջապես տեսնում է ծանոթ կտուրը՝ ընդառաջ վազող կրակներով, և նրան կդիմավորեն ծանոթ սենյակները, դեմ վազող մարդկանց ուրախ բացականչությունը, երեխաների աղմուկը և վազվզոցը և հանգստացուցիչ խաղաղ խոսքերը, ընդհատվող կրակոտ համբույրներով, որոնք իշխանություն ունեն ոչնչացնելու հիշողությունից ամեն տխուր բան։ Երջանիկ է ընտանիք ունեցող այն մարդը, որ նման անկյուն ունի, բայց վա՛յ ամուրիներին։

Երջանիկ է այն գրողը, որ ձանձրալի, գարշելի խարակտերներից հետո, որ ապշեցնում են իրենց տխուր իրականությամբ, մոտենում է այն խարակտերներին, որ կազմում են մարդու բարձր արժանիքը, այն գրողը, որ ամեն օր շուրջը պտտվող կերպարների մեծ հոթձանքից ընտրել է միայն քիչ բացառությունները, որը ո՛չ մի անգամ չի փոխել իր քնարի վսեմ լարվածքը, բարձունքից չի իջել դեպի իր խեղճ, չնչին եղբայրակիցները և չհավելով երկրին, ամբողջովին թաղվել է սրանից հետու գտնվող և մեծարված կերպարների մեջ։ Կրկնակի նախանձելի է նրա գեղեցիկ վիճակը. նա նրանց միջին այնպես է, ինչպես իր հարազատ ընտանիքում, և մինչդեռ հետուն և բարձր թնդում է նրա փառքը։ Նա արբեցուցիչ ծխանյութով ծխապատել է մարդկանց աչքերը. նա հրաշալիորեն շոյել է նրանց, ծածկելով կյանքի տխուր կողմը, ցույց տալով նրանց հրաշալի մարդուն։ Ամեն բան ծափահարելով սլանում է, քոած գնում է նրա հաղթական կառքի ետևից։ Համաշխարհային մեծ բանաստեղծ են անվանում նրան, ով բարձր սավառնում է աշխարհիս այլ հանճարների գլխի վրայով, ինչպես արծիվն է սավառնում այլ բարձրաթռիչների վրայով։ Նրա մի՝ անունը միայն արտասանելիս բրթիռով են լցվում մատաղ վառվռուն սրտերը, պատասխան արցունքներն են փայլում բոլոր աչքերի մեջ... Ջկա՛ նրան հավասար ուժ— նա աստվա՛ծ է։ Սակայն այդպես չի վիճակը և այլ է բախտը այն գրողի, որ խիզախում է դուրս կոչել այն ամենը, ինչ յուրաքանչյուր բոպե մարդկանց աչքերի առաջն է, և ինչ չեն տեսնում անտարբեր աչքերը, այն բոլոր ցնցող սարսափելի տիղմը չնչին բաների, որ խճճել են մեր կյանքը, բոլոր խորությունը, սառն, մանրացված, ամենօրյա խարակտերների, որոնք վխտում են աշխարհումս, որ հաճախ դառն և ձանձրալի մի ճանապարհը, որը մի գրող, իր անողոք հատիչի ուժով հանդգնում է ցուցադրել նրանց՝ ցցուն և վառ գույներով համաժողովրդյան աչքերի՛ն։ Նա չի արժանանա ժողովրդի ծափահարություններին, նա չի տեսնի շնորհակալ արցունքներ և հուզված հոգիների միահամուռ հիացմունքը. նրան ընդառաջ չի թռչի տասնվեցամյա աղջիկը՝ խելքապատառ և հերոսական հափշտակությամբ. նա մոռացության մեջ չի քնկնի ի՛ր խակ ստեղծած հնչյունների քաղցր հրապուրանքից.

վերջապես նա չի խուսափի ժամանակակից դատաստանից, կեղծավոր-անզգա ժամանակակից դատաստանից, որը չնչին ու ստոր կանվանի նրա փայփայած էակներին, նրան կհատկացնի արհամարհական մի անկյուն այն գրողների շարքում, որոնք անարգում են մարդկությունը, նրան կանվանի հենց նրա պատկերացրած հերոսների անունով, կվերցնի նրանից և՛ սիրտը, և՛ հոգին, և՛ տաղանդի աստվածային բոցը։ Որովհետև ժամանակակից դատաստանը չի ընդունում, որ հավասարապես հրաշալի են և՛ այն ապակիները, որ արևին են դիտում, և՛ այն, որ ցույց են տալիս աննկատելի մանրէների շարժումները, որովհետև ժամանակակից դատաստանը չի ընդունում, որ շատ է հարկավոր հոգեկան խորություն, որպեսզի կարելի լիներ լուսավորել անարգ կյանքից վերցրած պատկերը և բարձրացնել այն, դարձնել ստեղծագործության մարգարիտ, որովհետև չի ընդունում ժամանակակից դատաստանը, որ վեհ խանդավառ ծիծաղը արժանի է լինել վեհ լիրիկական զգացումների կողքին, և որ մի ամբողջ անդունդ կա նրա և բալագանային ծաղրածուի ծամածռությունների միջև։ Չի ընդունում սույն բանը ժամանակակից դատաստանը, և ամեն ինչ կդարձնի կշտամբանքի և նախատինքի առարկա՝ չճանաչված գրողի հանդեպ. անհաղորդակից, անպատասխան, անկարեկից, ինչպես անընտանիք ճանապարհորդ՝ նա մենակ կմնա ճանապարհի մեջտեղը։ Դաժան է նրա ասպարեզը և դառնորեն կզգա նա իր մենակությունը։

Եվ դեռ երկար ժամանակ սահմանված է ինձ հրաշալի մի տնօրինությամբ ձեռք-ձեռքի ընթանալ իմ օտարոտի հերոսների հետ, դիտել վիթխարի սլացող կյանքը, այն դիտել աշխարհի համար տեսանելի ծիծաղի և անտեսանելի, անհայտ արցունքների միջո՛վ։ Եվ հեռու է դեռ այն ժամանակը, երբ ոգևորության ահեղնազոր բուքը հորձանքով վեր կցայտի սրբաբազան սարսափով և շողարձակող գլխից, և երկյուղած թրթռիտով կզգան վեհապանծ որոտն այլ խոսքերի...

Ճանապա՛րհ, ճանապա՛րհ, հեռո՛ւ՝ ճակատին երևացող կնճիռ և դեմքի սևամած մռայլություն։ Մի թափով և արագ թաղվենք կյանքի մեջ՝ իր բոլոր անձայն ճարճատյուններով և զանգուլակներով և նայենք, թե ի՛նչ է անում Չիչիկովը։

Չիչիկովը արթնացավ, ձգեց ձեռքերն ու ոտները և զգաց,

որ քունը լավ առել է։ Մի երկու րոպե պառկելով մեջքի վրա՝ նա մատները չրթացրեց և փայլող դեմքով հիշեց, որ հիմա չորս հարյուրից քիչ պակաս հոգիներ ունի։ Այստեղ նա ցատկեց անկողնուց, անգամ նայեց իր դեմքին, որը նա անկեղծորեն սիրում էր և որի վրա, ինչպես երևում էր, ամենից գրավիչը համարում էր կզակը, որովհետև խիստ հաճախ էր նրանով պարծենում բարեկամներից որևէ մեկի մոտ, մանավանդ երբ այդ տեղի էր ունենում ածիլվելու ժամանակ։ «Ահա նայի՛ր,— ասում էր նա սովորաբար ձեռքով շոյելով այն,— ինչպիսի կզակ ունեմ ես. բոլորովին կլոր է»։ Սակայն այժմ նա չնայեց ո՛չ կզակին, ո՛չ դեմքին, այլ ուղղակի, ինչպես կար, հագավ բազմատեսակ գույնի կտրովի բանվածքով սեկե կոշիկները, որոնցով ճարպկորեն վաճառք է անում Տորժոկ քաղաքը՝ շնորհիվ ռուսական նատուրայի շփերթ թելադրանքի, և շոտլանդական ձևի միայն մի կարճ շապկով, մոռացած իր պատկառելիությունը և մյուսին տարիքի պատշաճավորությունը՝ սենյակի մեջ երկու ոստյուն գործեց, մեծ ճարպկությամբ շրպպացնելով իր ոտքի կրունկով։ Հետո նո՛ւյն իսկ րոպեին գործի անցավ. գլրոցի առջև ձեռքերն այնպես շփեց ուրախությամբ, ինչպես շփում է հետաքննության համար ճանապարհ ընկնող և նախաճաշիկին մոտեցող անկաշառ դեմստվոյական[1] դատարանը, և իսկույն ևեթ այնտեղից հանեց թղթերը։ Նա կամենում էր շուտով վերջացնել գործը՝ առանց երկարաձգելու։ Որոշեց ինքը շարադրել գնման կայքագրերը, գրել և արտագրել, որպեսզի գրագիրներին ոչինչ չվճարի։ Դրա ձևական կարգը նրան քաջ հայտնի էր. ժիր ու արագ, մեծ տառերով շարեց.— հազար ութ հարյուր այսինչ թվին, ապա դրանից հետո մանրատառ՝ կալվածատեր այսինչը, և ամենն ինչպես հարկն էր։ Երկու ժամում բոլորը պատրաստ էր։ Հետո, երբ նա աչքը գցեց այդ թերթիկներին, մուժիկների վրա, որոնք իրոք՝ երբեմն մուժիկներ էին եղել, աշխատել, հերկել, հարբել, կառապանություն արել, տերերին խաբել, կամ գուցե պարզապես լավ մուժիկներ եղել, ինչ-որ մի տարօրինակ՝ իրեն իսկ անհասկանալի զգացմունք տիրեց նրան։ Ցուրաքանչյուր գրություն կարծես ինչ-որ մի առանձին

[1] Զեմստվո — ցարական Ռուսաստանում տեղական ինքնավարության օրգան։

բնույթ ուներ և դրա միջոցով կարծես մուժիկներն իրենք ստա-
նում էին իրենց սեփական բնույթը։ Այն մուժիկները, որ
պատկանել էին Կոռորոչկային՝ համարյա բոլորը անուններին
պոչ ունեին ու մականուններ։ Պլյուշկինի գրությունը աչքի
էր ընկնում ոճի հակիրճությամբ. հաճախ դրված էին լինում
անունների և հայրանունների միայն առաջին տառերը և ապա՝
երկու կետ։ Սոբակևիչի ցուցակը զարմացնում էր անսովոր
լրիվությամբ և հանգամանայնությամբ. մուժիկի ո՛չ մի հատ-
կությունը բաց չէր թողած. մեկի մասին ասված էր՝ «լավ
ատաղձագործ է», մյուսին վերագրված էր՝ «բան հասկացող
է և խմիչք բերանը չի առնում»։ Հանգամանորեն նշված էր
անգամ, թե ո՛վ էր հայրը և ո՛վ՝ մայրը, և ի՛նչ վարքի էին
երկուսն էլ. միայն մի ինչ-որ Ֆեդոտովի համար գրված էր՝
«Հայրը հայտնի չէ, ո՛վ է, իսկ ծնված է տան սպասուհի Կապի-
տոլինայից, բայց լավ վարքի տեր է, գող չի»։ Սույն բոլոր ման-
րամասնությունները թարմության ինչ-որ հատուկ տեսք էին
հաղորդում. թվում էր, իբրև թե մուժիկները դեռ երեկ կեն-
դանի էին։ Երկար ժամանակ նրանց անուններին նայելով՝ նա
զգացվեց և հառաչելով ասաց.— «Բարեկամնե՛րս, քանի՞սդ
եք ձեզանից այստեղ խցկված. ի՞նչ էիք անում, սիրելիք, ձեր
ապրած ժամանակ, ինչպե՞ս էիք գլուխ հանում»։— Եվ նրա
աչքերը ակամա կանգ առան մի ազգանվան վրա. դա Հայտնի
Գյուտր Սավելև Նեուվաժայ-Կառիտոն էր, որ մի ժամանակ
պատկանում էր կալվածատիրուհի Կոռորոչկային։ Նա դար-
ձյալ չդիմացավ, որ չասեր.— «Է՛խ, ի՛նչ երկար է, ամբողջ
տողը բռնել ես, արդյոք վարպե՞տ ես եղել, թե պարզապես
մուժիկ, և ինչպիսի՞ մահ է քեզ տարել. գիննետա՞ներ արդյոք,
թե՞ ճանապարհի մեջտեղումն է քնած ժամանակ վրայիդ
անցել անշնորհք սայլաշարը։ Պոռկա Ստեպան, հյուսն, օրի-
նակելի, խումից հեռու մարդ։ Ահա՝նա՛, Ստեպան Պոռկան,
ահա այն հսկան, որ պետք կգար գվարդիային։ Ո՛վ գիտե,
բոլոր նահանգները ման է եկել կացինը գոտկում և կոշիկները
ուսին, ուտելիս կլիներ մի գրոշի հաց և երկու գրոշի չորաց-
րած ձուկ, իսկ քսակում երևի տուն կտաներ ամեն անգամ մի
հարյուրական ռուբլի, բայց կարող է պատահել մի պետական[1]

[1] 100 ռուբլի։

Ես կարած կունենար քաթանե շալվարի մեջ կամ կճխտեր սա-
պոգի մեջ,— որտե՞ղ բռնեց քեզ մահը։ Մեծ վաստակ ձեռք
բերելու համար երևի բարձրացար եկեղեցու գմբեթի տակը,
կամ կարող է պատահել՝ հասար նաև խաչին և այնտեղի չե-
ղագերանից սայթաքելով, թրմփացիր գետնի վրա, և միայն
կողքիդ կանգնած մի որևէ քեռի Միխեյ, ծոծրակը քորելով,
ասել է. «Է՛խ, Վանյա, տես ի՛նչ եկավ գլուխդ». իսկ ինքը
պարանը մեջքին փաթաթելով՝ բարձրացավ, տեղդ բռնեց
Մաքսիմ Տելյատնիկով, կոշկակար։ Պա՜հ, կոշկակա՜ր, հար-
բած՝ ինչպես կոշկակար,— ասում է առածը։ Ճանաչում եմ
քեզ, ճանաչում, աղավնյակս. եթե ուզում ես, ամբողջ կյանքդ
պատմեմ. սովորել ես դու գերմանացու մոտ, որը ձեզ բոլո-
րիդ կերակրում էր միասին, մեջքներդ թակում էր փոկով՝ ան-
ճշտապահությա՛ն համար և փողոց դուրս գալ չէր թողնում
ստահակությունն անելու, և դու մի հրաշք էիր և ո՛չ քե կոշ-
կակար, և գերմանացին չէր իմանում ինչպե՛ս գովի քեզ՝ իր
կնոջ կամ կամրադի[1] հետ խոսելիս։ Իսկ ինչպե՛ս վերջացավ
քո արհեստ սովորելդ։ «Ա՛յ, հիմա ես ինձ համար մի փոքրիկ
տուն կսարքեմ,— ասացիր դու,— բայց ո՛չ գերմանացու պես,
որ կոպեկի համար հոգին է տալիս, այլ հանկարծ կհարբես-
տանամ»։ Եվ ահա տիրոջդ տալով կարգին տուրք, մի խա-
նութիկ ձեռ գցեցիր՝ գլխիդ հավաքելով պատվերների մի դեզ,
և սկսեցիր աշխատել։ Ճարեցիր որտեղի՛ց որ էր՝ երեք անգամ
էժան՝ փտած կաշի և, ամեն կոշիկի մեջ, ճիշտ է, վաստա-
կեցիր կրկնակի, բայց մի շաբաթ անց քո բոլոր կոշիկներդ
ճաքռտեցին և քեզ նախատեցին ամենաստոր կերպով։ Եվ
ահա քո խանութիկը դատարկվեց և դու ինքդ քեզ խմելուն
տվիր և փողոցներում փռվելով՝ ասացիր. «Չէ՛, վատ է աշ-
խարհքս. ռուս մարդը ապրուստ չունի, սաղ գերմանացիներն
են խանգարում»։ «Սա ի՞նչ մուժիկ է. Ելիզավետա Վորոբեյ[2]։
Պահ, ա՛յ քեզ խաթա. կնիկ է. սա՞ որտեղից մեջ ընկավ։ Սրի-
կա՜ Սոբակևիչ, այստեղ էլ խաբեց»։ Չիչիկովը ճիշտ էր. դա
իսկապես կնիկ էր։ Ինչպե՛ս էր նա խցկվել այնտեղ, հայտնի
չէր, բայց այնպես վարպետորեն էր գրած, որ հեռվից կարելի

1 Ընկեր։
2 Ձնեգուլ։

էր նրան մուժիկի տնղ ընդունել և մինչև անգամ անունը վերջանում էր Ъ տառով[1], այսինքն ոչ թե ելիզավետա, այլ ելիզավետ։ Սակայն նա այդ բանը չհարգեց և հենց տեղն ու տեղը ջնջեց։ «Գրիշոբի Դոեզժայ-Նեդոեդեշ։ Դո՞ւ ինչ տեսակ մարդ էիր։ Կառապանությա՞մբ էիր զբաղվում և ձեռք բերելով մի տրոյկա և թանձրալաթե կիբիտկա, հալիտյան հրաժարվեցիր տանից, հայրենի որջից և գնացիր վաճառականների հետ տոնավաճառներում քարշ գալու։ Արդյոք Հանապարհին տվիր հոգիդ աստծո՞ւն, թե՞ քնացրին քեզ հենց քո բարեկամներդ մի որևէ տուռզ և կարմրաթշիկ զինվորի կնկա պատճառով, կամ անտառի թափառաշրջիկի մինի աչքին դուր եկավ քո փոկավոր թաթպաններն ու կարճլիկ, բայց ուժեղ ձիերի հոյակը, կամ ինքդ՝ թախտի վրա պառկած, միտք արիր, միտք արիր ու էլ ո՛չ մի բան չհարցնելով՝ վեր կացար գնացիր դեպի գինետուն, հետո էլ շիփ-շիտակ սառցաճեղքն ընկար— ու դրանից դենը թե դրել ես, արի տար։ Էխ, ռուս ժողովուրդ. չի սիրում իր մահով մեռնել։ Իսկ դո՞ւք ի՛նչ եք, սիրելիք»,— շարունակեց նա՝ աչքերը պտտեցնելով Թղթի վրա՝ ուր նշված էին Պլյուշկինի փախած մարդիկ. «դուք թեև կենդանի եք մնացել դեռ, ձեզանից ի՞նչ օգուտ. նույնը ինչ որ մեռածներից, և տեսնես ո՛ւր են քշում ձեզ ձեր արագ ոտները։ Արդյոք վա՞տ էր ձեր բանը Պլյուշկինի մոտ, թե՞ պարզապես ձեռ քեֆի համար շրջում եք անտառներում և պլոկում ճանապարհորդներին։ Արդյոք բանտերո՞ւմն եք նստած, թե՞ ուրիշ տեղերի ձեռի տակին եք և հող եք հերկում։ Երևմիլ Կարյակինը, Նիկիտա Վոլոկիտա, նրա զավակ՝ Անտոն Վոլոկիտա— սրանք հո մականուններից էլ է երևում, որ լավ վաղողներ են։ Պոպով՝ տան սպասավոր, պետք է որ գիր իմացող լինի. դանակով կարծեմ մարդու չի դիպել, բայց մի լավ գողություն արավ պատվավոր կերպով։ Բայց մեկ էլ տեսար՝ ահա քեզ, անպաշպորտիդ, բռնեց կապիտան-ոստիկանը։ Դու կայտառ կանգնած ես առերեսման։ «Ո՞ւմ մարդն ես»,— ասում է կապիտան-ոստիկանը՝ կպցնելով քեզ այս լավ առիթին մի պինդ հայհոյանք։ «Այսինչ կալվածատիրոջ»,— պատասխանում ես

[1] Ъ տառը, որ գրվում էր կոշտ բաղաձայններից հետո, արտասանական նշան էր։

դու կայտառորեն։— «Ինչո՞ւ համար ես դու այստեղ»,— ասում է կապիտան-ոստիկանը։— «Արձակված եմ հողաուրքով»,— պատասխանում ես դու առանց դեմ առնելու։ «Ո՞ւր է քո պաշպորտը»։ «Տիրոջս, քաղքենի Պիմենովի մոտ»։ «Կանչեցեք Պիմենովին։ Դո՞ւ ես Պիմենովը»։ «Ես եմ Պիմենովը»։ «Սա տվե՞լ է քեզ իր պաշպորտը»։ «Ո՛չ, սա ինձ ո՛չ մի պաշպորտ չի տվել»։ «Ապա ինչո՞ւ ես խաբում,— ասում է կապիտան-ոստիկանը, հետն էլ կպցնելով մի որևէ պինդ հայհոյանք։ «Ճիշտ այդպես է,— պատասխանում ես դու կայտառորեն,— ես նրան չեմ տվել, քանի որ նա ուշ տուն եկավ, և ես պահ տվի Անտիպ Պրոխորովին, ժամկոչին»։ «Կանչեցեք ժամկոչին։ Սա քեզ պաշպորտ տվե՞լ է»։ «Ոչ, ես նրանից պաշպորտ չեմ ստացել»։ «Ապա ինչո՞ւ ես էլի խաբում»,— ասում է կապիտան-ոստիկանը՝ ամրացնելով խոսքը մի որևէ պինդ հայհոյանքով։ «Դե ո՞ւր է քո պաշպորտը»։ «Ինձ մոտ էր»,— ասում ես դու արագորեն,— «բայց կարող է պատահել, երևի, մի կերպով ճանապարհին վրայիցս վայր եմ գցել»։ «Իսկ գինվորական շինե՞լը»,— ասում է կապիտան-ոստիկանը՝ կրկին մեխելով քեզ վրադիր որևէ մի թունդ հայհոյանք,— «ինչո՞ւ համար ես թողրել քահանայի էլ սնդուկը՝ պղնձե փողերով»։ «Ամենևին ո՛չ»,— ասում ես՝ տեղից չշարժվելով.— «Գողությանմեջ դեռ ո՛չ մի ժամանակ ինձ չեն բռնել»։— «Իսկ ինչո՞ւ շինելը քեզ մոտ գտան».— «Չեմ կարող գիտենալ. երևի թե՝ մեկ ուրիշն է բերել դրել մոտս»։ «Ա՛յ դու սատանա, ա՛յ դու սատանա»,— ասում է կապիտան-ոստիկանը՝ գլուխը շարժելով և ձեռքերը մեջքին կանթելով։ «Ապա մի դրա ոտները կալանդներ դրեք և տարեք բանտ»։ «Համեցե՛ք, ես սիրով կգնամ»,— պատասխանում ես դու։ Եվ ահա, գրպանից հանելով ծխախոտի տուփը, դու հյուրասիրում ես բարեկամաբար ինչ-որ երկու հաշմանդամների, որոնք ոտներիդ կալանդներ են դնում, և հարցնում ես նրանց՝ արդյոք վաղո՞ւց է, որ նրանք պաշտոնաթող են և, ո՞ր պատերազմումն են եղել։ Եվ ահա ապրում ես քեզ համար բանտում, մինչև որ քո գործը դատարանում ընթացք ստանա։ Եվ դատարանը գրում է՝ տեղափոխել քեզ Ցարևոկոշայսկից այսինչ քաղաքի բանտը, իսկ այնտեղի դատարանն էլ գրում է՝ տեղափոխել քեզ ինչ-որ մի Վեսյեգոնսկ, և դու տեղափոխվում ես քեզ համար՝ բոլորից բանտ, և ասում

ես գնելով նոր օթևանդ. «Ո՛չ, ա՛յ, Վեսյեգոնսկի բանտը ավելի մաքուր կլինի. կուզես՝ վեզ խաղա այնտեղ. տեղ կա. ժողովուրդն էլ ավելի շատ է»։ «Աբակում Ֆիրո՛վ. ո՞նց է քո բանը, ախպերս. որտե՞ղ ես, ի՞նչ տեղերք ես քրև գալիս։ Ո՞վ է խմանում, բախտը գցեց քեզ Վոլգա, դու էլ սիրեցիր ազատ կյանքը, ընկար բուռլակների մեջ...»— Այստեղ Ջիլիկովը կանգ առավ և մի փոքր մտածմունքի մեջ ընկավ։ Ինչի՞ վրա մտածեց։ Արդյոք մտածեց Աբակում Ֆիրովի բախտի՞ վրա, թե՞ մտածեց, ինքնիրեն, հենց այնպես, ինչպես մտածում է ամեն մի ռուս մարդ, ի՛նչ տարիքի, աստիճանի և կարողության էլ որ լինի, երբ մտքովն անցնում է ազատ կյանքի անզուսպ թափը։ Եվ իսկապես, որտե՞ղ է այժմ Ֆիրովը. քեֆ է անում աղմկալի և ուրախ հացի նավամատույցում՝ պայմանավորվելով վաճառականների հետ։ Մաղիկներ ու ժապավեններ են կապած գլխարկին, ուրախանում է բուռլակների խումբը, հրաժեշտ տալով սիրուհիներին և իրենց կանանց՝ բարձրահասակ, գեղեցկակազմ, մանյակներով ու ժապավեններով զարդարված. շուրջպարե՛ր, երգե՛ր, եռում է ողջ հրապարակը, մինչդեռ բեռնակիրները աղաղակներով, հայհոյանքներով և բոթբոթելով, իրենց մեջքերին կեռով ամրացնելով ինը փութը, աղմուկով քափում են սիսեռն ու ցորենը խոր նավերի մեջ, շուռ են տալիս վարսակի և ձավարի պարկերը, և հեռվից երևում են ամբողջ հրապարակի վրա բուրգերը ռամբերի պես կիտած տոպրակների, վիթխարիորեն նայում է ողջ հացի զինանոցը, մինչև որ այդտեղից բոլորը կփոխադրվեն նավերը և իծաշարուկ կսուրա գարնան սառույցների հետ անվերջանալի նավատորմը։ Այնտեղ է, որ ահա աշխատանքի կկպչեք, բուռլակնե՛ր, և միահամուռ, ինչպես առաջ քեֆ էիք անում և գժվում՝ այստեղ գործի ու քրտինքի մեջ կթաղվեք՝ քաշ տալով փոկը և ձգելով Ռուսիայի նման մի անվերջանալի երգ։

«Էխե, խե՛, ժամը տասներկո՛ւան է,— ասաց վերջապես Ջիլիկովը՝ նայելով ժամացույցին։ Ե՞ս ի՛նչ այսպես քաղվեցի սրա մեջ։ Գոնե մի գործ աներ, քե չէ՝ անտեղի, ինձ համար մի դատարկ բան հնարեցի ու մտքի ետև ընկա։ Ա՛յ քե հիմարն եմ ես էլ, իսկապես։ Այս ասելով՝ նա փոխեց իր չոտլանդական կոստյումը՝ եվրոպականի, պինդ քաշեց չափրաս-

տղ լիքը փորի վրա, վրան օդեկոլոն ցանեց, վերցրեց տաք կարտուզը և թղթերը կոնատակին, գնաց քաղաքացիական ատյան՝ կայքագիրը կատարելու։ Նա շտապում էր ո՛չ այն պատճառով, որ վախենում էր ուշանալ, ուշանալուց նա չէր վախենում, քանի որ նախագահը ծանոթ մարդ էր և կարող էր աշխատանքի ժամանակը երկարացնել կամ արագացնել նրա ցանկությամբ, նմանվելով Հոմերոսի հին Զևսին, որ երկարացնում էր օրերը և ուղարկում էր արագ գիշերներ, երբ հարկավոր էր լինում դադարեցնել իրեն սիրելի հերոսների կռիվը կամ նրանց միջոց տալ, որ մինչև վերջը կռվեն, բայց ինքն իր մեջ ցանկություն էր զգում որքան կարելի է շուտ գործը վախճանին հասցնել. մինչև այդ ժամանակ ամեն բան նրան թվում էր անհանգիստ և անհարմար. ի՛նչ էլ որ լինի՝ այսպիսի միտք էր ծագում նրա մեջ, որ հոգիները ո՛չ բոլորովին իսկական էին, և նման դեպքերում այդպիսի բեռը միշտ հարկավոր է որքան կարելի է շուտ ուսերից վայր թափել։ Դեռ նոր դուրս էր եկել փողոց՝ մտածելով այս ամենի մասին և միաժամանակ ուսերին կրելով դարչնագույն մահուդով ծածկած արջի մորթին, երբ միջափողոցի հենց անկյունում նա դեմ դիպավ մի պարոնի՝ նույնպես արջի մորթով՝ դարչնագույն մահուդով ծածկած և ականջկալ ունեցող տաք կարտուզով։ Պարոնը բացականչեց. դա Մանիլովն էր։ Նրանք հենց տեղն ու տեղը գրկախառնվեցին և մի հինգ րոպե մնացին փողոցում այդ դիրքով։ Համբույրները երկուստեք այնքան ուժեղ էին, որ երկուսի էլ առջևի ատամները ամբողջ օրը համարյա ցավում էին։ Ուրախությունից Մանիլովի դեմքին մնացին միայն քիթն ու շրթունքները, աչքերը բոլորովին կորան։ Քառորդ ժամի չափ նա երկու ձեռքով բռնել էր Չիչիկովի ձեռը և որը տաքացրեց սարսափելի կերպով։ Ամենանուրբ և հաճելի դարձվածքներով նա պատմեց, թե ինչպե՛ս էր թուլում գալիս՝ պավել Իվանովիչին գրկելու. խոսքը ամփոփվեց այնպիսի հաճոյախոսությամբ, ինչպիսին թերևս միայն պատշաճ էր մի օրիորդի, որի հետ գնում են պարելու։ Չիչիկովը բացեց բերանը, դեռևս ինքն էլ չիմանալով, թե ինչպե՛ս շնորհակալ լինի, երբ Մանիլովը մուշտակի տակից հանեց մի թուղթ, որ ոլորված էր խողովակի պես և փաթաթած՝ վարդագույն ժապավենով։

— Դա՞ ի՛նչ բան է։

— Մուժիկները։

— Հա՛։— Նա տեղն ու տեղը բաց արեց թուղթը, ալքերը պտտեցրեց վրան և հիացավ ձեռագրի մաքրության և գեղեցկության վրա. «Հրաշալի է գրված»,— ասաց նա,— «հարկավոր չէ անգամ արտագրել։ Դեռ շուրջն էլ զարդագի՛ծ ունի. ո՞վ է այսպես վարպետորեն զարդագծել»։

— Էլ մի՛ հարցնեք,— ասաց Մանիլովը։

— Դո՞ւք։

— Կինս։

— Ախ, աստվա՛ծ իմ, ճշմարիտ՝ ամաչում եմ, որ այսքան նեղություն պատճառեցի։

— Պավել Իվանովիչի համար նեղություններ գոյություն չունեն։

Չիչիկովը գլուխը խոնարհեց երախտագիտորեն։ Իմանալով, որ նա գնում է ատյան՝ կայքագրումը կատարելու, Մանիլովը պատրաստակամություն հայտնեց ուղեկցել նրան։ Բարեկամները թև-թևի մտան և գնացին միասին։ Յուրաքանչյուր փոքրիկ բարձրության կամ թումբի կամ աստիճանի հանդիպելիս Մանիլովը բռնում էր Չիչիկովին, համարյա բարձրացնում էր ձեռքով և ասում էր հաճելիորեն ժպտալով, որ նա ո՛չ մի դեպքում թույլ չի տա, որ Պավել Իվանովիչի ոտիկները վնասվածք ստանան։ Չիչիկովը քաշվում էր՝ չիմանալով ինչպե՛ս շնորհակալություն հայտնի, որովհետև գիտեր, որ ինքը մի փոքր ծանրամարմին է։ Փոխադարձ՝ հաճոյակատարություններով նրանք հասան վերջապես այն հրապարակը, ուր գտնվում էին պաշտոնատները. մեծ երեքհարկանի քարաշեն մի տուն, ամբողջովին կավիճի նման սպիտակ, հավանորեն նրա համար, որ արտահայտի նրա մեջ գտնվող պաշտոնյաների հոգիների մաքրությունը. մնացյալ շենքերը հրապարակում իրենց մեծությամբ չէին համապատասխանում քարաշեն տանը։ Դրանք էին՝ պահականոցը, որի մոտ կանգնած էր հրացանավոր զինվորը, երկու-երեք կառապանական բորսաներ, և վերջապես երկար ցանկապատեր, հայտնի ցանկապատային գրություններով և նկարներով՝ ածուխով և կավիճով խզբզած. ուրիշ ոչինչ չէր գտնվում սույն մեկուսացված կամ ինչպես մեզանում արտահայտվում են՝ գեղեցիկ հրապարա-

կում։ Երկրորդ և երրորդ հարկերի պատուհաններից դուրս էին ցցվում Ֆեմիդայի[1] քուրմերի անկաշառ գլուխները և նույն վայրկյանին էլ թաքնվում էին, հավանաբար այդ պահին պետը ներս էր մտնում։ Բարեկամները չբարձրացան, այլ վեր վազեցին սանդուղքի աստիճաններով, որովհետև Ջիչիկովը չանալով խուսափել, որ Մանիլովը բռնի նրա թևը՝ արագացնում էր քայլերը, Մանիլովն էլ իր կողմից էր թռչում առաջ, չանալով թույլ չտալ Ջիչիկովին հոգնել, ուստի և երկուսն էլ շատ խիստ շնչասպառ եղան, երբ ոտ դրին մութ միջանցքը։ Ո՛չ միջանցքներում, ո՛չ սենյակներում նրանց հայացքները չապշեցին մաքրությունից։ Այն ժամանակ դրանով չէին հետաքրքրվում, և մի բան, որ կեղտոտ էր, այդպես կեղտոտ էլ մնում էր՝ չընդունելով գրավիչ արտաքին։ Ֆեմիդան պարզապես ինչպես կա, նեգլիժե[2] և խալաթով էր ընդունում հյուրերին։ Թերևս պետք է նկարագրել դիվանատան սենյակները, որոնցով անցան մեր հերոսները, սակայն հեղինակը ուժեղ ակնածանք է տածում դեպի բոլոր պաշտոնական վայրերը։ Թեև պատահել էլ է նրան անցնել դրանց միջով, անգամ փառահեղ և ազնվացրած տեսքով լաքած հատակներով և սեղաններով, նա ջանացել է, որքան կարելի է՝ շուտ վազել անցնել, հեզաբար աչքերը խոնարհելով և գետին գցելով, ուստի և բոլորովին չգիտե, թե ինչպե՛ս է ամեն ինչ այնտեղ բարօրություն վայելում և ծաղկում։ Մեր հերոսները տեսան շատ քրղթեր թե՛ սևագիր և թե՛ սրբագիր, խոնարհված գլուխներ, լայն ծոծրակներ, ֆրակներ, նահանգական տարազի սերթուկներ և անգամ պարզապես ինչ-որ բաց մոխրագույն մի բաճկոնակ, որ աչք ծակելու չափ տարբերվում էր մյուսներից, որ գլուխը մի կողմի վրա ծռած և դնելով համարյա թղթի վրա՝ ժրությամբ և խոշոր-խոշոր արտագրում էր ինչ-որ մի արձանագրություն՝ հողը խլելու կամ կայքի վերգրման մասին, գրաված որևէ խաղազ կալվածատիրոջ կողմից, որը հանգիստ ապրում էր՝ իր կյանքը դատի տակ, երեխաներ ու թոռներ է ունենում նրա հովանու տակ,՝ և ընդհատ-ընդհատ լսվում էին հակիրճ խոսքեր, որ արտասանվում էին խռպոտ ձայնով.

---

1 Արդարադատության աստվածուհի՝ հին հույների մոտ։

2 Անփույթ վիճակում, կիսահագնված։

«Շնորհ արեք, Տեղոսեյ Տեղոսեևիչ, այն գործը՝ համար 368-ը. «դուք միշտ մի որևէ տեղ եք տանում ու կորցնում պետական թանաքամանի խցանը»։ Երբեմն մի ձայն, ավելի վեհապանծ, անկասկած պետերից մեկինը՝ լսվում էր հրամայաբար. «Ա՛ռ, արտագրի՛ր, ապա քե ոչ՝ կհանեն կոշիկներդ և կնստես դու վե՛ց օր առանց ուտելու[1]։ Գրիչների աղմուկը մեծ էր և նմանվում էր այն բանին, կարծես մի քանի ասլլեր ցախ բարձած անցնում էին անտառով՝ լցված քաոտրդ արշին չորացած տերևներով։

Ջիլիկովն ու Մանիլովը մոտեցան առաջին սեղանին, որի մոտ նստած էին երկու պաշտոնյաներ՝ դեռ չահել հասակի, և հարցրին. «Ո՛ւմ տվեք իմանալ, որտե՞ղ են այստեղ կայքագրերի գործերը վարում»։

— Իսկ ձեզ ի՞նչ է հարկավոր,— ասացին երկու պաշտոնյաները դառնալով նրանց կողմը։

— Ես պետք է խնդիրք տամ։

— Իսկ դուք այդ ի՞նչ եք գնել։

— Ես կուզեի՝ առաջ իմանալ, քե որտե՞ղ է կայքագրերի սեղանը, այստե՞ղ քե ուրիշ տեղ։

— Բայց մի առաջ ասացեք, քե ի՛նչ եք գնել և ի՛նչ գնավ, այն ժամանակ մենք էլ ձեզ կասենք, քե որտե՛ղ, իսկ այդպես չի կարելի իմանալ։

Ջիլիկովը իսկույն տեսավ, որ պաշտոնյաները պարզապես հետաքրքրվող են, ինչպես բոլոր չահել պաշտոնյաները, և ուզում էին ավելի կշիռ և նշանակություն տալ իրենց և իրենց զբաղմունքներին։

— Լսեցե՛ք, բարեկամներս,— ասաց նա,— ես շատ լավ գիտեմ, որ բոլոր կայքագրերի գործերը, ի՛նչ գին էլ որ ունենան, գտնվում են մի տեղում, ուստի և խնդրում եմ ձեզ ցույց տալ այն սեղանը, իսկ եթե չգիտեք, քե ի՛նչ է արվում ձեզ մոտ, ապա մենք կհարցնենք ուրիշներին։— Պաշտոնյաները դրան ոչինչ չպատասխանեցին, միայն նրանցից մեկը մատը տենդց անելով անկյունը, որտեղ սեղանի մոտ նստել էր մի

---

1 Հին ժամանակ Ռուսաստանի պաշտոնատներում մանր պաշտոնյաներին պետք այսպես էր աշխատեցնում. վերցնում էր կոշիկները պահեստ, մինչև որ սա կատարեր գործը և ապա միայն կոշիկը առանալով գնար պաշտոնատեղը։

ծերուկ, որ ինչ-որ թղթերի վրա նշաններ էր անում։ Ջիլիկովն ու Մանիլովը սեղանների միջով անցան ուղիղ նրա մոտ։ Ծերուկը շատ ուշադիր պարապում էր։

— Թույլ տվեք իմանալ,— ասաց Ջիլիկովը խոնարհվելով,— այստե՞ղ են կայքագրերի գործերը։

Ծերուկը աչքերը բարձրացրեց և հատ-հատ արտասանեց.— այստեղ կայքագրերի գործեր չկան։

— Իսկ որտե՞ղ է։

— Դա կայքագրերի էքսպեդիցիայումն է։

— Իսկ որտե՞ղ է կայքագրերի էքսպեդիցիան։

— Դա Իվան Անտոնովիչի մոտն է։

— Իսկ որտե՞ղ է Իվան Անտոնովիչը։

Ծերուկը մատը տնկեց սենյակի մյուս անկյունը։ Ջիլիկովն ու Մանիլովը ուղղվեցին դեպի Իվան Անտոնովիչը։ Իվան Անտոնովիչը մի աչքը դեպի ետ դարձրեց և նրանց նայեց կողքանց, բայց նո՛ւյն իսկ վայրկյանին ավելի ուշադիր խորասուզվեց գրության մեջ։

— Թույլ տվեք իմանալ,— ասաց Ջիլիկովը խոնարհվելով,— այստե՞ղ է կայքագրերի սեղանը։

Իվան Անտոնովիչը իբրև թե լսեց և կատարելապես խորասուզվեց թղթերի մեջ, ոչինչ չպատասխանելով։ Իսկույն երևաց, որ դա խոհեմ տարիների մարդ է արդեն, և ոչ թե երիտասարդ շատախոս և թեթևսոլիկ։ Իվան Անտոնովիչը, թվում էր, արդեն քառասուն տարուց վաղուց անցել էր. նրա մազերը սև էին, խիտ. դեմքի բոլոր միջին մասը առաջ էր ցցվել և քթին դեմ առել, մի խոսքով՝ դա այն դեմքն էր, որ կենցաղում անվանում են կժանման մուրթ։

— Թույլ տվեք իմանալ, այստե՞ղ է կայքագրերի էքսպեդիցիան,— ասաց Ջիլիկովը։

— Այստեղ է,— ասաց Իվան Անտոնովիչը, շուռ տվեց իր կժանման մուրթը և անցավ կրկին գրելուն։

— Ահա թե ինչպիսին է իմ գործը. այս գավառի զանազան կալվածատերերից ես գյուղացիներ եմ գնել առանց հողի. կայքագիր կա, մնում է կատարել։

— Իսկ ծախողները այստե՞ղ են։

— Մի քանիսը այստեղ են, իսկ մյուսներից լիազորագիր ունեմ։

— Իսկ խնդիրքը բերե՞լ եք։

— Խնդիրքն էլ եմ բերել։ Ես կուզենայի... Ինձ հարկավոր է շտապել... արդյոք չէ՞ր կարելի, օրինակ, գործը այսօր վերջացնել։

— Այո՛, այսօ՛ր, այսօր չի կարելի,— ասաց Իվան Անտոնովիչը։— Դեռ պետք է տեղեկանքներ հավաքել, չկա՞ն արդյոք արգելումներ։

— Համենայն դեպս, ինչ դրան է վերաբերում, որպեսզի գործը արագացնենք, ապա Իվան Գրիգորևիչը՝ նախագահը, իմ մոտ բարեկամն է...

— Բայց չէ՞ որ Իվան Գրիգորևիչը մենակ չէ. լինում են և ուրիշներ,— ասաց խստորեն Իվան Անտոնովիչը։

Չիչիկովը հասկացավ այն խոչընդոտը, որ դրեց Իվան Անտոնովիչը և ասաց.— մյուսներն էլ մեզանից դժգոհ չեն մնա, ես ինքս ծառայել եմ, գործից հասկանում եմ...

— Գնացեք Իվան Գրիգորևիչի մոտ,— ասաց Իվան Անտոնովիչը մի փոքր ավելի շոյիչ ձայնով,— թող նա հրաման տա ում հարկավոր է, իսկ գործը մեզ վրա չի մնա։

Չիչիկովը գրպանից հանեց թուղթ փողը, դրեց Իվան Անտոնովիչի առջև, որը բոլորովին չնկատեց այդ և իսկույն գրքով ծածկեց։ Չիչիկովը այն է՝ ուզում էր ցույց տալ նրան այդ, սակայն Իվան Անտոնովիչը գլխի շարժումով հասկացրեց, որ հարկավոր չէ ցույց տալ։

— Ահա սա ձեզ կառաջնորդի ատյան,— ասաց Իվան Անտոնովիչը, գլխի շարժումով, և սրբագործողներից մեկը, հենց տեղն ու տեղը գտնվողներից, որ այնպիսի ջերմեռանդությամբ զոհեր էր բերում Ֆեմիդային, որ երկու թևքերն էլ պատռվել են արմունկներին և վաղուց այնտեղից դուրս է ճոթռել աստառը, որի համար էլ իր ժամանակին կոլեգիական ռեգիստրատորի կոչում ստացավ, ուղեկցեց մեր բարեկամներին, ինչպես երբեմն Վիրգիլիոսը ուղեկցեց Դանթեին[1], և տարավ նրանց ատյանի սենյակը, ուր դրած էր միայն մեկ լայն

---

[1] Իտալական մեծ բանաստեղծ Դանթեի (1265—1321) «Աստվածային կատակերգությունը» երկում դուրս է բերված հին հռոմեական մեծ բանաստեղծ Պուբլիոս Վիրգիլիոս Մարոնը (70—19 մ.թ.ա.), որն իբր ուղեկցում է Դանթեին դեպի անդրշիրիմյան աշխարհը։

բազկաթոռ և նրա մեջ սեղանի մոտ զեռցալոյի[1] և երկու հաստ գրքերի հետև նստած էր մենակ, նման արեգակի՝ նախագահը։ Այդտեղ նոր Վիրգիլիոսը այնպիսի երկյուղածություն զգաց, որ ոչ մի կերպ չհամարձակվեց ոտը այնտեղ դնել, և ետ շրջվեց՝ ցույց տալով մեջքը, որը խոիրի նման մաշված էր, մի տեղն էլ հավի փետուր կպած։ Մտնելով ատյանի դահլիճը՝ նրանք տեսան, որ նախագահը մենակ չէ, նրա մոտ նստած է Սոբակևիչը, որ բոլորովին ծածկված էր զեռցալոյի հետևը։ Հյուրերի գալուստը առաջ բերեց մի բացականչություն, կառավարական բազկաթոռը աղմուկով ետ մղվեց։ Սոբակևիչը նույնպես աթոռից վեր կացավ և տեսանելի դառավ ամեն կողմից իր երկար թևքերով։ Նախագահը Չիչիկովին ընդունեց իր գրկի մեջ, և ատյանի սենյակը արձագանքեց համբույրներին. հարցրին իրար առողջության մասին. դուրս եկավ, որ երկուսի էլ գոտկատեղը ցավում է, որ հենց իսկույն վերագրվեց նստակյաց կյանքին։ Նախագահը, ըստ երևույթին, Սոբակևիչի կողմից տեղեկացված էր գնման մասին, որովհետև սկսեց շնորհավորել, որ սկզբում մի փոքր շփոթեցրեց մեր հերոսին, մանավանդ, երբ սա նկատեց, որ թե՛ Սոբակևիչը և թե՛ Մանիլովը, երկու վաճառողները, որոնց հետ գործը գաղտնաբար էր կատարված, այժմ կանգնած էին միասին իրար դիմաց։ Սակայն նա շնորհակալություն հայտնեց նախագահին և տեղն ու տեղը դառնալով Սոբակևիչին՝ հարցրեց.

— Իսկ ձեր առողջությո՞ւնը ինչպե՛ս է։

— Փառք աստծո, չեմ գանգատվի,— ասաց Սոբակևիչը։ Եվ իրոք՝ գանգատվելու բան չկար. ավելի շուտ՝ երեսթը կարող էր մրսել և հազալ, քան այդ զարմանալիորեն կազմավորված կալվածատերը։

— Դե դուք միշտ էլ հայտնի եք եղել առողջությամբ,— ասաց նախագահը,— և ձեր հանգուցյալ հայրը նույնպես պնդակազմ մարդ էր։

— Այո, արջի վրա մենակ էր գնում,— պատասխանեց Սոբակևիչը։

---

[1] Զեռցալո— եռանկյուն պրիզմա, որի վրա փակցնում էին կառավարական հրամանագրերը։

— Սակայն ինձ թվում է,— ասաց նախագահը,— դուք ևս կտապալեիք արջին, եթե կամենայիք դուրս գալ նրա դեմ։

— Ո՛չ, չեմ տապալի,— պատասխանեց Սոբակևիչը,— հանգուցյալը ինձանից պնդակազմ էր,— և հոգոց հանելով շարունակեց,— ո՛չ, հիմա այն մարդիկ չեն, ահա թեկուզ և իմ կյանքը, ի՞նչ կյանք է, այնպես, իր համար...

— Ինչո՞վ ձեր կյանքը լավ չէ,— ասաց նախագահը։

— Լավ չէ՛, լավ չէ՛,— ասաց Սոբակևիչը՝ գլուխը թափ տալով։— Ա՛յ, դատեցեք, Իվան Գրիգորևիչ, հինգերորդ տասնյակն եմ ապրում, ո՛չ մի անգամ հիվանդ չեմ եղել. գոնե կոկորդս ցավեր, խոց կամ պալար դուրս գար վրաս... Ո՛չ, սա բարի նշան չի. երևի՝ ստիպված կլինեմ դրա համար պատասխան տալու։— Այստեղ Սոբակևիչը մելանխոլիայի մեջ ընկավ։

— «Սրա՜ն նայիր»,— միաժամանակ մտածեցին Չիչիկովը և նախագահը,— «ինչի՞ց է գանգատվում»։

— Ձեր անվամբ նամակ ունեմ,— ասաց Չիչիկովը՝ հանելով գրպանից Պլյուշկինի նամակը։

— Ումնի՞ց է,— ասաց նախագահը և, ծրարը պատռելով՝ բացականչեց։— Հա՛, Պլյուշկինից։ Նա դեռ մինչև հիմա իր գոյությունը քա՞շ է տալիս աշխարհում։ Ճակատագի՛ր, ախր ինչպիսի խելացի, հարուստ մարդ էր. իսկ հիմա...

— Շուն է,— ասաց Սոբակևիչը,— սրիկա՛, բոլոր մարդկանց սովից կոտորեց։

— Համեցե՛ք, համեցե՛ք,— ասաց նախագահը՝ նամակը կարդալուց հետո,— ես պատրաստ եմ հավատարմատար լինելու ծ՛րը եք կամենում կատարել կայքագիրը, հիմա՞ թե հետո։

— Հիմա,— ասաց Չիչիկովը,— ես մինչև անգամ պիտի խնդրեմ ձեզ, եթե կարելի է, այսօր. որովհետև վաղը ես կուզենայի քաղաքից հեռանալ. ես բերել եմ և՛ կայքագիրը, և՛ խնդիրքը։

— Այդ բոլորը շատ գեղեցիկ, սակայն ի՛նչպես կամենաք՝ մենք ձեզ այդպես վաղ բաց չենք թողնի։ Կայքագրերը այսօր կկատարվեն, իսկ դուք, այնուամենայնիվ, մեզ մոտ կմնաք։ Ահա ես այս բոպեիս հրամանը կտամ,— ասաց նա և բաց արեց դուռը դեպի դիվանատունը, որն ամբողջովին

լցված էր պաշտոնյաներով, որոնք նմանվում էին մեղրահացի մեջ ցրված ժրաջան մեղուների, եթե միայն կարելի է մեղրաճաշը նմանեցնել դիվանատան գործերին,— «Իվան Անտոնովիչը այստե՞ղ է»։

— Այստեղ է,— պատասխանեց մի ձայն ներսից։

— Կանչեցեք նրան այստեղ։

Արդեն ընթերցողներին հայտնի Իվան Անտոնովիչի կժամնման մառութը երևաց աստյանք դահլիճում և հարգալիր խոնարհության արեց։

— Ահա, վերցրե՛ք, Իվան Անտոնովիչ, նրանց այս բոլոր կայքագրերը...

— Եվ մի՛ մոռանաք, Իվան Գրիգորևիչ,— հարեց Սոբակևիչը,— վկաներ հարկավոր կլինեն, գոնե ամեն կողմից երկուական հոգի։ Հենց հիմա ուղարկեցեք դատախազի մոտ, նա պարապ մարդ է և հավանորեն նստած է տանը, նրա փոխարեն ամեն ինչ անում է հսկող պաշտոնյա Ջոլոտուխան՝ ամենաառաջին գուփիչը աշխարհում։ Բժշկական վարչության տեսուչը, նա նույնպես պարապ մարդ է և հավանորեն տանն է, եթե չի գնացել որևէ տեղ թուղթ խաղալու. և գեռ էլի շատերը կան մոտերքում, Տրուխաչևսկին, Բեգուշկինը, նրանք բոլորը զուր տեղը բեռ են դառած երկրին։

— Իսկապե՛ս, իսկապե՛ս,— ասաց նախագահը և իսկույն նրանց հետևից ուղարկեց դիվանատան մի ծառայողի։

— Դարձյալ խնդրում եմ ձեզ,— ասաց Չիչիկովը,— ուղարկեցեք կանչելու հավատարմատարին այն կալվածատիրուհու, որի հետ ես գործարք եմ կատարել՝ ավագերեց հայր Անտոնի որդուն. նա հենց ձեզ մոտ է ծառայում։

— Ինչպե՞ս չէ, կուղարկենք նաև նրա մոտ,— ասաց նախագահը,— ամեն բան կարվի, իսկ պաշտոնյաներին դուք ոչ ոքի ոչինչ մի՛ տաք, այդ մասին ես ձեզ խնդրում եմ։ Իմ բարեկամները չափազ է վճարեն։— Ասելով այս, նա տեղն ու տեղը ինչ-որ հրաման տվեց Իվան Անտոնովիչին, ինչպես երևաց՝ վերջինիս համար անդուրեկան։ Կայքագրերը ըստ երևույթին լավ ազդեցություն արին նախագահի վրա, մանավանդ երբ նա տեսավ, որ բոլոր գնումը գրեթե հասել էր հարյուր հազար ռուբլու։ Մի քանի րոպե նա նայեց Չիչիկովի աչքերին մեծ գոհունակության արտահայտությամբ և վեր-

ջապես ասաց,— ահա թե ինչպե՛ս։ Այսպես ահա, Պավել Իվանովիչ, այսպես ուրեմն, դուք ձեռք բերիք։

— Ձեռք բերի,— ասաց Չիչիկովը։

— Բարեբե՛ր գործ է, ճշմարիտ, բարեբեր գործ։

— Դե ես ինքս տեսնում եմ, որ ավելի բարեբեր գործի չէի կարող ձեռնարկած լինել։ Թեկուզ ի՛նչ էլ լինի՝ մարդուս նպատակը դեռ նախորոշված չէ, եթե նա վերջապես հաստատ ոտքով չի կանգնում ամուր հիմքի վրա, և ո՛չ թե երիտասարդական մի որևէ ազատամիտ բանդագուշանքի վրա։— Այստեղ Չիչիկովը միանգամայն տեղին կշտամբեց լիբերալիզմի համար բոլոր երիտասարդներին։ Սակայն զարմանալի բան, որ նրա խոսքերում ինչ-որ մի անհաստատ բան կար, կարծես նա հենց նույն տեղում ինքն իրեն ասաց.— էհե՛, բարեկամն, ստում ես և այն էլ՝ շատ։— Նա մինչև անգամ չնայեց Սոբակևիչին և Մանիլովին՝ վախենալով նրանց հայացքի մեջ որևէ բանի հանդիպելուց։ Սակայն նա զուր էր վախենում. Սոբակևիչի դեմքը չշարժվեց, իսկ Մանիլովը, Չիչիկովի խոսքից հմայված, գոհունակությունից միայն գլխով հավանության նշան արեց՝ խորասուզվելով մի այնպիսի վիճակի մեջ, որի մեջ գտնվում է երաժշտության սիրահարը, երբ երգչուհին գերազանցում է անգամ ջութակին և ծվում է այնպիսի մի նուրբ նոտա, որ թռչունի՛ էլ կոկորդի բանը չի։

— Է՛, ապա դուք չե՞ք ասում Իվան Գրիգորևիչին,— ձայն տվեց Սոբակևիչը,— թե իսկապես ինչ եք ձեռք բերել. իսկ դուք, Իվան Գրիգորևիչ, չեք հարցնում, թե նա ի՛նչ բան է ձեռք բերել։ Ի՛նչ. մարդիկ են, տեղովը ոսկի։ Ախր ես նրան ծախել եմ նաև կառագործ Միխեևին։

— Չէ՛, միթե Միխեևին է՞լ եք ծախել,— ասաց նախագահը։— Ես ճանաչում եմ կառագործ Միխեևին. հիանալի վարպետ է. նա իմ դրոժկան նորոգել է։ Միայն, սպասեցեք, ինչպե՞ս թե... Չէ՞ որ դուք ինձ ասում էիք, որ նա մեռել է...

— Ո՞վ, Միխեև՞ն է մեռել,— ասաց Սոբակևիչը ամենևին չշփոթվելով։— Այդ նրա եղբայրը մեռավ, իսկ նա կա ու մնում է, և առաջվանից էլ առողջ։ Այս օրերս նա այնպիսի մի բրիչկա սարքեց, որ Մոսկվայում էլ չի շինվի։ Նա, թե կուզես ճիշտը իմանալ, միայն թագավորի համար պետք է աշխատի։

— Այո, Միխեևը հմուտ վարպետ է,— ասաց նախագահը,— և ես զարմանում եմ դեռ, թե դուք ի՛նչպես կարողացաք նրանից բաժանվել։

— Դե իբրև թե միայն Միխեև՞ն է։ Ասյա հյուսն Պոռբկա Ստեպանը, աղյուսագործ Միլուշկինը, կոշկակար Տելյատնիկով Մաքսիմը, չէ՞ որ բոլորը գնացին, բոլորին ծախեցին։— Իսկ երբ նախագահը հարցրեց, թե ինչո՞ւ գնացին նրանք, լինելով տան համար այդքան անհրաժեշտ մարդիկ և վարպետներ, Սոբակևիչը ձեռքը թափ տալով պատասխանեց.— է՛հ, հենց այնպես, հիմարությունս բռնեց. արի՛, ասում եմ, ծախեմ, ու հիմարությունից ծախեցի։— Սրանից հետո նա գլուխը կախեց, այնպես, կարծես ինքն էլ զղջում էր այդ բանում, և ավելացրեց.— ահա տեսնեք, ալեհեր մարդ եմ, բայց մինչև հիմա խելքս գլուխս չեմ հավաքել։

— Բայց, թույլ տվեք, Պավել Իվանովիչ,— ասաց նախագահը,— ապա ինչպե՞ս եք դուք գյուղացիներ գնում առանց հողի. մի՞թե տեղահանելու կարգով։

— Տեղահանելու կարգով։

— Հա՞, տեղահանելու կարգով՝ դա ուրիշ բան է։ Իսկ ինչպիսի՞ տեղեր։

— Տեղերը... խերսոնի նահանգում։

— Օ՛, այնտեղ ընտիր հողեր են,— ասաց նախագահը և մեծ գովասանքով խոսեց այնտեղի խոտի բարձր աճման մասին։

— Իսկ հողերը բավարա՞ր քանակությամբ է։

— Բավարար. այնքան, որքան պետք է գնած գյուղացիների համար։

— Գե՞տ կա թե լիճ։

— Գետ։ Ասենք՝ լիճ էլ կա։— Այս ասելով Չիչիկովը ոչ դիտավորյալ նայեց Սոբակևիչին, ու թեև Սոբակևիչը առաջվա պես անշարժ էր, բայց նրան թվաց, թե կարծես նրա երեսին գրված էր.— համա թե ստում ես, հա՛. հազիվ թե գետ կա և լիճ, այդ հողն էլ հետը։

Մինչ շարունակվում էին խոսակցությունները, սկսեցին քիչ-քիչ հավաքվել վկաները. ընթերցողին հայտնի՝ աչքերը թարթող դատախազը, բժշկական վարչության տեսուչը, Տրու-

խաչեսկին, Բեգուշկինը և մյուսները, որոնք Սոբակևիչի ասածով զուր տեղը աշխարհին բեռ էին դարձել։ Նրանցից շատերը բոլորովին անծանոթ էին Չիչիկովին. պակասածների տեղը և ավելիները լրացվեցին հենց տեղում՝ դիվանատան պաշտոնյաներից։ Մեջ բերին նույնպես ո՛չ միայն ավագերեց հայր Կիրիլի որդուն, այլև իրեն՝ ավագերեցին։ Վկաներից յուրաքանչյուրը տեղավորեց իրեն իր բոլոր արժանիքներով և աստիճաններով, ո՛րը կլոր շրիֆտով, ո՛րը շեղակի տառերով, ո՛րը պարզապես գրեթե ոտները վեր, դնելով այնպիսի տառեր, որոնցից մինչև անգամ չի տեսնվել ռուսական այբուբենի մեջ։ Հայտնի Իվան Անտոնովիչը խիստ արագորեն գործը գլուխ բերեց. կայքագրերը գրված էին, նշված էին, գրանցված ուր հարկն էր, ընդունելով հանդերձ կես տոկոսայինները և տպագրելու համար «Վեդոմոստի»[1] մեջ, և Չիչիկովին մնաց վճարել շատ փոքր բան։ Նախագահն անգամ կարգադրեց նրանից վերցնել մաքսային փողերի կեսը միայն, իսկ մյուս կեսը հայտնի չէ, թե ի՛նչ կերպով՝ գցվեց ուրիշ ինչ-որ ֆնդրատուի հաշվին։

— Եվ այսպես,— ասաց նախագահը, երբ ամեն ինչ վերջացել էր,— այժմ մնում է միայն գնումը թղթել։

— Ես պատրաստ եմ,— ասաց Չիչիկովը,— ձեզանից է կախված միայն նշանակել ժամանակը։ Մեղք կլիներ իմ կողմից, եթե մի այսպիսի հաճելի հասարակության համար մի երկու-երեք շիշ ֆշշան բաց չաներ։

— Ո՛չ, դուք այնպես չհասկացաք. ֆշշանը մենք ինքներս կդնենք սեղանին,— ասաց նախագահը,— դա մեր պարտականությունն է, մեր պարտքը։ Դուք մեզ մոտ հյուր եք. մենք պետք է հյուրասիրենք։ Գիտե՞ք ինչ, պարոննե՛ր, բայց մինչ այդ՝ այ թե ի՛նչ կանենք մենք. գնա՛նք, բոլորս ինչպես ոլ կանք, ոստիկանապետի մոտ. նա հրաշագործ մարդ է. բավական է, որ նա ձկների շարքով կամ գինետան մոտով անցնելիս մի աչքով անի, գիտե՞ք թե մենք ինչպե՛ս կուտենք, գեթ այս առիթով մի վիստ էլ կխաղանք։

Այդպիսի առաջարկից ո՛չ ոք չէր կարող հրաժարվել։ Վկաները արդեն ձկների շարքի միայն անունը տալուց ախորժակ

---

1 Ցեղեկագիր։

զգացին. հենց իսկույն բոլորը խարտուղներն ու գդակները վերցրին, և ատյանը փակվեց։ Երբ անցնում էին դիվանատնով, Իվան Անտոնովիչը՝ ժամանման մուրքը, քաղաքավարի խոնարհվելով՝ Չիչիկովին կամաց ասաց.

— Գյուղացիներ գնեցիք հարյուր հաղարի, իսկ աշխատանքների համար մի սպիտակ տվիք։

— Ի՞նչ գյուղացիներ են որ,— պատասխանեց դրան նույնպես շշուկով Չիչիկովը,— դատարկագլուխ և չնչինագլուխ ժողովուրդ, կեսն էլ չարժի։— Իվան Անտոնովիչը հասկացավ, որ այցելուն պինդ բնավորության մարդ էր և ավելին չի տար։

— Իսկ Պլյուշկինից քանիսո՞վ գնեցիք հոգին,— շշնջաց նրա մյուս ականջին Սոբակևիչը։

— Իսկ Վորոբեյին ինչո՞ւ էիք մեջը մտցրել,— ասաց նրան ի պատասխան Չիչիկովը։

— Ի՞նչ Վորոբեյ,— ասաց Սոբակևիչը։

— Կնկան, Ելիզավետա Վորոբեյին, դեռ կոշտ նշան տալն էլ դրել էիք վերջում։

— Ո՛չ, ո՛չ մի Վորոբեյի ես մեջը չեմ մտցրել,— ասաց Սոբակևիչը և հեռացավ դեպի մյուս հյուրերը։

Հյուրերը վերջապես խմբով հասան ոստիկանապետի տունը։ Ոստիկանապետը իսկապես որ հրաշագործ էր, հենց որ իմացավ, թե ինչո՛ւմն էր բանը, հենց նույն րոպեին կանչեց թաղականին, որ ժիր տղա էր՝ լաքած բոտֆորտներով և թվում էր՝ ընդամենը երկու խոսք շշնջաց նրա ականջին ու հետն էլ ավելացրեց միայն՝ «հասկանո՞ւմ ես», արդեն մյուս սենյակում նույն ժամանակամիջոցին՝ ճանաո, թառափ, սալմոն, զուբխիներ, պանիրներ, ապխտած լեզուներ և բալըկներ. այդ բոլորը ձկների շարքի կողմից էր։ Հետո հայտնվեցին տան տիրոջ կողմից հավելվածներ՝ խոհանոցում պատրաստած պիրոգ՝ մեծաձկան գլխով, ուր լցված էր ինը փքանոց թառեխի կրճիկն ու այտերը, մի այլ պիրոգ պղպեղասունկերով, մսի, սոխի խմորեղեն, հալած յուղի մեջ թաթախած խմորիկներ, քաղցրավենիք։ Ոստիկանապետը որոշ չափով քաղաքի հայրն էր և բարերարը։ Նա քաղաքացիների մեջ բոլորովին այնպես էր, ինչպես հարազատ ընտանիքում, իսկ կրպակներն ու հյուրանոցները այցելում էր ինչպես իր սեփական մառանը։ Ընդ-

Հանրապես նա նստած էր, ինչպես ասում են, իր տեղում և իր պաշտոնին վերահասու էր կատարյալ կերպով։ Դժվար էր անգամ որոշել, թե արդյոք նա՞ էր ստեղծված տեղի համար, թե՞ տեղը նրա համար։ Գործը այնպես խելացի էր բռնած, որ նա երկու անգամ ավելի եկամուտ էր ստանում, քան իր նախորդները, բայց, այնուամենայնիվ, վայելում էր ամբողջ քաղաքի սերը։ Առաջնակարգ վաճառականները նրան շատ էին սիրում, հատկապես նրա համար, որ հպարտ չէր. և իսկապես, նա կնքում էր նրանց երեխաներին, քավոր-սանահայր էր դառնում նրանց հետ և թեպետ երբեմն նրանցից խիստ էր պոկում, բայց մի տեսակ չափազանց ճարպկորեն, և՛ մեջքին կթփթփացնի, և՛ կծիծաղի, և՛ թեյ կխմեցնի, խոստումներ կանի, որ ինքը կգա շաշկի խաղալու, հարցուփորձ կանի ամեն ինչի մասին. գործերը ի՛նչպես են, ի՛նչ կա, ինչ չկա։ Եթե կիմանա, որ երեխան որևէ կերպ հիվանդացել է՝ դեղ էլ խորհուրդ կտա, մի խոսքով՝ արժի՛ մարդը։ Դրժոկայով ման կգա, կարգ կհաստատի, և հետն էլ մի խոսք կասի սրան-նրան։— Հը՛, Միխեիչ, պետք է ես ու դու մի լավ գործակա խաղանք։— Այո, Ալեքսեյ Իվանովիչ,— պատասխանում էր սա՝ գլխարկը հանելով,— պետք է։— է՛, եղբայր Իլյա Պրոմոնիչ, ե՛կ մոտս վարգուն ձին տեսնելու. քոնից առաջ կընկնի, քոնն էլ դիր մրցարշավի. փորձենք։— Վաճառականը, որ խելքը տվել էր վարգուն ձիու, ժպտում էր դրա վրա մի առանձին, ինչպես ասում են, հաճույքով և մորուքը շոյելով ասում էր.— փորձենք, Ալեքսեյ Իվանովիչ։— Մինչև անգամ բոլոր գործակատարները սովորաբար այդ պահին գլխարկները հանած՝ բավականությամբ նայում էին իրար և կարծես ուզում էին ասել,— Ալեքսեյ Իվանովիչը լա՛վ մարդ է։— Մի խոսքով՝ նա հաչ-ղեցրել էր կատարյալ ժողովրդականություն ձեռք բերել, և վաճառականների կարծիքն այնպես էր, որ Ալեքսեյ Իվանովիչը «թեև կվերցնի, բայց դրա փոխարեն էլ քեզ ո՛չ մի կերպ չի գցի»։

Նկատելով, որ նախաճաշը պատրաստ է՝ ոստիկանապետը հյուրերին առաջարկեց վիստը վերջացնել ուտելուց հետո, և բոլորը գնացին այն սենյակը, որտեղից եկող հոտը վաղուց սկսել էր հաճելիորեն խտուտ ածել հյուրերի ռունգները, և ուր Սոբակևիչն արդեն վաղուց դռան կողմն էր նայում՝ հեռվից

նկատելով թառափը, որ մի կողմ դրած էր մեծ սկուտեղի վրա։ Հյուրերը խմելով մի-մի ըմպանակ օղի՝ մուգ, ձիթապտղի գույնի, որ ունենում են միայն Սիբիրի թափանցիկ քարերը, որոնցից Ռուսիայում կնիքներ են շինում, ամեն կողմից պատառաքաղներով մոտ գնացին սեղանին և սկսեցին հայտնաբերել՝ ինչպես ասում են՝ յուրաքանչյուրն իր խարակտերը և հակումները, վրա ընկնելով ո՛րը խավիարին, ո՛րը սալորին, ո՛րը պանրին։ Սոբակևիչը ուշադրությանչառնելով այդ բոլոր մանրուքները՝ տեղավորվեց թառափի մոտ և մինչև մյուսները խմում էին, խոսակցում և ուտում, նա քառորդ ժամից մի փոքր ավելի միջոցում՝ բոլորը մաքրազարդեց, այնպես որ, երբ ոստիկանապետը հենց այն է՝ հիշեց նրա մասին և ասելով՝ «Իսկ ինչպե՞ս, պարոններ, ձեզ կթվա ահա բնության այս արտադրանքը»՝ հենց այն է մյուսների հետ մոտենում էր նրան պատառաքաղով՝ տեսավ, որ բնության արտադրանքից միայն պոչն էր մնացել, իսկ Սոբակևիչը այնպես ձևացրեց, իբրև թե բնավ ինքը չի կերել և մոտենալով մի ափսեի, որը մյուսներից հեռու էր դրած՝ պատառաքաղով բզեց ինչ-որ մի չորացրած, փոքրիկ ձկան։ Մաքրազարդելով թառափը՝ Սոբակևիչը նստեց բազկաթոռին և այլևս չէր ուտում, չէր խմում, այլ միայն կկոցում ու ճպճպացնում էր աչքերը։ Ոստիկանապետը ըստ երևույթին չէր սիրում խնայել գինին. կենացները վերջ չունեին։ Առաջին կենացը խմվեց՝ ինչպես ընթերցողները կարող է պատահել որ իրենք գլխի ընկնեն՝ նոր խերսոնյան կալվածատիրոջ կենացը, ապա՝ նրա գյուղացիների բարեկեցության և նրանց բարեհաջող տեղափոխության համար, ապա՝ նրա ապագա գեղեցկուհի կնոջ առողջության համար, որ հաճելի մի ժպիտ կորզեց մեր հերոսի շրթունքներից։ Ամեն կողմից մոտեցան նրան և սկսեցին համոզիչ կերպով խնդրել, որ գոնե երկու շաբաթ մնա քաղաքում։— Ո՛չ, Պավել Իվանովիչ, ինչպես ուզում եք՝ մտածեցեք, սա նշանակում է ծիկ անել գնալ, մինչև շեմքը գալ ու ետ դառնալ, ոչ, դուք ժամանակ անցկացրեք մեզ հետ։ Մենք էլ ահա, ձեզ կամուսնացնենք. ճիշտ չէ՞, Իվան Գրիգորևիչ, կամուսնացնենք նրան։

— Կամուսնացնե՛նք, կամուսնացնե՛նք,— վրա բերեց նախագահը,— արդեն որքան կուզեք՝ չեմ ու չեմ արեք, մենք

ձեզ ամուսնացնում ենք։ Ո՛չ, սիրելիս, ընկել եք այստեղերքը՝ էլ գանգատ պետք չի։ Մենք կատակ անել չենք սիրում։

— Է՛, ի՞նչ կա, ինչո՞ւ չեմ ու չում անեմ,— ասաց Չիչիկովը ծիծաղելով,— ամուսնությունը դեռ այնպիսի բան չի, ասացեք՝ հարսնացու լինի։

— Հարսնացու էլ կլինի. ինչպե՞ս չի լինի, ամե՛ն բան, ամե՛նը, ինչ ուզում եք։

— Դե որ լինի...

— Բռավո՛, մնում է,— բացականչեցին բոլորը,— վիվա՛տ, ուռա՛, Պավել Իվանովիչ, ուռա՛։— Եվ բոլորը մոտեցան նրան բաժակները ձեռներին՝ խփելու։ Չիչիկովը բոլորի հետ բաժակ խփեց։— Ո՛չ, ո՛չ, կրկի՛ն,— ասում էին նրանք, որոնք ավելի տաքարյուն էին և կրկին բաժակները խփեցին, հետո վրա ընկան և երրորդ անգամ խփելու, խփեցին և երրորդ անգամ։ Շատ ժամանակ չանցավ և բոլորը արտասովոր կերպով ուրախ զգացին իրենց։ Նախագահը, որ շատ սիրելի մարդ էր՝ երբ ուրախություն էր անում, մի քանի անգամ գրկեց Չիչիկովին, սրտի զեղումով ասելով,— հոգյա՛կս, մայրի՛կս,— և անգամ մատները չրթացնելով՝ պարեց նրա շուրջը՝ հետը երգելով հայտնի երգը.— Ա՛խ, դու էապես էնպես, համարինցի մուժիկ։— Շամպայնից հետո բաց արին հունգարական գինին, որը ավելի շատ ոգեշնչեց և հյուրերի քեֆը բաց արեց։ Վիստի մասին բոլորովին մոռացան. վիճում էին, գոչում, խոսում ամեն բանի մասին, քաղաքականության մասին, անգամ զինվորական գործի մասին, արտահայտում էին ազատ մտքեր, որոնց համար ուրիշ ժամանակ ինքները կվտակեին իրենց երեխաներին։ Տեղն ու տեղը վճռեցին բազմաթիվ ամենադժվար խնդիրներ։ Չիչիկովը երբեք իրեն չէր զգացել այդպիսի ուրախ տրամադրության մեջ, երևակայում էր իրեն արդեն իսկական խերսոնյան կալվածատեր, խոսում էր ամեն տեսակ բարելավումների մասին՝ եռադաշտ տնտեսության, թախտավորության և երկու հոգու երջանկության մասին, և սկսեց Սոբակևիչի մոտ արտասանել Վերթերի չափածո ձոնը Շառլոտին[1], որի ընթացքում սա մեկայն աչքերն էր ճպճպաց-

[1] Վ. Գյոթեի (1749—1832) «Երիտասարդ Վերթերի տառապանքները» երկից։

նում բազկաթոռին նստած, որովհետև թառափը մեծապես քոմն էր բերում։ Չիլիկովը ինքն էլ գլխի ընկավ, որ արդեն չափազանց շատ բացվեց, ուստի և կառք խնդրեց և օգտվեց դատախազի դրոժկայով։ Դատախազի կառապանը՝ ինչպես ճանապարհին պարզվեց՝ փորձված մարդ էր, որովհետև ձիերին քշում էր միայն մի ձեռքով, իսկ մյուսը ետ տանելով՝ բռնել էր տիրոջը։ Այս կերպ արդեն դատախազի դրոժկայով նա հասավ հյուրանոց, ուր դեռ երկար ժամանակ բլբլացնում էր ամեն տեսակ հիմարություններ՝ խարտյաշ կարմրաթշիկ հարսնացու՝ աջ այտին փոսիկ, խերսոնյան գյուղեր, կապիտալներ։ Անգամ Սելիֆանին տրվեցին որոշ տնտեսության վերաբերող կարգադրություններ՝ հավաքել բոլոր նոր վերաբնակված մուժիկներին, որպեսզի բոլորին անձամբ անունանուն կանչի։ Սելիֆանը երկար ժամանակ լուռ լսում էր և ապա սենյակից դուրս գնաց՝ Պետրուշկային ասելով. գնա՛ տիրոջդ հանվեցրու։ Պետրուշկան անցավ նրա կոշիկները հանելու և քիչ մնաց՝ նրանց հետ միասին հատակին քարշ տար և իրեն՝ տիրոջը։ Բայց վերջապես կոշիկները դուրս եկան, պարոնը զգեստները հանեց ինչպես պետք էր և մի փոքր ժամանակ էլ շուռումուռ գալով անկողնում, որն անգթորեն ճռռճռռում էր, քնեց վճռականապես իբրև Խերսոնի կալվածատեր։ Մինչդեռ Պետրուշկան միջանցք հանեց շալվարը ու մուգ կարմիր պեծին տվող ֆրակը, որ փայտե կախարանի վրա չուած բաց անելով՝ սկսեց ճիպոտով և վրձինով քակել՝ փոշին լցնելով ամբողջ միջանցքը։ Պատրաստվելով արդեն վերցնել դրանք՝ նա պատշգամբից ներքև նայեց և տեսավ Սելիֆանին, որը վերադառնում էր ախոռից։ Նրանք հայացքներն իրար նետեցին և հոտառությամբ իրար հասկացան, քանի որ պարոնը վեր ընկավ քնեց, կարելի է մի որևէ տեղ մտնել։ Խնկույն սենյակ տանելով ֆրակը և շալվարը՝ Պետրուշկան ներքև իջավ, և երկուսը միասին գնացին՝ իրար ոչինչ չասելով ճանապարհորդության նպատակի մասին և ճանապարհին զվարճախոսելով կատարելապես կողմնակի բաների վրա։ Մի հետաքրքիր համերաշխություն իհարկե նրանք չկատարեցին. անց կացան միայն փողոցի մյուս կողմը, այն տունը, որ հյուրանոցի դիմացն էր և մտան մի ցածր, ապակեպատ, մրոտած դռնից ներս, որ տանում էր համաբյա նկուղը, ուր փայտե սե-

դանների շուրջը նստած էին ուրիշ շատերը՝ խուզած ու չխուզած մորուքներ, առանց երեսի տուլուպաներով, պարզապես շապկանց, իսկ ոմանք էլ կոպիտ բրդյա շինելով։ Թե ի՞նչ արին այնտեղ Պետրուշկան ու Սելիֆանը՝ աստված գիտե, բայց մի ժամից հետո այնտեղից դուրս եկան իրար ձեռք բռնած, պահպանելով կատարյալ լուռթյուն, մեկմեկու վրա մեծ ուշադրություն դարձնելով և փոխադարձաբար իրար զգուշացնելով ամեն տեսակ անկյուններից։ Ձեռք-ձեռքի, իրարից չպոկվելով, մի ամբողջ քառորդ ժամ նրանք բարձրանում էին սանդուղքները, վերջապես դա հաղթահարեցին ու հասան։ Պետրուշկան մի րոպե կանգ առավ իր ցածր մահճակալի առաջ, մտածեց՝ թե ինչպե՞ս քաղաքավարի ձևով պառկի և պառկեց լայնքի վրա, այնպես որ նրա ոտքերը հենվեցին հատակին։ Սելիֆանը ինքն էլ պառկեց միևնույն մահճակալի վրա՝ տեղավորելով գլուխը Պետրուշկայի փորին և մոռանալով այն մասին, որ հարկավոր էր քնել բոլորովին ո՛չ այստեղ, այլ թերևս ծառաների սենյակում, եթե ո՛չ ախոռում, ձիերի մոտ։ Երկուսն էլ հենց նույն րոպեին քնեցին՝ բարձրացնելով անհավատալի թանձրության մի խավիղ, որին պարոնը մյուս սենյակից պատասխանում էր նուրբ, ռնգային սուլոցով։ Շուտով նրանցից հետո ամեն ինչ խաղաղվեց, և հյուրանոցը պարուրվեց անզարթնելի քնով. միայն մի փոքրիկ պատուհանում դեռ լույս էր երևում, որտեղ ապրում էր Ռյազանից եկած մի ինչ-որ պորուչիկ, որ ըստ երևույթին մեծ սեր ուներ գեպի կոշիկները, որովհետև արդեն պատվիրել էր չորս զույգ և անդադար չափում էր հինգերորդը։ Մի քանի անգամ նա մոտեցավ անկողնին, որ հանի կոշիկները և պառկի, բայց ոչ մի կերպ չկարողացավ. կոշիկները, իսկապես, լավ էին կարած, և դեռ երկար ժամանակ նա բարձրացնում էր ոտը և ամեն կողմից մտիկ էր տալիս ժրաջանորեն և զարմանալի կերպով հղկված կրունկին։

ԳԼՈՒԽ VIII

Չիչիկովի գնումները խոսակցության առարկա դարձան։ Քաղաքում լսվեցին բացատրություններ, կարծիքներ, դատողություններ այն մասին, թե արդյոք ձեռնտո՞ւ է գյուղացիներ

գնել առանց հողի, տեղափոխման կարգով։ Մտքերի փոխանակությունը ցույց տվեց շատերի՝ առարկայի մասին ունեցած կատարյալ տեղյակությունը։— Իհարկե,— ասում էին ոմանք,— դա այդպես է, դրա դեմ չի էլ կարելի վիճել, հարավային նահանգներում, իսկապես, հողերը լավ են և բերրի, բայց ինչպե՞ս պիտի լինի Ջիչիկովի գյուղացիների վիճակը առանց ջրի. չէ՞ որ ո՛չ մի գետ չկա այնտեղ։— Դա դեռ ոչինչ, որ ջուր չկա, դա դեռ ոչինչ, Ստեպան Դմիտրիևիչ, ախր տեղափոխումը հուսալի բան չէ։ Հայտնի բան է, մուժիկ է՝ նոր հողում, ե՛կ ու հողագործությամբ զբաղվիր, ոչինչ չունի, ո՛չ տուն, ո՛չ բակ. կփախչի՝ ինչպես երկու անգամ երկու, այնպես կծլկի որ՝ գնա՛ ու հետքը գտիր։— Ո՛չ, Ալեքսեյ Իվանովիչ, քո՛ւյլ տվեք, քո՛ւյլ տվեք, ես համաձայն չեմ ձեր ասածին, որ Ջիչիկովի մուժիկը կփախչի։ Ռուս մարդը ամեն ինչի ընդունակ է և ընտելանում է ամեն տեսակ կլիմայի։ Ուղարկիր քեկուզ նրան Կամչատկա, մեկ էլ տո՛ւր նրան տաք թաթպաններ, նա ձեռքը կզարկի ձեռքին, կվերցնի կացինը ու տեսար՝ ձեռնարկեց իր համար նոր խրճիթ շինելուն։— Բայց, Իվան Գրիգորևիչ, դու աչքաթող արիր մի կարևոր բան, դու չհարցրիր, քե ինչպիսի՛ մուժիկ է Ջիչիկովինը։ Մոռացար, որ ախր լավ մարդուն չի ծախի կալվածատերը. գլուխս կտրել կտամ, եթե Ջիչիկովի մուժիկը գող չի և հետին հարբեցող չի, պարապ թրևող և կատաղի վարքի տեր։— Այդպես է, այդպես է, դրան համաձայն եմ, դա ճշմարիտ է, ո՛չ ոք չի ծախի լավ մարդկանց, և Ջիչիկովի մուժիկները հարբեցող են, բայց պետք է ուշադրության առնել այն հանգամանքը, որ հենց այստեղ էլ բարոյական խրատն է, հենց սրա մեջն էլ պարունակվում է բարոյական խրատը. նրանք հիմա անպիտաններ են, բայց տեղափոխվելով նոր հողը՝ հանկարծ կարող են դառնալ գերազանց հպատակներ։ Քիչ չեն եղել այդպիսի օրինակներ՝ պարզապես աշխարհքիս երեսին և դեռ պատմության մեջ ևս։— Երբե՛ք, երբե՛ք,— ասում էր պետական գործարանների վարիչը,— հավատացե՛ք, դա երբեք չի կարող լինել։ Որովհետև Ջիչիկովի գյուղացիները հիմա երկու ուժեղ թշնամիներ կունենան։ Առաջին թշնամին մալոռուսական նահանգների մոտիկությունն է, ուր, ինչպես հայտնի է՝ գինու ազատ վաճառք է։ Ես ձեզ հավատացնում եմ, որ նրանք երկու շաբաթվա ըն-

Քացքում հարբելով կլինեն և կդառնան կոշիկի ներքան։ Մյուս Քշնամին արդեն ինքը Քափառաշրջիկ կյանքի սովորույթն էր, որ անհրաժեշտորեն ձեռք են բերում գյուղացիները տեղափոխման ժամանակ։ Հարկավոր է գուցե, որ նրանք մշտապես Ջիչիկովի աչքերի առաջ լինեին և որ նա նրանց պինդ ձեռքերում պահեր, հալածեր նրանց ամեն մի դատարկ բանի համար և այն էլ, ո՛չ ուրիշ մեկի վրա հույսը դնելով, որպեսզի այդ կանեի, այլ ինքը անձամբ, ուր հարկն է, հասցներ առաջնեղին ու վզակոթին։— Ինչո՞ւ համար Ջիչիկովն ինքը գրաղվի գրանով և վզակոթին հասցնի, նա կարող է և կառավարիչ գտնել։— Ի՛, կգտնե՞ք կառավարիչ, բոլորը խարդախ մարդիկ են։— Խարդախ մարդիկ են, որովհետև տերերը գործով չեն գրաղվում։— Դա ճշմարիտ է,— վրա բերին շատերը,— Քող տերն ի՛նքը տնտեսությունից բան հասկանա, մեկ էլ՝ մարդկանց տարբերի իրարից՝ նրա մոտ միշտ էլ լավ կառավարիչ կլինի։— Բայց պետական գործարանի վարիչը ասաց, որ 5000-ից ավելի քիչ վարձով չի կարելի լավ կառավարիչ գրտնել։ Բայց նախագահն ասաց, որ կարելի է նաև 3000-ով գրտնել։ Բայց վարիչն ասաց,— որտե՞ղ կարող եք դուք գրան գտնել, գուցե ձեր քթի մե՞ջ։— Բայց նախագահն ասաց,— ոչ, քթի մեջ չէ, այլ այստեղի գավառում հենց, Պյոտր Պետրովիչ Սամոյլովը. ա՛յ քեզ ինչ կառավարիչ է հարկավոր Ջիչիկովի մուժիկների համար։— Շատերը բավականին մտնում էին Ջիչիկովի դրության մեջ, և այդպիսի ահագին քանակության գյուղացիների տեղափոխության դժվարությունը նրանց աստիճանապես նկատեց, որ խոովությունից կարիք չկա վախենալու, որ դրա առաջն առնելու համար գոյություն ունի կապիտան-ոստիկանի իշխանությունը, որ կապիտան-ոստիկանը, թեկուզ ինքը չգնա, այլ ուղարկի այնտեղ իր փոխարեն միմիայն իր կարտուզը, ապա միայն այդ կարտուզը գյուղացիներին կգշի հենց մինչև իրենց բնակության տեղը։ Շատերը առաջարկեցին իրենց կարծիքը այն մասին, թե ի՛նչպես արմատախիլ անել այն կատազի ոգին, որով համակված են Ջիչիկովի գյուղացիները։ Կարծիքները մի քանի տեսակ էին.

հային այնպիսիները, որոնք արդեն չափազանց էին տարված զինվորական դաժանությամբ և խստությամբ, կարելի է ասել՝ ավելորդ չափի։ Բայց կային և այնպիսիներ, որոնք սոգորված էին հեզությամբ։ Փոստապետը նկատեց, որ Չիչիկովին վիճակվում է մի սրբազան պարտականություն, որ նա կարող է իր գյուղացիների մեջ դառնալ մի տեսակ հայր, ինչպես ինքն էր արտահայտվում. նրանց մեջ մինչև անգամ բարերար լուսավորություն մտցնել, և այդ դեպքում մեծ գովասանքով խոսեց Լանկաստերյան դպրոցի փոխադարձ ուսուցման մասին։

Այս կերպ դատողություններ էին անում և խոսում քաղաքում, և շատերը կարեկցանքից շարժված՝ անգամ Չիչիկովին անձամբ հայտնեցին սույն խորհուրդներից մի քանիսը, առաջարկեցին անգամ ուղեկցող պահակախումբ՝ գյուղացիներին անվտանգ տեղափոխելու բնակության վայրը։ Խորհուրդների համար Չիչիկովը շնորհակալություն հայտնեց, ասելով, որ հարկավոր դեպքում չի զլանա նրանցից օգտվել, իսկ ուղեկցող պահակախմբից հրաժարվեց վճռականապես, ասելով, որ դա բոլորովին հարկավոր չէ, որ իր գնած գյուղացիները գերազանց հեզ բնավորության են, իրե՛նք իսկ ունեն կամավոր հակում տեղափոխվելու, և որ խռովություն նրանց մեջ ոչ մի դեպքում չի կարող լինել։

Բոլոր այդ զրույցներն ու դատողությունները սակայն առաջ բերին ամենաբարերար հետևանքներ, որպիսին միայն կարող էր սպասել Չիչիկովը։ Լուրեր տարածվեցին, որ նա ո՛չ ավելի, ո՛չ պակաս, միլիոնատեր է։ Քաղաքի բնակիչները առանց դրան էլ, ինչպես տեսանք արդեն առաջին գլխում, սրտանց սիրեցին Չիչիկովին, իսկ հիմա այսպիսի լուրերից հետո սիրեցին է՛լ ավելի սրտանց։ Ասենք, ճշմարիտն ասած՝ նրանք բոլորը բարի ժողովուրդ էին, իրար հետ հաշտ էին ապրում, վերաբերվում էին իրար կատարելապես բարեկամաբար, և նրանց զրույցները կրում էին ինչ-որ առանձին պարզամտության և մտերմության կնիք. սիրելի՛ բարեկամ Իլյա Իլյիչ. լսի՛ր, եղբայր Անտիպատոր Զախարիչ... Փչում ես, անուշիկս Իվան Գրիգորևիչ։ Փոստապետին, որին կոչում էին Իվան Անդրեևիչ, միշտ ավելացնում էին. շպռեխե՞ն զի դեյչ, Իվա՛ն

Անդրեյչ[1]. մի խոսքով, ամեն ինչ շատ տնավարի էր։ Շատերը առանց կրթության չէին. աստյանի նախագահը անգիր գիտեր ժուկովսկու Լյուդմիլան, որ դեռ այն ժամանակ տակավին նորություն էր և վարպետորեն կարդում էր շատ տեղերը, առանձնապես՝ «անտառը քնեց, հովիտը քնած է», ինչպես և «սո՛ւս» խոսքը՝ այնպես, որ իսկապես թվում էր, թե կարծես հովիտը քնած է. մեծ նմանության համար նա մինչև անգամ այդ պահին աչքերը կկոցում էր։ Փոստապետն իրեն տվել էր ավելի փիլիսոփայության և կարդում էր շատ ջանասիրությամբ, անգամ՝ գիշերները, Ծկկարտսհաուզենի[2] «Բնության խորհուրդի բանալին», ինչպես և Յունգի «Գիշերները»[3], որոնցից խիստ երկար հատվածներ էր գրի առնում, բայց թե ի՛նչ տեսակի էին դրանք՝ դա ո՛չ ոքի հայտնի չէր լինում։ Ասենք՝ նա սրախոս էր, խոսելիս ծաղկեցնում էր և սիրում էր, ինչպես ինքն էր արտահայտվում, համեմել խոսքը։ Իսկ խոսքն էլ նա համեմում էր բազմաթիվ զանազան մասնիկներով, ինչպես՝ «պարոնս, այսպես մի տեսակ, գիտեք, հասկանում եք, կարող եք պատկերացնել, համեմատաբար, այսպես ասած, որևէ կերպ», և այլն, որ նա տոպրակներով թափում էր. նա խոսքը համեմում էր դարձյալ բավական հաջող աչքով անելով, կկոցելով մի աչքը, այդ բոլորը խիստ կծու արտահայտություն էին հաղորդում նրա շատ սատիրական ակնարկներին։ Ուրիշները նույնպես քիչ թե շատ լուսավորված մարդիկ էին. ո՛րը Կարամզին էր կարդում, ո՛րը «Մոսկովսկիե վեդոմոստի»[4], ո՛րը մինչև անգամ բոլորովին ոչինչ չէր կարդում։ Մեկը, ինչպես ասում են, տյուրյուկ էր, այսինքն մի մարդ, որին հարկավոր էր լինում քացով վեր կացնել մի բանի համար. մյուսը պարզապես դանդալոշ էր, ամբողջ կյանքը, ինչպես ասում են, կողքին վեր ընկած, որին անգամ զուր էր լինում տեղից վեր կացնել, չի վեր կենա ո՛չ մի դեպքում։ Բա-

1 Խոսո՞ւմ եք դուք գերմաներեն, Իվան Անդրեյչ։

2 Ծկկարտսհաուզեն (1752—1803)—XVIII դարի կրոնական գրող, որ հեղինակել էր մի քանի կեղծ-գիտական երկեր «բնության գաղտնիքների» մասին։

3 XVIII դարի անգլիական պոետ Էդուարդ Յունգի «Գիշերային մտորումներ» մռայլ և տխուր ոտանավորների ժողովածուն, որ թարգմանվել է ռուսերեն և մի քանի անգամ հրատարակվել։

4 Մոսկովյան տեղեկագիր — լրագիր։

բետեսութեյան կողմից՝ արդեն հայտնի է, որ նրանք բոլորը հուսալի մարդիկ էին, մեջները ո՛չ ոք թոքախտավոր չէր լինում։ Բոլորն այն տեսակիցն էին, որոնց կանայք քնքուշ խոսակցութեյան պահին, որ տեղի էր ունենում առանձնութեյան մեջ, անուններ էին տալիս՝ լայնափորիկ, հաստլիկ, ցմփորիկ, սևաստնիճ, կիկ, ժուժու և այլն։ Բայց ընդհանրապես նրանք բարի ժողովուրդ էին, խիստ հյուրասեր, և այն մարդը, որ նրանց հետ աղուհաց էր կտրում կամ մի երեկո նստում վիստ խաղալու՝ արդեն ինչ-որ մի բանով մոտ էր դառնում, մանավանդ Չիչիկովը՝ իր հմայիչ հատկութեյուններով և վարվելաձևով, որ իսկապես գիտեր դուր գալու մեծ գաղտնիքը։ Նրանք այնքան սիրեցին Չիչիկովին, որ նա հնար չէր տեսնում, թե ի՛նչպես դուրս պրծնի քաղաքից. հենց միայն այս էր լսում՝ դե մի շաբաթ, էլի մի շաբաթ ապրեցեք մեզ հետ, Պավել Իվանովիչ. մի խոսքով՝ նրան, ինչպես ասում են, ձեռքերի վրա էին տանում։ Սակայն անհամեմատ զարմանալին այն տպավորութեյունն էր (կատարյալ ապշեցուցիչ բան), որ գործում էր Չիչիկովը տիկինների վրա։ Որպեսզի դա որոշ չափով բացատրելի լինի՝ հարկ կլիներ շատ բան ասել իրենց՝ տիկինների մասին, նրանց հասարակութեյան մասին, նկարագրել, ինչպես ասում են, կենդանի գույներով՝ նրանց հոգեկան հատկութեյունները. սակայն հեղինակի համար դա շատ գժվար է։ Մի կողմից դրանից նրան ետ է պահում նրա անսահման հարգանքը բարձրաստիճան անձնավորութեյունների ամուսինների հանդեպ, իսկ մյուս կողմից... մյուս կողմից.պարզապես դժվար է։ N քաղաքի տիկինները... ո՛չ, ո՛չ մի կերպ չեմ կարող. ուղղակի վախ եմ զգում։ N քաղաքի տիկինները ամենից շատ նշանավոր էին նրանով... Մինչև անգամ տարօրինակ է, գրիչը բոլորովին չի բարձրանում, ուղղակի կարծես որևէ արճիճ է մտել մեջը։ Այդպես էլ թող լինի — նրանց խարակտերների մասին ըստ երևույթին՝ կթողնվի, որ ասի այնպիսի մեկը, որի մոտ գույները ավելի կենդանի են և ավելի շատ են նրա երանգապնակի վրա, իսկ մեզ կմնա թերևս երկու խոսք ասել նրանց արտաքինի մասին, մեկ էլ այն մասին, ինչ ավելի մակերեսային է։ N քաղաքի տիկինները այնպիսիներն էին, որոնց համար ասվում է «ներկայացնելի» և այդ կողմից նրանց համարձակ կարելի է օրինակ բերել ուրիշներին։ Ինչ վերաբ-

քերում է այն բանին, թե ի՛նչպես իրեն պահել, պահպանել պատշաճավորությունը, պաշտպանել քաղաքավարության կանոնները, բազմաթիվ ամենաանուրբ վայելչությունները, և առանձնապես պահպանել մոդան ամենավերջին մանրամասներով, ապա դրանում նրանք անգամ առաջ էին ընկած Պետերբուրգի և Մոսկվայի տիկիններից։ Նրանք հագնվում էին մեծ ճաշակով, քաղաքում շրջում էին կառքերով, ինչպես հրահանգում էր վերջին մոդան, եւևից օրորվում էր լաքեյը, որի լիվրեյը ոսկե ժապավեններով էր։ Այցետոմսը՝ լիներ դա գրված թեկուզ խալի երկուսանոցի վրա կամ աղյուսի տուզի վրա՝ սակայն շատ սրբազան առարկա էր։ Նրա երեսից երկու տիկիններ՝ մոտ բարեկամներ, մինչև անգամ ազգականուհիներ՝ շատ խիստ խռովեցին իրարից, հենց այն պատճառով, որ նրանցից մեկը, ինչպե՞ս եղավ, թերացավ փոխայցի մեջ։ Եվ արդեն դրանից հետո շատ և շատ աշխատեցին ամուսիններն ու ազգականները հաշտեցնել նրանց, բայց ո՛չ, դուրս եկավ, որ ամեն բան կարելի է անել աշխարհիս երեսին, միայն մի բան անկարելի է. հաշտեցնել երկու տիկինների, որ խռովել են այցելության թերացման պատճառով։ Այդպես էլ՝ երկու տիկինները մնացին փոխադարձ անտրամադրության մեջ՝ քաղաքի հասարակության արտահայտությամբ։ Առաջին տեղերը գրավելու հարցում ևս պատահում էին բազմաթիվ ուժեղ տեսարաններ, որ երբեմն ամուսիններին ներշնչում էին կատարելապես ասպետական մեծահոգության գաղափարներ՝ պաշտպան կանգնելու վերաբերյալ։ Մենամարտ, իհարկե, նրանց մեջ տեղի չէր ունենում, որովհետև բոլորը քաղաքացիական պաշտոնյաներ էին, բայց փոխարենը մեկմեկու աշխատում էին վնասել՝ ուր կարելի էր լինում, որ ինչպես հայտնի է, երբեմն ավելի ծանր է ամեն տեսակ մենամարտից։ N քաղաքի տիկինները խիստ բարքերի տեր էին, լցված ազնիվ բարեկրթությամբ՝ ընդդեմ բոլոր արատները և ամեն տեսակ գայթակղությունները, անխնա պախարակում էին ամեն մի թուլություն։ Թե՛ նրանց մեջ պատահում էլ էր որևէ այնպիսի բան, որ կոչում են ուրիշ-ուրդ, ապա դա տեղի էր ունենում գաղտնի, այնպես որ՝ բոլորովին չէին երևցնում թե կատարվել է. պահպանվում էր բոլոր արժանապատվությունը և ինքը ամուսինը այնպես էր նախապատրաստված լինում, որ թե

մեկնում էլ էր ուրիշ-երորդին կամ լսում նրա մասին, ապա պատասխանում էր կարճ ու խելացի՝ առածով՝ ո՛ւմ ի՛նչ գործն է, քեռ քավորը քավորկնկա հետ նստել է։ Դարձյալ պետք է ասել, որ N քաղաքի տիկինները՝ Պետերբուրգի շատ տիկիններ նման՝ աչքի էին ընկնում արտասովոր զգուշավորությամբ և խոսքերի, արտահայտությունների պատշաճավորությամբ։ Երբեք նրանք չէին ասում՝ ես խնչեցի, ես քրտնեցի, ես քթեցի, այլ ասում էին՝ ես քնքնացրի քիթս, ես կառավարվեցի թաշկինակով։ Ո՛չ մի դեպքում չէր կարելի ասել՝ այս բաժակից կամ այս ափսեից հոտ է գալիս։ Նվ անգամ չէր կարելի ասել ոչինչ այնպիսի բան, որ ակնարկեր այդ մասին, այլ դրա տեղ ասում էին՝ այս բաժակը վատ է պահում իրեն, կամ դրա նման որևէ բան։ Որպեսզի ավելի ազնվացնեին առս լեզուն՝ համարյա բառերի կեսը խոսակցությունից բոլորովին հանվել էր, ուստի և շատ հաճախ կարիք էր լինում դիմել ֆրանսերեն լեզվին, բայց այնտեղ, ֆրանսերենի մեջ, այնտեղ ուրիշ բան է, այնտեղ թույլ էին տրվում այնպիսի բառեր, որոնք ավելի կոշտ էին լինում վերոհիշյալներից։ Այսպիսով՝ ահա քե ի՛նչ կարելի է ասել N քաղաքի տիկիններ մասին՝ խոսելով մի փոքր մակերեսորեն։ Սակայն եթե ավելի խորը նայելու լինի մարդ, ապա իհարկե կբացվեն շատ բաներ. բայց խիստ վտանգավոր է ավելի խորը նայել տիկիններ աթաերի մեջ։ Նվ այսպես՝ սահմանափակվելով մակերեսով՝ չարունակենք։ Մինչև հիմա բոլոր տիկինները սակավ էին խոսում Չիչիկովի մասին՝ համեմատաբար դեպս լիակատար հավանություն տալով նրա՝ աշխարհիկ վարվեցողության հանձնությանը համար, բայց այն պահից, երբ լուր տարածվեց նրա միլիոնատեր լինելու մասին, գտնվեցին նաև ուրիշ հատկություններ։ Այնուամենայնիվ, տիկինները բոլորովին շահասեր չէին. մեղավորը բառն էր՝ միլիոնատեր, ո՛չ ինքը միլիոնատերը, այլ հատկապես բառը. որովհետև այդ բառի միայն հնչումը՝ ամեն տեսակ փողի տոպրակը մի կողմ թողած՝ ինչ-որ մի բան է պարունակում, որ ազդում է քե՛ ստոր մարդկանց վրա և քե՛ այն մարդկանց վրա, որ ո՛չ այս են, ո՛չ այն, և լավ մարդկանց վրա, մի խոսքով, ամենքի վրա ազդում է։ Միլիոնատերը այն առավելություններն ունի, որ կարող է տեսնել տառապություններ, կատարյալ անշահախնդիր, մաքուր տառապու-

թյունը, որը չի հիմնված ո՛չ մի հաշվի վրա. շատերը շատ լավ գիտեն, որ ոչինչ չեն ստանա նրանից և ո՛չ մի իրավունք չունեն ստանալու, բայց անպատճառ գոնե ընդառաջ կվազեն նրան, գոնե կծիծաղեն, գոնե գլխարկները կհանեն, գոնե զոռով մեջ կընկնեն, որ իրենց գցեն այն ճաշկերույթին, ուր գիտեն, որ հրավիրված է միլիոնատերը։ Չի կարելի ասել, որ տիկինները ղգում էին այն քնքուշ տրամադրությունը դեպի ստորությունը. սակայն շատ հյուրասենյակներում սկսեցին խոսել, որ անշուշտ Չիչիկովը առաջնակարգ գեղեցիկ տղամարդ չէ, բայց դրա փոխարեն նա այնպիսին է, ինչպիսին հարկավոր է տղամարդուն լինել, որ եթե նա մի փոքր հաստ կամ լիքը լիներ՝ արդեն դա լավ չէր լինի։ Ընդ սմին, ինչպես եղավ՝ մի փոքր վիրավորիչ կերպով խոսվեց լղարիկ տղամարդկանց մասին, նրանք ոչ այլ ինչ են, քան ինչ-որ ատամնափորիչ, այլ ո՛չ թե մարդ։ Կանանց զարդարանքներում հայտնվեցին շատ բազմազան ավելացումներ։ Վաճառանոցում առաջացավ հրմշտոց, քիչ էր մնում անգամ՝ սխմոտոց. անգամ զբոսանքի նմանվեց՝ այն աստիճան լցվեցին կառքերը։ Վաճառականները զարմացան, տեսնելով՝ թե ի՛նչպես կտրեղենի մի քանի նմուշը, որ նրանք բերել էին տոնավաճառից և չէին քշում իրենց բարձր գների պատճառով, հանկարծ քշվեցին և գնվեցին իրար ձեռից խլխլելով։ Պատարագի ժամանակ մի տիկնոջ զգեստի տակից մի այնպիսի իրար վրա շղթայանման փաթաթած ժանյակ-ժապավեն երևաց, որ ամբողջ եկեղեցու կեսը բռնել էր, այնպես որ, քաղաքամասի պրիստավը, որ այդտեղ էր գտնվում, հրամայեց ժողովրդին մի փոքր հեռու կանգնել, այսինքն՝ գավիթին մոտ, որպեսզի որևէ կերպ չտրորվի նորին բարձրապատվություն տուալետը։ Մինչև անգամ ինքը Չիչիկովը չէր կարող մասամբ չնկատել այդպիսի արտասովոր ուշադրություն։ Մի անգամ վերադառնալով տուն՝ նա իր սեղանի վրա գտավ մի նամակ. ո՛րտեղից էր և ո՛վ էր բերել՝ չէր կարելի իմանալ. հյուրանոցի ծառան ասաց, որ բերին և թուլլ էլ չտվին ասել, թե ումից է նամակը։ Նամակն սկսվում էր շատ վճռականորեն այսինքն՝ այսպես. «Ո՛չ, ես պետք է գրեմ քեզ»։ Հետո ասված էր այն մասին, որ կա գաղտնի զգայնակցություն հոգիների մեջ. այս ճշմարտությունը հաստատված էր մի քանի կետերով, որ

բռնում էին համարյա կես տող. ապա հետևում էին մի քանի մտքեր, որ ուշագրավ էին իրենց ճշմարտացիությամբ, այնպես որ համարյա անհրաժեշտ ենք համարում դրանք արտագրել.— «Ի՞նչ է մեր կյանքը՝ Հովիտ, ուր բնակություն են հաստատել վշտերը՝ Ինչ է հասարակությունը՝ Մարդկանց ամբոխ, որը չի զգում»։ Հետո նամակագրուհին հիշեցնում էր, որ արցունքներով թացացնում է քնքուշ մոր տողերը, որը ահա քսանևհինգ տարի է այլևս գոյություն չունի աշխարհիս երեսին։ Ջիլիկովին հրավիրում էին անապատ, թողնել ընդմիշտ քաղաքը, ուր խեղդուկ պատերի մեջ մարդիկ չեն օգտվում օդից. նամակի վերջավորությունը լցված էր անգամ վճռական հուսահատությամբ և ամփոփվում էր այսպիսի տողերով.

Երկու տատրակ ցույց կտան քեզ,
Թե որտե՛ղ է իմ սառ փոշին,
Եվ մնչելով ավա՛ղ կասեն,
Որ նա մեռավ արցունքն աչքին։

Վերջին տողում տաղաչափություն չկար, բայց դա, սակայն, ոչինչ. նամակը գրված էր այն ժամանակվա ոգով։ Մ՚չ մի ստորագրություն նույնպես չկար, ո՛չ անուն, ո՛չ ազգանուն, ո՛չ անգամ ամիս ու թիվ։ «Հետգրության» մեջ միայն ավելացված էր, որ Ջիլիկովի սեփական սիրտը պետք է գուշակի նամակագրուհուն, և որ նահանգապետի պարերեկույթում, որ տեղի պիտի ունենա վաղը, ներկա կգտնվի ինքը՝ օրիգինալը։

Դա շատ հետաքրքրեց նրան։ Անստորագիր նամակում այնքան շատ գրավիչ և հետաքրքրություն առաջացնող բան կար, որ նա կարդաց նամակը և՛ կրկին, և՛ երրորդ անգամ և վերջապես ասաց. հետաքրքիր է սակայն իմանալ, թե ո՛վ է այս նամակը գրողը։ Մի խոսքով՝ գործը ըստ երևույթին լրջացավ. ժամից ավելի նա դեռ մտածում էր այդ մասին, վերջապես ձեռները տարածելով և գլուխը կախելով ասաց. բայց նամակը շա՛տ և շատ զարդարուն ոճով է գրած։ Հետո, ինքնին հասկանալի է, նամակը ծալվեց և դրվեց գզրոցը՝ հարևանության մեջ ինչ-որ մի աֆիշի և հարսանեկան հրավիրատոմսի, որ յոթ տարի պահվում էր միևնույն դրությամբ, միևնույն տե-

դում։ Մի փոքր անց նրան բերին իսկապես նահանգապետի տանը կայանալիք երեկույթի հրավեր, մի բան, որ խիստ սովորական է նահանգական քաղաքներում. ո՛ւր նահանգապետն է՝ այնտեղ էլ պարերեկույթը, այլապես ո՛չ մի կերպ չի լինի պատշաճավոր սեր և հարգանք ազնվականության կողմից։

Բոլոր կողմնակի բաները նո՛ւյն իսկ րոպեին թողնվեցին և հեռացվեցին մի կողմ, և ամեն ինչ հարմարվեց պարերեկույթի պատրաստություններին. որովհետև, ճշմարիտ որ, կային շատ դրդիչ և հրահրող պատճառներ։ Դրա համար էլ կարող է պատահել, որ աշխարհիս ստեղծագործությունից սկսած, այսքան ժամանակ չի վատնվել բնավ տուալետի վրա։ Ամբողջ մի ժամ նվիրվեց միայն հայելու մեջ դեմքին նայելուն։ Փորձ արվեց նրան տալ բազմաթիվ զանազան արտահայտություններ. մերթ ծանրակշիռ և պատկառելի, մերթ հարգալիր, բայց ժպտավուն, մերթ պարզապես հարգալիր՝ առանց ժպիտի. հայելու մեջ գլխի մի քանի խոնարհումներ արվեցին անորոշ ձայների ուղեկցությամբ, մասամբ նման ֆրանսերենի, թեև ֆրանսերեն Չիչիկովը ամենևին չէր իմանում։ Նա մինչև անգամ ինքն իրեն շատ հաճելի սյուրպրիզներ արեց՝ շարժեց հոնքը և շրթունքները և անգամ լեզվով բաներ արեց. մի խոսքով՝ քի՞չ բան կանի մարդ, երբ մենակ է մնում, հետն էլ զգալով, որ ինքը լավն է, այն էլ հավատացած լինելով, որ ո՛չ ոք դռան ծակից մտիկ չի տալիս։ Վերջապես նա մեղմակի տրորեց իր կզակը՝ ասելով. է՛յ, մռութիկ. և սկսեց հագնվել։ Ամենագոհունակ տրամադրության մեջ էր հագնվելու ժամանակ. տաբատակալները անցկացնելիս կամ փողկապը կապելիս նա ոտնաքստոցով մեծարանք էր մատուցում և խոնարհություն էր անում առանձին ճարպկությամբ և թեպետ երբեք չէր պարում, բայց մի պարի ոստյուն գործեց։ Այդ պարի ոստյունը մի անմեղ հետևանք ունեցավ։ Կամոդը շարժվեց և խոզանակը սեղանից վայր ընկավ։

Պարերեկույթում նրա հայտնվելը արտասովոր շարժում առաջացրեց։ Ամեն բան, ինչ որ կար այնտեղ, ընդառաջ եկավ նրան, ո՛րը թղթախաղի քարտերը ձեռքին, ո՛րը խոսակցության ամենահետաքրքիր կետում արտասանելով՝ «Իսկ ներքին գեմստվոյական դատարանը դրան պատասխանում է...», բայց թե ի՛նչ է պատասխանում՝ այդ արգեն նա մի կողմ նետեց և

շտապեց ողջունելու մեր հերոսին։— Պա՛վել Իվանովիչ։ Ախ, աստվա՛ծ իմ, Պավել Իվանովիչ։— Սիրելի Պա՛վել Իվանովիչ։ Ամենահարգելի՛ Պա՛վել Իվանովիչ։ Հոգյա՛կդ իմ, Պա՛վել Իվանովիչ։ Ահա քե որտեղ եք դուք, Պա՛վել Իվանովիչ։ Ահա նա՛, մեր Պավել Իվանովիչը։ Ի՛նչ տվեք գրկել ձեզ, Պա՛վել Իվանովիչ։ Մի նրան այս կողմը տվեք, ահա ես նրան պինդ կհամբուրեմ, իմ քանկագին Պավել Իվանովիչին։ Չիչիկովը միանգամից իրեն զգաց մի քանի գրկերում։ Դեռևս լրիվ չէր կարողացել դուրս պրծնել նախագահի գրկից, որ հայտնվեց ոստիկանապետի գրկում. ոստիկանապետը նրան հանձնեց բժշկական վարչության տեսչին, բժշկական վարչության տեսուչը՝ հարկային կապալառուին, հարկային կապալառուն՝ ճարտարապետին... Նահանգապետը, որ այդ պահին կանգնած էր տիկիններից մոտ և մի ձեռին կոնֆետի տոմս[1] և բոլոնյան շնիկ էր բռնել, տեսնելով նրան, հատակին նետեց տոմսն ու բոլոնյան շնիկը,— հենց միայն շնիկը ճչաց. մի խոսքով՝ արտասովոր ուրախություն և խնդություն տարածեց նա։ Մի դեմք չեղավ, որի վրա չարտահայտվեր բավականություն կամ համենայն դեպս ընդհանուր բավականության անդրադարձումը։ Այդպես է լինում պաշտոնյաների դեմքերին՝ նրանց կառավարմանը վստահած տեղերը ժամանած պետի հետազննության ժամանակ. այն բանից հետո, երբ առաջին վախը արդեն անցավ, նրանք տեսան, որ շատ բան նրան դուր է գալիս, և նա ինքը բարեհաճեց վերջապես կատակել, այսինքն՝ հաճելի քմծիծաղով արտասանել մի քանի խոսք։ Երկու անգամ ավելի են ծիծաղում ի պատասխան դրա, նրա շուրջը կանգնած մոտիկ պաշտոնյաները. հոգու խորքից ծիծաղում են նրանք, որոնք սակայն մի փոքր վատ լսեցին նրա արտասանած խոսքը, և վերջապես մուտքի դռների մոտ հեռուն կանգնած մի որևէ ոստիկան, որ ծնված օրից ամբողջ կյանքում չի ծիծաղել և հենց նոր դրանից առաջ ժողովրդին ցույց է տվել բռունցքը, և դա էլ արտացոլման անփոփոխ օրենքների համաձայն իր դեմքի վրա արտահայտում է ինչ-որ մի ժպիտ, թեև այդ ժպիտը ավելի նման է այն բանին, որ կարծես մեկը

[1] Կոնֆետի թղթերի մեջ տպված էին լինում զանազան ատանավորներ, արուքներ և այլն։

պատրաստվել էր փոշտալ Թունդ քթախոտից հետո։ Մեր հերոսը պատմախանում էր բոլորին և ամեն մեկին և զգում էր մի ինչ-որ արտասովոր թեթևություն. ողջունում էր աչ և ձախ, իր սովորության համաձայն մի փոքր կողքի, բայց կատարելապես ազատ, այնպես որ, հմայում էր բոլորին։ Տիկինները տեղն ու տեղը շրջապատեցին նրան փայլուն ծաղկեշղթայի նման և բերին իրենց հետ ամբողջ ամպեր ամեն տեսակ անուշահոտություններից. մեկը վարդ էր բուրում. մյուսից փչում էր գարուն և մանուշակներ, երրորդը ամբողջովին օծվել էր հափրուկով։ Ջիլիկովը հենց այն էլ՝ քիթը միայն վեր էր բարձրացնում և հոտոտում։ Պճնահագուստների մեջ նրանց ճաշակը վերջ չուներ. մուլիններ, ատլասներ, մարմաշներ կային այնպիսի գունատ մոդայիկ գույներով, որոնց անգամ անուններն անկարելի էր գտնել (այն աստիճանի էր հասել ճաշակի նրբությունը)։ Ծապավենային հանգույցները և ծաղիկների փնջերը սավառնում էին այստեղ ու այնտեղ՝ հագուստների վրայով՝ իսկական գեղարվեստական անկարգությամբ, թեև այդ անկարգության վրա աշխատել էին շատ կարգավոր գլուխներ։ Թեթև գլխանոցը պահվում էր միայն ականջների վրա և թվում էր, թե ասում էր. «Է՛յ, կթուչեմ, միայն ափսոս, որ չեմ կարողանա հետս տանել գեղեցկությունս»։ Իրանները հավաք-կապված էին և աչքի համար ամենապինդ և հաճելի ձևերն ունեին (պետք է նկատել, որ N քաղաքի տիկիններն ընդհանրապես մի փոքր լիամարմին էին, բայց պրկվում էին այնպես վարպետորեն և այնպիսի հաճելի վարվեցողություն ունեին, որ հաստությունը ո՛չ մի կերպ չէր լինի նկատել)։ Ամեն ինչ նրանք լավ մտածել և նախատեսել էին արտասովոր շրջահայեցությամբ. վիզը, ուսերը բացված էին իսկապես այնքան, որքան պետք է, և ո՛չ մի կերպ ավելի. նրանցից յուրաքանչյուրը իր տիրությունը մերկացնում էր մինչ այնտեղ, մինչև որ սեփական համոզմունքով զգում էր, որ նա կարող է կործանել մարդու. մնացած բոլորը թաքցրած էր արտասովոր ճաշակով. կա՛մ ուրևէ թեթև ժապավենն փողկապ, ավելի թեթև, քան այն հրուշակը, որը հայտնի է համբույր անունով, եթերային գրկում էր վիզը, կա՛մ ուսերի տակից, զգեստի տակից դուրս էին թողնված փոքրիկ ատամնաձև երիզակներ բարակ բատիստից, որ հայտ-

նի են համեստություն անունով։ Այդ համեստությունները առջևից և ետևից ծածկում էին այն, որը արդեն չէր կարող մարդու կործանման հասցնել, թեև ստիպում էին կասկածել, որ հենց այդտեղ է իսկական կործանումը։ Երկար ձեռնոցները հագած էին ո՛չ ընդհուպ թևքերին, այլ մտածված կերպով մերկ էին թողնում ձեռքի գրգռիչ մասերը արմունկից վեր, որոնք շատերի մոտ շնչում էին նախանձելի դիրուքյամբ. ոմանց մոտ անգամ ճեղքվում էին լայքե ձեռնոցները, սպառնալով շարժվել ավելի հեռու, մի խոսքով, թվում էր, թե ամենի վրա գրած էր՝ ո՛չ, սա նահանգ չէ, սա մայրաքաղաք է, սա ինքը Փարիզն է։ Միայն տեղ-տեղ հանկարծ դուրս էր գծագրվում որևէ աշխարհում չտեսնված մի չեպչիկ կամ նույնիսկ մի ինչ-որ համարյա սիրամարգի փետուր, հակառակ բոլոր մոդաներին՝ սեփական ճաշակով։ Սակայն արդեն առանց դրան անկարելի է, այդպես է նահանգական քաղաքի հատկությունը. որևէ մի տեղ արդեն նա անպայման կսայթաքի։ Չիչիկովը նրանց դիմաց կանգնած՝ մտածում էր. ո՞րն է սակայն նամպի հեղինակուհին, և այն է՝ քիթը պարզեց առաջ, որ իսկույն ևեթ քիին դիպան մի շարք արմունկներ, թևածալվածքներ, թևքեր, ժապավենների ծայրեր, հոտավետ կրծկալներ և ղգեստներ։ Գալոպադը[1] թռավ՝ գլխից ձեռք վերցրած. փոստապետի կինը, կապիտան-ոստիկանք, մի կապտափետուր տիկին, մի ճերմակափետուր տիկին, վրացի իշխան Չիպխայխիլիձևը, Պետերբուրգի մի պաշտոնյա, Մոսկվայի մի պաշտոնյա, Ֆրանսիացի Կուկուն, Պերխունովսկին, Բերեբենդովսկին, ամեն ինչ վեր ելավ ու սլացավ...

«Պրծա՛վ, գնաց, քշեց ամբողջ նահանգը», ինքնիրեն խոսեց Չիչիկովը, ետ-ետ գնալով, և հենց որ տիկինները նստոտեցին տեղերում, նա կրկին սկսեց հետևել՝ թե արդյոք չի՞ կարելի դեմքի և աչքերի արտահայտությունից իմանալ, թե որն էր Հեղինակուհին։ Բայց ոչ մի կերպ չէր կարելի իմանալ, ոչ դեմքի արտահայտությունից, ոչ էլ աչքերի արտահայտությունից, թե որն էր հեղինակուհին։ Ամենուրեք նկատելի էր այնպիսի մի հազիվհազ հայտնաբերված, մի այնպիսի անըմբռնելի-նուրբ, օ՛հ, այնպիսի նո՛ւրբ... «Ո՛չ,— ասաց

1 Պար։

ինքնիրեն Չիչիկովը,— կանայք, դա այնպիսի մի բա՜ն են...» Այստեղ նա մինչև անգամ ձեռքը թափ տվեց,— «ուղղակի՝ ասել չի կարելի։ Ապա մի փորձիր պատմել կամ հաղորդել մեկին այն բոլորը, որ շարժվում է նրանց երեսին, բոլոր այն ճառագայթները, ակնարկները, կտեսնես, որ ոչինչ չես կարողանա հաղորդել։ Հենց միայն նրա աչքերը այնպիսի անսահման մի պետություն է, որի մեջ մարդը մտնի, դե՝ գնա, որ գտնես էլ արդեն այնտեղից ոչ մի ունելիով չես կարողանա դուրս քաշել։ Ապա մի փորձիր, օրինակ, պատմել մեկին դրանց հենց միայն փայլը. տամուկ, թավշյա, շաքարային։ Աստված գիտե նրանց, թե էլի ինչի՜ց են. և՛ կարծր են, և՛ քնքուշ, և՛ անգամ բոլորովին նվաղուն կամ, ինչպես ոմանք ասում են, նազանքով թե առանց նազանքի, բայց ավելի խիստ, քան նազանքով ահա հենց կկառչի մարդու սրտից ու կտանի-կբերի ողջ հոգուդ վրայով, ինչպես կնտնտոցով։ Ո՛չ, ուղղակի՝ խոսքեր չես գտնի. սա մարդկային ցեղի գալանտերեական[1] կեսը, և ոչինչ ավելի»։

Ներողությո՛ւն. կարծես մեր հերոսի բերանից դուրս թռավ մի խոսք, որ նա վերցրել էր փողոցից։ Ի՞նչ արած, այդպես է Ռուսիայում գրողի դրությունը։ Ասենք՝ եթե խոսքը փողոցից ընկել է գրքի մեջ՝ գրողը չի մեղավորը, մեղավոր են ընթերցողները և ամենից առաջ՝ բարձր հասարակության ընթերցողները. առաջինը՝ նրանցից չես լսի ոչ մի կարգին ռուսերեն բառ, իսկ ֆրանսերեն, գերմաներեն և անգլերեն նրանք կշնորհեն այնպիսի քանակությամբ, որ չես էլ ուզենա, և կշնորհեն անգամ պահպանելով բոլոր հնարավոր արտասանությունները, ֆրանսերեն քթի մեջ ը-ն արտասանելով, անգլերենը կարտասանեն ինչպես վայել է թռչնին և անգամ թռչնի դիմագիծ կշինեն, և անգամ կծիծաղեն նրա վրա, ով չի կարողանա թռչնի դիմագիծ շինել. բայց ահա ռուսական քնար ոչինչ չեն շնորհի, թեև հայրենասիրությունից դրդված իրենց համար ամառանոցում խրճիթ կշինեն ռուսական ճաշակավ։ Ահա թե ի՛նչպես են բարձր դասի ընթերցողները, իսկ նրանցից

[1] Աղավաղված գալանտ (նրբակերտ) բառը նույնությամբ թռչնի, այն պատճառով, որ հեղինակը հետևյալ պարբերության մեջ բառն անվանում է փողոցից վերցրած (ենթադրում ենք՝ գործակատարներից ստեղծված) և ներողություն է խնդրում, որ փողոցից վերցրածն ընկել է գրքի մեջ։ Ե. Բ.։

հետո նաև բոլոր իրենց բարձր դասից համարողները։ Բայց մինչդեռ ինչպիսի՜ խստապահանջություն։ Անպատճառ ուզում են, որ ամեն ինչ գրված լինի ամենախիստ, զտված և ազնիվ լեզվով, մի խոսքով, ուզում են, որ ռուս լեզուն ինքնիրեն հանկարծ ամպերից իջնի՝ մշակված ինչպես հարկն է, և նստի ուղիղ նրանց լեզվի վրա, իսկ իրենց էլ բան չի մնա, միայն բաց անել բերանները և դուրս հանել այն։ Իհարկե, խորիմաստ է մարդկային ցեղի կանացի կեսը. բայց հարգելի ընթերցողներ, պետք է խոստովանել, որ լինում են ավելի խորիմաստ բաներ։

Բայց Չիչիկովը այդ ընթացքում կատարյալ տատամսանքի մեջ ընկավ՝ որոշելու թե ո՛վ էր նամակի հեղինակուհին։ Փորձելով հայացքն ավելի ուշադիր լարել՝ նա տեսավ, որ տիկինների կողմից նույնպես արտահայտվեց ինչ-որ մի այնպիսի բան, միասին՝ թե՛ հույս, թե՛ քաղցր տառապանքներ առաքող մահկանացուի խղճուկ սրտին, որ նա վերջապես ասաց. ո՛չ, ո՛չ մի կերպ չի կարելի գուշակել։ Սակայն դա թնավ երբեք չնվազեցրեց հոգեկան այն ուրախ տրամադրությունը, որի մեջ նա գտնվում էր։ Նա անբռնազբոս և ճարպկորեն տիկիններից ոմանց հետ մի քանի հաճելի խոսքեր փոխանակեց, մոտեցավ սրան-նրան, հատու, մանր քայլով կամ ինչպես ասում են, ոտներն արագ-արագ փոխեց, ինչպես սովորաբար անում են բարձր կրունկներով փոքրիկ ծերուկպճնամոլները, որոնք կոչվում են մկան քուռակներ, և որոնք խիստ ճարպկորեն վազվզում են տիկինների շուրջը։ Մանրաքայլ շորորալով՝ աջ ու ձախ բավական ճարպիկ պտույտներով, նա նույն տեղում ոտքը քստացրեց փոքրիկ պոչիկի նման կամ ստորակետի պես։ Տիկինները շատ գոհ էին և ո՛չ միայն գտնում էին նրա մեջ և՛ մի կույտ դուրեկանություն, և՛ սիրալիրություն, անգամ տեսնում էին դեմքի վրա վեհ արտահայտություն, անգամ ինչ-որ մարսիական[1] կամ զինվորական բան, որ ինչպես հայտնի է՝ շատ է դուր գալիս կանանց։ Մինչև անգամ նրա պատճառով ակռեցին մի փոքր գժտվել իրար հետ. նկատելով, որ նա սովորաբար դռների մոտ էր կանգնում, մի քանիսը իրար առաջ կտրելով շտապե-

[1] Մարս — ռազմի աստվածը հին հռոմեական դիցաբանության մեջ։

ցին աթոռներ զբաղեցնել դռներին ավելի մոտ, և երբ մեկին բախտ վիճակվեց բոլորից շուտ կանտարել այդ, ապա քիչ մնաց ստեղծվեր շատ անախորժ պատմություն, և շատերին, որոնք ուզում էին նույնը անել, չափազանց զզվելի թվաց արդեն նման լկտիությունը։

Չիչիկովն այնպես զբաղված էր խոսակցություններով տիկինների հետ կամ, ավելի շուտ, տիկինները այնպես զբաղեցրին և գլխահան արին նրան իրենց խոսակցություններով, ցանելով մի կույտ ամենախորհրդավոր և նուրբ այլաբանություններ, որոնք անհրաժեշտ էր կռահել, որից մինչև անգամ նրա ճակատին քրտինք դուրս տվեց, և նա մոռացավ կատարել վայելչության պարտքը, և ամենից առաջ մոտենալ տանտիկնոջը։ Այդ մասին նա հիշեց այն ժամանակ, երբ լսեց աջևում արդեն մի քանի րոպե կանգնած իրեն՝ նահանգապետուհու ձայնը։ Նահանգապետուհին արտասանեց մի փոքր շոյիչ և խորամանկ ձայնով, գլխի հաճելի ցնցահարումով.— ա՜, Պա՛վել Իվանովիչ, ահա Ձե դուք ինչպես.— ստույգ չեմ կարող հայտնել նահանգապետուհու խոսքերը, բայց ասվեցին ինչ-որ բաներ՝ մեծ սիրալիրությամբ, այն ոգով, որով բացատրվում են դամաներն ու կավալերները այն վիպակների մեջ, որ գրում են մեր աշխարհիկ գրողները, որոնք սիրում են նկարագրել հյուրասենյակները և պարծենալ բարձր կենցաղավարության իրենց գիտությամբ, այն ոգով, որ մի՞թե ձեզ սրտին այնպես տիրապետեցին, որ նրանում ուշևս ո՛չ տեղ կա, ո՛չ ամենանեղ անկյուն անգամ ձեր կողմից անգթորեն մոռացվածների համար։ Մեր հերոսը նո՛ւյն րոպեին իսկ շրջվեց նահանգապետուհու կողմը և արդեն պատրաստ էր բաց թողնել իր պատասխանը, հավանորեն ոչնչով ո՛չ վատ այն պատասխաններից, որպիսիք բաց են թողնում մոդային վիպակներում Զվոնսկիները, Լենսկիները, Լիդինները, Գրյոմինները և ամեն տեսակ ճարպիկ գինվորական մարդիկ, որ հանկարծ աչքերը բարձրացնելով՝ կանգ առավ ինչպես հարվածից խլացած։

Իր առջև կանգնած էր ո՛չ միայն նահանգապետուհին. նա ևանցուկ էր արել մի մատաղահաս, տասնվեց տարեկան աղջկա, թարմ խարտյաշիկ, նուրբ և վայելչաձեղ դիմագծերով, սուրուլիկ կզակով, հմայչորեն կլորիկացող դեմքի ձվաձևու-

Թյամբ, որպիսին նկարիչը օրինակ կվերցներ տիրամայր հա-մար և որպիսին միայն հազվադեպ է պատահում Ռուսիայում, ուր ամեն ինչ սիրում է լինել լայն չափերով, ի՛նչ կա-չկա. և՛ սարերը, և՛ անտառները, և՛ ստեպները, և՛ դեմքերը, և՛ շըր-թունքները, և՛ ոտքերը. հենց այն խարտյաշուհին էր, որին նա հանդիպեց ճանապարհին, երբ Նոզդրյովի մոտից հեռա-նում էր, երբ կառապանների կամ ձիերի հիմարության պատ-ճառով նրանց կառքերը այնքան տարօրինակ կերպով իրար դիպան՝ ձիասարքը խճճելով, և Միտյայ քեռին Մինյայ քեռու հետ գործի անցան դրությունը փրկելու։ Չիչիկովն այնպես շփոթվեց, որ չկարողացավ մի կարգին խոսք ասել և մրթմըր-թաց սատանան գիտե թե ի՛նչ, որ արդեն ո՛չ մի կերպ չէր ասի ո՛չ Գրյոմինը, ո՛չ Ձվոնսկին, ո՛չ Լիդինը։

— Դուք դեռ չե՞ք ճանաչում իմ աղջկան,— ասաց նա-հանգապետուհին,— ինստիտուտուհի՛է, հենց նոր ավար-տած։

Նա պատասխանեց, որ արդեն բախտ է ունեցել անսպա-սելիորեն ծանոթանալ. փորձեց էլի որևէ բան ավելացնել, բայց որևէ բան չստացվեց։ Նահանգապետուհին, ասելով երկու-երեք խոսք, վերջապես հեռացավ աղջկա հետ միասին դահ-լիճի մյուս ծայրը, մյուս հյուրերի մոտ, իսկ Չիչիկովը դեռ էլի անշարժ կանգնած էր միևնույն տեղը, ինչպես մի մարդ, որ ուրախ դուրս է եկել փողոց զբոսնելու, այնպիսի աչքերով, որ տրամադրված են նայելու ամեն բանի վրա, և հանկարծ անշարժ կանգ է առել, հիշելով, որ ինչ-որ բան է մոռացել, և արդեն այդ պահին այդ մարդուց ավելի հիմար ոչինչ չի կարող լինել. վայրկենապես անհոգ արտահայտությունը նրա դեմքից անհետանում է. նա ճգնում է հիշել, թե ի՛նչ է մոռա-ցել, արդյոք թաշկինակը չէ՞, բայց թաշկինակը գրպանումն է, փողերը չե՞ն, բայց փողերը նույնպես գրպանումն են, ամեն բան, թվում է, հետն է, բայց, այնուամենայնիվ, ինչ-որ ան-հայտ մի ոգի նրա ականջին շշնջում է, որ նա ինչ-որ բան է մոռացել։ Եվ արդեն ահա նայում է նա շվարած և տար-տամորեն իր առջև շարժվող ամբոխին, թռչող կառքերին, անցնող գնդի եռանկյուն գլխարկներին և հրացաններին, ցու-ցանակին, և ոչինչ լավ չի տեսնում։ Այդպես էլ Չիչիկովը հանկարծ օտարացավ այն բոլորից, որ տեղի էր ունենում

նրա շուրջը։ Այդ պահին տիկիններուի բարեբույր շրթունքներից դեպի նա ուղղվեցին շատ ակնարկներ և հարցմունքներ, որ թափանցված էին նրբությամբ և սիրալիրությամբ...— Արդյոք թույլատրելի՞ է մեզ, երկրի խեղճ բնակիչներիս, լինել այնքան հանդուգն, որ հարցնենք ձեզ, թե ինչի՞ մասին եք երազում։— Որտե՞ղ են գտնվում այն երջանիկ վայրերը, ուր սավառնում է ձեր միտքը։— Կարելի՞ է իմանալ նրա անունը, ով խորասուզել է ձեզ, մտորմունքի այդ քաղցր հովիտը։— Բայց նա այդ բոլորին պատասխանեց վճռական անուշադրությամբ, և հաճելի ֆրազները ջրի տակ անցան։ Նա մինչև անգամ այնքան անքաղաքավարի գտնվեց, որ շուռտով նրանցից հեռացավ ուրիշ կողմ, ցանկանալով տեսնել, թե ո՛ւր գնաց նահանգապետուհին իր աղջկա հետ։ Բայց տիկիններն ըստ երևույթին չէին կամենում նրան թողնել այդքան շուտ. յուրաքանչյուրը ներքուստ վճռեց գործածել ամեն տեսակ գործիքներ՝ այնքան վտանգավոր մեր սրտերի համար, և գործադրել ո՛րը որ ամենալավն էր։ Պետք է նկատել, որ մի քանի տիկիններ, ես ասում եմ մի քանի, այո այն չի, թե բոլորը, մի փոքրիկ թուլություն ունեն, երբ ընթերցանության մեջ մի ինչ-որ առանձնապես լավ բան են նկատում՝ ճակատն է, բերանն է, ձեռքերն են, արդեն մտածում են, որ նրանց դեմքի ամենալավ մասը հենց առաջինը ամենքի աչքին կընկնի և բոլորը հանկարծ մի ձայնով կասեն.— նայեցե՛ք, նայեցե՛ք, ինչպիսի՞ գեղեցիկ հունական քիթ ունի, կամ ինչպիսի՞ ուղիղ կախարդիչ ճակատ։— Որի էլ որ ուսերն են լավ՝ նա նախօրոք հավատացած է, որ բոլոր երիտասարդները կատարելապես կհիանան և հենց մի գլուխ՝ այն պահին, երբ նա մոտից կանցնի, կկրկնեն.— ա՛խ, ի՜նչ հրաշալի են սրա ուսերը,— իսկ դեմքին, մազերին, քթին, ճակատին անգամ չեն նայի, եթե կնայեն էլ, այն էլ իբրև կողմնակի բանի։ Այս կերպ են մտածում կանանցից ոմանք։ Ամեն մի տիկին իր մեջ ուխտ է արել՝ որքան կարելի է զգայլելի լինել պարերի ժամանակ և ամբողջ փայլով ցույց տալ առավելությունը այն բանի, ինչ նրա մեջ ամենամեծ առավելությունն է։ Փոստապետի կինը վալսելով այնպիսի նվաղունությամբ էր գլուխը կողքին հակել, որ իրոք զգացվում էր ինչ-որ մի ոչ աշխարհային բան։ Մի շատ սիրելի տիկին, որ եկել էր բոլորովին ո՛չ նրա հա-

Ճար, որ պարի, նրա հետ պատահած մի հանգամանքի պատճառով, ինչպես ինքը արտահայտվեց՝ փոքրիկ ինկոմոդիտեի[1], որ սիսեռուկի տեսք ուներ, աջ ոտի վրա, որի հետևանքով մինչև անգամ հարկադրված էր հագնել թավշյա կոշիկներ,— այնուամենայնիվ, չհամբերեց և մի քանի պտույտ գործեց թավշյա կոշիկներով, հատուկ այն նպատակով, որպեսզի փոստապետի կինը շատ էլ իրեն մեծ բան չկարծի։

Սակայն այդ բոլորը ո՛չ մի կերպ ենթադրված ներգործությունը չարին Ջիչիկովի վրա։ Նա անգամ չէր նայում այն պտույտներին, որ գործում էին տիկինները, այլ անդադար թաթերի վրա էր բարձրանում գլխներից վերև, տեսնելու, թե ո՛ւր կարող էր գնացած լինել հետաքրքրական խարտյաշիկը, կռանում էր ցած նույնպես՝ նայելով ուսերի և մեջքերի արանքով, և վերջապես գտավ և տեսավ նրան, նստած մոր հետ, որի գլխին վեհորեն տարուբերվում էր ինչ-որ արևելյան չալմա՝ փետուրով։ Թվաց թե, կարծես նա ուզում էր գրոհով գրավել նրանց. արդյոք գարնանային տրամադրությո՞ւնն ազդեց նրա վրա կամ մեկը ետևից հրեց նրան, միայն թե վճռակատապես առաջ խցկվեց՝ ո՛չ մի բանի վրա ուշադրություն չդարձնելով, հարկերի կապալառուն այնպիսի մի դրդում ստացավ նրանից, որ օրորվեց և հազիվհազ պահեց իրեն մի ոտի վրա, եթե ոչ՝ անշուշտ իր ետևում ամբողջ մի շարք հատակին կգլորեր. փոստապետը նույնպես ետ-ետ գնաց և նրան նյեց՝ զարմանքով խառն բավականին նուրբ հեգնանքով, բայց Ջիչիկովը նրանց չնայեց. նա միայն հեռվում տեսնում էր խարտյաշիկին, որ երկար ձեռնոցներ էր հագել և անկասկած այրվում էր ցանկությունից՝ թռչելու պարկետի վրայով։ Իսկ այնտեղ արդեն մի կողմում չորս զույգեր թափով մազուրկա էին պարում. կրունկները ջարդում էին հատակը, և զորային շտաբս-կապիտանը աշխատում էր թե՛ հոգով, թե՛ մարմնով, թե՛ ձեռքերով, թե՛ ոտքերով, ֆռռացնելով այնպիսի պայեր[2], որ ոչ ոքի եքազումն էլ չի պատահել ֆռռացնել։ Ջիչիկովը սուրաց մազուրկայի կողքից, համարյա հենց կրունկների վրայով ուղիղ դեպի այն տեղը, ուր նստած էր նահանգապետուհին իր աղջկա հետ։ Սակայն նա նրանց մոտեցավ շատ ան-

1 Անհարմարություն, դժվարություն։

2 Պա — պարի չարժում։

վստահ, ոտները չսպասացրեց այնպես ժիր և Ֆրանտավարին մինչև անգամ մի փոքր կանգ առավ, և նրա բոլոր շարժումներում ինչ-որ մի խեղճություն զգացվեց։

Չի կարելի ասել հաստատորեն՝ արդյո՞ք իսկապես մեր հերոսի մեջ զարթնեց սիրո զգացումը, անգամ կասկածելի է, որ այս կարգի պարոնները, այսինքն՝ ո՛չ այնպես ասենք հաստատամիտները, սակայն և ո՛չ այնպես, որ ասենք լղարիկ, ընդունակ էին սիրո, սակայն այս բոլորով հանդերձ այստեղ կար ինչ-որ մի տարօրինակ բան, ինչ-որ մի այն տեսակ բան, որ-նա ինքն էլ չի կարող իրեն բացատրել. նրան այնպես թվաց, ինչպես հետո ինքն էլ գիտակցեց, որ ամբողջ պարթևկությիը իր բոլոր դրույցով ու աղմուկով մի քանի րոպե սկսեց տեղի ունենալ ինչ-որ հեռվում, ջութակներն ու փողերը հնչում էին ինչ-որ լեռների այն կողմում, և ամեն ինչ պատրաստվեց մշուշով՝ նման պատկերում անփույթ նկարած դաշտին, եվ այդ մշուշային, մի կերպ գծագրած դաշտի միջից սարգ և ավարտուն առանձնանում էին միայն դրսվիլ խարտյաշլիկի նուրբ գծերը. նրա ձվաձև կլորացող փոքրիկ դեմքը, նրա նրբինդ, նրբենի իրանը, որպիսին ունենում է ինստիտուտուհին առաջին ամիսներին՝ ավարտելուց հետո, նրա սպիտակ, համարյա հասարակ զգեստը, որ թևքն և ճարպկորեն գրկում է ամեն կողմից մատաղ և գեղանկար անդամները, որոնք պատկերվում էին ինչ-որ մարքուր դծերով։ Թվում էր, որ նա նման էր մի անծանոթ խաղալիքի՝ որոշակիորեն փղոսկրից հղկած. նա էր միայն, որ սպիտակին էր տալիս և առանձնանում սլայծառ և փայլուն՝ պղտոր և անթափանցիկ ամբոխի միջից։

- Սրևի թե այդպես է լինում աշխարհում, երևի թե նաև Ջիլիկովները կյանքում մի քանի րոպեով պոետ են դառնում, բայց պոետ իսոքը արդեն չափազանց է։ Համենայն դեպս նա ինչ-որ մի բանով մի տնսակ իրեն զգում էր կատարելապես երիտասարդ, վայ թե՝ հուսարական սպա։ Տեսնելով նրանց կողքի դատարկ աթոռը, նա իսկույն զբաղեցրեց այն։ Խոսակցությունը սկզբում չէր կպչում, բայց հետո բանը կարգի ընկավ, և նա սկսեց անգամ ֆորսի[1] գալ, բայց... բայց այստեղ

1 Ֆորս — ժրություն, եռանդ։

սրտի մեծ ցավով պետք է նկատել, որ ծանրակշիռ և կարևոր պաշտոններ գրաված մարդիկ ինչ-որ մի տեսակ ծանրավուն են դամաների հետ խոսակցելիս. դրանում վարպետ են պարոնայք պորուչիկները, և ո՛չ մի դեպքում կապիտանի աստիճանից բարձրները։ Թե ինչպե՛ս են անում նրանք՝ դա աստծուն է հայտնի. թվում է, շատ էլ խորհրդատու բաներ չեն ասում, բայց աղջիկը հենց մի գլուխ ճոճվում է ծիծաղից աթոռի վրա. իսկ պետական խորհրդատուն ամուսնած գիտե թե ի՛նչ կպատմի, կա՛մ կխոսի այն մասին, որ Ռուսաստանը շատ ընդարձակ տերություն է, կա՛մ բաց կթողնի մի հաճոյախոսություն, որ անշուշտ հնարված է ո՛չ առանց սրամտության, բայց դրանից սարսափելի գրքի հոտ է գալիս. եթե կասի էլ մի որևէ ծիծաղելի բան, ապա ինքն անկասկած ավելի շատ կծիծաղի, քան այն դաման, որ նրան լսում է։ Այստեղ դա նկատված է նրա համար, որպեսզի ընթերցողները տեսնեն, թե ինչո՛ւ խարտյաշիկը մեր հերոսի պատմածների ժամանակ սկսեց հորանջել։ Հերոսը սակայն այն բոլորովին չէր նկատում, պատմելով բազմաթիվ հաճելի բաներ, որ նրան պատահել է պատմել նման դեպքերում զանազան տեղերում, այն է՝ Սվմբլրսկի նահանգում, Սոֆրոն Իվանովիչ Բեսպեչնու մոտ, որտեղ այդ պահին ներկա էր նրա դուստրը՝ Ադելաիդա Սոֆրոնովնան իր երեք տալերով՝ Մարիա Գավրիլովնան, Ալեքսանդրա Գավրիլովնան և Ադելգեյդա Գավրիլովնան. Ֆեոդոր Ֆեոդորովիչ Պերեկրոևի մոտ՝ Ռյազանի նահանգում. Ֆլոր Վասիլևիչ Պոբեդոնոսնու մոտ՝ Պենզայի նահանգում, և նրա եղբայր Պյոտր Վասիլևիչի, որտեղ էին նրա քենին՝ Կատերինա Միխայլովնան և քեռու թոռան քույրերը՝ Ռոզա Ֆեոդորովնան և Էմիլիա Ֆեոդորովնան. Վյատկայի նահանգում Պյոտր Վարսոնոֆևիչի մոտ, որտեղ էին նրա հարսի քույր Պելագեյա Եգորովնան՝ քրոջ աղջիկ Սոֆիա Ռոստիսլավնայի, երկու խորթ քույրերի՝ Սոֆիա Ալեքսանդրովնայի և Մակլատուրա Ալեքսանդրովնայի հետ։

Բոլոր տիկիններին ամենևին դուր չեկավ Չիչիկովի այս վարվեցողությունը։ Նրանցից մեկը դիտմամբ անցավ նրա մոտով, որպեսզի զգացնի այդ նրան, և անգամ նկատելի անփութությամբ դիպավ խարտյաշիկին իր զգեստի հատ շրջբիզով, իսկ շարֆով, որ փոփոում էր նրա ուսերի շուրջը՝

նա այնպես տեսորինեց, որ Ծայրով թափահարեց նրա դեմքին. նո՛ւյն այդ պահին նրա ետևում կանգնած տիկիններից մեկի շրթունքներից մանուշակի բուրմունքի հետ միասին փչեց բավականին ծակող և թունավոր նկատողություն։ Սակայն կա՛մ նա իսկապես չլսեց, կա՛մ ձևացավ, թե չի լսում, միայն դա լավ բան չէր. որովհետև տիկինների կարծիքը պետք է թանկ գնահատել. նա դրանում զղջաց, բայց արդեն հետո, կնշանակի՝ ուշ։

Ջայրույթը՝ ամեն բանով արդարացի՝ արտահայտվեց շատ դեմքերի վրա։ Որքան էլ մեծ էր Ջիչիկովի կշիռը հասարակության մեջ, թեև նա միլիոնատեր էր և նրա դեմքը արտահայտում էր մի վեհություն և անգամ ինչ-որ մարսիական և ռազմական բան, սակայն կան բաներ, որ տիկինները ո՛չ ոքի չեն ներում, ո՛վ ուզում է թող լինի նա, և այդ ժամանակ կոպի՛ծ բան է։ Կան դեպքեր, երբ կինը, որքան էլ նա տղամարդու հետ համեմատած թույլ ֆինի և բնավորությամբ անուժ, բայց հանկարծ դառնում է ո՛չ միայն տղամարդուց էլ ամուր, այլև ամեն ինչից, ինչ կա աշխարհիս երեսին։ Ջիչիկովի ցուցաբերած արհամարհանքը, որ համարյա կանխամտածված չէր, տիկինների մեջ մինչև անգամ առաջ բերեց մի համաձայնություն, որ կործանման անդունդի վրա էր աթոռը անպատկառորեն գրավելուց հետո։ Ջիչիկովի մի քանի պատահաբար ասած չոր և սովորական խոսքերի մեջ գտան խոցող ակնարկներ։ Ի լրացումն դժբախտությունների՝ երիտասարդներից ինչ-որ մեկը տեղն ու տեղը շարադրեց սատիրական մի բանաստեղծություն՝ պարող հասարակության մասին, առանց որի, ինչպես հայտնի է, չեն կարող անց կենալ նահանգական պարերեկույթները։ Այդ բանաստեղծությունը տեղն ու տեղը վերագրվեց Ջիչիկովին։ Ջայրույթը աճեց, և տիկիններն սկսեցին զանազան անկյուններում խոսել նրա մասին ամենաանբարեհաճ կերպով. իսկ խեղճ ինստիտուտուհին կատարելապես ոչնչացվեց և նրա դատավճիռը արդեն ստորագրված էր։

Այնինչ՝ մեր հերոսի համար պատրաստվում էր մի ամենաանախորժագույն անսպասելիություն. այն պահին, երբ խարտյաշիկը հորանջում էր, իսկ նա նրան պատմում էր այս կամ այն զանազան ժամանակներ պատահած փոքրիկ պատ-

Մուքյուններ և անգամ արդեն սկսում էր շոշափել հումական փիլիսոփա Դիոգենեսին, վերջին սենյակից հայտնվեց Նոզդրյովը։ Բուֆետի՞ց արդյոք դուրս պրծավ նա, թե՞ փոքրիկ, կանաչ հյուրասենյակից, ուր թղթախաղ էր տեղի ունենում ավելի ուժեղ, քան սովորական վիստը, իր սեփակա՞ն կամքով, թե՞ դուրս հրեցին նրան, միայն՝ նա հայտնվեց ուրախ, խնդուն, քևանցուկ արած դատախազին, որին հավանորեն քաշում էր արդեն բավական ժամանակ, որովհետև խեղճ դատախազը իր խիտ հոնքերը պտտեցնում էր ամեն կողմ, կարծես մի միջոց հնարելու համար ազատվելու այդ ընկերական քևանցուկ ճանապարհորդությունից։ Իսկապես դա անտանելի էր։ Նոզդրյովը, քեֆովացա՛ծ երկու բաժակ թեյից, ո՛չ առանց ռոմի, փչում էր անողորմաբար։ Հեռվից տեսնելով նրան՝ Չիչիկովը վճռեց անգամ զոհաբերություն անել, այսինքն թողնել իր նախանձելի տեղը և որքան կարելի է շտապ հեռանալ. ոչինչ լավ բան չէր գուշակում նրան այդ հանդիպումը։ Բայց հակառակի պես մեջտեղ եկավ նահանգապետը, որը սրտաբուխ ուրախություն հայտնեց, որ գտավ Պավել Իվանովիչին, և կանգնեցրեց նրան, խնդրելով դատավոր լինել մի վեճի իր և երկու տիկինների մեջ այն մասին՝ տևակա՞ն է կանացի սերը թե ոչ. մինչդեռ Նոզդրյովը արդեն տեսել էր նրան և գալիս էր ընդառաջ։

— Ա՛, Խերսոնի կալվածատե՛ր, Խերսոնի կալվածատե՛ր,— բացականչեց նա մոտենալով և լիաթոք քրքջալով, որից դողում էին նրա թարմ, գարնան վարդի նման կարմիր այտերը,— հը՛, մեռելներ շա՞տ գնեցիր։ Ախր չգիտե՛ք, ձերդ գերազանցություն,— բղավեց նա տեղն ու տեղը՝ դառնալով նահանգապետին,— նա մեռած հոգիներ է գնում։ Աստվա՛ծ վկա։ Լսի՛ր, Չիչիկով, ախր դու, ես քեզ այս աստում եմ բարեկամաբար, ահա տե՛ս, այս բոլորս քո բարեկամներն ենք, ահա նորին գերազանցությունն էլ այստեղ է, ես քեզ կկախեի, աստվա՛ծ վկա, կկախեի։

Չիչիկովը պարզապես չգիտեր, թե որտե՛ղ է նստած։

— Կհավատա՞ք արդյոք, ձերդ գերազանցություն,— շարունակեց Նոզդրյովը,— հենց որ նա ինձ ասաց՝ ծախի՛ր մեռյալ հոգիներդ, ես ուղղակի ծիծաղից պայթեցի։ Այստեղ եմ գալիս, ինձ ասում են, թե երեք միլիոնի գյուղացի է գնել տե-

ղահանման կարգով. ինչպե՞ս թե տեղահանման կարգով, նա ինձնից մեռյալ հոգիներ էր գնում՝ լսի՛ր, Ջիչիկով. դե դու անասուն ես, աստված վկա, անասուն ես, ահա և նորին գերազանցությունն էլ այստեղ է, ճիշտ չէ՞, դատախազ՝

Բայց դատախազը, Ջիչիկովը և նահանգապետը այնպիսի շփոթության մեջ ընկան, որ ամենևին չիմացան, թե ի՛նչ պատասխանեն, մինչդեռ Նոզդրյովը բոլորովին ուշադրություն չդարձնելով՝ կլսահաճեցած, ճառ էր ասում.— եղբա՛յր, դու, դու... ես քեզանից ձեռք չեմ քաշի, մինչև չիմանամ, թե ինչո՛ւ համար էիր մեռյալ հոգիներ գնում՝ լսի՛ր, Ջիչիկով, ախր քեզ, ճշմարիտ, ամոթ է, դու, ինքդ էլ գիտես, որ ինձանից լավ բարեկամ չունես՝ Ահա նորին գերազանցությունն էլ այստեղ է, ճիշտ չէ՞, դատախազ՝ Դուք չեք հավատա, ձերդ գերազանցություն, թե ինչպե՛ս մենք իրար հետ կապված ենք, այսինքն՝ ուղղակի եթե դուք ասեիք, ահա, ես այստեղ կանգնած եմ, իսկ դուք ասեիք՝ Նոզդրյով, խղճով ասա, ո՞վ է քեզ համար ավելի թանկ, հարազատ հայրդ թե՞ Ջիչիկովը. կասեմ՝ Ջիչիկովը, աստվա՛ծ վկա... Թուլլ տուր, հոգյակս, քեզ մի բեզե[1] դրոշմեմ՝ Արդեն թուլլ տվեք, ձերդ գերազանցություն, որ ես նրան համբուրեմ՝ Այո, Ջիչիկով, էլ մի՛ հակառակի, մի բեզեիկ թուլլ տուր կնքել քո սպիտակաձյուն այտի վրա՝ Նոզդրյովը այնպես հրվեց իր բեզեով, որ քիչ մնաց փուվեր հատակին. նրանից բոլորը ետ քաշվեցին և այլևս չէին լսում, բայց և այնպես նրա խոսքերը մեռյալ հոգիների գնման մասին արտասանվեցին ամբողջ կոկորդով և զուգակցվեցին այնպիսի քնդալից ծիծաղով, որ գրավեցին անգամ նրանց ուշադրությունը, ովքեր գտնվում էին սենյակի ամենահեռու անկյուններում՝ Այդ նորությունը այնքան տարօրինակ թվաց, որ բոլորը կանգ առան ասես փայտացած, հիմար-հարցական արտահայտությամբ՝ Ջիչիկովը նկատեց, որ շատ տիկիններ իրար աչքով արին ինչ-որ շար, կծու քմծիծաղով, և մի քանի անձերի դեմքի արտահայտությունը դարձավ մի տեսակ երկիմաստ, որ ավելի մեծացրեց այդ շփոթությունը՝ Որ Նոզդրյովը ծայրահեղ ստախոս է, դա հայտնի էր ամենքին, և զարմանալի չէր նրանից լսել կատարելապես մի անմիտ բան.

[1] Բեզե— համբույր (ֆր.)՝

բայց մահկանացուն, ճշմարիտ որ, դժվար է անգամ հասկանալ, թե ի՛նչպես է շինված այդ մահկանացուն. որքան էլ որ սուրբ լինի նորությունը, միայն թե նորություն լինի, նա անպատճառ այդ կհաղորդի ուրիշ մահկանացուի, գոնե հենց միայն նրա համար, որ ասի.— տեսնք՝ ի՛նչ սուտ են բաց թողել, իսկ մյուս մահկանացուն բավականությամբ ականջ կկախի՝ լսելու, թե հետո էլ ինքը կասի.— այո՛, դա կատարելապես ստոր սուտ է, որի վրա չարժի ոչ մի ուշադրություն դարձնել և դրանից հետո իսկույն կգնա որոնելու երրորդ մահկանացուին, որ պատմելով նրան՝ հետո նրա հետ միասին բացականչեն ազնիվ վրդովմունքով,— ինչպիսի՛ ստոր սուտ։— Եվ դա անպայման կշրջի ամբողջ քաղաքը, և բոլոր մահկանացուները, որքա՛ն որ կան, անպայման կշտանալու չափ կխոսեն և հետո կխոստովանեն, որ դա արժանի չէ ուշադրության և պատվաբեր չէ դրա մասին խոսել։

Այս, ըստ երևույթին, դատարկ, դեպքը նկատելիորեն փչացրեց մեր հերոսի տրամադրությունը։ Որքան էլ հիմար են տխմարի խոսքերը, բայց երբեմն նրանք բավական են, որ խռովեն խելացի մարդուն։ Նա սկսեց անհարմար, վատ զգալ իրեն. ի՛սկ և իսկ կարծես գեղեցիկ մաքրված կոշիկներով հանկարծ մտավ ցեխուտ, հոտած տղմաջուրը, մի խոսքով, վա՛տ էր, շա՛տ վատ։ Նա փորձեց չմտածել այդ մասին, աշխատեց զրվել, ուշադրությունը ուրիշ բաների վրա դարձնել, նստեց վիստ խաղալու, բայց ամեն բան ձախ գնաց. երկու անգամ նա գնաց ուրիշի խաղաթղթի վրա և մոռանալով որ երրորդով չեն խփում՝ ողջ ձեռքը թափահարեց և հիմարաբար խփեց հենց իր թուղթը։ Նախագահը ո՛չ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե ինչպե՛ս Պավել Իվանովիչը, որ այդպես լավ և կարելի է ասել՝ նուրբ հասկանում էր խաղը, կարող էր այդպիսի սխալներ անել և հարվածի տակ դրեց նրա ագռավի թագավորին, որի վրա նա, ի՛ր իսկ արտահայտությամբ, հույս ուներ, ինչպես աստծու վրա։ Իհարկե փոստապետը և նախագահը և անգամ ինքը ոստիկանապետը, ինչպես սովորություն է, կատակով ծիծաղում էին մեր հերոսի վրա, որ արդյոք չի՞ սիրահարվել նա, և թե իբր մենք գիտենք, որ Պավել Իվանովիչի սրտիկը կազում է,—գիտենք էլ, թե ումից է խոցված, բայց այդ բոլորը ո՛չ մի կերպ նրան չէր մխիթա-

թում, որքան էլ նա փորձում էր քմծիծաղել և կատակով պատասխանել։ Ընթրիքի ժամանակ ևս նա ո՛չ մի կերուկ ի վիճակի չէր բացվելու, չնայած որ հասարակությունը սեղանի ջուրջ հաճելի էր և նոգդրյովին վաղուց դուրս էին հանել. որովհետև անգամ տիկիններն իրենք վերջապես նկատեցին, որ նրա վարվեցողությունը չափազանց աղմկարար դարձավ։ Նոտիլիոնի[1] մեջտեղում նա նստեց հատակի վրա և սկսեց ձեռը գցել պարոնների քղանցքներին, որ արդեն ո՛չ մի բանի նման չէր, ըստ տիկինների արտահայտության։ Ընթրիքը շատ ուրախ էր, բոլորի դեմքերը, որ երևում-կորչում էին եռճղի մոմակալների, ծաղիկների, կոնֆետների և շշերի առաջ՝ արտահայտում էին ամենաանբռնազրոս գոհություն։ Սպաները, տիկինները, ֆրակները, ամեն ինչ դարձել էր սիրալիր, անգամ մինչև քաղցրամեղցրություն։ Տղամարդիկ վեր էին քրտչում աթոռներից և վազում էին սպասավորների ձեռքից սկուտեղները խլելու, որպեսզի արտասովոր ճարպկությամբ առաքարկեն տիկիններին։ Մի գնդապետ սոուսով ափսեն տվեց դամային՝ մերկացրած սրի ծայրին։ Գատեաուելի տարիքի տղամարդիկ, որոնց մեջ նստել էր Չիչիկովը, բարձրաձայն վիճում էին, բանիմաց խոսքերի վրա ուտելով ձուկը կամ տավարենին, որ անխնա թաթախում էին մանանեխի մեջ և վիճում էին այն բաների մասին, որոնց նա անգամ միշտ մասնակցում էր, բայց նա նման էր ինչ-որ մի մարդու, որ հոգնել է կամ ջարդվել է երկար ճանապարհին, որի գլուխը բան չի մտնում, և որը ուժ չունի ո՛չ մի բանի մասնակցելու։ Նա միայն անգամ չսպասեց ընթրիքի վերջանալուն և հյուրանոց վերադարձավ անհամեմատ վաղ, քան սովորություն ուներ։

Այնտեղ, այն փոքրիկ սենյակում, որ այնքան ծանոթ է ընթերցողին, կոմոդը առաջը դրած դռնով և երբեմն անկյուններից դուրս նայող տարականներով, նրա մտքերի և հոգու վիճակը նույնքան անհանգիստ էր, որքան անհանգիստ էր այն բազկաթոռը, որի վրա նստած էր նաև Տհաճ, անհանգիստ մի բան կար նրա օրտում, ինչ-որ մի ճնշող դատարկություն էր մնացել այնտեղ— Ծատանա՛ն տանի քեղ ձեր բոլորիդ, ովքեր որ հնարել եք այս պարերեկույթները,— ասում էր նա

---

1 Նոտիլիոն — պար, որ կատարում էին պարերեկույթի վերջում։

զրոյվված։— Հետո՞, ի՞նչ էին հիմարաբար ուրախացել։ Նահանգում անբերրիություն է, թանկություն, իսկ նրանք՝ պարերեկո՜ւյթ։ Մեծ բանի են. զարդարվել են կնկա փալասներով։ Արմանք-զարմանք. այսինչ կինը վրան է փաթաթել հազար ռուբլի՜։ Չէ՞ որ դա գյուղացիական տուրքի հաշվին է, կամ որ ավելի վատթարն է, մեր ու մեզ նմանների խղճի հաշվին է։ Չէ՞ որ հայտնի է, թե ինչո՜ւ ես կաշառք վերցնում և հոգիդ սևացնում. նրա համար, որ կնոջդ շալ առնես կամ զանազան ոորրոնների[1] համար, սատանան տանի, թե ինչպե՜ս են կոչվում դրանք։ Եվ ինչի՞ցն է. որպեսզի որևէ շուլալող Սիդորովնա չասի, թե փոստապետի կնոջ զգեստը ավելի լավն է, և ահա նրա պատճառով գնա՜ց հազար ռուբլին։ Գոռում են՝ «պարերեկո՜ւյթ, պարերեկո՜ւյթ, ուրախությո՜ւն». ուղղակի ա՜ղբ. պարերեկույթ, դա ռուսական հոգու բան չէ, ռուսական քնավորության մեջ չէ դա, սատանան գիտե, թե ի՜նչ բան է. հասակն առած, չափահաս մեկը հանկարծ դուրս կպրծնի ամբողջովին սև հագած, փետրած, զգեստը պրկած, ոնց որ սատանա, և կսկսի ոտներով հունցելը։ Մի այլ ոք, անգամ կանգնած տեղը, մեկ ուրիշի հետ տաք-տաք խոսում է կարևոր գործի մասին և նույն պահին էլ ոտները այծի նման դեսուդեն է գցում աջ ու ձախ... Բոլորը կապկությունից է, բոլորը կապկությունից է։ Որ ֆրանսիացին քառասուն տարեկան հասակում նույնպիսի երեխա է եղել, ինչպիսին՝ սատանհինգի ժամանակ, դե, ե՛կ, մենք էլ։ Չէ՞, ճշմարիտ... ամեն պարերեկույթից հետո, իսկապես, կարծես ինչ-որ մեղք ես գործել. հիշել անգամ չի ցանկանում մարդ դրա մասին։ Գլխում ուղղակի բան չի մնում աշխարհիկ մարդու հետ խոսելուց հետո. ամեն բան կխոսի, ամեն բան թեթև կշռադատի, ամեն ինչ կասի, որ պոկել է գրքերից՝ խայտերանգ, գեղեցիկ, բայց գոնե գլխումդ մի քան մնա դրանից. և հետո տեսնում ես, որ խոսակցությունը անգամ հասարակ վաճառականի հետ, որը միայն ի՜ր գործը գիտե, բայց գիտե լավ, փորձով, այդ բոլոր չհկչհկաննկրից լավ է։ Ախր ի՞նչ կարող ես քամել այդ պարերեկույթից։ Ահա, ասենք, եթե մի որևէ գրող մտագրվել է նկարագրել բոլոր այս տեսարանը, այնպես, ինչպես ես կա՛մ է՛, գրքի մեջն էլ դա

1 Վաճառքի ցցնաս։

դուրս կգար այնպես անմիտ, ինչպես իսկականի մեջ։ Ի՞նչ բան է. բարոյակա՞ն է արդյոք, թե՞ անբարոյական, պարզապես սատանան գիտե, թե ի՛նչ բան է։ Կթքես ու հետո գիրքը կփակես։— Այսպես անբարենպաստ կարծիք հայտնեց Ջիչիկովը ընդհանրապես պարերեկույթների մասին. բայց թվում է, որ այստեղ զայրույթի ուրիշ պատճառ էլ կար։ Գլխավոր զայրույթը պարերեկույթի վրա չէր, այլ այն բանի վրա, որ ինքը սայթաքեց, հանկարծ ամենքի աչքում երևաց աստված գիտե թե ի՛նչ տեսքով, որ խաղաց ինչ-որ տարօրինակ, երկդիմի դեր։ Անշուշտ, նայելով ողջամիտ մարդու աչքով, նա տեսնում էր, որ այդ բոլորը դատարկ բան է, որ հիմար խոսքը ոչինչ չի նշանակում, մանավանդ հիմա, երբ գլխավոր գործն արդեն արված է՝ ինչպես հարկն է։ Բայց տարօրինակ է մարդը, նրան խիստ դառնացնում է հենց նրա՛նց չարակամությունը, որոնց նա չէր հարգում և որոնց մասին խստորեն էր արտահայտվում՝ վատաբանելով նրանց ունայնամտությունն ու զարդազգեստները։ Դա առավել ևս վրդովիչ էր նրա համար, որ գործը պարզ քննելով նա տեսնում էր, որ դրա պատճառը մասամբ և ինքն էր։ Սակայն նա իր վրա չբարկացավ, և դրանում, իհարկե, նա իրավացի էր։ Մենք բոլորս փոքրիկ թուլություն ունենք մի քիչ խնայելու ինքներս մեզ, աշխատում ենք ավելի լավ է՝ գտնել որևէ մերձավոր, որի վրա կարելի լինի թափել մեր բարկությունը, օրինակ՝ սպասավորի վրա, ստորադրյալ պաշտոնյայի վրա, որը հենց այդ պահին գտնվում է ձայտեղ, կնոջ վրա, կամ վերջապես աթոռի վրա, որ շպրտվում է սատանան գիտե թե ո՛ւր, այնպես որ թափով դռանը կդիպչի, և դուրս կթռչեն բռնակն ու մեջքի տախտակը, այսինքն թե՝ ահա զայրույթն ի՛նչ բան է։ Այդպես էլ Ջիչիկովը շուտով գտավ այդ մերձավորին, որ պիտի իր ուսերի վրա կրեր այն բոլորը, ինչ որ կարող է ներշնչել զայրույթը։ Այդ մերձավորը նոզդրյովն էր, և ասել չի ուզի, որ նա այնպես մշակվեց բոլոր կողերով ու կողմերով, որպես թերևս մշակվում է միայն փոստի որևէ խաբեբա ստարոստան կամ կառապանը որևէ ճանապարհներ շատ տեսած, փորձված կապիտանի, երբեմն էլ գեներալի կողմից, որը շատ արտահայտություններից բացի, որ դասական են դառել, ավելացնում է դեռևս շատ անհայտները, որոնց հնարումը պատկանում է

անձնապես իրեն։ Նոզդրյովի ամբողջ ազգ ու տակը շոշափեց, և շատերը նրա գերդաստանի անդամներից բարձրացող գծով խիստ տուժեցին։

Սակայն ամբողջ ժամանակ, որ նա նստած էր իր կոշտ բազկաթոռին՝ մտքերով և անքնությամբ անհանգիստ եղած, ջանադիր կերպով հյուրասիրելով Նոզդրյովին և նրա տոհմին, և նրա դիմացը այրվում էր ճրագու մոմը, որի պատրույգը վաղուց արդեն ծածկվել էր այրուքի սև գդակով՝ ամեն րոպե սպառնալով հանգչել, և նրան էր նայում պատուհանից կույր, մութ գիշերը, պատրաստ՝ կապտելու մոտեցող լուսաբացից, և հեռվից իրար ձայն էին տալիս աքաղաղները, և բոլորովին քնած քաղաքում՝ կարող էր պատահել՝ մի որևէ տեղ հազիվ-հազ քաշ էր գալիս մի ֆրիզային շինել[1], մի տառապյալ,— անհայտ դասի և աստիճանի, որը գիտե միայն մի (ավա՜ղ) խիստ տրորված, ռուս անհոգ ժողովրդի ճանապարհը,— ահա այդ պահին քաղաքի մյուս ծայրում մի դեպք էր տեղի ունենում, որ պատրաստվում էր ավելացնելու մեր հերոսի դրության անախորժությունը։ Հենց քաղաքի հեռավոր և խուլ փողոցներում շառաչում էր բոլորովին տարօրինակ մի կառք, որ տարակուսանք էր առաջացնում, թե ի՛նչ կլինի դրա անունը։ Նա նման չէր ո՛չ տարանտասի, ո՛չ կալյասկայի, ո՛չ բրիչկայի, այլ ավելի շուտ նման էր հաստաթուշ տոզած ձմերուկի՝ անիվների վրա դրած։ Այդ ձմերուկի թշերը, այսինքն դռնակները, որ կրում էին դեզին ներկի հետքեր, շատ վատ էին փակվում՝ թոկերով ամրացրած բռնակների և կապերի վատ վիճակի պատճառով։ Ձմերուկը լցված էր չթե բարձերով՝ քսակների, գլաններ և պարզապես բարձերի ձևով, տոզեցրած էր տոպրակներով՝ մեջները հացեր, կալաչներ, կոկուրիկաներ[2], սկորոդումկաներ[3] և կուենդելներ[4] եփած խմորից։ Հավի պիրոգը և պիրոգ-ռազսոլնիկը[5] մինչև անգամ վերև էին նա-

---

1 Հաստ, խավոտ՝ բալկայի տիպի գործվածքից կարած շինել։ (Հին Ֆր.)։

2 Կոկուրկա — կարկանդակ (կաթով, ձվով, յուղով հունցած)։

3 Ջվածեղ։

4 Կիսակլոր քաղցրահաց։

5 Պիրոգ-ռազսոլնիկ— հավի մսով, արինջի շիլայով, կոտորած ձվով և վարունգաթթվի աղաջրով խմորեղեն։

յում։ Կառքի հետնակողմը բռնել էր մի անձնավորություն լաքեյական ծագումով, բամբակե զոլավոր կտորից կարած տնական բաճկոնակով, չածիլված մորուքով, որը արդեն քեռև սպիտակել էր, մի անձնավորություն, որ հայտնի է տանու մարդ անունով։ Երկաթե ճարմանդների և ժանգոտ պտուտակների աղմուկն ու ճռինչը զարթեցրին քաղաքի մյուս ծայրում ոստիկանական պահակին, որը բարձրացնելով իր կրկնատեզ գեղարդը՝ քունը գլուխը, ի՛նչքան ուժ ուներ գոռաց.— ո՞վ է գալիս.— բայց տեսնելով, որ ո՛չ ոք չէր գալիս, այլ հեռվից միայն շառաչյուն էր լսվում, իր օձիքին ինչ-որ մի գազան բռնեց և մոտենալով լապտերին՝ մահապատժի ենթարկեց նրան տեղն ու տեղը իր եղունգի վրա։ Ձրից հետո մի կողմ դնելով իր կրկնատեզ գեղարդը՝ նորից քնեց համաձայն իր ասպետության կանոնների։ Ձիերը շարունակ ընկնում էին առաջին ծնկների վրա, որովհետև պայտած չէին և ընդ սմին, ինչպես երևում է, քաղաքային հանգիստ սալահատակը նրանց քիչ էր ծանոթ։ Ծանր կառքը, մի քանի պտույտներ գործելով փռոցից փողոց, վերջապես շրջվեց մի մութ միջափողոց, Նեռտրիչկայի փողոցի Նիկոլի ոչ մեծ ծխական եկեղեցու կողքով անցավ և կանգ առավ ավագ քահանայի կնոջ տան դարպասի առաջ։ Բրիչկայից դուրս եկավ մի աղչիկ՝ քաշկինակը գլխին, բամբկուն շորով և, երկու բռունցքներով այնպես ուժգին հասցրեց դարպասին, որ մի տղամարդու ուժի արժեր (բամբակե զոլավոր կտորից կարած բաճկոնակով մարդուն արդեն հետո ոտներից քաշեցին, որովհետև մեռածի պես քնել էր)։ Շները հաչեցին, և դարպասը, բերանը բաց անելով, վերջապես կուլ տվեց՝ թեև մեծ դժվարությամբ, ճամփորդական այդ անճոռնի արտադրությունը։ Կառքը ներս գնաց նեղ բակը, որը լցված էր փայտով, հավանոցներով և ամեն տեսակ մառանիկներով. կառքից դուրս եկավ տիրուհին. այդ կալվածատիրուհին էր, կոլեգիական քարտուղարի այրի Կոռոբոչկան։ Պառավը հենց շուտով հեռուն մեկնելուց հետո այնպիսի մի անհանգստության մեջ ընկավ՝ չլինի՞ թե նա իրեն խաբի, որ երեք գիշեր շարունակ չքնելով՝ վճռեց գնալ քաղաք, չնայած որ ձիերը պայտած չէին, և այնտեղ իմանալ ստուգորեն, թե մեռած հոգիների գինը չուվաչում ի՞նչ է, և արդյոք չի՞ վրիպել ինքը, աստված հետու տանի, ծախելով նրանց, կարող է պա-

ահել՝ եռապատիկ էժան։ Թե ի՛նչ հետևանք առաջացրեց այդ դալուստը՝ ընթերցողը կարող է տեղեկանալ մի խոսակցությունից, որ տեղի ունեցավ մեկ-երկու տիկինների մեջ։ Սույն խոսակցությունը... սակայն լավ սույն խոսակցությունը լինի հետևյալ գլխում։

ԳԼՈՒԽ IX

Վաղ առավոտյան, անգամ ավելի վաղ այն ժամանակից, որ N քաղաքում նշանակված է այցի համար, կիսահարկով և կապույտ սյուներով փայտյա նարնջագույն տան դռներից դուրս սավառնեց մի տիկին՝ վանդակավոր պճնամոլական կլոկով[1], որին ուղեկցում էր լաքեյը՝ մի քանի օձիքավոր շինելով և կլոր, պլպլուն, ոսկե տրեզավոր գդակով։ Տիկինը նույն ժամին իսկույն արտասովոր շտապողությամբ ներս սահեց շքամուտքի մոտ կանգնած կառքը՝ շրջած աստիճանների վրայով։ Լաքեյը հենց տեղն ու տեղը տիկնոջ ետևից թափով ծածկեց դռնակները, աստիճանները տեղը նետեց և ձեռքը գցելով կառքի ետևի փոկին՝ կառապանին ձայն տվեց.— գնացի՛նք։ Տիկինը հետը տանում էր հենց նոր լսած մի նորություն և զգում էր անդիմադրելի ցանկություն՝ շուտով հաղորդել ուրիշներին։ Ամեն րոպե նա դուրս էր նայում պատուհանից և տեսնում, որ՝ կարծես անասելի պատիժ լիներ՝ գեթ էլի ճանապարհի կեսը մնում էր։ Ամեն տուն նրան թվում էր սովորականից երկար. սպիտակ քարաշեն անկելանոցը նեղ պատուհաններով ձգվում էր անհանդուրժելի երկար ժամանակ, այնպես որ նա վերջապես չհամբերեց, որ չասի՝ անիծյալ շենք, վի՜րջ չունի։ Կառապանը արդեն երկու անգամ հրաման ստացավ. շո՛ւտ արա, շո՛ւտ արա, Անդրյուշա. դու այսօր անտանելի դանդաղ ես քշում։ Վերջապես նպատակին հասավ։ Կառքը կանգ առավ փայտյա մեհահարկ մուգ մոխրագույն տան առջև՝ պատուհանների վրա սպիտակ խորաքանդակներով, պատուհանների առաջ բարձր փայտյա վանդակներ, ուղիղ և նեղ նախապատեզով, որի ճաղերի ետև գտնվող բա-

---

1 Կառաջի թիկնոցանման զգեստ։

րալիկ ծառերը սպիտակել էին երբեք նրանց վրայից վայր չեկող քաղաքային փոշուց։ Պատուհաններում երևում էին ծաղկի թաղարները, թուխակը, որ ճոճվում էր վանդակի մեջ, քթով օղակին կառչած, և երկու շնիկներ՝ արևի տակին քնած։ Այդ տանն ապրում էր եկող տիկնոջ անկեղծ բարեկամուհին։ Հեղինակը չափազանց դժվարանում է, թե ի՛նչ կերպ կոչի երկու տիկիններին այնպես, որ կրկին չբարկանան նրա վրա, ինչպես բարկանում էին հնում։ Կոչել հնարովի ազգանուններով՝ վտանգավոր է։ Ի՛նչ անուն կուզես հնարի, անպատճառ մեր տերության— փառք աստծո՝ մեծ է— որևէ անկյունում կգտնվի մեկը, որ այդ անունն է կրում, և անպատճառ կբարկանա, կյանքի-մահի կռիվ կտա, կսկսի խոսել, որ հեղինակը դիտմամբ է գաղտնի եկել, որ ամեն բան դուրս քաշի՝ թե ի՛նչ է նա և ի՛նչ մուշտակով է ման գալիս և թե ո՛ր Ագրաֆենա Իվանովնային է այցելում և թե ի՛նչ է սիրում ուտել։ Ապա՞ աստիճանի անո՛ւն տուր, աստված փրկի, դրանից էլ վտանգավոր է։ Այժմ մեր բոլոր աստիճանները և դասերը այնպես են գրգռված, որ տպված գրքերում ի՛նչ բան էլ կուզի լինի՝ նրանց աչքին անձնավորություն է թվում, երևում է, որ այդպես է արդեն օդի հատկությունը։ Բավական է միայն ասել, որ մի քաղաքում մի հիմար կա, դա արդեն անձնավորություն է. հանկարծ վեր կթռչի պատկառելի արտաքինով սլարոնի մեկը և կգոռա. չէ՞ որ ես էլ մարդ եմ, ուրեմն ես էլ եմ հիմար, մի խոսքով, վայրկենապես գլխի կընկնի, թե բանն ինչո՛ւմն է։ Դրա համար էլ, այդ բոլորից խուսափելու նպատակով, այն տիկինը, որի մոտ եկավ հյուրը, քանի որ N քաղաքում համարյա միաձայն կոչվում էր ամեն կողմերով հաճելի տիկին, հենց այդպես էլ կկոչենք։ Այդ անվանումը նա ձեռք էր բերել օրինական կերպով, որովհետև, իսկապես, ոչինչ չէր խնայում, որպեսզի լինի սիրալիր՝ վերին աստիճանի։ Թեև, իհարկե, սիրալիրության տակից կանացի բնավորության, պա՛հ, պա՛հ, պա՛հ, ինչպիսի ճարտար ճարպկություն էր ցայտում. և թեև երբեմն նրա յուրաքանչյուր հաճելի խոսքի տակից դուրս էին նայում պա՛հ, պա՛հ, պա՛հ, ինչպիսի՛ սուր ասեղներ, և արդեն աստված հեռու տանի, թե ինչպե՛ս էր վառվում սիրտը մյուսի դեմ, որը որևէ կերպ և որևէ բանում առաջ խցկվեր։ Բայց այդ ամենը պարուրված

էր այնպիսի նուրբ բարձրաշխարհիկությամբ, որպիսին լինում է միայն նահանգական քաղաքում։ Յուրաքանչյուր շարժում նա կատարում էր ճաշակով, անգամ սիրում էր բանաստեղծություն, անգամ երբեմն կարողանում էր երազանքով բռնել գլուխը, և բոլորը համաձայնում էին, որ նա իրոք տիկին է՝ հաճելի՛ ամեն կողմերով։ Մյուս տիկինը, այսինքն՝ եկողը, չուներ բնավորության մեջ այդպիսի բազմակողմանիություն, ուստի և նրան կանվանենք՝ պարզապես հաճելի տիկին։ Հյուրի գալուստը արթնացրեց շնիկներին, որ քնել էին արևի տակ. փոշոտ Ադելին, որը շարունակ թնճկվում էր սեփական բրդի մեջ և որձ շնիկ բարակ ոտներով Պոպուրիին։ Նա և սա հաչելով՝ իրենց օղակ արած պոչերը տարան նախասենյակ, ուր հյուրը ազատվում էր իր կլոկից և հայտնվեց՝ հագին մոդայիկ բանվածք և գույն ունեցող ու վզին երկար պոչեր՝ դգեստի մեջ։ Հափրուկներ սլացան բոլոր սենյակներով։ Հենց որ ամեն կողմերով հաճելի տիկինը իմացավ պարզապես հաճելի տիկնոջ գալու մասին՝ իսկույն վազեց միջանցք։ Տիկինները իրար ձեռքը բռնեցին, համբուրվեցին և ճչացին, ինչպես ճչում են ինստիտուտուհիները, որ ավարտելուց անմիջապես հետո հանդիպում են իրար, երբ մայրիկները դեռ չեն կարողացել նրանց բացատրել, որ նրանցից մեկի հայրը ավելի չքավոր է և աստիճանով ցած, քան մյուսինը։ Համբույրը կատարվեց հնչեղ, որովհետև շնիկները կրկին հաչեցին, որի համար և հարված ստացան թաշկինակով, և երկու տիկինները ուղղվեցին հյուրասենյակ, հասկանալի է՝ կապույտ բազմոցով, ձվաձև սեղանով և պնգամ պլյուշէ հագցրած շիրմայիկներով. Նրանց հետևից մոմոռալով վազեցին փոշոտ Ադելը և բարձրահասակ Պոպուրին բարակ ոտներով։— Այստե՛ղ, այստե՛ղ, ահա այս անկյունում,— ասաց տանտիրուհին՝ հյուրին նրստեցնելով բազմոցի անկյունում։— Ահա այդպես, ահա այդպես։ Ահա ձեզ նաև բարձ։— Ասելով այս, նա թխմեց նրա մեջքի հետև բարձը, որի վրա բրդով ասեղնագործած էր մի ասպետ՝ այն ձևով, որ միշտ ասեղնագործում են հենքի վրա. քիթը սանդուղքի ձևով էր դուրս եկել, իսկ շրթունքները՝ քառանկյունի։— Ինչպես ուրախ եմ, որ դուք... լսեցի, որ մեկը եկավ, ես էլ մտածում եմ ինձ ու ինձ՝ ո՞վ կարող է լինել այսպես վաղ։ Պառաշան ասում է՝ փոխնահանգապետի կինն է,

իսկ ես ասում եմ. դե տե՛ս, էլի եկավ հիմարը՝ ձանձրացնելու, և արդեն ուզում էի ասել, որ ես տանը չեմ...

Հյուրը, այն է, ուզում էր արդեն գործի անցնել և հաղորդել նորությունը։ Սակայն բացականչությունը, որ արեց այդ պահին ամեն կողմով հաճելի տիկինը, հանկարծ խոսակցությանը այլ ընթացք տվեց։

— Ի՜նչ ուրախ տեսք ունի այս չիքը,— բացականչեց ամեն կողմերով հաճելի տիկինը՝ նայելով պարզապես հաճելի տիկնոջ զգեստին։

— Այո, շատ ուրախ։ Պրասկովյա Ֆեոդորովնան սակայն գտնում է, որ ավելի լավ է, եթե ցանցերը ավելի մանր լինեին և պիսակները ո՛չ թե շագանակագույն լինեին, այլ երկնագույն։ Քրոջս ուղարկեցի մի կտոր. դա մի այնպիսի սքանչելի բան է. որ պարզապես չի կարելի խոսքով արտահայտել. պատկերացրե՛ք. շերտերը նե՛ղ-նեղ, որքան որ կարող է միայն պատկերացնել մարդկային երևակայությունը, ֆոնը երկնագույն և, ամեն մի շերտից հետո շարունակ աչիկներ ու թաթիկներ, աչիկներ ու թաթիկներ, աչիկներ ու թաթիկներ... Մի խոսքով՝ աննման է։ Կարելի է վճռականապես ասել, որ դեռ նմանը չի եղել աշխարհում։

— Սիրելիս, դա խայտաբղետ է։

— Ախ, ո՛չ, խայտաբղետ չէ։

— Ախ, խայտաբղետ է։

Պետք է նկատել, որ ամեն կողմերով հաճելի տիկինը մասամբ մատերիալիստուհի էր, հակված բացասելու և կասկածելու և կյանքում շատ բան էր ժխտում։

Այստեղ պարզապես հաճելի տիկինը բացատրեց, որ դա ամենևին խայտաբղետ չէ և գոչեց.

— Հա՛, շնորհավորում եմ ձեզ. բոլորածալքեր այլևս չեն կարում։

— Ինչպե՞ս չեն կարում։

— Նրանց տեղ հյուսակներ են կարում։

— Ախ, դա լավ չէ, հյուսակներ...

— Հյուսակներ են, շարունակ հյուսակներ. ուսնոցները հյուսակներից են, թևքերի վրա հյուսակներ են, ուսադիրները հյուսակներից, ներքևը հյուսակներ են, ամեն տեղ հյուսակներ են։

— Վատ է, Սոֆիա Իվանովնա, եթե ամենուրեք հյուսակներ են։

— Սիրուն է, Աննա Գրիգորևնա, չտեսնված սիրուն է. դա կարվում է երկու երիզով. լայն բացվածքով, և վերևից... Այ, տեսե՛ք, տեսե՛ք, թե ինչպե՛ս կշիանաք, ա՛յ, այն ժամանակ կասեք թե... Դե, հիացե՛ք. երևակայեցե՛ք, որ լիֆերը ավելի երկար եղան, առջևում սրածայր և առջևի ճաղը բոլորովին դուրս է գալիս սահմանից. շրջազգեստը ամբողջովին չորս կողմն է հավաքվում, ինչպես հին ժամանակներում ֆիժմերը, ետևից մինչև անգամ մի քիչ բամբակ են ավելացնում, որպեսզի լինի կատարյալ բելֆամ[1]։

— Նու, այդ ուղղակի, պետք է ասեմ...— ասաց ամեն կողմերով հաճելի տիկինը, արժանապատվությամբ գլուխը շարժելով։

— Այդ արդեն հաստատ է, պետք է ասեմ,— պատասխանեց պարզապես հաճելի տիկինը։

— Արդեն ինչպես ուզում եք՝ ես ոչ մի դեպքում օրինակ չեմ վերցնի դրանից։

— Ես նույնպես... ճշմարիտ, երբ երևակայում ես, թե մեկ-մեկ մինչև ո՛ւր է հասնում մոդան... Բանի նման չէ. ես քրոջիցս խնդրեցի ձևվածքը, դիտմամբ, ծիծաղելու համար։ Իմ Մելանիան սկսեց կարել։

— Ասել է՝ ձեզ մոտ կա՞ ձևվածքը,— գոչեց ամեն կողմերով հաճելի տիկինը՝ ո՛չ առանց նկատելի սրտի թրթիռի։

— Ապա ինչպե՞ս, քույրս բերեց։

— Հոգի՛ս, տվեք ինձ հանուն ամեն սրբությանն։

— Ափսո՛ս, սիրտ ես խոսք եմ տվել Պռասկովյա Ֆեոդորովնային։ Թերևս նրանից հետո։

— Է, ո՛վ կհաղնի Պռասկովյա Ֆեոդորովնայից հետո։ Դա շատ տարօրինակ կլինի ձեր կողմից, եթե դուք օտարներին գերազանցեք յուրայիններից։

— Բայց չէ՞ որ նա էլ քեռակին է։

— Նա ձեզ քեռակին է գալիս՝ աստված գիտե, թե ի՛նչպես. ամուսնու կողմից... Ո՛չ, Սոֆիա Իվանովնա, ես լսել անգամ

---

1 Բելֆամ — ֆրանսերենից՝ ռուսականացված արտահայտություն. ալբի քնկնոզ տեսքով կին։

չեմ ուզում, գուրս է գալիս՝ դուք ինձ այնպիսի վիրավորանք եք ուզում հասցնել... երևում է, որ ձեզ ձանձրացրել եմ արդեն, երևում է, որ դուք ուզում եք ինձ հետ ամեն ծանոթություն խզել։

Տեղճ Սոֆյա Իվանովնան բոլորովին չէր իմանում, թե ի՛նչ անի։ Նա ինքն զգաց, թե ինչպիսի՛ երկու ուժեղ կրակների մեջ դրեց իրեն։ Ա՛յ քեզ պարծենալ։ Նա պատրաստ կլիներ դրա համար ասեղներով ծակել իր հիմար լեզուն։

— Է՛, ինչպե՞ս է մեր հմայողը,— ասաց այդ միջոցին ամեն կողմներով հաճելի տիկինը։

— Ա՛խ, տե՛ր աստված, ի՞նչ եմ ես էլ այսպես նստել ձեր առաջ, ա՛յ քեզ բան։ Ախ, գիտե՞ք, Աննա Գրիգորևնա, ինչո՛ւ եմ եկել ձեզ մոտ։

Այստեղ հյուրի շունչը կապվեց, խոսքերը ուրուրների նման պատրաստ էին դուրս սլանալ մեկը մյուսի ետևից, և միայն հարկավոր էր այն աստիճան տմարդի լինել, ինչպիսին որ էր նրա անկեղծ բարեկամուհին, որպեսզի վճռեր կանգնեցնել նրան։

— Որքան կուզեք՝ գովեցեք և բարձրացրեք նրան,— ասաց նա սովորականից ավելի ժրությամբ,— իսկ ես ուղղակի կասեմ, նքա երեսին էլ կասեմ, որ նա անպիտա՛ն մարդ է, անպիտա՛ն է, անպիտա՛ն, անպիտա՛ն։

— Բայց լսեցե՛ք մի, թե ձեզ ինչե՛ր եմ բաց անում...

— Տարածել են լուրեր, որ նա լավն է, իսկ նա բոլորովին լավը չէ, բոլորովին լավը չէ և նրա քիթը... ամենաանդուրեկան քիթն է...

— Թո՛ւյլ տվեք, թո՛ւյլ տվեք միայն պատմել ձեզ... Հոգի՛ս, Աննա Գրիգորևնա, թո՛ւյլ տվեք պատմել։ Դա պատմություն է, հասկանո՞ւմ եք, արդյոք, պատմություն, սկոնապել խոտոր[1],— ասաց հյուրը համարյա հուսահատության արտահայտությամբ և բոլորովին աղաչական ձայնով։ Չի խանգարում նկատել, որ երկու տիկինների խոսակցության մեջ խառնվում էին բազում օտարերկրյա բառեր և երբեմն ամբողջ ֆրանսերեն երկար ֆրազներ։ Սակայն որքա՛ն էլ հեղինակը

---

1 Այն, որ կոչվում է պատմություն (ֆրանսերեն ազավաղված արտահայտություն)։

լցված է ակնածանքով դեպի այն փրկարար օգուտները, որ ֆրանսերեն լեզուն բերում է Ռուսաստանին, որքա՜ն լցված է ակնածանքով դեպի մեր բարձր հասարակության գովելի սովորությունն՝ օրվա բոլոր ժամերին այդ լեզվով բացատրվելը, իհարկե, դեպի հայրենիքն ունեցած խորը սիրուց, սակայն, այնուամենայնիվ, ո՛չ մի կերպ հեղինակը չի համաձայնում՝ ի՛նչ ծտար լեզվից կուզե լինի՝ մի ֆրազ մտցնել իր սույն ռուսական պոեմի մեջ։ Այսպիսով՝ շարունակենք ռուսերեն։

— Իսկ ի՞նչ պատմություն է։

— Ախ, կյա՛նքս, Աննա Գրիգորևնա, եթե դուք կարողանայիք միայն պատկերացնել այն դրությունը, որի մեջ գըտնըվում էի. երևակայեցե՛ք. այսօր ինձ մոտ է գալիս ավագ քահանայի կինը, հայր Կիրիլի կինը, և ի՞նչ եք կարծում. մեր հեզ ու խոնարհիկ եկվորը ի՞նչ արած լինի որ...

— Ինչպե՞ս, մի՞թե նա ավագ քահանայի կնոջն էլ կուռ[1] է արել։

— Ախ, Աննա Գրիգորևնա, երանի թե միայն կուռ անել լիներ, դեռ դա ոչինչ, լսեցե՛ք միայն, թե ի՛նչ պատմեց ավագ քահանայի կինը. եկել է, ասում է, նրա մոտ կալվածատիրուհի Կոռոբոչկան՝ խիստ վախեցած և գույնը գցած ինչպես մահը, և պատմում է և ինչպե՛ս է պատմում, լսեցե՛ք միայն, իսկական ռոման է. հանկարծ խուլ գիշեր ժամանակ, երբ ամեն ինչ տանը արդեն քնած է, լսվում է դռան բախոց, ամենասաստկագույնը, որ կարելի է պատկերացնել. գոռում են՝ բա՛ց արեք, բա՛ց արեք, եթե ոչ՝ դարպասը կջարդվի... ինչպե՞ս կհավանեք այս։ Սրանից հետո էլ ինչպե՞ս կերևա ձեր աչքում մեր հմայողը։

— Իսկ Կոռոբոչկան ի՞նչ, մի՞թե երիտասարդ է, լավի՞կն է ինքը։

— Ամենևի՛ն, պառավ է։

— Հրաշալի՛ բան։ Ասել է՝ նա պառավին է կպել։ Նու, դրանից հետո մեր տիկիններիի ճաշակն էլ բանի նման չէ, մարդ գտա՛ն վրան սիրահարվելու։

— Ո՛չ, ո՛չ, Աննա Գրիգորևնա, բոլորովին այն չէ, ինչ որ դուք ենթադրում եք։ Պատկերացրեք միայն այն, որ ոտից

---

[1] կուռ անել՝ բնագրում ապավառված ֆրանսերեն, նշ. կնոջը հետևել։

գլուխ գինված հայտնվում է Ռինալդո Ռինալդինիի[1] պես և պահանջում՝ ծախեցե՛ք, ապում է, այն բոլոր հոգիները, որ մեռել են։ Կոռոբոչկան շատ խելացի պատասխանում է, ասում է, ես չեմ կարող ծախել, որովհետև նրանք մեռած են։—Ո՛չ,— ասում է,— նրանք չեն մեռած, դա,— ասում է,— իմ գործն է՝ գիտենալ մեռա՞ծ են թե ոչ։ Նրանք մեռած չե՛ն, գոռում է, մեռած չե՛ն, մի խոսքով՝ սարսափելի սկանդալ սարքեց. ողջ գյուղը թափվեց եկավ, երեխաները լաց են լինում, նա շարունակ գոռում է, ո՛չ ոք ո՛չ ոքի չի հասկանում, դե՛, պարզապես օոյո՛ո, օոյո՛ո, օոյո՛ո[2]։ Բայց դուք պատկերացնել չեք կարող, Աննա Գրիգորևնա, ես ինչպե՛ս խիստ անհանգստացա, երբ այդ բոլորը լսեցի։ «Տիրուհի՛, հոգյա՛կս,— ասում է ինձ Մաշկան,— նայեցե՛ք հայելու մեջ, դուք գունատվել եք»։ Հայելու մեջ նայելու ժամանակ չէր, ես պետք է գնամ Աննա Գրիգորևնայի մոտ՝ պատմելու։ Հենց նույն րոպեին հրամայում եմ կառքը լծել. կառապան Անդրյուշկան հարցնում է ինձ, ո՞ւր պետք է գնաք, իսկ ես ոչինչ չեմ կարողանում անգամ խոսել, ուղղակի նայում եմ նրա աչքերի մեջ հիմարի նման, ես կարծում եմ, որ նա մոռածեց, թե ես խելագար եմ։ Ա՛խ, Աննա Գրիգորևնա, եթե դուք միայն կարողանայիք պատկերացնել, թե ինչպե՛ս անհանգստացա։

— Բայց դա տարօրինակ է,— ասաց ամեն կողմերով հաճելի տիկինը,— թե ի՛նչ կարող էին նշանակել այդ մեռած հոգիները։ Ես, խոստովանում եմ, որ ոչինչից ոչինչ չեմ հասկանում այստեղ։ Ահա արդեն երկրորդ անգամն եմ շարունակ լսում այդ մեռած հոգիների մասին. իսկ իմ ամուսինը դեռ ասում է, որ նոզդրյովը ստում է։ Բայց մի բան թերևս ճիշտ է, կա՛-չկա՝ մի բան կա։

— Բայց երևակայեցեք, Աննա Գրիգորևնա, թե ի՛նչ եղավ իմ դրությունը, երբ լսեցի այդ բանը։ «Ես հիմա,— պատում է Կոռոբոչկան.— ես չգիտեմ,— ասում է,— ի՛նչ անեմ՝ ինձ ստիպեց,— ասում է,— ստորագրել ինչ-որ կեղծ թուղթ, նեռեց տասնհինգ ռուբլի թղթադրամ, ես,— ասում է,— անփորձ, անօգնական այրի եմ, ես ոչինչ չգիտեմ...»— Ահա այս-

---

1 Գերմանացի գրող Վուլֆիուսի (1762—1827 թթ.) «Ռինալդո Ռինալդինի» վեպի ավազակ հերոսը։

2 Սարսափ (Ֆր.)։

պիսի բաներ։ Բայց եթե միայն դուք կարողանայիք մի փոքր պատկերացնել, թե ես որքա՜ն անհանգստացա։

— Բայց միայն մի բան ասեմ. կամքը ձերն է, այստեղ ոչ թե մեռած հոգիներ, այստեղ թաքնված է ինչ-որ ուրիշ բան։

— Ես էլ, ճիշտն ասած, նույնպես,— ասաց ոչ առանց զարմանալու պարզապես հաճելի տիկինը և հենց այստեղ խիստ ցանկություն զգաց իմանալու, թե այդտեղ ի՞նչ մի բան կարող է թաքնված լինել։ Նա անգամ արտասանեց հատ-հատ,— իսկ ի՞նչ եք ենթադրում, ի՞նչ կա այստեղ թաքնված։

— Լավ, դուք ի՞նչ եք կարծում։

— Ինչ եմ կարծո՞ւմ... Ես, ճիշտն ասած, բոլորովին կորցրել եմ գլուխս։

— Բայց ինչ որ է՝ ես կուզենայի իմանալ, թե նրա մասին ի՛նչ եք մտածում։

Բայց հաճելի տիկինը ոչինչ չգտավ ասելու։ Նա կարողանում էր միայն անհանգստանալ, սակայն որպեսզի կազմել կարողանար մի որևէ խելքի մոտ ենթադրություն՝ նրան այդքանը պակասում էր և դրանից էլ, ավելի շատ, քան մի ուրիշը, կարիք էր զգում քնքուշ բարեկամության և խորհուրդների։

— Դե լսեցի՛ք, ի՛նչ բան է այդ մեռած հոգիներ ասածդ,— ասաց ամեն կողմերով հաճելի տիկինը, և հյուրն այս խոսքերի վրա ամբողջովին լսելիք դառավ. նրա ականջները տրնկվեցին իրենք իրենց, նա մի փոքր բարձրացավ, համարյա ո՛չ նստած էր և ո՛չ էլ՝ բազմոցից բռնած և չնայած որ նա մասամբ ծանրավուն էր, հանկարծ բարակեց, սկսեց նմանվել թևքն բմբուլի, որը մեկ էլ տեսար՝ վերև կթռչի օդի տատանումից։

Այդպես է ռուս կալվածատերը, շնասեր և շվայտ որսորդ, մոտենալով անտառին, որի միջից ո՛ւր որ է դուրս կթռչի գըլխավոր շնպահից հալածված նապաստակը, իր նժույգի և իր բարձրացրած որսի մտրակի հետ միասին դառնում մի սառածքարացած վայրկյան, վառոդ, որին ո՛ւր որ է՝ կմոտեցնեն կրակը։ Ամբողջովին աչքերը հառել է պղտոր օդին և ահա վրա՛ կհասնի գազանին, ահա կնեղի՛ նրան այդ կամակորը, որքան էլ նրա դեմ կանգնի ողջ խոռվահույզ ձյունապատ տա-

փաստանը, փչելով արծաթ աստղեր նրա շրթունքներին, բեղերին, աչքերին, հոնքերին և նրա կղբենու գդակին։

— Մեռած հոգինե՛րը...— արտասանեց ամեն կողմերով հաճելի տիկինը։

— Ի՞նչ, ի՞նչ,— հարեց հյուրը սաստիկ հուզված։

— Մեռած հոգինե՛րը...

— Ախ, ասացեք, ի սեր աստծո։

— Դա պարզապես հնարած է միայն ծածկելու համար, իսկ բանն ահա թե ինչումն է, նա ուզում է փախցնել նահանգապետի աղջկան։

Այս եզրակացությունը, իսկապես, բոլորովին անսպասելի էր և ամեն կողմից արտասովոր։ Հաճելի տիկինը լսելով այդ՝ հենց այնպես էլ քարացավ իր տեղում, գունատվեց, գունատվեց ինչպես դիակ և իսկապես անհանգստացավ առանց կատակի։— Ա՛խ, տեր աստված,— բացականչեց նա զարմանքով ձեռքերը տարածելով.— այդ արդեն ես ոչ մի կերպ չէի կարող ենթադրել։

— Իսկ ես, ճիշտն ասեմ, հենց որ դուք ձեր բերանը բաց արիք, իսկույն գլխի ընկա, թե ինչումն է բանը,— պատասխանեց ամեն կողմերով հաճելի տիկինը։

— Դե դրանից հետո ասացեք, ի՛նչ է իրենից ներկայացնում ինստիտուտի դաստիարակությունը, ահա քեզ անմեղություն։

— Ի՞նչ անմեղություն։ Ես լսեցի, նա այնպիսի խոսքեր էր ասում, որ ճիշտն ասած՝ սիրտ չեմ անում արտասանել դրանք։

— Գիտե՛ք, Աննա Գրիգորևնա, չէ՞ որ դա ուղղակի կտրատում է մարդու սիրտը, երբ տեսնում ես, թե մինչև ո՛ւր է հասել վերջապես անբարոյականությունը։

— Իսկ տղամարդիկ նրանից խելագարված են։ Իսկ ինչ վերաբերում է ինձ, ճիշտն ասած՝ նրա մեջ ոչինչ չեմ գտնում...

— Կոտրատվում է անտանելի կերպով։

— Ախ, կյա՛նքս, Աննա Գրիգորևնա. նա արձան է, և գոնե մի որևէ արտահայտություն լիներ դեմքին։

— Ախ, այնպե՛ս է կոտրատվում, այնպե՛ս է կոտրատվում։ Աստվա՛ծ իմ, այնպես է կոտրատվում։ Ո՞վ է սովորեցրել նրան, չգիտեմ, բայց ես դեռ չեմ տեսել մի կին, որի մեջ այդքան սեքևևիություն լիներ։

— Հոգյա՛կս, նա արձան է և գունատ՝ ինչպես դիակ։

— Ախ, մի՛ ասեք, Սոֆիա Իվանովնա, կարմիր է քսում անաստված կերպով։

— Ախ, ի՞նչ եք ասում, Աննա Գրիգորևնա, նա կավիճ է, կավիճ, տեղովը կավիճ։

— Սիրելիս, ես նստած էի նրա մոտ. կարմիրը մատի հաստությամբ էր և կտոր-կտոր թափվում էր սվաղի նման։ Մայրն է սովորեցրել, ինքը կոկետուհի է, իսկ աղջի՛կը հո մորը կտա կանցնի։

— Դե ծո՛ւյլ տվեք, ինքներդ ինչո՛վ կուզեք երդվեք, բայց ես պատրաստ եմ այս րոպեիս զրկվել երեխաներից, ամուսնուց, բոլոր կայքից, եթե նրա վրա կա գոնե մի կաթիլ, մի մասնիկ, մի ստվեր որևէ կարմիր ներկի։

— Ախ, ի՞նչ եք ասում, Սոֆիա Իվանովնա,— ասաց ամեն կողմերով հաճելի տիկինը՝ զարմանքով ձեռները տարածելով։

— Ախ, ի՛նչ եք դուք էլ, ճիշտ որ, Աննա Գրիգորևնա, ես զարմանքով եմ ձեզ վրա նայում,— ասաց հաճելի տիկինը՝ նույնպես ձեռները տարածելով։

Թող ընթերցողի համար տարօրինակ չլինի, որ երկու տիկինները իրար հետ համաձայն չէին այն բանում, որ տեսել էին համարյա միևնույն ժամանակ։ Կան, ճիշտ ծո, աշխարհում շատ ու շատ բաներ, որոնք արդեն այդպիսի հատկություն ունեն. եթե նրանց վրա նայում է մի տիկին, նրանք դուրս կգան բոլորովին սպիտակ, բայց կնայի մյուսը՝ դուրս կգան կարմիր, կարմիր, ինչպես հապալաս։

— Այ, ահա ձեզ կրկին ապացույց, որ նա գունատ է,— շարունակեց հաճելի տիկինը,— ես հիշում եմ, ինչպես հիմա լինի. ես նստած եմ Մանիլովի մոտ և ասում եմ նրան. նայեցեք, ինչպես նա գունատ է։ Ճշմարիտ, մարդ պետք է լինի այն աստիճան անհասկացող, ինչպիսին մեր տղամարդիկն են, որպեսզի նրանով հիանան։ Իսկ մեր հմայողը... Ախ, ինչպես նա ինձ զզվելի թվաց։ Դուք չեք կարող պատկերացնել, Աննա Գրիգորևնա, թե ո՛ր աստիճան նա ինձ զզվելի թվաց։

— Այո՛, սակայն գտնվեցին մի քանի տիկիններ, որ անտարբեր չէին դեպի նա։

— Ե՞ս, Աննա Գրիգորևնա։ Այո արդեն երբեք չեք կարող ասել, երբե՛ք, երբե՛ք։

— Դե ես ձեր մասին չեմ ասում, կարծես բացի ձեզանից ուրիշ մարդ չկա։

— Երբե՛ք, երբե՛ք, Աննա Գրիգորևնա, թույլ տվեք նկատել ձեզ, որ ես ինձ շատ լավ գիտեմ, դա թերևս եղել է այլ տիկինների կողմից, որոնք անմատչելիների դեր են խաղում։

— Ներեցե՛ք, Սոֆիա Իվանովնա, թույլ տվեք ձեզ ասել, որ ինձ հետ այդպիսի խայտառակություններ երբեք չեն պատահել։ Մեկ ուրիշի հետ գուցե, բայց ինձ հետ— ո՛չ, թույլ տվեք ասել ձեզ այդ։

— Էլ ինչո՞ւ վիրավորվեցիք. չէ՞ որ այնտեղ կային նաև ուրիշ տիկիններ, կային անգամ այնպիսիները, որոնք առաջինը զբաղեցրին դռան մոտի աթոռները, որպեսզի մոտ նստեն նրան։

Դե, արդեն այսպիսի խոսքերից հետո, որ արտասանեց հաճելի տիկինը, պետք է անխուսափելիորեն հետևեր փոթորիկը, բայց ի մեծ զարմանս՝ երկու տիկինները հանկարծ լռեցին, և բոլորովին ոչինչ չհետևեց սույն հանգամանքին։ Ամեն կողմերով հաճելի տիկինը հիշեց, որ մոդայիկ զգեստի ձևվածքը դեռ չի գտնվում իր ձեռին, իսկ պարզապես հաճելի տիկինը գլխի ընկավ, որ նա մանրամասնություններ չկարողացավ դուրս կորզել պյուտի մասին, որ արել էր նրա անկեղծ բարեկամուհին, ուստի և խաղաղությունը հետևեց շատ շուտով։ Համենայն դեպս՝ երկու տիկինները չի կարելի ասել, որ իրենց բնավորության մեջ պահանջ ունեին անախորժություն պատճառել, և ընդհանրապես նրանց բնավորության մեջ ոչինչ շատ բան չկար, այլ այնպես, անզգալիորեն խոսակցության մեջ ինքնիրեն առաջ էր գալիս միմյանց խայթելու փոքրիկ ցանկություն. պարզապես՝ դրդված մի փոքրիկ հաճույքից, առիթն եկած տեղը մեկը մյուսին մի դեպուկ խոսքի կհատցնեք, ասենք՝ ա՛ռ քեզ, վերցրո՛ւ, կուտե՛ս Չանաչյան տեսակի են լինում պահանջները, ինչպես տղամարդկանց, նույնպես և կանանց դասի սրտերում։

— Ես չեմ կարողանում ասելու մի բան միայն հատկապես,— ասաց պարզապես հաճելի տիկինը,— թե ինչպե՛ս Զիլիկովը՝ լինելով նկվոր, կարող էր սիրտ անել այդպիսի հանդարձակ պատասխի գնալու։ Չի կարող պատահել, որ այստեղ մասնակիցներ չլինեին։

— Իսկ դուք կարծում եք չկա՞նի

— Իսկ ո՞ւմ եք ենթագրում, որ կարող էր նրան օգնել

— Այ հենց թեկուզ Նոզդրյովը

— Մի՞թե Նոզդրյովը

— Ապա ի՞նչ. դա հենց նրանից սպասելի է։ Դուք գիտե՞ք, որ նա հարազատ հորը ուզում էր ծախել կամ ավելի՛ն. տասնուվեց թղթախաղի մեջ

— Ախ, տե՛ր աստված, ինչ հետաքրքրական նորություններ եմ իմանում ձեզանից։ Ես ոչ մի կերպ չէի կարողանա ենթադրել, որ Նոզդրյովն էլ է խառն այս պատմության մեջ

— Իսկ ես միշտ ենթադրում էի

— Ճշմարիտ, երբ մտածում ես, թե ինչե՛ր չեն կատարվում աշխարհիս երեսին. նու, կարելի՞ էր ենթադրել, որ երբ, հիշո՞ւմ եք, Չիչիկովը հենց նոր էր եկել մեր քաղաքը, այդպիսի մի տարօրինակ մարշով[1] հանդես կգա մարդկանց առաջ։ Ախ, Աննա Գրիգորևնա, եթե դուք իմանաք, թե որքան ես անհանգստացա. եթե չլիներ ձեր բարեհաճությունը և բարեկամությունը... ահա՛, արդեն իսկապես կորստյան անդունդի եզրին էի... էլ ի՞նչ, իմ Մաշկան՝ տեսնում է, որ ես մահու չափ գունատվել եմ.— հոգյա՛կս, տիրուհի՛ս,— ասում է ինձ,— դուք մահու չափ գունատվել եք— Մաշկա,— ասում եմ,— դրա ժամանակը չէ։ Ուրեմն ահա թե ինչ պատահմունք է։ Նոզդրյովն է՛լ է մեջը խառն. աչքներս լո՛ւյս։

Հաճելի տիկինը շատ էր ցանկանում էլի մանրամասնություններ դուրս կորզել առևանգման մասին, այսինքն՝ ո՛ր ժամին և այլն, բայց շատ բան ուզեց։ Ամեն կողմերով հաճելի տիկինը ուղղակի հայտնեց, որ չգիտե։ Նա չէր կարողանում ստել. ենթադրել որևէ բան՝ գա ուրիշ բան է, բայց այն էլ այն դեպքում, երբ ենթադրությունը հիմնվում էր ներքին համոզմունքի վրա. եթե զգացած լիներ մի ներքին համոզմունք, այն ժամանակ նա կարող էր իրեն պաշտպանել, և թող փորձեր մի որևէ հմուտ փաստաբան, որը հղկակված է ուրիշների կարծիքներին հազթելու ձիրքով, ապա թող փորձեր նա մղրցել այստեղ. նա կտեսնե՛ր, թե ի՛նչ է նշանակում ներքին համոզմունք։

Որ երկու տիկիններըը վերջապես համոզվեցին նրանում,

[1] Մարշ — ելույթ, քայլք (Ֆր.)։

ինչ սկզբում ենթադրեցին միայն իբրև նոսկ ենթադրություն՝ սրանում ոչինչ արտասովոր բան չկա։ Մեր դասն էլ, խելացի ժողովուրդը, ինչպես անվանում ենք մենք մեզ, վարվում է համարյա հենց այդպես, և իբրև ապացույց են ծառայում մեր գիտական բացահայտությունները։ Սկզբում դիտնականը դրանց մոտենում է որպես մի արտասովոր սրիկա, սկսում է երիկոտ կերպով, չափավոր, սկսում է ամենահեզ հարցով՝ այո՞ եղից չէ՞ արդյոք, այն անկյունից չի՞ ստացել արդյոք իր անունը այսինչ երկիրը. կամ՝ չի՞ պատկանում արդյոք այս փաստաթուղթը այլ, ավելի ուշ ժամանակի. կամ՝ հարկավոր չէ՞ այս անվան տակ հասկանալ ահա այս ժողովուրդը։ Ցիտում է անհապաղ և այս և այն հին գրողին և հենց տեսնում է մի որևէ ակնարկ կամ սարդապես իրեն թվացյալ ակնարկ, այլևս արդեն աշխույժ վազք է ստանում և քաջալերվում, հին գրողների հետ խոսում է առանց ձևականության, հարցեր է տալիս նրանց և անգամ ինքն է պատասխանում նրանց փոխարեն, բոլորովին մոռանալով այն մասին, որ ինքը սկսեց երկչոտ ենթադրությամբ. նրան արդեն թվում է, որ ինքը այդ տեսնում է, որ դա պարզ է— և եզրակացությունը կազմվում է այս խոսքերով. ահա թե ինչպե՞ս է այդ եղել, ահա թե ի՛նչ ժողովուրդ պետք է հասկանալ, ահա թե ի՛նչ տեսակետից պետք է նայել այդ հարցին։ Հետո ի լուր ամենի ամբիոնից կհայտարարի—և նորահայտ ճշմարտությունը գնա՛ց զբոսանելու աշխարհում՝ հավաքելով իր շուրջը հետևորդներ և երկրպագուներ։

Այդ պահին, երբ երկու տիկինները այդպես հաչող և սրամտորեն վճռեցին այնպիսի մի խճճված հանգամանք, հյուրասենյակ մտավ դատախազը՝ մշտական անշարժ դիմագծերով, խիտ հոնքերով և թարթող աչքերով։ Տիկիններն իրար առաջ կտրելով սկսեցին հաղորդել նրան բոլոր դեպքերը, պատմեցին մեռած հոգիների գնման մասին, նահանգապետի աղջկանը փախցնելու մասին և ամբողջովին մոլորեցրին նրան, այնպես որ ինչքան նա շարունակում էր կանգնել միևնույն տեղում, ձախ աչքը բաց ու խուփ անել և թաշկինակով խփել իր մորուքին՝ սրբելով ափսեից ծխախոտը, բայց բոլորովին ոչինչ չէր կարողանում հասկանալ։ Հենց այդպես էլ թողին նրան երկու տիկինները և ամեն մեկը ուղևորվեց իր կողմը՝

քաղաքը խռովեցնելու։ Այդ ձեռնարկը նրանց հաջողվեց կատարել քիչ ավելի, քան կես ժամում։ Քաղաքը կատարելապես խռովվեց. ամեն ինչ խմորվեց, և գոնե որևէ մեկը մի բան կարողանար հասկանալ։ Տիկինները այնպիսի մի մշուշ կարողացան բաց թողնել ամենքի աչքին, որ բոլորը, և հատկապես պաշտոնյաները, որոշ ժամանակ շշմել էին։ Նրանց դրությունը առաջին րոպեին նման էր այն դպրոցականի դրության, որի ընկերները՝ նրանից վաղ վեր կացած, նրա քնած ժամանակ քիթը հուսար են մատրել, այսինքն թղթի կտոր՝ մեջը ծխախոտ։ Քնաթաթախ ներս քաշելով ողջ ծխախոտը քնած մարդու ջանադրությամբ, նա զարթնում է, վեր է թատկում, նայում է հիմարի պես աչքերը չռած ամեն կողմ և չի կարողանում հասկանալ, թե ուր է ինքը, ինչ է պատահել իրեն և հետո արդեն ջոկում է արևի շեղ ճառագայթով ողողված պատերը, անկյուններում թաքնված ընկերների ծիծաղը և պատուհանից նայող, վրա հասած առավոտը՝ զարթնած անտառով՝ թռչունների հազարավոր ձայներով և լուսավորված, այստեղ-այնտեղ կորչող բարակ եղեգների արանքներում փայլփլող կեռմաններ ունեցող, ուր մերկ, ցրիվ եկած երեխաները կանչում են լողանալու, և հետո արդեն վերջապես զգում է, որ իր քթի մեջը հուսար է նստած։ Կատարելապես այդպես էր առաջին րոպեին քաղաքի բնակիչների և պաշտոնյաների դրությունը։ Ամեն մեկը ոչխարի նման կանգ առավ աչքերը չռած։ Մեռած հոգիները, նահանգապետի աղջիկը և Ջիչիկովը հավաքվեցին խառնվեցին նրանց գլխների մեջ արտասովոր կերպով տարօրինակ, և ապա արդեն, առաջին հիմարացումից հետո, նրանք կարծես սկսեցին տարբերել նրանց զատ-զատ և բաժանել մեկը մյուսից, սկսեցին հաշիվ պահանջել և բարկանալ, տեսնելով, որ գործը ոչ մի կերպ չի կամենում բացատրվել։ Ի՞նչ հանելուկ է իսկապես, ինչ հանելուկ է այդ մեռած հոգիները, ոչ մի տրամաբանություն գկա մեռած հոգիների մեջ, ինչպե՞ս են գնել մեռած հոգիներ, այդ որտե՞ղ կգտնվի այնպիսի մի հիմար, և այդ ի՞նչ ջուրը լցնելու փողերով կսկսի գնել դրանց և վերջն ի՞նչ նպատակով, ի՞նչ գործի կարելի կլինի կցել այդ մեռած հոգիները, և ինչո՞ւ է դրան խառնվել նահանգապետի աղջիկը։ Եթե նա ուզում է փախցնել նրան, ապա ինչի՞ն էր պետք գնել մեռած

հոգիներ։ Իսկ եթե մեռած հոգիներ պետք էր գնել՝ ապա էլ ինչացո՞ւ էր նահանգապետի աղջկան փախցնելը, արդյոք նա նրա՞ն էր ուզում նվիրել այդ մեռած հոգիները։ Ի՞նչ հիմարություններ տարածեցին քաղաքում իսկապես։ Սա ի՞նչ կարգ է, հենց շուռ ես գալիս քե չէ, մեկ էլ տեսար՝ պատմություն հնարեցին, և գոնե դա մի որևէ միտք ունենար... Սակայն որ տարածեցին, կնշանակի մի որևէ պատճա՞ռ կար։ Իսկ ի՞նչ պատճառ մեռած հոգիների մեջ. մինչև անգամ պատճառ էլ չկա։ Դա պարզապես դուրս է գալիս՝ «ասա ծիտ,— ծիտ,— կեռանք մախոխ», դա սատանան գիտե քե ինչ բան է... Մի խոսքով՝ տրվեցին բացատրություններ, բացատրություններ, բացատրություններ և ողջ քաղաքը սկսեց խոսել մեռած հոգիների և նահանգապետի աղջկա մասին, Չիչիկովի և մեռած հոգիների մասին, նահանգապետի աղջկա և Չիչիկովի մասին, և ամենը՝ ի՛նչ կար ու չկար, ոտքի կանգնեց... Ինչպես մրրիկ վեր կացավ, մինչ այդ, քվում է, նիրհող քաղաքը։ Դուրս եկան իրենց որջերից բոլոր ավարառներն ու դանդալոշները, որոնք տանը մի քանի տարիներով պահակած մնացել էին խալաթների մեջ՝ մեղքը գցելով մերթ կոշկակարի վրա, որ կարել է նեղ կոշիկներ, մերթ դերձակի վրա, մերթ հարբած կառապանի վրա։ Բոլոր նրանք, ովքեր վաղուց դադարեցրել էին արդեն ամեն ծանոթություն և ճանաչում էին միայն, ինչպես ասում են, կալվածատեր Ջավալիշինին կամ Պոլեժաևին (նշանավոր տերմիններ, որ ծագել են պահակել և թավալվել բայերից, որոնք մեծ գործածություն ունեն մեզանում՝ Ռուսիայում, միևնույն է ինչպես այս ֆրազը,— գնալ Սոպիկովի մոտ, Խրապովիցկու[1] մոտ, որ նշանակում է ամեն տեսակ մեռելային քուե՝ կողքի վրա, մեջքի վրա և բոլոր այդ դիրքերով՝ խոմփոցներով, քթի սուլոցներով և այլ պարագաներով)։ Բոլոր նրանք, որոնց անկարելի էր տանից դուրս քաշել՝ հրավիրելով անուշ անել անգամ հինգ հարյուր ռուբլիանոց ձկնապուր երկու արշինանոց չուքա ձկներով և ամեն տեսակի՝ բերանում հալվող կարկանդակներով. մի խոսքով՝ դուրս եկավ, որ քաղաքը և՛ բազմամարդ է, և՛ մեծ է, և՛ բնակեցրած է ինչպես հարկն է։ Միջտեղ հայտնվեց ինչ-որ մի Սիսոյ Պաֆնուտևիչ

[1] Բառացի թարգմանելու դեպքում՝ Թավալվոգենի, Պառկելևի, Քնչացովի, Եամփացովի։

և Մակդոնալդ Կարլովիչ, որոնց մասին երբեք էլ չէր լսվել. հյուրասենյակներում տնկվեց ինչ-որ երկար, երկար մեկը՝ գնդակով ծակված ձեռքով, այնպիսի բարձր հասակով, որ անգամ չէր տեսնված. Փողոցում երևացին ծածկված դրոժկաներ, չտեսնված լինելյաններ. դղրդոցակներ, անվասուլակներ[1], և ապուրը եփվեց. Ուրիշ ժամանակ, ուրիշ հանգամանքներում նման լուրերը, կարող է պատահել, իրենց վրա այսպիսի ուշադրություն չհրավիրեին. բայց քաղաքն արդեն վաղուց է ամենևին լուրեր չէր ստանում. Անգամ երեք ամսվա մեջ տեղի չէր ունենում այնպիսի մի բան, որ մայրաքաղաքներում կոչում են կոմերաժներ[2], որ ինչպես հայտնի է, քաղաքի համար նույնն է, ինչ որ ժամանակին մթերք հասցնելը. Քաղաքի մեկնաբանությունների մեջ հայտնվեց երկու կատարելապես հակառակ կարծիք և կազմվեց երկու կատարելապես հակառակ կուսակցություն— տղամարդկանց և կանանց. Տղամարդկանց կուսակցությունը, ամենից անհասկացողը, ուշադրությունը դարձրեց մեռած հոգիների վրա. Կանանցը զբաղվեց բացառապես նահանգապետի աղջկան փախցնելով. Այդ կուսակցության մեջ, պետք է նկատել ի պատիվ կանանց, անհամեմատ ավելի կարգ ու շրջահայեցություն կար. Այդպես է՝ ըստ երևույթին՝ նրանց իսկական դերը,— լինել լավ տանտիկիններ և կարգադրիչներ. Ամեն ինչ նրանց մեջ շուտով ընդունեց կենդանի, որոշ կերպարանք, ստացավ պարզ և ակնհայտ ձևեր, բացատրվեց, մաքրվեց, մի խոսքով՝ դուրս եկավ ավարտուն պատկեր. Պարզվեց, որ Չիչիկովը արդեն վաղուց սիրահարված էր եղել և նրանք տեսնվելիս են եղել պարտեզում լուսնի լույսով, որ նահանգապետն անգամ կտար նրան իր աղջիկը, որովհետև Չիչիկովը հարուստ է ինչպես չհուդ, եթե պատճառ չլիներ նրա կինը, որին նա թողել է (որտեղի՞ց իմացան նրանք, որ Չիչիկովը ամուսնացած է, դա ոչ ոքի հայտնի չէր), և կինը, որ տանջվում է անհույս սիրուց՝ նահանգապետին մի շատ սրտաշարժ նամակ է գրել, և որ Չիչիկովը տեսնելով, որ հայրը և մայրը երբեք չեն համաձայնի, վճռել է առևանգել.

---

1 Դրեզնդժալկի, կոլեսոսվիտակի — հավանորեն հեգնական սարքած կամ ասւս ժողովրդական լեզվում գործածվող բառեր.

2 Կոմերաժ՝ — բամբասանք (Ֆր.).

Ուրիշ տներում այդ պատմվում էր մի փոքր այլ կերպ. որ Ջիչիկովը ոչ մի կին էլ չունի, բայց որ նա իբրև նուրբ և հաստատապես գործող մարդ՝ աղջկա ձեռքն ստանալու նպատակով գործը սկսել է մորից և նրա հետ ունեցել է սրտային գաղտնի կապ, և որ հետո է հայտարարել աղջկան ուզելու մասին. բայց մայրը, վախենալով որ հանցագործություն կատարվի կրոնի դեմ և հոգում խղճի խայթ զգալով՝ կրտսերականապես մերժել է, և ահա թե ինչո՛ւ Ջիչիկովը վճռեց առևանգման դիմել։ Այդ բոլորին միանում էին շատ բացատրություններ և ուղղումներ այն չափով, որքան լուրերը թափանցում էին վերջապես ամենախուլ փողոցները։ Ռուսիայումն էլ ստորին խավերը շատ են սիրում խոսել այն բամբասանքների մասին, որ լինում են բարձր իավերում, ուստի և այդ ամենի մասին սկսեցին խոսել այնպիսի տնակներում, ուր Ջիչիկովի երեսն էլ չէին տեսել և չէին ճանաչում նրան, հավելումներ արին և հետն էլ ավելի մեծ բացատրություններ։ Սյուժեն րոպե առ րոպե դառնում էր առավել հետաքրքրական, օրեցօր ընդունում էր ավելի վերջնական ձևեր և վերջապես այնպես, ինչպես կար, իր բոլոր ավարտվածությամբ՝ ընկավ նահանգապետի կնոջ սեփական ականջը։ Նահանգապետի կինը, ինչպես ընտանիքի մայր, ինչպես քաղաքում առաջին տիկինը, վերջապես ինչպես տիկին, որ ոչինչ նման բան չէր կասկածում, կատարելապես վիրավորվեց նման պատմություններից և լցվեց ամեն կողմից արդարացի զայրույթով։ Խեղճ խարտյաշիկը ենթարկվեց ամենաանախորժ tête-à-tête-ի, որպիսին երբևէ ենթարկված լինի տասնվեց տարեկան մի աղջիկ։ Թափեցին գլխին ամբողջ հեղեղներ հարցումների, հարցաքննությունների, հանդիմանությունների, սպառնալիքների, կշտամբանքների, խրատների, այնպես որ, աղջիկն սկսեց արտասվել, հեկեկում էր և չէր կարողանում ոչ մի խոսք հասկանալ. շվեյցարին տրվեց խստագույն հրաման՝ ո՛չ մի ժամանակ, ո՛չ մի կերպ չընդունել Ջիչիկովին։

Կատարելով իրենց գործը նահանգապետի կնոջ վերաբերյալ՝ տիկինները հենց այն է, նեղն էին գցում տղամարդկանց կուսակցությանը՝ փորձելով նրանց հակել իրենց կողմը և պնդելով, որ մեռած հոգիները հնարովի բաներ են և գործադրված են միայն նրա համար, որպեսզի ամեն կասկած ուրիշ

կողմ տարաձվի և ավելի հաջողությամբ կատարվի առևանգումը։ Անգամ տղամարդկանցից շատերը մոլորվեցին և անցան նրանց կուսակցության կողմը, չնայած որ ենթարկվեցին խիստ կշտամբանքների հենց իրենց ընկերների կողմից, որոնք նրանց անպատվեցին՝ անվանելով կնիկներ և փալասփուլուսներ, անուններ, որ ինչպես հայտնի է, շատ վիրավորական են տղամարդկանց սեռի համար։

Սակայն որքան էլ զինվում էին և հակառակվում էին տղամարդիկ, նրանց կուսակցության մեջ բոլորովին այնպիսի կարգ չկար, ինչպես կանանց կուսակցության մեջ։ Ամեն ինչ նրանց մեջ չոր էր, անտաշ, աններդաշնակ, անպետք, անշնորհք, վատ, գլխում խառնակություն, խառնաշփոթություն, անորոշություն, մտքերի մեջ անկարգություն, մի խոսքով՝ ամեն բանով դուրս տրվեց տղամարդու դատարկ էությունը, կոպիտ, ծանր, ո՛չ տնարարության մեջ ընդունակ, ո՛չ հոգեկան համոզմունքներում, թերահավատ, ծույլ, լցված անվերջանալի կասկածներով և մշտական վախով։ Նրանք ասում էին, որ այդ բոլորը դատարկ բաներ են, որ նահանգապետի աղջկան առևանգելը ավելի հուսարական գործ է, քան քաղաքացիական, որ Ջիչիկովը այդպիսի բան չի անի, որ կնանիք ստում են, որ կնիկարմատը տոպրակ է, ինչ դնես մեջը՝ կտանի, որ գլխավոր առարկան, որի վրա պետք է ուշադրություն դարձնել, մեռած հոգիներն են, որոնք ասենք սատանան գիտե թե ինչ են նշանակում, բայց նրանց մեջ սակայն անասելի վատ, կեղտոտ մի բան կա։ Թե ինչո՞ւ էր տղամարդկանց թվում, որ նրանց մեջն է ամենավատ, կեղտոտ բանը, այս րոպեիս կիմանանք. նշանակվել էր նահանգի նոր գեներալ-նահանգապետ, մի դեպք, որ ինչպես հայտնի է, պաշտոնյաներին փագնապալից դրության մեջ է գցում. կսկսվեն ջոկջոկումներ, շշպռոցներ, ձաղկումներ և ամեն տեսակի պաշտոնեական ապուրներ, որոնցով պետը հյուրասիրում է իր ստորադրյալներին։ Է, ի՞նչ կա, մտածում էին պաշտոնյաները, եթե նա հենց միայն իմանա, որ իրենց քաղաքում այ, այսպիսի հիմար լուրեր են պտտվում, ուղղակի այդ մեկը բավական է, որ մարդու կրակը դնի, վառի։ Բժշկական վարչության տեսուչը հանկարծ գունատվեց. աստված գիտե թե ի՛նչ երևակայեց, որ մեռած հոգիներ խոսքերի տակ ար-

դյոք չի՞ հասկացվում այն հիվանդները, որ հիվանդանոցնե-
րում և ուրիշ տեղերում համատարած ջերմախտից նշանա-
կալից թվով մեռան, որի դեմ պատշաճ միջոցներ ձեռք չէին
առնված, և որ Ջիչիկովը արդյոք պաշտոնյա չէ՞ գեներալ-
նահանգապետի դիվանատնից ուղարկված՝ գաղտնի հետա-
քննություն կատարելու համար։ Նա այդ հաղորդեց նախագա-
հին։ Նախագահը պատասխանեց, որ դատարկ բան է դա, և
հետո ինքը հանկարծ գունատվեց և իրեն հարց տվեց. իսկ եթե
Ջիչիկովի գնած հոգիները իսկապես մեռած են. իսկ ինքը
թույլ տվեց նրանց վրա կայքագիր անել, դեռ ինքն էլ կատա-
րեց պլյուշկինի հավատարմատարի դերը, և այդ բոլորը կհաս-
նի գեներալ-նահանգապետի ականջը, ի՞նչ կլինի այն ժամա-
նակ։ Նա այդ մասին ոչինչ ավելի չասաց, բայց հենց որ ասաց
մեկին և մյուսին, և հանկարծ գունատվեցին թե՛ մեկը և թե՛
մյուսը. վախը ժանտախտից ավելի կպչուն է և հաղորդվում
է վայրկենապես։ Հանկարծ ամենքն իրենց մեջ այնպիսի մեղ-
քեր գտան, որ անգամ գոյություն չունեին։ Մեռած հոգի-
ներ խոսքը այնպես անորոշ էր հնչում, որ անգամ սկսեցին
կասկածել, թե արդյոք այստեղ ակնարկ չկա՞ վաղաժամ թաղ-
ված մարմինների մասին՝ երկու ո՛չ այնքան վաղուց կատար-
ված դեպքերի հետևանքով։ Առաջին դեպքը պատահել էր
ինչ-որ սոլվիչեգոդսկցի վաճառականների հետ, որոնք եկել
էին քաղաք՝ տոնավաճառին և իրենց բարեկամ ուստսիսոլսկ-
ցի վաճառականներին խնջույքի էին քաշել վաճառքից հետո,
խնջույք՝ ռուսի հանգի, գերմանական հնարած բաներով՝
արշադներով[1], պունշերով, բալասաններով և այլն։ Խնջույքը,
ինչպես սովորություն է՝ վերջացավ տուրուդմփոցով։ Սոլ-
վիչեգոդսկցիները մահի դուռը հասցրին ուստսիսոլսկցիներին,
թեև իրենք էլ նրանցից ստացան պինդ հարվածներ կողքերին,
կողատակերին և թևակշտերին, որ վկայում էին բռունցքների
անշափ մեծությունը, որով մատակարարեցին հանգուցյալնե-
րը։ Մինչև անգամ արմատից ջարդվել էր հաղթանակողներից
մեկի ջրախողովակը, մարտիկների արտահայտությամբ, այ-
սինքն ամբողջովին ջախջախվել էր քիթը, այնպես որ, դրանից
դեմքին չէր մնացել կես մատի չափ անգամ։ Վաճառական-

[1] Արշադ — գովացուցիչ խմիչք (փունչ)՝ մուգ թեյի հետ խմելու համար օգի խառնած։

ներն իրենց արածը խոստովանեցին, բացատրելով, որ մի փոքր չարութիւն արին. լուրեր էին պտտվում, որ խոստովանելիս նրանցից յուրաքանչիւրը չորս պետական[1] էր վեր եկել. ասենք՝ խիստ մութ գործ էր. հավաքած տեղեկանքներից և հետախուզութիւնից պարզվեց, որ ուստախսոլսկցի տղերքը մեռել են ծխահարութիւնից, ուստի և այդպես էլ նրանց քաղեցին իբրև ծխահարների։ Միւս դեպքը, որ վերջերս էր պատահել, հետևյալն էր. Վշիվայա-սպես[2] գյուղի պետական գյուղացիները՝ միանալով հենց նույնպիսի գյուղացիների հետ՝ Բոռովկի[3], նույն և Զադիռիլովո[4] գյուղերից, իբրև երկրի երեսից անհետացրել էին զեմստվոյական ոստիկանութիւնը՝ ի դեմս ատենակալի, ինչպես որ մի Դոռոյաժկինի[5], որ իբր զեմստվոյական ոստիկանութիւնը, այսինքն ատենակալ Դոռոյաժկինը, սովորութիւն էր դարձրել չափազանց հաճախ գնալ նրանց գյուղը, որ այլ ուրիշ դեպքերում մի համատարած չերմախտ արժի, իսկ պատճառն էլ իբր այն է եղել, որ զեմստվոյական ոստիկանութիւնը՝ ունենալով ինչ-ինչ թուլութիւններ սրտային հարցերում, աչք էր գցել կնանոց և գյուղի աղջիկներին։ Ճշմարիտն ասենք, հայտնի չէ, թեև ցուցմունքների մեջ գյուղացիները ուղղակի հայտնեցին, որ զեմստվոյական ոստիկանութիւնը անառակ է եղել ինչպես կատու, և որ արդեն մի անգամ չէ, որ նրան զգուշացրել են և մի անգամ էլ մինչև իսկ նրան տկլոր դուրս են արել ինչ-որ մի խրճիթից, որտեղ որ նա փակվել էր։ Իհարկե, զեմստվոյական ոստիկանութիւնը արժանի էր, որ պատժվեր սրտային թուլութիւնների համար, բայց Վշիվայա-սպեսի, ինչպես և Զադիռայլովի գյուղացիներին էլ չէր կարելի արդարացնել ինքնագատաստանի համար, եթե միայն նրանք իրոք մասնակցել էին սպանութեանը։ Սակայն մութ գործ էր, զեմստվոյական ոստիկանութեանը գտան ճանապարհի վրա, նշանազգեստը կամ սերթուկը զեմստվոյական ոստիկանութեան վրա փալասից վատթար էր դարձել, իսկ կերպարանքը ճանաչել անգամ

---

1 Հարյուր ռուբլի։

2 Ոչլոտ գոռոդութիւն։

3 Վարազկի։

4 Քիթը բարձր — նույնպես։

5 Փշրուզ բանից աղգանուն։

չէր կարելի։ Գործը քարշ էր գալիս դատարաններում և վերջապես մտավ ատյան, ուր սկզբում առանձնության մեջ այսպես քննարկվեց. քանի որ անհայտ է, թե՛ գյուղացիներից իսկապես ո՛վ է մասնակցել, իսկ նրանք շատ են, Դոռոյաժկինն էլ մեռած մարդ է, հետևաբար, դրանում նա օգուտ քիչ ունի, եթե անգամ նա գործը տանի էլ, իսկ մուժիկները դեռ կենդանի են, հետևաբար, նրանց համար խիստ կարևոր է, որ գործը իրենց օգտին վճռվի. ուրեմն և հետևապես այսպես վճռվեց. որ ատենակալ Դոռոյաժկինը ինքն է եղել պատճառը, Վշիվայա-սպեսի և Զադիռայլովի գյուղացիներին անարդար նեղություններ հասցնելով, բայց նա էլ, դե, մեռավ, սահնակով վերադառնալիս կաթվածահար եղավ։ Գործը, ըստ երևույթին, լավ սարքվեց, բայց պաշտոնյաները, չես իմանում ինչո՛ւ, սկսեցին մտածել, որ հավանորեն հենց այդ մեռած հոգիների մասին է հիմա խոսքը։ Հակառակի պես պատահեց այնպես, որ կարծես դիտմամբ, այն ժամանակ, երբ պարոնայք պաշտոնյաները առանց դրան էլ գտնվում էին անելանելի դրության մեջ, Նահանգապետին միանգամից երկու թուղթ եկավ։ Նրանցից մեկը բովանդակում էր տեղեկություն, որ հասած ցուցմունքների և հաղորդագրությունների համաձայն նահանգում գտնվում է կեղծ թղթադրամ շինող մեկը, որ թաքնվում է զանազան անունների տակ, և որ պետք է անմիջապես սկսել ամենախիստ հետախուզություն։ Մյուս թուղթը բովանդակում էր հարևան նահանգի նահանգապետի դրությունը՝ օրինական հետախուզությունից փախած ավազակի մասին, որ եթե կհայտնվի նրանց նահանգում որևէ այնպիսի կասկածելի մարդ, որ չի ներկայացնի ո՛չ մի վկայաթուղթ և անձնագիր, իսկույն նրան կալանքի տակ առնել։ Երկու այս թուղթը բոլորին էլ շշմեցրին։ Նախկին եզրակացություններն ու կռահումները բոլորովին շիլափլավ դարձան։ Իհարկե, ոչ մի կերպ չէր կարելի ենթադրել, որ այստեղ որևէ բան վերաբերում էր Ջիչիկովին, սակայն և այնպես՝ երբ ամեն մեկը ինքն իր մեջ խորհում էր, երբ մտաբերում էին, որ նրանք դեռևս չգիտեն, թե իսկապես ո՛վ է Ջիչիկովը, որ նա շատ անորոշ էր արտահայտվում սեփական աճի մասին, ճիշտ է, ասում էր, որ ճշմարտության համար ծառայության մեջ տուժել է, բայց չէ՞ որ այդ բոլորը ինչ-որ

պարզ չէ, և երբ սրա հետ հիշեցին, որ նա ասաց, թե շատ հակառակորդներ է ունեցել, որոնք սպառնացել են նրա կյանքին, ապա և ավելի ևս տարակուսեցին. կնշանակի՝ նրա կյանքը վտանգի մեջ է եղել, կնշանակի՝ նրան հետապնդել են, կնշանակի՝ ուրեմն, որ նա մի որևէ բան արել է... և իրո՞ք, ո՞վ է նա վերջապես: Իհարկե, չի կարելի կարծել, որ նա կարող էր կեղծ թղթադրամներ շինել, առավել ևս՝ լինել ավազակ. արտաքինը բարեհամբույր է, բայց այս բոլորով հանդերձ ո՞վ է սակայն նա իսկապես: Ով ահա պարոնայք պաշտոնյաներն իրենց այնպիսի հարց տվին այժմ, որ պետք է իրենց տային սկզբում, այսինքն՝ մեր պոեմի առաջին գլխում: Որոշվեց կրկին մի քանի հարցումներ անել նրանց, որոնցից գնվել են մեռած հոգիները, գոնե իմանալ, թե ի՛նչ գնում է դա և իսկապես ի՛նչ պիտի հասկանալ այդ մեռած հոգիների տակ, և արդյոք նա որևէ մեկին չի՞ բացատրել, թեկուզ պատահմամբ, թեկուզ բերանից թոցնելով, իր իսկական մտադրություններն ի մասին, և պարզյոք ոչ ոքի չի՞ ասել, թե ո՛վ է ինքը: Ամենից առաջ դիմեցին Կոռոբոչկային, բայց այստեղից բան, դուրս չբերին. դե՛, գնել է տասնհինգ ռուբլով, թռչնի փետուր էլ է գնում և շատ բաներ խոստացավ գնել, պետությանը ճարպ էլ է մատակարարում, և դրա համար էլ հավանորեն խարդախ մարդ է, որովհետև արդեն այդպիսի մեկը կար, որ թռչնի փետուր էր գնում և պետությանն էլ ճարպ էր մատակարարում, բայց խաբեց բոլորին և ավագ քահանայի կնոջը խաբեց ավելի քան հարյուր ռուբլով: Ով այն բոլորը, ինչ որ նա ասաց դրանից հետո, համարյա միևնույն բանի կրկնությունն էր, և պաշտոնյաները տեսան, որ Կոռոբոչկան պարզապես ցանցառ պառավ է: Մանիլովը պատասխանեց, որ նա Պավել Իվանովիչի համար միշտ պատրաստ է երաշխավորել, ինչպես իր համար, որ նա կզոհեր իր բոլոր կալվածքը, միայն թե ունենար Պավել Իվանովիչի հատկությունների մի հարյուրերորդ մասը, և ընդհանրապես, նրա մասին արտահայտվեց ամենագովական խոսքերով, ավելացնելով մի քանի մտքեր բարեկամության մասին՝ արդեն կկոցած աչքերով: Այդ մտքերն, իհարկե, բավարար կերպով բացատրում էին նրա սրտի քնքուշ զգացմունքները, բայց պաշտոնյաներին չբացատրեցին իսկական գործը: Սոբակևիչը պա-

տասխանեց, որ Ջիչիկովը նրա կարծիքով լավ մարդ է, և որ ինքը նրան գյուղացիներ ծախել է՝ ընտրովի և ամեն կողմով կենդանի ժողովուրդ. բայց որ ինքը չի կարող վստահեցնել այն մասին, թե ի՛նչ կպատահի հետագայում, որ եթե նրանք ճանապարհին տեղափոխման դժվարություններից բոլորը կոտորվեն, ապա դա իր մեղքը չի լինի, և դա էլ աստծո բանն է, իսկ չերմախտներ և զանազան մահաբեր հիվանդություններ աշխարհիս երեսին քիչ չեն և, լինում են դեպքեր, չէ՞ որ, մեռնում են ամբողջ գյուղերով։ Պարոնայք պաշտոնյաները դիմեցին նաև մի միջոցի, ո՛չ բոլորովին ազնիվ, բայց որը, սակայն, գործադրվում է երբեմն, այսինքն՝ կողմնակի ճանապարհներով զանազան լաքեյների ծանոթության միջոցով, այն է՝ հարցնել Ջիչիկովի մարդկանց, թե արդյոք չգիտե՞ն նրանք որոշ մանրամասներ իրենց տիրոջ առաջվա կյանքի և հանգամանքների մասին. բայց այստեղ նույնպես շատ բան չլսեցին։ Պետրուշկայից միայն բնակարանային հոտն առան, իսկ Սելիֆանից այսքանն իմացան, որ Ջիչիկովը պետական պաշտոն է վարել, մեկ էլ առաջներում ծառայել է մաքսատանը, և ուրիշ ոչինչ։ Այդ դասի մարդիկ մի շատ տարօրինակ սովորություն ունեն։ Եթե նրան ուղղակի են հարցնում մի բանի մասին, նա երբեք չի հիշի, բոլորը միտը չի բերի և անգամ պարզապես կպատասխանի, որ չգիտե, իսկ եթե հարցնելու լինեն մի ուրիշ բանի մասին, հենց այստեղ է, որ դա մեջ կբերի և կպատմի այնպիսի մանրամասնություններով, որ չես էլ կամենա իմանալ։ Պաշտոնյաների բոլոր որոնումները նրանց համար պարզեց մի բան միայն, որ նրանք հավանորեն բոլորովին չգիտեն, թե ի՛նչ բան է Ջիչիկովը, բայց որ Ջիչիկովը մի որևէ բան պե՛տք է որ լինի անպատճառ։ Նրանք որոշեցին վերջնականապես պարզաբանել այս խնդիրը և համենայն դեպս վճռել, թե ի՛նչ և ինչպե՛ս անեն, ի՛նչ միջոցների դիմեն, և թե ի՛նչ բան է նա իսկապես. արդյոք այնպիսի մարդ է Ջիչիկովը, որին պետք է բռնել և կալանավորել իբրև ոչ բարեմիտ մեկի, թե՞ նա այնպիսի մարդ է, որ ինքը կարող է բռնել և կալանավորել իրենց բոլորին՝ իբրև ոչ բարեմիտների։ Այդ ամենի համար որոշվեց հատկապես հավաքվել ընթերցողին հայտնի ոստիկանապետի, քաղաքի հոր և բարերարի մոտ։

ԳԼՈՒԽ X

Հավաքվելով ոստիկանապետի, արդեն ընթերցողին հայտնի՝ քաղաքի հոր և բարերարի մոտ, պաշտոնյաներն առիթ ունեցան նկատելու միմյանց, որ նրանք մինչև անգամ նիհարել են այդ հոգսերից և տագնապներից։ Իրոք՝ նոր գեներալ-նահանգապետի նշանակումը և այդ ստացված թղթերը այդպիսի լուրջ բովանդակությամբ և այդ՝ աստված գիտե ի՛նչ լուրերը, սույն ամենը նրանց դեմքերի վրա նկատելի հետքեր էին թողել, և շատերի ֆրակները նկատելիորեն ընդարձակ էին դարձել։ Ամենքը տեղի էին տվել՝ և՛ նախագահն էր նիհարել, և՛ բժշկական վարչության տեսուչն էր նիհարել, և՛ դատախազն էր նիհարել, և՛ ինչ-որ մի Սեմյոն Իվանովիչ, որ երբեք ազգանունով չէր կոչվում, ցուցամատին մատանի էր դնում, որ տիկիններին էր տալիս նայելու, մինչև անգամ նա էլ էր նիհարել։ Իհարկե գտնվեցին, ինչպես որ ամեն տեղ լինում է, մի քանի ոչ վախկոտ մարդիկ, որ պաղարյունությունը չէին կորցրել, բայց դրանցից շատ քիչ կային։ Փոստապետը միայն՝ նա միայն չէր փոխվել իր մշտական հավասարակշիռ բնավորության մեջ և միշտ նման դեպքերում սովորություն ուներ ասելու.— «Ճանաչո՞ւմ ենք ձեզ, գեներալ-նահանգապետներիդ։ Ջեզանից, կարող է պատահել, երեքչորսը կփոխվի, իսկ ես ահա երեսուն տարի է, փառք աստծու, նստած եմ միևնույն տեղումս»։ Սրան մյուս պաշտոնյաները սովորաբար նկատում էին. «Քեզ համար լավ է, շպռեխենն ի դեյլ, Իվան Անդրեյչ. քոնը փոստի գործ է՝ ստանալ և ուղարկել, ու գուցե միայն կխաբես՝ հիմնարկը մի ժամ շուտ փակելով, և ուշացած վաճառականից մի բան կվերցնես նամակը ժամանակից դուրս ընդունելու համար, կամ կուղարկես որևէ ծանրոց, որ հարկավոր չէր ուղարկել. այդտեղ, իհարկե, ամեն մարդ սուրբ կլինի։ Ապա՛ թող ամեն օր հանդիպես սատանայի մեկին, այնպես որ չես էլ ուզում վերցնել, իսկ նա զոռով բուդ է կոխում։ Քեզ ի՞նչ կա. ցավդ քիչ, միայն մի տղա ունես, իսկ այստեղ, բարեկամս, Պռասկովյա Ֆեոդրովնան այնպիսի մի աստվածային շնորհքով է օժտված՝ տարբենը մինն ածում է. կա՛մ Պռասկուշկա, կա՛մ Պետրուշկա. այստեղ, բարեկամս, ուրիշ երգ կերգեսս։ Այսպես էին ասում

պաշտոնյաները, իսկ արդյոք կարելի՞ է իսկապես սխտա-
նային դեմ կանգնել, այդ մասին դատելը հեղինակի գործը
չէ։ Այս անգամ հավաքված խորհրդակցության ժամանակ շատ
նկատելի էր բացակայությունը այն անհրաժեշտ բանի, որ
հասարակ ժողովրդի մեջ կոչվում է իմաստ։ Ընդհանրապես
մենք մի տեսակ ստեղծված չենք ներկայացուցչական հավա-
քույթների համար։ Մեր բոլոր հավաքույթներում՝ գյուղա-
ցիական համայնքի ժողովից սկսած մինչև ամեն տեսակ գի-
տական և այլ կոմիտեները, եթե նրանց մեջ չկա գլխավոր
մեկը, որ բոլորին կառավարում է, տեղի է ունենում ամենա-
կատարյալ խառնաշփոթություն։ Անգամ դժվար է ասել, թե
ինչի՛ցն է դա, ըստ երևույթին՝ այդպիսի ժողովուրդ ենք, մի-
այն հաջողվում են այն խորհրդակցությունները, որոնք կազ-
մակերպվում են նրա համար, որպեսզի կոնծեն կամ ճաշեն՝
ինչպես ակումբներն են և ամեն տեսակ վոկսալները[1] գերմա-
նական ձևի։ Իսկ պատրաստակամություն կա ամեն րոպե
թերևս ամեն բանի համար։ Մենք, հանկարծ, նայած թե խելք-
ներիս ի՛նչ է փչում, ընկերություններ ենք սարքում՝ բարե-
գործական, քաջալերական և չես իմանում էլ ինչական։ Նպա-
տակը գեղեցիկ կլինի, բայց, այնուամենայնիվ, բան չի դուրս
գա։ Կարող է պատահել՝ դա առաջ է գալիս նրանից, որ մենք
հանկարծ բավարարվում ենք հենց սկզբում և արդեն համա-
րում ենք, որ ամեն բան արված է։ Օրինակ՝ սկսելով մի որևէ
բարեգործական ընկերություն չքավորների համար և նվիրե-
լով նշանակալից գումարներ՝ մենք, ի նշանավորումն այդպիսի
մի գովելի վարմունքի, իսկույն ճաշ ենք տալիս քաղաքի բո-
լոր բարձրաստիճան անձնավորություններին, հասկանալի է՝
բոլոր նվիրաբերած գումարների կեսի արժեքով. մնացածնե-
րով հենց տեղն ու տեղը կոմիտեի համար վարձվում է մի
հրաշալի բնակարան՝ ջեռուցմամբ և պահակներով, դրանից
հետո էլ բոլոր գումարից չքավորների համար մնում է հինգ
ռուբլի հիսուն կոպեկ, դեռ այստեղ այդ գումարի բաժանման
մեջ էլ ո՛չ բոլոր անդամներն են իրար հետ համաձայն, և
ամեն մեկը մեջ է խցկում իր քավորին։ Ասենք՝ հավաքված
խորհրդակցությունն այս անգամ բոլորովին ուրիշ տեսակի

---

1 Վոկզալ բառի սկզբնական ձևը՝ հասարակական զվարճատեղի։

էր, նա կազմվեց անհրաժեշտության հետևանքով։ Ո՛չ թե որևէ չքավորների կամ կողմնակիցների էր վերաբերում գործը, գործը վերաբերում էր ամեն պաշտոնյային անձամբ, գործը վերաբերում էր աղետին, որ սպառնում էր հավասարապես ամենքին, ուրեմն և այստեղ ակամա պետք է լիներ ավելի համերաշխություն, սերտություն։ Բայց այդ՝ բոլորով հանդերձ սատանան գիտե, թե ի՛նչ դուրս եկավ։ Չխոսելով արդեն տարաձայնությունների մասին, որ հատուկ է բոլոր խորհրդակցություններին, հավաքվածների կարծիքի մեջ հայտնաբերվեց անգամ ինչ-որ անհասկանալի անվճռականություն. մեկն ասում էր, որ Չիչիկովը պետական թղթադրամներ կեղծող է և ապա-ինքն էլ ավելացնում էր՝ բայց կարող է պատահել, և կեղծող չէ. մյուսը հաստատում էր, որ նա գեներալ-նահանգապետի դիվանատան պաշտոնյա է, և հենց իսկույն էլ ավելացնում էր. բայց ասենք, սատանա՜ն գիտե, ճակատին հո չի՞ գրած։ Այն կոահումի դեմ, թե արդյոք նա շորերը փոխած ավազակ չէ՞, ինվեցին բոլորը. գտան, որ արտաքինից զատ, որը ինքնին արդեն բարեմիտ է, նրա խոսակցությունների մեջ բնավ այնպիսի բան չկար, որ մարդուն ցույց տա, թե վայրագ բնույթ ունեցող մարդ է։ Հանկարծ փոստապետը, որ մի քանի րոպե մնացել էր խորասուզված ինչ-որ մտածմունքների մեջ, արդյոք հանկարծակի ոգևորությա՞ն հետևանքով, որ լուսավորեց նրա միտքը կամ մի այլ բանի՝ բացականչեց անսպասելի կերպով. գիտե՞ք, պարոններ, ո՛վ է նա։ Այն ձայնը, որով նա արտասանեց այդ, իր մեջ ինչ-որ ցնցող բան ուներ, այնպես որ հարկադրեց բոլորին միաժամանակ գոչել. ապա՞, ո՛վ է։— Դա, պարոններ, տե՛ր իմ աստված, ոչ այլ ոք է, քան կապիտան Կոպեյկինը։— Իսկ երբ բոլորն իսկույն միաձայն հարցրին, ո՛վ է այդ կապիտան Կոպեյկինը, փոստապետն ասաց. ուրեմն դուք չգիտե՞ք, թե ո՛վ է այդ կապիտան Կոպեյկինը։

Բոլորը պատասխանեցին, որ բնավ չգիտեն, թե ո՛վ է կապիտան Կոպեյկինը։

— Կապիտան Կոպեյկինը,— ասաց փոստապետը՝ բացելով իր ծխախոտի տուփը միայն կիսովին, վախենալով, որ հարևաններից որևէ մեկը չխոթի այնտեղ իր մատները, որոնց մաքրությանը նա քիչ էր հավատում և անգամ սովորության

ուներ ավելացնելու, որ— գիտենք, պատվելիս, դուք ձեր մատենները կարող է պատահել ո՛վ գիտե ի՛նչ տեղեր եք խառնշտորել, իսկ ծխախոտը չէ՞ որ մաքրություն է պահանջում։— Կապիտան Կոպեյկինը,— կրկնեց նա, արդեն ծխախոտը քիթը քաշելով,— բայց ասենք, եթե մարդ պատմի՝ դուրս կգա մի որևէ գրողի համար շատ հետաքրքիր համարյա մի ամբողջ պոեմ։

Բոլոր ներկա եղողները ցանկություն հայտնեցին իմանալ այդ պատմությունը կամ ինչպես արտահայտվեց փոստապետը՝ գրողի համարյա շատ հետաքրքիր մի ամբողջ պոեմը, և նա սկսեց այսպես։

Կապիտան Կոպեյկինի պատմությունը

— Տասներկու թվի[1] կռվից հետո, տեր իմ,— այսպես սկսեց փոստապետը, չնայած որ սենյակում նստած էին ո՛չ թե մեկ, այլ վեց հոգի,— տասներկու թվի կռվից հետո, վիրավորների հետ ուղարկվել էր նաև կապիտան Կոպեյկինը։ Կռասնի՞ տակ էր աջդյոք թե Լայպցիգի, մենակ կարող եք պատկերացնել՝ նրա ոտն ու ձեռքը պոկվեցին։ Դե այն ժամանակ, գիտեք, վիրավորների համար դեռ կարգադրություն-բան չէր արվել. այդ գաշմանդամների գումար ասածդ էլ սարքեցին՝ կարող եք պատկերացնել՝ մի տեսակ շատ հետո։ Կապիտան Կոպեյկինը տեսնում է՝ լավ կլիներ աշխատել, բայց թե մնացել է, հասկանո՞ւմ եք, միայն ձախ ձեռքը։ Գնաց տուն, հոր մոտ, հայրն ասում է՝ բան չունեմ քեզ կերակրելու, ես,— կարող եք պատկերացնել,— ինքս հևգիվ եմ հաց ճարում։— Այստեղ կապիտան Կոպեյկինն վճռեց ճամփա ընկնել, պարոնիս ասեմ, Պետերբուրգ, թագավորին խնդիրք տալու, որ թագավորական ողորմածություն ցույց տա.— որ ահա, այսպես, այնպես, որոշ չափով, այսպես ասած՝ կյանքս եմ զոհել, արյուն եմ թափել... Դե հիմա այնտեղ, գիտեք, էլի, գումակի կամ թե պետական կերի սայլերի հետ, մի խոսքով, պարոնիս ասեմ, մի կերպ լեշը զցեց Պետերբուրգ։ Դե՛, կարող եք պատկերաց-

[1] 1812—1813 թվերի Հայրենական պատերազմը։

նել, այդ մարդը, մի ինչ-որ, այսինքն՝ կապիտան Կոպեյկին, հայտնվեց հանկարծ մայրաքաղաքում, որի նմանը, այսպես ասած, չկա աշխարհիս երեսին։ Հանկարծ նրա առաջ բացվեց մի աշխարհ, կյանքի որոշ ասպարեզ, հեքիաթական Շեհերիզադեի։ Հանկարծ այսպես մի որևէ, կարող եք պատկերացնել՝ նևսկի պրոսպեկտ, կամ գիտեք, էլի, մի որևէ Գոռոխովայա փողոց, սատանան տանի, կամ աչպես, մի որևէ լիտեյնայա, կամ մի որևէ շպից[1], օդի մեջ թամուրջներ են կախված սատանայական ձևով, կարող եք պատկերացնել, առանց, այսինքն, մի տեղի կպած լինելու, մի խոսքով՝ Շամիրամ[2], պարոնս, ու էլ հերիք է։ Դես-դեն ընկավ՝ բնակարան վարձելու, բայց ևկ տե՛ս, որ ձեռնտու չէ, կծում է. վարագույրներ, փաթվարագույրներ, սատանայական բաներ, հասկանում եք, գորգեր,— մի ամբողջ Պարսկաստան. ջուրն ես գցում, այսպես ասած, կապիտալներդ։ Դե՛ սովորականի պես, այսինքն, գնում ես փողոցով, իսկ քիթդ արդեն իմանում է, որ հազարների հոտ է գալիս, իսկ իմ կապիտան Կոպեյկինի մոտ եղած-չեղածը մի տասը կապուտանոց է[3]։ Դե՛, մի կերպ տեղ ճարեց Ռեվելյան պանդոկում՝ օրը մի ռուբլի. ճաշը՝ շշի. ծեծած կովի մսի մի կտոր։ Տեսնում է՝ տեղում երկար մնալ չի լինի։ Հարցուփորձ արեց, թե ո՞ւր դեմք։ Ասում են՝ կա որոշ տեսակի բարձրագույն հանձնաժողով, վարչություն, հասկանո՞ւմ եք, և պետն էլ գեներալ-անշեֆ այնքան է։ Թագավորն էլ, պետք է իմանաք, որ այդ ժամանակ դեռ մայրաքաղաքում չէր. զորքերը, կարող եք պատկերացնել, դեռ չէին վերադարձել Փարիզից, ամեն ինչ արտասահմանումն էր։ Կոպեյկինս, վաղ վեր կենալով, ձախ ձեռքով մորուքը քերեց,— որովհետև սափրիչին վճարելը, դա մի տեսակ այսպես ասած՝ գաշիվ է, վրան քաշեց մունդիրը և փայտե ոտով, կարող եք պատկերացնել, ճամփա ընկավ հենց իրա պետի, ազնվատոհմ իշխանի մոտ։ Հարցրեց բնակարանը։— Ա՛յ,— ասում են՝ ցույց տալով Դվորցովայա գետեզերքի վրա մի տուն։ Այդ իրենին

---

1 Շպրից — սուր ծայր (գերմ.)։ Այստեղ նկատի ունի Պետերբուրգի ծովակալության շենքի աշտարակի վրա գտնվող նշանավոր սայրը։

2 Շամիրամ. ակնարկում է նրա «կախված պարտեզները», որ նա շինեց Ասորեստանում։

3 Կապուտ գույնի թղթադրամ — հինգ ռուբլի։

էլ հո ուրիշ տեսակ խրճիթ է, պատուհանի ապակիները, կարող եք պատկերացնել, սաժեն ու կեսանոց հայելիներ, այնպես որ՝ սկահակները, բոլորը՝ ինչ կա-չկա սենյակներում, երևում է ոնց որ դրսում. կարող ես, մի տեսակ, ձեռքով վերցնել փողոցում. պատերի վրա թանկագին մարմարներ, մետաղե գալանտերեյներ[1], ասենք՝ դռան վրա մի տեսակ բռնակ, հենց այն է՝ հալա դեռ պիտի վազես մանրավաճառի խանութը, մի գրոշի սապոն առնես, մի ձեռքերդ երկու ժամ տրորես-մաքրես՝ նոր արդեն սիրտ անես ձեռ տալ դրան, մի խոսքով՝ ամեն ինչ մի լաքած է որ՝ խելք թոցնելու բան։ Հենց մենակ շվեյցարն արդեն գեներալիսսիմուսի տեսք ունի. ոսկեջրած գուրզով, կոմսի կերպարանքով, ոնց որ լավ բտած փրքվածմոպս, բատիստի օձիքով, շան որդին... Կոպեյկինս մի կերպ փայտե ոտով իրեն գցեց ընդունարանը, կուչ եկավ իր համար անկյունում, որ թևով չդիպչի, կարող եք պատկերացնել, որևէ Ամերիկայի կամ Հնդկաստանի ոսկեջրած, հասկանում եք, որևէ մի ճենապակե սկահակի։ Դե, հասկանալի է, որ նա երկար ժամանակ սպասեց, որովհետև, կարող եք պատկերացնել, եկած էր դեռ այն ժամանակ, երբ գեներալը, մի որոշ կերպ, դեռ նոր էր վեր կացել անկողնից, և ծառայապետը, կարող է պատահել, մատուցել էր նրան որևէ արծաթե տաշտ՝ զանազան, հասկանում եք, այնպիսի լվացումների համար։ Սպասում է իմ Կոպեյկինը չորս ժամ, որ ահա մրտնում է վերջապես համհարզը կամ ասենք՝ մի որևէ ուրիշ հերթապահ պաշտոնյա.— «Գեներալը» ասում է,— «այս րոպեիս դուրս կգա ընդունարան»։— Իսկ ընդունարանում ժողովուրդը լիքը լցված է։ Դրանք հո այն չեն, ոնց որ մենք ենք՝ ծառամառա, բոլորը չորրորդ կամ հինգերորդ դասի՝ գնդապետներ, մեջները դեռ ուսադիրների վրա մի հաստ մակարոն էլ է փայլում— գեներալիտետ, մի խոսքով։ Հանկարծ սենյակում, հասկանում եք, հազիվ նկատելի իրարանցում եղավ, ոնց որ մի բարակ որևէ եթեր անցավ։ Այստեղ-այնտեղ լսվեց. «սո՛ւս, սո՛ւս», և հանկարծ սարսափելի լռություն տիրեց։ Ազնվատոհմ իշխանը մտնում է։ Դե հիմի... կարող եք պատկերացնել, պետական մարդ։ Դեմքին, այսպես ասած... դե, կոչման հա-

1 Մանրագարդեր։

ՃաՃայն, հասկանում եք... աստիՃանը բարձր... նույնպիսի և մի արտահայտություն, հասկանում եք։ Ամեն ինչ, որ նախասենյակում կար, հասկանալի է, նույն րոպեին լարվեց, սպասում է, դողում է, սպասում է վճռի, մի որոշ չափով, ճակատագրի։ Մինիստրը կամ ազնվատոհմ իշխանը մոտենում է մեկին, մյուսին.— դո՞ւք ինչո՛ւ եք եկել, դո՞ւք ինչո՛ւ եք եկել, ի՞նչ է ձեզ պետք, ի՞նչ է ձեր գործը։— Վերջապես, պարոնս, մոտենում է Կոպեյկինին։ Կոպեյկինը ուժ հավաքելով՝ ասում է. «Այսպես ու այսպես, ձերդ գերազանցություն. արյուն եմ թափել, զրկվել եմ, մի որոշ չափով, ձեռքերս, ոտքերս, աշխատել չեմ կարողանում, համարձակվում եմ խնդրել Քագավորի ողորմածությունը»։ Մինիստրը տեսնում է՝ մարդը փայտե ոտով՝ և աջ թևն էլ դատարկ կպցրած է մունդիրին։— «Լավ,— ասում է,— անցե՛ք այս օրերս»։ Կոպեյկինս դուրս է գալիս համարյա հրճվանքով, մեկ՝ որ արժանացավ տեսակցության, այսպես ասած, առաջնակարգ ազնվատոհմիկի հետ, իսկ մյուսը՝ որ ահա հիմա վերջապես կորոշվի մի որոշ, այսպես ասած, Քոշակի գործը։ Այսպես լավ տրամադրված, հասկանում եք, ոստոստում էր մայթի վրա։ Մտավ Պալկինի գինետունը՝ մի բաժակ օղի խմելու, ճաշեց, պարոնս, լոնդոնում, հրամայեց, որ իրեն մատուցեն կոտլետ կապառով, բտահավ զանազան համեմունքներով։ Խնդրեց մի շիշ գինի, երեկոյան ուղղվեց դեպի Քատրոն, մի խոսքով՝ հասկանում եք, էլի, քեֆ քաշեց։ Մայթում տեսնում է, ահա դնում է ինչ-որ մի վայելչակազմ անգլուհի, կարապի նման, կարող եք պատկերացնել, այսպես ասած։ Կոպեյկինս, արյունը մեջը խաղաց, գիտեք, էլի, սկսեց վազել նրա ետևից իր փայտե ոտով— Քրըխկ, Քրըխկ. «չէ՛— մտածեց, մնա հետո, երբ Քոշակ կստանամ. հիմա ես չափն անց կացրի»։ Եվ ահա, տեր իմ, մի ինչ-որ երեք-չորս օր անց, Կոպեյկինս գնում է նորից մինիստրի մոտ, սպասում նրա դուրս գալուն։ «Այսպես, այնպես,— ասում է,— եկա,— ասում է,— լսելու ձերդ գերազանցության հրամանին հիվանդություններից և վերքերից տառապյալների վերաբերյալ...— և նման, հասկանում եք, պաշտոնեական ոճով։ Ազնվատոհմիկը, կարող եք պատկերացնել, իսկույն ճանաչեց նրան։— Ա՛,— ասում է,— լավ,— ասում է,— այո անգամ ձեզ ոչինչ չեմ կարող ասել ավելի, քան միայն այն, որ

հարկավոր կլինի, որ դուք սպասեք քաղավորի գալուն, այն ժամանակ, անկասկած, կարգադրություններ կլինեն վիրավորների համար. իսկ առանց ինքնակալի, այսպես ասած, կամքի, ես ոչինչ չեմ կարող անել։— Գլուխ է տալիս, հասկանում եք, և մնաս բարով։ Կոպեյկինը, կարող եք պատկերացնել, դուրս եկավ ամենաանորոշ դրության մեջ։ Չէ՞ որ նա արդեն կարծում էր, թե հենց այն է՝ փողը վաղը կտան.— դե եկ, անուշիկս, խմի՛ր ու քեֆ արա։— Դրա փոխարեն նրան հրամայված է սպասել. ժամանակն էլ չի նշանակված։ Մոայլ բուի պես դուրս եկավ նախասենյակից, ոնց որ պուդել[1], հասկանում եք, որի գլխին խոհարարը ջուր է ածել՝ պոչը քաշել է ոտների արանքը, ականջները կախել.— է՛, չէ՛— մտածում է ինքնիրեն,— մյուս անգամ կգնամ, կբացատրեմ, որ վերջին պատառս է մնացել—չեք օգնի՝ պետք է մեռնեմ, մի որոշ կերպ, սովից։— Մի խոսքով, տեր իմ, սա նորից գալիս է Դվորցովայա գետեղերքը. ասում են՝ չի կարելի, չի ընդունում, եկեք վաղը։— Մյուս օրն է գնում,— նույն բանը. շվեյցա՛րը որ՝ նրա երեսը տեսնել չի ուզում։ Այն էլ կա, որ մոտի կապուտավորներից էլ մեկն է մնացել գրպանում։ Լինում էր, որ շշի էր ուտում, կովի մսի մի կտոր. իսկ հիմա կրպակից վերցնում է մի որևէ սելյոդկա կամ քթու վարունգ, մեկ էլ՝ երկու գրոշի հաց, մի խոսքով՝ սովը նեղում է խեղճին, մինչդեռ ախորժակը, ուղղակի, գայլի ախորժակ է։ Անց է կենում այսպես՝ որևէ ճաշարանի մոտով, խոհարարն այնտեղ, կարող եք պատկերացնել, օտարերկրացի, ֆրանսիացի, այսպես բաց կերպարանքով, սպիտակեղենը հոլանդական, գոգնոցը սպիտակ՝ ոնց որ ձյուն, շինում է որևէ ֆենղեր[2], կուտլետիկներ գետնասունկով, մի խոսքով այնպիսի մի ռաստպե գելիկատես, որ ուղղակի մատներդ հետը կուտես։ Իսկ որ անցնում է Միլյուտինյան խանութների մոտով, այնտեղ էլ պատուհանից մտիկ է տալիս, մի որևէ այսպես ասած՝ սալմոն, բալ— հատը հինգ ռուբլի, խոշոր ձմերուկ՝ մի կատարյալ դիլիժանս, դուրս է եկել պատուհանից և այսպես ասած՝ հիմարի է ման գալիս, որ դրան հարյուր ռուբլի վճարի, մի խոսքով՝ ամեն քայլափոխիդ այնպիսի գայթակղություն, որ

1 Գանգրամազ շուն։

2 Համեմած (սուր, քունդ) սոուս։

քերանիդ չուրջ գնում է, իսկ նա հենց միայն այս է լսում. «վա՛ղը»։ Ահա կարող եք պատկերացնել, թե ինչպես էր նրա դրությունը. մի կողմից՝ այսպես ասած՝ սալմոն և ձմերուկ, իսկ մյուս կողմից՝ նրան հենց մի գլուխ հրամցնում են միևնույն ճաշը՝ «վաղը»։ Վերջապես խեղճը համբերությունից, իսպառ, այսպես ասած՝ դուրս եկավ, վճռեց՝ ինչ ուզում է լինի, գրոհով խցկվի ներս։ Սպասեց մուտքի մոտ, որ տեսնի, թե ուրիշ էլի խնդրատու չի՞ անցնի, և այնտեղ ինչ-որ մի գեներալի հետ, հասկանում եք, իր փայտե ոտով սլկվեց ներս՝ ընդունարան։ Ազնվատոհմիկը, սովորականի պես, դուրս է գալիս։— Դո՞ւք ինչո՛ւ համար եք եկել, դո՞ւք ինչու համար եք եկել։ Ա՛,— ասում է Կոպեյկինին տեսնելով,— չէ՞ որ ես ձեզ հայտարարեցի, որ դուք պետք է սպասեք որոշման։— Շնո՛րհ արեք, ձերդ գերազանցություն, մի կտոր հաց չունեմ ուտելու, այսպես ասած...— Բայց ի՞նչ անեմ։ Ես ձեզ համար ոչինչ չեմ կարող անել. աշխատեցեք առայժմ ինքնո՛ւրդ ձեզ օգնել, ինքներդ միջոցներ փնտրեցեք։— Բայց, ձերդ գերազանցություն, ինքներդ կարող եք, մի որոշ, այսպես ասած, դատել, ի՞նչ միջոցներ կարող եմ ես ճարել, չունենալով ո՛չ ձեռք, ո՛չ ոտք։— «Բայց,— ասում է ազնվատոհմիկը,— հանձաձայնեցեք, որ ես ձեզ չեմ կարող պահել, այլ կերպ, իմ հաշվին, ես շատ վիրավորներ ունեմ, նրանք բոլորը հավասար իրավունքներ ունեն... Զինվեցե՛ք համբերությամբ։ Կգա թագավորը, ես ձեզ կարող եմ ազնիվ խոսք տալ, որ նրա արքայական ողորմածությունը ձեզ այդպես չի թողնի։— Բայց, ձերդ գերազանցություն, ես չեմ կարող սպասել,— ասում է Կոպեյկինը և ասում է, մի որոշ, այսպես ասած, կոպտությամբ։ Ազնվատոհմիկը, հասկանում եք, մի տեսակ՝ բարկացավ։ Իսկապես. այստեղ ամեն կողմից դեներալներ են սպասում որդշումների, հրամանների, գործեր, այսպես ասած, կարևոր, պետական, ամենաշուտափույթ կատարման սպասող,— մի րոպե անգամ չի կարելի բաց թողնել,— իսկ այս սատանան կպել է ու պոկ չի գալիս։ «Ներեցեք,— ասում է,— ես ժամանակ չունեմ... ինձ սպասում են այնպիսի գործեր, որոնք ձերինից ավելի կարևոր են»։— Հիշեցնում է, այսպես ասած, նուրբ կերպով, որ ժամանակն է, վերջապես, դուրս գնալու։ Իսկ Կոպեյկինս, դե սովածությունը, գիտեք, բոլեց

նրան.— «Ինչպե՞ս կամենաք, ձերդ գերազանցություն,— ասում է,— տեղից չեմ շարժվի, մինչև որ որոշում տաք»։ Դե ... կարող եք պատկերացնել. այդ կերպ պատասխանել աղնվատոհմիկին, որը բավական է մի խոսք ասի, որ բմբուլներդ այնպես քամուն տրվի՝ եկած ճամփադ մոռանաս... Եթե մեզ նման մեկին մի որևէ պաշտոնյա, մեկ աստիճանով ցածր, նման բան ասի, դա արդեն կոպտություն էր։ Իսկ այնտեղ չ՛փը, չ՛փը ինչպիսին է. գեներալ-անշե՛ֆ և, մի ինչ-որ կապիտան Կոպեյկին. 90 ռուբլի և զրո՛։ Գեներալը, հասկանում եք, էլ ուրիշ ոչինչ, հենց միայն նայեց, իսկ հայացքը հրազեն է. է՛լ հոգի չի մնում, հոգին դառնում է կորեկի հատիկ։ Իսկ այս իմ Կոպեյկինը, կարող եք երևակայել, տեղից չի շարժվում, ոնց որ մեխված լինի։— «Դուք ի՞նչ»,— ասում է գեներալը և ձեռը տարավ սրա, ինչպես ասում են, բկին։ Բայց, ճշմարիտը որ խոսենք, դեռ նա բավական ողորմածաբար վարվեց, մեկ ուրիշը այնպես կվախեցներ, որ երեք օր դրանից հետո փողոցը գլխիվայր պտույտ կգար աչքին, բայց նա միայն ասաց.— «Լավ,— ասում է,— եթե ձեզ համար այստեղ ապրելը թանկ է և դուք չեք կարող մայրաքաղաքում հանգիստ սպասել ձեր վիճակի որոշման, ապա ես ձեզ կարտաքսեմ պետական հաշվով։ Կանչել ֆելդյեգերին[1], ճանապարհ դնել սրան իր բնակության տեղը»։ Իսկ ֆելդյեգերը հո այնտեղ կանգնած է. երեք արշինանոց մի ինչ-որ տղամարդ, խոշոր ձեռքերը, կարող եք պատկերացնել, բնությունը ինքն է շինել կառապանների[2] համար, մի խոսքով՝ սառ ատամ հանող... Ահա դրան, ծառային աստծո, բռնեցին, տեր իմ, ու գցեցին սայլի վրա, ֆելդյեգերին էլ հետը դրին։— «Է՛հ,— մտածում է Կոպեյկինը,— գոնե ճանապարհածախս չպիտի վճարեմ, դրան էլ շնորհակալ եմ»։ Հիմա, պարոնս, գնում է նա ֆելդյեգերով ու ֆելդյեգերով գնալով, մի որոշ կերպ, այսպես ասած, մտածում է ինքնիրեն.— «Եթե գեներալը ասում է, որ ես ինքս միջոցներ ճարեմ ինձ օգնելու—լավ,— ասում է,— ես,— ասում է,— միջոցներ կճարեմ»։ Դե, արդեն Թե ինչպե՛ս նրան տեղ հասցրին և ո՛ւր բերին, դրա մասին ոչինչ հայտնի չէ։

---

1 Ֆելդյեգեր՝ զինվորական սուրհանդակ։

2 Այսինքն՝ կառապաններին ծեծելու համար, որով ֆելդյեգերները ստիպում էին նրանց արագ քշել։

Այդպես էլ, հասկանում եք, կապիտան Կոպեյկինի մասին լուրերն ընկան մոռացության գետը, մի որևէ, ասենք, Լեթա[1], ինչպես ասում են բանաստեղծները։ Բայց, թույլ տվեք, պարոններ, այ, հենց այստեղ էլ սկսվում է, կարելի է ասել, թելը, ռոմանի հանգույցը։ Այսպիսով, թե ո՛ւր կորավ Կոպեյկինը, հայտնի չէ. բայց չանցավ, կարող եք պատկերացնել, երկու ամիս, որ Ռյազանի անտառներում հայտնվեց ավազակների մի խումբ, և այդ խմբի ատամանը, պարոնս, ուրիշ այլ ոք չէր...»։

— Սակայն թույլ տվեք, Իվան Անդրեևիչ,— ասաց հանկարծ քնդհատելով նրան ոստիկանապետը,— չէ՞ որ կապիտան Կոպեյկինը, դու ինքդ ասացիր, որ ձեռ ու ոտ չունի, իսկ Զիչիկովը...

Այստեղ փոստապետը ճչաց և ձեռքով ամբողջ թափով զարկեց իր ճակատին՝ հրապարակով բոլորի առաջ իրեն անվանելով հորթենի։ Նա չէր կարողանում հասկանալ ,թե ինչպե՛ս նման մի հանգամանք նրա միտքը չեկավ հենց պատմության սկզբում, և խոստովանեց, որ կատարելապես իրավացի է առածը, թե ռուսի վերջին խելքն է գովելի։ Սակայն մի րոպե անց նա իսկույն սկսեց խորամանկությունը բանեցնել և փորձեց դուրս պրծնել, ասելով, որ սակայն Անգլիայում շատ զարգացած է մեխանիկան, որ լրագրերից երևում է, թե ինչպե՛ս մեկը հնարել է փայտե ոտներ այնպիսի ձևով, որ մի դիպչելով անտեսանելի զսպանակին, ոտները աստված գիտե, թե ինչպիսի՛ տեղեր էին տանում, որ հետո էլ ոչ մի տեղ նրան գտնել հնարավոր չէր։

Սակայն բոլորը շատ կասկածեցին, որ Զիչիկովը կապիտան Կոպեյկինը լիներ և գտան, որ փոստապետն արդեն չափազանց հեռու գնաց։ Բայց և նրանք էլ իրենց հերթին չուզեցին նվաստ երևալ և փոստապետի սրամիտ կռահումից մտքերը գրգռված՝ հազիվ թե ավելի հեռուները չգնացին։ Ի թիվս շատ յուրատեսակ խելքի մոտ ենթադրությունների՝ վերջապես մեկը կար, տարօրինակ է մինչև անգամ ասել՝ թե արդյոք Զիչիկովը զգեստը փոխած Նապոլեոնը չէ՞, թե՝ անգլիացին վաղուցվանից նախանձում է, որ Ռուսաստանը այնպես մեծ է և լայնարձակ, թե մինչև իսկ մի քանի անգամ երե-

[1] Լեթա՝ հին հունական դիցաբանության մեջ մոռացության գետ։

վացել են ծաղրանկարներ, ուր ռուսը դուրս է բերված անգլիացիների հետ խոսելիս։ Անգլիացին կանգնած է և ետևից բռնել է թոկով կապած մի շուն, և ի դեմս շան հասկացվում է Նապոլեոնը։ Իբր նայի՛ր, ասում է, եթե որևէ բան իմ սրտով չլինի՝ իսկույն քեզ վրա բաց կթողնեմ այս շանը, և ահա նրանք հիմա, կարող է պատահել, բաց էլ թողել են նրան Հեղինեի կղզուց, և ահա նա հիմա գաղտագողի մտել է Ռուսաստան իբրև Ջիլիկով, այնինչ իսկապես բոլորովին էլ Ջիլիկովը չէ։

Իհարկե, պաշտոնյաները սրան հավատալը, չհավատացին, բայց, այնուամենայնիվ, մտածմունքի մեջ ընկան և քննելով ամենքն իր մեջ այս գործը, գտան, որ Ջիլիկովի դեմքը, երբ նա շրջվում է և կողքանց կանգնում, շատ նմանություն է տալիս Նապոլեոնին։ Ոստիկանապետը, որ ծառայել էր 12 թվի կռվի ժամանակ և անձամբ տեսել է Նապոլեոնին, չկարողացավ նույնպես չխոստովանել, որ հաստակով նա ոչ մի դեպքում բարձր չի լինի Ջիլիկովից և որ իր կազմվածքով Նապոլեոնը նույնպես, չի կարելի ասել, թե չափազանց գեր է, բայցև այնպես էլ չէ, որ ասենք՝ նիհար։ Կարող է պատահել, որ մի քանի ընթերցող այս բոլորը կանվանեն անհավատալի. հեղինակը ևս ի հաճույս նրանց պատրաստ է այդ բոլորը կոչել անհավատալի, բայց ցավն այն է, որ իսկապես այնպես էլ կատարվեց, ինչպես պատմվում է, և հենց նրանով էլ զարմանալի է, որ քաղաքը խուլ տեղերում էլ չէր գտնվում, այլ ընդհակառակը, հեռու չէր երկու մայրաքաղաքներից։ Սակայն պետք է հիշել, որ այդ բոլորը կատարվում էր ֆրանսիացիների արժանապատ արտաքսումից անմիջապես հետո։ Այդ ժամանակ բոլոր մեր կալվածատերերը, պաշտոնյաները, վաճառականները, գործակատարները և բոլոր գրագետները և անգրագետները դարձել էին՝ առնվազն ամբողջ ութ տարով՝ երդվյալ քաղաքագետներ։ «Մոսկովսկիե վեդոմոստի»-ն և «Սին Օտեչեստվա»-ն անգիրբոռն կարդացվում էին և հասնում էին վերջին ընթերցողին կտոր-կտոր եղած, անպե՛տք՝ արևէ բանի գործածության։ Փոխանակ այն հարցին՝ «քանիսի՝ ծախեցիք, բարեկամս, մի չափ վարսակը, ինչպե՞ս օգտվեցիք երեկվա փոթորկությունից», ասում էին՝ «իսկ ի՞նչ են գրում լրագրերում, աթոյդ նորից Նապոլեոնին բաց չե՞ն թողել կըղ-

զուցե՝ վաճառականները դրանից խիստ զգուշանում էին, որովհետև կատարելապես հավատում էին մի մարգարեի նախազուշակության, որ արդեն երեք տարի նստած էր բանտում. մարգարեն եկավ՝ հայտնի չէ որտեղի՛ց՝ տրեխներով, երեսը ներս արած քուրքով, որից հոտած ձկան սարսափելի հոտ էր գալիս, և հայտարարեց, որ Նապոլեոնը նեռ է և պահվում է քարե շղթայով, վեց պատերից և յոթ ծովերից այն կողմը, բայց հետո կգանդի շղթան և կտիրի ամբողջ աշխարհին։ Մարգարեն նախազուշակության համար ընկավ, ինչպես պետք էր, բանտը, բայց չնայած դրան, իր գործը տեսավ և բոլորովին շփոթեցրեց վաճառականներին։

Դեռ երկար ժամանակ, ամենաշահավետ գործարքներ անելիս, վաճառականներն այդ առթիվ պանդոկ գնալիս, որպեսզի թեյ խմեն, խոսում էին նեռի մասին։ Պաշտոնյաներից և ազնվականներից շատերը ևս ակամա մտածում էին այդ մասին և վարակված միստիցիզմով, որ ինչպես հայտնի է, այն ժամանակ շատ մոդա էր, ամեն մի տառի մեջ, որոնցով կազմված էր Նապոլեոն խոսքը, ինչ-որ առանձին նշանակություն էին տեսնում. շատերն անգամ նրա մեջ Հովհաննու հայտնության թվերն էին տեսնում։ Այսպիսով՝ ոչինչ զարմանալի բան չկար, որ պաշտոնյաները ակամա մտածմունքի մեջ ընկան այդ կետի մասին. սակայն շուտով ուշաբերվեցին, նկատելով, որ իրենց երևակայությունն արդեն չափազանց արագավազ է և որ այդ բոլորն այն չէ։ Մտածեցին, մտածեցին, տվեցին-առան և վերջապես որոշեցին, որ վատ չէր լինի՝ դարձյալ մի լավ հարցուփորձ անել Նոզդրյովին։ Քանի որ առաջինը նա՛ մեջ գցեց մեռած հոգիների պատմությունը և, ինչպես ասում են, սերտ հարաբերության մեջ էր Չիչիկովի հետ, հետևաբար՝ անկասկած, նրա կյանքի հանգամանքներից որևէ բան գիտե, ուրեմն մի անգամ ևս փորձել, թե ի՛նչ կասի Նոզդրյովը։

Տարօրինակ մարդիկ են այդ պաշտոնյաները, իսկ նրանց հետ միասին՝ նաև բոլոր կոլեգիաների մարդիկ, չէ՞, որ նրանք լավ գիտեին, որ Նոզդրյովը ստախոս է, որ նրա ոչ մի բառին մազաչափ անգամ չի կարելի հավատալ։ Բայց չնայած դրան, հենց նրան էլ դիմեցին։ Արի՛ ու մարդու հետ գործ տես, չի հավատում աստծուն, բայց հավատում է, որ եթե քթարմա-

որը քոր է գալիս, ապա անպատճառ կմեռնի, կթողնի բանաստեղծի ստեղծագործությունը, որը պարզ է, ինչպես օրը, որ թափանցված է ներդաշնակությամբ և բարձր իմաստության պարզությամբ, իսկ վրա կընկնի հենց ուղղակի նրա՛ վրա, ուր որևէ ճարպիկի մեկը խճճում է, դուրս է տալիս, ծամոտում է, այլանդակում է բնությունը, և դա նրան դուր կգա և նա կգոչի. ահա նա, ահա՛ սրտի գաղտնիքների իսկական ճանաչումը. ողջ կյանքում գրոշի գին չի տա բժիշկներին, իսկ կվերջացնի նրանով, որ վերջապես կդիմի մի պառավի, որը բժշկում է փսփսոցներով ու քթումներով, կամ ավելի՛ն, ինքը կհնարի մի որևէ խոտաջուր՝ չգիտես ի՛նչ աղր ու զիբիլից, որը աստված գիտե ինչո՛ւ գլուխը կմտնի, թե հենց սա է ճարը նրա հիվանդության։ Իհարկե, կարելի է մասամբ ներել պարոնայք պաշտոնյաներին նրանց իսկապես դժվար դրության պատճառով։ Խեղդվողը, ասում են, փոքրիկ տաշեղին էլ է ձեռքը գցում, և նա այդ րոպեին դատողություն չունի մտածելու, որ տաշեղի վրա միայն ճանճը կարող է հեծնել զբոսնելու համար, իսկ ինքը համարյա չորս փութ ծանրություն ունի, եթե ո՛չ անգամ ամբողջ հինգ. բայց դա այդ պահին նրա գլուխը չի մտնում, և նա ձեռքը գցում է տաշեղին։ Այդպես էլ մեր պարոններդը բռնեցին վերջապես Նոզդրյովի օձիքից։ Ոստիկանապետը նույն րոպեին նրան մի երկտող գրեց՝ շնորհ բերել երեկոյան, և բոտֆորտներ հագած քաղաքամասի ոստիկանը, գրավիչ շառագունած այտերով՝ նույն րոպեին սուրը բռնած, թուչկոտելով վազեց Նոզդրյովի բնակարանը։ Նոզդրյովն զբաղված էր կարևոր գործով. ամբողջ չորս օր է, որ նա դուրս չէր գալիս սենյակից, ո՛չ ոքի ներս չէր թողնում և ճաշն ստանում էր պատուհանից. մի խոսքով՝ մինչև անգամ նեհարել էր և կանաչել։ Գործը պահանջում էր մեծ ուշադրություն. դա կայանում էր նրանում, որ պետք էր մի քանի տասնյակ դյուժին խաղաթղթերից ջոկել մի տալիա, բայց ամենից շատ ջոկվողը, որին կարելի լիներ վստահել, ինչպես ամենահավատարիմ բարեկամի։ Դեռ մի երկու շաբաթվա աշխատանք մնացել էր. այդ ամբողջ ժամանակամիջոցում Պորֆիրին պարտավոր էր մեղելյան շան ձագի պորտը մաքրել առանձին խոզանակով և օրական երեք անգամ լվանալ սապոնով։ Նոզդրյովը շատ բարկացավ, որ խանգարեցին իր առանձ-

նությունը. նախ՝ նա գրողի ծոցը ուղարկեց քաղաքամասի ոստիկանին, բայց երբ քաղաքապետի երկտողում կարդաց, որ կարող է օգուտ բերող բան պատահել, որովհետև երեկոյին սպասում են ինչ-որ նորեկի, նույն րոպեին կակղեց, արագ կողպեց սենյակը բանալիով, հագնվեց մի կերպ և ճանապարհ ընկավ նրա հետ։ Նոզդրյովի ցուցմունքները, վկայություններ-ը և ենթադրությունները ճեչտեղ եկան այնպիսի խիստ հա-կադրությամբ պարոնայք պաշտոնյաների հայտարարություն-ներին, որ սրանց վերջին ենթադրություններն էլ շիլա-շփոթ դարձան։ Դա կատարելապես այնպիսի մարդ էր, որի համար կասկած բոլորովին գոյություն չուներ, և որքան նրանց կող-մից նկատելի էր անհաստատություն և վախ՝ ենթադրություն-ների մեջ, այնքան նա հաստատ էր և վստահ։ Նա պատաս-խանեց բոլոր կետերին, մինչև անգամ առանց դեմ առնելու, հայտարարեց, որ Չիչիկովը գնել է մի քանի հազար ռուբլու մեռած հոգիներ, և որ ինքը նրան ծախել է, որովհետև պատ-ճառ չի տեսնում չծախելու. այն հարցին, թե արդյոք նա լրտես չի՞ և չի՞ աշխատում որևէ բան հետախուզել, Նոզդրյովը պա-տասխանեց, որ լրտես է, որ դեռ դպրոցում, ուր ինքը նրա հետ սովորել է, նրան անվանում էին ֆիսկալ[1], և որ դրա հա-մար ընկերները, դրանց թվում և ինքը, նրա կողքերը մի փոքր տրորեցին, այնպես որ հետո հարկ եղավ միայն քունքերին 240 տզրուկ դնել, այսինքն՝ նա ուզում էր ասել 40, բայց 200-ն ինքնիրեն ասվեց։ Այն հարցին, թե արդյոք նա կեղծ թղթադրամ սարքող չէ՞, նա պատասխանեց, որ սարքող է, և այս առիթով նա պատմեց մի անեկդոտ Չիչիկովի արտասո-վոր ճարպկության մասին, թե ինչպե՞ս, իմանալով՝ որ նրա տանը գտնվում է երկու միլիոն կեղծ թղթադրամ, կնքել են նրա տունը և պահակ են դրել՝ ամեն մի դռանը երկու զին-վոր, և ինչպե՞ս Չիչիկովը բոլոր թղթադրամները մի գիշերում փոխել է, այնպես որ հետևյալ օրը, երբ կնիքները հանել են, տեսել են, որ բոլորը իսկական թղթադրամներ են։ Այն հար-ցին, թե ճի՞շտ է արդյոք, որ Չիչիկովը մտադիր է եղել փախց-նել նահանգապետի աղջկան, և՝ արդյոք՝ ճշմարի՞տ է, որ Նոզդրյովն ինքը հանձն է առել օգնել և մասնակցել այդ գոր-

1 Լատ. տանող-բերող։

ծին, Նոզդրյովը պատասխանեց, որ օգնել է և որ եթե ինքը չլիներ, ապա ոչինչ դուրս չէր գա, բայց այստեղ նա հենց այն է՝ գլխի էր ընկնում, տեսնելով, որ բոլորովին զուր տեղը ստեց և կարող էր այդպիսով փորձանքի մեջ ընկնել, բայց լեզուն այլևս ոչ մի կերպ չկարողացավ իրեն քաշել։ Սակայն և դժվար էր, որովհետև հայտնվեցին ինքնին այնպիսի հետաքրքրիր մանրամասնություններ, որոնցից ոչ մի կերպ չէր կարելի հրաժարվել. մինչև անգամ տվեց այն գյուղի անունը, ուր գտնվում էր ծխական եկեղեցին, որտեղ մտադիր էին եղել պսակվել, այն է՝ Տրուխմաչևկա գյուղը, տերտերն էլ՝ հայր Սիդորը, պսակելու համար՝ 75 ռուբլի, և սա չէր համաձայնվի, եթե ինքը չվախեցներ նրան, ասելով՝ որ կտեղեկացնի ուր Հարկն է, որ նա կրկնապսակել է ալյուրավաճառ Միխայլին իր քավորկնոջ հետ, որ նա նրան մինչև անգամ տվել է իր կառքը և բոլոր կայարաններում պատրաստել է փոխվող ձիերը։ Մանրամասնությունները հասան այնտեղ, որ նա սկսեց արդեն կառապանների անուններն էլ տալ։ Փորձեցին Նապոլեոնի մասին խոսք բանալ, բայց իրենք ևս ուրախ չէին, որ փորձեցին, որովհետև Նոզդրյովը այնպիսի անհեթեթություններ դուրս տվեց, որ ոչ միայն չուներ ոչ մի նմանություն ճշմարտության, այլ մինչև անգամ պարզապես ոչ մի բանի նմանություն չուներ, այնպես որ՝ պաշտոնյաները հառաչելով ետ քաշվեցին. միայն ոստիկանապետը երկար լսում էր, մտածելով՝ թե արդյոք գոնե մի որևէ բան կլինի՞ շարունակության մեջ, բայց վերջապես ձեռքը թափ տվեց՝ ասելով. սատանա՜ն գիտե ի՛նչ բան է։ Եվ բոլորը համաձայնեցին նրանում, որ ինչքան կուզես՝ եզան հետ կռիվ տուր, նրանից կաթ չես ստանա։ Եվ պաշտոնյաները մնացին ավելի վատթար դրության մեջ, քան էին առաջ, և գործը վերջացավ նրանով, որ ոչ մի կերպ չկարողացան իմանալ, թե ի՛նչ բան էր Ջիչիկովը։ Եվ պարզ դառավ, թե ի՛նչ ցեղից է մարդը. իմաստուն է, խելացի և խելքը շատ բանում կբանի՝ ինչ վերաբերում է ուրիշներին, բայց ո՛չ իրեն. ինչպիսի՜ զգուշավոր, հաստատ խորհուրդներ կտա նա կյանքի դժվար դեպքերում։ Ինչպիսի՜ ժիր գլուխ,— գոչում է ամբոխը,— ի՛նչ անհողդողդ բնավորություն։ Բայց ապա թող այդ ժիր գլխին մի՛ դժբախտություն հասնի, և պատահի, որ նա ինքը դրվի կյանքի դժվար

դրությունների մեջ,— ո՞ւր կորավ բնավորությունը, ամբողջովին կորցրեց իրեն անհողդողդ տղամարդը և նրանից մնաց ողորմելի վախկոտի մեկը, չնչին, թույլ երեխա կամ պարզապես ֆետյուկ, ինչպես ասում է Նոզդրյովը։

Բոլոր այդ դատողությունները, կարծիքները և լուրերը, հայտնի չէ, թե ի՛նչ պատճառով, ամենից ավելի ազդեցին խեղճ դատախազի վրա։ Դրանք այն աստիճան ազդեցին, որ նա գալով տուն, սկսեց մտածել, մտածել և հանկարծ, ինչպես ասում են՝ անսպասելի մեռավ։ Կաթվա՞ծ դիպավ նրան արդյոք, թե մի ուրիշ բան բռնեց, միայն՝ ինչպես նստած էր, այնպես էլ աթոռից բերանքսիվայր քրմփաց հատակին։ Ճչացին, ինչպես սովորաբար լինում է, ձեռքներն իրար տալով. «ա՛խ, տեր աստվածո», ուղարկեցին բժշկի եւևից, որ ապրյուն առնվի, բայց տեսան, որ դատախազը արդեն տեղովը անշունչ մարմին է։ Այն ժամանակ միայն ցավակցությամբ իմացան, որ հանգուցյալը իսկապես որ հոգի ուներ, թեև նա իր համեստությունից երբեք այն ցույց չէր տալիս։ Մինչդեռ մահվան հայտնվելը նույնպես սարսափելի եզավ փոքր մարդու մեջ, որքան սարսափելի է նա մեծ մարդու մեջ. այն մարդը, որ դեռ քիչ առաջ ման էր գալիս, շարժվում էր, վիստ էր խաղում, ստորագրում էր զանազան թղթեր և այնքան հաճախ հրևում էր պաշտոնյաների մեջ իր բանձր հոնքերով և թարթող աչքերով, հիմա պառկել էր սեղանի վրա, ձախ աչքը արդեն չէր թարթում բոլորովին, բայց մի հոնքը դեռ վեր էր բարձրացրել ինչ-որ հարցական արտահայտությամբ։ Ինչի՞ մասին էր հարցնում հանգուցյալը, ինչո՞ւ մեռավ կամ ինչո՞ւ համար էր ապրում, այդ միայն աստծուն է հայտնի։

Բայց չէ՞ որ դա անհեթեթություն է, չէ՞ որ դա ոչ մի բանի հարիր չէ, դա անկարելի է, որ պաշտոնյաները այդպես կարողանային իրենք իրենց վախեցնել, ստեղծել այդպիսի մի հիմարություն, այդքան հեռանալ ճշմարտությունից, երբ երեխայի համար անգամ պարզ էր, թե ինչո՛ւմն էր բանը։ Այսպես կասեն շատ ընթերցողներ և կկշտամբեն հեղինակին անհեթեթությունների համար կամ խեղճ պաշտոնյաներին կանվանեն հիմարներ, որովհետև մարդ շռայլությամբ է գործածում «հիմար» բառը և պատրաստ է օրական տասը-քսան անգամ մատուցել այն իր մերձավորին։ Բավական է տասը հատ-

կությունից մեկը հիմար հատկություն լինի, որպեսզի հիմար ճանաչվես, անկախ ինը լավ հատկություններից։ Ընթերցողների համար դյուրին է դատելը, նայելով իրենց հանգիստ անկյունից և բարձրությունից, որտեղից ողջ հորիզոնն է բացված դեպի ամենը՝ ինչ կատարվում է ներքևը, ուր մարդ մոտավոր առարկան է տեսնում։ Նաև մարդկության համաշխարհային տարեգրության մեջ կան շատ դարեր, որոնք, թվում է քեզ, կջնջեիր և կոչնչացնեիր իբրև ոչ պիտանի։ Աշխարհիս երեսին շատ են կատարվել մոլորություններ, որոնք թվում է այժմ չէր կատարի նույնիսկ երեխան։ Ի՜նչ ծուռումուռ, խուլ, նեղ, անանցանելի, հետու մի կողմ տանող ճանապարհներ է ընտրել մարդկությունը, ձգտելով հասնել հավերժական ճշմարտության, մինչդեռ իր առջև ամբողջովին բաց է եղել ուղիղ ճանապարհը, նման այն ճանապարհին, որ տանում է դեպի հոյակապ տաճարը, թագավորի համար հատկացված պալատները։ Բոլոր այլ ճանապարհներից լայն ու շքեղ է նա, շողշողուն՝ արևով և լուսավորված ողջ դիշերը կրակներով. բայց մարդիկ անցնում էին նրա մոտով քանձր խավարի մեջ։ Նվ քանի անգամ, արդեն երկնքից առաքված իմաստից դըրդված՝ նրանք այստեղ ևս կարողանում էին նտ ընկրկել և շեղվել մի կողմ, կարողանում էին օրը ցերեկով ընկնել կրկին անանցանելի խուլ անկյունները, կարողանում էին կրկին բաց թողնել կույր մշուշը միմյանց աչքերի մեջ և քաշ գալով ճահճային կրակների ետևից, կարողանում էին այնուհանդերձ հասնել անդնդին, որպեսզի հետո սարսափով հարցնեն իրար, թե ո՞ւր է ելքը, ո՞ւր է ճանապարհը։ Ներկա սերունդն այժմ պարզ տեսնում է բոլորը, զարմանում է մոլորությունների վրա, ծիծաղում է իր նախնիների անզարգացածության վրա, իզուր չէ, որ երկնային հրով է գծագրված սույն տարեգիրը, որ նրա մեջ գոչում է յուրաքանչյուր տառը, որ ամեն կողմից ուղղված է խոցող մատը հենց նրա՜ վրա, նրա՜ վրա, ներկա սերունդի վրա, բայց ծիծաղում է ներկա սերունդը և ինքնահավան, հպարտ սկսում է նոր մոլորությունների շարանը, որոնց վրա հետո նույնպես կծիծաղեն եկող սերունդները։

Չիչիկովն այս ամենի մասին կատարելապես ոչինչ չգիտեր։ Հակառակի պես այդ ժամանակ նա թեթև մրսել էր, ֆլյուս ուներ և կոկորդի փոքրիկ բորբոքում, որոնց բաշխման

մեջ չափազանց առատաձեռն է մեր նահանգական քաղաքներից շատերի կլիման։ Որպեսզի որևէ կերպ չընդհատվեր, աստված մի՛ արասցե, կյանքը առանց սերունդի, նա որոշեց, որ ավելի լավ կլինի մի երեք օր սենյակում մնա։ Սույն օրերի ընթացքում նա անդադար ողողում էր կոկորդը կաթով, մեջը թուզ, որ նա հետո ուտում էր և այտի վրան կապել էր երիցուկի և կամֆորայի բարձիկ։ Ցանկանալով որևէ բանով ժամանակն զբաղեցնել, նա կազմեց գնած գյուղացիների մի քանի նոր և մանրամասն ցուցակներ, մինչև անգամ կարդաց ինչ-որ մի հատորը դքսուհի Լավաքիերի, որ գտավ իր ճամպրուկի մեջ, նորից նայեց արկղիկի մեջ եղած զանազան առարկաները և գրությունները, մի քանիսը կարդաց կրկին անգամ ևս, և այդ բոլորը նրան խիստ ձանձրացրեց։ Ո՛չ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե ի՛նչ կարող է նշանակել, որ ոչ մեկը քաղաքի պաշտոնյաներից չեկավ նրա մոտ գոնե մի անգամ հարցնելու նրա առողջությունը, մինչդեռ վաղուց չէ, որ հյուրանոցի առջև հաճախ կանգնում էին կա՛մ փոստապետի, կա՛մ դատախազի, կա՛մ նախագահի դրոժկաները։ Նա միայն ուսերն էր թոթվում սենյակում շրջելով։ Վերջապես նա իրեն ավելի լավ զգաց և աստված գիտե, թե ո՛րքան ուրախացավ, երբ տեսավ, որ հնարավորություն կա դուրս գալ մաքուր օդ։ Չհետաձգելով՝ նա անհապաղ ձեռք զարկեց տուալետին, բաց արեց իր արկղիկը, բաժակը լցրեց եռացրած ջրով, հանեց վրձինը և սապոնը, ձեռնարկեց ածիլվելու, որի ժամանակն էր վաղուց, որովհետև ձեռքով շոշափելով մորուքը և նայելով հայելու մեջ՝ նա արդեն ասաց. այ թե անտառներ են բուսել, հա՛։ Եվ իսկապես, անտառ չասենք, բայց ամբողջ այտերի և կզակի վրա բավականին թանձր ցանքս էր բուսել։ Ածիլվելով՝ նա սկսեց աշխույժ ու արագ հագնվել, այնպես որ, քիչ մնաց դուրս թռչեր պանթալոնի միջից։ Վերջապես նա հագնված էր, օդեկոլոն ցանված և ավելի տաք փաթաթվելով՝ դուրս եկավ փողոց, նախազգուշացման համար այտը կապելով։ Նրա դուրս գալը, ինչպես յուրաքանչյուր ապաքինված մարդու համար, ճիշտ որ տոնական էր։ Ամեն բան, որ պատահում էր նրան, ծիծաղկոտ տեսք էր ընդունել, և՛ տները, և՛ անցնող մուժիկները, որոնք սակայն բավական լուրջ էին, որոնցից որևէ մեկը արդեն կարողացել էր իր ընկերոջ ականջին մի հատ

հասցնել։ Առաջին այցը նա ուզում էր անել նահանգապետին։ Ճանապարհին շատ մտքեր էին անցնում նրա գլխով. մտքում պտտվում էր խարտյաշիկը, անգամ երևակայությունը սկսեց թեթևակի չարաճճիություններ անել և նա արդեն ինքն սկսեց մի փոքր կատակել և ծիծաղել իր վրա։ Այդ տրամադրությամբ նա հայտնվեց նահանգապետի տան մուտքի առջև։ Արդեն այն է՝ սկսում էր հաշտում շտապով վրայից նետել շինելը, որ շվեյցարը զարմացրեց նրան անսպասելի խոսքերով. չի՛ հրամայված ընդունել։

— Ինչպե՞ս, ինչպես թե, դու երևում է, չճանաչեցի՞ր ինձ, լա՛վ նայիր երեսիս,— ասաց նրան Ջիչիկովը։

— Ինչպե՞ս չճանաչեմ, ձեզ հո առաջին անգամ չեմ տեսնում,— ասաց շվեյցարը։— Հենց ձե՛զ միայն չի հրամայված ընդունել, մնացած բոլորին կարելի է։

— Ա՛յ քեզ բան. ինչո՞ւ, ի՞նչ պատճառով։

— Այդպես է հրամանը, երևում է՝ այդպես էլ պետք է,— ասաց շվեյցարը և դրան ավելացրեց մի խոսք. այո՛։ Որից հետո կանգնեց նրա առջև բոլորովին ազատ, չպահպանելով այն շոյիչ տեսքը, որով առաջները շտապում էր հանել նրա շինելը։ Թվում էր, թե նա նրան նայելով մտածում էր. էհե՛, դե որ քեզ տերերս հաշտից են քշում, ասել է դու, ոնց որ երևում է, էնպես, ավարայի մեկն ես։

— «Անհասկանալի է»,— մտածեց ինքնիրեն Ջիչիկովը և հենց իսկույն ուղևորվեց ատյանի նախագահի մոտ, բայց ատյանի նախագահն այնպես շփոթվեց նրան տեսնելով, որ չկարողացավ երկու խոսք իրար կապել և խոսեց այնպիսի դատարկ բաներ, որ անգամ երկուսն էլ ամաչեցին։ Նրանից հեռանալով, ո՛րքան էլ ճանապարհին Ջիչիկովը ջանում էր բացատրել և հասկանալ, թե նախագահի միտքը ի՛նչ էր և թե ի՛նչ բանի էին վերաբերում նրա խոսքերը, բայց ոչինչ չկարողացավ հասկանալ։ Հետո անցավ ուրիշների մոտ։ ոստիկանապետի մոտ, փոխնահանգապետի մոտ, փոստապետի մոտ, բայց նրանք բոլորը կա՛մ չընդունեցին նրան, կա՛մ ընդունեցին այնպես տաթթրինակ, այնպես հարկադրված և անհասկանալի կերպով տարան խոսակցությունը, այնպես գլուխները կորցրին և այնպիսի մի անհեթեթություն դուրս եկավ այդ բոլորից, որ նա կասկածեց նրանց ուղեղի առողջության

մասին։ Դարձյալ փորձեց մտնել որևէ մեկի մոտ ևս, որպեսզի իմանա գոնե պատճառը, բայց ոչ մի պատճառ չիմացավ։ Կիսաքուն մարդու պես աննպատակ թափառում էր նա քաղաքում, չկարողանալով որոշել՝ արդյոք ի՞նքն է խելագարվել, թե՞ պաշտոնյաներն են գլուխները կորցրել, արդյոք երազո՞ւմն է այդ բոլորը կատարվում, թե՞ հարթմնի երազից վատթար չիլաշփոթ է եփել։

Արդեն ուշ ժամանակ, համարյա մթնշաղին՝ վերադարձավ իր տեղը, հյուրանոց, որտեղից հոգու այնպիսի լավ տրամադրության մեջ դուրս էր եկել, և ձանձրույթից հրամայեց, որ իրեն թեյ մատուցեն։ Մտածմունքի մեջ և ինչ-որ անիմաստ դատողություններով իր դրության տարօրինակության մասին՝ նա սկսեց թեյ լցնել, երբ հանկարծ սենյակի դուռը բացվեց և բոլորովին անսպասելի՝ նրա առջև կանգնեց նոզդրյովը։

— Այ, առածն ասում է. բարեկամի համար յոթ վերստ ճամփա կտրելն էլ նեղություն չէ,— ասաց նա, հանելով կարտուզը.— անցնում եմ այստեղով, տեսնում եմ պատուհանում լույս կա, արի՛, ասում եմ, մտնեմ. հավանորեն՝ քնած չի։ Ա՛, այդ լավ է, որ սեղանիդ վրա թեյ կա, հաճույքով կխմեմ մի գավաթ. այսօր ճաշին ամեն տեսակ անպետք բաներ կերրա, զզում եմ, եր արդեն ստամոքսում սկսում է իրարանցում։ Ապա մի հրամայիր, որ ինձ համար ծխամորճ լցնեն. ո՞ւր է քո ծխամորճը։

— Բայց չէ՞ որ ես ծխամորճ չեմ քաշում,— ասաց Ջիչիկովը չոր կերպով։

— Դատարկ խոսք, իբր ես չգիտեմ, որ դու ծխող ես։ Է՛յ, ի՞նչ է էն... ծառ՚այիդ անունը։ Է՛յ, Վախրամե՛յ, լսի՛ր։

— Ոչ թե Վախրամեյ, այլ Պետրուշկա։

— Ինչպե՞ս թե. ախր դու մի Վախրամեյ ունեիր առաջներում։

— Ոչ մի տեսակի Վախրամեյ չի եղել ինձ մոտ։

— Այո՛, ճիշտ է, դա Դերբինն ունի մի Վախրամեյ։ Երեվակայիր, Դերեբինին ի՛նչ բախտ վիճակվեց, նրա մորաքույրը կուվեց իր որդու հետ, այն պատճառով, որ սա ամուսնացել է Եորտուհու հետ և հիմա իր բոլոր կալվածքը գրել է Դեբեբինի անունով։ Ես ինքս ինձ մտածում եմ, ա՛յ թե այդպիսի մի մորաքույր ունենամ հետագայի համար։ Իսկ դու, բարե-

կամ, այս ի՞նչ եմ ամենքից հեռացել, ոչ մի տեղ չես երևում։ Իհարկե, ես գիտեմ, որ դու զբաղված ես լինում երբեմն գիտական առարկաներով, սիրում ես կարդալ (թե ինչից եզրակացրեց Նոզդրյովը, որ մեր հերոսը զբաղվում է գիտական առարկաներով և սիրում է կարդալ, դա, խոստովանում ենք, մենք ոչ մի կերպ չենք կարող ասել, իսկ Չիչիկովը՝ դրանից էլ ավելի քիչ)։ Ա՛խ, եղբայր Չիչիկով, եթե դու միայն տեսնեիր... ա՛յ թե ճիշտ որ սնունդ կլիներ քո սատիրական խելքի համար (թե ինչո՞ւ Չիչիկովը սատիրական խելք ուներ, դա ևս անհայտ է)։ Երևակայիր, եղբայր, վաճառական Լիխաչովի մոտ գորկա[1] էինք խաղում, ա՛յ թե որտեղ էր ծիծաղը։ Պեռեպենդևը, որ ինձ հետ էր, ահա,— ասում է,— եթե հիմա Չիչիկովը լիներ՝ այ թե նրա իսկապես... (մինչդեռ Չիչիկովը ծնված օրից չէր ճանաչում ոչ մի Պեռեպենդևի)։ Դե խոստովանիր, եղբայր, չէ՞ որ, ճշմարիտ, ամենաստոր կերպով վարվեցիր այն ժամանակ ինձ հետ, հիշո՞ւմ ես, երբ շաշկի էինք խաղում, չէ՞ որ ես տարա... Այո՛, դու, բարեկամ, ուղղակի խաբեցիր ինձ։ Բայց ես, գլուխս մեռնի, ոչ մի կերպ չեմ կարողանում բարկանալ։ Նորերս նախագահի հետ... Հա՞, իսկապես, չէ՞ որ ես պետք է քեզ ասեմ, որ քաղաքում բոլորը քեզ դեմ են. նրանք կարծում են, որ դու կեղծ թղթադրամ ես սարքում, եկել կպել էին ինձ, բայց ես սարքի պես քեզ պաշտպան կանգնեցի՝ ասացի, որ քեզ հետ միասին սովորել եմ և հորդ էլ ճանաչում եմ. դե էլ ինչ ասեմ, մի լավ զուգեցի նրանց։

— Ես կեղծ թղթադրա՞մ եմ սարքում,— գոչեց Չիչիկովը, աթոռից վեր կենալով։

— Բայց դու ինչո՞ւ այդպես վախեցրիր նրանց,— շարունակեց Նոզդրյովը։— Նրանք, սատանան գիտե, վախից խելագարվեցին. քեզ չինեցին ավազակ և լրտես... իսկ դատախազը վախից մեռավ, վաղը թաղումն է։ Դու չե՞ս գա։ Նրանք, ճիշտն ասած, վախենում են նոր գեներալ-նահանգապետից, որ քո պատճառով մի բան դուրս չգա. իսկ ես գեներալ-նահանգապետի վերաբերյալ այն կարծիքին եմ, որ եթե նա քիթը վեր տնկի և գոռոզություն անի, ազնվականության հետ կատարելապես ոչինչ չի կարող անել։ Ազնվականությունը պահանջում է սրտաբացություն, ճիշտ չէ՞։ Իհարկե, կարելի է

[1] Թղթախաղի անուն է։

իրեն համար քաշվել կաբինետը և ոչ մի պարերեկույթ չտալ, բայց դրանով ի՞նչ դուրս կգա։ Չէ՞ որ դրանով բան չես շահի։ Սակայն դու, Զիչիկով, ռիսկով գործ ես բռնել։

— Ի՞նչ ռիսկով գործ,— հարցրեց Զիչիկովն անհանգիստ։

— Այ, նահանգապետի աղջկան փախցնելը։ Ես, ճիշտ է, սպասում էի դրան, աստված վկա, սպասում էի։ Առաջին անգամ, հենց որ տեսա ձեզ միասին պարերեկույթում, է՛, արդեն, մտածում եմ, Զիչիկովը, անշուշտ, զուր տեղը չի... Սակայն դու իզուր այդպիսի ընտրություն արիր, ես նրա մեջ ոչինչ լավ բան չեմ գտնում։ Ա՛յ, կա մեկը, Բիկուսովի բարեկամուհին, նրա քրոջ աղջիկը, ա՛յ, քեզ կասեմ աղջիկ է, է՛, կարելի է ասել՝ հրա՛շք, խաս կտոր։

— Բայց դու ի՞նչ, ի՞նչ ես դուրս տալիս։ Ինչպե՞ս թե նահանգապետի աղջկան փախցնել, ի՞նչ ես ասում,— խոսում էր Զիչիկովը աչքերը չռած։

— Ֆե, բավական է, բարեկամս, այ թե ծածկամիտ մարդ ես, հա՛։ Ես, ճիշտն ասեմ, դրա համար եմ քեզ մոտ եկել. համեցեք, ես պատրաստ եմ քեզ օգնել. այդպես էլ թող լինի. կբռնեմ պսակդ, կառքն ու փոխվող ձիերն ինձանից, միայն մի պայման. դու պետք է ինձ պարտք տաս՝ երեք հազար։ Հարկավո՛ր է, եղբայրս, թեկուզ մորթիր։

Նոզդրյովի շաղակրատության ողջ ընթացքում Զիչիկովը մի քանի անգամ տրորեց աչքերը, կամենալով հավատալ, որ երազում չի՞ այդ բոլորը լսում։ Կեղծ թղթադրամներ սարքելը, նահանգապետի աղջկան փախցնելը, դատախազի մահը, որի պատճառը իբր թե ինքն է, գեներալ-նահանգապետի գալուստը, այդ բոլորը նրան կարգին երկյուղ ներշնչեցին։ Թե որ բանն այդտեղ հասավ, մտածեց նա ինքնիրեն, էլ մլուլ տալու ժամանակ չէ, քանի շուտ է, պետք է այստեղից ծլկել։

Նա ջանաց ցանել Նոզդրյովին, իսկույն իր մոտ կանչեց Սելիֆանին և հրամայեց պատրաստ լինել արշալույսին, որպեսզի հենց վաղը, առավոտյան ժամը 6-ին անպայման դուրս գան քաղաքից, այնպես որ ամեն բան կարգի բերված լինի, բրիչկան յուղած և այլն, և այլն։ Սելիֆանն ասաց. աչքիս վրա, Պավել Իվանովիչ, և սակայն կանգնած մնաց մի առ ժամանակ դռան մոտ՝ չշարժվելով տեղից։ Պարոնը հենց նույն պահին Պետրուշկային հրամայեց դուրս քաշել մահճա-

կալի տակից ճամպրուկը, որ արդեն փոշով ծածկվել էր կարգին, և սկսեց նրա հետ միասին դասավորել առանց մեծ ընտրողության՝ գուլպաները, շապիկները, սպիտակեղենը՝ լվացած թե անլվա, կոշիկների կաղապարները, օրացույցը... Այդ բոլորը դասավորում էր ինչպես պատահեր, նա ուզում էր պատրաստ լինել հենց երեկոյան, որ վաղվան օրը ոչ մի արգելք չպատահեր։ Սելիֆանը մի երկու րոպե դռան մոտ կանգնելուց հետո վերջապես շատ դանդաղ դուրս եկավ սենյակից։ Դանդաղ, որքան միայն կարելի է երևակայել, դանդաղ իջավ նա սանդուղքից, իր ետից կոշիկներով հետքերը տսլելով ներքև իջնող մաշված աստիճանների վրա, և երկար ժամանակ ձեռքով քորում էր ծոծրակը։ Ի՞նչ էր նշանակում այդ քորելը, և ընդհանրապես ի՞նչ է նշանակում դա։ Արդյո՞ք ափսոսանք, որ ա՛յ, չհաջողվեց վաղվա համար նշանակված հանդիպումը իր խղճուկ քուրքը հագած, կուշակով մեջքը պնդացրած բարեկամի հետ որևէ արքունական գինետանը, կամ արդեն նոր տեղում ճանկե՞լ էր նրան մի որևէ սրտի հատորիկ, և ստիպված է քողնել երեկոյան կանգնելը դարպասի մոտ և քնքշորեն բռնելը սպիտակ թաթիկները՝ այն ժամին, երբ քաղաքի գլխին է իջնում մթնշաղը, կարմիր բլուզով տղան բակի ծառաների առջև ծլնգացնում էր իր բալալայկան, և խաղաղ զրույց է անում տարաստիճան, աշխատանքն ավարտած ժողովուրդը։ Թե՛ պարզապես, ափսոս էր քողնելը ծառաների խոհանոցում քուրքի տակ տաքացրած տեղը՝ վառարանին ու շչիին և քաղաքի կակուղ պիրոգին մոտ, երա համար, որ նորից քաշ գար անձրևին, քոնութացի և ամեն տեսակ ճանապարհի աղետների մեջ։ Ատելած վկա, չես կարող դուշակել։ Ինչ ասես չի նշանակում ռուս ժողովրդի՝ ծոծրակ քորելը։

ԳԼՈՒԽ XI

Ո՛չ մի բան սակայն այնպես չպատահեց, ինչպես ենթադրում էր Չիչիկովը։ Առաջին՝ որ զարթնեց ավելի ուշ, քան կարծում էր—դա առաջին անախորժությունն էր։ Վեր կենալով՝ նա իսկույն ուղարկեց իմանալու, թե արդյոք լծա՞ծ է բրիչկան և պատրա՞ստ է ամեն ինչ. բայց տեղեկացրին, որ բրիչկան դեռ չի լծված և ոչինչ դեռ պատրաստ չէ։ Դա երկրորդ

անախորժությունն էր։ Նա զայրացավ, պատրաստվեց անդամ քոթակի նման մի բան ուտեցնել մեր բարեկամ Սելիֆանին և անհամբերությամբ սպասում էր միայն, թե սա իր կողմից արդարացման ի՛նչ պատճառ կբերի։ Շուտով Սելիֆանը երևաց դռների մոտ, և պարոնը բավականություն ունեցավ լսելու նույն խոսքերը, որ սովորաբար լսվում է ծառաների կողմից այն դեպքում, երբ հարկավոր է շուտ ճանապարհվել։

— Ախր, Պավե՛լ Իվանովիչ, հարկավոր է ձիերը պայտել։

— Ա՛յ դու խոզի ձագ, հաստապո՛ւս, ինչո՞ւ առաջ չասացիր այդ, ժամանա՞կ չկար, ի՛նչ է։

— Դե ժամանակ կար... անիվն էլ, Պավել Իվանովիչ, դողը պետք է բոլորը փոխել, քանի որ սրանից դենը ճամփան դարուփոս է, հենց մի գլուխ քարքարոտ... Մին էլ՝ թե հրաման կտաս՝ ասեմ. բրիչկայի առաջքը հենց լավ շարժվել է տեղից, էնքան որ, ո՛վ է իմանում, երկու կայարան էլ չդիմանա։

— Սրիկա՛,— գոռաց Չիչիկովը ձեռները իրար խփելով և մոտեցավ նրան այնքան, որ Սելիֆանը վախենալով, թե պարոնից նվեր ստանա՝ քիչ ետ-ետ գնաց և մի կողմ ծռվեց։— Ինձ սպանե՞լ ես ուզում, հա՞, մորթե՞լ ես ուզում ինձ։ Պատրաստվում ես մեծ ճանապարհին ինձ մորթե՞լ, ավազա՛կ, անիծված խոզի ձագ, ծռվի ցուցանք, հա՞, հա՞։ Երեք շաբաթ է՝ նստած ենք մի տեղ, հա՞։ Գոնե ասեիր, անառա՛կ,— և հիմա վերջին ժամին հարմարը գտար, երբ արդեն համարյա պատրաստ ենք՝ նստել ու գնալ, հա՞. հենց այստե՛ղ մուրտառեցիր, հա՞, հա՞։ Չէ՞ որ դու այդ գիտեիր առաջուց։ Չէ՞ որ դու այդ գիտեիր, հա՞, հա՞։ Պատասխանի՛ր։ Գիտեի՞ր։ Հա՞։

— Գիտեի,— պատասխանեց Սելիֆանը՝ գլուխը կախելով։

— Ապա ինչո՞ւ այն ժամանակ չասացիր, հա՞։

Այդ հարցին Սելիֆանը ոչինչ չպատասխանեց, բայց գլուխը կախելով, թվում է, թե ինքն իրեն ասում է. «Տհասո՞ւմ ես ինչ զարմանալի դուրս եկավ. ախր գիտեի, բայց չասացի»։

— Դե հիմա գնա և դարձրին բեր. երկու ժամում պետք է ամեն ինչ արված լինի։ Լսո՞ւմ ես. անպայման երկու ժամում. իսկ եթե չի լինի, ես քեզ, քեզ... երկու կես կանեմ։— Մեր հերոսը խիստ էր զայրացած։

Սելիֆանը հենց շուռ էր գալիս դեպի դուռը, որ գնա հրա-

մանը կատարելու, բայց կանգ առավ և ասաց.— էն էլ պիտի ասեմ, պարոն, որ խայտավոր ձին լավ կլինի՝ ծախենք. ախր, Պավել Իվանովիչ, շատ սրիկան է, էնպես ձի է, որ իսկն ասեմ, աստված վկա, էն է՝ խանգարում է մենակ։

— Հա՛, հենց կվազեմ շուկա՝ ծախելու, ինչպե՞ս չէ։

— էն աստվածը, Պավել Իվանովիչ, տեղովը սրիկա է, շատ նենգ անասուն է, փորձանք է, էդպես ձի ոչ մի տեղ...

— Հիմա՛ր, երբ ուզենամ ծախել՝ կծախեմ։ Դեռ մեջ ես ընկնում դատողություններ անելով։ Այ, հիմա կտեսնեմ. եթե դու չես թերի դարբիններին ու երկու ժամում ամեն բան պատրաստ չի լինի, այնուհետև մի քոթակ կտամ, որ հորդ հարսանիքը միտդ կբերես։ Գնա կորի՛ր։

Սելիֆանը դուրս գնաց։

Չիչիկովի տրամադրությունը բոլորովին փչացավ և նա հատակին շպրտեց այն սուրը, որը նրա հետ ճանապարհորդում էր՝ անհրաժեշտ երկյուղ ներշնչելու ում հարկն էր։ Քառորդ ժամից ավելի չարչարվեց դարբիններից հետ, մինչև որ գործը հարթեց, որովհետև դարբինները, ինչպես սովորություն է, ընտիր սրիկաներ էին, ու կռահելով, որ գործը շտապով է պետք, գինը բարձրացրին ուղիղ վեց անգամ։ Ո՛րքան էլ նա բաբիկացավ, նրանց անվանեց սրիկաներ, ավազակներ, ճանապարհորդներին կողոպտողներ, ակնարկեց անգամ վերջին դատաստանը, բայց դարբիններին ոչնչով չազդեց, նրանք կատարելապես իրենց բնավորությանը հաստատ մնացին. ո՛չ միայն գինը չիջեցին, այլ մինչև անգամ մյուս տվին երկու ժամի տեղ ամբողջ հինգ ժամ ու կես։ Այդ ամբողջ ժամանակը նա հաճույք ունեցավ վայելելու ախորժելի այն րոպեները, որ հայտնի են յուրաքանչյուր ճանապարհորդի, երբ ճամպրուկում ամեն ինչ տեղավորված է, և սենյակում թափված են միայն բոկի կտորտանք, թղթեր, մեկ էլ՝ զանազան աղբ, երբ մարդ չի պատկանում ո՛չ ճանապարհին, ո՛չ տեղում նստելուն, պատուհանից տեսնում է քաշ եկող մարդկանց, որոնք խոսում են իրենց տասը կոպեկանոցների մասին և ինչ-որ հիմար հետաքրքրությամբ բարձրացնում են աչքերը, որ նայելով նրան՝ կրկին շարունակեն իրենց ճանապարհը, որն ավելի է գրգռում խեղճ, չգնացող ճանապարհորդի վատ տրամադրությունը։ Ամեն ինչ, որ կա ու չկա, ամեն ինչ, որ նա տեսնում

է,— և՛ փոքրիկ խանութը նրա պատուհանների դիմացը, և՛ գլուխն այն պառավի, որ ապրում է դիմացի տանը ու մոտենում է կարճ վարագույրներ ունեցող պատուհանին, ամեն ինչ նրա համար զզվելի է, բայց և այնպես նա չի հեռանում պատուհանից։ Կանգնում է, մերթ մոռացության մեջ, մերթ նորից դարձնելով ինչ-որ բութ ուշադրություն այն բոլորի վրա, որ նրա առջև շարժվում է և չի շարժվում և բարկությունից խեղդում է որևէ մի ճանճի, որը այդ պահին տզզում և զարկվում է ապակուն նրա մատի տակ։ Բայց ամեն բան վերջ ունի, և ցանկալի րոպեն հասավ. ամեն ինչ պատրաստ էր, բրիչկաի առաջքը, ինչպես հարկն էր, սարքված էր, անիվը դրվել էր նոր դողի մեջ, ձիերը բերվել էին ջրելուց, և ավազակադարբինները հեռացան, լավ հաշվելով ստացած ռուբլիները և բարեմաղթություններ անելով։ Վերջապես բրիչկան նույնպես լծված էր, և երկու տաք կալաչներ, հենց նոր գնած, դրված էին մեջը, Սելիֆանն էլ արդեն իր համար մի որոշ բան դրեց կառապանի նստելու տեղի մոտ գտնվող գրպանը, և ինքը՝ հերոսը վերջապես ի տես նույն կիսակոտոն սերթուկով, կարտուզ թափահարող հավաքարարի, պանդոկի և օտար լաքեյների և կառապանների, որ հավաքվել էին մտիկ տալու, թե ի՛նչպես է ճանապարհ ընկնում օտար պարոնը, և ուրիշ ամեն տեսակ հանդամանքներում, որ կապված էին կառքի դուրս գալուն, նստեց կառքը,— և բրիչկան, որով ման են գալիս ամուրիները, որը այնքան երկար ժամանակ կանգնած էր քաղաքում և այնքան, կարող է պատահել, ձանձրացրել է ընթերցողին, վերջապես հյուրանոցի դարպասից դուրս գնաց։ «է՛, փառք քեզ, աստված»,— մտածեց Զիչիկովը և երեսը խաչակնքեց։ Սելիֆանը մտրակեց ձիերին. նրա մոտ նստեց սկզբում միառժամանակ ոտնատեղից կախված Պետրուշկան, և մեր հերոսը, մի լավ նստելով վրացական մի փոքրիկ խալիչայի վրա, մեջքի ետևը քաշեց կաշվե բարձը, հետո տվեց երկու տաք կալաչները, և կառքը դարձյալ գնաց պարելով ու օրորվելով՝ սալահատակի շնորհիվ, որը, ինչպես հայտնի է, տակից վեր շպրտելու ուժ ուներ։ Մի ինչ-որ անորոշ զգացումով նայում էր նա տներին, պատերին, ցանկապատերին և փողոցներին, որոնք իրենց կողմից նույնպես կարծես ոստոստում էին, դանդաղ ետ էին գնում, և որոնց, աստված գիտե,

բախտը կբերե՞ր, որ նա կրկին երբևէ տեսներ իր կյանքի շա-
րունակության մեջ։ Փողոցներից մեկի մի ոլորանում բրիչկան
պետք է կանգ առներ, որովհետև ամբողջ փողոցի երկայնու-
թյամբ անցնում էր մի անվերջանալի հուղարկավորություն։
Չիչիկովը դուրս նայելով բրիչկայից՝ Պետրուշկային հրամա-
յեց, որ սա հարցներ, թե ո՛ւմ են թաղում, և իմացավ, որ դա-
տախազին են թաղում։ Անախորժ զգացումներով պաշարված՝
նա իսկույն անկյունում թաքնվեց, ծածկեց իրեն կաշիով և
քաշեց վարագույրները։ Այն ժամանակ, երբ կառքը կանգ էր
առել, Սելիֆանն ու Պետրուշկան երկյուղած՝ գլխարկները հա-
նեցին, մտիկ տվին դես ու դեն, ո՛վ, ինչպե՛ս, ի՛նչ կառքով
էր գնում, հաշվելով թիվը՝ ո՛րքան էին բոլորը, թե՛ հետևակ,
թե՛ կառքով գնացող, իսկ պարոնը հրամայելով նրանց ծա-
նոթություն ցույց չտալ և չբարևել ոչ ոքի՝ ծանոթ լաքեյներից,
ինքը ևս սկսեց վախով նայել կաշվե վարագույրների մեջ եղած
փոքրիկ ապակու միջով. դագաղի ետևից գլխարկները հանած
գնում էին բոլոր պաշտոնյաները։ Նա սկսեց մի փոքր եր-
կյուղ կրել, որ նրա կառքը կարող են ճանաչել, բայց նրանք
դրանով չէ՛, որ զբաղված էին։ Նրանք անգամ չէին զբաղվում
զանազան կենսական խոսակցություններով, որոնցով սովո-
րաբար զբաղվում են հանգուցյալին հուղարկող մարդիկ։
Նրանց բոլորի մտքերը կենտրոնացած էին այդ պահին իրենց
վրա. նրանք մտածում էին, թե ա՛յ, տեսնես ի՛նչպիսին կլինի
գեներալ-նահանգապետը, ի՛նչպես կանցնի գործի և ի՛նչպես
կընդունի նրանց։ Պաշտոնյաների ետևից, որոնք գնում էին
ոտքով, հետևում էին կառքեր, որոնցից դուրս էին նայում
կանայք՝ սգի գլխանոցներով։ Շրթունքների և ձեռների շար-
ժումներից երևում էր, որ նրանք զբաղված էին աշխույժ խո-
սակցությամբ. գուցե նրանք ևս խոսում էին նոր գեներալ-
նահանգապետի գալուստի մասին և ենթադրություններ էին
անում պարերեկույթների վերաբերյալ, թե ի՛նչպիսիք նա
կտա, և հոգ էին տանում իրենց հավիտենական դրասանգների
և վրակարերի մասին։ Վերջապես կառքերին հետևում էին մի
քանի դատարկ դրոժկաներ, որոնք իծաշարուկ ձգվել էին եր-
կար, վերջապես արդեն գնացող ոչինչ չէր մնում, և մեր հերո-
սը կարող էր շարժվել։ Բանալով կաշվե վարագույրը՝ նա հա-
ռաչեց՝ ի խորոց սրտի ասելով. «Ա՛յ դատախազը, ապրեց,

ապրեց ու վերջն էլ մեռավ. և ահա կգրեն լրագրերում, որ մահացավ ի վիշտ ստորադրյալների և մարդկության, հարգելի քաղաքացի, հազվագյուտ հայր, օրինակելի ամուսին, և շատ կգրեն ամեն տեսակ բաներ. կավելացնեն էլ, որ հուղարկավորվեց այրինների և որբերի լացով. բայց չէ՞ որ գործը, եթե լավ քննես, ի վերջո դուրս կգա, որ ունեցածը միայն մի բան էր՝ խիտ հոնքեր»։ Այստեղ նա Սելիֆանին հրամայեց արագ քշել և միաժամանակ մտածում էր ինքնիրեն. բայց այդ լավ է, որ թաղման թափորի հանդիպեցինք, ասում են՝ բախտավորություն է, եթե հանգուցյալի հանդիպես։

Այնինչ բրիչկան արդեն գնում էր ավելի դատարկ փողոցներով. շուտով սկսեցին ձգվել միայն երկար, փայտե ցանկապատեր, որ ավետում էին քաղաքի վերջը։ Ահա և սալահատակը վերջացավ, և ուղեփակոցը, և քաղաքը ետևումն է, և ոչինչ չկա, և կրկին ճանապարհին ես։ Եվ կրկին սյունաշար մեծ ճանապարհի երկու կողմում սկսեցին նորից երևալ վերստները, կայարանի վերակացուները, ջրհորները, գումակները, գորշ գյուղերն իրենց ինքնաեռներով, կնանիքով և ժիր, մորթաքավոր տանտիրոջով, որ վազում է իջևանից՝ հաճարը ձեռին, ճամփորդը մաշված տրեխներով, որ քաշ է գալիս 800 վերստ, փոքրիկ քաղաքներ, շտապ, անտաշ շինված փայտե կրպակներով, ալյուրի տակառներով, տրեխներով, կալաչներով և հազար ու մի մանրուքով, չալ ուղեփակոցներ, նորոգվող կամուրջներ, դաշտեր անծայր՝ և՛ այս կողմը, և՛ այն կողմը, կալվածատերերի կառքեր, ձի նստած զինվոր, որ տանում է կանաչ արկղ կապարե սիսեռով՝ վրան գրած՝ այսինչ հրանոթային մարտկոցի. կանաչ, դեղին և թարմ-փորած սև շերտեր, որ աչքի են զարնվում տափաստաններում, հեռվում ձրգվող մի երգ, սոճու կատարներ՝ մշուշի մեջ, հեռվում կորչող զանգի ձայն, ագռավներ՝ ճանճերի պես և անվերջ հորիզոն... Ռո՜սիա, Ռո՜սիա. տեսնում եմ քեզ իմ հրաշալի, գեղեցիկ հեռաստանից, քե՛զ եմ տեսնում. աղքատիկ, թափթփված և անպատսպար է քո ներսում. չեն ուրախացնի, չեն վախեցնի մարդու հայացքը բնության հանդուգն հրաշալիքները՝ արվեստի հանդուգն հրաշալիքներով պսակված, բազմապատուհան, ժայռերի մեջ խրված բարձր պալատներով քաղաքները, նկարեն ծառերը և բաղեղները, տներին կպած, ջրվեժների աղմու-

կով և մշտական փոշիով. գլուխը ետ չի շրջվում՝ նայելու համար նրա վրա և բարձունքում անվերջ կուտակված քարե բեկորներին. չեն փայլի իրար վրա ձգված մութ կամարների՝ խաղողի ճյուղերով, բաղեղներով և անվերջ միլիոնավոր վայրի վարդերով փաթաթված, չեն փայլի նրանց միջով երևացող հեռվում հավերժական գծերը շողուն լեռների, որ ձգվում են արծաթափայլ, ջինջ երկնքում։ Բայց—ամայի և հարթ է ամեն ինչ քեզանում. ինչպես կետեր, ինչպես նշաններ՝ աննկատելի տնկվում են հարթավայրերում քո ցածլիկ քաղաքները. ոչ մի բան չի շոյում և չի դյուրում հայացքը։ Բայց ի՞նչ անհմանալի, գաղտնի ուժ է քաշում դեպի քեզ։ Ինչո՞ւ է լսվում և մարդու ականջում գրնգում քո թախծալի, անլռելի բոլոր լայնքով և երկայնքով, ծովից ծով ձգվող երգը։ Ի՞նչ կա նրա մեջ, այդ երգի մեջ։ Ի՞նչն է կանչում և հեկեկում և ճմլում մարդու սիրտը։ Ինչպիսի հնչյուններ են հիվանդագին համբուրում և սլանում հոգուս մեջ ու կուտակվում սրտիս մոտ։ Ո՜ւսիա, դու ի՞նչ ես ուզում ինձանից, ի՞նչ անհմանալի կապ է թաքնված մեր միջև։ Ինչո՞ւ ես այդպես նայում ինձ, և ինչո՞ւ ամեն բան, որ կա քո ՚ի՛ջ, ինձ վրա է դարձրել սպասումով լի աչքերը... Ես դեռ լցված տարակուսանքով, անշարժ կանգնած եմ ես, իսկ արդեն գլխիս վերև կախված է քո փոթորկալեր-ամպը՝ մռայլուտ անձրևով ծանրացած, և համրացավ միտքս քո լայնարձակության առջև։ Ի՞նչ է գուշակում այդ անպարփակ լայնարձակությունը։ Արդյո՞ք այստեղ, քո մեջ չէ, որ ծնունդ կառնի անսահման միտքը, քանզի ինքդ անվերջ ես։ Արդյո՞ք այստեղ չէ, որ պետք է ինի հսկան, երբ տեղ կա—թափով բացվելու ու քայլելու։ Եվ ահռելիորեն իր մեջն է առնում ինձ հզոր տարածությունը, վիթխարի ուժով արձագանքելով իմ հոգու մեջ. անբնական հզորությամբ լուսավորվեցին իմ աչքերը. օհ, ինչպիսի շողշողուն, հրաշալի, աշխարհին անծանոթ հեռաստան։

Ո՜ւսիա...

— Պահիր, պահիր, հիմար,— բարձր գոռաց Ջիչիկովը Սելիֆանին։

— Թրով մի էնպես կհասցնեմ որ,— գոռաց դիմացից արշավող ռազմասուրհանդակը արշինանոց բեղերով։— Ջե՞ս տեսնում, ա՛յ գրողի բաժին դառնաս դու, պետական կառքը։—

Նվ ուրվագիանի պես, դղրդացրի ու փոշին օդը հանելով հուա-
ձին չքացավ։

Ինչ տարօրինակ, և գրավիչ, և ալացող, և դյութիչ բան կա այս խոսքի մեջ՝ ճանապարհ. և որքան հրաշալի է նա ինքը, այդ ճանապարհը. պարզ օր, աշնանային տերևներ, սառն օդ... պինդ փաթաթվիր ճամփորդական շինելի մեջ, գդակդ ականջներիդ քաշիր, կիպ, հարմար սեղմվիր անկյունում։ Վերջին անգամ մարմինդ մտած դողը բռնել է անդամներդ, և արդեն նրան փոխարինել է հաճելի տաքուբյունը։ Ձիերը սլանում են... ի՜նչ գայթակղիչ-գողունի գալիս է նիրհը և կոպերդ ծանրանում են, և արդեն քնի մեջ, լսվում են «Այդ ձյուները չեն սպիտակ» երգը, և ձիերի փնչոցը, անիվների աղմուկը, և արդեն խռմփացնում ես, անկյունը սեղմելով քո հարևանին։ Ջարթնեցիր, հինգ կայարան ետ են վազել, լուսին է. անծանոթ քաղաք, եկեղեցիներ՝ հնօրյա փայտե գմբեթներով և սևացած սրածայրերով, մթագույն, գերանաշեն և սպիտակ քարե տներ։ Լույսի փայլ այստեղ, այնտեղ. կարծես սպիտակ քաթանե թաշկինակներ են փռել պատերին, սալահատակներին, փողոցներում, շեղակի հատում են նրանց ածուխի նման սև ստվերները. փայլող մետաղի պես շողում են թեք լուսավորված փայտե կտուրները, և ոչ մի տեղ մարդ չկա, ամեն ինչ քնած է։ Մեն-մենակ, հազիվ որևէ տեղ պատուհանի մեջ դողդողում է մի փոքրիկ կրակ. արդյոք մի քաղքենի՞ է մգդգդում իր զույգ կոշիկը, արդյոք մի հացթո՞ւխ է խառնում իր վառարանը.— ի՞նչ գործ ունենք նրանց հետ։ Իսկ գիշե՞րը, երկնային ուժեր, ի՞նչ գիշեր է մանվում բարձունքում։ Իսկ օ՞դը, իսկ երկի՞նքը՝ հեռո՜ւ, բա՜րձր, այնտեղ անհասանելի խորության մեջ այնպե՜ս անգրկելի, հնչուն և պարզ տարածված... բայց շնչում է թարմ, ուղիղ աչքերիդ մեջ՝ գիշերվա սառն շընչառությունը և օրորում է քեզ, և ահա արդեն նիրհում ես, և թմրում ես, և խռմփացնում ես, և շուռ է գալիս բարկացած՝ հանրությունդ վրան զգալով՝ խեղճ, անկյանը սեղմված հարեվանդ։ Ջարթնում ես, և արդեն կրկին քո առջև դաշտեր են և տափաստաններ, ո՛չ մի տեղ, ո՛չ մի բան— ամենուրեք դադարկություն, ամեն ինչ բաց։ Վերստացույցը թվահամարով ծռլում է աչքիդ մեջ, սկսվում է առավոտը. սպիտակացած սառն երկնակամարի վրա ոսկի, գունատ մի շերտ է. ավելի՛

աուր, ավելի՛ խիստ է դառնում քամին. ավելի պի՛նդ փա-
թաթվիր տաք շինելի մեջ... Ի՜նչ աննման ցուրտ է, ի՜նչ հրա-
շալի, նորից քեզ գրկող քո՜ւն: Ահա և մի հարվածը— և կրկին
զարթնեցիր: Երկնքի բարձունքում արև է. կամա՛ց, կամա՛ց,
լսվում է մի ձայն, կառքը իջնում է զառիվայրից. ներքևում
ջրի լայն ամբարտակ է և լայն, չինչ լիճ, որ փայլում է ինչ-
պես պղնձե հատակ՝ արևի առաջ. գյուղ է, խրճիթներ են
ոփռված զառիվայրին. աստղի նման փայլում է մի կողմում
գյուղական եկեղեցու խաչը. մուժիկների ձայներ և անտանելի
ախորժակ՝ ստամոքսում... Աստվա՛ծ իմ, ի՜նչ լավն ես եր-
թեմն, հեռավո՛ր, հեռավո՛ր ճանապարհ: Քանի՜ անգամ կոր-
ծանվողս և խեղդվողս քեզանից եմ բռնել, և դու ինձ ամեն
անգամ մեծահոգաբար տարել և փրկել ես: Իսկ որքա՜ն հրա-
շալի մտահղացումներ, բանաստեղծական անուրջներ են ծըն-
վել քո մեջ, որքա՜ն աննման տպավորություններ են զգացվել...
Բայց մեր բարեկամ Ջիլիկովը ևս այդ պահին զգում էր ո՛չ
բոլորովին պրոզաիկ անուրջներ: Դե հիմա տեսնենք, թե ի՜նչ
էր զգում նա: Սկզբում նա ոչինչ չէր զգում և միայն ետ էր
նայում. կամենալով վստահ լինել, որ իրոք դուրս եկավ քա-
ղաքից. սակայն երբ տեսավ, որ քաղաքն արդեն վաղուց ծածկ-
վել է, ո՛չ դարբնոցներ, ո՛չ ջրաղացներ, ո՛չ այն բոլոր բա-
ները, որ գտնվում են քաղաքի շուրջը, չեն երևում, և անգամ
վաղուց գետնի տակն են ծածկվել եկեղեցիների սպիտակ կա-
տարները, նա զբաղվեց միայն ճանապարհով, միայն նայում
էր աջ և ձախ, և N քաղաքը կարծես չկար նրա հիշողության
մեջ, կարծես նա նրա միջով անցել է վաղուց, մանկության
ժամանակ: Վերջապես, ճանապարհն էլ դադարեց նրան զբա-
ղեցնել, և նա սկսեց կամացուկ աչքերը փակել և գլուխը կա-
խել բարձին: Հեղինակը խոստովանում է, որ անգամ ուրախ է
դրան, այդ կերպով գտնելով առիթ՝ խոսելու իր հերոսի մա-
սին. քանի որ մինչև այժմ, ինչպես ընթերցողը տեսնում էր,
նրան անդադար խանգարում էին մերթ նոզդրյովը, մերթ պար-
երեկույթները, մերթ տիկինները, մերթ քաղաքային բամբա-
սանքները, մերթ վերջապես հազար ու մի մանրուքներ, որոնք
այն ժամանակ են միայն թվում մանրուքներ, երբ անց են
կացված գրքի մեջ, իսկ քանի դեռ կատարվում են կյանքում,

հանարվում են շատ կարևոր գործեր։ Բայց հիմա կատարելապես մի կողմ թողնենք բոլորը և ուղղակի զբաղվենք գործով։

Շատ կասկածելի է, որ մեր կողմից ընտրված հերոսը դուր եկած լինի ընթերցողներին։ Տիկիններին նա դուր չի գա, դա կարելի է հաստատապես ասել, քանի որ տիկինները պահանջում են, որ հերոսը լինի վճռականապես կատարելություն, և եթե որևէ հոգեկան կամ մարմնական բիծ ունենա՝ արդեն դժբախտությո՛ւն է։ Որքան էլ խորը նայի հեղինակը նրա հոգու մեջ, թեկուզ նրա պատկերը հայելուց էլ մաքուր արտացոլի, նրան ոչ մի դին չեն տա։ Հենց Ջիչիկովի գիրուբյունն ու միջին տարիքը շատ կվնասեն նրան. գիրուբյունը ոչ մի դեպքում չեն ների հերոսին, և խիստ շատ տիկիններ երեսները դարձնելով՝ կասեն. «Ֆի՛, ինչ զզվելին է»։ Ավա՛ղ, այդ բոլորը հայտնի է հեղինակին, և այդ բոլորով հանդերձ նա չի կարող իբրև հերոս վերցնել առաքինի մարդուն։ Բայց... կարող է պատահել հենց սուն վիպակում կզգացվեն որոշ, դեռ մինչև այժմ չշոշափված լարեր, դեմդ կկանգնի անհաշիվ հարստությունը ռուսական ոգու, անց կկենա մի տղամարդ, օժտված աստվածային սխրագործություններով, կամ մի հրաշալի ռուս աղջիկ, որպիսին չես գտնի ո՛չ մի տեղ աշխարհիս երեսին, կնոջական հոգու ողջ հրաշալի գեղեցկությամբ, ամբողջովին՝ մեծահոգություն և անձնանվիրություն։ Եվ մեռած կերևան նրանց առջև ուրիշ ցեղերի բոլոր առաքինի մարդիկ, ինչպես մեռած է գիրքը կենդանի խոսքի դիմաց։ Վեր կելնեն ռուսական զգացմունքները... և կտեսնես, թե ի՛նչպես խորն է գցված ցլավո՛նական բնույթի մեջ այն, որ միայն սահել անցել է ուրիշ ժողովուրդների բնույթի երեսով... Բայց ի՞նչ նպատակով, ինչո՞ւ խոսել այն մասին, ինչ առաջիկայումն է։ Անվայել է հեղինակի համար, որ վաղուց արդեն հասուն մարդ է, զաստիարակված՝ դաժան ներքին կյանքով և միայնության թարմացուցիչ զգոնությամբ, մոռանալ իրեն պատանու նման։ Ամեն բան իր հերթն ունի, իր տեղը, իր ժամանակը։ Բայց, այնուամենայնիվ, իբրև հերոս չի վերցրած առաքինի մարդը։ Եվ կարելի է անգամ ասել, թե ինչու չի վերցրած։ Որովհետև ժամանակն է վերջապես հանգիստ թողնել խեղճ առաքինի մարդուն, որովհետև դատարկ տեղն է մարդկանց շրթունքներում պատվում առաքինի մարդ խոսքը, որովհետև առաքինի

մարդուն ձի են դարձրել, և չկա գրող, որ նրա վրա չհեծնի, չբզի քե՛ մտրակով և քե՛ ամեն բանով, ինչ որ ձեռքն է ընկնում, որովհետև առաքինի մարդու հոգին հանել են, ա՛յն տեղն են հասցրել, որ այժմ նրա վրա առաքինության ստվեր անգամ չկա, այլ մնացել են միայն կողերն ու կաշին՝ մարմնի տեղ. որովհետև կեղծավորաբար են դիմում առաքինի մարդուն, որովհետև չեն հարդում առաքինի մարդուն։ Ո՛չ, ժամանակն է վերջապես՝ լծել և ստոր մարդուն։ Նվ այսպես, լծե՛նք ստոր մարդուն։

Մութ և համեստ է մեր հերոսի ծագումը։ Մնողները ազնվական էին՝ բայց ժառանգակա՞ն թե անձնական, աստված գիտե։ Դեմքով նա նրանց չէր նմանվում. համենայն դեպս նրա ազգականուհին, որ նրա ծննդյանը ներկա էր, կարճահասակ մի կին, որոնց սովորաբար կիվկիվ են ասում, երեխային վերցնելով՝ ասաց. «Բոլորովին այնպիսին դուրս չեկավ, ինչպես կարծում էի։ Նա պետք է մոր կողմից տատիկին քաշեր, որ լավ լիներ, իսկ նա ծնվեց հասարակ, ինչպես առածն է ասում՝ ո՛չ մորն է քաշել, ո՛չ հորը, այլ՝ անցորդ մի կորիճի»։ Կյանքը սկզբում նրա վրա նայեց մի տեսակ թթու-անհյուրընկալ, ինչ-որ պղտոր, ձյունով ծածկված պատուհանի միջով, ո՛չ բարեկամ, ո՛չ ընկեր ունեցավ մանկության ժամանակ։ Փոքրիկ մի սենյակ, փոքրիկ պատուհաններով, որ չէին բացվում ո՛չ ձմեռը, ո՛չ ամառը, հայրը՝ հիվանդ մարդ, հագին երկար սերթուկ՝ գառան մորթու աստառով և ոտներին գործած մաշիկներ, որ հագնում էր մերկ ոտներով, անդադար տնքում էր՝ սենյակում մեն գալով և թքելով անկյունում դրած ավազամանի մեջ։ Նստարանի վրա միշտ նստած էր լինում տղան՝ գրիչը ձեռքին, մատները, անգամ շրթունքները, թանաքով ներկած, միշտ խրատական խոսքը առջև, այսինքն թե՝ մի՛ ստիր, լսիր մեծերին և կրիր առաքինությունը սըրտումդ. մաշիկների մշտական շփշփոց ու քստքստոց սենյակում, ծանոթ, բայց միշտ դաժան ձայնը. «էլի՞ հիմարությունդ բռնեց», ասված այն ժամանակ, երբ երեխան, ձանձրանալով միօրինակ աշխատանքից, տատի վրա մի որևէ չարկերտ կամ պոչ էր շինում. և մշտապես ծանոթ, միշտ անդուլ զգացում, երբ սույն խոսքերից հետո ականջի ծայրը, անասելի ցավացնելով՝ ոլորում էր ետևից մեկնած երկար մատնե-

րի եղունգները. ահա խղճուկ պատկերը նրա վաղ մանկության, որի մասին նա հազիվ մի աղոտ հիշողություն էր պահպանում։ Բայց կյանքում ամեն ինչ փոխվում է արագ և աշխույժ. և մի օր, գարնան առաջին արևի և ափերից դուրս եկած ջրերի ժամանակ, հայրը որդուն վերցնելով մեկնեց նրա հետ փոքրիկ կառքով, որ քաշում էր փոքրիկ ճարտուկ ձին՝ ձիավաճառների մոտ հայտնի կաչաղակ անունով. նրան վարում էր փոքրիկ կուզիկ կառապանը, նախահայրը միակ ճորտ ընտանիքի, որ պատկանում էր Ջիչիկովի հորը, ու կատարում էր տան մեջ համարյա բոլոր գործերը։ Կաչաղակին նրանք քշեցին օր ու կեսից ավելի. ճանապարհին գիշերեցին, անցան գետը, նախաճաշեցին սառը պիրոգով և տապակած ոչխարենիով, և միայն երրորդ օրը առավոտյան հասան քաղաք։ Երեխայի առաջ անսպասելի հոյակապությամբ փայլեցին քաղաքի փողոցները, որ նրան հարկադրեցին մի քանի րոպե բերանը բաց պահել։ Հետո կաչաղակը, կառքի հետ միասին, շրմփաց փոսի մեջ, որով սկսվում էր նեղ մթջափողոցը, որ ներքև էր սլանում և ողջ բռնված էր ցեխով. երկար ջանք էր թափում նա այնտեղ և տրորում ոտքերով, դրդված կուզիկի և պարոնի կողմից, և վերջը քաշ տվեց նրանց մի ոչ մեծ բակ, որ տարածված էր զառիվայրի գլխին, երկու ծաղկող խնձորենիով մի հին տան առաջ, հետևը պարտեզ ցածրիկ, փոքրիկ, բաղկացած միայն արոսենուց և քանթրվենուց, և նրա խորքում քաքնված փայտե տնակով, տախտակով ծածկած, նեղ, մութ գույնի պատուհանով։ Այստեղ ապրում էր նրանց բարեկամուհին, ճլորած մի պառավ, որ դեռ ամեն առավոտ շուկա էր գնում և ապա գուլպաները չորացնում ինքնաեռի վրա. պառավը տփտփացրեց երեխայի այտը և հաճույքով նայեց նրա գիրուքյան վրա։ Այստեղ պետք է մնար նա և ամեն օր հաճախեր քաղաքային դպրոցի դասարանները։ Հայրը, գիշերելով այդտեղ, հետևյալ օրը լեփ ճանապարհ ընկավ։ Հրաժեշտի րոպեին ծնողական աչքերից արցունքներ չթափվեցին. տրվեց մի հիսուն կոպեկի պղնձադրամ՝ ծախսերի և քաղցրեղենի համար, և որ ավելի կարևոր է, խելացի խրատ. «Դե, տես, Պավլուշկա, սովորիր, հիմարություններ, ստահակություններ մի՛ անի, իսկ ամենից շատ՝ ուսուցիչների և վարիչների ա՛չքը մտիր։ Վարիչի աչքը որ մտնես, այլևս գիտության մեջ որ

չառաջանաս էլ և տաղանդից աստված քեզ զրկած էլ լինի, առաջ կգնաս և ուրիշներից առաջ կընկնես։ Ընկերների հետ քարշ մի՛ արի, նրանք քեզ լավ բան չեն սովորեցնի. իսկ եթե արդեն բանը դրան է հասել՝ ապա ընկերություն արա նրանց հետ, որոնք ավելի հարուստ են, որ հարկ եղած դեպքում կարողանան քեզ օգտակար լինել։ Մի՛ հյուրասիրիր և մի՛ պատվիր ոչ ոքի, այլ քեզ այնպես պահիր, որ քեզ հյուրասիրեն, իսկ ավելի շատ խնայիր և հավաքիր կոպեկը, դա աշխարհիս երեսին ամենահուսալի բանն է։ Ընկերը կամ ծանոթ-բարեկամը քեզ կխաբեն և փորձանքի մեջ քեզ առաջինը կդավաճանեն, իսկ կոպեկը չի դավաճանի՝ ի՛նչ փորձանքի մեջ էլ որ լինես։ Կոպեկով ամեն բան կանես և ամեն բան կկոտրես աշխարհիս երեսին»։ Տալով այսպիսի խրատ, հայրը բաժանվից որդուց և կրկին ճանապարհ ընկավ տուն իր կաշաղակով, և այն օրից արդեն երբեք Չիչիկովը նրան չտեսավ, բայց խոսքն ու խրատները խորը մտան նրա հոգու մեջ։

Պավլուշան հենց հետևյալ օրից սկսեց դպրոց գնալ։ Առանձին ընդունակություն դեպի որևէ գիտություն նրա մեջ չհայտնվեց, աչքի ընկավ նա ավելի չանասիրությամբ և մաքրասիրությամբ, բայց փոխարենը նրա մեջ հայտնվեց մեծ խելք ուրիշ կողմից, գործնականությա՛ն կողմից։ Նա հանկարծ գլխի ընկավ և հասկացավ գործը և իր ընկերների վերաբերմամբ ճիշտ այնպիսի վարվեցողություն ունեցավ, որ նրանք նրան հյուրասիրում էին, իսկ ինքը նրանց ոչ թե երբեք, այլ մինչև անգամ երբեմն՝ թաքցնելով հյուրասիրածը՝ հետո ծախում էր հենց իրենց։ Դեռ երեխա ժամանակ նա արդեն կարողանում էր իրեն մերժել ամեն բանում։ Հոր տված հիսուն կոպեկից նա ոչ մի կոպեկ չծախսեց, ընդհակառակը, հենց նույն տարում արդեն ավելացրեց գումարը, ցույց տալով համարյա արտասովոր ճարպկություն. մոմից խածկտիկ չինեց, ներկեց և ծախեց շատ ձեռնտու գնով։ Հետո մի որոշ ժամանակ նա իրեն տվեց սպեկուլյացիայի, ահա թե ի՛նչպիսի. շուկայում գնելով ուտելեղեն, դասարանում նստում էր նրանց կողքին՝ ովքեր ավելի հարուստ էին, և հենց որ նկատում էր, որ ընկերոջ սիրտը խառնում է, որ նշան էր վրա հասնող քաղցի, նա դուրս էր հանում սեղանի տակից իբրև թե պատահմամբ՝ շաքարահացի կամ բուլկիի ծայրը և գրգռելով նրան փողը վերց-

նում էր՝ ախորժակին հաճախ նվիրելով։ Երկու ամիս նա ոչինչ առանց հանգստանալու զբաղվեց մի մկնով, որին դրել էր փոքրիկ փայտե վանդակի մեջ, և հաջողեցրեց, որ մուկը կանգնում էր ետևի թաթիկների վրա, պառկում էր, վեր էր կենում հրամանով, հետո ծախեց նույնպես շատ ձեռնտու գնով։ Երբ հավաքվեց մի հինգ ռուբլու չափ, նա տոպրակը կարեց և սկսեց հավաքել ուրիշ տոպրակում։ Վարչության մոտ նա իրեն ավելի խելացի պահեց։ Նստարանի վրա նստել ոչ ոք չէր կարող ավելի զգաստ։ Հարկ է նկատել, որ ուսուցիչը մեծ սիրող էր լուության ու լավ վարքի և տանել չէր կարողանում խելացի և սրամիտ երեխաներին. նրան թվում էր, թե նրանք անպատճառ պետք է իր վրա ծիծաղեն։ Բավական էր լինում, որ մեկը, որ սրամտության պատճառով ընկնում էր նրա նկատողության տակ, բավական էր, որ նա տեղում միայն շարժվի կամ որևէ կերպ ո՛չ դիտավորյալ հոնքը թարթի, որ հանկարծ նրա բարկությանը հանդիպեր։ Նա նրան վռնդում էր և անգթորեն պատժում։— «Ես, բարեկամ, դուրս կհանեմ քո միջից ամբարտավանությունը և անհնազանդությունը»— ասում էր նա,— «ես քո հոգին լավ եմ ճանաչում, այնքան, որ ինքդ էլ քեզ չես ճանաչում։ Ա՛յ, հիմա կլողքես, հիմա կսովածանա՛ս»։ Եվ խեղճ երեխան, ինքն էլ չիմանալով ինչո՛ւ համար, տրորում էր ծնկները և ամբողջ օրը սոված մնում։ «Ընդունակություններ և ձիրքե՞ր. բոլորը դատարկ բաներ են»— ասում էր նա. «Ես նայում եմ միայն վարքին։ Ես կդնեմ լրիվ քվանշաններ բոլոր գիտությունների համար նրան, ով թեկուզ մի այբ էլ չգիտե, բայց իրեն պահում է գովելի վարքով. իսկ ում մեջ տեսնում եմ վատ ոգի, մեկ էլ ծաղրասիրություն, նրան դնում եմ զրո, թեկուզ նա Սոլոնին[1] չուրը տանի, ծարավ ետ բերի»։ Այսպես էր ասում ուսուցիչը, որը մահու չափ էր ատրում Կոիլովին, նրա համար, որ նա ասել էր.— իմ կարծիքով արդեն լավ է՝ խմի՛ր, բայց գործն էլ իմացի՛ր,— և միշտ պատմում էր հրճվանքով քե՛ դեմքի վրա և քե՛ աչքերում, թե ի՛նչպես նույն ուսումնարանում, որտեղ նա առաջ դասավանդում էր, այնպիսի լուություն էր տիրում, որ լսելի էր լինում ճանճի թռչելը, որ աշակերտներից ո՛չ մեկը ամբողջ

[1] Սոլոն (638—558 մ.թ.ա.) — հռչակավոր օրենսդիր և բանաստեղծ Հին Հունաստանում։

տարվա ընթացքում չէր հազում և քիջը չէր սրբում դասարանում, և որ մինչև զանգը չէր կարելի իմանալ՝ արդյոք մարդ կա՞ այնտեղ թե ոչ։ Ջիլիկովը հանկարծ հասկացավ վարիչի հոգին և թե ինչո՛ւմն է կայանում վարքը։ Չէր շարժում նա ո՛չ աչքը, ո՛չ հոնքը ողջ դասի ընթացքում, որքան էլ հետից նրան կսմթում էին. հենց որ զանգը տալիս էին, նա արագ վազում էր և ամենից շուտ ինքն էր ուսուցչին տալիս նրա տրեուխը[1]. ուսուցիչը տրեուխ էր կրում. տրեուխը մատուցելով՝ նա առաջինն էր դուրս գալիս դասարանից և աշխատում էր նրան հանդիպել ճանապարհին մի երեք անգամ, անդադար գլխարկը հանելով։ Գործը կատարյալ հաջողություն ունեցավ։ Դպրոցում եղած ամբողջ ժամանակ նա աչքի էր ընկած և ավարտման ժամանակ ստացավ լրիվ վկայություն բոլոր առարկաներից, ատեստատ և գիրք ոսկյա տառերով՝ օրինակելի ջանասիրության և բարեվարքության համար։ Դպրոցից դուրս գալով, նա արդեն մի պատանի էր բավական գրավիչ արտաքինով, ներքնակզակով, որ ածելի էր պահանջում։ Այդ ժամանակ նրա հայրը մեռավ։ Ժառանգության մեջ մնացին չորս անդառնալիորեն մաշված ֆուֆայկաներ, երկու հին սերթուկ՝ գառան մորթու աստառներով և աննշան քանակությամբ փող։ Հայրը, ինչպես երևում է, տեղյակ էր մյայն խորհուրդ տալում, որ կոպեկ հավաքեն, իսկ ինքը քիչ էր հավաքել։ Ջիլիկովը տեղն ու տեղը ծախեց խարխուլ տունը չնչին հողի կտորն էլ հետը հազար ռուբլով, իսկ ճորտերին տեղափոխեց քաղաք, պատրաստվելով հիմնավորվել այնտեղ և զբաղվել ծառայությամբ։ Այդ ժամանակ դպրոցից արձակվել էր՝ հիմարությա՞ն թե այլ մեղքի համար՝ խեղճ ուսուցիչը, որը սիրահար էր լռության և գովելի վարքի։ Ուսուցիչը վշտից սկսեց խմել, վերջապես խմելու համար էլ ոչինչ չէր մնացել. հիվանդ, առանց մի կտոր հացի և օգնության՝ կորչում է նա ուր որ, ցուրտ, մոռացված շնչբնի չափ սենյակում։ Նրա նախկին աշակերտները՝ խելացիները և ծաղրաբանողները, որոնց մեջ նրան թվում էր, թե անդադար անհնազանդության կա և ամբարտավանության, իմանալով նրա խղճալի վիճա-

---

1 *Տրեուխ — տաք գլխարկ երեք ծալ կտորով՝ ականջները և ծոծրակը ծածկելու համար։*

կը, տեղն ու տեղը նրա համար փող հավաքեցին, ծախելով մինչև անգամ իրենց համար շատ պետքական բաներ. միայն Պավլուշա Ջիլիկովը պատճառ բերեց, թե չունի, և տվեց մի արծաթ հինգ կոպեկանոց, որ ընկերները տեղն ու տեղը նետեցին նրան՝ ասելով. «Գնա՛, կծծիի մեկը»։ Ձեռքերով երեսը ծածկեց խեղճ ուսուցիչը, երբ լսեց իր նախկին աշակերտների այդպիսի վերաբերմունքի մասին. արցունքները ողողեցին նրա հանգչող աչքերը, ինչպես մի խեղճ երեխայի։ «Մահվան մահճում աստված լացացրեց ինձ»,— մրմնջաց նա թույլ ձայնով և ծանր հառաչեց՝ լսելով Ջիլիկովի մասին, տեղն ու տեղը ավելացնելով. «Է՛խ, Պավլուշա, ահա թե ինչպե՛ս է փոխվում մարդ. չէ՞ որ բարեբարո էր այնպես, մոլեգին ոչինչ չուներ, մեռաքս էր ուղղակի։— Խաբե՛ց, լա՛վ խաբեց...»։

Սակայն չի կարելի ասել, որ մեր հերոսի բնավորությունը այդքան դաժան էր և խստասիրտ, և նրա զգացմունքները այն աստիճան էին բթացած, որ նա չդգար ո՛չ խղճահարություն, ո՛չ էլ կարեկցություն. նա զգում էր թե՛ այս և թե՛ այն, նա մինչև անգամ կկամենար օգնել, բայց միայն այն դեպքում, որ դա նշանակալից գումար չկազմեր, որ դա չդիպչեր արդեն այն փողերին, որոնց որոշված էր ձեռք չտալ, մի խոսքով, հայրական խրատը՝ խնայիր և պահպանիր կոպեկը, իր օգուտն ունեցել էր։ Բայց նրա մեջ չկար նվիրվածություն հատկապես դեպի փողը՝ փողի համար. նրան չէին տիրապետում կծծիությունը և ժլատությունը։ Ո՛չ, նրանք չէին մղում նրան, նրա առջև կյանքը պատկերանում էր իր բոլոր բավականություններով, բոլոր բարիքներով. կառքեր, լավ կարգավորված տուն, համեղ ճաշեր, ահա թե ի՛նչն էր անդադար պտտվում նրա գլխում։ Որպեսզի վերջապես հետո, ժամանակի ընթացքում, ճաշակի այդ ամենը անպատճառ, ահա թե ինչո՛ւ համար էր խնայում կոպեկը, ժլատորեն մերժելով միաժամանակ թե՛ իրեն և թե՛ ուրիշին։ Երբ նրա մոտով սլանում էր մի հարուստ մարդ՝ գեղեցիկ կառքով, վարգաձիերով, հարուստ սարքով, նա մեխվածի նման կանգ էր առնում տեղում և հետո, սթափվելով, ինչպես երկար քնից, ասում էր.— ախր սա գրասենյակային հաշվետո՞ր էր, շուրջանակի մազե՞ր էր պահում։ Եվ ամեն ինչ, որից հարստության և գոհունակության ձայն էր գալիս, նրա վրա գործում էր մի տպավորություն, որ

անհասանելի էր նրա համար։ Դուրս գալով դպրոցից, նա չէր կամենում անգամ հանգստանալ, այնքան ուժեղ էր նրա մեջ ցանկությունը՝ շուտով անցնել գործի և ծառայության։ Սակայն, չնայած գովասանական ատեստատների, մեծ դժվարությամբ ընդունվեց պետական ատյանում։ Նաև հեռավոր խուլ վայրերո՛ւմ հարկավոր է միջնորդություն։ Նրան բաժին ընկավ չնչին մի պաշտոն, աշխատավարձը՝ երեսուն կամ քառասուն ռուբլի տարեկան։ Բայց նա որոշեց ժրաջան զբաղվել ծառայությամբ, ամեն խոչընդոտ հաղթել և վերացնել։ Նվիրք, նա ցույց տվեց չլսված անձնուրացություն, համբերանք և կարիքների սահմանափակում։ Վաղ առավոտից մինչև ուշ երեկո, չհոգնելով ո՛չ հոգեպես և ո՛չ մարմնապես, զգում էր նա, թաղվելով գրասենեկային թղթերի մեջ, չէր գեռում տուն, քնում էր գրասենեկային սեղանների վրա, ճաշում էր երբեմն պահակների հետ և այս բոլորով հանդերձ կարողանում էր պահպանել մաքրասիրություն, կարգին հագնվել, դեմքին տալ համեմի արտահայտություն և մինչև անգամ շարժումներին՝ ինչ-որ ազնվություն։ Պետք է ասել, որ ատյանի պաշտոնյաները հատկապես այքի էին ընկնում անշան տեսքով և անվայելչատեսությամբ։ Նրանցից ոմանց դեմքերը նմանվում էին իսկը վատ թխած հացի. այտը ուռած մի կողմ, կզակը ծռվում էր մյուս կողմ, վերին շրթունքը փուչիկի պես վերև բռած, դեռ այն էլ ճաքած. մի խոսքով, բոլորովին տգեղ։ Նրանք բոլորը խոսում էին մի տեսակ դաժանորեն, այնպիսի ձայնով, որպես թե պատրաստվելիս լինեն մեկին ծեծել. հաճախակի զոհեր էին մատուցում բաքոսին, դրանով ցույց տալով, որ սլավոնական բնույթի մեջ դեռ շատ մնացորդներ կան հեթանոսությունից. երբեմն էլ պաշտոնատեղի էին գալիս, ինչպես ասում են, կոնծած, որից և պաշտոնատեղում լավ չէր լինում, և օդը բոլորովին չէր լինում բուրավետ։ Այդպիսի պաշտոնյաների մեջ չէր կարող չնկատվել և աչքի չընկնել Ջիչիկովը, ամեն բանում ներկայացնելով կատարելապես հակապատկեր թե՛ դեմքի գրավչությամբ, թե՛ ձայնի սիրալիրությամբ և թե՛ բունդ խմիչքների կատարյալ անգործածությամբ։ Բայց չնայած այս բոլորին, նրա ճանապարհը դժվար էր. նա դարձավ արդեն շատ ծերացած մի սեղանավորի ստորադրյալ, որը տիպար էր ինչ-որ մի քարե ան-

զգացության և անսասանելիության. միշտ միևնույնը, անա-
ռիկ, երբեք կյանքում դեմքի վրա ժպիտ ցույց չէր տալիս, ոչ
մի անգամ ոչ ոքի չէր ողջունում, թեկուզ առողջություն
հարցնելով։ Ոչ ոք չէր տեսել, որ նա գոնե մի անգամ չլինի
այն, ինչ որ միշտ էր, գոնե փողոցում, գոնե իր մոտ՝ տանը.
գոնե մի անգամ որևէ բանի մասնակցություն ցույց տար,
գոնե մի լավ հարբեր և հարբած ժամանակ ծիծաղեր, գոնե
հանձնվեր վայրենի ուրախության, որին հանձնվում է ավա-
զակը հարբած րոպեին.— բայց ստվեր անգամ չկար նրա մեջ
նման բանի։ Նրա մեջ ուղղակի ոչինչ չկար, ո՛չ չարամիտ, ո՛չ
բարի, բայց ինչ-որ սարսափելի բան կար այս ամենի բացա-
կայությամբ։ Չոր-մարմարե նրա դեմքը, առանց որևէ սուր
անկանոնության, չէր ակնարկում ոչ մի նմանության մասին.
նրա դեմքի գծերը իրար մեջ դաժան համաչափություն ունեին։
Միայն նրանց ծակծկող խիտ ծաղկասպիները և փոսերը գյում
էին նրան այն մարդկանց շարքը, որոնց վրա, ինչպես ժո-
ղովուրդն է ասում, սատանան գիշերը գալիս է սիսեռ աղալու։
Թվում էր, թե գոյություն չուներ մարդկային մի ուժ այդպիսի
մարդու վստահությունը շահելու և գրավելու նրա բարեհա-
ճությունը, բայց Չիչիկովը փորձեց։ Սկզբում նա ձեռնարկեց
սիրաշահել ամեն տեսակ աննկատելի մանրուքներում. ուշա-
դիր հետեւում էր նրա գործածած գրիչների[1] սրելուն, և պատ-
րաստելով մի քանիսը նրա օրինակով, ամեն անգամ նրա
ձեռքի տակ էր դնում դրանք. փչում և սրբում էր սեղանի վրա-
յի ավազը[2] և ծխախոտը. նոր ջնջոց պատրաստեց նրա թա-
նաքամանի համար, ինչ-որ մի տեղ գտավ նրա գդակը, ամենա-
վատ գդակը, որ երբևէ գոյություն է ունեցել աշխարհիս երե-
սին, և ամեն անգամ նրա մոտ էր դնում հիմնարկի աշխա-
տանքը վերջացնելուց մի րոպե առաջ. սրբում էր նրա մեջքը,
եթե նա կեղտոտվել էր պատի գաջով— բայց այդ բոլորը
կատարելապես առանց ուշադրության էր մնում, այնպես, որ-
պես թե այդ ամենը բոլորովին չէր էլ արված։ Վերջապես նա
հոտվտաց նրա տնային, ընտանեկան կյանքի մեջ, իմացավ,
որ նա մի հասուն աղջիկ ունի, այնպիսի գեմքով, որ նույն-

---

[1] Հնում սագի փետուրների ծայրը սրում էին և գործածում իբրև գրիչ։

[2] Թանաքով գրածը չորացնում էին՝ վրան ավազ ցանելով։

պես նման էր այն բանին՝ կարծես նրա վրա ևս գիշերը տեղի էր ունենում սիսեռի աղացում։ Այդ կողմից էլ նա մտածեց սկսել հարձակումը։ Իմացավ, թե կիրակի օրերը ո՛ր եկեղեցին է գնում նա, կանգնում էր ամեն անգամ նրա դիմաց՝ մաքուր հագնված, կրծկալը խիստ օսլայած, և գործը հաջողություն ունեցավ. շարժվեց դաժան մեծավորը և հրավիրե՛ց նրան թեյի։ Եվ պաշտոնատանը դեռ չկարողացան բանը գլուխի ընկնել, գործը այնպես սարքվեց, որ Չիչիկովը նրա տունը տեղափոխվեց, դարձավ պետրական և անհրաժեշտ մարդ։ գնում էր և՛ ալյուր, և՛ շաքար, աղչկա հետ վարվում էր ինչպես հարսնացուի հետ, մեծավորին անվանում էր հայրիկ և համբուրում էր նրա ձեռքը. բոլորը ատյանում որոշեցին, որ փետրվարի վերջին, մեծ պասից առաջ, կլինի հարսանիքը։ Դաժան մեծավորը մինչև անգամ նրա համար միջնորդեց պեՙտին, և մի քանի ժամանակից հետո Չիչիկովը ինքը նստած էր սեղանավարի պաշտոնով մի բացված ազատ տեղում։ Թըվում էր, որ հենց դրանումն էր կայանում մեծավորի հետ ունեցած կապերի գլխավոր նպատակը, որովհետև տեղն ու տեղը նա իր սնդուկը գաղտնաբար ուղարկեց տուն և հետևյալ օրը հայտնվեց արդեն ուրիշ բնակարանում։ Մեծավորին դադարեց հայրիկ անվաննելուց և այլևս չէր համբուրում նրա ձեռքը, իսկ հարսանիքի մասին այնպես էլ գործը քնեց, իբրև թե բոլորովին ոչինչ չէր պատահել։ Սակայն հանդիպելով նրա հետ, նա ամեն անգամ քաշշորեն սեղմում էր նրա ձեռքը և հրավիրում էր նրան իր մոտ թեյի, այնպես որ ծեր մեծավորը, չնայած մշտական անշարժության և խստասիրտ անտարբերության, ամեն անգամ թափ էր տալիս գլուխը և ինքնիրեն քթի տակ շշնջում.— Խաբե՛ց, խաբե՛ց սատանի ձագը։

Դա ամենադժվար շեմքն էր, որից անցավ նա։ Այդ ժամանակից գործը թեթևացավ ու հաջող գնաց։ Նա դարձավ նկատելի մարդ։ Նրա մեջ կար այն ամենը, ինչ պետք էր այս աշխարհի համար. և՛ հաճելիության շարժումների և վարմունքների մեջ, և՛ ժրության, գործերի մեջ։ Այդպիսի միջոցներով փոքր ժամանակից հետո նա ձեռք բերեց այն, որ ասում են հայրով տեղ, և օգտվում էր նրանից հրանալի կերպով։ Պետք է իմանալ, որ հենց այդ ժամանակ սկսեցին խստագին հետամտել ամեն տեսակ կաշառքներին. հետամտություն-

ներից նա չվախեցավ և հենց իսկույն այն շուռ տվեց իր օգտին, այդպիսով ցույց տալով ուղղակի ռուսական հնարամտություն, որ հայտնվում է միայն սխմոցների ժամանակ։ Գործը ահա թե ի՛նչպես կազմակերպվեց. հենց որ գալիս էր խրնդրատուն և ձեռքը գրպանն էր տանում, որ այնտեղից հանի հայտնի հանձնարարական նամակները՝ իշխան Խովանսկու[1] ստորագրությամբ, ինչպես արտահայտվում են մեզանում՝ Ռուսիայում. «Ո՛չ, ո՛չ»,— ասում էր նա ժպտալով և բռնելով նրա ձեռքերը. «Դուք կարծում եք որ, ես... ո՛չ, ո՛չ։ Սա մեր պարտականությունն է, մեր պաշտոնն է, մենք պարտավոր ենք առանց որևէ վարձատրության կատարել։ Այդ կողմից արդեն հանգիստ եղեք. հենց վաղը ամեն ինչ արված կլինի։ Թույլ տվեք իմանալ ձեր բնակարանը, հարկավոր էլ չէ, որ դուք ինքներդ հոգաք, ամեն ինչ կբերվի ձեզ ձեր տուն»։ Դյութված խնդրատուն տուն էր վերադառնում համարյա հիացած, մտածելով. «Ահա վերջապես մի մարդ, որպիսիները երանի թե շատ լինեն, դա ուղղակի քանկագին գոհար է»։ Բայց սպասում է խնդրատուն մի օր, երկու օր, գործը տուն չեն բերում, երրորդ օրը՝ նույնպես։ Նա գնում է պաշտոնատուն, բայց գործը դեռ չի էլ սկսվել. նա դիմում է քանկագին գոհարին։ «Ախ, ներեցե՛ք,— ասում էր Ջիչիկովը շատ քաղաքավարի, բռնելով նրա զույգ ձեռքերը. «Մեզ մոտ այնքան գործ կար. բայց վաղը արդեն ամեն ինչ արված կլինի, վաղը՝ անպատճառ, ճշմարիտ, ես նույնիսկ ամաչում եմ»։ Եվ այդ ամենը ղուգակցվում էր համապիշ շարժումներով։ Եթե այդ միջոցին պատահմամբ փեշը բացվում էր, ձեռքը իսկույն աշխատում էր ուղղել գործը և փեշը պահել։ Բայց ո՛չ վաղը, ո՛չ վաղը չէ մյուս օրը, ո՛չ երրորդ օրը գործը տուն չեն տանում։ Խնդրատուն գլխի է ընկնում. է՛, թող տեսնենք, մեջտեղ մի որևէ բան չկա՞ արդյոք. տեղեկանում է, նրան ասում են, պետք է դրագիրներին մի քան տալ։ «Ինչո՞ւ չէ, ես պատրաստ եմ մեկ-երկու քսանհինգ կոպեկանոց»։ «Ոչ, քսանհինգ կոպեկանոց չի, այլ մի-մի սպիտականոց»[2]։ «Դրագիրներին մի-մի սպիտականո՞ց»,— բացականչում է խնդրատուն։ «Բայց դուք

---

1 Այսինքն՝ կաշառքը։

2 Սպիտականոց — 25 ռուբլիանոց թղթադրամ։

ինչո՞ւ եք տաքանում»,— պատասխանում են նրան,— «այդ պես էլ դուրս կգա. գրագիրներին մի-մի քսանհինգ կոպեկանոց, մնացածը կգնա պետերին»։ Ախում է ճակատին՝ գլխի չընկնող խնդրատուն և էլ ի՛նչ նախատինքի խոսքեր ասես չի ասում նոր կարգերի, կաշառքների արգելման և պաշտոնյաների քաղաքավարի, ազնվացրած վերաբերմունքի մասին։ Առաջներում գիտեիր գոնե, թե ի՛նչ պետք է անել. բերել ես գործավարին մի կարմրանոց[1], վերջացավ գնաց, իսկ հիմա սպիտականոց է, այն էլ դեռ մի շաբաթ պետք է թրև գաս, մինչև գլխի ընկնես. սատանա՛ն տանի անշահությունն ու պաշտոնյաների ազնվությունը։ Խնդրատուն իրավացի է իհարկե, բայց դրա տեղ էլ այն կա, որ հիմա կաշառակերներ չկան. բոլոր գործերի վարիչները ամենապատվավոր և ամենաազնիվ մարդիկ են, միայն քարտուղարներն ու գրագիրներն են սրիկաներ։ Շուտով Ջիլիկովի համար բացվեց ավելի ընդարձակ ասպարեզ. կազմվեց մի հանձնաժողով ինչ-որ պետական շատ մեծալուրջ շենքի կառուցման համար։ Այդ հանձնաժողովի մեջ խցկվեց և նա, և դուրս եկավ ամենագործունյա անդամներից մեկը։ Հանձնաժողովը իսկույն գործի անցավ։ Վեց տարի զբաղվեց շենքով. բայց արդյոք կլիմա՞ն էր խանգարում կամ շինանյութը արդեն այնպիսին չէր, միայն ոչ մի կերպ պետական շենքը չէր բարձրանում հիմքից վեր։ Մինչդեռ քաղաքի մյուս ծայրերին հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի համար շինվեցին քաղաքացիական ճարտարապետության մի-մի գեղեցիկ տուն. երևում էր, որ հողի գրունտը այնտեղ ավելի լավն էր։ Անդամներն սկսեցին լի ու բոլ կյանք վայելել և ընտանիքների տեր դարձան։ Այստեղ միայն և այժմ միայն Ջիլիկովն սկսեց քիչ-քիչ դուրս գալ խնայողության և իր անողորմ ինքնուրացության դաժան օրենքների տակից։ Այստեղ միայն երկար տարիների պասը վերջապես մեղմացավ, և պարզվեց, որ նրան միշտ չէ, որ օտար են եղել զանազան զվարճությունները, որոնց նկատմամբ կարողանում էր զուսպ լինել եռուն երիտասարդության տարիներին, երբ ո՛չ մի մարդ լիովին չի իշխում իր վրա։ Առաջ եկան մի քանի շռայլություններ. նա վարձեց բավականին լավ խոհարար,

1 *10 ռուբլիանոց թղթադրամ։*

գնեց նուրբ հոլանդական շապիկներ։ Արդեն նա իր համար այնպիսի մահուդ գնեց, որպիսին չէր հագնում ամբողջ նահանգը, և այդ ժամանակից սկսեց հագնել ավելի դարչնագույն և առկայծուն կարմրավուն գույներ. արդեն ձեռք բերեց մի զույգ նժույգ և ինքը բռնում էր մի սանձը, հարկադրելով կողքի ձիուն օղակի պես ոլորվել, արդեն սովորույթ դարձրեց սրբվել օդեկոլոնախառն ջրում թաթախած սպունգով. արդեն գնում էր բնավ ոչ էժան ինչ-որ սապոն՝ մաշկին փափկություն հաղորդելու համար, արդեն...

Սակայն հանկարծ նախկին միխիլի փոխարեն ուղարկվեց նոր պետ, զինվորական մարդ, խիստ թշնամի՛ կաշառակերների և ամեն բանի, որ կոչվում է անարդարություն։ Հետևյալ իսկ օրը նա մինչև վերջին մարդը բոլորին վախեցրեց, պահանջեց հաշվետվություն, տեսավ թերություններ, ամեն քայլում պակասող գումարներ, նկատեց նույն րոպեին քաղաքացիական ճարտարապետության գեղեցիկ տները— և պատիժ պատժի հետևից։ Պաշտոնյաները հեռացվեցին պաշտոնից. քաղաքացիական ճարտարապետության տներն անցան զանձարանին և վերածվեցին զանազան բարեգործական հիմնարկների և դպրոցների կանտոնիստների[1] համար, ամեն ինչ հողմացրիվ եղավ, և Ջիչիկովը՝ ավելի շա՛տ մյուսներից։ Նրա դեմքը, հանկարծ, չնայած հաճելիության՝ դուր չեկավ պետին, թե ինչո՞ւ, աստված գիտե, երբեմն արդեն այդ բանի համար ուղղակի պատճառներ չեն լինում, և նա մահու չափ ատեց նրան։ Բայց որովհետև նա զինվորական մարդ էր, հետևապես չդիտեր քաղաքացիական խորամանկությունների բոլոր նրբությունները, ապա մի քանի ժամանակից հետո, արդարամիտ արտաքինի և ամեն բանում կեղծել կարողանալու շնորհիվ նրա ողորմածության մեջ խցկվեցին ուրիշ պաշտոնյաներ, և գեներալը շուտով ընկավ ավելի մեծ սրիկաների ձեռքը, որոնց նա բոլորովին այդպիսին չէր համարում. մինչև անգամ նա գոհ էր, որ ընտրեց վերջապես այնպիսի մարդկանց, ինչպես հարկն է, և պարծենում էր առանց կատակի՝ ընդունակություններ ջոկելու իր նուրբ կարողությամբ։ Պաշտոնյաները հանկարծ ճանաչեցին նրա հոգին և բնավորությունը։ Ամեն բան, ինչ որ նրա իշխանության տակ էր, դար-

[1] Զինվորական ծառայության պարտավոր՝ զինվոր որդի։

ձավ սարսափելի հալածող անարդարության. ամենուրեք բոլոր գործերում նրանք հետապնդում էին դրան, ինչպես ձրկնորսը ուռկանով հետապնդում է որևէ մսոտ թառափի և հետապնդում էին այնպիսի հաջողությամբ, որ կարճ ժամանակամիջոցում ամեն մեկը մի քանի հազար գումարի տեր դարձավ։ Այն ժամանակ ճշմարտության ուղին բռնեցին շատերը նախկին պաշտոնյաներից և կրկին ընդունվեցին ծառայության մեջ։ Բայց Չիչիկովն արդեն ո՛չ մի կերպ չէր կարող խցկվել, որքան էլ որ աշխատում էր և պաշտպանում էր նրան՝ դրված իշխան Խովանսկու նամակներով՝ գեներալի առաջին քարտուղարը, որը կատարելապես հասել էր գեներալի քիթը կառավարելուն, սակայն այստեղ նա բոլորովին ոչինչ չկարողացավ անել։ Գեներալը այն տեսակ մարդկանցից էր, որոնց թեև քթից բռնած ման էին ածում (ասենք առանց նրա գիտության), բայց դրա փոխարեն արդեն, եթե նրա գլուխը մի միտք ընկներ, այդ միևնույն էր՝ թե երկաթե մեխ, ո՛չ մի բանով չէր կարելի այնտեղից հանել։ Այն ամենը, ինչ որ կարողացավ անել խելացի քարտուղարը, այն էր, որ ոչնչացրեց աբառատվորված ծառայության ցուցակը և դրանում պետին համոզեց ո՛չ այլ կերպ, քան կարեկցությամբ, կենդանի գուշեխով ներկայացնելով նրան աբառատուչ վիճակը Չիչիկովի դժբախտ ընտանիքի, որպեսին վերջինս, փարեբախտաբար, չուներ։

— Է՛, ի՛նչ արած,— ասաց Չիչիկովը,— կառչեիր, ճանկդ գցեիր՝ քաշ տվիր, պոկվեց. է՛լ մի բողոքիր։ Լացով ցավին ճար չես անի, պետք է գործ կատարել— Եվ ահա նա վճռեց նորի՛ց սկսել իր առաջընթացը, նորի՛ց զինվել համբերությամբ, նորի՛ց սահմանափակել պահանջները ամեն բանում, որքան էլ արդեն սկսած լիներ ոտքերը լայն ու արձակ ձգել։ Հարկավոր էր տեղափոխվել ուրիշ քաղաք, այնտեղ կրկին իրեն երևցնել։ Բայց ուզածը գլուխ չէր գալիս։ Երկու-երեք պաշտոն հաբկ եղավ, որ փոխեր ամենակարճ ժամանակամիջոցում։ Դրանք ինչ-որ կեղտոտ, ցածր պաշտոններ էին։ Պետք է գիտենալ, որ Չիչիկովը ամենաբարեվայելուչ մարդն էր, որպիսին երբևէ եղել է աշխարհիս երեսին։ Թեև նա ստիպված էր սկզբներում շփվել կեղտոտ հասարակության հետ, բայց հոգում միշտ մաքրություն էր պահպանում, սիրում էր, որ

պաշտոնատանը սեղանները լինեն լաքած փայտից և ամեն ինչ լիներ ազնիվ տեսակից։ Երբեք նա իրեն թույլ չէր տալիս խոսակցության մեջ անվայել մի խոսք ասելու և միշտ վիրավորվում էր, երբ ուրիշների խոսքերի մեջ տեսնում էր հարկ եղած հարգանքի բացակայություն դեպի աստիճանը կամ կոչումը։ Ես կարծում եմ, որ ընթերցողի համար հաճելի կլինի իմանալ, որ ամեն երկու օր նա փոխում էր սպիտակեղենը, իսկ ամառը՝ շոգերի ժամանակ, նաև ամեն օր. ամեն մի քիչ թե շատ անախորժ հոտ արդեն վիրավորում էր նրան։ Այդ պատճառով նա ամեն անգամ, երբ Պետրուշկան գալիս էր նրան հանվեցնելու և կոշիկները քաշելու, քթին մեխակ էր դնում, և շատ դեպքերում նրա նյարդերը խոտուտ էին գալիս, ինչպես աղջկա նյարդեր. ուստի և ծանր էր նրա համար կրկին հայտնվել այն շարքերում, ուր միշտ օդու և անքաղաքավարի վարվեցողության հոտ էր փչում։ Որքան էլ որ նա քաշվելերում էր իրեն. սակայն նիհարեց և անգամ կանաչ գույն ստացավ այդ տվայտանքների ժամանակ։ Նոր էր սկսել լրջվել և ստանալ այն կլորիկ և կիրթ ձևերը, որպիսի վիճակում ընթերցողը նրան գտավ հետը ծանոթանալիս, և արդեն շատ անգամ, նայելով հայելուն, մտածում էր շատ հաճելի բաների մասին. կնկա մասին, երեխաների մասին, և ժպիտը հեռանում էր այդպիսի մտքերին. բայց հիմա, երբ նա մի անգամ պատահաբար նայեց հայելու մեջ, չկարողացավ չբացականչել. «Աստվա՜ծ կույս, որքա՜ն զզվելի եմ դարձել։ Ով հետո երկար ժամանակ չէր կամենում իրեն նայել։ Բայց մեր հերոսը դիմացավ ամեն բանի, շատ դիմացավ, համբերությամբ դիմացավ, և վերջապես անցավ մաքսային ծառայության։ Պետք է ասել, որ այդ պաշտոնը վաղուց կազմում էր նրա մտածության գաղտնի առարկան։ Նա տեսնում էր, թե ի՜նչպիսի արտասահմանյան շքեղ առարկաներ էին ձեռք բերում մաքսատան պաշտոնյաները, ի՜նչպիսի ճենապակիներ և բատիստներ էին ուղարկում քավորակիններին, մորաքույրներին և քույրերին։ Վաղուց արդեն բազմից նա հառաչելով ասում էր. «Ա՜խ թե ո՜րտեղ պետք է տեղափոխվել. թե՜ սահմանն է մոտիկ և թե՜ մարդիկ են լուսավորված, և ինչպիսի՜ նուրբ հոլանդական շապիկներ կարելի է ձեռք բերել»։ Պետք է ավելացնել, որ ընդ սմին նա մտածում էր նաև առանձին

տեսակ ֆրանսիական սապոնի մասին, որ մորքին տալիս է արտասովոր սպիտակություն և այտերին թարմություն. թե ի՛նչպես էր դա կոչվում, աստված գիտե, բայց ըստ նրա ենթադրությունների՝ անպատճառ կճարվեր սահմանագլխում։ Այսպես, նա վաղուց կուզենար մաքսատան ծառայության մտնել, բայց կառուցման հանձնաժողովի զանազան ընթացիկ օգուտները ետ էին պահում նրան, և նա իրավացիորեն մտածում էր, որ մաքսատունը, ի՛նչ կուզի՝ լինի, դեռ ավելին չէր, քան կոունկը երկնքում, իսկ հանձնաժողովը իրական մի կաքավիկ էր իր ձեռքում։ Բայց հիմա նա վճռեց, որ՝ ի՛նչ ուզում է լինի՝ մտնի մաքսատուն, և մտավ։ Նա իր պաշտոնին անցավ արտասովոր եռանդով։ Թվում էր, թե ճակատագիրը ինքը որոշեց, որ նա դառնա մաքսատան պաշտոնյա։ Այդպիսի արագաշարժություն, մտքի սրություն և խորաթափանցություն ո՛չ միայն տեսնված չէր, այլ անգամ լսված չէր։ Մի երեքչորս շաբաթում նա արդեն այնպիսի հմտություն ձեռք բերեց մաքսային գործում,. որ կատարելապես ամեն բան գիտեր. անգամ չէր կշռում, չէր չափում, բայց ֆակտուրայից իմանում էր, թե մի կապոցի մեջ ո՛րքան արշին մահուդ կամ այլ կտորեղեն կա. ձեռքն առնելով մի փաթեթ, նա միանգամից կարող էր ասել, թե քանի՛ ֆունտ է։ Իսկ ինչ վերաբերում է խուզարկությունների, ապա աստեղ, ինչպես արտահայտվում էին անգամ իրենք՝ ընկերները, նա ուղղակի շան հոտառություն ուներ. չէր կարելի չապշել, տեսնելով, թե ո՛րքան նա համբերություն ուներ տնտղելու ամեն մի կոճակ, և այդ բոլորը կատարվում էր սպանիչ սառնասրտությամբ, քաղաքավարությամբ՝ անհավատալի լինելու չափ։ Եվ այն միջոցին, երբ խուզարկվողները կատաղում էին, կորցնում էին իրենց և չարությունից մղված պատրաստ էին նրա հաճելի արտաքինին մատնազարկ տալ, նա, չփոխելով ո՛չ դեմքի արտահայտությունը, ո՛չ քաղաքավարի վարմունքները, միայն ասում էր. չէի՞ք բարեհաճի մի փոքր անհանգստանալ և վեր կենալ, կամ՝ չէի՞ք բարեհաճի, տիկին, շնորհ բերել մյուս սենյակը. այնտեղ մեր պաշտոնյաներից մեկի կինը կբացատրվի ձեզ հետ։ կամ՝ թույլ տվեք, ահա ես գրշահատով մի փոքր կպատռեմ ձեր շինելի աստառը, և ասելով այս, նա այնտեղից դուրս էր բերում շալեր, քաշկինեակներ՝ սառնասրտորեն, ինչպես

սեփական սնդուկից։ Անգամ մեծավորները արտահայտվում էին, ասելով. սատանա է, ո՛չ թե մարդ. նա փնտրում էր անիվների մեջ, լծափայտի մեջ, ձիերի ականջներում և չես իմանում թե ի՛նչ տեղեր, որ և ոչ մի հեղինակի մտքովն անգամ չէր անցնի և որ թուլլատրվում է միայն մաքսատան պաշտոնյային։ Այնպես որ խեղճ ճանապարհորդը, որ նոր էր անցած լինում սահմանը, դեռ մի քանի րոպե շարունակ չէր կարողանում ուշքի գալ և քրտինքը սրբելով, որ մարմնին մանր ցանի պես դուրս էր լինում տված, միայն խաչակնքում էր երեսը և ինքն իրեն ասում. պա՛հ, պա՛հ։ Նրա դրությունը շատ էր նման լինում այն դպրոցականի դրության, որ դուրս է վազում գաղտնի սենյակից, ուր տեսուչը կանչած է եղել նրան մի քնքուշ խրատ տալու, բայց խրատի տեղ բոլորովին անսպասելի կերպով ծեծ է տալիս։ Կարճ ժամանակ անց մաքսանենգներն արդեն օր ու արև չունեին նրա ձեռքից։ Դա բոլոր լեհական չհուդուբրան պատուհասն ու հուսահատությունն էր։ Նրա ազնվությունն ու անկաշառելիությունը անհաղթահարելի էին, համարյա անբնական։ Նա անգամ չհավաքեց իր համար մի փոքրիկ գումար այն զանազան բռնագրավված ապրանքներից և խլված որոշ իրերից, որ չէին անցնում պետական գանձարանը, խուսափելու համար ավելորդ դրագրությունից։ Այդպիսի նախանձախնդրորեն անկաշառ ծառայությունը չէր կարող չդառնալ ընդհանուր զարմանքի առարկա և չհասնել վերջապես իշխանության։ Ջիչիկովը աստիճան և բարձրացում ստացավ և դրանից հետո առաջարկեց մի ծրագիր՝ որսալու բոլոր մաքսանենգներին, խնդրելով միայն միջոցներ, որպեսզի ինքը իրագործի այն։ Իսկույն նրան հանձնեցին մի չոկատ և անսահման իրավունք՝ ամեն տեսակ որոնումներ կատարելու։ Հենց այդ էլ կամենում էր նա։ Այդ ժամանակ կազմվել էր մաքսանենգների մի ուժեղ ընկերություն կանոնավոր կերպով մտածված. հանդուգն այդ ձեռնարկը միլիոններ էր խոստանում։ Նա վաղուց դրա մասին տեղեկություն ուներ և մինչև անգամ կաշառելու համար ուղարկված մարդուն մերժեց՝ ասելով չոր.— դեռ ժամանակը չէ։— Իսկ ստանալով իր տրամադրության տակ բոլորը, նույն րոպեին իմաց տվեց ընկերությանը, ասելով,— հիմա ժամանակն է։— Հաշիվը վերին աստիճանի ճիշտ էր։ Այստեղ նա մի տարում կարող էր ստանալ

այն, ինչ որ չէր կարող քսան տարում ամենայն նախանձախնդիր ծառայության ընթացքում։ Առաջ նա չէր կամենում նրանց հետ ո՛չ մի հարաբերություն ունենալ, որովհետև նա ավելի չէր, քան մի աննշան մարդ, ուստի և քիչ կստանար. բայց հիմա... հիմա բոլորովին այլ բան էր. նա կարող էր առաջարկել ի՛նչպիսի պայման որ ուզենար։ Որպեսզի գործը անարգել առաջ գնա, նա իր կողմը թեքեց նաև ուրիշ պաշտոնյաի, իր ընկերոջը, որը գայթակղության չդիմացավ, չնայած որ մազերը սպիտակած էին։ Պայմանները որոշվեցին և ընկերությունը անցավ գործողություններին։ Գործողություններն սկսվեցին փայլուն կերպով. ընթերցողը, անկասկած, լսած կլինի այնքան հաճախ կրկնվող պատմությունը իսպանական ոչխարների սրամիտ ճանապարհորդության մասին, որոնք սահմաններն անցնելով կրկնակի մուշտակներով, նրանց տակին անցկացրին միլիոն արժեքով բրաբանտական ժանյակներ։ Այդ դեպքը տեղի ունեցավ հենց այն ժամանակ, երբ Չիչիկովը ծառայում էր մաքսատանը։ Եթե չմանա՛կցե՛ր նա ինքը այդ ձեռնարկության մեջ, ո՛չ մի չհուդ աշխարհիս երեսին չէր կարողանա նման գործ գլուխ բերել։ Երեք կամ չորս ոչխարային արշավից հետո սահմանից, երկու պաշտոնյաները չորս հարյուր հազարական գումար ձեռք բերին։ Չիչիկովինը, ասում են, մինչև անգամ հինգ հարյուրից էլ անցավ, որովհետև նա ավելի ճարպիկ էր։ Աստված գիտե, թե ինչպիսի ահագին քվերի կհասաներին օրհնված գումարները, եթե ինչ-որ մի սև կատու չանցներ բոլորի միջև։ Սատանան խելքահան արեց երկու պաշտոնյաների. պաշտոնյաները, պարզապես ասած, խելացնորվեցին և դատարկ տեղը գժտվեցին իրար հետ։ Ի՛նչպես եղավ, տաք խոսակցության մեջ, կարող է պատահել՝ և մի փոքր էլ խմած, Չիչիկովը մյուս պաշտոնյային անվանեց տերտերի տղա, իսկ սա, թեև իսկապես տերտերի տղա էր, հայտնի չէ՝ ինչու խիստ վիրավորվեց և նրան հենց տեղն ու տեղը պատասխանեց ուժեղ և անսովոր կոպիտ, այսինքն այսպես. «Ո՛չ, ստում ես, ես պետական խորհրդական եմ և ո՛չ թե տերտերի տղա, բայց, ա՛յ, դու ի՛նչը տերտերի տղա ես»։ Եվ հետո դիտմամբ ավելի ևս վիրավորելու համար՝ ավելացրեց. «Դե գնա՛. թեև նա սրանով հետ մղեց Չիչիկովի ասած խոսքը, վերադարձնելով նրան

իր տված անունը, և թեև «դե գնա» արտահայտությունը կարող էր բավական ուժեղ համարվել, բայց սրանից դժգոհ, նա Ջիլիկովի վրա նաև մատնագիր տվեց։ Սակայն, ասում են, որ առանց դրան էլ նրանց մեջ գժտություն կար մի ինչ-որ թարմ և տուռզ, բողկի պես պինդ՝ ինչպես ասում էին մաքսատան պաշտոնյաները՝ կնկա պատճառով, որ անգամ մարդիկ էին կաշառված, որ երեկոյան դեմ մութ անկյունում ծեծեն մեր հերոսին։ Ասում են նաև, որ երկու պաշտոնյաներն էլ հիմար դրության մեջ ընկան՝ և կնկանից օգտվեց ինչ-որ մի շտաբս-կապիտան Շամշաևով։ Թե ի՛նչպես էր գործը իսկապես, աստված գիտե, ավելի լավ է, թող սիրող-հեղինակը մինչև վերջը ինքը հորինի։ Գլխավորը նրանումն է, որ մաքսանենգների հետ գաղտնի հարաբերությունները հայտնի դարձան։ Պետական խորհրդականը թեև ինքն էլ կորավ, բայց վառեց դրանով կաև իր ընկերոջը։ Պաշտոնյաներին դատի տվին, հարքունիս գրավեցին ունեցածը, վերգիր արին բոլորը, ինչ որ կար նրանց ձեռքին և ամեն ինչ որոտի նման հանկարծ պայթեց նրանց գլուխներին։ Ինչպես հարբեցման մոլուցքից հետո՝ ուշքի եկան նրանք և սարսափով տեսան, թե ի՛նչ էր իրենց արածը։ Պետական խորհրդականը չգիմացավ բախտի հարվածներին և ինչ-որ մի խուլ անկյունում ոչնչացավ, բայց կոլեգիականը գիմացավ։ Նա կարողացել էր քաքցնել փողերի մի մասը, ո՛րքան էլ որ զգույշ եղած լիներ հետաքննման համար նրա վրա եկող իշխանության հոտառությունը։ Գործի դրեց արդեն չափազանց փորձված, մարդկանց չափազանց լավ իմացող մտքի բոլոր նուրբ ճկունությունները, ուր ներգործեց դարձվածքների հաճելիությամբ, այստեղ խոսքի ազդեցությամբ, այնտեղ շողոքորթությամբ խնկարկելով, որ ո՛չ մի դեպքում չէր փշացնում գործը, մի տեղ փող կոխեց գրպանները, մի խոսքով, մշակեց գործը, գոնե այնպես, որ պաշտոնազուրկ եղավ ո՛չ այնպիսի անպատվությամբ, ինչպես ընկերը, և դուրս պրծավ քրեական դատից։ Բայց արդեն ո՛չ գումար, ո՛չ զանազան արտասահմանյան իրեր, ոչինչ չմնաց նրան. այդ բոլորի համար գտնվեցին ուրիշ սիրողներ։ Մոտը մնաց մի տասը հազարի չափ, որ թաքցրել էր սև օրվա համար, մեկ էլ երկու դյուժին հոլանդական շապիկ, մեկ էլ մի ոչ մեծ բրիչկա, ուրոնցով ման են գալիս ամուրինները, մեկ էլ երկու

ճորտ գյուղացի, կառապան Սելիֆանը և լաքեյ Պետրուշկան, մեկ էլ մաքսատան պաշտոնյաները սրտի բարությունից դրդված նրա մատ թողին հինգ-վեց կտոր սապոն՝ այտերի թարմությունը պահպանելու համար։ Ահա բոլորը։ Այսպիսով ահա նորից ի՛նչպիսի դրության մեջ հայտնվեց մեր հերո՛սը։ Ահա թե դժբախտության ինչպիսի վիթխարի կույտ թափվեց նրա գլխին։ Հենց այդ էր, որ նա կոչում էր՝ վնաս կրել ծառայության մեջ արդարության համար։ Այժմ կարելի կլիներ եզրակացնել, որ այդպիսի փոթորիկներից, փորձություններից, բացի տվայտանքներից և կենսական վշտերից հետո նա իր մնացած արյուն-քրտինքով դատած տասը հազարի հետ կհեռանա մի որևէ զավառական քաղաքի խաղաղ, խուլ անկյուն և այնտեղ հավիտենապես կթառամի չթե խալաթով՝ ցածլիկ տան պատուհանի մոտ, կիրակի օրերը դիտելով մուժիկների ծեծկռտուքը, որ տեղի կունենար նրա պատուհանի առջև, կամ թարմանալու համար անցնելով հավաբուն՝ անձամբ կտնտղի այն հավը, որ հատկացված է սուպի համար, և այսպիսով կվարի անաղմուկ, բայց իր տեսակով նույնպես ոչ անօգուտ կյանք։ Բայց այդպես չպատահեց։ Պետք է արդարացի լինել նրա բնավորության անհաղթահարելի ուժի մասին։ Այն բոլորից հետո, որ բավական կլիներ եթե ո՛չ սպանել, ապա գոնե սառեցնել և ճնշել ընդմիշտ մարդու, նրա մեջ չհանգավ անմխրճելի կիրքը։ Նա վշտանում էր, զայրանում, գանգատվում ամբողջ աշխարհով մեկ, բարկանում էր բախտի անարդարացիության վրա, վրդովվում էր մարդկանց անարդարացիությունից և սակայն չէր կարողանում հրաժարվել նոր փորձերից։ Մի խոսքով՝ նա ցույց էր տալիս մի համբերություն, որի առջև ոչինչ է գերմանացու փայտե համբերությունը, որ բռվանդակված է արդեն նրա դանդաղ, ծուլ արյան շրջանառության մեջ։ Ջիչիկովի արյունը, ընդհակառակը, ուժգին էր խաղում, և հարկավոր էր լինում մեծ, խելացի կամք, որ այն բոլորը սանձահարեր, ինչ կամենում էր դուրս թռչել և ճախրել ազատության մեջ։ Նա դատում էր, և նրա դատողության մեջ երևում էր որոշ մաս իրավացիության. «Ինչո՞ւ համար ես տուժեի, ինչո՞ւ իմ գլխին թափվեց դժբախտությունը. ո՞վ է հիմա բերանը բաց նստում մի պաշտոնի մեջ. բոլորը շահում են։ Ո՛չ ոքի ես չեմ դժբախտացրել, այ-

բին չեմ կողոպտել, ո՛չ ոքի մուրացկան չեմ դարձրել, օգտըվել եմ ավելցուկներից, վերցրել եմ այնտեղ, ուր ամենքը կըվերցնեին, ես չօգտվեի, ուրիշները կօգտվեին։ Ինչո՞ւ համար ուրիշները երջանիկ կյանք են վարում, և ինչո՞ւ համար ես պետք է կորչեմ որդի պես։ Ով ի՞նչ եմ ես հիմա։ Ինչացո՞ւ եմ ես. ի՞նչ աչքերով ես պետք է նայեմ ուզածդ ընտանիքի պատվավոր հոր աչքերին։ Ինչպե՞ս խղճի խայթ չզգամ, գիտենալով, որ զուր տեղը բեռ եմ դարձել երկրի վրա, և ի՞նչ կասեն հետո իմ զավակները։ Ահա՛, կասեն, մեր անասուն հայրը մեզ ոչ մի կարողություն չթողեց»։

Արդեն հայտնի է, որ Զիչիկովը խիստ հոգում էր իր սեռունդի մասին։ Այս արդեն զգայնաշարժ խնդիր է։ Մեկ ուրիշը, կարող է պատահել, այդքան էլ ձեռքերը խորը չէր խրի, թքե չլիներ այդ հարցը, որ չգիտես ինչո՛ւ, ինքնիրեն գալիս է, թե ի՞նչ կասեն զավակները։ Ով ահա ապագա նախահայրը, ինչպես զգույշ կատու, մի աչքով կողքանց նայելով՝ տեսնելու թե տերը արդյոք չի՞ նայում, ճանկում է շտապով այն բոլորը, որ իրեն մոտիկ է. սապո՞ն է արդյոք, մո՞մ, ճա՞րպ, դեղձանի՞կ է արդյոք ճանկն ընկել. մի խոսքով, բաց չի թողնում ոչինչ։ Այսպես լաց էր լինում և գանգատվում մեր հերոսը, մինչդեռ գործելու միտքը երբեք չէր մեռնում նրա գլխի մեջ. այնտեղ շարունակ ինչ-որ մի բան էր կամենում կատուցվել և միայն սպասում էր պլանի։ Նորից կծկվեց նա, նորից սկըսեց դժվար կյանք վարել, նորից իրեն ամեն ինչում սահմանափակեց, նորից մաքրությունից և կանոնավոր դրությունից ընկավ ցեխը և ստորնադույն կյանքի մեջ։ Ով լավագույնին սպասելով հարկադրված էր անգամ զբաղվել հավատարմատարի կոչումով, մի կոչում, որ դեռ մեզանում քաղաքացիություն չի ստացել, որ ամեն կողմից ետ են մղում, վատ են հարգում մանր-մունր պաշտոնյաները և իրենք հավատարմողները, որ դատապարտված է սողալու նախասենյակներում, կոպտությամբ հանդիպելու և այլն. բայց կարիքը հարկադրեց համաձայնել ամեն բանի։ Հանձնարարություններից նրան բաժին ընկավ ի միջի այլոց մի բան. միջնորդել խնամակալական խորհրդում[1] դրավ դնել մի քանի հարյուր գյու-

[1] Վարկային գործողություններ կատարող հիմնարկ։

դացի։ Կալվածքը քայքայվել էր վերջին աստիճանի։ Քայքայվել էր դա անասունների սատկումներից, խարդախ գործակատարներից, անբերրիությունից, վարակիչ հիվանդություններից, որից մեռել էին ամենալավ աշխատողները, և վերջապես իրեն՝ կալվածատիրոջ անխելքությունից, որ Մոսկվայում իր տունը կահավորել էր վերջին մոդայով և այդ կահավորման վրա այնպես էր ծախսել իր ամբողջ կարողությունը՝ մինչև վերջին կոպեկը, որ ուտելու համար բան չէր թողել։ Հենց այդ պատճառով հարկ եղավ վերջապես գրավ դնել մնացած վերջին կալվածքը։ Պետական գանձարանում գրավ դնելը այն ժամանակ դեռ նոր գործ էր, որին ձեռնարկել ո՛չ ոք չէր համարձակվում առանց երկյուղի։ Ջիչիկովը իբրև հավատարմատար, սկզբում ամենքին տրամադրելով (առանց նախապես տրամադրելու, ինչպես հայտնի է, չի կարելի վերցնել մինչև անգամ հասարակ տեղեկանք կամ ուղղումն, այնուամենայնիվ, գոնե մեկական շիշ մադերա հարկադրված կլինի մարդ լցնել ամենքի կոկորդը),— և այսպես, տրամադրելով ամենքին, ում պետք է, նա բացատրեց, թե ահա ի՛նչ հանգամանք կա ի միջի այլոց. գյուղացիների կեսը մեռած է, այնպես որ հետո որևէ բան պոչին չկապեն... «Բայց, ախր, նրանք հաշվո՞ւմ են վերստուգման ցուցակի մեջ»,— ասաց քարտուղարը։ «Հաշվվում են»,— պատասխանեց Ջիչիկովը. «Դե, այլևս ինչի՞ց վախեցաք,—ասաց քարտուղարը. «Մեկը մեռավ, մյուսը ծնվեց, և գործը իր կարգին շինվեց»։ Քարտուղարը, ինչպես երևում էր, կարողանում էր խոսել նաև հանգերով։ Իսկ այդ պահին մեր հերոսի մեջ հղացավ այնպիսի ոգեցունց մի միտք, որպիսին երբևէ հղացել չէ մարդկային գլխի մեջ։ «Ա՛յ թե միամիտ մարդ եմ եղել ես էլ, հա՜»,— ասաց նա ինքնիրեն. «Թաթմաններս եմ փնտրում, այնինչ թաթմանը հենց գոտկիս մեջ է»։ Ա՛յ թե մի գնեի բոլոր դրանց, ովքեր մեռել են, երբ դեռ չեն ներկայացված նոր վերստուգողական ցուցակները, ձեռք բերեի դրանցից, ենթադրենք, մի հազար հոգի, այո, ենթադրենք՝ խնամակալական խորհուրդը երկու հարյուրական ռուբլի կտա՝ հոգուն. ահա քեզ երկու հարյուր հազա՜ր։ Իսկ հիմա էլ հարմար ժամանակ է, նորերս համաճարակ էր, քիչ ժողովուրդ չմեռավ, փա՜ռք աստծո։ Կալվածատերերը թղթախաղի մեջ տանուլ են տվել, քեֆեր են արել և ունե-

ցած-չունեցածները վատնել են ինչպես հարկն է. բոլորը խրցկըվել են Պետերբուրգ՝ ծառայելու. կալվածները երեսի վրա թողնված են, կառավարվում են՝ ինչպես պատահի, տարեցտարի դժվարանում է հարկեր վճարելը, այնպես որ, ամեն մեկը ուրախությամբ կզիջի ինձ նրանց, հենց միայն այն պատճառով, որ նրանց համար գլխահարկ չվճարի. կարող է երբեմն էլ այնպես պատահել, որ նրանցից մեկն ու մեկից դեռ ինքս կոպեկ պոկեմ։ Իհարկե, դժվար է, չուր վերցնող խմոր է, երկյուղալի է, այնպես չլինի, որ նորից տուժեմ, որ էլի մի նոր պատմություն դուրս չգա, բայց չէ՞ որ մարդուն էլ մի որևէ բանի համար խելք է տված։ Բայց գլխավորապես լավն այն է, որ առարկան ինքը բոլորին անհավատալի կթվա, ո՛չ ոք չի հավատա։ Ճիշտ է, առանց հողի չի կարելի ո՛չ գնել, ո՛չ գրավ դնել։ Բայց ես կգնեմ տեղահանելով, տեղահանելո՛վ. այժմ Տավրիկյան և Խերսոնյան նահանգներում հողերը ձրի են տրվում, միայն թե բնակեցրու։ Հենց այնտեղ էլ նրանց բոլորին կտեղափոխե՛մ։ Խերսո՛ն՝ բոլորի՛ն. թող այնտեղ ապրեն։ Իսկ տեղափոխությունը կարելի է կատարել օրինական ճանապարհով, ինչպես հարկն է, դատարանների միջոցով։ Եթե կուզենան ստուգել գյուղացիներին, համեցե՛ք, ես դրան էլ դեմ չեմ, ինչո՞ւ չէ. ես կներկայացնեմ նաև վկայություն կապիտան-ոստիկանի սեփական ստորագրությամբ։ Գյուղը կարելի՛ է անվանել Ջիչիկովի սլոբոդկա, կամ այն անունով, որ տվել են մկրտելու ժամանակ. Պավլովսկոյե գյուղ։ Եվ ահա այս կերպ կազմվեց մեր հերոսի գլխում սուն տարօրինակ սյուժեն, որի համար չգիտեմ արդյոք ընթերցողները շնորհակալ կլինե՞ն նրան, իսկ թե ի՛նչպես է շնորհակալ հեղինակը՝ դժվար է արտահայտել։ Որովհետև, ինչ ուզում ես ասա, եթե Ջիչիկովի գլխում այդ միտքը չծագեր, աշխարհ չէր գա և սուն պոեմը։

Ռուսական սովորությամբ, երեսը խաչակնքելով, նա անցավ ի կատար ածելուն։ Ցույց տալով իբր թե բնակության տեղ է որոնում և այլ պատրվակներով՝ նա սկսեց պրպտել մեր պետության այս և այն անկյունները, գերազանցապես այն անկյունները, որոնք մյուսներից ավելի էին տուժել դժբախտ պատահարներից, անբերրիությունից, մահացությունից ու այլ և այլ բաներից, մի խոսքով, ուր կարելի էր ավելի

հարմար և ավելի էժան գնել պահանջված ժողովուրդը։ Նա առանց մտածելու չէր դիմում ամեն մի կալվածատերի, այլ ընտրում էր ավելի իր ճաշակի մարդկանց, կամ այնպիսիներին, որոնց հետ կարելի կլիներ փոքր դժվարություններով նման գործարքներ անել, աշխատելով առաջ ծանոթանալ, տրամադրել հօգուտ իրեն, որպեսզի, եթե հնարավոր է՝ ավելի բարեկամությամբ, և ո՛չ թե գնելով ձեռք բերել գյուղացիներին։ Այսպիսով, ընթերցողները չպետք է զայրանան հեղինակի վրա, եթե անձինք, որ մինչև հիմա հայտնվեցին, նրանց ճաշակով չեն. դա Չիչիկովի մեղքն էր, այստեղ նա իր գլխի տերն է, ո՛ւր խելքին փչեց գնալ, մենք էլ պետք է այնտեղ քաշ գանք։ Մեր կողմից, եթե ճիշտ որ մեղադրանք լինի անձնավորությունների և բարակտերների անգուն լինելու և չնչինության վերաբերյալ, կասենք միայն, որ երբեք սկզբից չի երեվում գործի ամբողջ լայն հոսանքն ու ծավալը։ Մի որևէ քաղաք մտնելը, թեկուզ և մայրաքաղաք, միշտ ինչ-որ անգույն է, սկզբում ամեն բան գորշ է և միօրինակ. ձգվում են անվերջ գործարաններ ու ֆաբրիկաներ, ծխով մրոտված, խակ հետո կերևան վեցհարկանի շենքերի անկյունները, վաճառատներ, ցուցանակներ, փողոցներ և պրոսպեկտներ՝ զանգատներով, սյուներով, արձաններով, աշտարակներով, քաղաքային փայլով, աղմուկով ու որոտով և այն ամենով, որ ի զարմանս արտադրել են մարդու ձեռքն ու միտքը։ Թե ի՛նչպես կատարվեցին առաջին գնումները, ընթերցողը արդեն տեսավ. թե ի՛նչպես կգնա գործը հետագայում, ի՛նչպիսի հաջողություններ և անհաջողություններ կունենա հերոսը, ի՛նչպես ստիպված կլինի նա լուծել ու հաղթահարել ավելի դժվար արգելքները, ի՛նչպիսին կներկայանան հսկայական կերպարները, ի՛նչպես կշարժվեն խորունկ լծկանները ընդարձակ վեպի, կլայնանա նրա հորիզոնը, և նա ամբողջովին կառնի վեհապանծ հրսանք, դա հետո կտեսնի։ Դեռ երկար ճանապարհ է մնում կատարել ուղևորական կառքի անձնակազմին, որ բաղկացած է մի պարոնից՝ միջին տարիքի, բրիչկայից, որով ման են գալիս ամուրիները, լակեյ Պետրուշկայից, կառապան Սելիֆանից և ձիերի մի եռյակից, որ արդեն հայտնի են ընթերցողին հանվանե՝ առենակալից սկսած մինչև սրիկա խայտառակը, նվ այսպես, ահա մեր հերոսը՝ ոտքից գլուխ ինչ-

պես որ կաւ։ Բայց կարող է պատահել՝ կպահանջեն եզրափակիչ որոշում մի գծով. ո՞վ է նա՝ քարոյականութեան հատկութիւնների վերաբերեալ. որ նա մի հերոս չէ՝ օժտված կատարելութիւններով և առաքինութիւններով, դա երեւում է։ Ապա ուրեմն ո՞վ է նա. կնշանակի սրիկա՞ է։ Ինչո՞ւ համար սրիկա, ինչո՞ւ համար այդպես խիստ լինել ուրիշների վերաբերեալ։ Այժմ մեզնում սրիկաներ չեն լինում, լինում են բարեմիտ, դուրեկան մարդիկ, իսկ այնպիսիներ, որոնք ի ընդհանուր խաչտառակութիւն ցուցադրելին իրենց կերպարանքը հասարակութեան, որ սա քքեր վրան, այդպիսիներ կգտնվեն մի երկու-երեք մարդ, և նրանք էլ արդեն հիմա խոսում են առաքինութեան մասին։ Ամենից ավելի արդարացի կլիներ նրան անվանել տնտեսատեր, ձեռք բերող մարդ։ Ձեռքբերումն է ամեն բանի մեղավորը. նրա պատճառով կատարվեցին գործեր, որոնց մարդիկ անվանում են իբրև՝ ո՛չ շատ մաքուր։ Ճիշտ է, այդպիսի խարակտերի մեջ արդեն ինչ-որ քամահրելի բան կա, և արդեն նույն ընթերցողը, որ իր կենսական ուղու վրա բարեկամ կլինի այդպիսի մարդուն, նրա հետ աղ ու հաց կկտրի և հաճելի ժամանակ կանցկացնի, կսկսի ծուռ նայել նրա վրա, եթե սա մի դրամայի կամ պոեմի մեջ հանդես գա իբրև հերոս։ Սակայն իմաստուն է նա, ով չի գարշում ոչ մի խարակտերից, բայց նրա վրա փորձող հայացք հառելով, կճանաչի նրան մինչև բուն էութիւնը։ Արագ է մարդու մեջ ամեն ինչ փոփոխվում. աչքդ հազիվ խփում, բաց ես անում, որ արդեն ներսում աճել է սարսափելի որդը, ինքնակամորեն իրեն քաշելով բոլոր կենսական հյութերը։ Եվ հաճախ ո՛չ միայն լայն կիրքը, այլև մի սրևէ մանր, չնչին կիրք ծավալվել է ազնիվ սխրագործութիւնների համար ծնվածի մեջ, հարկադրել է նրան մոռանալ վեհ և սուրբ պարտականութիւնները և չնչին չխկչխկանների մեջ տեսնել վեհը և սուրբը։ Անթիվ են, ինչպես ծովի ավազը, մարդկային կրքերը, և միշտ մեկը մյուսին նման չեն, և նրանք ամենը, սուրբ և գեղեցիկ կրքերը, սկզբում հնազանդ են մարդուն և հետո արդեն դառնում են նրա սարսափելի տիրակալը։ Երջանիկ է՝ ով որ բոլորից ընտրել է ամենագեղեցիկ կիրքը. աճում և տասնապատկվում է ամեն ժամ և րոպե նրա անլափելի երջանկութիւնը, և քափանցում է դա խորը և խո-

րը, իր հոգու անվերջանալի գրահներ։ Բայց կան կրքեր, որոնց ընտրությունը մարդուց չէ։ Արդեն նրանք ծնվել են նրա հետ աշխարհ գալու րոպեից, և մարդուն ուժ չի տրված շեղվել նրանից։ Դրանք առաջնորդվում են վերին ուրվագծումներով, և նրանց մեջ կա ինչ-որ հավերժ կանչողը, ողջ կյանքում անլուելի մի բան։ Երկրային մեծ ասպարեզ է վիճակված նրանց գործելու. միևնույն է՝ մոտիկ կերպարանքի մեջ, թե անցնող լուսավոր երևույթի պես, որ ուրախացնում է մարդկանց— հավասարապես կոչված են նրանք՝ մարդուն անիմանալի բարիքի համար։ Եվ կարող է պատահել, որ նույն այս Չիչիկովի մեջ կիրքը, որ նրան մղում է, արդեն նրանից չէ, և նրա սառը գոյության մեջ բովանդակվում է այն, որը հետո փոշի կդարձնի և ծնկաչոք կանի մարդուն երկնքի իմաստության առաջ։ Եվ դեռ գաղտնիք է, թե ինչո՞ւ սույն կերպարը հանդես եկավ ներկայումս լույս տեսած պոեմի մեջ։

Սակայն ծանր չէ այն, որ հերոսից դժգոհ կմնան, ծանրն այն է, որ հոգու մեջ ապրում է մի անդիմադրելի վստահություն, որ միևնույն հերոսով, նույն այդ Չիչիկովով կարող կլինեին գոհ լինել ընթերցողները։ Ապա՛ թող հեղինակը խորը չնայեր նրա հոգու մեջ, թող չշարժեր նրա հատակում այն, որ խուսափում և թաքնվում է մարդկանց հայացքից, թող չհայտնաբերեր՛ այն ամենանվիրական մտքերը, որ ուրիշ ոչ ոքի չի վստահում մարդ, այլ թող ցույց տար նրան այնպես, ինչպես նա երևաց ողջ քաղաքին, Մանիլովին և մյուս մարդկանց, և բոլորը ուրախ կլինեին և նրան կդնեին հետաքրքրության արժանի մարդու տեղ։ Նշանակություն չունի, որ ո՛չ նրա դեմքը, ո՛չ նրա ամբողջ կերպարը դես ու դեն չի բնկնի նրանց աչքերի առջև իբրև կենդանի. գրա փոխարեն ընթերցումը վերջանալուց հետո հոգին ոչ մի բանով չի վրդովված, և կարելի է դիմել կրկին թղթախաղի սեղանին, որով ուրախանում է ողջ Ռուսիան։ Այո՛, իմ բարի ընթերցողներ, դուք չէիք ցանկանա տեսնել հայտնաբերված մարդկային խեղճությունը։ Ինչի՞ համար է դա, ասում եք դուք, ի՞նչ կարիք կա։ Մի՞թե մենք ինքներս չգիտենք, որ շատ արհամարհելի և հիմար բաներ կան կյանքում։ Առանց այդ էլ հաճախ է պատահում, որ մենք տեսնում ենք այն, ինչ բոլորովին անմխիթարական է։ Ավելի լավ է, ուրեմն, ներկայացրեք մեզ գեղեցիկ

կը, գրավիչը։ Լավ է՝ մոռացության մեջ ընկնենք մենք։ «Ողբա՛յր, ինչո՞ւ ես ասում ինձ, որ տնտեսության մեջ գործերը վատ են գնում»,— ասում է կալվածատերը գործակատարին. «Ես, եղբայր, այդ գիտեմ առանց քեզ, էլ ուրիշ խոսակցությո՞ւն չունե՞ս մի՞թե։ Դու ինձ մոռացնել տուր, օգնիր, որ չիմանամ այդ, այն ժամանակ ես երջանիկ եմ»։ Եվ ահա այն փողերը, որոնք կարող էին այս կամ այն չափով շտկել գործը, ծախսվում են իրեն մոռացության տալու զանազան միջոցների վրա։ Քնում է խելքը, որը կարող է պատահել ձեռք էր բերել մի անակնկալ աղբյուր վեհ միջոցների. իսկ այնտեղ կալվածը՝ թրա՛խկ, ընկնում է աճուրդ, և կալվածատերը մուրացկանությամբ մոռացության է տալիս իրեն՝ մի հոգով, որ ծայրահեղությունից պատրաստ է այնպիսի ստորությունների, որոնցից առաջ նա կսարսափեր։

Դարձյալ հեղինակի վրա մեղադրանք կբարդվի այսպես կոչված հայրենասերների կողմից, որոնք հանգիստ իրենց համար նստում են անկյուններում և զբաղվում են բոլորովին կողմնակի գործերով, դիզում են իրենց համար գումարներ՝ ուրիշի հաշվին իրենց բախտը շինելով. բայց հենց որ որևէ բան է պատահում նրանց կարծիքով՝ վիրավորակա՛ն հայրենիքի համար, կհայտնվի որևէ գիրք, որի մեջ երբեմն կասվի դառն ճշմարտությունը, նրանք դուրս կվազեն բոլոր անկյուններից, ինչպես սարդեր, տեսնելով, որ ոստայնի մեջ խճճվեց ճանճը, և հանկարծ կբարձրացնեն վայնասուն. «Բայց մի՞թե լավ է հանդես բերել այդ, ազդարարել այդ մասին։ Չէ՞ որ այդ բոլորը, որ նկարագրված է այստեղ, այդ բոլորը մերն է, լա՛վ է արդյոք դա. իսկ ի՞նչ կասեն օտարազգիները։ Մի՞թե ուրախալի է լսել վատ կարծիք իր մասին։ Մտածում են, թե մի՞թե դա ցավալի չէ։ Մտածում են, թե մի՞թե մենք հայրենասերներ չենք»։ Այսպիսի իմաստուն նկատողությունների համար, հատկապես օտարազգիների կարծիքի, խոստովանում եմ, ոչինչ չի կարելի գտնել պատասխանելու համար։ Թերևս ահա թե ինչ. Ռուսաստանի մի հեռավոր անկյունում ապրում էին երկու բնակիչ։ Մեկը ընտանիքի հայր էր, անունը Կիֆա Մոկիևիչ, հեզ բարքի տեր մի մարդ, որ անփուլթ կյանք էր վարում։ Իր ընտանիքով նա չէր զբաղվում. նա իր գոյությամբ դարձած էր ներհայեցական կողմին և զբաղված հե-

տևյալ, ինչպես ինքն էր ասում, փիլիսոփայական հարցով. «Ահա, օրինակ, գազանը»,— ասում էր նա, մաճ գալով սենյակում,— «գազանը ծնվում է մերկ։ Ինչո՞ւ համար հատկապես մերկ։ Ինչո՞ւ ո՛չ այնպես, ինչպես թռչունը, ինչո՞ւ չի դուրս գալիս ձվից։ Ինչպե՞ս է, իսկապես, որ բոլորովին չես հասկանա բնությանը, որքան էլ խորանաս նրա մեջ»։ Այսպես է խորհում բնակիչ Կիֆա Մոկիևիչը։ Բայց ա՛յս չէր գլխավորը։ Մյուս բնակիչը Մոկիյ Կիֆովիչն էր, նրա հարազատ որդին։ Նա, ինչպես ասում են Ռուսիայում, հսկա էր, և այն ժամանակ, երբ հայրը զբաղված էր գազանի ծնունդով, քսան տարվա լայնաթիկունք նրա բնութքը հենց ուզում էր պոռթկա ու ծավալվի։ Ոչ մի բան չէր կարողանում նա թեթև անել, միշտ կա՛մ որևէ մեկի ձեռքը կճռթճռթացներ, կա՛մ բշտիկ կրուսցներ որևէ մեկի քթին։ Տան մեջ կամ հարևանության մեջ բոլորը՝ սպասավոր աղջկանից սկսած մինչև բակի շունը, տեսնելով նրան փախչում էին։ Անգամ սեփական մահճակալը ննջարանում կտոր-կտոր էր անում։ Այսպիսին էր Մոկիյ Կիֆովիչը, բայց, այնուամենայնիվ, բարի հոգու տեր էր նա։ Բայց և ա՛յս չէ գլխավորը։ Այլ գլխավորը, ահա թե ի՛նչ է. «Շնո՛րհ արա, հա՛յր պարոն Կիֆա Մոկիևիչ,— ասում էին հորը թե՛ իր և թե՛ ուրիշների սպասավորները,— այդ ի՞նչ է ձեր Մոկիյ Կիֆովիչը։ Ոչ ոք նրանից հանգիստ չունի, ինչ հոգի հանող տղա է»։ «Այո, չարաճճի է, չարաճճի է,— ասում էր սիրվորաբար հայրը,— բայց ինչպե՞ս անել. նրա հետ կռվելը ուշ է. հետո, չէ՞ որ ինձ բոլորն էլ կմեղադրեն դաժանության համար. իսկ նա պատվասեր մարդ-է, եթե կշտամբեմ նրան երկրորդի-երրորդի ներկայությամբ, նա կսանձահարվի, բայց չէ՞ որ դա հրապարակել է նշանակում, ահա ինչո՛ւմն է ցավը. քաղաքը կիմանա, նրան շան տեղ էլ չի գցի։ Ի՞նչ են, ճիշտ որ, մտածում, մի՞թե ինձ համար ցավալի չէ. մի՞թե ես հայր չեմ։ Որ ես զբաղվում եմ փիլիսոփայությամբ կամ եթե ժամանակ չեմ ունենում, ուրեմն ասել է՝ ես հայր չե՞մ։ Չէ՛, չէ, հայր եմ, սատանան տանի, հայր եմ։ Մոկիյ Կիֆովիչը այստեղ, սրտիս մեջն է նստած»։ Այստեղ Կիֆա Մոկիևիչը շատ ուժգին խփում էր թռունքով իր կրծքին և ընկնում կատարյալ ապարատի մեջ։ «Դե, արդեն եթե նա կմնա շան պես, թող այդ ինձանից իմացած չլինեն, թող ես չլինեմ մատնողը»։ Եվ ցույց

տալով այդօրինակ հայրական զգացմունք, նա թողնում էր Մակիչ Կիֆովիչին շարունակել իր դյուցազնական սխրագործությունները, իսկ ինքը անցնում էր նորից իր սիրած առարկային, հանկարծ իրեն տալով նման մի հարց. «Դե՛, իսկ եթե փիղը ծնվեր ձվից, ախր կճեպը, կարծեմ, խիստ հաստ կլիներ, հրանոթով չես կոտրի, հարկավոր կլիներ մի որևէ նոր հրազեն գործիք հնարել»։ Այսպես էին կյանք վարում խաղաղ անկյունի երկու բնակիչները, որոնք անսպասելի կերպով, ինչպես պատուհանի միջից, դուրս նայեցին մեր պոեմի վերջում, դուրս նայեցին նրա համար, որպեսզի համեստորեն պատասխանեն այն մի քանի տաքարյուն հայրենասերների մեղադրանքին, որոնք մինչ այդ զբաղվում էին մի որևէ փիլիսոփայությամբ կամ քնքշորեն սիրած հայրենիքի հաշվին շահեցումներով, և որոնք այն մասին չեն մտածում, որ վատ բան չանեն, այլ այն մասին, որ միայն չասեն, թե նրանք վատ բան են անում։ Ո՛չ, մեղադրանքների պատճառը հայրենասիրությունը չէ և ոչ էլ առաջին զգացմունքը, ուրիշ բան կա ծածկված նրանց տակ։ Ինչո՞ւ համար խոսքը թաքցնել։ Ուրիշ էլ ո՞վ, քան հեղինակը, պետք է ասի սրբազան ճշմարտությունը։ Դուք վախենում եք ակնդետ հայացքից, դուք ինքներդ սարսափում եք որևէ բանի վրա խորը նայել, դուք սիրում եք սահել անցնել ամեն բանի վրայից՝ անմիտ նայվածքով։ Դուք անգամ ամբողջ հոգով կծիծաղեք Ջիլիկովի վրա, կարող է պատահել, անգամ կգովեք հեղինակին, կասեք. «Սակայն մի քանի բան նա ճարտարորեն է նկատել, երևի՝ ուրախ մարդ է»։ Եվ այդպիսի խոսքերից հետո կրկնակի հպարտությամբ կդիմեք ձեզ, ինքնագոհ ժպիտը կերևա ձեր դեմքին, և դուք կավելացնեք. «Բայց ինչ պետք է խոստովանել, որ շատ տարօրինակ և շատ ծիծաղելի մարդիկ են լինում մի քանի գավառներում, մեկ էլ՝ փոքր սրիկաներ չեն, հա՛»։ Իսկ ձեզանից ո՞վ, լցված քրիստոնեական հեզությամբ, ո՛չ բարձրաձայն, այլ լուռյան մեջ, մենակ ինքն իր հետ առանձին զրույցների րոպեներին՝ կսուզի սեփական հոգու ներսը սույն ծանր հարցը. իսկ իմ մեջ չկա՞ արդյոք Ջիլիկովի որևէ մասը։ Պա՛հ, ինչպե՞ս չէ, այդ էր պակաս։ Ապա թող այդ միջոցին կողքից անցնի նրա որևէ ծանոթը, որ ո՛չ շատ մեծ աստիճան ունի, ո՛չ էլ շատ փոքր, նա իսկույն կնեղ կրոթի իր հարևանի

ձեռքը և կասի նրան՝ քիչ մնալով, որ փոքիկացնի ծիծաղից։ «Նայի՛ր, նայի՛ր, ա՛յ, Չիչիկովը, Չիչիկովն անցավ»։ Եվ ապա նրեխայի պես, մոռանալով ամեն պատշաճավորություն, որ հատուկ է կոչման և տարիքին, կվազի նրան հասնելու, տնազ անելով ետևից և ասելով. «Չիչի՛կով, Չիչի՛կով, Չիչի՛կով»։

Բայց մենք սկսեցինք խոսել բավական բարձր, մոռանալով, որ մեր հերոսը, մինչ մենք նրա կյանքի պատմությունն էինք անում, քնած էր, արդեն զարթնեց և հեշտությամբ կարող է լսել այսչափ հաճախ կրկնվող իր ազգանունը։ Իսկ նա վիրավորվող մարդ է և գոհ չի լինում, երբ նրա մասին արտահայտվում են ո՛չ հարգանքով։ Ընթերցողի համար մեծ վիշտ չէ, արդյոք նրա վրա կզայրանա՞ Չիչիկովը թե ոչ, իսկ ինչ վերաբերում է հեղինակին, ապա նա ոչ մի դեպքում չպետք է խոովի իր հերոսի հետ. դեռ բավական ճանապարհ հարկ կլինի անցնել նրա հետ ձեռք-ձեռքի տված, երկու մեծ մասեր կան առջևում, դա դատարկ բան չի։

— Է՛, է՛, է՛, դու ի՞նչ բանի ես,— ասաց Չիչիկովը Սելիֆանին,— է՛յ, դու։

— Ի՞նչ,— հարցրեց Սելիֆանը կերկերուն ձայնով։

— Ինչպե՞ս ի՛նչ. սագի՛ կտոր, ինչպե՞ս ես քշում։ Ապա՛, ո՛տ վերցրու։

Եվ իսկապես Սելիֆանը վաղուց արդեն քշում էր աչքերը կիսափակ, միայն հազիվ երբեմն կիսաքուն՝ թափ տալով սանձերը նույնպես նիրհող ձիերի կողքերին, իսկ Պետրուշկայի գլխից չես իմանում ո՛րտեղ, վաղուց արդեն թռել էր կարտուզը, և ինքը, ետ թեքվելով, գլուխը հենել էր Չիչիկովի ծնկներին, այնպես որ սա ստիպված էր գլխարկ հասցնել նրան։ Սելիֆանը աշխուժացավ և մի քանի անգամ խայտաձեր ձիու մեջքին ձաղկելով, որից հետո սա ընթացավ վարպով, և մարակը վերևից պտտեցնելով բլլորի վրա, ասաց բարակ երգեցիկ ձայնով. մի՛ վախ. ձիերը շարժվեցին և բմբուլի պես տարան թեթև բրիչկան։ Սելիֆանը միայն թափահարում էր և կանչում. է՛խ, է՛խ, է՛խ, սահուն կերպով ոստոստելով նստելու տեղի վրա այն չափով, որքան տրոյկան մերթ թռչում էր բլրակի վրա, մերթ սլանում էր մի շնչով բլրակից ներքև, որոնցով լիքն է ամբողջ փոստուղին, որ հազիվ նկատելի թեքվածքով սլանում էր ներքև։ Չիչիկովը միայն ժպտում

էր, թեթևակի վեր-վեր թռնելով իր կաշվե բարձի վրա, որով-հետև սիրում էր արագ արշավը։ Եվ ո՞ր ռուսը չի սիրում արագ արշավ։ Արդյոք նրա՞ հոգին, որ ձգտում է պտույտ անել, զբոսնել, երբեմն ասել՝ սատանա՜ն տանի ամեն ինչ, արդյոք նրա՞ հոգին չի սիրի արշավը։ Արդյոք դրա՞ն չսիրի, երբ դրա մեջ լսվում է ինչ-որ մի հանդիսավոր հրաշք բան։ Կարծես մի անհայտ ուժ վերցրել է քեզ իր թևերի վրա, և դու ինքդ թռչում ես, և ամեն ինչ թռչում է. թռչում են վերստերը, թռչում են դեմից վաճառականները իրենց կիբիտկաների նստիքների վրա, թռչում է երկու կողմից անտառը եղևնիների և սոճինի-րի մութ շարքերով, կացինների թրխկոցով և ագռավների կռինչով, թռչում է ամբողջ ճանապարհը չեմ իմանում դեպի ո՛ւր կորչող հեռաստան, և ինչ-որ ահավոր բան է պարունակ-վում սույն արագ թռիչքի մեջ, որ չի կարողանում գծագրվել կորչող առարկան, միայն երկինքը գլխավերևում, մեկ էլ թեթև ամպերը, և ճեղքող լուսինը թվում են անշարժ էյ, պրոյկա, թռչո՛ւն տրոյկա, ո՞վ հնարեց քեզ. երևում է ժիր ժողովրդի մեջ միայն կարող էիր դու ծնվել, ա՛յն երկրում, որ չի սի-րում կատակել, այլ հարթ հավասար մեկնվել է կես-աշխարհ-քով մին, գե՛ն ու հաշվիր վերստերը, մինչև աչքերդ շաղ-վեն։ Եվ թվում է՝ ճանապարհորդական մի դժվարին գործից չէ, երկաթե պտուտակով չի թռնված, այլ հապճեպ մի կաց-նով ու գուրով սարքել է քեզ յարոսլավցի ժիր մուժիկը։ Գեր-մանական բաստիրտներ[1] չունի կառապանը. մի մորուք և թաթեպաններ, և նստած է սատանան էլ չի իմանում ինչի՛ վրա. բայց ահա կիսով չափ վեր կացավ, թափահարեց մտրակը, ձգեց երգը— նժույգները՝ մրրիկների պես, ճաղերը անիվնե-րի մեջ խառնվեցին, դարձան մի հարթ շրջանակ, միայն ճա-նապարհը ցնցվեց, մին էլ վախից ճչաց կանգ առած անցոր-դը. և ահա սլացա՜վ, սլացա՜վ, սլացա՜վ... Եվ ահա աչքեն երևում է հեռվում, թե ի՛նչպես մի բան փոշոտում և չաչա-փում է օդը։

Արդյոք այդպես չե՞ս նաև դու, Ռո՜սիա, որ իբրև ժիր, առաջը չկտրվող տրոյկա՝ սլանում ես։ Սուխ է ծխանի քո տակ ճանապարհը, դղրդում են կամուրջները, ամեն ինչ՝ ետ է մը-

[1] Երկարաճիտ կոշիկ, որ հագնում էին հեծյալները կամ հրեաները։

նում և մնում ետևում։ Կանգ է առել աստվածային հրաշքով ակնապիշ հայեցողը. կայծակ չէ՞ արդյոք սա, երկնքից նետված. ի՞նչ է նշանակում այս սարսափազդու շարժումը, և այն ի՞նչ անհայտ ուժ է մտած այս՝ աշխարհին անհայտ նժույգների մեջ։ Է՛խ, նժույգնե՛ր, նժույգնե՛ր, ի՛նչ նժույգներ եք։ Մրրիկնե՞ր են արդյոք նստած ձեր բաշերում։ Ջայլուն ականջնե՞ր են արդյոք վառվում ձեր ամեն մի չիղի մեջ, լսեցիք բարձունքից ձեր ծանոթ երգը, միահամուռ և միանգամից լարեցիք պղնձե կրծքներդ և, հազիվ միայն սմբակներով գետնին դիպչելով, դարձաք մի ձգված գիծ, որ թռչում է օդի միջով, և սլանում է ամբողջովին աստծուց ոգեշնչված։ Ռուսիա, ո՞ւր ես սլանում, տո՛ւր պատասխան։ Չի տալիս պատասխան։ Հրաշալի հնչյուններով լցվում է զանգակը. որոտում և քամի՛ դառնում պատառոտված օդը. կողքից թռչում է ամեն ինչ, որ կա աշխարհում, և թեքվելով մի կողմ են քաշվում և ճանապարհ են տալիս նրան այլ ժողովուրդներ և տերություններ։

Հատոր երկրորդ

ԳԼՈՒԽ I

Իսկ ինչո՞ւ ցուցադրել կյանքի խեղճությունն ու խեղճությունը, անկատար վիճակը, փորփրելով դուրս բերել մարդկանց՝ պետության խուլ անկյուններից, աչքից հեռու ծերպերից։ Ի՞նչ արած, երբ այդ են հեղինակողի հատկությունները և, հիվանդանալով սեփական անկատարությամբ, նա այլևս չի կարողանում պատկերել որևէ ուրիշ բան, եթե ոչ միայն խեղճությունն ու խեղճությունը, անկատար վիճակը, փորփրելով դուրս բերելը մարդկանց՝ պետության խուլ անկյուններից, աչքից հեռու ծերպերից։ Եվ ահա մենք նորից ընկանք այդ խուլ անկյուններից մեկը, նորից դեմ առանք ծերպերին։

Բայց ի՞նչ խուլ անկյուն և ի՞նչ հեռավոր ծերպ։

Որպես թե մի անծայրածիր ամրոցի վիթխարի հողապատնեշ՝ անկյունների աշտարակներով ու հրանոցքներով, հազար վերստից ավելի տարածությամբ գալարվելով, ձգվում էին լեռնային բարձունքները։ Հոյակապորեն վեր էին խոյանում նրանք հարթավայրերի անծայրածիր տարածությունների վրա՝ մերթ կրա-կավային հատկություն ունեցող բեկորներով թեք պատերի նման, փորակներով ու ծորաններով, մերթ կտրված ծառերի բներից վեր ձգվող և գառան մորթուն հատուկ դուրեկան տեսք ունեցող ոլորաձև ջահել թփուտների նման, մերթ, վերջապես, կացնի հարվածներից հրաշքով դեռ ողջ մնացած ստվերաթափ անտառի նման։ Իր ափերին հավատարիմ գետը, դրանց բոլորի հետ միասին, մերթ կատարում էր ծնկաձև

պտուլտներ, մերթ առանձնանում դեպի մարգագետինները, որպեսզի այնուհետև ոլորաններով պսպղա, ինչպես բոցն արևի տակ, կորչի կեչիների, դողդոջուն կաղամախիների և ջրասեր կաղնիների պուրակում և ապա այնտեղից հանդիսավոր ընթացքով դուրս պրծնի՝ կամուրջների, ջրաղացների ու ջրապատնեշների ուղեկցությամբ, որոնք կարծես թե յուրաքանչյուր ոլորտում նրա ետևից են վազում։

Մի տեղում բարձունքի թեք կողը թաքնվել էր ծառերի ստվերախիտ գանգուրներում։ Լեռնային ձորակի անհարթության շնորհիվ, արհեստականորեն աճեցրած բուսական աշխարհի հյուսիսն ու հարավը ի մի էին հավաքվել։ Գայլուկով պարուրված կաղնին, եղևնին, վայրի տանձենին, թղկին, բալենին ու փշաթուփը, վայրի ընկուզենին ու արջածառը՝ մերթ միմյանց օգնելով, որ աճեն, մերթ իրար խեղդելով, մաղլցում էին սարն ի վեր՝ ստորոտից մինչև գագաթը։ Իսկ բարձունքում, հենց նրա կատարին, նրանց կանաչ ծայրերի հետ էին ձուլվում կալվածատիրոջ շենքերի կարմիր կտուրները, նրանց ետևում թաքնված խրճիթների ճեղունների փորաքանդակ կատարները, կալվածատիրոջ տան վերնահարկը՝ փորագրած պատշգամբով ու կիսաշրջանաձև մեծ լուսամուտով։ Եվ այդ բոլոր ծառերի ու կտուրների խմբի գլխին ամենից բարձր իր պսպղուն ոսկեզօծ հինգ գագաթներով վեր էր խոյանում գյուղական հնագույն եկեղեցին։ Նրա բոլոր գագաթներին ամրացված էին ընդթափ կտրված ոսկե խաչերը, նույն ձևի շղթաներով ամրացված, այնպես, որ հեռվից թվում էր, թե օդում կախված է շիկացած չերվոնեցից ձուլած, անհենարան մի հսկայական ոսկի։ Եվ այդ բոլորը շուռ տված ճևով, գագաթներով, կտուրներով, խաչերով դեպի վեր՝ հաճելիորեն արտացոլվում էին գետի ջրում, որտեղ անճոռնի փչակավոր ուռենիները, մի մասը՝ գետափին, մյուսները իրենց ճյուղերով ու տերևներով ջրի մեջ ընկղմված՝ կարծես թե ուշադրությամբ դիտում էին այդ հրաշագործ պատկերը՝ լպրծուն ապուկից ու վառ կանաչի հետ լողացող ջրաշուշաններից ազատ մնացած ջրի մեջ։

Ճեսարանը շատ դուրեկան էր, բայց վերևից ներքև, տան վերնահարկից դեպի հեռուները երևացող տեսարանն ավելի էր դուրեկան։ Ո՛չ մի հյուր և այցելու չէր կարող անտարբեր

կանգնել պատշգամբում։ Հիացմունքից նրա շունչը բռնվում էր և նա կարողանում էր միայն բացականչել. «Տե՛ր աստված, ի՛նչ լայնարձակություն է այստեղ»։ Անվերջ, անսահմանորեն բացվում էին տարածությունները, պուրակներով և ջրաղացներով հարուստ մարգագետիններից այն կողմ՝ մի քանի կանաչ գոտիներով զմրուխտին էին տալիս անտառները։ Անտառների այն կողմն արդեն մառախլապատվող օդի միջով դեղնին էին տալիս ավազուտները։ Եվ կրկին անտառներ, որոնք ծովի կամ հեռուները տարածված մշուշի պես կապույտ գույն էին ընդունել, և կրկին ավազուտներ՝ ավելի գորշ, բայց դեռևս դեղնավուն։ Հեռավոր հորիզոնում ձգված էին կավճային սարերը, որոնք սպիտակին էին տալիս նույնիսկ ամպամած օրերին, կարծես թե նրանց լուսավորում էր հավիտենական արևը։ Նրանց կուրացնող ճերմակության վրա, նրանց ստորոտում տեղ-տեղ փայլում էին կարծես ծխացող մառախլապատ թուխ-կապույտ բծեր։ Դրանք հեռավոր գյուղեր էին, որոնց, սակայն, մարդու հայացքն այլևս չէր կարողանում նշմարել։ Միայն արևի լույսի տակ պսպղացող եկեղեցու առկայծող ոսկե գագաթը հասկացնել էր տալիս, որ դա մարդաշատ մեծ գյուղ է։ Այդ բոլորը պարփակված էր անխռով անդորրության մեջ, որը չէին խախտում նույնիսկ տարածություններում կորչող օդային երգիչների հազիվ լսելի ձայների արձագանքները։ Պատշգամբում կանգնած հյուրը— մի խոսքով— մի երկու ժամ դիտելուց հետո ուրիշ ոչինչ չէր կարող ասել, բացի. «Տե՛ր աստված, ի՛նչ լայնարձակություն է այստեղ»։

Սակայն ո՞վ էր բնակիչն ու տերն այն գյուղի, որին, ասես մի անառիկ ամրոցի, հնարավոր չէր մոտենալ այստեղից, այլ պետք էր մոտենալ մյուս կողմից, որտեղ հյուրին քաղցրությամբ դիմավորում էին ցիրուցան կանգնած կաղնիները, պարզելով կարծես մտերմական գրկախառնության համար իրենց լայնորեն տարածված ճյուղերը և ուղևորում նրան մինչև այն տան ճակատը, որի կտուրը մենք տեսնում էինք ետևից, և որն այժմ կանգնած էր իր ամբողջ տեսքով, մի կողմում ունենալով ձեղուններով և փորաքանդակ կատարներով խրճիթները, իսկ մյուս կողմից իր խաչերով ու օդում կախված ընդթափ կտրված ոսկե շղթաներով պսպղացող եկեղե-

ցին։ Այդ ո՞ր երջանիկ մարդուն էր պատկանում այս հեռավոր անկյունը։

Տրեմալախանի գավառի կալվածատեր Անդրեյ Իվանովիչ Տենտետնիկովին՝ երեսուներեքամյա երիտասարդ բախտավոր մի մարդու, որը նույնիսկ ամուսնացած էլ չէր։

Բայց ո՞վ է նա, ի՞նչ է նա, ի՞նչ հատկություններ և ի՞նչ բարեմասնություններ տեր մարդ է։ Նրա հարևաններից իմացանք, ընթերցողուհիներս, հարևաններից։ Նրա հարևաններից մեկը՝ ճարպիկ մարդկանց քվին պատկանող պաշտոնաթող շտաբ-օֆիցեր-բրանդեր[1], որպիսիք այժմ իսպառ անհետանում են, նրա մասին արտահայտվում էր հետևյալ խոսքերով. «Ամենաբնական մի անասուն։ Տասը վերստի վրա ապրող մի գեներալ ասում էր. «Երիտասարդը հիմար չէ, բայց իր խելքին շատ է զոռ տալիս։ Ես նրան կարող էի օգտակար լինել, որովհետև կապեր ունեմ և Պետերբուրգում, և նույնիսկ՝ բարձրը...» Գեներալն իր խոսքը չէր ավարտում։ Կապիտան-ոստիկանը հետևյալ դարձվածքն էր վրա բերում. «Հենց վաղը կգնաս նրա մոտ՝ ապառիկը գանձելուս։ Նրա գյուղի մուժիկն այն հարցին, թե ինչպիսի՞ մարդ է իր տերը, ոչինչ չէր պատասխանում։ Կնշանակի՝ նրա մասին եղած կարծիքներն անբարենպաստ էին։

Անաչառ դատելով, նա վատ մարդ չէր, նա միայն պարապ մարդ էր։ Քանի որ աշխարհիս երեսին պարապ մարդիկ քիչ չեն, ապա ուրեմն ինչո՞ւ Տենտետնիկովն էլ պարապ մարդ չպարտի լինել։ Ի դեպ, ահա փորձի համար, բերենք նրա կյանքից մի օր, որը մեխանգամայն նման է մյուս բոլոր օրերին, և թող դրանից ընթերցողն ինքը դատի, թե ի՛նչպիսի՞ բնավորություն տեր է եղել Տենտետնիկովը և ի՛նչպես էր նրա կյանքը համապատասխանում իրեն շրջապատող գեղատեսիլ բնությանը։

Առավոտները նա արթնանում էր շատ ուշ և, մի փոքր բաթթրտանալով, երկար ժամանակ իր մահճակալի վրա մնում

---

1 Շտաբ-օֆիցերներ կոչվում էին գնդի ավագ սպաները՝ մայորից բարձր աստիճան ունեցող։ Բրանդերը հատուկ մի ադմինանավ էր՝ քշնամու նավերը հրկիզելու համար։ Շտաբ-օֆիցեր-բրանդեր բառը այստեղ գործ է ածված փոխաբերական իմաստով, այսինքն՝ կամքատար, ադմկարար։

էր նստած, տրորելով աչքերը։ Նվ որովհետև աչքերը, դրժբախտաբար, փոքր էին, ապա դրանց տրորելը տեղի էր ունենում չափազանց երկար ու այդ ամբողջ գործողության ժամանակ դռան առջև կանգնած էր լինում նրա ծառան՝ Միխայլոն, լվացվելու կոնքով ու երեսսրբիչով։ Կանգնում էր այդ խեղճ Միխայլոն մեկ ժամ, երկու ժամ, հետո վերադառնում էր խոհանոց, ապա կրկին գալիս, տերը, նստած մահճակալի վրա, դեռ շարունակում էր տրորել աչքերը։ Վերջապես, նա բաթձրանում էր անկողնից, լվացվում, հագնում խալաթը և մտնում սեղանատուն, որպեսզի այնուհետև խմի թեյ, սուրճ, կակաո և, նույնիսկ՝ նոր կթած կաթ, բոլորից մեկ-մեկ կում անելով, անխնա կերպով բրդելով հացը և անգթորեն սպանելով իր շուրջը ծխամորճի մոխիրը։ Նվ երկու ժամ մնում էր նստած թեյասեղանի առաջ։ Դա դեռ բավական չէր՝ նա վերցնում էր նաև արդեն սառած գավաթն ու մոտենում դեպի բակը դուրս նայող լուսամուտին, իսկ լուսամուտի առջև ամեն օր տեղի էր ունենում հետևյալ տեսարանը։

Նախ և առաջ գոռգոռում էր բուֆետապանի պաշտոնը կատարող ճորտ Գրիգորին՝ հետևյալ արտահայտություններն ուղղելով տնտեսուհի Պերֆիլևնային.

— Խառնակի՛չ դու հոգի, չնչի՛ն արարած։ Լավ կանես, որ դու, գարշելիդ, լռե՛ս։

— Իսկ ահա այս մեկը չե՞ս ուզում,— ճչաց չնչին սպասարածը, կամ Պերֆիլևնան, կուկիշ[1] ցույց տալով։ Նա կոշտ ու կոպիտ էր, չնայած որ մեծ սեր ուներ դեպի իր հսկողության տակ գտնվող պահարաններում եղած չամիչը, պաստեղն ու այլ քաղցրավենիքը։

— Դու գործակատարի հետ էլ կգովուտես, նկուղային ոչնչություն,— աղաղակում էր Գրիգորին։

— Գործակատարն էլ քեզ նման գողի մեկն է։ Կարծում ես, թե պարոնը ձեզ չի՞ ճանաչում. նա ահա այստեղ է, ամեն բան լսում է։

— Որտե՞ղ է պարոնը։

— Ահա նա, նստած է լուսամուտի առաջ, նա ամեն բան տեսնում է։

---

1 Անվայել շարժում՝ ծրեք մատներով։

Եվ իրոք, պարոնը նստած էր լուսամուտի առջև և տես-
նում էր բոլորը։

Ի լրումն այդ սոդոմի, ճիչ-աղաղակ էր բարձրացնում մո-
րից ապտակ կերած բակի երեխաներից մեկը, Վնգստում էր
պոչի վրա նստած սրադունչ, որձ, բարակ շունը, որին եռաց-
րած ջրով դաղել էր խոհանոցից դուրս նայած խոհարարը։ Մի
խոսքով՝ ամենուրեք լսվում էր անտանելի ճիչ ու աղաղակ,
լաց ու ոռնոց։ Պարոնը բոլորը տեսնում էր ու լսում։ Եվ մի-
այն այն ժամանակ, երբ այդ բոլորն այնքան անտանելի էր
դառնում, որ խանգարում էր նույնիսկ ո՛չ մի բանով չզբաղ-
վելուն, նա մարդ էր ուղարկում զգուշացնելու, որ կամաց
աղմկեն։

Ճաշից երկու ժամ առաջ նա հեռանում էր իր առանձնա-
սենյակը, այն հաշվով, որպեսզի լուրջ զբաղվի շարադրու-
թյամբ, որի նպատակն էր ընդգրկել ամբողջ Ռուսաստանը
բոլոր տեսակետներից՝ քաղաքացիական, քաղաքական, կրո-
նական, փիլիսոփայական, լուծել ժամանակի կոչից նրան
առաջադրված դժվարին խնդիրներն ու հարցերը և պարզ կեր-
պով բնորոշել Ռուսաստանի ապագան, մի խոսքով՝ բոլորն
այնպես ու այն ձևով, ինչպես սիրում է իրեն առաջադրել ժա-
մանակակից մարդը։ Սակայն այդ վիթխարի ձեռնարկումը
մեծ մասամբ սահմանափակվում էր սոսկ կշռադատումով՝
կրծոտվում էր փետրագրիչը, թղթի վրա հանդես էին գալիս
նկարներ, ապա այդ բոլորը մի կողմ էր դրվում, դրանց փո-
խարեն վերցվում էր գիրք, որը վայր չէր դրվում մինչև ճաշ։
Այդ գիրքն ընթերցվում էր սուպի, սոուսի, տապակածի և
նույնիսկ կարկանդակի հետ զբաղընթաց, այնպես, որ դրա հե-
տևանքով կերակուրների մի մասը սառչում էր, իսկ մյուսնե-
րը ետ էին տարվում բոլորովին ձեռք չտված։ Այնուհետև այդ
բոլորին հաջորդում էին ծխամորճն ու սուրճը, ինքն իր հետ
չախմախ խաղալը, իսկ ի՞նչ էր արվում այնուհետև՝ մինչև
ընթրիքը, ճիշտն ասած, դժվար էր նույնիսկ որոշել։ Ըստ եր-
ևույթին, պարզապես ոչինչ չէր արվում։

Եվ այդ ձևով ամբողջ աշխարհում մեն-մենակ իր օրն էր
անցկացնում երեսունհերթամյա երիտասարդը, իր տանն ան-
շարժ նստած, խալաթը հագին ու առանց փողկապի։ Նա զբոս-
նելու, քայլելու տրամադրություն չունեք, չէր ուզում նույնիսկ

տեղից վեր կենալ, չէր ցանկանում նույնիսկ բաց անել լուսամուտները, որպեսզի թարմ օդ մտնի սենյակը, և ամեն մի այցելուի մեջ հիացմունք առաջացնող գյուղի հիանալի տեսքը կարծես թե գոյություն չուներ իրեն՝ տիրոջ համար։ Դրանից ընթերցողը կարող է եզրակացնել, որ Անդրեյ Իվանովիչ Տենտետնիկովը պատկանում էր այն մարդկանց դասին, որոնց Ռուսիայում վերջ չկա, որոնց անունն էր առաջներում՝ ալարկոտներ, թամբալներ, միջիլներ և որոնց ներկայումս, ճիշտն ասած, չգիտեմ, թե ինչ անուն տամ։ Արդյոք ծնվո՞ւմ են արդեն նման բնավորությունները, թե հետո են գոյանում, որպես մարդուն դաժանորեն օղակող տխուր հանգամանքների ծնունդներ։ Դրան պատասխանելու փոխարեն լավ կլինի շարադրել նրա դաստիարակության և մանկության պատմությունը։

Թվում էր՝ ամեն ինչ հանգում էր այն բանին, որ նրանից ստացվեր կանոնավոր մի մարդ։ Տասներկու տարեկան սրամիտ, կիսամելամաղձոտ հատկությամբ վատառողջ տղան ընդունվեց այն ուսումնական հաստատությունը, որի պետն էր այն ժամանակ մի արտասովոր մարդ։ Պատանիների կուռք, գաստիարակների հիացմունք, անզուգական Ալեքսանդր Պետրովիչը օժտված էր մարդու խառնվածքը ընկալելու հոտառությամբ։ Որքա՜ն լավ գիտեր ռուս մարդու հատկությունները։ Որքա՜ն լավ էր ճանաչում երեխաներին։ Ինչպե՜ս էր նա մարդկանց առաջ մղում։ Չկար մի չարաճճի, որը չարությունն անելուց հետո չներկայանար նրան ու լիովին չվճռանչեր իր կատարած արարքի համար։ Դա քիչ է, նա ստանում էր խիստ...[1] բայց պետի մոտից հեռանում էր ոչ թե քիթը կախ, այլ բարձր պահած։ Ինչ-որ մի խրախուսիչ բան կար, որ կարծես թե ասում էր. «Առա՛չ։ Շո՛ւտ ոտքի կանգնիր, չնայած որ վայր ես ընկել»։ Լավ վարքի մասին նա սաների մոտ խոսք անգամ բաց չէր անում։ Սովորաբար նա ասում էր. «Ես խելք եմ պահանջում և ոչ թե որևէ այլ բան։ Ով մտածում է այն մասին, որ դառնա խելոք մարդ, նա չարություն անելու ժամանակ չի ունենա, չարությունը պետք է անհետանա ինքնիրեն»։ Եվ իրոք, չարություններն անհետանում

1 Ձեռագիր բնագրում չի ընթերցվում։ [գիտողություն]

էին իրենք-իրենց։ Ընկերների արհամարհանքին էր արժանանում նա, ով չէր ձգտում լինել...[1] Մեծահասակ ավանակներն ու հիմարներն անչափահասներից ստացած ամենավիրավորական մականունները ստիպված էին կուլ տալ և չէին համարձակվում նրանց մազին անգամ դիպչել։ «Դա արդեն չափից դուրս է,— ասում էին շատերը,— խելացիները կդառնան ամբարտավան մարդիկ»։ «Ո՛չ, դա չափից դուրս չի,— ասում էր նա,— անընդունակներին ես երկար չեմ պահում, նրանց համար մեկ կուրսն էլ է բավական, իսկ խելացիների համար ուրիշ կուրս ունեմ»։ Շատ չարաճճիություններ նա չէր զբաղում, դրանց մեջ տեսնելով հոգեկան հատկությունների զարգացման սկիզբը և ասում էր, թե դրանք իրեն պետք են, ինչպես որ մարմնի ցանը բժշկին, որպեսզի հետագայում նա համոզված իմանա, թե իրականում ինչ հիվանդությամբ է տառապում մարդը։

Որքա՞ն էին նրան սիրում բոլոր տղաները։ Ո՛չ, երբեք նման մտերմություն չի եղել երեխաների մեջ իրենց ծնողների նկատմամբ։ Ո՛չ, նույնիսկ գրավիչ հրապուրանքների խելացնոր տարիներին այդ աստիճան ուժեղ չի լինում անշեջ կիրքը, ինչպես ուժեղ էր նրա նկատմամբ եղած սերը։ Երախտապարտ սանը մինչև մահ, մինչև իր վերջին օրերը, բարձրացնելով գավաթը, արդեն շիրիմում վաղուց հանգչող իր հրաշալի դաստիարակի ծննդյան օրը, մնում էր աչքերը փակ, քարացած վիճակում և արտասվում էր նրան հիշելով։ Նրա նույնիսկ ամենաաննշան խրախուսանքը սրտի բրիիո էր առաջ բերում, բերկրանք և տրոփյուն, բոլորին գերազանցելու փառասիրական ցանկություն։ Պակաս ընդունակներին նա երկար չէր պահում. նրանց համար ուներ շատ կարճատև կուրս։ Սակայն ընդունակները պարտավոր էին նրա մոտ անցնել կըրկնակի ուսում։ Եվ վերջին դասարանը, որ գոյություն ուներ միայն ընտրյալների համար, ոչ մի բանով նման չէր մյուս հաստատություններում գոյություն ունեցող դասարաններին։ Այստեղ միայն նա սանից պահանջում էր այն ամենը, ինչ մյուսները անխոհեմ կերպով [պահանջում] են երեխաներից, այն բարձրագույն խելքը, որը կարողանում է չծաղրել, բայց դի-

[1] Բնագրում անընթեռնելի [լավ]։

մանալ ամեն մի ծաղրանքի, ներել հիմարին և չզայրանալ ու համբերությունը չկորցնել, ոչ մի [դեպքում] վրեժ չլուծել ու մնալ անխռով հոգու վեհ անդորրության մեջ։ Եվ այն ամենը, ինչ ընդունակ էր մարդուն դարձնելու հաստատուն տղամարդ, այստեղ գործի էր դրված և ինքն անձամբ սաների վրա կատարում էր անընդհատ փորձեր։ Օ՜, որքան լավ գիտեր կյանքի գիտությունը։

Պետրովիչը շատ դասատուներ չուներ։ Գիտելիքների մեծ մասը ինքն էր ավանդում։ Առանց պեդանտական տերմիններ-ի, փքուն ձևակերպումների ու հայացքների նա կարողանում էր հաղորդել գիտելիքի բուն ոգին այնպես, որ երեխային էլ նույնիսկ պարզ էր դառնում, թե ինչի համար էր այդ գիտությունը նրան պետք։ Գիտելիքներից ընտրված էր միայն այն, ինչ ընդունակ էր մարդուն դարձնել իր երկրի քաղաքացին։ Դասախոսությունների մեծ մասը բաղկացած էր այն պատմություններից, թե ինչ էր սպասում պատանուն ապագայում, և նրա ասպարեզի ամբողջ հորիզոնը այնպես էր կարողանում ուրվագծել, որ դեռ աշակերտական նստարանի վրա գտնվող պատանին մտքերով ու հոգով ապրում էր այնտեղ՝ ծառայության վայրում։ Ոչինչ չէր թաքցնում. բոլոր դառնություններն ու խոչընդոտները, որոնք ծառանում են մարդու ճանապարհին, նրան սպասող բոլոր պատրանքներն ու հրապուրանքները բացահայտում էր նրանց առջև իրենց ամբողջ մերկությամբ, առանց որևէ բան թաքցնելու։ Նրան ամեն բան հայտնի էր, կարծես թե ինքն անձամբ փորձել էր այդ բոլոր կոչումներն ու պաշտոնները։ Արդյո՞ք այն պատճառով, որ ուժեղ կերպով զարգացել էր փառասիրությունը, թե այն պատճառով, որ արտասովոր դաստիարակի աչքերումն իսկ կար պատանուն ոգեշարժող, ուրս մարդուն ծանոթ և նրա զգայուն բնավորության վրա այդպիսի հրաշքներ գործող առա՞ջ բարը, բայց պատանին հենց սկզբից որոնում էր միայն դժվարություններ, անզուսպ տենչով ձգտում էր գործել միայն այնտեղ, ուր դժվարություններ, ավելի շատ խոչընդոտներ կային, որտեղ կարիք էր զգացվում ցույց տալ հոգու մեծ ուժը։ Ջլերն էին ավարտում այդ կոչերը, սակայն նրանք վառոդով մրկված մարդիկ էին։ Ծառայության մեջ նրանք դիմացան ամենաանկայուն տեղերում, մինչդեռ մյուսները և

նրանցից ամենախելացիները, չհանդուրժելով մանր, անձնական անախորժությունները, լքեցին ամեն բան, կամ հիմարացած, համակված ծուլությամբ, խենթացած ու վհատված ընկան կաշառակերների ու խարեբաների ձեռքը։ Բայց նրանք չընկճվեցին ու ճանաչելով թե՛ կյանքը, թե՛ մարդկանց և արդեն իմաստություն ձեռք բերած՝ ներգործեցին նույնիսկ վատ մարդկանց վրա։

Փառասեր տղայի վառվռուն սիրտը սկսում էր երկար բաբախել սոսկ այն մտքից միայն, թե Ֆրեն, վերջապես, կհաջողվի ընկնել այդ բաժանմունքը։ Թվում էր՝ ի՞նչ կա ամենից լավ, քան այդ դաստիարակը մեր Տենտետնիկովի համար։ Բայց արի տես, որ հենց այն ժամանակ, երբ նա փոխադրվել էր ընտրյալների այդ կուրսը, որին նա այդչափ ձգտում էր, արտաքո կարգի դաստիարակը հանկարծակի [մեռավ]։ Օ՛, դա ինչպիսի հարված էր նրա համար, որքա՜ն սարսափելի էր այդ առաջին կորուստը։ Ամեն բան դպրոցում փոխվեց։ Ալեքսանդր Պետրովիչի փոխարեն դպրոց եկավ մի ոմն Ֆեոդոր Իվանովիչ։ Նա իսկույն իր ուշադրությունը բևեռեց ինչ-որ արտաքին կարգ ու կանոնի վրա. սկսեց երեխաներից պահանջել այնպիսի բաներ, ինչ կարելի էր պահանջել միայն մեծահասակներից։ Նրանց ազատ համարձակության մեջ նա դիտեց ինչ-որ սանձարձակ բան։ Եվ ահա, կարծես թե, ի հեճուկս իր նախորդի, առաջին օրից նա հայտարարեց, որ իր համար խելքն ու առաջադիմությունները նշանակություն չունեն, որ նա հետևելու է միայն լավ [վարքին]։ Տաբօրինակ է՝ Ֆեոդոր Իվանովիչը այնպես էլ չկարողացավ լավ վարքի բերել նրանց։ Առաջ եկան դաղտնի չարաճճիություններ։ Ցերեկով ամեն բան ընթանում էր հնազանդ ու համերաշխ, իսկ գիշերները սկսվեցին խրախճանքներ։

Գիտելիքների հետ էլ տեղի ունեցան-ինչ-որ տարօրինակ բաներ։ Հրավիրվեցին նոր դասատուներ, նոր հայացքներով ու նոր տեսակետներով։ Ուսկնդիրներին ողողեցին բազմաթիվ նոր տերմիններով ու բառերով, ցույց տվին նրանք և՛ տրամաբանական կապը, և՛ նոր հայտնագործումների հետաքրքրությունը, և՛ անձնական ոգևորության խանդը, բայց, ավա՜ղ, ավանդվող գիտելիքների մեջ կյանք չկար։ Մեռյալ գիտություն, որը նրանց շուրթերին լեշի համ ուներ։ Մի խոսքով,

ամեն ինչ տակնուվրա եղավ։ Ջքացավ հարգանքը հանդեպ պետերն ու իշխանությունը, սկսեցին ծաղրել և՛ դաստիարակներին, և՛ դաստատուներին։ Դիրեկտորին սկսեցին անվանել Ծեղկա, Բուլկա և ուրիշ այլ մականուններով։ Սկսվեց անառակություն՝ բնավ ոչ մանկական, այնպիսի բարքեր առաջացան, որ հարկ եղավ շատերին ազատել ու վռնդել։ Երկու տարում հաստատությունը դարձավ անճանաչելի։

Անդրեյ Իվանովիչը խոնարհ բնավորության տեր մարդ էր։ Նրան չէին կարող գայթակղեցնել ոչ ընկերների գիշերային խրախճանքները, որ կատարում էին դիրեկտորի բնակարանի հենց լուսամուտների առաջ ձեռք գցած մի ինչ-որ տիկնոջ հետ, ոչ էլ նրանց սրբապղծությունը, և դա զուտ այն պատճառով, որ ունեին ոչ այնքան խելացի տերտեր։ Ո՛չ, նրա հոգին քնի մեջ էլ լսում էր իր երկնային ծագումը։ Նրան չկարողացան հրապուրել, բայց նա քիթը կախեց։ Փառասիրությունն արդեն գրգռված էր, իսկ գործունեության ասպարեզ չուներ։ Լավ կլիներ, որ նրան չգրգռեին։ Նա ունկնդրում էր ամբիոնների վրա բորբոքվող պրոֆեսորներին, սակայն հիշում էր նախկին դաստիարակին, որը առանց տաքանալու կարողանում էր խոսել հասկանալի լեզվով։ Ինչպիսի առարկաներ և ինչպիսի կուրսեր էր, որ նա չէր լսում։ Բժշկությունը, փիլիսոփայությունը և նույնիսկ իրավունքը և մարդկության ընդհանուր պատմությունը այնպիսի մեծ չափերով, որ պրոֆեսորը երեք տարվա ընթացքում կարողացավ դասախոսել միայն ներածական մասը և գերմանական ինչ-որ քաղաքային համայնքների զարգացումը, և աստված գիտե, թե էլ ինչ էր նա լսում։ Բայց այդ բոլորը նրա գլխի մեջ մնում էին տարօրինակ աշլանդակ պատառիկներով։ Իր բնածին խելքի շնորհիվ նա հասկանում էր, որ առարկաները չպետք է այդպես ավանդվեին, իսկ ինչպես, չգիտեր։ Նվ հաճախ էր նա հիշում Ալեքսանդր Պետրովիչին, այն աստիճան էր նա տխրում, որ չգիտեր, թե վշտից ուր կորչի։

Բայց երիտասարդությունը երջանիկ է նրանով, որ ունի ապագա։ Ավարտման օրերը մոտենալուն զուգընթաց, նրա սիրտը տրոփում էր։ Նա ինքն իրեն ասում էր. «Չէ՞ որ սա դեռ կյանքը չէ, սա դեռ կյանք մտնելու նախապատրաստությունն է։ Իսկական կյանքը ծառայության մեջ է, այնտեղ քեզ սըխ-

բազմաթիվ գործունեություններ են սպասում։ Ծով առանց նայելու սեփական հրաշալի անկյանը, որ հիացմունք էր պատճառում ամեն մի հյուր-այցելուի, առանց իր ծնողների աճյունին հրաժեշտ տալու, բոլոր փառասերների սովորության համաձայն, սլացավ Պետերբուրգ, ուր, ինչպես հայտնի է, Ռուսաստանի բոլոր ծայրերից ձգվում է մեր վառվռուն երիտասարդությունը՝ ծառայել, փայլել, պաշտոնում առաջ գնալ, կամ պարզապես քեզ կերպով յուրացնել հասարակական խաբուսիկ, անգույն, սառույցի նման անկենդան կրթությունը։ Սակայն հենց սկզբից Անդրեյ Իվանովիչի փառասիրական ձգտումը կասեցրեց նրա հորեղբայրը, իսկական պետական խորհրդական Օնուֆրիյ Իվանովիչը։ Նա հայտարարեց, որ գլխավորը լավ ձեռագիր ունենալն է, այլ ոչ քե որևէ այլ բան, և. առանց դրա ո՛չ մինիստր կդառնաս, ո՛չ պետական անձ։

Մեծ դժվարությամբ և հորեղբոր հովանավորության շնորհիվ նա, վերջապես, ընդունվեց մի ինչ-որ դեպարտամենտ։ Երբ նրան ներս տարան մի փառահեղ, լուսավոր դահլիճ՝ պարկետազարդ հատակով ու լաքած գրասեղաններով, որոնք այնպիսի տպավորություն էին թողնում, կարծես քե այստեղ բազմում են ամբողջ պետության բախտը տնօրինող պետական առաջնակարգ իշխանավոր մարդիկ, և [նա] տեսավ գեղեցկադեմ պարոնների անհամար բազմությունը, որոնք, գլուխները մի կողմ թեքած, փետրագրիչները ճոճոցնելով գրում էին, և իրեն նստեցրին սեղանի առաջ, տեղն ու տեղը առաջարկելով արտագրել մի ինչ-որ գրություն, որը կարծես դիտավորյալ կերպով ուներ չնչին բովանդակություն (խոսքը վերաբերում էր երեք ռուբլու շուրջը կես տարի տևող մի գրագրության), մի արտասովոր տարօրինակ զգացում համակեց անփորձ պատանուն՝ չլինի քե հանկարծ սխալի համար նրան բարձր դասից իջեցնեն ցածր դասը։ Նրա շուրջը նստած պարոններն այնքա՜ն նման թվացին աշակերտներին։ Ի լրումն այդ նմանության, նրանցից ոմանք կարդում էին թարգմանական մի հիմար վեպ, տեղավորելով այդ վեպը քննվող գործի մեծածավալ թղթերի մեջ, իբր զբաղված էին բուն աշխատանքով, և որոնք միևնույն ժամանակ պետի երեվալուն պես՝ ցնցվում էին։ Որքա՜ն այս բոլորը տարօրինակ թվաց նրան, որքա՜ն նախկին պարապմունքները տարբերվում

էին ներկա աշխատանքից, ծառայության նախապատրաստվելն ավելի լավ է, քան բուն ծառայությունը։ Նա կարոտ զգաց դեպի դպրոցը։ Ով հանկարծ, կարծես կենդանացած, նրա աչքի առջև երևան եկավ Ալեքսանդր Պետրովիչը, և քիչ էր մնացել, որ լաց լիներ։ Սենյակն սկսեց պտտվել, իրար խառնվեցին և՛ պաշտոնյաները, և՛ սեղանները, նրա աչքերը մթնեցին ու հազիվ նա իրեն զսպեց։ «Ո՛չ,— ուշքի գալով՝ մտածեց ինքնիրեն,— գործի անցնեմ, որքան էլ այն սկզբում փոքր թվա»։ Քաջալերվելով հոգով ու սրտով, նա որոշեց մյուսների նման շարունակել իր ծառայությունը։

Որտե՞ղ չկա վայելք ու հաճույք։ Դրանք ապրում են նաև Պետերբուրգում, չնայած նրա խստաշունչ ու մառախլապատ արտաքինին։ Փողոցներով ճարճատում է երեսուն աստիճանանոց ցասկոտ սառնամանիքը, ոռնում է հյուսիսի ծնունդ կախարդուհի բուքը, ծածկելով մայթերը, կուրացնելով մարդկանց աչքերը, ձնակալելով մարդկանց մուշտակի օձիքները, բեղերը և անասունների բրդոտ մռութները, սակայն դուրեկան է և գեղեցիկ, երբ ճախրող փաթիլների միջով, վերևում՝ չորրորդ հարկերից մեկում, նշմարվում է մի լուսավորված պատուհան՝ դուրալի, փոքր սենյակի, որտեղ ճարպամոմերի համեստ լույսի մեջ, ինքնաեռի թշշոցի տակ տեղի է ունենում սիրուն ու հոգին չերմացնող զրույց, ընթերցվում է ռուս ոգեշունչ պոետի պայծառ էջը, որոնցով աստված պարգևել է իր Ռուսաստանին, և այնպես վսեմ ու վառվռուն է թպրտում պատանու երիտասարդ սիրտը, ինչպես չի լինում նույնիսկ միջօրյա երկնքի տակ։

Շատ չանցած Տենտետնիկովը ընտելացավ իր ծառայությանը, սակայն այդ ծառայությունը նրա համար չդարձավ առաջին գործն ու նպատակը, ինչպես նա ենթադրում էր սկզբում, այլ մի ինչ-որ երկրորդական բան։ Ծառայությունը նրա համար հանդիսացավ իր ժամանակը դասավորելու միջոց, հարկադրելով նրան ավելի գնահատել մնացած րոպեները։ Հորեղբայրը՝ իսկական պետական խորհրդականը, արդեն սկսում էր կարծել, թե իր եղբոր որդուց պիտանի մարդ դուրս կգա, սակայն եղբոր որդին հանկարծ գործը փչացրեց։ Անդրեյ Իվանովիչի բարեկամների թվում, որ բավականաչափ շատ էին, եղան երկուսը, որոնք, ինչպես ասում են, դառնա-

ցած մարդիկ էին։ Նրանք այն անհանգիստ տարօրինակ բնավորության տեր մարդկանցից էին, որ սառնասրտորեն չեն կարող հանդուրժել ոչ միայն անարդարություն, այլ նույնիսկ այն ամենը, ինչ իրենց աչքում թվում է անարդարություն։ Հիմնականում բարեսիրտ, սակայն հենց իրենք իրենց գործողությունների մեջ վայրիվերո, պահանջելով իրենց նկատմամբ ներողամտություն և միևնույն ժամանակ մյուսների հանդեպ անհանդուրժողություն, նրանք ուժեղ կերպով ազդեցին Տենտեևնիկովի վրա և՛ կրակոտ խոսքերով, և՛ հասարակության դեմ ուղղված վեհ զայրույթով, որոնք նրա մեջ արթնացրին ներվայնություն ու ցասման ոգի և ստիպեցին նկատել այն բոլոր մանրուքները, որոնց վրա նա սկզբում չէր էլ մտածում ուշադրություն դարձնել։ Ֆեոդոր Ֆեոդորովիչ Լենիցինը՝ հոյակապ դահլիճներում տեղավորված բաժանմունքներից մեկի պետը, հանկարծ նրան դուր չեկավ։ Նա սկսեց որոնել նրա մեջ անսպառ թերություններ։ Նրան թվաց, թե բաբձրաստիճանավորների հետ խոսելիս ամբողջովին հառնում էր սիրտ խառնելու քաղցրություն ունեցող մի ինչ-որ շաքար և՝ քացախ, երբ ստորագրյալն էր նրան դեմում, թե իբր՝ բոլոր փոքրոգի մարդկանց նման, հաշվի չէր առնում նրանց, ովքեր առն օրերին նրան չէին ներկայանում շնորհավորանքներով, վրեժ էր լուծում նրանցից, որոնց անունները բացակայում էին շվեյցարի մոտ եղած շնորհավորանքների ցուցակում։ Այդ խակ պատճառով նա ներվային գարշանք զգաց դեպի Լենիցինը։ Մի ինչ-որ չար ոգի մղում էր նրան որևէ անախորժ քայլ կատարել Ֆեոդոր Ֆեոդորովիչի հանդեպ։ Նա այդ րանին ձգտում էր մի տեսակ առանձնահատուկ հաճույքով և նպատակին հասավ։ Մեկ օր նա Լենիցինի հետ այնքան բորբոքված խոսեց, որ մեծավորի անունից նրան հայտարարվեց՝ կամ ներողություն խնդրել, կամ քո հրաժարական տալ։ Նա հրաժարական տվեց։ Հորեղբայրը՝ խակական պատճառով խորհրդակցեց, եկավ նրա մոտ սարսափահար ու աղերսանքով. «Ի սեր քրիստոսի, ողորմած եղիր, Անդրեյ Իվ՛անովիչ, այդ ի՞նչ ես անում։ Թողնել այդպես ձեռնտու սկսած ասպարեզը գուտ այն պատճառով, որ հանդիպել ես քո ճաշակին անհամապատասխան պետի՞։ Ողորմա՛ծ եղիր։ Ի՞նչ ես անում, ի՞նչ։ Թե՛ր դրան նայենք, ոչ մի ծառայող չի մնա. խելքի եկ, դեն

նետիր գոռոզությունը, ինքնասիրությունը, գնա և բացատրվի՛ր նրա հետ»։

— Հարցն այդ չէ, հորեղբա՛յր,— ասաց եղբոր որդին։— Դժվար չի նրանից ներողություն խնդրելը։ Մեղավորը ես եմ. նա պետ էր և հարկ չկար նրա հետ այդ ձևով խոսել։ Բայց խնդիրը հետևյալն է։ Ես այլ պաշտոն ունեմ. երեք հարյուր շունչ գյուղացի, կալվածքը քայքայված դրության մեջ է, կառավարիչն էլ հիմարի մեկն է։ Պետությունը մեծ վնաս չի կրի, եթե իմ փոխարեն գրանցնյակում թղթեր արտագրելու համար նստի մեկ ուրիշը, բայց մեծ վնաս կլինի, եթե երեք հարյուր մարդ հարկեր չվճարեն։ Ես, ի՞նչ եք կարծում, մի կալվածատեր եմ, որ... ծառայությունը... եթե ես հոգ տանեմ ինձ վստահված մարդկանց պահպանելու, խնամելու և նրանց վիճակը բարելավելու մասին և պետությանը ներկայացնեմ երեք հարյուր փութաջան, ժուժկալ, աշխատասեր հպատակ, ապա ինչո՞վ իմ պաշտոնը վատ կլինի բաժանմունքի մի ինչոր լճենիցինի մոտ պաշտոն վարելուց։

Իսկական պետական խորհրդականի բերանը զարմանքից բաց մնաց։ Բառերի այդպիսի հեղեղ նա չէր սպասում։ Քիչ խորհելուց հետո նա հետևյալ կերպ սկսեց.

— Բայց, համենայն դեպս... դե, ինչպե՞ս կլինի... ինչպե՞ս քեզ թաղես գյուղում։ Ի՞նչ միջավայր կարող է լինել դռեհիկ մուժիկների շրջանում։ Ախտեղ, այնուամենայնիվ, փողոցում կհանդիպես գենեթալի, իշխանի։ Ինքդ ես կանցնես որևէ... ասենք... մեկի կողքով, դե, գազի լուսավորություն, արդյունաբերական Եվրոպա, իսկ այնտեղ ինչ-որ աչքդ տեսնի՝ կամ մուժիկ է, կամ տգետ կինարմատ։ Ինչի՞ համար, ի՞նչ պատճառով ես ուզում ամբողջ կյանքդ դատապարտես տգիտության։

Սակայն հորեղբոր եռանգուն հորդորանքները չազդեցին եղբորորդու վրա։ Գյուղն սկսում էր ներկայանալ մի տեսակ անդորր հանգրվան, իղձերն ու մտահղացումները սնուցանող, օգտակար գործունեության մի եզակի ասպարեզ։ Նա արդեն պրպտել ու ճարել էր նաև գյուղատնտեսության վերաբերյալ նորագույն գրքեր։ Մի խոսքով, այդ գրույցից մեկ-երկու շաբաթ անց, նա արդեն գտնվում էր այն վայրերի շրջակայքում, որտեղ անցել էր նրա մանկությունը, ոչ հեռու այն հիանալի

անկյունից, որով անչափ հիանում էր ամեն մի հյուր և այցելու։ Նրա մեջ արթնացավ նոր զգացմունքի բրթիռ։ Սրտի խորքում սկսեցին արթնանալ նախկին, վաղուց իրենց զգացնել չտված տպավորություններ։ Նա շատ վայրեր արդեն իսպառ մոռացել էր, ու իրրև մի նորեկ՝ հետաքրքրությամբ դիտում էր հիանալի տեսարանները։ Եվ ահա, չգիտես թե ինչու, հանկարծ բաբախեց նրա սիրտը։ Իսկ երբ ճանապարհն սկսվեց նեղ ձորով ձգվել դեպի հսկայական, խուլ անտառի խորքը, ու նա տեսավ վերևում ու ներքևում, իրենից վերև ու իրենից ներքև եղևնու, ծփիր ու սև կաղամախիի հետ փոփոխակի բուսած և բարդիների գագաթից էլ բարձր երեք հարյուր տարվա կաղնիները, որոնց բները երեք մարդ հազիվ էին գրկում, և այն հարցին, թե՝ «ո՞ւմն է այս անտառը», նրան ասացին՝ «Տենտետնիկովինը», երբ դուրս գալով անտառից, ճանապարհը սլացավ մարգագետիններով, բարդիների պուրակի, ջահել ու բազմամյա ուռենիների ու վազերի կողքով, դիմացը ունենալով հեռվում ձգվող բարձրություններ, և երկու կամուրջներով տարբեր տեղերից անցավ միևնույն գետը, թողնելով վերջինս իրենից մերթ աջ, մերթ ձախ, և այն հարցին, թե «ո՞ւմն են այս մարգագետիններն ու ողողված հողերը» — նրան պատասխանեցին՝ «Տենտետնիկովինը», երբ, այնուհետև, զառիվերն անցնելով՝ ճանապարհն ընթացավ հարթ բարձրության վրայով մի կողմից դեռ չհնձված հացահատիկի՝ ցորենի, հաճարի և գարու արտերի կողքով, մյուս կողմից նախկինում իր շրջած բոլոր տեղերով, որոնք բոլորն էլ հանկարծ երևացին կրճատված հեռավորության վրա, և երբ ճանապարհն այնուհետև աստիճանաբար մթնելով՝ մտնում էր ու ապա բոլորովին մտավ ճյուղերը լայնորեն տարածած ծառերի ստվերի տակ, որոնք կանաչ գորգի վրայով ցիրուցան ձգված էին մինչև գյուղը, և երբ հանկարծ մերթ ընդ մերթ Երևացին մուժիկների տարբեր խրճիթներն ու կալվածատիրոջ քարե շենքերի կարմիր կուրները, մեծ դաստակերտն ու հնագույն եկեղեցին, երբ շողացին ոսկեզօծ գագաթները, երբ տենդորեն բաբախող սիրտը առանց հարց տալու էլ գիտեր, թե ուր է եկել, անբնդհատ կուտակվող զգացմունքները վերջապես դուրս պրծան բացականչությամբ՝ «Ի՞նչ հիմարն էի մինչև օրս։ Ինձ բախտ է վիճակվել լինել երկրա-

ջին դրախտի տերը, իսկ ես դարձել էի անկենդան թղթեր մրոտող գերի։ Սա.անալով կրթություն, լուսավորվելով, կուտակելով գիտելիքների պաշար, որոնք անհրաժեշտ են հպատակների մեջ բարի գործեր տարածելու համար, ամբողջ նահանգի վիճակը բարելավելու համար, կալվածատիրոջ վրա ընկած բազմազան պարտականությունները կատարելու համար, որովհետև կալվածատերը, միևնույն ժամանակ, հանդիսանում է և՛ դատավոր, և՛ կարգավորիչ, և՛ կարգ ու կանոնի վերահսկող, մինչդեռ ես, այդ տեղը զիջելով տգետ կառավարչին, ինքս գերադասել եմ վարել բացակա մարդկանց գործերը, որոնց կյանքումս չեմ էլ տեսել, որոնց թե՛ բնավորությանը և թե՛ հատկություններին ծանոթ չեմ, գերադասել այն նահանգների ու գավառների թղթային, անիրական դեկավարությունը, որոնք հազարավոր վերստերով հեռու են, ուր ես ոտք անգամ չեմ դրել և որտեղ կարող եմ կատարել բազմաթիվ անհեթեթություններ ու հիմարություններ»։

Միևնույն ժամանակ նրան ապաստում էր և մի ուրիշ տեսարան։ Լսելով, որ իրենց տերը ժամանել է, մուժիկները հավաքվեցին նախամուտքի առջև։ Բնակչության գունեղ զգեստը՝ կանանց գլխաշորերը, գլխի փաթաթանները, գլխանոցները, զիպուններն ու մուժիկների լայնանիստ, գեղատեսիլ մորուքները շրջապատեցին նրան։ Սկսեցին լալել. «Մեր բարերա՛րը մեզ մտաբերեց...» ու ակամայից լաց եղան ծերուկներն ու պառավները, որոնք հիշում էին նրա պապին ու նախահորը, ինքը ևս չկարողացավ զսպել արցունքները։ Ու մտքի մեջ մտածում էր. «Ինչպիսի՛ սեր և ինչի՛ համար։ Այն բանի համար, որ ես երբեք չեմ տեսել նրանց, երբեք չեմ հետաքրքրվել նրանցով»։ Եվ ուխտեց մառնակից դառնալ (նրանց) աշխատանքին ու զբաղմունքին։

Ու սկսեց նա տիրություն անել, տնօրինել։ Նվազեցրեց կորը՝ պակասեցնելով կալվածատիրոջ համար կատարվող աշխատանքների օրերը, ավելացնելով մուժիկի անձնական աշխատանքի ժամանակը։ Ապուշ կառավարչին վռնդեց։ Ինքնսկսեց զբաղվել ամեն բանով, երևալ դաշտերում, կալատեղում, հացահատիկի չորանոցներում, չրաղացներում, նավաճանգստում՝ բարկանավերն ու լաստերը բեռնելիս և ուղևորելիս ,այնպես, որ ծուլերը նույնիսկ սկսեցին դժգոհություն

նշաններ ցույց տալ։ Սակայն դա երկար չտևեց։ Մուժիկը բանիմաց է և շուտով գլխի ընկավ, որ տերը թեև ժիր է և ունի ամեն բանին խառնվելու ցանկություն, բայց թե ինչպես, ինչ կերպ կատարել, դրան խելքը չի հասնում, խոսում է ռուսումնական լեզվով ու անհասկանալի։ Ստացվեց այնպես, որ տերն ու մուժիկը ոչ թե իսպառ իրար չհասկացան, այլ պարզապես ընդհանուր լեզու չգտան, որ գնան միևնույն ճանապարհով։ Տենտետնիկովն սկսեց նկատել, որ կալվածատիրական բուն հողում ամեն ինչ բուսնում էր մի տեսակ անհաջող ու վատ, քան մուժիկի անձնական հողում։ Ցանում էին ավելի շուտ, բուսնում էր ավելի ուշ, բայց թվում էր, թե լավ են աշխատել։ Ինքն անձամբ ներկա էր լինում և հրամայում էր ժրաջան աշխատանքի համար տալ նույնիսկ մեկական գավաթ օղի։ Մուժիկների հաճարը վաղուց արդեն հասկակալվում էր, վարսակը թափվում, թփակալվում կորեկը, իսկ նրա արտերում հացահատիկը հազիվ էր սկսում փողակալվել, դեռ չէր հասկակալվում։ Մի խոսքով տերն սկսեց գլխի ընկնել, որ մուժիկը խարդախություն է անում, չնայած բոլոր արտոնություններին։ Փորձեց կշտամբել, բայց ստացավ հետևյալ պատասխանը։ «Ինչպե՞ս կարելի է, տե՛ր իմ, որ մենք մեր տիրոջ շահի մասին, այսինքն թե, հոգ չտանենք։ Ինքներդ բարեհաճեցիք տեսնել, թե ինչպես էինք չարչարվում։ Երբ վար ու ցանք էինք անում, նույնիսկ հրամայեցիք մեկական գավաթ օղի մատուցել»։ Ինչո՞վ կարելի էր դրա դեմ առարկել։ «Բայց ինչո՞ւ է այժմ վատ բուսել»,— հարցաքննում էր տերը։ «Ո՞վ գիտե։ Երևի թե ներսից որդն է կրծել։ Ամառն էլ մի բան չի, իսպառ անձրև չի եկել»։ Բայց տերը տեսնում էր, որ մուժիկների ցանքերը որդը չի կրծում ներսից, անձրևն էլ, կարծես, տարօրինակ կերպով էր գալիս՝ շերտավորված, մուժիկի արտերին թափվում էր, իսկ կալվածատիրոջ արտին մի կաթիլ անգամ չէր ընկնում։

Ավելի դժվարը նրա համար կանանց հետ ընդհանուր լեզու գտնելն էր։ Անվերջ խնդրում էին իրենց ազատել աշխատանքից, պատճառ բերելով կոռի ծանրությունը։ Տարօրինակ բան էր. նա մարդկանց իսպառ ազատեց կտավի, պտուղների, սնկի ու ընկույզի մատակարարումից, կիսով պակասեցրեց մյուս աշխատանքների չափը, ենթադրելով, թե կանայք կըզ-

բաղվեն իրենց տնային տնտեսությամբ, կհագցնեն-կկապեն իրենց ամուսիններին, կրազմապատկեն բանջարանոցները։ Իզո՜ւր ջանքեր։ Անբանությունը, կուշտոցները, բամբասանքներն ու ամեն տեսակի վեճերը քնքուշ սեռի մեջ այնպիսի չափեր ընդունեցին, որ ամուսիններն անընդհատ գալիս էին նրա մոտ գանգատվելու. «Տե՛ր իմ, զսպի՛ր անիծված կնկանս։ Իսկական սատանի ծնունդ է, օր ու արև չի տալիս»։

Զսպելով իր զայրույթը, նա փորձեց խստություններ գործադրել, բայց ի՞նչ կերպ լինել խիստ, գեղչկուհին նրան ներկայանում էր իր ամբողջ խեղճությամբ, այնպես էր ծղրտում, այնքան թուլակազմ էր, հիվանդոտ, գարշելի ու անտանելի ցնցուղներ հագած։ Աստված գիտե, թե այդ բոլորը որտեղից էր ճարում։ «Գնա՛, գնա՛, միայն հեռացիր իմ աչքերից։ Աստված քեզ հետ»,— ասում էր խեղճ Տենտետնիկովը ու երկար չանցած նկատում էր, թե ինչպես հիվանդը, դուրս գալով դարպասից, ինչ-որ շաղգամի համար վեճի էր բռնվում իր հարևանուհու հետ և ջարդում նրա կողքերն այնպես, ինչպես չէր կարող անել մի թև-թիկունքով մուժիկ։

Փորձեց նրանց համար որևէ դպրոց հիմնել, բայց դրանից մի այնպիսի անմիտ բան ստացվեց, որ հուսահատությունից թևերը թուլացան, լավ էր նույնիսկ չսկսեր։ Ի՞նչ դպրոց։ Ոչ ոք էլ ժամանակ չուներ. տասը տարեկանից տղան արդեն գառնում էր բոլոր աշխատանքներում տան օգնականը ու հենց այնտեղ դաստիարակվում...։ Դատական ու տնօրինական գործերում արժեք չունեցան այն բոլոր իրավաբանական նրբությունները, որ նրա մեջ ներշնչել էին փիլիսոփա պրոֆեսորները։ Ե՛վ այս կողմն էր ստում, և՛ մյուս կողմը ստում, թեքը սատանան անգամ ոչինչ չէր հասկանա։ Ու նա տեսավ, որ այդ իրավաբանական ու փիլիսոփայական գրքերի նրբություններից ավելի կարևորը մարդուն լավ ճանաչելն է։ Նկատեց, որ դրա համար իր մեջ ինչ-որ բան է պակասում, բայց թե ինչ՝ աստված գիտե։ Եվ տեղի ունեցավ այն, ինչ հաճախ էր տեղի ունենում. ոչ մուժիկը ճանաչեց իր տիրոջը, ոչ էլ տերը՝ մուժիկին։ Մուժիկը վատ կողմից երևաց, տերը նույնպես վատ կողմից, և կալվածատիրոջ եռանդը զգալիորեն [սառեց]։ Դաշտային աշխատանքների ժամանակ նա արդեն ներկա էր գտնվում առանց հետաքրքրության։ Ընդո՞ւմ էր ար-

դյոք խոտհարքներում գերանդին, դար ու՞մ էին արդյոք դեռ զեր, կամ խրձեր կապում, եռո՞ւմ էր արդյոք դաշտային աշխատանքը, նրա հայացքը բևեռված էր հեռուն։ Կատարվո՞ւմ էր արդյոք հեռվում աշխատանք, նրա հայացքը փնտրում էր մոտ գտնվող առարկաներ, կամ ուղղված էր մի այլ կողմ՝ գետի որևէ ոլորանի վրա, որի ափերով քայլում էր կարմրաքիթ, կարմրատուտիկ մարտինը, խոսքը, իհարկե, Քուչունի մասին է և ոչ մարդու։ Տենտետնիկովն ուշադրությամբ դիտում էր, թե ինչպես այդ մարտինը, բռնելով գետափին մի ձուկ, կտցով պահում էր գոտկատեղից, կարծես խորհելով՝ կուլ տալ, թե կուլ չտալ ու միաժամանակ սևեռած նայում գետի երկայնությամբ, որտեղ հեռվից ճերմակին էր տալիս մի այլ մարտին, որը դեռ ձուկ չէր բռնել, բայց նույնպես սևեռուն հայացքով նայում էր ձուկ բռնած մարտինին։ Կամ բոլորովին փակելով աչքերն ու գլուխը բարձրացնելով վեր, դեպի երկնային տարածությունները, Տենտետնիկովը թույլ էր տալիս հոտառությանը ծծել դաշտերի բուրմունքը, իսկ լսողությանը՝ հիանալ օդում ճախրող քուչունների ճռվողյունով, երբ վերջինս ամեն կողմից՝ երկնքից և գետնից միաձուլվում էր ու դառնում մի ներդաշնակ խմբերգ՝ առանց իրար խանգարելու։ Հաճարատում աղմկում է լորը, խոտերի մեջ կքկքացնում է չրահավը, նրանց [վերև] ճվճվում են ու ճռվողում տեղից-տեղ քուչկոտող կանեփակերները, մնչում է օդ բարձրացած կտցարը, լուսի ցոլքերում կորչելով և պղնձի փողերի ձայնի նման լսվում է բարձր երկնքում իրենց երամները եռանկյունի կազմած կռունկների կռկռոցը։ Արձագանքում է համայն ձայներ դարձած շրջապատը... Արարի՛չ աստված, դեռ որքա՞ն գեղեցիկ է քո աշխարհը գյուղի խուլ անկյունում, հեռու եղկալի մեծ ճանապարհներից ու քաղաքներից։ Սակայն այդ բոլորը ևս նրան սկսեց ձանձրույթ պատճառել։ Երկար չանցած նա բոլորովին դադարեց դուրս գալ դաշտերը, փակվեց սենյակներում, հրաժարվեց նույնիսկ զեկուցման համար գործակատարին ընդունել։

Պատահում էր, որ առաջներում ծխամորճի սիրահար, մոլի ծխող արևէ պաշտոնաթող հուսար-պորուչիկ, կամ ժամանակակից բրոշյուրներից ու թերթերից իմաստություն քաղած, անհաշտ ուղղության տեր մի թերուս ուսանող այցելում էին

նրան։ Սակայն դա ևս սկսեց ձանձրացնել։ Նրանց, զրույցները սկսեցին նրան թվալ մի տեսակ մակերեսային, եվրոպական ձևի չափից դուրս ազատ վերաբերմունքը, խոսքի ժամանակ ծնկանը խփելը, ինչպես նաև ստորաքարշությունն ու սանձարձակությունը սկսեցին արդեն նրան թվալ խիստ ազատ ու անպարկեշտ։ Նա որոշեց բոլորի հետ խզել ծանոթության կապերը և այդ քայլին դիմեց բավականաչափ սուր ձևով։ Հենց այսպես, երբ ամեն բանի մասին մակերևութորեն զրուցողներից ամենահաճելի գնդապետ-բրանդերների ներկայացուցիչներից մեկը, որոնց պաշտոնն այժմ արդեն վերանում է, միևնույն ժամանակ սկսվող նոր ուղղության գաղափարների առաջավոր մարդ համարվող Վարվառ Նիկոլաևիչ Վիշնեպոկրոմովը ժամանեց նրա մոտ, որպեսզի կուշտ կերպով զրուցի և՛ քաղաքականության, և՛ փիլիսոփայության, և՛ գրականության, և՛ մորալի, և՛ նույնիսկ Անգլիայի ֆինանսական վիճակի մասին, նա ծառային ուղարկեց հայտնելու, թե ինքը տանը չի ու միևնույն ժամանակ անզգուշություն ունեցավ մոտենալու լուսամուտին։ Հյուրի և տանտիրոջ հայացքները հանդիպեցին իրար։ Մեկը, հարկավ, ատամները սեղմած քրթմնջաց. «Անասունի մեկը», մյուսը տհաճությամբ նրան ուղղեց ինչ-որ խոզ բառի նման մի բառ։ Դրանով էլ վերջացան հարաբերությունները։ Այդ օրվանից սկսած ոչ ոք այցելության չէր գալիս։

Նա այդ առթիվ ուրախ էր և նվիրվեց Ռուսաստանի մասին մեծ աշխատություն գրելու խոհերին։ Թե ինչ կերպ էր մտահղացվում այդ աշխատությունը, ընթերցողն արդեն գիտե։ Հաստատվեց մի տեսակ տարօրինակ, անկազմակերպ կարգ։ Սակայն չի կարելի ասել, թե չեն եղել բոպեներ, երբ նա, կարծես, արթնանում էր թմրած դրությունից։ Երբ փոստը թերթեր ու հանդեսներ էր բերում, և մամուլում հանդիպում էր նախկին դասընկերոջ ծանոթ անվան, որը հաջողություն էր ձեռք բերել պետական ծառայության ասպարեզում, կամ ուժերը ներելու չափ իր լուման էր մտցրել գիտության ու համաշխարհային գործի բնագավառում, մի խորհրդավոր, ծանր տրտմություն էր համակում նրա սիրտը և ակամայից դուրս էր պրծնում մի վշտալի, լուռ ու տխուր և խուլ զանգատ իր անգործության համար։ Նման դեպքերում իր կյանքը սե-

փական աչքում դառնում էր նողկալի, անպիտան։ Նրա երևակայության մեջ արտասովոր ուժով վերակենդանանում էին դպրոցական անցած օրերը, ու աչքի առաջ պատկերվում էր Ալեքսանդր Պետրովիչի կենդանի դեմքը... Արցունքները հեղեղի պես թափվում էին աչքերից...

Ի՞նչ էին նշանակում այդ հեկեկանքները։ Մերկացո՞ւմ էր արդյոք դրանց միջոցով տառապող սիրտը իր հիվանդության վշտալի գաղտնիքը, որ չկարողացավ կազմավորվել ու ամրանալ իրեն խորքում ձև ստացող հոգեհարուստ, վեհ մարդը, որ փոքրուց անհաջողությունների դեմ պայքարելու փորձ չունենալով, նա չի կարողացել աճելու և ամրապնդվելու համար հասնել բարձր վիճակի, որ շիկացրած մետաղի նման հալվելով, նրա մեծագույն զգացմունքների հարուստ պաշարը չի կարողացել դիմանալ վերջին կոփվածքին և որ նրա համար անչափ վաղ մեռավ իր արտասովոր դաստիարակը։ Այժմ աշխարհիս երեսին չկա մեկը, որ ի վիճակի լիներ վերականգնելու ամբողջ տատանումներով երերվող ուժերը և առածգական հատկությունից զուրկ անզոր կամքը, որ սթափեցնող բացականչությամբ նրա հոգուն ուղղեր առա՛ջ ոգեշնչող խոսքը, որին ամենուրեք կարոտ է զանազան աստիճանների վրա գտնվող, բոլոր դասերին, կոչմանն ու արհեստին պատկանող ռուս մարդը։

Ո՞ւր է այն մարդը, որ ռուսական հոգու հարազատ լեզվով կարողանար մեզ ասել այդ ամենազորեղ առա՛ջ բառը, որ ճանաչելով մեր բնավորության ամբողջ ուժն ու հատկությունները, ձեռքի կախարդական շարժումով մղեր մեզ դեպի կյանքի բարձր գաղափարները։ Ինչպիսի՞ արցունքներով, ինչպիսի՞ սիրով կպատասխաներ նրան երախտապարտ ռուս մարդը։ Սակայն դարերն անցնում են դարերի ետևից, տհաս պատանու ամոթալի ծուլությամբ ու անմիտ գործունեությամբ է համակվում...[1] և աստված չի ստեղծում մի այնպիսի տղամարդ, որը կարողանար արտասանել այդ բառը։

Մի հանգամանք քիչ մնաց, որ արթնացներ նրան թմրած վիճակից, քիչ մնաց, որ հեղաշրջում առաջ բերեր նրա բնավորության մեջ։ Տեղի ունեցավ ինչ-որ սիրո նման մի բան։

---

1 Ձեռագրում բաց է թողնված։

Սակայն այս դեպքում ևս գործը գլուխ չեկավ։ Հարևան կալվածքում, նրա գյուղից տասը վերստ հեռավորության վրա, ապրում էր մի գեներալ, որը, ինչպես արդեն նկատեցինք, այնքան էլ բարյացակամ կարծիք չուներ Տենտետնիկովի մասին։ Գեներալն ապրում էր գեներալավայել, հյուրասեր էր, սիրում էր, որ հարևաններն այցելեն ու իրենց հարգանաց հավաստիքը մատուցեն իրեն, ինքը փոխադարձ այցելություններ չէր կատարում, խոսում էր խոպոտ ձայնով, գրքեր էր կարդում և ուներ մի աղջիկ՝ արտասովոր տարօրինակ մի էակ։ Կյանքի նման նա աշխույժ էր ու կենդանի։ Ուլինկա էր անունը։ Տարօրինակ կրթություն էր ստացել։ Ուսուցել էր նրան անպուճի գուվիրնանտուհին, որը ռուսերեն ոչ մի բառ չգիտեր։ Դեռ մանկությունից զրկվել էր մորից։ Հայրը նրանով զբաղվելու ժամանակ չէր ունեցել։ Այնուամենայնիվ, անշափ սիրելով աղջկան, նա կարողացել էր նրան միայն երես տալ։ Ինչպես հատուկ է ազատ մեծացած երեխային, նրա մեջ ամեն բան արտահայտվում էր քմահաճ ձևով։ Եթե որևէ մեկը տեսներ, թե ինչպես հանկարծակի զայրույթը իսկույն խիստ կրնճիռներ էր առաջացնում նրա չքնաղ ճակատին, և ինչ կրքոտությամբ էր նա վիճում իր հոր հետ, նա կենթադրեր, որ այդ աղջիկը ամենակամակոր արարածն է։ Բայց նրա զայրույթը բռնկվում էր միայն այն պահին, երբ նա լսում էր որևէ անարդարացի բան, կամ որևէ մեկի հետ վատ վարվելու մասին։ Սակայն երբեք չէր զայրանում և երբեք անձամբ իրեն վերաբերող հարցի առթիվ վեճի մեջ չէր մտնում ու իրեն չէր արդարացնում։ Նրա այդ զայրույթն իսկույն կանցներ, եթե նկատեր այն անձնավորության դժբախտ վիճակը, որի դեմ նա զայրանում էր։ Ողորմություն խնդրող առաջին իսկ պատահած մարդուն նա պատրաստ էր նետել իր քսակը՝ մեջը եղած ամբողջ պարունակությամբ, առանց որևէ դատողություններ ու հաշիվներ անելու։ Նա իր բնավորությամբ մի տեսակ սլացիկ էր։ Երբ խոսում էր, նրա մոտ, կարծես, ամեն ինչ սլանում էր իր մտքի ետևից՝ դեմքի արտահայտությունը, խոսակցության ձևը, ձեռքերի շարժումները, հագուստի ծալքերն իսկ, կարծես թե սլանում էին նույն ուղղությամբ, և թվում էր, թե ահա հենց հիմա ինքը կթռչի իր բառերի ետևից։ Ոչ մի գաղտնի բան չուներ նա իր մեջ։ Նա ոչ ոքի առաջ չէր վախենա

արտահայտել իր մտքերը և ոչ մի ուժ ի վիճակի չէր լինի հարկադրել լռելու, եթե նա ցանկանում էր խոսել։ Նրա համայիլ, յուրահատուկ, միայն իրեն պատկանող քայլվածքն այնքան անթրթիռ-թեթև էր, որ ակամայից պատահողը ճանապարհ կտար նրան։ Նրա ներկայությամբ չարակամ մարդը մի տեսակ շփոթվում էր ու պապանձվում։ Իր խոսակցության մեջ ամենասանձարձակն ու ճարպիկը նրա մոտ խոսք չէր գտնում և շվարում էր, իսկ ամաչկոտը կարող էր զրուցել նրա հետ և զրույցի հենց առաջին րոպեներին իրեն թվում էր, թե մի ինչ-որ տեղ, մի ինչ-որ ժամանակ ճանաչում էր նրան ու կարծես նրա նույն այդ դիմագծերը մի ինչ-որ տեղ տեսել էր, որ դա տեղի է ունեցել իր մանկության ինչ-որ անհիշելի ժամանակներից, մի ինչ-որ հարազատ տան մեջ, մի ուրախ երեկոյի, բազմաթիվ մանկիկների ուրախ խաղի պահին։ Ու այդ հանդիպումից հետո երկար ժամանակ ճանճրալի էր թվում մարդու հասուն հասակը։

Ճիշտ նույն բանը տեղի ունեցավ Տենտետնիկովի հետ՝ Ուլինկային հանդիպելիս։ Մի անբացատրելի նոր զգացմունք համակեց նրա հոգին։ Նրա տաղտուկ կյանքը մի պահ լուսավորվեց։

Գեներալն սկզբում Տենտետնիկովին ընդունում էր քաղաքականաշափ լավ ու սիրալիր, սակայն միմյանց հետ ընդհանուր լեզու չէին կարողանում գտնել։ Նրանց զրույցները ավարտվում էին վեճով ու մի տեսակ փոխադարձ անախորժ զգացողությամբ, որովհետև գեներալը չէր սիրում հակաճառություն և ընդդիմախոսություն։ Իր հերթին Տենտետնիկովն էլ էր դյուրագրգիռ մարդ։ Պարզ է, որ իբ սեր աղջկա, շատ բան ներվում էր հորը, և նրանց միջև խաղաղությունը պահպանվում էր առժամանակ, մինչև որ գեներալի մոտ հյուր էկան նրա ազգականուհիները՝ կոմսուհի Բոլդիրևան և իշխանադուստր Յուզյակինան՝ նախկին արքունիքի պաշտոնաթող, բայց մինչև այժմ էլ որոշ կապեր պահպանած ֆրոյլինաներ, որի հետևանքով գեներալը նրանց առջև մի քիչ ստորաքարշություն էր անում։ Նրանց ժամանելու հենց սկզբից Տենտետնիկովին թվաց, որ իր նկատմամբ նա գարձել է ավելի ուժգր, անուշադիր էր, կամ խոսքով դիմում էր նրան կարծես մի անբան մարդու, ինչ-որ արհամարհական եղանակով ասում էր։

ջառ սիրելիս, լսիր, ճոգիս և նույնիսկ՝ դու: Դա նրան, վերջապես, կատաղեցրեց: Ջսպելով իրեն ու սեղմելով ատամները՝ նա, սակայն, քաջություն ունեցավ արտակարգ քաղաքակիրթ և մեղմ ձայնով ասել հետևյալը, որի ընթացքում նրա դեմքը շառագունում էր և ամբողջ ներսը եռում. «Ես չնորհակալ եմ ձեզանից, գեներալ, դեպի ինձ տածած լավ տրամադրության համար: «Դու» բառով դուք ինձ կոչ եք անում սերտ մտերմություն հաստատել ձեզ հետ, ինձ ևս պարտավորեցնելով խոսել ձեր հետ «դու»-ով: Սակայն տարիքների զանազանությունը խանգարում է, որ մեր միջև հաստատվեն նման ազատ հարաբերություններ»: Գեներալը շփոթվեց: Ընտրելով բառեր ու մտքեր, թեև մի փոքր անկապ, նա սկսեց բացատրել, թե «դու» բառը նա գործածել է ոչ այն իմաստով, որ ծերունուն երբեմն թույլատրելի է դիմել երիտասարդին «դու»-ով (իր աստիճանի մասին նա ոչ մի խոսք չասաց):

Հասկանալի է, որ այդ պահից նրանց միջև մտերմությունը դադարեց, և սերը խափանվեց հենց իր սկզբում: Կարճ ժամանակով գրեթե շողացող լույսը հանգավ և նրան հաջորդող աղջամուղջը դարձավ էլ ավելի խավար: Ամեն ինչ նման դարձավ նախկին կյանքին, որն ընթերցողին ծանոթ է այս պատմության սկզբից, այն է՝ պառկելուն և անգործությանը: Տան մեջ թագավորեց զզվելի վիճակն ու թափթփվածությունը: Հատակի խոզանակը աղբի հետ միասին ամբողջ օրը մնում էր սենյակի մեջտեղում: Անդրավարտիքը երևան էր գալիս նույնիսկ հյուրասենյակում: Բազմոցի առջև դրված շրեզաձարդ սեղանի վրա ընկած էր ճարպոտ վարտքակալը, կարծես հյուրի համար մի արտասովոր նվեր, և նրա կյանքը դարձավ այն աստիճան չնչին ու թմրած, որ նրան ոչ միայն դադարեցին հարգել տան ծառաները, այլ քիչ էր մնում տան հավերը կոտցահարեին: Վերցնելով գրիչը՝ նա ժամերով թղթի վրա աննպատակ գծագրում էր ծուռ ու մուռ ծառեր, տնակներ, խրճիթներ, սայլեր, եռաձի կառքեր: Բայց երբեմն ինքնաբերաբար, առանց տիրոջ գիտության, նրա գրիչը գծագրում էր փոքր, սիրուն գլուխ՝ նուրբ դիմագծերով, սուր, ծակող հայացքով ու բարձր դարսած վարսերի փնջով և զարմանքով նայում էր նա, թե ինչպես է ստացվել այն աղջկա դիմանկարը, որին ի վիճակի չէր նկարելու ոչ մի գեղանկարիչ: Նա ավելի էր տրխ-

րում ու, հավատալով, որ աշխարհիս երևսին չկա երջանկություն, դրանից հետո դառնում էր առավել լուռ ու անխոս։

Այդպես էր Անդրեյ Իվանովիչ Տենտետնիկովի հոգեվիճակը այն պահին, երբ նա, ըստ սովորության, նստեց լուսամուտի առաջ, որ, ընդունված կարգի համաձայն, ակնապիշ դուրս նայի, բայց ի զարմանս իրեն, լսեց ոչ Գրիգորիի, ոչ էլ Պերֆիլևնայի ձայնը։ Բակում, ընդհակառակը, նկատվում էր որոշ շարժում և որոշ իրարանցում։ Խոհարարի օգնականն ու հատակներ լվացող կինը վազում էին, որ դարպասը բաց անեն։ Դարպասի մեջ երևացին ձիեր, ճիշտ այնպես, ինչպես քանդակում կամ նկարում են հաղթական կամարի վրա՝ մի մուռթ դեպի աջ, մի մուռթ դեպի ձախ, մի մուռթ մեջտեղում։ Դրանցից վերև՝ կառքի ուսին, կառապանն ու լաքեյը՝ լայն բաճկոնը հագին, մեջքը թաշկինակով գոտկած։ Նրանցից հուսկ հետո ետևն էր՝ կարտուզը գլխին և շինելով, ծիածանագույն գլխաշորի մեջ փաթաթված։ Երբ կառքը շրջապտույտ կատարեց նախամուտքից սանդուղքի առաջ, պարզվեց, որ այն ոչ այլ ինչ էր, քան ռեսորային թեթև բրիչկա։ Արտակարգ վայելուչ տեսք ունեցող պարոնը ցատկեց սանդուղքին զինվորականի արագությամբ ու ճարպկությամբ։

Անդրեյ Իվանովիչը վախեցավ։ Նա եկվորին ընդունեց կառավարությունից ուղարկված չինովնիկի տեղ։ Հարկ է ասել, որ իր երիտասարդ տարիներին նա քիչ էր մնում դառնար մի անմիտ գործի մասնակից։ Զանազան բրոշյուրներ ծայրեիծայր կարդացած երկու հուսար, ապա ուսումնական կուրսը չավարտած մի էսթետ, այնուհետև ունեցած-չունեցածը տանուլ տրված մի խաղամոլ հիմնել էին մի ինչ-որ մարդասիրական ընկերություն, մի փորձված խաբեբայի և մասոնի, նույնպես խաղամոլի, բայց ճարտար լեզվի տեր մարդու գերագույն տնօրինությամբ։ Ընկերությունը հիմնվել էր լայն նպատակով՝ կայուն երջանկություն ստեղծել ամբողջ մարդկությանը՝ Թեմզայի ափերից մինչև Կամչատկա։ Պահանջվում էր դրամարկղում ունենալ հսկայական գումար։ Մեծահոգի անդամներից նվիրատվությունները հավաքվում էին անասելի չափերով։ Ինչ նպատակի էին ծախսվում այդ բոլոր գումարները, դիտեր միայն ինքը՝ գերագույն տնօրենը։ Այդ ընկերության մեջ նրան ներգրավեցին դառնացած մարդկանց դասին պատկանող նրա

երկու բարեկամը, ազնիվ մարդիկ, որոնք, սակայն, գիտությանը, լուսավորությանը և մարդկությանը ապագայում սպասվող հաճախակի բժշկաճառերից հետո դարձան կատարյալ հարբեցողներ։ Տենտետնիկովը շուտ գլխի ընկավ ու հեռացավ այդ շրջանից։ Սակայն ընկերությունը նույնիսկ խճճվեց ինչ-որ այլ արարքների մեջ, որոնք այնքան էլ վայել չէին ազնվականին, այնպես, որ առաջացան ոստիկանության հետ ևս կապված դործեր... այդ իսկ պատճառով բնական էր, որ Տենտետնիկովը, հեռանալով նրանցից ու խզելով իր բոլոր կապերը, այնուամենայնիվ, չէր կարող իրեն հանդիստ զգալ։ Խիղճն այնքան էլ հանգիստ չէր։ Այժմ էլ նա երկյուղով էր նայում բացվող դռանը։

Նրա վախը, սակայն, իսկույն անցավ, երբ հյուրը ողջունեց արտասովոր ճարպկությամբ, պահպանելով գլխի հարգալից դիրքը, քիչ թեք և հակիրճ, բայց որոշակի խոսքերով պարզաբանեց, որ նա վաղուց ի վեր Ռուսաստանում կատարում է ճանապարհորդություն, որը նրան դրդում են պահանջն ու հետաքրքրությունը. որ մեր պետությունը արտակարգ կերպով հարուստ է հիանալի առարկաներով, չխոնելով արդեն հանքերի առատության ու հողի բազմազանության մասին, որ ինքը հրապուրվել է նրա գյուղի գեղատեսիլ դիրքով, որ չնայած, սակայն, այդ դիրքին, նա չէր համարձակվի անհանգստացնել նրան իր անտեղի այցելությամբ, եթե գարնանային վարարումների ու վատ ճանապարհների հետևանքով կառքում չառաջանար ջարդվածք, որ այդ բոլորով հանդերձ, եթե նույնիսկ իր բրիչկայի հետ ոչինչ էլ պատահած չլիներ, նա, այնուամենայնիվ, չէր կարող իրեն զրկել նրան իր հարգանաց հավաստիքը անձամբ մատուցելու հաճույքից։

Ավարտելով իր խոսքը, հյուրը հմայիչ հաճելիությամբ հատակին քստացրեց լաքած շքեղ և սադափե կոճակներ ունեցող կարճավիզ կոշիկով ոտքը և չնայած իր պարարտ մարմնին, տեղն ու տեղը մի փոքր ետ ցատկեց ռետինե գնդակի թեթևությամբ։

Անդրեյ Իվանովիչը հանգստացած եզրակացրեց, որ սա, ըստ երևույթին, մի որևէ ուսումնասեր գիտնական պրոֆեսոր է, որ շրջագայում է Ռուսաստանում, գուցե այն նպատակով, որպեսզի հավաքի որևէ բույս կամ թերես՝ հանքային նյու-

քեր։ Նա իսկույն ևեթ լիակատար պատրաստակամություն հայտնեց ցույց տալ նրան ամեն մի օժանդակություն. առաջարկեց իր վարպետներին. անվագործներին, դարբիններին, խնդրեց տեղավորվել, ինչպես իր սեփական տանը, նստեցրեց Երան վոլտերյան մեծ [բազկաթոռին] և պատրաստվեց լսել նրա խոսքը բնական գիտություններից մասին։

Սակայն հյուրը ավելի շատ խոսեց ներքին աշխարհի իրագործություններից մասին։ Նա իր կյանքը նմանեցրեց ծովերի վրա եղած, ամենուրեք նենգ քամիներից հալածվող նավի, հիշատակեց, որ ստիպված է եղել փոխելու շատ պաշտոններ, որ շատ է տուժել ճշմարտության համար, որ կյանքն իսկ թշնամիների երեսից հաճախ վտանգի տակ է եղել ու նման շատ բաներ պատմեց, որոնք ցույց էին տալիս ավելի շուտ նրա գործնական մարդ լինելը։ Իր խոսքի վերջում նա քթի մաքրեց բատիստե սպիտակ թաշկինակով այնպես ուժգին, որ Անդրեյ Իվանովիչը նման ձայն դեռ լսած չէար։ Երբեմն նվագախմբի մեջ լինում է մի որևէ խորամանկ փող, որը երբ ձայն է հանում, կարծես ոչ թե նվագախմբի մեջ է, այլ կոնչում է ականջիդ մոտ։ Նույնանման ձայն լսվեց նիրհող տան արթնացած սենյակներում, ու դրանից անմիջապես հետո տեղի ունեցավ օդեկոլոնի բուրմունքը, որն աննկատելիորեն տարածվել էր բատիստե թաշկինակի ճարպիկ շարժումով։

Ընթերցողը գուցե արդեն կռահել է, որ հյուրը ուրիշ ոք չէր, բայց եթե մեր պատվարժան, մեր կողմից երկար ժամանակ չհիշատակվող Պավել Իվանովիչ Չիչիկովը։ Նա մի փոքր ծերացել էր, ըստ երևույթին այդ ժամանակը նրա համար եղել էր փոթորկալից ու տագնապով լի։ Թվում էր, թե նրա հագի ֆրակն էլ կարծես մի քիչ խունացել էր, նույնիսկ և՛ բրիչկան, և՛ կառապանը, և՛ ծառան, և՛ ձիերը, և՛ ձիասարքը կարծես մաշվել ու հնացել էին։ Թվում էր, թե նրա հենց ֆինանսներն էլ նախանձելի վիճակում չէին։ Սակայն դեմքի արտահայտությունը, վայելուչ վարմունքն ու նիստ ու կացը մնացել էին նույնը։ Կարծես նիստ ու կացի ու խոսակցության մեջ նա նույնիսկ ավելի հաճելի էր դարձել, բազկաթոռին նստելիս ավելի վարպետորեն էր ոտքը ծալում ոտքի տակ։ Ջրույցի մեջ զգացվում էր է՛լ ավելի մեղմություն, խոսքերում և արտահայտություններում՝ ավելի շատ զգույշ չափավորություն,

իրեն պահելու ավելի շատ համառություն և ամեն բանում ավելի շատ տակտ։ Ջյունից ավելի սպիտակ ու մաքուր էին նրա օձիքներն ու կրծքակալը, ու չնայած նա ճանապարհ էր անցել, սակայն ֆրակի վրա փոշու նշույլ անգամ չկար, թեկուզ հենց հիմա հրավիրիր նրան տոնախմբության։ Այտերն ու կզակն այնքան մաքուր էին ածիլված, որ միայն կույրը չէր կարող հիանալ դրանց հաճելի կլորությամբ։

Տան մեջ իսկույն փոփոխություն տեղի ունեցավ։ Նրա այն կեսը, որ մինչ այդ փակված փեղկերով խարխափում էր մթության մեջ, հանկարծ բացվեց և լուսավորվեց։ Ամեն ինչ սկսեցին տեղավորել լուսավորված սենյակներում, և երկար չանցած ամեն ինչ ընդունեց հետևյալ տեսքը. ննջարանի համար հատկացրած սենյակում տեղավորեցին այն իրերը, որոնք անհրաժեշտ էին գիշերային տուալետի համար. կաբինետի համար ընտրած սենյակը... բայց նախքան այդ, անհրաժեշտ է իմանալ, որ այդ սենյակում կար երեք սեղան. մեկը՝ գրասեղան— բազմոցի առջև, մյուսը՝ քղքախազի կլոր սեղան— լուսամուտների միջև, հայելու տակ, երրորդը անկյունաձև՝ անկյունում, երկու դռների միջև, այն դռների, որոնցից մեկը տանում էր դեպի ննջարանը, մյուսը՝ դեպի կոտրատված կահույք ունեցող անմարդաբնակ սենյակը, որն այժմ ծառայում էր որպես նախասենյակ, ուր մինչ այդ ոչ ոք մոտ մի տարի ոտք չէր դրել։ Այդ անկյունաձև սեղանի վրա դարսվեց պայուսակից դուրս բերված հագուստեղենը, այն է՝ ֆրակի զույգ կազմող անդրավարտիքը, նոր անդրավարտիքը, գորշ գույնի անդրավարտիքը, երկու թավշե և երկու կերպասե ժիլետները, սերթուկը։ Այդ բոլորը միմյանց վրա դարսվեցին բրգաձև։ ու ծածկվեց մետաքսյա թաշկինակով։ Մի այլ անկյունում, դռան և լուսամուտի միջև, իրար կողքի շարվեցին ոտնամանները՝ մի զույգ ոչ այնքան նոր, մյուսը՝ բոլորովին նոր, լաքած, կարճավիզ կոշիկները և գիշերային ոտնամանները։ Դրանք ևս ամոթխածությամբ քողարկվեցին մետաքսյա թաշկինակով այնպես, կարծես եղած էլ չլինեին այնտեղ։ Գրասեղանի վրա նույն պահին խիստ կարգով դասավորվեցին՝ մի գզրոց, օձիկոլոնի սրվակը, օրացույցը և երկու ինչ-որ վեպ՝ երկուսն էլ երկրորդ հատորը։ Մաքուր սպիտակեղենը տեղավորվեց արդեն ննջարանում գտնվող կոմոդի մեջ, իսկ լվացարարուհուն

հանձնվող սպիտակեղենը կապոցով քշվեց մահճակալի տակ։ Պայուսակը ևս, դատարկվելուց հետո, քշվեց մահճակալի տակ։ Պայուսակը ևս, դատարկվելուց հետո, քշվեց մահճակալի տակ։ Նրա հետ ճանապարհորդող սուրը, որի նպատակն էր վախ ներշնչել գողերին, կախ տրվեց պատից՝ նույնպես աննջարանում, մահճակալից ո՛չ հեռու։ Ամեն ինչ ընդունեց արտասովոր մաքուր և հստակ տեսք։ Ոչ մի տեղ չէր երևում ո՛չ թղթի, ո՛չ փետուրի, ո՛չ էլ փոշու նշույլ։ Օդն իսկ մի տեսակ աղնվացավ. հաստատվեց այն առողջ, թարմ տղամարդու դուրեկան հոտը, որ իր սպիտակեղենը շուտ-շուտ փոխում է, գնում է բաղանիք և կիրակի օրերը մարմինը տրորում թաց սպունգով։ Վտանգ կար, որ նախասրահում առժամանակ հիմնավորվի ծառա Պետրուշկայի հոտը, սակայն Պետրուշկան շուտով փոխադրվեց խոհանոց, ուր և հարկն էր։

Առաջին օրերին Անդրեյ Իվանովիչը երկյուղ էր կրում, թե չլինի հանկարծ կորցնի իր անկախությունը, թե հյուրը որևէ կերպ կաշկանդի նրան, որևէ փոփոխություններով ճնշի նրա ապրելակերպի վրա և խախտի նրա համար հաջող սահմանված օրվա կարգ ու կանոնը։ Սակայն երկյուղն անտեղի էր։ Մեր Պավել Իվանովիչը ցույց տվեց ամեն բանին հարմարվելու արտասովոր ճկուն ընդունակություններ։ Հավանություն տվեց տանտիրոջ փիլիսոփայական դանդաղկոտությանը, ասելով, թե այդ դանդաղկոտության շնորհիվ նա կապրի հարյուր տարի։ Մենակյաց կյանք վարելը նա համարեց երջանկություն, այն պատճառով, որ մենակությունը մարդու մեջ սնում է մեծ գաղափարներ։ Դիտելով գրադարանը և ընդհանրապես դրական կարծիք հայտնելով գրքերի մասին, շեշտեց, որ դրանք փրկում են մարդուն պարապուրյունից։ Քիչ բառեր գործածեց, բայց բոլորն էլ ծանրակշիռ էին։ Նիստ ու կացով էլ նա իրեն դրսևորեց պատշաճ բարձրության վրա։ Ժամանակին տուն էր գալիս և ժամանակին գնում։ Տանտիրոջը չէր ծանրաբեռնում հարցուփորձով, երբ նա խոսելու տրամադրություն չուներ։ Հաճույքով խաղում էր նրա հետ շախմատ, հարկ եղած պահին հաճույքով լռում։ Մինչդեռ երբ մեկը ծխամորճից արձակում էր ոլորապտույտ ծուխ, մյուսը, սակայն, չգործածելով ծխամորճ, հնարում էր դրան համապատասխան զրաղմունք, օրինակ՝ գրպանից հանում էր արծաթազօծ, սևանաքիշ

ծխատուփն ու, տեղավորելով ձախ ձեռքի երկու մատի արանքում, աջ ձեռքի մատով արագ պտտեցնում էր, ճիշտ այնպես, ինչպես երկրագունդը պտտվում է իր առանցքի շուրջը, կամ թեթև շվացնելով, ծխատուփի վրա մատով թխկթխկացնում էր։ Մի խոսքով՝ չէր խանգարում տանտիրոջը։ «Ես առաջին անգամն եմ տեսնում մի մարդ, ում հետ կարելի է ապրել,— ասում էր Տենտետնիկովը,— ընդհանրապես, մեզ մոտ այդ արվեստը պակասում է։ Մեր մեջ կան բավականաչափ և՛ խելացի, և՛ կրթված, և՛ բարի մարդիկ, բայց մշտապես հավասարակշիռ բնավորություն ունեցող մարդիկ, այնպիսի մարդիկ, որոնց հետ կարելի է ապրել մի ամբողջ դար առանց գժտվելու, չգիտեմ՝ արդյոք շա՞տ կգտնվեն մեզ մոտ։ Ահա առաջին մարդը, որին ես տեսնում եմ»։ Այդպես էր արտահայտվում Տենտետնիկովը իր հյուրի մասին։

Ջիչիկովն իր հերթին շատ ուրախ էր, որ առժամանակ բնակություն էր հաստատել նման խաղաղասեր ու հանգիստ տանտիրոջ մոտ։ Թափառաշրջիկ կյանքը նյութ ստելի էր դարձել։ Քիչ հանգստանալ, թեկուզ մեկ ամսով, հիանալի գյուղում, աչքի առաջ ունենալով դաշտերն ու բացվող գարունը, անգամ օգտակար էր հեմորոյի տեսակետից։

Հանգստանալու համար դժվար էր գտնել ավելի լավ անկյուն։ Սառնամանիքների պատճառով ուշ բացվող գարունք հանկարծ սկսվեց իր ամբողջ գեղեցկությամբ, և ամենուրեք փթթեց կյանքը։ Արդեն կապույտին էին տալիս բացատները, և առաջին կանաչի թարմ փիրուզի վրա երևում էր դեղին կաթնուկը, մանիշակա-վարդագույն ծափկոտրուկը խոնարհում էր իր քնքուշ գլխիկը։ Ճահիճների վրա երևացին մժղուկների պարսեր ու միջատների մեծ խմբեր։ Արդեն նրանց հալածում էր ջրասարդը։ Իսկ սրանց հետևելով՝ ամեն կողմից չոր եղեգների վրա էին հավաքվել զանազան թռչուններ։ Ով ամենը ի մի էին հավաքվում իրար մտերիկից դիտելու համար։ Միանգամից հողը կյանք առավ, անտառներն ու մարգագետիններն արթնացանն։ Գյուղում սկսվեցին շուրջպարերը։ Քեֆ անելու համար ասպարեզ էր բացվել։ Որքա՜ն գունեղ էր կանաչը, որքա՜ն թարմ էր օդը, որքա՜ն շատ էր թռչունների ծլվլոցը այգիներում։ Ամենուրեք դրա՜խտ էր, ուրախություն

ու ցնծությո՛ւն։ Գյուղը, կարծես, հարսանիքի պահին զինգում էր ու երգում։

Չիչիկովը շատ էր զբոսնում։ Թափառումների ու զբոսանքների համար ամենուրեք մեծ ասպարեզ կար։ Մերթ նա քայլում էր բարձունքների հարթ գագաթներով, դիմացը՝ ներքևում, այքի առաջ տարածվող հովիտները, ուր դեռևս մնացել էին վարարած ջրերից առաջացած մեծ լճերը, որոնց մեջ կղզիների նման սևին էին տալիս տակավին տերևազուրկ անտառները, կամ մտնում էր թանձր թփուտների մեջ, անտառապատ խոռոչները, որտեղ խիտ կուտակվել էին ծառերը բեռնված քրոչունների՝ երկինքը ծածկող ու հոգևան ագռավների բներով։ Ջորացած գետնով կարելի էր գնալ դեպի նավամատույցը, որտեղից մեկնում էին սիսեռով, գարիով ու ցորենով բեռնված առաջին նավերը, մինչդեռ նույն այդ պահին խլացուցիչ աղմուկով գալիս էր գետի ջուրը, որ սրընթաց թափվեր աշխատանքը նոր սկսող ջրաղացի անիվներին։ Գնում էր նա դիտելու գարնանային առաջին աշխատանքները, տեսնելու, թե ինչպես կանաչ գետնի վրայով սև շերտով ձգվում էր թարմ հերկը, իսկ սերմնացանը, թրխկացնելով կրծքից կախած մաղը, բռով հավասարապես շաղ էր տալիս սերմացուն, ոչ մի ավելորդ հատիկ չտալով այս կամ այն կողմը։

Չիչիկովն այցելեց ամենուրեք։ Խոսեց ու խորհրդակցեց և՛ գործակատարի հետ, և՛ մուժիկի, և՛ ջրաղացպանի հետ։ Ամեն ինչ, ամեն բանի մասին իմացավ՝ ի՛նչ կար-չկար, և ի՛նչ վիճակումն է տնտեսությունը, և որքա՛ն հացահատիկ է վաճառվում, և որքա՛ն են գանձում գարնանն ու աշնանը հացահատիկն աղալու համար, և ի՛նչ է յուրաքանչյուր մուժիկի անունը և ո՛վ ո՛ւմ հետ ազգակցական կապ ունի, և ո՛րտեղից է գնել կովը, և ինչո՛վ է կերակրում իր խոզին։ Մի խոսքով՝ ամեն ինչ։ Իմացավ նաև, թե որքա՛ն մուժիկ է մեռել։ Պարզվեց, որ քիչ են մեռել։ Իրրև խելացի մարդ, նա իսկույն նկատեց, որ Անդրեյ Իվանովիչի տնտեսության վիճակը նախանձելի չէ։ Ամենուրեք անհոգություն, անփութություն, գողություն, պակաս չի նաև հարբեցողությունը։ Ու ինքնիրեն մտածում էր. «Ի՛նչ անասուն է, սակայն, Տենտետնիկովը։ Այսպիսի կալվածք և այսպիսի անտերունչ վիճակ։ Կարելի էր տարեկան հիսուն հազար եկամուտ ստանալ»։

Նման թափառումների ժամանակ հաճախ նրա գլխի մեջ միտք էր ծագում՝ ինքը ևս երբևիցե դառնա, այսինքն, հասկանալի է, ո՛չ քե այժմ, այլ հետո, երբ գլուխ գա հիմնական գործը և գրպանում ունենա միջոցներ, ինքը ևս դառնա նման կալվածքի հանգիստ կյանք վարող տեր։ Նման դեպքերում, հարկավ, իսկույն աչքի առաջ պատկերվում էր նույնիսկ ջահել, քարմ, սպիտակ դեմքով մի կնիկ՝ վաճառականական կամ մի այլ հարուստ դասակարգից, որը նույնիսկ նվագել իմանար։ Նրա երևակայության մեջ պատկերվում էր նաև երիտասարդ սերունդը, որի նպատակն էր հավերժացնել Ջիլիկովների տոհմը՝ մի չարաճճի, կայտառ տղա և գեղեցկուհի աղջիկ, կամ, նույնիսկ, երկու տղա, երկու և նույնիսկ երեք աղջիկ, որ բոլորին հայտնի դառնա, քե ինքը, իրոք, ապրել ու գոյություն է ունեցել և ո՛չ քե աշխարհիս երեսով անցել է մի տեսակ ստվերի կամ ուրվականի նման, մի խոսքով՝ այնպես, որ ամոթանք չզգա նաև հայրենիքի հանդեպ։ Այն ժամանակ նրա երևակայության մեջ պատկերվում էր նաև այն, որ վատ չէր լինի, եթե իր աստիճանը որոշ չափով բարձրանար, օրինակ՝ դառնար պետական խորհրդական, մի աստիճան, որ պատվարժան է ու հարգելի... Թափառումների ժամանակ ի՛նչ մտքեր առես, որ մարդու գլխին չեն գալիս, որոնք նրան հաճախ դուրս են բերում տվյալ ձանձրալի պահից, անհանգստացնում, գրգռում ու շարժում երևակայությունը և նրան հաճելի է նույնիսկ այն դեպքում, երբ ինքը համոզված է, որ այդ բոլորը երբեք չի իրականանա։

Պավել Իվանովիչի ծառաներին ևս գյուղը դուր եկավ։ Ներքանք էլ, ինչպես և ինքը, ընտելացան գյուղին։ Պետրուշկան շատ շուտով մտերմացավ բուֆետապան Գրիգորիի հետ, քեև սկզբում նրանք երկուսն էլ միմյանց հանդեպ անտանելի գոռոզ էին ու փքուն։ Պետրուշկան փորձեց Գրիգորիի աչքին թոզ փչել, ինքը աշխարհ տեսած մարդ է, իսկ Գրիգորին նրան իսկույն լռեցրեց Պետերբուրգով, որտեղ Պետրուշկան չէր եղել, վերջինս փորձեց հանգես գալ ու հաղթել իր տեսած վայրերի հեռավորությամբ, բայց Գրիգորին մի այնպիսի վայրի անուն տվեց, որը ո՛չ մի քարտեզի վրա հնարավոր չէր գտնել, ու հեռավորությունը հաշվեց երեսուն հազար վերստից ավելի, այնպես որ Պավել Իվանովիչի ծառան բոլորովին ապուշ կըտ-

րեց, բերանը մնաց բաց ու կալվածատիրոջ ծառաների կողմից տեղն ու տեղը դարձավ ծաղրի առարկա։ Սակայն նրանց մեջ գործը վերջացավ ամենաստեր բարեկամությամբ։ Գյուղի ծայրում բոլոր գյուղացիների քեռի, Ճաղատ Պիմենը պանդոկ ուներ, որի անունն էլ Ակուլկա։ Այդ հաստատության մեջ նրանց կտեսնեիք օրվա բոլոր ժամերին։ Այնտեղ նրանք բարեկամացան ու դարձան, ինչպես ժողովուրդն է ասում, մշտական հաճախորդ։

Սելիֆանն ուներ մ՛յլ տեսակի հրապուրանք։ Ամեն գիշեր գյուղում երգ ու խաղ էին ասում, իրար թև ընկած պարում-թռչկոտում էին ու ապա բաժանվում։ Առողջ զարմի տեր, վայելչակազմ աղջիկները, որոնք այժմ արդեն հազվագյուտ են մեծ գյուղերում, ստիպում էին նրան ժամերով կանգնել դեմ-դիմաց։ Դժվար է ասել, թե ո՛րն էր ավելի լավը, բոլորի կուրծքն ու պարանոցն էլ ճերմակ էին, բոլորի աչքերն էլ պոչավոր, քողարկված, սիրամարգի քայլվածք ունեին և հյուսերը հասնում էին մինչև գոտկատեղերը։ Երբ նա, իր ձեռքերի մեջ առած նրանց սպիտակ ձեռքերը դանդաղ օրորվում էր շուրջպարի մեջ, կամ մյուս տղաների հետ շարք կազմած՝ պատի նման դեմ էր գալիս աղջիկներին, իսկ աղմկալից աղջիկներն իրենց հերթին շարք կազմած՝ տղաներին էին դեմ գալիս ու ծիծաղով բարձր երգում՝ «Բոյարնե՛ր, ցո՛ւյց տվեք ինեսացուին» և շրջակայքը կամաց մթնում էր, ու գետից այն կողմը՝ հեռու արձագանքվող երգը տխուր մեղեդիով ետ էր դառնում, այդ պահին ինքն էլ չէր կարող ասել, թե ի՞նչ էր կատարվում իր հետ։ Թե՛ քնած և թե՛ արթուն ժամանակ, առավոտյան ու մթնշաղին նրան հետո անվերջ թվում էր, թե իր ձեռքերում բռնած ունի ճերմակ թևեր ու ինքը խմբապարի մեջ մտած պարում է։

Չիչիկովի ձիերին ևս դուր եկավ նոր օթևանը։ Ե՛վ միջնակը, և՛ ատենակալը, և՛ խայտաճամուկը գտան, որ Տենտետնիկովի մոտ մնալը ամենևին էլ ձանձրալի չէ, վարսակը գերազանց է, իսկ ախոռի գաստավորությունը արտակարգ հարմար. յուրաքանչյուրն ուներ իր մսուրը, թեև առանձնացված, բայց միջնորմների վրայով կարելի էր տեսնել մյուս ձիերին ևս, այնպես որ, եթե հանկարծ ծագեր նրանցից որևէ մեկի, նույ-

նիսկ ամենահեռավորի, վրնջալու քմահաճույունը, կարելի կլիներ նույն բանով հենց նույն ժամին պատասխանել։

Մի խոսքով բոլորն էլ ընտելացան, ինչպես իրենց տանը։ Իսկ ինչ վերաբերում է այն պահանջին, որի համար Պավել Իվանովիչը շրջագայում էր լայնատարած Ռուսաստանով մեկ, այսինքն՝ մեռած հոգիներին, ապա այդ հարցի առթիվ նա դարձել էր շատ զգույշ և նրբազգաց, եթե նույնիսկ գործ ունենար կատարյալ հիմարների հետ։ Սակայն Տենտետնիկովը, այսպես թե այնպես, գրքեր է կարդում, փիլիսոփայում է, ջանում է իրեն համար պարզել ամեն բանի պատճառը՝ ինչպե՞ս է լինում և ինչո՞ւ «Ո՛չ, լավ կլինի խորհել՝ չի՞ կարելի արդյոք այլ կերպ»։ Այդպես էր նա մտածում։ Հաճախ շաղակրատելով կալվածատիրոջ ծառաների հետ, նա, ի միջի այլոց, իմացավ նրանցից, որ կալվածատերը առաջներում շատ հաճախ այցելում էր իր հարևան գեներալին, որ գեներալն ունի մի օրիորդ, որ այդ օրիորդն էլ դեպի պարոնը, պարոնն էլ դեպի օրիորդը... Բայց հետո ինչ-ինչ պատճառով գժտվեցին ու նրանց հարաբերությունները խզվեցին։ Նա ինքն էլ էր նկատել, որ Անդրեյ Իվանովիչը մատիտով ու գրչով շարունակ նկարում էր կանանց գլուխներ՝ մեկը մյուսին նման։

Մեկ օր, ճաշից հետո, ըստ սովորության, մատների մեջ պտտեցնելով արծաթյա ծխատուփն իր առանցքի շուրջը, հետևյալն ասաց.

— Դուք, Անդրեյ Իվանովիչ, ամեն բան ունեք, բացի մի բանից։

— Ի՞նչ,— հարցրնց վերջինս, դուրս թողնելով ոլորապտույտ ծուխը։

— Կյանքի ընկեր։

Անդրեյ Իվանովիչը ոչինչ չասաց։ Դրանով էլ զրույցն ավարտվեց։

Չիչիկովը չվհատվեց, ընտրեց մի այլ ժամանակ, նախքան ընթրիքը և զրուցելով այս ու այն հարցի մասին, հանկարծ ասաց.

— Իսկապես, Անդրեյ Իվանովիչ, բոլորովին չէր խանգարի, որ ամուսնանայիք։

Դրան պատասխան գոնե մի բառ ասեր Տենտետնիկովը, կարծես այդ թեմայով զրույցն անգամ անհաճելի էր նրան։

Չիչիկովը չվհատվեց։ Երրորդ անգամ ընտրեց ժամանակը, արդեն ընթրիքից հետո ու դիմեց նրան հետևյալ խոսքերով.

— Այնուամենայնիվ, որքան էլ շուռումուռ եմ տալիս ձեր հանգամանքները, տեսնում եմ, որ դուք պետք է ամուսնանաք, ձեզ կպատի սևամաղձությունը։

Չգիտես՝ արդյոք Չիչիկովի խոսքե՞րն էին այս անգամ համոզիչ, թե՞ այդ օրը նրա տրամադրությունն էր հատկապես հակված դեպի անկեղծությունը, նա հառաչեց ու վեր թողնելով գլանակի ծուխը՝ ասաց.— Բոլոր դեպքերում պետք է երջանիկ ծնված լինել, Պավել Իվանովիչ,— ու պատմեց բոլորը, ինչ որ եղել էր, գեներալի հետ ունեցած ծանոթության ու գժտվելու ամբողջ պատմությունը։

Երբ Չիչիկովը բառ առ բառ լսեց ամբողջ եղելությունը ու տեսավ, որ միայն «դու» բառի համար է տեղի ունեցել նման պատմություն, շվարեց։ Մի վայրկյան նա ակնապիշ նայում էր Տենտետնիկովի աչքերին, չիմանալով, թե ի՛նչ կարծիք հայտնի նրա մասին. արդյոք նա կատարյալ հիմա՞ր է, թե՞ միայն ցանցառ։

— Անդրեյ Իվա՛նովիչ,— վերջապես ոտացց նա՝ սեղմելով նրա երկու ձեռքը,— այստեղ ի՞նչ վիրավորանք կա, ի՞նչ վիրավորանք եք տեսնում «դու» բառի մեջ։

— Բուն բառի մեջ ոչ մի վիրավորական բան չկա,— ասաց Տենտետնիկովը,— սակայն բառի իմաստում, այն ձայնի մեջ, որով ասվել է այդ բառը, վիրավորանք է պարունակում։ Դու—նշանակում է. «Հիշի՛ր, որ դու դատարկ, անպետք մարդ ես։ Ես քեզ հյուրընկալում եմ զուտ այն պատճառով, որ ուրիշ լավը չկա, իսկ երբ ժամանեց ոմն իշխանադուստր Յուզյակինա, դու գիտցիր քո տեղը, կանգնած մնա շեմքի առաջ»։ Ահա, թե դա ի՛նչ է նշանակում։

Այդ ասելով՝ բնավորությամբ խաղաղ ու հեզ Անդրեյ Իվանովիչի աչքերը փայլատակեցին, ձայնի մեջ զգացվեց վիրավորված զգացմունքների ցասկոտություն։

— Դե, թեկուզ հենց այդ իմաստով էլ, դրանում ի՞նչ կա,— ասաց Չիչիկովը։

— Ինչպե՞ս դուք ուզում եք, որ այդ վարմունքից հետո էլ ես շարունակեի նրան այցելել։

— Դե, դա ի՞նչ վարմունք է։ Նույնիսկ վարմունք էլ չէ,— սառնասրտությամբ ասաց Զիլիկովը։

— Ինչպե՞ս թե վարմունք չէ,— զարմացած հարցրեց Տենտետնիկովը։

— Դա գեներալների սովորությունն է և ոչ թե վարմունքը. նրանք բոլորի հետ էլ «դուս»-ով են խոսում։ Ի դեպ, ինչո՞ւ այդ բանը քույլ չտալ վաստակ ունեցող, պատվարժան մարդուն։

— Դա ուրիշ հարց է,— ասաց Տենտետնիկովը։— Եթե նա լիներ ծեր, չքավոր, ո՛չ հպարտ, ո՛չ մեծամիտ, ո՛չ գեներալ, այդ դեպքում ես քույլ կտայի, որ նա ինձ հետ «դուս»-ով խոսեր և նույնիսկ կընդունեի պատկառանքով։

«Սա կատարյալ հիմար է,— մտածեց Զիլիկովը,— ցնցոտիներ հագած մարդուն կարելի է քույլ տալ, իսկ գեներալին, ոչ...»։

— Լավ,— դիմեց նրան,— ենթադրենք, թե նա ձեզ վիրավորանք է հասցրել, դրա փոխարեն դուք նրա հետ քվիտ եք արել. նա ձեզ է ասել, իսկ դուք՝ նրան։ Գժտվել, չմոռանալով անձնական սեփական-[գործը],— դա, ներեցեք... եթե արդեն ընտրված է նպատակը, պետք է ուրեմն գնալ ճակատ առ ճակատ։ Կարիք կա՞ արդյոք մտածել, որ մարդը քքում է։ Մարդը միշտ էլ քքում է, նա այդպես է ստեղծված։ Դուք այժմ ամբողջ աշխարհում չեք գտնի մեկին, որ չքքի։

«Տարօրինակ մարդ է այս Զիլիկովը»,— տարակուսանքով մտածեց Տենտետնիկովը՝ կատարելապես զարմացած նրա այդ խոսքերից։

«Սակայն ի՛նչ խելառն է այս Տենտետնիկովը»,— նույն պահին մտածում էր Զիլիկովը։

— Անդրեյ Իվանովիչ, ես ձեզ հետ կխոսեմ անկեղծորեն, ինչպես եղբայրը եղբոր հետ։ Դուք անփորձ մարդ եք, քույլ տվեք, որ ես գլուխ բերեմ այդ գործը։ Ես կմեկնեմ նորին գերապանցության մոտ ու կբացատրեմ, որ դա ձեր կողմից քույլ է տրվել թյուրիմացությամբ, ձեր չհեղության և մարդկանց ու կյանքը չիմանալու հետևանքով։

— Մտադիր չեմ ստորանալ նրա առջև,— վիրավորված

ասաց Տենտետնիկովը,— ձեզ ևս չեմ լիազորում կատարելու այդ քայլը։

— Ես ստորաքարշություն անելու ընդունակ չեմ,— վիրավորված պատասխանեց Ջիլիկովը։— Որպես մահկանացու, մի այլ արարքում կարող են ինձ մեղադրել, բայց ստորաքարշության մեջ, երբե՛ք... Ներեցե՛ք, Անդրեյ Իվանովիչ, իմ բարի ցանկության համար, բայց չէի սպասում, որ իմ այդ խոսքերը կընդունեք նմանօրինակ վիրավորական իմաստով։

Այդ բոլորն ասվեց արժանապատվության զգացումով։

— Ներեցե՛ք, ես մեղավոր եմ,— շտապ վրա բերեց զգացված Տենտետնիկովը՝ սեղմելով նրա երկու ձեռքը։— Ես ձեզ վիրավորելու մտադրություն չունեի։ Երդվում եմ, որ ձեր բարեսիրտ միջամտությունը թանկ է ինձ համար։ Բայց թողնենք այդ խոսակցությունը։ Այլևս չխոսենք այդ մասին։

— Այդ դեպքում ես կմեկնեմ գեներալի մոտ այնպես, առանց առիթի։

— Ինչի՞ համար,— հարցրեց Տենտետնիկովը՝ զարմացած նայելով նրան։

— Մատուցելու հարգանացս հավաստիքը։

«Տարօրինակ մարդ է այս Ջիլիկովը»,— մտածեց Տենտետնիկովը։

«Տարօրինակ մարդ է այս Տենտետնիկովը»,— մտածեց Ջիլիկովը։

— Ես հենց վաղը, Անդրեյ Իվանովի՛չ, ժամը մոտ տասին, կմեկնեմ նրա մոտ։ Իմ կարծիքով, քանի շուտ մատուցել հարգանացս հավաստիքը, այնքան լավ։ Քանի որ իմ բրիչկան դեռ պատշաճ վիճակի մեջ չի դրվել, ապա թույլ տվեք վերցնել ձեր կառքը։

— Համեցե՛ք, ի՞նչ կա խնդրելու։ Լիակատար իրավունք ունեք. կառքն էլ, ամեն ինչն էլ ձեր տրամադրության տակ են։

Նման զրույցից հետո նրանք միմյանց հրաժեշտ տվին ու բաժանվեցին քնելու՝ շարունակելով խորհրդածել միմյանց տարօրինակությունների մասին։

Սակայն զարմանալի բան։ Մյուս օրը, երբ Ջիլիկովին հրամցրին ձիերը ու նա նոր ֆրակը, սպիտակ փողկապն ու ժիլետը հագին, գրեթե զինվորական ճարպկությամբ ցատկեց կառքի մեջ ու սլացավ առաջ՝ մատուցելու գեներալին իր հար-

գանաց հավաստիքը, Տենտետնիկովը ընկավ մի այնպիսի հոգեկան հուզմունքի մեջ, որպիսին վաղուց ի վեր չէր զգացել։ Նրա մտքերի այդ ամբողջ ժանգոտած ու նիրհող ընթացքը վերածվեց մի անհանգիստ գործունեության։ Ներվային վրդովմունքը հանկարծ համակեց մինչ այդ անհոգ ծուլության մեջ ընկղմված սնարի մարդու բոլոր զգացմունքները։ Մերթ նա նստում էր բաղմոցին, մերթ մոտենում լուսամուտին, մերթ ձեռքը գիրք էր վերցնում, մերթ փորձում էր խորհել— իզուր ցանկություն, միտքը չէր աշխատում։ Մերթ չանում էր ոչ մի բանի մասին չմտածել—իզուր չանքեր— մտքերի նման ինչ-որ պատառիկներ, մտքերի վերջավորություններ ու խըմբեր գալիս ու մխլում էին նրա գլուխը։ «Տարօրինակ դրություն է»,— ասաց նա ու մոտեցավ լուսամուտին, որ դիտի թավ անտառը հատող ճանապարհը, որի վերջում գեռ ծխում էր տակավին չհանգստացած փոշին։ Սակայն թողնենք Տենտետնիկովին, հետևենք Չիչիկովին։

ԳԼՈՒԽ II

Ընտիր ձիերը քիչ ավելի, քան կես ժամում Չիչիկովին տարան տասը վերստ տարածություն, սկզբում թավ անտառի միջով, ապա նոր կանաչին տվող ցանած արտերի կողքով, ապա՝ բարձունքների ստորոտով, որտեղից յուրաքանչյուր րոպե բացվում էին հեռավոր տեսարաններ, այնուհետև լորիների լայն ծառուղու միջով, որոնք նոր էին սկսել թփակալել, և բերին հասցրին նրան մինչև գյուղի կենտրոնը։ Այստեղ լորիների ծառուղին թեքվեց դեպի աջ ու վերածվելով բները զամբյուղներով ցանկապատված ձվաձև բարդիների փողոցի, դեռ առավ թուջե թափանցիկ դարպասի, որի միջից երևում էր գեներալի կորնթյան ութ սյուների վրա հենված, սեթևեթ քանդակ ունեցող տան ֆրոնտոնը։ Ամենուրեք զգացվում էր ամեն բան թարմ պահող յուղաներկի բույրը։ Թակն իր մաքրությամբ պարկեշտ էր նման։ Չիչիկովը կառքից դուրս ցատկեց պատվարժանությամբ, հրամայեց իր մասին զեկուցել գեներալին և հրավիրվեց ուղղակի նրա կաբինետը։ Գեներալն ապշեցրեց նրան իր վեհաշուք արտաքինով։ Նա իր հագին

ուներ ատլասե մկդակար հիանալի ծիրանագույն խալաթ, Հայացքը պարզ էր, դեմքն՝ առնական, բեղերն ու խոշոր բակենբարդները մասամբ սպիտակած, ծոծրակի մազերը կարճ խուզված էին սանրի տակով, պարանոցը ետևի մասում հաստ էր, այսպես կոչված՝ եռհարկանի, կամ եռածալք, ըստ լայնակի ճեղքվածքով։ Մի խոսքով այն գեղեցկատեսիլ գեներալներից էր, որոնցով այնքան հարուստ էր նշանավոր 12-րդ թվականը։ Գեներալ Բետրիշչևը, ինչպես և մեզանից շատերը, իր մեջ պարփակում էր բազմաթիվ առավելությունների կողքին նաև բազմաթիվ թերություններ։ Թե՛ մեկը և թե՛ մյուսը նրա մեջ դիզված էին, ինչպես հատուկ է ռուս մարդուն, մի տեսակ գեղարվեստական խառնաշփոթությամբ։ Վճռական պահին— մեծահոգություն, խիզախություն, անսահման առատաձեռնություն, ամեն բանում՝ խելք ու, դրան զուգընթաց, քմահաճություն, փառասիրություն, ինքնասիրություն և այն անձնական մանրուքները, առանց որի չի կարող կառավարվել ոչ մի ռուս մարդ, երբ նա անգործ է լինում։ Նա չէր սիրում բոլոր նրանց, ովքեր ծառայության մեջ ավելի մեծ հաջողություններ էին ունեցել ու նրանց մասին արտահայտվում էր կծու կերպով, խայթիչ էպիգրամներով։ Ամենից շատ կշտամբանքներ էր տեղում իր նախկին ընկերակցի հասցեին, որին նա համարում էր և՛ խելքով, և՛ ընդունակություններով իրենից ցածր, և որը, սակայն, գերազանցել էր նրան ու արդեն դարձել երկու նահանգների գեներալ-նահանգապետը և կարծես դիտմամբ՝ այն նահանգների, որտեղ գտնվում էր իր կալվածքը, այնպես որ ինքը դարձել էր այդ նահանգապետին մի տեսակ ենթակա անձնավորություն։ Վրիժառության համար նա իր նախկին ընկերակցին խայթում էր ամեն մի առիթով, նշավակում նրա ամեն մի կարգադրությունը և նրա բոլոր միջոցառումներն ու գործողությունները համարում կատարյալ անմտություն։ Նրա մոտ ամեն բան արտահայտվում էր տարօրինակ ձևով, սկսած լուսավորությունից, որի պաշտպանն ու նախանձախնդիրն էր։ Սիրում էր փայլել, սիրում էր զգալ նաև, որ ինքը գիտե այն, ինչ ծանոթ չէ ուրիշներին և չէր սիրում այն մարդկանց, ովքեր գիտեն որևէ բան, ինչը իրեն ծանոթ չէ։ Մի խոսքով, նա մի քիչ սիրում էր պարծենալ իր խելքով։ Լինելով կիսաարտասահմանյան կրթության տեր՝ նա,

Միևնույն ժամանակ, ուզում էր խաղալ ռուս մեծատուն մարդու դեր։ Եվ զարմանալի չէ, որ իր այդ անհավասարակշիռ բնավորությամբ, այդպիսի խոշոր, ցայտուն հակասություններով նա անխուսափելիորեն պետք է ծառայության մեջ բախվեր բազմաթիվ անախորժությունների, որոնց հետևանքով հեռացավ պաշտոնից, այդ ամենի մեջ մեղադրելով ինչ-որ թշնամական կուսակցության և մեծահոգություն չէր ունեցել որևէ բանում մեղավոր ճանաչել ինքն իրեն։ Պաշտոնաթող եղած ժամանակն էլ նա պահպանել էր իր նույն այդ պատկերավոր վեհաշուք վայելչությունը։ Լիներ նրա հագին բաճկոն, ֆրակ, թե խալաթ, նա նույն մարդն էր։ Սկսած ձայնից մինչև մարմնի անգամ փոքր շարժումը, նրա մոտ ամեն բան տիրական էր, հրամայական, որոնք ստորին պաշտոնյաների մեջ ներշնչում էին եթե ո՛չ հարգանք, ապա երկյուղ։

Ջիչիկովն զգաց և՛ այս, և՛ այն, թե՛ հարգանք և թե՛ երկյուղ։ Խոնարհությամբ թեքելով գլուխն ուսին և բացելով թևերը, կարծես պատրաստվում էր բարձրացնել գավաթներով լի մատուցարանը, նա զարմանալի ճարպկությամբ թեքվեց ամբողջ իրանով ու ասաց.

— Պարտքս համարեցի ներկայանալ ձերդ գերազանցությանը։ Հարգանք տածելով մարտի դաշտում հայրենիքը փրկող անձերի սխրագործությունների նկատմամբ, պարտքս համարեցի անձամբ ներկայանալ ձերդ գերազանցությանը։

Գեներալին, հավանաբար, դուր եկավ նման սկիզբը։ Կատարելով գլխի չափազանց բարեհաճ շարժում՝ նա ասաց.

— Անչափ ուրախ եմ ծանոթանալուս։ Շնորհ արեք նըստել, դուք որտե՞ղ եք ծառայել։

— Իմ ծառայության ասպարեզը սկսվել է արքունի գանձատանը, ձերդ գերազանցություն,— ասաց Ջիչիկովը՝ նըստելով բազկաթոռի ո՛չ թե մեջտեղը, այլ թեք, ու ձեռքով գրկելից բազկաթոռի բռնատեղը։— Ծառայության հետագա ընթացքն անց եմ կացրել զանազան տեղերում. եղել եմ և՛ արքունական դատարանում, և՛ շինարարական հանձնաժողովում, և՛ մաքսատանը։ Իմ կյանքը որոշ չափով, ձերդ գերազանցություն, կարելի է նմանեցնել ալիքների մեջ գտնված նավին։ Կարելի է ասել՝ ես պատված, խանձարուրված եմ համբերատարությամբ, ու ինքս լինելով, այսպես ասած, անձնավոր-

վուժ համբերատարություն... Իսկ ի՞նչ օրեր եմ քաշել հենց կյանքիս դեմ ոտնձգություններ կատարած բշնամիներիս ձեռքին, այդ մասին ի վիճակի չեն պատմել ո՛չ բառերը, ո՛չ գույները, ո՛չ էլ, այսպես ասած, վրձինը, այնպես որ կյանքիս մայրամուտին փնտրում եմ մի անկյուն միայն, որտեղ կարողանամ անցկացնել կյանքիս վերջին օրերը։ Առայժմ հյուրընկալվել եմ ձերդ գերազանցության մոտակա հարևանի մոտ...

— Որի՞,

— Տենտետնիկովի մոտ, ձերդ գերազանցություն։

Գեներալը կնճռեց դեմքը։

— Նա, ձերդ գերազանցություն, չափազանց ափսոսում է, որ չի մատուցել պատշաճ հարգանք...

— Ո՞ւմ նկատմամբ։

— Ձերդ գերազանցության արժանիքների նկատմամբ։ Խոսք չի գնում պրպտարանալու... Ասում է. «Եթե ես կարողանայի գոնե որևէ կերպ... որովհետև կարողանում եմ,— ասում է,— ճիշտ գնահատել հայրենիքը,— ասում է,— փրկող անձերին»։

— Տե՛ր աստված, լիներ է մտքից անցնում։ Ես հո չեմ նեղանում,— ասաց մեղմացած գեներալը։— Սրտիս խորքում ես նրան անկեղծ սիրել եմ և հավողված եմ, որ ապագայում նա օգտակար մարդ կդառնա։

— Միանգամայն արդարացիորեն բարեհաճեցիք արտահայտվել, ձերդ գերազանցություն, իրոք որ, օգտակար մարդ կդառնա։ Շնորհալի ճարտար լեզու ունի և գրելու էլ ձիրք։

— Բայց, հավանաբար, դատարկ բաներ է գրում, ինչ-որ ուտոնավորներ։

— Ո՛չ, ձերդ գերազանցություն, դատարկ բաներ չէ... Նա, կարծես, կարևոր գործով է զբաղվում... Նա... պատմություն է գրում, ձերդ գերազանցություն։

— Պատմությո՞ւն։ Ի՞նչ պատմություն։

— Պատմություն...— այստեղ Ջիչիկովը կանգ առավ՝ չգիտես ա՛յն պատճառով, թե նրա դիմաց գեներալ էր նստած, թե՞ դուտ այն բանի համար, որ հարցին տա ավելի կարևոր իմաստ ու ավելացրեց.— գրում է գեներալների պատմությունը, ձերդ գերազանցություն։

— Ինչպե՞ս թե գեներալների։ Ո՞ր գեներալների։

— Առհասարակ, գեներալների, ձերդ գերազանցություն, ընդհանուր առմամբ վերցրած։ Այսինքն՝ ճիշտն ասած հայրենական գեներալների։

Ջիլիկովը կատարելապես շփոթվեց ու կորցրեց գլուխը, քիչ մնաց, որ ինքը քթի այդ բոլորի վրա ու մտքում ասաց. «Տե՛ր աստված, ինչ հիմար բաներ եմ դուրս տալիս»։

— Ներեցե՛ք, ես այնքան էլ լավ չեմ հասկանում... Ի՞նչ է ուրեմն ստացվում. դա որևէ ժամանակաշրջանի պատմությո՞ւն է, թե՞ առանձին կենսագրություններ, ընդ որում՝ բոլորի՞, թե՞ 12 թվականին մասնակցածների՞ն

— Ճիշտ այդպես, ձերդ գերազանցություն՝ 12 թվականին մասնակցածների։

Այդ ասելով, նա մտածեց. «Որ սպաներն էլ, բան չեմ հասկանում»։

— Դե, ինչո՞ւ նա ինձ մոտ չի գալիս։ Ես կարող էի նրա համար հավաքել չափազանց հետաքրքիր նյութեր։

— Քաշվում է, ձերդ գերազանցություն։

— Ի՜նչ անմտություն։ Մի ինչ-որ դատարկ խոսքի համար... Բայց ես բնավ էլ այդպիսի մարդ չեմ։ Ես նույնիսկ ինքս պատրաստ եմ գնալ նրա մոտ։

— Նա իրեն թույլ չի տա, նա ինքը կգա,— ասաց Ջիլիկովը, ուշքի եկավ, բոլորովին քաջալերվեց ու մտածեց. «Ա՛յ քեզ պատեհություն՝ գեներալները տեղին մեջ ընկան։ Բայց խոսքը մեր մեջ՝ ուղղակի հիմարաբար թոցրի»։

Կաբինետում լսվեց մի խուլ ձայն։ Փորագրված պահարանի կաղնյա դուռն ինքնիրեն բացվեց, ու նրա բացված հակառակ կողմում երևան եկավ մեկը, որը բռնել էր դռան ւղղձյա բռնակը։ Եթե մութ սենյակում ուժեղ լամպերով հակառակ կողմից հանկարծ փայլեր մի թափանցիկ նկար, այնքան չէր ապշեցնի իր անսպասելի հայտնությամբ, ինչպես այդ կերպարանքը, որը կարծես թե հանդես էր եկել սենյակը լուսավորելու համար։ Թվում էր, թե նրա հետ միասին ներս ընկավ արևի ճառագայթը, կարծես ժպտաց գեներալի մոայլ կաբինետը։ Առաջին պահին Ջիլիկովը չկարողացավ իրեն հաշիվ տալ, թե իրականում ի՛նչ բան է կանգնած իր առջև։ Դժվար էր ասել, թե ի՛նչ երկրի էակ էր նա։ Դեմքի այդպիսի ան-

բիծ, ազնիվ գծեր ոչ մի տեղ չէր կարելի գտնել, բացի թերևս փորագրված հնագույն քանկագին քարերից։ Նետի պես ուղիղ ու թեթև նա իր հասակով կարծես թե իր շրջապատում եղած ամեն բանից բարձր էր։ Սակայն դա պատրանք էր։ Նա բոլորովին էլ բարձր հասակ չուներ։ Այդ տպավորությունը ստացվում էր նրա մարմնի բոլոր մասերի արտասովոր համաչափության շնորհիվ։ Շրջագեստն այնպես էր գրկել նրա իրանը, որ թվում էր՝ լավագույն կարողները միմյանց հետ խորհրդակցել էին՝ ինչպես անեն, որ հաջող կերպով զարդարեն նրան։ Բայց դա ևս պատրանք էր։ Հագնված էր նա մի կերպ, ինքն իրեն՝ ասեղը երկու-երեք տեղով հապճեպ ձգել էր չմաշած միալար կտորը և վերջինս նրա մարմնի շուրջը հավաքվել ու դասավորվել էր այնպիսի փոքերով ու ծալքերով, որ եթե այդ բոլորը աղչկա հետ միասին փոխադրենք նկարի վրա, ապա մոդայով զուգված բոլոր օրիորդները նրա առջև կդառնային խայտաճամուկ էակներ, մանր կտորտանքից շինված տիկնիկներ։ Եթե նրան ընդգրկված շրջագեստի այդ բոլոր ծալքերի հետ միասին աղչկան վերածեինք մարմարի, նրան կանվանեինք հանճարեղ ստեղծագործությունների պատճեն։ Մի բան միայն լավ չէր. նիհար էր և բարակ՝ ավելի, քան պետք էր։

— Ներկայացնում եմ ձեզ իմ երես տված աղչկան,— ասաց գեներալը՝ դիմելով Ջիչիկովին։— Սակայն ձեր ազգանունը, անունն ու հայրանունը մինչև այժմ չգիտեմ։

— Մի՞թե կարիք կա իմանալ այն մարդու անունն ու հայրանունը, որ սխրագործություններով իրեն չի նշանավորել,— համեստությամբ պատասխանեց Ջիչիկովը՝ մի կողմ թեքելով գլուխը։

— Համենայն դեպս, այնուամենայնիվ, հարկ է իմանալ...

— Պավել Իվանովիչ, ձերդ գերազանցություն,— ասաց Ջիչիկովը, խոնարհելով գլուխը գրեթե զինվորական ճարպկությամբ ու ետ ցատկելով ուժերն գնդակի թեթևությամբ։

— Ո՛ւրինակ,— ասաց գեներալը, դիմելով աղչկան.— Նո՛ր Պավել Իվանովիչն ասաց չափազանց հետաքրքիր մի բան։ Մեր հարևան Տենտետնիկովը այնքան էլ հիմար մարդ չէ, ինչպես մենք էինք կարծում։ Նա զբաղված է բավականաչափ

կարևոր գործով, գրում է տասներկուերորդ թվականի գեներալների պատմությունը։

— Դե ո՞վ էր կարծում, թե նա հիմար մարդ է,— արագ պատասխանեց աղջիկը։— Միայն Վիշնեպոկրոմովն է այդպես կարծում, որին դու հավատում ես, որը թե՛ դատարկապորտ է և թե՛ ստոր մարդ։

— Ինչո՞ւ ստոր։ Նա ճիշտ որ դատարկապորտ է,— ասաց գեներալը։

— Նա ո՛չ միայն դատարկապորտ է, այլև ստոր է ու մրտքերով էլ պղտոր։ Ով իր եղբորը դրկում է ու հարազատ քրոջը դուրս անում տնից, նա ստոր է։

— Դե դա խոսակցություններ են միայն։

— Այդպիսի բաներ իզուր տեղը չեն խոսվում։ Ես, հայրի՛կ, չեմ կարողանում հասկանալ, թե ինչպես դու, ունենալով բարի սիրտ ու հազվագյուտ մեղմ բնավորություն, կարողանում ես հաշտվել այնպիսի մարդու հետ, որը քեզանից հեռու է ինչպես երկիրը երկնքից, և որի մասին ինքդ լավ գիտես, որ վատ մարդ է։

— Տեսնում եք, այսպես է ահա,— ժպտալով դիմից Չիչիկովին գեներալը,— ահա նման ձևով մենք միշտ վիճում ենք միմյանց հետ։

Ապա դիմելով իր վիճող աղջկան՝ շարունակեց.

— Հոգյա՛կս, ես հո չեմ կարող նրան դուրս անել։

— Ինչո՞ւ դուրս անել։ Բայց ինչո՞ւ այդքան հոգատարություն ցուցաբերել նրա նկատմամբ, ինչո՞ւ այդչափ սիրել։

Այստեղ Չիչիկովը հարկ համարեց խառնվել զրույցին ու ասել իր խոսքը։

— Բոլորը սիրո կարիք են զգում, օրիո՛րդ,— ասաց Չիչիկովը։— Նույնիսկ անասունը սիրում է, որ նրան փայփայեն. այդ ձգտումով նա ախոռից դուրս է ցցում իր մռութը, թե ահա՝ փաղաքշեցե՛ք։

Գեներալը ծիծաղեց.

— Հենց այդպես, մռութը դուրս է ցցում՝ փաղաքշի՛ր նրան... Հա՛, հա՛, հա՛։ Նրա ո՛չ միայն ամբողջ մռութը, այլև ինքը ոտքից գլուխ մրի մեջ է, բայց դարձյալ պահանջում է, ինչպես ասում են, խրախուսանք... Հա՛, հա՛, հա՛, հա՛։

Եվ գեներալի մարմինը ծիծաղից սկսեց երերալ։ Երբեմնի

խիտ էպոլետներ կրող նրա ուսերն այնպես էին ցնցվում, կարծես մինչև այժմ էլ կրում էին էպոլետներ։

Ջիլիկովը ևս հանդես եկավ ծիծաղի միջարկությամբ, բայց, ի հաճույս գեներալի, քրքջաց է տառով՝ հէ՛, հէ՛, հէ՛, հէ՛, հէ՛։ Նրա մարմինը ևս սկսեց երերալ, թեև ուսերը չէին ցնցվում, որովհետև խիտ էպոլետներ չէին կրում։

— Կթալանի, կգողանա պետական գանձարկղը ու, նույնիսկ, պարգևներ կպահանջի անզգամը։ Չի կարելի, ասում է, առանց խրախուսանքի, չարչարվել եմ... Հա՛, հա՛, հա՛, հա՛։

Աղջկա սրտնիվ, հմայիչ դեմքը ծածկվեց վշտալի արտահայտությամբ։ «Ա՛խ, հայրի՛կ, չեմ հասկանում, թե դու ինչպե՛ս ես կարողանում ծիծաղել։ Այդ ստոր քայլերն ինձ վրա տխուր տպավորություն են թողնում և ուրիշ ոչինչ։ Երբ տեսնում եմ, որ աչքիս առաջ բացեիբաց խարեբայություն է տեղի ունենում և այդ մարդիկ չեն պատժվում ընդհանուր ատելությամբ, ես չգիտեմ, թե ի՞նչ է կատարվում ինձ հետ, նման դեպքերում ես կատաղում եմ, նույնիսկ դառնում վատ, մտածում եմ, մտածում...»— ու քիչ մնաց լաց լինի։

— Միայն խնդրում եմ, չզայրանաս մեզ վրա,— ասաց գեներալը։— Մենք այս բոլորի մեջ ո՛չ մի մեղք չունենք։ Ճիշտ չէ՞,— ասաց նա՝ դիմելով Ջիլիկովին։— Համբուրի՛ր ինձ ու գնա սենյակդ։ Հիմա ես հագնվելու եմ, որ ճաշենք։ Դու, իհարկե,— դիմեց նա Ջիլիկովին՝ նայելով նրա աչքերի մեջ,— հույս ունեմ, որ ինձ մոտ ես ճաշելու։

— Օ՜հ՝ միայն ձերդ գերազանցությունը...

— Ինչո՞ւմն է բանը, առանց աստիճաններիր ես, փառք աստծո, դեռ կարող եմ կերակրել Շչի կճարվի։

Երկու ձեռքն էլ ճարպկորեն աջ ու ձախ տարածելով, Ջիլիկովը երախտագիտությամբ ու հարգանքով գլուխը թեքեց վար այնպես, որ մի պահ նրա տեսողությունից չքացան սենյակի բոլոր իրերը և տեսանելի մնացին միայն իր սեփական կիսակոշիկների քթերը։ Իսկ երբ նա, մնալով որոշ ժամանակ նման հարգալից վիճակում, բարձրացրեց գլուխը, այլևս Ուլինկային չտեսավ։ Աղջիկն անհայտացել էր։ Նրա փոխարեն կանգնած էր թավ բեղերով ու թաիեներարդներով, հսկա հասակ ունեցող կամերդիներ՝ արծաթյա կոնքն ու ձեռքի լվացարանը բռնած։

— Դու ինձ թույլ կտա՞ս, որ քո ներկայությամբ հագնվեմ։

— Ո՛չ միայն հագնվել, այլև իմ ներկայությամբ կարող եք կատարել այն ամենը, ինչ հաճելի է ձերդ գերազանցությանը։

Հանելով խալաթի մեկ թևը և քշտելով պարթև բազուկնեերով շապկի թևերը, գեներալն սկսեց լվացվել, ցայտեցնել ջուրն ու բադի պես փռնչալ։ Սապնոտ ջուրը թռչում էր ամեն կողմ։

— Սիրում են, սիրում, բոլորը շատ են սիրում, որ քաջալերվեն,— ասաց նա՝ ամեն կողմից սրբելով պարանոցը...— Փաղաքշի՛ր, շոյի՛ր նրան, բայց արի տե՛ս, որ առանց փաղաքշանքի գողանալ էլ չի ցանկանա։ Հա՛, հա՛, հա՛։

Ջիչիկովն արտասովոր տրամադրության մեջ էր։ Ոգևորությունն անսպասելի կերպով համակեց նրան։ «Գեներալը կենսուրախ ու բարեհամբույր մարդ է, պետք է փորձել»,— մտածեց նա ու տեսնելով, որ կամերդինները կոնքը ձեռքին դուրս եկավ, բացականչեց,

— Ձերդ գերազանցություն, քանի որ դուք այդքան բարի եք և բոլորի նկատմամբ ուշադիր, մի կարևոր խնդրով ուզում եմ դիմել ձեզ։

— Ինչպիսի՞ խնդիր։

Ջիչիկովը նայեց շուրջը։

— Նա, ձերդ գերազանցությո՛ւն, ունեմ մի զառամյալ քեռի՝ երեք հարյուր շնչի և երկու հազարի տեր... և բացի ինձանից՝ ո՛չ մի ժառանգորդ։ Սերության պատճառով անձամբ չի կարող կալվածքը կառավարել, իսկ ինձ էլ չի հանձնում։ Եվ ի՛նչ տարօրինակ պատճառաբանությունե է բերում՝ «Ես,— ասում է,— քրոջս տղային չեմ հանաչում, գուցե շռայլ կյանք վարող մարդ է։ Թող նա ապացուցի, որ ինքը վստահելի մարդ է, թող սկզբում ինքնիրեն ձեռք բերի երեք հարյուր շունչ, այդ դեպքում միայն կհանձնեմ նրան իմ երեք հարյուր շունչը»։

— Ուրեմն ի՞նչ է ստացվում, [նա] կատարյալ հիմա՞ր է,— հարցրեց [գեներալը]։

— Հիմար լինելը դեռ ոչինչ, թող այդպես էլ մնա։ Բայց պատկերացրեք իմ վիճակը, ձերդ գերազանցությունե։ Այդ ծե-

րուկը կապվել է իր մառանապետուհու հետ, իսկ վերջինս երեխաներ ունի։ Մեկ էլ տեսար՝ ամբողջն անցավ նրանց ձեռքը։

— Հիմար ծերուկը ցնորվել է, ուրիշ ոչինչ,— ասաց գեներալը։— Բայց ես չեմ պատկերացնում, թե ինչո՞վ կարող եմ օգնել,— ասաց նա, զարմացկոտ նայելով Չիչիկովին։

— Ահա թե ի՛նչ եմ մտածել։ Տեսե՛ք, ձերդ գերազանցություն, ձեր գյուղի բոլոր մեռած հոգիները հանձնեք ինձ, իբր կենդանի մարդիկ, գնման պայմանաթղթով, այդ դեպքում ես այդ պայմանաթուղթը կներկայացնեի ծերուկին, և նա ժառանգությունը կտար ինձ։

Այստեղ գեներալը բռնկվեց մի այնպիսի քրքիջով, որ հազիվ թե որևէ մեկն այդպես ծիծաղած լիներ։ Գլուխը ետ գցեց ու քիչ մնաց խեղդվեր։ Ամբողջ տունն իրար անցավ։ Ներսից կամերդինները։ Վախեցած դեմքով ներս վազեց աղջիկը։

— Հայրի՛կ, ի՞նչ պատահեց քեզ,— տագնապով հարցրեց նա՝ տարակուսանքով նայելով հոր դեմքին։

Գեներալը երկար ժամանակ չէր կարողանում որևէ ձայն հանել։

— Ոչի՛նչ, հոգյա՛կս, մի՛ անհանգստանա։ Գնա՛ քո սենյակը, մենք հիմա կչանք ճաշելու։ Անհո՛գ եղիր։ Հա՛, հա՛, հա՛։

Ու մի քանի անգամ խեղդվելով, նոր ուժով դուրս պոռթկաց գեներալի քրքջոցը, արձագանք տալով սրահից մինչև վերջին սենյակը։

Չիչիկովը անհանգիստ դրության մեջ էր։

— Բա քեռիդ, քեռի՛դ, ի՞նչ հիմար դրության մեջ կդնի ծերուկը։ Հա՛, հա՛, հա՛։ Կենդանի մարդկանց փոխարեն մեռելներ կգտանա։ Հա՛, հա՛։

«Դարձյալ քոքեց,— մտածում էր Չիչիկովը,— ասես խուտուտ են տալիս, ինչպե՞ս է, որ չի պայթում»։

— Հա՛, հա՛, հա՛,— շարունակեց գեներալը,— ա՛յ քեզ ավանակ։ Եվ որտեղի՞ց է խելքին փչել՝ «Թող սկզբում ինքն իրեն դատարկ տեղից ճարի երեք հարյուր շունչ, այն գեպքում միայն կտամ երեք հարյուր շունչ»։ Իսկական ավանակ է։

— Ավանակ է, ձերդ գերազանցություն։

— Քո հնարածն էլ պակասը չի, հրամցնել ծերուկին մեռածներ։ Հա՛, հա՛, հա՛։ Աստված գիտե՝ ի՛նչ կտայի, միայն

տեսնեի, թե դու ինչպե՛ս ես մատուցում նրան այդ մեռելների դնաթուղթը։ Դե, ո՞նց է, ի՞նչ դրության մեջ է նա։ Շա՞տ ծեր է։

— Ութսուն տարեկան է։

— Սակայն դեռ շարժվո՞ւմ է, առո՞ւջ է։ Ըստ երևույթին, նա պինդ էլ մնացել է, քանի որ ապրում է մառանապետուհու հետ կողք-կողքի...

— Ի՛նչ պնդություն։ Հլղել է արդեն, ձերդ գերազանցություն։

— Այ քեզ հիմարի գլուխ։ Հիմար է, չէ՞։

— Հիմար է, ձերդ գերազանցություն։ Բոլորովին ցնդել է։

— Սակայն տնից դուրս գալի՞ս է,— լինո՞ւմ է հասարակության մեջ, դեռ ոտքի վրա կանգնո՞ւմ է։

— Կանգնում է, բայց գժվարությամբ։

— Ա՛յ քեզ հիմարի գլուխ։ Բայց դեռ դիմացկո՞ւն է։ Ո՞ւ տամներ ունի՞։

— Ընդամենը երկու ատամ, ձերդ գերազանցություն։

— Ա՛յ քեզ ավանա՛կ։ Դու, հոգի՛ս, չնեզանաս... Թեև նա քո քեռին է, բայց ավանակ է։

— Ավանա՛կ է, ձերդ գերազանցություն։ Թեև աղգականս է ու ծանր է խոստովանել այդ, բայց ի՞նչ արած։

Սուտ էր խոսում Չիչիկովը. այդ խոստովանության մեջ նա ոչ մի ծանրություն չէր գտնում, առավել ևս, որ կյանքում հազիվ թե որևէ քեռի ունեցած լիներ։

— Ուրեմն, ձերդ գերազանցություն, տվեք ինձ...

— Մեռած հոգինե՞ր տամ։ Դե, այդ հնարանքի համար ես նրանց քեզ կտամ իրենց հողով ու բնակարանով։ Ամբողջ գերեզմանատունը քեզ վերցրու։ Ա՛, հա՛, հա՛, հա՛։ Իսկ ծերուկը, ծերուկը։ Ա՛, հա՛, հա՛, հա՛։ Ինչ հիմար դրության մեջ կլինի քեռիդ։ Ա՛, հա՛, հա՛, հա՛։

Եվ գեներալյան ծիծաղը նորից տատրածվեց գեներալյան սենյակներով[1]։

---

1. Այստեղից հետո բնագրում խոշոր բաց կա։

ԳԼՈՒԽ III

«Երբ գնդապետ Կոշկարևն իրականում խելագար է, դա վատ չէ», մտածեց Ջիչիկովը, գտնվելով նորից բաց դաշտերի ու տարածությունների մեջ, երբ ամեն ինչ չքացավ և մնաց միայնակ երկնակամարն ու մի կողմում էլ՝ երկու ամպ։

— Դու, Սելիֆա՛ն, լավ իմացա՞ր, թե ինչ ճանապարհով ենք գնալու գնդապետ Կոշկարևի մոտ։

— Ես, Պավել Իվա՛նովիչ, թույլ տվեք ասել, քանի որ շարունակ զբաղված էի կառքը ճանապարհի համար պատրաստելով՝ ժամանակ չունեցա, իսկ Պետրուշկան կառապանից հարցուփորձ էր անում։

— Ա՛յ, քեզ սարսաղ մարդ։ Ասել եմ, որ Պետրուշկայի վրա հույս չդնես, Պետրուշկան գերան է տեղովը, Պետրուշկան հիմար է։ Պետրուշկան, երևի, հիմա էլ հարբած է։

— Ինչ մի դժվար բան է,— ասաց Պետրուշկան՝ կիսով չափ դառնալով ու ծուռ նայելով։— Սարից իջնելուց հետո պետք է վերցնել մարգագետնի ուղղությունը և ուրիշ ոչինչ։

— Իսկ դու, բացի օղուց, ուրիշ բան կուլ չե՞ս տվել։ Խոսք չկա՛, լավ պտուղ ես։ Կարելի է ասել՝ ամբողջ Եվրոպան զարմացրիր։

Այդ ասելով, Ջիչիկովը շփեց կզակն ու մտածեց. «Ա՛մ կայն ինչպիսի՛ տարբերություն լուսավորված քաղաքացու և լակեյի կոպիտ դեմքի միջև»։

Կառքը հետզհետե սկսեց բարձունքից իջնել։ Նորից բացվեցին մարգագետիններն ու բարդիների պուրակներով ծածկված տարածությունները։

Դանդաղորեն ճոճվելով ճկուն զսպանակների վրա՝ հարմար կառքը շարունակում էր խնամքով իջնել աննկատելի զառիվայրից և, վերջապես, մարգագետինների միջով, ջրաղացների կողքով սլացավ՝ թեթև դղրդոց արձակելով կամուրջների վրա, թեթև ցնցվելով՝ փափուկ հողի հարթության վրա։ Եվ գնաց մի հողաթումբ կամ խորդուբորդ ճավ պատճառեր ուղևորի կողերին։ Կատարյալ հաճույք էր և (ո՛չ թե) կառք։ Հեռվից երևում և անհետանում էին ավազուտները, նրանց կողքով արագորեն թռչում-անցնում էին բարակ լաստենիների ու սպիտակ կաղամախիների շյուղերը, որոնք դիպ-

չում էին կառքի ուսին նստած Սելիֆանին ու Պետրուշկային։ Վերջինից շլուզերը վայր էին գցում գլխի կարտուզը։ Կոշտ ու կոպիտ սպասավորը կառքից գետին էր ցատկում, հայհոյում ծառն ու դա տնկած անձնավորությանը, սակայն նա համառ կերպով չէր ցանկանում կարտուզը կապել կամ նույնիսկ ձեռքով պահել, հուսալով, որ դա վերջինն է ու այլևս չի կրկնվի։ Եղած ծառերին շուտով միացան կեչիներն ու եղևնիները։ Արմատների մոտ՝ քավ բուսականություն, կապույտ լալազար ու անտառային դեղին կակաչ։ Անտառը մթնեց ու պատրաստվում էր նմանվել գիշերի։ Բայց հանկարծ ամեն կողմից շողացին լույսերը՝ կարծես փայլփլող հայելիներ։ Ծառերը նոսրացան, փայլփլող կետերը հետզհետե մեծացան, և ահա նրանց առջև բացվեց մի լիճ՝ չորս վերստ տրամագիծ ունեցող ջրային մի հարթություն։ Դիմացի ափին՝ ձիից վերև, տարածվել էր գորշ, գերանաշեն խրճիթներով գյուղը։ Ջրի մյջից լսվում էին գոռոցներ։ Մոտ քսան մարդ մինչև գոտիները, մինչև ուսերն ու կոկորդը ջուրը մտած, ուռկան էին քաշում դեպի հակառակ ափը։ Տեղի էր ունեցել ձախորդություն։ Ձկան հետ միասին ուռկանի մեջ էր խճճվել երկարությամբ ու հաստությամբ միևնույն չափի մի ինչ-որ կլորիկ մարդ, իսկ և իսկ ձմերուկ կամ տակառիկ։ Նա հուսահատ դրության մեջ էր ու ամբողջ կոկորդով գոռում էր. «Դմբո՛, Դենիս, հանձնի՛ր Կոզմային։ Կո՛զմա, Դենիսից վերցրո՛ւ ուռկանի ծայրը։ Այդպես մի՛ սեղմիր, Մեծ Ֆոմա։ Մոտեցի՛ր Փոքր Ֆոմային։ Անիծվածնե՛ր, ուռկանը կպատռեք, ասում եմ»։ Ձմերուկը, ըստ երևույթին, իր անձի համար չէ, որ վախենում էր. գիրության շնորհիվ նա չէր կարող խեղդվել և որքան էլ թավալ տար, որ սուզվի, միևնույն է, ջուրը նրան դուրս կթներ։ Իվ եթե երկու մարդ էլ նստեին նրա վրա, համառ փուչիկի նման նրանց հետ միասին կմնար ջրի երեսին, միայն թեթև կերպով կտնքար ու քթով բշտիկներ կարձակեր։ Նա, սակայն, շատ էր վախենում, որ ուռկանը պատռվի և ձուկը փախչի, և այդ պատճառով էլ, բոլոր գործողություններով հանդերձ, ափում կանգնած մի քանի մարդ ևս իրենց նետած պարաններով քաշում էին ուռկանը։

— Հավանաբար կալվածատերն է, գնդապետ Կոշկարևը,— ասաց Սելիֆանը։

— Ինչի՞ց իմացար։

— Այն, որ նրա մարմինը, ինչպես բարեհաճում եք տեսնել, ավելի ճերմակ է, քան մյուսներինը և գիրուքյունն էլ պատվական, ինչպես վայել է պարոնին։

Մինչ այդ ուղևանի մեջ խճճված պարոնին արդեն բավականաչափ քաշել-մոտեցրել էին ափին։ Զգալով, որ ինքն արդեն կարող է քայլել ջրի հատակին, սա ոտքի կանգնեց և այդ պահին տեսավ ջրապատնեշից իջնող կառքն ու նրա մեջ նըստած Չիչիկովին։

— Ճաշե՞լ եք,— գոչեց պարոնը, քրսած ձկան հետ մոտենալով ափին, ամբողջովին ցանցով փաթաթված, ճիշտ այնպես, ինչպես ամառ ժամանակ կնոջ ձեռքը լինում է թափանցիկ ձեռնոցի մեջ, և արևից պաշտպանվելու համար մի ձեռքը հովանոցի նման բռնած ճակատին, իսկ մյուսը ավելի ցածր՝ բաղնիքից դուրս եկող Վեներայի ձևով։

— Ո՛չ,— ասաց Չիչիկովը՝ բարձրացնելով կարտուզը և կառքի միջից շարունակելով իր ողջույնը։

— Դե, ուրեմն փառք տվեք ատծուն։

— Իսկ ի՞նչ,— հարցրեց Չիչիկովը հետաքրքրությամբ՝ կարտուզը գլխավերևում բռնած։

— Ահա թե ինչ, Փոքր Ֆոմա, թո՛ղ ուղևանը և հանի՛ր, ցույց տուր ձուկը։ Դմբո՛ Տրիշկա, ցանցը դեն նետիր,— բարձրը գոռում էլ [կալվածատերը],— և օգնիր, որ տաշտակիդ վեր բարձրացնեն թառափը։ Դմբո՛ Կոզմա, գնա օգնի՛ր։

Երկու ձկնորս տաշտի միջից բարձրացրին մի ինչ-որ հրեշի գլուխ։

— Տեսեք, թե ի՛նչ ազնվացեղն է, գետից է լողացել եկել,— գոչեց գնդիկ կալվածատերը։— Գնացե՛ք մեր բակը։ Կառապա՛ն, քշի՛ր ներքևով, բանջարանոցի միջով։ Դմբո Մեծ Ֆոմա, վազի՛ր առաջ, բարձրացրո՛ւ ուղեփակ գերանը։ Նա ձեզ ճանապարհը ցույց կտա, իսկ ես՝ իսկույն...

Երկարոտն, ուտաբռիկ Մեծ Ֆոման հենց ինչպես որ կար՝ սոսկ շապկով, կառքի առջևից վազ տվեց ամբողջ գյուղով մեկ, որտեղ ամեն մի խրճիթի առջև կախոտված էին պարկեր, ցանցեր, ուղևաններ և ձուկ որսալու քթոցներ. մուժիկները բոլորն էլ ձկնորսներ էին։ Այնուհետև մի ինչ-որ բանջարանոցից բարձրացրեց ուղեփակ գերանը և բանջարանոցնե-

րի միջով կառքը շարժվեց ու դուրս եկավ փայտե եկեղեցուց ոչ հեռու հրապարակը։ Եկեղեցուց այն կողմ, ավելի հեռու, երևում էին շենքերի կտուրները։

— Տարօրինակ մարդ է երևում այս Կոշկարևը,— ինքնիրեն մտածեց Չիչիկովը։

— Ահա և ես,— կողքից լսվեց մի ձայն։ Չիչիկովը նայեց։ Կալվածատերն արդեն արշավում էր նրա կողքով։ Հագին ուներ խոտա-կանաչավուն գույնի նանկի սերթուկ, դեղին շալվար, պարանոցն էլ առանց փողկապի, իսկ և իսկ Կուպիդոնի տեսքով։ Նա քեք նստել էր դրոժկայի մեջ, գրավելով ամբողջ կառքը։ Չիչիկովը փորձեց ինչ-որ բան ասել նրան, բայց գնդիկ մարդն արդեն անհետացել էր։ Դրոժկան նորից երևաց այնտեղ, որտեղ ձուկ էին բռնում։ Կրկին լսվեցին ձայներ՝ «Մեծ Ֆո՛մա ու Փոքր Ֆո՛մա։ Կո՛զմա ու Դենի՛ս»։ Իսկ երբ Չիչիկովը մոտեցավ տան մուտքին, շափաղանց մեծ եղավ զարմանքը, երբ տեսավ, որ գնդիկ կալվածատերը կանգնած էր շեմքին, որը և նրան առավ իր գրկի մեջ։ Քե ո՛նց էր կարողացել նա այդպես արագ քշել ու գալ, միանգամայն անհասկանալի էր։ Նրանք համբուրվեցին ռուսական հին սովորությամբ՝ եռակի խաչաձև։ Կալվածատերը հին սովորության տեր մարդ էր։

— Ես ձեզ ողջույն եմ բերել նորին գերազանցությունից,— ասաց Չիչիկովը։

— Ի՞նչ գերազանցություն։

— Ձեր ազգականից, գեներալ Ալեքսանդր Դմիտրևիչից։

— Ո՞վ է այդ Ալեքսանդր Դմիտրևիչը։

— Գեներալ Բետրիշչևը,— քիչ զարմացած պատասխանեց Չիչիկովը։

— Չեմ ճանաչում,— զարմանքով ասաց տանտերը։

Չիչիկովն ավելի ևս ապշեց։

— Ինչպե՞ս թե... Համենայն դեպս չեմ կասկածում, որ պատիվ ունեմ խոսելու գնդապետ Կոշկարևի հետ։

— Իզուր չեք կասկածում։ Դուք ժամանել եք ո՛չ թե նրա մոտ, այլ ինձ մոտ։ Պյոտր Պետրովիչ Պետուխ։ Պետուխ Պյոտր Պետրովիչ,— վրա բերեց տանտերը։

Չիչիկովն ապուշ կտրեց։

— Սա ի՞նչ բան է,— դիմեց նա Սելիֆանին ու Պետրուշկային, որոնք նույնպես երկուսով բերանները բացել էին ու աչքերը չռել՝ մեկը նստած կառքի ուսին, մյուսը կանգնած կառքի դռնակի մոտ։— Սա ինչպե՞ս ստացվեց, ապուշնե՛ր։ Չէ՞ որ ձեզ ասել էի՝ տանել գնդապետ Կոշկարևի մոտ... Իսկ սա Պյոտր Պետրովիչ Պետուխն է...

— Տղաները հրաշալի են վարվել։ Գնացե՛ք խոհանոց, այնտեղ ձեզ մեկական գավաթ օղի կտան,— ասաց Պյոտր Պետրովիչ Պետուխը։— Արձակեցե՛ք ձիերն ու իսկույն անցեք իմ սպասավորների սենյակը։

— Ես մի փոքր ամաչում եմ... ինչպիսի՛ անսպասելի սխալմունք,— ասաց Չիչիկովը։

— Սխալմունք չկա։ Դուք, նախ և առաջ, փորձեցեք, թե ինչպիսի՛ ճաշ ունեմ, հետո միայն կասեք սխալմունք է թե ոչ։ Ես ոնարհաբար խնդրում եմ,— ասաց Պետուխը՝ ընկնելով Չիչիկովի թևն ու տանելով նրան դեպի ներսի սենյակները։ Սենյակներից նրանց դեմ դուրս եկան երկու պատանի, ամառային սերթուկներով, երկուսն էլ բարակիրան, կարծես ուտենու շյուղեր։ Հոր հասակից մեկ արշինով ծլել, վեր էին բարձրացել։

— Իմ տղաներն են, գիմնազիստներ, արձակուրդ են եկել։ Նիկոլշա՛, դու մնա հյուրի մոտ, իսկ դու, Ալեքսաշա՛, ե՛կ ինձ հետ։

Այդ ասելով տանտերն անհետացավ։

Չիչիկովն զբաղվեց Նիկոլշայով։ Նիկոլշան, ըստ երևույթին, փուչ մարդ էր դառնալու։ Հենց առաջին հանդիպումից Չիչիկովին հաղորդեց, որ նահանգական գիմնազիայում սովորելուց ոչ մի շահ չկա, որ նրանք եղբոր հետ միասին մտադիր են գնալ Պետերբուրգ, որովհետև գավառում չարժե ապրել...

«Հասկանալի է,— մտքում ասաց Չիչիկովը,— գործը կվերջանա հրուշակարաններով ու բոլվարներով...»։

— Է, ի՞նչ դրության մեջ է ձեր հոր կալվածքը,— հարցրեց նա։

— Գրավ է դրված,— նրա հարցին պատասխանեց ինքը՝ հայրը, որ կրկին լույս էր ընկել հյուրասենյակում,— գրավ է դրված։

«Վատ է,— մտածեց Ջիչիկովը,— եթե այսպես շարունակվի, շուտով ոչ մի կալվածք չի մնա, պետք է շտապել»։

— Բայց իզուր եք շտապել գրավ դնելու,— կարեկից ձեվով ասաց նա։

— Վնաս չունի,— պատասխանեց Պետուխը։— Ասում են, թե շահավետ է։ Բոլորը գրավ են դնում. ինչո՞ւ մյուսներից հետ մնալ։ Բացի այդ, միշտ այստեղ եմ ապրել, փորձեմ մի քիչ էլ ապրել Մոսկվայում։ Տղաներս էլ են ահա համոզում, ուզում են մայրաքաղաքի կրթություն ստանալ։

«Հիմարի մեկը,— մտածում էր Ջիչիկովը,— ունեցածչունեցածը քամուն կտա, երեխաներին էլ կդարձնի շռայլ կյանք վարողներ։ Կալվածքը բավականաչափ մեծ է։ Նայում ես, մուժիկներն էլ լավ դրության մեջ են, իրենք էլ։ Իսկ հենց որ ռեստորաններով ու թատրոններով տարվեցին, ամեն բան տակնուվրա կլինի։ Ապրեր իր համար գյուղում, հիմարը»։

— Ես գիտեմ, թե ինչի՛ մասին եք մտածում,— ասաց Պետուխը։

— Ինչի՞ մասին,— շփոթված հարցրեց Ջիչիկովը։

— Դուք մտածում եք՝ «հիմարի մեկն է այս Պետուխը, զոռով քաշել-բերել է ճաշելու, իսկ մինչև հիմա կերակուր չկա»։ Շուտով կլինի, հարգելիս։ Քաշալ աղջիկը դեռ մազերը չհյուսած՝ ճաշը պատրաստ կլինի։

— Հայրի՛կ, Պլատոն Միխայլիչն է գալիս,— ասաց Ալենքսաշան՝ դուրս նայելով լուսամուտից։

— Դարչնագույն ձին հեծած,— վրա բերեց Նիկոլուշան՝ թեքվելով դեպի լուսամուտը։

— Ո՞ւր է, ո՞ւր է,— բղավեց Պետուխը, մոտ վազելով։

— Ո՞վ է այդ Պլատոն Միխայլովիչը,— հարցրեց Ջիչիկովը Ալենքսաշային։

— Մեր հարևանն է, Պլատոն Միխայլովիչ Պլատոնովը, հրաշալի՛ մարդ է, հիանալի՛ մարդ,— պատասխանեց ինքը՝ Պետուխը։

Մինչ այդ, ներս մտավ ինքը՝ Պլատոնովը, վայելուչ հասակով մի գեղեցիկ տղամարդ, փայլող, բաց-շագանակագույն խուճուճ մազերով։ Նրա հետից ներս մտավ, զրնգացնելով իր պղնձե վզկապը, Ցարը անունը կրող մեծ մուրթով մի հրեշ շուն։

— Ճաշե՞լ եք,— հարցրեց տանտերը։

— Ճաշել եմ։

— Ի՞նչ է, նկել եք ծպղրելո՞ւ ինձ։ Իմ լինչի՞ն եք պետք ճաշից հետո։

Սիծաղելով հյուրն ասաց.

— Կարող եմ ձեզ մխիթարել, ոչինչ չեմ կերել, ախորժակ բոլորովին չունեմ։

— Տեսնեիք, թե ինչպիսի հաջող որս եղավ, մի թառա՜փ եմ բերել, մի թառա՜փ։ Այնպիսի ծածաններ ու սազաննե՜ր։

— Ձեզ լսելիս անգամ նախանձում եմ։ Ինչո՞ւ դուք միշտ այդպես ուրախ եք։

— Ներեցե՛ք, ինչո՞ւ պետք է տխուր լինեմ,— ասաց տանտերը։

— Ինչպե՞ս թե ինչու, որովհետև տխուր է։

— Այդ նրանից է, որ քիչ եք ուտում։ Փորձեցեք ախորժակով ճաշել։ Վերջերս է, որ տխրություն են հնարել։ Առաջներում ոչ ոք չէր տխրում։

— Հերիք ձեզ գովեք։ Իբր թե դուք երբեք չեք տխրել։

— Սրբե՛ք։ Չեմ էլ իմանում, թե ի՛նչ բան է տխրությունը, նույնիսկ տխրելու ժամանակ էլ չունեմ։ Առավոտյան արթնանում ես. խոհարարն է իսկույն ներկայանում, ճաշ պետք է պատվիրես, հետո թեյ ես խմում, հետո գործակատարն է գալիս, ապա գնում ես ձուկ որսալու, մեկ էլ տեսար՝ ճաշն արդեն պատրաստ է։ Ճաշից հետո դեռ կարգին չհանգստացած, դարձյալ խոհարարն է մտնում, ընթրիք պետք է պատվիրել, հետո գալիս է խոհարարը, մյուս օրվա ճաշը պետք է պատվիրես։ Տխրելու ժամանակ մնո՞ւմ է։

Ամբողջ ըրույցի ընթացքում Չիչիկովը ուշի-ուշով դիտում էր հյուրին, որը նրան զարմացրել էր իր արտասովոր գեղեցկությամբ, վայելուչ, գեղեցկատեսիլ հասակով, երիտասարդական չկորցրած թարմությամբ, ո՛չ մի բշտիկով չայլանդակված դեմքի կուսական մաքրությամբ։ Ո՛չ կիրքը, ո՛չ տխրությունը, ո՛չ էլ նույնիսկ հուզմունքի ու անհանգստության նման որևէ բան չէին համարձակվել դիպչելու նրա կուսական դեմքին ու առաջացնելու կնճիռներ, բայց միևնույն ժամանակ չէին կենդանացրել այն։ Վերջինս մի տեսակ սառն

էր, չնայած որ հեգնական ժպիտը երբեմն աշխուժացնում էր դեմքը։

— Թույլ տվեք նկատել,— ասաց նա,— նույնպես չեմ կարող հասկանալ, որ ունենալով այնպիսի արտաքին, ինչպիսին դուք, մի՞թե կարելի է տխրել։ Իհարկե, եթե դրամի պակաս եք զգում, կամ թշնամիներ ունեք, որոնք նույնիսկ պատրաստ են մահափորձ կատարել մարդկանց կյանքի դեմ...

— Օրևակայեցեք,— ընդհատեց վայելչադեմ հյուրը,— եւ կցանկանայի, որ զանազանության համար ինձ համակեր որևէ հուզմունք, թեկուզ մեկն ու մեկը ինձ զայրացներ. ա՛յդ էլ չի լինում։ Տխուր է և ուրիշ ոչինչ։

— Ուրեմն, ձեր կալվածքը սակավահող է, քիչ շնչեր ունեք։

— Ամենևին էլ ոչ։ Ես ու եղբայրս ունենք տասը հազար դեսյատին հող ու դրան կից՝ հազարից ավելի գյուղացիներ։

— Տարօրինակ է, հասկանալ չեմ կարող։ Բայց գուցե պատճառը անբերրիությո՞ւնն է, հիվանդություննե՞րը, կամ աշխատող ձեռքերը շա՞տ են մեռել։

— Ընդհակառակը, ամեն բան կարգին է։ Եղբայրս հիանալի տնտես մարդ է։

— Եվ այդ բոլորից հետո տխրել, հասկանալ չեմ կարող,— ասաց Չիչիկովն ու ուսերը թոթվեց։

— Իսկ մենք հիմար այդ տխրությունը կվոնդենք,— ասաց տանտերը։— Ալեքսա՛շա, շտապ վազիր խոհանոց և խոհարարին ասա, որ շուտափույթ կերպով մեզ կարկանդակներ ուղարկի։ Իսկ որտե՞ղ են ապուշ Ծմելյանն ու գող Անտոշկան. ինչո՞ւ նախաճաշիկը չեն բերում։

Սակայն դուռը բացվեց։ Ապուշ Ծմելյանն ու գող Անտոշկան ներկայացան սփռոցներով, բացեցին սեղանը, վրան դրին մատուցարանի մեջ դարսված վեց հատ գրաֆին, լի զանազան գույնի օշարակներով։ Երկար չանցած, մատուցարանների ու գրաֆինների շուրջը մանյակաձև դարսվեցին ափսեներ՝ ախորժակ գրգռող ամեն տեսակ ուտելիքներով։ Ծառաները ճարպիկ էին շարժվում, անընդհատ փակ ափսեներով ներս բերելով ինչ-որ տաք կերակուրներ, որոնց յուղը դեռ տժտժում էր։ Ապուշ Ծմելյանն ու գող Անտոշկան հիանալի էին կատարում իրենց գործը։ Այդ մականունները նրանց տըր-

վել էր ի միջի այլոց, խրախուսելու համար կալվածատերը հայհոյելու բոլորովին սովորություն չուներ, նա բարեսիրտ մարդ էր։ Բայց ռուս մարդը սիրում է համ ու հոտով բառեր գործածել, ինչպես մի գավաթ օղին մարսողության համար։ Ի՞նչ արած, այդպես է նրա բնավորությունը, ո՛չ մի անհամ բան չի սիրում։

Նախաճաշիկին հայտնվեց ճաշը։ Այստեղ բարեսեր տանտերը դարձավ կատարյալ ավազակ։ Հենց որ նկատում էր, թե ո՛վ ափսեի մեջ մեկ կտոր ունի, իսկույն էրկրորդն էր դնում, ավելացնելով՝ «առանց զույգի ո՛չ մարդը, ո՛չ էլ թռչունը աշխարհիս երեսին չեն կարող ապրել»։ Ո՛վ երկու կտոր ուներ, խոթում էր երրորդը՝ ավելացնելով. «Երկուսն ի՞նչ թիվ է։ Աստված երրորդություն է սիրում»։ Թեե հյուրն ուտում էր երրորդը, նա դարձյալ՝ «Ո՞վ է տեսել երեք անիվանոց սայլ։ Ո՛վ է երեք անկյունից խրճիթ կառուցում»։ Ջորսի համար ևս նա պատրաստի առածներ ու դարձվածքներ ուներ, հնգի համար՝ նույնպես։ Չիչիկովը մի ինչ-որ բան կէլավ՝ մուտ տանտերկու պատառ ու մտածում էր. «Դե, տանտերն այլևս հարմար խոսք չի գտնի»։ Իզուր, առանց որևէ խոսքի Պետուխը նրա ափսեի մեջ դրեց շամփուրի վրա խորոված հորթի ողնաշարային մասն ու պլոճիկներ և այն էլ ինչպիսի՜ հորթի։

— Երկու տարի կաթով մեծացրել եմ,— ասաց տանտերը,— հարազատ տղայիս պես էի խնամում։

— Չեմ կարող,— ասաց Չիչիկովը։

— Դուք փորձեցե՛ք, հետո ասեք, թե չեմ կարող։

— Ո՛չ, ներս չի գնա, տեղ չկա։

— Ծկեղեցու մեջ էլ տեղ չկար, բայց ներս մտավ քաղաքապետը, ճարվեց։ Իսկ այնտեղ այնպիսի նեղվածք էր, որ ասեղ գցելու տեղ չկար։ Դուք միայն փորձեցե՛ք, այդ պատառը նույն այն քաղաքապետն է։

Չիչիկովը փորձեց, իրոք որ պատառը քաղաքապետի նման մի բան էր։ Թվում էր, թե այլևս հնարավոր չէ որևէ բան տեղավորել, բայց տեղ ճարվեց։

«Դե, ո՞նց կարող է այդպիսի մարդը գնալ Պետերբուրգ կամ Մոսկվա։ Այդ հյուրասեր բնավորությամբ նա իր ունեցած-չունեցածը երեք տարում քամուն կտա»։ Այսինքն՝ նա չգիտեր, որ այժմ կատարելագործված է, առանց հյուրասեր

լինելու ևս հնարավոր է ամբողջովին սնանկանալ ո՛չ թե երեք տարում, այլ երեք ամսում։

Տանտերն անընդհատ լցնում էր ու լցնում հյուրերի բաժակները։ Իսկ եթե նրանցից որևէ մեկը կիսատ էր խմում, տալիս էր Ալեքսաշային ու Նիկոլաշային, որ վերջացնեն, որոնք էլ բաժակ-բաժակի ետևից կոնծում էին։ Սկզբից հենց երեվում էր, թե նրանք մայրաքաղաք գալուց հետո մարդկանց [ե՛ր] հատկություններից վրա են ուշադրություն դարձնելու։ Հյուրերի դրությունն այլ էր, նրանք հազիվհազ դուրս եկան պատշգամբ և դժվարությամբ տեղավորվեցին բազկաթոռների մեջ։ Տանտերը հենց որ նստեց իր յուրահատուկ, չորս մարդ վերցնող բազկաթոռին, տեղն ու տեղը քնեց։ Նրա պարարտ մարմինը, վերածվելով փուքսի, բաց մնացած բերանից ու քթի ծակերից սկսեց այնպիսի ձայներ հանել, որ դրանք հազիվ թե անցնեին նույնիսկ երիտասարդ երաժշտագետի մըտքով. և՛ թմբուկ, [և՛] սրինգ, և՛ շան իսկական հաչոցի նմանվող մի ինչ-որ ընդհատվող խուլ ձայն։

— Ո՞նց է խռմփացնում,— ասաց Պլատոնովը։

Ջիլիկովը ծիծաղեց։

— Պարզ բան է. նմանօրինակ ճաշելուց հետո տխրություն չի պատի մարդուս։ Քունը կկոխի։ Ճի՞շտ է։

— Այո՛, Բայց ես, այնուամենայնիվ, դուք ինձ ներեցե՛ք, չեմ կարող հասկանալ, թե ինչպես կարելի է տխրել։ Տխրության դեմ այնքա՜ն միջոցներ կան։

— Ինչպիսի՞ միջոցներ։

— Քի՞չ բան կա երիտասարդ մարդու համար։ Պարել, նվագել որևէ գործիքի վրա... կամ, ասենք, ամուսնանալ։

— Ո՞ւմ հետ։

— Կարծես թե շրջապատում չկան գեղեցիկ ու հարուստ հարսնացուներ։

— Չկան։

— Դե, կարելի է փնտրել մի այլ տեղ, գնալ, ման գալ։ Այստեղ հանկարծ Ջիլիկովի գլխում ծագեց մի շքեղ միտք։

— Ահա մի հիանալի միջոց,— ասաց նա՝ նայելով Պլատոնովի աչքերին։

— Ինչպիսի՞։

— Ճանապարհորդություն։

— Ո՞ւր գնալ։

— Եթե դուք ազատ ժամանակ ունեք, գնանք միասին,— ասաց Ջիլիկովն ու, նայելով Պլատոնին, մտածեց. «Դա լավ կլիներ։ Նման դեպքում ծախսերը կկիսեինք, իսկ կառքի նորոգման գումարը կդնեի սրա վրա»։

— Իսկ դուք ո՞ւր եք գնում։

— Առայժմ ես ճանապարհորդում եմ ո՛չ այնքան անձնական գործերով, որքան ուրիշի։ Իմ մտերիմ բարեկամ ու, կարելի է ասել, բարերար՝ գեներալ Բետրիշևը խնդրել է այցելել իր ազգականներին.. Իհարկե, ազգականներն իրենց տեղն ունեն, բայց մասամբ էլ, այսպես ասած, ի՛նձ համար, որովհետև աշխարհ տեսնելը, մարդկանց շարժումը, ի՛նչ էլ որ թեկուզ ասեն, մի տեսակ կենդանի գիրք է, երկրորդ գիտություն է։

Այդ ասելով, Ջիլիկովը միաժամանակ մտածում էր. «Իսկապես լավ կլիներ։ Նույնիսկ բոլոր ծախսերը կարելի է դնել սրա վրա, նույնիսկ ճանապարհորդել սրա ձիերով, իսկ իմ ձիերը փոքր-ինչ կկերակրվեին սրա գյուղում»։

«Ինչո՞ւ չշրջագայել,— մինչդեռ մտածում էր Պլատոնովը։— Տանը անելիք չունեմ, առանց այն էլ տնտեսությունը եղբայրս է վարում, հետևապես ոչ մի վնաս տեղի չի էլ ունենա։ Իսկապես, ինչո՞ւ չշրջագայել»։

— Իսկ դուք համաձա՞յն եք,— դարձավ նա Ջիլիկովին,— մեկ-երկու օրով հյուր լինել եղբորս մոտ։ Այլապես նա ինձ թույլ չի տա։

— Մեծ հաճույքով։ Թեկուզ երեք օրով։

— Դե, ուրեմն, տվե՛ք ձեր ձեռքը։ Գնա՛նք,— ասաց աշխուժացած Պլատոնովը։

Նրանք ձեռք-ձեռքի խփեցին։ «Գնա՛նք»։

— Ո՞ւր, ո՞ւր,— բացականչեց տանտերը, արթնանալով ու չռելով նրանց վրա իր աչքերը։— Ո՛չ, պարոնիկնե՛րս, չի հաջողվի։ Հրամայել եմ, որ կառքի անիվները հանեն, իսկ ձեր հովատակին, Պլատոն Միխայլիչ, այստեղից տասնհինգ վերստ հեռու են քշել-տարել։ Ո՛չ, դուք, ուրեմն, այսօր դիշերեցեք, իսկ վաղը կանուխ ճաշելուց հետո կգնաք ձեր ճանապարհը։

Պետուխի ձեռքից ազատվելը դժվար էր։ Ստիպված եղան մնալ։ Դրա փոխարեն նրանք վարձատրվեցին հիանալի գար-

նանային գիշերվա հրապույրով։ Տանտերը գետի վրա գրոսանք կազմակերպեց։ Քսանչորս թի վերցրած տասներկու թիավարներ երգելով սահեցրին նրանց հայելանման լճակի վրայով։ Լճակից նրանք գնացին մտան երկու կողմից զառիվայր ափեր ունեցող անծայրածիր գետը, անընդհատ մոտենալով ձկան որսի համար գետի լայնությամբ ձգված պարաններին։ Ջրի վրա ո՛չ մի կոհակ չէր առաջանում։ Մեկը մյուսի ետևից նրանց աչքի առաջ լուռ բացվում էին տեսարաններ, և նրանց հայացքն էին շոյում անտառակ անտառակի ետևից՝ իրենց բազմատեսակ դասավորված ծառերով։ Համերաշխ աշխատող թիավարները հանկարծ միանգամից վեր էին տնկում բոլոր քսանչորս թին, և՝ նավակը թեթև թռչունի պես ինքնիրեն առաջ էր սահում հայելակերպ անշարժ ջրի վրայով։ Մաքուր, զրնգուն ձայնի տեր մի ջահել ու թիկնեղ տղա՝ ղեկից հաշված երրորդը, սկսելով երգը, կոկորդից սոխակի նման կլկլացնում էր երգի սկիզբը։ Թիավարներից հինգը ձայնակցում էին՝ վեցը՝ ձայն պահում, երգը անծայրածիր տարածվում էր անսահման։ Պետուխը ևս թպրտալով ծղրտում էր ու օգնության հասնում խմբերգին, որոնց ձայները նվաղում էին։ Չիչիկովը և զգում էր, որ ինքը ոուս է։ Միայն Պլատոնովն էր, որ խորհում էր. «Ի՞նչ են գտել այս մելամաղձոտ երգի մեջ։ Դրանից ավելի է տխրությունը չոքում մարդու սրտի վրա»։ Արդեն մթնշաղ էր, երբ վերադառնում էին տուն։ Խավարում թիերը դիպչում էին ջրերին, որոնք այլևս իրենց մեջ չէին արտացոլում երկինքը։ Մթության մեջ նրանք մոտեցան ափին, որտեղ կրակներ էին վառել։ Ոոտտանիների վրա թպրտացող հասարակ պերկեսներից ձկնապուր էին եփում։ Դաշտերից ու այլ կողմերից բոլորը տուն էին վերադարձել։ Գյուղի տավարն ու թռչուններին վաղուց արդեն քշել-բերել էին, ու նրանց բարձրացրած փոշին արդեն նստել էր։ Արոտավայրից վերադարձած հովիվները կանգնել էին դարպասի առաջ, հուսալով, որ կստանան մի բաղար կաթ ու կհյուրասիրվեն ձկնապուրով։ Աղջամուղջի մեջ լսվում էր մարդկանց ձայների խուլ աղմուկը, մյուս հեռու գյուղերից՝ շների հաչոցը։ Լուսինը բարձրանում էր և իր շողը գցեց մթությամբ ծածկված շրջապատի վրա, ու ամեն ինչ լուսավորվեց։ Հրաշալի՜ տեսարան։ Սակայն հիացող չկար։ Նիկոլաշան և Ալեքսաշան փոխանակ

ժիր քուռակների վրա նստած՝ նրանց առջևից չուչխելով անցնէին, իրենց աչքի առաջ պատկերացնում էին Մոսկվան, հրուշակարանները, թատրոնները, որոնցով նրանց գլուխը լցրել էր մայրաքաղաքից եկած կադետը։ Նրանց հայրը միշտ մտածում էր, թե ինչպե՞ս անի, որ իրեն հյուր եկած մարդկանց կերակրի մինչև կոկորդները։ Պլատոնովը հորանջում էր։ Բոլորից աշխույժը Ջիլիկովն էր։ «Է՛հ, ճշմարիտ, երբևէ մի փոքր գյուղ կշինեմ»։ Ու իր առջև նա պատկերացրեց և մի կնիկ և չիլիկիկներ։

Ընթրիքի ժամանակ ևս մինչև կոկորդները կերան-խմեցին։ Երբ Պավել Իվանովիչն անցավ գիշերելու համար նրան հատկացված սենյակը, պառկեց անկողնու մեջ ու շփեց փորը։

— Թմբուկ է,— ասաց նա,— ո՛չ մի քաղաքապետ չի տեղավորվի։

Հանգամանքների բերումով պատի մյուս կողմը տանտիրոջ առանձնասենյակն էր։ Պատը բարակ էր և այնտեղ տեղի ունեցող ամբողջ խոսակցությունը լսվում էր։ Տանտերը վաղ նախաճաշի անվան տակ խոհարարին թելադրում էր հաջորդ օրվա լիակատար ճաշի ցուցակը։ Եվ ի՜նչ ճաշ։ Նույնիսկ մեռած մարդու ախորժակը կգրգռվեր։

— Կարկանդակը կպատրաստես չորս տարբեր անկյուններով,— ասում էր նա՝ օդը ներս ծծելով։— Մի անկյունում կդնես թառափի այտերն ու ողնաջիլը, մյուսում՝ ձավարի շիլա-ու սունկեր՝ սոխով, ապա՝ քաղցր ձկնկիթներ, ապա՝ ուղեղ, ապա՝ դրանց նման որևէ համապատասխան մի բան... Տե՜ս, որ կարկանդակը մի կողքից, հասկանո՞ւմ ես, թեթև չափով կարմրի, իսկ մյուս կողքը թող լինի այնպես... իսկ տակը... տակն այնպես արա, որ յուղն ամբողջովին ծծի-անցնի կարկանդակով մեկ, որ դա, իմացի՛ր, դառնա մի տեսակ այնպիսի բան, որ ո՛չ թե փշրվի, այլ բերանում ձյան պես աննկատելիորեն հալչի։

Այդ ասելով, Պետուխը, ճպպացնում էր շրթունքներն ու կարծես ճաշակում ապագա կերակուրը։

— Սատանան տանի, չպիտի թողնի, որ քնեմ,— մտքում ասաց Ջիլիկովն ու գլուխը կոխեց վերմակի տակ, որ լսի։ Սակայն վերմակի տակից էլ լսում էր.

— Իսկ թառափի շուրջը դարսիր աստղաձև կտրտած ճակընդեղ, ապա՝ եպերլան ձկան կտորներ, ապա՝ սունկից-բանից, այնուհետև՝ ասենք, շաղգամ ու գազար, հետո՝ բակլա, հետո՝ զանազան, ինչ-որ հարկն է, համապատասխան պարագաներ, մի խոսքով՝ գիտես, էլի, այնպես արա, որ զանազան համեմունքները ստացվեն լիուլի։ Հետո չմոռանաս, խոզի փորի մեջ տապակվող մսի կողքը սառցի կտորներ դարսել, որ ինչպես հարկն է ուռչի։

Պետուխը դեռ էլի բազմաթիվ կերակուրներ պատվիրեց։ Անընդհատ լսվում էր՝ «մի լավ կտապակես, մի լավ կխորովես, քող որ լավ եփվի»։ Չիչիկովին հաջողվեց, վերջապես, քնել մի ինչ-որ հնդկահավի վրա։

Հաջորդ օրը հյուրերն ա՛յն աստիճան շատ կերան, որ Պլատոնովն այլևս չկարողացավ ձի նստել։ Նրա հովատակը տուն ուղարկվեց Պետուխի ձիապանի մլչոցով։ Նստեցին կառք։ Մեծ մուրթ ունեցող շունը ծուլորեն վազեց կառքի ետևից։ Նա էլ էր չափից դուրս կերել։

— Ուղղակի համը հանում է,— ասաց Չիչիկովը, երբ բակից դուրս եկան փողոց։

— Բայց տխրել չգիտես, ցավն այդ է, ահա,— [ասաց] Պլատոնովը։

— Եթե ես էլ, ինչպես գու, ունենայի տարեկան յոթանասուն հազարի եկամուտ,— մտքում ասաց Չիչիկովը, ես այդ տրխրությունը նույնիսկ մոտ [չէի թողնի]։ Վերցնենք հենց կապալառու Մուրազովին, հեշտ է ասել տասը միլիոն... Ա՛յ քեզ պատառ»։

— Ի՞նչ եք կարծում, դեմ չե՞ք, եթե մի փոքր քնքշենք մեր ճանապարհը։ Ես կցանկանայի հրաժեշտ տալ քրոջս ու փեսայիս։

— Մեծ հաճույքով,— ասաց Չիչիկովը։

— Եթե դուք սիրում եք տնտեսություն,— ասաց Պլատոնովը,— ապա ձեզ համար հետաքրքիր կլինի ծանոթանալ փեսայիս հետ։ Նրանից փորձված տնտեսատեր դուք չեք ճարի։ Տասը տարում նա իր կալվածքը [այն] աստիճանի է հասցրել, որ երեսունի փոխարեն այժմ ստանում է երկու հարյուր հազար։

— Ա՛, նա, անկասկած, հույժ պատվելի մարդ է երևում։

Միանգամայն հետաքրքիր կլինի ծանոթանալ նման մարդու հետ։ Դա, կարելի է ասել... իսկ ինչպե՞ս է նրա ազգանունը։

— Կոստանջողլու։

— Իսկ անուն-հայրանո՞ւնը՝ թույլ տվեք իմանալ։

— Կոնստանտին Ֆեոդորովիչ։

— Կոնստանտին Ֆեոդորովիչ Կոստանջողլու։ Շատ հետաքրքիր է ծանոթանալ նրա հետ։ Նման անձնավորությանը ճանաչելն ուսանելի է։

Պլատոնովն իր վրա վերցրեց Սելիֆանին ղեկավարելու գործը, և դա անհրաժեշտ էր, որովհետև կառապանն հազիվ էր մնում իր տեղում։ Պետրուշկան նստած տեղից երկու անգամ գլուխկոնծի փռվեց գետնին, այնպես, որ հարկ եղավ, վերջ ի վերջո, նրան պարանով կապեն կառքի նստիքին։

— Աննասունի մեկը,— անվերջ կրկնում էր Ջիլիկովը։

— Ահա, տեսե՛ք, սկսվում են նրա կալվածքի հողերը,— ասաց Պլատոնովը,— միանգամայն ուրիշ տեսք ունեն։

Եվ իրոք, ամբողջ դաշտով մեկ երևում էր ցանովի անտառը՝ նետիկների նման ուղիղ ծառերով։ Դրանցից այն կողմը մի ուրիշ անտառ էր, ավելի բարձր, նույնպես նորատունկ ծառերով։ Այնուհետև՝ հին անտառն էր, մեկը մյուսից բարձր։ Հետո՝ դարձյալ խիտ անտառով ծածկված դաշտագոտի, ու կրկին նույն ձևով անցան անտառների միջով, ասես պարիսպների դարպասներից։

— Այս բոլորը նա աճեցրել է մի ութ-տասը տարում։ Ուրիշը քսան տարում էլ [չէր աճեցնի]։

— Ինչպե՞ս է նրան հաջողվել։

— Իրենից իմացեք։ Նա հողագետ մարդ է, անօգուտ ո՛չ մի քայլ չի կատարում։ Նա ո՛չ միայն լավ է հասկանում հողի հատկությունները, այլև գիտե, թե ի՛նչ ցանել իրար կողքի, որ հացաբույսի կողքին ի՛նչ ծառ աճեցնել։ Նրա մոտ ամեն մարդ միանգամից երեք-չորս պաշտոն է վարում։ Նրա անտառը ո՛չ միայն սոսկ անտառ է, այլ նպատակ ունի նաև այս կամ այն տեղում ավելացնել պահանջված քանակությամբ խոնավություն, այսքան քանակությամբ պարարտացնել հողը՝ թափվող տերևներով, այսքան տարածությամբ սոված պցել... Երբ չորս կողմ երաշտ է, նրա մոտ երաշտի նշույլ չկա։ Երբ ամենուրեք անբերրիություն է, նրա մոտ անբերրիու-

թյուն չեք գտնի։ Ափսոս, որ ես այդ բոլորից քիչ եմ հասկանում, դժվարանում եմ լավ պատմել ու բացատրել, այնինչ նրա տնտեսության մեջ դուք այնպիսի՛ բաներ կտեսնեք... Նրան կախարդ են անվանում։ Շատ, շատ բանի տեր է... Սակայն այդ ամենն, այնուամենայնիվ, տաղտկալի է...

«Իսկապես, այդ մարդը զարմանահրաշ անձնավորություն է երևում,— մտածեց Չիչիկովը։— Չափազանց ցավալի է, որ այս երիտասարդը քեֆևսոլիկ է ու պատմել չի կարողանում։

Գյուղը, վերջապես, երևաց։ Ասես մի ինչ-որ քաղաք՝ այն իր բազմաթիվ խրճիթներով տարածվել-փռվել էր երեք եկեղեցիներով պսակված երեք բարձունքի վրա ու ամեն կողմից սահմանազատվել խոտի և դարմանի հսկա դեզերով։ «Այո՛,— մտածեց Չիչիկովը,— երևում է, որ այստեղ անվանի հարուստ տնտեսատեր է ապրում։ Բոլոր խրճիթները պինդ էին ու հաստատուն, փողոցները՝ հարթ։ Եթե մի որևէ տեղ սայլ էր կանգնած, պինդ ու նոր էր այդ սայլը։ Հանդիպող մուժիկները խելացի դեմք ունեին։ Ծղջերավոր անասունը ջոկովի էր, նույնիսկ գեղջուկի խոզն ուներ ազնվականի տեսք։ Իսկույն երևում էր, որ այստեղ ապրում են հենց այն մուժիկները, ովքեր, ինչպես երգի մեջ է հիշատակում, արծաթը թիակով են հավաքում։ Այստեղ չկային զանազան հնարանքներով սարքված անգլիական պուրակներ ու սիզամարգեր, այլ, հին սովորության համաձայն, ձգված էր շտեմարանների ու գործատների լայն պողոտան՝ ընդհուպ մինչև կալվածատիրոջ տունը, այն հաշվով, որ կալվածատերը տեսնի ամեն բան, ինչ կատարվում է նրա շուրջը։ Այդ ամենով հանդերձ, տան վերևում եղած լապտերը տասնհինգ վերստ հեռավորությամբ շրջանայում էր ամբողջ շրջապատին։ Մուտքի դռան մոտ նրանց դիմավորեցին հարբեցող պետրուշկային ոչ մի բանով չնմանվող աչքաթաց ծառաները, թեև հագած ունեին ո՛չ թե ֆրակներ, այլ տանը գործած կապույտ գույնի կազակական բաճկոններ։

Տանտիրուհին անձամբ դեմ վազեց։ Նա առողջ էր ու թարմ, ձյան պես սպիտակ ու արյան պես կարմիր, լավիկն էր, ինչպես աստծու առավոտը։ Երկու կաթիլ ջրի պես նման էր Պլատոնովին, բայց այն տարբերությամբ, որ նրա պես թմրած չէր, այլ՝ խոսող ու զվարթ։

— Բարև, եղբա՛յրս։ Որքա՜ն ուրախ եմ, որ եկար։ Կոնստանտինը տանը չէ, բայց շուտով կգա։

— Հապա որտե՞ղ է։

— Նա գյուղում գործ ունի մի ինչ-որ կապալառուի հետ,— ասաց նա ներս տանելով հյուրերին։

Չիչիկովը հետաքրքրությամբ դիտում էր բնակարանն այդ արտասովոր մարդու, որն ստանում էր 200 հազար եկամուտ, դիտում էր ճիշտ այնպես, ինչպես ուսումնասիրում են խխունջի կամ ոստրեի դատարկ մնացած պատյանը, որտեղ նա երբեմն նստած է եղել ու թողել իր հետքը։ Սակայն ո՛չ մի եզրակացություն չէր կարող կայացնել։ Բոլոր սենյակները պարզ էին, նույնիսկ դատարկ, ո՛չ մի որմնանկար, ո՛չ մի պատկեր, ո՛չ մի բրոնզ, ո՛չ մի ծաղիկ, ճենապակով լցված ո՛չ մի դարակ, նույնիսկ ո՛չ մի գիրք։ Մի խոսքով, ամեն ինչ ասում էր այն մասին, որ այստեղ ապրող էակի հիմնական կյանքը անցնում էր ո՛չ թե սենյակի չորս պատերում, այլ՝ դաշտում, և որ նրա բուն մտքերը ո՛չ թե նախապես փափկասիրաբար ձևավորվում էին կրակի մոտ՝ բուխարու առջև, հարմար ու փափուկ բազկաթոռի մեջ նստած, այլ՝ դարձյալ այնտեղ՝ գործի վայրում և հենց որտեղ ծնվում էին, այնտեղ էլ կենսագործվում էին։ Սենյակներում Չիչիկովը կարող էր միայն տեսնել տնտեսուհի տանտիկնոջ ջանքերի հետքերը. սեղանների ու աթոռների վրա դրված էին լորենու մաքուր տախտակներ և նրանց վրա չորացնելու համար փռված ինչ-որ ծաղիկների թերթեր։

— Այս ի՞նչ անպետքություն ես փռել, քույր իմ,— ասաց Պլատոնովը։

— Ինչպե՞ս թե անպետքություն,— պատասխանեց տանտիրուհին։— Դա չերմախտի ամենալավ դեղամիջոցն է։ Անցած տարի դրանով բոլոր մուժիկներին բուժեցինք։ Իսկ սա օղու մեջ գցելու համեմունք է, իսկ սա մուրաբայի համար է։ Դուք անվերջ ծիծաղում եք իմ մուրաբաների ու թթուների վրա, բայց ուտելուց հետո ինքներդ եք գովում։

Պլատոնովը մոտեցավ դաշնամուրին ու սկսեց նոտաներ ջոկել։

— Տե՛ր աստված, ինչ փտած բան է,— ասաց նա։— Ջե՞ս ամաչում, քույրս, որ այսպիսի դաշնամուր ես պահում։

— Ներող եղիր, հոգի՛ս, երաժշտությամբ զբաղվելու համար շատ ավելի քիչ ժամանակ ունեմ։ Ութ տարեկան աղջիկ ունեմ, որին սովորեցնել է պետք։ Կարծես, թե ես կարող եմ աղջկաս հանձնել օտարերկրյա դաստիարակչուհու ձեռքը, զուտ այն պատճառով, որ ազատ ժամանակ ստեղծեմ երաժշտությամբ զբաղվելու համար։ Կներես, եղբա՛յրս, ես այդ չեմ անի։

— Ինչ տաղտկալին ես դարձել, քույրս,— ասաց եղբայրն ու մոտեցավ լուսամուտին։— Ահա և նա, գալի՛ս է, գալի՛ս։

Չիչիկովը նույնպես մոտեցավ լուսամուտին։ Գլխավոր մուտքին մոտենում էր մոտ քառասուն տարեկան մի աշխույժ մարդ, թուխ դեմքով, ուղտի [բրդից] գործված բաճկոնը հագին։ Իր զգեստի վրա նա ուշադրություն չէր դարձնում։ Գլխին դրել էր մի թավշե կարտուզ։ Նրա երկու կողմից, գլխարկները հանած, քայլում էին ցածր դասին պատկանող երկու մարդ, քայլում էին զրուցելով ու ինչ-որ բան էին քացյատրում։ Նրանցից մեկը հասարակ մուժիկ էր, մյուսը՝ ուրիշ տեղից եկած մի կուլակ և խորամանկ մարդ, հագին կարճլիկ կաֆտան։ Բոլորն էլ կանգ առան մուտքի առաջ և այդ պատճառով նրանց զրույցը հասնում էր մինչև սենյակները։

— Ահա թե ինչ, լավ կլինի, եթե դուք ձեր տիրոջից փրկագրվեք։ Ես, թերևս, փոխարինաբար ձեզ փող տամ. դրա դիմաց ինձ մոտ կաշխատեք։

— Ո՛չ, Կոնստանտին Ֆեոդորովիչ, էլ ի՞նչ փրկագրվել։ Վերցրե՛ք մեզ։ Ձեզ մոտ խելք ու շնորհք կսովորենք։ Ամբողջ աշխարհում ձեզանից խելոք մարդ չենք ճարի։ Իսկ ներկայիս ցավն այն է, որ մարդ չի կարող իրեն զսպել։ Հիմա օղեվաճառներն սկսել են այնպիսի խմիչք պատրաստել, որ մի գավաթից հետո փորիդ մեջ կրակ է վառվում, մի դույլ ջուր է պետք, որ հանգստանաս։ Մինչև խելքի ես գալիս, մեկ էլ տեսար՝ եղած-չեղածդ ծախել ես։ Հրապուրանքը մեծ է։ Խորամանկ սատանան է աշխարհը կառավարում, թե ինչ, արևս վկա, հասկանալ չեմ կարող։ Ամեն բան հնարում են, որ մուժիկին գլխից հանեն, և՛ թուքուն, և՛ այլ նման բաներ... Ի՞նչ արած, Կոնստանտին Ֆեոդորովիչ։ Մարդ ենք, մահկանացու ենք, չենք դիմանում։

— Լսի՛ր, ահա թե ինչո՛ւմն է բանը։ Չէ՞ որ ինձ մոտ էլ

ստրկության մեջ են լինելու։ Ճիշտ է, առաջին պահից ամեն ինչ կստանաս, և՛ կով, և՛ ձի, բայց հարցն այն է, որ ես մուժիկից ավելին եմ պահանջում, քան ուրիշը։ Ինձ մոտ առաջին գործն աշխատելն է։ Ինձ համար թե քեզ համար աշխատես՝ միևնույն է, ես թույլ չեմ տա, որ վեր ընկնեն մնան։ Ես ինքս եղան պես աշխատում եմ, և իմ մուժիկները՝ նույնպես, որովհետև փորձել եմ, հոգի՛ս, ո՛վ չի աշխատում, նրա մտքով ի՛նչ տեսակ հիմարություն ասես, որ չի անցնում։ Դուք, ուրեմն, ամբողջ համայնքով խոսեցեք այդ մասին ու միմյանց [մեջ] որոշեցեք։

— Դե, մենք արդեն խոսել ենք, որոշել ենք, Կոնստանտին Ֆեոդորովիչ։ Մերունիները էլ են ասում՝ ի՛նչ խոսք ձեզ մոտ իշուր չէ, որ բոլոր մուժիկներն էլ ունևոր են։ Քահանաները ևս շատ սրտացավ մարդիկ են։ Իսկ մեզ նրանցից էլ զրկեցին, այնպես որ, մեռելներին թաղող էլ չկա։

— Համենայն դեպս, գնա ու խորհրդակցիր։

— Լսում եմ։

— Ուրեմն այսպես, Կոնստանտին Ֆեոդորովիչ, եղե՛ք ողորմած, մի փոքր զիջեցե՛ք...— ասում էր մյուս կողմից քայլող ուրիշ տեղից եղած կուլակը։

— Ես արդեն ասացի, սակարկել չեմ սիրում։ Եվ այն կալվածատերերից չեմ, որոնց բկին դու չոքում ես հենց այն պահին, երբ նրանք սեփ է փրկագրեն լոմբարդում գրավ դրածը։ Ես ձեզ լավ եմ ճանաչում. դուք ձեր գրպանում եք պահում բոլոր նրանց ցուցակները, ովքեր ե՛րբ պետք է վճարեն տոկոսներ։ Միանգամայն հասկանալի է, նեղն ընկած մարդը ստիպված է լինում իր ապրանքը քեզ տալ կես գնով, ինչի՞ս է պետք քո փողը։ Իմ ապրանքը երեք տարի էլ որ մնա, վնաս չեմ կրի, լոմբարդին վճարելու առիթ չունեմ։

— Օրինավոր գործ է, Կոնստանտին Ֆեոդորովիչ։ Դե ես այնպես, զուտ այն տեսակետով, որ ապագայում ևս պատճառ լինի գործ ունենալ ձեզ հետ և ո՛չ թե որևէ շահի տեսակետով։ Համեցեք ընդունել երեք հազար ռուբլի, իբրև կանխավճար։

Կուլակը ծոցից դուրս բերեց մի կույտ ճարպոտ թղթադրամ։ Կոստանդողլոն շատ սառնասրտորեն վերցրեց դրանք ու, առանց հաշվելու խոթեց իր սերթուկի ետևի գրպանը։

«Հը՛մ, կարծես ձեռքի թաշկինակ լինի», մտքում ասաց Չիչիկովը։

Կոստանջողլոն հայտնվեց հյուրասենյակի դռան մեջ։ Նա Չիչիկովին ավելի ևս զարմացրեց իր դեմքի թխությամբ, սև, տեղ-տեղ ժամանակից շուտ ճերմակած մազերի կոշտությամբ, աչքերի աշխույժ արտահայտությամբ և կրակոտ հարավի ծագում ունեցող մի տեսակ մելամաղձության կնիքով։ Նա լիարյուն ռուս չէր։ Նա ինքը չգիտեր, թե ի՛նչ ծագում ունեն իր նախնիները։ Նա իր տոհմաբանության հարցերով չէր զբաղվում, գտնելով, որ նման հարցերով զբաղվելու հարկ չկա և տնտեսությունը վարելու գործում ավելորդ բան է։ Նա նույնիսկ միանգամայն համոզված էր, որ ինքը ռուս է և բացի ռուսերենից, այլ լեզվի չէր տիրապետում։

Պլատոնովը ներկայացրեց Չիչիկովին։ Նրանք համբուրվեցին։

— Որոշել եմ շրջագայել զանազան նահանգներում,— ասաց Պլատոնովը,— և ցրել մաղձս։ Եվ ահա պատվել Իվանովիչը առաջարկեց ճամփորդել իր հետ միասին։

— Հիանալի է,— ասաց Կոստանջողլոն,— իսկ ո՞ր կողմերն եք ենթադրում ուղղել ձեր ճանապարհը,— շարունակեց նա իր խոսքը, քաղցրությամբ դիմելով Չիչիկովին։

— Ճիշտն ասած, ես այժմ ճանապարհորդում եմ ո՛չ այնքան իմ անձնական գործով, որքան ուրիշի,— պատասխանեց Չիչիկովը քաղցրությամբ՝ թեքելով գլուխը մի կողմ ու միաժամանակ շոյելով բազկաթոռի թևը,— իմ մերձավոր բարեկամ և, կարելի է ասել, բարերար գեներալ Բետրիշչևը խնդրել է այցելել իր ազգականներին։ Ազգականը, իհարկե, ազգական, բայց մյուս կողմից էլ, այսպես ասած, անձնական գործով ևս, քանի որ, ճիշտն ասած, էլ չխոսելով հեմորոյից խուսափելու տեսակետից, կարելի է տեսնել աշխարհ, մարդկանց շարժումը... այդ բոլորը, այսպես ասած, կենդանի գիրք է, նույն դիտությունը։

— Այո՛, աշխարհ տեսնելը չի խանգարի։

— Սքանչելի բարեհաճեցիք նկատել հենց արդարև, իրոք որ չի խանգարի։ Տեսնում ես բաներ, որ չես տեսել, հանդիպում ես մարդկանց, որոնց չես հանդիպել։ Ա՛յլ մարդկանց հետ զրուցելը ոսկու արժեքի է հավասար, ինչպես օրինակ՝

ներկայումս ահիթ եղավ... Ձեզ եմ դիմում, Հարգարժան Կոնստանտին Ֆեոդորովիչ, ուսուցեք, ուսուցեք, ողջեցե՛ք իմ ծարավը ճշմարտության իմացությամբ։ Ձեր քաղցր խոսքին եմ սպասում, ինչպես երկնային մանանայի։

— Բայց ի՞նչ կերպ... ի՞նչ ուսուցանեմ,— շփոթվելով պատասխանեց Կոստանդողլոն։— Ես ինքս կոպեկներով եմ սովորել։

— Իմաստություն, Հարգարժան բարեկամս, իմաստությո՛ւն, իմաստություն, որ կարողանամ վարել գյուղատնտեսության դժվարին ղեկը, իմաստություն, որ անվիճելի շահույթ ստանամ, ձեռք բերեմ ո՛չ թե երազային, այլ իրական հարստություն, այդպիսով կատարեմ քաղաքացու իմ պարտքը, արժանանամ հայրենակիցներիս համակրանքին։

— Գիտե՞ք ինչ,— ասաց Կոստանդողլոն, խորհրդածությամբ նայելով Ջիլիկովին,— մեկ օրով մնացեք ինձ մոտ։ Ես ձեզ ցույց կտամ իմ ամբողջ կառավարումը և ամեն բան կպատմեմ։ Դուք կտեսնեք, որ այստեղ ոչ մի իմաստություն չկա։

— Իհարկե, մնացե՛ք,— ասաց տանտիրուհին և, դառնալով եղբորը, ավելացրեց,— մնա՛, եղբայր, ո՞ւր ես շտապում։

— Ինձ համար միևնույն է։ Ի՞նչ է կարծում Պավել Իվանովիչը։

— Ես ևս, ես մեծ հաճույքով... Բայց մի՛ հանգամանք կա. գեներալ Բետրիշչևի ազգականը, ոմն գնդապետ Կոշկարևը...

— Դե, նա... խելագար է։

— Դա ճիշտ է, խելագար է նա։ Ես նրա մոտ չէի էլ գնա, բայց իմ մերձավոր բարեկամ և, այսպես ասած, բարերար գեներալ Բետրիշչևը...

— Այդ դեպքում գիտե՞ք ինչ,— ասաց [Կոստանդողլոն],— մեկնեցե՛ք նրա մոտ, տասը վերստ էլ չկա։ Իմ դրոժկան պատրաստ կսպասած է։ Հենց այժմ գնացե՛ք։ Մինչև երեկոյան ձեզը կվերադառնաք։

— Հրաշալի՛ միտք է,— բացականչեց Ջիլիկովը, վերցնելով գլխարկը։

* *
*

Դրծկան հրամցրին նրան, և կես ժամում նա հասավ գնդապետի կալվածքը։ Ամբողջ գյուղը ցաք ու ցրիվ դրության մեջ էր՝ շենքեր, կառուցումներ, բոլոր պողոցներում թափված էին կրի, աղյուսի ու գերանների կույտեր։ Շինված էին ինչ-որ տներ, որոնք նմանվում էին հաստատություններին։ Նրանցից մեկի վրա ոսկե տառերով գրված էր. Հողագործական գործիքների դեպո։ Մյուսի վրա՝ Հաշվային գլխավոր էքսպեդիցիա։ Այնուհետև՝ Գյուղական գործերի կոմիտե։ Շինականների նորմալ կրթության դպրոց։ Մի խոսքով, սատանան գիտե, թե էլ ինչ չկար։

Գնդապետին նա գտավ բարձր գրասեղանի առջև, փետուրե գրիչը ատամների մեջ սեղմած։ Գնդապետը Չիչիկովին ընդունեց արտասովոր սիրալիրությամբ։ Արտաքուստ նա չափազանց բարի, քաղաքավարի մարդ էր. սկսեց նրան պատմել, թե ի՛նչ չանքեր է թափել, որ իր կալվածքն ընդունի ներկա բարեկեցիկ վիճակը։ Յավելով գանգատվում էր, թե դժվար է մուժիկին բացատրել սրտի բարձրագույն մղումները, որոնք մարդուս պատճառում են լուսավոր շքեղություն, արվեստ ու գեղարվեստականություն. թե մինչև օրս էլ ինքը չի կարողանում ստիպել գեղջկուհիներին, որ նրանք կորսետ հագնեն, մինչդեռ Գերմանիայում, որտեղ նա իր գնդով եղել է 14-րդ թվականին, ջրաղացպանի աղջիկը նույնիսկ դաշնամուր էր նվագում։ Սակայն, չնայած տգիտության ամեն տեսակի դիմադրության, նա անպայման կհասնի այն բանին, որ իր գյուղի մուժիկը, քայլելով գութանի ետևից, միաժամանակ կկարդա Ֆրանկլինի հնարած չանթարգելի մասին գրված գիրքը, կամ Վիրգիլիոսի «Գեորգիկները», կամ հողերի քիմիական ուսումնասիրությունը։

«Ինչպե՞ս չէ,— մտածեց Չիչիկովը,— ես ինքս դեռ մինչև օրս չեմ կարդացել «Կոմսուհի Լավալիեր» վեպը. ժամանակ չեմ գտնում»։

Գնդապետը դեռ երկար խոսեց, թե ինչ կերպ պետք է մարդկանց համար ստեղծել բարեկեցիկ կյանք։ Իր փարիզյան կոստյումին նա մեծ նշանակություն էր տալիս։ Նա իր գլխով երդվում էր, որ եթե ռուս մուժիկների կեսին հագցնեն գեր-

մանական շալվարներ, ապա գիտությունը կզարդանա, առևտուրը կծավալվի, և Ռուսաստանում կսկսի ոսկեդար։

Ուշադրությամբ նայելով նրան, Չիչիկովը մտածեց. «Սրանից, կարծեմ, քաշվելու կարիք չկա» ու իսկույն հայտարարեց, որ այս ու այս հոգիների կարիքն ունի, և այդ գործարքը պետք է ձևակերպել առ ու գնի ստացվածագրով ու այլ գործողություններով։

— Որքան կարող եմ եզրակացնել ձեր խոսքերից, դա խնդիրք է, այո՞,— ասաց գնդապետը առանց մազալափ շփոթվելու։

— Ճիշտ այդպես։

— Այդ դեպքում ձեր խնդիրքը գրավոր շարադրեցեք։ Այդ թուղթը կուղղվի ծանուցագրերի ու զեկուցագրերի դրասենյակը։ Վերջինս, իրեն մոտ արձանագրելով այդ գրության ստացումը, կհղի ինձ։ Ինձանից թուղթը կուղարկվի գյուղական գործերի կոմիտեին, այնտեղից անհրաժեշտ ձևականություններից հետո կառաքվի կառավարչին։ Կառավարիչն իր քարտուղարի հետ միասին...

— Ողորմա՛ծ եղեք,— բացականչեց Չիչիկովը,— ասված գիտե, թե որքան ժամանակ կձգձգվի։ Այդ հարցը ի՞նչ կերպ շարադրեմ գրավոր։ Դա մի այնպիսի հարց է, որ... Որոշ տեսակետից, հոգիները... մեռած են։

— Շատ գեղեցիկ, դուք այդպես էլ գրեցեք, թե հոգիները որոշ տեսակետից մեռած են։

— Դե ինչպե՞ս կլինի ասել՝ մեռած են։ Չէ՞ որ այդպես չի կարելի գրել։ Նրանք թեև մեռած են, բայց պետք է ցույց տալ, որ իբրև նրանք կենդանի են։

— Գեղեցիկ։ Դուք այդպես էլ գրեցեք՝ բայց պետք է, կամ պահանջվում է, կամ քանկալի է, կամ անհրաժեշտ է, որ նրանք կենդանի թվան։ Առանց գրագրության գործը գլուխ չի գա։ Վերցրեք, օրինակ, Անգլիան, նույնիսկ Նապոլեոնին։ Ե՞ս ձեր տրամադրության տակ կդնեմ մի կոմիսիոների, որի ուղեկցությամբ կշրջեք բոլոր բաժինները։

Նա զանգեց։ Ներս մտավ ինչ-որ մեկը։

— Քարտուղար, ինձ մոտ կանչիր կոմիսիոներին։

Կոմիսիոները ներկայացավ, արտաքինով ո՛չ է՝ մուժիկ էր, ո՛չ է՝ չինովնիկ։

— Ահա սա ձեզ կուզեկցի բոլոր ամենաանհրաժեշտ բաժինները։

Չիչիկովը հետաքրքրության համար որոշեց շրջել այդ ամենաանհրաժեշտ կոչվող տեղերը։ Չեկուցագրեր ներկայացնելու գրասենյակը գոյություն ուներ միայն իր ցուցանակով. դռները փակ էին։ Գրասենյակի գործերը վարող խուլը փոխադրվել էր վերջերս կազմակերպված գյուղական կառուցումների կոմիտեն։ Նրան փոխարինել է կամերդիներ Բերեզովսկին, բայց նա ևս շինարարական հանձնաժողովի կողմից ուրիշ տեղ էր գործուղվել։ Նրանք ոտք դրին գյուղական գործերի դեպարտամենտը. վերջինս վերակառուցման մեջ էր։ Սկսեցին արթնացնել մի ինչ-որ հարբած մարդու, բայց նրանց ջանքերն ապարդյուն անցան։

— Մեզ մոտ կատարյալ խառնափնթորություն է տիրում,— վերջապես ասաց Չիչիկովին կոմիսիոները։—Մեր տիրոջը մատի վրա են խաղացնում։ Մեզ մոտ ամեն բան տնօրինում է շինարարության հանձնաժողովը. բոլորին կտրում է գործից, ուղարկում ո՛ւր որ ցանկանա։ Ամենաձեռնտու տեղը շինարարական հանձնաժողովն է։

Նա, ըստ երևույթին, դժգոհ էր իր շինարարական հանձնաժողովից։ Եվ իրոք, Չիչիկովը նայեց ու տեսավ, որ ամեն տեղ շինարարություն էր գնում։ Չիչիկովը այլևս չցանկացավ տեսնել ուրիշ բան, բայց վերադառնալով գնդապետի մոտ, նրան պատմեց, թե դրությունն այսպես է ու այսպես, թե նրա մոտ կատարյալ շիլափլավ է ու ոչ մի բանից գլուխ չի կարելի հանել, և թե զեկուցագրեր ընդունող հանձնաժողով նույնիսկ գոյություն էլ չունի։

Գնդապետը բորբոքվեց ազնիվ զայրույթով և ի նշան երախտագիտության, ամուր սեղմեց Չիչիկովի ձեռքը։ Եվ հենց տեղն ու տեղը, վերցնելով թուղթ ու գրիչ շարադրեց ութ խստագույն հարցումներ՝ ի՞նչ հիման վրա շինարարական հանձնաժողովը ենթարկվել է ինքնալուծման՝ իր գերատեսչական պաշտոնյաներով հանդերձ, ինչպե՞ս կարող էր գլխավոր կառավարիչը թույլ տալ, որ ներկայացուցիչը, առանց իր պաշտոնը ուրիշին հանձնելու, մեկնի հետաքննության։ Եվ ինչպե՞ս գյուղական գործերի կոմիտեն կարող է սառնասիրտ

կերպով հանդուրժել, որ ծանուցագրերի ու զեկուցագրերի գրասենյակը նույնիսկ գոյություն էլ չունի։

— Ա՛յ քեզ խառնաշփոթություն,— մտածեց Ջիչիկովն ու որոշեց մեկնել։

— Ո՛չ, ես ձեզ բաց չեմ թողնի։ Այժմ արդեն շոշափվում է իմ անձնական պատվասիրությունը։ Ես կապացուցեմ, թե ի՛նչ է նշանակում տնտեսության օրգանական ճիշտ կառուցումը։ Ես ձեր գործը կհանձնարարեմ մի այնպիսի մարդու, ոչ բոլորից գերազանց էլ համապատասխան է ավարտել։ Ահա թե ինչպիսի՛ ճորտեր ունեմ։ Թանկարժեք ժամանակը չկորցնելու համար խոնարհաբար [խնդրում եմ] միառժամանակ նստեցեք իմ գրադարանում,— ասաց գնդապետը՝ բաց անելով կողքի դուռը։— Այստեղ դուք կգտնեք գրքեր, թուղթ, գրիչ, մատիտներ, ամեն բան։ Օգտվեցե՛ք, ամեն բանով, դուք տերն ու տնօրենն եք։ Կրթությունը պետք է մատչելի լինի բոլորի համար։

Այդ ասելով, կոշկարևը նրան ուղեկցեց դեպի իր մատնադարանը։ Նա հատակից մինչև առաստաղը դարսված գրքերով մի հսկայական դահլիճ էր։ Այնտեղ կային նույնիսկ կենդանիների խրտվիլակներ։ Գրքերը դասավորված էին ըստ բաժինների՝ անտառագիտության, անասնաբուծության, խոզաբուծության, այգեգործության բաժիններ։ Կային մասնագիտական բոլոր հարցերի վերաբերյալ ամսագրեր, որոնք բաժանորդագրման կարգով պարտադրված ուղարկվում են տեղերը, բայց [դրանք] ոչ ոք չէր կարդում։ Տեսնելով, որ այդ բոլոր գրքերը հաճելի ժամանցի համար չեն, Ջիչիկովը դիմեց մյուս պահարանին, սակայն ավելի վատ, բոլոր գրքերը վերաբերում էին փիլիսոփայական հարցերին։ Նրա աչքի առաջ ցցվեցին վեց հսկայական հատորներ հետևյալ վերնագրով. «Նախապատրաստական ներածություն դատողության ասպարեզում։ Ընդհանրություն, ամբողջականություն էության ասպարեզում, և հանրային արտադրողականության օրգանական սկզբնաղբյուրներն իմաստավորելու տեսության կիրառումը»։ Պատահած գիրքը, որ բաց էր անում Ջիչիկովը, յուրաքանչյուր էջում հանգիպում էին՝ դրսևորում, զարգացում, աբստրակտ, մեկուսացում և միացում բառերը, մի խոսքով՝ սատանան գիտե՝ թե էլ ի՛նչ չկար։

— Դրանք իմ խելքի բանը չեն,— ասաց Ջիչիկովն ու մոտեցավ երրորդ պահարանին, ուր դասված էին արվեստին վերաբերող գրքերը։ Այնտեղից նա դուրս բերեց հսկայական մեծությամբ մի ինչ-որ գիրք դիցաբանության թեմաներով ոսկեզօծված անհամեստ նկարներով ու սկսեց դիտել։ Նման պատկերներ դուր են գալիս միջին տարիք ունեցող ամուրիներին, իսկ երբեմն նաև՝ այն ծերուկներին, որոնք իրենց գրգռում են բաքհաներով ու նման համեմունքներով։ Ավարտելով գրքերից մեկի դիտումը, Ջիչիկովն ուզում էր պահարանից դուրս բերել այդ կարգի մի ուրիշ գիրք, բայց նույն պահին զվարթ դեմքով ու մի թուղթ ձեռքին՝ ներսից Կոշկարևը։

— Ամեն բան արված է և գերազանց է արված։ Այն մարդը, որի մասին ձեզ ասացի, իսկական հանճար է։ Այդ իսկ պատճառով ես [նրան] կկարգեմ բոլորի գլխին և զուտ նրա համար կհիմնեմ մի ամբողջ դեպարտամենտ։ Տեսե՛ք, թե նա ինչ պայծառ մտքի տեր մարդ է և ինչպե՛ս մի քանի րոպեում ամեն ինչ լուծեց։

— Դե, փառք աստծո,— մտքում ասաց Ջիչիկովն ու պատրաստվեց լսել։ Գնդապետը սկսեց կարդալ.

«Ջեռնամուխ լինելով ձերդ բարձր բարեծննդության կողմից ինձ տրված Հանձնարարության կշռադատությանը, այսու պատիվ ունեմ զեկուցելու հետևյալը.

«1. Պարոն կոլեգիական խորհրդական և կավալեր Պավել Իվանովիչ Ջիչիկովի բուն խնդիրքի մեջ արդեն գոյություն ունի թյուրիմացություն, քանզի անշրջահայաց կերպով ժողովրդագրված շնչերը անվանված են մեռած։ Սրա անվան տակ, հավանաբար, նա բարեհաճել է ըմբռնել մահվան ճանգնածներին և ոչ թե մեռյալներին։ Հենց բուն այդ անվանարկումը արդեն ցույց է տալիս էմպիրիկ կերպով գիտությունները ուսումնասիրելը, որը, հավանաբար, սահմանափակվել է ծխական դպրոցով, քանզի հոգին անմահ է»։

— Սատանի մեկը,— կանգ առնելով ասաց Կոշկարևը ինքնագոհությամբ։— Նա ձեզ այստեղ մի փոքր խայթել է։ Բայց խոստովանեցեք, որ ճարտար գրիչ ունի։

«2. Կալվածքում չկա գրավ չդրված ո՛չ միայն մահվան ճանգնած, այլև մյուս նմանօրինակ շնչեր, քանզի բոլորը, ընդհանուր առմամբ, ոչ միայն առանց բացառության

գրավ են դրված, այլև կրկնակի են գրավ դրված՝ ամեն մի շնչի համար հարյուր հիսուն ռուբլի ավելացումով, բացառությամբ Դուրմայլովկա փոքրիկ գյուղի, որի հարցը դեռ անորոշ է կալվածատեր Պրեդիշևի հետ դատական վեճ ծագելու հետևանքով և գտնվում է արգելքի տակ, որի մասին ծանուցված է «Մոսկովսկիյե վեդոմոստի» 42-րդ համարում»։

— Բա ինչո՞ւ այդ մասին ինձ սկզբից չէիք հայտնում։ Ինչո՞ւ դատարկ բանի համար ինձ պահեցիք,— ջղայնացած բացականչեց Ջիչիկովը։

— Այո, բայց այդ բանը անհրաժեշտ էր, որ այդ ամբողջը (դուք) տեսնեիք գրավոր շարադրանքով։ Դա հառաչակ գործ չէ։ Հիմարն էլ կարող է անգիտակցաբար այդ բոլորը տեսնել, բայց պետք է գիտակցությամբ տեսնել։

Ջիչիկովը ցասումնալից վիճակում վերցրեց գլխարկն ու դուրս փախավ տանից առանց քաղաքավարության կանոնները պահպանելու. նա զայրացած էր։ Կառապանն իր թեթև երկտեղանի կառքով պատրաստի կանգնած սպասում էր, լավ գիտենալով, որ Ձիերին կարիք չկա արձակել կառքից, որովհետև նրանց կեր տալու գրավոր հարցը կսկսեր շրջել և վարսակ բաց թողնելու վերաբերյալ մակագրությունը թղթի վրա կդրվեր միայն հաջորդ օրը։ Գնդապետը, այնուամենայնիվ, Ջիչիկովի ետևից դուրս վազեց՝ քաղաքավարի ու բարեկիրթ։ Նա բռնի սեղմեց Ջիչիկովի ձեռքը, մոտեցրեց սրտին ու շնորհակալություն հայտնեց, որ նա իրենց հնարավորություն է տվել գործնականում տեսնել գործավարության ընթացքը, որ անհրաժեշտ է ստեղծել աղմուկ ու վազվզուկ, որովհետև ամեն բան կարող է թմրած դրության մեջ ընկնել և կառավարման լծակները կժանգոտվեն, որ այդ իրադրության կապակցությամբ նրա մեջ մի երջանիկ միտք է ծագել՝ կազմակերպել մի նոր հանձնաժողով, որը կոչվելու է շինարարական հանձնաժողովի գործունեությանը հետևող հանձնաժողով, այնպես որ, նման դեպքում այլևս ո՛չ ոք չի համարձակվի գողությամբ զբաղվել։

Ջիչիկովը վերադարձավ զայրացած ու դժգոհ, ուշ պահին, երբ վաղուց արդեն մոմերը վառվում էին։

— Ինչո՞ւ այդպես ուշացաք,— հարցրեց Կոստանջողլոն, երբ նա երևաց դռների մեջ։

— Ինչի՞ մասին էիք այդքան երկար խոսում նրա հետ,— հարցրեց Պլատոնովը։

— Նմանօրինակ հիմար մարդ կյանքումս տեսած չկայի,— ասաց Ջիլիկովը։

— Նա դեռ ոչինչ,— ասաց [Կոստանջողլոն]։— Կոշկարևը մխիթարական երևույթ է։ Նրա գոյությունն անհրաժեշտ է, որպեսզի նրա մեջ կարիկատուրային ձևով արտացոլվեն ու երևան մեր բոլոր խելոքները, որոնք առանց սեփականը ճանաչելու՝ իրենց գլուխը լցնում են ուրիշների հիմարություններով։ Տեսեք, թե ինչպիսի կալվածատերեր են այժմ լույս ընկել, հիմնել են և գրասենյակներ, և արտադրական ձեռնարկություններ, և դպրոցներ, և, սատանան գիտի, թե էլ ինչ բաներ չեն ձեռնարկել։ Ահա թե ինչպիսիք են այդ խելոքները։ Տասներկուերորդ թվականից ֆրանցուզից հետո կարծես թե սկսել էին խելքի գալ, բայց այժմ ամեն բան նորից քանդում են։ Ֆրանցուզից ավելի վատթար սկսեցին խախտել ու քայքայել, այնպես որ, այժմ մի Պյոտր Պետրովիչ Պետուխ, նույնիսկ լավ կալվածատեր է համարվում։

— Նա էլ է կալվածքը լոմբարդում գրավ դրել։

— Այո՛, ամեն ինչ լոմբարդ է գնում, ամեն բան դեպի լոմբարդ։

Ասելով այդ, Կոստանջողլոն սկսեց աստիճանաբար զայրանալ։— Ահա գլխարկի, մոմի գործարանները. Լոնդոնից մոմ պատրաստելու վարպետներ է հրավիրել, դարձել է չարչի։ Կալվածատերը պատվավոր կոչում է, դարձել են ձեռնարկատերեր, «ֆաբրիկանտներ»։ Մանող մեքենաներ... մարմաշներ քաղաքի թեթևաբարո, ցոփ աղջիկների համար...

— Դե, դու ևս ֆաբրիկաներ ունես,— նկատեց Պլատոնովը։

— Իսկ ո՞վ է դրանք հիմնել։ Իրենք իրենց են բուսել. բուրդ էր հավաքվել, առնող չկար, դե, ես էլ սկսեցի մահուդ գործել, հաստ, հասարակ մահուդ. շուկայում հենց տեղն ու տեղը վերցնում էին, մուժիկին պետքական էր, իմ մուժիկին։ Արդյունաբերողները վեց տարի շարունակ գետից այս կողմ՝ իմ ափն էին լցնում ձկան թափոնը։ Ո՞նչ կերպ վարվեի։ Դե, ես էլ դրանից սկսեցի սոտինձ եփել ու քառասուն հազար շահեցի։ Ինձ մոտ գործը միշտ այդպես է դրված։

«Ճարպիկ սատանա,— մտածում էր Ջիչիկովը՝ ուշադրությամբ նայելով նրան,— ի՞նչ գոփող քաթ ունի»։

— Ես այդ գործն սկսեցի զուտ այն պատճառով, որ շուրջս պարապ մարդիկ շատ էին թափառում, սովից կարող էին մեռնել։ Սովի տարի էր, և դա մեր նորաթուխ ֆաբրիկանտների մեղքով, որոնք մոռացության էին տվել ցանքը։ Նման ֆաբրիկաներ, հոգի՛ս, ես շատ ունեմ։ Ամեն տարի մի նոր ֆաբրիկա է ստեղծվում, նայած, թե ի՛նչ է դուրս թափվում ու կուտակվում։ Եթե ուշադրությամբ [հետևես] քո տնտեսությանը, ամեն մի զիբիլ շահ կբերի, բայց մեծ մասամբ երես ես դարձնում դրանից ու ասում՝ պետք չի։ Իսկ ես դրա համար սյուներով ու ֆրոնտոններով զարդարված ամրոցներ չեմ կառուցում։

— Դա զարմանալի է... ամենից զարմանալին այն է, որ ամեն մի անպետք բան շահ է բերում,— ասաց Ջիչիկովը։

— Այո՛, երևակայեցեք։ Միայն գործին պետք է նայիլ պարզ աչքով, այնպես, ինչպես որ նա կա։ Արի՛ ու տես, որ ամեն մեկը իրեն մեքենագետ է կարծում, ամեն մեկն ուզում է գյուտեր անել, պտուտակներով արկղիկներ հնարել։ Այդ առթիվ նա հատկապես մեկնում է Անգլիա. ահա քեզ խելք։ Հիմարնե՛ր։— Այդ ասելով, Կոստանջողլոն թքեց։— Եվ արտասահմանից վերադառնալուց հետո հարյուր անգամ ավելի հիմարացած է վերադառնում, քան առաջ էր։

— Ա՛խ, Կոնստանտին, դու դարձյալ չղայնանում ես,— մտահոգությամբ ասաց կինը։— Լավ գիտես, որ դա քեզ համար վնաս է։

— Դե, ո՞նց չզղայնանամ։ Ուրի՛շ հարց, եթե այդ օտարին վերաբերեր, բայց բոլորն էլ հարազատ են, սրտիս մոտ բաներ։ Անշափ ցավալի է, որ ռուս մարդու կենցաղը փչանում է։ Չէ՞ որ բնավորության մեջ արդեն երևան է եկել դոնքիշոտություն, որն առաջներում երբեք չի եղել։ Հենց որ գլխի մեջ ծագում է լուսավորվելու միտքը, իսկույն դառնում է լուսավորության Դոն Քիշոտ, այնպիսի դպրոցներ է հիմնում, որ նույնիսկ հիմարի մտքով չի անցնի նման բան։ Դպրոցն ավարտում է ու դառնում անպիտանի մեկը, ո՛չ գյուղին է օգտակար, ո՛չ քաղաքին, դառնում է հարբեցող, բայց իրեն համարում է արժանիքների տեր մարդ։ Մարգասիրությամբ է

տարվում, դառնում է մարդասիրության գծով Դոն Քիշոտ, կառուցում է միլիոնների արժողությամբ այնպազարդ անհեթեթ հիվանդանոցներ և այլ ձեռնարկություններ, կոտր է ընկնում ու բոլորին մուրացկան դարձնում, ահա քեզ մարդասիրություն։

Ջիչիկովին մարդկանց լուսավորության հարցը չէր հետաքրքրում։ Նա ուզում էր մպնրամասնորեն իմանալ, թե ի՛նչ եղանակով կարելի է ամեն մի անպետք բանից շահ ստանալ։ Բայց Կոստանջողլոն նրան հնաոյավորություն չէր տալիս այդ մասին խոսք բանալ։ Մաղձոտ խոսքերը այնպես էին հոսում նրա շուրթերից, որ նա իրեն զսպել չէր կարողանում։

— Մտածում են մուժիկին դարձնել լուսավոր... Դե դու նրան նախ դարձրու հարուստ ու խելացի տնտեսատեր, որից հետո նա ինքը կլուսավորվի։ Ահա թե մեր օրերում ինչպե՛ս է ամբողջ աշխարհը հիմարացել, պատկերացնել չեք կարող։ Այժմ ի՛նչ են գրում այդ գրչակները։ Լույս է ընծայում համբակի մեկը որևէ գիրք, ու բոլորն էլ կլանվում են դրանով։ Ահա թե ի՛նչ են այժմ բարբառում. «Գյուղացին շատ հասարակ կյանք է վարում, նրան պետք է ծանոթացնել ճոխության, նրա մեջ ներշնչել իր կարողությունից վեր պահանջներ...»։ Իսկ իրենք այդ ճոխության հետևանքով դարձել են փալաս, կորցրել մայրկային հատկությունները և հազար ու մեկ հիվանդության տեր դարձել, և հիմա չես գտնի տասնութ տարեկան մի լակոտ, որը ամեն բան փորձած չլինի, և՛ աստմաներն են թափված, և՛ պղպջակի նման ճաղատ է, մի խոսքով՝ նրանց ևս ուզում են վարակել։ Փառք աստծու, որ մենք դեռ ունենք առողջ մնացած մի դասակարգ, որը ծանոթ չէ այդ քմահաճություններին։ Այդ բանի համար մենք պարզապես պետք է երախտապարտ լինենք աստծուն։ Մեզ մոտ հողագործը ամենապատվելի մարդն է, ինչո՞ւ եք նրան անհանգըստացնում։ Տա՛ աստված, որ բոլորը հողագործի նման լինեն։

— Ուրեմն, դուք կարծում եք, որ հողագործությամբ զբաղվելն ավելի՞ շահավետ է,— հարցրեց Ջիչիկովը։

— Օրինական է և ո՛չ թե շահավետ։ Ճակատիդ քրտինքով մշակիր հողը քո, այդպես է ասված։ Այստեղ խելքին զոռ տալու կարիք չկա։ Դարերի փորձով ապացուցված է, որ հողագործությամբ զբաղվող մարդն իր հատկություններով

ավելի բարոյական է, մաքուր, ազնիվ, բարձր։ Չեմ ասում, թե ուրիշ գործով չզբաղվեն, բայց հիմքում պետք է լինի հողագործությունը, ահա թե ինչ։ Ֆաբրիկաներն իրենք իրենց կստեղծվեն, և կստեղծվեն օրինական ֆաբրիկաներ, այնպիսիք, որոնք մարդկանց պետք են հենց այստեղ՝ ձեռքի տակ, և ո՛չ թե նրանց հրամցնել այնպիսի բաներ, որոնք թուլացրել են ներկայիս մարդկանց։ Պետք են ո՛չ թե այնպիսի ֆաբրիկաներ, որոնց հետագայում շահ բերելու և արտադրանքը վաճառահանելու համար գործադրում են զանազան նողկալի միջոցներ, ապականում, բարոյալքում դժբախտ ժողովրդին։ Ի՛նչ էլ որ լինի, ես ինձ մոտ չեմ հիմնի բարձրագույն պահանջմունքները բավարարող արտադրական ձեռնարկություններ ո՛չ ծխախոտի, ո՛չ էլ շաքարի արտադրության, որքան էլ դուք խոսեք դրանց օգտակարության մասին, թեկուզ մեկ միլիոն կորցնելու գնով։ Եթե ցոփությունը մուտք պիտի գործի աշխարհ, թող այդ բանին ես մասնակից չլինեմ։ Թող ես աստծո առջև մնամ արդար... Ես քսան տարի է, որ ժողովրդի հետ եմ ապրում, գիտեմ, թե ի՛նչ հետևանքներ են լինում։

— Ինձ ամենից շատ զարմացնում է այն, թե ինչպե՛ս խելացի կառավարման դեպքում մնացորդներն ու կտորտանքները օգտակար են դառնում, [որ] ամեն մի անպետք բան շահ է բերում։

— Հը՛մ, քաղաքական տնտեսագետներ,— առանց Չիչիկովին լսելու շարունակեց Կոստանժողլոն՝ դառը հեգնանքը գեմքին։— Խոսք չկա, լավ են քաղաքական տնտեսագետները։ Հիմարների քաղավորներ։ Իրենց ապուշ քթից այն կողմը չեն տեսնում։ Ավանակի մեկն է, բայց էլի ամբիոն է բարձրանում, ակնոց դնում քթին... Տխմարնե՛ր։

Ու զայրացկոտ թքեց։

— Այդ բոլորն այդպես է ու իրավացի, բայց խնդրում եմ չշեղանանաս,— ասաց կինը,— կարծես թե չի կարելի այդ մասին առանց տաքանալու խոսել։

— Լսելով ձեզ, հարգարժան Կոնստանտին Ֆեոդորովիչ, մարդ թափանցում է, այսպես ասած, կենաց բուն իմաստը, շոշափում գործի բուն արմատը։ Սակայն մի կողմ թողնելով համամարդկայինը, թույլ տվեք ձեր ուշադրությունը դարձնել

մի մասնավոր խնդրի վրա։ Եթե ես, ասենք, կալվածատեր դառնալով միտք հղանամ կարճ [ժամանակում] այնպես հարըստանալ, որ դրանով իսկ, այսպես ասած, կատարեմ քաղաքացու իմ էական պարտքը, ապա ի՞նչ կերպ պետք է այդ անել, ինչպե՞ս վարվել։

— Ինչ պետք է անել, որ մարդ հարստանա՞,— իսկույն պատասխանեց Կոստանջողլոն։— Ահա քեզ ինչպե՛ս...

— Գնա՛նք ընթրելու,— ասաց տանտիկինը։

Վեր կենալով բազմոցից՝ նա կանգնեց սենյակի մեջտեղն ու շալով փաթաթեց ցրտից մրսած իր երիտասարդ մարմնի մասերը։

Չիչիկովը գրեթե զինվորական ճարպկությամբ տեղից վեր թռավ, քևն առաջարկեց, սիկնոչն ու հանդիսավորությամբ անցնելով երկու սենյակ, ուղեկցեց նրան ճաշասենյակ, որտեղ, արդեն սեղանի վրա դրված էր սուպի ամանը, որը լինելով առանց կափարիչի, տարածում էր թարմ կանաչեղենով ու գարնան առաջին արմտիքներով համեմված սուպի հաճելի բուրմունք։ Բոլորը նստեցին սեղանի շուրջը։ Ծառաները ճարպկորեն միանգամից սեղանի վրա դրեցին բոլոր կերակուրները փակ ամաններով և այն բոլորը, ինչ պահանջվում էր ու խնկույն հեռացան։ Կոստանջողլոն չէր սիրում, որ ծառանեբը լսեն իրենց տերերի [զրույցը], առավել ևս նայեն նրա բերանին, երբ նա [ուտում է]։

Խփշտելով իր բաժին սուպը, ու խմելով մի ըմպանակ խմիչք՝ Չիչիկովը դիմեց տանտիրոջն ու ասաց.

— Թույլ տվեք, հարգարժան բարեկամ, նորից ձեր ուշադրությունը հրավիրել ընդհատված զրույցի վրա։ Ես ձեզ հարց տվեցի, թե ինչպե՞ս անել, ինչպե՞ս վարվել, ի՞նչ կերպ ավելի լավ սկսել[1]։

— ...Կալվածք, որի համար եթե նա 40 հազար էլ պահանջեր, ես հենց տեղն ու տեղը կվճարեի։

«Հը՛մ», մտածեց Չիչիկովը։

— Իսկ ինչո՞ւ դուք ինքներդ չեք փնտում այդ կալվածքը,— որոշ երկչոտությամբ հարցրեց նա։

— Դե, վերջապես, չափ ու սահման պետք է իմանալ։ Ախանց այն էլ ես իմ կալվածքների երեսից մեծ հոգսերի մեջ

[1] Ձեռագրում այնուհետև պակասում է մեկ թերթ։

եմ։ Բացի դրանից, մեր ազնվականները շարունակ աղաղակում են իմ հասցեին, թե իբր ես, օգտվելով ծայրահեղություններից և նրանց քայքայված վիճակից, հողերն էժան գներով առնում եմ։ Այդ բոլորը, վերջ ի վերջո, ձանձրացրել են ինձ։

— Ինչպե՞ս մարդիկ առհասարակ ընդունակ են չարախոսության,— ասաց Չիչիկովը։

— Մանավանդ մեր նահանգում, չեք կարող պատկերացնել։ Ինձ այլ կերպ չեն անվանում, քան գծուծ և առաջին աստիճանի ժլատ։ Իրենք իրենց բոլոր արարքներն արդարացնում են։ «Ես,— ասում է,— անշուշտ վատնել եմ իմ ունեցվածքը, բայց զուտ այն պատճառով, որ ապրել եմ կյանքի բարձրագույն պահանջմունքներով, խրախուսել եմ արդյունաբերողներին (թալանողներին, այսինքն՝ նրանց, որոնք աշխ...) իսկ այլ կերպ, իհարկե, կարելի է խոզի նման ապրել, ինչպես Կոստանջողլոն»։

— Ես շատ կցանկանայի այդպիսի խոզ լինել,— ասաց Չիչիկովը։

— Սո՛ւտ և դատարկ խոսքեր։ Ինչ բարձրագույն պահանջմունքների մասին է խոսքը։ Մե՞մ աչքին են նրանք թուլ փչում։ Եթե գիր ու գրականություն էլ ձեռք է բերում, միևնույն է, չի կարդում։ Ամբողջ գործն ավարտվում է թղթախաղով ու հարբեցողությամբ։ Եվ իմ ամբողջ մեղքն այն է, որ հրավերներ չեմ սարքում, փոխարինաբար փող չեմ տալիս։ Հրավերներ չեմ սարքում զուտ այն պատճառով, որ դրանք ինձ վրա ընկնող տպավորություն են գործում, ես նման բաների սովոր չեմ։ Իսկ եթե մեկը գա ինձ մոտ և ուտի այն, ինչ-որ ես եմ ուտում, աչքիս վրա տեր կունենա։ Դատարկ խոսքեր են, թե ես փոխարինաբար դրամ չեմ տալիս։ Ողջ իսկական կարիքավորի մեկը գա ինձ մոտ ու հանգամանորեն պատմի իր ցավն ու հոգսը, քանակս նրա տրամադրության տակ է։ Եթե ես քո խոսքերից զգամ, որ դու այդ փողերը կգործադրես խելացի կերպով և դրանք քեզ կբերեն բացարձակ օգուտ, ես չեմ մերժի և նույնիսկ տոկոսներ չեն վերցնի։

«Ա՛յս հանգամանքը, սակայն, պետք է նկատի առնել»,— մտածեց Չիչիկովը։

— Եվ երբեք չեմ մերժի,— շարունակեց Կոստանջողլոն։—

Բայց դրամներս քամուն չեմ տա։ Այդ բանում Քող ինձ նեբեն։ Սատանան տանի, նա իր սիրուհու պատվին ինչ-որ ճաշկերույթ է սարքում, կամ տան սենյակները կահավորում չտեսնված շքեղությամբ, կամ, ասենք, որևէ ցուփակյաց կնոջ հետ դիմակահանդեսներում քարշ է գալիս, հոբելյան են կազմակերպում ի հիշատակ այն բանի, որ իր կյանքը անօդուտ և դատարկ է անցկացրել, իսկ դու նրան փոխարինաբար փող տուր։։

Այստեղ Կոստանջողլոն քթեց ու քիչ մնաց, որ իր կնոջ ներկայությամբ արտասանի մի քանի անվայել ու հայհոյական խոսքեր։ Սևամաղձության բիրտ ստվերը մթագնեց նրա դեմքը։ Նա ճակատը երկարությամբ ու լայնությամբ ակոսվեց կնճիռներով, որոնք վկայում էին արտասովոր բորբոքված լինելը։

— Թույլ տվեք, իմ մեծարգու բարեկամ, կրկին ձեր ուշադրությունը հրավիրել ընդհատված խոսակցության նյութին,— ասաց Ջիլիկովը՝ դարձյալ խմելով մի ըմպանակ մոբենու օշարակ, որը, հիրավի, հրաշալի էր։— Եթե ես, ասենք, ձեռք բերեմ հենց այն կալվածքը, որի մասին բարեհաճեցիք հիշատակել, ապա ե՞րբ և որքա՞ն շուտ կարելի կլինի հարըստանալ այն աստիճան, որ...

— Եթե դուք ցանկանում եք շուտ հարստանալ,— խստորեն ընդհատեց վատ տրամադրությամբ համակված Կոստանջողլոն,— ապա ամենևին չեք հարստանա։ Իսկ եթե ցանկանում եք հարստանալ, առանց ժամանակի մասին հետաքրքրվելու, շուտ կհարստանաք։

— Ահա թե ի՞նչ,— ասաց Ջիլիկովը։

— Այո՛,— կտրուկ վրա բերեց Կոստանջողլոն, նա կարծես զայրանում էր հենց Ջիլիկովի վրա,— պետք է սիրել աշխատանքը։ Առանց դրան ոչինչ չի կարելի անել։ Մարդս պետք է սիրի իր տնտեսությունը։ Այո՛, սիրել և դա, հավատացե՛ք ինձ, բոլորովին էլ ձանձրալի գործ չէ։ Հնարել են, թե գյուղում կյանքը տխուր է... իսկ ես ձանձրույթից կմեռնեի, եթե մի օր ժամանակս անցկացնեի քաղաքում այնպես, ինչպես նրանք են անցկացնում իրենց այդ հիմար ակումբներում, գինետներում և թատրոններում։ Հիմար, անբան մարդիկ, ավանակի սերունդ։ Տնտես մարդը ձանձրանալու իրավունք չունի, ժամանակ էլ չունի դրա համար։ Նրա կյանքում

կես վերշոկի չափ էլ դատարկություն չկա, նա ամբողջովին զբաղված է։ Հենց վերցրեք նրա զբաղված լինելու բազմազանությունը, և·և այն էլ ինչպիսի՜ զբաղվածություն, մարդուս հոգին, հիրավի, աղնվացնող զբաղմունք։ Ի՜նչ էլ որ լինի, այնուամենայնիվ, մարդ բնության հետ համընթաց է, տարվա բոլոր եղանակների հետ համաքայլ, մասնակիցն ու զրուցակիցը այն ամենի, ինչ կատարվում է ստեղծված աշխարհում։ Ապա մի հայացք նետեցե՛ք ամբողջ տարվա աշխատանքների վրա. դեռ գարունը չբացված ամեն ինչ պատրաստ է և սպասում է նրա բացվելուն՝ սերմերի նախապատրաստումը, փոխադրումը, հացահատիկի վերստին չափումն ու չորացումը շտեմարաններում, նոր քարշող ուժի ձեռք բերումը։ Ամբողջ տարվա աշխատանքը նախատեսվում է նախօրոք և հաշվի է առնվում հենց սկզբից։ Եվ հենց որ սառույցը կոտրվեց, գետերը բացվեցին, գետինը չորացավ, ու հողը մերկացավ, բանջարանոցներում և այգիներում կսկսի աշխատել բահը, դաշտերում՝ արորն ու տափանը, գործի կդրվեն ձկնարանները, կսկսվի վարուցանքը։ Հասկանո՞ւմ եք, թե դա ի՜նչ բան է։ Ջնչին բան, ապագա բերքն են ցանում։ Ամբողջ երկրի երջանկությունն են ցանում։ Միլիոնավոր մարդկանց սնունդն են ցանում։ Վրա է հասնում ամառը... Սկսվում են հունձն ու քաղը... Ծավալվում է բերքահավաքը. հնձում են հաճարը, ապա հերթը գալիս է ցորենին, այնուհետև սկսում են քաղել գարին ու վարսակը։ Աշխատանքը եռում է, ոչ մի րոպե չի կարելի բաց թողնել, քանի աչք էլ որ ունենաս, գործ կճարվի։ Ընկ երբ հունձն ավարտվեց-պրծավ, կսկսեն հնձածը փոխադրել կալատեղերը, դարսել, աշնանավարն անել, ձմռան համար նորոգել ու նախապատրաստել շտեմարանները, ծածկված կալատեղերը, անասունների բակերը, միևնույն ժամանակ կանայք կանցնեն գործի, որ երբ հանրագումարի կբերես կատարած ամբողջ աշխատանքը, կտեսնես, թե ի՜նչ է արված. այդ բոլորը... իսկ ձմռանը... Կալսում են բոլոր կալատեղերում, ծեծած հացահատիկը ծածկված կալատեղերից փոխադրում են շտեմարանները։ Ջրաղաց ես գնում, ֆաբրիկաններն ես այցելում, մտնում ես աշխատանքային բակը, աչքի անցկացնում, թե ինչպե՜ս են գործերը գնում, այցելում ես նաև մուժիկներին, տեսնելու, թե ինչպե՜ս է շարժվում իր

տնտեսությունը կարգավորելու համար։ Ինձ համար ուղղակի հաճելի է երկու ժամ կանգնել ու նայել, թե ինչպե՛ս իր գործն իմացող հյուսնը վարժ բանեցնում է իր կացինը. ինձ անչափ ուրախացնում է աշխատանքը։ Իսկ եթե միևնույն ժամանակ տեսնում ես, թե ինչպե՛ս քո շուրջն ամեն ինչ բազմապատկվում է ու շատանում շահ ու եկամուտ բերելով, ապա խոսք անգամ չեմ գտնում բացատրելու, թե ինչպիսի՛ զգացմունքով ես համակվում։ Եվ ոչ թե այն բանի համար, որ հարբուտանում ես։ Փողն իր հերթին, բայց այն բանի համար, որ այդ բոլորը քո ձեռքի գործն է, որ այդ բոլորի պատճառը ինքդ ես, դու ես դրանց ստեղծողը և քեզանից, ինչպես մի ինչ-որ հրաշագործ կախարդից, թափվում է առատությունն ու բարիքը։ Դուք որտե՞ղ կգտնեք դրան հավասար վայելք։

Ասաց այս բոլորը Կոստանջողլոն, և նրա դեմքը պարզվեց, կնճիռները չքացան։ Իր հանդիսավոր թագադրության պահն այրող թագավորի նման նա ամբողջովին փայլում էր ու թվում էր, թե նրա դեմքից ճառագայթներ էին առկայծում։

— Ամբողջ աշխարհում նման վայելք չեք ճարի։ Հենց այստեղ է մարդը ընդօրինակում աստծուն։ Աստված ստեղծարարությունը համարում է իբրև ամենաբարձրագույն հաճույքը և նա մարդ արարածից նույնպես պահանջում է, որ նա լինի իր շրջապատի համար բարության նմանօրինակ ստեղծող։ Եվ դա համարում են տխո՞ւր գործ...

Ջիչիկովը հրապուրվել էր տանտիրոջ քաղցրահնչյուն խոսքերից, կարծես դրանք դրախտային սոխակի երգ լինեին։ Նա շուտ-շուտ թուքը կուլ էր տալիս։ Աչքերը քաղցր արտահայտություն էին ստացել, ու նա պատրաստ էր անվերջ լսել ու լսել իր զրուցակցին։

— Կոնստանտի՛ն, ժամանակն է վեր կենալու,— ասաց տանտիրուհին, ոտքի կանգնելով։ Բոլորը վեր կացան։ Առաջարկելով իր թևը, Ջիչիկովն առաջվա նման ուղեկցեց տանտիրուհուն։ Բայց նախկին ճարպկությունը բացակայում էր պտույտների ժամանակ, որովհետև նրա մտքերը դառնում էին ավելի գործնական պտույտների շուրջը։

— Ի՛նչ էլ որ բարբառեք, այնուամենայնիվ տխուր է,— ասում էր Պլատոնովը, քայլելով նրանց հետևից։

«Հյուրս հիմար մարդ չէ,— մտածում էր տանտերը,—

ուշադիր է, սակավախոս է և բնավ գիտակներից չէ»։ Ու այդպես մտածելով՝ նա ավելի ևս զվարթացավ, կարծես բորբոքված իր պատմածից ու կարծես հաղթանակ ապրելով, որ նրան հաջողվել է գտնել իր խելացի խորհուրդն ունկնդրելու ընդունակ մի մարդ։

Երբ նրանք այնուհետև բոլորը տեղավորվեցին մոմերով լուսավորված փոքրիկ, դուրեկան սենյակում, այդքի գուրս եկող պատշգամբի ու ապակյա դռան դիմաց, որոնց միջով նիրհուն այգու [վերևից] նրանց էին նայում աստղերը, Ջիչիկովն այնպիսի անդորրություն զգաց, որպիսին վաղուց չէր զգացել, կարծես երկար թափառումներից հետո նա իջնեն համարում էր հայրենի հարկի տակ ու այդ բոլորից հետո նա արդեն հասել էր իր նպատակին ու դեն նետել պանդուխտի ցուպը, բացականչելով «Բա՛վ է»։ Ահա, թե ինչպիսի հրապուրիչ տրամադրությամբ համակվեց նրա հոգին հյուրընկալ տանտիրոջ խելացի զրույցներից։ Ամեն մի մարդու համար գոյություն ունեն այնպիսի խոսքեր ու մտքեր, որոնք նրան առավել մոտ են ու հարազատ, քան մնացած խոսքերն ու զրույցները։ Եվ հաճախ անսպասելիորեն մի մոռացված խուլ անկյունում, անմարդաբնակ վայրում հանկարծ հանդիպում ես մեկին, որի չերմացնող զրույցը ստիպում է մոռանալ և՛ անանցանելի ճանապարհները, և՛ օթևանների անհրապույր վիճակը, և՛ ժամանակակից, անիմաստ աղմուկը, և՛ մարդուն մոլորեցնող խաբեությունների կեղծիքը։ Ու այդպիսի իրադրության մեջ անցկացրած երեկոն ընդմիշտ ու առհավետ տպավորվում է քո հիշողության մեջ՝ ո՛վ էր ներկա, ո՛վ որտե՞ղ էր նստած, ի՛նչ ուներ ձեռքում բռնած, հիշում է պատերը, անկյունները և ամեն մի մանրուք։

Այդ երեկոյան Ջիչիկովին հենց այդպես էլ թվաց. և՛ այդ դուրեկան, համեստ կահավորված սենյակը, և՛ խելացի տանտիրոջ դեմքին դրոշմված բարեհամբույր արտահայտությունը, նույնիսկ սենյակի պատերի պաստառները, Պլատոնովին հրամցրած սաթե ծխամորճը, և՛ այն ծուխը, որ նա սկսեց փչել ցարբի հատ մռութին, և՛ ցարբի փնչոցը, և՛ հեզահամբույր տանտիրուհու ծիծաղը, որ ընդհատվում էր «բավական է, մի՛ չարչարիր նրան» բառերով, և՛ ուրախ առկայծող մոմերը, և՛ ծղրիդը անկյունում, և՛ ապակյա դուռը, և՛ ծառերի գագաթ-

ներին հենված աստղերով ծածկված ու նրանց նայող պարոն-նային գիշերը, որը լի էր կանաչախիտ թավուտների խորքից լսվող սոխակների բարձր դայլայլիկներով։

— Ինձ հաճելի են ձեր խոսքերը, պատվարժան Կոնստան-տին Ֆեոդորովիչ,— ասաց Չիչիկովը։— Կարող եմ ասել, որ ամբողջ Ռուսաստանում ձեզ նման խելացի մարդու չեմ հան-դիպել։

Նա ժպտաց։ Նա ինքն զգում էր, որ այդ խոսքերը անի-րավացի չէին։

— Ո՛չ, եթե դուք ցանկանում եք ճանաչել խելացի մար-դու, ապա մեզ մոտ իրականում կա մեկը, որի մասին առանց սխալվելու կարելի է ասել՝ խելացի մարդ է, որի եղունգն անգամ ես չարժեմ։

— Այդ ո՞վ կարող է լինել,— զարմանքով հարցրեց Չի-չիկովը։

— Դա մեր կապալառու Մուրազովն է։

— Արդեն երկրորդ անգամն եմ լսում նրա մասին,— բա-ցականչեց Չիչիկովը։

— Նա մի այնպիսի մարդ է, որ ո՛չ թե ի վիճակի է կալ-վածատիրոջ կալվածք կառավարել, այլ մի ամբողջ պետու-թյուն։ Եթե ես պետություն ունենայի, նրան իսկույն ևեթ կդարձնեի ֆինանսների մինիստր։

— Ես ասում են, մի մարդ է, որ վեր է ամեն մի հավա-նականությունից. ասում են՝ տասը միլիոն է վաստակել։

— Ի՞նչ տասը, քառասունից անցել է։ Շուտով Ռուսաս-տանի կեսը կլինի նրա ձեռքում։

— Ի՞նչ եք ասում,— բացականչեց Չիչիկովը՝ չռելով աչ-քերն ու բերանը բաց անելով։

— Անտարակույս։ Դա պարզ է։ Դանդաղորեն հարստա-նում է ա՛յն մարդը, ով ունի մի քանի հարյուր հազար, իսկ ով միլիոնների տեր է, նրա գործողության շառավիղն էլ մեծ է, ի՛նչ բանի որ ձեռքը մեկնեց, կրկնապատիկից և եռապա-տիկից պակաս չի վերցնում, հակառակ իր կամքի։ Գործելու դաշտն ու ասպարեզը չափազանց ընդարձակ են։ Նման դեպ-քում մրցակիցներ էլ չեն լինում։ Նրա հետ ոչ ոք չի կարող ոտք մեկնել։ Ի՞նչ բանի վրա որ իր գինը դրեց, նույնն էլ մնում է, բարձրացնող չկա։

Տե՛ր իմ աստված,— շշնջաց Ջիչիկովը, երեսը խաչակնքելով։ Նա ակնապիշ նայում էր Կոստանջողլոյի աչքերին, դժվարությամբ էր շնչում։— Խելքից ու մտքից հեռու բան է։ Երկյուղից մարդուս միտքը քարանում է։ Մարդիկ զարմանում են միջատներին ուսումնասիրողների զբաղմունքով. ինձ համար ավելի շատ զարմանալին այն է, որ մի մահկանացու իր տրամադրության տակ կարողանում է ունենալ այդպիսի հսկայական գումարներ։ Թույլ տվեք սույն հանգամանքի վերաբերյալ ձեզ մի հարց ուղղել, ասացե՛ք, հավանաբար, այդ բոլորը սկզբում ձեռք է բերված ոչ առանց մեղք գործելու։

— Ամենաանպախարակելի ճանապարհով և ամենաարդարացի եղանակով։

— Անհավատալի բան է։ Հազարներ, ուրիշ բան, բայց միլիոննե՛ր...

— Ընդհակառակը, հազարներն է դժվար դիզել առանց խարդախության, իսկ միլիոնները հեշտությամբ են վաստակվում։ Միլիոնատերը կարիք չունի դիմելու ծուռ ճանապարհների. ուղղակի ընթացի՛ր ուղիղ ճանապարհով, վերցրո՛ւ այն ամենը, ինչ ընկած է քո առջև, մրցակից չունես։ Մի ուրիշը չի վերցնի, ուժից վեր է։ Մեծ է միլիոնատիրոջ շառավիղը։ Կրկնում եմ, ի՛նչ բանի որ ձեռքը մեկնեց՝ կրկնապատիկից և եռապատիկից պակաս չի վերցնում, հակառակ [իր] կամքի։ Իսկ հազարից ի՞նչ շահ։ Տասներորդ, քսաներորդ տոկոսը։

— Եվ ամենից զարմանալին այն է, որ գործը սկսվել է հենց կոպեկից։

— Այլ կերպ չի էլ լինում։ Այդ է հանգամանքների օրինական կարգը,— ասաց [Կոստանջողլոն]։— Ով ծնվել է հազարների տեր, դաստիարակվել է հազարների միջոցով, նա այլևս իր կարողությունը չի ավելացնի, տարվում է քմահաճ ցանկություններով, այս կամ այն բանն ունենալու տենչով։ Պետք է սկսել հենց սկզբից և ո՛չ քե կեսից, կոպեկից և ո՛չ քե ռուբլուց, ներքևից և ո՛չ քե վերևից։ Այս դեպքում միայն մոտիկից կճանաչես մարդկանց ու կենցաղը, որոնց շրջանում հետո պետք է ապրես ու գործես։ Հենց որ սեփական կաշվիդ վրա փորձես ու զգաս ամեն բան, երբ իմանաս, որ յուրաքանչյուր կոպեկ տասը կոպեկ է բերում քեզ, երբ դիմանաս ամեն տեսակ տառապանքներին, այն դեպքում միայն կդառ-

նաս [այնպիսի] խելացի ու վարժված մարդ, որն այլևս ձեռնարկած ոչ մի գործում անհաջողություն չի ունենա ու ոչ մի բանի առջև կանգ չի առնի։ Հավատացե՛ք, որ ճիշտ եմ ասում։ Սկզբից պետք է սկսել և ո՛չ կեսից։ Ով ինձ ասում է. «Տվե՛ք ինձ 100 հազար, ես իսկույն հարստանամ», նման մարդուն չեմ հավատում, նա գործում է կուրորեն, և ո՛չ թե հավաստիապես։ Կոպեկից պետք է սկսել։

— Այդ դեպքում ես կհարստանամ,— ասաց Չիչիկովը՝ ակամայից մտածելով մեռած հոգիների մասին,— որովհետև իսկապես գործս ոչնչից եմ սկսում։

— Կոստանտի՛ն, ժամանակն է, որ Պավել Իվանովիչին հնարավորություն տանք հանգստանալ ու քնել,— ասաց տանտիրուհին,— իսկ դու անվերջ խոսում ես։

— Եվ անպայման կհարստանաք,— ասաց Կոստանջոգլոն՝ ուշադրություն չդարձնելով տիկնոջ ասածին։— Դեպի ձեզ կհոսեն գետե՛ր, ոսկու գետե՛ր։ Ձեք իմանա, թե որտե՛ղ գործադրեք ստացվող եկամուտները։

Ասես կախարդված, նստած էր Պավել Իվանովիչը, նրա մտքերը սավառնում էին ոսկե ցնորքների ու երազների գրկում։ Բորբոքված երևակայությունը ապագա եկամուտների ոսկյա գորգի վրա ոսկե նախշեր էր հյուսում, և նրա ականջների մեջ հնչում էին «կհոսեն գետե՛ր, ոսկու գետե՛ր» բառերը։

— Ճիշտ եմ ասում, Կոնստանտի՛ն, ժամանակն է, որ Պավել Իվանովիչը քնի։

— Դե, ի՞նչ ես ուզում մեզանից։ Եթե քունդ տանում է, գնա՛,— ասաց տանտերը ու կանգ առավ, որովհետև ամբողջ տնով մեկ լսվեց Պլատոնովի բարձր խռմփոցը, իսկ նրանից հետո ավելի բարձր՝ Յարբը խռմփացրեց։ Զգալով, որ իրոք արդեն քնելու ժամանակն է, նա հրեց Պլատոնովին, ասելով՝ «Հեռի՛ք է խռմփացնես» ու Չիչիկովին բարի գիշեր ցանկացավ։ Բոլորը բաժանվեցին ու պառկեցին իրենց անկողիններում։

Միայն Չիչիկովն էր, ո՛չ չէր քնում։ Նրա միտքը գործում էր։ Նա մտածում էր, թե ի՞նչ կերպ դառնա ո՛չ թե ֆանտաստիկ, այլ իրական կալվածքի տեր։ Տանտիրոջ հետ ունեցած զրույցից հետո ամեն բան դարձել էր պարզ ու հասկանալի։ Տնտե-

սուբյեկտի գծվարին գործը դառնում էր այնքան հեշտ ու պարզորոշ և նրա բնությանը այնքան յուրահատուկ։ Միայն թե նա լոմբարդում կարողանա շուտ գրավ դնել այդ մեռելներին ու ձեռք բերել ոչ [ֆանտաստիկ] կալվածք։ Նա իրեն արդեն տեսնում էր գործողության մեջ ու կալվածքը կառավարելիս ճիշտ այնպես, ինչպես խրատ էր տվել Կոստանդզողլուն՝ աչքաթաց, զգույշ, առանց եղած ամբողջ հինը չխմանալու, նոր բան չմտցնելով, ամեն ինչ անձամբ դիտելով, ճանաչելով բոլոր մուժիկներին, իրենից ետ վանելով ամեն մի շռայլություն, նվիրվելով միայն աշխատանքին ու տնտեսությանը։ Նա արդեն նախօրոք ճաշակում էր այն հաճույքը, որ պետք է զգար, երբ իր տնտեսության մեջ կարգ ու կանոն կստեղծվեր և երբ աշխույժ ընթացքով գործնականորեն միմյանց հրելով կշարժվեին տնտեսական մեքենայի բոլոր զսպանակները։ Կեռա աշխատանքը, և ճիշտ այնպես, ինչպես բանուկ ջրաղացում հատիկը ալյուր է դառնում, կսկսի ամեն մի անպետք բան ու աղբ կանխիկ դրամի վերածվել։ Հրաշալի տնտես մարդը նրա աչքի առջևից մի րոպե չէր հեռանում։ Դա ամբողջ Ռուսաստանում առաջին մարդն էր, որի նկատմամբ նա անձնական համակրանք զգաց։ Մինչ այդ, նա՝ մարդկանց հարգում էր և՛ մի բարձր աստիճանի, կա՛մ ունևորության համար։ Ճիշտն ասած՝ նա դեռ ոչ ոքի չէր հարգել խելացի լինելու համար։ Կոստանդզողլուն առաջինն էր։ Նա հասկացել էր, որ նրա հետ կատակ չի կարելի անել։ Նրան զբաղեցնում էր մի այլ ծրագիր՝ գնել Խլոբուևի կալվածքը։ Տասը հազար ինքն ունի, տասնհինգ հազար ենթադրում էր փոխարինաբար վերցնել Կոստանդզողլուից, որովհետև վերջինս ինքն էր հայտարարել, թե պատրաստ է օգնել բոլոր նրանց, ովքեր հարստանալ են ցանկանում։ Մնացած գումարը մի կերպ կճարեր. կա՛մ գրավականի դիմաց լոմբարդից կվերցներ, կա՛մ այնպես՝ կալվածատիրոջը կստիպեր սպասել։ Չէ՞ որ այդ ևս կարելի է. դնա՛ ու դատարանների դռները մաշիր, եթե քեֆդ ուզում է։ Ու նա երկար մտածեց այդ հարցերի մասին։ Վերջապես քունը, որ արդեն չորս ժամ էր, ինչ մարդկանց առել էր, ինչպես ընդունված է ասել, իր գիրկը, Ջիչիկովին ևս առավ իր գիրկը։

Նա խոր քուն մտավ։

ԳԼՈՒԽ IV

Հաջորդ օրը ամեն բան կատարվեց շատ բարեհաջող։ [Կոստանջողլոն] ուրախությամբ տվեց նրան տասը հազար՝ առանց 'տոկոսների, առանց երաշխավորության, լոկ մի ստացականով։ Ահա՝ թե ինչպե՛ս էր նա տրամադրված օգնելու յուրաքանչյուր մարդու, ով ցանկանում էր ունեցվածք ձեռք բերել։ Նա Չիչիկովին ցույց տվեց իր ամբողջ տնտեսությունը։ Ամեն բան պարզ էր ու խելացի մտածված։ Ամեն բան այնպես էր դասավորված, որ ինքնիրեն կառավարվում էր։ Ո՛չ մի րոպե իզուր չէր կորչում, գյուղացու մոտ ո՛չ մի գործ անկանոնություն տեղի չէր ունենում։ Ամենատեսի հատկությամբ օժտված կալվածատերը նրան իսկույն ոտքի էր կանգնեցնում։ Ո՛չ մի տեղ ծույլ, անբան մարդ չկար։ Մուժիկը... գոհունակության ինչպիսի՛ խելոք արտահայտություն (2 անընթեռնելի), ինչպե՛ս էր ակոսում, քանում և վարում։

Նույնիսկ Չիչիկովին չէր կարող չապշեցնել, թե որքա՛ն բան է արել այդ մարդը սուս ու փուս, առանց աղմուկի, չհորինելով ամբողջ մարզկությանը բարեկեցություն պատճառելու ոչ մի ծրագիր ու տրակտատ, և թե ինչպե՛ս անպատուղ է անցնում մայրաքաղաքի բնակչի, պարկետների վրա ոտքերը քստքստացնողի և հյուրասենյակների սիրահարի, իր խուլ անկյունում նստած ու 'պետության մասին (2 անընթեռն.) հանձնարարություններ թելադրող ծրագրողի կյանքը։ Չիչիկովն ամբողջովին համակվեց հրճվալից տրամադրությամբ ու կալվածատեր դառնալու միտքը նրա գիտակցության մեջ ավելի ու ավելի էր ամրապնդվում։ Կոստանջողլոն ո՛չ միայն նրան ցույց տվեց ամեն բան, այլև ցանկություն հայտնեց անձամբ ուղեկցել նրան հյուրանոցի մոտ, որպեսզի նրա հետ միասին դիտի կալվածքը։ Չիչիկովի տրամադրությունը բարձր էր։ Կուշտ նախաճաշից հետո բոլոր երեքն էլ ճանապարհ ընկան, տեղավորվելով Պավել Իվանովիչի կառքում։ Կալվածատիրոջ կառքը նրանց ետևից շարժվում էր առանց ուղևորի։ Յարքը առաջից էր վազում՝ թռցնելով ճանապարհի վրա նստած թռչուններին։ Ամբողջ 15 վերստ տարածությամբ երկու կողմից ձգվում էին Կոստանջողլոյի անտառներն ու վարելահողերը։ Անընդհատ հանդիպում էին մարգագետինների հետ խառն ան-

տառներ։ Ոչ մի խոտ այստեղ ավելորդ չէր, ամբողջը դրախտանման այգու էր վերածված։ Բայց բոլորն ակամայից լռեցին, երբ սկսվեց խլրտուքի կալվածքը՝ անտառի փոխարեն անասունների կրծոտած թփուտներ, թունավոր որմից փտած ու խեղդված վարսակի նոսր արտեր։ Ահա, վերջապես, երևացին ցանկապատ չունեցող խարխուլ խրճիթները և նրանց կենտրոնում՝ քարաշեն, անմարդաբնակ մի տուն։ Ըստ երևույթին կտուրը ծածկելու միջոց չեն ունեցել։ Այսպես էլ մնացել էր տունը կիսավարտ, կտուրի փոխարեն ծղոտ, որը սևացել էր։ Կալվածատերն ամբրում էր մի հարկանի քարաշեն մի այլ տան մեջ։ Նա շենքից դուրս վազեց դեպի ժամանողները հին բաճկոնով ու ծակ սապոգներով, գզգզված մազերով ու բարոյապես ընկած, բայց դեմքի վրա ղդացվում էր ինչ-որ բարութիյուն։ Նա անչափ ուրախացավ հյուրերի գալուն, կարծես տեսավ իր եղբայրներին, որոնցից վաղուց բաժանվել էր։

— Կոնստանտին Ֆեոդո՛րովիչ, Պլատոն Միխա՛յլովիչ։ Ուրախացրիք ձեր այցելութիյամբ։ Թույլ տվեք աչքերս տրորեմ։ Ի՛նչ մեղքս թաքցնեմ, կարծում էի, թե ինձ ո՛չ ոք չի այցելի։ Բոլորն ինձանից փախչում են, ինչպես ժանտախտից, մտքներից անցնում է, թե փոխարինաբար փող կխնդրեմ։ Օ՛խ, դժվար է, դժվար, Կոնստանտին Ֆեոդորովիչ։ Տեսնում եմ, որ ամեն բանում ինքս եմ մեղավոր։ Ի՞նչ արած։ Խոչի կյանք եմ վարել։ Ներեցե՛ք, պարոնա՛յք, որ այս տեսքով եմ ընդունում ձեզ. սապոգներս, ինչպես տեսնում եք, ծակծկված են։ Ինչո՞վ կհրամայեք հյուրասիրել։

— Առանց ավելորդ բաների։ Մենք ձեզ մոտ գործով ենք եկել։ Ահա ձեզ գնորդ։ Պավել Իվանովիչ Չիչիկով,— ասաց Կոստանջողլոն։

— Ի սրտե ուրախ եմ ծանոթանալու։ Թույլ տվեք սեղմել ձեր ձեռքը։

Չիչիկովը իր երկու ձեռքն էլ մեկնեց նրան։

— Շատ կցանկանայի, մեծարգո Պավել Իվանովիչ, ձեզ մի կալվածք ցույց տալ, որ աթժանի է ուշադրութիյան։ Ապա, պարոնա՛յք, թույլ տվեք հարցնել, ճաշե՞լ եք։

— Ճաշել ենք, ճաշել,— վրա բերեց [Կոստանջողլոն], ցանկանալով ազատվել նրա առաջարկից։— Ժամանակ չկորցնենք ու հենց հիմա գնանք։

— Գնա՛նք, դնա՛նք։

Խլոբուևը վերցրեց գլխարկը։

— Գնա՛նք - դիտելու ինձ մոտ տիրող անբարեկարգ վիճակն ու իմ խառնափնթորությունը։

Հյուրերը ծածկեցին գլխարկներն ու բոլորը միասին շարժվեցին գյուղի փողոցով։

Երկու կողմից սևին էին տալիս լաթերով խցված մանր [լուսամուտներով] հյուղակները։

— Դե, գնա՛նք, ուրեմն, դիտելու ինձ մոտ տիրող անբարեկարգ վիճակն ու իմ խառնափնթորությունը,— ասում էր Խլոբուևը։

— Իհարկե, լավ եք արել, որ ճաշել եք։ Հավատո՞ւմ եք, Կոնստանտին Ֆեոդորովիչ, տասն հավ նույնիսկ չունեմ։ Ահա թե ի՛նչ օրի եմ հասել։

Նա հոգոց հանեց ու կարծես զգալով, որ հուղիվ թե Կոնստանտին Ֆեոդորովիչի կողմից կարեկցության արժանանա, ընկավ Պլատոնովի թևն ու նրա հետ առաջ անցավ, սեղմելով նրան իր կրծքին։ [Կոստանջողլոն] և Ջիլիկովը եւս մնացին ու իրար թև ընկած, հետևում էին նրանց՝ հեռավորությունից։

— Դժվար է, Պլատոն Միխայլիչ, դժվար է,— ասում էր Խլոբուևը Պլատոնովին։— Ձեզ կարող երևակայել, թե որքան դժվար է։ Փող չունեմ, հաց չունեմ, ոտնաման չունեմ։ Ձեզ համար դրանք օտար բառեր են։ Թթե ես ջահել ու մենակ լինեի, այս բոլորը դատարկ բաներ էին։ Բայց երբ այդ դժբախտությունն սկսում է քեզ կուացնել ծերության օրերին, իսկ վզիդ նստած են կինդ ու հինգ երեխաներդ. ակամայից կհամակվես վշտով...

— Իսկ եթե վաճառեք գյուղը, կլավանա՞ն ձեր գործերը,— հարցրեց Պլատոնովը։

— Որտեղի՞ց կլավանան,— ասաց Խլոբուևը, թափահարելով ձեռքը։— Ամբողջը կգնա պարտքերս մարելուն, իսկ ինձ հազար ռուբլի էլ չի մնա։

— Բա ի՞նչ եք անելու։

— Աստված գիտե, թե ի՛նչ։

— Բա ինչո՞ւ միջոցներ ձեռք չեք առնում, որ դուրս գաք այդ վիճակից։

— Ի՞նչ միջոցներ ձեռք առնեմ։

— Դե, անցե՛ք, օրինակ, մի որևէ աշխատանքի։

— Ես տասներկուերորդ դասի աստիճանավոր եմ։ Ի՞նչ պաշտոն կարող են ինձ առաջարկել։ Ջնչին տեղ կտան։ Ի՞նչ ստանամ, հինգ հարյո՞ւր։ Ջէ՞ որ կին ունեմ, հինգ երեխա։

— Կառավարիչ դարձեք։

— Իսկ ո՞վ կվստահի ինձ իր կալվածքը։ Ես իմ սեփականն եմ վատնել, քայքայել։

— Դե, եթե սովն ու մահն են սպառնում, մի բանի գոնե պետք է ձեռնարկել։ Ես կիմանամ եղբորիցս՝ արդյոք չի՞ կարող քաղաքում որևէ մեկի միջոցով ձեզ համար մի պաշտոն գտնել։

— Ո՛չ, Պլատոն Միխայլովիչ,— ասաց Ալոբուևը՝ հոգոց հանելով ու ամուր սեղմելով նրա ձեռքը։— Այժմ ես ոչ մի բանի պետք չեմ։ Ներքինյան հասնելուց առաջ արդեն զառամել եմ, նախկին մեղքերիցս գոտկատեղս էլ ցավում և ուսիս հոդացավն էլ մի կողմից է տանջում։ Ի՞նչ բանի եմ պիտանի։ Ինչո՞ւ պետությունից իզուր փող ստանամ։ Առանց դրան էլ այժմ շատ կան եկամտավոր պաշտոնի սիրահարներ։ Աստված չանի, որ ինձ ոռճիկ վճարելու պատճառով ավելանան չքավոր դասակարգի հարկերը։

«Ահա քեզ ցուի վարքագծի պտուղները,— մտածեց [Պլատոնովը],— դա ավելի վատ է, քան իմ քնեածությունը»։

Մինչդեռ նրանք միմյանց հետ զրուցում էին, Կոստանջողլոն քայլելով Չիլիկովի հետ նրանց ետևից՝ ջղայնանում էր։

— Նայեցե՛ք ահա,— ասաց Կոստանջողլոն, պարզելով մատը,— ինչ խեղճ դրության է հասցրել մուժիկին։ Ո՛չ սայլ ունի, ո՛չ ձի։ Թե որ սկսվել է անասունների անկում, հարկ չկա խնայել քո սեփական ունեցվածքը, եղած-չեղածդ վաճառիր ու անասուն առ մուժիկին, որպեսզի նա աշխատանք կատարելու համար ոչ մի օր առանց բանող ուժի չմնա։ Իսկ հիմա տարիներով էլ չես օգնի գործին։ Ինքը մուժիկն էլ արդեն ծուլացել է, դարձել անբան, հարբեցող։ Բավական է, որ դու թույլ տաս նրան մեկ տարի մնա առանց աշխատանքի, ընդմիշտ կայլասերես, կհաչուվի ցնցոտիների մեջ ապրելու հետ և կդառնա թափառաշրջիկ... Իսկ ինչպիսի՜ հող ունի, հողին նայեցե՛ք,— ասաց նա, ցույց տալով մարգագետիններ-

րը, որոնք քիչ անց երևացին հեռվում՝ խրճիթներից դուրս։— Բոլորը ջրովի հողեր են։ Ես որ լինեմ, այս հողերում վուշ կցանեմ, հենց միայն այդ վուշից հինգ հազար կստանամ, շաղգամ կցանեմ, չորս հազար էլ դրանից շահ կունենամ։ Ահա տեսե՛ք, զառիվայրին հաճար է երևում, դա անցած տարվանից թափված հատիկներ են բուսել։ Նա հացահատիկ չի ցանել, ես դա լավ գիտեմ։ Ահա ձորակները... Ես որ լինեմ, այնպիսի անտառներ կգցեմ, որ ագռավն իր թևով չի հասնի ծառերի գագաթին։ Եվ ոսկու նման այսպիսի հողը մի՞թե կարելի է լքել։ Ասենք, եթե վարելու հնարավորություն չունես, բանջարանոցի համար բահով փորիր, բանջարանոցից շահ կստանաս։ Ինքդ բահ վերցրո՛ւ, կնոջդ, երեխաներիդ, տան ծառաներիդ, ստիպի՛ր։ Անբաննե՛ր։ Մեռի՛ր էլի, անասուն,[?] աշխատանքում մեռիր։ Գոնե պարտքդ կատարած կմեռնես և ոչ թե խոզի նման՝ կերուխումի պահին։

Երբ նրանք մոտեցան ու կանգնեցին խոտակալած զառիվայրի գլխին, հեռվում պղպղաց գետի ոլորանն ու սևին տվող լեռան ճյուղավորումը և հեռանկարում՝ դեմդիմաց՝ գեներալ Բետրիշչևի պուրակների մեջ թաղված տան մի մասը, նրանց ետևում՝ անտառով ծածկված գանգրահեր բլուրը, որը հեռվից նշմարվում էր կապտագույն փոշով պարուրված։ Այդ նշաններից Չիչիկովն իսկույն հասկացավ, որ դա, ըստ երևույթին, Տենետնիկովինն էր [նա ասաց].

— Եթե այստեղ անտառներ դրվեն, գյուղի տեսարանն իր գեղեցկությամբ կգերազանցի...

— Երևում է, որ դուք տեսարանների սիրահար եք,— հանկարծ խիստ հայացք գցելով նրա վրա՝ ասաց Կոստանջոգլոն։— Ձգո՛ւշ եղեք, կտարվեք տեսարաններով ու կմնաք առանց հացի ու տեսարանների։ Հետևեցե՛ք օգուտ ստանալուն և ոչ թե գեղեցկությանը։ Գեղեցկությունն ինքն իրեն կբավարարվի։ Քաղաքները ձեզ օրինակ. մինչ այժմ այն քաղաքներն են ամենալավն ու գեղեցիկը, որոնք իրենք իրենց են շինվել, որտեղ յուրաքանչյուր մարդ կառուցել է իր պահանջներին ու ճաշակին համեմատ։ Իսկ այն քաղաքները, որոնք կառուցվել են ժապավենով չափված, իսկական զորանոցներ են։ Մի կողմ թողեք [գեղեցկությունը], հետևեցե՛ք ձեր պահանջներին...

— Ափսոս, որ երկար պետք է սպասեմ։ Շատ էի ուզում միանգամից տեսնել այնպես, ինչպես ցանկանում էի...

— Ի՞նչ է, դուք հո 25 տարեկան պատանի չեք... կարծես Պետերբուրգի թեթևսոլիկ չինովնիկ լինեք... Զարմանալի է... Համբերություն է պետք։ Վեց տարի անընդհատ աշխատեցե՛ք։ Տնկեցե՛ք, ցանեցե՛ք, փորեցե՛ք հողը՝ առանց մի րոպե հանգստանալու։ Դժվար է, դժվար։ Բայց վերջում, երբ հողը մի լավ կփորփրեք, տակնուվրա կանեք, ու երբ նա ինքը կըսկըսի ձեզ օգնել, կտեսնեք, որ գա միլիոնից ավելի մեծ բան է։ Ո՛չ, սիրելիս, ձեզ մոտ բացի ինչ-որ 70 ձեռքից, կաշխատեն 700 աներևույթ ձեռքեր։ Ամեն բան տասնապատիկ չափով։ Ես այժմ մատս մատիս չեմ խփում, ամեն ինչ կատարվում է ինքնիրեն։ Այո՛, բնությունը սիրում է համբերատարություն. դա մի օրենք է, որ աստված պարգևել է համբերատարների երանության համար։

— Լսելով ձեզ, մարդ զգում է, որ կարծես ուժերն ավելանում են։ Ոգին վեհանում է։

— Տեսե՛ք, թե հողն ինչպե՛ս է հերկված,— վշտի այրող զգացումով բացականչեց Կոստանջողլոն, մատնանշելով զառիվայրը։— Ես այստեղ այլևս չեմ կարող մնալ, ինձ համար մահ է տեսնել այս անկարգությունն ու ամայությունը։ Դուք այժմ կարող եք ձեր գործն ավարտել նրա հետ, առանց ինձ։ Այդ հիմարից օր առաջ վերցրեք այս գանձը։ Նա միայն անարգում է աստծո պարգևը։

Ու այդ ասելով, Կոստանջողլոն մոայլվեց՝ վրդովված հոգու մաղձոտ տրամադրությամբ, հրաժեշտ տվեց Չիչիկովին ու հասնելով խլոբուևին, սկսեց նույնպես հրաժեշտ տալ։

— Ողորմա՛ծ եղեք, Կոնստանտին Ֆեոդորովիչ,— զարմանքով ասաց կալվածատերը,— հենց նոր եկաք և ուզում եք հեռանալ։

— Չեմ կարող մնալ։ Ինձ անհրաժեշտ է շտապ տանը լինել,— ասաց Կոստանջողլոն։ Նա հրաժեշտ տվեց ու նըստելով իր քեռի կառքը, հեռացավ։

Խլոբուևը կարծես քիչ հասկացավ նրա մեկնելու պատճառը։

— Չդիմացավ Կոնստանտին Ֆեոդորովիչը,— ասաց նա,— այնպիսի տնտես մարդու, ինչպիսին նա է, հաճելի չի տես-

նել նմանօրինակ թափթփված վիճակ։ Պատկերացրե՛ք, Պավել Իվանովիչ, այս տարի ես նույնիսկ հաց չեմ ցանել։ Ազնվությամբ եմ ասում, սերմ չեմ ունեցել, էլ չիոսելով այն մասին, որ վարելու գործիք անգամ չունեմ։ Նողկանքով պետք է նայել ինձ վրա։ Ասում են, ձեր եղբայրը, Պլատոն Միխայլովիչ, հիանալի տնտես մարդ է, Կոնստանտին Ֆեոդորովիչի մասին խոսք անգամ չի կարող լինել, իր գործում կատարյալ նապոլեոն է։ Ճիշտն ասած, հաճախ մտածում եմ՝ ինչո՞ւ այդքան շատ խելք տված է մեկին, ի՞նչ կլիներ, եթե մի կաթիլ էլ իմ հիմար գլխի մեջ մտներ։ Այստեղ, պարոնա՛յք, կամրջից ղռռյշ անցեք, կընկնեք ջուրը։ Դեռ գարնանն եմ կարգադրել, որ տախտակները փոխեն։ Ես բոլորից շատ եմ ափսոսում խեղճ մուժիկներին, նրանց պետք է ցույց տալ աշխատանքի օրինակ, բայց ինձանից ի՞նչ օրինակ են վերցնելու, ի՞նչ կարող եմ անել։ Վերցրե՛ք նրանց, Պավել Իվանովիչ, ձեր տրամադրության տակ։ Ես ինչպե՞ս նրանց կարգ ու կանոն սովորեցնեմ, երբ ինքս անկարգ մարդ եմ։ Ես վաղուց նրանց ազատ կարձակեի, բայց դրանից օգուտ չկա։ Տեսնում եմ որ ամենից առաջ նրանց համար պետք է ստեղծել այնպիսի վիճակ, որ կարողանան ապրել։ Մի խստապահանջ ու արդարացի մարդ է պետք, որ երկար ժամանակ ապրի նրանց հետ ու անխոնջ աշխատանքի անձնական օրինակով[1]... Ինձանով եմ դատում, որ ռուս մարդը առանց բզելու չի կարող, կթմրի ու կթթվի։

— Զարմանալի է,— ասաց Պլատոնովը,— ինչո՞ւ ռուս մարդը այդպես ընդունակ է թմրելու ու թթվելու, և եթե ուշադրություն չդարձնես հասարակ մարդու վրա, կդառնա և՛ հարբեցող, և՛ անպիտանի մեկը։

— Կրթության պակասությունից է,— նկատեց Զիլիկովը։

— Աստված գիտե, թե ինչից է։ Վերցնենք ահա մեզ. կրթություն ենք ստացել, եղել ենք համալսարանում, բայց ինչի՞ ենք պետք։ Ի՞նչ եմ սովորել։ Ո՛չ միայն չսովորեցի, թե ինչպես պետք է կանոնավոր ապրել, այլ ընդհակառակը, սովորեցի զանազան նոր ընտիր բաների վրա ավելի շատ փող ծախսելու արվեստին ու ավելի շատ ծանոթացա այնպիսի բա-

1 Անբնական է։

ների հետ, որոնք փող են պահանջում։ Սովորեցի միայն փող ծախսել զանազան վայելքների վրա։ Պատճառն այն էր, որ ես վա՞տ էի սովորում։ Ո՛չ, նույն վիճակումն էին նաև մյուս ընկերներս։ Երկու-երեք մարդ իսկական օգուտ քաղեցին, միայն այն պատճառով, որ գուցե առանց այն էլ խելացի էին, իսկ մնացածները ձգտում էին յուրացնել միայն այն, ինչ վնասում է առողջությանը և փող է կորզում նրանցից։ Ասված վիա։ Իսկ ի՞նչ է մտքումս անցնում. երբեմն ինչ. ճիշտն ասած, թվում է, թե ուս մարդը կորած մարդ է։ Ուզում ես ամեն բան անել և ոչինչ դուրս չի գալիս։ Միշտ մտածում ես՝ վաղվանից կսկսես մի նոր կյանք, վաղվանից կանցնես չափավոր ու ժուժկալ կյանքի, բայց բան դուրս չի գալիս, նույն օրը, երեկոյան կողմ, այնքան կուտես, որ աչքերդ եւ ճպճպացնում և լեզուդ չի դառնում։ Բուի պես նստած նայում ես բոլորին։ Ճիշտ եմ ասում։ Եվ այդպես՝ բոլո՛րը։

— Այո՛,— քմծիծաղ տալով ասաց Չիչիկովը,— լինում են նման բաներ։

— Մենք ողջամիտ մարդ դառնալու համար չենք ծնվել։ Ես չեմ հավատում, որ մեզանից որևէ մեկը շրջահայաց լինի։ Թեև ես նույնիսկ նկատում եմ, որ մեկն ու մեկը տանելի կյանք ունի, փող է հավաքում և կուտակում, դրան ևս չեմ հավատում։ Հասակն առնելուն պես նրան ևս սատանան կշեղի ուղիղ ճանապարհից, վերջում բոլորը միանգամից քամուն կտա։ Ճիշտ եմ ասում, բոլորն էլ այդպես են՝ և՛ կրթվածները, և՛ կրթություն չստացածները։ Ո՛չ, այստեղ մի ինչ-որ բան է պակասում, բայց թե ինչ, ինքս էլ չգիտեմ։

Այդպես խոսելով, նրանք շրջեցին խրճիթները, այնուհետև՝ կառք նստած անցան մարգագետիններով։ Այդ վայրերը լավ տեսք կունենային, եթե ծառերը կտրած չլինեին։ Նրանց առջև բացվեցին գեղեցիկ տեսարաններ։ Մի կողմում կապույտին էր տալիս այն բարձունքների շղթան, որտեղ վերջերս Չիչիկովն էր եղել։ Բայց չէին երևում ո՛չ Տենետնիկովի և ո՛չ էլ գեներալ Բեթրիշչևի գյուղերը։ Դրանք բարձունքների հետևն էին։ Իջնելով դեպի մարգագետինները, որտեղ երևում էին միայն ուռենու և բարդու թփուտներ, բարձր ծառերը կտրված էին, նրանք այցելեցին կիսականգուն ջրաղացը, տեսան գետը, որով կարելի էր կտրված ծառերը քշել, եթե քշե-

լու բան լիներ։ Տեղ-տեղ արածում էին հյուծված անասուններ։ Առանց կառքից իջնելու, դիտելով ամեն բան, նրանք նորից վերադարձան գյուղ և փողոցում հանդիպեցին մի մուժիկի, որը քորելով իր մարմինը [մեջքից] ցած այնպես, հորանջեց, որ նույնիսկ վախեցրեց գյուղի ավագի հնդուհավերին։ Հորանջը նկատելի էր բոլոր շենքերի վրա։ Կատուները ևս հորանջում էին։ Դիտելով այդ բոլորը, Պլատոնովը հորանջեց։ Կարկատան կարկատանի վրա էր։ Խրճիթներից մեկի վրա կատուի փոխարեն դրված էր մի ամբողջ դարպաս։ Տնտեսության մեջ կիրառվում էր առակի հերոս Տրիշկայի կաֆտանի սիստեմը՝ կտրում էին թևքերն ու փեշը, որ կարկատեն արմունկները։

— Ահա, թե ի՛նչ վիճակ է ինձ մոտ,— ասաց Խլոբուևը։— Այժմ դիտենք տունը,— ու տարավ նրանց տան բնակելի սենյակները։ Չիչիկովը ենթադրում էր այնտեղ ևս տեսնել ցրնցոտիներ ու հորանջ առաջացնող իրեր, բայց ի զարմանս յուր, սենյակները կարգին էին ու մաքուր։ Մտնելով սենյակները, նրանք ապշեցին աղքատության ու վաղեմի շքեղության ղիզի-պիզիների յուրատեսակ միաձուլմամբ։ Մի ինչ-որ Շեքսպիր նստած էր թանաքամանի վրա։ Սեղանին դրված էր փղոսկրյա մի շքեղ գրչակոթ, որը գործածվում էր մեջքը քորելու համար։ Նրանց դիմավորեց ճաշակով ու վերջին մոդայով հագնված տանտիրուհին։ Ներկա էին նաև, նույնպես լավ հագնված, չորս երեխա՝ իրենց դաստիարակչուհու հետ միասին։ Երեխաները դուրեկան տեսք ունեին, բայց լավ կլիներ, եթե նրանք հագնված լինեին ծաղկավոր չթե յուրկաներ, հասարակ շապիկներ ու բակում անհոգ վազվզեին և ոչ մի բանով չտարբերվեին գեղջուկների անտուն երեխաներից։

Երկար չանցած, տանտիրուհուն հյուր եկավ մի ինչ-որ շաղակրատ ու շատախոս կին։ Տիկինները հեռացան իրենց սենյակը։ Երեխաները վազեվազ հետևեցին նրանց։ Տղամարդիկ մնացին մենակ։

— Դե, հայտնեցե՛ք, ուրեմն, ձեր գինը,— ասաց Չիչիկովը։— Ճիշտն ասած, վախն այն պատճառով եմ հարցնում, որ իմանամ ձեր վերջին նվազագույն գինը, որովհետև կալվածքն անհամեմատ վատ վիճակում է, քան ես սպասում էի։

— Վատագույն վիճակում, Պավե՛լ Իվանովիչ,— ասաց

խլոբուևը։— Դա դեռ բոլորը չէ։ Ձեզանից չեմ թաքցնի. ցուցակով համարվող հարյուր շնչից միայն հիսունն է կենդանի, իսկ երեքան իր գործը տեսել է։ [Մնացածներն] առանց անձնագրի բացակայում են, այնպես որ, նրանց ևս համարեցեք մեռած։ Հետևաբար, եթե նրանց դատական կարգով ցանկանանք ետ պահանջել, ապա ամբողջ կալվածքը դատարանների քննության առարկան կդառնա։ Այդ իսկ պատճառով ես խնդրում եմ միայն երեսունհինգ հազար։

Ջիչիկովը, հասկանալի է, սկսեց սակարկել։

— Ներեցե՛ք, ինչպե՞ս թե երեսունհինգ։ Նման կալվածքին երեսունհի՞նգ։ Դե, վերցրեք 25 հազար։

Պլատոնովի խիղճը տանջեց։

— Գնեցե՛ք, Պա՛վել Իվանովիչ,— ասաց նա։— Կալվածքի համար հանգիստ սրտով կարող եք տալ այդ [դինը]։ Եթե դուք չտաք երեսունհինգ հազար, ես ու եղբայրս կմիանանք ու կգնենք։

— Շատ լավ, համաձայն եմ,— վախեցած վրա բերեց Ջիչիկովը։— Լա՛վ, միայն պայմանով, որ արժեքի կեսը վճարեմ մեկ տարի հետո։

— Ո՛չ, Պավել Իվանովիչ, այդ բոլորովին անհնար է։ Կեսը վճարեցեք հենց այժմ,— իսկ մնացածը՝ [15 օր] հետո։ Առանց այն էլ հիշյալ գումարը ես կարող եմ լոմբարդից ստանալ։ Այնպես արեք, որ մարդուս ցավին դարման լինի։

— Ապա ինչպե՞ս անեմ, մոտս ընդամենը ունեմ տասը հազար,— ասաց Ջիչիկովը. ասաց՝ ու խաբեց. նրա մոտ կար քսան. նեղություն էր այն գումարը, որ պարտք էր վերցրել կոստանջողլուից, բայց ափսոսում էր միանգամից այդքան փող տալ։

— Ո՛չ, ներեցե՛ք, Պավել Իվանովիչ։ Կրկնում եմ, որ ինձ անհրաժեշտ է ունենալ տասնհինգ հազար։

— Ես ձեզ փոխարինաբար կտամ 5 հազար,— վրա բերեց Պլատոնովը։

— Եթե այդպես է, ոչինչ,— ասաց Ջիչիկովն ու ինքնիրեն մտածեց. «Ի դեպ, դա շատ տեղին է, որ փոխարինաբար փող է տալիս»։

Կառքից ներս բերվեց գզրոցը և տեղն ու տեղը խլոբուևին հանձնվեց 10.000, իսկ մնացած հինգ հազարը խոստացվեց

բերել հաջորդ օրը, այսինքն՝ խոստացան, իսկ ենթադրվում էր բերել երեք հազար, մյուս գումարը՝ հետո, երկու կամ երեք օր անց, իսկ եթե հնարավոր էր, է՛լ ավելի ուշ։ Պավել Իվանովիչը մի տեսակ առանձնապես չէր սիրում ձեռքից դուրս տալ փողերը, իսկ եթե ծայրաստիճան հարկ էր լինում այդ անելու, ապա այնուհետև նրան թվում էր, որ լավ է դրամը վճարել վաղը և ոչ թե այսօր։ Այլ կերպ ասած, նա վարվում էր այնպես, ինչպես մենք բոլորս։ Չէ՞ որ մենք սիրում ենք խնդրատուի քթից քարշ տալ, թող նախասենյակում մեջքը մաշի։ Կարծես թե չի կարող սպասել։ Մեր ի՞նչ գործն է, թե նրա ամեն մի ժամը գուցե քանկ է, ու սպասելուց տուժում են նրա գործերը. վա՛ղը եկ, բարեկամ, այսօր ես ժամանակ չունեմ։

— Դրանից հետո որտե՞ղ եք ապրելու,— հարցրեց Պլատոնովը Խլորուևին։— ուրիշ գյուղ ունե՞ք։

— Ստիպված ենք քաղաք տեղափոխվել, այնտեղ մի փոքրիկ տուն ունեմ։ Երեխաներիս համար դա անհրաժեշտ է, ուսուցիչներ են պետք նրանց։ Այստեղ, թերևս հնարավոր լինի ճարել կրոնի [դասատու], իսկ երաժշտության ու պարի ուսուցիչ որ մի կերպ հնարավոր չի գտնել։

«Ուտելու մի կտոր հաց չունի, իսկ երեխաներին պարել է սովորեցնում»,— մտքում ասաց Չիչիկովը։

«Տարօրինակ է», մտածեց Պլատոնովը։

— Այնուամենայնիվ, մեր այս գործարքը պետք է որևէ կերպ թրջել,— ասաց Խլորուևը։— է՛յ, Կիրյո՛ւշկա, մի շիշ շամպայն բեր, սիրելիս։

«Ուտելու մի կտոր հաց չունի, իսկ շամպայն ունի», մտածեց Չիչիկովը։

Պլատոնովը–չգիտեր նույնիսկ ի՛նչ մտածի։ [Խլորուևը] շամպայնը ձեռք էր բերել անհրաժեշտությունից դրդված։ Նա մարդ էր ուղարկել քաղաք. ի՞նչ արած, խանութում ապառիկ կվաս չեն տալիս, բայց խմելու ախորժակ կա։ Իսկ վերջերս Պետերբուրգից գինիներով ժամանած ֆրանսիացին բոլորին ապառիկ է տալիս։ Ճար չկար, հարկ եղավ վերցնել մի շիշ շամպայն։

Շամպայնը բերվեց։ Նրանք խմեցին երեքական գավաթ, ու տրամադրություններդ բարձրացավ։ Խլորուևի լեզուն բաց-

վեց. նա դարձավ դուրեկան ու խելացի, աչ ու ձախ սրախոսություններ էր անում և անեկդոտներ պատմում։ Նրա խոսքերից պարզվեց, թե նա որքան լավ էր ճանաչում մարդկանց ու աշխարհը։ Նա այնքան լավ ու ճիշտ էր տեսնում շատ բան, մի քանի խոսքով այնքան դիպուկ ու հաջող էր բնութագրում իր հարևան կալվածատերերին, այնքան պարզ էր տեսնում բոլորի թերությունները ու սխալները, այնքան լավ գիտեր նրանց անանկանալու պատճառները՝ ինչո՞ւ, ինչպե՞ս և ի՞նչ պատճառներից են նրանք սնանկացել, այնքան ինքնատիպ ու զավեշտական գույներով էր կարողանում հաղորդել նրանց ծաղրական կողմերը, որ Չիչիկովն ու Պլատոնովը ամբողջովին դյութվել էին նրա խոսքերից և պատրաստ էին համարել նրան ամենախելացի մարդը։

— Ես զարմանում եմ,— ասաց Չիչիկովը,— թե ինչո՞ւ դուք, լինելով այդքան խելացի մարդ, չեք կարողանում գրոշ նել միջոցներ ու ճանապարհներ։

— Միջոցներ կան,— պատասխանեց Խլոբուևը և իսկույն շարադրեց ծրագրեթղթի մի ամբողջ կույտ։ Այդ բոլորն այնքան անհեթեթ էին, այնքան տարօրինակ, այնքան քիչ էին բխում մարդկանց և աշխարհի ճանաչողությունից, որ մնում էր միայն թոթվել ուսերն ու ասել. «Տե՛ր աստված, ինչպիսի՛ անհուն տարածություն կա աշխարհն իմանալու և այդ իմաստությունից օգտվել կարողանալու միջև»։ Ամբողջը հիմնված էր որևէ տեղից հանկարծ հարյուր կամ երկու հարյուր հազար ձեռք բերելու վրա (որից հետո), նրան թվում էր, թե ամեն բան, ինչպես հարկն է, կկարգավորվեր, և՛ տնտեսությունը ոտքի կդրվեր, և՛ ծակ ու ծուկը կլցվեր, և՛ եկամուտները կքառապատկվեին ու ինքն էլ ի վիճակի կլիներ վճարել բոլոր պարտքերը։ Եվ իր ճառը նա ավարտեց հետևյալ կերպ. «Բայց ի՞նչ կհրամայեք, որ անեմ։ Չկա ու չկա մի այնպիսի բարեբար մարդ, որը պարտք տար ինձ երկու հարյուր կամ թեկուզ հարյուր հազար։ Երևի թե, աստված չի կամենում»։

«Այդ էր պակաս, որ նման հիմարին աստված երկու հարյուր հազար ուղարկի»,— մտածեց Չիչիկովը։

— Ասենք, ունեմ երեք միլիոն կարողության տեր մի մորաքույր,— ասաց Խլոբուևը,— աստվածապաշտ պառավ, եկեղեցիներին ու վանքերին է օգնում նվերներով, բայց հարա-

զատին օգնելու դործում ժլատ է։ Հին աշխարհի մարդ է մորաքույրս, որին տեսնելը արժեր։ Միայն չորս հարյուր հատ դեղձանիկ ունի, բազմաթիվ քած մոպսեր, մոտը ձրիակեր կանայք, ծառաներ, որոնց նմանն այժմ գոյություն չունեն։ Ծառաներից ամենակրտսերը մոտ 60 տարեկան է, թեև մորաքույրս նրան կանչելիս ասում է՝ «էյ, ճստիկ»։ Երեք հյուրերից մեկն ու մեկը ճաշի ժամանակ որևէ թերացում ունեցավ, կհրամայի, որ նրան ճաշ չմատուցեն... և չեն մատուցում։ Ահա թե ի՛նչ։

Պլատոնովը ծիծաղեց։

— Իսկ ի՞նչ է աղգանունը և որտե՞ղ է ապրում,— հարցրեց Չիչիկովը։

— Ալեքսանդրա Իվանովնա Խանասարովա, ապրում է հենց մեր քաղաքում։

— Իսկ ինչո՞ւ նրան չեք դիմում,— կարեկցությամբ ասաց Պլատոնովը։— Ինձ թվում է, որ եթե նա հասկանա ձեր ընտանիքի դրությունը, դժվար թե մերժի։

— Ո՛չ, կմերժի։ Մորաքույրս պինդ բնավորության տեր կին է։ Նա քարսիրտ պառավ է, Պլատոն Միխայլովիչ։ Առանց ինձ էլ նրա շուրջը պտտվող հաճոյակատարներ շատ կան։ Այնտեղ մեկը կա, որ աչքը տնկել է նահանգապետի պաշտոնին, ազգական է ձևանում... Օղի՛ր բարի, չնո՛ւհ արա ինձ,— հանկարծ դիմեց նա [Պլատոնովին],— եկող շաբաթ ես քաղաքի բոլոր բարձրաստիճան մարդկանց համար ճաշկերույթ եմ տալիս...

Պլատոնովն աչքերը չռեց։ Նա դեռ չգիտեր, որ Ռուսիայի քաղաքներում և մայրաքաղաքներում կան այնպիսի խելոք-ներ, որոնց կյանքը կատարյալ անբացատրելի հանելուկ է։ Թվում է, որ իր ամբողջ ունեցած-չունեցածը կերել-սպառել է, թաղվել պարտքերի մեջ, ո՛չ մի տեղից ո՛չ մի եկամուտ չի սպասում, բայց ճաշկերույթներ է տալիս։ Եվ բոլոր ճաշողներն ասում են, թե դա վերջինն է, թե հենց վաղը տանտիրոջը բանտ քսրշ կտան։ Այդ օրվանից անցնում է տասը տարի, խելոքը դեռ ապրում է աշխարհիս երեսին, առաջվանից էլ ավելի մեծ պարտքերի մեջ ընկած ու դարձյալ ճաշկերույթներ է տալիս, որտեղ բոլոր ճաշողները ենթադրում են, դա

վերջին ճաշկերույթն է ու համոզված են, որ հենց վաղը տունտիրոջը բանտ են քարշ տալու։

Ելոբուևի տունը քաղաքում մի արտասովոր երևույթ էր։ Այսօր տերտերը շուրջառը հագին մաղթանք էր կատարում, հաջորդ օրը ֆրանսիական դերասանները ներկայացում էին տալիս։ Մի օր չէր կարելի ճարել նույնիսկ հացի փշրանք, մի այլ օր՝ բոլոր դերասաններին ու նկարիչներին սրտաբաց ընդունելություն և ճոխ նվիրատվություն։ Երբեմն լինում էին այնպիսի ծանր օրեր, որ նրա փոխարեն մի ուրիշը վաղուց արդեն իրեն կախած կլիներ կամ ատրճանակը ճակատին կրակած, սակայն նրան փրկում էր կրոնական տրամադրությունը, որը տարօրինակ ձևով համատեղվում էր նրա անկարդ կյանքի հետ։ Այդ դառն րոպեներին [նա] կարդում էր նահատակների ու քրտնաջան մշակների կյանքի նկարագրությունները, այն մարդկանց, ովքեր իրենց ոգին դաստիարակում էին լինելու տառապանքներից բարձր։ Այդ պահին նրա սիրտը փափկում էր, հոգին լցվում խանդաղատանքով, ու աչքերը բռնվում արցունքով։ Նա աղոթում էր և, տարօրինակ բան, գրեթե միշտ որևէ տեղից անակնկալ օգնություն էր վրա հասնում։ Մերթ նրա հին բարեկամներից մեկը հիշում էր նրան ու դրամ ուղարկում, մերթ ճանապարհով անցնող մի որևէ անծանոթ կին, պատահմամբ լսելով նրա պատմությունը, կնոջ սրտին հատուկ սրընթաց բարեհոգությամբ հարուստ նվերներ էր ուղարկում կամ որևէ տեղ նրա օգտին շահում էին մի վիճելի գործ, որի մասին նա նույնիսկ տեղեկություն էլ չունի։ Նման դեպքերում նա ակնածանքով վերագրում էր այդ բոլորը նախախնամության անմիջական ողորմածությանը, գոհունական մաղթանքներ կատարում և կրկին սկսում իր վայրիվերո կյանքը։

— Խղճո՜ւմ եմ ես նրան, խղճո՜ւմ,— ասաց Պլատոնովը Զիչիկովին, երբ, հրաժեշտ տալով Ելոբուևին, մեկնեցին նրա տնից։

— Անառակ որդի է,— ասաց Զիչիկովը։— Նման մարդկանց խղճալն էլ ավելորդ է։

Ու շուտով նրանք երկուսն էլ դադարեցին նրա մասին մտածելուց. Պլատոնովը այն պատճառով, որ մարդկանց վիճակի վրա նայում էր ծուլորեն ու քմրած տրամադրությամբ,

ինչպես և աշխարհում ամեն բանի վրա։ Նրա սիրտը բաց-վում էր ու ճմլվում ուրիշների տառապանքները տեսնելիս, սակայն այդ ապրումները նրա հոգու մեջ չէին տպավորվում։ Մի քանի րոպե անց նա Խլոբուևի մասին այլևս չէր մտածում։ Նա Խլոբուևի մասին չէր մտածում այն պատճառով, որ իր մասին ևս չէր մտածում։ Ջիչիկովը չէր մտածում Խլոբուևի մասին, որովհետև իրականում լուրջ տարված էր իր նոր ձեռքբերումով։ Ի՛նչ էլ որ լինի, նա երազանքից հետո հանկարծ հանդիսանալով ոչ ֆանտաստիկ կալվածքի իսկական տերը, դարձավ մտախոհ, մտքերով ծանրաբեռ, ու այդ բոլորը ակամայից նրա դեմքի վրա դրոշմել էին լրջության կնիքը. «Համբերությո՛ւն, աշխատա՛նք։ Դրանք դժվար գործեր չեն։ Ա՛յդ բոլորի հետ ես ծանոթ եմ դեռ խանձարուրում եղած օրերից։ Ոչ մի բան ինձ համար նորություն չէ։ Բայց իմ այս հասակում կունենա՞մ արդյոք այնքան համբերություն, ինչպես երիտասարդությանս օրերին»։ Այնուամենայնիվ, նա մտածում էր, թե ինչպես կընթանան (?) ցանքերը, թե ինչպե՞ս նա կթոթափի բոլոր հիմար հնարանքները, թե ինչպե՞ս առավոտները վաղ է արթնանալու, ինչպե՞ս նախքան արևի ծագելը կարգադրություններ է անելու, ինչպե՞ս հրճվանքով դիտելու է իր կալվածքի աճումն ու բարգավաճումը, ապա ինչ հաճելի է վերջում էլ զմայլվել երեխաներով։ «Հիրավի, դա է իսկական կյանքը։ Կոստանջողլոն իրավացի է»։ Ու Ջիչիկովի դեմքն անդամ այդ մտքերից կարծես ստացավ ավելի լավ արտահայտություն։ Ահա թե ինչպե՛ս օրինավոր կյանքի մասին խորհելը հենց միայն ազնվացնում է մարդուս։ Բայց, ինչպես միշտ պատահում է մարդու հետ, մեկ մտքերից անմիջապես հետո վրա հասավ հակադիր միտք։ «Կարելի է նույնիսկ վարվել հետևյալ կերպ,— մտածեց Ջիչիկովը,— սկզբում մաս-մաս վաճառել լավագույն հողերը, այնուհետև կալվածքը լոմբարդում գրավ դնել մեռածների հետ միասին։ Կարելի է նույնիսկ ծլկել, առանց Կոստանջողլոյին վճարելու»։ Տարօրինակ միտք։ Ո՛չ թե Ջիչիկովը հղացավ այդ միտքը, այլ այն հանկարծ ինքն իրեն պատկերացավ նրան, գրգռելով ու քմծիծաղ տալով և աչքերը կկոցելով նրա վրա։ Անպիտան, չարաճճի միտք։ Եվ ո՞վ է հանկարծ մարդու մեջ ծագող այդ մտքերն ստեղծողը... Մի խոսքով, գնումը, այնուամենայնիվ,

շահավետ էր։ Նա գոհունակություն էր զգում, գոհունակություն այն բանից, որ այժմ դարձել էր կալվածատեր, ո՛չ թե ֆանտաստիկ, այլ իրական մի կալվածատեր, որն արդեն ունի և՛ հող, և՛ ագարակներ, և՛ շնչեր, մարդիկ, որոնք երազային չեն, երևակայության մեջ պատկերվող, այլ իրականում գոյություն ունեն։ Ու կամաց-կամաց սկսեց թռչկոտել ու շփել ձեռքերը և ինքն իրեն աչքով անել։

— Կանգնի՛ր,— հանկարծ կառապանի վրա գոռաց նրա ուղեկիցը։ Այդ բացականչությունը նրան ստիպեց սթափվել ու նայել շուրջը. նրանք վաղուց ի վեր գնում էին հիանալի անտառակով։ Կեչիների գեղեցկատեսիլ ծառուղին ձգված էր նրանց աջ ու ձախ կողմերից։ Անտառային կեչիների ու բարդիների ճերմակ բները՝ ձյունի ցանկապատի նման փայլելով, ներդաշնակորեն ու թեթև-բարձրացել էին դեռ նոր բուսած տերևների քնքուշ կանաչից։ Սոխակները մեկը մյուսի հետևից բարձր դայլայլում էին անտառում։ Խոտերի մեջ դեղնին էին տալիս անտառային վարդակակաչները։ Նա իրեն հաշիվ չէր կարող տալ, թե ինչպե՛ս հասավ այդ գեղեցիկ վայրը, երբ քիչ առաջ դեռ շուրջը բաց դաշտեր էին։ Ծառերի միջից մերթ ընդ մերթ երևում էր քարաշեն, սպիտակ եկեղեցին, իսկ մյուս կողմից, պուրակի հետևում նշմարվում էր ցանկապատը։ Փողոցի ծայրում երևաց նրանց ընդառաջ եկող մի պարոն, գըլխին կարտուզ, ոստոտ ձեռնափայտով։ Առջևից վազում էր երկար, բարակ ոտքեր ունեցող անգլիական ցեղի իր շունը։

— Ահա և եղբայրս,— ասաց Պլատոնովը։— Կանգնի՛ր, կառապա՛ն։

Ու նա իջավ կառքից։ Չիչիկովը նույնպես։ Մինչ այդ շներն արդեն հոտոտել էին ու լիզել միմյանց։ Բարակոտն ու արագաշարժ Ազորն իր շարժուն լեզվով լիզեց Յարբի մուրթը, ապա լիզեց Պլատոնովի ձեռքերը, այնուհետև թռավ Չիչիկովի վրա ու լիզեց նրա ականջը։

Եղբայրները գրկախառնվեցին։

— Աստված քեզ հետ, Պլատո՛ն, այդ ի՞նչ խաղեր ես խաղում իմ գլխին,— ասաց դեմ եկող եղբայրը, որի անունն էր Վասիլի։

— Ի՞նչ է պատահել,— անտարբեր պատասխանեց Պլատոնը։

— Այսինքն՝ ինչպե՞ս թե ինչ։ Երեք օր է, որ քեզանից ձայն-ձուն չկա։ Ջհապանը Պետուխի մոտից բերեց քո հովտակն ու ասում է. «Մի ինչ-որ պարոնի հետ գնաց»։ Գոնե մի խոսք ասեիր՝ ո՞ւր, ի՞նչ գործով, որքա՞ն ժամանակով, խիղճ ունես, հոգի՛ս, մի՞թե կարելի է այդպես վարվել։ Իսկ այդ օրերին մտքովս հազար ու մի բան անցավ։

— Դե, ի՞նչ արած, մոռացա,— ասաց Պլատոնովը։— Մենք եղանք Կոնստանտին Ֆեոդորովիչի մոտ. բարևում է քեզ, մեր քույրը նույնպես։ Պավել Իվանովիչ, ներկայացնում եմ ձեզ՝ եղբայրս, Վասիլին։ Եղբայր Վասիլի, սա Պավել Իվանովիչն է։

Փոխադարձաբար ծանոթանալու համար հրավիրված՝ երկուսն էլ սեղմեցին միմյանց ձեռքը և, հանելով կարտուզները, համբուրվեցին։

«Ի՞նչ մարդ է այս Ջիլիկովը,— մտածում էր Վասիլին եղբայրը։— Պլատոնը՝ եղբայրս, ո՛ւմ հետ ասես ծանոթանում է»։

Եվ նա, ինչ չափով որ քաղաքավարությունը թույլ էր տալիս, հայացքով զննեց Ջիլիկովին ու եզրակացրեց, որ նա շատ բարեմիտ մարդ է։

Իր հերթին Ջիլիկովը, որքան քաղաքավարությունն էր թույլ տալիս, հայացքով զննեց եղբայր Վասիլիին ու տեսավ, որ եղբայրն ավելի կարճ է, քան Պլատոնը, մազերն ավելի մուգ են ու դեմքով ո՛չ այնքան նրանից գեղեցիկ, բայց դիմագծերում զգացվում էր ավելի շատ կյանք ու ոգևորություն, ավելի սրտալի բարություն։ (Սակայն Պավել Իվանովիչն այդ հանգամանքի վրա քիչ էր ուշադրություն դարձնում)։ Նկատելի էր, որ նա ավելի գործունյա էր։

— Ես, Վա՛սյա, որոշել եմ Պավել Իվանովիչի հետ շրջել սուրբ Ռուսիան։ Գուցե այդպիսով ցրեմ իմ մելամաղձությունը։

— Այդ ի՞նչ ես հանկարծ որոշել,— մտահոգ ասաց եղբայր Վասիլին։ Քիչ մնաց, որ ավելացներ. «Ու շրջել մի մարդու հետ, որին առաջին անգամ ես տեսնում, որը, գուցե և, անպիտանի մեկն է, և սատանան գիտե թե ի՛նչ»։ Անվստահությամբ լի, նա ծուռ հայացքով նայեց Ջիլիկովին ու տեսավ մի զարմանալի պարիեշտություն։

Նրանք ուղղվեցին աջ՝ դեպի դարպասը։ Թակը հին ձևի էր,

տունը նույնպես հին ձևի, որ այժմ արդեն չեն կառուցում, հովանոցներով, կտուրը բարձր։ Բակի մեջտեղում բուսել էին երկու հսկայական լորենի և իրենց ստվերով ծածկում էին բակի գրեթե կեսը։ Ծառերի տակ դրված էին բազմաթիվ փայտյա նստարաններ։ Ծաղկող յասամաններն ու թխկենիները մարգարտաշար մանյակի նման ձգվել էին բակով մեկ ու իրենց ծաղիկներով ու տերևներով բոլորովին ծածկել ցանկապատը։ Կալվածատիրոջ տունը բոլորովին չէր երևում, միայն դռներն ու լուսամուտներն էին ներքևից նայում խիտ սաղարթի միջից։ Նետի նման ուղղաձիգ ծառերի բների միջից սպիտակին էին տալիս ու երևում խոհանոցները, մառաններն ու նկուղները։ Ամբողջովին պուրակի մեջ։ Պուրակը լցված էր սոխակների բարձր գեղգեղանքով։ Ակամայից մարդու հոգին համակվում էր անդորր, հաճելի զգացումով։ Բուրում էր այն վաղեմի անհոգ օրերով, երբ բոլորն ապրում էին անմեղ կյանքով ու ամեն բան այնքան պարզ էր ու հասարակ։ Նղբայր Վասիլին խնդրեց Ջիչիկովին նստել։ Նրանք նստեցին լորենիների տակ՝ նստարաններին։

Տասնյոթ տարեկան մի ջահել տղա, հագին վարդագույն, գեղեցիկ շապիկ, բերեց ու նրանց առջև դրեց լի գրաֆիններով, մրգերից պատրաստված զանազան տեսակի գույնզգույն կվասներ՝ քե՛ յուղի պես թանձր, քե՛ գազ պարունակող, լիմոնադի պես ֆշշացող։ Գրաֆինները դնելուց հետո նա վերցրեց ծառին հենած բահն ու գնաց այգի։ Պլատոնով եղբայրները ևս, ինչպես և նրանց փեսա Կոստանջողլոն, հատուկ ծառաներ չունեին, նրանք բոլորն էլ այգեպաններ էին, տունն սպասարկող մարդիկ հերթով կատարում էին այդ պաշտոնը։ Եղբայր Վասիլին միշտ պնդում էր, որ ծառաները դասակարգ չեն. որևէ բան մատուցել կարող է ամեն ոք, և այդ տեսակետից հարիք չկա հատուկ մարդկանց կարգել. որ իրր ոտաց մարդը այն չափով է լավ ու գործունյա և ոչ էլ ծույլ, քանի դեռ իր հագին ունի շապիկ և ոտքին, բայց հենց որ վրան քաշում է մի գերմանական սերթուկ, իսկույն գառնում է անշնորհք ու դանդաղաշարժ, ծույլ, շապիկն անգամ չի փոխում, բաղնիք նույնիսկ չի գնում, քնում է սերթուկը հագին ու այդ գերմանական սերթուկի տակ ծնունդ են առնում անթիվ-անհամար քե՛ փայտոջիլներ և քե՛ լվեր։ Այդ հարցում նա Թերևս

իրավացի էր։ Գյուղում նրանց մարդիկ առանձնապես լավ էին պճնվում, կանանց գլխանոցներն ամբողջովին ոսկեկար էին, իսկ շապիկների թևքերը ի՛սկ և իսկ թուրքական շալի եզրազարդեր։

— Ահա՛ այն կվասները, որոնցով վաղուց ի վեր հայտնի է մեր տունը,— ասաց եղբայր Վասիլին։

Չիչիկովը առաջին գրաֆինից լցրեց իր բաժակը՝ ի՛սկ և իսկ լորու մեղր, որ նա երբեմն ճաշակել էր Լեհաստանում։ Շամպայնի նման փրփրում էր, իսկ գազը բերանից, ոլորաձև, քիթն անցավ ու դուրեկան ձևով խտտացրեց։ «Նեկտար է», ասաց նա։ Մի բաժակ խմեց մյուս գրաֆինից, դա ավելի լավն էր։

— Խմիչքների խմի՛չք,— ասաց Չիչիկովը։— Կարող եմ ասել, որ ձեր հարգարժան փեսա Կոնստանտին Ֆեոդորովիչի մոտ խմեցի օշարակով պատրաստված առաջնակարգ օղի, իսկ ձեզ մոտ՝ առաջնակարգ կվաս։

— Օշարակով պատրաստված օղին էլ մերն է։ Քրոջս գյուտն է։ Մայրս մալոռուս էր, Պոլտավայի գյուղերից։ Ներկայումս բոլորն էլ մոռացության են տվել իրենց տնտեսությունը։ Ի՞նչ ուղղությամբ և ո՞ր վայրերն եք ենթադրում մեկնել,— հարցրեց եղբայր Վասիլին։

— Ես ճանապարհորդում եմ ո՛չ այնքան իմ անձնական գործերով, որքան ուրիշի,— ասաց Չիչիկովը՝ թեթևորեն օրորվելով նստարանի վրա ու շփելով ծունկը։— Իմ մերձավոր բարեկամ ու, կարելի է ասել, բարերար գեներալ Բետրիշչևը խնդրել է այցելել իր հարազատներին։ Հարազատները, անշուշտ, իրենց հերթին, սակայն մասամբ էլ, այսպես ասած, գնում եմ իմ անձնական գործով ևս, որովհետև, չխոսելով հեմորոյի դեմ կռվելու օգտակարության տեսակետից, աշխարհն ու մարդկանց եռուզեռը տեսնելը մի ուսանելի գիրք է։

Եղբայր Վասիլին խորասուզվեց մտքերի մեջ։ «Այս մարդը խոսում է մի քիչ ճոռոմ լեզվով, բայց նրա խոսքերում ճշմարտություն կա», մտածեց [նա]։ Կարճ լռությունից հետո նա, դիմելով Պլատոնին, ասաց.

— Ես սկսում եմ եզրակացնել, Պլատոն, որ այդ ճանապարհորդությունը, իրոք, քեզ կարող է բարմացնել։ Դու տա-

ռապում ես հոգեկան թմրածությամբ, ուրիշ ոչինչ։ Դու պարզապես թմրել ես և թմրել ո՛չ քե կյանքից կշտանալուց կամ հոգնածությունից, այլ կենդանի տպավորությունների պակասությունից։ Իսկ ես միանգամայն հակառակ բնավորության տեր մարդ եմ։ Ես շատ կցանկանայի, որ ամեն բան այդպես ցավագին կերպով չընդունես սրտիդ մոտ։

— Արգելված չէ սրտի մոտ ընդունել ցանկացածդ,— ասաց Պլատոնը։— Բայց դու ինքդ ես քեզ համար անհանգստություն ստեղծում և ինքդ ընկնում տագնապի մեջ։

— Ինչո՞ւ ստեղծել, երբ առանց այդ էլ ամեն մի քայլափոխում անախորժություններ գոյություն ունեն,— ասաց Վասիլին։— Դու լսե՞լ ես, թե քո բացակայության ժամանակ Լենիցինն ի՛նչ խաղ խաղաց մեր գլխին։ Խլեց այն չմշակվող հողամասը։ Նախ՝ ես այդ հողամասը ոչ մի փողով չեմ փոխարինի... Այնտեղ յուրաքանչյուր գարնան իմ գյուղացիները՝ «կանաչ կիրակի» տոնն են կատարում, այդ հողամասի հետ է կապված գյուղի պատմությունը։ Իսկ ինձ համար սովորությունը սրբություն է, և ես պատրաստ եմ ամեն բան զոհել հանուն այդ սովորության։

— Տեղյակ չէ, այդ պատճառով էլ խլել է,— ասաց Պլատոնը,— նոր մարդ է, վերջերս է եկել Պետերբուրգից։ Պետք է նրան բացատրել, հասկացնել։

— Տեղյա՛կ է, շա՛տ լավ տեղյակ է։ Իմ ուղարկած մարդը ասել էր նրան, բայց նա կոպիտ պատասխան է տվել։

— Ինքդ պետք է գնայիր, հասկացնեիր։ Անձամբ խոսիր հետը։

— Կներես, նա արդեն չափից դուրս երևակայում է։ Ես նրա դուռը չեմ գնա։ Խնդրեմ, եթե ցանկանում ես, ինքդ գնա։

— Ես կգնայի, բայց գիտես, որ չեմ խառնվում քո գործերին... Նա ինձ կարող է մատի վրա խաղացնել, խաբել։

— Թե կցանկանաք; ես կգնամ,— ասաց Չիչիկովը,— միայն բացատրեցեք, թե ինչումն է բանը։

Վասիլին նայեց նրան ու մտքում ասաց. «Շրջելու ի՛նչ մեծ ախորժակ ունի»։

— Դուք ինձ միայն բացատրեցե՛ք, թե ի՛նչ տեսակ մարդ է նա,— շարունակեց Չիչիկովը,— և ինչո՛ւմն է գործը։

— Ես անհարմար եմ զգում ձեզ տալ այդպիսի անախորժ հանձնարարություն։ Իմ կարծիքով, նա անպիտան մարդ է, մեր նահանգի սակավահող, հասարակ ազնվական, ծառայել է Պետերբուրգում, ամուսնացել է մեկի ապօրինի աղջկա հետ ու սկսել է երևակայել։ Տոն է բանեցնում։ Բայց մեզ մոտ ժողովուրդը հիմար չէ, մոդան մեզ համար օրենք չէ, իսկ Պետերբուրգն էլ եկեղեցի չէ։

— Իհարկե,— ասաց Չիչիկովը,— իսկ գործն ինչո՞ւմն է։

— Երևակայեցեք, նրան, իրոք, հող է պետք։ Եթե նա այդպես չվարվեր, ես մի այլ տեղում նրան սիրով հող կտայի ձրի և ո՛չ թե... Իսկ այժմ... այդ փշոտ բնավորության տեր մարդը կկարծի, թե...

— Իմ կարծիքով, կավ կլինի խոսել հետը, գուցե բուն գործը... Նման դեպքում մարդիկ ինձ հանձնարարել են իրենց գործերն ու չեն զղջացել... Վերցրեք հենց գեներալ Բետրիշչևին...

— Բայց ես անհարմար եմ զգում, որ դուք ստիպված եք խոսել նման մարդու հետ։

— ...[1] և հատկապես հետևել, որ դա գաղտնի մնա,— ասաց Չիչիկովը,— քանզի ո՛չ այնքան բուն հանցագործությունն է վնասակար, որքան գայթակղությունը։

— Այո՛, ճիշտ է, ճիշտ,— ասաց Լենիցինը՝ բոլորովին թեքելով գլուխը մի կողմ։

— Որքան հաճելի է տեսնել մտքերի ընդհանրություն,— ասաց Չիչիկովը։— Մի գործ էլ ես ունեմ, և՛ օրինաճշան, և՛ միևնույն ժամանակ անօրինական. արտաքուստ անօրինական է, ըստ էության՝ օրինական։ Գրավ դնելու կարիք զգալով, ես ոչ ոքի չեմ ցանկանում ռիսկի դիմել ու ամեն մի շնչավոր մարդու համար վճարել երկու ռուբլի։ Կարող է պատահել, որ, աստված մի՛ արասցե, հանկարծ, կոտր ընկնեմ, անախորժություն կպատճառեմ կալվածատիրոջը։ Այդ իսկ տեսակետից ես որոշել եմ օգտվել տիրոջից փախած ու մեռած շնչերից, որոնք դեռ դուրս չեն հանվել ցուցակից, որպեսզի միաժամանակ կատարեմ թե՛ քրիստոնյային վայել գործ և թե՛ ազատեմ այդ շնչերի տիրոջը հարկեր վճարելու ծանրությու-

---

1 Այստեղ ձեռագրում զգալի բաց կա։

նից։ Մենք միմյանց միջև կնքեցինք զուտ ձևական գնման պայմանագիր, իբր կենդանի մարդկանց վերաբերյալ։

— Դա ինչ-որ մի տեսակ տարօրինակ բան է,— մտածեց Լենիցինը ու աթոռի հետ միասին քիչ ետ սողաց։— Գործը, կարծես թե... մի տեսակ արտասովոր է,— սկսեց [նա]։

— Բայց ո՛չ մի վտանգ չկա, որովհետև գաղտնի է լինելու,— պատասխանեց Ջիչիկովը,— և այն էլ բարեմիտ մարդկանց միջև։

— Այնուամենայնիվ, գործը մի տեսակ...

— Ո՛չ մի վտանգ չի լինի,— ուղղակի և բացարձակորեն պատասխանեց Ջիչիկովը։— Գործը հենց այն տեսակի է, ինչպես այժմ խորհում էինք. տեղի է ունենալու բարեմիտ, խելահաս և, կարծեմ, պատվական աստիճան ունեցող մարդկանց միջև, այն էլ գաղտնի։

Ու այդ բոլորն ասելիս նա պարզ ու ազնիվ հայացքով նայում էր իր զրուցակցի աչքերին։

Լենիցինը որքան էլ որ ճարպիկ էր ու աչքաբաց, որքան էլ գործերից գլուխ հանող, բայց այստեղ նա միանգամայն չփոթվեց, առավել ևս, որ նա տարօրինակ ձևով մի տեսակ խճճվեց իր սեփական ցանցի մեջ։ Նա ո՛չ մի չափով ընդունակ չէր անարդարացի գործ կատարելու և չէր ցանկանա կատարել որևէ անարդարություն, նույնիսկ գաղտնի ձևով։ «Ա՛յ, քեզ զարմանալի դեպք,— մտածում էր ինքն իրեն։— Արի ու սերտ բարեկամություն հաստատիր նույնիսկ լավ մարդկանց հետ։ Դե, հիմա գլուխ հանիր»։

Սակայն բախտն ու հանգամանքները կարծես դիտմամբ օժանդակում էին Ջիչիկովին։ Կարծես թե հենց այն բանի համար, որ օգնի այդ դժվարին գործին, ներս մտավ երիտասարդ տանտիրուհին՝ Լենիցինի կինը, գունատ, նիհար, ցածրահասակ, պետերբուրգյան տարազով հագնված, մեծ սիրահար comme il faut[1] մարդկանց նկատմամբ։ Նրա հետևից դայակը ներս բերեց առաջնեկ երեխային, վերջերս պսակադրված ամուսինների քնքուշ սիրո առաջին պտուղը։ Իր նստած տեղից վեր թռչելով, մոտենալու և գլուխը մի կողմ թեքելու ճարպկությամբ նա միանգամայն հիացրեց պետերբուրգյան դամային

[1] Բարեպատշաճ (ֆր.)։

ու նրա հետ միասին՝ նաև երեխային։ Երեխան հենց նոր պատրաստվում էր լաց դնել, բայց Չիչիկովին հաջողվեց «աղո՜ւ, աղո՜ւ, հոգյակս» բառերով, մատների չրխկոցով ու ժամացույցից կախված սարդիոնե փոքրիկ կնիքի գեղեցկությամբ իր կողմը գրավել երեխային ու առնել գիրկը։ Ապա սկսեց նրան վեր-վեր թռցնել մինչև առաստաղը, երեխային ւյատճառելով հաճելի ծիծաղ, որով մեծապես ուրախացրեց ծնողներին։ Բայց անսպասելի հաճույքից էր, թե մի այլ պատճառից, երեխան անսպասելիորեն վատ արարք թույլ տվեց։

— Ա՜խ, աստված իմ,— բացականչեց Լենիցինի կինը,— նա ձեր ամբողջ ֆրակը փչացրեց։

Չիչիկովը նայեց ու տեսավ, որ իր միանգամայն նոր ֆրակի ամբողջ թևքը կեղտոտվել էր։ «Գրողի ծոցը գնաս, սատանի լակոտ», մտքում հայհոյեց նա։

Տանտերը, տիրուհին, դայակը— բոլորը վաղեվաղ գնացին, օդեկոլոն բերին ու ամեն կողմից սկսեցին սրբել նրա թևքը։

— Ոչի՛նչ, ոչինչ, բոլորովին ոչինչ,— ասում էր Չիչիկովը, դեմքին տալով որքան հնարավոր էր ուրախ արտահայտություն։— Մի՞թե երեխան իր տարիքի այս ոսկե պահին ընդունակ է որևէ բան փչացնել,— կրկնում էր նա։ Բայց միևնույն ժամանակ մտածում էր. «Տես, թե ո՛նց թևս կեղտոտեց սատանի ծնունդը, գայլի բաժին դառնաս, ասես նշան բռնած լիներ»։

Այդ, ըստ երևույթին, աննշան հանգամանքը տանտիրոջը հիմնովին տրամադրեց Չիչիկովի գործի օգտին։ Ինչպե՞ս մերժել մի այնպիսի հյուրի, որն այդքան քնքուշ փաղաքշանքներ ցույց տվեց մանկիկին և մեծահոգությամբ զոհաբերեց իր սեփական ֆրակը։ Վատ օրինակ չծառայելու համար որոշեցին գործը լուծել գաղտնաբար, որովհետև ո՛չ այնքան գործն է վնասակար, որքան գայթակղությունը։

— Ինձ ևս թույլ տվեք, ի հատուցումն ձեր լավության, պատասխանել նույնպես լավությամբ։ Ցանկանում եմ լինել ձեր և Պլատոնովների միջև ծագած գործի միջնորդը։ Ձեզ հողամաս է պետք, այնպես չէ՞...

ԵՋՐԱՓԱԿԻՉ ԳԼՈՒԽ[1]

Աշխարհում ամեն ոք իր գործերն է կարգավորում։ Ո՛ւմ ի՛նչ հարկավոր է, նա դրա ետևից է ընկնում, ասում է առածը։ Անդուկների մեջ կատարած պրպտումները հաջող անցան, այնպես որ, այդ արշավանքի հետևանքով որոշ բաներ անցան նրա սեփական դղրոցը։ Մի խոսքով, ամեն ինչ խելացիորեն կարգավորվեց։ Ցասանք, թե Չիչիկովը գողացավ, այլ՝ օգտվեց։ Չէ՞ որ մեզանից յուրաքանչյուրը մի բանից օգտվում է, մեկը արքունական անտառներից, մյուսը՝ խնայված գումարներից, մի ուրիշը գողանում է իր երեխաներից՝ որևէ եկվոր դերասանուհու համար. մեկն էլ գյուղացիներից, Գամբսի[2] կահույք կամ կառք ձեռք բերելու համար։ Ի՞նչ արած, երբ աշխարհում այնքան հրապուրիչ բաներ կան։ Թե՛ թանկագին ռեստորաններ՝ իրենց չտեսնված գներով, թե՛ դիմակահանդեսներ, թե՛ զբոսանքներ, թե՛ պարեր գնուհիների հետ։ Չէ՞ որ դժվար է դիմանալ, եթե բոլորն ամեն կողմից նույն բանն են անում, մյուս կողմից էլ մոդան է պահանջում. արի ու դիմացիր։ Մարդը աստված չէ։ Այդպես էլ Չիչիկովը ամեն տեսակ կոմֆորտ սիրող բազմաթիվ մարդկանց նման գործը դարձրեց իր օգտին։ Իհարկե, լավ կլիներ քաղաքից հեռանալ, բայց ճանապարհները փչացել էին։ Մինչդեռ քաղաքում պատրաստվում էր մի ուրիշ տոնավաճառ՝ հատկապես ազնվականների համար։ Նախկին տոնավաճառն ավելի շուտ ձիեր, անասուններ, հումք և գյուղացիական տնտեսության մեջ արտադրվող մթերքներ վաճառելու համար էր, որ գնում են մեծագնորդներն ու կուլակները։ Իսկ այժմ կտրեղեն վաճառողները որքան ապրանք որ գնել էին պաների համար Նիժնի-Նովգորոդի տոնավաճառում, այժմ այստեղ էին բերել։ Ամեն կողմից հավաքվել էին ռուսական քսակը դատարկողները, սլոմադ ծախող ֆրանսիացիք, գլխարկ ծախող ֆրանսուհիք, մարտիկ, որոնք ոչնչացնում են արյուն-քրտինքով ձեռք բերված փողը—այդ եգիպտական մորեխը, որ Կոստանդնուպոլսի արտահայտությամբ, բավական չէ, որ ամեն ինչ լափում է, այլ դեռ իրենից հետո ձու է թողնում՝ հողի մեջ թաղելով։

1 *Ավելի վաղ խմբագրությունից, քան մյուս գլուխները։*

2 *Հայտնի կառագործ Պետերբուրգում։*

Մի՛այն անբերրիությունը և հենց դժբախտ...[1] Շատ կալվածատերերի պահեցին գյուղերում։ Դրա փոխարեն աստիճանավորները, որպես անբերրիություն չհանդուրժող մարդիկ, սաստիկ առատաձեռն էին դարձել։ Հակառակի պես նրանց կանայք, նույնպես կարդալով զանազան գրքեր, որոնք վերջերս լույս են տեսել մարդկությանը ամեն տեսակ նոր պահանջներ ներշնչելու համար, արտասովոր ծարավ զգացին՝ փորձել բոլոր նոր հաճույքները։ Ֆրանսիացին բացեց մի նոր հիմնարկ, մինչ այդ նահանգում դեռ չլսված զբոսավայր, որտեղ տալիս էին ընթրիք, որպես թե չափազանց էժան գնով և կիսով չափ ապտրիկ։ Դա բավական էր, որ [ոչ միայն] սեղանապետները, այլ նույնիսկ բոլոր գրասենյակային աշխատողները խնդրատուներից ստանալիք կաշառքների հույսով[2] ցանկություն ծագեց միմյանց առաջ պարծենալ իրենց ձիերով ու կառապաններով։ Ա՜խ, դասերի այդ ընդհարումը զվարճանքի համար... Չնայած վատ եղանակին ու ցեխին, պճնազարդ կառքերը սլանում էին ետ ու առաջ։ Որտեղի՛ց էին նրանք ձեռք բերվել, աստված գիտե, բայց Պետերբուրգում էլ մարդու ամոթով չէին թողնի... Վաճառականները, գործակատարները, ճարպկորեն գլխարկները հանելով, հրավիրում էին տիկիններին։ Շատ քիչ էին մորթե գլխարկներով մորուքավոր մարդիկ։ Բոլորը եվրոպական տեսք ունեցող, սափրված կզակով, հյուծված (?) և ատամները փտած մարդիկ էին։

— Համեցեք, համեցեք։ Բարի եղեք միայն խանութ մրտնելու։ Պարո՛ն, պարո՛ն,— տեղ-տեղ աղաղակում էին վաճառատան աշկերտները։

Բայց նրանց վրա արդեն արհամարհանքով էին նայում եվրոպայի հետ ծանոթացած միջնորդները. երբեմն միայն արժանապատվության զգացումով ասում էին՝ «Շտակետ», կամ՝ «Այստեղ կան գիրեր, կլեր և սև մահուդներ»։

— Մուգ կարմիր, պեծին տվող մահուդ ունե՞ք,— հարցրեց Չիչիկովը։

— Հիանալի մահուդներ կան,— ասաց վաճառականը մի

---

1 Ձեռագրում բաց է։

2 Ձեռագրում բաց է։

ձեռքով հանելով գլխարկը, իսկ մյուսով ցույց տալով խանութը։ Չիչիկովը մտավ խանութ։ Վաճառականը ճարպկորեն բարձրացրեց [վաճառասեղանի] տախտակը և անցավ մյուս կողմը, մեջքն արած դեպի ապրանքները, որոնք թոփերով դարսված էին իրար վրա մինչև առաստաղը, և դեմքը դարձրեց դեպի գնորդը։ Երկու ձեռքը ճարպկորեն դանթելով և ամբողջ մարմինը թեթևակի ճոճելով՝ նա ասաց.

— Ինչպիսի՞ մահուդ կկամենայիք։

— Չիթապտազգույն կամ գինու փայլ ունեցող կտոր, որը, այսպես ասած, մոտենար մուգ կարմիր գույնին,— ասաց Չիչիկովը։

— Կարող եմ ասել, որ կստանաք ամենաառաջնագույն տեսակը, որից լավը միայն լուսավորյալ մայրաքաղաքներում կարելի է գտնել. է՛յ, տղա՛, տո՛ւր ինձ վերևից 34-րդ համարի տակ եղած մահուդը։— Այդ չէ՛, հոգիս, ի՞նչ ես շարունակ քո ոլորտից վեր բարձրանում, կարծես պրոլետար լինես։ Նետի՛ր այստեղ։ Ա՛յ, մահուդ եմ ասե՛լ։— Եվ մյուս ծայրից բաց անելով՝ վաճառականը հենց Չիչիկովի քթի՛ մոտեցրեց կտորը այնպես, որ նա ո՛չ միայն կարող էր ձեռքով շոյել մետաքսի նման փայլող կտորը, այլ նույնիսկ հոտ քաշել։

— Լավն է, բայց դարձյալ այն չէ,— ասաց Չիչիկովը։ Չէ՞ որ ես ծառայել եմ մաքսատանը, ուրեմն ինձ տվեք եղածներից ամենաբարձր տեսակը. այն էլ՝ ավելի կարմրագույնը, ո՛չ թե շշի գույն, այլ այնպիսին, որ մոտենար հապալասի գույնին։

— Հասկանում եմ, դուք հենց այն գույնն եք ուզում, որն այժմ մոդա է դառնում։ Ես ունեմ շատ լավ տեսակի մահուդ։ Նախազգուշացնում եմ, որ գին բարձր է, նմանապես և որակը։

Եվրոպացին վեր բարձրացավ։ Թոփը վայր ընկավ։ Նա կտորը բացեց առաջվա ժամանակներին հատուկ արվեստով, առժամանակ նույնիսկ մոռանալով, որ ինքն արդեն պատկանում է հաջորդ սերնդին և մոտեցրեց լույսին, նույնիսկ խանութից դուրս եկավ, այնտեղ աչքերը լույսից կկոցելով ցույց տվեց և ասաց. «Հիանալի գույն է՝ նավարինյան ծուխ ու բոցի գույնը»։

Մահուդը դուր եկավ. գնի մասին պայմանավորվեցին, թեև գինն առանց առարկության էր, ինչպես հավաստիացնում էր

վաճառականը։ Այստեղ կտորը երկու ձեռքով պատռվեց և ռուսավարի, անհավատալի արագությամբ փաթաթվեց թղթի մեջ։ Կապոցը թեթև թելի ցրակ պտտվեց և ընդգրկվեց կենսաթրթիռ (?) հանգույցով։ Մկրատով թելը կտրվեց և ամեն ինչ արդեն կատարումն էր։ Վաճառականը գլխարկը հանեց։ Գլխարկ հանողը (?) իր պատճառն ունի։ Նա զրպանից դրամը հանեց։

— Ցույց տվեք, սև մահուդը,— լսվեց մի ձայն։

— Ա՛խ, սատանան տանի, Խլոբուևն է,— ինքն իրեն ասաց Չիչիկովը և շուտ եկավ, որ նրան չտեսնի, անխոհեմ համարելով իր [կողմից] նրա հետ ժառանգության վերաբերյալ որևէ բացատրություն սկսելը։ Բայց Խլոբուևը նրան տեսել էր։

— Այս ի՞նչ է, Պավել Իվանովիչ, դիտմամբ հո չեք ինձանից հեռանում։ Ես ձեզ ոչ մի տեղ չեմ կարողանում գտնել, սակայն գործն այնպիսի [դրության] մեջ է, որ մենք լրջորեն պիտի խոսենք։

— Հարգելիս, հարգելիս,— ասաց Չիչիկովը, նրա ձեռքը սեղմելով,— հավատացե՛ք, որ շարունակ ցանկանում եմ ձեզ հետ զրուցել, բայց բոլորովին ժամանակ չունեմ։— Իսկ ինքը մտածում էր. «գրողի ծոցը գնաս»։ Նվ հանկարծ տեսավ ներս մտնող Մուրազովին։— Ա՛խ, աստված իմ, Աֆանասի Վասիլևիչ, ինչպե՞ս է ձեր առողջությունը։

— Ինչպե՞ս եք դուք, —ասաց Մուրազովը, գլխարկը հանելով։ Վաճառականն ու Խլոբուևը գլխարկները հանեցին։

— Գոտկատեղս է ցավում և անքնություն ունեմ։ Արդյոք նրանի՞ց է, որ քիչ եմ շարժվում...

Սակայն Մուրազովը Չիչիկովի հիվանդությունների պատճառների մեջ խորանալու փոխարեն դարձավ Խլոբուևին.

— Իսկ ես, Սեմյոն Սեմյոնովիչ, տեսնելով, որ խանութ մտաք, հետևեցի ձեզ։ Ես ձեզ հետ խոսելիք ունեմ, արդյոք չէի՞ք ցանկանա ինձ մոտ անցնել։

— Ինչպե՞ս չէ, ինչպե՞ս չէ,— ասաց Խլոբուևը և նրա հետ միասին դուրս եկավ։

— Ինչի՞ մասին կարող է լինել նրանց խոսակցությունը,— մտածեց [Չիչիկովը]։

— Աֆանասի Վասիլևիչը հարգելի և խելոք մարդ է,—

ասաց վաճառականը,— և իր գործն էլ գիտե, բայց կրթված չէ։ Չէ՞ որ վաճառականը նեգոցիանտ է և ոչ թե վաճառական։ Սրա հետ միացած է բուջեն[1] և ռեակցիան[1], այլապես դուրս կգա պավպուրիզմ[1]։— Չիչիկովը ձեռքը թափահարեց։

— Պավել Իվանովիչ, ես ամեն տեղ ձեզ եմ փնտրում,— ետևից լսվեց Լենիցինի ձայնը։ Վաճառականը հարգանքով հանեց գլխարկը։

— Ա՜խ, Ֆեոդոր Ֆեոդորովիչ։

— Ի սեր աստուծո, գնա՛նք ինձ մոտ, ձեզ հետ խոսելիք ունեմ,— ասաց նա։ Չիչիկովը նայեց նրան, տեսավ, որ երեսին գույն չկա։ Վաճառականին վճարելով հասանելիքը, նա խանութից դուրս եկավ։

— Ձեզ սպասում եմ, [Սեմյոն Սեմյոնովիչ],— ասաց Մուրազովը, տեսնելով ներս մտնող խլորուևին,— համեցե՛ք սենյակս։

Եվ նա խլորուևին տարավ իր սենյակը, որն արդեն ընթերցողին ծանոթ է և որից ավելի հանգստը չէր կարելի գտնել անգամ տարեկան յոթ հարյուր ռուբլի ռոճիկ ստացող աստիճանավորի մոտ։

— Ասացե՛ք, այժմ երևի ձեր դրությունն ավելի լա՞վ է։ Ձեր մորաքրոջից հետո, այնուամենայնիվ, ձեզ որևէ բան բաժին ընկա՞վ։

— Ինչպե՞ս ասեմ, Աֆանասի Վասիլևիչ, ես չգիտեմ, թե արդյոք դրությունս լավացե՞լ է։ Ինձ հասավ ընդամենը 50 շունչ գյուղացի և երեսուն հազար փող, որոնցով ես պետք է վճարեի իմ պարտքերի մի մասը և այժմ ես նորից ոչինչ չունեմ։ Իսկ գլխավորն այն է, որ այդ ժառանգության գործը շատ կեղտոտ գործ է։ Այստեղ, Աֆանասի Վասիլևիչ, այնպիսի խարդախություններ են սկսվել։ Ես այժմ ձեզ կպատմեմ, և դուք կզարմանաք, թե ի՛նչ է կատարվում։ Այդ Չիչիկովը...

— Թույլ տվեք [Սեմյոն Սեմյոնովիչ], նախքան այդ Չիչիկովի մասին խոսելը, թույլ տվեք հատկապես ձեր մասին խոսել։ Ասացե՛ք ինձ. ձեր կարծիքով որքա՞ն ձեզ համար բավական և բավարար կլիներ, որպեսզի դժվարություններից դուրս գայիք։

---

[1] Աղավաղված բյուջե, ռեակցիա և պավպուերիզմ բառերը։

— Իմ դրությունը ծանր է,— ասաց Խլոբուևը։— Դժվար դրությունից դուրս գալու և բոլոր պարտքերս վճարելու համար ինձ հարկավոր է առնվազն 100 հազար, եթե ո՛չ ավելի, մի խոսքով, դա ինձ համար անհնարին բան է։

— Իսկ եթե այդ գումարը ունենայիք, ինչպե՞ս կկարգավորեիք ձեր կյանքը։

— Դե, ես մի բնակարան կվարձեի և կզբաղվեի երեխաներիս դաստիարակությամբ։ Իմ մասին այլևս մտածելու կարիք չկա, իմ կարիերան արդեն վերջացած է։ Ես արդեն բանի պետք չեմ։

— Այնուամենայնիվ, ձեր կյանքը կմնա պարապ, իսկ պարապության դեպքում գալիս են փորձություններ, որոնց մասին մարդս գործով զբաղվելիս չէլ էլ մտածի։

— Չեմ կարող, բոլորովին անպետքացել եմ, բթացել, գոտկատեղս ցավում է։

— Բայց ինչպե՞ս ապրել առանց աշխատանքի։ Աշխարհում ինչպե՞ս ապրել առանց պաշտոնի, առանց տեղի։ Շնորհ արեք, նայեցե՛ք ամեն մի արարածի, նրանցից յուրաքանչյուրը մի բանի ծառայում է, իր անելիքն ունի։ Նույնիսկ քարն էլ նրա համար է, որպեսզի մի բանի գործածվի, իսկ մարդը, որ ամենաբանական էակն է, մի՞թե կարող է անօգուտ մնալ։ Լավա՞ծ բան է։

— Այնուամենայնիվ, ես անգործ չեմ։ Ես կարող եմ զբաղվել երեխաներիս դաստիարակությամբ։

— Ոչ, Սեմյոն Սեմյոնովիչ, ոչ։ Դա շատ դժվար է։ Ինչպե՞ս կարող է երեխա դաստիարակել նա, ով՝ ինքն իրեն չի դաստիարակել։ Չէ՞ որ երեխաներին կարելի է դաստիարակել միայն սեփական կյանքի օրինակով։ Իսկ մի՛թե ձեր կյանքը կարող է նրանց համար օրինակ ծառայել։ Գուցե միայն նրա համար, որպեսզի սովորեն պարապ ժամանակ անցկացնել ու մեկ էլ՝ թղթախաղով տարվել։ Ո՛չ, Սեմյոն Սեմյոնովիչ, տվե՛ք երեխաներդ ինձ, դուք նրանց կփչացնեք։ Կատակը մի կողմ, ապա մի մտածեցե՛ք, ձեզ կործանել է պարապությունը։ Դուք պետք է դրանից փախչեք։ Ինչպե՞ս կարելի է աշխարհում ապրել առանց որևէ բանի մասնակից լինելու։ Որևէ պարտք հո պետք է կատարել։ Չէ՞ որ օրավարձով աշխատողն էլ է

ծառայում։ Նա գրոշանոց հաց է ուտում, բայց չէ՞ որ այդ հացը նա ձեռք է բերում և զգում է իր զբաղմունքի շահը։

— Աստված վկա, փորձել եմ, Աֆանասի Վասիլևիչ, փորձել եմ հաղթահարել։ Ի՞նչ արած, ծերացել, անընդունակ եմ դարձել։ Դե, հիմա ինչպե՞ս վարվեմ։ Մի՞թե պետք է ծառայությունից մտնեմ։ Բայց ինչպե՞ս կարող եմ ես քառասունհինգ տարեկան հասակում նստել միևնույն սեղանի շուրջը գրասենյակային սկսնակ աստիճանավորների հետ։ Բացի այդ, ես կաշառք վերցնելու անընդունակ եմ, ինձ էլ կխանգարեմ, ուրիշներին էլ կվնասեմ։ Նրանց մոտ արդեն սեփական կաստաներ են գոյացել։ Ո՛չ, Աֆանասի Վասիլևիչ, մտածել, փորձել, մեկ-մեկ ընտրել եմ բոլոր պաշտոնները, ամեն տեղ էլ անընդունակ կլինեմ։ Գուցե միայն անկելանոցի արժանի լինեմ...

— Անկելանոցը [նրանց] համար է, ովքեր աշխատել են. իսկ ովքեր երիտասարդության ժամանակ շարունակ քեֆ են արել, նրանց պատասխանում են, ինչպես մրջյունն է ասել ճպուռին. «Հիմա էլ գնա՝ պար արի»։ Սակայն անկելանոցում նստած ժամանակ էլ են շարշարվում, աշխատում են, վիստ չեն խաղում։ Սեմյոն Սեմյոնովիչ,— ասում էր [Մուրազովը]՝ ուղիղ նայելով նրա երեսին,— դուք ձեզ էլ եք խաբում, ինձ էլ։ Մուրազովը ուղիղ նրա երեսին էր նայում, սակայն խեղճ Ալորուևը ոչինչ չէր կարող պատասխանել։ Մուրազովը նրան խղճաց։

— Լսեցե՛ք, [Սեմյոն Սեմյոնովիչ...] Բայց չէ՞ որ դուք աղոթում եք, եկեղեցի եք գնում, ես գիտեմ, որ ո՛չ առավոտյան ժամերգությունն եք բաց թողնում, ո՛չ երեկոյան։ Թեև դուք չեք ուզում վազ վեր կենալ, բայց չէ՞ որ դուք վեր եք կենում և գնում եք. գնում եք առավոտյան ժամը չորսին, երբ ոչ ոք դեռ վեր չի կացել։

— Դա այլ բան է, Աֆանասի Վասիլևիչ։ Ես գիտեմ, որ այդ անում եմ ո՛չ թե մարդու համար, այլ նրա, ով մեզ հրամայել է աշխարհում ամեն ինչ լինել։ Ի՞նչ արած։ Ես հավատում եմ, որ նա ողորմած է դեպի ինձ, որ ես որքան էլ վատ ու գարշելի լինեմ, նա ինձ կարող է ներել և ընդունել, մինչդեռ մարդիկ քացի կտան, և բարեկամներից լավագույնն ինձ կծաղրի և վերջում էլ կասի, թե ծաղրել է բարի նպատակով։

[Խլորուևի] դեմքին արտահայտվեց վշտի զգացում։ Սերունին արտասվեց, բայց ոչնչով չառարկեց։

— Ուրեմն, ծառայեցե՛ք նրան, ով այդքան ողորմած է։ Նրան նույնքան հաճելի է աշխատանքը, որքան և աղոթքը։ Վերցրեք ո՛ր զբաղմունքն ուզում եք, բայց վերցրեք այնպես, որ կարծես նրա համար եք անում ո՛չ թե մարդկանց։ Պարզապես, թեկուզ ջուր ծեծեք հավանգում, բայց մտածեցե՛ք, թե այդ անում եք նրա համար։ Դա արդեն այն բանով օգտակար կլինի, որ վատ գործի համար ժամանակ չի մնա, թղթախաղում տանուլ տալու, պորտաբույծների հետ քեֆ անելու, աշխարհիկ կյանքի համար։ Է՛հ, Սեմյոն Սեմյոնովիչ, ճանաչո՞ւմ եք դուք Իվան Պոտապիչին։

— Ճանաչում եմ և շատ հարգում։

— Չէ՞ որ լավ առևտրական էր, կես միլիոն կարողության տեր, բայց հենց որ տեսավ, ամեն բանից օգուտ կա, շփացավ։ Որդուն սկսեց ֆրանսերեն սովորեցնել, աղջկանը գեներալի տվեց։ Եվ ահա արդեն աշխատում էր լինել ո՛չ թե խանութում կամ բորսայում, այլ բարեկամին հանդիպել և պանդոկ քաշ տալ թեյ խմելու։ Եվ այդպիսով անանկացավ։ Աստված էլ որդուն դժբախտություն ուղարկեց։ Այժմ նա ինձ մոտ գործակատար է։ Կյանքը նորից սկսեց։ Գործերը կարգի ընկան։ Նա կարող էր դարձյալ հինգ հարյուր հազարի առևտուր անել։ «Գործակատար եմ եղել, գործակատար էլ ուզում եմ մեռնել», ասում է։ «Ես առողջացել եմ և թարմացել, իսկ այն ժամանակ փորս ուռչում էր և շրգողություն էր սկսվել...»։ Ո՛չ, ասում է։ Եվ այժմ բերանը թեյ չի առնում։ Շշի ու կաշա և ուրիշ ոչինչ, այո՛։ Իսկ աղոթում է այնպես, ինչպես մեզանից ո՛չ ոք։ Աղքատներին օգնում է, ինչպես մեզանից ո՛չ ոք։ Իսկ մի ուրիշին էլ շատ կցանկանար օգնել, բայց փողերը վատնել է։

Խեղճ Խլորուևը մտածմունքի մեջ ընկավ։

Սերունին վերցրեց նրա երկու ձեռքը։

— Սեմյոն Սեմյո՛նովիչ, եթե դուք իմանայիք, թե որքա՜ն եմ ես ձեզ խղճում։ Ես շարունակ ձեր մասին եմ մտածել։ Եվ ահա, լսեցե՛ք։ Դուք գիտեք, որ վանքում կա մի ճգնավոր, նա ո՛չ ոքի հետ տեսակցություն չի ունենում։ Այդ մարդը մեծ խելքի տեր է, այնպիսի խելքի տեր, որ էլ չեմ կարող ասել։

Եվ եթե խորհուրդ տվեց... Ես նրան սկսեցի պատմել, թե մի այսպիսի բարեկամ ունեմ, բայց անունը չտվի ու ասացի, թե ի՛նչ հիվանդությամբ է տառապում։ Նա սկսեց լսել և հանկարծ ընդհատեց. «Ամենից առաջ աստծու գործով պետք է զբաղվել և ո՛չ մեր գործով. եկեղեցի են կառուցում, իսկ փող չկա, հանգանակություն պետք է անել եկեղեցին կառուցելու համար», և դուռը շրխկացնելով փակեց։ Ես մտածեցի, թե դա ի՞նչ է նշանակում. ինչպես երևում է, չի ուզում խորհուրդ տալ։ Եվ ահա մտա մեր վարդապետի մոտ։ Դեռ նոր էի դուռը բացել և ներս մտել, որ նա, դիմելով ինձ, հարցրեց, թե արդյոք ես այնպիսի մեկին չե՞մ ճանաչում, որին կարելի լիներ հանձնարարել եկեղեցու համար հանգանակություն կատարել, որը լիներ կա՛մ ազնվական, կա՛մ վաճառական, մյուսներից ավելի դաստիարակված և այդ գործը աներ, որպես իր փրկությունը։ Ես տեղն ու տեղը մտածեցի. «Տե՛ր իմ աստված, դա հենց այն ճգնավորն է, որ այդ պաշտոնը կանխատեսում է Սեմյոն Սեմյոնովիչի համար։ Նրա հիվանդության համար ճանապարհ գնալը լավ է։ Մատյանը ձեռքում կալվածատերից դեպի գյուղացին և գյուղացուց դեպի քաղքենին անշնչելով, նա կծանոթանա, թե ո՛վ ինչպե՛ս է ապրում և ո՛վ ինչի՛ կարիք է զգում, այնպես որ, երբ մի քանի նահանգ շրջագայելուց հետո վերադառնա, ավելի լավ կիմանա վայրն ու երկրամասը, քան քաղաքում ապրող մարդիկ... Իսկ այսպիսի մարդիկ այժմ հարկավոր են։ Ահա իշխանն ինձ ասում է, թե նա շատ բան կտար, որպեսզի գտներ այնպիսի աստիճանավոր, որը գործը իմաստուն ո՛չ թե թղթերով, այլ հենց այնպես, ինչպես նրանք այժմ իրականում գոյություն ունեն, որովհետև թղթերից, ասում են, արդեն ոչինչ չի երևում, այնպես է ամեն ինչ խճճվել»։

— Դուք ինձ խսպառ շփոթեցրիք, մոլորեցրիք, Աֆանասի Վասիլևիչ,— ասաց Խլոբուևը՝ զարմացած նայելով նրան։— Ես նույնիսկ չեմ հավատում, թե իրոք այդ ինձ եք ասում, դրա համար հարկավոր է անխոնջ, գործունյա մարդ։ Բացի այդ, ես ինչպե՞ս լքեմ կնոջս, երեխաներիս, որոնք սոված կմնան։

— Ձեր կնոջ և երեխաների մասին մի՛ մտահոգվեք։ Ես նրանց իմ խնամքի տակ կառնեմ, և երեխաները ուսուցիչներ էլ կունենան։ Մուրացկանություն անելու և ողորմություն

խնդրելու փոխարեն ավելի ազնիվ և վավ գործ է՝ խնդրել աստծու համար։ Ես ձեզ կտամ հասարակ [կիբիտկա], ցնցումներից մի՛ վախենաք, դա ձեր առողջության համար է։ Ես ձեզ ծախսերի համար փող կտամ, որպեսզի դուք կարողանաք հարկ եղած դեպքում տալ նրանց, ովքեր մյուսներից ավելի կարիք են զգում։ Դուք այստեղ կարող եք շատ բարի գործեր կատարել. դուք արդեն չեք սխալվի, իսկ ո՛ւմ որ տաք, նա իսկապես որ արժանի կլինի։ Նմանօրինակ ճանապարհորդելով, դուք ճշգրիտ կերպով կճանաչեք բոլորին, թե ո՛վ ինչպես է ապրում։ Դա արդեն նման չի լինի այն աստիճանավորներին, որոնցից բոլորը վախենում են և որոնցից՝ [թաքնվում]. իսկ իմանալով, որ դուք եկեղեցու համար եք հանգանակություն անում, ձեզ հետ անկեղծ կխոսեն։

— Ես տեսնում եմ, որ դա հիանալի միտք է և ես շատ [կցանկանայի] թեկուզ մի մասը կատարել, բայց իսկապես ինձ թվում է, թե դա իմ ուժերից վեր է։

— Իսկ ի՞նչն է մեր ուժերին համապատասխան,— ասաց Մուրազովը,— չէ՞ որ մեր ուժերին համապատասխան ոչինչ չկա։ Ամեն ինչ մեր ուժերից վեր է։ Առանց ի վերուստ օգնություն ստանալու, ոչինչ չի կարելի անել։ Բայց աղոթքը մարդու ուժերը հավաքում է։ Մարդը երեսը խաչակնքելով ասում է՝ «Ողորմյա՛, տե՛ր» և թիավարում ու ափ է հասնում։ Դրա մասին երկար մտածել անգամ հարկավոր չէ. դա պետք է պարզապես աստծո հրաման համարել։ Կիբիտկան հենց հիմա պատրաստ կլինի ձեզ համար, իսկ դուք շտապեցե՛ք վարդապետի մոտ՝ մատյանն ու նրա օրհնությունը ստանալու, և ճանապարհ ընկեք։

— Լսում եմ ձեզ և ընդունում ո՛չ այլ կերպ, քան որպես աստծո ցուցում։ «Օրհնի՛ր, տե՛ր իմ»,— ասաց նա ներքուստ և զգաց, որ արիությունն ու ուժը սկսեցին թափանցել իր հոգին։ Նրա բուն միտքը ևս սկսեց արթնանալ այն հույսով, որ ելք կա իր տխուր և անելանելի դրությունից։ Հեռվում սկսեց մի լույս առկայծել...

Բայց թողնենք Ալորուևին և դառնանք Ջիլիկովին։

Մինչդեռ իրոք որ դատարաններում մեկը մյուսի ետևից խնդիրքներ էին ստացվում, ի հայտ եկան ազգականներ, որոնց մասին ո՛չ ոք չէր լսել։ Ինչպես անգղները հավաքվում են լիշի

վրա, այնպես էլ բոլորը վրա էին պրծել պառավից մնացած անհամար հարստության վրա։ Մատնություններ էին ստացվում Չիչիկովի վերաբերյալ, թե վերջին կտակը կեղծ է, մատնություններ, թե առաջին կտակն էլ է կեղծ, հանցանշաններ, թե նա գումարներ է գողացել և թաքցրել։ Նույնիսկ հանցանշաններ էին երևացել, թե Չիչիկովը մեռած հոգիներ է գնել, դեռ մաքսատանը եղած ժամանակ մաքսային ապրանքներ է փոխադրել։ Ամեն ինչ լույս աշխարհ էին հանել, իմացել էին նրա նախկին պատմությունը։ Աստված գիտե, թե այդ բոլորի հոտը որտեղից էին առել, որտեղի՛ց էին իմացել։ Սակայն կային հանցանշաններ նաև այնպիսի գործերի վերաբերյալ, որոնց մասին Չիչիկովը կարծում էր, թե բացի իրենից և չորս պատից՝ ուրիշ ո՛չ ոք չգիտե։ Առայժմ այդ բոլորը դեռ դատական գաղտնիք էր և դեռ նրա ականջին չէր հասել, թեև իրավախորհրդատուի անվիճելի գրությունը, որ նա երկար չանցած ստացավ, որոշ չափով նրան հասկացրեց, թե իր ճաշը շուտով կսկսի եփվել։ Գրության հակիրճ բովանդակությունը հետևյալն էր. «Շտապում եմ ձեզ իրազեկ դարձնել, որ գործը շատ գլխացավանք կպահանջի, բայց իմացեք, որ անհանգստանալ բոլորովին պետք չէ։ Գլխավորն է՝ հանգիստ լինել։ Ամեն ինչ կկարգավորենք։ Այդ գրությունը նրան միանգամայն հանգստացրեց։ «Այդ մարդն իսկական հանճար է», ասաց Չիչիկովը։ Լավ տրամադրությունը լիակատար դարձնելու համար նույն պահին դերձակը բերեց հագուստը։ [Չիչիկովը] սաստիկ ցանկություն զգաց իրեն տեսնել նավարինյան ծուխ ու բոցի գույն ունեցող ֆրակը հագին։ Նա իր վրա քաշեց շալվարը, որը հրաշալի կերպով ընդգրկեց նրան ամեն կողմից այնպես, որ թեկուզ նկարիր։ Ազդրերը շատ հիանալի ընդգրկվեցին, սրնքամասերը նույնպես։ Մահուդը գրկել էր ամենաանհրաժեշտ տեղերը և նրանց դարձրել ավելի ևս առաձգական։ Հենց որ ետևից չափրաստը քաշեց, փորը նմանվեց թմբուկի։ Նա խոզանակով խփեց փորին, ավելացնելով. «Տե՛ս, թե ինչ տխմարն է, բայց, ընդհանուր առմամբ պատկերս լրիվ է»։ Թվում էր, թե ֆրակը շալվարից էլ լավ է կարված. ո՛չ մի փոթ, բոլոր կողմերը հուպ էր տվել, գոտկատեղում ծռվել, ցույց տալով նրա ամբողջ կարողությունը։ Ի պատասխան Չիչիկովի այն դիտողությանը, [թե] աջ թևի տակը մի փոքր սեղ-

մում է, դերձակը միայն ժպտում էր, կարծես ասելով՝ դրա շնորհիվ է՛լ ավելի է կպչում իրանին։ «Աշխատանքի. վերաբերյալ հանգիստ եղեք, հանգիստ եղեք»,— կրկնում էր նա՝ առանց թաքցնելու իր հիացմունքը, «բացի Պետերբուրգից, ո՛չ մի տեղ այդպես չեն կարի»։ Դերձակը ինքն էլ Պետերբուրգից էր և իր ցուցանակի վրա գրել էր տվել՝ Օտարերկրացի, Լոնդոնից և Փարիզից։ Նա կատակ անել չէր սիրում և երկու քաղաքներով ուզում էր միանգամից փակել մյուս դերձակների բերանը, որպեսզի այլևս ո՛չ ոք այդպիսի քաղաքներով երևան չգա և իր մասին գրի, քե որևէ «Կարլսերուից» կամ «Կոպենհագրից»[1] է։

Ջիլիկովը մեծահոգաբար վճարեց դերձակի հասանելիքը և մենակ մնալով, սկսեց իրեն դիտել հայելու մեջ, որպես արտիստ՝ գեղագիտական զգացումով և con amore[2]։ Պարզվեց, որ ամեն ինչ մի տեսակ ավելի լավ էր, քան առաջ։ Այտերը ավելի հետաքրքիր, կզակն ավելի գրավիչ, սպիտակ օձիքները հարմարվում էին այտերին, ատլասե կապույտ փողկապը հարմարվում էր օձիքին, կրծքակալի նոր մոդայի ծալքերը հարմարվում էին փողկապին, թավշյա հարուստ [ժիլետը] հարմարվում էր կրծքակալին, իսկ նավարինյան ծուխ ու բոցի գույն ունեցող ֆրակը, մետաքսի նման փայլելով, հարմարվում էր այս ամենին։ Աչ դարձավ՝ լա՛վ է։ Ձախ դարձավ՝ է՛լ ավելի լավ է։ Կորուբյունն ուղղակի վայել էր կամերգերի կամ այնպիսի պարոնի, որն անվերջ ֆրանսերեն է կոտրատում և բարկանալիս, նույնիսկ, ռուսերեն հայհոյել չգիտե, այլ նախատում է ֆրանսիական բարբառով։ Ինչպիսի՛ քաղաքավարություն։ Նա փորձեց, գլուխը մի կողմ ծռելով, այնպիսի դիրք ընդունել, կարծես քե դիմելու լիներ միջին տարիքի և նորագույն կրթություն ստացած մի կնոջ. ուղղակի պատկեր էր։ Նկարի՛չ, վերցրո՛ւ վրձինդ ու նկարիր։ Գոհունակությունից նա հենց տեղն ու տեղը անտրաշայի ձևով մի քեքե ցատկ կատարեց։ Կամոդը ցնցվեց և օդեկոլոնի շիշը վայր ընկավ, բայց դա ո՛չ մի շփոթություն չպատճառեց։ Նա անպիտան շշին. ինչպես և հարկն էր, անվանեց «տխմար» և մտածեց. «Այժմ ամենից առաջ ո՞ւմ ներկայանանք։ Ամենից լավն է...», բայց

[1] Ազավաղված Կարլսռուե և Կոպենհագեն քաղաքների անունները։

[2] Սիրով, հաճույքով (իտալերեն)։

հանկարծ նախասենյակում լսվեց սապոգների թխկթխկոց ու խթանների զրնգոց և ոտից գլուխ զինված մի ժանդարմ, կարծես թե ի դեմս նրա մի ամբողջ զորք լիներ, ասաց. «Հրամայված է անմիջապես ներկայանալ գեներալ նահանգապետին»։ Չիչիկովն ապշահար եղավ։ Նրա առաջ ցցվել էր բեղավոր մի հրեշ, գլխին մի ձիու պոչ, մի ուսին սուսերակալ, մյուսին՝ սուսերակալ, մի հսկայական թրադաշույն կողքից կախված։ Նրան թվաց, թե մյուս կողքից կախված է հրացան և սատանան գիտե, թե ուրիշ էլ ի՛նչ, մի մարդու մեջ մի ամբողջ զորք։ Նա ուզում էր առարկել, [ճիվաղը] կոպիտ կերպով ասաց. «Հրամայված է իսկույն ևեթ»։ Նախասենյակը տանող դռնից նա տեսավ, որ այնտեղ երևում է նաև մի ուրիշ հրեշ, նայեց լուսամուտից, տեսավ, որ կառք է կանգնած։ Ի՞նչ կարող ես անել։ Հենց նավարինյան ծուխ ու բոցի գույն ունեցող ֆրակը հագին ստիպված էր նստել և ամբողջ մարմնով դողալով, ժանդարմի հետ միասին մեկնել գեներալ-նահանգապետի մոտ։

Նախասենյակում ուշքի գալու ժամանակ էլ չտվին։ «Մտե՛ք, իշխանը ձեզ արդեն սպասում է», ասաց հերթապահ աստիճանավորը։ Նրա առջև, ինչպես մառախուղում, երևում էին նախասենյակը և ծրարներ ընդունող թղթատարները, ապա այն դահլիճը, որտեղից՝ նա անցավ, մտածելով միայն մի բան, «Ահա կբռնի և առանց դատ ու դատաստանի ուղիղ Սիբիր կգցի»։ Սիրտն այնպես արագ խփեց, որ նույնիսկ ամենախանդակաթ սիրահարի սիրտն էլ այնպես չէր խփի։ Վերջապես, բացվեց օրհասական դուռը, նրա աչքի առաջ հայտնվեց պորտֆելներով, պահարաններով և գրքերով լի կաբինետը, ու նա տեսավ զայրույթի մարմնավորություն ցասկոտ իշխանին։

«Հոգեա՜ռս, հոգեա՜ռս,— մտածեց Չիչիկովը։— Նա ինձ կպատառոտի, ինչպես գայլը գառին»։

— Ես ձեզ խնայեցի, ես թույլ տվի ձեզ մնալու քաղաքում, մինչդեռ ձեզ պետք էր բա՛նտ ուղարկել, իսկ դուք ձեզ դարձյալ արատավորեցիք ամենաանարգ խարդախությամբ, ինչպիսի խարդախությամբ մարդ երբևիցե իրեն արատավորել է։

Փշխանի շրթունքները բարկությունից դողում էին։

— Ինչպիսի՞ ամենաանարգ վարմունքով և խարդախու-

Քյամք, ձերդ պայծառափայլություն,— հարցրեց Չիչիկովը՝ ամբողջ մարմնով դողալով։

— Այն կինը,— ասաց իշխանը՝ մի փոքր առաջ գալով և ուշադրի նայելով Չիչիկովի աչքերին,— այն կինը, որը ձեր թելադրանքով կտակը ստորագրել է, բռնվել է և ձեզ հետ առերեսման է ենթարկվելու։

Չիչիկովի աչքերը մթնեցին։

— Ձերդ պայծառափայլություն։ Ես գործի վերաբերյալ ամբողջ ճշմարտությունը կասեմ։ Ես մեղավոր եմ, իսկապես, որ մեղավոր եմ, բայց այնքան մեղավոր չեմ. ինձ թշնամիներս զրպարտել են։

— Ձեզ ո՛չ ոք չի կարող զրպարտել, քանի որ ձեզանում շատ ավելի զազրելի բաներ կան, քան կարող է [հնարել] ամենավերջին ստախոսը։ Դուք ձեր ամբողջ կյանքում, ես կարծում եմ, մի որևէ ոչ անպատիվ գործ չեք արել։ Ձեր վաստակած ամեն մի կոպեկը ձեռք է բերվել անաղնիվ ձևով, դա գողություն է և ամենաանազնիվ գործն է, որի համար արժանի եք մտրակի և Սիբիրի։ Ո՛չ, արդեն բավական է։ Հենց այս րոպեիս կտարվես բանտ և այնտեղ վերջին սրիկաների ու ավազակների հետ միասին դու պետք է [սպասես] քո ճակատագրին։ Եվ դա դեռ բարեհաճ վերաբերմունք է, որովհետև [դու] նրանցից մի քանի [անգամ] ավելի վատ ես, նրանք հասարակ բաճկոններ ու տուլուպներ են հագնում, իսկ դու...

Նա նայեց նավարինյան ծուխ ու բոցի գույն ունեցող ֆրակին և զանգահարեց.

— Ձերդ պայծառափայլություն, գթացեք,— բացականչեց Չիչիկովը— Դուք ընտանիքի հայր եք։ Ինձ մի՛ խնայեք, այլ ծեր մորս։

— Ստո՛ւմ ես,— զայրացկոտ ձայնով բացականչեց իշխանը։— Ճիշտ այդպես էլ դու այն ժամանակ ինձ աղաչում էիր քո երեխաների ու ընտանիքի անունից, որոնք դու երբեք չես ունեցել, իսկ այժմ էլ՝ մորդ անունից։

— Ձերդ պայծառափայլություն, ես սրիկա եմ ու վերջին ապերախտը,— ասաց Չիչիկովը...[1] ձայնով...— Ես, իսկապես, ստել եմ, ես ո՛չ երեխա եմ ունեցել, ո՛չ էլ ընտանիք, բայց աստված է վկա, ես միշտ ցանկացել եմ ունենալ կին։

[1] Ջեռագրում բաց է։

կատարել մարդու և քաղաքացու պարտքը, որպեսզի, իրոք, այնուհետև ձեռք բերեմ քաղաքացիների ու իշխանության հարգանքը... Բայց ինչպիսի՞ աղեխաղի հանգամանքներ։ Արյունո՛վ, ձերդ պայծառափայլություն, արյունո՛վ պետք էր ամենօրյա գոյությունը պահպանել։ Ամեն քայլափոխում՝ գայթակղություն և փորձություն... Թշնամիներ, հոգեառներ և հափշտակիչներ։ Ամբողջ կյանքս եղել է կատաղի մրրիկից ալեկոծվող ծովում քամիների քմահաճույքին մատնված նավի նման։ Ես մարդ եմ, ձերդ պայծառափայլություն։

Արցունքները հանկարծ գետի նման սկսեցին հոսել նրա աչքերից։ Նա ընկավ իշխանի ոտները հենց նավարինյան ծուխ ու բոցի գույն ունեցող ֆրակը, թավշյա ժիլետը, ատլասե փողկապը, հրաշալի կարված շալվարը հագին և սմենաառաջնակարգ օդեկոլոնի բուրմունքը տարածող իր հարդարված գլխով, և ճակատը խփեց գետնին։

— Հեռացի՛ր ինձանից։ Ջինվորներ կանչել՝ սրան տանելու համար,— ասաց իշխանը ներս եկածներին։

— Ձերդ պայծառափայլություն,— աղաղակեց [Ջիչիկովը]՝ երկու ձեռքով գրկելով իշխանի կոշիկը։

[Իշխանի] ամբողջ մարմնով դող անցավ։

— Հեռացե՛ք, ասում եմ ձեզ,— ասաց նա՝ ջանալով իր ոտքը հանել Ջիչիկովի գրկից։

— Ձերդ պայծառափայլություն, տեղիցս չեմ շարժվի, մինչև որ ձեր գթությանը չարժանանամ,— ասում էր [Ջիչիկովը], չքողնելով և սեղմելով իշխանի կոշիկը իր կրծքին և այդ ոտքի հետ քաշ գալով հատակի վրա նավարինյան ծուխ ու բոցի գույն ունեցող իր ֆրակի հետ միասին։

— Հեռացե՛ք,՝ ասում եմ ձեզ,— գոչեց իշխանը զարշանքի այն անբացատրելի զգացումով, որ մարդ զգում է զզվելի միջատից, որին սիրտ չի անում ոտքով տրորել։ Նա ոտքը այնպես թափահարեց, որ Ջիչիկովը զգաց կոշիկի հարվածն իր քթին, շրթունքին և կլոր կզակին, բայց կոշիկը բաց չքողեց և ավելի ևս մեծ ուժով էր այն պահում իր գրկում։ Երկու ահագին ժանդարմ ուժով քաշ տվին նրան և թևանցուկ տարան բոլոր սենյակների միջով։ Նա գունատ էր, վշտահար, այն անզգա-ապրապափելի դրությամբ, որի մեջ մարդ լինում է,

երբ իր աչքին է տեսնում սև, անդիմադրելի մահը, մեր բնությանը հակառակ այդ սարսափը...

Դեպի սանդուղքները տանող հենց դռան մեջ հանդիպեց Մուրազովը։ Հանկարծ հույսի մի ճառագայթ սահեց նրա դեմքի վրայով։ Մի ակնթարթում աներևակայելի ուժով նա դուրս պրծավ երկու ժանդարմների ձեռքից և ընկավ զարմացած ծերունու ոտքերը։

— Ի՞նչ է պատահել ձեզ, Պավե՛լ Իվանովիչ։

— Փրկեցե՛ք, բանտ են տանում, դեպի մահ...

Ժանդարմները քաշ տվին և տարան, թույլ չտվեցին նույնիսկ լսելու։

Մութ ու խոնավ մի նկուղ, որտեղից փչում էր կայազորային զինվորի կոշիկների և փաթաթանների հոտ, մի չներկված սեղան, երկու անպետք աթոռ, երկաթյա վանդակապատ լուսամուտ, կիսախարխուլ վառարան, որի արանքներից միայն ծուխ էր դուրս գալիս, բայց որը չէր տաքացնում, ահա այն օթևանը, որտեղ տեղավորվեց նավարինյան ծուխ ու բոցի գույն ունեցող նոր ֆրակով մեր [հերոսը], որն արդեն սկսել էր ճաշակել կյանքի քաղցրությունը և գրավել հայրենակիցների ուշադրությունը։ Նրան թույլ չտվին նույնիսկ կարգադրել, որ իր հետ վերցվեն անհրաժեշտ իրերը, վերցվի գզրոցը, որտեղ գտնվում էին նրա փողերը, որոնք թերևս ձեռք էին բերված... Քղթերը, մեռած հոգիների կայքագրերը, այդ ամենն այժմ գտնվում էին աստիճանավորների մոտ։ Նա գետին գլորվեց, և անհույս մի թախիծ որդի նման պարուրեց նրա սիրտը։ Հարաճուն արագությամբ նա սկսեց կրծել այդ անպաշտպան սիրտը։ Մեկ օրվա այդպիսի տվայտանք ևս, ու Չիչիկովը բոլորովին այս աշխարհում չէր լինի։ Բայց Չիչիկովի գլխից ևս անպակաս էր ինչ-որ ամենափրկիչ մի ձեռք։ Մի ժամ անց բանտի դռները բացվեցին և ներս մտավ ծերունի մուրազովը։

Թեև կիզիչ ծարավից նվաղած, ճանապարհի փոշով ու հողով ծածկված, հյուծված և ուժասպառ ճանապարհորդի չորացած կոկորդը որևէ մեկը աղբյուրի ջուր լցներ, նա այնքան չէր թարմանա, այնքան չէր աշխուժանա, որքան աշխուժացավ խեղճ [Չիչիկովը]։

— Իմ փրկի՛չ,— ասաց Չիչիկովը՝ հանկարծ վեր թռչելով հատակից, որի վրա ընկել էր իրեն տակնուվրա անող

տխրությունից, հանկարծ արագորեն համբուրեց նրա ձեռքը և սեղմեց իր կրծքին։— Թող աստված ձեզ վարձատրի, որ դուք այցելեցիք դժբախտիս։

Արցունքները ողողեցին նրա դեմքը։

Ծերունին նայում էր նրան վշտալից, հիվանդագին հայացքով և միայն ասում էր. «Ա՜խ, Պավել Իվանովիչ, Պավել Իվանովիչ, այդ ի՞նչ արեցիք դուք»։

— Ի՞նչ անեմ, կործանեց անիծված բախտը։ Չափը լիմացա, չկարողացա ժամանակին կանգ առնել։ Նզովյալ սատանան գայթակղեցրեց, դուրս բերեց մարդկային բանականության և ողջախոհության սահմաններից։ Հանցագործ եմ։ Բայց ինչպե՞ս կարելի էր այդպես վարվել։ Ազնվակա՜ն, ազնվակա՜ն առանց դատ ու դատաստանի բանտ նետել... Ազնվակա՜ն, Աֆանասի Վասիլևիչ։ Եվ այն էլ ժամանակ չտալ, որ տուն մտնի, իրերի մասին հոգա։ Չէ՞ որ այժմ այնտեղ իմ բոլոր իրերը մնացել են անտեր։ Գզրո՜ց, Աֆանասի Վասիլևիչ, գզրո՜ց, չէ՞ որ այնտեղ է իմ ամբողջ գույքը։ Արյուն-քրտինքով եմ ձեռք բերել, տարիների աշխատանքով, զրկանքներով... Գզրո՜ց, Աֆանասի Վասիլևիչ։ Չէ՞ որ ամեն ինչ կթալանեն, դեսուդեն կանեն։ Ո՜հ, աստված իմ։

Եվ անկարող լինելով զսպել նորից իրեն համակած վիշտը, նա բարձր հեկեկաց այնպիսի ձայնով, որը թափանցեց բանտի պարիսպները և հեռվում արձագանք տվեց, նա պոկեց իր ատլասե փողկապը և ձեռքը տանելով, օձիքի մոտից պատռեց նավարինյան ծուխ ու բոցի գույն ունեցող իր ֆրակը։

— Ա՜խ, Պավել Իվանովիչ, ինչպե՜ս ձեզ կուրացրեց այդ գույքը։ Դրա պատճառով դուք չէիք նկատում ձեր սարսափելի դրությունը։

— Բարերա՜ր, փրկեցե՜ք, փրկեցե՜ք,— հուսահատ բացականչեց խեղճ Պավել Իվանովիչը, ընկնելով նրա ոտքերը։— Իշխանը ձեզ սիրում է, ձեզ ոչինչ չի մերժի։

— Ո՜չ, Պավել Իվանովիչ, չեմ կարող, որքան էլ ուզեի, որքան էլ ցանկանայի։ Դուք գտնվում եք անողոք օրենքի ներքո և ո՛չ թե մարդու իշխանության ներքո։

— Գայթակղեցրեց կախարդ սատանան, մարդկային ցեխ դրությունը։

Նա գլուխը խփեց պատին, իսկ ձեռքն այնպես զարկեց

սեղանին, որ բռունցքն արյունլվիկ արավ, բայց ո՛չ գլխում ցավ, ո՛չ էլ հարվածի խստությունն զգաց։

— Պավել Իվանովիչ, հանգստացե՛ք, մտածեցե՛ք, թե ինչպես հաշտվեք աստծու և՝ ո՛չ թե մարդկանց հետ, ձեր խեղճ հոգու մասին խորհեցե՛ք։

— Բայց ինչպիսի՛ ճակատագիր է եղել իմ ճակատագիրը, Աֆանասի Վասիլևիչ։ Արդյոք որևէ մարդու այնպիսի ճակատագիր վիճակվե՞լ է։ Չէ՞ որ կարելի է ասել, թե արյունքրտինքով եմ ձեռք բերել իմ յուրաքանչյուր կոպեկը, աշխատանքով, աշխատանքով և ո՛չ թե կողոպուտով կամ պետական գույքը թալանելով, ինչպես ուրիշներն են անում։ Ինչի՞ համար եմ ձեռք բերել կոպեկը։ Որպեսզի կյանքիս մնացորդը ապրեմ լիության մեջ, թողնեմ կնոջս, երեխաներիս, որոնք մտածում էի ունենալ հայրենիքի բարօրության, նրան ծառայելու համար։ Ահա թե ինչի՛ համար էի ուզում ունենալ։ Կեղծ գործեր եմ բռնել, չեմ վիճում... Ի՞նչ արած։ Բայց չէ՞ որ կեղծել եմ միայն այն ժամանակ, երբ տեսել եմ, որ ուրիշ ճանապարհով առաջ չես գնա և ծուռ ճանապարհով ավելի շուտ տեղ կհասնես։ Բայց չէ՞ որ ես աշխատել եմ, կատարելագործվել, թեև վերցրել եմ, ապա՝ հարուստներից։ Իսկ այն սրիկաները, որոնք դատարանների միջոցով հազարներ են վերցնում պետության գանձարկղից, չքավորներին են կողոպտում, վերջին կոպեկն են վերցնում այն մարդկանցից, որոնք ոչինչ չունեն... Ասացե՛ք, այս ի՞նչ դժբախտություն է, ամեն անգամ, հենց որ սկսում ես հասնել պտուղներին, այսպես ասած, հենց որ դրանց ձեռք ես մեկնում... հանկարծ փոթորիկ, ստորջրյա խութ, և ամբողջ նավը ջարդուփշուր է լինում։ Ահա մոտ երեք [հարյուր] հազարի կապիտալ կար։ Արդեն եռահարկ տուն կար։ Արդեն երկու անգամ գյուղ էի գնել... Ա՛խ, Աֆանասի Վասիլևիչ, ինչի՞ համար արժանացա այսպիսի [ճակատագրի]։ Ինչի՞ համար են այս հարվածները։ Մի՞թե առանց դրան էլ իմ կյանքը նման չէր ալեկոծ նավի։ Որտե՞ղ է երկնքի արդարությունը։ Որտե՞ղ է համբերատարության, չտեսնված հաստատակամության վարձատրությունը։ Չէ՞ որ ես երեք անգամ նորից եմ սկսել, ամեն ինչ կորցնելով, նորից կոպեկից եմ սկսել, մինչդեռ մի ուրիշը վաղուց հուսահատությունից կնկսեր խմել և

գինետանը կփտեր։ Ախր ինչքա՞ն բան պետք էր հաղթահարել, ինչքա՞ն բանի դիմանալ։ Չէ՞ որ ամեն մի [կոպեկը], այսպես ասած, հոգու բոլոր ուժերով է վաստակվել... Ննջադրենք, թե ուրիշները հեշտությամբ են ձեռք բերել, բայց չէ՞ որ ինձ համար յուրաքանչյուր կոպեկը, ինչպես ասում է առածը, երեք կոպեկանոցով է գամված, և այդ երեք կոպեկանոցով գամված կոպեկը ես ձեռք եմ բերել, աստծուն է հայտնի, այնպիսի երկաքյա անխոնջությամբ....

Նա խոսքը չավարտեց, բարձրաձայն հեկեկաց սրտի անտանելի ցավից, ընկավ աթոռին ու բոլորովին պոկեց ֆրակի կախված քղանցքն ու իրենից հեռու շպրտեց ու երկու ձեռքը տանելով դեպի մազերը, որոնք առաջ այնքան չանում էր կարգավորել, սկսեց անխնա պոկել, հաճույք ստանալով ցավից և դրանով ուզենալով խլացնել սրտի չմարող ցավը։

Երկար լռելյայն նստած էր նրա առաջ Մուրազովը, նայելով այդ արտասովոր [վշտին], որը նա առաջին անգամն էր տեսնում։ Իսկ այդ դառնացած, դժբախտ մարդը, որ դեռ վերջերս ամենուրեք ճախրում էր բարձրաշխարհիկ կամ զինվորական մարդու սանձարձակ ճարպկությամբ, այժմ այս ու այն կողմն էր նետվում՝ գզգղված, անպարկեշտ [տեսքով], ճղված ֆրակով և քանդված շալվարով, արյունոտ, ջարդված բռունցքով, վատաբանելով մարդուն թշնամի, հակամարտ ուժերը։

— Ա՜խ, Պավել Իվանովիչ, Պավել Իվանովիչ, ի՜նչ մարդ դուրս կգար ձեղանից, եթե դուք նույնպիսի ուժով և համբերատարությամբ նվիրվեիք բարի գործի, լավագույն նպատակի։ Աստվա՜ծ իմ, որքա՜ն բարիք կգործեիք։ Եթե այն մարդկանցից, որոնք բարիք են սիրում, քեկուզ որևէ մեկը այդքան չնաք գործադրեր, որքան դուք գործադրել եք ձեր կոպեկը ձեռք բերելու համար, և կարողանար բարօրության համար այնպես զոհաբերել քե՛ սեփական ինքնասիրությունը, քե՛ պատվասիրությունը, առանց իրեն ափսոսալու, ինչպես դուք չեք ափսոսացել ձեր կոպեկը ձեռք բերելու համար, աստվա՜ծ իմ, ինչպե՜ս կծաղկեր մեր երկիրը... Պավել Իվանովիչ, Պավել Իվանովիչ։ Ցավալին այն չէ՜, որ դուք ուրիշների առաջ մեղավոր եք դարձել, այլ ա՜յն, որ ինքներդ ձեր առաջ եք մեղավոր դարձել այն հարուստ ուժերի ու ձեռքերի առաջ, որոնք

ձեզ վիճակվել են։ Ձեր կոչումը մեծ մարդ լինելն է, իսկ դուք ձեզ անդունդն եք գլորել և կործանել եք։

Կան հոգու գաղտնիքներ։ Որքան էլ հեռու չեղվի ուղիղ ճանապարհից մոլորյալը, որքան էլ գազազի իր զգացմունքներում անուղղելի հանցագործը, որքան էլ քարացած լինի իր գայթակղության մեջ, բայց եթե նրան կշտամբես հենց իրենով, ի՛ր իսկ կողմից խայտառակված արժանիքներով, նա ակամայից կցնցվի և ամբողջովին կսարսռա։

— Աֆանա՛սի Վասիլևիչ,— ասաց խեղճ Չիչիկովը և երկու ձեռքով բռնեց նրա ձեռքերը,— ա՛խ, եթե ինձ հաջողվեր ազատվել, վերադարձնել իմ գույքը։ Երդվում եմ ձեզ, այժմյանից արդեն բոլորովին ուրիշ կյանք կսկսեի։ Փրկեցեք, բառերարս, փրկեցե՛ք։

— Ի՞նչ կարող եմ անել։ Ես պետք է պատերազմե՞մ օրենքի դեմ։ Ենթադրենք, թե ես վճռեցի այդ անել, բայց չէ՞ որ իշխանը արդարացի է, նա ո՛չ մի կերպ չի նահանջի։

— Բարերա՛ր, դուք ամեն ինչ կարող եք անել։ Ինձ օրենքը չի սարսափեցնի, ես օրենքի առաջ միջոց կգտնեմ. բայց որ ես անմեղ տեղը բանտ եմ նետվել, որ ես այստեղ շան նման կսատկեմ, և որ իմ գույքը, թղթերս, գզրոցս... Փրկեցե՛ք։

Նա գրկեց ծերունու ոտքերը, թրջեց արցունքներով։

— Ա՛խ, Պավել Իվանովիչ, Պավել Իվանովիչ,— ասում էր ծերունի Մուրազովը, [գլուխը] օրորելով,— ինչպես է ձեզ կուրացրել այդ գույքը։ Դրա համար դուք ձեր խեղճ հոգուն էլ չեք ունկնդրում։

— Կմտածեմ նաև հոգուս մասին, բայց փրկեցե՛ք։

— Պա՛վել Իվանովիչ...— ասաց ծերունի Մուրազովը և կանգ առավ։— Ձեզ փրկելն ինձնից չի կախված։ Բայց ինձնից կախված ամեն ջանք կգործադրեմ, որպեսզի թեթևացնեմ ձեր ճակատագիրը և ձեզ ազատեմ։ Չգիտեմ, արդյոք այդ կհաջողվի անել, բայց ես կաշխատեմ։ Իսկ եթե սպասածին հակառակ հաջողվի, Պավել Իվանովիչ, ես ձեզանից աշխատանքիս համար վարձատրություն կխնդրեմ. թողե՛ք գույք ձեռք բերելու նկրտումները։ Պատվով եմ ձեզ ասում, որ եթե ես իմ ամբողջ գույքից էլ զրկվեի, իսկ իմ ունեցածս ավելի է, քան ձերը, ես լաց չէի լինի։ Աստված է վկա, որ [գործը]

այդ գույքի մեջ չէ, որը կարող է ինձանից բռնագրավվել։ Այլ այն բանում, ինչը ո՛չ ոք չի կարող գողանալ և խլել։ Դուք արդեն աշխարհիս երեսին բավականաչափ ապրել եք։ Դուք ինքներդ եք ձեր կյանքը անվանում ալեկոծ նավ։ Դուք արդեն այնքան ունեք, որ ձեր մնացած օրերը կարող եք ապրել։ Բնակություն հաստատեցեք որևէ խաղաղ անկյուն, եկեղեցու և հասարակ, բարի մարդկանց որքան կարելի է մոտիկ կամ, եթե սաստիկ ցանկություն ունեք սերունդ թողնել, ամուսնացեք ոչ հարուստ, բարի մի աղչկա հետ, որը սովոր լինի չափավորության և համեստ տնտեսության։ Մոռացե՛ք այս աղմըկոտ աշխարհը և նրա բոլոր հրապուրիչ քմահաճույքները։ Թող նա էլ ձեզ մոռանա։ Դուք տեսնում եք, որ այնտեղ ամեն ինչ թշնամի, գայթակղիչ կամ մատնիչ է։

— Անպայմա՛ն, անպայմա՛ն։ Ես արդեն ցանկանում էի, արդեն մտադիր էի ինչպես հարկն է ապրել, մտածում էի տնտեսությամբ զբաղվել, կյանքս չափավորել։ Գայթակղիչ դևը շփոթեցրեց, ճանապարհից շեղեց, սատանա՛ն, սադա՛լը, դժոխքի ծնո՛ւնդը։

Ինչ-որ անհայտ, մինչև այդ նրան անծանոթ, անբացատրելի զգացումներ առաջացան նրա մեջ, կարծես թե նրա մեջ ուզում էր արթնանալ ինչ-որ հեռավոր մի բան, որ նախորոք, մանկությունից ի վեր խստասիրտ, անկենդան խրատով, ձանձրալի, անհրապույր մանկությամբ, հարազատ բնի ամայությամբ, անընտանիք մենակությամբ, սկզբնական տպավորությունների աղքատությամբ և խեղճությամբ ճնշված էր ու կարծես թե այն, ինչ [ճնշված էր] ճակատագրի խիստ դեմքով, որը նրա վրա նայել էր ձանձրույթով, ինչ-որ մութ, ամեհային բջով պատած լուսամուտից, ցանկանում էր ազատություն ստանալ։ Նրա շուրթերից լսվեց մի հեծեծանք և ձեռքերով դեմքը ծածկելով, վշտագին ասաց. «Արդարությո՛ւն, արդարությո՛ւն»։

— Ե՛վ մարդկանց ճանաչելը, և՛ փորձառությունը չօգնեցին՝ ապօրինի լինելու հետևանքով։ Իսկ եթե դա լիներ օրինական հիմքի վրա... Ա՛խ, Պավել Իվանովիչ, ինչո՞ւ դուք ձեզ կործանեցիք։ Արթնացե՛ք, դեռ ուշ չէ, դեռ ժամանակ կա...

— Ո՛չ, ո՛ւշ է, ո՛ւշ,— հեծեծաց նա այնպիսի ձայնով, որից քիչ մնաց Մուրազովի սիրտը պատռվեր։— Սկսում եմ

զգալ, լսում եմ, որ այնպես չեմ գնում, ինչպես հարկն է, և շատ եմ շեղվել ուղիղ [ճանապարհից], բայց արդեն չեմ կարող: Ո՛չ, այնպես չեմ դաստիարակված: Հայրս միշտ խրատներ էր կարդում, ծնծում էր, ստիպում արտագրել բարոյական կանոններ, իսկ ինքն իմ աչքի առաջ հարևաններից անտառանյութ էր գողանում և ինձ էլ դեռ ստիպում էր իրեն օգնեմ: Իմ ներկայությամբ անիրավացի դատ սկսեց, անարգեց մի որբ աղջկա, որի խնամակալն էր ինքը: Օրինակը կանոններից ուժեղ է: Տեսնում եմ, զգում, Աֆանասի Վասիլևիչ, որ անվայել կյանք եմ վարում, բայց մեծ ղժվանք չունեմ դեպի մոլորությունը. բնավորությունս կոպտացել է. չկա սեր դեպի բարին, աստվածահաճո գործերի նկատմամբ այդ հիանալի հակումը, որը դառնում է բնավորություն, սովորություն... Չկա բարիքի համար գործելու այնպիսի ցանկություն, ինչպիսին այդ կա՝ գույք ձեռք բերելու համար: Ճշմարիտ եմ ասում, ի՞նչ արած:

Ծերունին խորը հառաչեց...

— Պավել Իվանովիչ, դուք մեծ կամքի տեր եք, անչափ համբերատար: Դեղը դառն է, բայց չէ՞ որ հիվանդը այն ընդունում է, դա գիտենալով, որ այլապես չի առողջանա: Ձեզ մոտ չկա սեր դեպի բարին, բարություն արեք բռնի կերպով, չունենալով սեր դեպի այդ բարին: Դա է՛լ ավելի մեծ ծառայություն կհամարվի ձեր կողմից, քան այն մարդու կողմից, ով բարություն է անում նրա սիրուց դրդված: [Ձեզ] ստիպեցնք միայն մի քանի անգամ, այնուհետև սերն էլ կգոյանա: Հավատացե՛ք, ամեն ինչ իրագործելի է: Բագավորությունը ծառապաճով է ձեռք բերվում[1], ասված է մեզ: Միայն բռնի կերպով ճանապարհ հարթելով, բռնի կերպով պետք է անցնել, բռնի կերպով այն վերցնել: Ա՜խ, Պավել Իվանովիչ, չէ՞ որ դուք ունեք այն ուժը, որ ուրիշները չունեն, այն երկաթե համբերությունը և մի՞թե չեք կարող հաղթահարել: Չէ՞ որ դուք, ինձ թվում է, դյուցազուն կլինեիք: Չէ՞ որ այժմ մարդիկ բոլորն էլ կամազուրկ են, թույլ:

Նկատելի էր, որ այս խոսքերը թափանցեցին Չիչիկովի բուն հոգու մեջ և ինչ-որ փառասիրական բան շոշափեցին

[1] Բիբլիական արտահայտություն:

նրա հոգու հատակում՝ Թքե ո՛չ վճռականություն, ապա ինչ-որ կայուն և դրա նման մի բան փայլեց նրա աչքերում...

— Աֆանասի Վասիլևիչ,— ասաց նա հաստատակամորեն,— եթե միայն ինձ համար փրկություն կթախանձեք և այստեղից որևէ գույքով մեկնելու միջոցներ, ես ձեզ խոսք եմ տալիս ա՛յլ [կյանք] սկսել։ Կառնեմ մի գյուղ, կդառնամ տնտեսատեր, կսկսեմ փող կուտակել ո՛չ թե ինձ համար, այլ ուրիշներին օգնելու համար, բարիք կանեմ, որքան ուժ ունեմ։ Կմոռանամ ինձ և քաղաքային ամեն տեսակ որկրամոլություն և խնջույքներ, կվարեմ պարզ, սթափ կյանք։

— Աստված թող հաստատ պահի ձեր այդ մտագրությունը,— ասաց ուրախացած ծերունին։— Ամբողջ ուժով կաշխատեմ, որ իշխանից ձեզ համար ազատություն թախանձեմ։ Կհաջողվի թե ոչ, աստված [գիտե]։ Համենայն դեպս, ձեր վիճակը, երևի, կմեղմանա։ Ա՛խ, տեր աստված, գրկեցե՛ք ինձ, թույլ տվեք ձեզ գրկելու։ Իսկապես, որքա՜ն դուք ինձ ուրախացրիք։ Դե՛, աստված ձեզ հետ, իսկույն գնում եմ իշխանի մոտ։

Ջիլինկովը մնաց [մենակ]։

Նրա ամբողջ էությունը ցնցվեց և կակղեց։ Լուսնոսկին էլ հալվում է մետաղներից այդ կարծրագույնը, որն ամենից ավելի է դիմանում կրակին։ Երբ քուրայում կրակը բորբոքվի, փուքսը փչի, և կրակի անտանելի տաքությունը հասնի մեծ չափերի, համառ մետաղը սպիտակում է և նույնպես հեղուկ է դառնում. այդպես էլ ամենադիմացկուն տղամարդը ձախորդությունների քուրայում անձնատուր է լինում, երբ դրանք բորբոքվելով՝ իրենց անտանելի կրակով այրում են կարծրացած բնությունը...

«Ես ինքս չեմ կարող և չեմ զգում, բայց բոլոր ուժերս կգործադրեմ, որպեսզի ուրիշներին զգացնել տամ, որ ես վատն եմ և ոչինչ անել չեմ կարողանում, բայց բոլոր ուժերս կգործադրեմ, որպեսզի մյուսներին տրամադրեմ, ես ինքս վատ քրիստոնյա եմ, բայց բոլոր ուժերս [կգործադրեմ], որպեսզի գայթակղության առիթ չտամ։ Կաշխատեմ, ճակա՛տիս քրտինքով դյուղում կչարչարվեմ և ազնվորեն կզբաղվեմ այնպես, որ ուրիշների վրա էլ բարի ազդեցություն գործեմ։ Եվ, իսկապես, հո ես բոլորովին անպետք չեմ։ Տնտեսության ընդունակ եմ,

ունեմ խնայողության, արագաշարժության և համեստության, նույնիսկ հաստատամտության հատկություններ։ Բավական է միայն վճռել»։

Այսպես էր մտածում Ջիլիկովը և կիսաարթնացած ուժերով կարծես ինչ-որ բան շոշափում էր։ Թվում էր, թե նրա բնությունը մութ բնազդով սկսել է զգալ, որ մի տեսակ պարտք կա, որ մարդ պետք է աշխարհում կատարի, որը կարելի է կատարել ամենուրեք, ամեն անկյունում, չնայած ամեն մի հանգամանքի, իրարանցման և շարժման, որոնք ճախրում են մարդու շուրջը։ Եվ քաղաքի աղմուկից, այն հրապուրանքներից հեռու աշխատասեր կյանքը, որ պարապությունից հնարել է աշխատանքը մոռացած մարդը, այնքան ուժեղ կերպով սկսեց նրա առաջ գծագրվել, որ նա արդեն գրեթե մոռացավ իր դրության ամբողջ անախորժությունը և, գուցե, պատրաստ էր նույնիսկ շնորհակալ լինելու նախախնամությունից այս ծանր [հարվածի] համար, եթե միայն իրեն կազատեն և կտան... գոնե մի մասը։ Բայց... նրա անմաքուր նկուղի միապեղկ դուռը բացվեց, և ներս մտավ աստիճանավոր մի անձ՝ Սամոսվիստովը, էպիկուրի հետևորդ մի ժիր ու ճարպիկ մարդ, արշինանոց թիկունքով, ոտքերը բարեկազմ, հիանալի ընկեր, քեֆ անող և «ետ եկածի» մեկը, ինչպես նրա մասին արտահայտվում էին իր ընկերները։ Պատերազմի ժամանակ այդ մարդը հրաշքներ կգործեր. լավ կլիներ նրան ուղարկել որևէ անանցանելի, վտանգավոր տեղերով անցնելու, հենց թշնամու քթի տակից թնդանոթ գողանալու, այդ նրա գործը կլիներ։ Բայց պատերազմական ասպարեզ չլինելու պատճառով, որտեղ նրան գուցե աղնիվ մարդ կդարձնեին, նա իր ուժերի կարելվույն չափ շրջապատին չարիք էր հասցնում։ Ուղղակի անըմբռնելի էր՝ տարօրինակ համոզմունքներ և կանոններ ուներ նա. ընկերների հետ լավ էր, ո՛չ ոքի չէր դավաճանում և եթե խոսք էր տալիս, կատարում էր, բայց վերադաս պետերին թշնամու մարտկոցի նման մի բան էր համարում, որի միջով պետք է ճանապարհ հարթել, օգտվելով ամեն մի թույլ տեղից, ճեղքից կամ վրիպումից։

— Ձեր դրության մասին ամեն ինչ գիտենք, լսել ենք,— ասաց նա, երբ տեսավ, որ գուռն իր ետևից պինդ փակվել է։— Ոչի՛նչ, ոչի՛նչ, մի՛ վախեցեք, ամեն ինչ կուղղվի, բոլորս

կսկսենք աշխատել ձեզ համար և ձեր ծառաներն ենք։ Երեսուն հազար՝ բոլորիս, և ուրիշ ոչինչ։

— Մի՞թե,— բացականչեց Չիչիկովը,— և ես բոլորովին կարդարացվե՞մ։

— Միանգամայն, և դեռ վնասների համար վարձատրություն կստանաք։

— Եվ որքա՞ն եք ուզում աջակցության համար։

— Երեսուն հազար։ Այստեղ արդեն համենքը միասին՝ թե՛ մերոնց, թե՛ գեներալ-նահանգապետի մարդկանց և թե՛ քարտուղարին։

— Բայց թույլ տվեք, ես ինչպե՛ս կարող եմ։ Իմ բոլոր իրերը... գզրոցս... այդ բոլորը կնքված է, հսկողության տակ է։

— Մի ժամ հետո ամեն ինչ կստանաք։ Համաձա՞յն եք ուրեմն։

Չիչիկովը ձեռք տվեց։ Նրա սիրտը խփում էր, և նա չէր հավատում, թե դա հնարավոր է...

— Առայժմ ցտեսություն. մեր քննհանուր բարեկամը հանձնարարել է ձեզ [ասելու], որ գլխավորը հանգստությունն ու առնասրտությունն է։

«Հա՛, հասկանում եմ,— մտածեց Չիչիկովը,— իրավախորհրդատուն է»։

Սամոսվիստովը անհետացավ։ Չիչիկովը մենակ մնալով, այնուամենայնիվ, դեռ նրա ասածներին չէր հավատում, երբ այդ խոսակցությունից հետո մի ժամ չանցած բերվեց գզրոցը և պարզվեց, որ թղթերը, փողերն ու ամեն ինչ կարգին է։ Սամոսվիստովը երևան եկավ որպես կարգադրիչ, հայհոյեց կարգված ժամապահներին աչալուրջ չլինելու համար, բանտի վարիչին հրամայեց և՛ս ավելի զինվոր պահանջել հսկողությունը ուժեղացնելու համար, վերցրեց ո՛չ միայն գզրոցը, այլև չոկեց այն բոլոր թղթերը, որոնք կարող էին Չիչիկովին որևէ բանով անվանարկել, այդ բոլորը միասին կապեց, կնքեց և հենց իրեն՝ զինվորին հրամայեց Չիչիկովին հանձնել այդ իրերը, որոնք իբր գիշերվա և քնելու համար անհրաժեշտ իրեր են, այնպես որ, Չիչիկովը թղթերի հետ միասին ստացավ նաև այն բոլոր տաք իրերը, որ անհրաժեշտ էին նրա մահկանացու մարմինը ծածկելու համար։ Այդ արագ առա-

քումը նրան անչափ ուրախացրեց։ Այդ նրան մեծ հույս ներշնչեց, և նա արդեն սկսեց նորից երազել որոշ հրապուրանքների մասին՝ երեկոյան թատրոն, պարուհի, որի ետևից ինքը քաշ էր գալիս։ Գյուղը և խաղաղությունը սկսեցին թվալ ավելի դժգույն, քաղաքն ու աղմուկը՝ դարձյալ ավելի վառ, ավելի պարզ... Օ՜, դու կյանք։

Մինչ այս, մինչ այդ, դատարաններում և դատաստանական պալատներում կազմվել էր մի հսկայական գործ։ Գործի էին անցել գրագիրների գրիչները և, քթախոտ ներս քաշելով, աշխատում էին խճճված գործերի վարպետները, գեղարվեստագետի նման հիանալով իրենց կեռանման տողերով։ Իրավախորհրդատուն աներևույթ մոգի նման աննկատելիորեն պըտտում էր ամբողջ մեխանիզմը։ Բոլորին վճռականորեն խճճել էր, նախքան որևէ մեկին կհաջողվեր շուրջը նայել։ Խառնաշփոթությունն ավելացավ։ Սամսովիստովն ինքն իրեն գերազանցեց չլսված համարձակությամբ ու հանդգնությամբ։ Իմանալով, թե որտե՛ղ է գտնվում բռնված կինը, նա ուղղակի այնտեղ եկավ և ներս մտավ այնպիսի կտրիճի ու պետի նման, որ ժամապահը նրան պատիվ տվեց և շիփշիտակ կանգնեց։

— Վաղո՞ւց է, ինչ այստեղ կանգնած ես։

— Առավոտվանից, ձերդ բարեծննդություն։

— Շո՞ւտ ես փոխվելու։

— Երեք ժամ հետո, ձերդ բարեծննդություն։

— Դու ինձ պետք կգաս։ Ես սպային կասեմ, որ քո փոխարեն նշանակի մեկ ուրիշին։

— Լսում եմ, ձերդ բարեծննդություն։

Եվ տուն մեկնելով, որպեսզի ոչ ոքի մասնակից չդարձնի գործին ու հետքերը կորցնի, ինքը ժանդարմի զգեստ հագավ, բեղ ու մորուքով զարդարվեց այնպես, որ նույնիսկ ինքը՝ սատանան էլ չէր ճանաչի։ Գալով այն տունը, որտեղ Ջիլիկովն էր և բռնելով պատահած հենց առաջին կնոջը, նրան հանձնեց երկու աստիճանավորի, որոնք նույնպես կոփված մարդիկ էին, իսկ ինքը, բեղերով ու հրացանով, ինչպես հարկն է, ուղղակի ներկայացավ ժամապահներին։

— Գնա՛ դու... Ինձ հրամանատարն է ուղարկել քո փոխարեն հերթափոխի կանգնելու։

Հերթը փոխեց և ինքը կանգնեց հրացանով։ Հենց այդ էլ

հարկավոր էր։ Այդ միջոցին առաջվա կնոջ փոխարեն հայտնվեց մի ուրիշը, որը ոչինչ չգիտեր և չէր հասկանում։ Առաջվա կնոջը ինչ-որ տեղ թաքցրին այնպես, որ հետո նույնիսկ չիմացան, թե ո՛ւր կորավ։ Մինչդեռ Սամսովիստովը գործում էր որպես զինվորական, իրավախորհրդատուն հրաշքներ գործեց քաղաքացիական ասպարեզում։ Նահանգապետի ախանջը գցեց, թե դատախազը նրա վրա մատնություն է գրում։ Ժանդարմական աստիճանավորի ախանջը գցեց, [թե] գաղտնի ապրող մի աստիճանավոր նրա վրա մատնություններ է գրում։ Գաղտնի ապրող աստիճանավորին հավատացրեց, թե կա է՛լ ավելի գաղտնի աստիճանավոր, որը նրան է մատնում։ Եվ բոլորին այնպիսի դրության մեջ դրեց, որ նրանք ստիպված էին իրենից խորհուրդներ խնդրել։ Այնպիսի խառնափնթորություն էր, մատնություն մատնության ետևից սկըսվեց և հետզհետե բացվեցին այնպիսի գործեր, որ նույնիսկ արևն էլ չէր տեսել, և նույնիսկ այնպիսի գործեր, որոնք չէին էլ եղել։ Էլ ի՛նչ միջոց ասես, որ չգործադրվեց, և՛ այն, թե ո՛վ է ապօրինի զավակ և ի՛նչ ծագում ու կոչում ունի և ով սիրուհի ունի, ո՛ւմ կինը ո՛ւմ ետևից է քարշ գալիս։ Սկանդալները, գայթակղություններն ու ամեն ինչ այնպես էին խճճվել և միահյուսվել Ջիչիկովի պատմության հետ, մեռած հոգիների հետ, որ ո՛չ մի կերպ չէր կարելի հասկանալ, թե այդ գործերից ո՛րն էր գլխավոր անհեթեթությունը. երկուսն էլ քվում էին հավասար արժանիք ունեցող։ Երբ, վերջապես, սկսեցին նյութեր ստացվել գեներալ-նահանգապետի մոտ, խեղճ իշխանը ոչինչ չկարողացավ հասկանալ։ Մի շատ խելոք և արագաշարժ աստիճանավոր, որին հանձնարարված էր եզրակացություն ներկայացնել, քիչ մնաց խելագարվեր։ Ո՛չ մի կերպ հնարավոր չէր գործի տուտը գտնել։ Իշխանն այդ միջոցին մտահոգված էր բազմաթիվ, մ.Լկը մյուսից անախորժ ա՛յլ գործերով։ Նահանգի մի մասում սով էր սկսվել։ Այն աստիճանավորները, որոնք ուղարկվել էին հացահատիկ բաշխելու, այնպես չէին տնօրինել, ինչպես հարկն էր։ Նահանգի մյուս մասում սկսվել էին շարժվել աղանդավորները։ Ինչ-որ մեկը նրանց մեջ լուրեր էր տարածել, թե ծնվել է մի նեռ, որը մեռածներին էլ հանգիստ չի տալիս, գնելով ինչ-որ մեռած հոգիներ։ Ապաշխարում ու մեղք էին գործում և նեռին

բռնելու պատրվակով ինչ-որ ոչ նեռերի գլուխներ կերան։ Մի այլ տեղ մուժիկները խռովություն էին բարձրացրել կալվածատերերի ու կապիտան-ոստիկանների դեմ։ Ինչ-որ քափառաշրջիկներ լուրեր էին տարածել, թե այնպիսի ժամանակներ են վրա հասել, որ մուժիկները պետք է կալվածատեր [դառնան] և պետք է ֆրակ հագնեն, իսկ կալվածատերերը պետք է հագնեն գյուղացու արմյակ ու մուժիկներ դառնան, և մի ամբողջ գավառակ, առանց մտածելու, որ այն ժամանակ խիստ շատ կալվածատերեր ու կապիտան-ոստիկաններ կլինեն, հրաժարվել էր որևէ հարկ տալուց։ Հարկավոր էր բռնի միջոցների դիմել։ Եեղճ իշխանը չափազանց ջղային վիճակումն էր։ Այդ միջոցին նրան զեկուցեցին, թե եկել է կապալառուն։

— Թող ներս գա,— ասաց իշխանը։ Մերուսինն ներս մրտավ։

— Ահա՛ ձեր Ջիլիկովը։ Դուք նրան պաշտպանում էիք։ Այժմ նա բռնվել է այնպիսի արարքում, որ վերջին գողն անգամ սիրտ չէր անի կատարել։

— Թույլ տվեք ձեզ զեկուցել, ձերդ պայծառափայլություն, որ ես այդ գործն այնքան էլ չեմ հասկանում։

— Կտակի կեղծում և այն էլ ինչպիսի՛ կեղծում... Այդպիսի գործի համար մարդիկ հրապարակավ մտրակահարվում են։

— Ձերդ պայծառափայլություն, կասեմ, բայց ո՛չ թե Ջիլիկովին պաշտպանելու համար։ Ջէ՞ որ այդ գործը ապացուցված չէ։ Դեռ հետաքննություն չի կատարվել։

— Հանցանշան կա, այն կինը, որը նախատեսվել էր մեռածի փոխարեն, բռնվել է։ Ես նրան քանկանում եմ դիտմամբ ձեր ներկայությամբ հարցաքննել։

Իշխանը զանգահարեց և հրամայեց կանչել այդ կնոջը։

Մուրազովը լռեց։

— Ջափազանց անպատվաբեր գործ է։ Եվ ամո՛թ մեզ, այդ գործին խառն են քաղաքի առաջին աստիճանավորները, ինքը նահանգապետը։ Նա չպետք է այնտեղ լինի, որտեղ գտնվում են գողերն ու դատարկապորտ մարդիկ,— ասաց տագնացած իշխանը։

— Ջէ՞ որ նահանգապետը ժառանգներից մեկն է. նա

պահանջ ներկայացնելու իրավունք ուներ։ Իսկ այն հանգամանքը, որ ուրիշներն էլ ամեն կողմից կաուչեցին, ապա այդ, ձերդ պայծառափայլություն, մարդուս հատուկ բան է։ Մեռնել է մի հարուստ կին, խելացի և արդարացի կարգադրություն չի արել. ամեն կողմից թռել-եկել են բոլոր նրանք, ովքեր ցանկացել են օգուտ քաղել. մարդուս բնույթից հեռու բան չէ։

— Բայց ինչո՞ւ սրիկայության դիմել... Ստո՜ր մարդիկ,— ասաց իշխանը զայրույթի զգացումով։— Ո՛չ մի լավ աստիճանավոր չունեմ, բոլորը սրիկաներ են։

— Ձերդ պայծառափայլություն, բայց մեզնից ո՞ր մեկն է լավ՝ հարկ եղածի պես։ Մեր քաղաքի բոլոր աստիճանավորները մարդիկ են, արժանիքներ ունեն և շատերը գործի մեջ չափազանց հմուտ են, բայց մեղքից ամեն մեկն էլ զերծ չէ։

— Լսեցե՛ք, Աֆանասի Վասիլևիչ, ասացեք ինձ, ես մենակ ձեզ եմ համարում ազնիվ մարդ, ամեն տեսակ սրիկաների պաշտպանելու այդ ի՞նչ տենչ է, որ դուք ունեք։

— Ձերդ պայծառափայլություն,— ասաց Մուրազովը,— ով էլ որ լինի այն մարդը, որին դուք անվանում եք սրիկա, չէ՞ որ մարդ է։ Ինչպե՞ս չպաշտպանել մի մարդու, երբ գիտես, որ նա չարիքների կեսը գործում է կոպտության և անգիտության պատճառով։ Չէ՞ որ մենք ամեն քայլափոխում անարդարություններ ենք գործում, նույնիսկ ոչ վատ մտադրությամբ և ամեն րոպե ուրիշների դժբախտության պատճառ ենք դառնում։ Չէ՞ որ ձերդ պայծառափայլությունը նույնպես մեծ անարդարություն է ցույց տվել։

— Ինչպե՞ս,— բացականչեց զարմացած իշխանը, միանգամայն ապշելով, որ Մուրազովը նման անսպասելի ընթացք ընդունեց։

Մուրազովը կանգ առավ, մի փոքր լռեց, կարծես ինչ-որ բանի մասին խորհրդածելով և վերջապես ասաց. «Թեկուզ վերցնենք Դերպեննիկովի գործը»։

— Աֆանասի Վասիլևիչ, դա հանցագործություն է պետության հիմնական օրենքների դեմ, որը հավասար է դավաճանության իր երկրի նկատմամբ։

— Ես նրան չեմ արդարացնում։ Բայց արդյոք արդարա-

ցի՞ է, երբ մի պատանի, որն իր անփորձության հետևանքով գայթակղեցվել և հրապուրվել է ուրիշների կողմից, դատապարտվում է այնպես, ինչպես, ասենք, դրդողներից մեկը։ Չէ՞ որ հավասար վիճակի են արժանացել թե՛ Դրեպեննիվովը և թե՛ ինչ-որ Վորոնոյ-Դրյաննոյ, բայց չէ՞ որ նրանց հանցագործությունները հավասար չեն։

— Ի սեր աստծո...— ասաց Նկատելի հուզմունքով իշխանը,— եթե դուք որևէ բան գիտեք այդ մասին, ասացե՛ք։ Ես հենց վերջերս նամակ եմ ուղարկել Պետերբուրգ և միջնորդել եմ նրա վիճակը թեթևացնելու մասին։

— Ո՛չ, ձերդ պայծառափայլություն, ես այն մասին չեմ խոսում, թե ես որևէ այնպիսի բան գիտեմ, որ ձեզ հայտնի չէ։ Թեև իսկապես այնպիսի մի հանգամանք կա, որը կարող էր նրա օգտին ծառայել, բայց նա ինքը չէր համաձայնվի, որովհետև դրանից կտուժեր մի ուրիշը։ Սակայն ես մտածում եմ միայն այն մասին, թե արդյոք դուք այն ժամանակ չե՞ք հաճել շատ շտապելու։ Ներեցեք, ձերդ պայծառափայլություն, ես դատում եմ իմ թույլ խելքով։ Դուք մի քանի անգամ ինձ հրամայել եք անկեղծորեն խոսել։ Երբ դեռ ես պետ էի, ինձ մոտ շատ ամեն տեսակ աշխատողներ կային՝ թե՛ լավ և թե՛ վատ։ (Պետք էր նաև հաշվի առնել) մարդու նախկին կյանքը, որովհետև եթե ամեն ինչ սառնարյուն կերպով քննության չառնես, այլ հենց իսկույն գոռգոռաս, նրան միայն կահարեկես և իսկական խոստովանության էլ չես հասնի, իսկ երբ նրան կարեկցաբար հարցուփորձ անես եղբոր նման, նա ինքը ամեն ինչ կհայտնի և նույնիսկ ներում էլ չի խնդրի։ Դրանով ո՛չ ոք ո՛չ ոքի դեմ չի գազազի, որովհետև պարզ կտեսնի, որ ես չեմ նրան պատժում, այլ օրենքը։

Իշխանը մտածմունքի մեջ ընկավ։ Այդ միջոցին ներս մտավ պորտֆելը ձեռքին մի երիտասարդ աստիճանավոր և հարգանքով կանգ առավ։ Նրա դեռ երիտասարդ, թարմ դեմքին նկատելի էր մտահոգություն, հոգնածություն։ Երևում էր՝ իզուր չէ, որ նա ծառայում է հատուկ հանձնարարություններ գծով։ Դա այն քչերից մեկն էր, որը զբաղվում է գործավարությամբ con amore։ Ջտառապելով ո՛չ փառամոլությամբ, ո՛չ շահամոլությամբ, ոչ էլ մյուսներին նմանվելու ցանկությամբ, նա աշխատում էր այն պատճառով, որ համոզված էր,

Քե ինքը պետք է այստեղ լինի և ո՛չ մի այլ տեղ, Քե կյանքը իրեն դրա համար է տրված։ Նրա պարտքն էր հետևել, վերլուծել ամենաթաճված գործը և բոլոր թելերը որսալուց հետո պարզաբանել այն։ Նրա Քե՛ աշխատանքները, Քե՛ ջանքերը և Քե՛ անքուն գիշերները առատորեն վարձատրվում էին, եթե գործը, վերջապես, սկսում էր նրա համար պարզվել, գաղտնի պատճառները սկսում էին հայտնի դառնալ և նա զգում էր, որ կարող է այդ ամբողջ գործը մի քանի խոսքով պարզ ու հստակ հաղորդել այնպես, որ ամենքի համար ակներև ու հասկանալի լինի։ Կարելի է ասել, որ աշակերտն անգամ այնքան չէր ուրախանում, երբ նրա առաջ բացվում էր որևէ դժվարագույն նախադասություն և դրսևորվում մեծ գրողի մտքեր, որքան այդ պաշտոնյան էր ուրախանում, երբ նրա առաջ բացվում էր ամենաթաճված գործը։ Դրա փոխարեն...[1]

— [2]...հաց այն վայրերում, որտեղ սով է տիրում։ Այդ բանը ես աստիճանավորներից ավելի լավ գիտեմ, կքննարկեմ անձամբ, Քե ո՛ւմ ի՛նչ է հարկավոր։ Իսկ եթե Քույլ տաք, ձերդ պայծառափայլություն, ես կխոսեմ նաև աղանդավորների հետ։ Նրանք մեզ նմանների, հասարակ մարդկանց հետ ավելի սիրով են զրուցում։ Այնպես, որ ասված գիտեմ, գուցե օգնեմ գործը նրանց հետ խաղաղությամբ հարթելուն։ Իսկ աստիճանավորները գլուխ չեն հանի։ Այդ մասին դարձյալ գրագրություն կսկսվի, իսկ նրանք արդեն այնպես են թղթերի մեջ խճճվել, որ այդ պատճառով գործին չեն կարող վերահասու լինել։ Իսկ փողը ես ձեզանից չեմ վերցնի, որովհետև, ասված վկա, այսպիսի ժամանակ, երբ մարդիկ սովից մեռնում են, իր շահի մասին մտածելը ամոթ է։ Ես ունեմ պատրաստի հացահատիկի պաշար. ես այժմ էլ ուղարկել եմ Սիբիր և եկող ամառ էլ նոր հացահատիկ կտանեն։

— Ձեզ կարող է միայն աստված վարձատրել այդպիսի ծառայության համար, Աֆանասի Վասիլևիչ։ Իսկ ես ձեզ ո՛չ մի խոսք չեմ ասի, որովհետև դուք ինքներդ կարող եք զգալ, որ այստեղ ամեն մի խոսք անզոր է։ Բայց Քույլ տվեք ինձ մի բան ասել այն խնդրանքի մասին։ Ինքներդ ասացե՛ք, ես

---

1 Ձեռագրում կա մեծ բացթողում

2 Նախադասության սկիզբը ձեռագրում բացակայում է։

իրավունք ունե՞մ արդյոք այս գործը անուշադիր թողնել և արդյոք իմ կողմից արդարացի, ազնվորե՞ն կլինի սրիկաներին ներելը։

— Ձերդ պայծառափայլություն, աստված վկա, այդպես ասել չի կարելի, մանավանդ, որ [նրանց մեջ] կան շատ արժանավորներ։ Դժվար է մարդու վիճակը, ձերդ պայծառափայլություն, շա՜տ-շա՜տ դժվար։ Երբեմն թվում է, թե մարդը ոտից գլուխ մեղավոր է, իսկ երբ մտնում ես դրության մեջ, տեսնում ես, որ մեղավորը իսկի նա չէ։

— Բայց ի՞նչ կասեն հենց իրենք, եթե ձեռ քաշեմ։ Չէ՞ որ նրանցից կան այնպիսիները, որոնք հետո իրենց քիթը է՛լ ավելի վեր կցցեն և նույնիսկ կասեն, թե իրենք վախեցրին։ Նրանք հենց առաջինը չեն հարգի...

— Ձերդ պայծառափայլություն, թույլ տվեք ձեզ հայտնել իմ կարծիքը. նրանց բոլորին հավաքեցեք, նրանց հասկացրեք, որ ձեզ ամեն ինչ հայտնի է և նրանց ներկայացրեք ձեր սեփական վիճակը ճիշտ այն ձևով, ինչպես դուք ինքներդ այժմ հաճեցիք իմ առաջ նկարագրել, ապա խորհուրդ հարցրեք, թե նրանցից յուրաքանչյուրն ի՞նչ կաներ, եթե ձեր տեղը լիներ։

— Դուք կարծում եք, թե նրանց մատչելի կլինեն ազնիվ ձգտումները և ո՞չ թե խարդախությունն ու կուտակելու ձգտումը։ Հավատացե՛ք, որ նրանք ինձ վրա կծիծաղեն։

— Ձեմ կարծում, ձերդ պայծառափայլություն։ Ռուս մարդու զգացմունքն արդարացի է, նույնիսկ ա՛յն մարդունը, որը մյուսներից ավելի վատ է։ Գուցե մի չհուդ և ո՛չ թե ռուս... Ո՛չ, ձերդ պայծառափայլություն, դուք չպետք է թաքցնեք։ Ասացեք ճիշտ այն, ինչ [իմ] առաջ հաճեցիք ասել։ Չէ՞ որ նրանք ձեզ նախատում են, որպես փառամոլ, հպարտ մարդու, որը ոչինչ լսել անգամ չի ուզում, իր նկատմամբ վստահ է, թող տեսնեն ամեն ինչ, ինչպես որ կա։ Ձեզ ի՞նչ. չէ՞ որ ձեր գործն արդար է։ Նրանց հետ խոսեցեք այնպես, կարծես ո՛չ թե նրանց, այլ հենց աստծու առաջ լինեիք դուք խոստովանելիս։

— Աֆանասի Իվանովիչ,— ասաց մտածմունքի մեջ ընկած իշխանը,— ես այդ մասին կխորհեմ, իսկ առայժմ շատ շնորհակալ եմ ձեզանից ձեր խորհրդի համար։

— Իսկ Չիչիկովին, ձերդ պայծառափայլություն, հրամայեցեք բաց թողնել։

— Ասացե՛ք այդ Չիչիկովին, որ նա այստեղից կորչի գնա, որքան կարելի է շո՛ւտ և որքան հեռուն, այնքան լավ։ Նրան արդեն ես երբեք չէի ների։

Մուրազովը գլուխ տվեց և իշխանի մոտից ուղղակի գնաց Չիչիկովի մոտ։ Նա Չիչիկովին գտավ լավ տրամադրության մեջ, նա հանգիստ կերպով զբաղված էր բավականաչափ առատ ճաշով, որ նրա համար բերվել էր հախճապակե ամաններով ինչ-որ կանոնավոր ճաշարանից։ Առաջին իսկ խոսքերից ծերունին իսկույն նկատեց, որ Չիչիկովն արդեն խոսել է գործ խճճող աստիճանավորներից ոմանց հետ։ Նա նույնիսկ հասկացավ, որ այս գործին խառն է մի լավատեղյակ իրավախորհրդատուի անտեսանելի միջամտությունը։

— Լսեցե՛ք, Պավել Իվանովիչ,— ասաց նա, —ես ձեզ ազատություն եմ բերել, պայմանով, որ դուք իսկույն քաղաքից հեռանաք։ Հավաքեցե՛ք ձեր բոլոր ունեցած-չունեցածը և, աստված ձեզ հետ, այլևս ո՛չ մի րոպե մի հապաղեք, որովհետև գործն ավելի վատթարացել է։ Ես գիտեմ՝ ձեզ այստեղ մեկը լարում է։ Բայց ես ձեզ գաղտնի հայտնում եմ, որ մի այնպիսի գործ է բացվում, որ արդեն ո՛չ մի ուժ չի կարող փրկել։ Նա, իհարկե, ուրախ է ուրիշներին կործանելու, որ իրեն տխուր չլինի, բայց գործի լուծումը մոտենում է։ Ես ձեզ թողեցի լավ տրամադրության մեջ, ավելի լավ, քան այժմ։ Առանց կատակի ձեզ խորհուրդ եմ տալիս։ Իրավ եմ ասում, որ հարցը այդ գույքի մեջ չէ, որի համար մարդիկ վիճում և իրար մորթում են, կարծես թե այս կյանքում կարելի է բարեկեցություն ստեղծել առանց մյուս կյանքի մասին մտածելու։ Հավատացե՛ք, Պավել Իվանովիչ, որ մինչև մի կողմ չնետվի ամեն ինչ, որի համար այս աշխարհում միմյանց կրծում և ուտում են և չմտածեն հոգեկան գույքի բարեկարգման մասին, չի բարեկարգվի նաև երկրային գույքը։ Կգան սովի և աղքատության ժամանակներ ինչպես ամբողջ ժողովրդի, այնպես էլ անհատ մարդու համար... Դա պա՛րզ է։ Ի՛նչ ուզում եք, ասեք, բայց չէ՞ որ մարմինը հոգուց է կախված։ Մտածեցեք ո՛չ թե մեռած հոգիների մասին, այլ ձեր կենդանի հոգու [մասին] և աստծու օգնությամբ անցեք ա՛յլ

ուղի։ Վաղը ես էլ եմ մեկնում։ Շտապեցե՛ք, թե չէ առանց ինձ գործը վատ կլինի։

Այս ասելով, ծերունին դուրս եկավ։ Չիչիկովը մտածմունքի մեջ ընկավ։ Կյանքի իմաստը դարձյալ կարևոր թվաց։ «Մուրազովը իրավացի է,— ասաց նա,— ժամանակն է՛լ ուղի բռնելու»։ Այս ասելով, նա բանտից դուրս եկավ։ Ժամապահը նրա հետևից քաշ տվեց գղրոցը, մյուսը՝ ներքնակը (?) և սպիտակեղենը։ Սելիֆանը և Պետրուշկան աստված գիտե, թե ինչպե՛ս ուրախացան իրենց տիրոջ ազատվելու առթիվ։

— Դե, սիրելինե՛րս,— ասաց Չիչիկովը, ողորմածաբար դիմելով [նրանց],— պետք է իրերը տեղավորել և մեկնել։

— Ջենք գնա՛նք, Պավել Իվա՛նովիչ,— ասաց Սելիֆանը։— Ճանապարհը, երևի թե, կարգավորվել է, բավական ձյուն է եկել։ Ճիշտ որ, ժամանակն է քաղաքից դուրս գալու։ Այնքան եմ քաղաքից ղզվել, որ իսկի մտիկ տալ չեմ ուզում։

— Գնա՛ կառագործի մոտ և ասա, որ կառքը դնի սահաձողերի վրա,— ասաց Չիչիկովը, իսկ ինքը գնաց քաղաք, բայց ո՛չ [ոքի] մոտ չէր ցանկանում մտնել հրաժեշտի այցելության համար։ Վերջին իրադարձություններից հետո հարմար էլ չէր, մանավանդ, որ իր մասին քաղաքում շատ անբարենպաստ պատմություններ էին տարածվել։ Նա խուսափում էր ամեն տեսակ [հանդիպումներից] և կամացուկ մտավ այն վաճառականի մոտ, որից գնել էր նավարինյան ծխի ու բոցի գույն ունեցող մահուդը, նորից վերցրեց չորս արշին ֆրակի և շալվարի համար և գնաց նույն դերձակի մոտ։ Կրկնակի [գնով] վարպետը որոշեց ջանքերը լարել և ամբողջ գիշերը ձեռքի տակ եղած բոլոր դերձակներին նստեցրեց մոմի լույսի տակ՝ ասեղներով, արդուկներով ու ատամներով աշխատելու, և ֆրակը մյուս օրը պատրաստ էր, թեև մի փոքր ուշ։ Ձիերը բոլորն էլ լծված էին։ Սակայն Չիչիկովը ֆրակը չափեց, տեսավ, որ լավն է, ճիշտ ինչպես առաջինը։ Բայց ավաղ, նա նկատեց, որ գլուխն արդեն ճերմակում է և տխուր ասաց. «Բայց ի՞նչ կարիք կար այնպես սաստիկ վշտանալու։ Իսկ մազերը պոկել՝ և՛ս բոլորովին պետք չէր»։ Դերձակին հատանելիքը վճարելուց հետո, վերջապես, քաղաքից մեկնեց արտասովոր վիճակում։ Դա առաջվա Չիչիկովը չէր։ Դա առաջվա Չիչիկովի ինչ-որ ավերակն էր։ Նրա հոգեկան ներքին վի-

ճակը կարելի էր համեմատել ավերված շենքի հետ, որը քանդվել է, որպեսզի նրանից կառուցվի նորը. իսկ նորը դեռ չէր սկսվել, որովհետև ճարտարապետից դեռ չէր ստացվել որոշիչ պլան և աշխատողները մնացել էին տարակուսած։ Նրանից մի ժամ առաջ մեկնել էր Ծերունի Մուրազովը՝ խոհրդակցելով, Պոտապիչի հետ, իսկ Ջիլիկովի մեկնելուց մի ժամ հետո հրաման արձակվեց, թե իշխանը Պետերբուրգ մեկնելու առթիվ ցանկանում է տեսնել բոլոր աստիճանավորներին մինչև վերջինը։

Գեներալ-նահանգապետի տան մեծ դահլիճում հավաքվել էր քաղաքի աստիճանավորների ամբողջ դասը, սկսած նահանգապետից մինչև տիտուլյար խորհրդատուները, գրասենյակների և գործերի կառավարիչները, խորհրդատուները, ասեսորները, Կիսլոեդովը, Կրասնոնոսովը, Սամոսվիստովը, կաշառք չվերցնողները, վերցնողները, կեղծողները, կիսակեղծողները և բոլորովին չկեղծողները. բոլորը ո՛չ առանց հուզմունքի և անհանգստության սպասում էին գեներալ-նահանգապետի դուրս գալուն։ Իշխանը ներս մտավ ո՛չ մռայլ, ո՛չ պայծառադեմ, նրա հայացքը հաստատակամ էր, ինչպես նաև քայլվածքը։ Հավաքված բոլոր աստիճանավորները խոնարհվեցին, շատերը՝ մինչև գոտին։ Պատասխանելով քեզ ողջույնով, իշխանը սկսեց.

— Մեկնելով Պետերբուրգ, ես պատշաճ համարեցի ձեզ բոլորիդ հետ տեսնվել և նույնիսկ մասամբ բացատրել պատճառը։ Մեզ մոտ սկսվել է մի շատ գայթակղիչ գործ։ Ես կարծում եմ, որ այստեղ ներկա եղողներից շատերը գիտեն, թե ի՛նչ գործի մասին եմ ես խոսում։ Այդ գործի հետևանքով բացվեցին նաև այլ ոչ պակաս անպատիվ գործեր, որոնց մեղսակից են վերջապես նույնիսկ այնպիսի մարդիկ, որոնց ես մինչև այժմ պատվի էի համարում։ Ինձ հայտնի է նաև քաքուն եպատակը՝ ամեն ինչ այնպես խճճել, որպեսզի բոլորովին հնարավոր չլինի այն ձևական կարգով լուծել։ Գիտեմ նաև այն, թե ո՛վ է գլխավոր [զսպանակը] և ո՛ւմ քաքուն...[1] Թեև նա շատ վարպետորեն թաքցրել է իր մասնակցությունը։ Բայց խնդիրն այն է, որ ես այդ մտադիր եմ կատարել ո՛չ թե

1 Կիսատ է մնացել։

ձևական հետաքննությամբ՝ թղթերի միջոցով, այլ շտապ, ռազմական դատարանի միջոցով, ինչպես պատերազմի [ժամանակ] և հույս ունեմ, որ կայսրը ինձ այդ իրավունքը կտա, երբ ես կշարադրեմ այդ ամբողջ գործը։ Այն դեպքում, երբ հնարավորություն չկա գործը կատարել քաղաքացիական կարգով, երբ այրվում են [թղթերով] լի պահարանները և, վերջապես, ավելորդ կողմնակի կեղծ ցուցմունքների և կեղծ մատնությունների միջոցով աշխատում են մթնեցնել առանց այն էլ բավական մութ գործը, ես գտնում եմ, որ ռազմական դատարանը միակ միջոցն է և ցանկանում եմ իմանալ ձեր կարծիքը։

Իշխանը կանգ առավ, կարծես [թե] սպասելով պատասխանի։ Բոլորը կանգնած էին աչքերը հառած գետնին։ Շատերն էլ գունատ էին։

— Ինձ հայտնի է նաև մի այլ գործ, թեև այդ գործի հեղինակները լիովին հավատացած են, թե այն ո՛չ ոքի չի կարող հայտնի լինել։ Այդ գործի վարումը կգնա արդեն ո՛չ թղթերի միջոցով, որովհետև հայցվորը և խնդրատուն կլինեմ արդեն ես ինքս և կներկայացնեմ ականատու ապացույցներ։

Հավաքված աստիճանավորներից ինչ-որ մեկը ցնցվեց, ամենաերկչոտներից մի քանիսը նույնպես շփոթվեցին։

— Ինքնըստինքյան հասկանալի է, որ գլխավոր դրդիչները կզրկվեն աստիճաններից և գույքից, իսկ մյուսները պաշտոնազուրկ կարվեն։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ դրանց թվում կտուժեն նաև շատ անմեղներ։ Ի՞նչ արած։ Գործը չափազանց անաղնիվ է և արդարադատություն է պահանջում։ Թեև ես գիտեմ, որ դա մյուսների համար դաս չի լինի, որովհետև վռնդվածների փոխարեն երևան կգան ուրիշները և հենց նրանք, ովքեր մինչ այդ ազնիվ են եղել, կդառնան անազնիվ և նրանք, ովքեր վստահության արժանացած կլինեն, կխաբեն, և կծախեն. չնայած այդ բոլորին, ես պետք է դաժանորեն վարվեմ, որովհետև արդարադատությունն այդ է պահանջում։ Գիտեմ, որ ինձ կմեղադրեն խիստ դաժանության համար։ Այսպիսով, ես պիտի դառնամ միայն արդարադատության անզգա գործիք, մի կացին, որը պետք է բնկնի [մեղավորների] գլխին։

Բոլորի դեմքով ակամա սարսուռ անցավ։

Իշխանը հանգիստ էր։ Նրա դեմքը չէր արտահայտում ո՛չ ցայրույթ, ո՛չ էլ հոգեկան վրդովմունք։

— Այժմ հենց նա, որի ձեռքումն է շատերի բախտը և որին ոչ մի խնդրանք ի վիճակի չէր թախանձել, հենց նա այժմ [ընկնում է] ձեր ոտքերը, ձեզ բոլորիդ խնդրում է։ Ամեն ինչ կմոռացվի, կհարթվի, կներվի, ես ինքս բոլորիդ համար կբարեխոսեմ, եթե կատարեք իմ խնդրանքը։ Ահա իմ խնդրանքը։ Գիտեմ, որ ո՛չ մի միջոցով, ո՛չ մի երկյուղով, ո՛չ մի պատժով չի կարելի անարդարությունը արմատախիլ անել. այն արդեն շատ խորն է արմատացել։ Կաշառք վերցնելու անազնիվ գործը դարձել է անհրաժեշտություն և պահանջ, նույնիսկ այնպիսի մարդկանց համար, որոնք չեն էլ ծնված անազնիվ լինելու համար։ Գիտեմ, որ արդեն շատերի համար գրեթե անհնարին է ընդհանուր հոսանքի դեմ գնալ։ Բայց ես այժմ, այս վճռական և սրբազան րոպեին, երբ պետք է լինում, փրկել հայրենիքը, երբ ամեն մի քաղաքացի բերում է ամեն ինչ և ամեն բան զոհաբերում, ես պետք է կոչ անեմ թեկուզ նրանց, որոնց կրծքում դեռ կա ռուսի սիրտ և որոնց քիչ թե շատ հասկանալի է ազնվություն բառը։ Ի՞նչ խոսենք այստեղ, թե մեզնից ով է ավելի մեղավոր։ Գուցե ես ամենից ավելի եմ մեղավոր, գուցե ես ձեզ շատ խիստ ընդունեցի սկզբում, գուցե ավելորդ կասկածամտությամբ ես վանեցի նրանց, ովքեր անկեղծորեն ցանկանում էին ինձ օգտակար լինել, թեև ես ևս իմ կողմից կարող էի նույնն անել։ Եթե նրանք իրոք սիրում էին իրենց երկրի արդարությունն ու բարիքը, ապա չպետք է ճնշեին իրենց մեջ սեփական պատվասիրությունը և զոհաբերեին իրենց անձը։ Չի՛ կարող պատահել, որ ես չնկատեի նրանց անձնազոհությունը և մեծ սերը դեպի բարին և, վերջապես, նրանցից չընդունեի օգտակար և խելոք խորհուրդներ։ Այնուամենայնիվ, ավելի շուտ ստորադրյալը պետք է հարմարվի պետի բնավորությանը, քան պետը ստորադրյալի բնավորությանը։ Դա, համենայն դեպս, ավելի օրինական է և ավելի հեշտ, որովհետև ստորադրյալներն ունեն մեկ պետ, իսկ պետը հարյուրավոր ստորադրյալներ։ Բայց այժմ մի կողմ թողնենք, թե ո՛վ ո՛ւմից ավելի մեղավոր է։ Խնդիրն այն է, որ մենք պետք է փրկենք մեր երկիրը, որ մեր երկիրն արդեն կործանվում է ո՛չ թե օտարերկրյա քսան ազգերի արշա-

վանքից[1], այլ հենց մեզնից, որ օրինական իշխանությունից բացի արդեն կազմվել է մի այլ իշխանություն, որն ավելի ուժեղ է ամեն տեսակ օրինական իշխանությունից։ Սահմանվել են սեփական պայմաններ, ամեն ինչ գնահատվել է, և նույնիսկ գները հանրահայտ են դարձել։ Ով ո՛չ մի իշխանավոր, թեկուզ և նա իմաստուն լինի բոլոր օրենսդիրներից ու իշխանավորներից, ի վիճակի չէ չարիքը ուղղելու, որքան էլ որ նա սահմանափակի վատ աստիճանավորների գործողությունները, նրանց վրա որպես վերակացու կարգելով ա՛յլ աստիճանավորներ։ Ամեն ինչ անօգուտ կլինի, քանի դեռ մեղանից յուրաքանչյուրը չի զգացել, որ ինքը ճիշտ այնպես, ինչպես ժողովուրդների ապստամբության ժամանակաշրջաններում, զինվել է ընդդեմ...[2] Այդպես պետք է ապստամբի անարդարության դեմ։ Որպես ուս, որպես ձեզ հետ արյունակցական ազգակցությամբ միևնույն արյունով կապված մարդ, ես այժմ դիմում եմ ձեզ։ Ես դիմում եմ ձեզնից նրանց, ովքեր որևէ հասկացողություն ունեն, թե ինչ է մտքերի ազնվությունը։ Ես հրավիրում եմ հիշել այն պարտքը, որ ամենուրեք մարդու առաջ կանգնած է։ Ես կոչ եմ անում ավելի մոտիկից քննել ձեր պարտքը և ձեր երկրային պաշտոնի պարտականությունը, որովհետև այդ արդեն մեզ բոլորիս մութն է պատկերանում, և մենք հազիվ...[3]

1 Այսինքն՝ Նապոլեոնի 1812 թվի արշավանքից։

2 Ձեռագիրը ընդհատվում է։

3 Ձեռագրում բաց է թողնված։

ՏԱՐԱՍ ԲՈՒԼԲԱ

I

«Դե մի շուռ արի, որդի՛ Պա՛հ, տնաշեն, այդ ի՞նչ ծիծաղելին ես... Այդ ի՞նչ տերտերի փարաջա եք հագել՝ ով այդ հագուստո՞վ են բոլորը ճեմարան գնում»։

Այսպիսի խոսքերով դիմավորեց ծերունի Բուլբան իր երկու որդիներին, որոնք սովորում էին Կիևի հոգևոր դպրոցում և արդեն եկել էին տուն՝ իրենց հոր մոտ։

Որդիները հենց նոր էին ձիերից իջել։ Նրանք երկու հաղթանդամ երիտասարդներ էին, որ նորավարտ սեմինարիստների նման դեռևս շեղ էին նայում։ Նրանց առույգ և առողջ երեսներին բուսել էր առաջին ազվամազը, որին դեռ ածելի չէր դիպել։ Հոր այդպիսի ընդունելությունը խիստ շփոթեցրել էր նրանց, և նրանք անշարժ կանգնել էին՝ ալքները գետնին հառած։

«Կացե՛ք, կացեք, ես ձեզ մի լավ մտիկ անեմ,— շարունակեց հայրը, նրանց դես ու դեն շուռ տալով.— Այդ ի՞նչ երկար վերարկու է։ Համա քե վերարկու է հա՛... Այդպիսի վերարկու աշխարհում դեռ չի եղել։ Դե, ձեզանից մեկը քող վազի, տեսնեմ չի՞ խճճվի նրա փեշերի մեջ և չի՞ քրմփա գետին»։

«Մի՛ ծիծաղիր, բատկո, մի՛ ծիծաղիր»,— վերջապես ասաց ավագ որդին։

«Մի սրան տես, ի՞նչ փքվածն է։ Իսկ ինչո՞ւ չպիտի ծիծաղեմ որ...»։

«Այնպես։ Թեև դու իմ բատկոն ես, բայց որ ծիծաղես, աստված վկա, կքակեմ»։

«Այ ես քո էսենց-էսենցը՝ Ո՞նց թե, հո՞րդ,— ասաց Տարաս Բուլբան, զարմանքից մի քանի քայլ ետ քաշվելով՝

«Այո՛, հենց թեկուզ հորս՝ Որ ինձ նեղացնեն, էլ ոչ մեկի խաթրը չեմ պահի»՝

«Է՛յ, ո՞նց ես ուզում ինձ հետ կռվել. բռունցքներով, հա՞»՝

«Ոնց ուզում ես»՝

«Դե արի բռունցքներով...— թևերը քշտելով ասաց Բուլբան— Տեսնենք բռնցքակռվի մեջ ինչ մարդ ես»՝

Եվ հայր ու որդի, երկարատև բացակայումից հետո, փոխանակ իրար ողջունելու, սկսեցին բռունցքներով իրար խփել՝ կողքին, մեջքին, կրծքին, երբեմն նահանջելով ու դիտելով, երբեմն նորից հարձակվելով՝

«Աստված սիրնք, մի սրանց տեսեք՝ Ալևորը ցնդել է, բոլորովին կորցրել է խելքը,— ասաց նրանց գունատ, նիհար և բարի մայրը, որ կանգնել էր դռան շեմքին և դեռ չէր կարողացել գրկել իր աննման զավակներին— Երեխաները եկել են տուն, տարուց ավելի է նրանց չենք տեսել, իսկ ալևորի խելքին ով գիտե ինչ է փչել, և բռնցքակռիվ է անում»՝

«Հա՛, շատ երևելի է կռվում,— ասաց Բուլբան դադարելով՝— Աստված վկա, շատ երևելի,— շարունակեց նա, մի քիչ շակելով իրեն՝— Այնպես որ լավ է իսկի համը չառնես՝ Ընտիր կոզակ է լինելու՝ Դե, բարով ես եկել, որդի, հիմա արի պտշտի աննենք— Եվ հայր ու որդի իրար համբուրեցին— Բարով, շատ բարով, որդիս... Այ, այդպես թակի՛ր, ոնց ոչ ինձ քոթակեցիր՝ Ոչ մեկին ձեռիցդ բաց չթողնես... Համա հագիդ շորերը էլի ծիծաղելի են՝ Այդ ի՞նչ պարան է վրայիցդ կախ՝ Իսկ դու, դմբո՛, ի՞նչ ես ձեռքերդ կախ կանգնել,— ասաց նա, դառնալով կրտսեր որդուն՝— Ի՞նչ է, շան զավակ, դո՞ւ ինձ ինչու չես թակում»...

«Տես ինչ փչեց խելքին,— ասաց մայրը, որ այդ միջոցին դրկել էր կրտսեր որդուն— Որտեղից էլ մտքովն անցավ այդպիսի բան, որ հարազատ տղան հորը ծեծի՝ Ասես հիմա հենց դրա ժամանակն է, մատղաշ երեխան (այդ երեխան քսան տարեկանից ավելի էր և ուղիղ մի սաժեն հասակ ուներ) այդքան ճանապարհ է կտրել, բեզարել է՝ Նրան հիմա հանգստանալ է պետք, մի բան ուտել, իսկ նա ստիպում է կռվել»՝

«Հը՛, դու մորդ փեշի տակ ես մեծացել, ինչպես տեսնում եմ,— ասաց Բուլբան։— Մորդ մի՛ լսի, որդի, կնիկարմատ է։ Նա ոչ մի բան չի հասկանում։ Ի՞նչ գգվանք է ձեզ պետք։ Մի լավ ձի և ազատ դաշտ՝ ահա ձեր գլանքը։ Իսկ տեսնո՞ւմ եք այս թուրը՝ ահա ձեր մայրը։ Ինչ որ լցրել են ձեր գլուխը՝ բոլորն անպետք բաներ են. հեմարանը և այն բոլոր գրքերը՝ քերականներն ու փիլիսոփայությունները, և այդ բոլոր այբ-ժե-ճե-ոան։ Թքել եմ այդ բոլորի վրա։— Այստեղ Բուլբան խոսքի մեջ գցեց այնպիսի մի բառ, որ նույնիսկ չի գործածվում տպագրության մեջ։ «Ա՛յ, ավելի լավ է եկող շաբաթ ես ձեզ ուղարկեմ Զապորոժ։ Այ թե որտեղ է ուսումը և ի՛նչ ուսում։ Այնտեղ է ձեր ուսումնարանը. միայն այնտեղ խելք կսովորեք»։

«Ուրեմն միայն մի շաբաթ ե՞ն նրանք տանը մնալու,— տխուր ասաց նիհար ու պառավ մայրը՝ արտասուքն աչքերին։— Խեղճերը ոչ պիտի կարողանան ղվարճանալ, ոչ իրենց հոր տունը կարգին տեսնել, և ոչ էլ ես պիտի կարոտս առնեմ»։

«Հերիք է կռկռաս, պառավ։ Կոզակը նրա համար չի, որ կնիկարմատի հետ նստի, վեր կենա։ Թող նրանց երկուսին էլ թաքցնեիր փեշիդ տակ և նստեիր նրանց վրա, ինչպես հավի ձվերի վրա։ Գնա՛, գնա և մեզ համար շուտով սեղան պատրաստիր, ինչ որ տանը կճարվի։ Մեզ պետք չի մեղրահաց, գաթա և ուրիշ այդպիսի զիրթ-զիրիլ բաներ։ Բեր մեզ մի ամբողջ ոչխար, այծ բեր և քառասուն տարվա մեղրագինի։ Մեկ էլ արաղ շատ բեր, ոչ թե այն շինովի արաղից, որին խառնում են չամիչ և հազար տեսակ փսոր, այլ մաքուր, փրփուր արաղ, որ կատաղածի նման եռա և պճպճա»։

Բուլբան իր որդիներին տարավ վերնատունը, որտեղից արագ դուրս վազեցին երկու գեղեցիկ աղջիկ-սպասուհիներ՝ ալ կարմիր մանյակներով։ Նրանք հավաքում էին սենյակները և ըստ երևույթին վախեցան պանիչների գալուց, որովհետև այդ երիտասարդների ձեռքից բան չէր պրծնի, և կամ թե կամենում էին պահպանել իրենց կանացի սովորությունը՝ տղամարդ տեսնելուց ճչալ, ահաբեկված դուրս վազել և հետո, սաստիկ ամոթից, երկար ժամանակ ձեռքերով ծածկել դեմքը։ Վերնատունը կահավորված էր այն ժամանակի ճա-

շակով, մի ժամանակ, որի մասին կենդանի ակնարկներ մնացել են միայն ժողովրդական առասպելների և երգերի մեջ, ու այլևս Ուկրաինայում չեն երգում երկարամորուք կույր ծերունիները՝ փանդիռի մեղմ նվագակցությամբ, շրջապատված ժողովրդով. այն ռազմական դժվար ժամանակի ճաշակով, երբ Ուկրաինայում ունիայի համար սկսվել էին ընդհարումներ և պատերազմներ։ Վերնատանն ամեն ինչ մաքուր էր և գունավոր կավով ծեփած։ Պատերից կախված էին թրեր, մտրակներ, թռչունների համար ցանց, ուռկաններ և հրացաններ, եղջյուրից ճարտար սարքած վառոդամաններ, ձիու ոսկե սանձ և բխովներ՝ արծաթյա թիթեղիկներով։ Վերնատան պատուհանները փոքր էին, կլոր և կիսախավար ապակիներով, որոնց նմանն այժմ կարելի է տեսնել միայն հին եկեղեցիներում, մի պատուհան, որի միջով բան տեսնելու համար հարկավոր է բարձրացնել շարժական ապակին։ Դռների և պատուհանների շուրջը կարմիր էին։ Անկյուններում՝ դարակների վրա, շարել էին կժեր, կանաչ և կապույտ ապակուց շշեր և ջրամաններ, արծաթյա գավաթներ, ոսկեզօծ թասեր՝ վենետիկյան, տաճկական և չերքեզական բանվածքի, որ հազար ու մի ճանապարհով Բուլբայի վերնատունն էին ընկել երրորդ և չորրորդ ձեռքերից, մի բան, որ շատ սովորական էր այն խիզախ ժամանակների համար։ Սենյակի չորս պատերի տակ թեղի փայտից նստարաններ էին. հանդիսավոր անկյունում՝ տիրամոր նկարների տակ, դրված էր մի վիթխարի սեղան. ընդարձակ վառարանը՝ ելուններով և փոսերով, պատած էր գույնզգույն և ծաղկավոր հախճասալերով։ Այդ ամենը շատ էր ծանոթ մեր երկու կտրիճներին, որոնք յուրաքանչյուր տարի արձակուրդին տուն էին վերադառնում և վերադառնում էին ոտով, որովհետև նրանք դեռ ձիեր չունեին, նաև այն պատճառով, որ սովորություն չկար դպրոցականներին թույլ տալ ձի քշել։ Նրանք միայն երկար ցցունք ունեին, որից կարող էր բռնել և թափ տալ զենք կրող յուրաքանչյուր կողակ։ Բուլբան նրանց միայն ուսումն ավարտելու ժամանակ իր երամակից ուղարկեց երկու չահել որձաձի։

Իր որդիների գալստյան առթիվ Բուլբան հրամայեց կանչել բոլոր հարյուրապետներին և զորամասի առկա եղած զինվորականներին։ Եվ երբ նրանցից երկու հոգի եկան, նաև

ասաւել Տովկաչ Դմիտրեն՝ Բուլբայի վաղեմի ընկերը, նա իւ-կույն ներկայացրեց նրանց իր որդիներին, ասելով. «Մի տեսեք ի՞նչ կորիճներ են... Շուտով նրանց կուղարկեմ Սեչ»։ Հյուրերը շնորհավորեցին և՛ Բուլբային, և՛ նրա երկու որդիներին, ապա հայտնեցին, որ բարի գործ են անում և որ երիտասարդների համար Զապորոժյան Սեչից ավելի լավ ուսում չկա։

«Դե, պան եղբայրներ, ամեն մեկը թող նստի սեղանի մոտ, որտեղ սիրտն ուզում է։ Հապա, զավակներս, նախ և առաջ արագ խմենք,— այսպես ասաց Բուլբան։— Տեր աստվածդ, փառք քեզ, Ողջ լինեք, զավակներս, դո՛ւ, Օստապ, և դո՛ւ, Անդրի։ Տա աստված, որ կռվի մեջ հաջողակ լինեք, որ ջարդեք անօրեններին, նաև տաճիկներին ջարդեք, ջարդեք և թաթարներին, իսկ եթե լեհերը մեր հավատի դեմ բան սարքեն՝ լեհերին էլ ջարդեք։ Դե, մոտեցրու քո թասը... Հը, լա՛վ արագ է։ Հապա մի ասա, տեսնեմ, լատիներեն ի՞նչ են ասում արագին։ Այդ է, որդիս, որ հիմար են եղել լատինացիք։ Ընրանք չգիտեին էլ, թե աշխարհում արագ կա։ Այն, ինչպե՞ս էր նրա անունը, որը լատիներեն ոտանավորներ է գրել։ Ե՛ւ այնքան էլ վարժ չեմ գրագիտության, ուստի և չգիտեմ։ Հորացիո՞ս էր, ի՞նչ էր»...

«Տեսնո՞ւմ ես բատկային,— մտածեց Օստապը՝ ավագ որդին,— պառավ շունն ամեն ինչ գիտի և դեռ չիմանալու է դնում»։

«Ես կարծում եմ, որ հայր սուրբը ձեզ չէր էլ թողնում արագից հոտ քաշեք,— շարունակեց Բուլբան։— Դե խոստովանեք, տղերք, տեսնեմ՝ ցարասի և բալի կակուղ ճիպոտներով պի՞նդ են ծեծել ձեր մեջքը և այն փափուկ տեղերը, որ ունի կոզակը։ Կամ գուցե, երբ շատ խելացի եք եղել, ձեզ զարկել են նաև մտրակներո՞վ։ Եվ այն էլ ոչ միայն շաբաթ օրերը, այլ նաև չորեքշաբթի և հինգշաբթի՞»։

«Բատկո՛, հարկավոր չի հիշել ինչ որ եղել է,— սառնարյուն ասաց Օստապը.— եղածն անցել է»։

«Դե թող հիմա փորձի,— ասաց Անդրին։— Մեկնումեկը թող հիմա հենց միայն դիպչի։ Թող հիմա որևէ թաթար հանդիպի. նա կիմանա, թե ինչ բան է կոզակի բուրը»։

«Ապրես, որդիս, աստված վկա, ապրես... Դե որ այդպես

է, ես էլ եմ գալիս ձեզ հետ, աստված վկա, գալիս եմ։ Ինչ ունեմ որ այստեղ նստեմ. որպեսզի ես արի՞նչ ցանեմ, տնաբար մա՞րդ լինեմ, ոչխար և խոզ պահեմ և իմ կնկա հետ սիլիբրլի՞ անեմ։ Թող կորչի կնիկը. ես կոզակ եմ, չեմ ուզում։ Ինչ անենք, որ կռիվ չկա։ Ես ձեզ հետ հենց այնպես կգնամ Զապորոժ՝ քեֆ անելու։ Աստված վկա, կգնամ»։ Եվ ծերունի Բուլբան հետզհետե տաքացավ, տաքացավ, վերջը բոլորովին բարկացավ, վեր կացավ սեղանից և խրոխտ կանգնելով, ոտքով դռփեց գետինը։ «Հենց վաղը գնում ենք։ Ինչո՞ւ ուշացնել։ Ինչ թշնամու կարող ենք այստեղ սպասել։ Մեր ինչի՞ն է պետք այս տունը, այս բոլորը, ինչի՞ են պետք այս կճուճները»։ Այդ ասելով, նա սկսեց փշրել և դեն շպրտել կճուճները և ամաններըւ Խեղճ պառավը, որ արդեն վարժվել էր իր ամուսնու այդպիսի արարքներին, տախտի վրա նստած տխուր նայում էր։ Նա չէր համարձակվում մի բան ասել։ Բայց լսելով իր համար սոսկալի վճիռը, պառավը չկարողացավ պահել արտասուքը. նա նայեց իր զավակներին, որոնց այդքան արագ պիտի հրաժեշտ տար. և ոչ ոք չի կարող նկարագրել համր զորությունը մայրական վշտի, որ կարծես դողդողում էր նրա աչքերի մեջ և ջրաձգաբար՝ սեղմած շրթունքների վրա։ Բուլբան սոսկալի համառ էր։ Նա մեկն էր այն բնավորություններից, որոնք կարող էին առաջանալ միայն դաժան XV դարում, Եվրոպայի կեսթափառակյաց անկյունում, երբ ողջ հարավային նախնադարյան Ռուսաստանը, որին լքել էին իր իշխանները, մոնղոլական գիշատիչների անդիմադրելի արշավանքներից ամայացել և խսպառ խանձվել էր, երբ օջախից և օթևանից զրկվելով, մարդն այստեղ դարձավ խիզախ, երբ հրդեհի վայրում նա բնակություն էր հաստատում՝ դեմառդեմ հավիտենական վտանգի և ահեղ հարևանների, և վարժվում էր ուղիղ նայել նրանց աչքերին, հետզհետե անգիտանալով, որ աշխարհում գոյություն ունի երկյուղը, երբ ռազմի բոցերի մեջ ողչակիզվում էր ալավոնական վաղնջական ոգին և առաջանում էր կոզակությունը՝ ռուսական բնավորության լայն և սանձարձակ թափը, և երբ բոլոր գետափերը, գետանցները, առափնյա թեք ու հարմար վայրերը գրավում էին կոզակները, որոնց համարքը ոչ ոք չգիտեր և որոնց հանդուգն ընկերներն իրավունք ունեին պատասխանելու սուլթանին, որն

ուզում էր իմանալ նրանց թիվը. «Ո՛վ գիտե նրանց... մեզա-նում ամբողջ տափաստանի վրա նրանք ցրված-փռված են, որտեղ բայրակ, այնտեղ կոզակ» (որտեղ մի աննշան թումբ կա, այնտեղ արդեն կոզակն է»։ Ճշմարիտ որ այդ ռուսական ուժի արտասովոր երևույթն էր. աղետների հուրը դուրս մղեց այդ ուժը ժողովրդի կրծքից։ Նախկին կալվածքների և մանր քաղաքների փոխարեն, որոնք լցված էին բարակապետներով և շնապահներով, մանր իշխանների, իրար թշնամի և առևտուր անող քաղաքների փոխարեն առաջացան ահեղ գյուղեր, կուրեններ և ամբրույններ, որոնց իրար էր միացրել վտանգը և ատելությունը ոչ քրիստոնյա գիշատիչների հանդեպ։ Արդեն բոլորին հայտնի է պատմությունից, թե ինչպես նրանց հավիտենական պայքարը և անհանգիստ կյանքը Եվրոպան փրկեցին նրան սպառնացող անզուսպ արշավանքներից։ Լեհական թագավորները, որոնք գրավել էին նախկին իշխանների տեղը և նրանց ընդարձակ հողերը, թեև հեռու էին և անզոր, ըմբռնել էին կոզակների նշանակությունը և այդպիսի ռազմական պահակային կյանքի օգուտները։ Նրանք խրախուսում էին կոզակներին և հովանավորում էին այդ դրությունը։ Նրանց հեռավոր իշխանության ներքո հեթմաններ, որոնց ընտրում էին կոզակների միջից, կոզակների բանակատեղին և կուրենները վերակազմում էին կանոնավոր գնդերի և շրջանների։ Դա ի մի հավաքած շարային զորք չէր, և ոչ ոք չէր տեսնում այդ զորքը։ Սակայն պատերազմի և ընդհանուր շարժման ժամանակ, ութ օրվա ընթացքում և ոչ ավելի, յուրաքանչյուրը ներկայանում էր ձիու վրա, զենք ու զրահը կապած, թագավորից ստանալով միայն մի ոսկի, և երկու շաբաթվա ընթացքում գումարվում էր այնպիսի բանակ, որպիսին անհնար էր հավաքել կանոնավոր զորաժողովի միջոցով։ Արշավանքը վերջանում էր, ռազմիկը գնում էր դեպի արոտները և արտերը, դեպի Դնեպրի գետանցները, ձուկ էր որսում, առևտուր էր անում, եռացնում էր գարեջուրը և ոչ վատ կոզակ էր։ Ժամանակակից օտարականներն արդարացի զարմանում էին կոզակի արտասովոր ընդունակությունների վրա։ Արհեստ չկար, որ կոզակը չիմանար. նա կարող էր արաղ քաշել, սայլ սարքել, վառոդ աղալ, հյուսնի և դարբնի գործ անել և այդ ամենից հետո հախուռն զվարճանալ՝ խմել

և քեֆ անել, ինչպես կարող է քեֆ անել միայն ռուս մարդը։ Ռեեստրային կողակներից բացի, որոնք պատերազմի դեպքում պարտավոր էին ներկայանալ, կարելի էր ուզած ժամանակ, մեծ նեղության դեպքում հավաքել նաև սեփական ձիերով կողակների ամբողջ բազմություն. հերիք էր, որ եսաուլներն անցնեին բոլոր գյուղերի և ավաններին շուկաներով ու հրապարակներով և սայլի վրա բարձրանալով բղավեին հուժկու ձայնով. «Հե՜յ, դուք, գարեջուր եփողներ և գարեջրի վարպետներ, հերիք է գարեջուր եռացնեք, թավալ տաք վառարանի կողքին և ձեր գեր մարմնով կերակրեք ճանճերին։ Ելե՛ք, ձեռք բերեք ասպետական փառք ու պատիվ։ Հե՜յ դուք, մաճ բրոնողներ, արինչ ցանողներ, ոչխար պահողներ և կնիկ սիրողներ։ Հերիք է գութանի ետևից գնաք, հողի մեջ կեղտոտեք ձեր դեղին քոշերը, մոտենաք ձեր կանանց և խորտակեք ձեր ասպետական զորությունը։ Ժամանակն է կոզակի փառք վաստակելու»։

Ով այդ խոսքերը նման էին կայծերի, որոնք ընկնում են չոր փայտի վրա։ Վար անողը փշրում էր իր գութանը, գարեջրի վարպետները և գարեջուր եփողները շպրտում էին իրենց տաշտերը և փշրում էին տակառները, արհեստավորը և չարչին սատանայի բաժին էին դարձնում արհեստը և կրպակը, ջարդում էին տան կճուճները, և բոլորը ձիավորվում էին։ Մի խոսքով, ռուսական նկարագիրն այստեղ ստանում էր հզոր ու լայն թափ և զորեղ արտաքին։

Տարասը զորագնդերի հին և հիմնական պետերից մեկն էր։ Նա ստեղծված էր ռազմի տագնապի համար և աչքի էր ընկնում իր շիտակ բնավորությամբ։ Այն ժամանակ արդեն զգացվում էր Լեհաստանի ազդեցությունը ռուս ազնվականության վրա։ Շատերը փոխ էին առել լեհական սովորություններ, մուծել էին շքեղություն, փառահեղ սպասավորներ, բազեներ, բարակապետներ, ճաշկերույթներ և ունեին պալատներ։ Այդ բոլորը Տարասի սրտովը չէր։ Նա սիրում էր կոզակների պարզ կյանքը և խոովել էր իր այն ընկերներից, որոնք հակված էին Վարշավայի կողմը։ Տարասը նրանց անվանում էր լեհական պանների ճորտեր։ Հավիտյան անխոնջ, նա իրեն համարում էր ուղղափառության օրինավոր պաշտպանը։ Նա ինքնագլուխ մտնում էր այն գյուղերը, որտեղ տրտնջում էին վարձակալ-

ների ճնշումներից և յուրաքանչյուր ծխից գանձվող նոր տուրքերի հավելումից։ Իր կոզակների հետ նա ինքը նրանց դատաստան էր անում և կանոն էր սահմանել, որ հետևյալ երեք դեպքում հարկավոր է թուր առնել. երբ կոմիսարները որևէ բանով չէին հարգում ավագներին և նրանց առաջ կանգնում էին գլխարկով, երբ ծաղրուծանակում էին ուղղափառությունը և չէին պաշտում նախնիների սովորությունները և, վերջապես, երբ թշնամիներն անօրեններն էին և տաճիկները, որոնց դեմ նա բոլոր դեպքերում թույլատրելի էր համարում զենք բարձրացնել ի փառս քրիստոնեության։ Այժմ նա կանխավ մխիթարում էր իրեն այն մտքով, թե ինչպես իր երկու որդիների հետ կներկայանա Սեչի մարդկանց և կասի. «Ահա տեսեք, ի՛նչ կորիճներ եմ բերել ձեզ»,— ինչպես որդիներին կներկայացնի պատերազմների բովում կոփված իր բոլոր հին ընկերներին, ինչպես ինքը կդիտի իր որդիների առաջին սրխրագործությունները ռազմական գիտության ասպարեզում, նաև գինարբության, որը նույնպես համարում էր ասպետի գլխավոր առաքինություններից մեկը։ Սկզբում նա կամենում էր նրանց մենակ ուղարկել, սակայն ի տես նրանց աշխուժության, բարձր հասակի և մարմինների հզոր գեղեցկության՝ բռնկվեց նրա ռազմասեր ոգին, և նա մյուս օրը ևեթ վճռեց նրանց հետ գնալ, թեև դրա միակ կարևորությունը՝ նրա համառ կամքն էր։ Նա արդեն գործի էր անցել և կարգադրություններ էր անում, երիտասարդ որդիների համար ընտրում էր ձիեր և ձիասարք, մտնում էր ախոռները և ամբարները, ջոկում էր սպասավորներին, որոնք վաղը նրանց հետ պիտի ճանապարհվեին։ Իր իշխանությունը նա հանձնեց եւսաւլ Տովկաչին և միաժամանակ խստագույն պատվիրեց ամբողջ զորագնդի հետ իսկույն ևեթ ներկայանալ, եթե միայն Սեչից նա որևէ լուր ուղարկի։ Ու թեև կատարը տաք էր, և գլխի մեջ դեռ եռում էր խմածը, այնուամենայնիվ, նա ոչինչ չմոռացավ։ Նույնիսկ հրամայեց ձիերը ջրել և մսուրների մեջ լցնել խոշոր և ամենաընտիր գարին, ու վերադարձավ դադրած իր բոլոր հոգսերից։

«Դե, տղերք, այժմ հարկավոր է քնել, իսկ վաղը՝ բանն աստված։ Մեզ համար անկողին մի՛ փռի։ Մեզ տեղաշոր պետք չի։ Մենք գուբսը կքնենք»։

Դիշերը դեռ նոր էր պատել երկինքը, բայց Բուլբան միշտ վաղ էր պառկում։ Նա մեկնվեց գորգի վրա, վրան քաշեց ոչխարի մորթե մուշտակը, որովհետև գիշերային օդը բավական զով էր և մեկ էլ, Բուլբան երբ տանն էր, սիրում էր տաք փաթաթվել։ Շուտով նա սկսեց խռմփացնել, և ամբողջ տունը հետևեց նրան։ Ինչ որ կար-չկար բակի զանազան անկյուններում՝ բոլորն սկսեցին խռմփացնել ու եղանակել։ Ամենից առաջ քնեց պահապանը, որովհետև պանիշների գալու առթիվ ամենից շատ նա՛ էր խմել։ Միայն խեղճ մայրն էր արթուն։ Նա խոնարհվել էր կողք-կողքի պառկած իր սիրելի զավակների սնարին։ Նա սանրում էր նրանց անփութ խճճված երիտասարդ գանգուրները և թրջում իր արցունքներով։ Նա նայում էր նրանց ամբողջ հոգով, նայում էր իր բոլոր զգացմունքներով, նա ողջ էությամբ դարձել էր միայն տեսողություն և չէր կարողանում նայելուց կշտանալ։ Նա սնուցել էր նրանց իր կաթով, նա մեծացրել և փայփայել էր նրանց,— և ահա միայն մի վայրկյան է տեսնում նրանց իր առաջ։ «Ի՛մ զավակներ, ի՛մ սիրելի զավակներ, ի՞նչ կպատահի ձեզ, ի՞նչ է սպասում ձեզ»,— ասում էր նա, և արտասուքի կաթիլները կանգ էին առնում խորշոմների մեջ, որոնք կերպարանափոխել էին նրա երեսնի չքնաղ դեմքը։ Ճշմարիտ որ խղճալի էր նա, ինչպես այն հախուռն դարի ամեն մի կին։ Նա միայն մի ակնթարթ էր ապրել սիրով, միայն կրքի առաջին բորբոքումը, երիտասարդության առաջին տենդը, և այդ ակնթարթից հետո նրա դաժան հրապուրողը նրան թողել էր թրի համար, ընկերների համար, գինարբուքյան համար։ Նա իր ամուսնուն տեսնում էր տարին երկու-երեք օր, որից հետո մի քանի տարի նրանից լուր չկար։ Իսկ ի՞նչ կյանք էր, երբ նույնիսկ տեսնվում էր նրա հետ, երբ նրանք միասին էին ապրում։ Նա համբերությամբ կրում էր վիրավորանքը, նույնիսկ ծեծը. նա գթվանք էր տեսնում, երբ այդ գթվանքը նրան տրվում էր որպես ողորմություն. նա մի տարօրինակ էակ էր անկին ասպետների բազմության մեջ, որոնց վրա զվարճասեր Զապորոժիեն նետել էր իր դաժան երանգը։ Երիտասարդությունն առանց վայելքի առկայծել էր նրա աչքերի առաջ, և նրա չնաշխարհիկ ու թարմ այտերը և կուրծքը թառամել էին առանց համբույրների և ծածկվել վազահաս խորշոմներով։

Նրա ամբողջ սերը, բոլոր զգացմունքները, այն ամենը, ինչ որ կնոջ մոտ նուրբ է և կրքոտ, այդ ամենը նրա մեջ դարձավ միայն մայրական սեր։ Նա սաստիկ տապով, խանդով և արցունքն աչքերին պտտվում էր իր երեխաների շուրջը, ինչպես տափաստանի ուրուրը։ Նրա զավակներին, նրա սիրելի զավակներին առնում են նրանից, տանում են, որպեսզի երբեք այլևս մայրը նրանց չտեսնի։ Ո՞վ գիտե, գուցե առաջին ճակատամարտում Յաքարը կտրի նրանց գլուխները, և մայրը չպիտի գիտենա, թե որտեղ են նրանց դեն գցած մարմինները, որոնց դժգահարելով կքրքրի ճանապարհի գիշատիչ թռչունը, և որոնց ամեն մի կաթիլ արյան համար մայրը կտար իր ամբողջ կյանքը և իրեն։ Արտասվելով, նա նայում էր նրանց աչքերին, որոնց ամենակարող քունն արդեն սկսել էր փակել, և մտածում էր՝ գուցե թե Բուլբան զարթնի և մի երկու օրով հետաձգի ճանապարհ ընկնելը։ Նա շատ էր խնդրում, գուցե դրանից էր շուտ ճանապարհվելու միտքը։

Երկնի բարձունքից լուսինն արդեն լուսավորել էր քնած մարդկանցով լի ամբողջ բակը, ուռիների խիտ իմբերը և բարձր մոլախոտը, որի մեջ ընկղմվել էր բակը շրջապատող ցանկապատը։ Իսկ մայրը դեռ նստել էր իր սիրելի զավակների գլխավերևը, ոչ մի րոպե աչքը նրանցից չէր հեռացնում և չէր մտածում քնի մասին։ Արդեն ձիերը, ղռալով լուսաբացը, պառկել էին խոտի վրա և այլևս չէին ուտում։ Ուռենու վերի տերևներն սկսեցին աոսափել և տակավ առ տակավ սոսափի հոսանքը ճյուղերի վրայով իջավ մինչև ներքև։ Մինչև լույս նա նստեց, ամենևին չհոգնելով, և ներքուստ կամենում էր, որպեսզի գիշերը տևի որքան կարելի է ավելի։ Դաշտից լսվեց որձաձիու գնգուն վրնջոցը, երկնքի վրա պայծառ փայլեցին կարմրագույն շերտերը։ Բուլբան հանկարծ զարթնեց և վեր թռավ։ Նա շատ լավ հիշում էր այն ամենը, ինչ որ կարգադրել էր երեկ։

«Դե, տղերք, հերիք քնեք... Ժամանակն է, վե՛ր կացեք։ Ձիերը ջրե՛ք։ Իսկ որտեղ է պառավը (նա սովորաբար այդպես էր կոչում կնոջը)։ Դե շուտ արա՛, պառավ, ուտելու բան պատրաստի։ Երկար ճանապարհ ենք գնալու։

Խեղճ պառավը, վերջին հույսը կտրած, տրտում քարշ

եկավ դեպի տուն։ Մինչդեռ նա արտասվելով պատրաստում էր նախաճաշը, Բուլբան արձակում էր իր հրամանները, գոմի ներսը դես ու դեն էր ընկնում և իր որդիների համար ինքն էր ընտրում ամենալավ սարքը։ Բուրսակները միանգամից կերպարանափոխվեցին։ Նախկին կեղտոտ կոշիկների փոխարեն նրանք հագան կարմիր սեկե կոշիկներ՝ արծաթյա պայտերով, շալվարներ՝ Սև ծովի լայնությամբ, հազար ծալքերով ու փոթերով, և ոսկե խոնջանով ձիգ կապեցին։ Խոնջանից կախված էին երկար փոկեր՝ ծոպերով և չիբուխի այլ զանգուլակներով։ Կրակի նման վառ, ալ կարմիր մահուդե կոզակինի վրայից կապեցին ծաղկանկար գոտի. տաճկական քանդակազարդ փշտովները խրեցին գոտու մեջ. կախ ընկած թուրը զրնգում էր՝ դիպչելով ոտքին։ Նրանց դեռ քիչ արևառ դեմքերը, կարծես, ավելի սպիտակեցին և գեղեցկացան. նորածիլ սև բեղերը այժմ, կարծես, ավելի էին ցոլացնում նրանց դեմքերի սպիտակը և երիտասարդության առողջ ու զորեղ գույները։ Նրանք աննման էին՝ ծայրը ոսկի, սև մորթե գդակներով։ Թշվառ մայրը, երբ նրանց տեսավ, մի խոսք անգամ չկարողացավ ասել, և արցունքները սառեցին նրա աչքերում։

«Դե, տղերք, ամեն ինչ պատրաստ է։ Պետք չէ ուշանալ,— ասաց վերջապես Բուլբան։— Այժմ, որպես վայել է քրիստոնյաների սովորության, ճանապարհ ընկնելուց առաջ բոլորը պիտի նստենք»։

Բոլորը նստեցին, ներառյալ և սպասավորները, որոնք դրուների մոտ պատկառանքով կանգնել էին։

«Այժմ, մա՛յր, օրհնիր քո զավակներին,— ասաց Բուլբան։— Աղոթիր աստծուն, որ նրանք քաջի նման կռվեն, միշտ պաշտպանեն ասպետական պատիվը, Քրիստոսի հավատի պահապան լինեն, ապա թե ոչ, լավ է թող իսպառ կորչեն, որպեսզի աշխարհի երեսին նրանց հետքը չմնա։ Երեխաներ, մոտեցեք ձեր մորը։ Մայրական աղոթքը փրկարար է ջրի վրա և ցամաքի վրա»։ Մայրը, անզոր ինչպես մայր, գրկեց նրանց, հանեց տիրամոր երկու պատկեր և հեկեկալով կախեց նրանց վզերից։ «Թող պահապան լինի ձեզ տիրամայրը... իմ զավակներ, չմոռանաք ձեր մորը... Ձեր մասին չուր կուղարկեք...»— և այլևս չկարողացավ խոսել։

«Դե գնանք, տղերք»,— ասաց Բուլբան։

Դուռը սպասում էին թամբած ձիերը։ Բուլբան թռավ իր ձիու՝ Դևի վրա, որ գազազած քեքվեց մի կողմ, իր վրա զգալով քսան փթի ծանրություն, որովհետև Տարասը չափազանց ծանր էր և հաստ։ Երբ մայրը տեսավ, որ իր որդիները ևս նստեցին ձիերը, վրա վազեց դեպի կրտսեր որդին, որի դիմագծերն ավելի ջնքշություն էին արտահայտում։ Նա բռնեց նրա ասպանդակը, կպավ նրա թամբից և հուսահատ աչքերով նրան բաց չէր ձողնում ձեռքից։ Երկու հաղթանդամ կոզակներ նրան զգուշությամբ առան ձեռքերի վրա և տուն տարան։ Բայց երբ նրանք դուրս եկան դարբասից, մայրը,— վայրի այծի քեքևուիյամբ, որ անհամապատասխան էր նրա տարիքին,— դարբասից դուրս վազեց, աներևակայելի ուժով կանգնեցրեց ձին և գրկեց նրանցից մեկին՝ խելացնոր և անզգա ջերմությամբ։ Նրան նորից տուն տարան։ Երիտասարդ կոզակները գնում էին հուզված և զսպելով արցունքը, երկյուղելով հորից, որը նույնպես մի քիչ հուզված էր, թեև ջանում էր ցույց չտալ։ Գորշ օր էր, կանաչը վառ փայլում էր. թռչունները մի տեսակ աննկրդաշնակ էին ճվվողում։ Բավական առաջ գնալուց հետո նրանք ետ նայեցին. իրենց խուտորը կարծես գետնի տակ էր անցել, և գետնի երեսին միայն երեվում էին իրենց համեստ տան երկու ծխանները և ծառերի կատարները, որոնց ճղների վրա նրանք մանուկ օրերին մագլցում էին ակյուռի նման։ Նրանց առաջ փռված էր միայն այն հեռավոր մարգագետինը, որ նրանց հիշեցնում էր իրենց կյանքի ողջ պատմությունը, սկսած այն տարիներից, երբ նրանք գլորվում էին նրա ցողապատ խոտերի վրա, մինչև այն տարիները, երբ այնտեղ սպասում էին սևաչյա կոզակուհուն, որը վախով սլանում էր մարգագետնի վրայով՝ իր կայտառ և արագ ոտքերի օգնությամբ։ Ահա արդեն միայն ձողն է՝ ջրհորի վրա, վերևում՝ սայլի անիվը, որ միայնակ ցցվել է դեպի երկինք։ Այն հարթավայրը, որոնք նրանք անցան, հեռվից երևում է լեռան նման և իր հետևում ծածկում ամեն ինչ։

— Մենք բարով և՛ մանկություն, և՛ խաղեր, և՛ ամեն ինչ, ամեն ինչ...

Երեք ձիավորները գնում էին լուռ ու մունջ։ Սերունի Տարասը մտածում էր անցած-գնացած օրերի մասին. նա վերհիշում էր իր երիտասարդությունը, այն տարիները, այն անցած տարիները, որոնց համար միշտ ողբում է կոզակը, կամենալով, որ իր ամբողջ կյանքը երիտասարդություն լինի։ Նա մտածում էր, թե ինչպես Սեչում պիտի հանդիպի իր վաղեմի ընկերներին։ Նա համրում էր նրանց, որոնք մահացել էին, և նրանց, որոնք դեռ ողջ էին։ Արցունքը հեզիկ ոլորվեց նրա բրի վրա, և նրա ալեհեր գլուխը վհատ կախվեց։

Նրա որդիները զբաղված էին այլ մտքերով։ Բայց հարկավոր է ավելի մանրամասն պատմել որդիների մասին։ Տասներկու տարեկան հասակում նրանց ուղարկել էին Կիևի ճեմարանը, որովհետև այն ժամանակի բոլոր պատվավոր իշխանավորներն անհրաժեշտ էին համարում իրենց երեխաներին կրթության տալ, թեև այդ արվում էր, որպեսզի հետո իսպառ մոռանան այդ կրթությունը։ Նրանք այն ժամանակ, ինչպես բուրսա մտնող բոլոր սանները, վայրենի էին, մեծացել էին ազատ, և միայն այնտեղ նրանք սովորաբար մի քիչ հրդկվում էին և ստանում ինչ-որ ընդհանուր բան, որ բոլորին նմանեցնում էր իրար։ Մեծ որդին՝ Օստապը, իր ասպարեզն սկսեց առաջին տարին դպրոցից փախչելով։ Նրան ետ դարձրին, սաստիկ ծեծեցին և գիրքը ձեռքը տվին։ Նա չորս անգամ իր այբբենարանը հողի մեջ թաղեց, և չորս անգամ էլ անխիղճ կերպով նրան ծեծեցին և գնեցին նոր գիրք։ Բայց անկասկած նա հինգերորդ անգամն էլ կթաղեր գիրքը, եթե հայրը հանդիսավոր խոստում չտար՝ ամբողջ քսան տարի վանքի փոքրավոր պահել և կանխավ երդվել, որ նա հավիտյան չի տեսնի Զապորոժիեն, եթե ճեմարանում չսովորի բոլոր գիտությունները։ Հետաքրքիր է, որ այդ ասել էր նույն Տարաս Բուլբան, որը հայհոյում էր գիտությունը, և ինչպես մենք տեսանք, որդիներին խրատում էր երբեք չզբաղվել գիտությամբ։ Այդ ժամանակից սկսած Օստապն արտասովոր չանասիրությամբ ձեռքն առավ ձանձրալի գիրքը և շուտով լավագույն սանների շարքն անցավ։ Այն ժամանակվա ուսման տեսակը խիստ տարբերվում էր կյանքի եղանակից։ Այդ սխոլաստիկ, քերականական, տրամաբանական և ճարտասանական երբությունը

ներն ամենևին չէին առնչվում ժամանակի հետ, երբեք չէին գործադրվում և կյանքի մեջ չէին կրկնվում։ Որևէ բան պիտանի չէր նրանց՝ թեկուզ առավել նվազ սխոլաստիկ գիտելիքները։ Այն ժամանակվա գիտնականներն իրենք բոլորից ավելի անկիրթ էին, որովհետև խոպան հեռու էին փորձից։ Ընդամին բուրսայի հանրապետական կազմությունը, երիտասարդ, առույգ և առողջ մարդկանց բազմությունը,— այդ ամենը նրանց պիտի ներշնչեր մի գործունեություն, որ բոլորովին դուրս էր նրանց դպրոցական պարապմունքներից։ Երբեմն վատ սնունդը, երբեմն հաճախակի պատիժները սովահարությամբ, երբեմն բազմատեսակ պահանջները, որ ունենում էր առողջ, կայտառ և ամրակազմ պատանին,— այդ ամենը միասին նրանց մեջ ծնում էին այն նախաձեռնությունը, որ հետո զարգանում էր Զապորոժիեում։ Քաղցած բուրսան վխտում էր Կիևի փողոցներում և բոլորին ստիպում էր զգույշ լինել։ Բազարի տևտուր անող կանայք միշտ իրենց ձեռքերով ծածկում էին կարկանդակները, բլիթները և դդումի կորիզները, ինչպես արծիվներն իրենց ձագերին, հենց որ տեսնում էին անցնող բուրսակին։ Դամապետ աշակերտը, որի պարտականությունն էր հսկել իր տեսչության ներքո եղած ընկերների վրա, ուներ այնպիսի սարսափելի գրպաններ, որ կարող էր տեղավորել առուտուր անող բացբերան կնոջ ամբողջ կրպակը։ Բուրսան մի առանձին աշխարհ էր. նրանց արգելված էր լինել լեհ և ռուս ազնվականների բարձր շրջանում։ Ինքը վոևոդը՝ Ադամ Կիսելը, չնայած ճեմարանին ցույց տված իր հովանավորությանը, նրանց չէր մտցնում հասարակության մեջ և հրամայում էր նրանց խստորեն պահել։ Սակայն այդ հրահանգը բոլորովին ավելորդ էր, որովհետև տեսուչը և վանական պրոֆեսորները ճիպոտներ և մտրակ չէին խնայում, և հաճախ նրանց հրամանով լիկտորներն իրենց դասապետներին այնքան անխիղճ էին ծեծում, որ նրանք մի քանի շաբաթ քորում էին շալվարները։ Նրանցից շատերի համար այդ համարյա ոչինչ բան էր և թվում էր մի քիչ ավելի թունդ, քան տաքդեղով արաղը։ Ուրիշներին ի վերջո սաստիկ ձանձրացնում էր այդ անվախճան վերքի սպեղանին, և նրանք փախչում էին Զապորոժիե, եթե կարողանում էին ճանապարհը գտնել, և եթե նրանց ճանապարհին չէին բռնում։ Չնայած

որ Օստապ Բուլբան մեծ ջանասիրությամբ սկսել էր սովորել տրամաբանություն և նույնիսկ աստվածաբանություն, այնուամենայնիվ, ոչ մի կերպ չէր ազատվում անողորմ ճիպոտներից։ Բնական է, որ այդ բոլորը պետք է որևէ կերպ դաժանացներ նրա բնավորությունը և նրան հաղորդեր կարծրություն, որով աչքի էին ընկնում կոզակները։ Օստապը միշտ համարվում էր լավագույն ընկերներից մեկը։ Նա հազվադեպ էր առաջնորդում ուրիշներին հանդուգն ձեռնարկության ժամանակ, երբ հարկավոր էր կողոպտել ուրիշի պարտեզը կամ բանջարանոցը, սակայն նա միշտ մեկն էր առաջիններից, որոնք հավաքվում էին ձեռներեց բուրսակի դրոշակի ներքո, և երբեք, ոչ մի դեպքում չէր մատնի իր ընկերներին։ Ոչ մի ճիպոտ և ոչ մի մտրակ չէին կարող ստիպել նրան այդ անելու։ Նա ժուժկալ էր մյուս դրդումների հանդեպ, բացի պատերազմից և զվարթ խրախճանքից. համենայն դեպս համարյա երբեք ուրիշ բանի մասին չէր մտածում։ Նա պարզասիրտ էր հավասարների հետ։ Նա բարի էր, ինչպիսի բարություն կարող էր ունենալ այդպիսի նկարագրի տեր մարդը և այդպիսի ժամանակ։ Նա ստրանց զգացվել էր խեղճ մոր արտասուքից, և միայն այդ էր նրան հուզում և ստիպում մտազբաղ խոնարհել գլուխը։

Նրա կրտսեր եղբայրը՝ Անդրին, ուներ քիչ ավելի կենսուրախ զգացմունքներ, որոնք ավելի զարգացած էին։ Նա սովորում էր ավելի սիրով և առանց ուժերը լարելու, ինչպես սովորաբար ձեռնամուխ է լինում ծանր և ուժեղ բնավորության տեր մարդը։ Նա ավելի հնարագետ էր, քան եղբայրը. ավելի հաճախ էր հանդիսանում բավական վտանգավոր ձեռնարկության առաջնորդ և երբևմն, իր հնարագետ խելքի օգնությամբ, կարողանում էր պատժից խույս տալ, այնինչ նրա եղբայր Օստապը, մի կողմ թողնելով ամենայն հոգս, հանում էր վերարկուն և պառկում հատակի վրա, ամենևին չմտածելով ներումն խնդրելու մասին։ Նա նույնպես եռում էր քաջագործության ծարավով, բայց և միաժամանակ նրա հոգին մատչելի էր նաև ուրիշ զգացմունքների։ Երբ տասնութ տարին լրացրեց, նրա ներսում սիրո պահանջը բռնկվեց վառ կերպով։ Նրա ջերմ ցնորքների մեջ ավելի հաճախ սկսեց երևալ կինը։ Ունկնդրելով փիլիսոփայական բանավեճերը, նա յուրաքան-

չյուր ակնթարթ տեսնում էր նրան՝ զվարթ, սևաչյա և քնքուշ։ Նրա աչքերի առաջ աղոտ կերպով երևում էին նրա լուսեղեն և առաձիգ կուրծքը, նուրբ և չքնաղ, ամբողջովին մերկ ձեռքը, նույնիսկ զգեստը, որ պիրկ պարփակել էր կնոջ կուսական և առույգ մարմինը,— նույնիսկ այդ զգեստը նրա ցնորքների մեջ շնչում էր անպատմելի տոփանքով։ Նա իր ընկերներից խնամքով թաքցնում էր պատանեկան կրքոտ հոգու այդ շարժումները, որովհետև այն դարում կոզակի համար ամոթ և անպատվություն էր առանց պատերազմ ճաշակելու մտածել կնոջ և սիրո մասին։ Ընդհանրապես վերջին տարիներին Անդրին ավելի հազվադեպ էր առաջնորդում որևէ հրոսախումբ և ավելի հաճախ միայնակ շրջում էր Կիևի որևէ խուլ անկյունում, որ թաղված էր բալի պարտեզների մեջ, չորս կողմը փոքրիկ տնակներ, որոնք հրապուրանքով նայում էին փողոցի կողմը։ Երբեմն նա մտնում էր նաև ազնվականների փողոցը, այժմվա հին Կիևում, որտեղ ապրում էին մալոռուս և լեհ ազնվականներ, որոնց տները կառուցված էին քմահաճ ճաշակով։ Մի անգամ, երբ նա բացթերան նայում էր, համարյա նրա վրայով անցավ ինչ-որ լեհ պանի ծանր կառքը, և զարհուրելի բեղերով կառապանը խարազանով նրան կարգին շրմփացրեց։ Երիտասարդ բուրսակը գազազեց. կատաղի համարձակությամբ նա իր զորեղ ձեռքով բռնեց հետևի անիվից և կառքը կանգնեցրեց։ Բայց կառապանը դատաստանից վախենալով մտրակեց ձիերին, ձիերը ձիգ տվին, և Անդրին, որ բարեբախտաբար, կարողացել էր ձեռքը ետ քաշել, երեսի վրա գետին թրմփաց՝ ուղիղ ցեխի մեջ։ Նա լսեց հնչեղ և ներդաշնակ ծիծաղի ձայն։ Նա աչքերը բարձրացրեց և տեսավ պատուհանի մոտ կանգնած մի գեղեցկուհու, որի նմանը դեռ երբեք չէր տեսել՝ սևաչյա և սպիտակ, ինչպես ձյունը, որ վառվում է արևի վաղորդյան կարմրից։ Աղջիկը ծիծաղում էր ի բոլոր սրտե, և այդ ծիծաղը նրա շլացուցիչ գեղեցկությանը պարգևում էր փայլատակող ուժ։ Անդրին շշմեց։ Նա իրեն բոլորովին կորցրած նայում էր այդ կնոջը, մտամոլոր սրբելով երեսի ցեխը, որով ավելի կեղտոտվեց։ Ո՞վ էր այդ գեղեցկուհին։ Նա կամեցավ իմանալ սպասավորներից, որոնք չքեղ հագնված խմբով կանգնել էին դարբասի հետևը և շրջապատել էին փանդիռ նվագող մի երիտասարդի։ Սակայն սպասա-

վորները բարձր ծիծաղեցին, տեսնելով նրա ցեխոտ մուրը, և նրան պատասխանի չարժանացրին։ Վերջապես տեղեկացավ, որ այդ գեղեցկուհին կովնոյի՝ ժամանակավորապես կիև եկած վոևոդի աղջիկն է։ Հենց հաջորդ գիշերը, միայն բուրսակներին հատուկ խիզախությամբ, նա ցանկապատի արանքով ներս մտավ այգին, բարձրացավ ծառի վրա, որի ճյուղերը տարածվել էին մինչև տան կտուրը. ծառից իջավ կտուրը և բուխարու ծխնելույզի միջով ուղիղ ներս մտավ գեղեցկուհու ննջարանը, որի տիրուհին այդ ժամանակ նստել էր ճրագի առաջ և ականջներից հանում էր հարուստ գինդերը։ Ջքնաղ լեհուհին, երբ հանկարծ իր առջև տեսավ մի անծանոթ մարդու, այնպես վախեցավ, որ չկարողացավ մի բառ արտասանել. բայց երբ նկատեց, որ բուրսակը կանգնել էր՝ աչքերը խոնարհած և ամոթխածությունից չէր համարձակվում ձեռքը շարժել, երբ ճանաչեց այն երիտասարդին, որն իր աչքի առաջ, փողոցում թրմփաց, աղջկա ծիծաղը նորից բռնեց, մանավանդ որ Անդրիի դիմագծերի մեջ սարսափելի ոչինչ չկար, և նա շատ սիրունատես տղա էր։ Գեղեցկուհին ի սրտե ծիծաղում էր և երկար ժամանակ նրանով զվարճանում։ Նա թեթևսոլիկ էր, ինչպես լեհուհի, բայց նրա աչքերը, նրա հրաշալի աչքերը, խորունկ ու պարզ, նետում էին խոր հայացք, ինչպես հավատարմություն։ Բուրսակի ձեռքերը կարկամել էին, և նա մեխվել էր տեղում, երբ վոևոդի աղջիկը համարձակ մոտեցավ նրան և նրա գլխին հագցրեց իր շողշողուն ապարոշը, նրա շրթունքներից կախեց իր գինդերը և վրան գցեց ոսկեկար դրասանգներով զարդարուն մարմաշե թափանցիկ շեմիզետը։ Նա զարդարում էր բուրսակին և նրա հետ խաղում էր հազար ու մի խաղ, խաղում էր մանկան ազատ համարձակությամբ, որ հատուկ է թեթևամիտ լեհացի կանանց, և այդպիսով խեղճ բուրսակին գցում էր ավելի մեծ շփոթության մեջ։ Անդրին ներկայացնում էր ծիծաղելի կերպարանք և բերանը բաց, անշարժ նայում էր աղջկա շլացնող աչքերին։ Այդ ժամանակ դռան մոտ լսվող քրխկոցը վախեցրեց աղջկան։ Նա բուրսակին պատվիրեց թաքնվել մահճակալի տակ և, երբ տատնապած անցավ, կանչեց իր նաժիշտին, որը գերի թաթարուհի էր, և նրան հրամայեց բուրսակին զգուշությամբ անցկացնել այգի և այնտե-

ղից ուղի դնել ցանկապատի վրայով։ Բայց այս անգամ մեր բուրսակն այնպիսի հաջողությամբ չանցավ ցանկապատը, զարթնած պահակը բավական հարվածեց նրա ոտքերին, իսկ աղմուկի վրա հավաքված սպասավորները նրան թակեցին, այս անգամ փողոցում, մինչև նրա արագավազ ոտքերը կփըրկեին տիրոջը։ Այդ օրից հետո շատ վտանգավոր էր անցնել նրա տան մոտով, որովհետև վոևոդի սպասավորները բազմաթիվ էին։ Անդրին նրան մի անգամ էլ հանդիպեց կաթոլիկների եկեղեցում. աղջիկը նրան տեսավ և շատ սիրալիր ժպտաց՝ իբրև հին ծանոթի. նա մի անգամ էլ թեթևակի տեսավ նրան, և դրանից հետո Կովնոյի վոևոդը շուտով հեռացավ, և սևաչյա չնաշխարհիկ լեհ աղջկա փոխարեն պատուհանից նայում էր ինչ-որ մեկի հաստ դեմքը։ Ահա թե Անդրին ինչի մասին էր մտածում, գլուխը խոնարհած և աչքերը հառած ձիու բաշին։

Այնինչ տափաստանը նրանց բոլորին վաղուց էր ընդունել իր կանաչ գիրկը, և բարձր խոտը նրանց շրջապատել ու ծածկել էր, ու միայն կոզակների սև գլխարկներն էին երևում նրա հասկերի միջև։

«Է-հե՜-հե՜յ, ի՞նչ եք այդպես սուս արել,— ասաց վերջապես Բուլբան, սթափվելով իր մտածմունքներից։— Ասես թե սևագլուխներ եք։ Դե՛, դե, բոլոր մտքերը սատանային տվեք։ Առեք չիբուխներդ, քաշենք, հետո ձիերն ասպանդակենք և այնպես թուչենք, որ թուչունն իր թևով չհասնի մեզ»։

Եվ կոզակները, առաջ կռանալով ձիերի մեջքին, խոտերի մեջ կորան։ Այլևս չէին երևում սև գլխարկները. միայն տրորված խոտի բարակ երիզն էր ցույց տալիս նրանց արագաթռիչք վազքի հետքը։

Արևը վաղուց էր դուրս եկել անամպ երկնքի վրա և իր կենարար ջերմ լույսով ողողել տափաստանը։ Այն ամենը, ինչ որ կոզակների սրտում ազատ էր և թմրած, մի ակնթարթում ցնդեց. նրանց սրտերը թպրտացին թռչունների նման։

Տափաստանը քանի գնում, այնքան գեղեցկանում էր։ Այն ժամանակ ամբողջ հարավը, որ կազմում էր այժմյան Նովոռուսիան, մինչև Սև ծովը կանաչ և կուսական անապատ էր։ Երբեք գութան չէր անցել վայրի բույսերի անսահման ալիքների վրայով։ Միայն ձիերն էին, որոնք պահվում էին խոտե-

րի մեջ, ինչպես անտառում, ձիերն էին տրորում խոտը։ Բնության մեջ տափաստանից ավելի գեղեցիկ բան չկա։ Գետնի ամբողջ մակերեսը նման էր կանաչ-ոսկեգույն օվկիանոսի, որի վրա շաղ էին եկել բյուրավոր գույնզգույն ծաղիկներ։ Խոտերի բարակ ու բարձր ցողունների արանքից երևում էին կապույտ, երկնագույն և կարմրակապույտ տերեփուկները, դեղ՛ն մոշենին բարձր ցցել էր իր բրգաձև կատարը։ Սպիտակ ոչխարախոտի հովանոցաձև գդակները խայտաբղետ երևում էին, և ո՜վ գիտե որտեղից եկած ցորենը խոտերի խորքում լցնում էր իր հասկը։ Նրանց նուրբ արմատների մոտ սորում էին կաքավները, մեկնելով իրենց վիզը։ Օդը լցված էր հազար-հազար թռչունների ծլվլոցով։ Բազեները, քևերը փռած և աչքերը խոտերին սևեռած, անշարժ կանգնել էին երկնքի տակ։ Մի անհայտ կողմից վայրի սագերի երամի կռնչոցն արձագանք էր տալիս ո՜վ գիտե որ հեռավոր լճի մեջ։ Քևերը համաչափ շարժելով՝ խոտերի միջից բարձրանում էր ուտուրը և շքեղությամբ լողում օդի կապույտ ալիքների մեջ։ Ահա նա կորավ բարձունքներում և միայն հազիվ երևում է, որպես մի սև կետ։ Ահա շուռ տվեց քևերը և արևի դիմաց շողշողաց։ Գրողը ձեզ տանի, տափաստաններ, ի՜նչ լավն եք դուք... Մեր ուղևորները միայն մի քանի րոպե դադար էին առնում ճաշի համար. նրանց ուղեկցող տասը կոզակների ջոկատն իջնում էր ձիերից, վար առնում փայտե ջրամանները, որոնք լիքն էին արաղով, և ղաբաղները, որ գործ էին ածում ամանների փոխարեն։ Ուտում էին հաց ու ճարպ և թխվածք, խմում էին միայն մի բաս և այն էլ միայն թարմանալու համար, որովհետև Տարաս Բուլբան երբեք չէր թուլլատրում ճանապարհին հարբել, և ուղին շարունակում էին մինչև երեկո։ Ամբողջ տափաստանը երեկոյան իսպառ փոխվում էր։ Նրա խայտաբղետ տարածության վրա փռվում էր արեգակի վերջին ցոլքը, ապա հեռզհետե մթնում էր, այնպես որ նկատելի էր, թե ինչպես է ձգվում ստվերը, և ստվերներն ստանում էին մուգ կանաչ գույն. ավելի թանձր էին բարձրանում գոլորշիները, յուրաքանչյուր ծաղիկ ու խոտ արձակում էր անուշ բուրմունք, և բուրմունք էր ծխում ամբողջ տափաստանը։ Մութ կապույտ երկնքի վրա, կարծես, վիթխարի վրձինով քաշել էին վարդագույն ոսկու լայն շերտեր. մերթ ընդ մերթ

սպիտակին էին տալիս թեթև ու թափանցիկ ամպի քուլաները, և ամենաթարմ ու հրապուրիչ, ինչպես ծովի ալիքները, հովը հազիվ էր օրորում խոտերի կատարները և թեթև հպում այտերին։ Ողջ երաժշտությունը, որ հնչում էր ցերեկը, հանդարտվում ու փոխարինվում էր ուրիշով։ Գորշ առնետները ելնում էին իրենց բներից, կանգնում ետևի թաթիկների վրա և տափաստանը լցնում սուլոցով։ Ավելի էր լսվում ճպուռների ճռռոցը։ Երբեմն մի հեռավոր լճից լսվում էր կարապի ճիչը, որ արծաթահնչուն արձագանքում էր օդի մեջ։ Ուղևորները դաշտերի միջին դադար առնելով, ընտրում էին գիշերելու վայր, խարույկ էին վառում և կրակի վրա դնում կաթսան, որի մեջ եփում էին շիլա։ Կաթսայի գոլոշին ծխում էր օդի մեջ։ Ընթրիքից հետո կոզակները պառկում էին քնելու՝ խոտերի մեջ արձակելով ոտքերը բխված ձիերին։ Նրանք պառկում էին վերարկուների վրա։ Գիշերային աստղերն ուղիղ նրանց էին նայում։ Իրենց ականջով նրանք լսում էին խոտերի մեջ լցված անհամար բզեզների ամբողջ աշխարհը, նրանց ողջ բզզոցը, սուլոցը, ճռռյունը, և այդ ամենը կեսգիշերին հնչեղ արձագանքում էր մաքուր օդի մեջ, զովում և օրորում էր նրանց թմրող լսողությունը։ Իսկ եթե ուղևորներից մեկնումեկը զարթնում էր և առժամանակ վեր կենում, նա տեսնում էր տափաստանը՝ լուսատու որդերի շողշողուն կայծերով լցված։ Երբեմն գիշերային երկինքը զանազան տեղերում լուսավորվում էր բոցով, որ բարձրանում էր մարգագետինների և գետի չոր եղեգնի հրդեհից, և կարապների մութ շարանը, որ թռչում էր դեպի հյուսիս, հանկարծ լուսավորվում էր արծաթավարդագույն լույսով, և այն ժամանակ թվում էր, թե խավար երկնքի տակ թռչում են կարմիր թաշկինակներ։

Ուղևորները գնում էին առանց արկածների։ Ոչ մի տեղ նրանք չէին հանդիպում ծառի. նույն տափաստանն էր՝ անվախճան, ազատ և չքնաղ տափաստանը։ Միայն երբեմն մի կողմի վրա կապույտին էին տալիս կատարները հեռավոր անտառի, որ ձգվում էր Դնեպրի ափերով։ Մի անգամ միայն Տարասը որդիներին ցույց տվեց հեռվի խոտերի մեջ մի սև ու փոքրիկ կետ. ցույց տվեց և ասաց. «Տեսնք, տղերք, հրեն արշավում է թաթարը»։ Փոքրիկ, բեղավոր գլուխը հեռվից ուղիղ նրանց սևեռեց իր նեղլիկ աչքերը, օդը հոտոտեց, ինչ-

պես որսի շուն, և այծյամի նման անհայտացավ, տեսնելով, որ կոզակները տասներեք հոգի էին։ «Դե, տղերք, փորձեք թաթարի հետևից հասնել... լավ է չփորձեք. հավիտյան չեք բռնի։ Նրա ձին իմ Դևից արագ է վազում»։ Բայց և այնպես Բուլբան, երկյուղ կրելով թաքնված դարանից, զգուշացավ։ Նրանք ձիերը քշեցին դեպի մի փոքրիկ գետակ, որ կոչվում էր Թաթարկա և թափվում էր Դնեպրը, ձիերով ընկան ջրի մեջ և երկար ժամանակ լողալով անցան հոսանքի հետ, որպեսզի կորցնեն իրենց հետքը և այն ժամանակ, ափ դուրս գալով, շարունակեցին իրենց ճանապարհը։ Երեք օր անց նրանք արդեն հեռու չէին այն վայրից, որ նրանց ուղևորության կետ-նպատակն էր։ Հանկարծ օդը ցրտեց. նրանք զգացին Դնեպրի մոտ լինելը։ Ահա նա շողաց հեռվում և հորիզոնից անջատվեց իբրև մուգ շերտ։ Նրա սառն ալիքներից փչում էր զովը, նա տարածվում էր ավելի ու ավելի մոտիկ և վերջապես բռնեց երկրի մակերեսի կեսը։ Այդ Դնեպրի այն տեղն էր, ուր գետը, մինչ այդ խութերով սեղմված, վերջապես ազատություն էր ստանում և մռնչում էր ինչպես ծովը, ողողելով ափերը, և ուր գետի մեջտեղը եղած կղզիները նրան ափերից ավելի հեռու էին հրում, և նրա ալիքները լայն ու արձակ փռվում էին գետնի երեսին՝ չհանդիպելով ոչ քարափների և ոչ բարձրություններին։ Կոզակները ձիերից իջան, նստեցին լաստը և երեք ժամ լողալուց հետո հասան Խորտիցա կղզու ափերին, որտեղ Սեչն էր, որ այնքան հաճախ փոփոխում էր իր բնակատեղը։ Ափի մոտ բազմություն աղմկում էր լաստավարների հետ։ Կոզակները ձիերը սարքի բերին։ Տարասը շտկեց իրեն, գոտին ամուր ձգեց և ձեռքով հպարտ սղալեց բեղերը։ Նրա երիտասարդ որդիները ևս, մի տեսակ երկյուղով և անորոշ հրճվանքով իրենց դիտեցին ոտքից գլուխ, և բոլորը միասին մտան արվարձանը, ուր Սեչից կես վերստ վրա էր։ Ներս մտնելու ժամանակ նրանց խլացրին հիսուն դարբնի կռաններ, որոնք զարկում էին գետնի տակ փորած և ճիմով ծածկած քսանհինգ դարբնոցներում։ Փողոցում, սրահների ծածկի տակ, նստել էին հաղթանդամ կաշեգործները և իրենց ծանր ձեռքերով տրորում էին եզան կաշիները։ Տաղավարների տակ նստել էին կրամարները՝ կողքերին վառոդի, հրահանների և կայծքարի կուլաներ։ Հայը կախել էր թանկագին աղլուխները։

Թաթարը շամփուրների վրա խորովում էր ոչխարի մսի գրնդերը՝ խմորով սարքած։ Ջհուդը, գլուխը դուրս ցցած, տակառից արաղ էր քամում։ Բայց առաջին մարդը, որ նրանց հանդիպեց, մի զապորոժցի էր, որը քնել էր հենց ճանապարհի մեջտեղը, ձեռքերն ու ոտքերը մեկնած։ Տարաս Բուլբան չկարողացավ կանգ չառնել և չհիանալ նրանով։

«Է՛, տես ոնց է փռվել... փա՛հ, փա՛հ, ի՛նչ փարթամ մարմին է»,— ասաց նա, պահելով ձին։ Իրոք որ, այդ բավական խիզախ տեսարան էր. զապորոժցին առյուծի նման մեկնվել էր ճանապարհի վրա։ Նրա հպարտությամբ ետ դցած մազերի փունջը կես արշին տեղ էր գրավել։ Նրա լայնմիր և թանկագին մահուդե շալվարը կուպրոտ էր, որով տերը ցույց էր տալիս իր կատարյալ արհամարհանքը դեպի զգեստը։ Նրան զվարճությամբ նայելուց հետո Բուլբան առաջ անցավ մի նեղ փողոցով, որտեղ լիքն էին արհեստավորները, որոնք հենց այդտեղ էլ բանեցնում էին իրենց արհեստը, և ամեն ազգի մարդկանցով, որոնք հավաքվել էին Սեչի այդ արվարձանը, որ նման էր տոնավաճառի և կերակրում ու հագցնում էր Սեչին։ Իսկ Սեչը դիտեր միայն զվարճանալ և հրացան կրակել։

Վերջապես նրանք անցան արվարձանը և տեսան մի քանի ըրված կուռեններ, որոնք ծածկված էին ճիմազ կամ լուտ թաթարական ձևի՝ թաղիքով։ Մի քանիսի կտուրին դրած էին թնդանոթներ։ Ոչ մի տեղ չէր երևում ցանկապատ և կամ այն ցածր տնակներն ու սրահները՝ փայտե փոքրիկ սյունիկների վրա, ինչպիս արվարձանում։ Փոքր թումբը և ճյուղերով շինած պատնեշը, որոնք բոլորովին առանց հակդուքյան էին, ցույց էին տալիս սոսկալի անհոգություն։ Մի քանի հազար թանդամ զապորոժցիներ, որոնք չիրուխն ատամների արանքում, պառկել էին ճանապարհի վրա, բավական անտարբեր նայեցին նրանց և տեղերից չշարժվեցին։ Որդիների հետ Տարասն զգուշությամբ անցավ նրանց միջով և ասաց. «Ողջույն պաներին»։— «Ողջություն և ձեզ»,— պատասխանեցին զապորոժցիները։ Ամբողջ դաշտի վրա ամենուրեք գեղանկար խմբերով երևում էր ժողովուրդը։ Նրանց թուխ դեմքերից հայտնի էր, որ բոլորն էլ կռփվել են պատերազմների մեջ և կրել են բազմատեսակ դառնություններ։ Ահա սա՛ է Սեչը... Ահա այն բույնը, որտեղից դուրս են թռչում այն բոլոր առյուծի նման

հպարտ ու հզոր մարդիկ։ Ահա թե որտեղից է ամբողջ Ուկրաինան հեղեղում ազատությունն ու կոզակությունը։ Ուղևորները մտան մի ընդարձակ հրապարակ, ուր սովորաբար հավաքվում էր ռադան։ Մի մեծ ու շուռ տված տակառի վրա նստել էր զապորոժցին՝ առանց շապիկի. նա շապիկը ձեռքին էր պահել և դանդաղ լցնում էր ծակերը։ Նրանց ճանապարհը նորից կտրեց երաժիշտների մի ամբողջ խումբ, որի մեջտեղը պարում էր մի երիտասարդ զապորոժցի, գդակն ականջի վրա կոտրած և ձեռքերը վեր պարզած։ Նա միայն գոռում էր. «Շախով ածեք, շախով... Ֆոմա, ուղղափառ քրիստոնյաներին արաղ մի՛ խնայի»։ Եվ Ֆոման, որի մի աչքը վիրավոր էր, ամեն մի մոտեցողի անհաշիվ լցնում էր մի վիթխարի գավաթ։ Երիտասարդ զապորոժցու կողքին չորս ծերունիներ պարում էին մանր ցատկումներով, ապա հողմի նման թռչում էին մի կողմի, համարյա երաժիշտների գլխի վրա, և հանկարծ իջնելով, կկզած սլանում էին և իրենց արծաթե պայտերով արագ ու պինդ դոփում խիտ կոխկրտած գետինը... Խուլ թնդում էր գետինը չորս բոլորի վրա և հեռո՜ւ, հեռու արձագանքում էին հոպակները և տրոպակները, որ խփում էին սապոգների զրնգան պայտերով։ Բայց մեկը բոլորից ավելի բարձր էր կանչում և պարի մեջ մյուսներից ավելի բարձր էր թռչում։ Նրա մազերը ծածանվում էին քամուց, հզոր կուրծքն ամբողջովին մերկ էր. նա հագել էր ձմեռային տաք քուրք, և քրտինքը հեղեղի նման թափվում էր նրանից։ «Դե գոնե քուրքը հանիր»,— ասաց վերջապես Տարասը։ «Տեսնում ես, ոնց է վառվում»։— «Ջի՛ կարելի,— բղավեց զապորոժցին։— «Ինչո՞ւ»։— «Ջի՛ կարելի. ես այդպիսի սովորություն ունեմ՝ ինչ որ հանեմ, արաղի կտամ»։ Նրա գլխին վաղուց գդակ չկար, ո՛չ գոտի՝ կաֆտանի վրա, ո՛չ էլ ծաղկանկար թաշկինակ. այդ ամենը գնացել էր, որտեղ պետք էր։ Բազմությունն աճում էր. պարողներին միանում էին ուրիշները, և առանց ներքին հուզման չէր կարելի տեսնել, թե ինչպես ամեն ինչ իրեն է քաշում պարը՝ ամենից ազատ, ամենից կատաղի պարը, որպիսին երբևիցե տեսել է աշխարհը, մի պար, որ իր հզոր հնարողների անունով կոչվում էր կոզակապար։

«Ա՛խ, եթե ձին չլինե՜ր,— աղաղակեց Տարասը.— ճշմա-

բիտ եմ ասում, որ ես էլ կպարեի, կպարեի»։ Իսկ մինչ այդ ժողովրդի մեջ հետզհետե երևում էին նաև իրենց արժանիքների համար Սեչում հարգված ալեզարդ ծերունիներ, որոնք ժամանակին մի քանի անգամ ընտրվել էին ավագ։ Տարասը շուտով հանդիպեց բազմաթիվ ծանոթ դեմքերի։ Օստապը և Անդրին լսում էին միայն ողջույններ. «Այդ դո՞ւ ես, Պիչերիցա... Բարև, Կոզոլուպ...»— «Այդ որտեղի՞ց այդպես, Տարաս»։ «Քեզ ո՞ր քամին բերեց այստեղ, Դոլոտո»։ «Բարև, Կիրդյուգա։ Բարև, Գուստի։ Իսկի մտքովս կանցնե՞ր, որ քեզ կտեսնեմ, Ռեմեն»։

Եվ դյուցազունները, որոնք հավաքվել էին արևելյան Ռուսիայի զվարճասեր աշխարհից, իրար համբուրում էին և իրարից հարցնում. «Իսկ ո՞ւր է Կասյանը, ո՞նց է Բորոդավկան, Կոլոպերը, ի՞նչ է շինում Պիդսիտոկը»։ Եվ Տարաս Բուլբան միայն պատասխան էր առնում, որ Բորոդովկային Տոլոպանում կախել են, որ Կիզիկիրմենի տակ Կոլոպերի կաշին մաշկել են, որ Պիդսիտոկի գլուխն աղել են տակառի մեջ և ուղարկել մինչև Ցարյգրադ։— Գլուխը կախեց ծերունի Բուլբան և մտածկոտ ասաց. «Երևելի կոզակներ էին»։

III

Արդեն մոտ մի շաբաթ էր, որ Տարաս Բուլբան իր որդիների հետ ապրում էր Սեչում։ Օստապը և Անդրին քիչ էին զբաղվում զինվորական կրթությամբ։ Սեչը չէր սիրում զինվորական վարժություններով երկար-բարակ ծանրանալ և ժամանակ կորցնել. այնտեղ երիտասարդները վարժվում և կոփվում էին միայն փորձառությամբ, հենց ռազմի կրակ ու բոցի մեջ, ուստի և կռիվները համարյա անդադար էին։ Իսկ դադարի ընթացքում կոզակները ձանձրալի էին համարում զբաղվել որևէ կարգ ու կանոն ուսանելով, բացի միայն նշան խփելը, երբեմն ձիարշավները և գազանի որսը՝ տափաստաններում և մարգագետիններում։ Մնացած ամբողջ ժամանակը հատկացվում էր քեֆի, որ հատկանիշ է հոգեկան ազատության հզոր թափի։ Ողջ Սեչը ներկայացնում էր մի արտասովոր տեսարան։ Այդ մի տեսակ անվախճան խնջույք էր, մի պարահանդես, որ սկսվել էր աղմուկով և կորցրել էր վախճանը։ Ամանք արհեստով էին զբաղվում, ոմանք կրպակներ

ունեին և առուտուր էին անում. բայց մեծ մասը առավոտից մինչև երեկո քեֆ էր անում, եքե գրպանում գնգում էր հնարավորություն և ձեռք բերած բարիքը դեռ չէր անցել խանութպաններին և արաղ ծախողներին։ Այդ ընդհանուր խընջույքն իր մեջ մի ինչ-որ հմայիչ բան ուներ։ Դա վշտից խմող գինարբուների հավաքույթ չէր, այլ սոսկ ուրախության կատաղի խրախճանք։ Այդտեղ եկողը մոռանում և թողնում էր այն ամենը, ինչ որ նրան զբաղեցնում էր մինչև այդ։ Նա, կարելի է ասել, թքում էր իր անցյալի վրա և անհոգ անձնատուր էր լինում ազատության և ընկերակցության իր նմանների, որոնք բացի ազատ երկնքից և հոգու հավիտենական խրախճանքից, չունեին ո՛չ աղգականներ, ո՛չ անկյուն, ո՛չ ընտանիք։ Այդ էլ առաջացնում էր այն կատաղի ուրախությունը, որ չէր կարող ծնվել ուրիշ որևէ աղբյուրից։ Այն զրույցներն ու շատախոսությունները, որ արվում էին գետնի վրա ծուլորեն հանգստացող բազմության մեջ, հաճախ այնքան ծիծաղաշարժ էին և համով զրույցի զորությամբ լի, որ հարկավոր էր ունենալ զապորոժցու պաղարյուն արտաքինը՝ պահպանելու դեմքի անշարժ արտահայտությունը, չշարժելով նույնիսկ բեղի ծայրը,— մի բնորոշ հատկություն, որով մինչև այժմ հարավի ռուսը տարբերվում է իր մնացած եղբայրներից։ Ուրախությունը հեռրած էր, աղմկոտ; բայց այդ բոլորով հանդերձ ամենևին նման չէր խավար օղետան, որտեղ մարդ իրեն մոռացության է տալիս մոայլ և այլանդակ ուրախությամբ։ Սեղը դպրոցական ընկերների մտերիմ շրջան էր. տարբերությունն այն էր միայն, որ փոխանակ նստելու և զրացույցը ձեռքին՝ լսելու վարժապետի փնթի մեկնություններ, նրանք հինգ հազար նժույգների վրա նստած ասպատակում էին. դաշտի փոխարեն, որտեղ գնդակ են խաղում, նրանք ունեին անհոգ և առանց պահպանության սահմաններ, որոնց ի տես թաթարը ցույց էր տալիս իր ժիր գլուխը, իսկ կանաչ ապարոշով տաճիկը նայում էր անշարժ ու դաժան հայացքով։ Տարբերությունն այն էր, որ բոնի կամքի փոխարեն, որով նրանք միացած էին դպրոցում, նրանք ինքնակամ թողել էին իրենց հայրերին և մայրերին և փախել հայրական տներից. որ այստեղ կային այնպիսիները, որոնց վզին արդեն փաթաթվել էր պարանը, և որոնք գժգույն մահի փոխարեն տեսել

էին կյանքը, և կյանքն իր սանձարձակ զվարճությամբ. որ այստեղ էին նրանք, որոնք ըստ ազնիվ սովորության չէին կարողանում իրենց գրպանի մեջ կոպեկ պահել. որ այստեղ էին նրանք, որոնք մինչ այդ ոսկին հարստություն էին համարում, և որոնց գրպանները, շնորհիվ ջհուդ վարձակալների, կարելի էր շուռ տալ առանց երկյուղի, թե կընկնի մի որևէ բան։ Այստեղ էին բոլոր բուրսակները, որոնք չէին դիմացել ճեմարանի ճիլպոններին և դպրոցից իրենց հետ չէին տարել ոչ մի «այբի» կտոր։ Բայց միաժամանակ այստեղ կային և այնպիսիները, որոնք գիտեին, թե ինչ ասել է Հորացիոս, Կիկերոն և հռոմեական հանրապետություն։ Այստեղ շատ էին այն սպաները, որոնք հետո աչքի էին ընկնում թագավորական զորքերի մեջ։ Այստեղ կային բազմաթիվ մարզված և փարձառու պարտիզաններ, որոնք ազնիվ համոզմունքով մտածում էին, թե միևնույն է որտեղ կռվել, միայն թե կռվել, որովհետև ազնիվ մարդուն անվայել է առանց կռվի մնալ։ Շատ էին և նրանք, որոնք եկել էին Սեչ, որպեսզի հետո ասեն, թե եղել են Սեչում և արդեն քաջամուխասպետներ էին։ Բայց ո՞վ ասես, որ չկար։ Այդ տարօրինակ հանրապետությունը հենց այն դարի պահանջն էր։ Ռազմական կյանքը, ոսկե թասերի, թանկագին կերպասների, դուկատների և ռեալների սիրահարներն ամեն ժամանակ այստեղ կարող էին գործ գտնել։ Միայն կանանց երկրպագուները ոչինչ չէին գտնի այստեղ, որովհետև ոչ մի կին չէր հանդգնի երևալ նույնիսկ Սեչի արվարձանում։

Օստապի և Անդրիի համար տարօրինակ էր, որ նրանց ներկայությամբ ահագին բազմություն էր գալիս Սեչ, և ոչ ոք չէր հարցնում, թե ովքե՞ր են նրանք, ո՞րտեղից են և ի՞նչ է նրանց անունը։ Նրանք գալիս էին այստեղ, կարծես թե վերադառնում էին սեփական տունը, որտեղից միայն մի ժամ առաջ էին դուրս եկել։ Եկողը ներկայանում էր միայն կոշևոյին, որը սովորաբար ասում էր. «Բարով եկար. հավատո՞ւմ ես Քրիստոսին»։— «Հավատում եմ»,— ասում էր եկողը։ «Սուրբ երրորդությա՞ն էլ ես հավատում»։— «Հավատում եմ»։— «Եկեղեցի էլ գնո՞ւմ ես»։— «Գնում եմ»։ «Դե՛, խաչակնքիր»։ Եկողը երեսին խաչակնքում էր։ «Դե՛ լավ»,— պատասխանում էր կոշևոյը. «Գնա, որ կուրենը կուզես»։ Դրա-

նով էլ վերջանում էր ամբողջ ծեսը։ Եվ ողջ Սեչն աղոթում էր մի եկեղեցում և պատրաստ էր այդ եկեղեցին պաշտպանել մինչև արյան վերջին կաթիլը, թեև պապի և ծոմի անունը լսել անգամ չէր ուզում։ Միայն սաստիկ շահամոլությունից դըրդված ջհուդները, հայերը և թաթարներն էին հանդգնում ապրել և առևտուր անել արվարձանում, որովհետև զապորոժցիները երբեք չէին սիրում սակարկել, այլ վճարում էին այնքան, որքան նրանց ձեռքը դըպչանից փող կհաներ։ Ի դեպ, այդ շահամոլ չարչիների վիճակը շատ թշվառ էր։ Նրանք նման էին նրանց, որոնք բնակություն էին հաստատել Վեզուվ լեռան ստորոտում, որովհետև երբ վերջանում էր զապորոժցիների փողը, այն ժամանակ կտրիճները ջարդում էին նրանց խանութները և միշտ վերցնում առանց փողի։ Սեչն ուներ վաթսունից ավելի կուրեն, որոնք շատ նման էին առանձին և անկախ հանրապետությունների, բայց առավել ևս նման էին դպրոցի և բուրսայի, որտեղ երեխաները գիշերօթիկ էին։ Ոչ ոք ոչինչ ձեռք չէր բերում և իր մոտ չէր պահում. ամեն ինչ կուրենի ատամանի մոտ էր, որը դրա համար էլ սովորաբար կոչվում էր բատկո։ Նրա մոտ էին պահվում դրամները, շորերը, ուտելիքը, խավիծը, շիլան և նույնիսկ վառելիքը. նրան էին պահ տալիս դրամը։ Հաճախ կուրենը կուրենի հետ վեճի էր բռնվում. այդ դեպքում բանն իսկույն հասնում էր տուրուդմփոցի։ Կուրենները թափվում էին հրապարակը և բռունցքներով փշրում էին իրար կողերը, մինչև որ մի կողմը չզորեր և չհաղթեր, որից հետո սկսվում էր քեֆը։ Ահա այդպես էր այն Սեչը, որ երիտասարդների համար այնքան շատ հրապույր ուներ։

Օստապը և Անդրին երիտասարդական հախուռն թափով նետվեցին զվարճության այդ ծովը և իսկույն մոռացան հայրական տունը, բուրսան և այն ամենը, ինչ որ առաջ հուզում էր նրանց հոգին, և հանձնվեցին նոր կյանքին։ Ամեն ինչ գրավում էր նրանց՝ Սեչի զվարճասեր բարքերը և պարզ վարչությունն ու օրենքները, որոնք այդպիսի ինքնագլուխ հանրապետության մեջ նրանց թվում էին երբեմն նույնիսկ չափազանց խիստ։ Եթե կոզակը գողություն էր անում, գողանում էր մի չնչին բան, այդ արդեն համարվում էր անարգանք ողջ կոզակության համար. նրան, իբրև խայտառակի, կապում էին

անարգանքի սյունին և նրա կողքին դնում էին մի դագանակ, որով յուրաքանչյուր անցնող պարտավոր էր նրան հարվածել, մինչև որ այդպիսով նա շունչը փչեր։ Պարտքը չվճարողին շղթայով կապում էին մի քնդանոթի, և նա այդտեղ պիտի նստեր այնքան, մինչև նրա ընկերներից որևէ մեկը վճարեր նրա փրկության գինը՝ նրա պարտքը։ Բայց Անդրիի վրա ամենից ավելի տպավորվեց այն սոսկալի պատիժը, որ սահմանված էր սպանության համար։ Նրա ներկայությամբ փոս փորեցին, փոսի մեջ կենդանի իջեցրին սպանողին, նրա վրա դրին դագաղը, որի մեջ նրա ձեռքով սպանվածի դիակն էր, և ապա երկուսին էլ ծածկեցին հողով։ Հետո երկար ժամանակ նրա աչքի առաջ էր մահապատժի սոսկալի ծեսը և դեռ պատկերանում էր ահավոր դագաղի հետ միասին կենդանի թաղված մարդը։

Երկու երիտասարդները շատ շուտով մյուս կոզակների մոտ վաստակեցին լավ համբավ։ Հաճախ կուրենի մյուս ընկերների հետ միասին, իսկ երբեմն և ամբողջ կուրենի ու հարևան կուրենների հետ, նրանք դաշտ էին գնում կրակելու տափաստանի բազմատեսակ և անհամար թռչունների վրա, եղջերուների և վայրի այծերի վրա և կամ թե գնում էին դեպի լճերը, գետերն ու վտակները, որ վիճակով բաժանված էին կուրեններից միջև, նետում էին ուռկանները և ցանցերը, դուրս էին քաշում լիքն ուռկանները՝ ամբողջ կուրենի պարենավորման համար։ Թեև պետք չէր առանձին վարժություն, որով փորձում են կոզակին, բայց նրանք շիտակ խիզախությամբ և ամեն ինչում հաջողությամբ արդեն աչքի էին ընկել մնացած երիտասարդների միջև։ Ժիր ու շեշտակի խփում էին նշանին, հոսանքին հակառակ կտրում էին Դնեպրը, մի գործ, որի համար նորեկը հանդիսավորությամբ ընդունվում էր կոզակների շարքը։ Սակայն ծերունի Տարասը նրանց համար պատրաստում էր գործունեության ուրիշ ասպարեզ։ Նրա սրտովը չէր այդպիսի պարապ կյանքը։ Նա իսկական գործ էր ուզում։ Նա շաբունակ հնարներ էր որոնում Սեչը մղելու մի խիզախ գործի, որպեսզի կարելի լիներ զվարճանալ, ինչպես վայել է ասպետին։ Վերջապես մի օր եկավ կոշևոյի մոտ և նրան կտրուկ ասաց.

«Ի՞նչ ես ասում, կոշևոյ, ժամանակը չէ՞, որ զապորոժցիները զբոսանքի գնան»։

«Զբոսանքի տեղ չկա»,— պատասխանեց կոշևոյը, բերանից հանելով փոքրիկ ծխամորճը և թքելով մի կողմի վրա։

«Ո՞նց թե տեղ չկա... կարելի է գնալ տաճիկների երկիրը կամ Թաթարստանի վրա»։

«Չի կարելի ո՛չ տաճիկների երկիրը և ո՛չ Թաթարստան»,— պատասխանեց կոշևոյը և պաղարյուն նորից բերանն առավ ծխամորճը։

«Ոնց թե չի կարելի»։

«Այնպես։ Մենք սուլթանին հաշտություն ենք խոստացել»։

«Ախր նա անօրեն է. իսկ աստված և սուրբ գիրքը պատվիրում են զարկել անօրեններին»։

«Իրավունք չունենք։ Եթե գոնե չերդվեինք մեր հավատով, գուցե թե կարելի լիներ. իսկ այժմ ո՛չ, չի կարելի»։

«Ո՞նց թե չի կարելի։ Ո՞նց ես դու ասում, թե իրավունք չունենք։ Ես երկու որդի ունեմ, երկուսն էլ ջահել տղամարդիկ են։ Ոչ մեկը և ոչ մյուսը կռվի մեջ չեն եղել, իսկ դու ասում ես իրավունք չունենք. իսկ դու ասում ես զապորոժցիները կռիվ չպիտի անեն»։

«Բայց դե այդպես չի կարելի»։

«Ուրեմն հարկավոր է, որ զուր տեղը կորչի՞ կոզակի ուժը, որ մարդը շան նման սատկի՞, առանց բարի գործի, որպեսզի նրանից որևէ օգուտ չլինի՞ ո՛չ հայրենիքին և ո՛չ էլ համայն քրիստոնեության։ Էլ ինչի՞ համար ենք ապրում մենք, ինչի՞ համար. դու ինձ այդ հասկացրու։ Եթե որ մարդ ես, իզուր չեն քեզ կոշևոյ ընտրել, հասկացրո՛ւ ինձ, թե ինչի՞ համար ենք ապրում»։

Կոշևոյն այդ հարցին չպատասխանեց։ Նա համառ կոզակ էր։ Նա մի քիչ լռեց և հետո ասաց.

«Իսկ կռիվ, այնուամենայնիվ, չի լինելու»։

«Ուրեմն կռիվ չի՞ լինելու»,— նորից հարցրեց Տարասը։

«Չէ՛»։

«Ուրեմն իզո՞ւր է դրա մասին մտածելը»։

«Իզուր է դրա մասին մտածելը»։

«Դե կաց, սատանի եղունգ,— ինքն իրեն ասաց Բուլբան։— Դու դեռ կտեսնես»,— և հենց այդտեղից որոշեց վրեժ առնել կոշևոյից։

Խոսք կապելով սրա-նրա հետ, բոլորին հյուրասիրեց, և հարբած կոզակները մի քանի հոգով թափվեցին հրապարակը, որտեղ այնից կախված էին ծնծղաներ, որոնց զարկելով սովորաբար հավաքում էին խորհրդի։ Ջգտնելով փայտերը, որոնք միշտ դռվբիշի մոտ էին լինում, նրանք մի-մի ձողուն առան և սկսեցին զարկել ծնծղաները։ Զարկերի ձայնին ամենից առաջ մոտ վազեց դռվբիշը, բարձրահասակ մի մարդ, որ ուներ մի աչք և այդ աչքն էլ սոսկալի քնաւ էր։

«Ո՞վ է հադգնում ծնծղա զարկել»,— գոռաց նա։

«Լռի՛ր, վերցրու քո փայտերը և զարկ, երբ քեզ հրամայում են»,— պատասխանեցին հարբած ավազակները։

Դռվբիշն իսկույն գրպանից հանեց փայտերը, որ վերցրել էր իր հետ, քաջ գիտենալով այդպիսի պատահարների վախճանը։ Ծնծղաները որոտացին, և շուտով հրապարակում բոռերի նման սկսեցին հավաքվել զապորոժցիների սև խմբերը։ Բոլորը շրջան կազմեցին և երրորդ զարկից հետո վերջապես երևացին ավազակները. կոշևոյը՝ ձեռքին գավազանը, իր արժանապատվության նշանը, դատավորը՝ զորական կնիքով, գրագիրը՝ թանաքամանով և եաուլը՝ ցուպով։ Կոշևոյը և ավազանին հանեցին գլխարկները և չորս կողմը գլուխ տվին կոզակներին, որոնք խրոխտ կանգնել էին, ձեռքերը կողքերին հենած։

«Ի՞նչ է ասում այս ժողովը, ի՞նչ եք կամենում, պաներ»,— ասաց կոշևոյը։ Հայհոյանքը և աղաղակները նրան չթողին խոսելու։

«Վա՛յր դեր գավազանը, վա՛յր դեր, սատանի ձագ, իսկույն վայր դեր գավազանը»,— բազմության միջից բղավեցին կոզակները։ Ջհարբած կուրեններից մի քանիսը, կարծես, ուզում էին հակառակել. և հարբած ու չհարբած կուրենները բռընցքամարտի ելան։ Աղմուկը և աղաղակը սաստկացավ։

Կոշևոյը ցանկացավ խոսել, բայց զգալով, որ գաղաղած և ինքնահաճ ամբոխը դրա համար կարող է իրեն ծեծելով սպանել, մի բան, որ նման դեպքերում համարյա միշտ տեղի էր ունենում, շատ խոնարհ գլուխ տվեց, վայր դրեց գավազանը և կորավ բազմության մեջ։

«Հրամայո՞ւմ եք, պաներ, որ մենք էլ վայր դնենք մեր արժանապատվության նշանները»,— ասացին դատավորը,

գրագիրը և եսաուլը և պատրաստվեցին հենց այդտեղ էլ վայր դնելու թանաքամանը, զորական կնիքը և ցուպը։

«Ո՛չ, դուք մնացեք,— բղավեցին բազմության միջից.— մեզ հարկավոր էր միայն կոշևոյին վռնդել, որովհետև նա կնիկ է, իսկ մեզ տղամարդ կոշևոյ է պետք»։

«Հիմա ո՞ւմ պետք է կոշևոյ ընտրեք»,— ասացին ավագները։

«Կուկուբենկոյին ընտրել»,— բղավեց մի մասը։

«Կուկուբենկոյին չենք ուզում,— բղավեց մյուս մասը.— դեռ վաղ է. պոշների վրա կաթը դեռ չի չորացել»։

«Թող Շիլոն ատաման դառնա,— բղավեցին մի քանիսը.— Շիլոյին կոշևոյ ընտրել»։

«Մախաթը[1] մեչքդ,— լուտանքներով աղմկեց ամբոխը։— Շան որդին էլ ի՞նչ կոզակ է, որ գողություն է արել, ինչպես թաթարը։ Գրողի ծոցը թող գնա հարբեցող Շիլոն»։

«Մորուքին, Մորուքին դնենք կոշևոյ»։

«Մորուքին չենք ուզում, գրողի բաժին դառնա Մորուքը»։

«Գոռացեք Կիրդյագային»,— փսփսաց Տարաս Բուլբան մի քանիսին։

«Կիրդյագայի՜ն, Կիրդյագայի՜ն,— բղավեց ամբոխը։— Մորուքի՜ն, Կիրդյագայի՜ն, Կիրդյագայի՜ն։ Շիլոյի՜ն... Կորչի՜ Շիլոն։ Կիրդյագայի՜ն»։

Բոլոր թիկնածուները, լսելով իրենց անունները, իսկույն ևեթ դուրս եկան բազմության միջից, որպեսզի որևէ առիթ չտան կարծելու, թե իրենց անձնական մասնակցությամբ նրանք նպաստել են իրենց ընտրությանը։

«Կիրդյագայի՜ն, Կիրդյագայի՜ն,— հնչեց մյուսներից ավելի բարձր.— Մորուքի՜ն»։ Բանը հասավ բռնցքակռվի, և Կիրդյագան հաղթեց։

«Գնացեք Կիրդյագային բերեք»,— բղավեցին։ Բազմության միջից իսկույն դուրս եկան մի տասնյակ կոզակներ. նրանցից մի քանիսը հաղիվ էին կարողանում ոտքերի վրա կանգնել՝ այն աստիճան արդեն հարբել էին, և գնացին ուղիղ Կիրդյագային հայտնելու նրա ընտրության մասին։

---

1 Բնագրում այս նախադասությունը բառախաղ է. շիլո և՛ ապգանուն է, և՛ նշանակում է մախաթ։

Կիրդյագան, որ թեև ծերացած, բայց խելոք կոզակ էր, վաղուց նստել էր իր կուրենում և կարծես թե եղելությունից տեղյակ չէր։

«Ի՞նչ կա, պաներ, ի՞նչ է պետք ձեզ»,— հարցրեց նա։

«Արի՛, քեզ կոշևոյ են ընտրել»։

«Ողորմացեք, պաներ,— ասաց Կիրդյագան.— ես ինչպե՞ս կարող եմ արժանի դառնալ այդ բարձր պատվին, ո՞նց կարող եմ կոշևոյ լինել։ Ես այդքան խելք չունեմ՝ այդպիսի պարտականություն կատարելու։ Ի՞նչ է, ամբողջ զորքի մեջ ավելի լավը չգտա՞ք»։

«Դե գնանք, քեզ ասում են»,— բղավեցին զապորոժցիները։ Նրանցից երկու հոգի մտան նրա թևերի տակ, և ինչքան էլ նա դիմադրում էր ոտքերով, նրան ի վերջո քաշեցին հրապարակ, հայհոյելով, հետևից հրելով բռունցքներով, քացի տալով և իրատելով։ «Մի՛ հակառակի, սատանի փայ, ընդունիր պատիվը, երբ քեզ տալիս են, շո՛ւն»։ Այդ եղանակով Կիրդյագային մտցրին կոզակների շրջանը։

«Է՛յ, պաներ,— ամբողջ բազմության մեջ բացականչեցին նրան ուղեկցող կոզակները։— Համաձա՞յն եք, որ այս կոզակը մեզ կոշևոյ լինի»։

«Բոլորս համաձայն ենք»,— գոռաց ամբոխը, և այդ գոռոցից երկար ժամանակ թնդում էր ամբողջ դաշտը։

Ավադներից մեկը վերցրեց գավազանը և մատուցեց նորընտիր կոշևոյին։ Կիրդյագան, ըստ սովորության, իսկույն ևեթ հրաժարվեց։ Ավագը մատուցեց երկրորդ անգամ։ Կիրդյագան հրաժարվեց և երկրորդ անգամ, և ապա երրորդ անգամին վերցրեց գավազանը։ Հնչեց բազմության խրախուսիչ աղմուկը, և կոզակների աղմուկը նորից արձագանքեց ամբողջ դաշտում։ Ապա ժողովրդի միջից դուրս եկան չորս սպիտակամորուս և ալեհեր կոզակներ (Սեչում չկային ավելի ծեր կոզակներ, քանի որ զապորոժցիներից ոչ մեկն իր մահով չէր մեռնում), և նրանցից յուրաքանչյուրը ձեռքով վերցրեց հողը, որ անձրևից ցեխ էր դառել, և դրեց նրա գլխի վրա։ Թաց հողը վայր հոսեց նրա գլխի վրայից, հոսեց այտերի և բեղերի վրայով և ամբողջ երեսը ցեխոտեց։ Իսկ Կիրդյագան անշարժ կանգնել էր և կոզակներին գոհություն էր հայտնում ցույց տված պատվի համար։ Այսպիսով վերջացավ աղմկոտ

ընտրությունը, որից անհայտ է, թե մյուսները ևս գոհ էին, որչափ գոհ էր Բուլբան։ Այդ ընտրությամբ նա վրեժ առավ հին կոշևոյից. բացի այդ, Կիրդյագան նրա հին ընկերն էր և նրա հետ միասին եղել էր ցամաքային և ծովային նույն արշավանքներում, բաժանելով ռազմական կյանքի խստությունները և դժվարությունները։ Բազմությունը ցրվեց, իսկույն ևեթ սկսեց տոնել ընտրությունը, և ծայր առավ այնպիսի մի խրախճանք, որպիսին մինչև այդ չէին տեսել Օստապը և Անդրին։ Օղետները չարդուփշուր արին. մեղրագինին, արաղը և գարեջուրն առան առանց փողի. կրպակների տերերը դեռ գոհ էին, որ իրենք ողջ-առողջ փրկվեցին։ Ամբողջ գիշերն անցավ աղմուկով և երգերով, որոնցով փառաբանում էին քաջագործությունները. ելած լուսինը դեռ երկար ժամանակ տեսնում էր երաժիշտների խմբեր, որոնք շրջում էին փողոցներում, փանդիռներով, տուրբաններով ու կլոր նվագարաններով, նաև եկեղեցական երգասացների, որոնց Սեչում պահում էին եկեղեցում երգելու և զապորոժցիների արարքները դովաբանելու համար։ Վերջապես հոգնությունը և գինին հետզհետե հաղթեցին նրանց պինդ գլուխները։ Ով երեվում էր, թե ինչպես այս ու այնտեղ գետին էր գլորվում կոզակը, ինչպես ընկերն ընկերոջը գրկած՝ զգացված և մինչև իսկ արտասվելով, նրա հետ միասին. փովում էր գետնի վրա։ Մի տեղ ահագին բազմությունը պառկել էր խմբով, մի այլ տեղ մեկը փնտրում էր ավելի հարմար տեղ և մեկնվում էր հենց կոճղի վրա։ Վերջինը, որ ավելի պինդ էր, դեռ արտասանում էր ինչ-որ անկապ խոսքեր։ Վերջապես նրան ևս հրնձեց գինու զորությունը, նա ևս գլորվեց, ու քնեց ամբողջ Սեչը։

IV

Իսկ մյուս օրը Տարաս Բուլբան արդեն խորհրդակցում էր նոր կոշևոյի հետ, թե ինչպես զապորոժցիներին հանի մի որևէ գործի։ Կոշևոյը խելոք և խորամանկ կոզակ էր, քաջ գիտեր զապորոժցիներին. նա սկզբում ասաց. «Երդումը չի՛ կարելի ոտնահարել, չի՛ կարելի. ոչ մի կերպ չի կարելի»։ Իսկ ապա, լռելուց հետո, ավելացրեց. «Ոչինչ, կարելի է. երդումը չենք

ոտնահարի, բայց մի բան կմտածենք։ Թող ժողովուրդը հավաքվի, բայց ոչ թե իմ հրամանով, այլ իբրև թե իր կամքով։ Դուք գիտեք, թե ինչպես պիտի սարքել այդ։ Իսկ մենք ավագների հետ իսկույն հրապարակ կվազենք, իբրև թե բանից խաբար չենք»։

Նրանց խոսակցությունից մի ժամ չէր անցել, երբ արդեն զարկեցին ծնծղաները։ Իսկույն հայտնվեցին նաև հարբած ու խելքը կորցրած կոզակներ։ Կոզակների միլիոն գըլխարկներ երևացին հրապարակում։ Ծայր առավ հարցուփորձ. «Ո՞վ էր, ինչի՞ համար է, ի՞նչ բանի համար են հավաքելը»։ Ոչ ոք չէր պատասխանում։ Վերջապես այս և այն անկյունում լսվեց. «Ա՜յ թե իզուր տեղը կորչում է կոզակի ուժը. կոիվ չկա։ Մեր գլխավորները բոլորը դանդալոշ են, նրանց աչքերը ճարպակալել են... Ջէ՛, երևում է, որ աշխարհում արդարություն չկա»։ Թվում էր, թե ավագանին զարմացել էր այդպիսի խոսքերից։ Վերջապես կոշևոյն առաջ անցավ և ասաց. «Պան զապորոժցիներ, թույլ տվեք ինձ խոսք ասել»։

«Ասա՛»։

«Ահա, իմ խոսքը հիմա, պան զապորոժցիներ, այն դատողության մասին է, որ ասենք ինքներդ էլ շատ լավ գիտեք. զապորոժցիներից շատերը չհուդների խանութներում պարտքի տակ են, ինչպես և պարտք են իրենց եղբայրներին, այնպես որ նրանց այլևս չեն հավատում և պարտք չեն տալիս։ Հետո նաև այն դատողության մասին է իմ խոսքը, որ շատ երիտասարդներ կան, որոնք աչքով չեն տեսել, թե ի՞նչ է կռիվը, այնինչ ջահելի համար, ինքներդ գիտեք, պաներ, առանց կռվի ապրել չի կարելի։ Նրանից էլ ի՞նչ զապորոժցի դուրս կգա, եթե նա ոչ մի անգամ չի զարկել անօրենին»։

«Լավ է ասում»,— մտածեց Բուլբան։

«Պան զապորոժցիներ, չկարծեք, թե այս բանը ես ասում եմ, որպեսզի հաշտությունը քանդեմ։ Ք՜ավ լիցի, ես հենց այնպես ասացի, խոսքի օրինակ։ Ախր մենք աստծո տաճար ունենք, բայց մեղք է ասել, թե նա ինչի նման է։ Ահա քանի տարի է աստծո ողորմությամբ կանգուն է Սեչը, այնինչ մինչև այժմ նույնիսկ եկեղեցին ոչ միայն դրսից զարդարած չի, այլ նույնիսկ սրբոց պատկերները զարդ չունեն։ Մեկնումեկը թող մտածեր եկեղեցու համար գոնե արծաթե շուրջառ գտնե-

լու։ Մի քանի կոզակ մեռնելիս ինչ որ կտակել են, եկեղեցին միայն այդ է ստացել։ Այդ պարգևն էլ շատ նվազ էր, որովհետև պարգևատու կոզակներն իրենց կարողությունը համարյա ամբողջովին արաղի էին տվել։ Իմ խոսքը նրա մասին չի, որ անօրենների հետ կռիվ աննենք. սուլթանին մենք հաշտություն ենք խոստացել, և մեծ մեղք կաննենք, քանի որ մենք երդվել ենք մեր հավատի վրա»։

«Նա ի՞նչ է գլխից դուրս տալիս»,— ինքն իրեն ասաց Բուլբան։

«Ինչպես տեսնում եք, պան զապորոժցիներ, չի կարելի կռիվ սկսել։ Ասպետական պատիվը չի.թույլատրում։ Իսկ ես իմ կարճ խելքով ահա թե ինչ եմ մտածում. միայն ջահելներին թույլ տանք, որ նավակներով գնան և մի քիչ տակնուվրա աննեն Անատոլիայի ափերը։ Ի՞նչ եք ասում, պաներ»։

«Տա՛ր, տա՛ր բոլորին,— բոլոր կողմերից բղավեց ամբոխը։— Պատրաստ ենք գլուխներս դնելու հանուն հավատի»։

Կոշևոյը վախեցավ։ Նա ամենևին չէր ուզում ոտքի հանել ողջ Զապորոժիեն։ Նա անարդար գործ էր համարում խախտել հաշտության դաշինքը։

«Թույլ տվեք, պան զապորոժցիներ, մի խոսք էլ ասելու»։

«Հերիք է,— բղավեցին զապորոժցիները։— Դրանից լավը չես ասի»։

«Դե որ այդպես է, թող այդպես լինի։ Ես ձեր կամքի ծառան եմ։ Հայտնի բան է, սուրը գրքումն էլ կա, որ ձայն բազմաց՝ ձայն աստծու։ Այն, ինչ որ ժողովրդի մտածմունքն է, դրանից ավելի խելոք բան չես մտածի։ Բայց մի բան կա, պան զապորոժցիներ, ձեզ հայտնի է, որ սուլթանն անպատիժ չի թողնի այն զվարճությունը, որ պիտի վայելեն մեր կտրիճները։ Այնինչ մենք կպատրաստվեինք, մեր ուժերը թարմ կլինեին և ոչ ոքից չէինք վախենա։ Բացակայելու դեպքում կարող է, որ թաթարները հարձակվեն. այդ տաճկական շներն աչքի չեն երևում, վախենում են տանտիրոջ տունը մտնել, այնինչ հետևից են կծում և այնպես պինդ են կծում։ Դե, եթե բանն այնտեղ է հասել, որ արդարությունը խոսենք, մենք պահեստի այդքան նավակներ չունենք, վառոդն էլ այնքան չի պատրաստած, որ բոլորս գնանք։ Իսկ ես, կարող եմ ասել, որ ուրախ եմ. ես ձեր կամքի ծառան եմ»։

Խորամանկ ատամանը լռեց։ Կոզակների խմբերն սկսեցին իրար հետ խոսել, կուրեննների ատամանները խորհրդակցում էին։ Բարեբախտաբար, հարբածները քիչ էին, ուստի և որոշեցին լսել խելացի խորհրդին։

Մի քանի հոգի իսկույն ևեթ ճանապարհվեցին Դնեպրի մյուս ափը, որտեղ զորքի զինարանն էր և մթերանոցը։ Ջրի տակ և եղեգնէրի մեջ անմատչելի թաքստոցաններում պահում էին զորական գանձարանը և թշնամուց խլած զենքերի մի մասը։ Մնացած բոլոր կոզակները վրա վազեցին դեպի նավակները՝ դիտելու և սարքավորելու։ Մի ակնթարթում ափը լցվեց ժողովրդի բազմությամբ։ Եկան մի քանի հյուսներ՝ ձեռքերին կացին։ Ալեհեր, արևառ, թիկնեղ ու ջլապինդ ոտքերով զապորոժցիները, ալեխառն և սևամազ բեղերով, շալվարները վեր քշտած, կանգնել էին ջրի մեջ մինչև ծնկները և պինդ պարաններով ափից քաշում էին նավակները։ Ուրիշները քաշում էին պատրաստի չոր գերան և ամեն տեսակի փայտ։ Մի տեղ տախտակում էին նավակը. մի այլ տեղ շուռ տված նավակը կպրում և կալնում էին խծուծով. մի տեղ նավակների կողքերից, ըստ կոզակների սովորության, կապում էին եղեգների խրձեր, որպեսզի ծովի ալիքները չխորտակեն նավակը. մի այլ տեղ և ավելի հեռու ամբողջ ափին վառել էին խարույկները և պղնձե կաթսաների մեջ նավակների համար եփում էին ձյութ։ Մերունի և փորձառու կոզակները վարժեցնում էին երիտասարդներին։ Աշխատողների աղմուկը և զարկերը լսվում էին ողջ շրջակայքում։ Ափը կենդանացել էր, ամեն ինչ շարժվում էր և օրորվում։

Այդ ժամանակ ափին մոտեցավ մի մեծ լաստ։ Նրա վրա կանգնած մարդկանց խումբը դեռ հեռվից ճոճում էր ձեռքերը։ Դրանք քրքրված վերարկուներով կոզակներ էին։ Նրանց անկարգ զգեստը (շատերը մի շապիկից և ատամների մեջ պահած կարճ չիբուխից բացի ոչինչ չունեին) ցույց էր տալիս, որ նրանք կամ ազատվել էին որևէ փորձանքից և կամ թե այնքան քեֆ էին արել, որ մարմնի վրա եղած ամեն ինչը տվել էին արաղի։ Նրանց միջից չոկվեց և առաջ անցավ կարճահասակ, թիկնեղ և հիսուն տարեկան մի կոզակ։ Նա բոլորից ավելի բարձր էր բղավում և ձեռքերը ճոճում օդի մեջ, սա-

կայն աշխատողների աղմուկի և զարկերի մեջ չէին լսվում նրա բառերը։

«Իսկ ի՞նչ եք բերել»,— հարցրեց կոշևոյը, երբ լաստը շրջվեց դեպի ափը։ Բոլոր բանողները, աշխատանքը թողնելով և բարձացնելով կացիններն ու դուրերը, կանգնած նայում էին։

«Փորձանք»,— լաստից բղավեց կարճահասակ կոզակը։

«Ի՞նչ փորձանք»։

«Պան զապորոժցիներ, թույլ տվեք խոսք ասելու»։

«Ասա»։

«Կամ գուցե ուզում եք հավաքել ռադան»։

«Ասա, բոլորս այստեղ ենք»։ Ամբողջ ափը հավաքվեց մի տեղ։

«Իսկ մի՞թե դուք ոչինչ չեք լսել, թե ինչ է կատարվում հեթմանի երկրում»։

«Ի՞նչ»,— արտասանեց կուրենի ատամաններից մեկը։

«Է՜... ի՜նչ, Երևի թաթարը բանգի է լցրել ձեր ականջը, որ դուք ոչինչ չեք լսել»։

«Դե ասա, ի՞նչ է պատահել այնտեղ»։

«Այն է պատահել, որ մորից ծնվել ենք, մկրտվել ենք, մեր օրում այդպիսի բան չենք տեսել»։

«Դե, շան որդի, ասա տեսնենք, ի՞նչ է պատահել»,— բղավեց բազմության միջից մեկը, ըստ երևույթին կորցնելով համբերությունը։

«Այնպիսի ժամանակներ են հիմա, որ սուրբ եկեղեցիներն այժմ մերը չեն»։

«Ո՞նց թե մերը չեն»։

«Հիմա չհուդները վարձով են վերցրել եկեղեցիները։ Եթե առաջ չհուդին փող չտաս, չես կարող պատարագ անել»։

«Ի՞նչ ես խոսում»։

«Ով եթե շունշանորդի չհուդն իր պիղծ ձեռքով սրբազան պասքայի վրա նշան չդնի, չի կարելի պասքան օրհնել»։

«Պան եղբայրներ, նա փչում է. չի կարող լինել, որ պիղծ չհուդը նշան դնի սրբազան պասքայի վրա»։

«Լսե՛ք, դեռ ավելի վատը կասեմ. հիմա ամբողջ Ուկրաինայում կաթոլիկ տերտերները մեզ են գալիս տարատեսակներով։ Պատուհասն այն չի, որ նրանք տարատեսակ են նըս-

տում, այլ այն, որ լծում են ոչ թե ձիեր, այլ ուղղափառ քրիստոնյաներ։ Լսե՛ք, դեռ ավելի վատը կասեմ. արդեն, ասում են, չհուդի կանայք մեր քահանաների շուրջառներից իրենց համար դեյրա են կարել։ Ահա թե ինչ բաներ են պատահել Ուկրաինայում, պան զապորոժցիներ։ Իսկ դուք նստել եք այստեղ,, Զապորոժում, քեֆ եք անում։ Հը՛մ, երևում է, որ թաթարը ձեզ այնպես է վախեցրել, որ դուք ոչ ականջ ունեք, ոչ աչք, և ոչինչ չունեք, և դուք չեք լսում, թե աշխարհում ինչ է կատարվում»։

«Կա՛ց, կա՛ց»,— ընդհատեց կոշևոյը, որ մինչև այդ աչքերը գետնին սևեռած կանգնել էր, ինչպես և բոլոր զապորոժցիները, որոնք ծանրակշիռ գործերի ժամանակ երբեք անձնատուր չէին լինում առաջին պոռթկումին, այլ լռում էին և լռության մեջ կուտակում զայրույթի ահեղ զորություն։ «Կա՛ց, ես էլ պիտի խոսք ասեմ։ Բա դուք ինչ էիք, ձեր հերը նզովված լինի, դուք ի՞նչ էիք անում. ի՞նչ է, թո՞ւր չունեիք։ Այդ ո՞նց թողիք, որ անիրավություն լինի»։

«Է՛, ո՞նց թողինք, որ անիրավություն լինի՛... Դե դուք լիներիք մեր տեղը, երբ հիսուն հազար միայն լեհերն էին, և ի՞նչ մեղքս թաքցնեմ՝ մերոնց մեջ էլ շներ կային, որոնք ընդունեցին նրանց հավատը»։

«Իսկ ի՞նչ էին անում ձեր հեթմանը, զորագնդի ձեր պետերը»։

«Զորագնդի պետերն այնպիսի բաներ արին, որ աստված հեռու պահի»։

«Ի՞նչ»։

«Դե այնպես, որ հիմա հեթմանը պղնձե բովի մեջ տապակած, պառկած է Վարշավում, իսկ զորագնդի պետերը ձեռքերն ու գլուխները ման են ածում տոնավաճառներում և ցույց են տալիս ժողովրդին։ Ա՛յ թե ինչ արին զորքի պետերը»։

Տարուբերվեց ամբողջ բազմությունը։ Նախ ամբողջ ափով անցավ լռությունը, ինչպես լինում է ամեհի փոթորկից առաջ, ապա հանկարծ բացվեցին լեզուները, և ամբողջ գետափը խոսեց։

«Ո՞նց թե չհուդները վարձով առնեն քրիստոնյաների եկեղեցիները, կաթոլիկ տերտերներն ուղղափառ քրիստոնյաներին

ձիերի տեղ լծեն։ Ո՞նց թե։ Ռուս հողի վրա թույլ տանել այդպիսի տանջանքներ նզովյալ անհավատներից, որպեսզի զորքի պետերի և հեթմանի հետ այդպե՞ս վարվեն։ Այդ բանը չպիտի լինի, չի՛ լինի»։ Ամեն կողմից թուան այդպիսի խոսքեր։ Զապորոժցիներն աղմկեցին և զգացին իրենց զորությունը։ Այդ արդեն թեթևամիտ բազմության հուզումը չէր. հուզվել էին ծանր ու հզոր բնավորության տեր մարդիկ, որոնք դանդաղ էին շիկանում, բայց շիկանալով, երկար ժամանակ և համառ պահում էին ներքին բոցը։ «Կախե՛լ բոլոր ջհուդներին,— լսվեց բազմության միջից։— Թող քահանաների շուրջառներից իրենց կանանց համար դեյրա չկարեն, թող սրբազան պասքայի վրա նշան չդնեն։ Դնեպրի մեջ խեղդել բոլոր այդ գարշելիներին»։ Այդ բառերը, որ բազմության միջից արտասանեց ինչ-որ մեկը, կայծակի նման տարածվեցին, և բազմությունը ծառս ելավ արվարձանի վրա՝ բոլոր ջհուդներին մորթելու ցանկությամբ։

Իսրայելի խեղճ զավակները, կորցնելով իրենց առանց այն էլ փոքր ոգու ամբողջ քաջությունը, թաքնվեցին օղու դատարկ տակառների մեջ, վառարաններում և նույնիսկ պահ մտան իրենց կանանց դեյրաների տակ։ Բայց կոզակներն ամենուրեք գտնում էին նրանց։

«Պայծառափայլ պաներ,— բղավեց մի բարձրահասակ և՝ փայտի նման երկար ջհուդ, որ իր ընկերների խմբի միջից դուրս էր ցցել վախից այլակերպված և ողորմելի մուրքը։— Պայծառափայլ պաներ, մեզ մի խոսք տվեք ասելու, մի խոսք միայն. մենք ձեզ այնպիսի բան կասենք, որ երբեք չեք լսել, այնքան կարևոր բան, որ չի կարելի ասել, թե ինչքան կարևոր»։

«Լա՛վ, թող ասեն»,— ասաց Բուլբան, որը միշտ սիրում էր մեղադրյալին լսել։

«Պայծառ պաներ,— ասաց ջհուդը։— Այդպիսի պաներ աշխարհի երեսին դեռ չեն եղել, աստված վկա, երբեք չեն եղել։ Այդքան բարեսիրտ, լավ և քաջ պաներ երբեք չեն եղել...»։ Նրա ձայնը վախից դողդողաց ու նվաղեց։ «Մի՞թե կարելի է, որ մենք զապորոժցիների մասին որևէ վատ բան մտածենք։ Նրանք ամենևին մերոնք չեն, նրանք, որոնք Ուկրաինայում վարձակալներ են... Աստված վկա, մերոնք չեն. նրանք

իսկի ջհուդներ էլ չեն, սատանան գիտի, թե ովքեր են նրանք։ Նրանք այնպիսի բան են, որ վրան թքես ու թողնես։ Ահա սրանք էլ նույնը կասեն։ Ճշմարիտ չէ՞, Շլեմա և կամ դու, Շմո՛ւլ»։

«Աստված վկա, ճշմարիտ է»,— ամբոխի միջից պատասխանեցին Շլեման և Շմուլը՝ քրքրված թասակները գլխներին, երկուսն էլ գաջի պես սփրթնած։

«Մենք ոչ մի անգամ,— շարունակեց երկարահասակ ջհուդը,— թշնամիների հետ կապ չենք ունեցել։ Իսկ կաթոլիկներին չենք էլ ուզում ճանաչել, գրողը տանի նրանց։ Մենք զապորոժցիների հետ հարազատ եղբոր պես ենք...»։

«Ո՞նց թե... Ուրեմն զապորոժցիները ձեր եղբայրնե՞րն են,— արտասանեց բազմության միջից մեկը։— Այդ չեք տեսնի, նզովյալ ջհուդներ։ Պան զապորոժցիներ, շպրտենք սրանց Դնեպրի մեջ, խեղդենք այս բոլոր գարշելիներին»։

Այդ բառերն ազդանշան եղան։ Ջհուդներին ձեռքե-ձեռք բռնոտեցին և սկսեցին նետել գետի ալիքների մեջ. չորս կողմից բարձրացավ աղերսի ճիչը։ Բայց դաժան զապորոժցիները միայն ծիծաղում էին, տեսնելով, թե ինչպես ջհուդների մաշիկ և գուլպա հագած ոտքերը թպրտում էին օդի մեջ։ Ընդվառ հռետորը, որ ինքն իր բերանով գլխին փորձանք բերեց, դուրս պրծավ երկար բաճկոնի միջից, որի փեշերից քաշում էին, և մի խայտաբղետ, նեղ ու կարճ վերնազգեստ հագին՝ փաթաթվեց Բուլբայի ոտքերին և խղճալի ձայնով աղերսեց.

«Հզոր տեր, պայծառափայլ պան, ես ճանաչում էի և ձեր եղբորը, հանգուցյալ Դորոշին։ Նա մի ռազմիկ էր, որ զարդն էր ամբողջ ասպետության։ Ես նրան ութ հարյուր ցեխին եմ տվել, երբ հարկավոր էր նրան ազատել տաճիկների գերությունից»։

«Դու ճանաչո՞ւմ էիր իմ եղբորը,— հարցրեց Տարասը։

«Աստված վկա, ճանաչում էի. մեծահոգի պան էր»։

«Իսկ քո՛ անունը ի՞նչ է»։

«Ճանկել»։

«Լավ,— ասաց Տարասը, և ապա, մի քիչ մտածելուց հետո գարձավ կոզակներին և այսպես ասաց.— Ժամանակ շատ կա ջհուդին կախելու՝ եթե պետք լինի, իսկ այսօր սրան ինձ

տվեք։ Այս ասելով, Տարասը նրան տարավ դեպի իր գումակը, որի մոտ կանգնել էին կոզակները։ «Դե մտիր սայլի տակ, պառկիր այնտեղ և մի՛ շարժվիր, իսկ դուք, տղերք, ջհուդին բաց չթողնեք»։

Ապա նա գնաց հրապարակը, որովհետև այնտեղ վաղուց արդեն հավաքվել էր բազմությունը։ Բոլորն իսկույն ևեթ թողին նավակների սարքավորումը և հեռացան գետափից, որովհետև այժմ նրանք ելնելու էին ցամաքային արշավանքի և ոչ ծովային, և հարկավոր էին սայլակներ ու ձիեր՝ նավերի ու կոզակների թեթև նավակների փոխարեն։ Այժմ արդեն բոլորն էին կամենում արշավել, ծերերը և երիտասարդները. բոլորը՝ համաձայն ավագների, կուրեննների ատամանների և կոշևոյի խորհրդի, ինչպես և զապորոժյան ամբողջ զորքի ցանկությամբ վճռեցին արշավել Լեհաստանի վրա, վրեժ առնելու ամեն չարագործության, հավատի և կոզակի պատվի այպանման համար, քաղաքներից ավար առնելու, հրդեհելու գյուղերը և դաշտերը, և տափաստանի վրա լայն սփռելու հեբոսության փառքը։ Բոլորը հենց տեղնուտեղը սպառազինվեցին։ Կոշևոյի հասակն ավելի բարձրացավ։ Նա արդեն ազատասեր բազմության քմահաճ ցանկությունների հլու կատարածուն չէր։ Նա միահեծան հրամանատար էր, մի դաժան բռնակալ, որ միայն հրամայել գիտեր։ Ինքնահաճ և զվարճասեր բոլոր կոզակները գեղակազմ կանգնել էին շարքի, հնազանդ խոնարհել գլուխները, չհամարձակվելով աչք բարձրացնել, մինչև չհնչեր կոշևոյի հրամանը. իսկ նա հրամայում էր հանդարտ, առանց աղմկելու, առանց շտապելու, և ընդհատումներով, ինչպես հին և շատ փորձառու կոզակ, որ առաջին անգամը չէ ի կատար ածում խելացի մտածված գործը։

«Ուշի-ուշով նայեք, ամեն բանի ուշադիր եղեք,— այսպես ասաց նա։— Սարքի բերեք սայլակները և ձյութամանները, փորձեք զենքերը։ Շատ շոր չառնեք ձեզ հետ. մի-մի շապիկ և երկու շալվար, մի թաղար խավիծ և բոված կորեկ, իսկ ավելին ոչ ոք թող չվերցնի։ Սայլերն իրենց հետ պաշար կառնեն, որքան հարկավոր է։ Ամեն կոզակ պիտի ունենա երկու ձի։ Վերցնել երկու հարյուր լուծ եզ, որովհետև գետանցում և ճմոտ տեղերում եզները հարկավոր են։ Իսկ ամենից ավե-

լի, կարգ պաշտպանեք, պան զապորոժցիներ։ Ես գիտեմ, որ ձեր մեջ կան այնպիսիները, որոնք հենց կողոպուտի պատահեն թե չէ, ոտափաթաթանի համար կպատառոտեն չինական բեհեզը և թանկագին կերպասները։ Թողե՛ք այդ անվայել սովորությունը, դեն շպրտեք կողոպուտը, առեք միայն զենքերը, եթե լավերը պատահեն, նաև ոսկի կամ արծաթ, որովհետև նրանք գին ունեն և միշտ հարկավոր են։ Ահա ձեզ, պան զապորոժցիներ, առաջուց եմ ասում, եթե երթի ժամանակ որևէ մեկը հարբի, նրա գլխին դատ չի լինելու։ Կհրամայեմ շան նման վզից կապեն սայլին, ով էլ լինի, թեկուզ ամբողջ զորքի ամենաքաջ կոզակը. շան նման տեղնուտեղը կսպանվի և դիակը կմնա առանց թաղելու, որպեսզի թռչունները լափեն, որովհետև երթի ժամանակ հարբողն արժանի չէ քրիստոնյայի նման թաղվելու։ Երիտասարդներ, ամեն ինչում լսեք ծերերին։ Եթե գնդակ դիպչի կամ թե թրով քերծեն ձեր գլուխը կամ մարմնի մի այլ տեղը, բանի տեղ մի՛ դնեք. մի թաս արաղի մեջ մի քիչ վառոդ խառնեք, խմեք մի շնչով, և ամեն ինչ կանցնի, տենդ էլ չեք ունենա. իսկ վերքի վրա, եթե վերքը մեծ չի, հողը ձեռքի ափի մեջ թուքի հետ առաջ շաղախեք և այդ հողից մի քիչ դրեք վերքի վրա և այդպես էլ կչորանա վերքը, կանցնի։ Դե հիմա գործի անցեք, գործի՛, տղերք, բայց առանց շտապելու և լավ կպեք գործի»։

Այդպես ասաց կոշևոյը և հենց որ խոսքը վերջացրեց, իսկույն ևեթ բոլոր կոզակները գործի անցան։ Ամբողջ Սեչը զգաստացավ, և ոչ մի տեղ չէր կարելի տեսնել հարբած մեկին, կարծես թե կոզակների մեջ երբեք հարբած մարդ չէր եղել։ Ոմանք սարքում էին անիվների գոտիները և փոխում էին սայլերի սռնիները, ոմանք սայլերի մեջ տեղավորում էին նըպարակի պարկերը և զինամթերքը, իսկ ոմանք լծում էին ձիերը և եզները։ Ամեն կողմից լսվում էր ձիերի դոփյուն, հրացանների փորձնական հրաձգություն, թրերի շառաչ, եզների բառաչ, սայլերի ճռնչոց, խոսակցություն և՛ բարձր աղաղակ, և շուտով կոզակների շարանն ամբողջ դաշտի վրա ձգվեց հեռո՛ւ, հեռո՛ւ։ Շատ կնեղվեր նա, ով կկամենար վազել շարանի գլխից մինչև պոչը։ Փայտաշեն փոքրիկ եկեղեցում քահանան մաղթանք կատարեց, բոլորին օծեց սուրբ ջրով, և

ամենքը համբուրեցին խաչը։ Երբ շարանը շարժվեց և Սեչից դուրս եկավ, բոլոր զապորոժցիները ետ նայեցին։

«Մնաս բարո՛վ, մայր,— ասացին բոլորը համարյա միաբերան.— Թող աստված քեզ պահի ամեն չարից ու փորձանքից»։

Տարաս Բուլբան արվարձանով անցնելու ժամանակ տեսավ, որ յուր չհուդ Յանկելն արդեն խփել էր վրանի նման մի ծածկոց և վաճառում էր կայծքար, փաթթոցներ, վառոդ և զորքի համար հարկավոր այլ մանրուք, որ պետք էր ճանապարհին, նաև հաց։ «Այս սատանի ձագին տես», ինքն իրեն մտածեց Տարասը և ձիու վրա մոտենալով նրան, ասաց.

«Հիմար, ինչո՞ւ ես այստեղ նստել. մի՞թե ուզում ես, որ քեզ ճնճղուկի նման հրացանով զարկեն»։

Յանկելն ի պատասխան ավելի մոտեցավ նրան և երկու ձեռքով նշան անելով, կարծես նրան ուզում էր մի գաղտնիք հաղորդել, ասաց.

«Պանը միայն Թող լուի և ոչ ոքի չասի, որ կոզակների սայլաշարքի մեջ ես մի սայլակ ունեմ. ես տանում եմ կոզակների համար պետքական բաների պաշար և ճանապարհին նպարակ կվաճառեմ այնպիսի էժան գնով, որ ոչ մի չհուդ այդպիսի գնով չի՛ վաճառել։ Աստված վկա, այդպես է, այդպես է, աստված վկա»։

Տարաս Բուլբան ուսերը վեր քաշեց, զարմացավ չհուդների ժիր բնավորության վրա և ձին քշեց դեպի կոզակների շարանը։

V

Շուտով ահ ու սարսափ տիրեց լեհական ողջ հարավ-արևմուտքին։ Ամեն տեղ տարածվեցին լուրեր՝ «զապորոժցիները, երևացել են զապորոժցիները»։ Ով կարողանում էր ազատվել, ազատվում էր, ամեն ինչ գլուխ էր առնում և փախչում, ըստ սովորության այդ անապահով և անհանգիստ դարի, երբ չէին կառուցում ո՛չ բերդեր և ո՛չ դղյակներ, այլ մարդը մի կերպ շինում էր իր ծղնոտե օթևանը, մտածելով. «Ինչո՞ւ աշխատանք ու փող ծախսել դրա վրա, երբ, միևնույն է, իր օթևանը պիտի ոչնչանա թաթարական ասպատակներից»։

Ամեն ինչ իրար անցավ. ով եզն ու գութանը փոխում էր ձիու և զենքի հետ և մտնում զորագնդերը, ով թաքնվում էր, հետը քշելով նախիրը և առնելով միայն այն, ինչ կարելի է տանել։ Երբեմն ճանապարհին հանդիպում էին և այնպիսիները, որոնք զինված ձեռքերով էին ընդունում հյուրերին. բայց ավելի բազմաթիվ էին նրանք, որոնք փախել էին վաղօրոք։ Բոլորը գիտեին, որ դժվար է գլուխ դնել վայրագ ու ռազմասեր բազմության հետ, որ հռչակված էր զապորոժյան զորք անունով և որի խառնիխուռն ու սանձարձակ արտաքինը պարունակում էր պատերազմական ժամանակի մտածված կարգ։ Այրուձին գնում էր, և ձիավորները ձիերին չէին հոգնեցնում ու տաքացնում, հետևակը սայլակների ետևից քայլում էր զգաստ, և ամբողջ շարանը շարժվում էր միայն գիշերը, ցերեկը հանգստանալով ամայի և անբնակ վայրերում և անտառներում, որ այն ժամանակ լի և առատ էին։ Թշնամու կողմն էին առաքվում լրտեսներ և հետախույզներ, որոնք դիտում էին որտեղ ինչ կար։ Եվ հաճախ զապորոժցիները հայտնվում էին այնպիսի վայրերում, որտեղ ամենից քիչ էին սպասելի, հայտնվում էին հանկարծակի, և այն ժամանակ ամեն ինչ հրաժեշտ էր տալիս կյանքին. հրդեհը լափում էր գյուղերը, նախիրն ու ձիերը, որոնք ետ էին մնում նահանջող թշնամու զորքից, տեղնուտեղը ջարդոտվում էին։ Թվում էր, թե զապորոժցիներն ավելի խնջույք էին անում, քան պատերազմ։ Այժմ մեր մաղերը կցցվեին կիսավայրենի դարի գազանությունների այն սարսափելի նշաններից, որ զապորոժցիներն ամենուրեք սրփռում էին։ Մանուկներին ջարդում էին, թրերով կտրատում էին կանանց կուրծքը, մաշկում էին կաշին ոտքերից մինչև ծնկները և ապա աղատ թողնում,— մի խոսքով կոզակները լիովին հատուցում էին իրենց նախկին պարտքը։ Մի վանքի վանահայր, առնելով նրանց մոտալուտ գալստյան լուրը, առաքեց երկու միաբանների, որոնք վանահոր անունից կոզակներին պետք է ասեին, թե նրանք իրենց չեն պահում ինչպես հարկն է, թե զապորոժցիների և կառավարության միջև խաղաղություն է կնքված, թե զապորոժցիները խախտում են թագավորի հանդեպ ունեցած պարտավորությունները և ընդ նմին առհասարակ նաև ժողովրդյան իրավունքը։

«Եպիսկոպոսին ասա իմ և բոլոր զապորոժցիների անու-

էից,— պատասխանեց կոշևոյը,— որ չվախենա ոչ մի բանից. կոզակները սրանով դեռ նոր են վառում և ծխում իրենց չիբուխները»։

Եվ շուտով ամեն ինչ խորտակող բոցը կլանեց փառահեղ վանքը, և նրա գոթական վիթխարի պատուհանները մռայլ նայեցին հրե ալիքների միջից։ Վանականների, ջհուդների և կանանց սարսափահար խմբերը հանկարծ թափվեցին այն քաղաքները, որտեղ պահակազորի և քաղաքային ամրությունների վրա հույսի թեթև նշույլ կար։ Կառավարության կողմից ժամանակ առ ժամանակ ուղարկվող փոքրաթիվ զորագնդերի ուշացած օգնությունը կամ չէր հանդիպում զապորոժցիներին և կամ խեղճանում էր առաջին հանդիպումից դարձնում էր թիկունքն ու ետ սլանում արագավազ ձիերով։ Պատահում էր, որ թագավորական շատ զորապետներ, որոնք հռչակվել էին նախնի պատերազմներում, վճռում էին, իրենց ուժերը միացնելով, պատվար կանգնել զապորոժցիների դեմ։ Երիտասարդ կողակները հենց նրանց վրա էին փորձում իրենց ուժը, քանի որ երիտասարդները խուսափում էին կողոպուտից, շահամոլությունից ու թույլ թշնամուց և վաղվում էին ծերերի առաջ իրենց ցույց տալու ցանկությամբ, դեմառդեմ չափվելով ժիր ու պարծենկոտ լեհացու հետ, որը հայրատ նժույգի վրա սլանում էր քամու հետ, տառատոկի թևերն արձակած։ Զվարճալի զբաղմունք էր. նրանք արդեն կռվում ձեռք էին բերել ձիասարք, թանկագին թրեր ու զենքեր։ Դեռ նոր թևավորված ձագերը մի ամսում առնականացան և բոլորովին վերածնվեցին, տղամարդ դարձան։ Նրանց դիմագծերը, որոնց վրա մինչ այդ կար պատանեկան ինչ-որ քնքշություն, ամրացան ու դարձան ահեղ։ Իսկ ծերունի Տարասը հրճվանքով էր նայում իր երկու զավակներին, որոնք առաջիններից էին։ Կարծես Օստապի ճակատին ի ծնե գրված էր ռազմի ուղին և պատերազմական գործեր մղելու դժվարին ուսմունքը։ Նա, ոչ մի անգամ իրեն չկորցնելով և ոչ մի պատահարից շշփոթվելով, սառնարյունությամբ, որ համարյա անբնական էր քսանքսաներկու տարեկան երիտասարդի համար, մի ակնթարթում կարողանում էր չափել ամբողջ վտանգը և իրերի դրությունը, տեղնուտեղը գտնելով վտանգից խուսափելու միջոցը. սակայն խուսափել այնպես, որ հետո ավելի աներկբա հաղթահարի

վտանգը։ Նրա շարժումներն աչքի էին ընկնում արդեն փորձառու վճռականությամբ, և չէր կարելի չնկատել ապագա առաջնորդի հակումները։ Ամրակուռ էր նրա մարմինը, և նրա ասպետական հատկություններն արդեն վաստակել էին առյուծի հատկությունների հզոր ուժը։

«Օ՜, ժամանակով նա քաջարի զորավար կլինի,— ասում էր ծերունի Տարասը.— ճիշտ որ քաջարի զորավար և այն էլ այնպիսին, որ կտա, հորից կանցնի»։

Անդրին ողջ էությամբ խորասուզվել էր գնդակների և թրերի գրավիչ երաժշտության մեջ. նա չգիտեր, թե ինչ ասել է վաղօրոք մտածել ու հաշվել և կամ թե չափել իր և օտարի ուժերը։ Նա պատերազմի մեջ տեսնում էր ամեհի գրգանք և արբեցում։ Նրա աչքերին խրախճանային մի բան էր երևում այն րոպեներին, երբ բորբոքվում է մարդու գլուխը. աչքերի առաջ ամեն ինչ փայլատակում ու խառնվում է, թռչում են գլուխներ, դղրդոցով գետին են գլորվում ձիերը, իսկ ինքը սլանում է հարբած՝ գնդակների սուլոցի տակ և թրի փայլով հարվածում է ամենքին ու չի զգում զարկերը։ Շատ անգամ էր հայրը զարմանում, տեսնելով, թե ինչպես Անդրին, դրդված միայն դյուրաբորբոք կրքից, թափով արշավում էր նրա դեմ, որի դեմ երբեք չէր համարձակվի մաղարյուն և խելացի կոզակը, և սոսկ իր հախուռն գրոհով կատարում էր այնպիսի հրաշքներ, որոնք զարմացնում էին պատերազմի բովում եփված ծերունիներին։ Զարմանում էր ծերունի Տարասը և ասում.

«Սա էլ քաջ է, թշնամին չտանի այս կտրիճին... Օստապին չի հասնի, բայց էլի քաջ է, քաջ կտրիճ»։

Ջորքը որոշեց հարձակվել ուղղակի Դուբնո քաղաքի վրա, որտեղ, ըստ լուրերի, շատ գանձեր կային և հարուստ բնակիչներ։ Մեկ և կես օրում երթը վերջացավ, և զապորոժցիները երևացին քաղաքի առաջ։ Բնակիչները որոշեցին պաշտպանվել մինչև վերջին ուժերը և հնարավորություններն ու գերադասեցին մեռնել իրենց շեմքերի առաջ՝ փողոցներում և հրապարակներում, քան թշնամուն ներս թողնել։ Քաղաքը շրջապատված էր հողե բարձր պատնեշով. որտեղ պատնեշը ցածր էր, բարձրանում էր քարե պատ կամ տուն, որ մարտկոցի դեր էր խաղում և կամ, վերջապես, կաղնե փայտից ցանկապատը։ Պահակազորն ուժեղ էր և զգում էր իր գործի կարևորու-

թյունը։ Զապորոժցիները քիչ էր մնում թափով բարձրանային պատնեշի վրա, սակայն նրանց ետ մղեց թշնամու զորեղ կարտեչը։ Քաղաքի բնակիչները, ըստ երևույթին, նույնպես չէին կամենում պարապ մնալ և խմբերով կանգնել էին քաղաքի պատնեշի վրա։ Նրանց աչքերի մեջ կարելի էր կարդալ հուսահատ դիմադրություն. կանայք նույնպես վճռեցին մասնակցել և զապորոժցիների գլխին թափեցին քարեր, տակառներ, թաղարներ, եռացրած կուպր և վերջապես պարկեր՝ լի ավազով, որ կուրացնում է աչքերը։ Զապորոժցիները չէին սիրում գործ ունենալ բերդերի հետ. բերդ պաշարելը նրանց գործը չէր։ Կոշևոյը հրամայեց ետ նահանջել և ասաց.

«Ոչինչ, պան եղբայրներ, մենք կնահանջենք, բայց թող նեղվյալ թաթար լինեմ և ոչ քրիստոնյա, եթե նրանցից մեկին կենդանի բաց թողնենք քաղաքից։ Թող նրանք բոլորը շան նման սովից սատկեն»։

Զորքը, ետ քաշվելով, օղակեց ամբողջ քաղաքը և պարապությունից ակսեց ավերել շրջակայքը, հրդեհելով շրջակայքի գյուղերը, չհավաքած ցորենի դեզերը, ձիերի երամակներն արձակելով արտերի մեջ, որոնց մանգաղը դեռ չէր դիպել և որտեղ, հակառակի պես, օրորվում էին ծանր հասկերը՝ պտուղն արտասովոր բերքի, որ այն ժամանակ լիառատ ընծայել էր բոլոր հողագործներին։ Քաղաքից սարսափով դիտում էին, թե ինչպես էին ոչնչացնում իրենց գոյության միջոցները։ Այնինչ զապորոժցիները, իրենց սայլերը քաղաքի շուրջ բոլորը տեղավորելով երկու շարքի, բանակ էին դրել այնպես, ինչպես Սեչում՝ կուրեններով. նրանք ծխում էին իրենց ծխամորճները, փոխանակում էին կովում ձեռք բերած զենքերը, խաղում էին աթուրմա, ջուխտ ու կենտ և ապանիչ սառնարյունությամբ դիտում էին քաղաքի կողմը։ Գիշերը խարույկ էին վառում. յուրաքանչյուր կուրենում խոհարարները պղնձե մեծ կաթսաների մեջ եփում էին քաշովի. ողջ գիշերը վառվող կրակների առաջ կանգնում էին անքուն պահակներ։ Բայց շուտով զապորոժցիներն սկսեցին ձանձրանալ պարապությունից և երկարատև զգոնությունից, որ աննպատակ էր։ Կոշևոյը հրամայեց նույնիսկ կրկնապատկել բաժին դինին, որ զորքի մեջ երբեմն գործ էր ածվում, եթե չկային դժվար սխրագործություններ ու զորաշարժեր։ Այդպիսի կյանքը դուրեկան

չէր երիտասարդներին և մանավանդ Տարաս Բուլբայի որդիներին։ Անդրին նկատելի կերպով ձանձրանում էր. «Անբան գլուխ,— ասում էր նրան Տարասը։— Համբերիր, կոզա՛կ, ատաման կդառնաս։ Նա՛ չի քաջ զինվոր, ով կարևոր գործի մեջ չի կորցնում ոգին, այլ նա՛ է քաջ զինվոր, ով պարապությունից էլ չի ձանձրանում, ով ամեն ինչի դիմանում է, և նրան ինչ էլ անես, նա իր ասածը կանի»։ Բայց դյուրաբորբոք պատանին նման չէ ծերունուն։ Տարբեր են երկուսի նկարագիրը, և նրանք տարբեր աչքերով են նայում միևնույն բանին։

Այնինչ արդեն վրա հասավ Տարասի զորագունդը, որ բերում էր Տովկաչը։ Նրա հետ էին նաև երկու եսաուլ, գրագիրը և զորագնդի այլուս պաշտոնատարները. գումարված բոլոր կոզակները չորս հազար հոգուց ավելի էին։ Նրանց մեջ սակավ չէին նաև սեփական ձիերով կողակներ, որոնք իրենք էին եկել իրենց կամքով՝ առանց զորակոչի, հենց որ լսել էին բանի էությունը։ Եսաուլները Տարասի որդիների համար բերել էին նրանց պառավ մոր օրհնությունը և յուրաքանչյուրին մի-մի տիրամոր պատկեր՝ մշտադալար նոճուց, Կիևի Մեծիգորսկ վանքից։ Երկու եղբայրները տիրամոր պատկերները կախեցին իրենց վզից և ակամա ընկան մտածմունքի մեջ, հիշելով իրենց պառավ մորը։ Նրանց ի՞նչ է ասում և ի՞նչ է գուշակում այդ օրհնությունը։ Արդյոք օրհնություն է հաղթությա՞ն՝ թշնամու դեմ, և ուրախ վերադա՞րձ դեպի հայրենիք՝ ավարով ու փառքով, որի մասին փանդիռ նվագողները հավիտյան պիտի երգեն, թե՞... բայց մութ է ապագան և մարդու առաջ նա կանգնած է ճահիճներից ելնող աշնանային մշուշի պես։ Նրա մեջ խելահեղորեն և թևերը թափահարելով վեր ու վար են անում թռչուններ, իրար չճանաչելով, աղավնին չտեսնելով բազեին, բազեն՝ աղավնուն, և ոչ ոք չգիտե, թե որքան հեռու է թռչում իր կորստից...

Ոստապն արդեն իր գործի վրա էր և վաղուց հեռացել էր դեպի կուրեննները, իսկ Անդրին, ինքն էլ չիմանալով ինչու, սրտի վրա զգում էր մի ծանրություն։ Կոզակներն արդեն ավարտել էին իրենց ընթրիքը. խարույկները վաղուց հանգել էին, հուլիսյան չքնաղ գիշերը պատել էր օդը։ Սակայն Անդրին չէր գնում դեպի կուրեննները, քնելու չէր պատկում և

ակամա նայում էր իր առաջ փռված ողջ տեսարանին։ Երկընքում նուրբ ու սուր փայլով շողշողում էին անհամար աստղերը։ Ամբողջ դաշտի վրա, մինչև հեռու-հեռուներ, երևում էին սայլերը և սայլերից կախված կուպրի ամանները, սայլերի վրա թշնամուց խլած ամեն տեսակ բարիք ու նպարակ։ Սայլերի մոտ, սայլերի տակ և սայլերից հեռու ամեն տեղ երեվում էին խոտի վրա փռված զապորոժցիները, որոնք քնել էին, յուրաքանչյուրը ներկայացնելով մի պատկեր. մեկը գլխի տակ դրել էր տոպրակը- մյուսը՝ գլխարկը, երրորդը գլուխը դրել էր իր ընկերոջ կողքի վրա։ Յուրաքանչյուր կոզակից անբաժան էին թուրը. հրացանը, կարճ կոթով ծխամորճն ու նրա պղնձե վահանակները, երկաթե փորիչներն ու հրահանը։ Հաղթամարմին եզները պառկել էին, ծալելով ոտքերը, և նրանց սպիտակավուն մեծ խմբերը հեռվից նման էին գորշ քարերի, որ փռված էին դաշտի զառիվայրի վրա։ Ամեն կողմից արդեն բարձրանում էր խոտերի մեջ քնած ամբողջ զորքի քնքշ խռմփոցը, որին դաշտից զրնգուն վրնջոցով արձագանքում էին ձիերը, որոնք զայրացել էին բխռված ոտքերի համար։ Այնինչ հուլիսյան գիշերի գեղեցկությանը խառնվել էր ահեղ ու հոյակապ մի տեսարան ևս։ Դա հեռվում հրդեհվող շրջակայքի հրացոլքն էր։ Մի տեղ բոցը հանդարտ ու փառահեղ փռվել էր երկնքով, մի այլ տեղ՝ կրակը, հանկարծ հանդիպելով մի դյուրավառ նյութի, մրրկի նման սլացել ու սուրում էր, թռչում դեպի վեր, մինչև աստղերը, և նրա բզկտված ծվենները հանգչում էին ամենահեռու երկնքում։ Մի այլ տեղ հրդեհված սև վանքն ահեղ կանգնել էր, ինչպես կարտեզյան դժնադեմ աբեղա, և կրակի յուրաքանչյուր ցոլքին ցույց էր տալիս իր մոայլ վեհությունը։ Դեռ վառվում էր վանքի պարտեզը, և կարծես լսելի էր, թե ինչպես վշշում էին ծառերը, ծխի մեջ փաթաթվելով, և երբ դուրս էր թռչում կրակը, նա կարմրակապույտ և հրե գույնի ֆոսֆորյա շողերով լուսավորում էր հասած սալորները, և կամ թե այս ու այնտեղ երևացող դեղնած տանձերը դարձնում էր կարմիր ոսկի և կրակի լույսով, հենց նույն տեղը՝ ծառերի արանքում սևին էր տալիս շենքի պատից կամ ծառի ճյուղից կախած թշվառ չհուդի մարմինը կամ թե որևէ վանականի մարմին, որ շենքի հետ միասին խորտակվել էր բոցերի մեջ։ Հեռվում հրդեհի

վրա պտույտներ էին գործում թռչունները, որոնք կրակե դաշտում նման էին մութ ու մանր խաչերի խմբի։ Թվում էր, թե շրջապատված քաղաքը քնել է. նրա բարձր գմբեթները, կտուրները, ցանկապատն ու պարիսպները մարմանդ ցոլացնում էին հեռավոր հրդեհների բոցը։ Անդրին անցավ կոզակների շարքերի միջով։ Խարույկները, որոնց մոտ նստել էին պահակները, ամեն ակնթարթ կարող էին հանգչել և իրենք՝ պահակներն էլ քնել էին, կոզակի ողջ ախորժակով խավիծն ուտելուց հետո։ Նա զարմացավ այդ անհոգության վրա և մտածեց. «Լավ է, որ մոտերքում զորավոր թշնամի չկա և ոչ ոքից վախ չկա»։ Վերջապես ինքն էլ մոտեցավ սայլերից մեկին, ելավ սայլի վրա և պառկեց, ձեռքերը ծալելով գլխի տակ. բայց չկարողացավ քնել և երկար ժամանակ նայում էր երկնքին, որ բացվում էր նրա առաջ։ Օդը մաքուր ու թափանցիկ էր. խիտ աստղերը, որոնք կազմում էին Հարդագողի ճանապարհը և գոտի էին կապել երկնքով, ամբողջովին ողողված էին լույսով։ Ժամանակ առ ժամանակ նա կարծես ընկնում էր մոռացության մեջ, և նիրհի մի թեթև ամպ նրա աչքերի մի ակնթարթ պատում էր երկինքը, ապա նորից պարզվում էր այն և դարձյալ ջինջ ցոլանում։ Այն ժամանակ նրան թվաց, թե մարդկային մի տարօրինակ կերպարանք ցոլաց նրա առաջ։ Մտածելով, որ այդ քնի պարզ պատրանք է, որ հիմա կչքանա, նա աչքերն ավելի մեծ բացեց և տեսավ, որ իրոք իր վրա է թեքվել մի սմքած ու չորացած դեմք և ուղիղ նայում է իր աչքերին։ Երկար և ածուխի նման սևաթույր մազերը անխնամ ու խռիվ դուրս էին թափվել գլխի վրա գցած սև քողի տակից։ Մ՛վ աչքերի տարօրինակ փայլը, և՛ սևությունը մեռելային դեմքի, որ ուներ խիստ դիմագծեր, ավելի շուտ ստիպում էին մտածել, որ նա մի ուրվական է։ Ենդրին ակամայից ձեռքը մեկնեց հրազենին և համարյա դողալով արտասանեց.

«Ո՞վ ես դու։ Եթե չար ոգի ես, կորի՛ր իմ աչքից. եթե կենդանի մարդ ես՝ անժամանակ ես կատակ անում, մի զարկով կսպանեմ»։

Ի պատասխան այդ խոսքերի, ուրվականը մատը դրեց շրթունքներին և կարծես թախանձում էր, որ նա լուռ մնա։ Անդրին ձեռքը կախեց և սկսեց ավելի ուշադիր դիտել։ Նա եր-

կար մազերից, պարանոցից ու կիսաբաց թխագույն կրծքից ճանաչեց, որ ուրվականը կին է։ Բայց նա տեղացի չէր. նրա դեմքը թուխ էր և ցավից հյուծված, լայն այտոսկրներն ահագին դուրս էին ցցվել փոս ընկած այտերի վրա. նեղ աչքերն աղեղնաձև կտրվածքով դեպի վեր էին բարձրանում, և ինչքան ավելի էր Անդրին նայում նրա դիմագծերին, այնքան ավելի էր գտնում ինչ-որ ծանոթ բան։ Վերջապես նա չհամբերեց և հարցրեց.

«Ասա, ո՞վ ես դու։ Ինձ թվում է, որ ես քեզ ճանաչում եմ կամ մի տեղ տեսել եմ»։

«Երկու տարի առաջ, Կիևում»։

«Երկու տարի առաջ, Կիև՞ում»,— կրկնեց Անդրին, ջանալով վերհիշել այն ամենը, որ նախկին բուրսակային կյանքից մնացել էր նրա հիշողության մեջ։ Նա մի անգամ էլ ուշադիր նայեց կնոջը և հանկարծ ամբողջ ձայնով բղավեց. «Դու թաթարուհին ես, պաննայի աղախինը, վոևոդի աղջկա...»։

«Շը՛շշ»,— արտասանեց թաթարուհին, աղերսադեմ խաչելով ձեռքերը, դողալով ողջ մարմնով և միաժամանակ գլուխը ետ դարձնելով, որպեսզի տեսնի, թե արդյոք ոչ ոք չզարթնե՞ց Անդրիի այդպիսի հուժկու կանչից։

«Ասա՛, ասա՛, դու ինչո՞ւ ես այստեղ, դու ինչպե՞ս եկար,— ասաց Անդրին համարյա շնչասպառ և շշուկով, որ յուրաքանչյուր րոպե ընդհատվում էր ներքին հուզմունքից։— Որտե՞ղ է պաննան, դեռ ո՞ղջ է»։

«Նա այստեղ է, քաղաքում»։

«Քաղաքո՞ւմ»,— արտասանեց նա և քիչ մնաց նորից բղավեր ու զգաց, որ ամբողջ արյունը խուժեց դեպի սիրտը։

«Իսկ ինչո՞ւ է նա քաղաքում»։

«Որովհետև ծերունի պանն ինքը քաղաքումն է. նա արդեն մեկ ու կես տարի է, որ իբրև վոևոդ նստած է Դուբնոյում»։

«Իսկ նա ամուսնացե՞լ է... Դե ասա՛, ի՞նչ զարմանալին ես, իսկ ի՞նչ է նա...»։

«Նա երկրորդ օրն է, որ բան չի կերել»։

«Ո՞նց թե»։

«Քաղաքի բնակիչներից ոչ մեկը վաղուց է, որ հացի պատառ չունի։ Վաղուց է, որ բոլորը հող են ուտում»։

Անդրին քարացավ։

«Քաղաքի պատնեշի վրայից պաննան տեսավ քեզ զապրոժցիների հետ։ Նա ինձ ասաց. «Գնա՛, ասա ասպետին՝ եթե նա ինձ հիշում է, թող ինձ մոտ գա. իսկ եթե չի հիշում, թող մի կտոր հաց տա իմ պառավ մորը, որովհետև ես չեմ ուզում տեսնել, թե ինչպես մայրս պիտի մեռնի իմ աչքերի առաջ։ Լավ է ուրաչ ե՛ս մեռնեմ, իսկ նա ինձնից հետո։ Անդրիր և ընկիր նրա ծնկներն ու ոտքերը։ Նա էլ պառավ մայր ունի՝ թող ի սեր նրա հաց ուղարկի»։

Կողակի երիտասարդ սրտում բռնկվեցին ու զարթնեցին բազմապիսի զգացմունքներ։

«Բայց դու ինչպե՞ս ես ընկել այստեղ։ Ինչպե՞ս եկար»։

«Գետնի տակի անցքով»։

«Մի՞թե գետնի տակ անցք կա»։

«Կա՛»։

«Ո՞րտեղ է»։

«Ջե՞ս մատնի, ասպետ»։

«Երդվում եմ սուրբ խաչով»։

«Եթե իջնես սելավի քարուտը, անցնես ջուրը, այնտեղ է, ուր եղեգնուտն է»։

«Նվ ուղիղ տանում է քաղա՞ք»։

«Ուղիղ դեպի քաղաքի վանքը»։

«Գնա՛նք, հենց հիմա գնանք»։

«Բայց, ի սեր Քրիստոսի և սուրբ Մարիամի, մի կտոր հաց»։

«Լա՛վ, կտանենք։ Սպասիր սայլի մոտ, բայց ավելի լավ է պառկիր սայլի մեջ. քեզ ոչ ոք չի տեսնի, բոլորը քնած են։ Ես իսկույն կվերադառնամ»։

Եվ նա գնաց դեպի այն սայլերը, որոնց մեջ ամբողջ կուբենի պաշարն էր։ Նրա սիրտը տրոփում էր։ Ողջ անցյալը, այն ամենը, ինչ ծածկել ու խլացրել էին կողակային ճամբարը, ռազմի դաժան կյանքը, այդ ամենը միանգամից երեւելավ և իր հերթին խոր սուզեց ներկան։ Ինչպես ծովի խորունկ ու խավար խորքից, նորից լողալով դուրս եկավ այն չքնաղ կինը. նրա հիշողության մեջ նորից շողացին նրա գեղեցիկ ձեռքերը, աչքերը, ժպտացող շրթունքները, ընկույզի գույնի թուխ վարսերը, որի գանգուր խուրձերը թափվում էին կրծքի

վրա և կուսական մարմնի մնացած առաձիգ ու համաչափ անդամները։ Ո՛չ, նրա սրտի մեջ նրանք չէին հանգել և չէին պղնձացել, նրանք միայն մի կողմ էին քաշվել, որպեսզի միաժամանակ ազատություն տան ուրիշ հզոր զգացումների։ Նվ սակայն երիտասարդ կոզակի խորունկ քունը նրանք հաճախ էին վրդովում։ Նվ, արթնանալով, նա անքուն պառկում էր մահճի վրա, չկարողանալով մեկնել իր անքնության պատճառը։

Նա քայլում էր, իսկ սիրտը տրոփում էր ավելի և ավելի ուժեղ, երբ հիշում էր, որ նրան նորից պիտի տեսնի, և դողում էին առույգ ծնկները։ Հասնելով սայլերին՝ նա բոլորովին մոռացավ, թե ինչու է եկել. ձեռքը ճակատին տարավ և երկա՜ր-երկար շփեց ճակատը, ջանալով հիշել, թե ի՞նչ պետք է անի։ Վերջապես, ցնցվեց և ահը պատեց նրան. նա հանկարծ մտաբերեց, որ աղջիկը մեռնում է քաղցից։ Նա հարձակվեց սայլի վրա և թևի տակ դրեց մի քանի մեծ սև հաց. բայց իսկույն մտածեց, թե այդ ուտելիքը, որ հարմար է բռի և անքմահաճ զապորոժցու համար, արդյոք կոշտ և անվայել չի՞ նրա նուրբ կազմվածքին։ Նա հիշեց, որ կոշևոյը երեկ խոհարարներին նախատում էր, որ նրանք ամբողջ արինջի ալյուրը մեկ անգամից եփել են խավիծի համար, այնինչ ալյուրը հերիք կաներ երեք անգամի։ Լիովին համոզված, որ կաթսաների մեջ նա կգտնի խավիծ, որքան ուզի, նա դուրս քաշեց հոր ռազմերթի կաթսան և գնաց իրենց կուրենի խոհարարի մոտ, որը քնած էր երկու տասը դուլլանոց կաթսաների կողքին, որոնց տակ մոխիրը դեռ տաք էր։ Նայելով կաթսաների մեջ, նա զարմացավ, տեսնելով, որ երկուսն էլ դատարկ են։ Գերմարդկային ուժեր էին պետք կաթսաները դատարկելու, մանավանդ որ նրանց կուրենում ավելի քիչ մարդիկ կային, քան ուրիշ կուրեններում։ Նա նայեց ուրիշ կուրենների կաթսաները. ամեն տեղ դատարկ էր։ Ակամայից նա մտաբերեց ասացվածքը. «Զապորոժցիները երեխաների նման են, քիչ լինի կուտեն, շատ լինի՝ է՛լի բան չեն թողնի»։ Ի՞նչ անել։ Մի ինչ-որ տեղ, կարծես հոր սայլի վրա, պետք է որ մի պարկ ապխտակ հաց լինի, որ գտել էին վանքի փուռը կողոպտելու ժամանակ։ Նա ուղղակի մոտեցավ հոր սայլին, բայց սայլի վրա պարկը չկար։ Օստապը պարկը դրել էր գլխատակին և

գետնի վրա փռված, խոմփացնում էր ամբողջ դաշտով։ Նա մի ձեռքով բռնեց պարկը և հանկարծ քաշեց, այնպես որ Օստապի գլուխն ընկավ գետնին, և նա քնաթաթախ վեր թռավ և աչքերը փակ նստելով, ամբողջ ուժով գոռաց. «Բռնե՛ք, բռնե՛ք սատանի ձագ լեհին... բռնե՛ք, ձիուն բռնե՛ք...»։ «Լռի՛ր, քեզ կսպանեմ»,— ահից բղավեց Անդրին, նրա վրա բարձրացնելով հացի պարկը։ Սակայն Օստապն առանց այդ էլ արդեն խոսքը չշարունակեց, հանդարտվեց և այնպես խորմփաց, որ նրա շնչառությունից օրորվեցին կողքի խոտերը։ Անդրին վեհերոտ նայեց չորս կողմը, որպեսզի տեսնի, թե կոզակներից որևէ մեկին չի՞ արթնացրել Օստապի քնատ զառանցանքը։ Ճիշտ որ ցցունքով մի գլուխ մոտակա կուրենում գետնից բարձրացավ, աչքերը ման ածեց և նորից գետին խոնարհվեց։ Երկու րոպե սպասելով, նա վերջապես ճանապարհ ընկավ՝ բեռը շալակին։ Թաթարուհին պառկել և հազիվ էր շնչում։ «Վե՛ր կաց, գնանք։ Բոլորը քնած են, մի՛ վախենա։ Կարո՞ղ ես դու այս հացերից մեկը վերցնել, եթե ես չկարենամ բոլորը շալակել»։ Այս ասելով նա շալակեց պարկերը, մի սայլի մոտով անցնելիս դուրս քաշեց նաև մի պարկ կորեկ, ձեռքն առավ նույնիսկ այն հացերը, որ ուզում էր հանձնել թաթարուհուն և ծանրության տակ մի քիչ կքած, խիզախությամբ անցավ քնած զապորոժցիների շարքերի միջով։

«Անդրի՛»,— ասաց ծերունի Բուլբան այն պահին, երբ նա անցավ նրա մոտով։ Նրա սիրտը քարացավ։ Նա կանգ առավ և ամբողջովին դողալով, հեզիկ արտասանեց.

«Ի՞նչ է»։

«Քեզ հետ կնիկարմատ կա։ Աստված վկա, վեր կկենամ, կողքաճաղերդ կփշրեմ։ Կնիկարմատը քեզ լավ օրի չի՛ հասցնի»։ Այդ ասելով, նա գլուխը հենեց արմունկին և սկսեց ուշիուշով դիտել շղարշի մեջ փաթաթված թաթարուհուն։

Անդրին կանգնել էր կիսակենդան, չհամարձակվելով նայել հոր դեմքին։ Եվ ապա, երբ աչքերը բարձրացրեց և նայեց հորը, նա տեսավ, որ ծերունի Բուլբան արդեն քնել էր, գլուխը ձեռքի ափի մեջ։

Նա խաչակնքեց։ Հանկարծ նրա սրտից ահը չքացավ ավելի արագ, քան պատել էր։ Իսկ երբ նա շրջվեց, որ նայի թաթարուհուն, նա արդեն նրա առջևն էր, ինչպես գրանիտի խա-

վար արձան, շղարշի մեջ փաթաթված, և հեռավոր հրդեհի ցոլքը բռնկվելով, լուսավորեց միայն նրա աչքերը, որոնք դիակի աչքերի նման սառած էին։ Նա քաշեց նրա թևը, և երկուսը միասին գնացին, անընդհատ ետ նայելով, և վերջապես, զառիվայրով իջան ցածր գետահովիտը, որ հեղեղատի հուն էր, որտեղ ծուլլ-ծուլլ սողում էր գետակը՝ ափերին բոշխ և այս ու այնտեղ մամռոտ գուղձեր։ Իջնելով այդ գետահովիտը, նրանք իսպառ ծածկվեցին այն դաշտից, ուր զապորոժցիների զորաբանակն էր։ Համենայն դեպս, երբ Անդրին ետ նայեց, տեսավ, որ իր ետևից թեքությունը մի մարդահասակի չափ բարձր էր. նրա գագաթին օրորվում էին դաշտային խոտերը, իսկ նրանց վրա՝ երկնքում լուսինն էր, իբրև ալ կարմիր ոսկու թեք մանգաղ։ Տափաստանից եկող հովն արդեն իմաց էր անում, որ մինչև լուսաբացը քիչ է մնացել։ Բայց ոչ մի տեղից չէր լսվում աքաղաղի հեռավոր կանչը. ո՛չ քաղաքում և ո՛չ էլ ավերված շրջակայքում չէր մնացել և ո՛չ մի աքաղաղ։ Մի փոքրիկ գերանի վրայով նրանք անցան գետակը, որի այն կողմը բարձրանում էր մյուս ափը, որ ավելի բարձր էր թվում, քան այս ափը, և նման էր իսկական դարափուլի։ Կարծես այդ տեղը քաղաքային բերդի ամուր ու հուսալի մի կետն էր, և գոնե հողե պատնեշն այդտեղ ավելի ցածր էր և հետևից չէր երևում պահակազորը։ Բայց ավելի հեռու բարձրանում էր վանքի հաստ պատը։ Փուլ եկած ափը պատած էր մացառով, և գետակի ու դարափուլի միջև եղած փոքրիկ հովիտը ծածկված էր բարձր եղեգնով, որ համարյա մարդու հասակի էր։ Դարափուլի գագաթին նշմարվում էին ցանկապատի մնացորդները, որոնք մատնում էին երբեմնի բանջարանոցը. ցանկապատի առաջ կատուկի լայն տերևներն էին, որոնց հետևից ցցվել էին թայլը, վայրի փշախոտը և սրևածաղիկը, որ ամենից բարձր էր ցցել գլուխը։ Այստեղ թաթարուհին հանեց քոշերը և ֆայլեց բոբիկ ոտքերով, զգույշ վեր բարձրացնելով փեշերը, որովհետև տեղը ճմուռտ էր և ջրով լի։ Եղեգների միջով անցնելով, նրանք կանգ առան ճախերի կույտի առաջ։ Մի կողմ հրելով ճախերը, նրանք գտան հողե կամարի նման մի բան, մի ճեղք, որ ավելի չէր, քան հացի փուռի ճեղքը։ Թաթարուհին գլուխը խոնարհելով, պառաջինը ներս մտավ, նրա ետևից ներս մտավ Անդրին, կռանա-

լով, որքան կարող էր ցածր, որպեսզի պարկերը շալակին կարողանա անցնել, և շուտով երկուսն էլ կորան կատարյալ մթության մեջ։

VI

Անդրին հազիվ էր շարժվում հողե մութ ու նեղ միջանցքում, հացի պարկերը շալակին հետևելով թաթարուհուն։

«Շուտով լույս կլինի,— ասաց թաթարուհին.— մենք մոտենում ենք այնտեղին, որտեղ ես դրել եմ ճրագը»։

Եվ իրոք, հողե խավար պատերը հետզհետե լուսավորվեցին։ Նրանք հասան մի փոքրիկ հրապարակի, որտեղ մատուռի նման մի բան կար. պատի առաջ դրված էր մի նեղ սեղան, բեմի սեղանի նման, և նրա վրա երևում էր կաթոլիկների աստվածամոր պատկերը՝ համարյա իսպառ մաշված ու խունացած։ Պատկերի առաջ կախված փոքրիկ արծաթյա կանթեղը հազիվ էր լուսավորում։ Թաթարուհին կռացավ, գետնից վերցրեց պղնձե ճրագը՝ բարակ ու բարձր կոթով, փոքրիկ ունելիքներով, որոնք կախված էին շղթաներից, ճաղով՝ պատրույգը սարքելու համար, և մարիչով։ Նա ճրագը վառեց կանթեղի կրակից։ Լույսն ուժեղացավ, և նրանք, միասին քայլելով, մերթ լուսավորվելով զորավոր կրակից, մերթ ընկնելով ածխի նման սև ստվերների մեջ, հիշեցնում էին Հերարդոյի dalla notte նկարները։ Ասպետի չքնաղ դեմքը՝ երիտասարդ, առույգ և առողջ, նրա ուղեկցուհու սմքած ու գունատ դեմքի խիստ հակադրությունն էր։ Անցքը մի քիչ ավելի լայնացավ, այնպես որ Անդրին կարողացավ մեջքը շտկել։ Նա հետաքրքրությամբ էր դիտում հողե պատերը, որոնք հիշեցնում էին Կիևի քարանձավները։ Այստեղ էլ, ինչպես Կիևի քարանձավներում, պատերի մեջ երևում էին խոր նիշեր և մի քանի տեղ դագաղներ կային. երբեմն հանդիպում էին մարդկային ոսկորների, որոնք խոնավությունից փափկել ու փշրվել էին ալյուրի նման։ Երևում էր, որ այստեղ եղել են նաև սուրբ մարդիկ, որոնք պատսպարվել են աշխարհի գայթակղություններից, դառնություններից ու փոթորիկներից։ Տեղ-տեղ խոնավությունը չափազանց էր. երբեմն նրանց ոտքերի տակ չուր էր։ Անդրին ստիպված էր հաճախ կանգ առնել, որպեսզի շունչ առներ նրա ուղեկցուհին, որի հոգնածու-

թյունն անդադար կրկնվում էր։ Հացի մի պատառը, որ կերել էր քաթարուհին, միայն ցավ էր առաջացրել ննդից ետ վարժված ստամոքսի մեջ, և նա հաճախ մի քանի րոպե անշարժ կանգնում էր մի տեղում։ Վերջապես նրանց առջև երեվաց երկաթե մի փոքրիկ դուռ։ «Է՛հ, փառք աստծո, հասանք»,— նվազ ձայնով ասաց քաթարուհին, բարձրացնելով ձեռքը, որպեսզի բախի դուռը, սակայն ուժ չունեցավ։ Նրա փոխարեն Անդրին ուժգին հարվածեց դուռը. լսվեց դղրդոց, որ վկայում էր, թե դռան այն կողմն ընդարձակ տարածություն էր։ Այդ դղրդոցը փոխվում էր, ըստ երևույթին դեմ առնելով բարձր կամարների։ Երկու րոպեից հետո բանալիները աղմկեցին. ըստ երևույթին մեկն իջնում էր սանդուղքով։ Վերջապես դուռը բացվեց. նրանց դիմավորեց մի վանական, որ կանգնել էր նեղ սանդուղքի վրա, բանալիներն ու մոմը ձեռքին։ Տեսնելով կաթոլիկ վանականին, Անդրին ակամայից կանգ առավ. կողակները նրանց ավելի էին ատում և արհամարհում, նրանց հետ վարվում էին ավելի գազանաբար, քան չհուդների հետ։ Վանականը ևս, տեսնելով զապորոժցի կոզակին, մի քիչ ետ քաշվեց, սակայն քաթարուհու անպարզալուր արտասանած խոսքը նրան հանգստացրեց։ Նա լուսավորեց նրանց ուղին, նրանց ետևից կողպեց դուռը, սանդուղքով նրանց վեր բարձրացրեց, և նրանք դուրս եկան վանքի եկեղեցու խավար ու բարձր կամարների տակ։ Մոմերով ու մոմակալներով զարդարված բեմի առաջ ծնկաչոք մի քահանա մեղմ աղոթում էր։ Նրա երկու կողքին նույնպես չոքել էին երկու երիտասարդ կղերականներ, մուգ մանուշակագույն քղամիդներով, սպիտակ ասեղնագործ շեմիզետներով և բուրվառները ձեռքներին։ Քահանան աղոթում էր հրաշքի առաքման համար, քաղաքի փրկության և ընկճված ոգու հզորացման համար, համբերության առաքման ու գայթակղիչի վտարման համար, մի գայթակղիչ, որ շշնջում էր տրտունջ, փոքրոգի ու հեզ ողբ երկրային դժբախտությունների առթիվ։ Ուրվականների նման մի քանի կանայք ծունկ էին չոքել, հենված նրանց առջևը եղած փայտե սև նստարանների և աթոռների վրա, որոնց թիկնոցին նրանք դրել էին իրենց նվաղած գլուխները. մի քանի տղամարդիկ, հենված սյուներին ու որմնասյուներին, որոնց վրա էին ծանրացել կողքի կամարները,

նույնպես տխուր ծունկ էին չոքել։ Բեմի վրա գույնզգույն ապակիներով լուսամուտները շառագունել էին վաղորդայնի վարդագույն կարմիրով, և հատակի վրա ընկել էին կապույտ, դեղին և այլ գույնի լույսի բոլորակներ, որոնք անակնկալ լուսավորեցին խավար եկեղեցին։ Հեռավոր խորության մեջ ողջ բեմը հանկարծ փայլեց. բուրվառի ծուխն օդի մեջ կանգնեց, ինչպես ծիածանով լուսավորված ամպ։ Անդրին իր խավար անկյունից հիացմունքով էր նայում այն հրաշքին, որ կատարեց լույսը։ Այդ ժամանակ երգեհոնի վեհասքանչ շառաչը հանկարծ լցրեց ամբողջ եկեղեցին. նա հետզհետե դարձավ ավելի թանձր և թավ, հզորացավ, դարձավ որոտի ծանր թնդյուններ և ապա միանգամից փոխվելով երկնային երաժըշտության, սլացավ կամարներից բարձր՝ իր երգեցիկ հընչյուններով, որոնք հիշեցնում էին աղջկային բարակ ձայներ, և ապա նորից դարձավ թանձր շառաչ ու որոտ և լռեց։ Եվ դեռ երկա՜ր-երկար հնչում էին որոտի թնդյունները, դողում էին կամարների տակ, և Անդրին՝ բերանը կիսաբաց, զարմացել էր այդ մեծասքանչ նվագից։ Այդ ժամանակ նա զգաց, որ մեկը քաշեց իր կաֆտանի փեշից։ «Ժամանակն է»,— ասաց Թաթարուհին։ Նրանք աննկատելի կերպով անցան եկեղեցու միջով և ապա դուրս եկան հրապարակը, որ եկեղեցու առջևն էր։ Վաղուց արդեն շառագունել էր արշալույսը. ամեն ինչ ազդարարում էր արևի ծագելը։ Հրապարակը, որ քառակուսի ձև ուներ, իսպառ ամայի էր. մեջտեղը դեռ մնում էին փայտյա երկու սեղան, որ վկայում էին, թե գուցե դեռ մի շաբաթ առաջ այստեղ եղել է ուտելեղենի շուկան։ Փողոցը, որ չէին սալահատակում այն ժամանակ, նման էր չորացած ցեխի կույտերի։ Չորս կողմից հրապարակը շրջապատել էին քարե ցածր և կավե միհարկանի տներ, որոնց պատերի մեջ երևում էին փայտե ցցեր ու սյուներ՝ պատի ամբողջ բարձրությամբ, որոնք խաչաձև կապված էին դարձյալ փայտե կապերով, ինչպես առհասարակ կառուցում էին այն ժամանակի բնիկները, մի ձև, որ դեռ այժմ էլ կարելի է տեսնել Լիտվայի և Լեհաստանի մի քանի վայրերում։ Բոլոր տները ծածկված էին չափազանց բարձր կտուրներով, որոնք ունեին պատուհաններ ու ծխաններ։ Մի կողմին, համարյա եկեղեցու մոտ, մյուս տներից բարձր երևում էր մի շինություն՝ մյուսներից տարբեր, որ

ըստ երևույթին քաղաքային մագիստրատն էր կամ որևէ այլ կառավարական տուն։ Նա երկհարկանի էր, և նրա վերևը կառուցված էր բելվեդերը՝ երկու կամարով. այնտեղ կանգնած էր պահակը։ Կտուրին ամրացված էր մեծ ժամացույցը։ Հրապարակը կարծես անկենդան էր, բայց Անդրին լսեց մի թույլ նվվոց։ Ջորս կողմը դիտելով, նա հրապարակի մյուս ծայրին նկատեց երկու-երեք մարդկանց, որոնք համարյա անշարժ պառկել էին գետնին։ Նա ավելի ուշադիր սևեռեց աչքերը, որպեսզի տեսնի, արդյոք քնա՞ծ են նրանք, թե մեռած, և այդ ժամանակ դիպավ ոտքի առաջ ընկած մի բանի։ Դա մեռած կնոջ մարմին էր, ըստ երևույթին՝ չհուդ կնոջ։ Երևում էր, որ կինը դեռ երիտասարդ էր, թեև նրա թորշոմած և այլանդակված դիմագծերն այդ չէին ասում։ Նրա գլխին մետաքսի կարմիր թաշկինակ էր. գոհարների կամ ուլունքների երկու շարք զարդարում էին նրա ականջակալները, երկու-երեք երկար հյուսած գանգուրներ կախվել էին նրա չորացած պարանոցի վրա, որի երակները ձգվել էին։ Նրա մոտ պառկել էր մի երեխա, որ ջղաձիգ ձեռքով բռնել էր մոր նիհար կուրծքը և, կաթ չգտնելով, ակամա չարասրտությունից մոր կուրծքը ոլորել էր իր մատներով։ Նա արդեն ո՛չ լալիս էր և ո՛չ բղավում, այլ միայն նրա հանդարտ իջնող ու բարձրացող ստամոքսից կարելի էր կարծել, որ նա դեռ չի մեռել և կամ դեռ նոր է պատրաստվում փչելու վերջին շունչը։ Նրանք դարձան դեպի փողոցները, և հանկարծ նրանց կանգնեցրեց մի խեղլագար, որը տեսնելով Անդրիի թանկագին բեռը, վագրի նման հարձակվեց նրա վրա, կառչեց նրանից և բղավեց. «Հա՜ց»։ Սակայն նրա ուժերը նրա գազանության չափ չէին. Անդրին նրան հրեց, և նա գետին գլորվեց։ Կարեկցությունից դրդված նա մի հաց շպրտեց նրան, և խեղլագարը կատաղած շան նման հարձակվեց հացի վրա, կրծեց ու կծոտեց, և հենց նույն տեղը, փողոցում, սոսկալի գալարումներով շունչը փչեց, որովհետև շատ վաղուց ոչինչ չէր կերել։ Համարյա յուրաքանչյուր քայլափոխի նրանց զարմացնում էին քաղցի սոսկալի զոհերը։ Թվում էր, թե շատերը տանը չդիմանալով տանջանքներին, դիտմամբ փողոց էին թափվել. արդյոք օդի հետ չի՞ առաքվի ուժ սնուցող մի որևէ բան։ Մի տան շեմքի առաջ նստել էր մի պառավ և չէր կարելի ասել՝ քնա՞ծ է նա, մեռե՞լ է, թե՞

ուշագնա է. համենայն դեպս նա ոչինչ չէր լսում ու չէր տես-նում և, գլուխը կրծքին խոնարհած, անշարժ նստել էր միև-նույն տեղը։ Մի ուրիշ տան կտուրից, պարանի հանգույցից ներքև էր կախվել մի ձգված և սմքած մարմին. խեղճը մինչև վերջ չէր կարողացել կրել քաղցի տանջանքները և ավելի լավ էր համարել ինքնակամ սպանությամբ արագացնել իր վախ-ճանը։ Քաղցի այդ սոսկալի ապացույցները տեսնելով՝ Անդրին չդիմացավ և հարցրեց Թաթարուհուն.

«Մի՞թե սրանք ոչինչ չեն գտել՝ մի կերպ կյանքը երկա-րացնելու։ Մարդ եթե վերջին հուսահատության է հասնում, ուզի-չուզի պիտի ուտի այնպիսի բաներ, որոնցից առաջ զզվում էր. նա կարող է ուտել այնպիսի անասուններ, որոնք անսուրբ են. ամեն ինչ կարող է սնունդ լինել»։

«Ամեն ինչ կերել են,— ասաց Թաթարուհին,— ամբողջ տավարը։ Քաղաքում չես գտնի ո՛չ ձի, ո՛չ շուն, ո՛չ նույնիսկ մուկ։ Մեր քաղաքը երբեք պաշար չի պահել. ամեն ինչ գյու-ղերից էին բերում»։

«Բայց ինչպե՞ս է, որ մեռելներով այսպիսի ժանտ մահով, դուք դեռ հույս ունեք քաղաքը պաշտպանելու»։

«Այո՛, գուցե վոևոդն անձնատուր լիներ, բայց երեկ կող-ջանի զորամասի պետը մի բազե էր բաց թողել քաղաքի կող-մը և գրել էր, որ քաղաքը չհանձնեն, որ նա օգնության է գալիս իր զորագնդով, բայց սպասում է մի ուրիշ զորավարի, որպեսզի երկուսով միասին գան։ Եվ հիմա ամեն րոպե նրանց սպասում են... Բայց ահա և հասանք տուն»։

Անդրին դեռ հեռվից էր տեսել տունը, որ նման չէր մյուս-ներին և թվում էր, թե կառուցված է մի որևէ իտալացի ճար-տարապետի ձեռքով։ Նա շինված էր գեղեցիկ ու բարակ աղ-յուսներից և երկհարկանի էր։ Ստորին հարկի պատուհաններն ամփոփված էին բարձր ցցված գրանիտե երիզների մեջ. վե-րին հարկն ամբողջովին փոքրիկ կամարներից էր, որոնք սրահ էին կազմում. կամարների միջև երևում էին զինանիշներով վանդակները. տան անկյունում նույնպես զինանիշներ կային։ Ներկած աղյուսներից կառուցված դրսի լայն սանդուղքը տա-նում էր ուղիղ դեպի հրապարակ։ Սանդուղքի ոտների մոտ նստել էին մի-մի պահակ, որոնք համաչափ և գեղեցկատեսիլ՝ մի ձեռքով բռնել էին իրենց կողքին դրած կրկնատեք գեղար-

դը, իսկ մյուս ձեռքը դեմ էին տվել խոնարհած գլուխներին, և նման դիրքով նրանք թվում էին ավելի քանդակի նման, քան կենդանի էակների։ Նրանք ո՛չ քնել էին և ո՛չ էլ ննջում էին, բայց թվում էր, թե անզգա էին դեպի ամեն ինչ. նրանք նույնիսկ ուշադրություն չէին դարձնում նրանց, որոնք բարձրանում էին սանդուղքով։ Սանդուղքի գլխին նրանք տեսան շքեղ հագնված, ոտքից գլուխ զինված մի ռազմիկի, որը ձեռքին աղոթագիրք ուներ։ Նա կամեցավ հոգնատանջ աչքերը դարձնել նրանց կողմը, բայց թաթարուհին նրան մի խոսք ասաց, և նա աչքերը նորից խոնարհեց իր աղոթագրքի բաց էջերի վրա։ Նրանք մտան առաջին սենյակը, որ բավական ընդարձակ էր և ծառայում էր որպես ընդունարան և կամ նախասենյակ։ Այդ սենյակը լիքն էր պատերի տակ զանազան դիրքով նստած զինվորներով, սպասավորներով, գրագիրներով, մատուցակներով և այլ սպասավորներով, որոնք անհրաժեշտ էին լեհացի ազնվատոհմ իշխանի դիրքը ցույց տալու՝ թե՛ իբրև զորավարի և թե՛ սեփական կալվածքների տիրոջ։ Ջգացվում էր հանգած ճրագի մխահոտը. դեռ վառվում էին երկու ուրիշ ճրագներ, որ դրված էին խոշոր, համարյա մարդու հասակի ջահակալների վրա, սենյակի մեջտեղը, չնայած որ լայն պատուհանի ճաղերի միջից վաղուց արդեն նայում էր առավոտը։ Անդրին հենց այն է՝ կամենում էր ուղղակի ներս մըտնել կաղնու փայտից շինած լայն դռնով, որ զարդարված էր զինանիշով և այլ բազմաթիվ զարդերով, երբ թաթարուհին նրա թևից քաշեց և ցույց տվեց կողքի պատի մեջ եղած փոքրիկ դուռը։ Այդ դռնից նրանք նես մտան միջանցքը և ապա մի սենյակ, որ նա լավ դիտել չկարողացավ։ Փեղկի ճեղքից ներս ընկած լույսը դիպել էր արնագույն վարագույրին, ոսկեզօծ երիզին և պատի զարդանկարին։ Թաթարուհին այստեղ Անդրիին պատվիրեց սպասել, բացեց մի ուրիշ սենյակի դուռ, որտեղից շողաց կրակի լույսը։ Անդրին լսեց շշնջոց և մեղմ ձայն, որ նրա ներսում ցնցեց ամեն ինչ։ Բայց դռնից նա տեսավ, թե ինչպես վայրկենաբար երեաց կանացի վայելչակազմ մի կերպարանք, երկար ու փառահեղ ծամով, որ ընկել էր վեր բարձրացրած ձեռքի վրա։ Թաթարուհին վերադարձավ և ասաց, որ նա ներս մտնի։ Նա չէր հիշում, թե ինչպես ներս մտավ և ինչպես նրա ետևից դուռը փակվեց։ Սենյակում վառ-

վում էին երկու մոմ, տիրամոր պատկերի առաջ մարմրին էր անում կանթեղը. պատկերի տակ բարձր սեղան էր, որ ուներ աստիճաններ, որոնց վրա, ըստ կաթոլիկների սովորության, չոքում էին աղոթքի ժամանակ։ Սակայն Անդրիի աչքերն այդ չէին որոնում։ Նա դարձավ մյուս կողմը և տեսավ մի կնոջ, որ կարծես սառել և քարացել էր մի արագ շարժման ընթացքում։ Թվում էր, թե կնոջ ողջ կերպարանքը կամենում էր փաթաթվել նրան և հանկարծ կանգնել էր։ Եվ Անդրին ևս նրա առաջ զարմացած մնաց։ Նա չէր երևակայել կնոջն այդպես տեսնել. այդ նա չէր, այն կինը, որին առաջ ճանաչում էր. ոչնչով նման չէր առաջվա կնոջը, սակայն այժմ նա կրկնակի չքնաղ և հրաշալի էր, քան առաջ։ Այն ժամանակ նրա մեջ դեռ կար թերի և անկատար մի ինչ-որ բան. այժմ այդ մի գործ էր, որին նկարիչը հպել էր վրձինի վերջին հարվածը։ Նախկինը չքնաղ և թեթևամիտ աղջիկ էր. իսկ այս մեկը գեղեցկուհի էր, մի կին, որ հասունացրել էր իր ողջ գեղեցկությունը։ Նրա սևեռուն աչքերի մեջ ցոլանում էր ամբողջական զգացմունքը. ո՛չ թե զգացմունքի հատվածներ և ո՛չ էլ ակնարկներ, այլ ամբողջական զգացմունք։ Նրա աչքերի մեջ դեռ չէր ցամաքել արցունքը, որ պատել էր աչքերը հոգի թափանցող շողշողուն խոնավությամբ. կուրծքը, պարանոցը և թիկունքը պարուրվել էին այն սքանչելի սահմաններում, որ հատուկ են հասունացած կատարյալ գեղեցկության. մազերը, որ առաջ թեթև խոպոպիկներով կախված էին դեմքի վրա, այժմ դասրձել էին փարթամ ու չքնաղ ծամ, որի մի մասը հյուսած էր, իսկ մյուսը ձեռքի ողջ երկարությամբ փռված էր, և բարակ, սիրունատես կեռացրած նրա երկար մազերը թափվել էին կրծքի վրա։ Թվում էր, թե նրա բոլոր դիմագծերը փոխվել էին։ Եվ իզուր էր Անդրին ջանք թափում գտնելու թեկուզ մի դիմագիծ, որ կար նրա հիշողության մեջ. չէր մնացել և ոչ մեկը։ Որքան էլ սաստիկ էր նրա գունատությունը, այնուամենայնիվ, այդ գունատությունը չէր մոայլում նրա հրաշալի գեղեցկությունը, այլ ընդհակառակն, թվում էր, թե տալիս էր մի ինչ-որ սլացիկ, անդիմադրելի և հաղթական արտահայտություն։ Եվ Անդրին իր հոգու մեջ զգաց ակնածալի վախ և անշարժ կանգնեց նրա առջև։ Թվում էր, թե կինը ևս հիացել էր կոզակի տեսքով, և Անդրին կանգնել էր նրա

առաջ, իր ողջ գեղեցկությամբ ու պատանեկան արիության ուժով, մի արիություն, որ քվում էր, թե մարմնի անդամների անշարժության մեջ իսկ մատնում էր շարժումների սանձարձակ ազատությունը. նրա աչքերը շողում էին հստակ ամրությամբ, թավշանման հոնքը ձգվել էր աղեղի նման պիրկ, արեվառ այտերը փայլում էին կուսական կրակի ողջ պայծառությամբ և ինչպես մետաքս պլպլում էր նոր ու սև բեղը։

«Ո՛չ, ես անկարող եմ գոհունակություն հայտնել քեզ, ո՛վ մեծահոգի ասպետ,— ասաց աղջիկը, և դողդողացին նրա ձայնի արծաթյա հնչյունները։— Միայն աստված կարող է քեզ երախտահատուց լինել և ոչ ես, անզոր կինս...»։

Նա ցած խոնարհեց աչքերը. ձյունե չքնաղ կիսաբոլորակներով աչքերի վրա իջան կոպերը, որոնք եզերված էին սլաքի նման երկար արտևանունքներով. խոնարհվեց և նրա չնաշխարհիկ դեմքը, և նուրբ կարմիրը շառագունեց նրան։ Անդրին չգիտեր ինչ ասել դրան ի պատասխան. նա կկամենար ասել բոլորը, ինչ կար իր հոգու մեջ, ասել նույնքան կրակոտ, ինչքան կրակոտ էր հոգու ներսը, բայց չկարողացավ։ Նա զգաց ինչ-որ բան, որ փակում էր շրթունքները. բառերը հնչյուններից մերկացան. նա զգաց, որ ինքը չէ, որ պիտի պատասխանի այդպիսի խոսքերին, որովհետև դաստիարակվել էր բուրսայում և ռազմի թափառական կյանքում, զգաց և զայրացավ իր կոզակի բնավորության վրա։

Այդ ժամանակ թաթարուհին ներս մտավ։ Նա արդեն ասպետի բերած հացը և ուտելիքը կտրատել էր և ներս բերեց ոսկե սկավառակի վրա ու դրեց իր պաննայի առջև։ Գեղեցկուհին նայեց նրան, նայեց հացին և աչքերը հառեց Անդրիին. շատ բան կար այդ աչքերի մեջ։ Այդ քաղցր հայացքը, որ ցույց էր տալիս զգացումներն արտահայտելու անզորությունը և ուժասպառ լինելը, Անդրիին ավելի մատչելի էր, քան բոլոր խոսքերը։ Նա հոգու մեջ հանկարծ թեթևություն զգաց. քվում էր, թե բոլոր կապերն արձակվեցին։ Այն ամենը, ինչ որ մինչ այդ զսպված էր մի ժժվար սանձով, այժմ իրեն ազատ ու սանձերն արձակ զգաց և արդեն կամենում էր ժայթքել բառերի անզուսպ հեղեղով։ Այնինչ գեղեցկուհին, դառնալով թաթարուհու կողմը, անհանգիստ հարցրեց.

«Իսկ մա՞յրս։ Դու նրան հաց տվե՞լ ես»։

«Նա քնած էր»։

«Իսկ հո՞րս»։

«Տարա նրան, նա առաց, որ ինքը կգա և ասպետին շնորհակալություն կհայտնի»։

Նա հացը վերցրեց և բերանն առավ։ Անդրին շունչը պահեց և միայն նայում էր, թե ինչպես է նա իր շողշողուն մատներով հացը պոկում և ուտում։ Ու հանկարծ հիշեց քաղցից խելագար մարդուն, որը նրա աչքի առաջ շունչը փչեց, հենց որ մի կտոր հաց կերավ։ Նա գունատվեց և նրա ձեռքից բռնելով, բղավեց. «Հերիք է, էլ մի՛ ուտի, դու վաղուց է չես կերել, հացը հիմա կարող է քեզ սպանել»։ Պաննան իսկույն իջեցրեց ձեռքը, հացը դրեց սկավառակի վրա և ինչպես հնազանդ երեխա, նայեց նրա աչքերին։ Եվ թող որևէ մեկը խոսքով կարողանա արտահայտել այդ... սակայն թե՛ դուրը, թե՛ վրձինը և թե՛ հզորագույն բառն անզոր են արտահայտելու ոչ այն, ինչ երբեմն նկատելի է կույսի աչքերի մեջ, և ոչ էլ այն հեզահամբույր զգացումը, որ համակում է կույսի այդպիսի հայացքներ դիտողին։

«Թագուհի,— բացականչեց Անդրին, որը լեփ-լեցուն էր թե՛ սրտի և թե՛ հոգու զգացումներով։— Քեզ ի՞նչ է պետք, ի՞նչ ես ուզում, հրամայիր ինձ։ Տուր ինձ աշխարհի ամենադժվար գործը, և ես կվազեմ կատարելու։ Ինձ ասա անեմ այն, ինչ որ չի կարող անել և ոչ մի մարդ, և ես կկատարեմ, ես մահու կտամ իմ գլուխը... կտա՛մ, կտա՛մ իմ կյանքը, և քեզ համար խորտակել կյանքը, երդվում եմ սուրբ խաչով, ինձ համար այնքան քաղցր է... բայց ես անզոր եմ ասելու, թե ինչքան քաղցր է։ Ես ունեմ երեք ագարակ, իմ հոր երամակների կեսը իմն է, այն բոլորը, ինչ որ մայրս օժիտ է բերել, նույնիսկ այն, ինչ որ նա թաքցնում է հորիցս, այդ բոլորն իմն է։ Այժմ կոզակներից ոչ մեկն այնպիսի զենք չունի, ինչպիսին ես ունեմ. միայն իմ թրի կոթին տալիս են ամենաքնտիր երամակը և երեք հազար ոչխար։ Եվ այդ բոլորից կհրաժարվեմ, կթողնեմ, դեն կշպրտեմ, կվառեմ, կթափեմ ջուրը, եթե միայն դու մի խոսք ասես և կամ թեկուզ թարթես քո բարակ ոտ ես ունքը։ Բայց գիտեմ, որ դուցե հիմար խոսքեր եմ ասում և անտեղի, որ այդ բոլորն այստեղ վայել չեն. ես չեմ, որ պիտի այդպես խոսեմ, ես, որ կյանքս անց եմ

Ինչպես բուրոտյում և Ջապորոժիեում. ես չե՛մ, որ պիտի խոսեմ այնպես, ինչպես խոսում են այնտեղ, որտեղ լինում են թագավորները, իշխանները, ազնվատոհմ մարդիկ և տոհմիկ ասպետության լավագույնները։ Տեսնում եմ, որ դու աստծո այլ ստեղծածն ես, քան մենք բոլորս, և քեզնից շատ պահաս են մյուս մնացած իշխանների բոլոր կանայք և կույս աղջիկները։ Մենք անարժան ենք քո ճորտը լինելու. միայն երկնային հրեշտակները կարող են քեզ սպասավոր լինել»։

Աղջիկը, հետզհետե աճող զարմանքով, ամբողջովին լսողություն դարձած, ոչ մի խոսք չարտասանելով, լսում էր պարզ և սրտաբուխ խոսքը, որ, ինչպես հայելու մեջ, արտացոլում էր երիտասարդ և կենսուրախ հոգին, և այդ խոսքի յուրաքանչյուր հասարակ բառը, որ արտասանվում էր սրտի խորքից ելնող ձայնով. համակ ուժ էր։ Նրա չքնաղ դեմքը ձգվել էր առաջ, նա հո՛ վանեց երեսին թափված մազերը, բացեց բերանը և այդպես երկար ժամանակ նայում էր. հետո կամեցավ մի բան ասել, բայց հանկարծ կանգ առավ և հիշեց, որ այլ է ասպետի դերը, որ նրա հայրը, եղբայրները և նրա ողջ հայրենիքը դաժան վրիժառուների նման կանգնել են նրա հետևը, որ զարհուրելի են քաղաքը շրջապատող զապորոժցիները, որ իրե՛նք իրենց քաղաքի հետ դատապարտված են վայրագ մահվան... Եվ նրա աչքերը հանկարծ լցվեցին արցունքով. նա արագ վերցրեց մետաքսե թելերով կարած թաշկինակը, ծածկեց դեմքը և մի վայրկյանում թաշկինակը թաց եղավ։ Եվ իր չքնաղ գլուխը հո՛ դցած՝ երկար նստեց, ձյունափայլ ատամներով սեղմելով իր գեղեցիկ ներքին շրթունքը, կարծես թե անակնկալ զգացել էր թունավոր օձի խայթոց և երեսից չէր հեռացնում թաշկինակը, որպեսզի Անդրին չտեսնի իր հոգեմաշ մորմոքը։

«Մի խոսք ասա՛ ինձ»,— ասաց Անդրին և բռնեց նրա ձախ ձեռքը։ Այդ հպումից նրա երակների միջով անցավ փայլատակող հուրը, և իր ձեռքի մեջ նա սեղմեց աղջկա անզգա ընկած ձեռքը։

Սակայն աղջիկը լուռ էր և դեմքից չէր հեռացնում թաշկինակն ու մնում էր անշարժ։

«Ինչո՞ւ ես դու այդքան տխուր, ասա՛ ինձ, ինչո՞ւ ես դու այդքան տխուր»։

Ադյուտանտը բաշկինակը դեն նետեց, մի կողմ շրջեց աչքերի վրա կախված ծամի երկար մազերը և հորդեց խղճալի խոսքեր՝ արտասանելով մեղմ ու մարմանդ ձայնով, ինչպես չքնաղ երեկոյի քամին, երբ հանկարծ սուրում է եղեգնուտի թանձր թավուտի վրայով, ու հանկարծ սոսափում են, զրնգում ու սլանում են սիրտ մաշող բարակ ձայները, որոնց որսում է անըմբռնելի վշտով կանգ առած ուղևորը և չի զգում ո՛չ հանգչող երեկոն, ո՛չ դաշտային աշխատանքներից ու հնձած արտերից վերադարձող մարդկանց ուրախ երգերը և ո՛չ էլ ինչ-որ տեղով անցնող սայլակի հեռավոր դղրդյունը։

«Արժանի չե՞մ արդյոք հավիտենական աղերսանքի։ Դրժբախտ չէ՞ իմ մայրը, որ ինձ բերել է աշխարհ։ Ինձ բաժին չի՞ ընկել արդյոք դառն վիճակ, և ո՛վ իմ ամեհի բախտ, արդյոք դու իմ արյունարբու դահիճը չի՞ս։ Դու ամենքին բերիր իմ ոտքերի առաջ. ողջ աղնվականության ամենատոհմիկ ներկայացուցիչներին, ամենահարուստ պաներին, կոմսերին և օտարերկրյա բարոններին ու մեր ամբողջ ասպետության ծաղիկը։ Նրանք բոլորն էլ պատրաստ էին սիրել ինձ, և նրանցից յուրաքանչյուրը մեծ բարիք կհամարեր այդ։ Հերիք էր միայն, որ ես ձեռքով անեի, և նրանցից որևէ մեկը, ամենագեղեցիկը, դեմքով ու ցեղով դեղեցկագույնը, կդառնար իմ ամուսինը։ Նրանցից ոչ մեկը չգերեց իմ սիրտը. ո՛վ դաժան բախտ, այնպես արիր, որ մեր երկրի իշխաններից որևէ մեկի փոխարեն իմ սիրտը գերեց օտարականը և մեր թշնամին։ Ո՛վ սուրբ տիրամայր, ինչի՞ համար, ո՞ր մեղքերի և ո՞ր ծանր հանցանքների համար ես այդքան անողոք և անխնա հալածում դու ինձ։ Իմ օրերը սահել են լիութեան և ամենայն ինչի առատության մեջ. ես ունեցել եմ ամենաթանկագին խորտիկներ և քաղցր գինիներ։ Եվ ինչի՞ համար էր այդ բոլորը, ինչի՞ էր պետք. նրա համա՞ր, որ վերջ ի վերջո մեռնենք սոսկալի մահով, ինչպես չի մեռնում թագավորության մեջ վերջին մուրացիկը։ Եվ քիչ է, որ ես դատապարտված եմ այդպիսի սարսափելի վիճակի, քիչ է, որ իմ վախճանից առաջ ես պիտի տեսնեմ, թե ինչպիսի անտանելի տանջանքներով մեռնում են իմ հայրն ու մայրը, որոնց փրկության համար քանի անգամ պատրաստ էի զոհելու իմ կյանքը,— այդ բոլորը դեռ քիչ է. հարկավոր է, որ իմ վախ-

ճանից առաջ ես տեսնեմ ու լսեմ բառեր և սեր, որպիսին ես չեմ տեսել։ Հարկավոր է, որ նա իր խոսքերով իմ սիրտը կտոր-կտոր անի, որ իմ դառն վիճակն ավելի դառնանա, որպեսզի իմ աչքին ավելի ողորմելի լինի իմ մատաղ կյանքը, որ ինձ ավելի սարսափելի թվա իմ մահը և որպեսզի մեռնելու ժամանակ նախատեմ քեզ, ո՛վ իմ դաժան բախտ, և քե՛զ, ներիր իմ մեղքը, սուրբ տիրամայր»։

Ըվ, երբ նա հանդարտվեց, նրա դեմքի վրա ցոլաց անհուսալի զգացումը. նրա յուրաքանչյուր դիմագիծը, և ամեն ինչ՝ տխուր թեքած ճակատից ու վայր խոնարհած աչքերից մինչև արցունքները, որ սառել ու ցամաքել էին աղջկա մեղմ բոցկլտացող այտերի վրա, նրա յուրաքանչյուր դիմագիծը խոսում էր, նվում վշտով և ամեն ինչ կարծես ասում էր. «Այս դեմքի վրա բախտ չկա»։

«Աշխարհում լսված չի, անկարելի է, այդ չի՛ լինի,— ասաց Անդրին,— որ կանանցից լավագույնը և ամենագեղեցիկը կրի այդպիսի դառն վիճակ, երբ ծնվել է, որպեսզի նրա առջև, ինչպես սրբության, ծունկ խոնարհեն այն ամենը, ինչ լավ է աշխարհիս երեսին։ Ո՛չ, դու չես մեռնի, դո՛ւ չես մեռնելու, երդվում եմ իմ ծնունդով և ամեն ինչով, ինչ թանկ է ինձ համար աշխարհում։ Երդվում եմ, որ դու չես մեռնի։ Իսկ եթե պատահի այդ, եթե ո՛չ մի կերպ, ո՛չ ուժով, ո՛չ աղոթքով և ո՛չ արիությամբ կարելի չլինի ետ մղել այդ դառն վիճակը, այն ժամանակ մենք միասին կմեռնենք, և առաջ ե՛ս կմեռնեմ, կմեռնեմ քո առջև, քո չքնաղ ծնկների մոտ, և արդեն մեռած գուցե թե ինձ քեզնից անջատեն»։

«Ասպետ, մի՛ խաբիր ո՛չ քեզ, ո՛չ ինձ,— ասաց նա, հանդարտ օրորելով իր գեղեցիկ գլուխը...— գիտեմ, և ի մեծ վիշտ ինձ, շատ լավ գիտեմ, որ դու չես կարող չսիրել ինձ, և գիտեմ, թե դու ինչ ուխտ և պարտականություն ունես. քեզ կանչում են քո հայրը, ընկերներդ և քո հայրենիքը, իսկ մենք քեզ ՝ինամի ենք»։

«Ինչի՞ս են պետք հայրը, ընկերները և հայրենիքը,— ասաց Անդրին, գլուխը կայտառ ցնցելով և ուղղելով իր ձիգ իրանը, ինչպես գետափի սև կաղամախին։— Թե որ այդպես է, ահա թե ինչ. ես ո՛չ ոք չունեմ, ո՛չ ոք, ո՛չ ոք»,— կրկնեց նա նույն ձայնով և ձեռքի նույն շարժումով, որով համառ

և անհաղթահարելի կոզակն արտահայտում է իր վճռակա-
նությունն ուրիշի համար անհնար և չլսված գործի մասին։
«Ո՞վ է ասել, որ իմ հայրենիքն Ուկրաինան է, ո՞վ է նրան
ինձ հայրենիք դարձրել։ Հայրենիքը նա է, որին փնտրում է
մեր հոգին, որ ամենասիրելին է մեր հոգու համար։ Իմ հայ-
րենիքը դո՛ւ ես։ Ահա՛ իմ հայրենիքը։ Եվ այս հայրենիքը
ես կպահեմ իմ սրտի մեջ, կպահեմ մինչև հնչի իմ ժամը և
տեսնեմ, թե ինչպես կոզակներից որևէ մեկը նրան կհանի իմ
սրտից։ Եվ ինչ որ ունեմ-չունեմ՝ կծախեմ, կտամ, կխորտա-
կեմ այդպիսի հայրենիքի համար»։

Մի ակնթարթ քարացած, ինչպես չքնաղ արձան, աղջիկը
նայեց նրա աչքերին և հանկարծ հեկեկաց և կանացի սքան-
չելի թափով, որին ընդունակ է միայն մեծահոգի և անկշռա-
դատ կինը, որ ստեղծված է սրտի չնաշխարհիկ շարժման հա-
մար,— աղջիկը փաթաթվեց Անդրիի պարանոցին, գրկելով
նրան յուր ձյունանման չքնաղ ձեռքերով և հեկեկաց։ Այդ
ժամանակ փողոցում լսվեց անորոշ աղմուկ, որին համընթաց
էին փողերի և ծնծղաների ձայներ։ Բայց Անդրին չէր լսում.
նա միայն զգում էր, թե ինչպես աղջկա հրաշագեղ բերանից
ելնում էր նրա շնչառության անուշարույր ջերմությունը, թե
ինչպես արցունքները վտակներով թափվում էին Անդրիի դեմ-
քի վրա, և գլխից թափված նրա բուրավետ մազերն իրենց
մուգ և շողշողուն մետաքսով պատում էին նրան։

Այդ ժամանակ ուրախ աղաղակով ներս վազեց թաթա-
րուհին. «Փրկված ենք, փրկված ենք...», բղավեց նա, խելքը
կորցրած։ «Մերոնք քաղաք են մտել, բերել են հաց, կորեկ,
ալյուր և կապոտած զապորոժցիներին»։

Բայց նրանցից ոչ ոք չլսեց, թե այդ ինչ «մերոնք» էին քա-
ղաք մտել և ինչ էին բերել և ինչ զապորոժցիների էին կա-
պոտել։ Անդրին, լցված այն զգացումներով, որ անճաշակելի
են այս երկրում, համբուրում էր այդ բուրավետ շրթունքները,
որոնք հպել էին նրա այտին, և անպատասխան չէին բուրա-
վետ շրթունքները։ Նրանք արձագանք տվին նույն ձևով, և
այդ երկուստեք միացած համբույրի մեջ զգացվում էր այն,
ինչ մարդ իր կյանքում զգում է միայն մի անգամ։

Եվ կոզակը խորտակվեց, կորավ կոզակային ողջ առաք-
ության համար։ Այլևս նա չի տեսնի ա՛չ Զապորոժիեն, ա՛չ

հայրական ագարակները և ո՛չ աստծո տաճարները։ Ուկրաինան չի՛ տեսնի իրեն պաշտպանող իր զավակներից քաջագույնին։ Մերունի Տարասն իր ցցունքից կպոկի սպիտակ մազերի մի փունջ և կնվովի այն օրն ու ժամը, երբ ծնվեց այդպիսի որդի՝ որպես նախատինք իրեն։

VII

Զապորոժցիների բանակում աղմուկ և իրարանցում էր։ Սկզբում ոչ-ոք չէր կարող ստույգ ասել, թե ինչպես պատահեց, որ զորքը մտավ քաղաք։ Հետո միայն պարզվեց, որ Պերեյասլավյան ողջ կուրենը, որը բանակ էր զարկել քաղաքի դարբասների առաջ, թունդ հարբել էր. ուրեմն և զարմանալի չէր, որ բանակի կեսը սրախողխող արին, իսկ մյուս կեսը կապոտեցին ավելի արագ, քան բոլորը կիժանային, թե ինչ է պատահել։ Մինչև աղմուկի վրա զարթնած մոտակա կուրենները կարողացան զենքեր առնել, զորքն արդեն մտնում էր դարբասներով, և թշնամու զորքի հետին շարքերը կրակում էին իրենց վրա խառնիխուռն արշավող, քնաթաթախ և կիսազգաստ զապորոժցիների կողմը։

Կոշևոյը հրաման արձակեց հավաքելու բոլորին, և երբ բոլորը շրջան կազմեցին ու գլխարկները հանելով լռեցին, նա ասաց.

«Ահա թե ինչ, պան եղբայրներ, ահա թե ինչ պատահեց այս գիշեր, ահա թե ինչ արեց գինին, մեզ ինչպես անարգեց թշնամին։ Երևում է, որ դուք արդեն սովոր եք թունդ հարբելու, երբ թուլլատրում եմ միայն կրկնապատկել սովորական բաժինը. դուք պատրաստ եք հարբած վայր ընկնելու այնպես, որ քրիստոնյա բանակի թշնամին կարող է ոչ միայն ձեր շալվարները հանել, այլև փոշտալ ձեր երեսին, և դուք ոչինչ չեք զգա»։

Բոլոր կողակները լուռ կանգնել էին, գլուխները խոնարհած. նրանք ղգում էին իրենց հանցանքը։ Միայն նեզամայկովյան կուրենի ատաման Կուկուբենկոն արձագանքեց։

«Կա՛ց, բատկո,— ասաց նա։— Թեև օրենքի հակառակ է ընդդեմ խոսք ասել կոշևոյին, երբ նա խոսում է ամբողջ զորքի առաջ, բայց գեպքն այդպես չի եղել և այդ պիտի ասել։

Դու բոլորովին էլ արդար չես հանդիմանում քրիստոնյա զորքին։ Կոզակները մեղավոր կլինեին և մահվան արժանի, եթե հարբեին երթի ժամանակ, պատերազմի ժամանակ, կամ դժվար և ծանր աշխատանքի ընթացքում։ Բայց մենք պարապ նստել էինք և իզուր թրև էինք գալիս քաղաքի շուրջը։ Ոչ պաս էինք պահում, ոչ քրիստոնեական ուրիշ պահք. էլ ինչպե՞ս կլինի, որ պարապությունից մարդ չհարբի։ Այստեղ մեղք չկա։ Ավելի լավ է, մենք նրանց ցույց տանք, թե ինչ ասել է հարձակվել անմեղ մարդկանց վրա։ Առաջ մենք լավ էինք զարկում, իսկ հիմա այնպես կզարկենք, որ մեծ կտորն ականջը մնա»։

Կուրենի ատամանի խոսքը դուր եկավ կոզակներին։ Ընդրանք բարձրացրին արդեն իսպառ խոնարհած գլուխները, և շատերը խրախուսանքով գլուխները թափահարեցին և ասացին.

«Լավ է ասում Կուկուբենկոն»։

Իսկ Տարաս Բուլբան, որ կանգնել էր կոշևոյից ոչ հեռու, ասաց.

«Ի՞նչ ես ասում, կոշևոյ. Կուկուբենկոն ճշմարիտ է։ Դու դրան ի՞նչ կասես»։

«Ի՞նչ կասեմ։ Կասեմ, որ երանի դրա նման զավակ ունեցող հորը։ Թեև մեծ իմաստություն չի նախատինքի խոսք ասել, բայց մեծ իմաստություն է ասել այնպիսի խոսք, որ չայլայլելով մարդու գլխին եկած փորձանքը, թև է տալիս նրան, ոգի է ներշնչում, ինչպես խթանները ոգի են ներշնչում ձիուն, որ կայտառացել է ջուր խմելուց հետո։ Ես ինքս էի ուզում հետո ձեզ մխիթարիչ խոսք ասել, բայց Կուկուբենկոն ավելի կանուխ գլխի ընկավ»։

«Կոշևոյն էլ լավ ասաց»,— լսվեց զապորոժցիների շարքերում։ «Ընդունելի խոսք է»,— կրկնեցին ուրիշները։ Եվ ամենից ալեհերները, որոնք կանգնել էին գորշ-սպիտակավուն աղավնիների նման, նրանք ևս գլխով արին և ոլորելով ալեհեր բեղերը, հանդարտ ասացին. «Արդար խոսք ասաց»։

«Դե՛, ուրեմն լսե՛ք, պաներ,— շարունակեց կոշևոյը։— Բերդը գրավել, մագլցել և գետնի տակով մտնել, ինչպես անում են օտարերկրյա գերմանացի վարպետները՝ և՛ ան-

վայել է, և՛ կոզակի բանը չի։ Իսկ բանին նայած՝ Թշնամին քաղաք է մտել Թեթև պաշարով. կարծեմ որ նրանց հետ քիչ սայլեր կային. քաղաքում ժողովուրդը քաղցած է, ուրեմն բոլորը մի շնչում կուտեն, իսկ ձիերին էլ խոտ է պետք... Ես չգիտեմ, գուցե նրանց սրբերից մեկը երկնքից մի խուրձ խոտ գցի, այդ արդեն աստծո բանն է. իսկ նրանց հոգևորականները խոսքով զորեղ են։ Խոտի, Թե մի այլ բանի համար, պարզ է, որ նրանք անպատճառ քաղաքից պիտի դուրս գան։ Բաժանվեցեք երեք խմբի և գրավեցեք երեք դարբասներից դուրս եկող երեք ճանապարհները։ Գլխավոր դարբասի առաջ հինգ կուրեն, մնացածների առաջ՝ երեք-երեք։ Դյադկիվի և Կորսունի կուրենները Թող դարան մտնեն. դնդապետ Տարասն իր գնդով նույնպես Թող դարան մտնի. Տիտարևի և Ջիմոշևի կուրենները կանգնում են պահեստի գումակի աջ կողմից, Շչերբինովի և Ստեբլիկիվի վերին կուրենը՝ ձախ կողմից։ Շարքերից Թող դուրս գան կտրիճները, որոնք լեզվանի են, և Թող չգրացնեն Թշնամուն։ Լեհը խելապակաս բնավորություն ունի, չի դիմանում հայհոյանքի և կարող է, որ այսօր ևեթ նրանք բոլորը դուրս գան դարբասներից։ Կուրենի ստամաննե՛ր, ձեզնից ամեն մեկը Թող լավ նայի իր կուրենին. ով մի բանի պակաս ունի, Թող լրացնի Պերեյասլավյան կուրենի մնացորդներից։ Ամեն ինչ նորից զննեք։ Չգաստանալու համար յուրաքանչյուր կոզակին տալ մի Թաս արաղ և մի հաց։ Բայց երևի արդեն բոլորը երեկվա կերածով կուշտ են, որովհետև, ի՞նչ Թաքցնեմ, բոլորն այնպես են լափել, որ զարմանում եմ, Թե ինչո՞ւ գիշերս մեկնումեկը չտրաքվեց։ Հա, մի հրահանգ ևս. ևեթ որևէ մեկը, մի որևէ չհուդ օղի ծախող կվաճառի կոզակին Թեկուզ մի կաթ արաղ, ես նրա ճակատին կմեխեմ խոզի ականջը և այդ շանը գլխի վրա կկախեմ։ Դե՛, եղբայրնե՛ր, աշխատանքի, աշխատանքի անցեք»։

Այդպես տնօրինեց կոշևոյը, և բոլորը մինչև գոտկատեղը դլուխ տվին նրան, և առանց գլխարկները ծածկելու գնացին դեպի իրենց սայլերն ու բանակատեղերը և, երբ բավական հեռացան, միայն այդ ժամանակ գլխարկները հագան։ Ամենքն սկսեցին զինավորվել. փորձում էին Թրերն ու դաշույնները, վառոդամանների մեջ պարկերից վառոդ էին լցնում, սայլերը սարքում ու շարում էին և ջոկում էին ձիերը։

Տարասը, ուղևորվելով դեպի իր զորագունդը, մտածում էր և չէր կարողանում պարզել, թե ո՞ւր կարող էր չքանալ Անդրին. ուրիշների հետ նրա՞ն ևս գերի էին տարել քնած ժամանակ կապոտելով։ Բայց ո՛չ. Անդրին այդպիսի պտուղ չէր, որ ողջ-ողջ գերի ընկներ Սպանված կողակների մեջ ևս նա չկար։ Խոր մտածմունքի մեջ ընկավ Տարասը և գնում էր զորագնդի առաջ ու չէր լսում, որ մեկը վաղուց արդեն կանչում էր իր անունը։

«Ո՞վ է ինձ կանչում»,— վերջապես սթափվելով ասաց նա։ Նրա առջև կանգնել էր ջհուդ Յանկելը։

«Պան գնդապետ, պան գնդապետ,— ասաց ջհուդը շտապ և ընդհատ ձայնով, կարծես թե կամենում էր մի շատ կարևոր բան ասել։— Պան գնդապետ, ես եղել եմ քաղաքումս։

Տարասը նայեց ջհուդին և զարմացավ, որ նա արդեն կարողացել է քաղաքում լինել։

«Ո՞ր քամին քեզ տարավ այնտեղ»։

«Ես իսկույն կպատմեմ,— ասաց Յանկելը։— Հենց որ արշալույսի մոտ աղմուկ լսեցի, և կոզակներն սկսեցին կրակել, ես առա իմ կաֆտանը և առանց հագնելու վազեցի այն կողմը և ճանապարհին միայն թևերը հագա, որովհետև ուզում էին իսկույն իմանալ, թե այդ ինչ աղմուկ է, ինչի համար կոզակները վաղ արշալույսին սկսեցին կրակել։ Ես վազեցի ուղղակի դեպի քաղաքային դարբասները և հասա այն ժամանակ, երբ զորքի վերջին մասը քաղաք էր մտնում։ Տեսնեմ զորամասի առջևից գնում է ինքը՝ պան խորունժի Գալյանդովիչը։ Նա իմ ծանոթն է, դեռ երեք տարի առաջ ինձնից հարյուր ոսկի պարտք էր առել։ Ես նրա հետևից գնացի, իբրև թե եկել եմ, որ պարտքս ուզեմ, և նրա հետ միասին մտա քաղաքը»։

«Ո՞նց թե. համ քաղաք մտար, համ էլ պարտքդ էիր ուզո՞ւմ,— ասաց Բուլբան։— Եվ նա չհրամայե՞ց, որ քեզ տեղնուտեղը շան նման կախեն»։

«Ճիշտ որ, աստված վկա, ուզում էր կախել,— պատասխանեց ջհուդը.— նրա ծառաներն ինձ արդեն բռնել էին և պարանը հագցնում էին վզիս, բայց ես աղաչեցի պանին, ասացի, որ կսպասեմ այնքան, ինչքան պանը կամենում է, և խոստացա նորից պարտք տալ, եթե նա ինձ օգնի պարտ-

քեռս հավաքելու մյուս ասպետներից, որովհետև պան Խոռունժին, ես պարզ կասեմ պանին, գրպանում մի ասկի էլ չունի, թեև նա ագարակներ ունի, կալվածքներ, չորս ամրոց և մինչև Շկլոդ տափաստանը նրանն է, իսկ գրպանում գրոշ չունի, ինչպես և կոզակը։ Եվ հիմա, եթե Բրեսլավի չհուդները նրան չդինավորեին, նա չէր կարող մինչև իսկ պատերազմի դուրս գալ։ Նա սեյմում էլ չի եղել, նրա համար, որ...»

«Իսկ ի՞նչ էիր անում քաղաքում։ Տեսա՞ր մերոնց»։

«Ո՞նց չէ. մերոնք այնտեղ շատվոր են. Իցկան, Թահումը, Սամուլլոն, Նայվալոխը, որ հրեա վարձակալ է...»։

«Թող սատկեն այդ շները,— բղավեց բարկացած Ճորասը։— Ի՞նչ ես խոթում քո չհուդի ցեղը։ Ես քեզ հարցնում եմ մեր դապարոժցիների մասին»։

«Մեր դապարոժցիներին չեմ տեսել, բայց տեսա Միալի պան Անդրիին»։

«Տեսար Անդրի՞ն,— բղավեց Բուլբան։— Ո՞նց տեսար և ո՞րտեղ տեսար. նկուղի մե՞ջ, խոր փոսո՞ւմ, անպատվածե և կապկպվա՞ծ»։

«Ո՞վ կարող է համարձակվել պան Անդրիին կապտել։ Այժմ նա այնպիսի նշանավոր ասպետ է... Ես չճանաչեցի նրան։ Թիկնոցը ոսկուց, բազպանները ոսկուց և կրծքակալը ոսկուց, ամեն տեղ ոսկի և ամեն ինչ ոսկի, ինչպես շողում է գարնան արևը, երբ այգում ամեն մի թռչուն ծլվլում է և երգում, և բուրում է խոտը, այնպես էլ նա է շողում ոսկուց, և ինքը վոևոդը նրան նվիրել է ամենալավ նժույգը, որ երկու հարյուր կարմիր ոսկի արժե»։

Բուլբան քարացավ։

«Ինչի՞ համար է նա հագել ուրիշի զգեստը»։

«Որովհետև ավելի լավ է, դրա համար էլ հագել է։ Ինքն էլ է ձիով ման գալիս, ուրիշներն էլ են ման գալիս, ինքն էլ է սովորեցնում, նրան էլ են սովորեցնում։ Ինչպես ամենահարուստ լեհացի մի պան»։

«Իսկ ո՞վ է նրան ատիպել»։

«Ես չեմ ասում, թե նրան որևէ մեկն ատիպել է։ Մի՞թե պանը չգիտե, որ նա իր կամքով է նրանց կողմն անցել»։

«Ո՞վ է անցել»։

«Պան Անդրին»։

«Ո՞ր է անցել»։

«Անցել է նրանց կողմը. նա հիմա բոլորովին նրանցն է»։

«Սո՛ւտ ես ասում, խոզի ականջ»։

«Ո՞նց կարելի է, որ ես սուտ ասեմ։ Մի՞թե հիմար եմ, որ սուտ ասեմ, ձե՞ռս եմ քաշել իմ գլխից, որ սուտ ասեմ։ Մի՞թե ես չգիտեմ, որ ջհուդին շան նման կկախեն, եթե նա սուտ խոսի պանի մոտ»։

«Ուրեմն, քո ասելով դուրս է գալիս, որ նա ծախել է հավատն ու հայրենի՞քը»։

«Ես չասացի, որ նա մի բան է ծախել. ես միայն ասացի, որ նա անցել է նրանց կողմը»։

«Սուտ ես ասում, սատանի ջհուդ... Քրիստոնյաների երկրում այդպիսի բան չի եղել, դու խառնում ես, շո՛ւն»։

«Թող խոտ բանի իմ տան շեմքին, եթե խառնում եմ։ Թող ամենքը թքեն իմ հոր, մոր, աներոջ և հորս մոր գերեզմանի վրա և մորս հոր գերեզմանի վրա, եթե ես խառնում եմ։ Եթե պանը ցանկանում է, ես կարող եմ ասել, թե նա ինչի համար է նրանց կողմն անցել»։

«Ինչի՞ համար»։

«Վոևոդն ունի մի գեղեցիկ աղջիկ, աստված վկա, մի անման գեղեցկուհի»։

Այս խոսքի վրա ջհուդն աշխատում էր, որքան կարող էր, իր դեմքով արտահայտել գեղեցկությունը՝ ձեռքերը տարածելով, կկոցելով աչքերը և մի կողմի ծռելով բերանը, կարծես ճաշակել էր մի բանի համ։

«Է, դրանից ի՞նչ»։

«Նա աղջկա համար է արել ամեն ինչ և անցել է նրանց կողմը։ Եթե մարդ սիրահարվում է, նա միևնույն է, Եթե ներբանի կաշի է, որ եթե ջրի մեջ թրջես, կկակղի և ինչպես կուզես, կարող ես ծռել»։

Բուլբան խոր մտածմունքի մեջ ընկավ։ Նա հիշեց, որ մեծ է թույլ կնոջ ազդեցությունը, որ շատ հզորների է նա խորտակել, և որ այդ կողմից Անդրիի բնավորությունը շատ անզոր է, և երկար ժամանակ նա կանգնեց նույն տեղում, ինչպես արձան։

«Լսի՛ր, պան, ես քեզ ամեն ինչ կպատմեմ,— ասաց ջհուդը.— Հենց որ ես լսեցի աղմուկը և տեսա, որ քաղաքի դար-

բաներից ներս են մտնում, ես ինձ հետ համեմատ դեպք առա մի թել գոհար, որովհետև քաղաքում կան ազնվատոհմ գեղեցկուհիներ. իսկ եթե կան գեղեցկուհիներ և ազնվական աղջիկներ, ապա նրանք, ես այդպես միտք արի, եթե ուտելու բան էլ չունեն, այնուամենայնիվ, գոհար կառնեն։ Եվ հենց որ խորունժիի ծառաներն ինձ բաց թողին, ես վազեցի վոևոդի բակը, որպեսզի գոհար վաճառեմ։ Ես թաթարուհի աղախնից ամեն ինչ իմացա. հենց որ զապորոժցիներին քշեն, իսկույն հարսանիքը պիտի անեն։ Պան Անդրին խոստացել է քշել զապորոժցիներին»։

«Եվ դու տեղնուտեղը չսպանեցի՞ր այդ սատանի ձագին»,— բղավեց Բուլբան։

«Ինչի՞ համար սպանել։ Նա ինքն իր կամքով է անցել։ Մարդն ինչո՞վ է մեղավոր։ Այնտեղ նրա համար լավ է, ուստի և նա անցել է»։

«Եվ դու տեսա՞ր նրա երեսը»։

«Աստված վկա, տեսա երեսը։ Այնպիսի փառավոր կարիճ էր, բոլորից տեսքով։ Աստված նրան առողջություն տա, ինձ իսկույն ճանաչեց և, երբ ես մոտեցա նրան, իսկույն ասաց...»։

«Ի՞նչ ասաց նա»։

«Նա ասաց, բայց առաջ մատով արեց և ապա միայն ասաց. «Ցա՛նկել»։ Իսկ ես՝ «պան Անդրի» ասացի։ «Ցա՛նկել, ասա հորս, ասա եղբորս, ասա կոզակներին, ասա զապորոժցիներին, բոլորին ասա, որ հայրս այժմ ինձ հայր չէ, եղբայրս եղբայր չէ, ընկերս ընկեր չէ, և որ ես նրանց բոլորի հետ պիտի կռվեմ, պիտի կռվեմ նրանց բոլորի հետ»։

«Սո՛ւտ ես ասում, Հուդայի զավակ,— համբերությունը կորցրած բղավեց Տարասը։— Ստում ես, շո՛ւն։ Դու Քրիստոսին էլ խաչեցիր, աստծուց նզովյալ մարդ։ Ես քեզ կսպանեմ, սատանա։ Կորի՛ր այստեղից, թե չէ տեղնուտեղը կսպանեմ»։

Այդ ասելով, Տարասը թուրը քաշեց։ Վախեցած չհուդն իսկույն փախավ և վազեց, որքան ուժ ունեին նրա չոր ու բարակ ազդրերը։ Դեռ երկար ժամանակ նա վազում էր կոզակների բանակատեղի միջով և նույնիսկ հեռվի ազատ ու ընդարձակ դաշտում, թեև Տարասը նրան ամենևին չէր հետապնդում, մտածելով, որ անխելքություն է ցասումը թափել առաջին հանդիպածի գլխին։

Եվ նա այժմ վերհիշեց, որ անցյալ գիշեր տեսել էր Անդրիին մի կնոջ հետ բանակատեղիով անցնելիս, հիշեց և խոնարհեց ալեհեր գլուխը։ Եվ դեռ էլի չէր ուզում հավատալ, թե կարող է այդպիսի անարգ դեպք պատահել, որ իր հարազատ որդին ծախի հավատն ու հոգին։

Վերջապես, նա իր զորագունդը տարավ դեպի դարանը և զորքի հետ ծածկվեց այն անտառի հետևը, որ կոզակները չէին հրդեհել։ Իսկ զապորոժցիները, հետևակ ու հեծյալ, ելան երեք ճանապարհներով դեպի երեք դարբասները։ Մեկը մյուսի ետևից դուրս թափվեցին կուրեննները՝ Ումանի, Պոպովիչևի, Կանևի, Ստեբլիևկիվի, Նեզամայկովի, Գուրգուզիի, Տիտարևի և Տիմոշևի։ Միայն Պերեյասլավի կուրենը չկար։ Նրա կոզակները խորն էին ննջել և տանուլ տվել իրենց բախտը։ Եղավ կոզակ, որ արթնացավ կապկպված, թշնամու գերության մեջ, եղավ և այնպիսին, որ երբեք չարթնացավ և այդպես էլ քնած թաղվեց խոնավ հողում, իսկ ինքը՝ ատաման Խլիբը, առանց շալվարի և վերին արդուզարդի, իրեն գտավ լեհացիների բանակում։ Քաղաքում լսեցին կոզակների շարժումը։ Բոլորը դուրս ելան հողաթումբը, և կոզակների առաջ բացվեց կենդանի պատկեր. լեհացի դրանիկները, մեկը մյուսից գեղեցիկ, կանգնել էին հողե պատնեշի վրա։ Արևների նման ոսկեվորվել էին նրանց պղնձե գդակները, որոնց վրա կարապի նման ճերմակ փետուրներ կային։ Ուրիշներն ունեին թեթև գլխարկներ՝ վարդագույն և կապույտ, որոնց կատարները թեքված էին մի կողքի։ Նրանք հագել էին ոսկեկար և կամ ասեղնաքել պարզ կաֆտաններ, որոնց թևքերը ծալված էին վեր։ Ոմանք ունեին թանկագին ագուցարանով զենքեր և թրեր, որոնց պաները բարձր գին էին վճարել։ Եվ շատ ուրիշ արդուզարդեր ունեին նրանք։ Առջևում ամբարտավան կանգնել էր Բուջանի զորագնդի պետը՝ կարմիր գլխարկով և ոսկով պատած։ Նա ծանրամարմին էր, ամենքից բարձրը և հաստը, և լայն ու հարուստ կաֆտանը հազիվ էր պահում նրա գեր մարմինը։ Մյուս կողմը, համարյա կողքի դարբասների մոտ, կանգնել էր մի այլ զորագնդի պետ, մի կարճահասակ, ամբողջովին չբացած մարդ, սակայն նրա փոքրիկ և սուր աչքերը կախ ընկած թավ հոնքերի տակից ժիր նայում էին, և նա արագ չորս կողմն էր դառնում, իր չոր ու բարակ ձեռքով

Աշխույժ ցույց տալիս՝ հրամաններ արձակելով. երևում էր, որ, չնայած նվազ մարմնին, նա քաջ գիտեր ռազմի ուսմունքը։ Նրանից քիչ հեռու կանգնել էր երկարահասակ խորունժին, թավ բեղերով, և թվում էր, թե նրա դեմքը չափից ավելի կարմիր էր. այդ պանը սիրում էր Քունդ մեղրագինի և ուրախ խրախճանքն։ Նվ նրանց հետևից երևում էին ուրիշ շատ ազնվականներ, որոնցից ոմանք զինվել էին ի հաշիվ իրենց ոսկիների, ոմանք՝ Թագավորական գանձարանի հաշվին, ոմանք՝ ջհուդների փողով, գրավ դնելով այն ամենը, ինչ գտել էին պապենական ամրոցներում։ Քիչ չէին և սենատորական ամեն տեսակի ճաշորդներ, որոնց սենատորներն առնում էին իրենց հետ և հացկերույթի էին նստում միասին, որպես պատվո նշան, և որոնք սեղանի վրայից և կամ սպասանոցից գողանում էին արծաթյա թասեր և այսօրվա հարգանքից հետո մյուս օրը մի որևէ պանի մոտ կառապանի պաշտոն էին կատարում։ Ամեն տեսակ մարդ կար այնտեղ։ Պատահում էր, որ փող չէր լինում խմելու, իսկ պատերազմի համար բոլորն էին զարդարվել։ Կողակների շարքերը հանդարտ կանգնել էին պարիսպների առաջ։ Նրանցից ոչ մեկի վրա ոսկի չկար. միայն երբեմն ոսկին տեղ-տեղ փայլփլում էր զենքերի ագուցարանի և թրերի կոթի վրա։ Կողակները պատերազմի ժամանակ չէին սիրում ճոխ զարդարվել. նրանք պարզ օղազրահներ և զգեստներ ունեին, և հեռվից սևին ու կարմրին էին տալիս ոչխարի մորթուց նրանց սև ու կարմրակատար գդակները։

Ջապորոժցիների շարքերից առաջ եկան երկու կողակ։ Նրանցից մեկը բոլորովին երիտասարդ էր, մյուսը՝ ավելի տարեց. երկուսն էլ լեզվանի էին և գործի ժամանակ նույնպես վատ կողակներ չէին՝ Օխրիմ Նաշը և Միկիտա Գոլոպիտենկոն։ Նրանց հետևից գնաց և Դեմիդ Պոպովիչը, ամբակազմ մի կողակ, որ վաղուց էր Սեչում. նա եղել էր Ադրիանապոլսի կռիվներում և իր կյանքում շատ բան էր տեսել՝ վառվել էր կրակի մեջ և վազել դեպի Սեչը կուպրած, սևացած գլխով և այրված բեղերով։ Բայց նորից լցվել էր Պոպովիչը, մազերի փրչիկը փաթաթել էր ականջով, բուսել էին սև ու թանձր բեղեր, ինչպես կուպրը։ Կծու խոսքի մեջ Պոպովիչը մի հատ էր։

«Է՛յ, ձեր բոլոր զորքը կարմիր ժուպան է հագել, բայց ասեք տեսնեմ ձեր ուժն էլ այդքան անհա՞ղթ է»։

«Ա՛յ ես ձեզ,— վերևից բղավեց գեր գնդապետը։— Բոլորիդ պիտի կապոտեմ, լավ է, գյադաներ, դո՛ւք հանձնեք ձեր ձիերն ու զորքերը։ Տեսա՞ք, ինչպես ձերոնց կապոտեցի։ Զապորոժցիներին դուրս բերեք պատնեշի վրա, թող տեսնեն»։ Եվ պատնեշի վրա բարձրացրին պարաններով կապկպած զապորոժցիներին։ Ամենից առաջ կուրենի ատաման Խլիբն էր, առանց շալվարի և վերին արդուզարդի, այնպես, ինչպես գերել էին հարբած վիճակում։ Ատամանը գլուխը կախեց գետին, իր կոզակների առաջ ամաչելով իր մերկության համար, որ շան նման գերի էր ընկել քնած ժամանակ։ Եվ մի գիշերվա մեջ սպիտակել էր նրա գլուխը։

«Դարդ մի՛ անի, Խլիբ, կփրկենք»,— ներքևից բղավեցին կոզակները։

«Դարդ մի՛ անի, ախպեր տղա,— արձագանքեց կուրենի ատաման Մորուքը։— Դու մեղավոր չես, որ քեզ տկլոր են գերի բռնել։ Ամեն մարդու հետ փորձանք կպատահի։ Բայց ամոթ նրանց, որ քեզ դուրս են բերել անարգանքի համար և ինչպես վայել է չեն ծածկել քո մերկությունը»։

«Երևում է, որ դուք քաջ եք, երբ թշնամու զորքը քնած է»,— ասաց Գոլոկոպիտենկոն, նայելով պատնեշի կողմը։

«Դուք դեռ սպասեք, մենք կկտրենք ձեր քյաքուլները»,— բղավեցին վերևից։

«Ես կուզե՛ի տեսնել, թե ոնց են նրանք մեր քյաքուլները կտրելու,— ասաց Պոպովիչը, նրանց առաջ շրջվելով ձիու վրա։ Ապա, յուրայիններին նայելով, ասաց. «Ինչ կա որ. գուցե լեհացիք ճիշտ են ասում. եթե այն հաստափորը նրանց առաջնորդի, նրանք լավ պաշտպանություն կունենան»։

«Իսկ ինչո՞ւ ես կարծում, որ նրանք լավ պաշտպանություն կունենան»,— ասացին կոզակները, իմանալով, որ Պոպովիչը հավանորեն պատրաստվում է մի բան ասելու։

«Որովհետև ամբողջ զորքը կպահվի նրա հետևը, և ոչ մի կերպ հաստ փորի միջով չես կարող որևէ մեկին նիզակով խոցել»։ Բոլոր կոզակները ծիծաղեցին։ Եվ դեռ երկար ժամանակ նրանցից շատերը գլուխները թափահարում էին, ասելով. «Ա՛յ քեզ, Պոպովիչ. մեկին որ մի խոսք ծեփի, այնպես կա-

նի որ»։ Եվ կոզակները այնպես էլ չասացին, Թե ինչպես «կանի որ»...

«Ե՛տ քաշվիք, իսկույն պարիսպներից ետ քաշվեք»,— գոռաց կոշևոյը, որովհետև լեհացիք, ինչպես երևաց, չդիմացան կծու խոսքին, և գնդապետը ձեռքով նշան արեց։

Կոզակները նոր էին ետ քաշվել, երբ պարսպի գլխից տեղաց կարտեչը։ Պատնեշի վրա իրար անցան, և ձիու վրա երևաց ինքը՝ ծերունի վոևոդը։ Դարբասները բացվեցին, և զորքը դուրս եկավ։ Ամենից առաջ ձիերի հավասար շարքերով ելան շքեղ հագնված հուսարները, նրանց հետևից՝ օդաղրահայինները, ապա զրահազգեստ և նիզակավոր զինվորները, ապա ուրիշները, որոնք ունեին պղնձե սաղավարտներ, և ապա առանձին խմբով ազատականները, որոնցից յուրաքանչյուրը հագնվել էր ըստ ճաշակի։ Հպարտ ազատականները չէին կամենում խառնվել ուրիշների շարքերին, և նրանցից ով իր զորախումբը չուներ, գնում էր իր սպասավորների հետ։ Ապա նորից գալիս էին շարքերը, որոնց հետևից դուրս եկավ խորունժին, նրանցից հետո նորից շարքեր, և դուրս եկավ հաքթամարմին գնդապետը, իսկ ամբողջ զորքից հետո վերջինը դուրս եկավ կարճահասակ գնդապետը։

«Մի՛ թողնեք, մի՛ թողնեք, որ նրանք շարվեն և շարքեր կազմեն,— գոռաց կոշևոյը։— Միանգամից բոլոր կուրեններով քշեք նրանց վրա։ Թողե՛ք մյուս դարբասները։ Տիտարևի կուրեն, հարձակվի՛ր կողքից, Դյադկիվի կուրեն՝ հարձակվիր մյուս կողմից։ Կուկուբեննկո և Պալիվոդա, հուպ տվեք թիկունքից։ Խառնեք, խառնե՛ք և բաժանեք նրանց»։

Եվ ամեն կողմից զարկեցին կոզակները, շեղեցին և շփոթեցին նրանց, և իրենք էլ խառնվեցին։ Չթողեցին, որ նույնիսկ հրացան արձակեն. բանը հասավ թրերի ու նիզակների։ Բոլորը խմբվեցին, և յուրաքանչյուրին առիթ եղավ ցույց տալու իրեն։ Դեմիդ Պոպովիչը նիզակահար արեց երեք հասարակի և երկու անվանի ազատականների ձիուց գցեց, բղավելով. «Ա՛յ լավ ձիեր, ես վաղուց էի ուզում այսպիսի ձիեր ձեռք բերել»։ Եվ ձիերը հետու քշեց դեպի դաշտը, սպասող կոզակներին գոռալով, որպեսզի նրանք ձիերը պահեն։ Ապա նորից մտավ բազմության մեջ, նորից հարձակվեց ձիերից վայր ընկած ազատականների վրա, մեկին սպանեց, իսկ մյու-

սի վզին հագցրեց օղապարանը, պարանը կապեց իր քամբից և ազատանուն քարշ տվեց ողջ դաշտով, նրա մեջքից արձակելով բանկագին կոթով քուրը և առնելով ոսկով լիքը մի քսակ, որ ազատանին կապել էր գոտուց։ Կոբիտան, որ դեռ երիտասարդ և քաջ կոզակ էր, նույնպես բռնվեց լեհական զորքի քաջարիներից մեկի հետ, և նրանք երկար ժամանակ կռվեցին։ Նրանք արդեն բռնցքակռվի էին անցել, և կոզակն ահա պիտի հաղթեր նրան, և մեջքի վրա կռացնելով, տաճկական սուր դանակով զարկեց նրա կրծքին, բայց ինքը ևս չազատվեց. մի շիկացած գնդակ հենց տեղնուտեղը տրաքեց նրա քունքին։ Նրան գետին գլորեց պաներից մեծազարմը, գեղեցկագույնը, իշխանական մի հին տոհմի ասպետ։ Իր բաց գույնի նժույգի վրա սլանում էր նա, ինչպես ճկուն բարդի։ Եվ նա արդեն ցույց էր տվել բոյարի դյուցազնական բազում խիզախություն. մեջտեղից կիսել էր երկու զապորոժցիների, Ֆեոդոր Կորժին, որ քաջ կոզակ էր, վայր էր գլորել ձիու հետ միասին, կրակել էր ձիու վրա, իսկ կոզակին ձիու տակից նիզակով հանել էր։ Շատերի գլուխն էր բոցրել, թրատել էր ձեռքերը, գետին էր գլորել Կոբիտա կոզակին, գնդակը մխելով նրա քունքի մեջ։ «Ահա ում հետ կուզենայի ուժերս չափել»,— րղավեց Նեզամայկովի կուրենի ատաման Կուկուբենկոն։ Ձին քշելով, նա թռավ նրա թիկունքը. և ուժգին գոռաց, այնպես, որ այդ ոչ մարդկային ձայնից ցնցվեցին մոտ կանգնած մարդիկ։ Լեհացին հանկարծ կամեցավ ձիու գլուխը շրջել և դեմքը դարձնել նրա կողմը, բայց ձին չհնազանդվեց և զարհուրելի գոռոցից խրտնեց ու մի կողմ թռավ, և Կուկուբենկոյի գնդակը հասավ լեհացու հետևից։ Շիկացած գնդակը խրվեց մեջքի թիակների մեջ, և նա ձիուց գլորվեց։ Բայց լեհացին այդ վիճակում էլ ձեռք չքաշեց, դեռ ուժ էր անում հարվածելու թշնամուն, սակայն թուլացավ ձեռքը թրի հետ միասին։ Իսկ Կուկուբենկոն, երկու ձեռքով բռնելով իր ծանր թրադաշույնը, զարկեց նրա գունատ բերանին։ Թրադաշույնը փշրեց նրա երկու ակնատամը, երկու կես արեց լեզուն, փքշրեց կոկորդի ողը և շատ խոր մտավ գետնի մեջ։ Այդպես էլ նա նրան հավիտյան մեխեց մայր հողին։ Աղբյուրի նման վեր ժայթքեց կաս-կարմիր, ինչպես գետափնյա փուռնչը, բարձրատոհմ և ազնվազարմ արյունը և կարմիր ներկեց նրա

դեղին և ամբողջովին ոսկեկար կաֆտանը։ Իսկ Կուկուբենկոն նրան արդեն թողել էր և իր նեզամայկովյան կոզակների հետ մխրճվում էր ուրիշ բազմության մեջ։

«Ափսո՜ս, անժողովել է թողել այսքան հարուստ արդուզարդը,— ասաց ոսմանյան կուրենի ատաման Մորուքը, յուրայիններից հեռանալով դեպի այն վայրը, ուր ընկած էր Կուկուբենկոյի սպանած ազնվազարմ ասպետի մարմինը։ «Ես իմ ձեռքով յոթ իշխանների եմ սպանել, իսկ այսպիսի զարդ ու զարդարանք ոչ ոքի վրա չեմ տեսել»։ Եվ Մորուքը գայթակղվեց շահամոլությամբ, կռացավ, որպեսզի հանի նրա հարուստ զենք ու զրահը, հանեց արդեն նրա տաճկական դանակը, որի ագուցարանի վրա քանկարժեք քարեր կային, նրա գոտուց արձակեց քսակը՝ լիքը ոսկիներով, կրծքից առավ փոքրիկ սյայուսակը, որի մեջ մետաքսյա շոր էր, քանկարժեք արծաթ և աղչկա գանգուրներ, որ նա սրբությամբ պահել էր որպես հիշատակ։ Եվ Մորուքը չլսեց, թե ինչպես իր հետևից վրա վազեց կարմրաքիթ խորունժին, որին երկու անգամ ինքը քամբից վայր էր գլորել և մի լավ հասցրել էր ատամներին, որպես հիշատակ։ Խորունժին ամբողջ թափով ճոճեց թուրը և զարկեց նրա կռացած վզին։ Կոզակի շահամոլությունը բարիք չբերեց. նրա հզոր գլուխը մի կողմ թռավ, և գլխատված դիակը ընկավ, չորս կողմի գետինը ողողելով արյամբ։ Կոզակի գաժան հոգին բարձրացավ դեպի վերերը, նոքերը կիտած և վրդովվելով, միաժամանակ և զարմացած, որ այդպես վաղ դուրս թռավ այդքան ամրակուռ մարմնից։ Խորունժին դեռ քամբից չէր կապել ատամանի գլխի ցցունքը, երբ արդեն ցցվեց խստաբարո վրիժառուն։

Ինչպես երկնքում ճախրող բազե, որ հուժկու թևերով բազմաթիվ պտույտներ է անում, ապա հանկարծ թևերը փռած կանգնում մի կետում և այնտեղից սլաքի նման զարկում ճանապարհի եզրին աղմկող արու լորին, այնպես էլ Տարասի որդի Օստապը հանկարծ թռավ խորունժու վրա և մի թափով նրա վզով նետեց պարանը։ Խորունժու կարմիր դեմքն ավելի կարմրեց, երբ դաժան հանգույցը սեղմեց նրա կոկորդը, և նա ուզեց քաշել ատրճանակը, բայց չդաճգաբար մեկնած ձեռքը չկարողացավ նշան բռնել, և գնդակն անդիպուկ թռավ դեպի դաշտը։ Օստապը տեղնուտեղը նրա քամբից արձակեց

մեռաքսե քուղը, որ խորունժին առել էր գերիներին կապելու, և հենց նրա քուղով կապկպեց նրա ձեռքերն ու ոտքերը, քուղի մի ծայրը կապեց թամբին և նրան քարշ տվեց դաշտի միջով, բարձր կանչելով Ումանի կուրենի բոլոր կոզակներին, որպեսզի գան և վերջին հրաժեշտը տան իրենց ատամանին։

Երբ Ումանի կուրենի կոզակները լսեցին, որ այլևս կենդանի չէ իրենց ատաման Մորուքը, լքեցին ռազմի դաշտը և հավաքվեցին թաղելու նրան և հենց նույն տեղն էլ սկսեցին խորհրդակցել, թե ո՞ւմ ընտրեն կուրենի ատաման։ Վերջապես ասացին. «Էլ ինչո՞ւ խորհրդակցել. Օստապ Բուլբայից ավելի լավին ատաման չենք ընտրի։ Ճիշտ է, նա մեզնից երիտասարդ է, բայց նրա խելքն ալևոր մարդու խելքի չափ է։ Օստապը, գլխարկը հանելով, իր բոլոր կոզակ ընկերներին շնորհակալություն ասաց այդ պատվի համար, պատճառ չբերեց ոչ իր երիտասարդությունը և ոչ էլ անփորձ խելքը, գիտենալով, որ ժամանակը պատերազմական է և այդ բանի ժամանակը չէ. և հենց իսկույն նրանց առաջնորդեց դեպի Թշնամու խմբերը և նրանց բոլորին ցույց տվեց, որ իզուր չեն իրեն ատաման ընտրել։ Լեհացիք զգացին, որ բանը շատ է դժվարանում, ետ նահանջեցին և վազեցին դաշտի մյուս ծայրը, որպեսզի այնտեղ նորից գումարվեն։ Իսկ կարճահասակ գնդապետը հենց դարբասների մոտ կանգնած չորս հարյուրակի թարմ ուժերին նշան արեց, և այնտեղից կոզակների խմբերի վրա տեղաց կարտեչը։ Բայց քչերը վնասվեցին. գրնդակները հասնում էին կոզակների եզներին, որոնք վայրենաբար նայում էին կռվին։ Վախեցած եզները բռռացին, դարձան դեպի կոզակների բանակատեղին, չարդ ու փշուր արին սայլերը և շատերին ոտնակոխ արին։ Բայց Տարասը, որ այդ ժամանակ իր գնդով դուրս թռավ դարանից, աղաղակելով հարձակվեց եզներին բռնոտելու, ետ դարձավ կատաղած նախիրը, ետ դարձավ նրա աղաղակից սարսափած և արշավեց լեհացոց գնդերի վրա, փշրեց հեծելազորին, բոլորին տրորեց ու ցրեց։

«Ա՛յ, շնորհակալ ենք ձեզնից, եզներ,— բղավեցին զապորոժցիները։— Դուք մեզ ծառայեցիք ռազմերթի ժամանակ, իսկ այժմ էլ զինվորական ծառայություն եք մատու-

ցում», եվ թսրմ ուժերով հարձակվեցին քշնամու վրա։ Այդ հարձակման ընթացքում շատ քշնամի ջարդեցին։ Շատերը հերոսություն արին՝ Մետելիցյան, Շիլոն, զույգ Պիսարենկոները, Վովտուզենկոն և ուրիշ շատ շատերը։ Լեհացիք տեսան, որ բանը բուրդ է, նշան արին և բղավեցին, որ բացեն քաղաքի դարբասները։ Ճոինչով բացվեցին երկաթապատ դարբասները, և ներս մտան խոնվածները, ինչպես ոչխարը փարախի դռնով, ներս մտան փոշեթաթախ և հոգնած ձիավորները։ Ջապորոժցիներից շատերը կամեցան հետապնդել նրանց, բայց Օստապը յուր ումանցիներին կանգնեցրեց, ասելով. «Հեռու, պան եղբայրներ, պատերից հեռու կացեք, հարկավոր չէ մոտենալ»։ Եվ նա ճշմարիտ ասաց, որովհետև պարիսպների գլխից որոտացին և տեղացին ամեն ինչ, ինչ ձեռք էր ընկնում, և շատերը վնասվեցին։ Այդ ժամանակ մոտ եկավ կոշևոյը և Օստապին գովեց, ասելով. «Ահա նոր ատամաներ, բայց զորքին այնպես է դեկավարում, որ կարծես թե հին է»։ Մերունի Բուլբան երեսը շրջից, որ տեսնի, թե այդ ի՛նչ նոր ատաման է, և բոլոր ումանցիների առջև ձիու վրա տեսավ Օստապին, գդակը ծուռ թեքած և ատամանի գավազանը ձեռքին։ «Տես ինչպիսի՛ն է»,— ասաց նա, նայելով նրան. և ուրախացավ ծերունին, շնորհակալ եղավ ումանյան կողակներին այն պատվի համար, որին արժանացել էր իր որդին։

Կողակները նորից ետ նահանջեցին, պատրաստվելով վերադառնալ բանակատեղիները, և քաղաքի պատնեշի վրա նորից երևացին լեհացիները՝ պատառոտված տառատոկներով։ Շատերի թանկագին կաֆտանների վրա արյունը չորացել էր, և փոշի էր նստել պղնձյա գդակների վրա։

«Հը, կապոտեցի՛ք մեզ»,— ներքևից կանչեցին զապորոժցիները։

«Ա՛յ, ես ձեզ...»— դարձյալ նույն կերպ վերևից բղավեց հաստ գնդապետը, պարանը ցույց տալով. և դեռևս չէին դադարում իրար սպառնալ փոշոտ և ուժասպառ ռազմիկները, ու նրանք, որոնք եղել էին ռազմի դաշտում, երկուստեք ավելի սուր խոսքեր էին ասում իրար։

Վերջապես, բոլորը ցրվեցին։ Ով, ճակատամարտից հոգնած, մեկնվեց հանգստանալու, ով հող մաղեց իր վերքերի

վրա և վիրակապի համար պատառոտեց թաշկինակները և սպանած թշնամու թանկագին զգեստները։ Իսկ մյուսները, որոնք ավելի քարմ ուժերով էին, սկսեցին դիակները հավաքել և նրանց վերջին հրաժեշտը տալ։ Բուդաշուններով և նիզակներով փորեցին գերեզմանները, գդակներով ու փեշերով դուրս թափեցին հողը, պատվով իջեցրին կոզակների մարմինները և ծածկեցին նրանց քարմ հողով, որպեսզի ագռավները և գիշատիչ արծիվները չկարողանան կտցահարել նրանց աչքերը։ Իսկ լեհացիների մարմինները տասնյակներով մի կերպ կապոտեցին վայրի ձիերի պոչերից, բաց թողին ողջ դաշտով, և դեռ երկար ժամանակ քշում էին ձիերը և հարվածում նրանց կողերին։ Ամեհի ձիերը թռչում էին ակոսների և քմբերի վրայով, դերբուկների և ձորակների վրայով, և գետնին էին զարկում արյունով և փոշով պատած լեհացիների դիակները։

Հետո բոլոր կուրենները շրջան կազմեցին ընթրելու և երկար ժամանակ խոսեցին եղածի և քաջագործության մասին, որ բաժին էր ընկել յուրաքանչյուրին, քաջագործություններ, որոնց մասին հավիտյան պատմելու են նորեկներին և որդոց որդիք։ Երկար ժամանակ քուն չեղան նրանք։ Իսկ ամենքից երկար նստեց ծերունի Տարասը, միշտ մտածելով, թե ի՞նչ էր նշանակում այն, որ Անդրին չերևաց թշնամու մարտիկների մեջ։ Հուդան խղճի խա՞յթ է զգացել յուրայիններին դեմ ելնելու, գուցե չհուդը խաբել է, և նա ուղղակի գերի՞ է ընկել։ Բայց այդ մտածելով, նա հիշեց, որ Անդրիվ սիրտը շատ էր հակված դեպի կանանց խոսքերը, վիշտ զգաց և իր հոգու խորքում անդրդվելի երդվեց լեհ աղչկա դեմ, որը հրապուրել էր իր որդուն։ Եվ կկատարեր նա իր երդումը, չէր խնայի նրա գեղեցկությանը, նրա քանձր ու փարթամ ծամերից բռնած դուրս կքաշեր և իր հետևից քարշ կտար ամբողջ գաշտով, բոլոր կոզակների առաջ։ Գետնին կզարկվեին, կարյունոտվեին և փոշով կպատվեին նրա չքնաղ կուրծքը և ուսերը, որոնց փայլը հավասար էր լեռնային բարձունքների չհալչող ձյուներին։ Նա կտոր-կտոր կաներ աղչկա չքեղ ու չքնաղ մարմինը։ Բայց Բուլբան տեղյակ չէր, թե վաղն աստված ինչ է պահել մարդու համար, և հետզհետե քունը կոխեց և վերջապես քնեց։ Իսկ կոզակները դեռ շարունակում էին իրար

հետ զրուցել, և ամբողջ գիշերը կրակների մոտ, դևսի բոլոր կողմերն ուշադիր նայելով, կանգնել էր զգաստ և արթուն պահակազորը։

VIII

Արևը դեռ չէր հասել երկնակամարի կեսին, երբ բոլոր զապորոժցիները հավաքվեցին խորհրդի։ Սեչից լուր էր եկել, որ թաթարները, կոզակների բացակայության ժամանակ, ամեն ինչ կողոպտել են, հանել են այն գանձերը, որ կոզակները գաղտնի պահում էին գետնի տակ, ծնծել և գերի են առել բոլոր նրանց, որոնք մնացել էին Սեչում, և ավար առած հոտերի և հրամակների հետ ճանապարհ են ընկել դեպի Պերեկոպ։ Միայն մի կոզակ՝ Մաքսիմ Գոլոդուխան, ճանապարհին ճողոպրել էր թաթարների ձեռքից, մորթել էր միրզային, նրանից խլել ցեխիններով լի պարկը և թաթարի ձիու վրա, թաթարի շորերով, մեկուկես օր ու երկու գիշեր փախել էր հետապնդողներից, ձին քշելով սպանել և ճանապարհին ուրիշ ձի էր նստել, սպանել էր այդ ձիուն և միայն երրորդ ձիու վրա հասել էր զապորոժցիների բանակատեղին, ճանապարհին տեղեկանալով, որ զապորոժցիները Դուբնոյի մոտ են։ Նա միայն կարողացավ հայտնել, որ պատահել էր այդպիսի չարիք. բայց թե ինչպե՞ս է եղել, հարբե՞լ էին մնացած զապորոժցիները՝ ըստ կոզակների սովորության, և հարբած գերի՞ էին ընկել, և ինչպե՞ս էին թաթարներն իմացել այն տեղը, ուր թաղված էին զորքի գանձերը,— այդ մասին նա ոչինչ չասաց։ Նա շատ էր տանջվել, ուռել էր, քամին խանձել և վառել էր նրա դեմքը. նա հենց տեղնուտեղը պառկեց և քնեց խոր քնով։

Նման դեպքերում զապորոժցիների սովորությունն էր անմիջապես արշավել կողոպտիչների հետևից, չանալով նրանց հասնել ճանապարհին, թե չէ գերիները կարող էին վաճառքի հանվել Փոքր Ասիայի, Զմյուռնիայի և Կրետե կղզու շուկաներում և, ով գիտե, էլի ինչպիսի վայրերում չէին երևա զապորոժցիների քյաքուլավոր գլուխները։ Ահա թե ինչու էին հավաքվել զապորոժցիները։ Մինչև վերջին մարդը կանգնել էին գդակները ծածկած, որովհետև նրանք չէին հավաքվել

լսելու ատամանի հրամանը, որպես իշխանավորի, այլ խորհրդակցելու, ինչպես հավասար մարդիկ։ «Թող առաջ ավագները խոսք ասեն»,— բղավեցին բազմության միջից։ «Թող կոշևոյը խոսի»,— ասացին ուրիշները։ Եվ կոշևոյը, գլխարկը հանելով, ոչ իբրև պետ, այլ իբրև ընկեր, շնորհակալ եղավ կոզակներից այդ պատվի համար և ասաց. «Մեր մեջ շատ են ավելի ավագ և խելացի խորհուրդ տվողները, բայց եթե ինձ հարգեցիք, ապա իմ խորհուրդն է, ընկերներ, ժամանակ չկորցնել և հետապնդել թաթարներին, որովհետև դուք ինքներդ գիտեք, թե ի՞նչ մարդ է թաթարը. նա ավար առած գանձերի հետ մեր գալուստին չի սպասի, այլ մի ակնթարթում կպարտակի, այնպես որ հետքն էլ չես գտնի։ Ուրեմն իմ խորհուրդն է՝ արշավել։ Մենք այստեղ արդեն զվարճացանք։ Լեհացիք գիտեն, թե ինչ է կոզակը. որքան ուժ ունեինք՝ վրեժ առանք հանուն հավատի, իսկ քաղցած քաղաքից մեծ շահ չունենք։ Ուրեմն իմ խորհուրդն է՝ արշավել»։

«Արշավե՛լ»,— արձագանքեցին զապորոժյան կուրեններըբ։ Բայց Տարաս Բուլբայի սրտովը չէր այդ խոսքը և իր աչքերի վրա ավելի ցած խոնարհեց մոայլ և սպիտակ հոնքերը՝ թփերի նման, որոնք բուսել էին բարձր լեռան կատարին, և որոնց ծայրերին թանձր նստել էր հյուսիսային ասեղնաձև եղյամը։

«Ո՛չ, կոշևոյ, քո խորհուրդն արդար չէ՛,— ասաց նա։— Դու չես խոսում, ինչպես հարկավոր է։ Դու երևի մոռացել ես, որ գերության մեջ մնում են մերոնք, լեհացիների գերի տուրածները։ Դու, երևում է, ուզում ես, որ մենք չհարգենք մեր եղբայրության առաջին սրբազան կանոնը և մեր եղբայրներին թողնենք, որ նրանց ողջ-ողջ մաշկեն և կամ կտոր-կտոր անեն նրանց կոզակի մարմինը, ման ածեն քաղաքներում և գյուղերում, ինչպես մինչև այժմ վարվել են հեթմանի և Ուկրաինայի ամենալավ ռուս իշխանների հետ։ Մի՞թե առանց այդ էլ նրանք քիչ են հայհոյել մեր սրբություններըբ։ Էլ ինչի՞ ենք պետք մենք, ես հարցնում եմ բոլորիդ. ի՞նչ կոզակ է նա, ով փորձանքի մեջ է թողնում իր ընկերոջը, թողնում է, որ քան նման սատկի օտարության մեջ։ Եթե բանն այդպես է, որ ամեն մեկը ոչինչ է համարում կոզակի պատիվը և թույլ է տալիս, որ քրքեն իր ալեհեր բեղերի վրա և նախատեն ծանր

խոսքով,— ուրեմն ոչ ոք ինձ չի հանդիմանի։ Մենակ ես մը-նում եմ»։

Կանգնած բոլոր զապորոժցիները տատանվեցին։

«Իսկ մի՞թե դու մոռացել ես, քաջ դնդապետ,— ասաց այդ ժամանակ կոշևոյը,— որ թաթարների գերության մեջ են նույնպես մեր ընկերները, որ եթե այժմ մենք նրանց չփրկենք, ապա նրանց, որպես ճորտեր հուր-հավիտյան կվաճառեն հեթանոսներին, մի բան, որ վատթար է ամենասոսկալի մահից։ Մի՞թե մոռացել ես, որ այժմ նրանց ձեռքումն է մեր ամբողջ դանձը, որ ձեռք է բերված քրիստոնյայի արյունով»։

Բոլոր կոզակները խոր մտածմունքի մեջ ընկան և չգիտեին ինչ ասել։ Նրանցից ոչ մեկը չէր կամենում վաստակել խայտառակ համբավ։ Այն ժամանակ առաջ եկավ ամբողջ զապորոժյան զորքի ամենատարեց կոզակը՝ Կասյան Բովդյուգը։ Բոլոր կոզակները նրան հարգում էին. երկու անգամ նրան ընտրել էին կոշևոյ, և պատերազմների մեջ ևս նա իրեն ցույց էր տվել իբրև շատ քաջարի կոզակ, բայց վաղուց արդեն ծերացել էր և չէր մասնակցում արշավանքներին, չէր սիրում և որևէ մեկին խորհուրդներ տալ, այլ այդ ծերունի ռազմիկը սիրում էր պառկել կոզակների շրջանում և լսել զանազան եղելությունների և կոզակների արշավանքների մասին պատմություններ։ Նա երբեք չէր խառնվում նրանց խոսքին, այլ միայն լսում էր և մատով սեղմում իր կարճ ծխամորճի մոխիրը և երբեք բերանից չէր հանում ծխամորճը և ապա նստում էր շատ երկար, թեթևակիորեն կկոցելով աչքերը, և կոզակները չգիտեին՝ քնած է նա արդյոք, թե դեռևս լսում է։ Բոլոր արշավանքների ժամանակ նա տանն էր նստում, բայց այս անգամ ծերունին չէր համբերել։ Կոզակի նման թափահարել էր ձեռքը և ասել. «Էս էլ մի բան չէ։ Ես էլ գնամ, գուցե մի բանում պետք եղա կոզակներին»։ Բոլոր կոզակները լռեցին, երբ այժմ նա դուրս եկավ բազմության առաջ, որովհետև շատ վաղուց էր նրանից չէին լսել ոչ մի խոսք։ Ամեն ոք ուզում էր իմանալ, թե ի՞նչ է ասելու Բովդյուգը։

«Հասավ և իմ հերթը, պան եղբայրներ, որ ես էլ խոսք ասեմ,— այսպես սկսեց նա։— Տղե՛րք, լսեք մեծի խոսքը։ Շատ իմաստուն ասաց կոշևոյը, և իբրև կոզակների զորքի գլուխ, որը պարտավոր է պահպանել և հոգ տանել զորքի

հարստության մասին, ավելի իմաստուն խոսք չէր կարող ասել։ Այ թե ինչ. այս թող լինի իմ առաջին խոսքը։ Իսկ այժմ լսեք, թե ինչ կասեմ երկրորդ խոսքով։ Այ թե ինչ կասեմ երկրորդ խոսքով. շատ ճշմարիտ խոսեց նաև գնդապետ Տարասը. թող աստված նրան երկար կյանք տա և թող այդպիսի զորապետներն անպակաս լինեն Ուկրաինայում։ Կոզակի առաջին պարտքը և առաջին պատիվն է եղբայրությունը պահպանել։ Ինչքան որ ապրել եմ, պան եղբայրներ, ես չեմ լսել, որ կոզակը մի որևէ տեղ լքի կամ դավաճանի իր ընկերոջը։ Նրանք էլ են մեր ընկերները, սրանք էլ. ավելի են նրանք, թե պակաս, միևնույն է, բոլորը մեր ընկերներն են, բոլորը թանկ են մեզ համար։ Ահա ուրեմն իմ խոսքը. ում համար սիրելի են թաթարների գերի առնվածները, թող արշավի թաթարների հետևից, իսկ ում որ սիրելի են լեհացիների ձեռքն ընկած կոզակները և ով չի ուզում ձեռք քաշել արդար գործից, թող մնա։ Կոշևոյը մի կեսի հետ, ինչպես պարտավոր է, կգնա թաթարների հետևից, իսկ մյուս կեսն իր համար կընտրի ատաման։ Իսկ իբրև ռազմերթի ատաման, եթե ուզում եք լսել ծերունուս խոսքը, ավելի հարմարը չկա, քան միայն Տարաս Բուլբան։ Մեղնից ոչ մեկն արհուրյամբ նրան չի հավասարվի»։

Այդպես ասաց Բովդյուգը և լռեց. բոլոր կոզակներն ուրախացան, որ ծերունին այդպիսով նրանց խելքի բերեց։ Բոլորը գդակները վերև նետեցին և բղավեցին.

«Շնորհակալ ենք, բատկո։ Լռեցիր, լռեցիր, շա՜տ երկար լռեցիր, բայց ահա վերջապես ասացիր։ Եվ երբ ելանք արշավանքի, իզուր չէիր ասում, թե մի օր պետք կգաս կոզակներին։ Այդպես էլ եղավ»։

«Ի՞նչ է, համաձա՞յն եք դրան»,— հարցրեց կոշևոյը։

«Բոլորս էլ համաձայն ենք»,— բղավեցին կոզակները։

«Ուրեմն՝ վե՜րջ ռադային»։

«Վերջ ռադային»,— բղավեցին կոզակները։

«Տղե՛րք, այժմ լսեք զորական հրամանը»,— ասաց կոշևոյը, առաջ անցավ և գդակը ծածկեց, իսկ բոլոր զապորոժցիները, որքան որ կային, հանեցին գդակները և գլխաբաց կանգնեցին, աչքերը հառելով գետնին, ինչպես միշտ անում էին կոզակները, երբ ավագը կամենում էր մի բան ասել։

«Այժմ, պան եղբայրներ, բաժանվենք. ով ուղում է գնալ, թող աջ կողմն անցնի, ով մնում է, թող անցնի ձախ. կուրենի ձեռ մասը որ կողմն անցնի, այն կողմն անցնում է և կուրենի ատամանը, իսկ եթե փոքր մասն է անցնում, թող միանան մնացած կուրեններին»։

Եվ բոլորն սկսեցին անցնել ոմանք աջ և ոմանք ձախ կողմը։ Որ կուրենի մեծ մասն անցնում էր, այն կողմն էր անցնում և կուրենի ատամանը, իսկ եթե անցնում էր փոքր մասը, այն ժամանակ նա միանում էր մյուս կուրեններին։ Եվ դուրս եկավ, որ երկու կողմն էլ համարյա հավասար եղան։ Կամեցան մնալ համարյա ողջ Նեղամայկովի կուրենը, Պոպովիչևի կուրենի մեծ մասը, Ոսմանի ողջ կուրենը, Կանևի ողջ կուրենը, Ստեբլիկիվի կուրենի մեծ մասը, Տիմոշևի կուրենի մեծ մասը։ Մնացած բոլորը ցանկացան թաթարների ետևից գնալ։ Երկու կողմն էլ ունեին բազմաթիվ քաջարի և հաղթանդամ կոզակներ։ Նրանց մեջ, որոնք որոնել էին հետապնդել թաթարներին, Ջերևատին էլ, Ֆերունի քաջ կոզակ Պոկոտիպոլեն, Լեմիշը, Պրոկոպովիչ Ֆոման, Դեմիդ Պոպովիչը ևս նրանց կողմն անցավ, որովհետև շատ անհանգիստ բնավորության տեր կոզակ էր և չէր կարողանում երկար ժամանակ մի տեղ նստել. լեհացիների հետ նա արդեն փորձել էր ուժը, այժմ կամենում էր փորձել նաև թաթարների հետ։ Այդ կողմն անցան և կուրենի ատամաններ Նոստյուգանը, Պոկրիշկան, Նևիլիչկին, և ուրիշ շատ քաջարի և անվանի կոզակներ կամեցան թաթարի վրա փորձել իրենց թուրը և հզոր բազուկը։ Հզոր և քաջարի կոզակներ պակաս չէին և նրանց մեջ, որոնք կամեցան մնալ. կուրենի ատամաններ Դեմիտրովիչը, Կուկուբենկոն, Վերտիխվիստը, Բալաբանը, Բուլբենկո Օստապը։ Ասպա բազմաթիվ էին այլ ուրիշ անվանի և ամբակուռ կոզակներ՝ Վոլտուզենկոն, Ջերևիչենկոն, Ստեպան Գուսկան, Օխրիմ Գուսկան, Միկոլա Գուստին, Ջադորոժնին, Մետելիցյան, Իվան Ջակրատիգուբան, Մոսիյ Շիլոն, Դեգտյարենկոն, Սիդորենկոն, Պիսարենկոն, ապա մյուս Պիսարենկոն, ապա նորից Պիսարենկոն, և շատ կային ուրիշ այլ քաջ կոզակներ։ Բոլորը փորձառու, ընկած-ելած մարդիկ էին. եղել էին անասուլիական ափերում, Ղրիմի աղուտներում և տափաստաններում, Դնեպրի մեջ թափվող բոլոր փոքր ու մեծ գետերի ափե-

րին, Դնեպրի բոլոր կղզիների վրա և խորշերում. նրանք եղել էին Մոլդավիայի, Վալախիայի կողմերում և Տաճկաստանում. Սև ծովն աջ ու ձախ կտրել էին կոզակների երկղեկանի նավակներով. հիսուն նավակներից շարք կազմած նրանք հարձակվել էին հարուստ և բարձր նավերի վրա. տաճկական շատ առագաստանավեր էին խորտակել և իրենց կյանքում անչափ շատ վառոդ էին կրակել. շատ անգամ էին նրանք ոտափաթաթանի համար պատառոտել թանկագին բեհեզներ և կերպասներ. շատ անգամ էին նրանք խոնջաններից կապած քսակները լիքը լցրել մաքուր ցեխիններով: Իսկ նրանցից յուրաքանչյուրը որքա՜ն գանձեր էր տվել գինու և զվարճության, գանձեր, որ մի ուրիշին հերիք էին ցմահ՝ դժվար է հաշվել: Ամեն ինչ տալիս էին, ինչպես կոզակի սովորությունն էր, հյուրասիրելով ամբողջ աշխարհը և երաժիշտներ կանչելով, որպեսզի ուրախանա աշխարհում ինչ կա-չկա: Դեռ այժմ էլ նրանցից շատերը Դնեպրի կղզիների եղեգնուտում հորած գանձեր ունեին՝ գավաթներ, արծաթե շերեփներ և ապարանջաններ, որպեսզի թաթարը նրանց տեղը չգտնի, եթե բան է, դժբախտ դեպքում նա հանկարծակի հարձակվի Սեչի վրա, բայց թաթարը դժվար կարող էր այդ գանձերը գտնել, որովհետև տերն ինքն արդեն մոռանում էր, թե որտեղ է թաղել: Ահա այդպիսի կոզակներ էին, որոնք կամեցան մնալ և լեհացիներից վրեժ առնել իրենց հավատարիմ ընկերների և Քրիստոսի հավատի համար: Մերունի կոզակ Բովդյուգը նույնպես կամեցավ նրանց հետ մնալ, ասելով. «Այժմ իմ տարիքը այն չէ, որպեսզի ես արժևավեմ թաթարների ետևից. իսկ այստեղ տեղն է, որ ես ննջեմ քաջ կոզակի մահով: Վաղուց արդեն ես աստծուց խնդրում էի, որ երբ մեռնեմ, թող մեռնեմ կռվի մեջ՝ քրիստոնեության սուրբ գործի համար: Այդպես էլ պատահեց: Մերունի կոզակի համար ուրիշ տեղ այլևս չի լինի ավելի փառավոր վախճան»:

Երբ բոլորը բաժանվեցին, և կողմերը կուրեններով կանգնեցին երկու շարքի, կոշևոյն անցավ շարքերի միջով և ասաց.

«Իսկ գո՞հ է մի կողմը մյուսից, պան եղբայրներ»:

«Բոլորս գոհ ենք, բատկո»,— պատասխանեցին կոզակները:

«Ուրեմն համբուրեցեք իրար և ներեք իրար, որովհետև, ով

գիտե, նուիից կհանդիպե՞նք իրար, թե ոչ։ Լսեցէք ձեր աստուածամանին, իսկ արէք այն, ինչ ինքներդ գիտեք. ինքներդ գիտեք, թե ինչ է պատուիրում կոզակի պատիւը»։

Եվ որքան կոզակներ կային, բոլորն սկսեցին իրար համբուրել։ Առաջինը ատամաններն սկսեցին, և սղալելով իրենց ալեհեր բեղերը, նրանք համբուրեցին խաչմերուկ և ապա իրար ձեռքիր բռնեցին և ամուր սեղմեցին. մեկը մյուսին ուզում էր հարցնել՝ «է՞, պան եղբայր, կտեսնվե՞նք նորից, թե չենք տեսնվի»,— բայց չհարցրին, լռեցին և երկու ալեհեր գլուխները ընկան խոր մտածմունքի մեջ։ Իսկ կոզակները, մինչև վերջին մարդը, հրաժեշտ տվին իրար, իմանալով, որ երկու կողմն էլ շատ բան ունեն անելու, սակայն իսկույն ևեթ չբաժանվեցին, այլ որոշեցին սպասել գիշերվա խավարին, որպեսզի թշնամին չնկատի կոզակների վորքի պակասելը։ Ապա բոլոր կուրեննները ճաշելու գնացին։ Ճաշից հետո բոլոր նրանք, որոնք ճանապարհ պիտի գնային, պատրաստվեցին հանգստանալու և քնեցին խոր ու երկար քնով, կարծես զգում էին, որ գուցե այդպիսի ազատության մեջ ճաշակում են վերջին քունը։ Քնեցին մինչև արևի մայրամուտը, իսկ երբ արևը մայր մտավ և մի քիչ մթնեց, սկսեցին սայլերը յուղել։ Սարք ու կարգի բերելով, առաջ գցեցին սայլերը, իսկ իրենք, մի անգամ էլ հրաժեշտ տալով իրենց ընկերներին, հանդարտ ճանապարհ ընկան սայլերի ետևից։ Ձիավորները կարգով, առանց ձիերի վրա կանչելու և սուլելու, թեթև դոփեցին հետևակից հետո, և շուտով նրանք բոլորը կորան մթության մեջ։ Խուլ լսվում էր միայն ձիերի դոփյունը և մի որևէ անիվի ճռինչը, անիվի, որ դեռ չէր բացվել և կամ գիշերային մթության մեջ լավ չէր յուղած։

Մնացող ընկերները դեռ երկար ժամանակ հեռվից ճոճում էին իրենց ձեռքերը, թեև ոչինչ չէր երևում։ Իսկ երբ ձիերից իջան և վերադարձան իրենց տեղերը, երբ փայլփլող պարզկա աստղերի լույսով տեսան, որ սայլերի կեսը տեղում չկար, որ շատ ջատերը չկային, ամեն մեկի սիրտը տխրեց, և բոլորն ակամայից մտածմունքի մեջ ընկան, գետին խոնարհելով իրենց ղվարճասեր գլուխները։

Տարասը տեսավ, թե ինչպես նոսրացան կոզակների շարքերը, և ինչպես քաջին անվայել հուսալքումն սկսեց հետզ-

հետե պարուրել կոզակների գլուխը. բայց լռեց և կամեցավ ժամանակ տալ, որ նրանք բոլորը վարժվեն նաև այդ հուսալքմանը, որ ծայր էր առել ընկերներին հրաժեշտ տալու պահից։ Այնինչ լռության մեջ նա պատրաստվում էր նրանց բոլորին հանկարծ և անակնկալ արթնացնելու, կանչելով կոզակի նման, որպեսզի նորից և ավելի զորեղ, քան առաջ, յուրաքանչյուրի հոգու մեջ ետ դառնա այն արիությունը, որին ընդունակ է միայն սլավոնական բնավորությունը, այդ լայն և հզոր բնավորությունը ուրիշների մոտ, ինչպես ծովը բոլոր գետերի մոտ։ Եթե ժամանակն աղմկահույզ է, նա ամեն ինչ դարձնում է որոտ և մռունչ, լեռնացնելով և բարձրացնելով ալիքները, որ չեն կարող բարձրացնել անզոր գետերը։ Իսկ երբ հանդարտ է և քամի չկա, բոլոր գետերից ավելի չինչ է փոում իր անեզր ապակենման մակերեսը, աչքերի հավերժական գրգանքը։

Եվ Տարասը իր սպասավորներին հրամայեց բաց անել սայլերից մեկը, որ առանձին էր։ Կոզակների գումակի մեջ այդ սայլը մյուսներից ավելի մեծ և ավելի ամուր էր. կըրկնակի ամուր դողերով էին պատած նրա հաստ անիվները, բեռնված էր ծանր, ծածկված էր սքարներով, եզան պինդ կաշիներով և կապկպած էր ձիգ կուպրած պարաններով։ Սայլի վրա միայն տակառներ և ջրամաններ էին, լցված ընտիր և հին գինիով, որ երկար ժամանակ պահվել էր Տարասի մառաններում։ Նա հանդիսավոր դեպքի համար էր վերցրել այդ գինին, որպեսզի, եթե լինի մի նշանավոր րոպե և բոլորի համար հնչի ժամն այն գործի, որ արժանի է սերնդե-սերունդ հիշելու, որպեսզի մինչև վերջին կոզակը բաժին առնեն այդ հոգեպահուստ գինուց և այդ մեծ րոպեին մարդն ունենա մեծամեծ զգացումներ։ Լսելով զորապետի հրամանը, սպասավորները դեպի սայլը վազեցին, թրադաշուններով կտրատեցին պիրկ պարանները, հանեցին եզան հաստ կաշիները և սքարները և սայլի վրայից առան տակառներն ու ամանները։

«Բոլորդ առեք,— ասաց Բուլբան։— Եվ ինչ որ կա-չկա առեք. ով ինչ ունի՝ շերեփ կամ կոնք, որով ձիերին ջուր եք տալիս, կամ ձեռնոց և կամ գդակ, իսկ եթե նեղն ընկաք, դեմ տվեք երկու բուռը»։

Եվ բոլոր կոզակներն առան, ինչ որ կար-չկար. ով շերեփ

ուներ, ով կոնք, որով ջրում էր ձիուն, ով ձեռնոց և ով գդակ, և ով դեմ էր անում երկու բուռը։ Տարասի սպասավորները նրանց բոլորին գինի էին լցնում տակառներից և ամաններից, անցնելով շարքերի միջով։ Բայց Տարասը չէր հրամայել խմել, մինչև նշան չտար, որպեսզի բոլորը միասին խմեն։ Երևում էր, որ նա ուզում էր մի բան ասել։ Տարասը գիտեր, որ ինչքան էլ զորեղ է հին և ընտիր գինին և որքան էլ նա կարող է ամրապնդել մարդու ոգին, բայց եթե գինու հետ միացնում են և մի վայելուչ խոսք, այն ժամանակ կրկնակի հզոր է լինում գինու և ոգու ուժը։

«Ես հյուրասիրում եմ ձեզ, պան եղբայրներ,— այսպես ասաց Բուլբան,— ոչ թե ի պատիվ նրա, որքան էլ մեծ է նման պատիվը, որ դուք ինձ ատաման եք նշանակել, և ոչ էլ ի պատիվ մեր ընկերների հետ ունեցած հրաժեշտի. ո՞չ մի այլ ժամանակի է վայել թե մեկը և թե մյուսը. բայց այժմ մեր առաջ այդպիսի բոպե չէ։ Մեր առաջ մեծ և քրտնաջան գործեր կան, կոզակի մեծ հերոսության գործեր։ Ուրեմն խմենք, ընկերներ, միանգամից խմենք նախ և առաջ հանուն ուղղափառ սուրբ հավատի, որ վերջապես թող հասնի այն ժամանակ, երբ համայն աշխարհում սփռվի և լինի միայն մի սուրբ հավատ, և ինչքան որ անօրեններ կան, բոլորը քրիստոնյա դառնան։ Մի անգամ էլ խմենք Սեչի կենացը, և թող նա երկար մնա և մահ բերի բոլոր անօրեններին, որպեսզի ամեն տարի Սեչը տա մեկը մյուսից քաջ, մեկը մյուսից լավ կտրիճներ։ Եվ միատեղ խմենք մեր սեփական փառքի համար, որպեսզի մեր թոռները և մեր թոռների զավակները ասեն, որ մի ժամանակ եղել են այսպիսի մարդիկ, որոնք չեն անարգել եղբայրությունը և չեն մատնել իրենց հարազատներին։ Ուրեմն հանուն հավատի, պան եղբայրներ, հանուն հավատի»։

«Հանո՜ւն հավատի»,— թավ ձայնով որոտացին մոտակա շարքերի կոզակները։

«Հանո՜ւն հավատի»,— արձագանքեցին հեռու եղողները, և բոլորը՝ ծեր ու երիտասարդ խմեցին հանուն հավատի։

«Հանուն Սեչի»,— ասաց Տարասը և գլխի վրա բարձր պահեց ձեռքը։

«Հանուն Սեչի»,— թավ արձագանքեցին առաջին շարքերը։

«Հանուն Սեչի»,— մեղմ ասացին Ծերերը, շարժելով ալեհեր բեղերը, և ջահել բազեների նման իրենց թափահարելով, կրկնեցին երիտասարդները՝ «Հանուն Սեչի»։ Եվ մինչև դաշտի հեռուները լսվում էր, թե ինչպես էին կոզակները հիշում իրենց Սեչը։

«Այժմ վերջին ումպը, ընկերներ, խմենք ի փառս աշխարհի երեսին ապրող բոլոր քրիստոնյաների»։

Եվ բոլոր կոզակները, մինչև դաշտի վերջին կոզակը, շեռեփների վերջին ումպը խմեցին ի փառս աշխարհի երեսին ապրող բոլոր քրիստոնյաների։ Եվ երկար ժամանակ բոլոր կուրեններում, շարքերի մեջ հնչում էին. «Ի փառս բոլոր քրիստոնյաների, որոնք ապրում են աշխարհի երեսին»։

Արդեն շեռեփները դատարկ էին, բայց կոզակները դեռ կանգնած էին, ձեռքերը բարձր պահած, ու թեև գինուց պայծառացած նրանց բոլորի աչքերն ուրախ էին, բայց և այնպես նրանք խոր մտածմունքի մեջ էին։ Այժմ նրանք չէին մտածում շահամոլության և պատերազմական ավարի մասին, և ոչ էլ այն մասին, թե ում բախտը կբանի և ձեռք կբերի ոսկիներ, թանկագին զենքեր, ոսկեկար կաֆտաններ և չերքեզի նժույգներ։ Նրանք, իբրև արծիվներ, որ նստել էին քարոտ լեռների գագաթներին, դարափուլ և բարձր լեռների գագաթներին, որտեղից շատ հեռու երևում է փռված անեզր ծովը, որի վրա, ինչպես մանր թռչուններ, առագաստանավերն են և այլ տեսակի նավերը, ծովը՝ հաղիվ նշմարելի ու նուրբ խորշերով, ինչպես մժեղներ՝ առափնյա քաղաքներով և նոսր խոտի նման թեքված անտառներով։ Իբրև արծիվներ՝ նրանք իրենց աչքերով դիտում էին շրջապատի դաշտը և հեռվում սևին տվող իրենց բախտը։ Ողջ դաշտը և դաշտի զառիվայրն ու ճանապարհները պիտի ծածկվեն նրանց ցցված սպիտակ ոսկորներով, պիտի առատորեն ոռոգվեն կոզակների արյունով և պիտի ծածկվեն ջարդված սայլակներով, փշրված թրերով ու նիզակներով։ Հեռուներում կսփռվեն նրանց քյաքուլավոր գլուխները, ոլորած և արյունը վրան չորացած ցցունքներով և ներքև կախված բեղերով։ Արծիվները վրա թռչելով պիտի հանեն ու պոկոտեն կոզակների աչքերը։ Բայց մեծ բարիք կա այդպես լայն և արձակ փռված մահվան մահճի մեջ։ Չի կորսվում և ոչ մի մեծահոգի գործ, և ինչպես հրացանի փողից ընկած աննշան վառոդը՝

չի կորչի կոզակի փառքը։ Փանդիռ նվագողը՝ ալեհեր մորուքը մինչև կուրծքը, գուցե դեռևս հասուն արիությամբ լի, բայց սպիտակագլուխ ծերունի, ոգով իմաստուն փանդիռ նվագողը նրանց մասին կասի իր հզոր և թանձր խոսքը։ Նվ ողջ աշխարհում ծառս եղած կգնա նրանց փառքը և այն ամենը, որ պիտի ծնվի հետո, կխոսի նրանց մասին, որովհետև շատ հեռուներն է գնում հզոր խոսքը, նման ղողանջող զանգի պղնձին, որին վարպետը շատ թանկ ու մաքուր արծաթ է խառնել, որպեսզի արդար ղողանջը տարածվի հեռուներում՝ քաղաքներում, հյուղերում, պալատներում և հովիտներում, և ամենքին անխտիր հրավիրի սուրբ աղոթքի։

IX

Քաղաքում ոչ ոք չիմացավ, որ զապորոժցիների կեսը դուրս էր եկել թաթարների ետևից։ Միայն ժամապահները մագիստրատի աշտարակի կատարից նկատեցին, որ սայլերի մի մասը ձգվեց դեպի անտառի մյուս երեսը, բայց միտք արին, որ կոզակները դարան են պատրաստում. նույն բանը մտածեց և ֆրանսիացի ճարտարագետը։ Այնինչ իզուր չէին կոշևոյի խոսքերը. քաղաքում ուտելիքի պակաս զգացվեց. հին ժամանակների սովորությամբ չէին հաշվել, թե ինչքան ուտելիք է պետք զորքին։ Փորձեցին արտելք անել, բայց կոզակները համարձակների կեսին տեղնուտեղը կոտորեցին, իսկ մյուս կեսը ձեռնունայն վերադարձավ քաղաք։ Սակայն ջհուդներն օգտվեցին արտելքից և հոտ առան, թե ո՞ւր և ինչո՞ւ են գնացել զապորոժցիները, ո՞ր զորապետների հետ, և ո՞ր կուրեններն են գնացել, որքա՞ն է նրանց թիվը, որքա՞ն են մնացողները և նրանք ի՞նչ են մտածում անել. մի խոսքով, մի քանի րոպեից հետո քաղաքում ամեն ինչ տեղեկացան։ Զորապետները սիրտ առան և պատրաստվեցին ճակատամարտի։ Տարասը քաղաքում եղած շարժումից և աղմուկից արդեն նկատել էր այդ, շտապ պատրաստվում էր, շարքեր էր կազմում, արձակում էր հրամաններ և հրահանգներ, կուրեններըբաժանում էր երեք շարքի, նրանց, ինչպես բերդեր, շրջապատելով սայլերով, կռվի մի եղանակ, երբ անպարտելի էին զապորոժցիները. երկու կուրեններն հրամայեց դարան

մտնել։ Դաշտի մի մասում խրեց սուր ցցեր, փշրված գեներ և նիզակների բեկորներ, որպեսզի եթե հարկ լինի, այդ կողմի վրա հալածի թշնամու հեծելազորը։ Եվ երբ ամեն ինչ պատրաստ էր ինչպես հարկն էր, կոշիկներին հորդոր կարդաց, ոչ թե նրանց ոգևորելու և ամրապնդելու,— նա գիտեր, որ առանց այն էլ նրանք ոգով արի էին,— այլ ուղղակի ինքն էր կամենում ասել այն ամենը, ինչ կուտակվել էր սրտում։

«Պան եղբայրներ, ես ուզում եմ ձեզ ասել, թե ինչ է մեր եղբայրությունը։ Դուք մեր հայրերից և պապերից լսել եք, թե բոլորի աչքին ինչ հարգ ու պատիվ ուներ մեր երկիրը։ Հույներն էլ էին նրան ճանաչում, մերոնք Ցարգրադից էլ էին ոսկիներ առնում, և՛ մեր քաղաքներն էին փարթամ, և՛ տաճարները, և՛ մեր ռուս իշխանները, մեր սեփական իշխանները, և ոչ թե կաթոլիկ անհավատները։ Անօրեններն ամեն ինչ տարան, ամեն ինչ կորավ. միայն մենք մնացինք որ, և ինչպես քաջարի ամուսնու մահից հետո այրի կին՝ որը մնաց և մեր երկիրը, ինչպես և մենք։ Ահա թե ինչպիսի ժամանակ մենք իրար եղբայրության ձեռք մեկնեցինք։ Եղբայրության կապերից ավելի սուրբը չկա՛։ Հայրը սիրում է իր զավակին, մայրը սիրում է իր զավակին, զավակը սիրում է հորը և մորը. բայց այդ այն չէ, եղբայրներ, գազանն էլ է սիրում իր ձագին. միայն մարդը կարող է ցեղակցվել հոգու ցեղակցությամբ և ոչ արյան։ Ուրիշ երկրներում ևս եղել են ընկերներ, բայց Ռուս երկրի ընկերների նման ընկերներ ոչ մի տեղ չեն եղել։ Ձեզնից շատերը հաճախ են եղել օտարության մեջ. տեսնում ես այնտեղ էլ մարդիկ են, նույն աստծո ստեղծած մարդը, և նրա հետ զրուցում ես, ինչպես քո հարազատի, իսկ եթե ուզում ես սրտանց մի խոսք ասես, տեսնում ես, որ չէ՛. թեև խելոք մարդիկ են, բայց քո ասածը չեն, նույնպիսի մարդիկ են, բայց ուրիշ են։ Ո՛չ, եղբայրներ, այնպես սիրել, ինչպես սիրում է ռուս հոգին, այն չէ, երբ սիրում են խելքով կամ մի այլ բանով, այլ ամեն ինչով, ինչ պարգևել է աստված, ինչ որ կա քո հոգու մեջ...»,— ասաց Տարասը, ձեռքը թափահարեց և օրորեց ալեհեր գլուխը, շարժեց բեղը և շարունակեց. «Ո՛չ, ոչ ոք չի կարող այդպես սիրել։ Ես գիտեմ, որ մեր երկրում այժմ վատթար մարդիկ կան. միայն մտածում են, որ ցորենի գեզեր ունենան, ձիու հրամանիներ և մա-

պաններում անկորուստ մնան գինու կնքած կարասները. վարժվում են անօրենների ով գիտե ինչպիսի սովորություններին, զզվում են մեր լեզվից, յուրը յուրայինի հետ չի ուզում խոսել, եղբայրը վաճառում է եղբորը, ինչպես առևտրի շուկայում վաճառում են մի անհոգի էակ։ Օտար թագավորի ողորմածությունը, և այն էլ ոչ թե թագավորի, այլ լեհացի մագնատի գարշելի ողորմածությունը, մագնատի, որն իր դեղին քոշով խփում է նրանց մուրթին, նրա ողորմածությունը նրանց համար ամեն մի եղբայրությունից ավելի թանկ է։ Բայց վերջին ստահակն անգամ, որքան էլ նա թավալվի մրի և երկրպագության մեջ, վերջին ստահակն անգամ ունի ռուս զգացմունքի մի հատիկը, և նա օրերից մի օր կարթնանա, և այդ թշվառը կզարկի ծնկներին, գլուխը կբռնի և բարձրաձայն կնզովի իր ստոր կյանքը և կկամենա ծանր տանջանքներով քավել անարգ գործը։ Ուրեմն թող նրանք իմանան, թե ինչ ասել է Ռուս երկրի եղբայրություն։ Եթե բանը հասել է մահվան, նրանցից ո՛չ ոքի չի վիճակվելու այսպես մնռնել, ո՛չ ոքի, ո՛չ ոքի. այդպիսի մահվան համար հերիք չէ նրանց մկան բնավորությունը»։

Այդպես ասաց ատամանը և երբ խոսքը վերջացրեց, դեռ ցնցում էր կոզակների սխրանքների մեջ սպիտակած գլուխները։ Բոլորին ուժգին ցնցեց այդ խոսքը և հասավ մինչև սրտի խորքը։ Ավագագույն կոզակներն անշարժ կանգնել էին շարքերի մեջ և ալեհեր գլուխները խոնարհել էին գետին. նրանց ծեր աչքերում հեզիկ ոլորվեց արցունքը, և թևքով դանդաղ սրբեցին արցունքը, ապա բոլորը, կարծես խոսքը մեկ արած, միաժամանակ թափահարեցին ձեռքերը և ցնցեցին ընկած-ելած գլուխները։ Երևում էր, որ ծերունի Տարասը հիրավի նրանց շատ բան հիշեցրեց՝ ծանոթ ու լավ, որ լինում է մարդու սրտում, վշտից, աշխատանքից, խիզախությամբ և կյանքի դանդաղան ձախորդություններից իմաստուն դարձած մարդու սրտում և կամ, թեև չճաշակած այդ ամենը, բայց շատ բան զգացած երիտասարդ և բյուրեղ հոգում, ի հավերժական ուրախություն ալեզարդ ծնողների, որոնք ծնել են նրան։

Իսկ քաղաքից արդեն դուրս էր գալիս քշնամու զորքը. ծնծղաները զարկելով և հնչեցնելով փողերը, և հպարտ դիրքով գալիս էին ելնում պանները՝ շրջապատված անհամար ապա-

սավորներով։ Հաստիկ զորապետը հրամաններ էր արձակում, Եվ նրանք ավելի սեղմ սկսեցին հարձակվել կողակներէ դիրքերի վրա, սպառնալով, հրազենները նշան բռնելով, աչքերը փայլատակած և շողացնելով պղնձե զրահները։ Հենց որ կոզակները տեսան, որ նրանք մոտեցան հրացանաձգության հեռավորությամբ, բոլորը միասին կրակեցին ծանր հրազեններըը, և առանց դադարի նրանք կրակում էին հրազեններից։ Շրջակա դաշտերի և արտերի վրայով շատ հեռու տարածվեցին որոտալի պայթյունները, միախառնվելով անընդմեջ դղրդոցին. ամբողջ դաշտը ծխով պատեց, իսկ զապորոժցիներն առանց շունչ քաշելու անդադար կրակում էին. հետիններն շարունակ լցնում էին հրազենը և տալիս առաջիններին, առաջացնելով թշնամիների զարմանքը, որ չէին կարող հասկանալ, թե առանց հրազենները լցնելու ինչպես են կոզակները կրակում։ Ահագին ծխի մեջ, որ նստել էր թե՛ այս, թե՛ այն զորքի վրա, չէր նկատվում, թե ինչպես էին շարքերում պակասում մեկ այս, մեկ այն ռազմիկը. բայց լեհացիներն զգում էին, որ գնդակները խիտ են տեղում, և հետզհետե ավելի էր բորբոքվում կռիվը. և երբ ետ քաշվեցին, որպեսզի ազատվեն ծխից և մի քիչ շունչ առնեն, նրանք իրենց շարքերում շատերին չկարողացան համրել։ Իսկ կոզակների մոտ գուցե թե մի հարյուրակից սպանվել էին երկու-երեք հոգի։ Եվ կոզակները դեռ շարունակում էին կրակ տեղալ հրազեններից, առանց մի րոպե դադար տալու։ Նույնիսկ օտարերկրացի ճարտարագետը զարմացավ այդպիսի տակտիկայից, որ ուրիշ որևէ տեղ նա չէր տեսել և հենց այդտեղ էլ նա ասաց բոլորին. «Ա՛յ թե քաջ կտրիճներ են զապորոժցիները։ Ահա թե ինչպես պիտի կռվեն մյուսներն իրենց երկրներում»։ Եվ իսկույն տեղնուտեղը խորհուրդ տվեց թնդանոթները դասձնել դեպի կոզակների խմբերը։ Ահագնադղորդ ոռնացին թուջե թնդանոթների լայն կոկորդները. հեռվում դղրդալով թնդաց գետինը և ամբողջ դաշտը պատեց կրկնակի թանձր ծուխը։ Հեռու և մոտիկ քաղաքների հրապարակներում և փողոցներում զգացին վաոոդի հոտը։ Բայց նշան բռնողները բարձր էին բռնել, և չիլացած հրագնդերը գծեցին շատ բարձր աղեղ։ Զարհուրելի կերպով ոռնալով օդի մեջ, նրանք թռան կոզակների գլխի վրայով և խոր մխրճվեցին հողի մեջ, պայթեցնելով և օդի մեջ

բարձր ցրելով սևահողը։ Ֆրանսիացի ճարտարապետը, նկատելով այդ անշնորհքությունը, մազերը փետեց և ինքն սկսեց քնդանոթները նշան բռնել, առանց ուշք դարձնելու, որ կոզակներն անընդհատ տեղում և թափում էին գնդակներ։

Տարասը դեռ հեռվից տեսավ, որ Նեզամայկովյան և Ստեբլիչիվի ողջ կուրենների գլխին փորձանք է գալիս և բարձրաձայն բղավեց. «Իսկույն դուրս ելեք սայլերի հետևից և հեծեք ձիերը»։ Բայց կոզակները չէին կարող ոչ սայլերի հետևից դուրս գալ և ոչ ձիերը հեծնել, եթե Օստապը չզարկեր ճիշտ մեջտեղին. վեց քնդանոթի պատրույգը հանեց և միայն չորսի պատրույգը չկարողացավ դուրս քաշել, որովհետև լեհացիները նրան ետ մղեցին։ Իսկ այդ միջոցին օտարերկրացի կապիտանն ինքն իր ձեռքով առավ պատրույգը, որպեսզի արձակի ամենամեծ քնդանոթը, որի նմանը կոզակները մինչ այդ չէին տեսել։ Նա սոսկալի էր նայում իր լայն երախով և հազար-հազար մահ նայում էին նրա երախից։ Ով երբ նա որոտաց, իսկ նրա հետևից մյուս երեքը, և չորս անգամ խուլ պատասխանով ցնցվեց գետինը,— մեծ վիշտ պատճառեցին նրանք։ Անթիվ կոզակների համար լաց կլինեն նրանց ծեր մայրերը, իրենց ոսկրոտ ձեռքերով ծեծելով զառամյալ կուրծքը. շատ կանայք այրի կմնան Գլուխովում, Նեմիրովում, Ջեռնիգովում և այլ ուրիշ քաղաքներում։ Սրտակից սիրելին ամեն օր կվազի շուկա, կբռնի բոլոր անցորդներին, կնայի նրանցից յուրաքանչյուրի աչքերին՝ չկա՞ արդյոք նրանց մեջ նրանցից ամենասիրելին, սակայն քաղաքի միջով անհամար զորք կանցնի, և նրանց մեջ հավիտյան չի լինի նրանցից ամենասիրելին։

Նեզամայկովյան կուրենի կեսը կարծես թե չէր եղել։ Ինչպես կարկուտը հանկարծ չարդում է ամբողջ արտը, որտեղ, ինչպես ծանր ոսկին, ծփում էին հասկերը, այնպես էլ նրանք չարդվեցին և գետին ընկան։

Ինչպե՜ս հարձակվեցին կոզակները, ինչպե՜ս բոլորն իրար անցան, ինչպե՜ս բռնկվեց կուրենի ատաման Կուկուբենկոն, տեսնելով, որ չկա իր կուրենի լավագույն կեսը... Միանգամից նա, մյուս Նեզամայկովցիների հետ միասին, զարկեց ճիշտ մեջտեղին, զայրույթից կաղամբի նման փրթեց առաջին հանդիպածին, շատ ձիավորների ձիերից գլորեց, նիզա-

կահար անելով ձիավորին և ձիուն, հասավ քնդանոթաձիգնե-
րին և արդեն խլեց մի քնդանոթ։ Իսկ այնտեղ արդեն նա տե-
սավ, որ գործի վրա է Ումանի կուրենի ատամանը, իսկ Ստե-
պան Գուսկան արդեն խլում է մեծ քնդանոթը։ Նա թողեց այն
կոզակներին և յուրայիններէ հետ միասին դարձավ դեպի
քշնամու մի այլ խումբը։ Որտեղով անցնում էին նեզամայ-
կովցիները, այնտեղ արդեն փողոց էր, որտեղ շրջվում էին՝
նրբանցք էր։ Պարզ երևում էր, թե ինչպես նոսրանում էին
շարքերը, և լեհացիք խուրձերով էին պառկում։ Իսկ հենց
սայլերի մոտ Վովտուզենկոն էր, առջևից՝ Ջերևիչենկոն, իսկ
հետվի սայլերի մոտ՝ Դեգտյարենկոն, նրա հետևից՝ ատաման
Վերտիխվիստը։ Դեգտյարենկոն արդեն նիզակի վրա էր բարձ-
րացրել երկու իշխանազունների և արդեն հարձակվում էր
անձնատուր չեղող երրորդի վրա։ Ամրակազմ և ճարպիկ էր
լեհացին, զարդարված ճոխ ձիասարքով, և իր հետ նա բերել
էր միայն հիսուն սպասավորներ։ Նա ուժով կոացրեց Դեգ-
տյարենկոյին, գետին գլորեց և արդեն քուրը նրա գլխին ճո-
ճելով, բղավեց.

«Շնե՛ր, ձեր կոզակների մեջ մեկը չկա, որ չափվի ինձ հետ»։

«Ա՛յ տես, կա՛ս,— ասաց և առաջ անցավ Մոսիյ Շիլոն։ Նա ուժեղ կոզակ էր, շատ անգամ էր ծովի վրա ատաման եղել և շատ փորձանքներ էր անցել նրա գլխով։ Տաճիկները հենց Տրապիզոնի մոտ նրանց բռնել էին և բոլորին ճորտի նման տեղավորել առագաստանավերի վրա, ձեռքերն ու ոտ-
քերը շղթայել երկաթե շղթաներով և ամբողջ շաբաթ կորեկ չէին տվել և ջրել էին ծովի դառնահամ ջրով։ Եղեռ գերիներն ամեն ինչ կրել ու համբերել էին, միայն թե չուրանան ուղղա-
փառ հավատը։ Ջէր համբերել ատաման Մոսիյ Շիլոն, ոտնա-
տակ էր տվել սուրբ օրենքը, իր մեղավոր գլուխը փաթաթել էր անարգ ապարոշով, շահել էր փաշայի սիրտը, նավի վրա դարձել էր բանալիների հսկիչը և բոլոր գերիների վերակա-
ցուն։ Եղեռ գերիները շատ էին տխրել այդ բանի համար, որովհետև գիտեին, որ եթե յուրայինն է հավատը փոխում և միանում ճնշողներին, ապա ավելի ծանր և դառն է նրա ձեռ-
քի տակ մնալ, քան թե որևէ այլ անօրենի ձեռքի տակ։ Այդ-
պես էլ եղավ։ Մոսիյ Շիլոն բոլորին նոր շղթաներով շղթայեց

և նստեցրեց երեքին մի շարքի և պինդ պարանները ոլորեց մինչև նրանց սպիտակ ոսկորները. բոլորի վզին զարկում էր, հյուրասիրելով բռունցքի հարվածներով։ Եվ երբ տաճիկները, ուրախացած, որ գտել են այդպիսի ծառա, սկսեցին խնջույք անել և, մոռանալով իրենց օրենքը, բոլորը հարբեցին, նա բերեց բոլոր վաթսունչորս բանալին և բաժանեց գերիներին, որպեսզի շղթաներն արձակեն, ծովը գցեն շղթաները և կապանքները և նրանց փոխարեն առնեն քրերը և կոտորեն տաճիկներին։ Այն ժամանակ կոզակներն անչափ հարստություն էին խլել և փառքով վերադարձել էին հայրենիք, և երկար ժամանակ փանդիռ նվագողները փառաբանում էին Մոսիյ Շիլոյին։ Նրան կոշևոյ կընտրեին, բայց զարմանալի կոզակ էր։ Երբեմն այնպիսի բան կաներ, որ ամենահմաստունի մտքովը չէր անցնի, բայց երբեմն էլ պարզ հիմարությունը հաղթահարում էր կոզակին։ Ամեն ինչ տվել էր գինու և զվարճության, Սեչում նա բոլորին պարտք էր և բացի այդ՝ փողոցային գողի նման բռնվել էր գողության մեջ, գիշերով ուրիշ կուրենից գողացել էր կոզակների սարքը և գինեվաճառի մոտ գրավ էր դրել։ Այդ խայտառակ գործի համար նրան կապել էին շուկայի վեմից և նրա մոտ դրել էին դագանակը, որպեսզի յուրաքանչյուր մարդ իր ուժերի չափ մի հարված զարկի նրան. սակայն զապորոժցիների մեջ չգտնվեց և ոչ մի մարդ, որ դագանակով զարկեր նրան, որովհետև բոլորը հիշում էին նրա նախկին առաքինությունները։ Այդպես էր կոզակ Մոսիյ Շիլոն։

«Ուրեմն նա՛ն այնպիսինները, որոնք զարկում են ձեզ նրման շներին»,— ասաց նա և հարձակվեց նրա վրա։ Եվ զարկեցին իրար, և հարվածներից ծովեցին-երկուսի ուսազարդերը և զրահները։ Եվ քշնամի լեհացին ճեղքեց նրա երկաթե շապիկը և քրի-բերանն առավ մինչև մարմինը. կարմրեց կոզակի շապիկը։ Բայց Շիլոն ուշք չդարձրեց և չլուտ բազուկով (ծանր էր նրա ամրակուռ ձեռքը) հանկարծակի զարկեց նրա գլխին և շշմեցրեց։ Մի կողմ քռավ պղնձե սաղավարտը, օրորվեց և գետին գլորվեց լեհացին, իսկ Շիլոն սկսեց քրտել և քրով խաչակնքել անշունչ ընկածին։ Կոզակ, ծեծելով մի՛ սպանիր քշնամուն, այլ լավ է նա դարձիր։ Ետ չդարձավ կոզակը և հենց այդտեղ սպանվածի սպասավորներից մեկը

դանակով զարկեց նրա վզին։ Շիլոն շրջվեց և հենց այն է՝ հանդուգնը պիտի ստանար իր բաժինը, բայց նա արդեն չքաշած վառոդի ծխի մեջ։ Ամեն կողմից բարձրացավ կայծքարով հրացանի որոտը։ Շիլոն օրորվեց և զգաց, որ վերքը մահացու էր։ Նա վայր ընկավ, ձեռքը դրեց վերքի վրա և ընկերներին դառնալով, ասաց. «Մնաք բարով, պան եղբայրներ, քնկերներ, Քող հավիտյան կանգուն մնա ուղղափառ Ռուս երկիրը և հավիտյան փառք նրան»։ Ծվ կկոցեց թուլացած աչքերը, և կոզակի հոգին քուավ նրա դաժան մարմնից։ Իսկ մի այլ տեղ, քշնամու շարքերը ջարդում էին Վերտիխվիստը, և բալաբանն էր ելնում։

«Ի՞նչ է, պաներ,— ձայն տվեց Տարասը կուրենների ատամաններին.— վառոդամաններում դեռ կա՞ վառոդ, հո չի՞ թուլացել կոզակների ուժը, հո մեջք չե՞ն ծռում կոզակները»։

«Դեռ կա, բատկո, վառոդամաններում դեռ վառոդ կա, դեռ չի թուլացել կոզակների ուժը, և դեռ մեջք չեն ծռում կոզակները»։

Ծվ կոզակները սաստիկ սեղմեցին. բոլոր շարքերն իրար խառնեցին։ Կարճահասակ գնդապետը զարկեց հավաքը և հրամայեց բարձրացնել ներկած ութ դրոշակները, որպեսզի հավաքի յուրայիններին, որոնք ցրվել էին հեռու, ողջ դաշտում։ Բոլոր լեհացիները վազեցին դեպի դրոշակները, բայց նրանք դեռ չէին շարվել, երբ կուրենի ատաման Կուկուբենկոն իր կոզակների հետ նորից զարկեց մեջտեղը և ուղղակի հարձակվեց հաստափոր գնդապետի վրա։ Գնդապետը չդիմացավ և, ձին ետ դարձնելով, սլացավ. իսկ Կուկուբենկոն նրան քշեց դեպի դաշտի հեռուն և չթողեց միանալու իր զորագնդին։ Այդ տեսնելով, Ստեպան Գուսկան կողքի կուրենից սլացավ նրան բռնելու, օղապարանը ձեռքին, գլուխը կռացրեց ձիու բաշի վրա, և հարմար պահին մի թափով օղապարանը փաթաթեց նրա վզին։ Գնդապետն ամբողջովին կաս-կարմիր կտրեց, երկու ձեռքով բռնեց պարանը՝ ջանալով կտրատել պարանը, բայց ամեհի մի թափ նրա փորի մեջ խրեց մահաբեր տեգը։ Այդպես էլ նա մնաց, գետնին մեխված։ Բայց չփրկվեց և Գուսկան։ Կոզակները նոր էին նկատել, երբ արդեն չորս նիզակների վրա բարձրացած տեսան Ստեպան Գուսկային։ Խեղճը միայն կարողացավ ասել. «Քող կոթսան-

վեն բոլոր թշնամիները, և թող հավիտյան ցնծա Ռուս երկիրը»։ Եվ այդտեղ էլ փչեց իր շունչը։ Շուրջը նայեցին կոզակները և այնտեղ, մի կողմի վրա տեսան Մետելիցային, որ հյուրասիրում էր լեհերին, հարվածելով մեկ սրան, մեկ նրան։ Իսկ մի այլ տեղ յուրայինների հետ թշնամուն խառնում էր ատաման Նևիլիչկին, իսկ սայլերի մոտ թշնամուն խառնում և կովում էր Ջակրուտիգուբան, իսկ հեռվի սայլերի մոտ երրորդ Պիսարենկոն արդեն ետ էր վանել մի ամբողջ հրոսախումբ. իսկ մի այլ տեղ սայլերի մոտ իրար էին բռնվել և կովում էին հենց սայլերի վրա։

«Ի՞նչ է, պաներ,— ձայն տվեց ատաման Տարասը, ձիու վրա անցնելով ամենքի առջևից.— վառոդամաններում դեռ կա՞ վառոդ, հո չի՞ թուլացել կոզակների ուժը, հո մեջք չե՞ն ծռում կոզակները»։

«Դեռ կա, բատկո, վառոդամաններում դեռ վառոդ կա, դեռ չի թուլացել կոզպկների ուժը, և դեռ մեջք չեն ծռում կոզակները»։

Իսկ ահդեն Բովդյուգն ընկավ սայլից. գնդակը դիպել էր ուղիղ սրտին։ Բայց ծերունին հավաքեց ողջ շունչը և ասաց.

«Չեմ ափսոսում, որ հրաժեշտ եմ տալիս աշխարհին, թող ամեն մեկին աստված պարգևի այսպիսի վախճան, և թող հավիտյան փառաբանվի Ռուս երկիրը»։ Եվ դեպի բարձունքները սլացավ Բովդյուգի հոգին, վաղուց մնռած ծերունիներին պատմելու, թե ինչպես են կարողանում կռվել Ռուս երկրում և դրանից էլ առավել՝ ինչպես են մեռնում այնտեղ հանուն սուրբ հավատի։

Շուտով, դրանից հետո, գլորվեց գետին նույնպես և Կուրենի ատաման Բալաբանը։ Նա ստացել էր երեք մահացու հարված՝ նիզակի, գնդակի և ծանր թրադաշույնի։ Այնինչ նա մեկն էր քաջարի կոզակներից և երբ ատաման էր՝ ծովային շատ ասպատակություններ էր արել, բայց ամենից պանծալին արշավանքն էր դեպի Անատոլիայի ափերը։ Նրանք այն ժամանակ ավար էին առել շատ ցեխին, տաճկական թանկագին գորգեր, զգեստներ և այլագան արդուզարդ։ Բայց տանջանք քաշեցին վերադարձին. խեղճերը կերել էին տաճկական հրացգնդերի կրակը։ Ինչպե՞ս էին կրակում նավից. նրանց նավակների կեռը պոռչտ արին և շրջվեցին, և շատ-շատերը

խեղդվեցին՝ ծովում, սակայն նավակների կողքերին կապած եղեգնը նավակները փրկեց խորտակվելուց։ Բալաբանն ուժգին թիավարեց, կանգնեց արևի դեմ և այդ պատճառով տաճկական նավից նրան չտեսան։ Ամբողջ գիշերը նրանք շերեփներով և գդակներով դուրս թափեցին ջուրը և կարկատեցին ճեղքվածքները. կոզակների վարտիքներից առագաստներ սարքեցին, սլացան և փախան տաճկական արագընթաց նավից։ Եվ ոչ միայն նրանք ավարով վերադարձան Սեչ, այլև ոսկեկար շուրջառ բերին Կիևի Մեժիգորյան վանքին նվեր, իսկ Զապորոժիեի Աստվածածնի տաճարին նվիրեցին արծաթաձույլ դրվագ սրբոց պատկերի։ Եվ երկար ժամանակ փանդիռով կոզակների հաջողության գովքը գովեցին։ Այժմ նա խոնարհեց գլուխը և զգալով մոտալուտ մահվան տանջանքները, մեղմ ասաց. «Երևում է, պան եղբայրներ, որ ես մեռնում եմ ազնիվ մահով. յոթ հոգու թրով կտրաշտեցի, ինը հոգու նիզակով զարկեցի և անչափ-անհամար տրորեցի իմ ձիով, իսկ քե քանիսին խփեցի գնդակով՝ չեմ հիշում։ Ուրեմն թող հավիտյան ծաղկի Ռուս երկիրը»։ Եվ վեր սլացավ նրա հոգին։

Կոզակնե՛ր, կոզակնե՛ր, անպաշտպան մի՛ թողեք ձեր զորքի թագն ու պսակը։ Արդեն շրջապատեցին Կուկուբենկոյին, արդեն նեզամայկովի ողջ կուրենից մնացել էին միայն յոթ հոգի և նրանք էլ հազիվհազ էին պաշտպանվում։ Արդեն արյունոտվել էր Կուկուբենկոյի զգեստը։ Ինքը՝ Տարասը, տեսնելով նրա աղետը, շտապեց օգնության։ Բայց կոզակներն ուշ հասան։ Նիզակն ավելի շուտ խրվեց Կուկուբենկոյի սիրտը, քան դեն շպրտեցին նրան շրջապատող թշնամիներին։ Կուկուբենկոն հանդարտ թեքվեց իրեն գրկած կոզակների ձեռքերի վրա, և առվի նման հոսեց երիտասարդ արյունը, ինչպես քանկագին գինի, որ ապակե անոթի մեջ մառանից հանել էին անզգույշ սպասավորները. և հենց մուտքի առաջ նրանք սայթաքեցին և փշրեցին քանկագին անոթը. ամբողջ գինին գետին թափվեց, և մազերը փետեց տանտերը, որ վրա էր վազել, և որն այդ գինին պահել էր կյանքի լավ օրվա համար, որպեսզի, եթե աստված տա, ծերության ժամանակ հանդիպի երիտասարդ օրերի ընկերոջը և նրա հետ միասին վերհիշի նախանձի այն ժամանակը, երբ այլ կերպ և ավելի լավ էր

զվարճանում մարդը... Կուկուբենկոն աչքերը ման ածեց չորս կողմը և շշնջաց.

«Փառք եմ տալիս աստծուն, որ մեռնում եմ ձեր աչքերի առաջ, ընկերներ։ Թող մեզնից հետո ավելի լավերն ապրեն, քան մենք, և թող հավիտյան ապրի Քրիստոսի սիրած Ռուս երկիրը»։

Եվ վեր սլացավ նրա երիտասարդ հոգին։ Հրեշտակները նրան թևանցուկ արած բարձրացրին և երկինք տարան։ Այնտեղ լավ կլինի նրա համար։ «Նստի՛ր, Կուկուբենկո, իմ աջակողմը,— կասի նրան Քրիստոսը.— դու չդավաճանեցիր եղբայրությանը, անպատիվ գործ չարիր, մարդուն աղեխի մեջ անպաշտպան չթողիր, պահեցիր և պահպանեցիր իմ եկեղեցին»։ Կուկուբենկոյի մահը բոլորին վշտացրեց։ Արդեն շատ էին նոսրացել կոզակների շարքերը. շատ և շատ քաջարիներ այլևս չկային, բայց կոզակները դեռ դիմադրում էին։

«Ի՞նչ է, պաներ,— ձայն տվեց Տարասը մնացած կուբեններին.— դեռ կա՞ վառող վառոդամանների մեջ, չե՞ն բթացել քրերը, չի՞ հոգնել կոզակի բազուկը, մեջք չե՞ն ծռում կոզակները»։

«Դեռ հերիք կանի վառոդը, բատկո, քրերը դեռ պիտանի են,— դեռ չի հոգնել կոզակի բազուկը, և դեռ մեջք չեն ծռում կոզակները»։

Եվ կոզակները նորից առաջ հետվեցին այնպես, կարծես ոչ մի կորուստ չէին տվել։ Արդեն կենգանի էին միայն երեք կուբենի ատաման, ամեն տեղ արդեն շառագունել էին կարմիր գետերը, կոզակների և թշնամիների մարմիններից բարձր ճեղանել էին կամուրջներ։ Տարասը երկնքին նայեց, իսկ երկրնքի տակ արդեն ձգվել էր բազեների շարանը։ Ա՛յ քե ով կունենա ապրուստ։ Իսկ այնտեղ արդեն նիզակի վրա բարձրացրին Մեսեվիցիային, արդեն մյուս Պիսկարենկոյի գլուխը քպրտալով աչքերը փակեց, արդեն փշրվեց և գետին ընկավ չորս կտոր արված Օխրիմ Գուսկան։ «Դե՛ն»,— ասաց Տարասը և թաշկինակով նշան արեց։ Օստապը հասկացավ այդ նշանը և, դուրս թռչելով դարանից, թափով զարկեց հեծելազորին։ Լեհերը չդիմացան ուժեղ թափին, իսկ նա քշեց նրանց և հասցրեց այն վայրը, որտեղ գետնի մեջ խրված էին ցցեր և նիզակների բեկորներ։ Ձիերն սկսեցին գայթել և պլորվել, իսկ

լեհացիները թռան նրանց գլխի վրայով։ Իսկ այդ ժամանակ կորաունցիները, որոնք սայլերի մոտ հետիններն էին, տեսնելով, որ հրազենի գնդակը կհասնի, միանգամից կրակ բացին հրազեններից։ Լեհացիները շփոթվեցին և իրար անցան, իսկ կոզակներն աշխուժացան։ «Ահա և մեր հաղթանակը», ամեն կողմից լսվեցին զապորոժցիների ձայները, հնչեցին փողերը և բարձրացրին հաղթական դրոշակները։ Պարտված լեհերը փախչում և թաքնվում էին ամեն տեղ։ «Ո՛չ, ո՛չ, հաղթանակը դեռ կատարյալ չէ»,— ասաց Տարասը, նայելով քաղաքի պարիսպներին։ Եվ նա ճշմարիտ էր։

Դարբասները բացվեցին, և այնտեղից դուրս ելավ հուսարների զորագունդը, բոլոր ձիավոր գնդերի պարծանքը։ Բոլորը հեծել էին միատեսակ թուխ նժույգներ։ Ամենից առաջ սլանում էր մի դյուցազն՝ ամենքից ժիր և ամենքից գեղեցքատեսիլ։ Նրա պղնձե գդակի տակից ծփում էին թուխ մազերը, ծածանվում էր թևին կապած թանկագին շարֆը, որ ասեղնագործել էին ամենաչքնաղ գեղեցկուհու մատները։ Տարասը չվարեց, երբ տեսավ, որ այդ դյուցազնը Անդրին էր։ Իսկ այդ ժամանակ նա, բորբոքված ռազմի ավյունով ու կրակով, թևին կապած ընծային արժանի լինելու կրքով՝ սլացավ ինչպես արագավազ և ջահել շուն, որ ոհմակի մեջ ամենագեղեցիկն էր, ամենից ջահելը և արագոտնը։ Փորձված որսորդը քրս տվեց, և նա սլացավ, օդի մեջ ուղղաձիգ ձգելով ոտքերը, մի կողքի վրա թեքված, ձյուն շպրտելով և իր վազքի եռանդից տասն անգամ առաջ տալով նապաստակին։ Սերունի Տարասը կանգ առավ և դիտեց, թե ինչպես է նա մաքրում ճանապարհը, քշում, կոտորում և աջ ու ձախ հարվածներ տեղում։ Չհամբերեց Տարասը և գոռաց. «Ո՞նց թե, քո ազգակիցների՞ն, քո ազգակիցների՞ն ես կոտորում, սատանի ձագ...»։ Բայց Անդրին չէր լսում, թե ո՛վ է նրա առաջ՝ յուրայիննե՞ր, թե օտարներ։ Նա ոչինչ չէր տեսնում։ Նա տեսնում էր միայն գանգուրներ, գանգուրներ, երկա՜ր-երկար գանգուրներ, և՛ գետի կարապի պես սպիտակ կուրծք, և՛ ձյունաթույր պարանոց, և՛ ուսեր, և՛ այն ամենը, ինչ ստեղծված է խելահեղ համբույրների համար։

«Հե՛յ, կորիճներ, նրան քաշեք դեպի անտուռը, դուք նրան միայն քաշեք անտառը»,— բղավեց Տարասը։

Եվ իսկույն ևեթ երեսուն արագոտն կոզակներ ելան, որ նրան գրավեն դեպի անտառը և ծուղակի մեջ գցեն։ Եվ շրտկելով իրենց բարձր գդակները, առանց սպասելու հուսարներին, խաչկտրուկ բաց թողին ձիերը։ Կողքից խփեցին առջևիններին, նրանց բաժանեցին հետևիններից, երկուսին էլ մի-մի հասցրին, իսկ Գոլոկոպիտենկոն Անդրիի մեջքին զարկեց թրի տափակ կողմով, և նույն պահին կոզակները փախուստ տվին, որքան կրավեր կոզակի ուժը։ Ինչպիսի թափով հարձակվեց Անդրին, ինչպե՞ս նրա երակներում գազազեց երիտասարդ արյունը։ Սուր խթաններով խթանելով ձիուն, կայծակի նման արշավեց նա կոզակների հետևից, չնայելով ետ և չտեսնելով, որ նրա հետևից միայն քսան հոգի էին կարողանում նրան հասնել. իսկ կոզակները թռչում էին ձիերի վրա նստած և ուղղակի դարձան անտառի կողմը։ Ձին սրարշավ քշեց Անդրին և քիչ էր մնացել, որ հասներ Գոլոկոպիտենկոյին, երբ հանկարծ մի հզոր ձեռք բռնեց նրա ձիու սանձը։ Անդրին նայեց. նրա առաջ Տարա՛ն էր։ Նա ամբողջ մարմնով ցնցվեց և գունատվեց...

Այդպես կրակի նման բռնկվում է դպրոցականը, որ անզգուշաբար ծեծել էր ընկերոջը և դրա համար նրանից ստացել քանոնի մի հարված ճակատին, և նստարանից գազազած վեր ցատկելով, վազում է իր վախեցած ընկերոջ հետևից՝ պատրաստ նրան կտոր-կտոր անելու, և հանկարծ հանդիպում է դասարան մտնող ուսուցչին. մի ակնթարթում խաղաղվում է ամեհի բորբոքը և հանգչում է անզոր ցասումը։ Դպրոցականի նման մի ակնթարթում չքացավ Անդրիի զայրույթը, կարծես չէր էլ եղել։ Եվ իր առաջ նա տեսավ միայն ահարկու հորը։

«Դե՛, հիմա ի՞նչ պիտի անենք»,— ասաց Տարասը, ուղիղ նայելով նրա աչքերին։ Բայց Անդրին ոչինչ չկարողացավ պատասխանել և կանգնել էր, աչքերը գետնին հառած։

«Ի՞նչ է, տղաս, օգնեցի՞ն քեզ քո լեհերը»։

Անդրին լուռ էր։

«Ուրեմն դավաճանե՞լ, ուրանա՞լ հավատը, դավաճանել քո ազգակիցների՞ն. կա՛ց դու և իջի՛ր ձիուց»։

Խոնարհ, ինչպես երեխան, նա ձիուց իջավ և Տարասի առաջ կանգնեց՝ ո՛չ կենդանի և ո՛չ մեռած։

«Կանգնի՛ր և մի՛ շարժվիր։ Ես եմ քեզ ծնել, ե՛ս էլ կսպանեմ»,— ասաց Տարասը և մի քայլ ետ քաշվելով, ուսից հանեց հրազենը։ Քաթանի նման սպիտակ էր Անդրին. երևում էր, թե ինչպես հանգարտ մրմնջում էին շրթունքները, և նա տալիս էր ինչ-որ մեկի անունը. սակայն այդ հայրենիքի անունը չէր և ոչ էլ մոր կամ եղբայրների անունը. նա շշնջում էր չքնաղ լեհուհու անունը։ Տարասը կրակեց։

Ինչպես ցորենի հասկը, որին կտրում է մանգաղը, ինչպես փոքր գառնուկը, որ սրտի տակ զգում է մահաբեր երկաթը, այնպես էլ նա գլուխը կախեց և ընկավ խոտերի վրա, ոչ մի բառ չասելով։

Որդեսպանը կանգ առավ և երկար ժամանակ դիտեց որդու անշունչ դիակը։ Նա գեղեցիկ էր և մահից հետո. նրա առնական դեմքը, որ նոր էր լցվել ուժով և կանանց համար անհաղթահարելի գրավչությամբ, դեռևս արտահայտում էր աննման գեղեցկություն. սև հոնքերը, ինչպես սգո թավիշ, ավելի պարզ էին ցոլացնում նրա գունատ դիմագծերը։ «Ի՞նչ պակաս կոզակ կլիներ,— ասաց Տարասը.— և հասակը բարձրը էր, և ունքերը սև, իսկ դեմքն ինչպես ազնվականի դեմք, և կովի մեջ զորեղ էր բազուկը, բայց կորա՜վ, կորավ անպատիվ, ինչպես անարգ շո՛ւն»։

«Բատկո, ի՞նչ արիր։ Այդ դո՞ւ սպանեցիր նրան»,— այսպես Օստապը, որ այդ ժամանակ մոտեցավ ձիու վրա։

«Ես, տղա՛ս»,— ասաց Տարասը՝ գլխով անելով։

Օստապը շեշտակի նայեց դիակի աչքերին։ Նա ափսոսաց եղբորը և իսկույն ավելացրեց.

«Բատկո, նրա մարմինը հողին հանձնենք, ինչպես կարգն է, որպեսզի նրան չանարգեն թշնամիները, և նրա մարմինը չքրքրեն գիշատիչ թռչունները»։

«Առանց մեզ էլ կթաղեն,— ասաց Տարասը.— նրա համար կլինեն լաց լինողներ և մխիթարողներ»։

Եվ մի երկու րոպե նա մտածեց. թողնել, որ գիշատիչ գայլերը լափե՞ն նրան, թե՞ խնայել նրա ասպետական առաքինությունը, որ քաջ մարդը պարտավոր է հարգել, ո՛վ էլ որ լինի։ Այդ րոպեին նա տեսավ, որ ձիու վրա նրա կողմն է արշավում Գոլոկոպիտենկոն. «Առաջա՜ն, փարձանք է լինե-

լու. լեհացիք զորեղացան, նրանց օգնության հասավ նոր զորք...» Դոլոկոպիտենկոն դեռ խոսքը չէր ավարտել, երբ մոտ վազեց Վովտուզենկոն, «Ատաման՛, փորձանք է լինելու, նորից ուժ է գալիս նրանց...» Վովտուզենկոն խոսքը դեռ չէր ասել, վազեվազ եկավ Պիսարենկոն, արդեն առանց ձիու. «Որտե՞ղ ես, բատկո, կոզակները քեզ են փնտրում։ Արդեն սպանեցին կուրենի ատաման Նևիլիչկուն, Ջադորոժնուն սպանեցին, Ջերնիչենկոյին սպանեցին։ Բայց կոզակները դեռ դիմադրում են և չեն ուզում մեռնել առանց քեզ տեսնելու, և ուզում են, որ մահից առաջ դու նայես նրանց»։

«Հեծիր ձիդ, Օստա՛պ»,— ասաց Տարասը և շտապեց, որպեսզի կոզակներին դեռ ողջ տեսնի, որպեսզի մի անգամ էլ նայի նրանց, և որպեսզի նրանք ևս մահից առաջ նայեն իրենց ատամանին։ Սակայն նրանք անտառից դեռ դուրս չէին եկել, երբ քշնամին բոլոր կողմերից շրջապատեց անտառը, և ծառերի արանքից ամեն տեղ երևացին ձիավորներ՝ քրեռով և նիզակներով։ «Օստա՛պ, Օստա՛պ, պինդ կաց»,— բղավեց Տարասը, և ինքը քուրը մերկացնելով սկսեց աջ ու ձախ չարդել։ Իսկ Օստապի վրա հանկարծ հարձակվեցին վեց հոգի, բայց նրանք չէին հարձակվել բախտավոր ժամի. մեկի գլուխը քոռավ, մյուսը ետ դառնալիս շուռ եկավ, նիզակը փշրեց երրորդի կողը, չորրորդը, որ ամենախիզախն էր, գլուխը գնդակից փրկեց, բայց շիկացած գնդակն առավ ձիու կլիծքին, և ծառս եղավ ի՛ստաղած ձին, իրեն գետնով զարկեց և ձիավորին չարդեց իր մարմնով։ «Քաջ ես, տղա՛ս, քաջ ես, Օստապ,— գոռաց Տարասը.— ահա ես էլ քո հետևից...»։ Իսկ ինքը շարունակ դիմադրում էր հարձակվողներին։ Կռվում և կոտորում է Տարասը, զարկում է սրա-նրա գլխին, իսկ ինքը նայում է առաջ, նայում է Օստապին և տեսնում է, որ Օստապի հետ նորից կռվի մտավ առնվազն ութ անգամ ավելի ուժեղ։ «Օստա՛պ, Օստա՛պ, պինդ կաց...»։ Բայց արդեն զոռում են Օստապին, մեկն արդեն նրա վզով փաթաթեց օղապարանը, արդեն կապոտում են, արդեն Օստապին տանում են։ «Հե՛յ, Օստապ, Օստապ»,— կանչեց Տարասը, դեպի նա ճանապարհ բացելով, կաղամբի նման չարդելով աչքն առածին։ «Հե՛յ, Օստա՛պ, Օստա՛պ...»։ Բայց նույն րոպեին կարծես նրան խփեցին ծանր քարով, ամեն ինչ պտույտ եկավ և աչ-

քերի առաջ մթնեց։ Մի ակնթարթ նրա աչքին իրար խառնվեցին գլուխներ, նիզակներ, մուխ, բոցերի փայլատակում, ճղներ՝ ծառերի տերևներով, որ ցոլացին հենց նրա աչքերի առաջ։ Եվ նա գետին ընկավ, ինչպես կտրած կաղնին։ Եվ մշուշ իջավ նրա աչքերին։

«Էս ի՜նչ երկար եմ քնել»,— ասաց Բուլբան, զարթնելով ինչպես հարբածի խորունկ քնից և չկանալով ճանաչել շրջապատի առարկաները։ Մի սոսկալի թուլություն էր պատել նրա մարմնի անդամներին։ Նրա աչքի առաջ հազիվ էին աղոտ ցոլանում անծանոթ խրճիթի պատերը և անկյունները։ Վերջապես, նա նկատեց, որ իր դիմաց նստած է Տովկաչը, որն ականջը կախել էր նրա շնչառությանը։

«Այո,— ինքն իրեն մտածեց Տովկաչը,— դու կարող էիր և հավիտյան քնել»,— բայց ոչինչ չասաց, մատով սաստեց և նշան արեց, որ նա լռի։

«Դե, մի ասա տեսնեմ, որտե՞ղ եմ ես այժմ»,— նորից հարցրեց Տարասը, միտքը լարեց, ջանալով հիշել այն, ինչ պատահել էր։

«Լռի՜ր, ասում եմ,— խստությամբ նրա վրա բղավեց ընկերը։— Էլ ի՞նչ ես ուզում իմանալ, մի՞թե չես տեսնում, որ կատր-կատր են արել քեզ։ Երկու շաբաթ է, որ մենք առանց շունչ քաշելու սլանում ենք միասին, և երկու շաբաթ է, որ տաքության և զառանցանքի մեջ գլխիդդ դուրս ես տալիս։ Ահա առաջին անգամ հանդարտ քնեցիր։ Լռի՜ր, եթե ինքդ չես ուզում գլխիդ փորձանք բերել»։

Բայց Տարասը միտքն ավելի էր լարում և ուժ անում վերհիշելու այն ամենը, ինչ եղել էր։ «Ջէ՞ որ լեհացիներն ինձ շրջապատել էին և համարյա արդեն բռնել էին, ախր ես ոչ մի հնարավորություն չունեի դուրս պրծնելու նրանց բազմության միջից»։

«Լռի՜ր, քեզ ասում են, պատանի ձագ,— ցայրացած բղավեց Տովկաչը, ինչպես համբերությունը հատած դայակը կբղավի չարաճճի երեխայի վրա։ Քեզ ի՞նչ օգուտ, եթե իմանաս, թե ոնց դուրս պրծար. հերիք է, որ դուրս ես պրծել։

Եղան մարդիկ, որոնք քեզ անպաշտպան չթողեցին,— և հեդ-
րիք է քեզ։ Դեռ շատ գիշերներ միասին պիտի ճանապարհ
գնանք։ Դու կարծում ես, որ քեզ հասարակ կոզակի տեղ ես
դրել։ Ո՛չ, քո գլուխը նրանք գնահատել են երկու հազար ոս-
կի»։

«Իսկ Օստա՞պը»,— հանկարծ բղավեց Տարասը, ուժ արեց
վեր բարձրանալու և հանկարծ հիշեց, թե ինչպես իր աչքերի
առաջ բռնեցին և կապոտեցին Օստապին, և որ նա այժմ լե-
հացիների ձեռքում է։ Եվ վիշտը պատեց ալեհեր հորը։ Նա
պոկեց և քանդեց բոլոր վերքերի կապերը, հեռու շպրտեց,
ուզեց բարձրաձայն ինչ-որ բան ասել և դրա փոխարեն սկսեց
անկապ և անիմաստ խոսել. տաքությունը և զառանցանքը
նորից հաղթեցին նրան, և ծայր առան անմիտ, անկապ և
խելացնոր խոսքերը։ Իսկ այդ ժամանակ նրա հավատարիմ
ընկերը նրա առաջ կանգնած հայհոյում էր և հանդիմանում,
ասելով նախատինքի ծանր, անհաշիվ խոսքեր։ Վերջապես,
նա բռնեց նրա ոտքերն ու ձեռքերը, բարուրեց ինչպես երե-
խային, շտկեց բոլոր վիրակապերը, փաթաթեց նրան եզան
կաշու մեջ, դրեց կաղապարի մեջ և, պարաններով կապելով
թամքին, նորից նրա հետ ճանապարհ ընկավ։

«Որ մեռած էլ լինես, քեզ տեղ կհասցնեմ, չեմ թողնի, որ
լեհացիք ծաղրուծանակեն քո կոզակի խևությունը, կտոր-
կտոր անեն քո մարմինը և ջուրը գցեն։ Թե արծիվը պիտի
քո աչքերը հանի, մեր տափաստանի արծիվը և ոչ թե լե-
հացիների, ոչ էլ այն արծիվը, որ թռչում է մեր կողմը լե-
հացիների երկրից։ Թեկուզ անկենդան, բայց միևնույն է, ես
քեզ կհասցնեմ Ուկրաինա»։

Այդպես էր ասում հավատարիմ ընկերը։ Գիշեր-ցերեկ
առանց հանգստի նա քշեց ձին և անզգա վիճակում նրան
հասցրեց Զապորոժիեի Սեչը։ Այնտեղ նա անխոնջ սկսեց նը-
րան բժշկել զանազան խոտերով և թրջոցներով. գտավ մի
ջհուդի գիտուն կին, որը մի ամիս նրան խմեցրեց զանազան
դեղեր, և վերջապես Տարասն սկսեց կազդուրվել։ Դեղերի՞ն
էր, թե նրա երկաթյա ուժը հաղթեց, և նա մեկուկես ամսից
հետո ոտքի ելավ. վերքերը լավացան և միայն թրով զարկած
վերքերի սպիներն էին մնում, թե մի ժամանակ որքան
խոր են վիրավորել ալեհեր կոզակին։ Սպկայն նկատելի էր,

որ նա մոռալ էր ու տխուր։ Նրա ճակատի վրա փոս ընկան երեք խորունկ կնճիռներ և այլևս երբեք չհալվեցին։ Նա այժմ իր շուրջն էր նայում. Սեչում բոլորը նոր մարդիկ էին, և մահացել էին իր բոլոր հին քննկերները։ Ոչ ոք չկար նրանցից, որոնք կռվել էին հանուն արդար գործի, հավատի և եղբայրության։ Վաղուց չկային և նրանք, որոնք կոշևոյի հետ գնացել էին թաթարների հետևից. նրանք բոլորը զոհվել էին իրենց գլուխները, բոլորը ոչնչացել էին. ով հենց կռվի մեջ պատվով զոհվել էր գլուխը, ով Ղրիմի աղուտներում էր մեռել ծարավից ու քաղցից, ով կորել էր գերության մեջ, չդիմանալով անարգանքին. արդեն վաղուց աշխարհում չկար և նախնի կոշևոյը, չկար և ոչ ոք վաղեմի ընկերներից, արդեն վաղուց խոտ էր բուսել նրանց երբեմնի հզոր մարմինների աճյունի վրա։ Նա միայն լսել էր, որ եղել էր աղմկահույզ և զորեղ խրախճանք. ջարդուփշուր էր եղել ամանեղենը, ոչ մի տեղ չէր մնացել գինու մի կաթիլ, հյուրերը և սպասավորները կողոպտել էին բոլոր թանկագին քասերը և անոթները,— և այլայլված կանգնել է տանտերն ու միտք է անում. «Լավ կլիներ, եթե չլիներ այդ խրախճանքը»։ Իզուր էին ջանում Տարասին զվարճացնել և զբաղեցնել. իզուր էին ալեմորուս և ծերունի փանդիռ նվագողները, որոնք գալիս էին երկու-երկու կամ երեք հոգի, իզուր էին նրանք գովերգում նրա քաջագործությունները։ Նա անտարբեր և խստադեմ նայում էր ամենքին և ամեն ինչի, և նրա քարացած դեմքի վրա ելնում էր անհանգչելի վիշտը և, գլուխը խոնարհած, նա մեղմ շշնջում էր. «Իմ որդի, իմ Օստապ»։

Զապորոժցիները պատրաստվեցին ծովային արշավանքի։ Դնեպր իջեցրին երկու հարյուր նավակ, և Փոքր Ասիան տեսավ նրանց՝ ածիլած գլուխներով և երկար ցցունքներով, իր ծաղկած ափերը հրի և սրի տալիս. տեսավ, թե ինչպես իր մահմեդական բնակիչների ապարոշները, իր երկրի անհամար ծաղիկների նման, շաղ են տված արյունով թրջված դաշտերում կամ լողում են ափերի մոտ։ Փոքր Ասիան տեսավ անթիվ զապորոժցիների կպրած շալվարներ և մկանուտ ձեռքեր՝ սև մորակներով։ Զապորոժցիները կերան խաղողը և ավերեցին բոլոր այգիները, մզկիթներում աղբի ահագին կույտեր թողին, պարսկական թանկագին շալերը խոնջանների տեղ

գործադրեցին և նրանցով գոտևորեցին իրենց ալտոտած վերարկուները։ Այնուհետև երկար ժամանակ այդ վայրերում գանում էին զապորոժցիների կարճ չիբուխները։ Նրանք ուրախ սրտով ետ վերադարձան. նրանց հետապնդում էր տաճկական տասը թնդանոթանի նավը, որ իր հրանոթների համազարկով, ինչպես թռչուններ, ցրեց նրանց խարխուլ նավակները։ Նրանց մի երրորդ մասն ընկղմվեց ծովի խորքերում, բայց մյուսները նորից հավաքվեցին և հասան Դնեպրի գետաբերանը, իրենց հետ բերելով ցեխիններով լիքը լցված տասներկու տակառ։ Բայց այդ ամենն այլևս Տարասին չէր գրավում։ Նա հեռանում էր դեպի մարգերը և տափաստանը, իբրև թե որսի է գնում. սակայն նրա լիքը մնում էր անկրակել և, զենքը վայր դնելով, վշտով լցված նստում էր ծովի ափին։ Այնտեղ նա երկար էր նստում և գլուխը խոնարհած միշտ մրմնջում էր. «Օստապ իմ, Օստապ իմ»։

Նրա առջև փռվել և շողում էր Սև ծովը. հեռավոր եղեգնուտում կանչում էր ուրուրը։ Նրա սպիտակ բեղն արծաթին էր տալիս, և արցունքը կաթում էր շիթ առ շիթ։

Եվ վերջապես չդիմացավ Տարասը։ «Ինչ էլ որ պատահի, պետք է գնամ տեղեկանամ՝ ո՞ղջ է նա, գերեզմանո՞ւմ, թե նույնիսկ գերեզմանում չէ։ Ինչ էլ լինի, պիտի տեղեկանամ»։ Եվ մի շաբաթից հետո նա հայտնվեց Ուման քաղաքում՝ զինված, նժույգի վրա նստած, նիզակով, թրով, թամքին կապած ջրամանը, ոսղմերթի թաղարով՝ մեջը խավիծ, վառոդանի գնդակներով, ձիու ոտնակապերով և այլ սարք ու կարգով։ Նա ձին քշեց ուղիղ դեպի մի անմաքուր և աղտոտ տնակ, որի փոքրիկ լուսամուտները, ո՛վ գիտե, ինչով մրոտած, հազիվ էին նշմարվում. ծխնելույզը կալնել էին փալասով, և ծակծկոտ կտուրի վրա փռվել էին ճնճղուկները։ Հենց դռների առաջ ամեն տեսակ աղբի կույտ կար։ Լուսամուտից նայում էր չհուդի կինը՝ գլխաշորով և խավարած գոհարներով։

«Մարդդ տա՞նն է»,— հարցրեց Բուլբան ձիուց իջնելով և սանձը կապելով դռան կեռից։

«Տանն է»,— ասաց չհուդի կինը և իսկույն ևեթ շտապեց դուրս ելնել՝ տանելով երկաթե կոնքի մեջ ձիու համար գարի և մի գավաթ գարեջուր՝ ասպետի համար։

«Ո՞ւր է քո ջհուդը»։

«Նա մյուս սենյակում աղոթում էր,— ասաց ջհուդի կինը, ողջունելով նրան, առողջությունը հարցնելով այն ժամանակ, երբ Բուլբան գավաթը մոտեցրեց շրթունքներին։

«Դու այստեղ սպասիր, ապուռ և ջուր տուր իմ ձիուն, իսկ ես մենակ կգնամ նրա հետ առանձին խոսելու։ Ես նրա հետ գործ ունեմ»։

Այդ ջհուդը հայտնի Յանկելն էր։ Նա այժմ այդ քաղաքում պանդոկ էր պահում և վարձակալ էր. հետզհետե յուր ձեռքն էր հավաքել շրջակա պաններին և ազնվականներին, քիչ առ քիչ առել էր նրանց համարյա ամբողջ դրամը, և այդ երկրում խիստ ազդեցիկ էր դարձել իր ջհուդի անձնավորությունը։ Երեք մղոն հեռավորության վրա, շրջակայքում ոչ մի շեն խրճիթ չէր մնացել. ամեն ինչ փլվել և խունացել էր, ամեն ինչ արաղի էին տվել, և միայն մնացել էին թշվառություն ու ցնցոտիներ։ Կարծես թե հրդեհից կամ ժանտախտից հետո հողմահարվել էր ամբողջ երկիրը։ Եվ եթե Յանկելն այնտեղ տասը տարի ևս ապրեր, նաև երևի կգամեր վոևոդի ողջ մարզը։ Տարասը մտավ խրճիթը։ Ջհուդն աղոթում էր, իր բավական կեղտոտ սավանը վրան առած, և նա շուռ եկավ, որպեսզի ըստ յուր կրոնի սովորության թքի վերջին անգամ, երբ հանկարծ նրա աչքերը տեսան Բուլբային, որ կանգնել էր նրա հետևում։ Եվ իսկույն ջհուդի աչքին երևացին այն երկու հազար ոսկին, որ խոստացել էին Բուլբայի գլխի համար. սակայն նա ամաչեց իր շահամոլությունից և ճիգ թափեց իր ներսում խեղդելու ոսկու այդ միտքը, որ որդի պես հավիտյան կրծում է ջհուդի հոգին։

«Լսի՛ր, Յանկել,— ասաց Տարասը ջհուդին, որն սկսեց խոնարհվել նրա առաջ և դուռն զգուշությամբ փակեց, որ իրենց չտեսնեն։— Ես քո կյանքը փրկեցի,— զապորոժցիները քեզ կտոր-կտոր կանեին, ինչպես շանը,— այժմ հերթը քոնն է, դու պետք է ինձ մի ծառայություն անես»։

Ջհուդի դեմքը փոքր-ինչ կնճռոտվեց։

«Ի՞նչ ծառայություն։ Եթե այնպիսի ծառայություն է, որ կարելի է անել, ինչո՞ւ չանել»։

«Էլ ոչ մի խոսք։ Ինձ վարշա՛վ տարա։

«Վարշա՞վ, ո՞նց քե Վարշավ»,— ասաց Յանկելը։ Ջարմանքից նրա հոնքերը և ուսերը վեր քաղվեցին։

«Էլ ոչ մի խոսք ինձ մի՛ ասա։ Վարշավ տար ինձ։ Ինչ էլ որ լինի, ես ուզում եմ մի անգա՛մ էլ նրան տեսնել, քեկուզ մի խոսք ասել նրան»։

«Ո՞ւմ ասել մի խոսք»։

«Նրան, Օստապին, իմ որդուն»։

«Մի՞ քե պանը չի լսել, որ արդեն...»։

«Գիտեմ, բոլորը գիտեմ. իմ գլխի համար տալիս են երկու հազար ոսկի։ Այդ հիմարները լավ են հասկացել գլխիս գինը։ Ես քեզ հինգ հազար կտամ։ ԵՒս քեզ երկու հազարը հիմա (Բուլբան կաշվե քսակից թափեց երկու հազար ոսկի), իսկ մնացածը՝ երբ վերադառնամ»։

Ջհուդն իսկույն առավ երեսսրբիչը և ոսկիները ծածկեց։

«Ա՛յ, ինչ լավ փող է, ինչ արդար փող է,— ասաց նա, մի ոսկի խաղացնելով մատների մեջ և ատամի տակ փորձելով։— Ես կարծեմ, այն մարդը, որից պանը խլել է այսպիսի լավ ոսկիներ, մի ժամ էլ չի ապրել այս աշխարհում, իսկույն գնացել է գետը և գետում խեղդվել է՝ այսքան լավ ոսկիներից հետո»։

«Ես քեզ չէի խնդրի։ Դուցե ևս ինքս Վարշավի ճանապարհը գտնեի. բայց անհծյալ լեհերը կարող են ինձ պատահմամբ ճանաչել և բռնել, որովհետև ես այնքան էլ հնարագետ չեմ։ Իսկ դուք՝ չհուդներդ, հենց այդպիսի բաների համար եք ստեղծված։ Դուք սատանային էլ կխաբեք, դուք ամեն ծակուծուկ գիտեք։ Ահա քե ինչու եմ ես քեզ մոտ եկել։ Մեկ էլ Վարշավում ինքս իմ գլխու բան չեմ կարող անել։ Դե շուտ սայլակդ լծիր և ինձ տար»։

«Իսկ պանը կարծում է, քե ես հենց այնպես մատակ ձին կլծեմ և կասեմ՝ դե հայդա՜... Պանը կարծում է, քե ինչպես որ կա, հենց այդպես, առանց թաքցնելո՞ւ պիտի տանեմ նրան»։

«Դե, թաքցրու, թաքցրու, ինչպես ուզում ես. գուցե դատարկ տակառի մեջ մտնեմ»։

«Ա՛յ, ա՛յ, և պանը կարծում է, քե նրան կարելի է թաքցընել դատարկ տակառի մեջ։ Պանը մի՞ քե չգիտե, որ տեսնողը կմտածի, որ տակառի մեջ արաղ է»։

«Է՛, քող մտածի, որ արագ է»։

«Ո՞նց քե քող մտածի, որ արագ է»,— ասաց չհուդը և երկու ձեռքով բռնեց կավիքները և ապա ձեռքերը վեր բարձրացրեց։

«Դե ինչո՞ւ դու այդպես շվարեցիր»։

«Իսկ պանը մի՞թե չգիտե, որ աստված արագը նրա համար է ստեղծել, որպեսզի ամեն մարդ համն առնի։ Այնտեղ բոլորը համը տեսնող և լակող են. մի աղնվական հինգ վերստ պիտի վազի տակառի հետևից, նա կծակի տակառը և իսկույն կտեսնի, որ չի քաշվում և կասի. «Չհուդը դատարկ տակառ չի՛ տանի, երևի այստեղ մի բան կա. բռնեցե՛ք չհուդին, կապեցեք չհուդին, չհուդի բոլոր փողը խլեք, չհուդին բանտը դրեք»։ Որովհետև աշխարհում ինչքան փորձանք կա, բոլորը քաշվում է չհուդի գլխին, որովհետև բոլորը չհուդին շան տեղ են դնում, որովհետև կարծում են, որ մարդ չես՝ եթե չհուդ ես»։

«Դե որ այդպես է, ինձ դիր ձուկ բարձած սայլի վրա»։

«Չի կարելի, պան, աստված վկա, չի՛ կարելի։ Ամբողջ Լեհաստանում այսօր մարդիկ շան նման սոված են. ձուկը կթալանեն և պանին կտեսնեն»։

«Դե քեկուզ սատանայի վրա լինի, միայն տա՛ր»։

«Լսի՛ր, լսիր պան,— ասաց չհուդը, ներս կոխելով քևքերի բոլորքը և ձեռքերը չոած մոտենալով նրան.— ահա քե մենք ինչ կանենք. ամեն տեղ այժմ բերդեր և ամրոցներ են կառուցում։ Գերմանացոց երկրից եկել են ֆրանսիացի ճարտարապետներ, և դրա համար էլ ճանապարհներով հիմա շատ աղյուս և քար են կրում։ Պանը քող պարկի սայլի տակ, իսկ ես վրան աղյուս կշարեմ։ Պանն առողջ է և պինդ, նրան բան չի լինի, եթե մի քիչ էլ ծանր լինի։ Իսկ սայլի տակ մի անցք կշինեմ և այնտեղից պանին ուտելիք կտամ»։

«Ինչ ուզում ես արա, միայն տա՛ր»։

Եվ մի ժամից հետո աղյուս բարձած սայլակը, երկու քոստ ձի լծած, դուրս եկավ Ումանից։ Ձիերից մեկի վրա նստել էր բարձրահասակ Յանկելը, և չհուդի թասակի տակից ծածանվում էին նրա երկար ու գանգուր կավիքները, երբ նա անգնգում էր ձիու վրա, երկարահասակ, ինչպես ճանապարհի եզրին տնկած վերստասյունը։

XI

Այն ժամանակ, երբ տեղի էր ունենում նկարագրած դեպքը, սահմանամերձ վայրերում դեռ չկային մաքսատան պաշտոնյաներ և ձիավոր պահակներ,— ձեռներեց մարդկանց այդ ահ ու սարսափը,— ուստի և յուրաքանչյուր ոք ինչ ուզեր կարող էր փոխադրել։ Իսկ եթե որևէ մեկը խուզարկում ու գննում էր, ապա այդ նա անում էր մեծ մասամբ իր հաճույքի համար, մանավանդ, եթե սայլի վրա տեսնում էր աչքի համար գրավիչ բաներ և եթե նրա սեփական բազուկն ուներ բավական կշիռ և ծանրություն։ Բայց աղյուսի սիրահարներ չկային, և Ցանկելի սայլակն անարգել ներս մտավ քաղաքի մայր դռներից։ Իր նեղ վանդակի մեջ Բուլբան կարողանում էր միայն լսել աղմուկ, սայլապանների աղաղակները և ուրիշ ոչինչ։ Ցանկելը, սնգսնգալով, իր կարճահասակ և փոշոտված վարգունի վրա մի քանի պտույտներ անելով, շուռ եկավ մի մութ և նեղ փողոց, որ կոչվում էր Կեղտոտ փողոց, միաժամանակ և Ջհուդի փողոց, որովհետև, իրոք, Վարշավայի բոլոր ծայրերից այդտեղ էին հավաքվել ջհուդները։ Այդ փողոցը շատ նման էր փոր ու փսորը բաց արած մի կեղտոտ բակի։ Արևը, կարծես, երբեք չէր թափանցում այդտեղ։ Խապար մրոտված փայտաշեն տները՝ պատուհաններից ձգված բաղմաթիվ ձողերի հետ ավելի էին քանձրացնում խավարը։ Հազիվ երբեմն նրանց մեջ կարմրին էր տալիս աղյուսե մի պատ, բայց նա էլ արդեն շատ տեղերում բոլորովին սևացել էր։ Երբեմն միայն վերևում պատի ծեփած մի անկյունն արևի տակ շողում էր աչքի համար անտանելի սպիտակությամբ։ Այստեղ ամեն ինչ կազմված էր խիստ ծայրահեղություններից՝ ծխնելուղի խողովակներ, փալասներ, կճեպներ, գեներ գցած՝ կոտրած կարասներ։ Ով մի անպետք բան ուներ, գցում էր փողոց՝ անցորդներին ընծայելով կարելի հարմարություններ այդ անպետք բաներով պարարելու իր բոլոր զգացումները։ Ջիու վրա նետած հեծվորը կարող էր փողոցի վրայով ձեռքը հասցնել մի տնից մյուսը ձգած ձողերին, որոնց վրա կախել էին ջհուդի գուլպաներ, կարճ վարտիքներ և ծխահարտ ռազ։ Երբեմն մի ջհուդ կնոջ բավական սիրուն գեմք, մթագնած ուլունքներով զարդարուն, նայում էր խունացած պատու-

հանից։ Ջհուդ երեխաների խումբը՝ կեղտի մեջ կորած, պատռոտված շորերով և գանգուր մազերով, բղավոցով և քարվալվում էր ցեխի մեջ։ Մի շեկ ջհուդ, պեպենոտ երեսով, որից նրա դեմքը նմանվում էր ճնճղուկի ձվի, պատուհանից դուրս նայեց. նա իսկույն ևեթ Յանկելին ինչ-որ բան ասաց իր մոլթանի լեզվով, և Յանկելն իսկույն սայլակը ներս քշեց մի բակ։ Փողոցով անցնում էր մի ուրիշ ջհուդ. նա կանգնեց, նույնպես խառնվեց խոսակցությանը, և, երբ վերջապես Բուլբան սողալով դուրս եկավ աղյուսների տակից, տեսավ երեք ջհուդների, որոնք խոսում էին մեծ եռանդով։

Յանկելը դարձավ Բուլբային և ասաց, ինչ որ պետք է, կանեն, որ նրա Օստապը նստած է քաղաքային զնդանում ու թեև դժվար է համոզել պահապաններին, բայց, այնուամենայնիվ, նա խոստանում է նրա համար գլուխ բերել տեսակցությունը։

Երեք ջհուդների հետ միասին Բուլբան մտավ սենյակ։

Ջհուդները նորից սկսեցին իրար հետ խոսել իրենց անհասկանալի լեզվով։ Տարասը դիտում էր նրանցից յուրաքանչյուրին։ Թվում էր, թե ինչ-որ մի բան ուժգին ցնցում է նրան։ Նրա կոշտ և անտարբեր դեմքի վրա բռնկվեց հույսի մի ինչ-որ սրտմաշուկ բոց, այն հույսի, որ հուսահատության վերջին աստիճանին այցելում է մարդուն։ Նրա ծերուկ սիրտը, ինչպես մի պատանու սիրտ, սկսեց սաստիկ բաբախել։

«Լսեցե՛ք, ջհուդներ,— ասաց նա և նրա խոսքերի մեջ մի ինչ-որ խանդավառ բան կար.— աշխարհում դուք ամեն ինչ կարող եք անել, ամեն ինչ կարող եք ծովի տակից հանել. ես առածք վաղուց է ասում, որ եթե ջհուդը կամենա գողանալ, ինքն իրեն կգողանա։ Ազատեք իմ Օստապին, այնպես արեք, որ նա կարողանա փախչել այս դևերի ձեռքից։ Ա՛յ, այս մարդուն ես տասներկու հազար ոսկի եմ խոստացել, ես տասներկու հազար էլ կավելացնեմ։ Ինչ որ ունեմ ես՝ քանկագին քարեր և գետնի տակ պահած ոսկի, տունս և վերջին շորս կծախեմ և ձեզ հետ պայման կկապեմ, որ քանի կենդանի եմ, կուժի մեջ ինչ որ ձեռք բերեմ, բոլորը ձեզ հետ հավասար կիսեմ»։

«Ո՛, չի կարելի, սիրելի պան, չի կարելի»,— հառաչելով ասաց Յանկելը։

«Ո՛չ, անկարելի է»,— ասաց մյուս ջհուդը։

Երեք ջհուդներն էլ իրար երեսի նայեցին։

«Իսկ եթե փորձե՞նք,— ասաց երրորդը, երկյուղած նայելով երկուսին։— Դուցե աստված հաջողի»։

Երեք ջհուդները խոսեցին գերմաներեն։ Բուլբան, որքան էլ ուշադիր լսեց, ոչինչ գլխի չընկավ։ Նա միայն լսեց հաճախակի կրկնվող մի բառ՝ «Մարդոխայ», և ուշիշ ոչինչ։

«Լսի՛ր, պան,— ասաց Յանկելը.— հարկավոր է խորհրդակցել այնպիսի մի մարդու հետ, որի նմանն աշխարհում դեռ չի եղել։ Է՛, նա այնպիսի իմաստուն է, ինչպիսին Սղոմոնն էր, և եթե նա ոչինչ չանի, ուրեմն աշխարհում էլ ոչ ոք չի անի։ Դու նստիր այստեղ, ահա բանալին. և ոչ ոքի ներս չթողնես»։ Ջհուդները փողոց դուրս եկան։

Տարասը դուռը կողպեց և փոքրիկ լուսամուտից նայեց ջհուդի այդ կեղտոտ պողոտային։ Երեք ջհուդները կանգնեցին փողոցի մեջտեղը և սկսեցին բավական մոլեգին խոսել։ Շուտով նրանց միացավ և չորրորդը, վերջապես և հինգերորդը։ Նա լսեց նորից կրկնվող «Մարդոխայ, Մարդոխայ» բառերը։ Ջհուդներն անդադար նայում էին փողոցի մի կողմը։ Վերջապես փողոցի ծայրում, մի խարխուլ տնակի հետևից, ջհուդի մաշիկ հագած մի ոտք երևաց, և աչքի ընկան բաճկոնի փեշերը։ «Ա՛խ, Մարդոխայը, Մարդոխայը», միաբերան բղավեցին բոլոր ջհուդները։ Մի նիհար ջհուդ, Յանկելից մի քիչ կարճահասակ, բայց կնճիռներով ավելի պատած, վերին վիթխարի շրթունքով, մոտեցավ անհամբեր բազմությանը, և բոլոր ջհուդները, իրար բերանից խոսք խլելով, շտապեցին նրան պատմել, ըստ որում Մարդոխայը մի քանի անգամ նայեց փոքրիկ լուսամուտին, և Տարասը գլխի ընկավ, որ խոսքն իր մասին է։ Մարդոխայը քափահարում էր ձեռքերը, լսում էր, ընդհատում էր խոսքը, հաճախակի թքում էր մի կողմի վրա և բաճկոնի փեշերը բարձրացնելով, ձեռքը կոխում էր գրպանը և հանում ինչ-որ չխկչխկան բաներ, և այդ ժամանակ երևում էր նրա խիստ անպիտան վարտիքը։ Վերջապես, բոլոր ջհուդներն այնպիսի ճիչ-աղաղակ բարձրացրին, որ պահապան կանգնած ջհուդն ստիպված էր լռելու նշան տալ, և Տարասն արդեն սկսեց անհանգստանալ իր անվտանգության համար, սակայն մտաբերելով, որ ջհուդները բացի փողոցից ուրիշ տեղ

խորհուրդ անել չեն կարող, և որ նրանց լեզուն ինքը սատանան չի հասկանա, հանգստացավ։

Երկու րոպե անց չհուդները միասին մտան նրա սենյակը։ Մարդոխայը մոտեցավ Տարասին, զարկեց նրա ուսին և ասաց. «Եթե մենք և անտված կամենանք մի բան անել, այն ժամանակ կկատարվի, ինչպես պետքն է»։

Տարասը նայեց այդ Սողոմոնին, որի նմանն աշխարհում դեռ չի եղել, և մի քիչ հուսադրվեց։ Հիրավի, նրա կերպարանքը կարող էր որոշ վստահություն ներշնչել. նրա վերին շրթունքը մի կատարյալ զարհուրանք էր։ Այդ շրթունքի հաստությունն ավելացել էր անկասկած կողմնակի պատճառներից։ Այդ Սողոմոնի մորուքն ուներ միայն տասնհինգ մազ և այն էլ ձախ կողմը։ Սողոմոնի դեմքի վրա իր խիզախության համար կերած ծեծի այնքան նշաններ կային, որ նա անկասկած վաղուց արդեն մոռացել էր նրանց հաշիվը և վարժվել էր ընդունելու որպես ի ծնե բծեր։

Մարդոխայը հեռացավ իր ընկերների հետ, որոնք զարմացել էին նրա իմաստության վրա։ Բուլբան մենակ մնաց։ Նա մի տարօրինակ և արտասովոր վիճակի մեջ էր. իր կյանքում առաջին անգամ նա անհանգստություն զգաց։ Նրա հոգին տենդային դրության մեջ էր։ Նա առաջվա աննկուն, անեթեր և ամրակուռ կաղնին չէր. նա փոքրոգի էր, այժմ նա անզոր էր։ Նա ցնցվում էր յուրաքանչյուր շշուկից և ամեն մի չհուդի կերպարանքից, որ երևում էր փողոցի ծայրում։ Վերջապես նա ամբողջ օրը ապասեց այդ վիճակի մեջ. չէր ուտում, չէր խմում, և նրա աչքերը ոչ մի ակնթարթ չէին բաժանվում փողոցի վրա նայող փոքրիկ լուսամուտից։ Վերջապես արդեն ուշ երեկոյան երևացին Մարդոխայը և Ցանկելը։ Տարասի սիրտը նվաղեց։

«Ինչպե՞ս է, հաջո՞ղ է»— հարցրեց նա վայրի նժույգի անհամբերությամբ։

Բայց նախքան չհուդները շունչ կառնեին պատասխանելու, Տարասը նկատեց, որ այլևս չկար Մարդոխայի վերջին խոպոպը, որ թեև անշնորհք, բայց այնուամենայնիվ, օզակ-օզակ ոլորվում էր նրա քաասակի տակից։ Նկատելի էր, որ նա ուզում էր մի բան ասել, բայց այնպիսի անպիտան բաներ դուրս տվեց, որ Տարասը ոչինչ չհասկացավ։ Ինքը՝ Ցանկելը

ևս շա՜տ հաճախ ձեռքը բերնին էր դնում, կարծես մրսելուց տառապում էր։

«Մ՛, սիրելի պան,— ասաց Յանկելը։— Այժմ բոլորովին չի կարելի, աստված վկա, չի կարելի։ Այնքան վատ մարդիկ են, որ հարկավոր է քթել նրանց երեսին։ Ահա Մարդոխայն էլ կասի. Մարդոխայն այնպիսի մի բան արեց, որ աշխարհում դեռ ոչ ոք չի արել, բայց աստված չկամեցավ որ այդպես լինի։ Երեք հազար զորք է կանգնած, և վաղը բոլոր գերիներին պիտի կախեն»։

Տարասը նայեց չհուդների աչքերին, սակայն առանց անհամբերության և զայրույթի։

«Իսկ եթե պանն ուզում է նրան տեսնել, ապա վաղը կանուխ պետք է գնալ, քանի արևը չի ծագել։ Պահակները համաձայնվում են, և մի լևենտար խոսք տվեց։ Միայն թող այն աշխարհում նրանք գեհենի բաժին դառնան, օհ աստված իմ, այդ ինչ շահամոլ մարդիկ են. մեր մեջ անգամ այդպիսի մարդիկ չկան։ Ամեն մեկին տվի հիսուն ոսկի, իսկ լևենտարին...»։

«լա՛վ, ինձ նրա մոտ տար»,— վճռական ասաց Տարասը և նորից վերադարձավ նրա հոգու ողջ արիությունը։ Նա համաձայնվեց Յանկելի առաջարկին, ըստ որի նա պիտի հագնի իրրև թե գերմանացիների երկրից եկած օտարազգի կոմսի զգեստ, որպեսզի արդեն պատրաստել էր հեռատես չհուդը։ Արդեն գիշեր էր։ Տանտերը՝ պսպենոտ շեկ չհուդը, ծալքից հանեց մի մաշված ներքնակ, որ ծածկված էր ինչ-որ փոխարինով, և Բուլբայի համար թախտի վրա փռեց։ Յանկելը պառկեց հատակին՝ նույնպիսի ներքնակի վրա։ Շեկ չհուդը մի փոքրիկ գավաթով ինչ-որ թուրմ խմեց, հանեց բաճկոնը և, գուլպաներն ու մաշիկները հագին նմանվելով հավի ճտի, իր կնոջ հետ մտավ մի տեղ, որ նման էր պահարանի։ Երկու չհուդ լակոտներ, ինչպես տնային շնիկներ, պառկեցին հատակին՝ պահարանի մոտ։ Բայց Տարասի քունը չտարավ։ Նա անշարժ նստել էր և մատներով մեղմ թմբկահարում էր սեղանին։ Նրա ձեռքին ծխամորճն էր, և ծուխ էր բարձրանում, որից չհուդը քնահարամ փռշտում էր և քիթը կախում վերմակի տակ։ Երկնքի վրա դեռ չէր երևացել լուսաբացը, երբ նա ատքով հրեց Յանկելին։

«Ջհո՛ւդ, վե՛ր կաց և տուր քո կոմսի զգեստը»։

Մի ակնթարթում նա հագնվեց, սևացրեց բեղերը, հոնքերը, կատարին դրեց փոքրիկ թուխ գլխարկը, և ամենամոտիկ կոզակներից անգամ ոչ ոք չէր կարող նրան ճանաչել։ Արտաքին տեսքով նա երեսուն տարեկանից ավելի չէր։ Նրա այտերի վրա խաղում էր առույգ կարմիրը, և նույնիսկ սպիները դեմքին տալիս էին մի ինչ-որ հրամայական բան։ Ոսկեզարդ զգեստը շատ էր սազում նրան։

Բոլոր փողոցները դեռ քնի մեջ էին։ Քաղաքում դեռ չէր երևում և ոչ մի շահախնդիր արարած՝ կողովը ձեռքին։ Բուլբան և Յանկելը մոտեցան մի շենքի, որ ուներ նստած արագիլի տեսք։ Այդ մի ցածր, լայն, վիթխարի և մրոտված շենք էր, որի մի կողմից, արագիլի վզի նման, ցցվել էր երկար ու նեղ աշտարակը, որի գլխին տնկված էր տանիքի կտորը։ Այդ շենքը բազմաթիվ և բազմատեսակ նպատակի էր ծառայում։ Այդտեղ և՛ զորանոցներն էին, և՛ բանտը, և՛ նույնիսկ քրեական դատարանը։ Մեր ուղևորները դարբասով ներս մտան մի ընդարձակ դահլիճ կամ ծածկված բակ։ Մոտ հազար մարդ միատեղ քնած էին։ Ուղիղ դեմուդեմը մի ցածրիկ դուռ էր, որի առջև նստած պահակներն ինչ-որ խաղ էին խաղում. խաղն այն էր, որ մեկը երկու մատով խփում էր մյուսի ափին։ Նրանք եկվորների վրա ուշադրություն չդարձրին և գլուխները շրջեցին միայն այն ժամանակ, երբ Յանկելն ասաց.

«Այդ մենք ենք, լսո՞ւմ եք, պաներ, մենք ենք»։

«Ներս մտեք»,— ասաց նրանցից մեկը, մի ձեռքով բանալով դուռը, իսկ մյուսը մեկնելով ընկերոջը, որպեսզի վերջինս մատներով զարկի։

Նրանք մտան մի նեղ և խավար միջանցք, որով հասան նույնպիսի մի դահլիճի, որ վե՛րևից փոքրիկ լուսամուտներ ուներ։

«Ո՞վ է գալիս,— գոռացին մի քանիսը, և Տարասը տեսավ բավական թվով սպառազինված մարդկանց։— Մեզ հրամայված է ոչ ոքի ներս չթողնել»։

«Այդ մենք ենք,— բղավեց Յանկելը։ —Աստված վկա, մենք ենք, պայծառ պաներ»։ Բայց ոչ ոք լսել չկամեցավ։ Բարեբախտաբար այդ ժամանակ մոտեցավ մի հաստատուն

մարդ, որ բոլոր նշաններից երևում էր՝ պետք է պետը լիներ, որովհետև ամենից ավելի թունդ էր հայհոյում։

«Պան, այդ մենք ենք։ Դուք արդեն մեզ ճանաչում եք, և այսպես կոմսը ձեզ դեռ շնորհակալ կլինի»։

«Թողեք անցնե՛ն. սատանայի մորը հազար դև... Եվ էլ ուրիշ ոչ ոքի չթողնեք։ Մեկ էլ ոչ ոք թուրը դես չգցի և շան նման գետնին չթաղնեք...»։

Մեր ուղևորներն այլևս չլսեցին պերճախոս հրամանի շարունակությունը։

«Այդ մենք ենք... այդ ես եմ... մերոնք են»,— ասում էր Յանկելը, որևէ մեկին հանդիպելիս։

«Հը՞, կարելի՞ է հիմա»,— հարցրեց նա պահակներից մեկին, երբ վերջապես նրանք հասան այն տեղը, ուր արդեն վերջանում էր միջանցքը։

«Կարելի է, միայն չգիտեմ, ձեզ կթողնե՞ն բանտի ներսը։ Այժմ Յանը չկա, նրա փոխարեն ուրիշն է»,— պատասխանեց պահակը։

«Վա՛յ, վա՛յ,— հանդարտ շշնջաց չՀուդը։— Այդ վատ եղավ, սիրելի պան»։

«Տա՛ր»,— համառությամբ պատասխանեց Տարասը։ Չհուդը հնազանդվեց։

Զնդանի դռների առաջ, որոնք դեպի վեր սրածայր էին, կանգնել էր երկու ծալքանի բեղերով մի հայդուկ։ Բեղերի վերին ծալքը դեպի ետ էր գնում, երկրորդը ցցվել էր առաջ, իսկ երրորդը՝ ներքև, այնպես որ հայդուկը շատ նման էր կատվի։

Չհուդը երեքտակ գունդ ու կծիկ եղավ հայդուկի առաջ և համարյա կողքի վրա մոտեցավ նրան։

«Ձերդ պայծառափայլություն, պայծառափայլ պան»։

«Չհուդ, դու ի՞նձ ես ասում»։

«Ձեզ, պայծառափայլ պան»։

«Հըմ... իսկ ես միայն հայդուկ եմ»,— ասաց եռածալ բեղավորը, ուրախացած աչքերով։

«Իսկ ես, աստված վկա, կարծեցի, թե հենց ինքը վոևոդն է։ Ա՛յ, ա՛յ ա՛...— չՀուդն այդ խոսքի վրա գլուխը ոլորեց և չռեց մատները.— Փա՛հ, ի՞նչ երևելի տեսք է։ Աստված վկա, գնդապետ է. իսկական գնդապետ։ Ա՛յ, եթե միայն մի մատ ավելացնեն, արդեն գնդապետ է։ Հարկավոր է, որ պանը նստի

ճանճի նման արագավազ նժույգի վրա և վարժեցնի զորագնդերին»։

Հայդուկը շտկեց իր բեղի ներքին ծալքը, և նրա աչքերը բոլորովին զվարթացան։

«Ի՞նչ մարդիկ են այս զինվորականները,— շարունակեց չհուզը։— Օ՜հ, աստված իմ, ի՜նչ երևելի մարդիկ են։ Ի՜նչ երիզներ, ի՜նչ վահանակներ... նրանք արևի նման շողշողում են։ Իսկ աղջիկները, երբ տեսնում են զինվորականներին... ա՜յ, ա՜յ, ա՜յ։ Չհուզը նորից պտտեցրեց գլուխը։

Հայդուկը ձեռքով ոլորեց վերին բեղը և ատամների արանքով արձակեց մի ձայն, որ մի քիչ նման էր ձիու վրնջյունի։

«Կհնդրում եմ, որ պանը մի շնորհ անի,— արտասանեց չհուզը.— Ահա իշխանը, որ եկել է օտար երկրից, կամենում է կոզակներին տեսնել։ Նա իր կյանքում դեռ չի տեսել, թե ինչ մարդիկ են կոզակները»։

Լեհաստանում սովորական երևույթ էր օտարերկրյա կոմսերի և իշխանների այցը. նրանց շատ հաճախ հրապուրում էր Եվրոպայի այդ գրեթե կես-ասիական անկյունը տեսնելու հետաքրքրությունը։ Մոսկովիան և Ուկրաինան նրանք գրեթե համարում էին Ասիայում գտնվող։ Ուստի և հայդուկը, իսնարհ գլուխ տալուց հետո, պատշաճ համարեց իր կողմից մի քանի խոսք ևս ավելացնել։

«Ձերդ պայծառափայլություն,— ասաց նա,— ես չգիտեմ, թե ինչի՞ համար եք ուզում նրանց տեսնել։ Նրանք մարդիկ չեն, այլ շներ։ Եվ նրանց հավատն էլ այնպիսին է, որ ոչ ոք չի հարդում»։

«Սուտ ես ասում, սատանի ծնունդ. ասաց Բուլբան, շունը ինքդ ես։ Դու ո՞նց ես համարձակվում ասել, թե մեր հավատը չեն հարդում։ Այդ ձեր հերձված հավատն է, որ չեն հարգում»։

«Է, հե՛,— ասաց հայդուկը.— բարեկամ, ես գիտեմ, թե դու ավ ես. դու ինքդ նրանցից ես, որոնք ինձ մոտ արդեն նստած են։ Սպասիր, ես մերոնց կանչեմ»։

Տարասը հասկացավ իր անզգուշությունը, բայց համառությունն ու զայրույթը նրան խանգարեցին սխալն ուղղելու միջոցը գտնել։ Բարեբախտաբար նույն թոռին ճանկելը կարողացավ մի ճար անել։

«Պայծառաճայլ պան, այդ ինչպե՞ս կարելի է, որ կոմսը կոզակ լինի։ Իսկ եթե նա կոզակ լիներ, որտեղի՞ց նա կարող էր գանել այդպիսի զգեստ և ունենալ կոմսի կերպարանք»։

«Ո՞ւմ ես ուզում խաբել»,— և հայդուկը բերանը լայն բացեց, որ կանչի յուրայիններին։

«Ձերդ արքայական մեծություն, լռեցե՛ք, լռեցե՛ք, ի սեր աստծո,— աղաղակեց Ցանկելը։— Լռեցե՛ք, մենք դրա համար ձեզ այնքան փող կտանք, որ դուք երբեք չեք տեսել. մենք ձեզ երկու կարմիր ոսկի կտանք»։

«Հըմ, երկու ոսկի։ Երկու ոսկին ի՞նչ է ինձ համար։ Ես միայն սափրիչին եմ երկու ոսկի տալիս, որ մորուքիս կեսը խուզի։ Ջհուդ, ինձ հարյուր ոսկի տուր»։

Այդ խոսքի վրա հայդուկը ոլորեց վերին բեղը։

«Իսկ եթե հարյուր ոսկի չտաս, այս րոպեին կգոռամ»։

«Էլ ինչո՞ւ այդքան շատ»,— վշտագին ձայնով ասաց գունատված ջհուդը և բացեց իր կաշվե քսակի բերանը։ Բայց նա բախտավոր էր, որ քսակի մեջ ավելի չկար, իսկ հայդուկը հարյուրից բարձր հաշվել չգիտեր։

«Պան, պան, գնանք շուտով։ Տեսնում եք ինչ վատ մարդիկ են»,— ասաց Ցանկելը, նկատելով, որ հայդուկը ձեռքում տնտղում է դրամը, կարծես ափսոսալով, որ ավելին չի պահանջել։

«Ի՞նչ է, սատանի հայդուկ,— ասաց Բուլբան,— փողերը առար, իսկ ցույց տալ չե՞ս ուզում։ Ո՛չ, դու պիտի ցույց տաս։ Եթե փողերն առար, դու այժմ իրավունք չունես մերժելու»։

«Կորեք գնացե՛ք, թե չէ այս րոպեիս իմաց կանեմ և ձեզ տեղնուտեղը... Ասում եմ շուտ քաշվե՛ք, հեռացե՛ք...»։

«Պան, պան, գնանք, աստված վկա, գնանք։ Ո՛ւ, դրանց... Թող աստված դրանց գլխին քար ու կարկուտ թափի»,— գոչեց խեղճ Ցանկելը։

Բուլբան դանդաղ, գլուխը խոնարհած շրջվեց և ետ դարձավ։ Ցանկելը կշտամբում էր նրան, և իզուր կորցրած ոսկիների միշտը կրծում էր նրան։

«Ի՞նչ պետք էր դիպչել։ Շունը հաչհոյում էր, թող հաչհոյեր։ Դրանք այնպիսի մարդիկ են, որ չեն կարող չհայհոյել։ Օ՛հ, աստված իմ, ինչպիսի բախտ ես չնորհում մարդ-

կանց։ Հարյուր ոսկի միայն նրա համար, որ մեզ թշեց։ Իսկ մեզ նմանի կավիքները կպատառոտեն, մուրը կշարդեն, այնպես որ նայել իսկ չի կարելի, և ոչ ոք հարյուր ոսկի չի տա։ Օ՜, աստված իմ, ողորմած աստված»։

Բայց այդ անհաջողությունն ավելի շատ ազդել էր Բուլբայի վրա։ Նրա աչքերում այդ արտահայտվում էր որպես ամեն ինչ լափող հուր։

«Գնա՜նք,— ասաց նա հանկարծ, կարծես թե իրեն թափահարելով,— գնանք հրապարակը։ Ես ուզում եմ տեսնել, թե ինչպես են նրան տանջելու»։

«Օ՜հ, պան, ինչի՞ համար գնանք։ Դրանով հո չե՞նք կարող օգնել»։

«Գնա՜նք»,— համառությամբ ասաց Բո՞ւլբան, և չհուդը, դայակի նման հառաչելով, քարշ եկավ նրա հետևից։

Դժվար չէր գտնել այն հրապարակը, որտեղ պիտի կատարվեր մահվան պատիժը. ամեն կողմից ժողովուրդը թափվում էր այնտեղ։ Այն բիրտ դարում այդ ամենագրավիչ տեսարաններից մեկն էր ոչ միայն ամբոխի, այլև բարձր դասերի համար։ Բազմաթիվ աղոթասեր պառավներ, բազմաթիվ երիտասարդ աղջիկներ և ամենավախկոտ կանայք, որոնք հետո ամբողջ գիշեր երազի մեջ տեսնում էին արյունաթաթախ դիակներ և քնատ բղավում էին այնքան բարձր, ինչպես կարող է բղավել միայն հաբբած հուսարը,— նրանք բոլորն, այնուամենայնիվ, բաց չէին թողնում հետաքրքրությունը հագեցնելու առիթը։ «Ա՜խ, ինչ տանջանք է»,— հիստերիկ տենդով աղաղակում էին նրանցից շատերը, բայց և այնպես կանգնում էին երկար ժամանակ։ Ոմանք բերանները բաց, ձեռքերն առաջ պարզած, կկամենային թռչել մյուսների գլխի վրա, որպեսզի այնտեղից ավելի լավ տեսնեն։ Նեղ, փոքր և սովորական քլուխների բազմության միջից մսագործը դուրս էր ցցել իր չաղ դեմքը, գիտակի տեսքով դիտում էր ամբողջ գործողության ընթացքը և միավանկ բառերով խոսում էր գինագործ վարպետի հետ, որին անվանում էր սանահայր, որովհետև տոն օրերին նրա հետ միասին խմում էր գինետանը։ Ոմանք եռանդուն դատում էին, ուրիշները նույնիսկ գրազ էին բռնում, բայց մեծ մասը նրանք էին, որոնք ամբողջ աշխարհին և աշխարհում պատահած բոլոր դեպքերին նայում

են ոչ այլ կերպ, քան մատով իրենց քիթը փորելով։ Առաջին շարքում, հուսարների մոտ, որոնք կազմում էին քաղաքային պահնորդ զորքը, կանգնել էր մի երիտասարդ ազնվական և կամ ազնվականի նման մի երիտասարդ, զինվորական տարազով. նա հագել էր այն ամենը, ինչ ուներ, այնպես որ նրա քնակարանում մնացել էին միայն պատառոտված շապիկը և հին կոշիկները։ Նրա վզից, մեկը մյուսի վրայից երկու շղթա կար կախված՝ մի դուկատի հետ։ Նա կանգնել էր իր սիրած աղջկա՝ Յուզիսյայի հետ և անդադար չորս կողմն էր նայում, որպեսզի որևէ մեկը չկեղտոտի աղջկա մետաքսյա զգեստը։ Նա ամեն ինչ հասկացնում էր իր սիրածին, այնպես որ որևէ բան ավելացնելն անկարելի էր. «Ահա այս, իմ հոգյակս, իմ Յուզիսյա,— ասում էր նա.— այս ամբողջ ժողովուրդը, որ տեսնում եք, հավաքվել է, որպեսզի տեսնի, թե ինչպես են հանցավորներին պատժելու։ Իսկ ա՛յ, այն մարդը, որ տեսնում եք, որը ձեռքին կացին՝ և ուրիշ գործիքներ ունի, նա դահիճն է և նա է կտրելու նրանց գլուխը։ Եվ երբ սկսի անվահար անելով սպանել և այլ ուրիշ չարչարանքներ տալ, հանցագործը դեռ կենդանի կլինի, իսկ երբ գլուխը կտրեն, այն ժամանակ, հոգյակս, նա իսկույն աեթ կմեռնի։ Սկզբում կգոռա և կշարժվի, բայց հենց որ գլուխը կտրեն, այն ժամանակ նա չի կարող ոչ գոռալ, ոչ ուտել և ոչ էլ խմել, որովհետև, հոգյակս, նա այլևս գլուխ չպիտի ունենա»։ Եվ Յուզիսյան այդ ամենը լսում էր հետաքրքրությամբ ու երկյուղով։ Տների կտուրները բռնված էին ժողովրդով։ Տանիքների վրա շինած պատուհաններից դուրս էին նայում զարմանալի, տարօրինակ դեմքեր՝ բեղերով և գլխաշորի նման բաներով։ Ազնվականները նստել էին պատշգամբներում, ամպհովանու տակ։ Ծպտացող և շաքարի նման շողացող պաննայի չքնաղ ձեռքը հանգչում էր պատշգամբի ճաղերին։ Պայծառափայլ պաները՝ բավական թանձրամարմին, նայում էին վեհ կերպարանքով։ Սպասավորը, փայլուն զարդարանքով, թևքերը վեր քաշած, հենց այդտեղ մատուցանում էր զանազան խմիչքներ և ուտելիք։ Սևաչյա չարաճճի մի աղջիկ հաճախ իր լուսեղեն ձեռքով առնում էր կարկանդակ կամ պտուղներ և շպրտում ժողովրդի կողմը։ Քաղցած ասպետները մեկնում էին իրենց գդակները, և մի որևէ բարձրահասակ ազնվական, որ

հոգել էր սևացած ոսկերիզ և խունացած կարմիր վերնազգեստ, իր երկար ձեռքերով առաջինն էր բռնում, համբուրում էր առացած որսը, սեղմում էր կրծքին և ապա բերանը տանում։ Պատշգամբի տակ ոսկեզօծ վանդակում կախած բազեն ևս հանդիսատես էր. նա կտուցը կողքի վրա ծռած և մագիլը բարձրացրած նույնպես ուշադիր նայում էր ժողովրդին։ Բայց ամբոխը հանկարծ աղմկեց, և ամեն կողմից ձայներ լսվեցին.

«Բերո՜ւմ են, կոզակներին բերո՜ւմ են»։

Նրանք գալիս էին գլխաբաց և երկար ցցունքներով։ Նրանք մորուք էին թողել։ Գալիս էին ո՛չ երկչոտ և ո՛չ մռայլ, այլ մի տեսակ անդորր հպարտությամբ. թանկագին մահուդից կարած նրանց զգեստները մաշվել և ծվեն-ծվեն կախվել էին. նրանք չէին նայում և չէին ողջունում ժողովրդին։ Ամենից առաջ գալիս էր Օստապը։

Ի՞նչ զգաց ծերունի Բուլբան, երբ տեսավ իր Օստապին։ Ի՞նչ էր կատարվում այդ ժամանակ նրա սրտում։ Ամբոխի միջից նա նայում էր նրան և նրա աչքից չէր վրիպում Օստապի և ոչ մի շարժումը։ Նրանք արդեն մոտեցան կառափնատեղին։ Օստապը կանգ առավ։ Առաջինը նրան էր վիճակված խմել այդ դառն բաժակը։ Նա նայեց յուրայիններին, ձեռքերը վեր բարձրացրեց և բարձրաձայն ասաց. «Տա՛ աստված, որ ինչքան հերետիկոսներ կան այստեղ, այդ անօրենները թող չլսեն, թե ինչպես է տանջվում քրիստոնյան, և թող մեզնից ոչ ոք և ոչ մի հառաչ չհանի»։ Ապա նա մոտեցավ կառափնարանին։

«Ճիշտ է, որդիս, ճիշտ է»,— մեղմ առաց Բուլբան և ցած խոնարհեց ալեհեր գլուխը։

Դահիճը քաշեց և հանեց Օստապի ցնցոտիները. կապեցին նրա ձեռքերը և ոտքերը, դրին հատկապես պատրաստած մանուլի մեջ և... ընթերցողներին չհուզենք դժոխային տանջանքների նկարագրով, որից նրանց մազերը կցցվեին։ Այդ տանջանքներն այն բիրտ և դաժան դարի ծնունդն էին, երբ մարդը վարում էր գեռևս ռազմական քաջագործություններ արյունռուշտ կյանք և կոփվել էր այդ կյանքում ու չէր զգում մարդկայնություն։ Ոմանք՝ սակավաթիվ անձինք, որոնք այդ բիրտ գարում բացառություն էին, ոմանք իջուբ էին հակա-

ռակում այդ սարսափելի միջոցների դեմ։ Իզուր էին թագավորը և սակավաթիվ ասպետները, որոնք լուսավոր խելք և հոգի ունեին, իզուր էին նրանք կարծում, որ պատիժների այդպիսի խստությունը կարող է միայն բորբոքել կոզակների վրեժխնդրությունը։ Սակայն թագավորի և իմաստուն կարծիքների զորությունը ոչինչ էր անկարգության և պետական մագնատների անվճհար կամքի առաջ, մագնատներ, որոնք իրենց անխոհեմությամբ, որևիցե հեռատեսության անմբռնելի բացակայությամբ, երեխայական ինքնասիրությամբ և չնչին գոռոզությամբ սեյմը դարձրել էին վարչության երգիծանք։ Օստապը հսկայի նման դիմացավ տանջանքներին և չարչարանքներին։ Լսելի չեղավ ոչ մի աղաղակ և ոչ մի հառաչ նույնիսկ այն ժամանակ, երբ սկսեցին կոտրատել ձեռքերի և ոտքերի ոսկորները, երբ ոսկորների սոսկալի ճարճատյունը լսեցին քարացած ամբոխի հեռավոր հանդիսականները, երբ պանտառները երեսները դարձրին, նրա շրթունքներից չթռավ ոչինչ հառաչի նման, և նրա դեմքը չցնցվեց։ Բազմության մեջ կանգնել էր Տարասը, գլուխը խոնարհած և միևնույն ժամանակ աչքերը հպարտությամբ վեր բարձրացրած, նա միայն խրախուսիչ ձայնով աստված էր. «Ճիշտ է, Որդիս, ճիշտ է»։

Բայց երբ հասան մահվան վերջին տանջանքները, քվաց, թե սկսեց տեղի տալ նրա ուժը։ Եվ նա աչքերը չորս կողմը դարձրեց. աստված իմ, բոլորին անծանոթ և բոլորն ուտար մարդիկ էին։ Թեկուզ իր մտերիմներից մեկը նրա մահվան ժամին ներկա լիներ։ Նա չէր կամենա լսել իր խեղճ մոր հեկեկալը և լուծելը և կամ խելագար ողբը իր կնոջ, որ փետում էր մազերը և ծեծում սպիտակ կուրծքը. նա այժմ կկամենար տեսնել արիասիրտ մի տղամարդու, որ իմաստուն խոսքով սիրտ տար նրան և մխիթարեր մահվան ժամին։ Եվ թուլացավ նրա ուժը, և նա հոգեկան անզորությամբ աղաղակեց.

«Որտե՞ղ ես, բատկո, լսո՞ւմ ես դու»։

«Լսո՛ւմ եմ»,— հնչեց համատարած լռության մեջ, և միլիոնավոր ժողովուրդը միաժամանակ ցնցվեց։ Զիավոր զորականների մի մասը վրա վազեց, որ ուշադիր զննի ժողովրդի բազմությունը. Յանկելը դանաստվեց, մեռելի գույն ընդունեց,

և երբ զորականները նրանից մի քիչ հեռացան, նա վախեցած ետ դարձավ, որպեսզի նայի Տարասին, բայց Տարասն այլևս նրա կողքին չէր։ Նրա հետքն անգամ չէր մնացել։

XII

Տարասի հետքը գտնվեց։ Ուկրաինայի սահմաններում երևաց կոզակների հարյուր քսան հազարանոց զորքը։ Այդ արդեն մի աննշան զորամաս չէր և ոչ էլ որևէ զորագունդ, որ եկել էր ավար առնելու կամ թաթարներին հետապնդելու։ Ո՛չ, վեր էր կացել ամբողջ ազգը, որովհետև արդեն լցվել էր ժողովրդի համբերությունը, վեր էին կացել վրեժ առնելու իրենց ոտնահարված իրավունքների, իրենց խայտառակ ստրկացման, նախահայրերի հավատի և սրբազան սովորությունների անարգման, եկեղեցիների ձագանքի, օտարազգի պանների վայրագությունների, ճնշման և ունիայի համար, քրիստոնյաների երկրում չհուդների անարգ տիրապետության և այն բոլորի համար, որ վաղ ժամանակներից կուտակել և կրկնապատկել էր կոզակների դաժան ատելությունը։ Երիտասարդ, բայց ոգով արի Հեթման Օստրանիցան առաջնորդում էր կոզակների անթիվ-անհամար բանակը։ Նրա հետ էր նրա փորձված ընկեր և խորհրդատու ծերունի Գունյան։ Ութ գնդապետներ առաջնորդում էին յուրաքանչյուր տասներկու հազարանոց զորագունդ։ Հեթմանի հետևից գնում էին եռկու ավագ եսաուլ և ավագ բունչուժնին։ Գլխավոր խորունժին առաջնորդում էր մայր դրոշը. հեռվում ծփում և ծածանվում էին բազմաթիվ ուրիշ դրոշակներ և խաչվառներ. մի քանիսը տանում էին բունչուկները։ Կային ուրիշ այլ աստիճանավորներ՝ զորագնդերի, գումակի զորականներ, զորագնդի գրագիրներ և նրանց հետ ձիավոր և հետևակ զորամասեր. որքան ռեեստրային կոզակներ կային, համարյա այնքան էլ եկել էին կոզակներ սեփական ձիերով և ազատ կոզակներ։ Կոզակները եկել էին ամեն կողմից՝ Ջիգիրինից, Պերեյասլավից, Բատուրինից, Գլուխովից, Դնեպրի ստորին կողմերից և նրա բոլոր ակունքներից և կղզիներից։ Դաշտերով անցնում էին անթիվ ձիեր և սայլերի անհամար խմբեր։ Նվ հենց այդ կոզակների մեջ, այդ ութ զորագնդերի մեջ ամենից ընտիրը մի զորա-

գունդ էր, և այդ զորագնդին առաջնորդում էր Տարաս Բուլբան՝ Նրա պատկառելի հասակը, փորձառությունը, զորքը ղեկավարելու կարողությունը և ամենքից ավելի զորեղ, թշնամու հանդեպ ունեցած ատելությունը նրան մյուսներից ավելի կշիռ էր տալիս։ Նրա անողոք խստությունը և պահանջությունը մինչև անգամ իրենց՝ կոզակներին թվում էր չափից ավելի։ Նրա ալեհեր գլուխը որոշում էր միայն կրակ ու կախաղան, և զորական խորհրդում նրա խորհուրդները շնչում էին միայն բնաջնջմամբ։

Ավելորդ է նկարագրել բոլոր պատերազմները, երբ քաջամարտիկ էին կոզակները, ինչպես և հարկ չկա նկարագրելու ողջ արշավի աստիճանական ընթացքը. այդ ամենը գրված են տարեգրության մատյաններում։ Հայտնի է, թե ռուսական երկրում ինչպես է ընթանում պատերազմը հանուն հավատի։ Ջհա ուժ հավատից ավելի հզոր։ Նա անպարտելի է և ահեղ, ինչպես հարափոփոխ և փոթորկահույզ ծովի մեջ անձեռակերտ ժայռը։ Ծովի խորունկ խորքերից դեպի երկինքն են բարձրանում նրա անխորտակելի պատերը, որոնք ստեղծված են մի և ամբողջական քարից։ Ամեն կողմից նա երևում է և շեշտակի նայում է կողքով վազող ալիքների աչքերին։ Նվ վա՞յ նավին, որ կբախվի նրան. ինչպես տաշեղներ կթռչեն նրա սարվածները, ամեն ինչ կփշրվի և կխուզվի անդունդը, և ծովը կլցվի խեղդվողների ողբալի աղաղակներով։

Տարեգրության մատյաններում մանրամասն նկարագրված է, թե ինչպես ազատագրվող քաղաքներից փախչում էր լճհաճիների պահակազորը, ինչպես էին կախում չհուդ անխիղճ վարձակալներին, ինչպես թագավորական հեծյան նիկոլայ Պոտոցկին իր անհամար բանակով անզոր էր դիմադրելու այդ անհաղթահարելի ուժին, թե ինչպես, պարտված և հալածված, նա մի աննշան գետակի մեջ խեղդեց իր բանակի թագն ու պսակը, ինչպես Պոլոննի՝ անվայել փորրիկ ամանի մոտ կոզակների ահեղ զորագնդերը շրջապատեցին նրան, և ինչպես վերջին ծայրահեղության հասած լեհացի հեծյանը թագավորի և պետական աստիճանավորների անունից երդմամբ խոստացավ լուվին գոհացում տալ կոզակներին և վերադարձնել նրանց վաղեմի իրավունքները և առանձնաշնորհումները։ Բայց կոզակներն այնպիսի մարդիկ չէին, որ խաբվեին այդ

խոստումով, նրանք գիտեին արդեն, թե ինչ ասել է լեհացու երդում։ Եվ Պոտոցկին, նստած իր վեց հազար ոսկի արժող նժույգի վրա, այլևս սիգափայլ չէր շքեղանա, գրավելով անվանի պաննանների հայացքները և ազնվականների նախանձը, նա չէր աղմկի սեյմում, սենատորների համար փառահեղ խրախճանք սարքելով, եթե նրան չփրկեր այդ փոքրիկ ավանում եղած ռուս հոգևորականությունը։ Երբ կոզակներին դիմավորելու դուրս եկան բոլոր քահանաները՝ պայծառ և ոսկեկար շուրջառներով, խաչով և խաչվառներով, և առջևից՝ ինքը եպիսկոպոսը, հովվական խուրը գլխին և խաչը ձեռքին, բոլոր կոզակները խոնարհեցին գլուխները և գդակները հանեցին։ Այն ժամանակ նրանք թագավորից ցածր և ոչ ոքի չէին խնայի. սակայն չհամարձակվեցին ընդդիմանալ իրենց քրիստոնյա եկեղեցուն և հարգեցին իրենց հոգևոր հայրերին։ Հեթմանը զորապետների հետ միասին համաձայն եղավ ազատ արձակելու Պոտոցկուն, նրանից երդմամբ խոստում առնելով, որ նա անձեռնմխելի կթողնի բոլոր քրիստոնեական եկեղեցիները, կմոռանա հին թշնամությունը և այլևս կոզակների զորքին որևէ վնաս չի հասցնի։ Միայն մի զորապետ չհամաձայնվեց այդ դաշինքին։ Այդ մեկը Տարասն էր։ Նա պոկեց իր գլխի մազերից մի փունջ և բղավեց.

«Է՛յ, հեթման զորապետներ, կնիկարմատի այդպիսի գործ մի՛ անեք, մի՛ հավատաք լեհացիներին, կդավաճանեն շան ձագերը»։ Իսկ երբ զորագնդի գրագիրը մատուցեց պայմանները, և հեթմանը դրոշմեց իր հզոր ձեռքով, Տարասն արձակեց իր մեջքից ազնիվ պողպատը, տաճկական քանկագին և առաջնակարգ երկաթե թուրը, կոտրեց մեջտեղից, ինչպես եղեգն և երկու կտոր շպրտեց հեռու և զանազան կողմեր, ասելով. «Դե, մնաք բարով։ Ինչպես չե՛ն միանա իմ թրադաշույնի երկու կտորները և չե՛ն կազմի մի թուր, այնպես էլ մենք, ընկերներ, այս աշխարհում այլևս իրար չենք հանդիպի։ Հիշեցեք ուրեմն իմ հրաժեշտի խոսքը...» (Այս խոսքի վրա նրա ձայնը հզորացավ, ավելի և ավելի բարձրացավ, ընդունեց խորհրդավոր ուժ, և ամենքն այլայլվեցին մարգարեական այդ խոսքերից). «Ձեր մահվան ժամին դուք ինձ կհիշեք։ Դուք գիտեք, թե խաղաղություն և գաշի՞ն եք ձեռք բերել և մտածում եք պաներ գառնալ. դուք պան կդառնաք, բայց

ուրիշ պան. հեթման, նրանք կքերթեն քո գլխի կաշին, կլցնեն արինջի թեփով և երկար ժամանակ ման կածեն տոնավաճառներում։ Դուք էլ չեք փրկի ձեր գլուխները, պանե՛ր, կոշնչանաք խոնավ զնդաններում, կթաղեն ձեզ քարե պատերի մեջ, եթե ձեզ ոչխարների նման ողջ-ողջ չխաշեն կաթսաներում»։

«Իսկ դո՞ւք, տղերք,— շարունակեց նա, դառնալով յուրայիններին.— ձեզնից ո՞վ է ուզում մեռնել իր մահով. մեռնել ոչ թե օջախի մոտ և կամ կնկա տեղաշորում և ոչ էլ գինետան առաջ հարբած մեռնել, ինչպես վայել է զզվելի արարածին, այլ մեռնել կոզակի ազնիվ մահով, բոլորս մի մահճում, ինչպես հարսը փեսայի հետ։ Կամ գուցե դուք ուզում եք տուն վերադառնալ և դառնալ կաթոլիկ անհավատներ և ձեր շալակների վրա ման ածել լեհացի տերտերների՞ն»։

«Քեզ հե՛տ, պան զորավար, կգանք քեզ հետ»,— բղավեցին բոլորը, որոնք Տարասի զորագնդում էին, և նրանց միացան նաև ուրիշ գնդերից շատերը։

«Ինձ հետ, ուրեմն ինձ հետ»,— ասաց Տարասը, գդակը խոր կոխեց գլուխը, բոլոր մնացողներին ահեղ նայեց, հեծավ իր նժույգը և կանչեց յուրայիններին։ «Քող ոչ ոք չնախատի մեզ ծանր խոսքով։ Դե, հա՛յդե, տղերք, հյուր գնանք կաթոլիկներին»։ Եվ մտրակեց ձին, ու նրա հետևից ձգվեց հարյուր սայլ ու սայլերի հետ բազմաթիվ ձիավոր և հետևակ կոզակներ, և ետ նայելով՝ բոլոր մնացողներին խարազանեց իր հայացքով, և զայրացկոտ էր նրա հայացքը։ Ոչ ոք չհանգըգնեց ետ պահել նրանց։ Զորագունդը հեռանում էր ամբողջ զորքի աչքերի առաջ, և գեռ երկար ժամանակ Տարասը ետ էր նայում և սպառնում։

Ալլալլված կանգնել էին հեթմանը և զորապետները. բոլորը խոր մտածմունքի մեջ էին և լուռ էին երկար ժամանակ, կարծես նրանց ճնշում էր մի ինչ-որ ծանր գույժ։ Իզուր չէր գուշակել Տարասը։ Եվ եղավ այն բոլորը, ինչ որ նա գուշակել էր։ Ուխտադրուժ վարմունքից մի քանի ժամանակ անց, կանևի մոտ հեթմանի գլուխը բարձրացրին ցցի վրա, ուրիշ ականավոր շատ ավագների գլուխների հետ։

Իսկ ո՞ւր էր Տարասը։ Իր զորագնդի հետ Տարասն ապատակում էր ոչ լեհատյանամ. նա հրճվեց տասնուր ավան,

մոտ քառասուն լեհական եկեղեցի և արդեն մոտենում էր Կրակովին, լեհացի շատ ազնվականների ջարդեց նա, կողոպտեց հարուստ և հռչակված ամրոցներ. կոզակները փշրում էին ամանները և գետին թափում հարյուրամյա գինին ու մեղրը, որ անձեռնմխելի պահվում էին պատերի մատաններում։ Բռնությամբ կտրատում և հրդեհում էին թանկարժեք մահուդներ, զգեստներ և կահկարասի, որ հանում էին նկուղներից։ «Ոչինչ չխնայեք»,— կրկնում էր միայն Տարասը։ Կոզակները չէին մեղքանում մրահոն պաննանաներին, ճերմակ կրծքով և լուսեղեն կուլսերին, որոնք չէին փրկվում նույնիսկ եկեղեցիների բեմի մոտ. Տարասը կրակին էր մատնում և՛ նրանց, և՛ եկեղեցիները։ Կրակի բոցերի միջից դեպի երկինք էին կարկառում բազմաթիվ ձյունաքուլր ձեռքեր, լսվում էին ողբի աղաղակներ, որոնցից կճեղքվեր մայր հողը, և տափաստանի խոտն ափսոսանքից կխոնարհեր գլուխը։ Սակայն խստասիրտ կոզակները չէին ուշադրում ոչ ոքի և նիզակների ծայրով փողոցից բարձրացնելով մանուկներին, շպրտում էին կրակի մեջ, դեպի նրանց։ «Այս հոգեհանգիստ է իմ Օստապի համար, ապիրատ լեհեր»,— ասում էր միայն Տարասը։ Թվ Օստապի համար այդպիսի հոգեհանգիստ նա կատարում էր ամեն գյուղում, մինչև լեհական կառավարությունը տեսավ, որ Տարասի արածը սովորական ասպատակից ավելի է, և հենց նույն Պոտոցկուն հրահանգվեց հինգ զորագնդով անպայման բռնել Տարասին։

Արահետներով վեց օր կոզակները խույս էին տալիս հետապնդողներից, ձիերը հազիվ էին դիմանում այդ արտասովոր փախուստին և փրկում էին կոզակներին։ Բայց այս անգամ Պոտոցկին արժանի էր իրեն հանձնարարված գործին. նա անխոնջ հետապնդեց նրանց և վրա հասավ Դնեստրի ափին, որտեղ Բուլբան թևքե դատարի համար գրավել էր կիսավերակ մի բերդ։

Դնեստր գետի զառիվայր ափին բարձրացել էր բերդը, և երևում էին նրա պատռված պատնեշն ու ավերակ պարիսպների բեկորները։ Խիճով և փշրված աղյուսով էր պատած սրածայր ժայռի կատարը, որ ամեն րոպե կարող էր պոկվել և գլորվել անդունդը։ Այստեղ էլ երկու կողմից, որ նայում էին գետի դաշտը, նրան օղակեց Բաթավորական հեծյան Պոտոց-

կին։ Կոզակները չորս օր վազեցին և պաշտպանեցին, թշնամու զինի քափելով քարերը և աղյուսները։ Սակայն վերջացավ պաշարը, նրանք ուժասպառ եղան, և Տարասը վճռեց ճեղքել թշնամու օղակը։ Նվ կոզակներն արդեն համարյա պատրաստ էին շղթան, և գուցե թե նրանց արագավազ ձիերը մի անգամ էլ հավատարիմ ծառայեին նրանց, երբ հանկարծ, հենց սրընթաց վազքի ժամանակ Տարասը կանգ առավ և բղավեց. «Կա՛ց, չիբուխս թուքաւնի հետ ընկավ. չեմ ուզում, որ չիբուխս էլ ընկնի թշնամու ձեռքը»։ Նվ կուացավ ծերունի առաջանը, խոտերի մեջ սկսեց փնտրել ծխախոտի ամանը և ծխամորքը, որ նրա անբաժան ընկերն էր ծովերի վրա և ցամաքում, և՛ կռիվների մեջ, և՛ տանը։ Իսկ այդ ժամանակ վրա վազեց մի հրոսակախումբ և բռնեց նրա զորեղ բազուկները։ Նա փորձեց թափահարել ոտքերն ու ձեռքերը, բայց առաջվա նման գետին չգլորվեցին նրան բռնող հայդուկները։ «Հե՛յ գիտի ծերուբյուն»,— ասաց նա, և լաց լացեց հաղթանդամ և ալեհեր կոզակը։ Բայց հանցավոր չէր ծերուբյունը. նրանց ուժը հաղթել էր Տարասին. երեսունից ավելի մարդ էր կախվել նրա ձեռքերից և ոտքերից։ «Քոնվեցի՛ր, ագռավ»,— աղաղակում էին լեհերը։ «Լիքա հարիւրաւոր է միայն մտածել, թե ինչպիսի պատիվ տանք այս շանը»։— Նվ հեթմանի թուլատվությամբ որոշեցին նրան կենդանի վառել բոլորի առաջ։ Հենց այդտեղ մի մերկ ծառ կար, որի կատարը փշրվել էր կպչնակից։ Երկաթե շղթաներով Տարասին քաշել տվին ծառի բուն մոտ, բռնեցնելով մինչեցին նրա ձեռքերը և նրան ավելի վեր-բարձրացնելով, որպեսզի ամեն կողմից կոզակը երևար, հրամայեցին ծառի տակ խարույկ պատրաստել։ Սակայն խարույկին չէր նայում Տարասը և ոչ էլ մտածում էր կրակի մասին, որով պատրաստվում էին նրան վառել. այդ սրբելի մարդը նայում էր այն կողմը, որտեղ հրաձգությամբ պաշտպանվում էին կոզակները. բարձունքից նա ամեն ինչ պարզ տեսնում էր։ «Գրավեցե՛ք, տղերք, իսկույն գրավեցեք,— բղավեց նա,— այն բլուրը, որ անտառի այն կողմն է. նրանք այդ բլուրին չեն մոտենա»։ Սակայն քամին նրա խոսքերը տեղ չհասցրեց։ «Ա՜հ, պիտի կորչեն, իզուր պիտի կոբչեն»,— համարձակ ասաց նա և նայեց ներքև, որտեղ շաղում էր Դնեստրը։ Նրա աչքերում փայլատակեց ուրախություն։ Նա

տեսավ երեք նավախել, որ երևացին մացառուտի հետևից, և որքան ուժ ուներ, գոռաց սաստկաձայն. «Դեպի ափը, տղե՛րք, դեպի ափը, իջեք բլուրի տակով, ձախ կողմով իջեք։ Ափի մոտ նավակներ են կանգնած, բոլորը տարեք, որպեսզի հետամուտ լինեն»։

Այս անգամ քամին փչեց մյուս կողմից, և կոզակները լսեցին նրա բոլոր խոսքերը։ Բայց այդ խորհրդի համար կացնի կոթով այնպես զարկեցին նրա գլխին, որ աչքերի առաջ ամեն ինչ շաղվեց։

Բլուրի տակով կոզակները շտապ իջան, նրանց թիկունքից՝ հետապնդողները։ Կոզակները տեսան, որ ճանապարհը լառնվում, ծռվում է և ունի շատ ավելորդ կեռմաններ։ «Է՛, ընկերներ, էլ տեղ չկա»,— ասացին բոլորը, մի ակնթարթ կանգ առան, բարձրացրին մտրակները, շառաչեցին մտրակները, և նրանց թաթարական ձիերը գետնից պոկվելով, օձի պես ձգվեցին օդի մեջ, քուռն անդունդի վրայով և շրմփացին ուղիղ Դնեստրի մեջ։ Միայն երկու հոգի չհասան մինչև գետը և բարձունքից ընկան քարերի վրա, այնտեղ հավիտյան կորան իրենց ձիերի հետ և նույնիսկ չկարողացան աղաղակ արձակել։ Իսկ կոզակները ձիերի հետ լողում էին գետի մեջ և արձակում էին նավակները։ Անդունդի եզրին լեհացիները կանգ առան, կոզակների չլսված քաջագործության վրա զարմանալով. կանգ առան և մտածեցին՝ Բուլե՞լ, Քե ոչ։ Մի երիտասարդ զորապետ՝ ժիր և տաքարյուն, որը խեղճ Անգրիին հրապուրող չքնաղ լեհուհու հարազատ եղբայրն էր, երկար չմտածեց և ամբողջ թափով ձիու հետ իրեն նետեց կոզակների հետևից։ Օդի մեջ ձիու հետ նա երեք անգամ պտույտ արեց և ուղղակի զարնվեց սրածայր քարերին։ Սուր քարերը նրան կտոր-կտոր քրքրեցին, և նա կորավ անդունդում, և նրա ուղեղն արյան հետ խառնվելով ցայտեց անդունդի անհարթ պատերին բուսած թփերի վրա։

Երբ Տարաս Բուլբան հարվածից սթափվեց և նայեց Դնեստրին, կոզակներն արդեն նավակների վրա էին և թիավարում էին. վերևից նրանց վրա էին տեղում գնդակները. բայց նրանց չէին հասնում։ Եվ ուրախությամբ բռնկվտացին ծերունի ատամանի աչքերը։

«Մնաք բարով, ընկերնե՛ր,— վերևից կանչեց նա նրանց.—

Հիշեցե՛ք ինձ և եկող գարնանը նորից այստեղ եկեք և մի լավ ղվարճացեք։ Ի՞նչ, կերա՞ք, անիծված լեհեր։ Մի՞թե կարծում եք, որ աշխարհում մի բան կա, որից վախենա կոզակը։ Սպասեք դեռ, ժամանակ կգա, կհասնի այդ ժամանակը, և դուք կիմանաք, թե ինչ ասել է ռուսական ուղղափառ հավատ։ Հեռու և մոտիկ ժողովուրդները հիմա էլ զգում են. ռուսական երկրից կբարձրանա նրա թագավորը, և աշխարհում չի լինի ոչ մի ուժ, որ չխոնարհվի նրա առաջ...»։

Իսկ խարույկի բոցն արդեն բարձրանում էր, և կրակը հափշտակում էր նրա ոտքերը, և բոցերով բռնկվում էր ծառը... Բայց մի՞թե աշխարհում կան այնպիսի կրակներ, տանապանք և այնպիսի ուժ, որ հաղթեն ռուսական ուժին։

Փոքր գետ չէ Դնեստրը, և նա շատ գետախորշեր, թանձր եղեգնուտներ, ծանծաղուտներ և խորանդունդ տեղեր ունի. փայլում է գետի հայելին, և հնչում են կարապների աղիողորմ ճիչերը, հպարտ ջրասույզ բադն արագ սլանում է ջրերի վրա, և բազմաթիվ կտցարներ, կարմրաքուղ գետահավեր և ուրիշ այլ թռչուններ ապրում են եղեգնուտներում և գետափին։ Աշխույժ լողում էին կոզակների երկղեկանի նավակները, կոզակները համերաշխ թիավարում էին, զգուշությամբ խույս տալիս ծանծաղուտներից, անհանգստացնելով վեր ճախրող թռչուններին, և զրուցում էին իրենց ատամանի մասին։

ՇԻՆԵԼԸ

Այն դեպարտամենտում, որը կոչվում է... բայց ավելի լավ է լսել՝ ինչպես է կոչվում։ Ջկա՛ ավելի բարկացկոտ մի քան, քան ամեն տեսակ դեպարտամենտները, ղորագնդերը, պրասեներյակները և, մի խոսքով, ամեն տեսակ պաշտոնատար դասերը։ Հիմա արդեն ամեն մի մասնավոր մարդ ի դեմս իրեն վիրավորված է համարում ամբողջ հասարակությունը։ Ասում են՝ բոլորովին նորերս, չեմ հիշում թե որ քաղաքի մի գավառական ոստիկանապետից ստացվել էր խնդրանք, որի մեջ նա պարզ շարադրում է, թե կործանվում են պետական սրոշումները, և թե իր սրբազան անունը բոլորովին իզուր տեղն է արտասանվում։ Իսկ որպես ապացույց, խնդրանքին կցել էր մի ինչ-որ ռոմանտիկական երկի գերհսկայական հատորը, որտեղ յուրաքանչյուր տասն էջից հետո հայտնվում է մի գավառական ոստիկանապետ, երբեմն նույնիսկ բոլորովին հարբած վիճակում։ Այսպես ուրեմն. ամեն տեսակ անախորժություններից խուսափելու համար ավելի լավ է այն դեպարտամենտը, որի մասին խոսվում է, մենք անվանենք մի դեպարտամենտ։ Այսպես ուրեմն, մի դեպարտամենտում ծառայում էր մի աստիճանավոր, չի կարելի ասել՝ շատ աչքի ընկնող աստիճանավոր. ցածրահասակ էր, մի քիչ չեչոտ, մի քիչ շեկ, մի քիչ նույնիսկ արտաքուստ տկարատես, ճակատին մի փոքր ճաղատություն ուներ, այտերի երկու կողմերում կնճիռներ, և դեմքի, այսպես ասած, հեմորոյական

գալն... Ինչ ապրած, Պետերբուրգի կլիման է մեզավոր։ Ինչ վերաբերում է աստիճանին (քանի որ մեզանում ամենից առաջ պետք է հայտարարել աստիճանը), ապա նա այն էր, ինչ անվանում են հավիտենական տիտուլյար խորհրդատու[1], որի վրա, ինչպես հայտնի է, բավականաչափ ծիծաղել ու սրախոսել են զանազան գրողները՝ ունենալով գովելի սովորություն՝ հուպ տալ նրանց, ովքեր չեն կարող կծել։ Աստիճանավորի ազգանունը Բաշմաչկին էր։ Արդեն հենց ազգանունից էլ երևում է, որ այն մի ժամանակ առաջացել էր բաշմակից[2]. բայց ե՛րբ, ի՛նչ ժամանակ և ինչ կերպ էր այն առաջացել բաշմակից, այդ բնավ հայտնի չէ։ Հա՛յրն էլ, պա՛պն էլ, նույնիսկ աներձագը և ուղղակի բոլոր Բաշմաչկիններն էլ սապոգներ էին հագնում, տարեկան միայն երեք անգամ փոխելով տակերը։ Նրա անունն էր Ակակի Ակակիևիչ։ Գուցե ընթերցողին այն մի փոքր տարօրինակ և արհեստականորեն ընտրված թվա, բայց կաբելի չ հավատացնել, որ այն բնավ էլ չէին փնտրել, այլ ինքնին պատահել էին այնպիսի հանգամանքներ, որ ոչ մի կերպ չէր կարելի ուրիշ անուն դնել և, ահա թե ինչպես էր այդ կատարվել. եթե միայն հիշողություն չի դավաճանում, Ակակի Ակակիևիչը ծնվեց մարտի լույս 23-ի գիշերադեմին։ Հանգուցյալ մայրը, որ աստիճանավորի կնիկ էր ու մի շատ լավ կին, պատրաստվեց, ինչպես հարկն է, երեխային մկրտելու։ Մայրը դեռ պառկած էր մահճակալի վրա, դուռն դիմաց, իսկ աջ կողմը կանգնած էր քավորը, ամենահրաշալի մի մարդ, Իվան Իվանովիչ Երոշկինը, որ իրրև սենատնական ծառայում էր սենատում, ու ամանամայրը, բաղային սպայի կին, հազվադեպ առաքինություններով մի կին— Արինա Սեմյոնովնա Բելոբրյուշկովան։ Մենդկանին առաջարկեցին ընտրել երեք անուններից մեկը, որը նա կուզենա,— .Մոկկիա, Սոսսիա, կամ երեխային տալ նահատակ Հոզդազատի անունը։ «Ո՛չ,— մտածեց հանգուցյալը,— այդ ի՛նչ անուններ են որ։ Նրան գոհացնելու համար բաց արե-

[1] *Տիտուլյար խորհրդատու*— քաղաքացիական ծառայության ցածր աստիճաններից մեկը, որ մոտավորապես հավասար էր զինվորականների պորուչիկ աստիճանին։

[2] Башмак — կոշիկ, մաշիկ։

ցին օրացույցի մի այլ տեղը. դարձյալ դուրս եկան երեք անուն՝ Տրիֆիլիոս, Դուլա և Վարախասիոս։ «Ա՛յ քեզ պա-տի՛ժ,— ասաց պառավը,— այդ ի՛նչ անուններ են, ես եր-բեք էլ այդպիսիները չեմ լսել։ Թող գոնե լիներ Վարադատ կամ Վարուխ, թե չէ՝ Տրիֆիլիոս ու Վարախասիո՛ս։ էլի շուտ-տվին մի էջ, դուրս եկան Պավսիկաքիոս, Վախտիսիոս։ «Էհ, ես արդեն տեսնում եմ, որ այսպես է սրա բախտը,— ասաց պառավը։— Որ այդպես է, ավելի լավ է սրան տանք հոր անունը։ Հայրը Ակակի էր, թող որդին էլ Ակակի լինի։ Այս կերպ էլ ծագեց Ակակի Ակակիևիչը։ Մանկանը մկրտե-ցին. բայց որում նա լացեց և այնպիսի ծամածռություն արեց, կարծես նախազգաց, որ տիտուլյար խորհրդատու է լի-նելու։ Այսպես ուրեմն, ահա թե ինչ կերպ ծագեց այդ ամե-նը։ Մենք սա բերինք նրա համար, որպեսզի ընթերցողն ինքը կարողանա տեսնել, որ այդ պատահեց բերն կատարյալ ան-հրաժեշտություն և ոչ մի կերպ չէր կարելի ուրիշ անուն տալ։ Երբ և ինչ ժամանակ էր նա մտել դեպարտամենտ և ո՞վ էր նրան տեղավորել, այդ ոչ ոք չէր կարող հիշել։ Որքան էլ փոխվում էին դիրեկտորները և ամեն տեսակ պետերը, նրան շարունակ տեսնում էին միևնույն տեղում, նույն դիրքով. նույն պաշտոնում, նույն աստիճանավորը գրագրության հա-մար. այնպես որ, հետո հավատացան թե նա երևույթին նա հենց այդպես էլ ծնվել է բոլորովին պատրաստ, համա-պատասխան-ֆրակով և ճաղատ գլխով։ Դեպարտամենտում նրան ոչ մի հարգանք չէր ցույց տրվում։ Երբ նա անցնում էր, պահապանները ոչ միայն չէին վեր կենում տեղերից, այլև չէին նայում նրան, կարծես թե ընդունարանի միջով մի հա-սարակ ճանճ թռչելիս լիներ։ Պետերը նրա հետ մի տեսակ սառն-բանակալական եղանակով էին վարվում։ Սեղանապե-տի մի որևէ օգնական ուղղակի նրա քթի տակ էր խոթում թղթերը, նույնիսկ չասելով՝ «արտագրեցեք», կամ՝ «ահա մի հետաքրքիր, լավ գործ», կամ մի որևէ հաճելի բան, ինչպես լինում է բարեկիրթ հիմնարկություններում։ Եվ նա վերցնում էր՝ միայն թղթին նայելով, անտեսելով, թե ով էր բերել այ՛ն և արդյո՞ք իրավունք ուներ դրա համար։ Վերցնում էր նա, և իսկույն պատրաստվում էր գրելու։ Երիտասարդ աստի-ճանավորները ծիծաղում ու սրախոսում էին նրա վրա, որ-

քան հերիքում էր գրասենյակային սրամտությունը, հենց տեղնուտեղը, նրա առջև այլևայլ պատմություններ էին պատմում, որ հորինված էին նրա մասին, նրա տանտիրուհու, յոթանասուն տարեկան պառավի մասին, ասում էին, թե տանտիրուհին ծեծում է նրան, հարցնում էին, թե ե՞րբ է լինելու նրանց հարսանիքը, նրա գլխին թղթի կտորներ էին ցանում և այդ ձյուն անվանում։ Բայց Ակակի Ակակիևիչը դրան ոչ մի բառով չէր պատասխանում, կարծես թե իր առջև ոչ ոք չկար. դա նույնիսկ չէր ազդում նրա գրչագրությունների վրա. այդ բոլոր գլխացավանքների սահին նա իր գրածի մեջ ոչ մի սխալ չէր անում։ Միայն երբ չափազանց անտանելի էր լինում կատակը, երբ հրում էին նրա թևատակից՝ խանգարելով նրան իր գործով զբաղվել, նա ասում էր՝ «Թողեք ինձ, ինչո՞ւ եք ինձ նեղացնում»։ Եվ ինչ-որ մի տարօրինակ բան կար այդ բառերի ու ձայնի մեջ, որով դրանք ասվում էին։ Դրա մեջ խղճահարություն առաջացնող մի այնպիսի բան կար, որ նոր տեղափոխված մի երիտասարդ, որը մյուսների օրինակով իրեն թույլ էր տվել նրա վրա ծիծաղել, հանկարծ կանգ առավ ասես խոցված, և այդ ժամանակներից կարծես ամեն ինչ փոխվեց նրա առջև ու այլ տեսք ընդունեց։ Ինչ-որ մի գերբնական ուժ նրան վանեց իր ընկերներից, որոնց հետ նա ծանոթացել էր և վայելուչ, ներբակիրթ մարդկանց տեղ ընդունել։ Ու հետո երկար ժամանակ, ամենաուրախ րոպեներին նրան պատկերանում էր ցածրահասակ, ճաղատ աստիճանավորը իր ներթափանցող բառերով՝ «Թողեք ինձ, ինչո՞ւ եք ինձ նեղացնում», և այդ ներթափանցող բառերում հնչում էին ուրիշ բառեր՝ «ես քո եղբայրն եմ»։ Ու խեղճ երիտասարդը ձեռքով ծածկում էր դեմքը, ու հետո շատ անդամ էր ցնցվում իր կյանքում, տեսնելով, թե մարդու մեջ որքան շատ է տմարդությունը, որքան շատ վայրագ կոպտություն կա քաղցր-մեղր, ուսյալ ներքաղաքավարության մեջ և, օ՜ աստված, նույնիսկ ա՛յն մարդու մեջ, որին բարձր հասարակությունը ազնիվ ու պատվավոր է համարում։

Հազիվ թե կարելի լիներ որևէ տեղ գտնել մի մարդ, որը այդպես ապրեր իր պաշտոնում։ Քիչ է ասել՝ նա եռանդով էր ծառայում, ո՛չ, նա սիրով էր ծառայում։ Այնտեղ, այն

արտագրությունների մեջ նա տեսնում էր ինչ-որ բազմազան և հաճելի իր աշխարհը։ Հաճույք էր արտահայտվում նրա դեմքին. մի քանի տառեր նրա ֆավորիտներն[1] էին, երբ նա հասնում էր դրանց, խելքը գնում էր. և՛ ծիծաղում էր քթի տակ, և՛ աչքով անում, և՛ չպպացնում շրթունքները, այնպես որ, թվում էր, թե նրա դեմքի վրա կարելի էր կարդալ ամեն մի տառ, որ ճզռում էր նրա գրիչը։ Եթե նրա եռանդին համապատասխան պարգևներ տային նրան, նա, ի զարմանս յուր, գուցե նույնիսկ պետական խորհրդական դառնար. բայց, ինչպես արտահայտվում էին սրախոսները, նրա ընկերները, նա վաստակեց մի չապրաստ օձիքին և հնմորոյ՝ քամակին։ Սակայն չի կարելի ասել, որ նրա նկատմամբ չկար ոչ մի ուշադրություն։ Մի դիրեկտոր, լինելով բարի մարդ և ցանկանալով նրան վարձատրել երկարատև ծառայության համար, հրամայեց նրան տալ մի որևէ ավելի կարևոր բան, քան հասարակ արտագրությունը, այն է՝ նրան հրամայվեց արդեն պատրաստի գործից կազմել մի ինչ-որ գրություն մի այլ ա՛ռյանի. խնդիրը միայն այն էր, որ պետք էր փոխել վերտառությունը, մի քանի բայեր էլ առաջին դեմքից փոխել երրորդ դեմքի։ Դա այնպիսի դժվարություն պատճառեց նրան, որ նա բոլորովին քրտնեց, շփեց ճակատը և ի վերջո ասաց՝ «Ո՛չ, ավելի լավ է մի որևէ բան տվեք արտագրեմ»։ Այդ ժամանակներից նրան ընդմիշտ թողին իբրև արտագրող։ Թվում էր, թե այդ արտագրությունից դուրս նրա համար ոչինչ գոյություն չուներ։ Նա բոլորովին չէր մտածում իր հագուստի մասին. նրա ֆրակ-համազգեստը ոչ թե կանաչ, այլ ինչ-որ չիկակարմրավուն-ալրագույն էր։ Դրա օձիքը նեղլիկ էր, ցածր, այնպես որ նրա վիզը չնայած երկար չէր, բայց օձիքից դուրս գալով, արտասովոր չափով երկար էր թվում, ինչպես գլուխները ճոճող այն գիպսե կատվիկների վիզը, որ ամբողջ տասնյակներով գլուխների վրա կրում են ռուսական օտարերկրացիները։ Ու միշտ մի որևէ բան էր կպչում նրա համազգեստին,— կամ խոտի մի կտոր, կամ մի որևէ թել. այն էլ ասած՝ նա մի առանձին հմտություն ուներ փողոցով քայլելիս պատուհանի տակից անցնել հենց այն

1 Ֆավորիտ — առանձին սեր կամ համակրություն վայելող ա֊ծա։

ժամանակ, երբ այնտեղից դուրս էին շպրտում ամեն տեսակ անպետք բաներ, և այս պատճառով էլ նրա գլխարկի վրա միշտ լինում էին ձմերուկի ու սեխի կեղևներ և այլ աղբ։ Իր կյանքում նա ոչ մի անգամ ուշագրություն չդարձրեց, թե փողոցում ամեն օր ինչ է արվում և ինչ է կատարվում, մինչդեռ, ինչպես հայտնի է, հենց նրա եղբայրակիցը, երիտասարդ աստիճանավորը միշտ էլ նայում է դրան այնպիսի խորաթափանց, սուր հայացքով, որ նույնիսկ նկատում է, թե մայթի մյուս կողմում ում անդրավարտիքի ներքևի փոկն է կտրվել,— մի բան, որ միշտ խորամանկ քմծիծաղ է առաջացնում նրա դեմքին։

Բայց Ակակի Ակակիևիչը եթե նայում էլ էր մի որևէ բանի, ապա ամեն ինչի վրա տեսնում էր իր մաքուր, համաչափ ձեռագրով գրած տողերը, և միայն այն դեպքում, երբ հայտնի չէ որտեղից հայտնվելով ձիու մռութը տեղավորվում էր նրա ուսին և քթածակերից մի ամբողջ քամի բաց թողնում թշի վրա, նա նկատում էր, որ գտնվում է ոչ թե տողի մեջտեղում, այլ ավելի շուտ փողոցի մեջտեղում։ Գալով տուն, նա իսկույն ևեթ սեղան էր նստում, արագ խփշտում իր շշին և ուտում մի պատառ տավարի միս սոխով, ամենևին չզգալով դրանց համը, այդ բոլորը ուտում էր ճանճերով և այն ամենով, ինչ որ ուղարկում էր աստված այդ պահին։ Նկատելով, որ ստամոքսը սկսում էր ուռչել, սեղանից վեր էր կենում, հանում քանաք լցրած պուլիկը և արտագրում էր տուն բերած թղթերը։ Իսկ եթե այդպիսիք չէին լինում, նա դիտմամբ, սեփական հաճույքի համար, իր համար պատճեն էր հանում, մանավանդ եթե թուղթը նշանավոր էր ոչ թե սևի գեղեցկությամբ, այլ մի որևէ նոր կամ կարևոր անձնավորության ուղղված հասցեով։

Նույնիսկ այն ժամերին, երբ բոլորովին մարում է պետերբուրգյան գորշ երկինքը, բոլոր աստիճանավոր մարդիկ ճաշել են ու կշտացել՝ ով ինչպես կարող է, ստացած ռոճիկին և սեփական քմահաճույքին համապատասխան, երբ բոլորն արդեն հանգստացել են գրիչների դեպարտամենտային ճռճռոցից, վազվզոցից, իր և ուրիշի անհրաժեշտ զբաղմունքներից և այն ամենից հետո, ինչ որ կամավոր կերպով, պահանջվածից ավելի մեծ չափով թույլ է տալիս անխոնջ

մարդը, երբ աստիճանավորները շտապում են հաճույքով անցկացնել մնացած ժամանակը, երբ ոմանք ավելի արագ-շարժ լինելով, աճապարում են թատրոն, ոմանք՝ փողոց, այն հատկացնելով ինչ-որ գլխարկների զննության, ոմանք՝ երեկույթի, որպեսզի այն վատնեն մի որևէ սիրունատես աղչկա, աստիճանավորակա՛ն փոքրիկ շրջանի աստղին կոմպլիմենտներ թափելով, ոմանք էլ, այդ ամենից հաճախ է պատահում, գնում են հենց իրենց եղբայրակցի մոտ, չորրորդ կամ երրորդ հարկը, երկու փոքրիկ սենյակից բաղկացած բնակարանը նախասենյակով կամ խոհանոցով և ինչ-որ մոդայական հավակնություններով, լամպով կամ մի այլ առարիայով, որ ձեռք է բերվել շատ զոհաբերություններով, ճաշերից, զբոսանքներից հրաժարվելու միջոցով, մի խոսքով, նույնիսկ այն ժամանակ, երբ բոլոր աստիճանավորները ըրվում են իրենց բարեկամների փոքրիկ բնակարանները՝ շտուրմային վիստ խաղալու, բաժակներից թեյ խփշտելով, լոպեկահոց պաքսիմատներ ուտելով, երկար չիբուխներից ծուխը ներս քաշելով, խաղաթղթերը բաժանելիս պատմելով մի որևէ բամբասանք բարձր հասարակությունից բերված, որից երբեք և ոչ մի վիճակում չի կարող հրաժարվել ռուս մարդը, կամ նույնիսկ, երբ խոսելու նյութ չկա, վերապատմելով հավիտենական անեկդոտը այն պարետի մասին, որի մոտ եկել էին ասելու, թե կտրված է Ցայլկոնեի մոնումենտի[1] ձիու պոչը՝ մի խոսքով. նույնիսկ այն ժամանակ, երբ ամեն ինչ ձգտում է զվարճանալ, Ակակի Ակակիևիչը ոչ մի զվարճության չէր անձնատրվում։ Ոչ ոք չէր կարող ասել, որ երբևէ նրան տեսած լիներ մի որևէ երեկույթում։ Գրելուց կշտանալով, նա պահում էր քնելու, վաղօրոք ժպտում՝ մտածելով վաղվա օրվա մասին, թե արդյոք վաղը աստված ի՞նչ կուղարկի արտագրելու։ Այսպես էր ընթանում խաղաղ կյանքը այն մարդու, որը չորս հարյուր ռուբլի ռոճիկով կարողանում էր գոհ լինել իր վիճակից, ու գուցե կընթանար մինչև խորին ծերություն, եթե չլինեին այլևայլ փորձություններ, որոնց ենթակա են ոչ միայն տիտուլյար, այլև նույնիսկ գաղտնի,

---

[1] Ցայլկոնեի մոնումենտը — Պետրոս I-ի արձանը Պետերբուրգում, որ կերտել էր քանդակագործ Ցայլկոնեն։

ֆսկական, արքունի և այլ, ամեն տեսակ խորհրդատուները, նույնիսկ նրանք, ովքեր ոչ ոքի խորհուրդներ չեն տալիս և իրենք էլ ոչ ոքից չեն վիրցնում։

Պետերբուրգում մի ուժեղ թշնամի ունեն բոլոր նրանք, ովքեր տարեկան չորս հարյուր ռուբլի կամ մոտավորապես այդքան ռոճիկ են ստանում։ Այդ թշնամին ոչ այլ ոք է, քայց եթե մեր հյուսիսային սառնամանիքը, թեև, ի միջի այլոց, ասում են, թե այն շատ առողջարար է։ Առավոտյան-ննջերորդ ժամին, հենց այն ժամին, երբ փողոցները ծածկվում են դեպարտամենտ գնացողներով, սառնամանիքը սկսում է այնպիսի ուժեղ ու ծակող հարվածներ տալ անխտիր բոլոր քթերին, որ խեղճ աստիճանավորները բոլորովին չգիտեն որտեղ խոթեն դրանք։ Այդ ժամանակ, երբ նույնիսկ բարձրագույն պաշտոններ գրավողների ճակատն էլ է ցավում սառնամանիքից և աչքերում արցունքներ են երևում, խեղճ տիտուլյար խորհրդատուները երբեմն անպաշտպան են լինում։ Ամբողջ փրկությունն այն է, որ բարալիկ չինելով, որքան կարելի է շուտ, վազելվազ անցնեն հինգ-վեց փողոց և հետո ոտքերը մի լավ թիթփացնեն շվեյցարանոցում, մինչև որ այդ կերպ հալչեն պաշտոնավարության բոլոր քնքուշկությունները ու ձիրքերը, որոնք սառել են ճանապարհին։ Ակակի Ակակիևիչը մի որոշ ժամանակից սկսել էր զգալ, որ ցուրտը մի առանձին ուժգնությամբ է ծակում մեջքը և ուսերը, չնայելով, որ նա աշխատում էր որքան կարելի է շուտ, վազելվազ անցնել օրինական տարածությունը։ Ի վերջո նա մտածեց, թե արդյոք իր չինելը չունի՞ ինչ-որ արատներ։ Իր տունը մի լավ զննելով այն, նա հայտնաբերեց, որ երկու-երեք տեղ, հատկապես մեջքի և ուսերի վրա այն ուղղակի ցանցակտավ է դառել. մահուդն այնքան էր մաշվել, որ օդ էր անցկացնում։ աստառն էլ քայքայվել էր։ Պետք է գիտենալ, որ Ակակի Ակակիևիչի չինելը նույնպես աստիճանավորների ծաղրանքի առարկան էր. դրանից նույնիսկ վերացրել էին «չինել» ազնիվ անունը և այն կապոտ[1] էին անվանում։ Իսկապես, չինելը ինչ-որ մի տարօրինակ տեսք ուներ։ Տարեցտարի հետզհետե փոքրանում էր

---

[1] Կապոտ — կանացի թեթև առնվազան զգեստ։

օձիքը, որովհետև ծառայում էր շինելի մյուս մասերի նոր բոզմանի համար։ Նորոգումը զբոսանքի վարպետություն չէր ցույց տալիս և անճոռնի ու տգեղ էր լինում։ Տեսնելով, թե ինչ է խնդիրը, Ակակի Ակակիևիչը որոշեց, որ շինելը պետք է տանել Պետրովիչի, այսինքն՝ այն դերձակի մոտ, որը ապրում էր չորրորդ հարկում, ուր պետք էր բարձրանալ սև սանդուղքով, ու չնայելով միաչքանի լինելուն և ամբողջ դեմքի չեչոտությանը, բավական հաջող զբաղվում էր աստիճանավորական և այլ ամեն տեսակ անդրավարտիքների ու ֆրակների նորոգմամբ, իհարկե երբ լինում էր զգաստ վիճակում և գլխի մեջ ուրիշ որևէ անելիք չէր մտմտում։ Այս դերձակի մասին, իհարկե, չպետք էր շատ խոսել, բայց քանի որ արդեն ընդունված է, որպեսզի վիպակի մեջ ամեն մի անձի բնավորությունը կատարելապես նշված լինի, ապա ի՞նչ արած՝ համեցե՛ք արեք նաև Պետրովիչին։ Սկզբից նա անվանվում էր սոսկ Գրիգորի, և ճորտ մարդ էր մի ինչ-որ պարոնի մոտ. նա սկսեց Պետրովիչ անվանվել այն ժամանակներից, երբ ազատ արձակվեց ու սկսեց բավական խմել այլևայլ տոներին, սկզբում՝ մեծ տոներին, հետո էլ՝ անխտիր բոլոր եկեղեցական տոներին, երբ հենց միայն խաչ էր լինում օրացույցի մեջ։ Այս կողմից նա հավատարիմ էր պապենական սովորություններին, ու վիճելով կնոջ հետ, նրան համայնական կին և գերմանուհի էր անվանում։ Քանի որ մենք արդեն հիշատակեցինք կնոջը, ուստի հարկավոր կլինի նրա մասին էլ՝ երկու խոսք ասել, բայց, ցավոք սրտի, նրա մասին քիչ բան էր հայտնի, բացի միայն այն, որ Պետրովիչը կին ուներ, որը նույնիսկ գլխաթասակ է կրում և ոչ թե աղլուխ. բայց, ինչպես թվում է, նա չէր կարող պարծենալ գեղեցկությամբ. գոնե միայն զվարդիական զինվորներն էին հանդիպելիս նայում նրա երեսին, շարժում բեղերը և ինչ-որ մի առանձին ձայն հանում։

Բարձրանալով Պետրովիչի մոտ տանող սանդուղքը, որը, ճշմարիտն ասած, ամբողջովին մայթված էր ջրով, աղտեղություններով և ներթափանցված էր այն կծու հոտով, որը աչքեր է ուռում և, ինչպես հայտնի է, միշտապես առկա է Պետերբուրգի տների բոլոր սև սանդուղքների վրա. բարձրանալով սանդուղքը, Ակակի Ակակիևիչն արդեն մտածում

էր, թե ինչ է պահանջելու Պետրովիչը, ու մտքում որոշեց երկու ռուբլուց ավելի չտալ։ Դուռը բաց էր, որովհետև սանտիրուհին ինչ-որ ձուկ պատրաստելով, այնքան ծուխ էր լցրել խոհանոցը, որ նույնիսկ բլոջներն էլ չէր կարելի տեսնել։ Ակակի Ակակիևիչը անցավ խոհանոցի միջով, նույնիսկ չնկատվելով տանտիրուհու կողմից, ու վերջապես, մտավ սենյակը, որտեղ տեսավ լայն, փայտե, չներկված սեղանի վրա թուրքական փաշայի պես ծալապատիկ նստած Պետրովիչին։ Աշխատանքի նստող դերձակների սովորության համաձայն, ոտքերը մերկ էին։ Եվ ամենից առաջ աչքի ընկավ Ակակի Ակակիևիչին քաջ հայտնի մեծ մատը ինչ-որ աչքանդակված եղունգով, որ հաստ և պինդ էր ինչպես կրիայի գանգը։ Պետրովիչի վզից մետաքսի և թելի կծիկ էր կախված, իսկ ծնկների վրա կար ինչ-որ մի հնոտի։ Նա արդեն մի երեք րոպե չանում էր թելել ասեղը, չէր կարողանում թելն անցկացնել և այս պատճառով բունդ բարկանում էր մթության վրա և նույնիսկ հենց թելի վրա՝ ցածրաձայն մռթմռթալով՝ «Չի մտնում էլի, անիծվածը. ախր, կերար ինձ, ա՛յ անզգամ»։ Ակակի Ակակիևիչին անհաճո էր, որ ինքը եկել էր հենց այն րոպեին, երբ Պետրովիչը բարկանում էր. նա սիրում էր Պետրովիչին որևէ բան պատվիրել այն ժամանակ, երբ վերջինս մի քիչ կոնծած էր լինում կամ, ինչպես արտահայտվում էր նրա կինը՝ «Արաղից ցնդվել է միաչքանի սատանան»։ Այդպիսի վիճակում Պետրովիչը սովորաբար մեծ հաճույքով էր զիջում ու համաձայնվում, ամեն անգամ նույնիսկ գլուխ էր տալիս և շնորհակալություն հայտնում։ Ճշմարիտ է, հետո գալիս էր կինը, լաց էր լինում, թե ամուսինը հարբած է և դրա համար էլ չժան է վերցրել. բայց, մեկ էլ տեսար մի տասը կոպեկ ավելացրիր, ու պրծավ գնաց։ Իսկ հիմա Պետրովիչը կարծես թե զգաստ վիճակում էր, դրա համար էլ անկոտրում էր, չհոժարվող, ու սատանան գիտե, թե ինչ բարձր գին էր պահանջելու։ Ակակի Ակակիևիչը հասկացավ այդ և ուզում էր, ինչպես ասվում է, ետ մանել, բայց գործն արդեն սկսված էր։ Պետրովիչը մեծ ուշադրությամբ նրա վրա կկոցեց իր մեկ աչքը, ու Ակակի Ակակիևիչը ակամա ասաց.

— Բարև, Պետրովիչ։

— Բարի աջողում, պարոն,— ասաց Պետրովիչը և աչքը ծռեց Ակակի Ակակիևիչի ձեռքերի վրա՝ ցանկանալով տեսնել, թե նա ինչ տեսակ ավար է բերել։

— Ես, ահա, քեզ մոտ եկա, Պետրովիչ, ը-ը՛, իքը...— հարկավոր է գիտենալ, որ Ակակի Ակակիևիչը բացատրվում էր մեծ մասամբ նախդիրներով, մակբայներով և վերջապես, այնպիսի մասնիկներով, որոնք ամենևին ոչ մի նշանակություն չունեն։ Իսկ եթե գործը շատ դժվար էր լինում, ապա նա մինչև իսկ սովորություն ուներ բոլորովին չվերջացնել նախադասությունը, այնպես, որ, շատ հաճախ խոսքը սկսելով «դա՛, իրավ, բոլորովին ը-ը, իքը» բառերով, ուրիշ ոչինչ չէր ավելացնում ու ինքն էլ էր մոռանում մնացածը, կարծելով, թե արդեն ամեն ինչ ասել է։

— Դե՛, ի՞նչ բան է,— ասաց Պետրովիչը և միևնույն ժամանակ իր միակ աչքով զննեց նրա ամբողջ համազգեստը՝ օձիքից սկսած մինչև թևքերը, մեջքը, փեշերը և մերակները,— այդ ամենը քաջ ծանոթ էր նրան, որովհետև իր սեփական աշխատանքն էր։ Այդպես է դերձակների սովորությունը. սա առաջինն է, որ հանդիպելիս նա կանի։

— Ես, ահա, ը-ը, իքը, Պետրովիչ... շինելս, մահուդը... ա՛յ, տեսնում ես, մյուս բոլոր տեղերը բոլորովին պինդ են, սա մի քիչ փոշի է ծծել, ու թվում է, թե կարծես թե հին է, իսկ սա նոր է, մենակ թե ահա մի տեղ մի քիչ, ը-ը, իքը... մեջքը, մեկ էլ ահա մեկ ուսը մի քիչ մաշվել է, հա՛, այս ուսն էլ մի քիչ, տեսնում ես, և ուրիշ ոչինչ։ Աշխատանքը շատ չի...

Պետրովիչը վերցրեց կապոտը, սկզբում փռեց սեղանի վրա, երկար զննեց, օրորեց գլուխը և ձեռքը տարավ պատուհանին, քթախոտի կլոր տուփը վերցնելու, որը ինչ-որ գեներալի պորտրեով էր, թե ինչ գեներալի, հայտնի չէ, որովհետև այն տեղը, ուր գտնվում էր դեմքը, մատով ճեղքված էր և հետո մի կտոր քառանկյուն թուղթ էր կպցրած։ Քթախոտ քաշելով, Պետրովիչը կապոտը փռեց ձեռքերի վրա, զննեց լույսի դիմաց ու էլի՛ օրորեց գլուխը։ Հետո այն շուռ տվեց՝ աստառը վերև, ու էլի օրորեց գլուխը, էլի հանեց գեներալով, կպցրած թղթով կափարիչը ու քթախոտը քաշելով քիթը, ծածկեց, թաքցրեց տուփը և, վերջապես, ասաց.

— Ո՛չ, չի կարելի նորոգել. քրքրված հագուստ է։

Այս խոսքերի վրա Ակակի Ակակիևիչի սիրտը ճմլվեց։ «Ինչո՞ւ չի կարելի, Պետրովիչ,— ասաց նա համարյա երեխայի աղերսող ձայնով,— չէ՞ որ ընդամենը միայն ուսերն են մաշվել, չէ՞ որ քեզ մոտ ինչ-որ կտորտանքներ կան...»։

— Հա՛, կտորտանքներ կարելի է գտնել, կտորտանքներ կգտնվեն,— ասաց Պետրովիչը,— միայն թե չի կարելի գցել. բոլորովին փտած բան է, թե որ ասեղ խփես, իսկույն ևեթ կճղվի։

— Թող ճղվի, դու էլ իսկույն կարկատան գցիր։

— Ախր կարկատան գցելու տեղ չկա, կարկատանը չի պահի, խիստ շատ է մաշված։ Մենակ անունն է մահուդ, իսկ քամին որ փչեց, կցրվի։

— Դե, մի կերպ կպրցրու։ Ախր, ո՛նց թե այդպես, ը-ը, իքը...

— Ո՛չ,— վճռականապես ասաց Պետրովիչը,— ոչինչ չի կարելի անել։ Բանը բոլորովին վատ է։ Ավելի լավ է դուք, հենց որ գա ձմեռվա ցուրտ ժամանակը, սրանից ոտքի փաթաթաններ արեք ձեզ համար, որովհետև գուլպան տաք չի պահում։ Սա գերմանացիներն են հնարել, որպեսզի շատ փող խփեն (Պետրովիչը սիրում էր պատեհ առիթին խայթել գերմանացիներին). իսկ դուք երևի պետք է որ նոր շինել կարել տաք։

«Նոր» բառի վրա Ակակի Ակակիևիչի աչքերը մշուշվեցին, և ամեն ինչ, որ կար սենյակում, սկսեց խճճվել նրա առջև։ Նա պարզ տեսնում էր միայն դեմքին թուղթ կպցրած գեներալին, որ գտնվում էր Պետրովիչի ծխատուփի կափարիչի վրա։— «Ո՞նց թե նոր,— ասաց նա՝ կարծես դեռ լինելով երազի մեջ,— ախր, ես դրա համար փող չունեմ»։

— Այո՛, նոր,— բարբարոսական հանգստությամբ ասաց Պետրովիչը։

— Լա՛վ, թե որ նորը լիներ, բա ո՞նց, ը-ը, իքը...

— Այսինքն՝ ինչ կարժենա՞։

— Այո՛։

— Հը՛մ, հարկավոր կլինի դնել մի հարյուր հիսուն մանեթ,— ասաց Պետրովիչը ու միաժամանակ նշանակալից սեղմեց շրթունքները։ Նա շատ էր սիրում ուժեղ էֆեկտները, սի-

րում էր հանկարծ ոչնչ կերպ բոլորովին շփոթեցնել ու հետո չեղակի նայել, թե այդպիսի խոսքերից հետո շփոթվածը ինչ կերպարանք կընդունի։

— Հարյուր հիսուն ռուբլի չինելի համա՞ր,— ճշաց խեղճ Ակակի Ակակիևիչը, ճշաց թերևս իր կյանքում առաջին անգամ, որովհետև միշտ էլ աչքի էր ընկնում ձայնի մեղմությամբ։

— Այո՛,— ասաց Պետրովիչը,— այն էլ ինչպիսի՛ չինել։ Թե օձիքին կզաքիսի մորթի դնենք և մեջաքան աստառով վեղար կարենք, երկու հարյուրի է՛լ կհասնի։

— Պետրովի՛չ, խնդրում եմ,— աղերսող ձայնով ասում էր Ակակի Ակակիևիչը՝ ջանալով և աշխատելով ջանալ Պետրովիչի ասած խոսքերը ու նրա բոլոր էֆեկտները,— մի կերպ սարքի՛ր, որպեսզի գոնե մի քիչ էլ ծառայի։

— Ո՛չ, է՛, բան չի դուրս գա, աշխատանքն է՛լ կկորչի, փեղն էլ գոռ-ռաբեղ կծախսվի,— ասաց Պետրովիչը, ու Ակակի Ակակիևիչը այդ խոսքերից հետո դուրս եկավ բոլորովին ջախջախված։ Իսկ Պետրովիչը նրա գնալուց հետո դեռ երկար կանգնած էր շրթունքները նշանակալից սեղմած ու չվերակռելով աշխատանքը, գոհ լինելով, որ թե իրեն չգցնի և թե չաքաստավորից գերմանի արվեստը։

Դուրս գալով փողոց, Ակակի Ակակիևիչը կարծես երազի մեջ լիներ։ «Ա՛յ քեզ բան,— ասում էր նա ինքն իրեն;— ես, ճիշտն ասած, չէի է՛լ կարծում, որ այդպես դուրս գար ը-ը, իքը...— Հետո էլ, մի փոքր լռելով,— ավելացրեց.— Ա՛յ քե ոնց, վերջապես, ա՛յ քե ինչ դուրս եկավ, հա՛-ա, իսկ ես, ճիշտ, ամենևին էլ չէի կարող նկատել, որ բանը այդպես լիներ։— Ապա կարճայլ հետևեց երկար լռություն, որից հետո նա ասաց.— Այսպես, ա՛յ քե ինչպիսի բան, իրոք, բոլորովին անսպասելի, ը-ը, իքը... սա ոչ մի կերպ... այս տեսակ հանգամանքո՛ւ։— Այս ասելով, նա փոխանակ տուն գնալու, անցավ բոլորովին հակառակ մի կողմ՝ ինքն էլ այդ չնկատելով։ Ծխելուց մաքրող մի մարդ ճանապարհին իր ամբողջ անմաքուր կողքով կպավ նրան և սևացրեց նրա ամբողջ ուսը. կառուցվող մի տան վերևից մի ամբողջ գդակ կիր թափվեց նրա վրա։ Նա այդ բոլորը չնկատեց, ու հետո էլ, երբ հանդիպեց ոստիկանական պահակին,

որը իր գեղարդը կոչքին դրած, եղջյուրաձև ծխատուփից քաշախոտ էր քաշ տալիս չլուտ բուռնցքի մեջ, միայն այդ ժամանակ մի փոքր ուշքի եկավ, այն էլ այն պատճառով, որ ոստիկանական պահակը ասաց՝ «Ո՞ւր ես քշում հենց մուրթիս վրա, քեզ համար տրուխթուար[1] չկա՞, ինչ էք» Այդ նրան ստիպեց նայել շուրջը և տուն դառնալ։ Միայն այստեղ նա սկսեց հավաքել ուշք ու միտքը, պարզ ու որոշակի տեսավ իր դրությունը, սկսեց արդեն ոչ թե կցկտուր կերպով, այլ խոհեմաբար և սրտաբաց խոսել իր հետ, որպես խելամիտ բարեկամի, որի հետ կարելի է խոսել ամեն ասրտագին և մտերիկ գործի մասին։ «Է՛, ո՛չ,— ասաց Ակակի Ակակիևիչը,— հիմա չի կարելի Պետրովիչի հետ խոսել. հիմա նա ը-ը, իքը... երևի կինը թակել է նրան։ Ավելի լավ է ես նրա մոտ գնամ կիրակի օրը առավոտյան. նախորդ շաբաթ օրվանից հետո նա խմած կլինի ու մի լավ քնելուց հետո կուզենա խումարությունից դուրս գալ, իսկ կինը փող չի տա, իսկ այդ ժամանակ ես մի տասը կոպեկանոց կգցեմ նրա բուռը, նա ավելի զիջող կլինի ու շինելն էլ այն ժամանակ ը-ը, իքը...» Այսպես դատեց Ակակի Ակակիևիչը, քաշալերեց իրեն և սպասեց մինչև առաջիկա կիրակին, ու հեռվից տեսնելով, որ Պետրովիչի կինը տանից ինչ-որ տեղ գնաց, ինքն ուղղակի մտավ Պետրովիչի մոտ։ Պետրովիչը, իրոք, շաբաթ օրվանից հետո առաջին չչմած էր, գլուխը պահում էր դեպի հատակը ու երկար քնած էր եղել. բայց այդ բոլորով հանդերձ, հենց որ իմացավ, թե բանն ինչ է, կարծես սատանան բոթեց նրան։ «Չի՛ կարելի,— ասաց,— հանձնեք նորը պատվիրելը» Ակակի Ակակիևիչը հենց այստեղ մի տասը կոպեկանոց խոթեց նրա բուռը։ «Շնորհակալ եմ, պարոն, մի քիչ կգցեմ ձեր կեանքը,— ասաց Պետրովիչը,— իսկ շինելի մասին մի՛ բարեհաճեք անհանգստանալ. ոչ մի բանի էլ պետք չի։ Ես ձեզ համար մի նոր, հիանալի շինել կկարեմ, դրանով էլ վերջացնենք»։

Ակակի Ակակիևիչը դարձյալ նորոգման մասին խոսեց, բայց Պետրովիչը չլսեց և ասաց. «Ես անպատճառ նորը

---

1. Ազավաղված տերմին (մաքի) բառն է։

կկարեմ ձեզ համար, դրանում հաճելցեք հուսով լինել, ջանք կթափենք։ Մինչև իսկ կարելի է այնպես, ինչպես մոդա է դարձել, օձիքը կկոճկվի արծաթապատ կոճերի վրա։

Ակակի Ակակիևիչը հենց այստեղ տեսավ, որ առանց նոր շինելի բան չի դուրս գա, ու բոլորովին վհատվեց։ Հիրավի, ի՞նչ անել, ինչո՞վ, ի՞նչ փողով կարել տալ։ Իհարկե կարելի է մասամբ հույս դնել տոնի առիթով գալիք պարգևատրման վրա, բայց այդ փողը արդեն վաղուց, առաջուց տնօրինված է ու բաշխված։ Հարկավոր էր դնել նոր անդրավարտիք, կոշկակարին վճարել հին պարտքը՝ կոշիկների հին ճիտքերին նոր թաթամասեր դցելու համար, դերձակուհուն պատվիրել երեք շապիկ ու երկու հատ էլ այն սպիտակեղենից, որը վայել չէ անվանել տպագիր խոսքով, մի խոսքով, ամբողջ փողը պետք է բոլորովին ծախսվեր, ու եթե նույնիսկ դեբեկտորը այնքան ողորմած լիներ, որ քառասուն ռուբլի պարգևագրամի փոխարեն· նշանակեր քառասունհինգ կամ հիսուն, ապա, այնուամենայնիվ, որևէ չնչին բան կմնա, որը շինելի կապիտալի մեջ այն կլինի, ինչ որ մի կաթիլը ծովում։ Ասենք, իհարկե, նա գիտեր, որ Պետրովիչը քմահաճքեն հանկարծ սատանան գիտե ինչ բարձր գին էր պահանջում, այնպես որ, մեկ էլ տեսար կինն ինքը չէր կարողանում իրեն զսպել ու ճչում էր՝ «Գժվե՞լ ես, ինչ է, ա՛յ հիմար։ Մուրիշ անգամ իսկի բան չի վերցնում աշխատանքի գիմաց, իսկ հիմի սադայելը սրան դրդել է էստեսակ մի գին պահանջել, որ ինքն էլ չարժի»։ Թեև, իհարկե, նա գիտեր, որ Պետրովիչը ուշտուն ուրբլով է՛լ հանձն կառնի կարել, սակայն և այնպես, որտեղի՞ց վերցնել այդ ուշտուն ուրբլին։ Դեռ կարելի էր կեսը ճարել. կեսը կգտնվեր. գուցեև նույնիսկ մի քիչ ավելի. բայց որտեղի՞ց վերցնել մյուս կեսը... Բայց առաջին հերթին ընթերցողին կհետաքրքրի, թե որտեղից գտնվեց առաջին կեսը։ Ակակի Ակակիևիչը սովորություն ուներ ամեն մի ծախսվող ռուբլուց մի գրոշ գցել բանալիով փակված մի փոքրիկ արկղիկի մեջ, որի կափարիչի վրա անցք էր բացված այնտեղ փող գցելու համար։ Ցուրաքանչյուր կես տարին լրանալուց հետո նա վերաուղում էր կուտակված պղնձադրամի գումարը և դա փոխարինում մանր արծաթադրամով։ Այսպես նա շարունակում էր վաղուցվա

ժամանակներից, ու այսպիսով մի քանի տարվա ընթացքում կուտակված գումարը դուրս եկավ ավելի քան քառասուն ռուբլի։ Ուրեմն կեսը ձեռքին էր, բայց որտեղի՞ց վերցնել մյուս կեսը։ Որտեղի՞ց վերցնել մյուս քառասուն ռուբլին։ Ակակի Ակակիևիչը մտածեց-մտածեց ու որոշեց, որ հարկավոր կլինի պակասեցնել սովորական ծախքերը, գոնե առնվազն մեկ տարվա ընթացքում. արտաքսել թեյի գործածությունը երեկոներին, մոմ չվառել երեկոները, իսկ եթե հարկավոր լինի մի բան անել, գնալ տանտիրուհու սենյակը և աշխատել նրա մոմով. քայլելով փողոցներում, ոտքերը ըստ կարելույն թեթև ու զգուշությամբ դնել քարերին ու սալերին, մանգալ համարյա ոտքերի մատների վրա, որպեսզի այդ կերպ կոշկատակերը շուտ չմաշվեն. որքան կարելի է սպիտակեղենը ուշ-ուշ տալ լվացարարուհուն, լվանալու համար, ու որպեսզի չմաշվի, ամեն անգամ տուն գալով, հանել այն և մնալ միայն դեմիկոտոնե[1] խալաթով, որ շատ վաղուցվա էր, և նույնիսկ ժամանակն ինքը խնայել էր այն։ Պետք է ճշմարիտն ասել, որ սկզբում նրա համար մի քիչ դժվար էր ընտելանալ այդպիսի սահմանափակումներին, բայց հետո դա մի տեսակ սովորություն դարձավ և հաջող գնաց. նա մինչև իսկ բոլորովին ընտելացավ երեկոները քաղցած մնալուն. բայց դրա փոխարեն նա սնվում էր հոգեպես, իր խոհերում փայփայելով ապագա շինելի հավիտենական իդեան։ Այդ ժամանակներից նրա բուն իսկ գոյությունը կարծես թե մի տեսակ ավելի լիակատար դարձավ, կարծես թե նա ամուսնացել էր, կարծես թե իր կողքին ներկա էր մի ինչ-որ ուրիշ մարդ, կարծես թե նա մենակ չէր, այլ կյանքի ինչ-որ մի դուրեկան ընկերուհի համաձայնվել էր նրա հետ միասին անցնել կյանքի ճանապարհը,— և այդ ընկերուհին ոչ այլ ոք էր, բայց եթե նույն շինելը հաստ բամբակաշերտով, պինդ աստառով, առանց մաշվածության։ Նա դարձավ մի տեսակ ավելի աշխույժ, նույնիսկ բնավորությամբ ավելի կայուն, որպես մի մարդ, որը արդեն որոշել ու դրել է իր նպատակը։ Նրա դեմքից և արարմունքներից ինքնին չքացան կասկածը, անվճռականությունը, մի

[1] Դեմիկոտոն — կիսատամբակից կտորեղեն։

խոտքով՝ բոլոր տատանվող ու անորոշ գծերը։ Նրա աչքերում երբեմնակի հուր էր երևում, գլխի մեջ նույնիսկ ամենահանդուգն և խիզախ մտքեր էին պտտվում՝ արդյոք իսկապես կզաքիսի մորթի չդնե՞լ օձիքին։ Այդ մասին խորհրդածելիս քիչ մնաց նա մտացրիվ դառնար։ Մի անգամ, արտագրելով թղթերը, քիչ մնաց որ նա նույնիսկ սխալ անեու այնպես որ, գրեթե բարձրաձայն ճչաց՝ «ո՜ւխ», ու խաչակնքեց։ Յուրաքանչյուր ամսի ընթացքում նա, թեև մեկ անգամ, գնում էր Պետրովիչի մոտ, որպեսզի խոսեր շինելի մասին, թե որտեղ ավելի լավ է գնել մահուդը և ի՛նչ գույնի, ինչ գնով, ու թեև մի փոքր մտահոգված, բայց միշտ էլ գոհ էր վերադառնում տուն, մտածելով, որ վերջապես, հո կգա ժամանակ, երբ այդ բոլորը կգնվի և երբ կկարվի շինելը։ Գոթծը նույնիսկ ավելի արագ գնաց, քան նա սպասում էր։ Հակառակ ամեն ակնկալության, դիրեկտորը Ակակի Ակակիևիչի համար հշանակեց ոչ թե քառասուն կամ քառասունհինգ, այլ ամբողջ վաթսուն ռուբլի։ արդյոք նախազգո՞ւմ էր նա, որ Ակակի Ակակիևիչին շինել է հարկավոր, թե՞ ինքնին այդպես պատահեց, միայն թե դրա շնորհիվ Ակակի Ակակիևիչի մոտ ավելորդ քսան ռուբլի գոյացավ։ Այս հանգամանքը արագացրեց գործի ընթացքը։ Էլի ինչ-որ երկու-երեք ամսվա քիչ քաղցածություն, և Ակակի Ակակիևիչի մոտ, իրոք, հավաքվեց մոթ ութսուն ռուբլի։ Նրա սիրտը, որ ընդհանրապես շատ հանգիստ էր, սկսեց տրոփել։ Առաջին իսկ օրը նա Պետրովիչի հետ գնաց խանութները։ Գնեցին շատ լավ մահուդ, և զարմանալի էլ չէր, որովհետև այդ մասին մտածում էին դեռ կես տարի առաջ և ամիս չէր լինում, որ չմտնեին խանութները ու չիմանային գները. Պետրովիչը ինքն էլ ասաց, որ ավելի լավ մահուդ չի է՛լ լինում։ Աստառի համար կոլենկոր ընտրեցին, բայց այնպես լավորակ ու պինդ, որ, Պետրովիչի ասելով, մետաքսից էլ լավ էր և նույնիսկ տեսքով ավելի գեղեցիկ ու փայլուն։ Կզաքիսի մորթի չգնեցին, որովհետև, իրոք, բանկ էր, այլ դրա փոխարեն ընտրեցին լավագույն կատվամորթի, լավագույնը խանութում եղածներից, այնպիսի կատվամորթի, որը հեռվից միշտ կարելի էր կզաքիսի մորթու տեղ ընդունել։ Պետրովիչը շինելով զբաղվեց ընդամենը երկու շաբաթ, որովհետև թափկարը շատ էր, այլա-

պես շինելը ավելի շուտ պատրաստ կլիներ։ Պետրովիչը աշխատանքի համար վերցրեց տասներկու ռուբլի. դրանից պակաս ոչ մի կերպ չէր կարելի. ամբողջը կարվեց միայն մետաքսաթելով, կրկնակի մանր կարով, ու Պետրովիչը հետո ամեն մի կարը քաշքշում էր սեփական ատամներով, որոնցով զանազան ֆիգուրներ էր դուրս բերում։ Այդ եղավ... դժվար է ասել, թե հատկապես որ օրը, բայց հավանորեն Ակակի Ակակիևիչի կյանքում ամենահանդիսավոր օրն էր, երբ Պետրովիչը, վերջապես, բերեց շինելը։ Նա այն բերեց վաղ առավոտյան, նախքան այն ժամանակը, երբ հարկավոր էր գնալ դեպարտամենտ։ Մի ուրիշ ժամանակ երբեք այդպես տեղին չէր լինի շինելի բերելը, որովհետև արդեն սկսվում էին բավական խիստ սառնամանիքները և կարծես սպառնում էին է՛լ ավելի ուժեղանալ։ Պետրովիչը շինելը ձեռքին հայտնվեց այնպես, ինչպես վայել է լավ դերձակին։ Նրա դեմքը այնպիսի նշանակալից արտահայտություն ստացավ, որպիսին Ակակի Ակակիևիչը դեռ երբեք չէր տեսել։ Թվում էր, որ նա չխակատար չափով զգում էր, որ քիչ գործ չի արել և որ հանկարծ իր մեջ ցույց է տվել այն անդունդը, որը մեկայն աստառ գցող և նորոգող դերձակներին բաժանում է նոր հագուստ կարող դերձակներից։ Նա շինելը հանեց թաշկինակից, որով բերել էր այն. թաշկինակը հենց նոր էր ստացել լվացարարուհուց. հետո նա ծալեց այն և դրեց գրպանը, գործածության համար։ Հանելով շինելը, նա նայեց խիստ հպարտ, ու երկու ձեռքով բռնած, խիստ ճարպկորեն գցեց Ակակի Ակակիևիչի ուսերին. հետո ձեռքով հետևից ձգեց այն, դեպի ներքև քաշեց. հետո այն մի փոքր հարդարեց Ակակի Ակակիևիչի վրա, կոճակները աբձակած։ Ակակի Ակակիևիչը ինչպես տարեց մարդ, ուզում էր փորձել թևքերը. Պետրովիչը օգնեց թևքերն էլ հագնելու. դուրս եկավ, որ թևքերն էլ լավ էին։ Մի խոսքով, շինելը իսկականն էր և հենց իր ժամանակին էր պատրաստ եղել։ Պետրովիչը այս առիթով չմոռացավ ասել, որ ինքը հենց այնպես, այդքան էժան գին վերցրեց, որովհետև ապրում է մի փոքրիկ փողոցում, ցուցանակ չունի և բացի այդ, վաղուց ճանաչում է Ակակի Ակակիևիչին. իսկ Նևսկի պրոսպեկտում միայն աշխատանքի գնամար նրանից կվերցնեին յոթանասուն-հինգ ռուբլի։ Ակակի Ակակիևիչը չէր ուզում այդ մասին դա-

տողություններ անել Պետրովիչի հետ, վախենում էլ էր բոլոր խոշոր գումարներից, որոնցով Պետրովիչը աչքին թոզ փչել էր սիրում։ Նա հաշիվը մաքրեց Պետրովիչի հետ, շնորհակալություն հայտնեց և իսկույն դուրս եկավ նոր շինելով դեպարտամենտ գնալու։ Պետրովիչը դուրս եկավ նրա հետևից ու մնալով փողոցում, հեռվից դեռ երկար նայում էր շինելին, հետո էլ դիտմամբ մի կողմ գնաց, որպեսզի ծուռ ընդբափողոցով առաջ անցնելով, նորից դուրս գար փողոց ու մի անգամ էլ շինելը տեսներ մյուս կողմից, այսինքն՝ ուղղակի առջևից։ Այնինչ Ակակի Ակակիևիչը քայլում էր բոլոր զգայարանների առավելապես տոնական վիճակում։ Նա րոպեի ամեն մի ակնթարթում զգում էր, որ ուսերին նոր շինել կա, ու մի քանի անգամ նույնիսկ քմծիծաղեց ներքին բավականությունից։ Արդարև, երկու օգուտ. մեկն այն է, որ տաք է, մյուսն էլ այն, որ լավ է։ Ճանապարհը նա բնավ չնկատեց էլ ու հանկարծ իրեն տեսավ դեպարտամենտի շվեյցարանոցում։ Հանեց շինելը, ամբողջովին զննեց այն և հանձնեց շվեյցարի հատուկ հսկողության։ Հայտնի չէ ինչպես դեպարտամենտում հանկարծ բոլորն իմացան, որ Ակակի Ակակիևիչը նոր շինել է հագել և որ կապոտը այլևս գոյություն չունի։ Բոլորն էլ հենց նույն րոպեին վազեցին շվեյցարանոց, Ակակի Ակակիևիչի նոր շինելը նայելու։ Սկսեցին նրան շնորհավորել, ողջունել, այնպես որ նա սկզբում միայն ժպտում էր, հետո էլ մինչև անգամ ամաչեց։ Իսկ երբ բոլորն էլ, մոտենալով նրան, ասում էին, թե հարկավոր է կոնծել նոր շինելի առթիվ և նա պետք է որ գոնե երեկույթ տա նրանց բոլորի համար, Ակակի Ակակիևիչը բոլորովին կորցրեց իրեն, չգիտեր ինչ անի, ինչ պատասխանի և ինչպես հրաժարվի։ Նա արդեն մի քանի րոպեից հետո, ամբողջովին կարմրատակելով, սկսեց բավական միամիտ կերպով հավատացնել, որ դա ամենևին էլ նոր շինել չէ, որ դա այնպես, էլի՛, հին շինել է։ Վերջապես, աստիճանավորներից մեկը, նույնիսկ մի ինչ-որ տեղանապետի օգնական, հավանորեն ցույց տալու համար, որ ինքը բնավ էլ հպարտ չէ և ծանոթություն է պահպանում նույնիսկ իրենից ցածրերի հետ, ասաց. «Քանի լինի այսպես, ես Ակակի Ակակիևիչի փոխարեն երեկույթ եմ տալիս և խնդրում եմ այսօր ինձ մոտ գալ թեյի. ես բախտի

քերմամբ այսօր անվանակոչիկ եմ»։ Ջինովնիկները բնականաբար հենց այստեղ էլ շնորհավորեցին սեղանապետի օգնականին և սիրով ընդունեցին առաջարկը։ Ականի Ականիևիչը սկսեց չեմուչում անել, բայց բոլորն էլ ասացին, որ դա անքաղաքավարություն է, որ դա ամոթանք ու խայտառակություն է, և նա արդեն ոչ մի կերպ չկարողացավ հրաժարվել։ Սակայն հետո այդ նրան հաճելի թվաց, երբ հիշեց, որ դրա շնորհիվ ինքը առիթ կունենա նույնիսկ երեկոյան էլ մանգալ նոր շինելով։ Այդ ամբողջ օրը Ականի Ականիևիչի համար ասես մի մեծագույն, հանդիսավոր տոն էր։ Նա տուն վերադարձավ ամենաերջանիկ տրամադրությամբ, հանեց շինելը և խնամքով կախեց պատից՝ մի անգամ էլ զմայլված դիտելով մահուդը և աստառը, հետո էլ համեմատության համար դիտմամբ հանեց առաջվա իր կապոտը, որ բոլորովին քրքրված էր։ Նա նայեց կապոտը ու նույնիսկ ինքն էլ ծիծաղեց. այնքա՜ն մեծ էր տարբերությունը։ Ու հետո ճաշելիս նա դեռ երկար քմծիծաղ էր տալիս՝ հենց որ միտքն էր գալիս, թե ինչ վիճակումն էր գտնվում կապոտը։ Ուրախ ճաշեց նա և ճաշից հետո չգրեց ոչինչ, ոչ մի թուղթ, այլ հենց այնպես, մի քիչ փափկամոլության տրվեց անկողնում, մինչև որ օրը մըթնեց։ Հետո, առանց գործը ձգձգելու, հագնվեց, շինելը գցեց ուսերին ու դուրս դնաց։ Թե որտեղ էր ապրում հրավիրող աստիճանավորը, ցավոք սրտի չենք կարող ասել. հիշողությունը սկսում է խիստ դավաճանել մեզ, ու ամեն ինչ, որ կա Պետերբուրգում, բոլոր փողոցները և տները այնպես են միաձուլվել ու խառնվել գլխումս, որ շատ դժվար է այնտեղից որևէ մի բան հանել կարգին վիճակում։ Ինչևիցե, բայց գոնե ճիշտ է այն, որ աստիճանավորը ապրում էր քաղաքի լավագույն մասում, հետևաբար Ականի Ականիևիչին ոչ այնքան մոտիկ։ Ականի Ականիևիչը սկզբում պետք է անցներ ինչ-որ ամայի, թուլլ լուսավորված փողոցներ, բայց քանի մոտենում էր աստիճանավորի բնակարանին, փողոցները դառնում էին ավելի աշխույժ, մարդաշատ և ավելի պայծառ լուսավորված։ Ավելի հաճախ էին հետիոտներ երևում, սկսեցին հանդիպել նաև գեղեցիկ հագնված կանայք, կզբենու օձիքով ազամարդիկ, ավելի քիչ էին պատահում փայտե, վանգակավոր, ռակևուշն մեխեր խփած տահնակներով կա-

ռապտեններ, ընդհակառակը, շաբունակ պատահում էին արագարշավ կառապաններ կարմիր թավշյա գդակներով, լաքած սահնակներով, արջի մորթու ծածկոցներով, ու փողոցով թռչում-անցնում էին զարդարուն թափքերով կառեթներ, որոնց անիվները ճռճռում էին ձյան վրա։ Ակակի Ակակիևիչը այդ բոլորը դիտում էր իբրև նորություն։ Նա արդեն մի քանի տարի երեկոները փողոց չէր դուրս եկել։ Հետաքրքրությամբ կանգ առավ մի խանութի լուսավորված պատուհանի առջև, նայելու մի նկար, որտեղ պատկերված էր մի ինչ-որ գեղեցիկ կին, որը հանում էր իր մաշիկը՝ այդ կերպ մերկացրած լինելով խիստ գեղանի ամբողջ ոտքը. իսկ նրա հետևից, մյուս սենյակի դռնից գլուխը հանել էր մի ինչ-որ տղամարդ բակենբարդներով և կզակին գեղեցիկ այծամորուքով։ Ակակի Ակակիևիչը օրորեց գլուխը և քմծիծաղեց ու հետո գնաց իր ճանապարհով։ Ինչո՞ւ նա քմծիծաղեց, արդյոք այն պատճառով, որ բոլորովին անծանոթ առարկայի՞ էր հանդիպել, որի մասին, սակայն, ամեն մեկի մեջ էլի՛ մի ինչ-որ զգացողություն էր պահպանվում, թե՞ նա ուրիշ շատ աստիճանավորների նման մտածեց հետևյալը. «Ա՛խ, այդ ֆրանսիացինե՛րը։ Ի՞նչ ասել ուզի, եթե նրանք ուզենան մի որևէ բան անել, իրոք այդ բանը տեղինտեղին կլինի...»։ Գուցեև այդ էլ չմտածեց. հո չի՞ կարելի մարդու հոգու մեջ մտնել և իմանալ այն ամենը, ինչ որ մտածում է նա։ Վերջապես, նա հասավ այն տունը, որտեղ բնակվում էր սեղանապետի օգնականը։ Սեղանապետի օգնականը մեծավարի էր ապրում. սանդուղքը լուսավորված էր լապտերով, բնակարանը երկրորդ հարկումն էր։ Մտնելով նախասենյակ, Ակակի Ակակիևիչը հատակի վրա ամբողջ շարքերով կրկնակոշիկներ տեսավ։ Դրանց միջև, սենյակի մեջտեղում ինքնահոս էր դրված, որը թշշում էր և քուլա-քուլա գոլորշի արձակում։ Պատերից կախված էին շինելներ ու թիկնոցներ, որոնց միջև մի քանիսը նույնիսկ կղբենու օձիքով էին կամ թավշյա ծալերով։ Ներսից լսվում էր աղմուկ և խոսակցություն, որոնք հանկարծ պարզ և հնչեղ դարձան, երբ բացվեց դուռը և դուրս եկավ լակեյը մատուցարանով, որի վրա դրված էին դատարկած բաժակներ, սերուման և մի զամբ-

յուղ պաքսիմատ։ Երևում էր, որ աստիճանավորները վաղուց էին հավաքվել ու խմել թեյի առաջին բաժակը։ Ակակի Ակակիևիչը ինքը կախ տալով իր շինելը, մտավ սենյակ, ու նրա առջև միաժամանակ երևացին մոմերը, աստիճանավորները, ծխամորճները, թղթախաղի սեղանները, ու նա անորոշ կերպով լսեց քուչեկ, բոլոր կողմերից բարձրացած խոսակցությունը և տեղերից շարժվող աթոռների աղմուկը։ Բավական անհարմար վիճակում նա կանգ առավ սենյակի մեջտեղում՝ մտածելով և աշխատելով որոշել, թե ինչ է անելու։ Բայց նրան արդեն նկատեցին, աղաղակով ընդունեցին և բոլորն էլ իսկույն ևեթ գնացին նախասենյակ ու նորից գննեցին նրա շինելը։ Ակակի Ակակիևիչը թեպետև մասամբ շփոթվեց, բայց որպես բացսիրտ մարդ, չէր կարող չուքախանալ, տեսնելով, թե ինչպես բոլորն էլ գովեցին շինելը։ Հետո, իհարկե, բոլորն էլ թողին և՛ նրան, և՛ շինելը ու ինչպես ընդունված է, դիմեցին թղթախաղի համար նշանակված սեղաններին։ Այդ ամենը, աղմուկը, խոսակցությունը և մարդկանց ամբոխը, այդ ամենը մի տեսակ տարօրինակ էր Ակակի Ակակիևիչի համար։ Նա ուղղակի չգիտեր՝ ի՛նչ անի, որտեղ տեղավորի ձեռքերը, ոտքերը և իր ամբողջ կազմվածքը. վերջապես, նա նստեց խաղացողների մոտ, դիտեց խաղաթղթերը, նայեց սրա ու նրա դեմքին ու որոշ ժամանակից հետո սկսեց հորանջել, զգալ, որ ձանձրալի է, մանավանդ որ, արդեն վաղուց եկել էր այն ժամանակը, երբ նա ըստ սովորության պառկում էր քնելու։ Նա ուզում էր հրաժեշտ տալ տանտիրոջը, բայց չթողին, ասելով, որ անպայման հարկավոր է մի-մի գավաթ շամպայն խմել նոր հագուստի առթիվ։ Մի ժամից հետո ընթրիք մատուցեցին, որ բաղկացած էր վինեգրետից, հորթի սառը մսից, պաշտետից, հրուշակարանի կարկանդակներից և շամպայնից։ Ակակի Ակակիևիչին ստիպեցին երկու գավաթ խմել, որից հետո նա զգաց, որ սենյակում ավելի ուրախ է, սակայն ոչ մի կերպ չէր կարողանում մոռանալ, որ արդեն ժամը տասներկուսն է, և որ վաղուց տուն գնալու ժամանակն է։ Որպեսզի տանտիրոջ խելքին չփչեր իրեն որևէ կերպ պահել, նա սենյակից կամացուկ դուրս ելավ, նախասենյակում գտավ շինելը, ոչ առանց ափսոսելու տեսավ, որ այն ընկած է

հատակին, թափ տվեց այն, մաքրեց զանազան չոփ ու փշրոնքից, հագավ և սանդուղքով իջավ փողոց։ Փողոցում դեռ էլի լույս էր։ Բաց էին մի քանի մանրավաճառ խանութներ, սպասավոր և ամեն տեսակ մարդկանց այդ մշտական ակումբները, մյուս խանութները, որոնք փակված էին, այնուամենայնիվ, լույսի երկար շերտ էին արձակում դռների ամրոցք ճեղքերից, որ նշանակում էր, թե դրանք դեռ զուրկ չեն հասարակությունից, և հավանորեն տների սպասուհիները կամ սպասավորները դեռ ավարտում են իրենց դատողություններն ու խոսակցությունները՝ իրենց պարոններին գցելով կատարյալ տարակուսանքի մեջ՝ իրենց ուր գտնվելու մասին։ Ականի Ականիևիչը գնում էր ուրախ տրամադրությամբ, հայտնի չէ ինչու հանկարծ նույնիսկ ցնծաց աճապարել ինչ-որ մի կնոջ հետևից, որը կայծակի նման անցավ կողքից և որի մարմնի յուրաքանչյուր մասը արտասովոր շարժման մեջ էր։ Բայց, այնուամենայնիվ, Ականի Ականիևիչը իսկույն կանգ առավ ու շարունակեց շատ կամաց գնալ, նույնիսկ ինքն էլ զարմանալով, թե որտեղից առաջացավ իր այդ աճապարանքը։ Շուտով նրա առջև ձգվեցին այն ամայի փողոցները, որոնք մինչև անգամ ցերեկով էլ այնքան աշխույժ չեն, առավել ևս երեկոյան։ Հիմա դրանք էլ ավելի խուլ և մեկուսացած էին. լապտերներ քիչ էին պատահում,— ինչպես երևում է, արդեն քիչ ձեթ էր բաց թողնվում. ակնվեցին փայտաշեն տները, ցանկապատերը. ոչ մի տեղ ոչ մի մարդ. միայն ձյունն էր շողում փողոցներով մեկ, ու տխուր սևին էին տալիս փակ փեղկերով, ցածրիկ, քնած խրճիթները։ Նա մոտեցավ այն տեղին, ուր փողոցը հատվում էր մի անծայր հրապարակով, որի մյուս կողմում հազիվ էին նըշմարվում տները և որը սարսափելի ամայություն էր ներկայացնում։

Հեռո՜ւ-հեռվում, աստված գիտե որտեղ, լույս էր պլպլում մի ինչ-որ պահականոցում, որը կարծես աշխարհի ծայրին էր գտնվում։ Ականի Ականիևիչի ուրախությունն այստեղ զգալիորեն նվազեց։ Նա հրապարակ մտավ ո՛չ առանց ինչ-որ ակամա վախի, իրոք, կարծես թե նրա սիրտը մի ինչ-որ վատ բան նախազգաց։ Նա նայեց հետ ու բոլոր կողմերը շուրջը մթության անընդմեջ ծով էր։ «Ո՛չ, ավելի լավ է

չնայելը»,— մտածեց ու քայլեց աչքերը փակած, ու հետո բացեց, որ տեսնի, թե արդյոք մոտիկ է հրապարակի ծայրը, հանկարծ տեսավ, որ իր առջև, համարյա հենց քթի առջև կանգնած են ինչ-որ բեզավոր մարդիկ, թե ինչ մարդիկ, նա մինչև իսկ չկարողացավ նշմարելու Նրա աչքերը մշուշվեցին ու սիրտը թպրտաց։ «Շինելը հո իմն է»,— որոտալի ձայնով ասաց նրանցից մեկը՝ բռնելով նրա օձիքից։ Ակակի Ակակիևիչը ուզում էր ճչալ՝ «օգնեցե՛ք», երբ մյուսը չինովնիկի գլխի մեծությամբ բռունցքը դեմ արեց հենց նրա բերանին՝ ասելով. «Հապա փորձի՛ր բղավել»։ Ակակի Ակակիևիչը միայն զգաց, թե ինչպես իր վրայից հանեցին շինելը, ծնկով աջացի տվին, և նա երեսի վրա ընկավ ձյան մեջ ու այլևս ոչինչ չէր զգում։ Մի քանի րոպեից հետո նա ուշքի եկավ ու ոտքի ելավ, բայց արգելն ոչ ոք չկար։ Նա զգում էր, որ դաշտում ցուրտ է ու շինելը չկա, սկսեց ճչալ, բայց ձայնը կարծես չէր է՛լ մտածում հասնել հրապարակի ծայրերը։ Հուսալքված, ճչալուց չհոգնելով, նա հրապարակի միջով վազեց ուղիղ դեպի պահականոցը, որի մոտ կանգնած էր ոստիկանական պահակը, ու իր գեղարդին հենված, կարծես թե հետաքրքրությամբ նայում էր, ցանկանալով գիտենալ, թե ինչու է հեռվից իր մոտ վազում ու ճչում մի մարդ։ Ակակի Ակակիևիչը վազեվազ մոտենալով նրան, սկսեց խեղդվող ձայնով աղաղակել, որ նա քնած է և ոչ մի բանի չի հսկում, չի տեսնում, թե ինչպես են թալանում մարդուն։ Ոստիկանական պահակը պատասխանեց, որ ինքը ոչինչ չէր տեսնում, որ տեսավ, թե ինչպես հրապարակում ինչ-որ երկու մարդ կանգնեցրին նրան, բայց ինքը կարծում էր, որ նրա բարեկամներն են. փոխանակ իզուր տեղը նախատինք ցափելու, թող նա վաղը գնա վերափացուի մոտ, վերակացուն կպարզի, թե ովքեր են վերցրել շինելը։ Ակակի Ակակիևիչը վազեվազ տուն հասավ բոլորովին անկարգ վիճակում. մազերը, որ դեռ փոքրիկ քանակությամբ մնացել էին քունքերի ու ծածրակի վրա, բոլորովին գզգզված էին. կողքը, կուրծքը և ամբողջ անդրավարտիքը ձյունոտ էին։ Պառավը, նրա բնակարանի տերուհին, լսելով դռան սարսափելի թխկոցը, հապճեպ վեր թռավ անկողնից և միայն մեկ ոտին մաշիկ հագած, վազեց դուռը բանալու, համես-

տուբյան համար շապիկը ձեռքով կրծքին պահած. սակայն, բանալով դուռը, տեսնելով Ակակի Ակակիևիչին այդպիսի վիճակում, նա ետ-ետ գնաց։ Իսկ երբ Ակակի Ակակիևիչը պատմեց, թե բանն ինչ է, տանտիրուհին սարսափած, ձեռքերն իրար զարկեց և ասաց, որ հարկավոր է գնալ անմիջականորեն քաղաքամասի պրիստավի մոտ, որ քաղային վերակացուն կխաբի, կխոստանա ու ման կածի. ամենից լավ է գնալ հենց պրիստավի մոտ, որ նա մինչև իսկ ծանոթ է իրեն, որովհետև Աննան, չուխնուհին, որը առաջ իր մոտ ծառայում էր իբրև խոհարարուհի, հիմա մտել է պրիստավի մոտ իբրև դայակ, որ ինքը հաճախ տեսնում է հենց իրեն՝ պրիստավին, երբ սա կառքով անցնում է իրենց տան կողքից, և որ պրիստավը ամեն կիրակի լինում է եկեղեցում, աղոթում է, միևնույն ժամանակ ուրախ նայում բոլորին, և ուրեմն, ամեն բանից երևում է՝ պետք է որ բարի մարդ լինի։ Լսելով այդ վճիռը, Ակակի Ակակիևիչը տխուր գնաց իր սենյակը, ու թե ինչպես այնտեղ անցկացրեց գիշերը, այդ թողնում ենք դատել նրան, ով կարող է որևէ չափով պատկերացնել ուրիշի դրությունը։ Վաղ առավոտյան նա գնաց քաղաքամասի պրիստավի մոտ. բայց ասացին, որ քնած է. նա գնաց տասին. դարձյալ ասացին՝ քնած է. նա գնաց ժամը տասնմեկին. ասացին՝ պրիստավը տանը չի. նա ճաշի ժամանակ գնաց. բայց նախասենյակում գրագիրները ոչ մի կերպ չէին ուզում նրան ներս թողնել և ուզում էին անպայման իմանալ, թե ինչ գործով և ինչի համար է նա եկել և ինչ է պատահել։ Այնպես որ, վերջապես, Ակակի Ակակիևիչը իր կյանքում մի անգամ ուզեց համարձակություն ցույց տալ և կտրականապես ասաց, որ իրեն հարկավոր է անձամբ տեսնել պրիստավին, որ նրանք չպետք է համարձակվեն իրեն ներս չթողնել, որ ինքը եկել է դեպարտամենտից, պետական գործով և որ ինքը կգանգատվի նրանց դեմ, այն ժամանակ նրանք կտեսնեն, թե ինչ կլինի։ Գրագիրները չհամարձակվեցին դրա դեմ որևէ բան ասել և նրանցից մեկը դնաց պրիստավին դուրս կանչելու։ Պրիստավը ինչ-որ չափազանց տարօրինակ կերպով ընդունեց շինելի կողոպտման մասին պատմածը։ Փոխանակ ուշադրություն դարձնելու գործի գլխավոր կետին, նա սկսեց հարցու-

փորձ անել Ակակի Ակակիևիչին, թե նա ինչո՞ւ էր այդպես ուշ վերադառնում, հո չէ՞ր գնացել մի որևէ անբարոյական տուն, այնպես որ, Ակակի Ակակիևիչը բոլորովին շփոթվեց ու դուրս եկավ նրա մոտից, ինքն էլ չգիտենալով, արդյո՞ք շինելի գործը պատշաճ ընթացք կստանա թե ոչ։ Այդ ամբողջ օրը նա ատյանում չէր (միակ դեպքը նրա կյանքում)։ Մյուս օրը նա հայտնվեց ամբողջովին գունատ և իր հին կապոտով, որն է՛լ ավելի ողբալի էր դարձել։ Չնայած գտնըվեցին այնպիսի աստիճանավորներ, որոնք նույնիսկ այստեղ էլ առիթը բաց չթողին Ակակի Ակակիևիչի վրա ծիծաղելու համար, շինելի հափշտակման պատմությունը, այնուամենայնիվ, հուզեց շատերին։ Որոշեցին իսկույն նրա համար բաժնեգրություն կատարել, բայց չնչին բան հավաքեցին, որովհետև աստիճանավորները առանց այդ էլ շատ ծախք էին արել՝ բաժանորդագրվելով դիրեկտորի դիմանկարին և ինչ-որ մի գրքի, որ առաջարկել էր բաժանմունքի պետը, հեղինակի բարեկամը. այսպիսով, ուրեմն, բոլորովին անհնարին դարձավ։ Ինչ-որ մեկը կարեկցություն դրսևորած, որոշեց Ակակի Ակակիևիչին օգնել գոնե բարի խորհուրդով, ասելով, որ նա չգնա թաղային վերակացուի մոտ, որովհետև թեկուզ կարող է պատահել, որ վերակացուն, ցանկանալով վաստակել իշխանության հավանությունը, որևէ կերպ գտնի շինելը, բայց և այնպես, շինելը կմնա ոստիկանատանը, եթե նա չներկայացնի օրինական ապացույցներ, որ այն իրեն է պատկանում. ամենից լավ է նա դիմի մի նշանավոր դեմքի, այդ նշանավոր դեմքը գրակցելով ու բանակցելով ում հետ որ պետք է, կարող է ստիպել, որ գործը հաջող գնա։ Ի՛նչ արած, Ակակի Ակակիևիչը որոշեց գնալ նշանավոր դեմքի մոտ։ Թե ի՛նչ էր և ի՛նչումն էր կայանում նշանավոր դեմքի պաշտոնը, այդ վիճելի այժմ անհայտ է մնացել։ Պետք է գիտենալ, որ նշանավոր դեմքը նոր էր նշանավոր դեմք դարձել, իսկ մինչ այդ նա աննշան դեմք էր։ Ասենք, նրա պաշտոնը հիմա էլ նշանավոր չէր համարվում՝ համեմատած մյուս, է՛լ ավելի նշանավորագույն պաշտոնների հետ։ Բայց միշտ էլ կգտնվի այնպիսի մարդկանց շրջան, որոնց համար արդեն նշանավոր է այն, ինչ որ աննշան է ուրիշների աչքում։ Սակայն նա ջանում էր նշանա-

վորությունը ուժեղացնել ուրիշ շատ միջոցներով, այն է՝ կարգադրել էր, որ ստորին աստիճանավորները իրեն դիմավորեն դեռ սանդուղքի վրա, երբ նա գալիս էր պաշտոնավայրը, որ ոչ ոք չհամարձակվեր անմիջականորեն իր մոտ գալ, այլ ամեն ինչ ընթանար խստագույն կարգով՝ կոլեգիական ռեգիստրատորը զեկուցեր նահանգական քարտուղարին, նահանգական քարտուղարը՝ տիտուլյար խորհրդատուին կամ մեկ ուրիշին, ում հարկն էր, ու գործը այդպիսով իրեն հասներ։ Արդեն այսպես է սուրբ Ռուսիայում. ամեն ինչ վարակված է նմանողությամբ, ամեն մեկը իր պետի տնազն է անում ու նրան ձևացնում։

Նույնիսկ ասում են, թե ինչ-որ տիտուլյար խորհրդատու, երբ նրան դարձրին մի ինչ-որ առանձին, փոքրիկ գրասենյակի վարիչ, իսկույն ևեթ իր համար առանձին սենյակ սարքեց, այն անվանեց «ատենասենյակ», ու դռան մոտ կարգեց ինչ-որ սպասավորներ կարմիր օձիքներով, տրեզներով, նրանք բռնում էին դռան բռնակից և այն բաց անում ամեն մի եկողի համար, թեև «ատենասենյակում» հազիվ կարող էր մի սովորական գրասեղան տեղավորվել։ Նշանավոր գեմֆի կանոններն ու սովորությունները ծանրակշիռ ու վեհապանծ էին, բայց ոչ շատ բարդ։ Նրա սիստեմի գլխավոր հիմքը խստությունն էր։ «Խստությո՛ւն, խստո՛ւթյուն և խրստությո՛ւն», սովորաբար ասում էր նա, ու վերջին բառի վրա սովորաբար խիստ նշանակալից կերպով էր նայում այն մարդու դեմքին, ում ասում էր։ Թեև, ասենք, դա ոչ մի պատճառ էլ չուներ, որովհետև մի տասնյակ աստիճանավորներ, որոնք կազմում էին գրասենյակի ամբողջ կառավարական մեխանիզմը, առանց այն էլ պատշաճ երկյուղի մեջ էին. հեռվից տեսնելով նրան, արդեն թողնում էին գործը ու սպասում ձիգ կանգնած, մինչև որ պետը անցներ սենյակի միջով։ Ստորադասների հետ նրա սովորական խոսակցությունը բաղկացած էր համարյա երեք ֆրազից՝ «Ինչպե՞ս եք համարձակվում, գիտե՞ք թե ում հետ եք խոսում, հասկանո՞ւմ եք, թե ով է կանգնած ձեր առաջ»։ Սակայն հոգեպես նա բարի մարդ էր, ընկերների հետ լավ էր, կամահաճ. բայց գեներալի աստիճանը բոլորովին խելքից հանել էր նրան։ Ստանալով գեներալի աստիճան, նա մի

տեսակ շշկլվել էր, շեղվել ճանապարհից և բոլորովին չգիտեր ինչ անի։ Երբ լինում էր իրեն հավասարների հետ, նա դեռ մարդ էր ինչպես հարկն է, շատ կարգին մարդ, շատ կողմերով նույնիսկ խելացի մարդ. բայց հենց որ առիթ էր լինում գտնվել այնպիսի հասարակության մեջ, որտեղ մարդիկ քեկուզ մեկ աստիճանով ցածր էին իրենից, այնտեղ նա ուղղակի անտանելի էր. լուում էր, ու նրա դրությունը կարեկցություն էր առաջացնում, մանավանդ որ նույնիսկ ինքն էլ էր զգում, թե կարող էր ժամանակը անհամեմատ ավելի լավ անցկացնել։ Նրա աչքերում երբեմն երևում էր ուժեղ ցանկություն՝ միանալ որևէ հետաքրքիր խոսակցության ու խմբակի, բայց նրան կասեցնում էր այն միտքը, թե արդյոք դա խիստ շատ չի՞ լինի իր կողմից, արդյոք ազատավարություն չի՞ լինի և արդյո՞ք դրա շնորհիվ ինքը չի նսեմացնի իր նշանակությունը։ Եվ այդպիսի դատողությունների հետեվանքով նա միշտ մնում էր միևնույն լռակյաց վիճակում՝ միայն երբեմնակի արտասանելով ինչ-որ միավանկ հնչյուններ, և այդպիսով ամենաձանձրալի մարդու տիտղոսն ձեռք բերեց։ Հենց այդպիսի նշանավոր դեմքի մոտ եկավ մեր Ակակի Ակակիևիչը, ու եկավ ամենաանպատեհ ժամանակին, իրեն համար խիստ անհարմար, թեպետև նշանավոր դեմքին հարմար ժամանակին։ Նշանավոր դեմքը գտնվում էր իր կաբինետում և երկար ու բարակ, շատ-շատ ուրախ զրուցում էր նոր ժամանած իր մի հին ծանոթի և մանկության ընկերոջ հետ, որին մի քանի տարի չէր տեսել։ Այդ ժամանակ նրան զեկուցեցին, որ եկել է ինչ-որ Բաշմաչկին։ Նա խիստ տոնով հարցրեց՝ «ո՞վ է». նրան պատասխանեցին՝ «ինչ-որ աստիճանավոր է»— «Հը՛մ, կարող է սպասել, հիմա ժամանակը չէ», ասաց նշանավոր մարդը։ Այստեղ պետք է ասել, որ նշանավոր մարդը բոլորովին ստեց. նա ժամանակ ուներ, ընկերոջ հետ արդեն վաղուց խոսել էին ամեն ինչի մասին և արդեն վաղուց խոսակցությունը ընդհատում էին երկար լռություններով, միայն թեթևակի թրփթրփացնելով մի-մյանց ազդրերին և ասելով՝ «Այդպիսի բաներ, Իվան Աբրամովիչ»։ «Այո՛, այդպես Ստեպան Վառլամովիչ»։ Բայց այդ բոլորով հանդերձ, այնուամենայնիվ, նա հրամայեց, որ անտիճանավորը սպասի, որպեսզի ընկերոջը

ցույց տա, թե աստիճանավորները ինչքան ժամանակ են սպասում նրա նախասենյակում. ընկերը վաղուց չծառայող մարդ էր և ապրում էր տանը, գյուղում։ Վերջապես, բավականաչափ խոսելով և էլ ավելի շատ լռելով, ետ ծալված մեջքեր ունեցող և խիստ հանգստավետ բազկաթոռների վրա սիգար ծխելով, նա, վերջապես, կարծես թե հանկարծ հիշեց և ասաց քարտուղարին, որը կանգ էր առել դռան մոտ, զեկուցման համար բերած թղթերով.— «Հա՛, կարծեմ այնտեղ մի աստիճանավոր է կանգնած. ասացեք նրան, որ կարող է ներս գալ»։ Տեսնելով Ակակի Ակակիևիչի խոնարհ կերպարանքը և նրա հնամաշ համազգեստ-ֆրակը, նշանավոր դեմքը հանկարծ դիմեց նրան. «Ի՞նչ եք ուզում»,— ասաց խիստ և կորովի ձայնով, որ դիտմամբ սերտել էր նախօրոք, իր սենյակում, առանձնության մեջ ու հայելու դիմաց, իր այժմյան պաշտոնը և գեներալի աստիճանը ստանալուց դեռ մի շաբաթ առաջ։ Ակակի Ակակիևիչը արդեն կանխապես պատշաճ երկչոտություն զգաց, մի փոքր շփոթվեց և՛ ինչպես որ կարող էր, որքան նրան կարող էր թույլ տալ լեզվի ազատությունը, նույնիսկ առաջվանից էլ ավելի հաճախ ավելացնելով «ը-ը՛, իքը» մասնիկները, բացատրեց, որ ուներ բոլորովին նոր շինել, ու հիմա թալանված է տըմարդի կերպով և որ ինքը դիմում է նրան, որ նա իր միջնորդությամբ մի կերպ ը-ը՛, իքը, գրագրություն ունենա գլխավոր ոստիկանապետի հետ կամ մեկ ուրիշի հետ ու գտնի շինելը։ Գեներալին, հայտնի չէ ինչու, այդպիսի վարվեցողությունը անպատշաճ թվաց։ «Այդ ի՞նչ է, հարգելի պարոն,— շարունակեց նա խիստ տոնով,— չգիտե՞ք կարգը, ո՞ւր եք եկել, չգիտե՞ք ինչպես են վարում գործերը։ Դրա մասին դուք պետք է նախ՝ խնդիրք տայիք գրասենյակին. խնդիրքը կգնար սեղանապետին, բաժանմունքի պետին, հետո կհանձնվեր քարտուղարին, իսկ քարտուղարը արդեն կներկայացներ ինձ...»։

— Բայց, ձերդ գերազանցություն,— ասաց Ակակի Ակակիևիչը՝ ջանալով գործադրել ոգու արիության ամբողջ մի փոքրիկ բեկորը, ինչքան որ այդ կար իր մեջ, ու միևնույն ժամանակ զգալով, որ ինքը սարսափելի քրտնել է,— ես հա-

մարձակվեցի նեղությունս տալ ձերդ գերազանցությանը, որովհետև քարտուղարները ը-ը, իբր, անհուսալի մարդիկ են...

— Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ,— ասաց նշանավոր դեմքը,— որտեղի՞ց եք այդպիսի համարձակություն վերցրել, հը՛, որտեղի՞ց եք այդպիսի մտքեր վերցրել, հը՛, այդ ի՞նչ ըմբոստություն է տարածվել երիտասարդ մարդկանց մեջ, պետերի ու բարձրագույնների դեմ։ Նշանավոր դեմքը կարծես թե չնկատեց, որ Ակակի Ակակիևիչը արդեն հիսուն տարեկանից անց էր։ Հետևաբար, եթե նա կարողանար էլ երիտասարդ մարդ անվանվել, ապա միայն հարաբերաբար, այսինքն՝ այն մարդու նկատմամբ, ով արդեն յոթանասուն տարեկան էր։

— Գիտե՞ք թե այդ ում եք ասում, հասկանո՞ւմ եք, թե ով է կանգնած ձեր առաջ, հասկանո՞ւմ եք դուք այդ, հասկանո՞ւմ եք, ես հարցնում եմ ձեզ։

Այստեղ նա ոտքը խփեց հատակին՝ ձայնը հասցնելով այնպիսի բարձր, ուժեղ նոտայի, որ Ակակի Ակակիևիչի տեղ նույնիսկ մի ուրիշն էլ կսարսափեր։ Ակակի Ակակիևիչը տեղնուտեղը շշմեց, օրորվեց, դողաց ամբողջ մարմնով և ոչ մի կերպ չէր կարողանում կանգնել. եթե պահապանները իսկույն ևեթ վրա չհասնեին նրան պահելու, նա կփռվեր հատակին. նրան դուրս տարան համարյա անշարժ վիճակում։ Իսկ նշանավոր դեմքը զոհ լինելով, որ էֆեկտը նույնիսկ սպասածից էլ գերազանցեց, և կատարելապես զմայլվելով այն մտքից, որ իր խոսքը կարող է նույնիսկ ուշաթափեցնել մարդուն, շեղակի նայեց ընկերոջը, որպեսզի իմանա, թե նա ինչպես է դրա վրա նայում, և ոչ առանց բավականության տեսավ, որ իր ընկերը գտնվում էր բոլորովին անորոշ վիճակում և սկսել էր նույնիսկ իր կողմից էլ վախ զգալ։

Թե ինչպես իջավ սանդուղքից, ինչպես դուրս եկավ փողոց, այդ մասին ոչինչ չէր հիշում Ակակի Ակակիևիչը։ Նա չէր զգում ոչ ձեռքերի, ոչ էլ ոտքերի առկայությունը։ Իր կյանքում նա դեռ այդպես ուժեղ չէր շշպռվել գեներալի, այն էլ ուրիշ գեներալի կողմից։ Նա գնում էր փողոցներում սուլող ձյան մրրկում, բերանը բացած, շեղվելով մայթերից. քամին պետերբուրգյան սովորությամբ նրա վրա փչում էր բոլոր չորս կողմերից, բոլոր նրբափողոցներից։ Մի ակնթարթում կակորդը քամուց բորբոքվեց, և նա տուն հասավ՝ ուժ չունե-

նալով մի բառ է՛լ ասելու. կոկորդը ուռեց, և նա պառկեց անկողնում։ Երբեմն այդպես ուժեղ է ազդում պատշաճ շշպռոցը։ Հենց հետևյալ օրը նա հիվանդ էր ուժեղ ջերմախտով։ Պետերբուրգյան կլիմայի մեծահոգի օժանդակության շնորհիվ հիվանդությունն ավելի արագ ընթացավ, քան կարելի էր սպասել, ու երբ եկավ բժիշկը, ապա նա, շոշափելով զարկերակը, ուրիշ ոչինչ չգտավ անելու, բացի այն, որ պատվիրեց ջերմաթրջոց դնել, հենց միայն նրա համար, որ հիվանդը չմնա առանց բժշկության բարերար օգնության. սակայն հենց այստեղ էլ հայտարարեց, որ մեկուկես օրից հետո անպայման կգա նրա վերջը։ Այնուհետև դիմեց տանտիրուհուն և ասաց. «Իսկ դուք, տիրուհի, էլ իզուր տեղը ժամանակ մի կորցնեք, հիմա ևեթ նրա համար սոճու դագաղ պատվիրեցեք, որովհետև կաղնու դագաղը նրա համար քանկ կլինի»։ Արդյոք Ակակի Ակակիևիչը լսե՞ց իր համար ճակատագրական այդ խոսքերը, իսկ եթե լսեց էլ, արդյոք դրանք իր վրա ցնցող ազդեցություն գործեցի՞ն, արդյոք նա ցավե՞ց իր թշվառ կյանքի համար,— այդ բնավ հայտնի չէ, որովհետև նա շարունակ զառանցանքի ու տաքության մեջ էր գտնվում։ Մեկը մյուսից տարօրինակ տեսիլներ էին անդադար պատկերանում նրան. մերթ նա տեսնում էր Պետրովիչին և նրան պատվիրում էր շինել կարել՝ գողերին բռնելու ինչ-որ ծուղակներով, նրան շարունակ թվում էր, որ գողերը մահճակալի տակ են և նա ամեն րոպե կանչում էր տանտիրուհուն, որ մի գողին դուրս քաշի նույնիսկ վերմակի տակից. մերթ հարցնում էր, թե հին կապոտը ինչո՞ւ է կախված իր առջև, ինքը հո նոր շինել ունի. մերթ թվում էր նրան, որ կանգնած է գեներալի առաջ, լսելով պատշաճ շշպռոցը, ու ասում է՝ ներողություն, ձերդ գերազանցություն. մերթ, վերջապես, նույնիսկ հիշոցներ էր թափում՝ արտասանելով ամենասարսափելի բառեր, այնպես որ պառավ տանտիրուհին նույնիսկ խաչակնքում էր՝ կյանքում նրանից այդպիսի բաներ լսած չլինելով, մանավանդ որ այդ բառերը անմիջականորեն հետևում էին «ձերդ գերազանցություն» բառերին։ Այնուհետև նա կատարյալ անհեթեթություն էր ասում, այնպես որ ոչինչ չէր կարելի հասկանալ. կարելի էր միայն տեսնել, որ խառնիխուռն խոսքերն ու մտքերը պտտվում էին միևնույն շինելի

ջուրջ։ Վերջապես, խեղճ Ակակի Ակակիևիչը ավանդեց հոգին։ Ո՛չ նրա սենյակը, ո՛չ էլ իրերը չկնքեցին, որովհետև նախ՝ ժառանգներ չկային, երկրորդ՝ խիստ քիչ ժառանգություն էր մնում, այն է՝ մի դաստա պետական սպիտակ թուղթ, երեք գույգ գուլպա, անդրավարտիքից կտրված երկու երեք կոճակ և արդեն ընթերցողին հայտնի կապտոր։ Թե այս ամենը ում ձեռքն ընկավ, աստված գիտե. խոստովանում եմ, դրանով նույնիսկ չէր է՛լ հետաքրքրվում այս պատմությունը պատմողը։ Ակակի Ակակիևիչին տարան ու թաղեցին։ Ու Պետերբուրգը մնաց առանց Ակակի Ակակիևիչի, կարծես թե նա այնտեղ երբեք էլ չէր եղել։ Ջնջացավ և անհայտացավ մի արարած, որը ոչ ոքի կողմից պաշտպանված չէր, ոչ ոքի համար թանկ չէր, ոչ ոքի հետաքրքիր չէր, նույնիսկ չէր գրավել բնախույզի ուշադրությունը, որ առիթը բաց չի թողնում գնդասեղի վրա նատեցնելու սովորական ճանճը և մանրադիտակով զննելու նրան. մի արարած, որը հնազանդությամբ տանում էր գրասենյակային ծաղրանքները և առանց որևէ արտակարգ գործի իջավ գերեզման, բայց որի համար, այնուամենայնիվ, թեպետև հենց կյանքի վերջում, հայտնվեց պայծառ մի հյուր,— շինելը՝ մի ակնթարթ աշխուժացնելով թշվառ կյանքը, և որին հետո անտանելիորեն դժբախտություն պատահեց, ինչպես պատահում էր թագավորներին և աշխարհի տիրակալներին... Նրա մահից մի քանի օր հետո դեպարտամենտից նրա բնակարանն ուղարկվեց պահակը, հրամայված էր անհապաղ ներկայանալ, պետն էր պահանջում. բայց պահակը պետք է վերադառնար ձեռնունայն, հաշիվ տալով, որ նա այլևս չի կարող գալ և այն հարցին, թե «ինչո՞ւ չի կարող», պատասխանեց հետևյալ խոսքերով. «Այնպես, էլի, նա արդեն մեռել է, չորրորդ օրն է, որ թաղել են»։ Այսպիսով, դեպարտամենտում իմացան Ակակի Ակակիևիչի մահվան մասին, ու մյուս օրը արդեն նրա տեղում նստած էր մի նոր աստիճանավոր, որը հասակով շատ ավելի բարձր էր և տառերը դուրս էր բերում ոչ թե շիտակ ձեռագրով, այլ շատ ավելի թեք և շեղակի։

Բայց ո՞վ կարող էր երևակայել, որ այստեղ դեռ ամեն ինչ չի ասված Ակակի Ակակիևիչի մասին, որ նրան վիճակված է մի քանի օր աղմկալից ապրել իր մահից հետո, առնա

իբրև վարձատրություն ոչ ոքի կողմից չնկատված կյանքի համար։ Բայց այդպես պատահեց, և մեր ողբալի պատմությունը անսպասելիորեն ֆանտաստիկ վերջավորություն է ընդունում։ Պետերբուրգում հանկարծ լուրեր տարածվեցին, թե Կալինկին կամուրջի մոտ և ավելի հեռու տեղերում սկսել է երևալ պատիճանավորի տեսքով մի մեռել, որը փնտրում է ինչ-որ գողացված շինել ու բոլորի ուսերից, առանց աստիճանի ու կոչման խտրության, իբրև գողացված շինել, պոկում է ամեն տեսակ շինելներ կատվի, կուղբի մորթու օձիքներով, գամբկուն, ջրարջի, աղվեսի, արջի մորթիներով մուշտակներ, մի խոսքով, ամեն տեսակ մորթիներ ու կաշիներ, ինչ-որ հնարել են մարդիկ սեփական մարմինը ծածկելու համար։ Դեպարտամենտի աստիճանավորներից մեկը սեփական աչքերով տեսել էր մեռելին և ի դեմս նրա իսկույն ճանաչել Ակակի Ակակիևիչին. սակայն դա նրան այնպիսի վախ էր պատճառել, որ նա գլխապատառ փախել էր և այս պատճառով չէր կարողացել լավ նայել, այլ միայն տեսել էր, թե ինչպես մեռելը հեռվից մատով սպառնացել էր նրան։ Բոլոր կողմերից անդադար բողոքներ էին ստացվում, որ չէ՛ թե միայն տիտուլյար խորհրդատուների, այլև նույնիսկ հենց գաղտնի խորհրդականների մեջքերը և ուսերը մատնված են կատարյալ ցրտառուբյան՝ շինելների գիշերային հափշտակման պատճառով։ Ոստիկանատանը կարգադրություն արվեց բռնել մեռելին ինչ կերպ էլ լինի, կենդանի թե մեռած, ու ամենադաժան կերպով պատժել նրան որպես օրինակ ուրիշներին, ու քիչ մնաց որ նույնիսկ հաջողության հասնեին։ Այն է՝ Կիրյուշկինի նրբափողոցում ինչ-որ թաղամասի ոստիկանական պահակը բոլորովին մեռածի օձիքից բռնեց հենց չարագործության տեղում, երբ վերջինը փորձում էր պոկել ֆրիզե շինելը ինչ-որ մի պաշտոնաթող երաժիշտից, որը իր ժամանակին ֆլեյտա էր զբաղացնում։ Բռնելով մեռելի օձիքից, նա բղավոցով կանչեց մյուս երկու ընկերներին, որոնց հանձնարարեց պահել նրան, իսկ ինքը միայն մի րոպեով ձեռքը տարավ սապոգի մեջ, որպեսզի այնտեղից հաներ քթախոտի տուփը, առժամ թարմացներ իր կյանքում վեց անգամ մրսեցրած քիթը. բայց քթախոտը, ըստ երևույթին, այն տեսակից էր, որ մեռելն էլ չէր կարող հանդուր-

ժել։ Փահլակը հազիվ էր մատով ծածկել իր աչ քթածակը Ա կես պտղունց քթախոտ քաշել ձախ քթածակի մեջ, երբ մեռելն այնպես ուժեղ փռշտաց, որ երեքի աչքերի մեջ էլ քթախոտ շաղ տվեց։ Մինչդեռ նրանք բռունցքները տարան աչքերը տրորելու, մեռելի հետքն էլ կորավ, այնպես որ, նրանք մինչև անգամ չգիտեին, թե արդյոք իսկապես մեռելը եղե՞լ էր իրենց ձեռքում։ Այդ ժամանակներից աստիկանական պահակները այնպիսի վախով բռնվեցին մեռելների նկատմամբ, որ նույնիսկ սիրտ չէին անում կենդանի մարդկանց էլ բռնել, ու միայն հեռվից բղավում էին՝ «է՛, դու, գնա քո ճանապարհով», ու աստիճանավոր-մեռելը սկսեց երևալ նույնիսկ Կալինկին կամրջի մյուս կողմում՝ սարսափ տարածելով բոլոր երկչոտ մարդկանց վրա։ Բայց, այնուամենայնիվ, մենք բոլորովին մի կողմ թողինք մի նշանավոր դեմքը, որը, իսկապես ասած, հազիվ թե չլիներ բոլորովին ճշմարիտ այս պատմության ֆանտաստիկ ուղղության պատճառը։ Ամեննից առաջ արդարացիության պարտքը պահանջում է ասել, որ մի նշանավոր դեմքը շուտով, խեղճ ու բոլորովին շշպռված Ակակի Ակակիևիչի հեռանալուց հետո, խղճահարության պես ինչ-որ մի բան զգաց։ Կարեկցությունը նրան խորթ չէր. նրա սրտին մատչելի էին բարի շատ զգացումներ, չնայելով, որ աստիճանը խիստ հաճախ խանգարում էր դրանց դրսևորմանը։ Հենց որ եկվոր ընկերը դուրս եկավ նրա կաբինետից, նա նույնիսկ միտք աքեց խեղճ Ակակի Ակակիևիչի մասին։ Ով այդ ժամանակներից հետաքրքրություն ամեն օր նրան պատկերանում էր գունատ Ակակի Ակակիևիչը, որը չէր դիմացել պաշտոնեական շշպռման։ Նրա վերաբերյալ միտքը այն աստիճան էր անհանգստացնում նշանավոր դեմքին, որ մի շաբաթ անց վերջինս որոշեց մի աստիճանավոր ուղարկել նրա մոտ՝ իմանալու, թե ինչպե՞ս է նա և արդյոք չի՞ կարելի իսկապես մի բանով օգնել նրան. ու երբ նրան զեկուցեցին, որ Ակակի Ակակիևիչը տաքության մեջ հանկարծամահ է եղել, նա նույնիսկ ապշած մնաց, զգաց խղճի կշտամբանքներ և ամբողջ օրը վատ տրամադրության մեջ էր։ Ցանկանալով մի կերպ անուշադիր թողնել այդ և մոռանալ անախորժ տպավորությունը, նա գնաց երեկույթի իր ընկերներից մեկի մոտ, որտեղ կարգին հաստատակու-

*թյուն գտավ, և որ ամենից լավ էր, այնտեղ բոլորն էլ հա-մարյա նույն աստիճանն ունեին, այնպես որ նա չէր կարող որևէ կերպ կաշկանդվել։ Դա զարմանալի ազդեցություն գոր-ծեց նրա հոգեվիճակի վրա։ Նա բացվեց, խոսակցության մեջ դարձավ հաճելի, սիրալիր, մի խոսքով՝ երեկոն խիստ հա-ճելի անցկացրեց։ Ընթրիքի ժամանակ երկու բաժակ շամ-պայն խմեց, մի միջոց, որը, ինչպես հայտնի է, վատ չի ներգործում ուրախության վերաբերմամբ։ Շամպայնը նրան տրամադրեց այլևայլ արտակարգ գործերի, այն է՝ նա որո-շեց դեռ չգնալ տուն, այլ անցնել մի ծանոթ կնոջ, կարոլինա Իվանովնայի մոտ, որը, կարծեմ, գերմանական ծագում ուներ և որի հետ նա միանգամայն բարեկամական հարաբերու-թյուններ էր պահպանում։ Պետք է ասել, որ նշանավոր դեմքը արդեն երիտասարդ մարդ չէր, լավ ամուսին էր, պատվավոր ընտանեհայր, երկու որդին, որոնցից մեկը արդեն ծառայում էր գրասենյակում, և մի քիչ կոր, բայց սիրունիկ քիթ ունեցող տասնվեց տարեկան գեղատեսիլ դուստրը ամեն օր գալիս էին նրա ձեռքը համբուրելու, ասե-լով՝ bonjour, papa[1]. Նրա կինը, որ դեռ թարմ էր և նույ-նիսկ ամենևին էլ տգեղ չէր, սկզբում իր ձեռքը տալիս էր նրան, համբուրելու համար, հետո էլ այն շուռ տալով մյուս կողմը, համբուրում էր նրա ձեռքը։ Բայց նշանավոր դեմքը, որն ի միջի այլոց միանգամայն գոհ էր տնային ընտանե-կան քնքշություններից, պատշաճավոր էր համարել մտերմա-կան հարաբերությունների համար բարեկամուհի ունենալ քաղաքի մի այլ մասում։ Այդ բարեկամուհին ամենևին էլ ավելի լավ չէր ու ավելի չահել չէր նրա կնոջից. բայց այդ-պիսի խնդիրներ հո լինում են աշխարհում, և դրանց մասին դատելը մեր գործը չէ։ Այսպես ուրեմն, նշանավոր դեմքը իջավ սանդուղքից, սահնակ նստեց և ասաց կառապանին՝ «Գարոլինա Իվանովնայի մոտ», իսկ ինքը խիստ փարթամ, տաք շինելով փաթաթված, մնում էր այն դուրեկան վիճա-կում, որից ավելի լավը չես է՛լ կարող երևակայել ռուս մար-դու համար, այսինքն՝ երբ ինքդ ոչ մի բանի մասին չես մտածում, մինչդեռ մեկը մյուսից հաճելի մտքերն իրենք են

1 Թաթի՛ օր, հայրիկ։

մանում գլուխդ, չթողնելով անգամ, որ նեղություն քաշեմ, ընկենս նրանց հետևից ու փնտրեմ նրանց։ Բավականությամբ համակված, նա հարևանցիորեն վերհիշում էր անցկացրած երեկոյի բոլոր ուրախ պահերը, այն բոլոր խոսքերը, որոնք փոքրիկ շրջանին ստիպում էին քրքջալ. դրանցից շատերը նա մինչև իսկ կրկնում էր ցածր ձայնով և գտնում էր, որ դրանք էլի այնպես ծիծաղելի են, ինչպես և առաջ, ուստի և զարմանալի չէ, որ ինքն էլ էր սրտանց ծիծաղում։ Սակայն երբեմն նրան խանգարում էր ուժգնության քամին, որը հանկարծ դուրս պրծնելով աստված գիտե որտեղից և հայտնի չէ ինչ պատճառով, այնպես էլ ծակում էր նրա դեմքը՝ ձյան փաթիլներ շպրտելով վրան, առագաստի պես փուռացնելով շինելի օձիքը կամ հանկարծ գերբնական ուժով օձիքը գցելով նրա գլխին և այդ կերպ շարունակ հոգս պատճառելով դրա տակից գլուխը դուրս հանելու համար։ Հանկարծ նշանավոր դեմքը զգաց, որ մեկը բավական պինդ բռնեց նրա օձիքը։ Շուռ գալով, նա նկատեց հնամաշ համազգեստ-ֆրակով, ցածրահասակ մի մարդ և ոչ առանց սարսափի ճանաչեց Ակակի Ակակիևիչին։ Քինովնիկի դեմքը ճերմակ էր ինչպես ձյուն և բոլորովին նման էր մեռելի դեմքին։ Բայց նշանավոր դեմքի սարսափը անցավ բոլոր սահմաններից, երբ նա տեսավ, որ մեռելի բերանը ծռմռվեց և նրա վրա սարսափելիորեն գերեզմանի հոտ փչելով, այսպիսի խոսքեր արտասանեց. «Հը՛մ, ահա դու, վերջապես, վերջապես, ես, ը-ը, իքը, բռնեցի քո օձիքից, հենց քո շինելն է ինձ հարկավոր, է՛, հոգս չքաշեցիր իմ շինելի մասին, դեռ շշպռեցիր է՛լ, դե հիմա տուր քոնը»։ Եեղճ նշանավոր դեմքը քիչ մնաց մեռներ։ Որքան էլ նա անդրդվելի էր գրասենյակում և առհասարակ ստորին մարդկանց հանդեպ, ու թեև նայելով հենց միայն իր կորովի տեսքին ու կերպարանքին, ամեն ոք ասում էր՝ «Օ՛-օ՛, ինչ ուժեղ է»,— այնուամենայնիվ, այստեղ նա, ինչպես և հսկայի արտաքին ունեցող ուրիշ շատերը, այնպիսի վախ զգաց, որ ոչ առանց պատճառի նույնիսկ սկսեց երկյուղ կրել մի տրեխ հիվանդագին նպատակի վերաբերմամբ։ Նա ինքը մինչև իսկ արագորեն հանեց շինելը և արտառոց ձայնով գոռաց կա-

ռապանի վրա՝ «Քշի՛ր տուն ամբողջ արագությամբ» կառապանը լսելով այդ ձայնը, որը սովորաբար հնչում է վճռական րոպեներին և նույնիսկ ուղեկցվում է ինչ-որ շատ ավելի իրական բանով, համենայն դեպս գլուխն առավ ուսերի մեջ, թափահարեց մտրակը և սլացավ նետի պես։ Մոտ վեց րոպեում նշանավոր դեմքն արդեն իր տան շքադռան առջևում էր։ Գունատ, վախեցած և առանց շինելի, Կարոլինա Իվանովնայի մոտ գնալու փոխարեն նա եկավ իր բնակարանը, մի կերպ հասավ իր սենյակը և գիշերն անցկացրեց խիստ շատ անհանգիստ վիճակում, այնպես որ մյուս օրվա վազ առավոտյան, թեյի ժամանակ դուստրը նրան ուղղակի ասաց. «Դու այսօր բոլորովին գունատ ես, հայրիկ»։ Բայց հայրիկը լռում էր և ոչ ոքի ոչ մի խոսք չասաց, թե իրեն ինչ էր պատահել, ինքը որտեղ էր եղել և ուր էր ուզում գնալ։ Այս դեպքը նրա վրա ուժեղ տպավորություն թողեց։ Նա սկսեց նույնիսկ շատ ավելի հազվադեպ ասել ստորադրյալներին՝ «Ինչպե՞ս եք համարձակվում, հասկանո՞ւմ եք, թե ով է ձեր առջև». իսկ եթե ասում էլ էր, ապա ոչ. շուտ, քան սկզբից լսելով, թե բանն ինչ է։ Բայց է՛լ ավելի ուշագրավ է այն, որ այդ ժամանակներից բոլորովին դադարեց մեռած աստիճանավորի հայտնվելը. երևի գեներալական շինելը միանգամայն լավ էր նստում նրա վրա. գոնե ոչ մի տեղ չէին լսվում այնպիսի դեպքեր, որ հափշտակեին որևէ մեկի շինելը։ Սակայն գործունյա և շրջահայաց շատ մարդիկ ոչ մի կերպ չէին ուզում հանգստանալ և ասում էին, թե քաղաքի հեռավոր մասերում դեռ երևում էր մեռած աստիճանավորը։ Եվ իսկապես, Կոլոմնայի մի ոստիկանական պահակ սեփական աչքերով տեսավ, թե ինչպես մի տան հետևից ուրվական երևաց. բայց իր բնությամբ մի փոքր անզոր լինելով, այնպես որ մի անգամ սովորական, հասած մի խոճկոր դուրս պրծնելով ինչ-որ մասնավոր տանից, վայր գցեց նրան և փա՛ռ-փա՛ռ ծիծաղ առաջացրեց շուրջը կանգնած կառապանների կողմից, որոնցից պահակը այդ ծաղրանքի պատճառով մի-մի գրոշ պահանջեց քթախոտի համար,— այսպես ուրեմն անզոր լինելով, նա չհամարձակվեց կանգնեցնել ուրվականին, այլ այնպես, մթության մեջ նրա հետևից գնաց այնքան

ժամանակ, մինչև որ, վերջապես, ուրվականը հանկարծ ետ նայեց ու կանգ առնելով, հարցրեց. «Դու ի՞նչ ես ուզում», ու այնպիսի բռունցք ցույց տվեց, որպիսին կենդանի մարդկանց մոտ էլ չես գտնի։ Ոստիկանական պահակն ասաց «ոչի՛նչ», և իսկույն ետ դարձավ։ Ուրվականը, սակայն, հասակով շատ ավելի բարձր էր, հսկայական բեղեր ուներ, ու ինչպես թվաց, քայլերն ուղղելով դեպի Օբուխովյան կամուրջը, բոլորովին չքացավ գիշերային խավարում։

ՌԵՎԻԶՈՐ

Կատակերգություն երեք գործողություններով

Հայելու մեջը չէ, որ տեսնում ես

Ժողովրդական առած

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

ԱՆՏՈՆ ԱՆՏՈՆՈՎԻՉ ՍԿՎՈՉՆԻԿ-ԴՄՈՒԽԱՆՈՎՍԿԻ.— քաղաքապետ.
ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— նրա կինը.
ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— նրա դուստրը.
ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՉ ԽԼՈՊՈՎ.— ուսումնարանների տեսուչ.
ՆՐԱ ԿԻՆԸ.
ԱՄՄՍ ՖԵՈՒՐՈՎԻՉ ԼՅԱՊԿԻՆ-ՏՅԱՊԿԻՆ.— դատավոր.
ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ ՋԵՄԼՅԱՆԻԿԱ.— ասեղածաճաճո հաստատությունների հոգաբարձու.
ԻՎԱՆ ԿՈՒՉՄԻՉ ՇՊԿԻՆ.— փոստապետ.
ՊՅՈՏՐ ԻՎԱՆՈՎԻՉ ԴՈԲՉԻՆՍԿԻ, ՊՅՈՏՐ ԻՎԱՆՈՎԻՉ ԲՈԲՉԻՆՍԿԻ } քաղաքաբնակ կալվածատերեր.
ԻՎԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԻՉ ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Պետերբուրգից եկած պաշտոնյա.
ՕՍԻՊ.— նրա ծառան.
ԽՐԻՍՏԻԱՆ ԻՎԱՆՈՎԻՉ ՀԻՐՆԵՐ.— գավառական բժիշկ.
ՖԵՈԴՈՐ ԱՆԴՐԵԵՎԻՉ ԼՅՈՒԼՅՈՒԿՈՎ, ԻՎԱՆ ԼԱԶԱՐԵՎԻՉ ՌԱՍՏԱԿՈՎՍԿԻ, ՍՏԵՊԱՆ ԻՎԱՆՈՎԻՉ ԿՈՐՈԲԿԻՆ } —պաշտոնաթող աստիճանավորներ, քաղաքի պատվավոր անձեր.
ՍՏԵՊԱՆ ԻԼՅԻՉ ՈՒԽՈՎՅՈՐՏՈՎ.— քաղամասի ոստիկանապետ.

ՍԱՎԻՑՏՈՒՆՈՎ
ՊՈՒԳՈՎԻՑԻՆ } —ռատիկաններ.
ԴՆՐԺԻՄՈՐԴԱ

ԱՐԴՈՒԼԻՆ.— վաճառական.
ՏԵՎՐՈՆՅԱ ՊԵՏՐՈՎՆԱ ՊՈՇԼՅՈՊԿԻՆԱ.— փակաճապարժի կին.
ՈՒՆՏԵՐ ՕՖԻՑԵՐԻ ԿԻՆԸ.
ՄԻՇԿԱ.— բաղարապետի ծառան.
ՊԱՆԴՈԿԻ ԾԱՌԱ.
Հյուրեր, վաճառականներ, բազմենիներ, խնդրատուներ:

ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶԳԵՍՏՆԵՐ

ՅՈՒՅՈՒՄՆԵՐ Պ. Պ. ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Քաղաքապետ. ծառայության մեջ արդեն տարիքն առած և յուրովի բավական խելամիտ մի մարդ: Կաշառակեր է, բայց իրեն շատ ձանր է պահում. բավականաչափ լուրջ է, մասամբ նույնիսկ խրատախոս. խոսում է ոչ բարձրաձայն և ոչ էլ ցածրաձայն, ոչ շատ և ոչ էլ քիչ: Նրա ամեն մի ասածը նշանակալից է: Նրա դիմագծերը կոշտ ու խոժոռ են, ինչպես ամեն մի մարդու, ով իր ծանր ծառայությունը սկսել է ստորադաս պաշտոններից: Փոխանցումը երկյուղից՝ պարտքության, ստորաքարշությունից՝ գոռոզության՝ բավական արագ է կատարվում, որ հատուկ է հոգեկան բիրտ հակումներով մարդկանց: Կրում է ըստ պատշաճի սահմանված համազգեստ: Հատուկ մեքենաներով, նաև թթանավոր երկարաճիտ կոշիկներ: Մազերը խուզած են, ածխատես:

Անտա Անդրեեվնա. Նրա կինը, գավառական մի պչրուհի, դեռևս ոչ բոլորովին տարիքավոր, գաստիարակված է մեծ մասամբ՝ սիրավեպերով ու ալբոմներով, մասամբ էլ տանտիկնության հոգսերով: Շատ հետաքրքրասեր է, պատեհ դեպքում ցուցաբերում է փառասիրություն: Որքան էլ կարողանում է իշխել ամուսնու վրա, որովհետև ամուսնուն չի հաջողվում առարկել նրան: Սակայն այդ իշխանությունը տարածվում է մանրուքի վրա և արտահայտվում է հանդիմանություններով ու ծաղրանքով: Գլխի ընթացքում լուրթ անգամ զգեստափոխվում է:

Ախտակով. մոտ քսաներեք տարեկան մի երիտասարդ, նիհար ու բարակ, փոքր-ինչ հիմարամիտ և, ինչպես ասում են, անտեր գլխով: Մեկն է այն մարդկանցից, որոնց դիվանատներում անվանում են դատարկապորտ: Խոսում ու գործում է առանց որևէ չափ կշռադատելու: Նա ի վիճակի չէ ուշադրությունը կենտրոնացնել մեկ մտքի վրա: Խոսում է կծկոտուր, բառերը գուրս են թռչում նրա բերանից միանգամայն անակն-

կալ։ Այդ դերը կատարողը որքան ավելի ցույց տա պարզասրտություն ու անմիջականություն, այնքան ավելի կշահի։ Հաջնված է մոդալով։

Սսիպ. Ծառա է՝ նման սովորական բոլոր տարիքավոր ծառաներին։ Խոսում է լրջությամբ, հայացքը միշտ փոքր-ինչ դեպի վար, խրատախոս է և սիրում է մեկուսի քարոզ կարդալ իր տիրոջ հասցեին։ Ձայնը գրեթե միշտ միահավասար է, տիրոջ հետ խոսելիս ընդունում է խիստ, հատհատ, մինչև իսկ փոքր-ինչ կոպիտ բնույթ։ Նա իր տիրոջից խելոք է, ուստի և ավելի շուտ է կոահում, բայց չի սիրում շատ խոսել և ետ եկած սուսիկի մեկն է։ Հագուստը՝ կապույտ կամ գորշագույն սերթուկ։

Ռոբչինսկի և Դոբչինսկի. երկուսն էլ ցածլիկ, կարճահասակ. շատ հետաքրքրասեր են և սաստիկ իրար նման։ Երկուսն էլ քեհեակի հագուստափոր են։ Խիստ արագախոս են և խոսելիս չափազանց շատ են շարժ ու ձևի դիմում։ Դոբչինսկին մի փոքր ավելի բարձրահասակ և լուրջ է, քան Ռոբչինսկին, իսկ Ռոբչինսկին ավելի աշխույժ և համարձակ, քան Դոբչինսկին։

Կապկին-Տյապկին. դատավոր է, մի հինգ-վեց գիրք է կարդացել, ուստի և փոքր-ինչ ազատամիտ է։ Սաստիկ սիրահար է կոահումներ անելու, ուստի իր ամեն մի խոսքին կշիռ է հաղորդում։ Նրան ներկայացնողը շարունակ պիտի պահպանի դեմքի նշանակալից արտահայտություն։ Խոսում է քավ, խռպոտ ձայնով, երկարաձգելով և ֆսսացնելով՝ նման հնամենի ժամացույցի, որ նախ ջշշում է և ապա միայն զարկում։

Չեմպյաճիկա. աստվածահաճո հաստատությունների հոգաբարձու. լաւ գեր, դժվարաշարժ և անճոռնաձև մարդ է. բայց այսուհանդերձ ալկուն ու խարդախ է։ Խիստ հաճոյակատար է ու խլրտուն։

Փոսոպպետ. միամտության չափ պարզահոգի մի մարդ։

Մյուս դերերը հատուկ բացատրություններ չեն պահանջում։ Նրանց նախատիպերը գրեթե ամենուրեք մեր աչքի առաջ են։

Պարեռնայք դերասանները հատուկ ուշադրություն պիտի գարձնեն վերջին տեսարանի վրա։ Արտասանված վերջին խոսքը պետք է էլեկտրական ցնցում պատճառի բոլորին միաժամանակ և հանկարծ։ Ամբողջ խումբը պետք է փոխի իր դիրքը մի ակնթարթում։ Բոլոր կանայք ապշանքի բացականչություն պիտի արձակեն միաժամանակ, ասես մի կրծքից գուրս թռած լինեն։ Այս ցուցումները չկատարելու դեպքում կարող է կորչել ամբողջ էֆեկտը։

ԱՐՄՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

Սենյակ քաղաքապետի տանը

ՏԵՍԻԼ I

Քաղաքապետ, ստվածաճաճռ ճստաստաստությունների հոգաբարձու, ուսումնարանների տեսուչ, դատավոր, բազմատաք ստիկանապետ, բժիշկ, բազային երկու ստիկան

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ես հրավիրել եմ ձեզ, պարոններ, անախորժագույն մի լուր հաղորդելու համար։ Մեր քաղաքը գալիս է revizor։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ. —Ի՞նչ revizor։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— Ի՞նչ revizor։

ՔԱՂԱՔԱՊԵՏ— Revizor Պետերբուրգից ինկոգնիտո[1], եվ այն էլ՝ գաղտնի հրամանագրով։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— Ա՛յ քեզ լուր։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— Հոգսներս քիչ էր՝ համմեցե՛ք։

ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՉ.— Տե՛ր իմ աստված, այն էլ՝ գաղտնի հրամանագրով։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ես կարծես քեզ նախազգում էի. այս ամբողջ գիշեր երազումս շարունակ աչքիս էին երևում արտասովոր տեսքով երկու առնետներ։ Ճիշտն ասեմ, նման առնետ երբեք տեսած չեմ. սև, անբնական մեծությամբ. եկան, հոտոտեցին ու հեռացան։ Ահա կարդամ ձեզ մի նամակ, որ ստացել եմ Անդրեյ Իվանովիչ Զմիխովից, որին դուք, Արտեմի Ֆիլիպովիչ, ճանաչում եք։ Ահա թե ինչ է գրում. «Միրելի՛դ իմ բարեկամ, սանահայր և բարերար» (մրմնջում է կիսաձայն, արագ աչքի անցկացնելով) «... և տեղեկացնել քեզ»։ Ահա սա է. «Ի միջի այլոց շտապում եմ տեղեկացնել քեզ, որ եկել է մի աստիճանավոր, հատուկ հրամանագրով՝ ստուգել ամբողջ նահանգը և նամանավանդ մեր գավառը» (նշանակալի ձևով մատը վեր է ցցում)։ «Ես այդ իմացել եմ ամենահավաստի մարդկանցից, թեպետև նա ներկայանում է որպես մասնավոր մի

---

[1] *Ինկոգնիտո — ծածկաբար, ուրիշ անվան տակ։ Այս և մյուս բոլոր ծանոթությունները թարգմանչինն են։*

անձ։ Եվ քանի որ գիտեմ, դու, ինչպես և յուրաքանչյուր ոք, զերծ չես փոքրիկ մեղքերից, որովհետև խելոք մարդ ես և չես սիրում ձեռքդ ընկածը բաց թողնել...» (կանգ առնելով).— դե, այստեղ բոլորս էլ տանու մարդ ենք... «ապա խորհուրդ եմ տալիս քեզ նախազգուշական միջոցներ ձեռք առնել, քանի որ ամեն մի րոպե սպասելի է նրա գալուստը, եթե միայն արդեն եկած չէ և չի իջևանել որևէ տեղ ինկոգնիտո... Երեկվա օրը ես...»։ Դե այստեղ արդեն քնտանեկան գործեր սկսվեցին. «քույրս՝ Աննա Կիրիլովնան, ժամանել է իր ամուսնու հետ միասին, Իվան Կիրիլովիչը սաստիկ գիրացել է և հա՛ յուրթակ է նվագում...» և այլն, և այլն։ Ահա թե ինչպիսի հանգամանք է։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— Հա՛, այնպիսի՞ հանգամանք է, պարզապես արտառոց։ Այստեղ բան կա թաքնված։

ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՉ.— Բայց ինչո՞ւ, Անտոն Անտոնովիչ, ինչի՞ց է այդ, ինչո՞ւ է մեզ մոտ ուխիզոր գալիս։

ՔԱՂԱՔԱՑԻՏ.— Ինչո՞ւ։ կերևի մեր ճակատագիրն է։ (Հառաչելով)— Մինչ օրս, գոհություն աստծուն, ուրիշ քաղաքներ էին տնտղում։ Այժմ հերթը մեզ հասավ։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— Ես կարծում եմ, Անտոն Անտոնովիչ, այստեղ մի նուրբ և առավելապես քաղաքական պատճառ կա։ Ահա թե ինչ է նշանակում. Ռուսաստանը... այո՛... միտք ունի պատերազմ սկսելու, և մինիստրությունն ահա, հաճեցեք դիտել, պաշտոնյա է ուղևորել՝ տեղեկանալու, արդյոք որևէ տեղ դավաճանություն չկա՞։

ՔԱՂԱՔԱՑԻՏ.— Է՛Է՛Է՛, ո՛ւր գնացիք։ Եվ դեռ խելոք էլ մարդ եք։ Գավառական քաղաքում դավաճանություն։ Սահմանամերձ վա՞յր է, ի՞նչ է։ Այստեղից երեք տարի քշիր հա՛ քշիր, ոչ մի պետության չես հասնի։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— Ո՛չ, թույլ տվեք ասել, դուք մի տեսակ... դուք չե՛ք... իշխանությունը նուրբ միտումներ ունի. շատ էլ որ հեռու է, խակ նա խելք է բանեցնում։

ՔԱՂԱՔԱՑԻՏ.— Բանեցնում է թե չի բանեցնում, ես ձեզ, պարոններ, նախազգուշացրի։ Դե, ձեզ տեսանեմ։ Իմ կողմից ես որոշ կարգադրություններ արդեն արել եմ։ Նույնը խորհուրդ եմ տալիս ձեզ։ Մանավանդ ձեզ, Արտեմի Ֆիլիպո-

վիչ։ Կասկած չկա, եկած ապրիճանավորը նախ և առաջ կգտնկանա ստուգել ձեզ ենթակա աստվածահաճո հաստատությունները, ուստիև այնպես արեք, որ ամեն ինչ պատշաճ լինի. թասակները մաքուր լինեն և հիվանդները չնմանեն դարբինների, ինչպես որ սովորաբար մարդ են գալիս տնավարի։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— Դե, այդ դժվար չէ։ Մաքուր թասակներ, թերևս, կարելի լինի հագցնել։

ՔԱՂԱՔԱՑԻՏ.— Այն էլ ասեմ, որ ամեն մի մահճակալի գլխին պետք է մակագրել լատիներեն կամ մի այլ լեզվով... այդ արդեն ձեր գիտենալու բանն է։ Հրիստիան Իվանովիչ.— ամեն մի հիվանդության անունը, ո՛վ ե՛րբ է հիվանդացել, ո՛ր օրը և ո՛ր ժամին... լավ չէ, որ ձեր հիվանդներն այնքան քունդ ծխախոտ են ծխում, որ ներս մտնողը իսկույն սկսում է փռշտալ։ Եվ լավ կլիներ, եթե հիվանդների թիվը պակասած լիներ. կարող են վերագրել վատ խնամքին կամ բժշկի անշնորհքությանը։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— Օ՛, բժշկելու նկատմամբ ես ու Հրիստիան Իվանովիչը միջոցներ ունենք ձեռք առած. որքան բնությանը մոտ, այնքան լավ. քանկարժեք դեղորայք մենք չենք գործածում։ Հասարակ մարդը թե մեռնելու է, այնպես էլ կմեռնի, թե ապաքինվելու է, այնպես էլ կապաքինվի։ Այն էլ ասեմ, որ Հրիստիան Իվանովիչը խիստ կդժվարանար նրանց հետ բացատրվելու. ոուսերեն ոչ մի բառ չգիտե մարդը։

Հրիստիան Իվանովիչը մի ձայն է արձակում, որ նման է մասամբ «ի», մասամբ էլ «ե» ձայնաձեռիճ։

ՔԱՂԱՔԱՑԻՏ.— Ձեզ, Արտեմ Ֆեոդորովիչ, նույնպես խորհուրդ կտայի ուշք դարձնել ձեր պաշտոնավայրի վրա։ Ձեր նախասենյակում, օրինակ, որտեղ սովորաբար խնդրատուներն են հավաքվում, տոյանի պահապանները սովորություն են արել տնային սագեր պահել իրենց ձագուկներով, որոնք շարունակ վխտում և մարդկանց ոտքի տակ են ընկնում։ Ի՞նչ խոսք, տնային տնտեսությամբ զբաղվելը գովելի բան է և պատճառ չկա, որ պահապանը չզբաղվի դրանով, բայց թե, գիտեք, այդ տեսակ վայրում՝ անվայել է... Ես

առաջ էլ ուզեցել եմ ձեզ այդ ասել, բայց միշտ էլ մի տեսակ մոռացել եմ։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՋ.— Այսօր ևեթ կհրամայեմ քշել-բերել խոհանոցս։ Կուզե՞ք համեցեք ճաշի։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Բացի այդ, լավ չէ, որ ձեր հենց իսկ ատյանում ինչ ասես որ՝ չեն չորացնում, և գործերի պահարանի գլխին շան մտրակ է կախ տված։ Ես գիտեմ, դուք որսի հիրահար եք, սակայն բարվոք կլիներ ժամանակավորապես այն վերցնել այդտեղից, իսկ հետո, երբ ռևիզորը կգա ու կերթա՝ թերևս կարելի է նորից կախ տալ։ Նմանապես ձեր ատենակալը... Նա, իհարկե, բանիմաց մարդ է, սակայն նրանից այնպիսի մի հոտ է փչում, կարծես թե հենց նոր օղու գործարանից դուրս եկած լինի— այդ նույնպես լավ չէ։ Ես վաղուց կամենում էի այդ մասին ձեզ ասել, բայց մի ուրիշ բանով զբաղվեցի, չեմ հիշում թե ինչով։ Դրա դեմ միջոցներ կան, եթե իրոք, ինչպես ինքն է ասում, այդ նրա բնական հոտն է։ Կարելի է խորհուրդ տալ նրան՝ սոխ կամ սխտոր ուտել, կամ մի այլ նման բան։ Այս դեպքում այլևայլ դեղօրայքով կարող է օգնել Խրիստիան Իվանովիչը։

Խրիստիան Իվանովիչը ճույճ ձայնն է ճաճում

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՋ.— Չէ՛, այդ արդեն անհնարին է վերացնել։ Նա ատում է, որ երեխա ժամանակ ծծմայրը նրան վայր է գցել, և այդ օրվանից ահա մի քիչ օղու հոտ է փչում նրանից։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Դե ես, դեպքը բերեց, ասացի։ Իսկ ինչ վերաբերում է ներքին կարգադրություններին և նրան, ինչ Անդրեյ Իվանովիչն իր նամակում փոքրիկ մեղքեր է անվանում՝ ոչինչ չեմ կարող ասել։ Եվ տարօրինակ կլիներ մի բան ասել,— մարդ չկա, որ հոգու վրա մեղք ունեցած չլինի։ Այդ արդեն աստված է սահմանել, և վոլտերականներն[1] իզուր են դրա դեմ խոսում։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՋ.— Սակայն ի՞նչն եք դուք մեղք համարում, Անտոն Անտոնովիչ։ Մեղք կա, մեղք էլ կա։ Ես

---

1 Վոլտերականներ — այսինքն՝ ֆրանսիական գրող և փիլիսոփա Մարի-Ֆրանսուա Վոլտերի (1694—1778) հետևորդները։ Նեղկա դեպքում վոլտերական բառը գործ է ածված որպես ազատամիտ բառի հոմանիշ։

բացեիբաց ասում եմ. այո՛, կաշառք վերցնում եմ։ Բայց ի՞նչ տեսակ կաշառք։ Որսի շան ձագեր։ Այդ արդեն այլ բան է։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Դե, շան ձագ լինի, թե մի այլ ինչ— կաշառքը կաշառք է։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— Չէ, մի ասեք, Անտոն Անտոնովիչ։ Այ, խոսքի օրինակ, եթե մեկը հինգ հարյուր ռուբլիանոց մուշտակ ունի, ու նրա տիկնոջն էլ մի շալ են...

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Հետո՞ ինչ, որ դուք շան ձագեր եք կաշառք վերցնում։ Բայց որ աստծուն չեք հավատո՞ւմ, եկեղեցի երբեք ոտք չեք դնում։ Ես գոնե հավատքիս մեջ հաստատ եմ և ամեն կիրակի եկեղեցի եմ գնում։ Իսկ դուք... Օ՛, ես ձեզ ճանաչում եմ. քե որ աշխարհի ստեղծվելուց ճառել սկսեք, մարդու մազերը բիզ-բիզ կկանգնեն։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— Բայց չէ՞ որ ինքս ինձ, իմ սեփական խելքով եմ վերահասու եղել։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Դե, շատ խելքն էլ որոշ դեպքում ավելի վատ է, քան բնավ խելք չունենալը։ Ասենք, ես ի միջի այլոց հիշեցի գավառական դատարանը։ Ճիշտ որ ասելու լինենք՝ դժվար թե այդտեղ մտնող էլ լինի. արդեն դա այնպիսի մի երանելի վայր է, ինքը աստված հովանավորում է նրան։ Իսկ ահա դուք, լուկա Լուկիչ, որպես ուսումնարանների տեսուչ, պետք է որ առանձնակի հոգ տանեք ուսուցիչների մասին։ Նրանք, իհարկե, ուսյալ մարդիկ են և դաստիարակվել են այլևայլ ճեմարաններում; սակայն տարօրինակ սովորություններ ունեն, որոնք, հարկավ, հատուկ են ուսումնական կոչումին։ Նրանցից մեկը, օրինակ, այն մատ երես ունեցողը, ազգանունը չեմ հիշում, իր գործը չի տեսնի, մինչև որ, ամբիոն բարձրանալիս, դեմքը չծամածռի, ահա այսպես... (ծամածռում է դեմքը)։ Հետո էլ ձեռքով սկսում է փողկապի տակից շոյել իր մորուքը։ Իհարկե, եթե նա աշակերտին այդ տեսակ մուութ ցույց տա, այդ դեռ վնաս չունի, գուցե հենց այդպես էլ պետք է, այդ մասին ես դատել չեմ կարող, բայց ինքներդ դատեցեք, եթե նա այդպես վարվի այցելուի հետ, կարող է շատ վատ հետևանք ունենալ. պարոն ուսիչորը կամ մի այլ ոք կարող է իր հասցեին ընդունել։ Դյանից, սատանան գիտե, թե ինչ կծագի։

ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՉ.— Ինչպե՞ս վարվեմ նրա հետ, պար-

դապես չգիտեմ. քանիցս նրան ասել եմ այդ մասին։ Դեռ մի երկու օր առաջ էր, երբ մեր պարապմունքը պատահմամբ այցելեց պարապմունքներին, այդ մարդը այնպիսի մի ուխ արքեց, որ օրումս նմանը տեսած չունեի։ Նա այդ բարեսրտությամբ արեց, իսկ ես հանդիմանություն ստացա, թե պատանեկությանը ինչո՞ւ են ազատամիտ մտքեր ներշնչվում։

ՔԱՂԱՔԱՑԻՏ.— Նույնպես պիտի նկատեմ ձեզ պատմական մասի դասատուի մասին։ Ուսյալ գլուխ է, այդ երեվում է, և բյուր գիտելիքներ ունի ձեռք բերած. սակայն այնշափ կրակոտ է դաս բացատրում, որ ինքն իրեն կորցնում է։ Մի անգամ ես նրան ունկնդրել եմ։ Ի՞նչ ասեմ. քանի դեռ խոսում էր ասորեստանցոց ու բաբելացոց մասին, վնաս չուներ, բայց հենց որ հասավ Ալեքսանդր Մակեդոնացուն, էլ չեմ կարող նկարագրել, թե ինչ պատահեց մարդուն։ Կարծես թե հրգեհ պատահած լիներ։ Աստված վկա։ Վար ցատկեց ամբիոնից և, ինչքան կոներումն ուժ կար, աթոռը գետնով տվեց։ Ի՞նչ խոսք, Ալեքսանդր Մակեդոնացին, իհարկե, հերոս էր, բայց ի՞նչ կարիք աթոռները չարդելու. դրանից միմիայն պետական գանձարկղին է վնաս հասնում։

ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՉ.— Այո՛, տաքարյուն մարդ է։ Մի քանի անգամ նկատողություն եմ արել նրան... Ասում է. «Ինչ կուզեք արեք, բայց գիտության համար կյանքս չեմ խնայի»։

ՔԱՂԱՔԱՑԻՏ.— Այո՛։ Այդպես է ահա ճակատագրի անմեկնելի օրենքը. խելոք մարդը կամ հարբեցող է լինում և կամ այնպիսի մի մոուբ ցույց տվող, որ սրբապատկերն անգամ չի գիմանա դրան։

ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՉ.— Աստված հեռու պահի մարդուն ուսումնական գործում աշխատելուց. ամեն ինչից վախենում ես։ Ամեն մեկը մեջ է ընկնում, ամեն մեկն ուզում է ցույց տալ, որ ինքն էլ խելոք մարդ է։

ՔԱՂԱՔԱՑԻՏ.— Այդ դեռ ոչինչ։ Անիծյալ ինքնագիտակն։ Հանկարծ քիթը խորթի— Ա՛, դուք այստե՞ղ եք, աղավնյակներս։ Իսկ ո՞վ է, կասի, այստեղի դատավորը։— Լյապկին-Տյապկինն է։— Հապա՛ մի դեսը տվեք Լյապկին-Տյապկինին։— Իսկ ո՞վ է աստվածահաճո հաստատությանց հոգաբարձուն։— Զեմլյանիկան։— Հապա՛ մի դեսը տվեք Զեմլյանիկային։ Ահա թե վատը որն է։

Նույնը և փոստապետ

ՓՈՍՏԱՊԵՏ.— Բացատրեցեք, պարոններ, այդ ի՞նչ աստիճանավոր է գալիս։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Իսկ մի՞թե դուք դեռևս չեք լսել։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Լսել եմ Պյոտր Իվանովիչ Բոբչինսկուց։ Հենց նոր ինձ մոտ էր, փոստի գրասենյակում։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Եվ ի՞նչ, ի՞նչ կարծիքի եք այդ մասին։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Ինչ կարծիքի՞ եմ.— պատերազմ է լինելու թուրքերի դեմ։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՋ.— Ճիշտ իմ խոսքը. ես էլ նույնը մտածեցի։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Եվ երկուսդ էլ գլուխներիդ զոռ տվիք։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Ճիշտ, ճիշտ, պատերազմ թուրքերի դեմ։ Այդ ամենը ֆրանսիացին է խառնում։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ի՞նչ պատերազմ թուրքերի դեմ։ Պարզապես մեր բանն է բուրդ, ոչ թե թուրքերինը։ Այդ արդեն հայտնի է, ես նամակ ունեմ ստացած։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Ա՛, եթե այդպես է, ապա թուրքերի դեմ պատերազմ չի լինի։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Դե, հիմա ինչպե՞ս, ի՞նչ եք մտադիր, Իվան Կուզմիչ։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Ես ի՞նչ. դուք ասացեք, Անտոն Անտոնովիչ։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ես ի՞նչ ասեմ։ Երկյուղ չունեմ, բայց այնպես, մի թեթև... վաճառականներից ու քաղաքացիներից երկյուղ ունեմ։ Ասում են, թե ես նրանց շատ եմ նեղը գցել, այնինչ, աստված է վկա, եթե երբեմն կաշառք վերցրել եմ, ապա, հավատացեք, առանց որևէ թշնամանքի։ Ես մինչև իսկ կարծում եմ... (առնում է նրա թևը և մի կողմ տանում)— ես մինչև իսկ կարծում եմ. արդյոք որևէ մատնագիր չե՞ն ներկայացրել իմ մասին։ Իրոք, ինչո՞ւ են մեզ մոտ ուխիզոո ուղարկում։ Ինձ լսեք, Իվան Կուզմիչ, հնարավոր չէ՞ արդյոք, մեր բոլորիս օգտի համար, ձեր փոստային գրասենյակը մրցող ամեն մի նամակ, ստացված թե ուղարկվելիք, այնպես, գիտեք էլի, մի թեթև բաց անել ու աչքի անցկացնել, տեսնել՝

չի՞ պարունակում արդյոք որևէ զեկուցագիր կամ պարզապես փոխնամակագրություն։ Եթե ոչ՝ ապա կարելի է նորից ծրարել կամ թե հենց այդպես, բաց վիճակումն էլ կարելի է հանձնել։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Գիտե՛մ, գիտե՛մ, ինձ մի՛ սովորեցրեք. այդ ես անում եմ, սակայն ոչ նախազգուշությունից։ Գլուխս մահու տալու չափ սիրում եմ տեղեկանալ, թե ինչ նորություն կա աշխարհիս երեսին։ Պետք է ձեզ ասեմ, շատ հետաքրքրքրական ընթերցանություն է. նամակ է պատահում, որ մեծագույն հաճույք է պատճառում։ Այնպիսի անցուդարձեր են նկարագրվում... և որքա՜ն խրատական բան... Ավելի շահեկան, քան «Մոսկովյան Տեղեկագրերում»[1]։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Եվ ի՞նչ, ասացեք խնդրեմ, ձեր կարդացածների մեջ որևէ բան չկա՞ Պետերբուրգից ժամանող պաշտոնյայի մասին։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Ո՛չ, Պետերբուրգին վերաբերող ոչինչ չկա, սակայն, Կոստրոմային և Սարատովին՝ ինչքան ասես։ Ափսո՜ս, ափսո՜ս, որ նամակներ չեք կարդում։ Հրաշալի տողեր են լինում։ Օրինակ, մոտ օրերս մի պորուչիկ իր ընկերոջը ուղարկած նամակում նկարագրել է մի պարահանդես ամենաաշխույժ ոճով... շատ, շատ հաճելի ձևով։ Իմ կյանքը, սիրելիդ իմ բարեկամ,— ասում է,— ընթանում է երկնախավերում. օրիորդներն՝ անպակաս, երաժշտությունը նվագում է, շտանդարտը[2] սլանում է... մե՛ծ, մե՛ծ զգացմունքով է նկարագրված։ Ես դիտմամբ պահել եմ մոտս։ Ուզո՞ւմ եք, կարդամ։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ո՛չ, հիմա դրա ժամանակը չէ։ Ուրեմն, շնորհ արեք, Իվան Կուզմիչ. եթե բան է, հանդիպեք որևէ գանգատի կամ զեկուցագրի, առանց այլևայլի պահեցեք։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Մեծ հաճույքով։

---

[1] *Խոսքը* «Московские Ведомости» *թերթի մասին է։ Հրատարակվել է 1756-ից մինչև 1917 թվականի փետրվարը։*

[2] *Շտանդարտ— զինանշանով դրոշ ընդհանրապես կամ հեծելազորի դրոշակ մասնավորապես։ Դրոշակակիր զինվորականը կոչվում էր շտանդարտ-յունկեր։ «Շտանդարտը սլանում է» ասելով փոստապետը նկատի ունի հենց այդ շտանդարտ-յունկերին։*

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— Ձգուշացեք, մի օր կտուժեք դրա համար։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Ա՜հ, տեր աստված։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Վնաս չունի, վնաս չունի։ Այլ բան է, եթե հրապարակվելու լիներ, բայց հիմա չէ՞ որ դա սոսկ ընտանեկան մի գործ է։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— Հա՛, վատ գլխացավանք հրապարակ եկավ։ Իսկ ես, խոստովանք լինի, այն է՝ գալիս էի ձեզ մոտ՝ հրամցնելու մի շնիկ։ Հարազատ քույրն է այն որձ շան, որին դուք լավ ճանաչում եք։ Լսել եք, չէ՞, որ Ջեպտովիչն ու Վարխովինսկին հոդավեճ են սկսել. իմ բախտն է բանել. հա՛ նապաստակներ եմ որսում թե՛ մեկի և թե՛ մյուսի հոդերի վրա։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ա՜խ, բարեկամ, աչքիս հիմա նապաստա՞կ կգա։ Անիծյալ ինկո՜գնիտոն է մխվել գլխումս։ Հենց այն է՝ սպասում եմ, որ դուռը կբացվի և շրա՛խկ...

ՏԵՍԻԼ III

Նույնը, Բոբչինսկի և Դոբչինսկի, երկուսն էլ շնչակտուր

ԲՈԲՉԻՆՍԿԻ.— Արտակա՜րգ դիպված։

ԴՈԲՉԻՆՍԿԻ.— Անակնկա՛լ լուր։

ԱՄԵՆՔԸ.— Ի՞նչ կա, ի՞նչ է պատահել։

ԴՈԲՉԻՆՍԿԻ.— Անակնկալ բան. գալիս ենք հյուրանոց...

ԲՈԲՉԻՆՍԿԻ.— (ընդհատելով)— Գալիս ենք Պյոտր Իվանովիչի հետ հյուրանոց...

ԴՈԲՉԻՆՍԿԻ.— (ընդհատելով)— Է՛, թույլ տվեք, Պյոտր Իվանովիչ, ես պատմեմ...

ԲՈԲՉԻՆՍԿԻ.— Է՛, ո՛չ, թո՛ւյլ տվեք ես... թո՛ւյլ տվեք... թո՛ւյլ տվեք... դուք հարկ եղած ոճն էլ չունեք...

ԴՈԲՉԻՆՍԿԻ.— Իսկ դուք թելը կկորցնեք և բոլորը չեք հիշի։

ԲՈԲՉԻՆՍԿԻ.— Կհիշեմ, աստված է վկա, կհիշեմ։ Մի՛ խանգարեք, թողե՛ք ես պատմեմ։ Մի՛ խանգարեք։ Շնո՛րհ արեք, պարոններ, ասացեք, Պյոտր Իվանովիչին, որ չխանգարի։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Դե՛, ասացեք, ի սեր աստծո, ի՞նչ է

պատահել։ Սիրաս տեղահան արիք։ Նստեցե՛ք, պարոննե՛ր։ Աքո՛ռ առեք։ Պյոտր Իվանովիչ, ահա ձեզ աթոռ։ (Ամենքը նստոտում են զույգ Պյոտր Իվանովիչների շուրջ)։ Դե՛ ի՞նչ կա, ի՞նչ է պատահել։

ԲՈՐՋԻՆՍԿԻ.— Ո՛չլլ տվեք, ո՛չլլ տվեք. հիմա մեկ-ամենք կասեմ։ Հենց որ հաճույք ունեցա դուրս գալու ձեր տնից— այն րոպեից հետո, երբ դուք հաճել էիք շփոթվել ձեր ստացած նամակից, այո՛— հենց նույն միջոցին դիպա... Չէ՛, խնդրում եմ, մի՛ ընդհատեք, Պյոտր Իվանովիչ։ Ես ամեն ինչ, ամեն ինչ, ամեն ինչ հիշում եմ։— Այսպես ուրեմն, հաճեցեք դիտել, դիպա Կորոբկինի մոտ։ Բայց չգտնելով Կորոբկինին տանը, անցա Ռաստակովսկու մոտ, Ռաստակովսկուն էլ տանը չգտնելով, այցելեցի՝ ահա Իվան Կուզմիչին՝ հայտնելու նրան ձեր ստացած նոր լուրը, և նրա մոտից դուրս ելնելով՝ հանդիպեցի Պյոտր Իվանովիչին...

ԴՈՐՋԻՆՍԿԻ.— Այն կրպակի մոտ, որտեղ կարկանդակ են վաճառում։

ԲՈՐՋԻՆՍԿԻ.— Այն կրպակի մոտ, որտեղ կարկանդակ են վաճառում։ Հանդիպելով Պյոտր Իվանովիչին, ասում եմ նրան. լսե՞լ եք արդյոք այն լուրի մասին, որ առել է Անտոն Անտոնովիչը ստույգ նամակից։ Իսկ Պյոտր Իվանովիչն արդեն լսած է եղել ձեր դռնապանուհի Ավդոտյայից, որը, չգիտեմ թե ինչ նպատակով, ուղարկված է եղել Ֆիլիպ Անտոնովիչ Պոչեչուևի մոտ։

ԴՈՐՋԻՆՍԿԻ.— (ընդհատելով)— Ֆրանսիական օղու համար տակառ բերելու։

ԲՈՐՋԻՆՍԿԻ.— (ետ մղելով նրա ձեռքերը)— Ֆրանսիական օղու համար տակառ բերելու։ Իսկույն Պյոտր Իվանովիչի հետ միասին քայլերս ուղղեցինք Պոչեչուևի տունը... Չէ, Պյոտր Իվանովիչ... դուք ինձ մի՛ ընդհատեք, խնդրում եմ, մի՛ ընդհատեք... Գնում ենք Պոչեչուևի մոտ, մեկ էլ, կես ճամփին, Պյոտր Իվանովիչն ասում է. եկեք մտնենք պանդոկը։ Փորումս, առավոտից բան չուտելու պատճառով, ստամոքսային ցնցումներ են լինում... այո՛, Պյոտր Իվանովիչի փորում։ Իսկ պանդոկում, ասում է, հենց նոր թարմ սաղմոն են ստացել. մի թեթև կնախաճաշենք։— Հենց նոր էինք ոտք դրել պանդոկ, և հանկարծ՝ մի երիտասարդ...

ԴՈՒԶԻՆՍԿԻ.— (ընդհատելով)— *Համենայն արտաքինով, քաղաքացիական հագուստով...*

ԲՈՒԶԻՆՍԿԻ.— *Համենայն արտաքինով, քաղաքացիական հագուստով, եւ ու առաջ է անում սենյակում, դեմքը՝ մի տեսակ մտախոհ, կերպարանքը... շարժուձեւը... և այստեղ էլ (ձեռքը ճակատի շուրջը շարժելով) բազե՜ւմ, բազե՜ւմ բան կա։ Սիրտս կարծես մի նախազգացում ընկավ, և ահա ասում եմ Գյուտր Իվանովիչին. «Չէ՛, սա հասարակ բան չէ»։ Իսկ Գյուտր Իվանովիչը արդեն ձեռքի նշանով մոտ էր կանչել պանդոկապանին, պանդոկապան Վլասին. նրա կինը մի երեք շաբաթ առաջ տղա է բերել, այնքան էլ ժիր տղա է, իր հոր նման պանդոկ է պահելու— կանչելով Վլասին՝ Գյուտր Իվանովիչը՝ արի՛ ու հարց տուր կամացուկ. ո՞վ է, ասում է, այս երիտասարդը։ Վլասն էլ ինձ՝ ա՜ա, ասում է... մի՛ ընդհատեք, Գյուտր Իվանովիչ, խնդրում եմ, մի՛ ընդհատեք։ Դուք չեք կարողանա պատմել, աստված է վկա, չեք կարողանա. դուք շշնջախոս եք, ձեր մի ատամը, ես գիտեմ, շվաց է հանում... Սա, ասում է, մի երիտասարդ է, աստիճանավոր է, այո՛, եկել է Պետերբուրգից, անուն-ազգանունն էլ, ասում է, Իվան Ալեքսանդրովիչ Խլեստակով, գնում է, ասում է, Սարատովի նահանգը և, ասում է, շատ տարօրինակ է իրեն պահում. երկրորդ շաբաթն է այստեղ է, պանդոկից չի հեռանում, ամեն ինչ ապահով է վերցնում և ոչ մի կոպեկ չի ուզում վճարել։ Հենց որ այդ ասաց, կարծես ի վերուստ միտքս պայծառացավ։ Է՛, ասացի ես Գյուտր Իվանովիչին...*

ԴՈՒԶԻՆՍԿԻ.— *Չէ՛, Գյուտր Իվանովիչ, այդ ես ասացի՝ է՛։*

ԲՈՒԶԻՆՍԿԻ.— *Դե դուք ասացիք, հետո էլ ես ասացի։ է՛. ասացինք ես ու Գյուտր Իվանովիչը, ինչո՞ւ պիտի այդ մարդը նստի այստեղ, եթե իրոք Սարատովի նահանգն է գնում։— Ա՛յդ է որ կա, այդ մարդը, ուրեմն, հենց այն աստիճանավորն է։*

ՔԱՂԱՔԱՑԻՆ.— *Ո՞վ, ի՞նչ աստիճանավոր։*

ԲՈՒԶԻՆՍԿԻ.— *Այն աստիճանավորը, որի մասին հաճել էիք տեղեկություն ստանալ, ուիզորը։*

ՔԱՂԱՔԱՑԻՆ.— (աչքերեկված) — *Ի՞նչ եք ասում, ձեր ընդ ձեզ, այդ նա չէ։*

ԴՈՐԳԻՆՍԿԻ.— Նա է. ո՛չ փող է տալիս, ո՛չ գնում է։ Էլ ո՞վ կարող է լինել, եթե ոչ նա։— Ուղեգրի մեջ էլ նշանակված է՝ Սարատով։

ԲՈՐԳԻՆՍԿԻ.— Նա է, նա, աստված վկա, նա է... Այնպես էլ դիտող աչք ունի, ամեն ինչ հայացքով զննեց, տեսավ թե չէ, որ ես ու Գյուտր Իվանովիչը սաղմոն ենք ուտում, առավելապես այն պատճառով, որ Գյուտր Իվանովիչն իր ստամոքսի հոգսով էր զբաղված... այո՛... ապա նույնիսկ մեր ափսեների մեջ աչքը գցեց։ Ձախից սարսուռ անցավ մարմնովս։

ՔԱՂԱՔԱՑԻՏ.— Տե՛ր երկնավոր, ողորմի՛ր մեղավորներիդ։ Իսկ նա այնտեղ ո՞ր աճեյակումն է տեղավորված։

ԴՈՐԳԻՆՍԿԻ.— Հինգերորդ համարում, սահդուղքի տակ։

ԲՈՐԳԻՆՍԿԻ.— Այն համարում, որտեղ հերու եկվոր օֆիցերները տուրուդմփոց սարքեցին։

ՔԱՂԱՔԱՑԻՏ— Եվ վաղո՞ւց է, ինչ այստեղ է։

ԴՈՐԳԻՆՍԿԻ.— Երկու շաբաթ կա։ Ժամանել է Բարսեղ Եգիպատցու օրը։

ՔԱՂԱՔԱՑԻՏ.— Երկու շաբաթ։ (Մեկուսի)— Վա՛յ իմ գլխին, դուք ինձ փրկեցեք, բարեպաշտ սրբեր. այս երկու շաբաթվա ընթացքում գանակոծվել է ունտեր-օֆիցերի կինր, կալանավորներին պարեն չի տրվել, փողոցներում հարբեցողներ, աղտոտություն։ Ամոթ ու խայտառակություն։ (Ձեռքերով բռնում է գլուխը)։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— Դեհ, ուրեմն, Անտոն Անտոնովիչ, հանդիսավոր կերպով ուղևորվենք հյուրանոց։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— Ո՛չ, ո՛չ, Առաջին հերթին քող ներկայանան պարագլուխը, հոգևոր դասը, վաճառականությունը։ Չէ՞ որ «Գործք Հովհան Մասոնիո» գրքի մեջ էլ ասված է...

ՔԱՂԱՔԱՑԻՏ.— Ո՛չ, ո՛չ, Թույլ տվեք՝ ես ինքս։ Կյանքումս դժվարին դեպքեր ունեցել եմ, դուրս եմ պրծել, և դեռ շնորհակալության էլ եմ արժանացել, աստծով հիմա էլ կպրծնեմ։ (Միմելով Բոբչինսկուն)— Ասում եք, երիտասա՞րդ մարդ է։

ԲՈՐԳԻՆՍԿԻ.— Երիտասարդ, քսաներեք-քսանչորս տարեկան, գուցե քիչ ավելի։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Առավել լավ. երիտասարդի ինչ լինելը ձեռաց կիմանաս։ Վա՛յ է քե որ տարիքն առած սատանայի մեկը լինի, իսկ երիտասարդը ոտով-գլխով չրի երեսին է։ Դուք, պարոններ, պատրաստություն տեսեք, ամեն մեկդ իր շրջանակում, իսկ ես կուղևորվեմ ինքս կամ քեկուզ հենց Պյոտր Իվանովիչի հետ, մասնավոր կերպով, իբր այցելելու և տեղեկանալու՝ արդյոք ուղևորներն անախորժություններ չե՞ն կրում է՛յ, Սվիստունով։

ՍՎԻՍՏՈՒՆՈՎ.— Ի՞նչ կհրամայեք։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Իսկույն գնա՛ կանչիր այստեղ քաղաքամասի ոստիկանապետին կամ քե ոչ, դու ինձ պետք ես։ Ասա այնտեղ որևէ մեկին, ով որքան կարելի է շուտ կանչի քաղամասի ոստիկանապետին, իսկ ինքդ արի այստեղ։

Ոստիկանը ճիճեն դուրս է վազում։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— Գնանք, գնանք, Ամոս Ֆեոդորովիչ։ Իրոք որ կարող է փորձանք պատահել։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— Դո՞ւք ինչու եք անհանգիստ։ Մաքուր թասակներ կհագցնեք հիվանդների գլխին, պրծավ գնաց։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— Թասակներն ի՛նչ։ Հրամայված էր՝ հիվանդներին վարսակապուր տալ, այնինչ մեր բոլոր միջանցքներում այնպիսի մի կաղամբահոտ է կանգնած, որ ոչ մի քիթ չի դիմանա։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— Դե, ես այդպիսի հոգսերից ազատ եմ։ Իրոք, ո՞ւմ մտքով կանցնի այցելել գավառական դատարանը։ Իսկ եթե փորձի էլ ընթերից որևէ մեկը աչքի անցկացնել, իր օր ու արևը կանիծի։ Ահա տասնհինգ տարի է, ինչ նստած եմ դատավորական աթոռին, բայց հենց որ փորձում եմ խորանալ որևէ գրության մեջ— ա՛հ, իսկույն ձեռք եմ քաշում։ Ինքը՝ Սողոմոնը[1], գլուխ չի հանի, քե որն է արդարը և որն անարդարը։

Դատավորը, տատվածաճաճո ճատատությունների ճոգաբարձուն, ատտումնարաննների տեսուչը և փատատպետը գնում են ատրճանակ շամփրե դիպչում են վերադարձող ոստիկանին։

[1] Խոսքը հրեական Սողոմոն թագավորի մասին է, որն ըստ ավանդության ապրել է X դարում մ. թ. առաջ և որին առասպելը վերագրում է իմաստություն։

Քաղաքապետ, Բոբչինսկի, Դոբչինսկի և ոստիկան

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Լսի՛ր, դրսում կառքս կանգնա՞ծ է։

ՈՍՏԻԿԱՆ.— Կանգնած է։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Գնա՛ փողոց... կամ ո՛չ, կա՛ց։ Գնա՛, բեր... բայց որտե՞ղ են մյուսները։ Մի՞թե միայն դու ես այստեղ։ Չէ՞ որ հրամայեցի, որպեսզի Պրոխորովն էլ լինի։ Որտե՞ղ է Պրոխորովը։

ՈՍՏԻԿԱՆ.— Պրոխորովը քաղաքամասի շենքոմն է, բայց քե գործի դնելու վիճակում չէ։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Այդ ինչպե՞ս։

ՈՍՏԻԿԱՆ.— Հենց այնպես։ Առավոտը գիշերով բերին նրան անզգա հարբած։ Երկու դույլ ջուր ածեցինք գլխին, բայց էլի ուշքի չեկավ։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— (գլուխը բռնելով)— Ա՛խ, տեր աստված, տեր աստված։ Իսկույն գնա փողոց, կամ քե ո՛չ— նախ վազիր սենյակս և բեր այնտեղից սուրս և նոր գլխարկս։ Դե, Պյոտր Իվանովիչ, գնանք։

ԲՈԲՉԻՆՍԿԻ.— Ե՛ս էլ, ե՛ս. էլ... Թո՛ւյլ տվեք ինձ նույնպես, Անտոն Անտոնովիչ։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ո՛չ, ո՛չ, Պյոտր Իվանովիչ, չի կարելի, չի կարելի, անհարմար է, կառքումն էլ չենք տեղավորվի։

ԲՈԲՉԻՆՍԿԻ.— Վնաս չունի, վնաս չունի, ես հենց այնպես՝ բեթև-բեթև վազ կտամ կառքի հետևից։ Ուզածս շատ չի՝ մի մտիկ տամ դռան ճեղքից՝ ինչպես է նա իրեն պահում...

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— (ձեռքն առնելով սուրը, ոստիկանին)— Հիմա վազիր, հավաքիր տասնապետներին և քող յուրաքանչյուրը... Տես քե սուրս ինչպես է ճանկռոտվել։ Անիծած Աբգուլին վաճառականք տեսնում է, չէ՞ որ քաղաքապետի սուրը մաշվել է, բայց նորը չի ուղարկում։ Օ՛, նենգավոր ժողովուրդ են։ Հիմա այդ խարդախները, թվում է ինձ, արդեն ծածուկ խնդրագրեր են պատրաստում ներկայացնելու համար։ Քող յուրաքանչյուրն իր ձեռքն առնի մի-մի փողոց... Թո՛ւ, սատանան տանի՝ փողոց... մի-մի ավել, և քող մի լավ ավլեն դեպի պանդոկ տանող փողոցը. տես որ մաքուր ավլեն... Հասկացա՞ր բայց դո՛ւ, դու, դու էլ զգաստ եղիր, ես քեզ լավ

եմ ճանաչում — հա՛ խնամիանում ես և արծաթեն գդալներ ծլկեցնում ու թաքցնում կոշիկիդ ճտքերում։ Ջգույշ կաց, իմ աչքից բան չի փախչի... Դե այդ ի՞նչ բերիր Ջերնյան վաճառականի գլխին, հը՞. նա քեզ մունդիրիդ համար երկու արշին մահուդ տվեց, իսկ դու ամբողջ թոփը գողացար։ Ի՛նձ նայիր, պաշտոնիդ համեմատ չես վերցնում։ Գնա՛։

ՏԵՍԻԼ V

Նույնեք և Խաղամասի ոստիկանապետ

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ա՛, Ստեպան Իլյիչ։ Ասացեք, ի սեր աստծո, այդ ո՞ւր եք չքացել։ Սա ինչի՞ է նման։

ՔԱՂԱՔԱՄԱՍԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ.— Հենց այստեղ, մոտերքում էի դարպասի մոտ։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Դե, ականջ դրեք, Ստեպան Իլյիչ։ Պետերբուրգի այն աստիճանավորն արդեն եկել է։ Ինչպե՞ս կարգադրեցիք գործերը։

ՔԱՂԱՔԱՄԱՍԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ.— Ինչպես որ հրամայել էիք։ Ոստիկան Պուգովիցինին տասնապետների հետ միասին ուղարկեցի մայթերը մաքրելու։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Իսկ Դերժիմորդան ո՞ւր է։

ՔԱՂԱՔԱՄԱՍԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ.— Դերժիմորդան հրշեջ մեքենայով արդեն մեկնեց։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Իսկ Պրոխորովը հարբա՞ծ է։

ՔԱՂԱՔԱՄԱՍԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ.— Հարբած է։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Բայց ինչպե՞ս թույլ տվիք։

ՔԱՂԱՔԱՄԱՍԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ.— Աստծուն է հայտնի։ Երեկվա օրը քաղաքից դուրս ինչ-որ կռիվ է պատահել. գնաց կարգ հաստատելու, բայց վերադարձավ հարբած։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ինձ լսեք։ Այ թե ինչ պետք է անել։ Ոստիկան Պուգովիցինը... Նա բարձրահասակ տղա է, թող բարեկարգության համար կանգնի կամրջի գլխին։ Իսկույն ևեթ պետք է ցրիվ տալ այն խարխուլ ցանկապատը, որ կոշկակարի խանութի կողքին է, և ցցել տվեք այնտեղ մի ծղոտե նշանառող, որպես թե պլանավորում է կատարվում։ Որքան ավելի քարուքանդ տեղեր լինեն, այնքան դա նշան է քաղաքը կառավարողի գործունեության։ Ա՛խ, տե՛ր աստված, բոլո-

րովին մոռացա, որ այդ ցանկապատի մոտ մի քառասուն սայլի չափ ամեն տեսակ աղբ է թափված։ Այս ի՜նչ կեղտոտ քաղաք է։ Հերիք է, որեէ տեղ մի արձան կանգնեցնես կամ թեկուզ մի ցանկապատ, էլ որտեղից ասես, որ չեն բերի ու թափի ամեն տեսակի աղտոտություն։ (Հառաչում է)։— *Թե բան է՝ եկվոր աստիճանավորը հարց տալու լինի ծառայողներին՝ գո՞հ են արդյոք, բոլորն էլ պատասխանեն՝ «Միանգամայն գո՛հ ենք, ձերդ ազնվություն»։ Իսկ թե մեկնումեկը դժգոհ հանդիսանա՝ ես նրան հետո այնպիսի դժգոհություն ցույց կտամ, որ... Օ՛հ, օ՛հ, օ՛հ, ը՜հ, մեղա քեզ, բազում մեղա...* (Գլխարկի փոխարեն առափն է վերցնում ձեռքը)— *Թող մի աստված տա՝ այս ամենը շուտով անցնի-պրծնի մեր գլխից, ես այնպիսի մի մոմ վառել կտամ, որպիսին դեռ ոչ ոք վառած չկա։ Այդ անասուն վաճառականներից ամեն մեկին կպարտադրեմ երեքական փութ մեղրամոմ հայթայթելու։ Օ՛, տե՛ր իմ աստված, տե՛ր իմ աստված։ Գնանք, Պյոտր Իվանովիչ։* (Գլխարկի փոխարեն ուզում է գլխին դնել առափը)։

ՔԱՂԱՔԱՄԱՍԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ.— *Անտոն Անտոնովիչ, այդ գլխարկը չէ, այլ տուփն է։*

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— *Տուփն է, թող տուփը լինի։ Սատանան տանի։ Հա՛, եթե հարց տրվի, թե ինչո՞ւ չի կառուցված աստվածահաճո հաստատությանց կից եկեղեցին, որի համար սրանից մի հինգ տարի առաջ գումար էր հատկացված, չմոռանան պատասխանել, որ սկսված է եղել, բայց այրվել է։ Ես այդ մասին զեկուցագիր էլ եմ ներկայացրել։ Չլինի թե մեկը հիմարանա ու դուրս տա, թե շենքը իսկի չէր էլ սկսված։ Դերժիմորդային էլ ասացեք, որ իր բռունցքներին շատ ազատություն չտա. թե չէ նա, հանուն կարգապահության, հա՛ աչքեր է, որ կապտեցնում է— մեղավորին էլ, արդարին էլ։ Գնանք, գնանք, Պյոտր Իվանովիչ։* (Գնում է ու վերադառնում)— *Չինովորներին դուրս չթողնել փողոց անհագուստ. այդ անպիտանները շատ-շատ շապկի վրա մունդիր հագնեն, իսկ տակի մասում՝ ոչնչից ոչինչ։*

Բոլորը գնում են։

ՏԵՍԻԼ VI

Աննա Անդրեեվնա և Մարիա Անտոնովնա

Նույն են վագոնում:

Աննա Անդրեեվնա.— *Ո՞ւր է, ի՞նչ եղան։ Ա՜խ, տեր աստված...* (*Հանալով դուռը*)— *Ամուսի՜նս, Անտո՜շա, Անտո՜ն։* (*Խոսում է արագ*)— *Դո՛ւ ես, դո՛ւ, քո պատճառով եղավ։ Հա՜, մլուլ ես տալիս՝ «Հիմա՜ քորոցս, հիմա՜ վզնոցս»։* (*Վազում է դեպի լուսամուտը և կանչում*)— *Անտո՜ն, ո՞ւր, ո՞ւր։ Արդեն եկե՞լ է, հա՞, ուսիզո՞րն է, բեղերո՞վ, ի՞նչ բեղեր ունի։*

Քաղաքապետի զավակը.— *Հետո՛, հետո՛, ա՛յ կնիկ։*

Աննա Անդրեեվնա.— *Հետո՞։ Այ քեզ նորություն*— *հետո։ Ես չեմ ուզում հետո... ինձ միայն մի խոսք ասա. գնդապե՞տ է։ Հա՞։* (*Քամահրանքով*)— *Քշեց գնաց։ Ես միտդ կբերեմ։ Եվ ամենը՝ քո պատճառով. «Մայրիկ, մայրիկ, սպասեցեք, ծոծրակիս վզնոց ամրացնեմ, ես իսկույն»։ Ահա քեզ քո իսկույնը, ստացիր. ոչինչ չհամացանք։ Եվ բոլորը՝ քո այդ անպիտան կոկետության երեսից. իմացար թե չէ, որ փոստապետն է այստեղ, ու հա՛ սկսեցիր հայելու առաջ կոտրատվել. մեկ այս կողմից է մոտենում, մեկ այն կողմից։ Երևակայում է, թե նա քարշ է գալիս իր հետևից, այնինչ նա, բավական է որ դու մեջքով դառնաս, իր դեմքն է ծռում քո հետևից։*

Մարիա Անտոնովնա.— *Դե հիմա ի՞նչ կարող ենք անել, մայրիկ։ Միևնույն է, մի-երկու ժամից ամեն ինչ կիմանանք։*

Աննա Անդրեեվնա.— *Մի-երկու ժամի՞ց։ Խորին շնորհակալությո՛ւն։ Պատասխա՞ն հրամցրեց։ Ինչպե՞ս մտքովդ չանցավ ասել, որ մի երկու ամսից է՛լ ավելի լավ կարելի՞ է իմանալ։* (*Կախ է ընկնում լուսամուտից*)— *է՛յ, Ավդոտյա։ Ի՞նչ։ Ասա՛, Ավդոտյա, ոչնչ բան լսե՞լ ես նոր եկած մարդու մասին... Ջե՞ս լսել։ Ի՞նչ հիմարն ես։ Ջեռքե՞րն է թափահարում։ Թող թափահարի, իսկ դու, այնուամենայնիվ, պիտի հարց ու փորձ անեիր։ Այսքան բանը շնորհք չունեցար իմանալու։ Գլխումդ քամի է, ուշքդ ու միտքդ փեսացուներն են։ Ի՞նչ։ Իսկույն քշեցի՞ն։ Իսկ դու վազեիր կառքի հետևից։ Գնա՛, իսկույն գնա՛ք։ Լսո՞ւմ ես, վա՛զ տուր, հարցուփորձ արա, թե ուր են գնացել. մի լավ տեղեկացիր՝ ո՛վ է եկողը, ի՛նչ*

տեսք ունի։ Լսո՞ւմ եսւ Դուան ճեղքից նայիր, ամե՛ն ինչ իմաց-ցիր, աչքերի գույնն էլ չմոռանաս՝ սև են, քե ոչ, և ապա իս-կույն վերադարձիր. լսո՞ւմ եսւ Շո՛ւտ, շո՛ւտ, շո՛ւտ, շո՛ւտ։ (Կանչում է մինչև վարագույրի իջնելը: Հենց այդպես էլ վա-րագույրը փակում է նրանց՝ լուսամուտի մոտ կանգնած):

ԱՐԱՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Փոխրիկ սենյակ նյութանյութում: Անկողին, սեղան, ճամպրուկ, գա-տարկ մի շիշ, կոշիկներ, շորի խոզանակ և այլն

ՏԵՍԻԼ I

Օսիպը պառկած է իր տիրոջ մահճակալի վրա

ՕՍԻՊ.— Սատանան տանի, այնպես ուտել եմ ուզում, ու փորումս էլ այնպիսի տրաքտրաքոց է, ասես մի ամբողջ զո-րագունդ փողեր է փչում։ Հնար չի լինում էլի, որ հասնենք տուն։ Ի՞նչ կհրամայես անել, երկրորդ ամիսն է արդեն, ինչ մեկնել ենք Պիտերից[1]։ Ունեցած փողերը ճամփին քամուն է տվել աղունիկս, հիմա էլ պոչը քաշած՝ նստել է ու էլ վեր-վեր չի թռչում։ Ախր կհերիքեր ու լավ էլ կհերիքեր ճամփի ծախսի համար, բայց քե ամեն մի քաղաքում պետք է իրեն ցույց տա, չէ՞։ (Տնազ աենլով)— *«Է՛յ, Օսիպ, գնա մի լավ սենյակ ճարիր, լավագույնը, ճաշն էլ ամենից լավը լինի, ես վատ ճաշի սովոր չեմ, իմ ճաշը պետք է լավագույնը լինի»։ Ախր մի բան էլ լիներ ինքը, եղած-չեղածը մի չնչին ելիստ-րատոր՝ է[2], Անց ու դարձողի հետ ծանոթանում է, թուղթ է խաղում։ Հիմա էլ, տանուլ տված, չոր քարին է նստել։ Է՛խ, զզվեցի այս տեսակ կյանքից, ճշմարի՛տ, գյուղն ավելի լավ է։ Ճիշտ է, եռ ու զեռ չկա գյուղում, բայց հոգս էլ չկա։ Կնիկ առ քեզ համար ու ամբողջ կյանքդ թախտիդ ձգված՝ կար-կանդակներ անուշ արա։ Դեհ, իհարկե, ի՛նչ խոսք, խակականը որ ասելու լինենք, Պիտերում կյանքն ամենից լավն է։ Փող*

---

1 *Այդպես էր կոչում հասարակ ժողովուրդը Պետերբուրգ քաղաքը։*

2 *Ազավաղված ռեզիսսարսար բան է, որ նշանակում է մատենավար։*

լինի, թե չէ՝ կյանքը ընտիր ու քաղաքավարի է, է՛լ թատրոններ, է՛լ շուն պարածողներ. ինչ որ սիրտդ ուզեց՝ Բոլորը խոսում են կարդին, ինչպես վայել է. շատ-շատ ազնվականներին դիջեն՝ Շչուկին շուկան ես գնում, վաճառականները քեզ «պատվելի» են ասում, գետն անցնելիս՝ նավակում աստիճանավորի կողքին կնստես՝ Սիրտդ անուշ զրույց ուզեց, մտիր որևէ խանութ, այնտեղ քեզ աշխարհ տեսած զինվորականը ճամբարի կյանքից կպատմի և կհայտնի, թե երկնքի վրա ամեն մի աստղ ինչ նշանակություն ունի, այնպես որ՝ ամեն ինչ պարզ տեսնում ես, ասես բռանդ վրա՝ Մեկ էլ տեսար՝ ներս մտավ մի օֆիցերի կնիկ և կամ թե մի նաժիշտ, տեսքով այն տեսակը, որ... պա՛, պա՛, պա՛՝ (Թեթև ծիծաղում է և թափահարում գլուխը): Գալանտերյական[1] բարք ու վարմունք է, գրողը տանի՝ Անքաղաքավարի խոսք օրումդ չես լսի. ամենքը քեզ «դուք» են ասում՝ Քայլելուց ձանձրացար՝ կա՛ռք վերցրու ու ձգվիր մեջը աղայավարի՝ Իսկ եթե չուզեցիր վճարել՝ համեցե՛ք. ամեն մի շենք երկու դարպաս ունի, և կարող ես այնպես ծլկվել, որ ոչ մի սատանա քեզ չի գտնի՝ Մի բան վատ է՝ Օր կլինի լավ կկշտանաս, օր էլ կլինի՝ քաղցից քիչ կմնա սատկես, ա՛յ, ոնց որ հիմա ենք՝ Ախր ամեն բանում ինքն է մեղավորը, ի՞նչ անես նրան՝ Հայրը փող է ուղարկում, փոխանակ պահելու, ի՛հ, ո՞ւմն ես ասում, իրեն տալիս է խմելու՝ Կառք է նստում, ամեն օր արի՛ նրա համար թատրոնի տոմս ճարիր՝ Իսկ մի շաբաթից հետո, մեկ էլ տեսար, իր նոր կարած ֆրակը շուկա է հանում ծախելու՝ Մեկ-մեկ այնպես է լինում, որ ունեցած-չունեցածը մինչև վերջին շապիկը կծախծխի, վրան կմնա մի սերթուկ ու մի շինել... Աստված է վկա, ճիշտ եմ ասում՝ Մահուդն էլ՝ ընտիր անգլիական, մի ֆրակը վրան կնստի 150. ռուբլի, իսկ շուկայում 20 ռուբլով կգշի, շալվարների մասին հո էլ խոսք չկա, շան մսի գնով կտաս՝ Իսկ պատճա՞ռը. պատճառն այն է, որ գործով չի զբաղվում, պաշտոնատեղի գնալու փոխարեն՝ պրիշպեկտով[2] թրև է գալիս, թուղթ է խաղում՝ է՛խ, թե որ մեր ծեր պարոնն

---

1 Դարձյալ ազավաղում. շփոթված են գալանտ (նրբակիրթ) և գալանտերեա (հագուստեղենի մանր ապրանք) բառերը։

2 Ազավաղում պրոսպեկտ (պողոտա) բառի։

իմանար, նա մտիկ չէր տա, որ աստիճանավոր ես. շապիկդ կբարձրացներ ու՝ տուր քե կտաս, այնպես, որ մի չորս օր քամակդ կգորներ. Քե ծառայում ես՝ մարդավարի ծառայիր. Ա՛յ, հիմա էլ՝ պանդոկատերն ասաց, որ ուտելիք չի տա, մինչև առաջվանի համար չվճարենք. Իսկ քե չվճարեցի՞նք... (Հոգոց հանելով)— *Ա՛խ, տեր աստված, գոնե մի շշի լիներ. Այնպես եմ սոված, որ ողջ աշխարհը կուտեի հիմա. Դուռն են ծեծում. Ինքը կլինի.* (Շտապով վեր է թռչում մանճակալից):

ՏԵՍԻԼ II

Օսիպ և Խլեստակով

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ա՛ա, վերցրո՛ւ այս. (Մեկնում է գլխարկն ու ձեռնափայտը): *Ահա՛, դարձյալ թավալվել էիր անկողնուս վրա.*

ՕՍԻՊ.— Ինչի՞ պիտի թավալվեի. Անկողին չե՞մ տեսել. Ի՞նչ է.

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Փչում ես, թավալվել ես. Տեսնո՞ւմ ես, ամբողջն իրար է խառնված.

ՕՍԻՊ.— Ախր ինչի՞ս է պետք. Անկողին չե՞մ տեսել, ի՞նչ է. Ոտքեր ունեմ՝ կկանգնեմ. Ի՞նչ կարիք ունեմ ձեր անկողնուն.

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (անցուդարձ անելով)— Մի տես այնտեղ, թղթապարկում, ծխախոտ չունե՞նք.

ՕՍԻՊ.— Էլ ի՞նչ ծխախոտ. երեք օր առաջ վերջինը ծխեցիք.

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (ֆայլում է և տարբեր ձևերով սեղմում է իր շտրթերը: Վերջապես ասում է վճռական և բարձրածայն)— Լսի՛... է՛յ, Օսի՛պ.

ՕՍԻՊ.— Ի՞նչ կհրամայեք.

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (բարձրածայն, բայց ոչ այնքան վճռական)— Մի գնայիր այնտեղ...

ՕՍԻՊ.— Որտե՞ղ.

ԽԼԵՍՏԱԿՈՎ — (բնավ ոչ վճռական և ոչ էլ բարձրածայն. ավելի խնդրելու եղանակով)— Ներքև... բուֆետ... Այնտեղ ասա՛... Թող ինձ ճաշ տան.

ՕՍԻՊ.— Ջէ՛, ես այնտեղ գնացողը չեմ.

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ինչպե՞ս ես հասեւթաթակվում, ապուշ։

ՕՍԻՊ.— Հենց այդպես։ Միեւնույն է, գնամ էլ՝ բան դուրս չի գա։ Պանդոկատերն ասաց, որ էլ ճաշ չի տալու։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ինչպե՞ս կհանդգնի չտալ։ Ի՞նչ անհեթեթություն։

ՕՍԻՊ.— Դեռ,— ասում է,— քաղաքապետի մոտ էլ կգնամ։ Երրորդ շաբաթն է պարտնդ փող չի վճարում։ Դու ու քո պարոնը,— ասում է,— խարդախներ եք, ու պարոնդ էլ խաբեբայի մեկն է։ Մենք,— ասում է,— նման գող-ավազակներ շատ ենք տեսել։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Դու էլ հո արդեն ուրախ ես, անասուն, երեսիս ասել այդ բոլորը։

ՕՍԻՊ.— Ասում է՝ «Այդպես հո ամեն մեկը կարող է գալ, բուն դնել, պարտքով ապրել ու հետո դուրս անել էլ չի լինի։ Ես,— ասում է,— հանաք չեմ սիրում, ոչ դես, ոչ դեն, գանդատ կանեմ ու բանտ նստեցնել կտամ»։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Դե, դե, հիմար, վե՛րջ տուր։ Գնա՛, գնա՛, ասա՛ նրան։ Այդ տեսակ էլ բոի անասո՞ւն։

ՕՍԻՊ.— Լավ կլիներ հենց իրեն՝ տիրոջը կանչեի ձեզ մոտ։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ի՞նչ կարիք կա տիրոջը կանչելու։ Գնա ինքդ ասա։

ՕՍԻՊ.— Ճիշտ եմ ասում, պարոն...

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Դե, գնա, սատանան տանի քեզ, կանչիր տիրոջը։

Օսիպը գնում է։

ՏԵՍԻԼ III

Խլեստակով (մենակ)

Սարսափելի սոված եմ։ Փորը-ինչ զբոսնեցի, մտածում էի՝ դուցե ախորժակս անցնի։ Չէ՛, գրողը տանի, չի անցնում։ Հա՛, երեք պենզայում ինձ քեֆերի չտայի, փողս հերիք կաներ տուն հասնելու։ Հետևակ գնգի կապիտանը հերս անիծեց։ Ա՛յ քեզ թուղթ խաղալ գիտեն։ Ընդամենը մի քառորդ ժամ խաղացինք՝ պլոկեց։ Նվ, այնուամենայնիվ, շատ կուզեի մի անգամ էլ շափվել հետը։ Ափսոս առիթ չեղավ։ Այս ի՞նչ անպիտան

քաղաք է։ Բանջարեղենի խանութներում ոչինչ պարտքով չեն տալիս։ Այդ արդեն պարզապես սրիկայություն է։ (Շվացնում է նախ «Ռոբերտ»-ից[1], հետո «Սարաֆան չկարես ինձ համար, մայրիկ»[2] և ապա անուրոշ մի բան)։— *Ոչ ոք չի ուզում գալ։*

ՏԵՍԻԼ IV

Խլեստակով, Օսիպ և պահոկի տպաւավոր

ՍՊԱՍԱՎՈՐ.— Տերս հրամայեց հարցնել, ի՞նչ եք ցանկանում։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Բարի հաջողում, եղբայր։ Ինչպե՞ս ես, ողջ-առո՞ղջ ես։

ՍՊԱՍԱՎՈՐ.— Փա՜ռք աստծու։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ի՞նչ կա-չկա ձեր հյուրանոցում։ Գործերը լա՞վ են ընթանում։

ՍՊԱՍԱՎՈՐ.— Հա՛, փա՜ռք աստծո, ամեն ինչ լավ է։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Հաճախորդներ շա՞տ ունեք։

ՍՊԱՍԱՎՈՐ.— Այո՛, բավականին կան։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Լսի՛ր, բարեկամս, մինչև հիմա ինձ ճաշ չեն բերել, խնդրեմ շտապեցրու, թող արագացնեն, ճաշից հետո պարապելու բան ունեմ։

ՍՊԱՍԱՎՈՐ.— Բայց տերս ասաց, որ այլևս ճաշ չի բաց թողնելու։ Նա, կարծես, այսօր ուզում էր գնալ քաղաքապետին գանգատվելու։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Բայց գանգատվելու ի՞նչ կա։ Ինքդ դատիր, բարեկամս, չէ՞ որ ես պետք է ուտեմ։ Չէ՞ որ կարող եմ բոլորովին հյուծվել։ Ես սաստիկ սոված եմ, կատակ չեմ անում։

ՍՊԱՍԱՎՈՐ.— Այդպես։ Ասում էր՝ ես նրան ճաշ չեմ տա, մինչև առաջվանի համար չվճարի։ Այդ էր նրա ասածը։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Բայց դու համոզի՛ր, հասկացրո՛ւ նրան։

ՍՊԱՍԱՎՈՐ.— Դե՛, էլ ի՞նչ հասկացնեմ։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Դու նրան մի լավ բացատրիր, որ ինձ

---

1 *Ֆրանսիական կոմպոզիտոր Ջակոմո Մեյերբերի (1791—1864) «Ռոբերտը» օպերան է։*

2 *Ռուսական ժողովրդական մի երգ։*

Անհրաժեշտ է ուտել։ Փողն իր հերթին... Նա կարծում է, որ եթե ինքն իր գոհհիկ տեղով հեշտությամբ կարող է մի ամբողջ օր սոված մնալ, ուրիշներն էլ կարող են։ Ա՛յ քեզ նորություն։

ՍՊԱՍԱՎՈՐ.— Կփորձեմ, կասեմ։

ՏԵՍԻԼ V

Ալեքսակով (մենակ)

Այդ վատ կլինի, սակայն, եթե նա ոչինչ չտա ուտելու։ Շատ եմ ուզում ուտել, երբեք այսչափ սոված չեմ եղել։ Արդյոք հագուստիցս որևէ բան վաճառքի չհանե՞մ։ Գուցե շալվա՞րս... Ո՛չ, ավելի լավ է սոված մնալ, բայց տուն վերադառնալ պետերբուրգցու հագուստով։ Ափսոս, որ Խոխիմը[1] չհամաձայնեց վարձով մի կառեթ տալ։ Բայց ի՛նչ լավ կլիներ, գրողը տանի, տուն վերադառնալ կառեթով, առոք-փառոք սլանալ ու հանդիսավոր, կողքի լապտերները վառ, կանգ առնել դրացի կալվածատերերից մեկնումեկի տան առաջ, Օսիպն էլ հետևից՝ լիվրեյը[2] հագած։ Օրևակայում եմ, թե ինչ իրարանցում կընկներ։ Ո՞վ է, ի՞նչ մարդ է։ Իսկ ծառան ներս է մտնում (ձգվում է ծառայի դիրքով)— «Իվան Ալեքսանդրովիչ Ալեստակով, Պետերբուրգից, կհրամայեք ընդունե՞լ»։ Իսկ այդ քնձռոտները իսկի չգիտեն էլ թե ինչ ասել է՝ «կհրամայեք ընդունել»։ Նրանց մոտ թե որ այն կալվածատեր սագերից մեկը գալու լինի, առանց այլևայլի՝ «երջի պես ներս կընկնի հյուրասենյակ։ Կմոտենաս մի որևէ սիրունիկ դստրիկի. «Օրիորդ, ա՛խ, ես որքա՛ն...»։ (Շփում է ձեռքերը և կրոունկը կրնկին զարկում) Փո՛ւ ((pfում է),— սիրտս խառնում է, այնպես ուտել եմ ուզում։

ՏԵՍԻԼ VI

Ալեքսակով, Օսիպ, ապա ապաստվար

ԱԼԵՔՍԱԿՈՎ.— Ապա՞, ի՞նչ կա։

ՕՍԻՊ.— Ճաշը բերում են։

---

[1] Խոխիմը չքեզ կառքերի և կառեթների վարպետ է եղել Պետերբուրգում։

[2] Լիվրեյ — ծառայի ոսկեհուռթ հագուստ։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— (ծափ տալով և փոքր-ինչ ոտռոստեղով աթոռի վրա)— *Բերո՜ւմ են, բերո՜ւմ են, բերո՜ւմ են։*

ՍՊԱՍԱՎՈՐ.— (ափսեներով և անձեռոցիկներով)— *Տերս վերջին անգամն է տալիս։*

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— *Տե՛րս, տե՛րս, Քքե՛լ եմ ես քո տիրոջ վրա։ Բերածդ ի՞նչ է։*

ՍՊԱՍԱՎՈՐ.— *Սուպ և տապակած միս։*

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— *Ինչպե՞ս, միայն երկո՞ւ տեսակ։*

ՍՊԱՍԱՎՈՐ.— *Այո՛։*

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— *Ի՛նչ հիմար բան։ Ես այս չեմ ընդունի։ Դու նրան ասա, ինչի՞ նման է, քի՛չ է։*

ՍՊԱՍԱՎՈՐ.— *Չէ՛, տերս ասաց՝ դեռ շատ էլ է։*

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— *Իսկ սոուս ինչո՞ւ չկա։*

ՍՊԱՍԱՎՈՐ.— *Սոուս չունենք։*

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— *Ինչպե՞ս Քե չունեք։ Խոհանոցի մոտով անցնելիս՝ աչքովս տեսա, շատ կերակուրներ էին պատրաստում, ճաշարանումն էլ այսօր ինչ-որ երկու կարճահասակ մարդ ձուկ էին ուտում և շատ ուրիշ բաներ։*

ՍՊԱՍԱՎՈՐ.— *Ունենալն՝ ունենք, բայց Քե՝ չունենք։*

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— *Այդ ինչպե՞ս։*

ՍՊԱՍԱՎՈՐ.— *Արդեն վերջացել է։*

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— *Իսկ սաղմո՞ն, իսկ ձո՞ւկ, իսկ կոտլե՞տ։*

ՍՊԱՍԱՎՈՐ.— *Դրանք ավելի կանոնավոր մարդկանց համար են։*

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— *Ա՛խ դու ապուշ։*

ՍՊԱՍԱՎՈՐ.— *Հենց այդպես։*

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— *Ա՛խ դու քոսոտ խոճկոր... Նրանք ուտեն, իսկ ես չուտե՞մ։ Ինչո՞ւ, սատանան տանի, ես չպիտի ուտեմ։ Նրանք ինձ պես հաճախորդներ չե՞ն։*

ՍՊԱՍԱՎՈՐ.— *Պարզ է, որ ձեզ պես չեն։*

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— *Ապա ինչպե՞ս են։*

ՍՊԱՍԱՎՈՐ.— *Պարզ է, Քե ինչպես են, հայտնի բան է՝ նրանք փող են վճարում։*

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— *Ես քեզ հետ, ապուշ, գլուխ դնել չեմ ուզում։* (Լցնում է սուպն ու ուտում)։— *Այս ի՞նչ տենակ սուպ է։ Դու պարզապես ամանի մեջ ջուր ես լցրել։ Ոչ մի համ չու-*

Նի, հոտած չուր է։ Ես այս սուպը չեմ ուզում, ուրիշը տուր ինձ։

ՍՊԱՍԱՎՈՐ.— Մենք կընդունենք։ Տերս ասաց՝ թե որ չեք ուզում, պետք էլ չի։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (ձեռով պաշտպանելով կերակուրը)— Դե՛, դե՛, դե՛... ձեռք չտա՛ս, ապո՛ւշ։ Դու սովոր ես ուրիշների հետ այդպես վարվել. ես, եղբայր, այդպիսիներից չեմ, խթրհուրդ չեմ տա, որ ինձ հետ... (Ուտում է)։— Տե՛ր աստված, այս տեսակ էլ սո՛ւպ։ (Շարունակում է ուտել)։ Ես կարծում եմ, որ աշխարհիս երեսին ոչ մի մարդ այս տեսակ սուպ կերած չկա. յուղի փոխարեն ինչ-որ փետուրներ են լող տալիս (Հավի միսը կտրատելով)— Ա՛յ, ա՛յ, ա՛յ, ա՛յ, ա՛յ, սա էլ հա՛վ է։ Տապակած մի՛սը տուր։ Այնտեղ սուպից մի քիչ մնացել է, Օսիպ, քե՛զ վերցրու։ (Կտրատելով տապակած միսը)— Սա տապակած մի՞ս է։ Սա տապակած միս չէ։

ՍՊԱՍԱՎՈՐ.— Ապա ի՞նչ է։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Սատանան գիտե, թե ինչ է, բայց տապակած միս չէ։ Սա խորոված կացին է, և ոչ թե միս։ (Ուտում է)։— Խարդախնե՛ր, խաբեբանե՛ր, ինչո՛վ են կերակրում։ Սրանից մի կտոր ուտողն իր ծնողից պիտի ձեռք քաշի։ (Մատով փորփրում է ատամները)։— Սրիկանե՛ր։ Ասես ծառի կեղև լինի, ոչ մի հնար չկա դուրս քաշելու, մարդու ատամները կսևանան այս տեսակ կերակուրներից։ Խարդախնե՛ր։ (Ձեռնոցիկով սրբում է բերանը)։ Ուրիշ ոչինչ չկա՞։

ՍՊԱՍԱՎՈՐ.— Չկա։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Խաբեբանե՛ր, սրիկանե՛ր։ Գոնե մի որևէ սոուս լիներ կամ խմորեղեն։ Անամոթնե՛ր։ Միայն թե փող կորզեն հաճախորդներից։

Սպասավորը ճավոտում է ամաչելով և դուրս սահում Օսիպի հետ։

ՏԵՍԻԼ VII

Խլեստակով, ապա Օսիպ

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ճիշտ եմ ասում, կարծես թե ոչինչ կերած չլինեմ։ Միմիայն ախորժակս գրգռվեց։ Մանր փող լիներ գոնե, շուկայից թեկուզ մի բլիթ գնեինք։

ՕՍԻՊ.— (ներս մտնելով)— *Այնտեղ ինչ-որ մի նպատակ ունով քաղաքապետն է եկել, տեղեկանում է ու ձեզ է հարցնում։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (վախեցած)— *Ա՛յ քեզ բան։ Այդ պանդոկապանին տես, արդեն գանգատվել է։ Ի՞նչ՝ եթե նա իրոք քարշ տա ինձ բանտ։ Դե, ի՞նչ արած, եթե քաղաքավարի ձևով, ես, թերևս... ո՛չ, ո՛չ, չեմ ուզում։ Դուրսը, քաղաքում ժողովուրդ կա, օֆիցեր ներ են քարշ գալիս, իսկ ես, հասկառակի պես, շիկ բանեցրի և, մինչև իսկ, մի վաճառականի աղջկա հետ իրար աչքով արինք... Ո՛չ, չեմ ուզում։ Այդ ի՞նչ է հնարել, ինչպե՞ս կհամաձակվի ես նրա համար ի՞նչ եմ, վաճառակա՞ն թե՞ արհեստավոր։* (Սիրտ է տալիս իրեն և շակվում)։— *Ես նրան ուղղակի կասեմ՝ ինչպե՞ս եք դուք համաձակվում, ինչպե՞ս եք դուք...* (Դռան բռնակը շարժվում է։ Խլեստակովը գունատվում է և ծկվում)։

ՏԵՍԻԼ VIII

Խլեստակով, Քաղամապետ և Ռաբչինսկի

Քաղամապետը մտնում ու կանգ է առնում։ Երկառն էլ սեռաբեկված նայում են իրար՝ աչերը չառած։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— (փոխ-ինչ սթափվելով և ձգվելով զգաստ)— *Բարի ողջո՛ւյն։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (գլուխ տալով)— *Հարգանքներս...*

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— *Ներեցեք։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— *Ոչինչ։*

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— *Ես՝ սույն քաղաքի քաղաքապետի պարտականությունն է հոգ տանել, որպեսզի երթևեկ ճամփորդներին և բոլոր աղնվածին անձանց ոչ մի նեղություն...*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (սկզբում փոխ-ինչ կակազում է, բայց խոսքի վերջում խոսում է բարձրաձայն)— *Ես ի՞նչ կարող եմ անել... Ես մեղավոր չեմ... Ես, հավատացնում եմ, կվճարեմ... Ինձ կուղարկեն գյուղից* (Ռաբչինսկին ներս է նայում դռան արանքից)։— *Ինձնից ավելի նա է մեղավոր. նրա տված տավարի միսն այնքան կոշտ է, ասես տախտակ լինի, իսկ սուպը՝ սատանան գիտե, թե ի՛նչ է լցրել մեջը, սոխոված էի լուսամուտից դուրս թափել։ Նա ինձ օրերով սովալլուկ է պա-*

հում... Թեյն էլ շատ տաքորհնակ է. ձկան հոտ ունի և ոչ թե թեյի։ Ի՞նչ է իմ մեղքը... Ա՛յ քեզ նորություն։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— (վախվխելով)— *Ներեցեք, հավատացնում եմ, ես մեղավոր չեմ։ Մեր շուկայում միսը միշտ լավն է լինում։ Խոլմոգորի վաճառականներն են բերում, բոլորն էլ ուշիմ և բարեբարո մարդիկ են։ Պարզապես չգիտեմ՝ որտեղի՛ց է նա այդպիսի միս ճարում։ Իսկ եթե որևէ դժգոհություն ունեք... Թույլ տվեք առաջարկել ձեզ փոխադրվել ինձ հետ մի այլ բնակարան։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— *Ո՛չ, չեմ ուզում։ Ես գիտե՛մ, թե ինչ է նշանակում մի այլ բնակարան, այսինքն՝ բանտ։ Բայց դուք ի՞նչ իրավունք ունեք։ Ինչպե՞ս եք համարձակվում... Տեսեք թե ես... ես պաշտոնավարում եմ Պետերբուրգում։* (Ինքն իրեն սիրտ տալով)— *Ե՛ս, ե՛ս, ե՛ս...*

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— (մեկուսի)— *Օ՛, տեր իմ աստված, որքան բարկացած է։ Ամեն ինչ գիտե, անիծված վաճառականներն ամեն ինչ պատմել են։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (ծռելով)— *Թեկուզ ձեր ամբողջ կայազորը բերեք այստեղ՝ չե՛մ գնա։ Ուղղակի մինիստրին կդիմեմ։* (Բռնուցքը զարկելով սեղանին)— *Ինչպե՞ս եք հանդգնում, ինչպե՞ս...*

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— (շտկված և ողջ մարմնով դողալով)— *Ողորմա՛ծ եղեք։ Կին ունեմ, փոքրիկ երեխաներ... Մի՛ դժբախտացնեք ինձ։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— *Ո՛չ, չե՛մ ուզում։ Ա՛յ քեզ բան։ Իմ ի՞նչ գործն է։ Ինչ է թե կին ու երեխաներ ունեք, ես պետք է գնամ բա՞նտ, ա՛յ գեղեցիկ բան։*

Բաբչինսկին դռնից ներս է նայում և վախեցած նա փաչվում։

Ոչ, խոնարհ շնորհակալություն, չեմ ուզում։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— (դողալով)— *Անփորձություններից է, ասված է վկա, անփորձություններից է։ Ստացվածքի պակասություն... Ինքներդ հաճեցեք դատել. արքունական ռոճիկը նույնիսկ թեյ ու շաքարի չի հերիքում, և եթե եղած էլ լինի որևէ կաշառք, ապա շատ չնչին մի բան, որևէ թեթև մթերք կամ մի ձեռք հագուստեղեն։ Իսկ ինչ կվերաբերի ունետեր-օֆիցերի այրուն, որը հիմա առևտուրով է զբաղվում և որին ես իբր*

Քե ծեծել եմ տվել, ապա այդ զրպարտություն է, աստված է վկա, զրպարտություն է։ Այդ իմ չարակամներն են հնարել. այդ մարդիկ պատրաստ են ինձ կյանքից զրկելու։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Բայց ես ոչ մի գործ չունեմ նրանց հետ... (Տարակուսած)— Սակայն ես չեմ հասկանում, ինչո՞ւ եք խոսում չարակամների կամ քե ինչ-որ ունտեր-օֆիցերի այրու մասին... Ունտեր-օֆիցերի կինը ուրիշ բան է, իսկ ինձ դուք չեք համարձակվի ծեծել տալ, այդքան հեռու գնալ չեք կարող... Ա՛յդ էր պակաս, սրա՛ն տեսեք... Ես կվճարեմ, կվճարեմ այդ փողը, բայց հիմա մոտս չունեմ։ Այդ պատճառով էլ նստած եմ այստեղ, որ ոչ մի կոպեկ չունեմ։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— (մի կողմ)— Օ՜, շատ ետ եկածն է։ Տես քե ո՛ւր խփեց։ Ինչ բոզ փչեց, արի ու գլուխ հանիր։ Մարդ չի իմանում, որ կողմից տուտը բռնի։ Է՛հ, փորձենք, տեսնենք, գուցե հաջողվի։ Ինչ լինելու է՝ բոզ լինի, փորձենք։ (Բարձրաձայն)— Եթե իրոք կարիք ունեք դրամի կամ որևէ այլ բանի, ապա ես պատրաստ եմ ծառայել այս իմ րոպեին։ Իմ պարտականությունն է օգնել երթևեկ ճամփորդներին։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Տվե՛ք, տվե՛ք ինձ փոխարինաբար։ Իսկույն ևեթ պանդոկատիրոջ հետ հաշիվներս կմաքրեմ։ Ինձ կգոհացնի միմիայն մի-երկու հարյուր ռուբլի կամ նույնիսկ՝ է՛լ պակաս։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— (մատուցելով թղթադրամները)— Ուղիղ երկու հարյուր ռուբլի, հոգ մի՛ տանեք հաշվելու։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (ընդունելով դրամը)— Խոնարհաբար շնորհակալ եմ։ Անմիջապես կուղարկեմ ձեզ գյուղից։ Հենց իսկույն ևեթ... ես տեսնում եմ, դուք ազնվահոգի մարդ եք։ Այժմ այլ բան է։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— (մի կողմ)— Դե, փա՛ռք աստծո, փողը վերցրեց։ Գործս, կարծես, հաջողակ է գնում։ Ես նրան դիտմամբ երկու հարյուրի փոխարեն չորս հարյուր սլացրի։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Է՛յ, Օսի՛պ (Օսիպը ներս է մտնում)։— Կանչիր պանդոկի ծառային։ (Քաղաքապետին և Դոբչինսկուն) —Բայց ինչո՞ւ եք կանգնած, շնորհ արեք, նստեք։ (Դոբչինսկուն)— Խոնարհաբար խնդրում եմ։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ոչինչ, մենք կկանգնենք։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Շնորհ արեք, նստե՛ք։ Ես հիմա լիովին տեսնում եմ ձեր բաց և բարեհոգի բնավորությունը և սիրալիրությունը, թե չէ, խոստովանում եմ, կասկած ունեի, որ դուք եկել եք, որպեսզի ինձ... (Դոբչինսկուն)— *Նստեցե՛ք։*

Քաղաքապետն ու Դոբչինսկին նստում են։ Բոբչինսկին ճաչում է դռնից և ափանոց դնում։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— (մեկուսի)— *Պետք է ավելի համարձակ լինել։ Ուզում է, որ մենք իրեն համարենք ինկոգնիտո։ Լավ, մենք էլ թող ինչենք, ձևացնենք, իբր թե չգիտենք, թե ինչ մարդ է։* (Բարձրաձայն)— *Ես, պաշտոնիս համաձայն, տեղիս կալվածատեր Պյոտր Իվանովիչ Դոբչինսկու հետ մի պտույտ կատարելով՝ հատկապես մտա՞նք այս հյուրանոցը տեղեկանալու՝ արդյոք երթևեկ ճամփորդներին համապատասխան ուշադրություն ցո՞ւյց է տրվում, թե՞ ոչ, որովհետև ես նման չեմ այն քաղաքապետներին, որոնք չեն մտահոգվում նման բաներով։ Սակայն ես, ես, բացի պաշտոնական պարտականությունից, նաև քրիստոնեական մարդասիրությունից դրդված, ցանկանում եմ, որպեսզի ամեն մի մահկանացուի ցույց տրվի լավ ընդունելություն— և ահա, կարծես թե հատուկ պարզևի արժանացա՝ նման հաճելի ծանոթություն ձեռք բերելով։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ես նույնպես շատ ուրախ եմ։ Առանց ձեզ, խոստովանում եմ, ես երկար կնստեի այստեղ. բնավ չգիտեի՝ ինչպես պարտքս վճարեմ։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.—(մեկուսի)— *Հա՛, հեքիաթնե՛ր։ Չգիտե՞ր ինչպես վճարես։* (Բարձրաձայն)— *Կհամարձակվե՞մ արդյոք հարցմունք անել՝ ո՞ւր և դեպի ո՞ր վայրերն եք բարեհաճել ուղևորվել։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Գնում եմ Սարատովի նահանգը, սեփական գյուղս։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.—(մեկուսի, դեմքին ճեգնական արտահայտություն տալով)— *Սարատովի նահանգը, հը՞, չի էլ կարմըրում։ Օ՛, սրա հետ պետք է զգաստ լինել։* (Բարձրաձայն)— *Բարեհաճել եք բարեբեր գործ ձեռնարկել։ Սակայն ահա ճանապարհների նկատմամբ, ասում են, մի կողմից տհաճություններ են լինում ձիերը փոխելու ուշացման պատճառով,*

բայց չէ՞ որ, մյուս կողմից, հոգեկան հաճույք է։ Դուք, թվում է քե՝ ավելի սեփական բավականության համար եք ուղևորված։

ԽԼԻՍՏԱԿՈՎ.— Ո՛չ, հորս պահանջով. սրտնեղել է ծեր-րուկը, որ Պետերբուրգում պաշտոնավարելիս շոշափելի արդյունք չի տվել. նա կարծում է՝ եկար-չեկար՝ իսկույն Վլադիմիրի շքանշան կկպցնեն կրծքիդ։ Չէ՛, ես իրե՛ն կուղարկեի քարշ գալու գրասենյակներում։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— (մեկուսի)— Տեսեք քե ինչ ստեր է հորինում, մինչև իսկ ծերունի հորը մեջ գցեց։ (Բարձրաձայն) —Եվ երկա՞ր ժամանակով եք բարեհաճել մեկնել։

ԽԼԻՍՏԱԿՈՎ.— Ճիշտն ասած՝ չգիտեմ։ Չէ՞ որ իմ հայրը համառ է և հիմար, քավքաոռել է, փտած կոճղ դարձել։ Ես նրան ուղղակի կասեմ. ինչպես կուզեք, բայց առանց Պետերբուրգի ես ապրել չեմ կարող։ Եվ, իրոք որ, ինչո՞ւ պետք է ես կյանքս կործանեմ գյուղացիների մեջ։ Այժմ կարիքներս այլ են։ Հոգիս լուսավորության է ծարավի։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— (մեկուսի)— Տես քե ինչ կծիկ կապեց։ Փչում է, փչում՝ ու մի տեղ էլ սոթ չի տալիս։ Մի շենք ու շնորհքը տես. կարճահասակ, քնձռուտ։ Եղունգովս կարող կլինեի ճզմել։ Դու դեռ կա՛ց, լեզուդ բաց անել կտամ։ Հնար կգտնեմ քեզ խոսեցնելու։ (Բարձրաձայն)— Ճիշտ բարեհաճեցիք նկատել։ Ի՞նչ կարելի է անել խուլ գավառամասում։ Վերցնենք, քեկուզ, մեր վիճակը. գիշերներ ես լուսացնում, ջանում ես հայրենիքիդ համար, ոչինչ չես խնայում, իսկ ե՞րբ հատուցման կարժանանաս՝ անհայտ է. (Աչք ածելով սենյակին) — կարծես քե այս սենյակը փոքր-ինչ խոնավ է։

ԽԼԻՍՏԱԿՈՎ.— Անպիտան սենյակ է, փայտոջիլներ կան, որոնց նմանը կյանքումս տեսած չեմ։ Շների պես են կծում։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ասացեք խնդրեմ, այսպիսի մի լուսավորյալ հյուր նեղություն է կրում ո՞ւմ երեսից— ինչ-որ անպիտան փայտոջիլների, որոնք իսկի ծնված էլ չպիտի լինեին այս աշխարհում։ Կարծես քե մութ էլ է այս սենյակում։

ԽԼԻՍՏԱԿՈՎ.— Բոլորովին մութ է։ Հյուրանոցատերը սովորություն է սահմանել ճրագ չտալու։ Երբեմն մարդ ուզում է զբաղվել, կարդալ կամ խելքս կփչի մի բան հնչինահել՝ չեմ կարողանում։ Մութն է, մութը...

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Կհամարձակվե՞մ արդյոք խնդրել ձեզ... բայց ո՛չ, արժանի չեմ։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ի՞նչ կա։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ո՛չ, ո՛չ, արժանի չեմ, արժանի չեմ։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Բայց ի՞նչ կա որ։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ես կհանդգնեի... Իմ տանը հրաշալի սենյակ կա ձեզ համար, լուսավոր, հանգիստ... Բայց ոչ, ինքս զգում եմ, այդ արդեն չափազանց մեծ պատիվ կլիներ... Ջվիրավորվե՛ք։ Աստված է վկա, պարզ սրտով առաջարկեցի։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ընդհակառակը, համեցեք, ես ուրախությամբ, ինձ շատ ավելի հաճելի է մասնավոր տան մեջ, քան թե այս գինետանը։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ապա, ես ինչպե՞ս ուրախ կլինեմ, ապա կինս ինչպե՞ս կուրախանա։ Այդ արդեն իմ բնավորությունն է։ Հյուրասեր եմ մանկությունից, մանավանդ երբ հյուրը լուսավորյալ անձ է։ Ջկարծեք, որ շողոքորթելու համար եմ ասում. ոչ, այդ արատից ես զերծ եմ, լիահոգությունս է դրդում։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ճոնարհաբար շնորհակալ եմ։ Ես էլ այդպես եմ, չեմ սիրում երեսպաշտ մարդկանց։ Ես շատ եմ հավանում ձեր անկեղծությունն ու սրտաբացությունը, և ես, խոստովանում եմ, այլ բան չէի պահանջի մարդկանցից, բայց ևթե միմիայն հավատարմություն և հարգանք, հարգանք և հավատարմություն։

ՏԵՍԻԼ IX

Նռաճի և պանդոկի սպասավորը, որին ուղեկցում է Օսիպը։ Բորչիճսկին ճերս է ճայում դռնից

ՍՊԱՍԱՎՈՐ.— Բարեհաճել եք հարցնե՞լ։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Այո՛, ներկայացրո՛ւ հաշիվը։

ՍՊԱՍԱՎՈՐ.— Քիչ առաջ ձեզ արդեն ներկայացրի հաշիվը։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ես քո այդ հիմար հաշիվները հիշելու պուխ չունեմ։ Ասա՛, որքա՞ն էր գումարը։

*ՍՊԱՍԱՎՈՐ.— Առաջին օրը դուք բարեհաճեցիք ճաշ

պահանջել, իսկ հետևյալ օրը նախաճաշեցիք սաղմոնով ու դրանից հետո սկսեցիք ապատիկ վերցնել։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ապո՜ւշ։ Սկսել է մեկ-մեկ հաշվել։ Ընդամենը որքա՞ն է հասնում։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Բայց դուք մի՛ հաճեք անհանգստանալ, նա կսպասի։ (Սպասավորին)— *Դո՛ւրս կորիր, քեզ կուղարկեն։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ճիշտ որ, այդպես էլ կարելի է։ (Պահում է փաղերք)։

Սպասավորը գնում է, դռնից ներս է նայում Բոբչինսկին։

ՏԵՍԻԼ X

Քաղաքապետ, Խլեստակով, Բոբչինսկի

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ձե՛ք բարեհաճի արդյոք դիտել մեր քաղաքի որոշ հաստատությունները, ինչպես, օրինակ, աստվածահաճո և այլն։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Իսկ այնտեղ ի՞նչ կա։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Հենց այնպես, ծանոթանաք գործերի ընթացքին, կարգ ու կանոնին։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Մեծավ ուրախությամբ։ Պատրաստ եմ։

Բոբչինսկին գուրս է ցցում գլուխը։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Նմանապես, եթե կամենալու լինեք, կալցելինք գավառական դպրոցը՝ դիտելու գիտությունների դասավանդման կարգն ու եղանակը։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Համեցե՛ք, համեցե՛ք։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ապա, եթե կհաճեք այցելել բերդը և քաղաքի բանտերը, կդիտեք, թե ինչպես ենք պահում հանցագործներին։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Բայց ինչո՞ւ բանտերը։ Ավելի լավ է աստվածահաճո հաստատությունները դիտենք։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ինչպե՞ս կհաճեք։ Ինչպե՞ս եք մտադիր։ Ձեր սեփական կառքո՞վ, թե՞ ինձ հետ միասին։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Չէ, ավելի լավ է ձեզ հետ միասին։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— (Բոբչինսկուն)— Դե, Պյոտր Իլյանովիչ, ձեզ համար այլևս տեղ չմնաց։

ԴՈՒԶԻՆՍԿԻ.— *Վնաս չունի, ես հենց այնպես։*

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— (կամաց Դոբչինսկուն)— *Դուք հիմա վազեցեք, որքան ոտքերումդ ուժ կա, և տարեք հասցրեք երկու տոմսակ. մեկը աստվածահաճո հաստատություն՝ Զեմլյանիկային, իսկ մյուսը՝ կնոջս։* (Խլեստակովին)— *Կհամարձակվե՞մ արդյոք թուլլտվություն խնդրելու մի երկու տող գրել տիկնոջս, որպեսզի պատրաստություն տեսնի՝ պատվավոր հյուրին ընդունելու։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— *Ինչ կարիք կա... Ասենք այստեղ քանաք կա, միայն թե թուղթ՝ չգիտեմ... Գուցե այս հաշվեցուցակի վրա։*

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— *Հենց այդտեղ էլ կգրեմ։* (Գրում է և միաժամանակ խոսում ինքն իրեն)— *Հիմա կտեսնենք, թե ինչպես կընթանա գործը նախաճաշիկից և հաստափոր շշիկից հետո։ Նահանգական մադերա էլ ունենք. տեսքով մի բան չէ՛, բայց փղին գետին կտապալի։ Միայն թե հասկանամ՝ ինչացու է և ինչ չափով պետք է զգուշանալ սրանից։* (Ավարտում է և հանձնում Դոբչինսկուն, որը մոտենում է դռանը, բայց այդ վայրկյանին դուռը տեղից պոկվում է և մյուս կողմից ականջ դնող Բոբչինսկին դռան հետ միասին ներս է բեմ։ Բոլորը բացականչություն են արձակում։ Բոբչինսկին ատրի է ելնում)։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— *Ի՞նչ եղավ։ Հո չվնասվեցի՞ք։*

ԲՈԲՉԻՆՍԿԻ.— *Վնաս չունի, վնաս չունի։ Ոչ մի խանգարում, միայն քթիս վրա մի փոքրիկ քերծվածք։ Ես կանցնեմ Խրիստիան Իվանովիչի մոտ. նա մի սպեղանի ունի, կանցնի-կգնա։*

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— (նախատական նշան է անում Բոբչինսկուն և դիմում է Խլեստակովին)— *Մի՛ անհանգստանաք։ Խոնարհաբար խնդրում եմ, համեցե՛ք։ Ձեր սպասավորին ես կասեմ, որ ձեր ճամպրուկը փոխադրի։* (Օսիպին)— *Բարեկամըս, դու ամեն ինչ փոխադրիր ինձ մոտ, քաղաքապետի տունը ամեն մեկը ցույց կտա։ Խոնարհաբար խնդրում եմ։* (Խլեստակովին ճամփա տալով՝ ետևում է նրան, բայց ետ դառնալով՝ նախատիճով ասում է Բոբչինսկուն)— *Դուք էլ ուրիշ տեղ չգտաք վայր ընկնելու, այնպես էլ ձգվեցիք հատակովը մեկ, սատանան գիտե, թե ինչի նման էր։* (Գնում է, նրա ետևից՝ Բոբչինսկին։ Վարագույրն ընկնում է)։

ԱՐԱՐՎԱԾ ԵՐՐՈՐԴ

Առաջին արարվածի սենյակը

ՏԵՍԻԼ I

Աննա Անդրեևնան և Մարիա Անտոնովնան կանգնած են լուսամուտի մոտ ճույն դիրքով

Աննա Անդրեևնա.— Ահա տե՛ս, ամբողջ մի ժամ է ապասում ենք, և մեղավորը դու ես՝ քո հիմար սեթևեթանքով. արդեն բոլորովին հագնվել էիր, բայց չէ՛, էլի՛ պետք էր մլուլ տալ։ Չպետք է քեզ լսեի։ Սիրտս ճաքում է, և հակառակի պես՝ ոչ ոք չի երևում, կարծես թե սատկոտել են բոլորը։

Մարիա Անտոնովնա.— Հավատացնում եմ, մայրիկ, մի-երկու րոպեից ամեն ինչ կիմանանք։ Ավդոտյան ուր որ է՝ կերևա։ (Ակնդետ նայում է լուսամուտից և բացականչում)— Ա՛խ, մայրի՛կ, մայրի՛կ, մարդ է գալիս, ա՛յ, փողոցի ծայրին։

Աննա Անդրեևնա.— Ո՞ւր է, որ գալիս է։ Գլխիդ մեջ միշտ երևակայական բաներ են պտտում։ Հա՛ էլի, գալիս է։ Բայց ո՞վ է եկողը։ Կարճահասակ է... հագին ֆրակ... տեսնես ո՞վ է։ Լը՛ռ։ Պայթելու բան է, ո՞վ կարող է լինել։

Մարիա Անտոնովնա.— Դոբչինսկին է, մայրիկ։

Աննա Անդրեևնա.— Ի՞նչ Դոբչինսկի։ Ակքիդ միշտ ինչ ասես, որ չի երևում։ Բոլորովին էլ Դոբչինսկին չէ։ (Թաշկինակով նշան է անում)— Է՛յ, դուք, այս կո՞ղմ եկեք, քո՛ւտ։

Մարիա Անտոնովնա.— Ճիշտ եմ ասում, մայրիկ, Դոբչինսկին է։

Աննա Անդրեևնա.— Դե տես, դիտմամբ ես ասում, միայն թե հակառակես։ Ասացին քեզ՝ Դոբչինսկին չէ։

Մարիա Անտոնովնա.— Հիմա ինչպե՞ս, մայրիկ, տեսնո՞ւմ եք, որ Դոբչինսկին է։

Աննա Անդրեևնա.— Դե լա՛վ, Դոբչինսկին է, այժմ տեսնում եմ, էլ ինչի՞ ես վիճում։ (Լուսամուտից կանչելով)— Շո՛ւտ, շո՛ւտ, դուք դանդաղ եք գալիս։ Դե՛, ի՞նչ կա։ Հը՛, որտե՞ղ են։ Դե այդտեղից ասացեք, վնաս չունի։ Ի՞նչ։ Ախ՛ստ

մարդ է։ Ի՞նչ։ Իսկ ամուսի՞նս, ամուսի՞նս (Փոխ–ինչ ենթա–նալով լուսամուտից, սրտնեղած)—*Ինչ հիմար մարդ է։ Մինչև նեքս չմտնի, ոչինչ չի պատմի։*

ՏԵՍԻԼ II

Նույնը և Դոբչինսկի

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Դե, ասացեք, խնդրեմ։ Դուք խրղճմըտանք ունեք։ Հույսս հենց միմիայն դուք էիք, որպես կարգին մարդ։ Բոլորը հանկարծ դուրս վազեցին և դուք էլ նրանց ետևից։ Եվ ահա ոչ ոքից մինչև հիմա չեմ կարողանում որևէ հաստատ բան իմանալ։ Ջե՞ք ամաչում։ Ես մկրտել եմ ձեր վանիչկային և Լիզանկային, իսկ դուք ինչպե՞ս եք հետս վարվում։

ԴՈԲՉԻՆՍԿԻ.— Աստված վկա, քավորակին, այնպես էի վազում հարգանքս մատուցելու, ուղղակի շնչակտուր եմ եղել։ Հարգանքներս Մարիա Անտոնովնային։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Բարև ձեզ, Պյոտր Իվանովիչ։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Դե, ինչպե՞ս եղավ։ Պատմեցեք, ի՛նչը ինչպե՛ս է։

ԴՈԲՉԻՆՍԿԻ.— Անտոն Անտոնովիչն ուղարկեց ձեզ այս տոմսակը։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Դե ո՞վ է, ո՞վ է, ի՞նչ մարդ է, գեներա՞լ է։

ԴՈԲՉԻՆՍԿԻ.— Ո՛չ, գեներալ չէ՛, բայց պակասն էլ չէ։ Այնպիսի բարեկրթություն, ծանրակշիռ վարվեցողություն։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Ուրեմն, դա հենց այն մարդն է, որի մասին ամուսնուս գրե՞լ էին։

ԴՈԲՉԻՆՍԿԻ.— Իսկ և իսկ։ Ես առաջինը հայտնաբերեցի Պյոտր Իվանովիչի հետ միասին։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Դե՛, պատմեցեք, ի՞նչ եղավ, ինչպե՞ս եղավ։

ԴՈԲՉԻՆՍԿԻ.— Փա՛ռք աստծո, ամեն ինչ բարեհաջող է։ Սկզբից փոքր-ինչ խիստ վերաբերվեց Անտոն Անտոնովիչին, այո՛, բարկանում էր և ասում, որ հյուրանոցում լավ չէ, ձեզ մոտ էլ չի փոխադրվի, և քե չի ուզում Անտոն Անտոնովիչի փոխարեն բանտ նստել։ Բայց հետո, երբ իմացավ նրա ան-

մեղուքյունը և փոքր-ինչ մտածում զրուցեց նրա հետ, իսկույն իր կարծիքը փոխեց, և, փա՜ռք աստծո, ամեն ինչ լավ ընթացավ։ Հիմա նրանք գնացել են աստվածահաճո հաստատությունները դիտելու... Թե չէ, խոստովանք լինի, Անտոն Անտոնովիչը կասկածում էր՝ արդյոք որևէ գազտնի մատնագիր չի՞ եղել։ Ես նույնպես մի փոքր սիրտս փորս գցեցի։

Աննա Անդրեեվնա.— Դուք ի՞նչ կարիք ունեք վախենալու։ Դուք չեք պաշտոնավարում։

Դոբջինսկի.— Դե, գիտեք, երբ խոսողը բարձրաստիճան մի մարդ է, մի տեսակ եկկլուղ է պատում։

Աննա Անդրեեվնա.— Այդ թողնենք... այդ բոլորը դատարկ բաներ են։ Պատմեցեք, տեսքով ինչպե՞ս է, ծե՞ր է, թե՞ երիտասարդ։

Դոբջինսկի.— Երիտասարդ, բոլորովին երիտասարդ, քսաներեքից ոչ ավելի, իսկ խոսում է՝ ասես ծերունի լինի։ Համեցեք, ասում է, ես կերթամ այստեղ էլ, այնտեղ էլ... (Ձեռքերը տարուբերելով)— Այնպես հաճելի է դիտել։ Ես սիրում եմ, ասում է, և՛ գրել, և՛ կարդալ, բայց խանգարում է այն, որ սենյակում, ասում է, փոքր-ինչ մութ է։

Աննա Անդրեեվնա.— Իսկ ինքն ինչպե՞ս է, սևահե՞ր, թե՞ շիկահեր։

Դոբջինսկի.— Ո՛չ, ավելի շագանակին է տալիս, աչքերն էլ ասես արագավազ մկնիկներ լինեն, մարդ ուղղակի շփոթվում է նրան նայելիս։

Աննա Անդրեեվնա.— Ի՞նչ է գրում ինձ այս տոմսակում։ (Կարդում է)— «Շտապում եմ տեղեկացնել քեզ, հոգյակս, որ դրությունս բավական ողբալի էր։ Բայց, աստծո ողորմությամբ, երկու ֆֆու վարունգի և առանձնապես կես բաժին խավիարի համար մեկ ռուբլի քսանհինգ կոպեկ...» (դադարելով)։— Ես ոչինչ չեմ հասկանում, ինչացո՞ւ են այստեղ վարունգները և խավիարը։

Դոբջինսկի.— Այս երկտողը Անտոն Անտոնովիչը գրեց մի պատահական թերթիկի վրա, շատ էր շտապում. այդտեղ ինչ-որ հաշիվ կա գրած։

Աննա Անդրեեվնա.— Այո՛, այո՛, ճիշտ է։ (Շարունակում է կարդալ)։— «Բայց, աստծո ողորմությամբ, կարծեմ ամեն ինչ լավ վախճան կունենա։ Իսկույն կարգի բեր բարձր-

աստիճան հյուրի համար մեր այն սենյակը, որ դեղին թղթով է պաստառած։ Ճաշին նոր բան ավելացնել չջանաս, որովհետև ուտելու ենք աստվածահաճո հաստատության մեջ, Արտեմի Ֆիլիպովիչի մոտ։ Բայց գինու պատրաստություն տեսա։ Արդուլին վաճառականին ասա, որ ուղարկի լավագույն գինուց, ապա թե ոչ՝ նրա ամբողջ մառանը տակնուվրա կանեմ։ Համբուրելով, հոգյակս, թաթիկդ, մնամ քո Անտոն Սկվոզնիկ-Դմուխանովսկի...»։ Ա՜խ, տեր աստված, անհրաժեշտ է, սակայն, շտապել։ Է՜յ, ո՞վ կա այդտեղ։ Մի՜շկա։

ԴՈՒՔԻՆՍԿԻ.— (վազում է դեպի դուռը և կանչում)— Մի՜շկա, Մի՜շկա, Մի՜շկա։

Միջկաճ-մաճում է։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Լսի՛ր ինձ. վազի՛ր վաճառական Արդուլինի մոտ... Կա՛ց, ես երկտող կտամ քեզ։ (Նստում է սեղանի մոտ, գրում է և միաժամանակ խոսում)— Այս տոմսակը կտաս կառապան Սիդորին, թող վազեվազ գնա վաճառական Արդուլինի մոտ և այնտեղից գինի բերի։ Իսկ ինքդ իսկույն ևեթ գնա՛, մի լավ կարգի բեր այն սենյակը հյուրի համար։ Այնտեղ պետք է մահճակալ դնել, լվացարան և այլն։

ԴՈՒՔԻՆՍԿԻ.— Դե՛, Աննա Անդրեևնա, ես հիմա վազեմ տեսնեմ ինչպե՞ս է նա այնտեղ դիտում չորս կողմը։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Գնացե՛ք, գնացե՛ք, էլ չեմ պահի ձեզ։

ՏԵՍԻԼ III

Աննա Անդրեևնա և Մարիա Անտոնովնա

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Դե՛, Մաշենկա, մեզ անհրաժեշտ է հիմա զբաղվել մեր տուալետով[1]։ Մայրաքաղաքից է եկել, աստված մեզ պահպանի, ծաղրի արժանի չերևանք։ Քեզ ամենից վայել կլինի հագնել քո երկնագույն զգեստը՝ մանր փոքրերով։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Ֆի՛, մայրի՛կ, երկնագույնը ինձ բոլորովին դուր չի գալիս։ Լյապկին-Տյապկինի կինն էլ է

---

1 Տուալետ — զգեստավորում, արդուզարդ։

երկնագույն հագնում, Զեմլյանիկայի աղջիկն էլ... Ո՛չ, ավելի լավ է ծաղկավորս հագնեմ։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Ծաղկավո՞րը... Ասում ես միայն հակառակելու համար։ Երկնագույնը ավելի հարմար կլինի, որովհետև ես ուզում եմ հագնել հարդագույնը, ես շատ եմ սիրում հարդագույնը։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Ա՛խ, մայրիկ, ձեզ չի սազում հարդագույնը։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Ինձ չի սազում հարդագո՞ւյնը։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Չի՛ սազում, գրազ կգամ, չի՛ սազում։ Սազելու համար հարկավոր է բոլորովին թուխ աչքեր ունենալ։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Այս էլ նոր բան։ Իսկ իմ աչքերը թուխ չե՞ն։ Ամենից թուխն են։ Ի՞նչ հիմարություններ է դուրս տալիս։ Ինչպե՞ս է, որ թուխ չեն, երբ թուղթ բաց անելիս ես խալիկի աղջկա վրա եմ բաց անում։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Ա՛խ, մայրիկ, դուք ավելի փոսիկի աղջիկ եք։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Հիմարություն է, կատարյալ հիմարություն։ Ես երբեք փոսիկի աղջիկ չեմ եղել։ (Շտապով գնում է դուրս Մարիա Անտոնովնայի ետևից)։— *Տես, ինչե՞ր է հնարում, փոսիկի աղջի՛կ։ Աստված գիտե, թե ինչ է։*

Նրանց գնալուց հետո բացվում է դուռը և Միշկան աղբ է դուրս թափում։ Հակառակ դռնից գալիս է Օսիպը՝ ճամպրուկը գլխին դրած։

ՏԵՍԻԼ IV

Միշկա և Օսիպ

ՕՍԻՊ.— Ո՞ր կողմը գնամ։

ՄԻՇԿԱ.— Այս կողմ, քեռի, այս կողմ։

ՕՍԻՊ.— Կա՛ց, թող մի քիչ շունչ առնեմ։ Ա՛խ, էս ինչ սիրտ մաշող կյանք է։ Դասարկ փորով ամեն մի բեռ ծանր կերևա։

ՄԻՇԿԱ.— Ասացեք, քեռի, շուտո՞վ կգա ձեր գեներալը։

ՕՍԻՊ.— Ի՞նչ գեներալ։

ՄԻՇԿԱ.— Ձեր պարոնն էլի՛։

ՕՍԻՊ.— Պարո՞նս... Նա ի՞նչ գեներալ է որ...

ՄԻՇԿԱ.— Բա գեներալ չի՞։

ՕՍԻՊ.— Գեներալ է, միայն քե հակառակ կողմից։

ՄԻՇԿԱ.— Իսկ դա իսկական գեներալից ավելի՞ է, քե՞ պակաս։

ՕՍԻՊ.— Ավելի է։

ՄԻՇԿԱ.— Տեսա՞ր բանը։ Դրա համար է, որ մեզ մոտ իրար են անցել։

ՕՍԻՊ.— Լսիր, ա՛յ տղա, ես տեսնում եմ՝ դու ժիր տղա ես, ի՞նչ կլինի՝ մի որևէ ուտելիք հայթողացնես։

ՄԻՇԿԱ.— Դե՛, ձեզ համար, քեռի, դեռ ոչինչ պատրաստ չէ։ Հասարակ կերակուր դուք չեք ուտի, իսկ ա՛յ, հենց որ ձեր պարոնը ճաշի նստի, ձեզ էլ նույն կերակրից բաժին կհանեն։

ՕՍԻՊ.— Լա՛վ, իսկ էդ հասարակ ասածիդդ ի՞նչ ունեք։

ՄԻՇԿԱ.— Շլի, կաշա և կարկանդակ։

ՕՍԻՊ.— Դե՛ սը տուր շլի՛ն էլ, կաշա՛ն էլ, կարկանդա՛կն էլ, վնաս չի տա, բոլորը կուտենք։ Դե՛, ճամպրուկը տանենք։ Այնտեղ ուրիշ դուռ էլ կա՞։

ՄԻՇԿԱ.— Կա։

Երկուսով դուրս են տանում ճամպրուկը կողմի սենյակը։

ՏԵՍԻԼ V

Ոստիկանները բաց են անում դռան երկու փեղկերը։ Մտնում է ելեստակովը, նրա հետևից խոնարհաբար, ապա՝ ատավածանման հատատուրյուններ հոգաբարձուն, դպրոցների տեսուչը, Դոբչինսկին և Բոբչինսկի՝ իրեն սպեղանի դրած։ Քաղաքապետը մտանելուն՝ ոստիկաններին ճատակին ընկած բղխիկը։ Նրանք ելնելն և իրար հրելով՝ վազում են և վերցնում այն։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Լավ հատատուրյուններ են։ Ինձ դուր է գալիս, որ դուք սովորություն ունեք երթևեկ ամփոփողներին ամեն ինչ ձեր քաղաքում ցույց տալ։ Ուրիշ քաղաքներում ինձ ոչինչ ցույց չեն տվել։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ուրիշ քաղաքներում, կհամարձակվեմ

ղեկուցել ձեզ, քաղաքապետն ու աստիճանավորները գլխավորաբար հոգ են տանում իրենց սեփական օգտի մասին։ Իսկ այստեղ, կարելի է ասել, այլ մտահոգություն չկա, բայց եթե բարեկարգությամբ և աշխուժությամբ արժանանալ իշխանության ուշադրությանը։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Նախաճաշը շատ լավն էր։ Կշտացել եմ տրաքվելու չափ։ Դուք ամեն օր այդպիսի նախաճաշի՞կ եք ունենում։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Հատկապես նման հաճելի հյուրի համար։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ես ուտել սիրում եմ։ Չէ՞ որ մարդ հենց նրա համար է ապրում, որպեսզի կյանքից քաղի հաճույքի ծաղիկները։ Այն ձուկը ինչպե՞ս էր կոչվում։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՋ.— (մոտ վազելով)— Լաբարդան։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Շատ համեղն է։ Այն որտե՞ղ էր, որ նախաճաշեցինք։ Հիվանդանո՞ց էր, ինչ էր։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՋ.— Ճիշտ այդպես, աստվածահաճո հաստատության մեջ։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Հիշում եմ, հիշում եմ, այնտեղ մահճակալներ կային շարած։ Իսկ հիվանդներն առողջացե՞լ են։ Այնտեղ, կարծեմ, հիվանդ քիչ կար։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՋ.— Մի տասը հոգի, ոչ ավելի։ Իսկ մյուսները բոլորն առողջացել են։ Այդ արդեն այդպես է սահմանված, կարգ ու կանոնն է այդպես։ Այն օրից, ինչ ես ստանձնեցի ղեկավարությունը,— գուցե ձեզ նույնիսկ անհավատալի թվա,— բոլորն էլ ճանճերի պես ապաքինվում են։ Հիվանդը մեր հիվանդանոցը մտած-չմտած, արդեն առողջանում է, և ոչ այնքան դեղորայքի, որքան ազնվության և բարեկարգության շնորհիվ։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ասել չի լինի, թույլ տվեք ղեկուցել ձեզ, թե ինչ գլխացավանք է քաղաքապետի պարտականությունը։ Այնքան գործեր են բարդվում, թե՛ մաքրության վերաբերյալ, թե՛ նորոգումների, թե՛ բարեկարգելու... Մի խոսքով, ամենախելոք մարդը կշվարեր, սակայն, գոհություն աստծուն, ամեն ինչ բարեհաջող է ընթանում։ Մի այլ քաղաքապետ, հարկավ, իր շահերի մասին կհոգար, բայց կհավատա՞ք արդյոք, անգամ անկողին մտնելիս՝ շարունակ մտածում եմ.

«Տե՛ր աստված, ինչպե՞ս անեմ, որպեսզի իշխանությունը տեսնի իմ ջանքերը և գոհ լինի...», կպարգևատրի քե ոչ՝ այդ, իհարկե, իր կամքն է, բայց գոնե իմ խիղճը հանգիստ կլինի։ Երբ քաղաքում ամենուրեք կարգ ու կանոն է տիրում, փողոցները մաքուր են, կալանավորները լավ են պահվում, հարբեցողները քիչ են... էլ ուրիշ ի՞նչ է պետք։ Աստված է վկա, ոչ մի մեծարանքի ակնկալություն չունեմ։ Ինչ խոսք, իհարկե, հրապուրիչ բան է, սակայն առաքինության հանդեպ ամեն ինչ ունայնություն է և փուչի։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՋ.— (մեկուսի).— Այս ետ եկածին տես, ինչպես է նկարագրում։ Ի՞նչ անես, աստված շնորհք է տվել մարդուն։

ԱԼԵՍԱԿՈՎ.— Իրավացի եք։ Ես, խոստովանում եմ, ինքս սիրում եմ երբեմն խորհրդածել. երբեմն արձակ է դուրս գալիս, երբեմն էլ, տեսար, չափածո դուրս եկավ։

ԲՈԲՉԻՆՍԿԻ.— (Ինքչինկուն)— Ասածն արդար է, բոլորն արդարացի է, Պյոտր Իվանովիչ։ Այնպիսի դիտողություններ է անում... Երևում է, որ գիտություն է ձեռք բերել։

ԱԼԵՍԱԿՈՎ.— Ասացեք խնդրեմ, ձեզ մոտ զվարճատեղիներ չկա՞ն, ասենք քե ընկերություններ, որտեղ կարելի է, օրինակ թուղթ խաղալ։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— (մեկուսի)— Էհե՛, հասկանում ենք, աղավնյակս, ում բոստանն ես քարեր նետում։ (Բարձրաձայն) —Աստվա՜ծ պահի ու պահպանի. նման ընկերությունների հոտ էլ չկա այստեղ։ Ձեռքս վերցրած չկամ երբեք խաղաթուղթ ասածը, անգամ չգիտեմ, քե ինչպես են խաղում այդ թղթերով։ Երբեք չեմ կարողացել սառնասիրտ նայել նրանց, և եթե պատահի, որ աչքովս ընկնի մի որևէ աղյուսի թագավոր կամ նման մի բան, այնպիսի զզվանք եմ զգում, որ միայն թքում ու հեռանում եմ։ Մի անգամ պատահեց, երեխաներին զբաղեցնելով՝ խաղաթղթերից մի տնակ սարքեցի. դրանից հետո ամբողջ գիշեր երազիս տեսնում էի այդ անիծած խաղաթղթերը։ Կորչեն գնան, կարելի՞ է արդյոք քանկարժեք ժամանակը վատնել նրանց վրա։

ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՋ.— (մի կողմ)— Անցած օրը չէ՞ր, որ այս սրիկան թղթախաղում մի սիրունիկ հարյուրանոց թոցրեց ինձնից։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ավելի լավ է՝ ես այդ ժամանակը նվիրեմ պետության շահերին։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Այդ մեկը ո՛չ, իզուր եք դուք... Ամեն ինչ կախված է նրանից, թե ով ոչ կողմից է նայում խնդրին։ Եթե, օրինակ, խաղդ դադարեցնես այն ժամանակ, երբ հարկավոր է երեք անկյունից ծալել[1]... այդ դեպքում, իհարկե... Չէ՞, մի՛ ասեք, երբեմն շատ հրապուրիչ բան է թղթախաղը։

ՏԵՍԻԼ VI

Նույնը, Աննա Անդրեևնա և Մարիա Անտոնովնա

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Համարձակվում եմ ներկայացնել ընտանիքս՝ կինս և դուստրս։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (բարև տալով)— Որքա՜ն երջանիկ եմ, տիկին, որ հատուկ հաճույք ունեմ հանդիպելու ձեզ։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Մեզ համար՝ է՛լ ավելի հաճելի է հանդիպել նման մի անձնավորության։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (նազանքով).— Շնո՜րհ արեք, տիկին, բոլորովին ընդհակառակը, ինձ ավելի է հաճելի։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Ինչպե՞ս կարելի է։ Դուք բարեհաճում եք այդ ասել հաճոյախոսելու համար։ Խոնարհաբար խնդրում եմ նստել։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ձեր առաջ կանգնելն արդեն երջանկություն է, սակայն, եթե անպատճառ ցանկանում եք, ես կնստեմ։ Որքա՜ն երջանիկ եմ, որ վերջապես նստած եմ ձեր կողքին։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Շնո՜րհ արեք, բնավ չեմ հանդգնում իմ հասցեին ընդունել այդ... ես կարծում եմ, որ մայրաքաղաքից հետո վոյաժը[2] ձեզ խիստ տհաճ է թվացել։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ջափազանց տհաճ։ Սովորած լինելով ապրել, compronez-vous[3], բարեկիրթ հասարակության մեջ, հանկարծ ճամփորդի վիճակում լինել. կեղտոտ պանդոկներ, ագիտություն, խավար։ Եթե, խոստովանում եմ, չլիներ այս առիթը, որն ինձ... (նչի է ածում Աննա Անդրեևնային և կոտ-

---

[1] Այսինքն՝ խաղի ժամանակ եռապատիկել գրված գումարը։

[2] Վոյաժ — ճանապարհորդություն։ (Ազավաղված ֆր.)։

[3] Compronez vous *(կոմպրընե-վու)*— հասկանո՞ւմ եք։ (Ֆր.)։

տավում ևրա առաջ) այսպես պարզատրեց ինձ կրածիս համար...

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Իրոք որ, որքա՜ն տհաճ պիտի լինի ձեզ համար։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Սակայն և այնպես, տիկին, այս վայրկյանիս ինձ շատ հաճելի է։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Ինչպե՞ս կարելի է, մեծ պատիվ եք անում։ Ես արժանի չեմ։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Ինչո՞ւ չեք արժանի։ Դուք, տիրուհիս, արժանի եք։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Ես ապրում եմ գյուղում...

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Այո՛, բայց գյուղն էլ ունի իր բլրակներն ու առվակները... Դե, իհարկե, ո՞վ կհամեմատի Պետերբուրգի հետ։ Է՛հ, Պետերբո՜ւրգ, ինչ կյանք է իրոք։ Դուք, գուցե կարծեք, որ ես միմիայն գրագրությամբ եմ զբաղվում։ Ո՛չ, բաժանմունքի պետն իմ մտերիմն է։ Մեկ էլ տեսար, զարկեց ուսիս. անցի՛ր մեր տուն, եղբայր, ճաշենք։ Ես մի-երկու րոպեով միայն մտնում եմ դեպարտամենտ՝ ցուցմունք տալու, որ այսինչն այսպես լինի, այնինչն այնպես։ Իսկ հետո գրագրությամբ զբաղվող պաշտոնյան, մկան մեկը, քշում է իր գրիչը, տը՛, տը՛, տը՛, տը՛... և հա՛ գրում։ Ուզում էին նույնիսկ կոլեգիական ասեսոր[1] դարձնել ինձ, բայց մտածեցի՝ ի՞նչ կարիք կա։ Դոնապահն էլ վազում է հետևիցս սանդուղքն ի վայր՝ խողանակը ձեռքին. Թույլ տվեք, Իվան Ալեքսանդրովիչ, ես ձեր, ասում է, կոշիկները մաքրեմ։ (Քաղաքապետին) — Ինչո՞ւ եք, պարոնայք, կանգնած, խնդրեմ, նստեցե՛ք։

Մխժամանակ

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Մեր ատիճանն այնպես է, որ դեռ կարող ենք կանգնել։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— Մենք կկանգնենք։

ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՉ.— Մի հաճեք անհանգստանալ։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Առանց ատիճանների, խնդրում եմ նրանց։ (Քաղաքապետն ու մյուսները նստում են)։ Ես չեմ սի-

---

1 *Կոլեգիական ասեսոր — քաղաքացիական ծառայության մի ատիճան էր, որ մատակարարում էր զինվորական ծառայության կապիտանին։*

րում ձևակատարություններ։ Ընդհակառակը, եվ նույնիսկ ջանում, աշխատում եմ աննկատելի մնալ։ Բայց ոչ մի հնար չկա ծածկվելու, ոչ մի հնար։ Բավական է ոտքս դուրս դնեմ, արդեն ասում են. «Ահա, տեսեք, ասում են՝ Իվան Ալեքսանդրովիչն է անցնում»։ Իսկ մի անգամ նույնիսկ ինձ գլխավոր հրամանատարի տեղ դրին։ Զինվորները դուրս թափվեցին հաուպտվախտից[1] և հրացանով պատիվ տվին։ Հետո էր, որ մի օֆիցեր, իմ մոտ ծանոթը, ասաց ինձ. «Դե՛, եղբայր, մենք քեզ բոլորովին գլխավոր հրամանատարի տեղ ընդունեցինք»։

Աննա Անդրեեվնա.— Տեսեք թե ինչպե՜ս։

Խլեստակով.— Սիրունիկ դերասանուհիների հետ եմ ծանոթ։ Չէ՞ որ ես էլ դանազան վոդևիլներ... Գրողների հետ հաճախ հանդիպում եմ։ Պուշկինի հետ շատ մտերիմ ենք։ Հաճախ է պատահում, ասում եմ նրան. «Դե՛, ի՞նչ կա, Պուշկին եղբայր»։ «Ի՞նչ ասեմ, եղբայր,— պատասխանում է,— կա էլի...»։ Շատ ուրիշներ...

Աննա Անդրեեվնա.— Ուրեմն դուք գրում է՞լ եք։ Որքա՜ն հաճելի է, երևի, հեղինակ լինել։ Դուք, երևի, ամսագրերո՞ւմ էլ զետեղում եք։

Խլեստակով.— Այո՛, ամսագրերում էլ զետեղում եմ։ Ես շատ բաներ ունեմ հեղինակած՝ Ֆիգարոյի ամուսնությունը, Դևը Ռոբերտ Նորմա[2]։ Արդեն վերնագրերն էլ չեմ հիշում, և բոլորը՝ դիպվածով։ Միտք էլ չունեի գրելու, բայց թատրոնի դիրեկցիան ասում է. «Շնո՛րհ արա, եղբայր, գրիր որևէ բան»։ Ես էլ թե՝ «խնդրեմ, համեցեք, եղբայր»։ Եվ տեղնուտեղը, բոլորը մի երեկոյում կարծեմ գրեցի, բոլորին ապշեցրի։ Մտքի արտասովոր թեթևություն ունեմ։ Այն ամենը, ինչ լուսե է տեսել Բարոն Բրամբեուսի անվան տակ, Ֆրեդատ Նաղեժդան և Մոսկովսկի Տելեգրաֆը... Այդ բոլորն իմ գրածն է[3]։

---

1 Հաուպտվախտ — գլխավոր պահականոց։

2 «Ֆիգարոյի ամուսնությունը» — ֆրանսիական դրամատուրգ Պյեռ-Օգյուստեն Բոմարշեի (1732—1799) կոմեդիան է։ «Նորման» — իտալական կոմպոզիտոր Վինչենցո. Բելլինիի (1801—1835) օպերան է։

3 Բարոն Բրամբեուս — ռուս գրականագետ Օ. Ի. Սենկովսկու (1800—1858) գրական ծածկանունն է։ «Ֆրեդատ Նաղեժդա» — ռուս գրող Ա. Ե. Բեստուժև-Մարլինսկու (1797—1837) վեպն է։ «Մոսկովսկի Տելեգրաֆ» — ամսագիր (1825—1839)։

Աննա Անդրեեվնա.— Ի՞նչ եք ասում, ուրեմն Բարոն Բրամբեուսը դո՞ւք եք եղել։

Խլեստակով.— Դե, իհարկե, նրանց բոլորի հոդվածները ես եմ շտկում։ Սմիրդինը[1] այդ գործի համար ինձ քառասուն հազար է տալիս։

Աննա Անդրեեվնա.— Ուրեմն, երևի թե «Յուրի Միլոսլավսկին» էլ ձեր հեղինակածն է։

Խլեստակով.— Այո, իմ հեղինակածն է։

Աննա Անդրեեվնա.— Ես իսկույն կռահեցի։

Մարիա Անտոնովնա.— Ա՜խ, մայրիկ, այնտեղ գրված է, որ դա պարոն Զագոսկինի[2] հեղինակածն է։

Աննա Անդրեեվնա.— Դե տես, այդպես էլ գիտեի, որ այստեղ անգամ պիտի վիճես։

Խլեստակով.— Ա՜խ, այո՛, այդ ճիշտ է։ Ճշգրիտ է, Զագոսկինինն է։ Բայց կա մի այլ «Յուրի Միլոսլավսկի», այդ մեկն արդեն իմն է։

Աննա Անդրեեվնա.— Դե, երևի թե ես ձերն եմ կարդացել։ Ի՞նչ լավ է գրած։

Խլեստակով.— Ես, խոստովանում եմ, գրականությամբ է, որ ապրում եմ։ Իմ տունն առաջինն է Պետերբուրգում։ Հենց այդպես էլ հայտնի է— Իվան Ալեքսանդրովիչի տունը։ (Փիմելով բոլորին)— Շնո՛րհ արեք, պարոնայք, եթե երբևէ գալու լինեք Պետերբուրգ, համեցե՛ք, համեցե՛ք իմ տունը։ Ես չէ՞ որ նաև պարահանդեսներ եմ տալիս։

Աննա Անդրեեվնա.— Երևակայում եմ, թե այնտեղ ի՛նչ ճաշակով և ի՛նչ շքեղությամբ են պարահանդեսներ տալիս։

Խլեստակով.— Էլ մի՛ ասեք։ Կմատուցեն, օրինակ ձմերուկ, յոթ հարյուր ռուբլիանոց մի ձմերուկ։ Սուպը կաթսայի մեջ նավով բերված է ուղղակի Փարիզից. կափարիչը որ չեն բացում՝ մի գոլորշի է բարձրանում, որի նմանը ողջ բնության մեջ չի ճարվի։ Ես օրնիբուն պարահանդեսներում եմ։ Այնտեղ մենք մշտական վիստ[3] ունենք կազմած. արտաքին

---

[1] Ա. Ֆ. Սմիրդին — հրատարակիչ էր և գրավաճառ։

[2] Մ. Ն. Զագոսկին (1789—1852)— դրամատուրգ և պատմական վեպերի հեղինակ։ 1829 թ. լույս ընծայված նրա «Յուրի Միլոսլավսկի» պատմական վեպը մեծ հաջողություն էր գտել։

[3] Վիստ — թղթախաղի մի տեսակը։

գործոց մինիստրը, ֆրանսիական դեսպանը, անգլիական, գերմանական դեսպանները և ես։ Ով այնպես ես հոգնում խաղալով, որ արդեն ոչ մի բանի նման չէ։ Մի կերպ նետում եմ ինձ սանդուղքն ի վեր չորրորդ հարկ, բնակարանս, ասում եմ աղախնուս. «Ա՜ռ, Մավրուշկա, վերարկուս։ Սակայն ի՞նչ եմ դուրս տալիս, մոռացա էլ, որ ապրում եմ բելէտաժում[1]։ Իմ սանդուղքը միայն արժե... Շատ հետաքրքրական բան է դիտել իմ սենյակը, երբ ես դեռ չեմ արթնացել։ Կոմսերն ու իշխանները խռնված են և բզզում են իշամեղուների պես... Օդում շարունակ լսվում է ժ՜... ժ՜... ժ՜... ժ՜... ժ՜... երբեմն, անգամ ինքը՝ մինիստրը... (Քաղաքապետը և մյուսները երկյուղած վեր են ելնում իրենց աթոռներից)։— Ինձ հասցեագրված ծրարների վրա նույնիսկ գրում են— ձերդ գերազանցություն։ Մի անգամ ես մինչևիսկ կառավարում էի դեպարտամենտը[2]։ Տարօրինակ բան. դիրեկտորը մեկնել է. ո՞ւր է մեկնել՝ հայտնի չէ։ Դե, բնականաբար, խոսք ու զրույց սկսվեց։ Ի՞նչ, ինչպե՞ս, տեղն ո՞վ գրավի։ Գեներալներից շատերը ցանկություն ունեցան և հանձն առան, բայց հենց որ մոտիկից ծանոթանում էին— չէ՛, դժվարին գործ է։ Դրսից հեշտ էր երևում, իսկ մոտիկից՝ ուղղակի սատանան գիտե՝ թե ինչ։ Տեսան որ ճար չկա, դիմեցին ինձ, և նույն րոպեին փողոցներով սլացան սուրհանդակնե՛ր, սուրհանդակնե՛ր, սուրհանդակնե՛ր... Կարո՞ղ եք երևակայել, երեսունհինգ հազար սուրհանդակ միանգամից։ Ի՞նչ պիտի աներ, ձեզ եմ հարցնում. «Իվան Ալեքսանդրովիչ, գնացե՛ք դեպարտամենտը կառավարելու»։ Ես, խոստովանում եմ, փոքր-ինչ շփոթվեցի, ընդունեցի նրանց խալաթով, ուղում էի հրաժարվել, բայց մտածեցի՝ գործը կհասնի թագավորին, դե ծառայության ցուցակն էլ նույնպես... «Համեցե՛ք, պարոններ, ես ստանձնում եմ պաշտոնը, ստանձնում եմ,— ասում եմ,— ձեր ասածը լինի,— ասում եմ,— ստանձնում եմ, բայց թե իմ ներկայությամբ՝ ոգա՛ստ լինել, իմ ներկայությամբ՝ պռլ չխաղացնե՛լ թե որ ես...»։ Ով, իրոք, բավական էր, որ դեպարտամենտով անց-

---

1 Բելէտաժ — գեղահարկ, վայելչահարկ։ Այդպիսին էր համարվում հարուստ չենքերում մեկ և կես հարկի բարձրության վրա կառուցված հարկը։

2 Դեպարտամենտ — գլխավոր վարչություն։

նեի, ուղղակի երկրաշարժ էր շուրջս, ամենքը դողում ու թպրտում էին տերևի պես (Քաղաքապետը և մյուսները վախից դողդողում են: Խլեստակովն էլ ավելի է բարբոքվում):— *Օ՛, ես ֆատակ չեմ սիրում։ Ես նրանց բոլորին խելքի բերի։ Ինձնից անգամ պետական խորհուրդն է վախենում. եվ, իրոք, ինչո՞ւմն է բանը. ես այդ տեսակ մարդ եմ և ոչ ոքի էլ հաշվի չեմ առնի... Ես բոլորին ասում եմ. «Ես ինձ եմ ճանաչում, ի՛նձ», ես ամեն տեղ եմ, ամեն տեղ։ Ամեն օր պալատ եմ հաճախում։ Ինձ հենց վաղն ևեթ անհագազ կդարձնեն ֆելդմարշալ...* (Ամբ սայթաքում է և իյ է մնում գետին փռվի, բայց աստիճանավորներն ակնածությամբ պահում են նրան):

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— (մոտենում է և ամբողջ մարմնով դողալով փորձում է արտասանել)— *Ձե, ձե՛, ձե, ձե, ձե՛րդ... ձե, ձե...*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (արագ, կտրուկ)— *Ի՞նչ կա։*

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— *Ձե... ձե... ձե... ձե՛րդ... ձե... ձե...*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (նույն ձևով)— *Ոչինչ չեմ հասկանում։ Բարբաջում եք։*

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— *Ձ... ձե... ձե՛րդ... ություն, գերազանցություն, չե՞ք բարեհաճի արդյոք հանգստանալ... Ահա սենյակ էլ կա և ամենը, ինչ պետք է։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— *Հիմար բա՛ն, հանգստանա՛լ։ Շնո՛րհ արեք, ես պատրաստ եմ հանգստանալ։ Ձեր նախաճաշը, պարոնայք, լավն էր... Ես գոհ եմ, ես գոհ եմ։* (Դեկլամացիայով) —*լաբարդա՛ն, լաբարդա՛ն։* (Անցնում է կողմի սենյակը, քաղաքապետը ետևևում է նրան):

ՏԵՍԻԼ VII

Նույնը, բացի Խլեստակովից և քաղաքապետից

ԲՈԲՉԻՆՍԿԻ.— (Դոբչինսկուն)— *Ահա, պյոտր Իվանովիչ, սրան կասեն մարդ։ Ահա թե ի՛նչ է նշանակում մարդ աստծը։ Կյանքումս այդչափ բարձրաստիճան անձնավորության ներկայությամբ եղած չկամ, ահիցս քիչ էր մնում, որ մեռնեի։ Ի՞նչ եք կարծում, պյոտր Իվանովիչ, ի՞նչ աստիճան ունի։*

ԴՈԲՉԻՆՍԿԻ.— *Ես կարծում եմ՝ վայ թե գեներալ լինի։*

ԲՈԲՉԻՆՍԿԻ.— Իսկ ես այնպես եմ կարծում, որ գեներալը սրա կոշիկին էլ արժանի չէ, իսկ քե որ գեներալ է, ապա հենց գեներալիսսիմուս է որ կա։ Լսեցի՞ք, պետական խորհուրդը ոնց է հուպ տվել։ Գնանք, իսկույն պատմենք Ամոս Ֆեոդորովիչին և Կորոբկինին։ Մնաք բարյավ, Աննա Անդրևնա։

ԴՈԲՉԻՆՍԿԻ.— Մնաք բարյավ, քավորակին։

Երկուսն էլ գնում են։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— (Լուկա Լուկիչին)— Ահուդողի մեջ եմ ուղղակի, իսկ ինչո՞ւ՝ ինքս էլ չգիտեմ։ Բայց մենք մինչև իսկ մունդիրներ չենք հագել։ Ի՞նչ կլինի վիճակներս, եթե քունն առնելուց հետո՝ գնկուցի ուղղակի Պետերբուրգ։ (Մտամոլոր Րոռանում է ուսումնարանների տեսչի հետ միասին, ասելով)— Բարյավ մնաք, տիրուհի։

ՏԵՍԻԼ VIII

Աննա Անդրեևնա, Մարիա Անտոնովնա

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Ա՛խ, ի՛նչ հաճելի մարդ է։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Ա՛խ, անուշի՛կս։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Բայց ի՛նչ նուրբ վարվեցողություն։ Իսկույն երևում է, որ մայրաքաղաքի շնորհք է։ Շարժուձևը և նման այլ բաներ... Ա՛խ, որքան լավ է։ Անչափ սիրում եմ այս տեսակ երիտասարդներին, ուղղակի ուշագնաց եմ լինում։ Ես, պետք է ասած, նրան շատ դուր եկա։ Ես նկատեցի— շարունակ իմ կողմն էր աչք գցում։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Ո՛չ, մայրի՛կ, նա ինձ էր նայում։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Խնդրեմ, վերջ տուր հիմար բաներ դուրս տալուն։ Բոլորովին անտեղի են։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Ջէ՛, մայրի՛կ, ճիշտ եմ ասում։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Դե տե՛ս։ Կարո՞ղ է պատահել, որ չվիճես։ Անհնարին է ու վե՛րջ։ Ինչո՞ւ պիտի քեզ նայեր, ինչի՞ց դրդված պիտի քեզ նայեր։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Ճիշտ եմ ասում, մայրի՛կ, շարունակ ինձ էր նայում։ Հենց որ սկսեց խոսել գրականության

մասին, ինձ նայեց։ Ով հկտո, երբ պատմում էր, թե ինչպես վիստ է խաղում դեսպանների հետ, դարձյալ ինձ նայեց։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Դե՛, գուցե, մի հատիկ անգամ, այն էլ հենց այնպես, նմուշի համար։ «Է՛հ», ասած կլինի ինքն իրեն, «արի սրան էլ մի հատ նայեմ»։

ՏԵՍԻԼ IX

Նույնը և բաղամապետ

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— (գալիս է ոտի ծայրերի վրա)— Սս՛ս՛ս՛...

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Ապա՛։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ուրախ չեմ, որ հարբեցրի։ Ի՞նչ կլինի, եթե նրա ասածի թեկուզ կեսը ճիշտ լինի։ (Մտածմունքի մեջ ընկնելով)— Իսկ ինչո՞ւ չպիտի ճիշտ լինի որ։ Համած մարդը եղածը դուրս է տալիս. ինչ որ սրտումն է, այն էլ լեզվի ծայրին։ Իհարկե, փչեց մի քիչ։ Դե, առանց փչելու խոսք կասվի՞։ Մինիստրների հետ է խաղում, պալատ է հաճախում... Ճիշտ եմ ասում, որքան ավելի մտածում եմ... սատանան գիտե, չեմ հասկանում, թե ինչ է կատարվում. ուղղակի կարծես թե կանգնած լինեմ բարձր զանգակատան գլխին կամ թե ուր որ է՝ հիմա պետք է ինձ կախեն։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Իսկ ես բնավ ոչ մի երկյուղ չզգացի։ Պարզապես տեսա նրա մեջ ուսյալ, աշխարհ տեսած, բարեկիրթ, բարձր շրջաններից մի մարդ, իսկ նրա աստիճանների հետ ես գործ չունեմ։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Դե՛, դուք կանայք եք, ձեր բոլոր հաշիվները մեկ են։ Ձերը զիզի-պիզին է։ Մեկ էլ տեսար՝ անտեղի մի խոսք բաց կթողնեն։ Ձեզ կբռնեն, ուրիշ ոչինչ, բայց թե ամուսնուդ իզն ու թողը կկորցնեն։ Դու, հոգյակս, նրա հետ այնպես ազատ էիր վարվում, կարծես առջևդ մի որևէ Դոբչինսկի լիներ։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Այդ մասին խորհուրդ եմ տալիս ձեզ չանհանգստանալ։ Մենք մեր գործը լավ գիտենք... (Նայում է աղջկան)։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— (առաջնաձայով)— Է՛հ, ձեզ հետ մարդ ի՞նչ խոսի... Տե՛ս թե ինչ պատուհաս հասավ գլխներիս։

Մինչև հիմա ուշքի չեմ գալիս . վախից։ (Բաց է անում դուռը և խոսում)— *Մի՛ շկա, կանչիր ոստիկաններին, Սվիստունովին և Դերժիմորդային, տան մոտերքը կլինեն, բակում կամ փողոցում։* (Մի պահ լռելուց հետո)— *Աշխարհիս երեսին ամեն ինչ շուռ է եկել։ Գոնե շնորհքին մի բան լիներ, թե չէ՝ վտիտ, լղարիկ. ինչպե՞ս իմանաս, թե ով է։ Ջինվորականը դեռ որևէ տեսք ունի, իսկ այդ քնձռոտ ֆրակ հագնողները ճիշտ և ճիշտ՝ ասես թևերը կտրած ճանճ լինեն։ Բայց ինչպես էր քիչ առաջ հյուրանոցում ոտը պնդացրել, խաբս տալիս, սար ու ձոր, քվում էր, թե իսկի գլուխ չեմ հանի, բայց վերջում էլի կակղեց։ Ու դեռ ավելին ասաց, քան պետք էր։ Ներևում է, որ ջահել է։*

ՏԵՍԻԼ X

Նույեմ և Օսիպ

Բոլորը վազում են դեպի ետ, մառեերով երաժեշտելով։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Այս կողմը արի, բարեկամ։

ՔԱՂԱՔԱՑԻՏ.— Սո՛ւ՛ս՛, ի՞նչ է, ի՞նչ է, քնա՞ծ է։

ՕՍԻՊ.— Չէ՛, դեռ մի քիչ չարդոտվում է։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Լսի՛ր, անունդ ի՞նչ է։

ՕՍԻՊ.— Օսիպ է, տիրուհիս։

ՔԱՂԱՔԱՑԻՏ.— (կեռջն ու աղչկան)— Վե՛րջ տվեք, վե՛րջ տվեք։ (Օսիպին)— *Ասա՛ տեսնեմ, բարեկամ, քեզ լավ կերակրեցի՞ն։*

ՕՍԻՊ.— Կերակրեցին, խոնարհաբար շնորհակալ եմ, լավ կերակրեցին։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Ապա՛ մի ասա, քո պարոնի տունը, ես կարծում եմ, կոմսեր ու իշխաններ շա՞տ են գալիս։

ՕՍԻՊ.— (մեկուսի)— Ի՞նչ ասեմ։ Թե որ հիմա լավ կերակրեցին, կնշանակի հետո՝ էլ ավելի լավ կկերակրեն։ (Բարձրաձայն)— *Հա՛, կոմսեր էլ են լինում։*

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Օսի՛պ, հոգյա՛կս, ի՞նչ սիրունիկն է քո պարոնը։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Բայց ասա՛, խնդրեմ, Օսիպ, ինչպե՞ս է նա...

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Դե վե՛րջ տվեք, խնդրում եմ։ Դուք այդ դատարկ զրույցներով միմիայն խանգարում եք ինձ։ Ասա՛, բարեկամս...

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Իսկ քո պարոնը ի՞նչ աստիճան ունի։

ՕՍԻՊ.— Պարզ է, թե ինչ աստիճան ունի։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ա՛խ, տեր իմ աստված։ Դուք շարունակ հիմար հարց ու փորձով եք զբաղված։ Դե, ասա՛, բարեկամս, քո պարոնն ինչպե՞ս, խի՞ստ մարդ է, սիրո՞ւմ է շշպռել, թե ոչ։

ՕՍԻՊ.— Հա՛, կարգ ու կանոն սիրում է։ Պահանջում է, որ ամեն ինչ այնպես լինի, ինչ որ պետքն է։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Բայց ինձ դուր է գալիս քո դեմքը։ Դու, բարեկամ, պետք է որ լավ մարդ լինես։ Դե՛, ասա...

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Լսի՛ր, Օսիպ, իսկ քո պարոնն այնտեղ ի՞նչ է հագնում, մունդիրո՞վ է...

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Վե՛րջ տվեք, ձեզ եմ ասում, կաշապակնե՛ր։ Մեջտեղ կարևոր գործ կա, մարդկային կյանքի խընդիր է... (Օսիպին)— Գիտե՞ս ինչ, բարեկամ, ճիշտ եմ ասում, դու ինձ շատ դուր եկար։ Ճանապարհին չի խանգարի, որ մի բաժակ թեյ ավելի խմես, եղանակն էլ ցուրտ է, այնպես որ, ա՛ռ այս երկու ռուբլին, թեյ կխմես։

ՕՍԻՊ.— (ընդունելով)— Ամենախոնարհ շնորհակալություն, պարոն։ Աստված առողջություն տա ձեզ։ Խեղճ մարդ եմ, օգնեցիք։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Վնաս չունի, վնաս չունի։ Ասա՛ տեսնեմ, բարեկամ...

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Լսիր, Օսիպ, իսկ ինչպիսի՞ աչքերն են ավելի դուր գալիս քո պարոնին։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Օսի՛պ, հոգյա՛կս, ի՞նչ սիրուն ջթիկ ունի քո պարոնը։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Սպասեցե՛ք մի, քո՛ւյլ տվեք որ... (Օսիպին)— Ասա՛, խնդրեմ, բարեկամ, ինչի՞ վրա է ամենից շատ ուշք դարձնում քո պարոնը, այսինքն՝ ճանապարհին ի՞նչն է նրան ամենից շատ դուր գալիս։

ՕՍԻՊ.— Սիրում է նա, գործին նայած, ինչ բան ունք կպատահի։ Ամենից շատ սիրում է, որ իրեն լավ ընդունեն, հյուրասիրությունը լավ լինի։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Լա՞վ լինի։

ՕՍԻՊ.— Այո՛, լավ լինի։ Ա՛յ, ասենք թե ես, ինչացո՞ւ եմ, ճորտի մեկը, բայց էլի հետևում է, որ ինձ համար էլ լավ լինի, աստված վկա։ Պատահել է, վեր ենք եկել մի տեղ. «Հա՛, Օսիպ, քեզ լա՞վ հյուրասիրեցինք»։ «Վատ, ձերդ բարձրազնվություն»։ «Է՛,— ասում է,— այդ տանտերը, Օսիպ, լավ տանտեր չէ։ Դու,— ասում է,— հիշեցրու ինձ, երբ որ տուն վերադառնանք»։ «Է՛հ, մտածում եմ ինքս ինձ (ձեռքը բախ տալով)— աստված նրա հետ; ես հասարակ մարդ եմ»։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Շատ բարի, շատ բարի, կարևոր բան ես ասում։ Ես քեզ քիչ առաջ թեյի փող տվի, այս էլ ա՛ռ խմորեղենի համար։

ՕՍԻՊ.— Ինչո՞ւ եք շնորհ անում, ձերդ բարձրազնվություն։ (Պաճուճում է դրամը)— Որ այդպես է, մի բաժակ ձեր կենացը կխմեմ։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Անցի՛ր, Օսիպ, ինձ մոտ, նույնպես կատանաս։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Օսի՛պ, հոգյակս, համբուրիր քո պարոնին։

Հարակից սենյակից լսվում է Խլեստակովի բերան հագցը։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Սա՛՛՛... (Բարձրանում է ոտքերի ծայրերին։ Հաջորդ տեսարանը՝ կիսաձայն)— Աստված հետս տանի, թե աղմկել եք։ Հեռացե՛ք, այստեղից, հերի՛ք եղավ ձեզ...

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Գնանք, Մաշենկա։ Ես քեզ պիտի ասեմ, որ մեր հյուրի մոտ մի բան եմ նկատել, որ միմիայն մեր երկուսի մեջ կարելի է ասել...

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Օ՛, ինչեր չեն ասի այնտեղ։ Մարդ որ փորձի ականջ դնել, անմիջապես ականջները կփակի։ (Դիմելով Օսիպին)— Դե՛, բարեկա՛մս...

Նույնք, Պերժիմարդա և Սվիստունով

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Մ՛ս՛ս՛, ա՛յս տեսակ էլ ծուռթաթ արջեր, տես ի՛նչ աղմուկ բարձրացրին։ Այնպե՛ս են դոփում կոշիկներով, ասես քառասուն փթանոց բեռ են թափում սայլից։ Ո՞ր սատանայի ծոցումն էիք։

ԴԵՐԺԻՄՈՐԴԱ...— Հրամանի համաձայն գնացել էի...

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Մ՛ս՛ս՛։ (Փակելով նրա բերանը)— *Տես ոնց է կոկորդը պատռում։* (Մաղրելով նրան)— *Հրամանի համաձայն գնացել էի։ Ձայնն ասես տակառի միջից դուրս գալիս լինի։* (Օսիպին)— *Դե՛, բարեկամս, դու գնա՛, պատրաստի՛ր այնտեղ՝ ինչ պարոնիդ պետք է։ Ինչ որ կա՛-չկա տան մեջ՝ պահանջի՛ր։* (Օսիպը գնում է)։ *Իսկ ձեզ հրամայում եմ կանգնել տան շեմքին և տեղից չշարժվել։ Եվ ոչ մի կողմնակի մարդ ներս չթողնել, նամանավանդ, վաճառականներին։ Թե՝ նրանցից թեկուզ մեկնումեկին ներս թողի՛ք, ապա... Հենց որ տեսաք, որ մարդ է մոտենում խնդրագրով կամ թեկուզ առանց խնդրագրի էլ, բայց այնպիսի տեսք ունի, որ կարող է իմ դեմ խնդրագիր ներկայացնել. վզակոթին տալով դուրս վռնդեցեք, մի լա՛վ հասցրեք։* (Ցույց է տալիս ատամով) *Հասկացա՞ք... Մ՛ս՛ս, ս՛ս՛ս՛...* (Ոտի ծայրերի վրա դուրս է ելնում ոստիկանների ետևից)։

ԱՐԱՐՎԱԾ ՀՈՐՈՐԴ

Նույն սենյակը քաղաքապետի տանը

ՏԵՍԻԼ I

Ջգույշ, ոտների ծայրերի վրա, ներս են մտնում Ամոս Ֆեոդորովիչը, Առաեմի Ֆիլիպովիչը, փոստապետը, Լուկա Լուկիչը, Դոբչինսկին և Բոբչինսկին՝ իրիվ ճամփզփօսաճ[illegible]։

Ամբողջ տեսարանն անցնում է կիսաձայն։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— (բոլորին դասավորում է շրջանաձև)— *Ի՛սե՛ր աստծո, պարոններ, իսկույն շրջան կազմեցեք և բոլորդ զգաստ եղեք։ Աստվա՛ծ գիտե, թե ո՛վ է, պալատական է՛լ է լինում, պետական խորհուրդն է՛լ է շշպռում։ Ձինվորական կարգո՛վ շարվեցեք, անպատճա՛ռ զինվորական*

Դուք, Պյոտր Իվանովիչ, արագ անցեք այն կողմ, իսկ դուք, Պյոտր Իվանովիչ, կանգնեցեք այստեղ։

Ձույգ պյատոր Իվանովիչները վազվզոց անցնում են սամիթի ծայրերի վրա։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— Կամքը ձերն է. Ամոս Ֆեոդորովիչ, բայց մեզ անհրաժեշտ է որևէ բան ձեռնարկել։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— Հատկապես ի՞նչ...

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— Դե՛, պարզ բան է, թե ի՛նչ։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— Ձեռքի մեջ սլլացնե՞լ։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— Այո՛, թեկուզև սլլացնել։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— Վտանգավոր է, սատանան տանի, գոռոցը կգցի, պետական մարդ է։ Դուցե նվիրաբերության ձևով աննենք, ազնվականության անունից որևէ հուշարձանի համար։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Կամ թե՝ «Ահա, ասենք, փոստով դրամ է ստացվել, հայտնի չէ, թե ում հասցեագրված»։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— Զգուշացե՛ք, որ նա ձեզ փոստով չուղարկի որևէ տեղ հեռուները։ Լսեցե՛ք. նման գործեր այդպես չեն կատարվում բարեկարգ պետություններում։ Ինչո՞ւ ենք մի ամբողջ գումարտակ կազմած այստեղ հավաքվել։ Պետք է ներկայանալ առանձին-առանձին, և չորս աչքերի արանքում... ինչպես որ հարկն է, որպեսզի լսող ականջներ չլինեն։ Ա՛յ թե բարեկարգ հասարակության մեջ ինչպես են վարվում։ Ահա՛ հենց դուք, Ամոս Ֆեոդորովիչ, առաջինը սկսեցեք։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— Ավելի լավ է՝ դո՛ւք սկսեք. ձեր հաստատության մեջ էր, որ բարձրաստիճան հյուրը հաց ճաշակեց։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— Այդ դեպքում ավելի լավ է՝ սկսի Լուկա Լուկիչը, որպես պատանեկության լուսավորիչ։

ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՉ.— Ջե՛մ կարող, չե՛մ կարող, պարոններ։ Ես, խոստովանանք լինի, այնպես եմ դաստիարակված, որ բավական է հետս թեթևուլ մի աստիճանով բարձր մարդ խոսի, սիրտս փորս է քնկնում և լեզուս էլ ասես տիղմի մեջ թաթախված լինի։ Չէ՛, պարոններ, ինձ ազատ կացուցեք, ճիշտ եմ ասում։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— Դե, Ամոս Ֆեոդորովիչ մնում եք միմիայն դո՛ւք։ Ձեր ասած ամեն մի խոսքը ասես թե լեզվից թռած մի ողջ Կիկերոն[1] լինի։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— Ի՞նչ եք ասում, ի՞նչ եք ասում. Կիկերո՜ն։ Տեսեք թե ի՞նչ հնարեց։ Ինչ է թե՝ երբեմն ոգևորվում եմ որսի շների մասին խոսելիս...

ԲՈՂՈՐՔ.— (շրջապատելով նրան)— Ջէ՛, դուք ոչ միայն շների, դուք աշտարակաշինության մասին էլ խոսելիս... Ո՛չ, Ամոս Ֆեոդորովիչ, մեզ մի՛ թողնեք նեղության մեջ, հա՛յր եղեք մեզ համար... Ո՛չ, Ամոս Ֆեոդորովիչ...

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— Ձեռք քաշեք, պարոննե՛ր։

Այդ վայրկյանին Խլեստակովի սենյակից լսվում է հազոցի և ոտքերի ձայն։ Բոլորը նետվում են դեպի դուռը, խռնվում են և աշխատում դուրս գալ, որ տեղի է ունենում ոչ առանց սրահ կամ նրան ճգմելու։

Լսվում են զուսպ բացականչություններ։

ԲՈՐՋԻՆՍԿՈՒ ՁԱՅՆԸ.— Օ՛յ, Պյոտր Իվանովիչ, Պյոտր Իվանովիչ, ոտքս կոխեցիք։

ՉԵՄԼՅԱՆԻԿԱՅԻ ՁԱՅՆԸ.— Բա՛ց թողեք, պարոննե՛ր, շունչս կտրվում է՝ այնպես եք հրում տվել։

Լսվում են ևս մի քանի բացականչություններ, ապա բոլորը դուրս են պրծնում և սենյակը մնում է դատարկ։

ՏԵՍԻԼ II

Խլեստակովը մենակ

Գալիս է ներս ճնճղած աչքերով։

Ես, կարծեմ, բավականին մրա՛ եցի։ Որտեղի՞ց են ճարել այսպիսի դոշակներ և փետրաբարձեր։ Կարծեմ երեկ նախաճաշին մի տեսակ հատուկ բան խմեցրին ինձ. մինչև հիմա գլխիս ներսում թխթխկում է։ Այստեղ, ինչպես տեսնում եմ, կարելի է հաճելի ժամանակ անցկացնել։ Ես սիրում եմ սրտաբացություն և ինձ, խոստովանում եմ, ավելի է դուր գալիս, երբ ինձ հյուրընկալում են սրտաբաց կերպով, և ոչ թե

---

1 Մարկոս Տուլիոս Կիկերոն *(106—43 մ.թ.ա.)*— հին Հռոմում նշանավոր փաստաբան, քաղաքական գործիչ և գրող, հռետորիկական կտրքերի տեսաբան և հրապարակային ատենաբանության մեծ վարպետ։

որևէ շահից դրդված։ Իսկ քաղաքապետի աղջիկը բավականին լավիկն է, մայրիկն էլ այն վիճակումն է, որ դեռ կարելի է... Ո՛չ, չգիտեմ ինչու, բայց այս տեսակ կյանքն իմ ճաշակով է։

ՏԵՍԻԼ III

Խլեստակով և դատավոր

ԴԱՏԱՎՈՐ.— (ներս մտնելով և կանգ առնելով, ինքն իրեն)— *Տե՛ր աստված, տե՛ր աստված, դո՛ւ ինձ եզիր օգնական։ Մենկներս ուղղակի ծալվում են։* (Բարձրաձայն, շակըվելով և ձեռքը դնելով սրի պատյանին)— *Պատիվ ունեմ ներկայանալու. տեղիս գավառական դատարանի դատավոր, կոլեգիական ասեսոր Լյապկին-Տյապկին։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— *Բարեհաճեցեք նստել։ Ուրեմն դուք այստեղի դատավո՞րն եք։*

ԴԱՏԱՎՈՐ.— *Ուիթ հարյուր տասնվեցերկի ընտրվեցի ազնվականության կամոք մի եռամյակով և մինչև այժմ շարունակում եմ պաշտոնս։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— *Շահավե՞տ բան է, սակայն,, դատավոր լինելը։*

ԴԱՏԱՎՈՐ.— *Երեք եռամյակի ընթացքում իշխանության հավանությամբ ներկայացված եմ Վլադիմիրի չորրորդ աստիճանի շքանշանի։* (Մեկուսի)— *Փողը ձեռքիս մեջ է, իսկ ձեռքս ասես կրակ կտրած լինի։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— *Ինձ դուր է գալիս Վլադիմիրը, իսկ ա՛յ երրորդ աստիճանի Աննան այն չէ։*

ԴԱՏԱՎՈՐ.— (հետզհետե առաջ մղելով սեղմված բռունցքը, մեկուսի)— *Տե՛ր իմ աստված, չգիտեմ, թե որտեղ եմ նստած։ Ասես տակս շիկացած ածուխներ դրած լինեն։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— *Այդ ի՞նչ է ձեր ձեռքում։*

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՋ.— (կորցնելով իրեն և վայր գցելով դրամանիշները)— *Այս ոչինչ։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— *Ինչպե՞ս թե ոչինչ։ Ինչպես տեսնում եմ, ընկածը փող է։*

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՋ.— (դողալով ողջ մարմնով)— *Ինավ ո՛չ։* (Մեկուսի)— *Օ՛, աստված իմ, ահա արդեն դատի տակ եմ և սայլակն էլ բերին՝ ինձ բանտ տանելու։*

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— (գետնից բարձրացնելով)— *Այո՛, փող է։*

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— (մեկուսի)— *Դե՛, վերջս եկավ, կորա՛, կորա՛։*

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— *Գիտե՞ք ինչ, այս փողը տվեք ինձ փոխարինաբար։*

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— (աճապարանքով)— *Հարկա՛վ, հարկա՛վ։ Մեծ հաճույքով։* (Մեկուսի)— *Դե՛, համարձա՛կ, համարձա՛կ, դո՛ւ ինձ փրկիր, մա՛յր աստվածածին։*

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— *Ես, գիտեք, ճանապարհին ունեցածս ծախսեցի, այլևայլ կարիքներ... Ասենք, ես իսկույն ևեթ գյուղից ձեզ կուղարկեմ։*

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— *Շնո՛րհ արեք, ինչպե՞ս կարելի է. առանց այդ էլ սա այնպիսի պատիվ է... Իհարկե, իմ նվազ ուժերով, ջանասիրությամբ և նվիրվածությամբ դեպի իշխանությունը՝ կշռանամ արժանանալ...* (Վեր է բարձրանում արցունքից, ձգված)— *Ջեմ հանդգնում այլևս անհանգստացնել իմ ներկայությամբ։ Որևէ հրաման չունե՞ք տալու։*

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— *Ի՞նչ հրաման...*

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— *Ես ենթադրում եմ, արդյոք որևէ հրաման չե՞ք արձակի տեղիս դատարանին։*

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— *Բայց ի՞նչ նպատակով։ Ես հիմա ոչ մի կարիք չունեմ դատարանի. չէ՛, ոչինչ չունեմ, խոնարհաբար շնորհակալ եմ։*

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— (գլուխ տալով և հեռանալով, մեկուսի)— *Դե՛, քաղաքը մե՛րն է։*

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— (նրա հեռանալուց հետո)— *Դատավորը լավ մարդ է։*

ՏԵՍԻԼ IV

Ալեստակով և փոստապետ (մտնում է ձգված, նամազգեստով, ձեռքը սրի վրա)

ՓՈՍՏԱՊԵՏ.— *Պատիվ ունեմ ներկայանալու. փոստապետ, արքունական խորհրդատու*[1] *Շպեկին։*

---

[1] Արքունական խորհրդատու — քաղաքացիական ծառայության աստիճան էր, որ մոտավորապես հավասար էր զինվորական ծառայության մայորին։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Շնո՛րհ արեք, համեցե՛ք։ Ես շատ եմ սիրում հաճելի ընկերակցություն։ Դուք միշտ այստեղ եք ապրում, այնպես չէ՞։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Ճիշտ այդպես։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Բայց ինձ դուր է գալիս այս քաղաքը։ Իհարկե, այնքան բազմամարդ չէ, բայց ի՞նչ վնաս։ Չէ՞ որ սա մայրաքաղաք չէ։ Ճիշտ չե՞մ ասում, սա մայրաքաղաք չէ։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Միանգամայն ճիշտ է։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Չէ՞ որ միայն մայրաքաղաքումն է, որ կա բոն-տոն[1] և չկան գավառական սագեր։ Դուք ի՞նչ կարծիքի եք, իրավացի չե՞մ։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Ճիշտ այդպես է։ (Մեկուսի)— Սակայն այս մարդը բոլորովին հպարտ չէ, զրուցում ու հարցուփորձ է անում։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Սակայն, խոստովանեցեք, չէ՞ որ փոքրիկ քաղաքում ևս կարելի է երջանիկ ապրել։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Ճիշտ այդպես։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Իմ կարծիքով, ի՞նչ է պետք.. պետք է միմիայն, որ քեզ հարգեն, անկեղծորեն սիրեն։ Ճիշտ չէ՞։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Միանգամայն արդարացի է։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Ես, խոստովանում եմ, ուրախ եմ, որ դուք ինձ համակարծիք եք։ Ինձ, իհարկե, կանվանեն տարօրինակ մարդ, բայց ի՞նչ արած, իմ բնավորությունն է այդպես։ (Նայելով ձուա աչքերին, իմն իրեն)— Արի կլինի՝ ես այս փոստապետից փող ուղեմ։ (Բարձրաձայն)— Ինձ հետ շատ տարօրինակ մի բան է պատահել. ճանապարհին ունեցածս դրամը ծախսեցի, չե՞ք կարող ինձ փոխարինաբար տալ երեք հարյուր ռուբլի։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Ինչո՞ւ չէ։ Բարձրագույն երջանկություն կհամարեմ։ Ահա՛, համեցեք։ Ի՛ սրտե պատրաստ եմ ծառայություն մատուցելու։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Շատ շնորհակալ՛ եմ։ Ես, խոստովանում եմ, սաստիկ չեմ սիրում ճանապարհին նեղվել, և ի՞նչ կարիք կա, այնպես չէ՞։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Ճի՛շտ այդպես է։ (Վեր է կենում, ձգվում

---

1 *Բոն-տոն — լավ տոն, այսինքն՝ վայելուչ, ընտիր վարք ու բարք։*

և պաճուճում սուրը)— *Այլևս չեմ համարձակվում անհանգստացնել ձեզ իմ ներկայությամբ։ Արդյոք որևէ դիտողություն չունե՞ք փոստային վարչության գծով։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Չէ՛, ոչինչ։

Փոստապետը գլուխ է տալիս և գնում։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (սիգար կպցնելով)— Փոստապետը, ինձ թվում է, նույնպես շատ լավ մարդ է, համենայն դեպս, պատրաստակամ է, ես սիրում եմ այդպիսի մարդկանց։

ՏԵՍԻԼ V

Խլեստակով և Լուկա Լուկիչ (որին գրեթե ներս են հրում դռան միջից։ Հետևից լսվում է մի ձայն՝ «Քեզ մի կորցնի»)

ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՉ.— (երկյուղածությամբ ձգվելով և պաճեղով սուրը)— Պատիվ ունեմ ներկայանալու. դպրոցների տեսուչ, տիտուլյար խորհրդատու[1] Խլոպով։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ա՛, շնորհ արեք, համեցե՛ք, նստեցե՛ք, նստեցե՛ք։ Սիգար չե՞ք ուզի։ (Մեկնում է նրան մի սիգար)։

ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՉ.— (ինքն իրեն)— Ա՛յ քեզ բան, այս ես բնավ չէի նախատեսել, վերցնե՞մ թե՞ չվերցնեմ։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Համեցե՛ք, համեցե՛ք։ Բավականին լավ սիգար է։ Իհարկե, այն չէ, ինչ Պետերբուրգում։ Այնտեղ, քարեկամս, սիգար եմ ծխել՝ հարյուր հատը քսանհինգ ռուբլի, ուղղակի ձեռքերդ կհամբուրես ծխելուց հետո։ Ահա՛ կրակ, ծխեցե՛ք։ (Մեկնում է նրան մոմը)։

Լուկա Լուկիչը փորձում է ծխել և սաստիկ դողում է։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Այն ծայրից չէ։

ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՉ.— (վախից սիգարը ձեռքից բաց է թողնում, բռնում է և՝ ձեռքը բափ տալով, ինքն իրեն)— Գրողը տանի, կործանեց ինձ իմ երկչոտությունը։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Դուք, ինչպես տեսնում եմ, սիգարի սիրահար չեք։ Իսկ ես, պիտի խոստովանեմ, որ այդ իմ թու-

[1] Տիտուլյար խորհրդատու — *քաղաքացիական ծառայության աստիճան, որ մոտավորապես համապատասխանում էր զինվորական ծառայության շտաբս-կապիտանին։*

լուծյունն է։ Ահա՛, նույնպես և կանացի սեռի նկատմամբ։ Ձե՛մ կարողանում սառնասիրտ լինել։ Իսկ դուք ինչպե՛ս։ Ձեզ որո՞նք են դուր գալիս— սևահերնե՞րը, թե շիկահերները։

Լուկա Լուկիչը սաստիկ տարակուսանքի մեջ է, թե ինչ պատասխանի։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ձէ՛, դուք անկեղծորեն ասացեք— սևահերնե՞րը թե շիկահերները։

ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՉ.— Իրավունք չունեմ իմանալու։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ո՛չ, ո՛չ, մի՛ խուսափեք։ Ես անպատճառ ուզում եմ իմանալ ձեր ճաշակը։

ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՉ.— Կհամարձակվեմ զեկուցել... (Ինքն իրեն)— Ինքս էլ չգիտեմ, թե ինչ եմ ասում։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ա՛, ա՛, չե՞ք ուզում ասել... Երևի թե սեվահերի մեկը թեթևակի ծակել է ձեր սիրտը, խոստովանեցեք, ծակե՞լ է։

Լուկա Լուկիչը լուռ է։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ա՛, ա՛, կարմրեցի՞ք, ուրեմն ճիշտ է. բայց ինչո՞ւ չեք խոսում։

ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՉ.— Շփոթվեցի, ձերդ... ազն... սրբազն... պայծառու... (Մեկուսի)— Ծախե՛ց ինձ անիծած լեզուս, ծախե՛ց։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Շփոթվեցի՞ք։ Իմ աչքերում, իրոք որ, ինչ-որ մի բան կա, որ շփոթմունք է առաջացնում։ Համենայն դեպս, գիտեմ, որ ոչ մի կին չի դիմանում իմ հայացքին։ Այնպես չէ՞։

ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՉ.— Ճիշտ այդպես է։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ինձ հետ ահա տարօրինակ մի դեպք է պատահել. ունեցած փողս ծախսեցի։ Չե՞ք կարող տալ ինձ մի երեք հարյուր ռուբլի փոխարինարար։

ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՉ.— (Ձեռքը տանելով գրպաններն և ինքն իրեն)— Ա՛յ քեզ խայտառակություն, թե որ չլինի։ Կա՛... կա՛։ (Հանում է թղթադրամը և դողալով մեկնում)։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Խոնարհաբար շնորհակալ եմ։

ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՉ.— (Ձգվելով և պաճելով սուրը)— Ձեմ համարձակվում այլևս անհանգստացնել իմ ներկայությամբ։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Գնաք բարով։

ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՋ.— (Նետվում է դուրս գրեթե վազելով և ասում)— Դե՛, փա՛ռք աստծո, գուցե թե չայցելի դասարաններըւ

ՏԵՍԻԼ VI

Խլեստակով և Արտեմի Ֆիլիպովիչ՝ ծգված և ծեռը պաճելով սրի վրա

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՋ.— Պատիվ ունեմ ներկայանալու, աստվածահաճո հաստատությանց, հոգաբարձու, արքունական խորհրդատու Զեմլյանիկա։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Բարև ձեզ, խոնարհաբար խնդրում եմ նստել։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՋ.— Պատիվ ունեցա ուղեկցելու ձեզ և անձամբ ընդունելու իմ տեսչությանը հանձնված աստվածահաճո հաստատություններում։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ա՛, ճիշտ է, հիշում եմ։ Դուք շատ լավ հյուրասիրեցիք նախաճաշիկով։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՋ.— Ուրախ եմ չանալու՝ հայրենեաց ծառայություն մատուցելու համար։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ես, խոստովանում եմ, այդ իմ թուլությունն է. սիրում եմ լավ խոհանոց։ Ասացեք խնդրեմ, ինձ թվում է, որ երեկ դուք փոքր-ինչ ավելի կարճահասակ էիք. ճիշտ չէ՞։

*ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՋ.— Շատ հնարավոր բան է։ (Լռելուց հետո)— Կարո՞ղ եմ ասել, ոչինչ չեմ խնայում և խանդաղատանոք վարում եմ պաշտոնս։ (Փոք-ինչ ավելի մոտ է շարժում իր աթոռը և խոսում կիսաձայն)— Իսկ ահա տեղիս փոստապետը բնավ ոչինչ չի անում։ Բոլոր գործերը անխնամ վիճակումն են, առաքումներն ուշացնում են... Համեցեք ինքներդ հատկապես հետախուզելու։ Նույնպես և դատավորը, որն ինձնից քիչ առաջ այցելեց ձեզ, միմիայն նապաստակների որսի է տվել իրեն, ատենավայրերում շներ է պահում և վարքով էլ, եթե խոստովանելու լինեմ ձեր առաջ,— հարկավ, հայրենեաց օգտի համար, ես պարտավոր եմ այդ անել, չնայած որ իմ ընկերն ու բարեկամն է,— վարքով էլ՝ ամենայն դա-

տապարտության արժանի։ Այստեղ մի կալվածատեր կա՝ Դոբչինսկի, որին արդեն բարեհաճել եք հանդիպել. և ահա հենց որ այդ Դոբչինսկին տնից դուրս է գալիս որևէ տեղ, դատավորն արդեն նստած է նրա կնոջ կողքին. ես պատրաստ եմ երդում տալու... Հատկապես դիտեցեք նրա երեխաներին. ոչ մեկը նման չի Դոբչինսկուն, բոլորն էլ, նույնիսկ մանկահասակ աղչիկը, ասես, դատավորի կաղապարով ձուլված լինեն։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ասացե՛ք խնդրեմ. բնա՞վ չէի կարող կարծել։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՋ.— Տեղիս դպրոցների տեսուչը նմանապես... Ջեմ հասկանում, ինչպե՞ս եղավ, որ իշխանությունը վստահեց նրան այդ պաշտոնը։ Նա ժակոբիններից[1] էլ վատթար է և այնպիսի անուղղամիտ կանոններ է ներշնչում պատանեկությանը, որ դժվար է անգամ արտահայտել։ Բարվոք չե՞ք համարի արդյոք, որ այս ամենը գրավոր կերպով շարադրեմ։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Շատ բարի, թեկուզև գրավոր։ Շատ հաճելի կլինի։ Ես, գիտեք, սիրում եմ երբեմն, տաղտուկ վայրկյաններին, զվարճալի բան կարդալ։ Ինչպե՞ս է ձեր ազգանունը, ես շարունակ մոռանում եմ։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՋ.— Ջեմլյանիկա։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ա՛, ճիշտը, Ջեմլյանիկա։ Եվ ի՞նչ, ասացեք խնդրեմ, զավակներ ունե՞ք։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՋ.— Ապա ինչպե՛ս։ Հինգ հոգի։ Երկուսն արդեն չափահաս են։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ասացե՛ք խնդրեմ, չափահաս։ Իսկ նրանք ինչպե՞ս... ի՞նչ են նրանք։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՋ.— Այսինքն՝ գուցե բարեհաճում եք տեղեկանալ նրանց անունների մասի՞ն։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Այո՛, ինչպե՞ս են նրանց անունները։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՋ.— Նիկոլայ, Իվան, Ելիզավետա, Մարիա և Պերեպետույա։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Այդ լավ է։

---

1 Ժակոբիններ *(Ժակոբիններ)* — 1789—1794 թթ. ֆրանսիական բուրժուական հեղափոխության ժամանակ ամենահեղափոխական կուսակցություն։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— Չհամարձակվելով այլևս անհանգստացնել իմ ներկայությամբ, խլել սրբազան պարտականության համար սահմանված ձեր ժամանակը... (Գլուխ է տալիս մեկնելու դիտավորությամբ):

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— (ճանապարհ դնելով)— Չէ՛, ոչինչ, շատ ծիծաղելի էին ձեր այդ բոլոր ասածները, խնդրեմ, մի ուրիշ ժամանակ ևս... ես այդ շատ եմ սիրում: (Վերադառնում է և բանալով դուռը կանչում ներս եռևից)— է՛յ, դո՛ւք, ինչպե՞ս եք կոչվում: Շարունակ մոռանում եմ ձեր անունն ու հայրանունը:

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— Արտեմի Ֆիլիպովիչ:

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Շնո՛րհ արեք, Արտեմի Ֆիլիպովիչ: Ինձ հետ մի տարօրինակ դեպք է պատահել: Ճանապարհին ունեցած դրամս իսպառ ծախսել եմ: Չե՞ք կարող արդյոք ինձ պարտք տալ մի չորս հարյուր ռուբլի:

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— Կարող եմ:

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Ասացե՛ք խնդրեմ, որպիսի՞ պատեհություն: Խոնարհաբար շնորհակալ եմ ձեզնից:

ՏԵՍԻԼ VII

Ալեստակով, Բոբչինսկի և Դոբչինսկի

ԲՈԲՉԻՆՍԿԻ.— Պատիվ ունեմ ներկայանալու. սույն քաղաքի բնակիչ՝ Պյոտր Իվանի որդի Բոբչինսկին:

ԴՈԲՉԻՆՍԿԻ.— Կալվածատեր՝ Պյոտր Իվանի որդի Դոբչինսկին:

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Ա՛, ես ձեզ արդեն հանդիպել եմ: Դուք, կարծեմ, վայր ընկաք: Ի՞նչ վիճակում է ձեր քիթը:

ԲՈԲՉԻՆՍԿԻ.— Փառք Աստծու: Մի հաճեք անհանգստանալ. չորացավ, այժմ բոլորովին չորացած է:

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Շատ լավ է, որ չորացել է: Ես ուրախ եմ... (Հանկարծ և ճար-ճար)— Դուք փող չունե՞ք:

ԴՈԲՉԻՆՍԿԻ.— Փո՞ղ, ի՞նչ փող:

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Փոխարինաբար մի հազար ռուբլի:

ԲՈԲՉԻՆՍԿԻ.— Այդպիսի գումար, աստված վկա, չունեմ: Ձեզնե՞ք արդյոք դուք, Պյոտր Իվանովիչ:

ԴՈԲՉԻՆՍԿԻ.— Հնուս չունեմ, որովհետև իմ դրամները,

եթե հաճելի է ձեզ գիտենալ, գետեղված են հասարակական խնամատարության փոխատու դրամարկղում։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Դե՛, եթե հազար չկա, գոնե հարյուր ռուբլի։

ԲՈՐՋԻՆՍԿԻ.— (տնտղելով գրպանները)— Ձեզ մոտ, պյոտր Իվանովիչ, հարյուր ռուբլի չկա՞։ Իմ ունեցածը՝ քառասուն ռուբլի է թղթադրամով։

ԴՈՐՋԻՆՍԿԻ.— (նայելով իր դրամապանակի մեջ)— Քսանհինգ ռուբլի ընդամենը։

ԲՈՐՋԻՆՍԿԻ.— Դուք լավ փնտրեցեք, պյոտր Իվանովիչ։ Ձեր աջ կողմի գրպանը, ես գիտեմ, պատռվածք ունի, գուցե թե այդ պատռվածքի մեջ խցկված լինի։

ԴՈՐՋԻՆՍԿԻ.— Չէ՛, ճշմարիտ, պատռվածքումն էլ չկա։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Ասենք, միևնույն է։ Ես հենց այնպես ասացի։ Լա՛վ, թող լինի վաթսունհինգ ռուբլի... Այդ միևնույն է։ (Ընդունում է դրամը)։

ԴՈՐՋԻՆՍԿԻ.— Ես համարձակվում եմ խնդրել ձեզ վերին աստիճանի նուրբ մի պարագայի վերաբերյալ։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Ո՞րն է այդ։

ԴՈՐՋԻՆՍԿԻ.— Շատ նուրբ առանձնահատկությամբ մի գործ. իմ ավագ որդին, հաճեցեք դիտել, ծնված է դեռևս իմ ամուսնությունից առաջ...

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Իսկապե՞ս...

ԴՈՐՋԻՆՍԿԻ.— Այսինքն՝ այդ միայն այդպես ասվում է, իսկ նա սերված է ինձնից նույն եղանակով, ինչպես կլիներ ամուսնացած դեպքում, և այդ ամենը, ինչպես որ կարգն է, ես հետագայում եզրափակեցի ամուսնության օրինական կապով։ Այժմ ահա, հաճեցեք դիտել, կամենում եմ, որպեսզի նա արդեն լինի լիովին, այսինքն՝ օրինական իմ որդին, և կոչվի ճիշտ ինձ նման՝ Դորջինսկի։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Շա՛տ բարի, թող կոչվի, այդ կարելի է։

ԴՈՐՋԻՆՍԿԻ.— Ես ձեզ չէի անհանգստացնի, բայց ափսոս են տղայի ընդունակությունները։ Մեծ հույսեր է խոստանում լակուրը. է՛լ բերանացի զանազան ոտանավորներ ասել, է՛լ պատահած տեղը, եթե ձեռքը մի դանակ ընկավ, իսկույն փոքրիկ սայլակներ սարքել, այնպիսի վարպետությամբ, ասես ձեռնածու լինի։ Ա՛յ, պյոտր Իվանովիչն էլ գիտի։

ԲՈՒՋԻՆՍԿԻ.— Այո՛, մեծ ընդունակությունների տեր է։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Շա՛տ բարի, չա՛տ բարի։ Ես կհոգամ այդ մասին։ Ես կխոսեմ... ես հույս ունեմ... այդ ամենը կհաջողվի, այո՛, այո՛... (Ժիմելով Բոբչինսկուն)— Արդյոք դուք էլ որևէ ասելիք չունե՞ք։

ԲՈՒՋԻՆՍԿԻ.— Ինչպե՞ս չէ, ունեմ, ամենախոնարհ մի խնդիրք։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ի՞նչ է, ինչի՞ մասին։

ԲՈՒՋԻՆՍԿԻ.— Ես խոնարհաբար խնդրում եմ ձեզ, Պետերբուրգ ժամանելուց հետո, ասացեք այնտեղի բոլոր մեծամեծներին՝ սենատորներին և ադմիրալներին, որ ահա ձերդ պայծառափայլություն կամ գերազանցություն, այսինչ քաղաքում բնակվում է Պյոտր Իվանովիչ Բոբչինսկին. այսպես էլ ասացեք. բնակվում է Պյոտր Իվանովիչ Բոբչինսկին։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Շա՛տ բարի։

ԲՈՒՋԻՆՍԿԻ.— Անգամ եթե պատահ դեպք լինի թագավորին ասելու, ապա թագավորին էլ ասեք, որ ահա, ձերդ կայսերական մեծություն, այսինչ քաղաքում բնակվում է Պյոտր Իվանովիչ Բոբչինսկին։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Շա՛տ բարի։..

ԲՈՒՋԻՆՍԿԻ.— Ներեցե՛ք, որ այսչափ ձանձրացրինք ձեզ մեր ներկայությամբ։

ԲՈՒՋԻՆՍԿԻ.— Ներեցե՛ք, որ այսչափ ձանձրացրինք ձեզ մեր ներկայությամբ։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Վնա՛ս չունի, վնա՛ս չունի։ Ինձ շատ հաճելի էր։ (Ճանապարհ է դնում նրանց)։

ՏԵՍԻԼ VIII

Խլեստակովը միայնակ

Այստեղ աստիճանավորներ շատ կան։ Ինձ թվում է, սակայն, որ նրանք ինձ պետական անձի տեղ են դրել։ Կերևի՝ երեկ ես նրանց աչքին թոզ շատ եմ փչել։ Ա՛յ ապուշներ։ Արի կլինի՝ գրեմ այս ամենի մասին Պետերբուրգ, Տրյապիչկինին։ Նա հոդվածներ է գրոտում, ապա թող սրանց մի լավ փետրատի։ Է՛յ, Օսիպ, թուղթ ու թանաք բեր այստեղ։ (Օսիպը ներս է նայում դռան միջից և ասում. «Իսկույն»)— Իսկ որ

մարդ Տրյապիչկինի ատամի տակ ընկավ՝ աստված փրկի ու ազատի. հարազատ հորը չի խնայի. դե՛, փողի էլ սիրահար է։ Ասենք, այս աստիճանավորները բարի մարդիկ են. այդ շատ լավ է նրանց կողմից, որ ինձ փոխարինաբար փող տըվին։ Հապա մի հաշվեմ, որքան փող ունեմ հիմա։ Այս մեկը դատավորից՝ երեք հարյուր, սա էլ փոստապետից՝ երեք հարյուր, վեց հարյուր, յոթ հարյուր, ութ հարյուր... այս ի՞նչ յուղոտված թղթադրամ է։ Ութ հարյուր, ինը հարյուր... Օհո՛, հազարից էլ անցավ... Դե՛, այժմ, կապիտան, հապա՞ մի նորից ձեռքս ընկիր, տեսնենք քե ովի՞ ում։

ՏԵՍԻԼ IX

Խլեստակով և Օսիպ (բեռում է քայլ և բաճոմ)

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Դե ի՞նչ, տեսնո՞ւմ ես, հիմար, ինչպես են ինձ ընդունում ու հյուրասիրում։ (Սկսում է գրել)։

ՕՍԻՊ.— Հա՛, փա՛ռք աստծու։ Միայն քե, գիտե՞ք ինչ, Իվան Ալեքսանդրովիչ՛

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ի՞նչ։

ՕՍԻՊ.— Գնա՛նք այստեղից։ Աստվա՛ծ վկա, ժամանակն է արդեն։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (գրում է)— Ա՛յ հիմարություն։ Ինչո՞ւ որ։

ՕՍԻՊ.— Հենց այնպես։ Աստված սրանց հետ։ Մի-երկու օր քեֆ քաշեցինք այստեղ, այսքանն էլ հերիք է։ Ի՞նչ կարիք կա սրանց հետ երկար գլուխ դնելու։ Թքենք ու հեռանանք։ Ի՞նչ իմանաս, մեկ էլ տեսար մի ուրիշը կգա, աստված վկա, Իվան Ալեքսանդրովիչ։ Իսկ այստեղ շատ լավ ձիեր կան, թռցնելով կտանեն։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (գրում է)— Չէ՛, ես ուզում եմ դեռ մի քիչ էլ ապրել այստեղ։ Մնա վաղը։

ՕՍԻՊ.— Էլ ի՞նչ վաղը.— աստված վկա, գնանք, Իվան Ալեքսանդրովիչ։ Ճիշտ է, ձեզ մեծ պատիվ են տալիս այստեղ, բայց քե, գիտեք էլի՛, լավ կլինի շուտով հեռանանք։ Ախր ձեզ ինչ-որ մի ուրիշ մարդու տեղ են դրել։ Ձեր հայրիկն էլ կլսարանա, որ այսքան ուշացել ենք... Ճիշտ եմ ասում, շախով կքշենք ձիաները, շատ լավ ձիեր կտան մեզ։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (գրում է)— Դե լավ։ Դու դեռ այս նա-

մակը տար փոստը, թերևս հենց միաժամանակ ուղեգիրն էլ վերցրու։ Բայց թե տե՛ս, որ ձիերը ընտիր լինեն։ Կառապաններին ասա՛, որ մի-մի ռուբլի պարգև կտամ, որպեսզի զորապարտուրհանդակների պես՝ քշելիս երգեր ասեն... (Շարունակում է գրել)։ Երևակայում եմ, Տրյապիչկինը ծիծաղից կմեռնի։

ՕՍԻՊ.— Ես, պարոն, այս կուղարկեմ այստեղի ծառայողի հետ, իսկ ինքս՝ լավն այն է, իրերը կապկպոտեմ, որպեսզի էլ ղուր ժամանակ չանցնի։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (գրում է)— Լավ, դու դեռ մոմը բեր այստեղ։

ՕՍԻՊ.— (դուրս է ելնում և խոսում է բեմի ետեւում)— Է՛, ականջ արա, բարեկամս. փոստը նամակ պետք է տաննես, փոստապետին էլ ասա, որ առանց փողի ընդունի, հետո կասես, որ իսկույն մի երեք-ձիանի կառք բերեն, սուրհանդակների համար եղածը։ Իսկ ճանապարհի ծախսը, ասա՛, պարոնս չի վճարելու, ճանապարհի ծախսը, կասես, արքունական հաշվին է։ Ու կասես, որ ձեռաց կատարեն, թե չէ, ասա՛, պարոնը կբարկանա։ Կա՛ց, նամակը դեռ պատրաստ չէ։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (շարունակում է գրել)— Հետաքրքրական է իմանալ, որտե՞ղ է հիմա բնակվում. Պոչտամտսկայա՞, թե՞ Գորոխովայա փողոցում։ Չէ՞ որ նա էլ սիրում է բնակարանները փոխել ու փողը լրիվ չվճարել։ Ինչ կլինի՝ կլինի, գրեմ, Պոչտամտսկայա։ (Գրում և մակագրում է)։

Օսիպը բերում է մոմը։ Խլեստակովը զմռսում է։ Նույն պահին լսվում է Պերֆիմոդայի ձայնը. «Ո՞ւր ես գեմ տալիս, մոռումավար։ Ասում եմ ֆեզ՝ ճոամաճ չկա մարդ բաղնելու»։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (տալով Օսիպին նամակը)— Ա՛ռ, հանձնի՛ր։

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՁԱՅՆԸ.— Նե՛րս թողեք, աստծու սիրուն։ Իրավունք չունեք չթողնելու։ Գործով ենք եկել։

ԴԵՐՖԻՄՈՐԴԱՅԻ ՁԱՅՆԸ.— Դե՛ն գնա, դե՛ն գնա։ Ջի՛ ընդունում։ Քնած է։

Աղմուկը դադարեցնում է։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Այնտեղ ի՞նչ է պատահել, Օ՛սիպ։ Մի տես՝ այդ ի՞նչ աղմուկ է։

ՕՍԻՊ.— (լուսամուտից նայում է դուրս)— *Ինչ-որ վա՜ճառականներ ուզում են ներս գալ, ոստիկանները չեն թողնում։ Ձեռներին թղթեր կան։ Երևի թե ձեզ են ուզում տեսնել։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (մոտենալով լուսամուտին)— *Ի՞նչ կա, բարեկամներս։*

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՁԱՅՆԸ.— *Քո ողորմածությանն ենք դիմում։ Հրամայե՛ք, տեր խնդիրքներս ընդունել։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— *Նե՛րս թողեք դրանց, նե՛րս թողեք, թող գան։ Օսի՛պ, ասա՛ նրանց, թող ներս գան։*

Օսիպը գնում է։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (լուսամուտից ընդունելով խնդրագրերը, բաց է անում նրանցից մեկը և կարդում)— *«Նորին բարձրաբարեծնունդ պայծառափայլությանը պարոն Ֆինանսովին Արդուլին վաճառականից...»։ Սատանան գիտե, թե ինչ է. այդ տեսակ աստիճան էլ չկա։*

ՏԵՍԻԼ X

Խլեստակով և վաճառականներ (գինեհերով մի խոզով և շամարի գլուխներ ձեռքերին)

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— *Ի՞նչ կա, բարեկամներ։*

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ.— *Ձերդ ողորմածության ոտքե՛ր ենք բննկել։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— *Ի՞նչ է ձեր ուզածը։*

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ.— *Ջկործանես, ողորմած տեր։ Ջուր տեղ վերավորանք ենք կրում։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— *Ումի՞ց։*

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ.— *Էլ ումի՞ց, բոլորը այստեղի քաղաքապետից։ Այդ տեսակ քաղաքապետ, տեր իմ, երբեք եղած չկա։ Այնպիսի նեզություններ է տալիս, որ ասել չի լինի։ Գատիժներ տալով մեզնից թողեց, գնա թոկը վիզդ գցի ու խեղդվի։ Արածն արած չէ, ախր է՞։ Կբռնի մորուքիցդ ու կասի. ա՛խ, դո՛ւ թո՛ւրք, աստվա՛ծ է վկա։ Եթե, ասենք, որևէ բանով պատիվը պահած չլինենինք, ասես հա՛, բայց թե մենք էլ չէ՞ որ կարգը գիտենք. կնկան ու աղջկան ինչքան հագուստեղեն պետք է՝ մենք դրան հակառակ չենք կանգնում։*

Բայց տե՛ս որ՝ այդ բոլորից չի գոհանում, է՛ն աստված։ Կըմտնի խանութդ ու ինչ որ աչքը կտրեց՝ կզավթի. մահուդի թուփ կտեսնի, ասենք, ու կասի. է՛, անուշիկս, լավ մահուդիկ է, հապա մի տար մեր տուն։ Դե ի՞նչ արած, տանում ես. իսկ թուփի մեջ՝ էն պակասը մի հիսուն արշին կլինի։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Իսկապե՞ս։ Տե՛ս, ինչ խարդախն է եղել։

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ.— Աստվա՛ծ է վկա։ Այդ տեսակ քաղաքապետ ոչ ոք տեսած չկա։ Որ հեռվից չենք տեսնում նրան, իսկույն խանութում եղած ապրանքը թաքցնում ենք։ Դեռ, ասենք թե, ընտիր բաների վրա՛ աչք ունենար. չէ՛, ամենաանպետք բանն էլ կվերցնի. այն սևաշլորը, որ մի յոթ տարի արդեն մնացել է տակառում, որ խանութի աշակերտն էլ բերանը չի առնի, սա թաթը տակառի մեջ կգցի ու կհանի։ Նրա տոնախմբությունը սուրբ Անտոնի օրն է լինում, ու էլ ի՛նչ ասես, որ չենք բերում թափում, ոչ մի բանից կարոտ չենք թողնում։ Չէ՛, էլի՛ պիտի տանես տաս։ Օնուֆրիի օրն էլ ասում է, իր տոնախմբությունն է։ Ի՞նչ պիտի անես, Օնուֆրիի օրն էլ ես տանում։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Պարզապես ասա՛ ավազակ է։

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ.— Է՛ն աստված։ Իսկ փորձ արա՝ հակառակիր, մի գունդ զինվոր կբերի կբնակեցնի տանդ կամ, մեկ էլ տեսար, կհրամայի դռներդ փակել։ Ես քեզ, ասում է, մարմնական պատժի կամ տանջանքների չեմ ենթարկի, ասում է, այդ,— ասում է, օրենքով արգելված է, այլ,— ասում է,— աղի ձուկ կուտացնեմ քեզ։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Տե՛ս ինչ խարդախ մարդ է։ Այդ բանի համար՝ ուղղակի Սիբիր։

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ.— Ուր որ ձերդ ողորմածությունը ուզի անելու լինի նրան, մենք հոժար ենք, միայն թե մեզնից հեռու լինի։ Ջարհամարհես, հայր-հարազատ, մեր աղն ու հացը։ Որպես մատաղ ընդունիր այս շաքարն ու գինու կողովը։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Ո՛չ, այդպիսի բան չմտածեք, ես երբ՛ք կաշառք չեմ վերցնում։ Ա՛յ, եթե դուք, օրինակ, առաջարկեք ինձ փոխարինաբար մի երեք հարյուր ռուբլի, դե այդ ուրիշ գործ է. փոխարինաբար ես կարող եմ վերցնել։

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ.— Համեցի՛ր, հայր հարազատ։ (Հա-

նում են դրամը)— էլ ի՞նչ երեք հարյուր, միանգամից հինգ հարյուր վերցրու, միայն թե օգնի՛ր։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Համեցե՛ք, փոխարինաբար՝ ձայն չեմ հանի, կվերցնեմ։

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ.— (արծաթե մատուցարանի վրա մեկնում են նրան դրամը)— Դե՛, շնորհ արեք, այս մատուցարանն էլ հետը վերցրեք։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Ոչինչ, մատուցարանն էլ կարելի է։

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ.— (գլուխ տալով)— Դե՛, հետն էլ էս շաքարը վերցրեք էլի՛։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Օ՛, ո՛չ, ես ոչ մի կաշառք։

ՕՍԻՊ.— Ձերդ բարձրազնվություն, ինչո՞ւ եք մերժում, վերցրեք, ճամփին բոլորը պետք կգա։ Դե՛ սը տուր շաքարի գլուխներն ու կողովը։ Բոլո՛րը տուր, բոլորն իր տեղը կգտնի։ Այն ի՞նչ է, չվա՞ծ է, չվա՛ծն էլ դնսը տուր, ճամփին չվանն էլ կարող է պետք գալ։ Կառքը կվնասվի կամ մի ուրիշ բան, կարելի կլինի կապել։

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ.— Դե՛, ուրեմն, արժանացրեք մեզ ձեր շնորհին, ձերդ պայծառափայլություն։ Թե դուք էլ, խոսքի օրինակ, մեզ օգնության չհասնեք մեր այս խնդրածում, էլ արդեն չենք իմանում, թե ճարն ինչ է, գնա ու գլուխդ մահու տուր։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Անպատճա՛ռ, անպատճա՛ռ. ես կաշխատեմ։

Վաճառականները գնում են։ Լսվում է մի կնոջ ձայն. «Ո՛չ, իրավունք չունես ինձ նեռս չթողնելու։ Ես հենց իրեն գանգատ կանեմ բեզնից։ Դու ինձ այդպես մի բռի՛»։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Ովքե՞ր են այնտեղ։ (Մոտենում է պատուհանին)— Ի՞նչ կա, ա՛յ կնիկ։

ԵՐԿՈՒ ԿԱՆԱՆՑ ՁԱՅՆ.— Ողորմածություն եմ խնդրում, պարոն։ Հրաման տուր, տեր իմ, խոսք ասեմ։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Նե՛րս թողեք դրան։

Ալեսաակով, փականագործի կինը և ունտեր-օֆիցերի այրին

ՓԱԿԱՆԱԳՈՐԾԻ ԿԻՆԸ.— (նրա ոտքերն ընկնելով)— *Ողորմածություն եմ խնդրում։*

ՈՒՆՏԵՐ-ՕՖԻՑԵՐԻ ԱՅՐԻՆ.— *Ողորմածություն եմ խընդրում։*

ԱԼԵՍԱԿՈՎ.— *Ովքե՞ր եք, ի՞նչ կանայք եք։*

ՈՒՆՏԵՐ-ՕՖԻՑԵՐԻ ԱՅՐԻՆ.— *Ունտեր-օֆիցերի այրի Իվանովնա։*

ՓԱԿԱՆԱԳՈՐԾԻ ԿԻՆԸ.— *Տեղիս քաղքենի, փականագործ կին՝ Ֆևրոնյա Պետրովնա Պոշլյոպկինա, պարոն։*

ԱԼԵՍԱԿՈՎ.— *Կացե՛ք, թող առաջ մեկը խոսի։ Դու ի՞նչ ունես։*

ՓԱԿԱՆԱԳՈՐԾԻ ԿԻՆԸ.— *Ողորմածություն եմ խնդրում, քաղաքապետից գանգատ ունեմ։ Աստված չարը նրա գլխից անպակաս անի, որ ո՛չ նրա երեխաները, ո՛չ ինքը՝ ավազակը, ո՛չ քեռիները, ո՛չ մորքուրները լավ օր չտեսնեն այս աշխարհում։*

ԱԼԵՍԱԿՈՎ.— *Ինչո՞ւ որ։*

ՓԱԿԱՆԱԳՈՐԾԻ ԿԻՆԸ.— *Ախր հրաման է տվել, որ ֆ՛ մարդուն զինվոր տանեն։ Իսկ մեր հերթը չէր էլ եկել, ա՛խ դու սրիկա։ Օրենքով էլ չի կարելի, ամուսնացած մարդ է։*

ԱԼԵՍԱԿՈՎ.— *Բայց ինչպե՞ս կարողացավ այդ անել։*

ՓԱԿԱՆԱԳՈՐԾԻ ԿԻՆԸ.— *Կարողացավ սրիկան, կարողացավ, աստված քակի նրան քե՛ այս և քե՛ այն աշխարհում։ Թող քե նրան, ու եքե մորաքույր էլ ունի՝ թող նրա մորաքրոջն էլ ցավ դիպչի, ու քե հայրն էլ դեռ ողջ է, թող նա էլ, սրիկայի մեկը, սատկի կամ կոկորդում ոսկոր կանգնի հուր-հավիտյան, ա՛խ դու ավազակ։ Զինվոր գնալու հերթը դերձակի տղինն էր ու ինքն էլ հենց հարբեցողի մեկն էր, բայց քե ծնողները հարուստ նվեր տվին։ Դրանից հետո վաճառականի կին Պանտելեևայից կպավ։ Պանտելեևան էլ այդ անօրենի կնկան երեք թոփ քաթան ուղարկեց։ Դրանից հետո իմ օձիքից բռնեց. «Քեզ ի՞նչ պետք է,— ասում է,— ամուսին, նա արդեն քեզ պետք չէ։ Այդ ե՛ս գիտեմ— պետք է, քե պետք չի, այդ ի՛մ իմանալու բանն է, ա՛յ դու խաթդախ։

ձՔո մարդն,— ասում է,— գող է, քնպետ հիմա ոչինչ չի գողացել, բայց մեկ է,— ասում է,— գողություն կանի, առանց այդ էլ նրան եկող տարի կտանեն։ Ապա ինչպե՞ս կարող եմ ես առանց մարդու մնալ, սրիկա՛։ Ես խեղճ ու կրակ կին եմ, ա՛խ դու ստոր խաբեբա։ Քո ամբողջ ազգն ու տակը օր ու արև չտեսնի։ Քե որ զոքանչ ունես, քող զոքանչդ էլ...

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Շա՛տ բարի, շա՛տ բարի։ Դե՛, իսկ դո՞ւ (ձամփու է դնում փականագործի կնոջը)։

ՓԱԿԱՆԱԳՈՐԾԻ ԿԻՆԸ.— (գնալով)— Մտահան չանես, հայր հարազատ, ողորմություն արա։

ՈՒՆՏԲՐ-ՕՖԻՑԵՐԻ ԱՅՐԻՆ.— Քաղաքապետից գանգատվելու եմ եկել, պարոն։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ի՞նչ կա, ինչո՞ւ։ Կարճ խոսքով բացատրիր։

ՈՒՆՏԲՐ-ՕՖԻՑԵՐԻ ԱՅՐԻՆ.— Ծեծել է, հայր իմ։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Այդ ինչպե՞ս։

ՈՒՆՏԲՐ-ՕՖԻՑԵՐԻ ԱՅՐԻՆ.— Սխալմունքով, հայր իմ։ Շուկայում կանայք տուրուդմփոց սկսեցին, իսկ ոստիկանությունը ժամանակին չհասավ. ինձ տեսան ու բռնեցին, տուր քե կտաս։ Երկու օր նստել չէի կարողանում։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Հիմա ի՞նչ կարող ենք անել։

ՈՒՆՏԲՐ-ՕՖԻՑԵՐԻ ԱՅՐԻՆ.— Դե՛, իհարկե, ոչինչ անել չենք կարող։ Բայց դե սխալմունքի համար հրաման տուր՝ ինձ տուգանք վճարի։ Ես իմ բախտից ինչո՞ւ ձեռ քաշեմ, փողը ինձ հիմի շատ հարկավոր կլիներ։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Շա՛տ բարի, շա՛տ բարի, գնացե՛ք, ես կկարգադրեմ։

Լուսամուտից ներս են ցցվում ձեռքեր՝ խեղդազգեստով։

Էլ ո՞վ կա այնտեղ։ (Մոտենում է լուսամուտին)։ *Չե՛մ ուզում, չե՛մ ուզում։ Պետք չէ, պետք չէ։* (Հեռանալով լուսամուտից)— *Ջանձրացրին, սատանան տանի։ Ներս չթողնե՛ս, Օսիպ։*

ՕՍԻՊ.— (գոռում է պատուհանից դուրս)— *Գնացե՛ք, գնացե՛ք, ժամանակը չէ։ Էգուց եկեք։*

Դուռը բացվում է և ճայտնվում մեկը՝ ֆրիզե[1] բիկնոցով, չածիլված դեմքով, ուռած շրթունքներով և կապկված այտով, սրա ձեռքից երևում են ևս մի քանի մարդ։

1 Ֆրիզ — կոպիտ բրդեղեն գործվածք։

ՕՍԻՊ.— Դո՛ւրս, դո՛ւրս, ի՞նչ ես ներս խցկվում (ձեռքերով դեմ է տալիս նրա փորին և նրա հետ միասին դուրս մղվում նախասենյակ, փակելով ետևից դուռը)։

ՏԵՍԻԼ XII

Խլեստակով և Մարիա Անտոնովնա

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.—Ա՛խ։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ինչի՞ց այդպես վախեցաք, օրիորդ։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Ո՛չ, ես չեմ վախեցել։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (նազ ու տուզով)— Շնո՛րհ արեք, օրիորդ, ինձ շատ հաճելի է, որ դուք ընկալում եք ինձ որպես մի մարդու, որը... կհամարձակվե՞մ արդյոք հարցնել՝ ո՞ւր էիք մտադիր գնալու։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Ճշմարիտ, ես ոչ մի տեղ չէի գընում։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Բայց ինչո՞ւ, օրինակի համար, ոչ մի տեղ չէիք գնում։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Մտածեցի, այստեղ չէ՞ արդյոք մայրիկս...

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ո՛չ, ես կուզեի իմանալ, ինչո՞ւ դուք ոչ մի տեղ չէիք գնում։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Ես ձեզ խանգարեցի։ Դուք կարևոր գործերով էիք զբաղված։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (կոտրատվելով).— Իսկ ձեր աչքերն ավելի լավ են, քան կարևոր գործերը... Դուք ոչնչով չեք կարող խանգարել ինձ, ո՛չ մի կերպ չեք կարող, ընդհակառակը, դուք կարող եք հաճույք պատճառել։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Դուք խոսում եք մայրաքաղաքի ոճով։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Հատկապես ձեզ նման չքնաղ էակի համար։ Կհամարձակվե՞մ այնքան երջանիկ լինել, որ ձեզ աթոռ առաջարկեմ։ Սակայն ոչ, ձեզ կվայելի ո՛չ թե աթոռ, այլ գահ։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Ճշմարիտ, ես չգիտեմ... ինձ այնքան անհրաժեշտ էր գնալ։ (Նստում է)։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Այս ի՞նչ հրաշալի վզնոց ունեք։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Դուք ծաղրել եք ուզում ինձ մի գավառացու։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Որքան կուզեի, օրիորդ, լինել ձեր վզնոցը, որպեսզի ընդգրկեի ձեր շուշանանման պարանոցիկը։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Ես քնավ չեմ հասկանում, թե ինչ եք ասում. ինչ-որ մի վզնոց... Ի՞նչ տարօրինակ եղանակ է այսօր...

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Իսկ ձեր շրթունքները, օրիորդ, ամեն մի եղանակից էլ լավ են։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Դուք շարունակ այդ տեսակ խոսքեր եք ասում... ես ձեզ կխնդրեի, որ դրա փոխարեն դուք իմ ալբոմի մեջ մի ոտանավոր գրեիք ի հիշատակ։ Դուք, երևի, ոտանավորներ շատ գիտեք։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ձեզ համար, օրիորդ, ամե՛ն բան, ինչ կհաճեք; պահանջեցեք, ի՞նչ ոտանավոր եք ուզում։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Որևէ հարմար, լավ և նոր։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Դե ոտանավորն ի՞նչ, ես շատ գիտեմ։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Դե, ասացեք, ո՞րը կգրեք։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ի՞նչ կարիք կա ասելու։ Առանց այդ էլ գիտեմ։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Ես շատ եմ սիրում ոտանավորներ։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ես բազմաթիվ ոտանավորներ գիտեմ։ Ահա՛, թեկուզ այս մեկը— «Ով դու, վշտահարդ, է՞ր գանգատվում ես աստծուց»[1]... Դե՛ և ուրիշներ, այժմ չեմ հիշում։ Սակայն այս բոլորը ոչինչ։ Ավելի լավ է պարզեմ ձեր առաջ իմ սերը, որը ձեր մի հայացքից... (Մոտեցնում է իր աթոռը)։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Սե՛ր։ Ես չեմ հասկանում սեր ասածը։ Ես երբեք չեմ իմացել, թե ինչ է սերը... (Ետ է քաշում իր աթոռը)։

ԽԼԵՍՏԱԿՈՎ — Ինչո՞ւ եք դուք նետ քաշում ձեր աթոռը։ Լավ կլիներ՝ իրար ավելի մոտ նստել։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— (Ետ քաշվելով)— Բայց ինչո՞ւ մոտ, հեռուն էլ նույնն է։

---

[1] *Մ. Վ. Լոմոնոսովի (1711—1765) «Հոբից հատվածք» ներբողի առաջին տողն է։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (մոտիկանալով)— *Իսկ ինչո՞ւ հետու մոտիկն էլ նույնն է։*

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— (եռ ֆաշվելով)— *Բայց ի՞նչ կարիք կա։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (մոտիկանալով)— *Այդ ձեզ է միայն թվում, որ մոտիկ է, իսկ դուք երևակայեցեք, որ հետու է։ Որքա՜ն երշանիկ կլինեի, օրիորդ, եթե կարողանայի սեղմել ձեզ իմ գրկում։*

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— (նայելով դեպի լուսամուտը)— *Այն ի՞նչ էր, որ կարծես թե՝ թռավ այնտեղ։ Կաչաղա՞կ էր, թե՞ մի այլ թռչուն։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (նամբառում է նրա ուսը և նայում լուսամուտից)— *Կաչաղակ էր։*

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— (վեր է կենում վրդովված)— *Ո՛չ, այդ արդեն չափազանց է... Ի՞նչ հանդգնություն։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (պաճելով նրան)— *Ներեցե՛ք, օրիո՛րդ, ես այդ ար ի սիրուց դրդված, ճիշտ եմ ասում, սիրուց։*

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— *Ձեր աչքում ես մի գավառացի եմ...* (Ջանում է գնալ)։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (շարունակելով պաճել նրան)— *Սիրո՛ւց, ճշմարիտ, սիրո՛ւց։ Ես միմիայն կատակ արի, Մա՛րիա Անտոնովնա, մի՛ բարկանաք։ Ես պատրաստ եմ՝ ծնկաչոք ներողություն խնդրել։* (Թափով չոքում է).— *Դե՛, ներեցեք, ներեցեք։ Տեսնո՞ւմ եք, ես ծնկաչոք եմ։*

ՏԵՍԻԼ XIII

Նոաճ և Աննա Անդրեևնա

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— (տեսնելով Խլեստակովին ծնկաչոք)— *Ա՛խ, ինչ պասսա՜ժ*[1]։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (վեր կենալով)— *Ա՛խ, գրողը տանի։*

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— (տղկած)— *Այս ի՞նչ է նշանակում, օրիորդ։ Այս ի՞նչ արարմունք է։*

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— *Ծ՛ս, մայրիկ...*

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— *Անմիջապես կորի՛ր այստեղից։*

---

1 Պասսաժ — տեսակետ գիտ., տեսադաշտի ընդարձակություն։

լսո՞ւմ ես, անմիջապե՛ս, անմիջապե՛ս, և չհամարձակվես աչքիս երևալ։

Մարիա Անտոնովնան թացախուման ճեռանում է։

Ներեցե՛ք, ես խոստովանում եմ, այնպիսի ապշահար վիճակումն եմ։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (մեկուսի)— *Սա էլ պակաս չէ, ախորժաբեր տիկին է։* (Բարձր ծունկի է գալիս) *Տիկի՛ն, դուք տեսնում եք, ես այրվում եմ սիրուց։*

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— *Ինչպե՞ս, դուք՝ ծնրադրա՞ծ։ Ա՛խ, վե՛ր ելեք, վե՛ր ելեք։ Այստեղ հատակը բնավ մաքուր չէ։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— *Ո՛չ, ծնկաչոք, անպատճա՛ռ ծնկաչոք։ Ես համենում եմ գիտենալ— ի՞նչ է ինձ վիճակված՝ կյա՞նք, թե՞ մահ։*

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— *Սակայն թո՛ւյլ տվեք, ես դեռևս լիովին չեմ հասկանում ձեր խոսքերի իմաստը։ Թե՛ չեմ սխալվում, դուք հայտարարություն եք անում իմ դստեր մասին։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— *Ո՛չ, ես ձեզ եմ սիրահարված։ Իմ կյանքը մազից է կախված։ Եթե դուք չպսակեք իմ մշտադալար սերը, ապա ես արժանի չեմ երկրային գոյության։ Բոցը կրծքիս մեջ՝ ձեր ձեռքն եմ խնդրում։*

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— *Սակայն թույլ տվեք նկատել, ես որոշ չափով... ես ամուսնացած եմ...*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— *Այդ ոչինչ։ Սիրո համար տարբերություն չկա։ Եվ Կարամզինն էլ ասել է. «Օրենքները դատապարտում են»[1]։ Մենք կմեկուսանանք շիթերի հովանու տակ... Ձեր ձե՛ռքը, ձեր ձե՛ռքը...*

ՏԵՍԻԼ XIV

Նույնք և Մարիա Անտոնովնա (ներս է վազում ճանկարծ)

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— *Մայրի՛կ, Հայրիկն ասաց, որ դուք...* (Տեսնելով Խլեստակովին ծնկաչոք՝ բացականչում է)— *Ա՛խ, ինչ պասսա՛ժ...*

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— *Ի՞նչ պատահեց, ինչո՞ւ ներս ըն-*

---

1 Ն. Մ. Կարամզինի (1766—1826) արձանագրած կզակին վերաբեր-

կար։ Այդ ի՞նչ ցանցառություն է։ Ներս վազեցիր հանկարծ՝ ածխահոտով բռնված կատվի նման։ Ի՞նչ մի զարմանալի բան դառար։ Խելքիդ ի՞նչ փչեց հանկարծ։ Ճշմարիտ, կարծես երեք տարեկան երեխա լինես։ Նման չէ, նման չէ, բոլորովին նման չէ, որ տասնութ տարիդ լրացրած լինես։ Չգիտեմ, ե՛րբ խելահաս կդառնաս, երբ կսկսես պահել քեզ այնպես, ինչպես վայել է բարեկիրթ օրիորդի, ե՛րբ, վերջապես, կհասկանաս, թե ինչ ասել է բարեկանոն և արժանավայել վարմունքներ։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— (լացակումած).— Ես, մայրիկ, բոլորովին չգիտեի...

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Միշտ ինչ-որ միջանցիկ քամի է պատւյտ գալիս քո գլխում։ Դու օրինակ ես առնում Լյապկին-Տյապկինի աղչիկներից։ Ի՞նչ կարիք ունես նրանց հետևելու, ոչ մի կարիք չունես։ Աչքիդ առաջ այլ օրինակներ ունես՝ աչքիդ առաջ քո մայրն է։ Ահա թե ինչ օրինակների պիտի հետևես։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— (Ձանկարծ բռնելով աղչկա ձեռքից)— Աննա Անդրեևնա, մի դիմադրեք մեր երջանկությանը, օրհնեցեք անթառամ սերը։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— (ապշահար)— Ուրեմն դուք սրա՞ն եք...

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Վճռեցեք՝ կյա՞նք, թե՞ մահ։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Ահա տեսնո՞ւմ ես, հիմարագլուխ, տեսնո՞ւմ ես, քեզ պես մի անպիտանի համար մեր հյուրը բարեհաճել է ծունկի գալ, իսկ դու հանկարծ ներս վազեցիր խելագարի նման։ Ճիշտ եմ ասում, արժեր, որ ես դիտմամբ մերժեի։ Դու արժանի չես նման երջանկության։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Էլ չե՛մ անի, մայրիկ, երդվում եմ, էլ չե՛մ անի։

ՏԵՍԻԼ XV

Նույնը և Ֆաղամապեա՝ ներքեն

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ձե՛րդ գերազանցություն, չկործանե՛ք ինձ, չկործանե՛ք։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ձեզ ի՞նչ է պատահել։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Քիչ առաջ վաճառականները գանգատ-

վել են ինձնից ձերդ գերազանցությանը։ Պատվով եմ հաստատացնում, նրանց ասածի կեսն էլ տեղի չի ունեցել։ Նրանք ինքնե՛րն են խարում ու խարխրում ժողովրդին։ Ունտեր-օֆիցերի այրին ստել է ձեզ, թե իբր ես նրան ծեծել եմ։ Սուտ է, աստված վկա, սուտ է։ Նա ինքն է իրեն ծեծել։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Գետնի տակն անցնի ունտեր-օֆիցերի այրին։ Բնավ իմ փույթը չէ։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Մի՛ հավատաք. մի՛ հավատաք։ Բոլորն էլ ստախոսներ են... Նրանց այսչափի մի երեխա հավատ չի ընծայի։ Ամբողջ քաղաքում հայտնի են իրենց ստախոսությամբ։ Իսկ խարդախության մասին, կհամարձակվեմ զեկուցել, այնպիսի խարդախներն են, որ աշխարհը չի տեսել։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Գիտե՞ս արդյոք ինչ պատվի է արժանացնում մեզ Իվան Ալեքսանդրովիչը. նա խնդրում է մեր դստեր ձեռքը։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Այդ ի՞նչ փչեց գլխիդ... Գժվե՞լ ես, ա՛յ կնիկ։ Բարեհաճեցեք չդայրանալ, ձերդ գերազանցություն, տիկինս խելքից քիչ պակաս է, իր մորն է քաշել, նա էլ այսպես էր։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Այո՛, ես իրոք խնդրում եմ նրա ձեռքը։ Ես սիրահարված եմ։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Չե՛մ կարող հավատալ, ձերդ գերազանցություն։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Ինքն է ասում քեզ, չէ՞։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Ես ասում եմ միանգամայն լուրջ... Ես կարող եմ սիրուց ցնդել։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Չե՛մ համարձակվում հավատալ, արժանի չեմ այդ պատվին։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Եթե դուք չհամաձայնեք տալ ինձ Մարիա Անտոնովնայի ձեռքը, ես պատրաստ եմ, սատանա՛ն գիտե, ինչ անելու։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Չե՛մ կարող հավատալ, բարեհաճում եք կատակել, ձերդ գերազանցություն։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Ինչ հաստատակուրեն ես, մարդ աստծու։ Չէ՞ որ բացատրում են քեզ։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Չե՛մ կարող հավատալ։

ԱԼԵՍՏԱԿՈՎ.— Համաձայնեցե՛ք, համաձայնեցե՛ք։ Ես

-խելակորույս խիզախ մեկն եմ, գլուխս չեմ խնայիլ։ Եթե անձնասպան լինեմ, ձեզ դատի կտան։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ա՛խ, տե՛ր իմ աստված։ Ես, աստված է վկա, մեղավոր չեմ ո՛չ հոգով, ո՛չ մարմնով։ Մի՛ բարեհաճեք բարկանալ։ Բարեհաճեցեք վարվել այնպես, ինչպես որ ձեր ողորմածության կամքն է։ Իմ գլխում ամեն ինչ իրար է խառնվել... Չեմ հասկանում, թե շուրջս ինչ է կատարվում։ Այնպիսի մի ապուշ եմ դարձել, որպիսին երբեք եղած չկամ։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Դե՛հ, օրհնի՛ր։

Խլեստակովը և Մարիա Անտոնովնան մոտենում են։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Թող աստված օրհնե ձեզ, ինկ ես՝ մեղավոր չեմ։

Խլեստակովը ճամբուրվում է Մարիա Անտոնովնայի հետ։ Քաղաքապետը նայում է նրանց։

Գրո՛ղը տանի, իրոք որ ճիշտ է։ (Տոռում է աչքերը)։ *Համբուրվո՛ւմ են։ Ա՛խ, երկնավոր տեր, համբուրվում են։ Իսկական փեսացու։* (Բացականչում է, ուրախությունից վեր-վեր թռչելով)— *Ա՛յ Անտոն, ա՛յ Անտոն, ա՛յ քաղաքապետ։ Ա՛յ թե գործդ ինչ ճամփով գնաց։*

ՏԵՍԻԼ XVI

Նույնը և Օսիպ

ՕՍԻՊ.— Ձիերը պատրաստ են։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ա՜խ, շատ բարի... ես իսկույն։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Այդ ի՞նչ է, բարեհաճում եք մեկնե՞լ։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Այո՛, գնում եմ։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Իսկ ե՞րբ... այսինքն... ինքներդ բարեհաճեցիք կարծեմ, ակնարկել հարսանյաց մասին։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Ա՛խ, այդ... ընդամենը մի րոպեով, մի օրով միայն՝ հորեղբորս մոտ. հարուստ մի ծերուկ է, և վաղն ևեթ կվերադառնամ։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Չենք համարձակվի ձեզ ետ պահելու՝ հուսալով ձեր բարեհաջող վերադարձին։

*ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Հարկավ, հարկավ։ Ես իսկույն։ Մնա՛ք

բարյավ, իմ սեր... ո՛չ, պարզապես չեմ կարող արտահայտել։ Մնաք բարյա՛վ, հոգյակս։ (Համբուրում է աղջկա ձեռքը)։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Արդյոք որևէ բանի կարիք չունե՞ք ճանապարհի համար։ Դուք, կարծեմ, հաճել էիք դրամի կարիք ունենալ։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Օ՛, ո՛չ։ Ի՞նչ կարիք։ (Մի պահ մտածելուց հետո)— *Ասենք, թերևս։*

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Որքա՞ն կհաճեք։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Երեկ դուք ինձ տվիք երկու հարյուր, այսինքն՝ ոչ թե երկու, այլ չորս հարյուր— ես չեմ ուզում օգտվել ձեր սխալմունքից—ուստի՝ հիմա էլ թերևս նույնքան, որպեսզի գոյանա ուղիղ ութ հարյուր։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Խնդրո՛ւմ։ (Հանում է դրամապանակից),— *Ով դեռ կարծես դիտմամբ, բոլորովի՛ն նոր թղթադրամներով։*

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Այո՛, իսկապես։ (Վերցնում և տեղավորում է թղթադրամները)— *Այս լավ է։ Չէ՞ որ ասում են՝ նոր թղթադրամը նոր երջանկություն է գուշակում։*

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ճիշտ այդպես։

ԽԼԵՍՏԱԿՈՎ.— Մնա՛ք բարյավ, Անտոն Անտոնովիչ։ Շատ պարտավորեցրիք ձեր հյուրընկալությամբ։ Անկեղծ սրտով խոստովանում եմ, ինձ երբեք նման ընդունելություն չեն ցույց տվել։ Մնա՛ք բարյավ, Ա՛ննա Անդրեևնա։ Մնա՛ք բարյավ, հոգույս հատոր։ Մարի՛ա Անտոնովնա։ (Գնում են դուրս)։

Բեմի հեռանում։

ԽԼԵՍՏԱԿՈՎԻ ՁԱՅՆԸ.— Բարյավ մնաք, սրտի՛ս հրեշտակ, Մարի՛ա Անտոնովնա։

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՁԱՅՆԸ.— Սակայն այս ի՞նչ է, հենց այս հասարակ պահանգակառքո՞վ եք գնալու։

ԽԼԵՍՏԱԿՈՎԻ ՁԱՅՆԸ.— Այո, այդ իմ սովորությունն է։ Ռևսորներից իմ գլուխը ցավում է։

ԿԱՌԱՊԱՆԻ ՁԱՅՆԸ.— Տպռռո՛ւ...

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՁԱՅՆԸ.— Այդ դեպքում գոնե որևէ բան փռենք, մի փոքրիկ գորգ։ Չե՞ք հրամայի արդյոք, ես կարգադրեմ, որ գորգ բերեն։

ԽԼԵՍՏԱԿՈՎԻ ՁԱՅՆԸ.— Ո՛չ, ի՞նչ կարիք, ավելորդ է։ Ասենք թերևս կարելի է, թող բերեն։

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՁԱՅՆԸ.— Է՛յ, Ավդոտյա, գնա պահեստի սենյակը, հանիր ամենալավ գորգը, այն, որ կապույտ խավով է, պարսկականը, շո՛ւտ արա...

ԿԱՌԱՊԱՆԻ ՁԱՅՆԸ.— Տպռո՛ւ...

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՁԱՅՆԸ.— Ե՞րբ կհրամայեք սպասել։

ԱԼԵՍՏԱԿՈՎԻ ՁԱՅՆԸ.— Վաղը կամ մյուս օրը։

ՕՍԻՊԻ ՁԱՅՆԸ.— Այս ի՞նչ է, գորգ է. դե՛ս բեր, փռի՛ր այսպես, այս կողմից խոտ ավելացրու։

ԿԱՌԱՊԱՆԻ ՁԱՅՆԸ.— Տպռո՛ւ...

ՕՍԻՊԻ ՁԱՅՆԸ.— Ահա ա՛յս կողմից, դե՛ս, էլի՛ մի քիչ, հիմա լա՛վ է։ Շատ հարմար կլինի։ (Ձեռքը զարկելով գարպիե)— Այժմ նստեցե՛ք, ձերդ ազնվություն։

ԱԼԵՍՏԱԿՈՎԻ ՁԱՅՆԸ.— Մնաք բարով, Անտոն Անտոնովիչ։

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՁԱՅՆԸ.— Գնաք բարով, ձերդ գերազանցություն։

ԿԱՆԱՆՑ ՁԱՅՆԵՐ.— Գնաք բարով, Իվան Ալեքսանդրովիչ։

ԱԼԵՍՏԱԿՈՎԻ ՁԱՅՆԸ.— Մնաք բարով, մայրիկ...

ԿԱՌԱՊԱՆԻ ՁԱՅՆԸ.— Ձե՛զ տեսնեմ, հրեղեննե՛ր։

Կառքի զանգակը զրնգում է։ Վարագույրն իջնում է։

ԱՐԱՐՎԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՏԵՍԻԼ I

Քաղաքապետ, Աննա Անդրեևնա և Մարիա Անտոնովնա

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Դե՛, Աննա Անդրեևնա, մտքովդ կանցնե՞ր այս բոլորը, հը՞։ Ա՛յ, սրան կասեն չաղ պատառ, գրողը տանի։ Դե՛, անկեղծ խոստովանիր, երազումդ էլ նման բան տեսած չկաս— մի հասարակ քաղաքապետի կնիկ էիր և հանկարծ... պա՛հ, սատանի ականջը խուփ, ա՛յ քե բարեկամություն հաստատեցինք։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Բնավ ո՛չ. ես վաղուց այդ գիտեի։ Այդ քեզ համար է հրաշք բան, որովհետև դու հասարակ մարդ ես, երբեք կանոնավոր մարդիկ տեսած չկաս։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ես ինքս էլ, տիկինս, կանոնավոր մարդ եմ։ Սակայն, ճիշտ եմ ասում, երբ մտածում եմ, թե ես ու դու, Աննա Անդրեևնա, ի՞նչ կարգի թռչուններ ենք դառել հիմա... Հը՞, Աննա Անդրեևնա, բարձր թռանք, գրողը տանի։ Դե՛, հիմա կաց, հիմա ես խնդրագրեր ու մատնություններ ներկայացնելու սիրահարների քթի մուխը կհանեմ։ Է՛յ, ո՞վ կա այդտեղ։ (Մտնում է ոստիկանը)— Ա՛, դո՛ւ ես, Իվան Կարպովիչ. ապա մի կանչի՛ր այստեղ վաճառականներին։ Հիմա ես այդ սրիկաների հաշիվը կտեսնեմ։ Գանգա՛տ կանեն ինձ վրա, հա՞։ Դրա՞նց տես, այդ անիծյալ հուդաներին։ Դե, կացե՛ք, աղավնյակներս, առաջ ես ձեզ մինչև բեղերն էի կերցնում, այժմ մինչև մորուքներդ կուտեք։ Յուցակագրիր բոլորին, ովքեր եկել էին գանգատվելու ինձ վրա, իսկ ամենից շատ այդ գանգատները շարադրող գրչակներին։ Հետո էլ բոլորին հայտարարիր, թող գիտենան, թե ինչ պատվի է արժանացրել աստված քաղաքապետին, որն իր աղչկան մարդու է տալիս, և այն էլ ո՛չ թե հասարակ մարդու, այլ այնպիսի մեկին, որի նմանը աշխարհիս երեսին դեռ չի եղել, և որ կարող է ամե՛ն ինչ անել, ամե՛ն ինչ, ամե՛ն ինչ։ Ամենքի՛ն հայտարարիր, թող ամե՛նքն իմանան։ Ձայնդ գցիր ամբո՛ղջ քաղաքով մեկ, զանգե՛րը հնչեցնել տուր, սատանան տանի։ Թե որ տոնախմբություն է, թող իսկակա՛ն տոնախմբություն լինի։ (Ոստիկանը գնում է)։— Ահա՛ թե ինչպես, Աննա Անդրեևնա։ Իսկ ասա՛ տեսնեմ, որտե՞ղ ենք ապրելու այսուհետև, այստե՞ղ, թե Պիտերում։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Բնականաբար, Պետերբուրգում, ինչպե՞ս կարելի է այստեղ մնալ։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Դե՛հ Պիտերո՛ւմ, թող Պիտերո՛ւմ լինի։ Բայց այստեղ էլ վատ չէր լինի։ Իսկ ի՞նչ, ես կարծում եմ, քաղաքապետությունը գրողի ծոցը կուղարկենք, հա՞, Աննա Անդրեևնա։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Բնական է, այլևս ի՞նչ քաղաքապետություն։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Բայց ի՞նչ ես կարծում, Աննա Անդրեևնա, այժմ կարելի է մեծ աստիճան պոկել, որովհետև մինիստրների հետ ընկերություն է անում, պալատ է հաճախում, ուրեմն կարող է այնպես առաջ քաշել, որ ժամանակով գենե-

րալ էլ կդառնամ։ Ի՞նչ ես կարծում, Աննա Անդրեևնա, կարե-լի՞ է գեներալ դառնալ։

Աննա Անդրեեվնա.— Ի՞նչ խոսք հարկավ կարելի է։

Քաղաքագետ.— Ա՜խ, գրողը տանի, շա՜տ լավ բան կլի-նի, թե որ գեներալ դառնամ։ Պատվո ժապավենն կախ կտան ուսիցդ։ Իսկ ո՞ր ժապավենն է ավելի լավ, Աննա Անդրեևնա, կարմի՞րը, թե՞ երկնագույնը։

Աննա Անդրեեվնա.— Դե, իհարկե, երկնագույնն ավելի լավ է։

Քաղաքագետ.— Է՜հ, տե՛ս թե ինչ ուզեց սիրտը։ Կար-միրն էլ վնաս չի տա։ Ախր ինչո՞ւ եմ ուզում գեներալ դառ-նալ։ Կպատահի, ասենք, որևէ տեղ գնալու լինես— սուր-հանդակներն ու համհարզները կսլանան առջևիցդ՝ «Ձեի՛ր պատրաստեցեք» գոռալով։ Եվ ահա կայարաններում ոչ ոքի ձի չեն տալիս. ամենքը սպասում են, բոլոր այդ տիտուլյար-ները, կապիտանները, քաղաքագետները. իսկ քո փուչքն էլ չի ըսկի։ Ճաշում ես որևէ տեղ նահանգապետի մոտ, իսկ քիչ հետո՝ ձգված է առջևդ մի քաղաքագետ. հե՛, հե՛, հե՛ (հռհռում է և ծիծաղից մարում), ա՛յ թե որն է, գրողը տանի, հրապուրիչ բանը։

Աննա Անդրեեվնա.— Քեզ միշտ նման կոպիտ բաներ են դուր գալիս։ Դու պետք է ըմբռնես, որ մեր կենցաղն այ-սուհետև պետք է փոխենք, որ քո ծանոթները կլինեն ոչ թե որևէ շնասեր դատավոր, որի հետ նապաստակ որսալու ես գնում կամ մի Զեմլյանիկա։ Ընդհակառակը, քո ծանոթները կլինեն նուրբ վարվեցողության տեր մարդիկ։ Կոմսեր և առ-հասարակ աշխարհակիրթ մարդիկ։ Միայն թե ես, ճշմարիտ, երկյուղ ունեմ քեզնից։ Դու երբեմն այնպիսի խոսքեր ես թոցնում բերանիցդ, որ բարեկիրթ հասարակության մեջ եր-բեք չեն ասվում։

Քաղաքագետ.— Ի՞նչ կա որ, խոսքը վնաս չի տա։

Աննա Անդրեեվնա.— Այդպես է, եթե քաղաքագետ մնա-լիր, իսկ այնտեղ բոլորովին այլ կյանք է։

Քաղաքագետ.— Այո՛, այնտեղ, ասում են երկու տեսակ ճկնիկ կա— ոյապուշկա և կոբյուշկա. ասում են մարդու բեր-նի չուրն է գնում ուտելիս։

*Աննա Անդրեեվնա.— Քանը հենց ճկնեքն են։ Ես այլ կերպ

չեմ կամենում, քան որ եթե մեր տունը լինի առաջինը մայրաքաղաքում, և որ իմ սենյակում լինի այնպիսի մի ամբրե[1], որ ներս մտնելու հնար չլինի, և մնա միայն, որ մարդ այսպես կկոցի աչքերը, (խփում է աչքերը և ճռռտում)— Ա՛խ, ի՛նչ հաճելի է։

ՏԵՍԻԼ II

Նույնը և վաճառականներ

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ա՛, բարի հաջողում, թաղականներս։

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ.— (գլուխ տալով)— Առողջություն ենք մաղթում, մեր հայր։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ի՞նչ կա, աղավնյակնե՛րս, ողջ-առո՞ղջ եք։ Առևտուրներդ լա՞վ է ընթանում։ Դե՛հ, ի՞նչ է, թե՛յ չափողներ, արշին խաղացնողներ, գանգա՞տ կանեք։ Արքիխարգախներ, գերեսեկածներ, թիփի փչողներ, գանգա՞տ կանեք։ Հը՞, շա՞տ շահեցիք։ Կարծում էիք, որտեղ որ է՝ ինձ բանտ կնստեցնե՞ն... Իսկ գիտե՞ք դուք, յոթը գրող և մի չադու մտնի ձեր փորը, որ հիմա...

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Ա՛խ, տեր իմ աստված, այդ ի՞նչ խոսքեր ես ասում, Անտոշա։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— (դժկամությամբ)— Դե՛, հիմա խոսքերին հետևելու ժամանակը չէ։ Գիտե՞ք դուք արդյոք, որ հենց նույն աստիճանավորը, որին դուք գանգատվել եք, այժմ պատկվում է իմ աղջկա հետ։ Դե ի՞նչ, հիմա ի՞նչ կասեք։ Հի՛մա ես ձեզ... ո՛ւհ... խաբում եք ժողովրդին... Պետությունից կապալ կվերցնես, հարյուր հազար ռուբլի կխփես փտած մահուդ մատակարարելով, հետո էլ մի քսան արշին կնվիրաբերես, ու դեռ սրա համար պարգևատրությո՛ւն արեք սրան։ Թե որ տեղյակ լիներին, ախր քեզ ու քո... Եվ դեռ փորն էլ առաջ է ցցում— վաճառական է, նեղություն չտաս իրեն։ «Մենք,— ասում է,— ազնվականներից պակաս չենք»։ Ախր ազնվականը... ա՛խ դու ոեխ... Ազնվականը գիտություն է սովորում. նրան քեկուզ ծեծում էլ են դպրոցում, բայց գործի համար, որպեսզի օգտավետ գիտելիք ունենա։ Իսկ դու

---

1 Ամբրե — անուշահոտություն, բուրմունք։

Ի՞նչ, հենց խարելով էլ սկսում ես։ Քեզ քո տերը ծեծում է այն պատճառով, որ խարել չգիտես։ Դեռ լակոտ ես, հայրը չգիտես, արդեն չափն ու կշիռը խարդախել գիտես։ Իսկ հենց որ փորդ տուզացրիր ու գրպաններդ ուռճացրիր, արդեն փքվել ես սկսում։ Պա՛հ, էլ նմանը ոչ կա ու ոչ էլ կլինի։ Ինչ է քե՝ օրվա ընթացքում տասնվեց ինքնաեռ քեյ ես գլուխդ քաշում, դրա համար ես փքվո՞ւմ ու պարծենո՞ւմ։ Քքե՛լ եմ գլխիդ վրա էլ, պարծենալուդ վրա էլ։

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ.— (*Խռնարճվելով*)— *Մեղավո՛ր ենք, Անտո՛ն Անտոնովիչ։*

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— *Գանգա՞տ կանես։ Իսկ ո՞վ քեզ օգնեց խարդախություն անել, երբ դու կամուրջ էիր կառուցում և տախտակների համար քսան հազար ռուբլու հաշիվ ներկայացրիր, այնինչ հարյուր ռուբլու էլ չկար։ Ծ՛ս օգնեցի քեզ, իծի՛ մորուք։ Մոռացե՞լ ես այդ։ Քե որ վկայություն տայի քո դեմ, հո կարո՞ղ էի քեզ Սիբիր ջնել տալ։ Ի՞նչ կասես, հը՞։*

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ.— *Աստծո՛ւ առաջ մեղավոր ենք, Անտո՛ն Անտոնովիչ։ Սատանան սխալեցրեց։ Սրանից հետո ուխտ կանենք՝ գանգատ չանելու։ Ինչ գոհացում ուզում ես պահանջիր, միայն քե մի՛ չարանա։*

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— *Մի՛ չարանա։ Ա՛յ, դու հիմա իմ ոտքերն ես ընկել։ Ինչո՞ւ. որովհետև իմ կողմը ծանր եկավ, հապա մի փոքր քո կողմը քաշեր, ախր դու ինձ քեխի հետ կհավասարեցնե՞ր, սրիկա՛, և վքայից էլ դեռ գերան կպատկեցնեիր։*

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ.— (*Խռնարճված ետս ոտքերի առաջ*)— *Չկործանե՛ս, Անտոն Անտոնովիչ։*

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— *Չկործանե՛ս, հիմա՝ չկործանես. խսկ քիչ առաջ ո՞նց էիր։ Ինձ մնար, ես ձեզ...* (*Ձեռքը թափ տալով*)— *Դե՛, Քող աստվա՛ծ ների, հերիք է։ Ես անհիշաչար եմ։ Միայն քե հիմա, տեսնք հա՛, ականջներդ սրած պահեք։ Ես իմ աղջկան սալիս եմ ոչ քե մի հասարակ ազնվականի... Շնորհավորություն լինի հա՛... Հասկանո՞ւմ ես։ Չկարծես քե կարող ես գլուխդ պրծացնել մի որևէ ապխտած ձկնով կամ մի գլուխ շաքարով... Դե, տե՛ր ընդ ձեզ։*

Վաճառականները գնում են։

ՏԵՍԻԼ III

Նույնք, Ամոս Ֆեոդորովիչ, Առաքչի Ֆիլիպովիչ, ճետո Ռասպակովսկի

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— (դեռ շեմից)— *Հավատա՞մ լուրերին, Անտոն Անտոնովիչ, Արտասովոր երջանկություն եք արժանացել։*

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— *Պատիվ ունեմ շնորհավորելու ձեր արտակարգ երջանկությունը։ Սրտանց ուրախացա, երբ լսեցի։* (Մոտենում է Աննա Անդրեևնայի ձեռին)— *Ա՛ննա Անդրեևնա։* (Մոտենում է Մարիա Անտոնովնայի ձեռին)— *Մարիա՛ Անտոնովնա։*

ՌԱՍՏԱԿՈՎՍԿԻ.— (մոտենում է)— *Անտոն Անտոնովիչին շնորհավորում եմ։ Ասածած հարատևություն տա ձեզ և նոր ամոլին, և թող բազմանդամ սերունդ պարգևե ձեզ, թոռներ ու ծոռներ։ Ա՛ննա Անդրեևնա։* (Մոտենում է Աննա Անդրեևնայի ձեռին):— *Մարիա՛ Անտոնովնա։* (Մոտենում է Մարիա Անտոնովնայի ձեռին):

ՏԵՍԻԼ IV

Նույնք, Կոռոլկին իր կնոջ ճետ, Կալուգինով

ԿՈՐՈԼԿԻՆ.— *Պատիվ ունեմ շնորհավորելու Անտոն Անտոնովիչին։ Ա՛ննա Անդրեևնա։* (Մոտենում է Աննա Անդրեևնայի ձեռին):— *Մարիա՛ Անտոնովնա։* (Մոտենում է Մարիա Անտոնովնայի ձեռին):

ԿՈՐՈԼԿԻՆԻ ԿԻՆՔ.— *Սրտանց շնորհավորում եմ ձեզ, Աննա Անդրեևնա, նոր բախտավորության առթիվ։*

ԼՅՈՒԼՅՈՒԿՈՎ.— *Պատիվ ունեմ շնորհավորելու, Աննա Անդրեևնա։* (Մոտենում է Աննա Անդրեևնայի ձեռին, և ճետո, դառնալով դեպի ճանդիսականները, առանձնակի մի բախով չրթացնում է լեզուն):— *Մարիա Անտոնովնա։* (Մոտենում է նրա ձեռին և դառնում դեպի ճանդիսականները նույն բախով):

ՏԵՍԻԼ V

Թազմաթիվ հյուրեր, սերթուկներով և ֆրակներով, մոտենում են ճոխ Աննա Անդրեևնայի ձեռին, ասելով «Աննա Անդրեևնա», իսկ հետո Մարիա Անտոնովնային, ասելով «Մարիա Անտոնովնա». Բոբչինսկին և Դոբչինսկին բոթելով առաջ են գալիս

ԲՈԲՉԻՆՍԿԻ.— *Պատիվ ունեմ շնորհավորելու։*

ԴՈԲՉԻՆՍԿԻ.— *Անտոն Անտոնովիչ, պատիվ ունեմ շնորհավորելու։*

ԲՈԲՉԻՆՍԿԻ.— *Բարեհաջող անակնկալը շնորհավո՞ր։*

ԴՈԲՉԻՆՍԿԻ.— *Ա՜ննա Անդրեևնա։*

ԲՈԲՉԻՆՍԿԻ.— *Ա՜ննա Անդրեևնա։* (Երկուսով միաժամանակ մոտենում են և ճակատներով իրար զարնվում):

ԴՈԲՉԻՆՍԿԻ.— *Մարիա՜ Անտոնովնա։* (Մոտենում է ձեռին)— *Պատիվ ունեմ շնորհավորելու։ Դուք մեծ, մեծ երջանկության մեջ կլինեք, ոսկեկար զգեստ կհագնեք և այլևայլ նուրբ կերակուրներ կուտեք, շատ զվարճալի կյանք կվայելեք։*

ԲՈԲՉԻՆՍԿԻ.— (ընդհատելով)— *Պատիվ ունեմ շնորհավորելու։ Աստված թող պարգևի ձեզ ամենայն հարստություն, ոսկիներ և մի մանչիկ, ահա այս չափ պտիկ* (ձեռով ցույց է տալիս), *որ կարելի լինի ձեռքի ափի վրա նստեցնել, այո՛, և շարունակ մանչիկը կճվճվա— ուա՜, ուա՜, ուա՜։*

ՏԵՍԻԼ VI

Դարձյալ մի ճանի հյուրեր, առանձ մոտենում են տիկիններին ձեռերին: Նույնպես Լուկա Լուկիչ իր կնոջ հետ

ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՉ.— *Պատիվ ունեմ...*

ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՉԻ ԿՆՈՋ.— *Շնորհավորում եմ ձեզ, Աննա Անդրեևնա։* (Համբուրվում են): *Ճիշտ եմ ասում, այնպե՞ս ուրախացա։ Ինձ ասում են. «Աննա Անդրեևնան իր աղջկան մարդու է տալիս»։ Ա՜խ, տեր աստված, մտածում եմ ինքս ինձ, և այնպես ուրախացա, որ ասացի ամուսնուս. «Լսի՛ր, Լուկանչիկ, տե՛ս, ինչպես բախտավորվեց Աննա Անդրեևնան։ Դե՛, մտածում եմ ինքս ինձ, փա՜ռք աստծո, և ասում եմ.— «Ես այնքան հիացած եմ, որ այրվում եմ անհամբերությունից անձամբ Աննա Անդրեևնային արտահայտե-*

լու...», Ա՛խ, տեր աստված, մտածում եմ ինքս ինձ, Աննա Անդրեևնան հատկապես հենց այդպիսի լավ զույգ էր ակնկալում իր աղջկա համար, և այժմ բախտը բերեց. ճիշտ այնպես եղավ, ինչպես նա էր ուզում։ Ով, ճշմարիտ, այնպես ուրախացա, որ չէի կարողանում խոսել։ Լալիս եմ, լալիս, ուղղակի հեկեկում եմ։ Այնպես որ Լուկա Լուկիչը ասաց. «Ինչո՞ւ ես, Նաստենկա, հեկեկում»։ «Լուկանչիկ,— ասացի— ես ինքս էլ չգիտեմ, արցունքներս ուղղակի գետի պես հոսում են»։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Խոնարհաբար խնդրում եմ, նստեցե՛ք, պարոններ։ Է՛յ, Միշկա, աթոռնե՛ր ավելացրու այստեղ։

Հյուրերը նստում են։

ՏԵՍԻԼ VII

Նույնի, բազմասի աստիկանապետ և աստիկաններ

ՔԱՂԱՄԱՍԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ.— Պատիվ ունեմ շնորհավորելու ձեզ, ձերդ բարձրազնվություն, և երկար տարիների բարօրություն ցանկանալու ձեզ։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, խընդրում եմ նստել, պարոններ։

Հյուրերը նստատում են։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՋ.— Սակայն, ասացե՛ք խնդրեմ, Անտոն Անտոնովիչ, ի՞նչ ձևով սկսվեց այդ ամենը, այսինքն՝ գործի աստիճանական ընթացքը։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Գործի ընթացքն արտասովոր էր. բարեհաճեց ինքն անձամբ առաջարկություն անելու։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Շատ հարգալից և ամենանուրբ ձևով։ Միանգամայն բացառիկ կերպով էր խոսում, ասում է. «Ես, Աննա Անդրեևնա, միմիայն ձեր արժանիքների հանդեպ իմ ունեցած հարգանքից դրդված»։ Ով այնպիսի բարեկիրթ, հրաշալի մի մարդ է, ազնվագույն կանոնների տեր մարդ։ «Ինձ համար, կհավատա՞ք, Աննա Անդրեևնա, ինձ համար կյանքը մի գրոշ է։ Պատճառն այն է միայն, որ ես հարգում եմ ձեր հազվագյուտ բարեմասնությունները»։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Ա՜խ, մայրիկ, չէ՞ որ նա այդ ինձ էր ասում։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Դադարի՛ր, դու ոչինչ չգիտես։ Ով մի՛ խառնվիր քեզ չվերաբերող գործերին։ «Ես, Աննա Անդրեևնա, հրճվում եմ...»։ Այնպիսի շոյիչ խոսքեր էր սփռում... և երբ ես փորձեցի ասել. «Մենք բնավ չենք համարձակվում նման պատվի հույս ունենալ», նա հանկարծ ծունկի նետվեց և ամենաազնվագույն եղանակով. «Աննա Անդրեևնա, մի՛ դարձրեք ինձ դժբախտագույն մի մարդ, համաձայնեք արձագանքել իմ զգացմունքներին, ապա ՔԵ ոչ ես մահով կկնքեմ իմ կյանքը»։

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎՆԱ.— Ճի՛շտ եմ ասում, մայրիկ, այդ նա ի՛մ մասին էր պատմում։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Այո՛, իհարկե... նաև քո մասին, ես բնավ չեմ ժխտում։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ով նույնիսկ այնպես ահաբեկեց. ասաց ՔԵ ինքնասպան կլինի։ «Կսպանեմ, կսպանեմ ինձ», ասում էր։

ՀՅՈՒՐԵՐԻՑ ՇԱՏԵՐԸ.— Ասացե՛ք խնդրեմ։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՋ.— Ա՛յ քեզ անակնկալ։

ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՋ.— Հենց սա է որ կա ճակատագիր ասածը։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՋ.— Ի՜նչ ճակատագիր, բարեկամ, ճակատագիրը փուչ բան է, արժանիքներն են այդ բախտին հասցրել։ (Մեկուսի)։— Հենց այս տեսակ խոզերի բախտն է բանում միշտ։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՋ.— Ես, ՔԵրևս, Անտոն Անտոնովիչ, կվաճառեմ ձեզ այն շնիկը, որին ուզում էիք գնել։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ջէ՛, հիմա շնիկները մտքիցս հեռու են։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՋ.— Հոժար չեք, մի այլ շան վրա կբարիշենք։

ԿՈՐՈԲԿԻՆԻ ԿԻՆԸ.— Ա՜խ, Աննա Անդրեևնա, որքա՜ն ուրախ եմ ձեզ երջանիկ տեսնելով, երևակայել անգամ չեք կարող։

ԿՈՐՈԲԿԻՆ.— Իսկ որտե՞ղ է հիմա, Քույլ տվեք իմանալ, գտնվում անվանի հյուրը։ Լսել եմ՝ ինչ-որ նպատակներով մեկնե՞լ է։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Այո՛, նա մեկնել է մի օրով, շատ կարևոր մի գործով։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Հորեղբոր մոտ՝ օրհնություն առ-նելու։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Օրհնություն առնելու, բայց վաղն ևեթ... (Փոշտում է։ Մաղթանքները ծուլվում են և մի ընդհանուր աղ-մուկ է գոյանում):— Մեծապես շնորհակալ եմ, բայց վաղն ևեթ կվերադառնա... (Փոշտում է։ Մաղթանքների աղմուկ։ Առանձնապես լսվում են հետևյալ ձայները)։

ԹԱՂԱՄԱՍԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ.— Առողջություն ենք ցան-կանում, ձերդ բարձրազնվություն։

ԲՈԲՉԻՆՍԿԻ.— Հարյուր տարի և մի պարկ ոսկի։

ԴՈԲՉԻՆՍԿԻ.— Աստված քառասնապատիկ քառասուն տա-րի տա ձեզ։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— Գետինն անցնես։

ԿՈՐՈԲԿԻՆԻ ԿԻՆԸ.— Գրողը քեզ տանի։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Խոնարհաբար շնորհակալ եմ։ Ձեզ նույնն եմ ցանկանում։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Մենք այժմ մտադիր ենք Պետեր-բուրգում ապրել։ Իսկ այստեղ, խոստովանք լինի, օդն այն-պիսին է, որ... արդեն չափազանց գյուղական է... Ճշմա-րիտ, շատ անախորժ բան է... Ա՛յ, իմ ամուսինն էլ... Նա այնտեղ գեներալի աստիճան կստանա...

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Այո, խոստովանում եմ, պարոններ, ես, գրողը տանի, շատ եմ ուզում գեներալ դառնալ։

ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՉ.— Աստված արժանացնի։

ՌԱՍՏԱԿՈՎՍԿԻ.— Մարդու ձեռից հնարավոր չէ, իսկ աստված ամեն ինչ կարող է։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— Մեծ նավին՝ մեծ ընթացք։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— Պատիվն ըստ արժանիքների։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— (մեկուսի).— Ա՛յ քե բախտը կբանի, երբ իրոք գեներալ դառնա։ Իսկ գեներալությունն էլ հո սրան կսազի, ինչպես քամբը կովին։ Դե՛, եղբայր, դժվար քե։ այդ խմորը դեռ շատ ջուր կտանի։ Այստեղ քեզնից ար-ժանավորները կան, բայց մինչև օրս դեռ գեներալ չեն։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— (մեկուսի)— Պա՛հ, գրողը տանի, արդեն գեներալության ախորժակ ունի։ Ո՞վ գիտե, գուցեև դառնա։ Այս գրողի բաժին անիրավը գիտե իրեն ծանր ու մեծ

պահել։ (Ինմելով նրան)։— Այդ դեպքում, Անտոն Անտոնովիչ, մեզ էլ չմոռանաք։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— Եվ եթե առիթ ներկայանա, ասենք թե որևէ գործով կարիք ունենալու լինենք, չմերժեք ձեր հովանավորությունը։

ԿՈՐՈԲԿԻՆ.— Ես ողղ տարի որդուս պիտի ուղևորեմ մայրաքաղաք՝ պետությանն օգտակար լինելու համար. շնորհ արեք, աջակցություն ցույց տվեք նրան, հոր տեղ եղեք պանդուխտի համար։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ուժերիս չափ կանենմ, հոժար եմ ջանալու։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Դու, Անտո՛շա, միշտ պատրաստ ես խոստանալու։ Նախ դու նման բաների մասին մտածելու ժամանակ չես ունենա։ Եվ ինչպե՞ս կարելի է, ինչո՞ւ պիտի ծանրաբեռնես քեզ նման խոստումներով։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ի՞նչ կա որ, հոգյակս, երբեմն կարելի է։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Կարելի է, իհարկե, բայց հո չի կարելի ամեն մի գաճաճի հովանավորություն ցույց տալ։

ԿՈՐՈԲԿԻՆԻ ԿԻՆԸ.— Լսեցի՞ք, տեսա՞ք, ինչ աչքով է նայում մեզ։

ԿԻՆ ՀՅՈՒՐԵՐԻՑ ՄԵԿԸ.— Դե՛, սա միշտ էլ այդպես է եղել, վաղուց եմ ճանաչում. սրան նստեցրու սեղանի մոտ, ոտքերն էլ կդնի...

ՏԵՍԻԼ VIII

Նույնը և փոստապետը (ներս, բացած մի նամակ ձեռքին)

ՓՈՍՏԱՊԵՏ.— Զարմանալի դիպվա՛ծ, պարոննե՛ր։ Աստիճանավորը, որին մենք ուղղորի տեղ էինք ընդունել, բնավ ուղղոր չէր։

ԲՈԼՈՐԸ.— Ինչպե՞ս թե՝ ուղղոր չէր։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Բնավ ուղղոր չէր, ես այդ իմացա այս նամակից։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ի՞նչ եք ասում, ի՞նչ եք ասում, ի՞նչ նամակից։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Հենց իր ձեռքով գրած նամակից։ Բերում են փոստ և հանձնում ինձ մի նամակ։ Նայեցի հասցեին, տես-

նեմ՝ «Պոչտամտսկայա փողոց»։ Տեղնուտեղը քարացա։ «Դե՛, — մտածում եմ ինքս ինձ,— երևի անկանոնություններ է գտել փոստի գծով և տեղեկացնում է իշխանությանը»։ Սիրտ արի ու բացեցի նամակը։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ինչպե՞ս սիրտ արիք...

ՓՈՍՏԱՊԵՏ.— Ինքս էլ չգիտեմ, գերբնական մի ուժ մղեց ինձ։ Այն է կանչել էի տվել սուրհանդակին, երբեսզի էստաֆետով ուղարկեմ նամակը, բայց մեջս այնպիսի մի հետաքրքրասիրություն շարժվեց, որի նմանը երբեք զգացած չկամ։ Ջե՛մ կարողանում, չե՛մ կարողանում, զգում եմ, որ ուժից վեր է, մի տեսակ քաշո՛ւմ է, քաշո՛ւմ։ Մի ականջիս շարունակ ձայն եմ լսում. է՛յ, բաց չանես, հավի պես կկորչես, իսկ մյուս ականջիս ասես սատանան շարունակ շշնջում է՝ բա՛ց արա, բա՛ց արա, բա՛ց արա։ Ու հենց որ սեղմեցի զմուռսը, երակներովս կրակ անցավ, իսկ երբ բաց արի՝ սառնամանիք, աստված է վկա, սառնամանիք։ Ձեռքերս էլ են դողում, աչքերս էլ են մթնել։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Բայց ինչպե՞ս համարձակվեցիք բանալու նման մի լիազոր անձի նամակը։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Հենց բանն էլ այն է, որ նա ո՛չ լիազոր է և ո՛չ էլ անձ։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Հապա ո՞վ է ձեր կարծիքով։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Ո՛չ այս և ո՛չ այն, սատանան գիտե, թե ինչ է։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— (բորբոքված)—Ինչպե՞ս թե ո՛չ այս և ո՛չ այն։ Ինչպե՞ս եք համարձակվում նրան ո՛չ այս, ո՛չ այն ասելու և այն էլ, սատանան գիտե, թե ինչ։ Ես ձեզ կալանքի տակ առնել կտամ...

ՓՈՍՏԱՊԵՏ.— Ո՞վ, դո՞ւք։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Այո՛, ես։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Ձեռներդ կարճ են։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Գիտե՞ք արդյոք, որ նա ամուսնանում է իմ աղջկա հետ, որ ես ինքս բարձրաստիճան մարդ կդառնամ ու ձեզ ուղղակի Սիբիր քշել կտամ։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Է՛խ, Անտոն Անտոնովիչ, ի՞նչ Սիբիր, հե՛ռու է Սիբիրը։ Ավելի լավ է կարդամ ձեզ համար։ Պարոնե՛ր, թույլ տվեք կարդալ այս նամակը։

ԲՈԼՈՐԸ.— Կարդացե՛ք, կարդացե՛ք։

ՓՈՍՏԱՊԵՏ.— (կարդում է)— «Շտապում եմ տեղեկացնել քեզ, սիրելիդ իմ Տրյապիչկին, թե ինչ հրաշքներ են կատարվում ինձ հետ։ Ճանապարհին ինձ ոտից գլուխ պլոկեց հեռևակ մի կապիտան, այնպես որ պանդոկատերը արդեն ուզում էր ինձ բանտ նստեցնել։ Ով հանկարծ, իմ պետերբուրգյան կերպարանքի և հագուստիս շնորհիվ, ամբողջ քաղաքն ինձ ընդունեց գեներալ-նահանգապետի տեղ։ Ով ահա այժմ բնակվում եմ քաղաքապետի տանը, զվարճանում եմ, քարշ եմ գալիս նրա կնոջ և աղջկա հետևից, միայն թե դեռ չեմ որոշել՝ որից սկսեմ. կարծում եմ, որ նախ մայրիկից, որովհետև նա, թվում է, թե կազմ և պատրաստ է ամեն ծառայությանս։ Հիշո՞ւմ ես, թե մի ժամանակ ինչ չարքաշ օրեր էինք ապրում ես ու դու, ձրի ուրիշի հաշվին ճաշում էինք, և ինչպես մի անգամ հրուշակավաճառը օձիքիցս բռնեց՝ անգլիական թագավորի հաշվին իմ կերած կարկանդակների համար։ Այժմ բոլորովին այլ պատկեր է։ Բոլորն ինձ պարտք են տալիս, որքան ուզեմ։ Վերին աստիճանի զվարճալի մարդիկ են, դու ծիծաղից հոգիդ կփչեիր։ Դու չէ՞ որ հոդվածներս ես գրում, հապա մի զետեղիր նրանց քո գրվածքների մեջ։ Նախ և առաջ՝ քաղաքապետը. հիմարի մեկն է, իսկական չորի...»։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Չի կարող պատահել։ Այդտեղ այդ տեսակ բան չկա։

ՓՈՍՏԱՊԵՏ.— (ցույց տալով նամակը)— Ինքներդ կարդացեք։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— (կարդում է)— «Իսկական չորի»։ Չի՛ կարող պատահել։ Այդ դուք ինքներդ եք գրել։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Ես ինչո՞ւ պիտի նման բան գրեի։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— Կարդացե՛ք։

ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՉ.— Կարդացե՛ք։

ՓՈՍՏԱՊԵՏ.— (շարունակելով կարդալ)— «Քաղաքապետը հիմարի մեկն է, իսկական չորի...»։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Գրողը տանի, դեռ կրկնում էլ եք, կարծես առանց այդ էլ չի գրված այդտեղ։

ՓՈՍՏԱՊԵՏ.— (շարունակում է կարդալ)— Հըմ... հըմ... հըմ... հըմ... «իսկական չորի։ Փոստապետը նույնպես բարի

մարդ է...», (Խաղաբելով)— Այստեղ նա իմ մասին էլ անպատշաճ ձևով է արտահայտվել։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Ո՛չ, կարդացե՛ք։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Բայց ի՞նչ կարիք կա։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Չէ՛, գրողը տանի, քե որ կարդում ենք՝ կարդանք, բոլորը կարդացեք։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— Թույլ տվեք ես կարդամ։ (Ակեոցը դնում է ու կարդում)։ «Փոստապետը ճիշտ և ճիշտ մեծ դեպարտամենտի պահակ Միխեևն է, երևի սրիկան նույնպես հարբեցող է»։

ՓՈՍՏԱՊԵՏ.— (հանդիսականներին)— Անպիտան լակոտ, որին հարկավոր է մի լավ ծեծ տալ, ուրիշ ոչինչ։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— (շարունակելով կարդալ)— Աստվածահաճո հաստատությունների վերակացուն... ը... ը... ը... (կակազում է)։

ԿՈՐՈԲԿԻՆ.— Ինչո՞ւ կանգ առաք։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— Ջեմ կարողանում չոկել... սակայն երևում է, որ սրիկա է ասվածն։

ԿՈՐՈԲԿԻՆ.— Ի՛նձ տվեք։ Ահա, կարծում եմ, իմ աչքերն ավելի լավ են։ (Վերցնում է նամակը)։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— (չտալով նամակը)— Ո՛չ, այս տողը կարելի է բաց թողնել, իսկ մնացածն արդեն պարզ է։

ԿՈՐՈԲԿԻՆ.— Թո՛ւյլ տվեք, ես ինքս գիտեմ։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— Կարդալ ես ինքս էլ կարող եմ։ սրանից դենը ամեն բան շատ պարզ է։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Ո՛չ, բոլո՛րը կարդացեք։ Չէ՞ որ սկզբում բոլորը կարդում էինք։

ԲՈԼՈՐԸ.— Տվե՛ք, Արտեմի Ֆիլիպովիչ, տվեք նամակը։ (Կուրոբկինին)— Կարդացե՛ք։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— Իսկույն (տալիս է նամակը)։— Ահա՛, թո՛ւյլ տվեք։ (Մատով ծածկում է)։— Ահա ա՛յստեղից կարդացեք։

Բոլորը խմբվում են նրա շուրջը։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Կարդացե՛ք, կարդացե՛ք, առանց այլևայլի բոլորը կարդացեք։

ԿՈՐՈԲԿԻՆ.— (կարդալով)— «Աստվածահաճո հաստատ-

տուբյուններբի վերակացու Զեմլյանիկան կատարյալ մի խոզ է՝ թասակը գլխին»։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՋ.— (հանդիսականներին)— *Բոլորովին էլ սրամիտ չէ։ Խոզ՝ թասակը գլխին։ Որտե՞ղ է տեսնված, որ խոզը թասակ ունենա։*

ԿՈՐՈԲԿԻՆ.— (շարունակելով կարդալ)— «*Ուսումնարանների տեսուչը սոխահոտից բոլորովին նեխվել է*[1]։

ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՋ.— (հանդիսատեսներին)— *Աստվա՜ծ վկա, կյանքումս սոխ կերած չկամ։*

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՋ.— (մեկուսի)— *Փա՜ռք աստծո, գոնե իմ մասին ոչինչ չի գրել։*

ԿՈՐՈԲԿԻՆ.— (կարդում է)— «*Դատավորը...*»։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՋ.— *Ա՛յ քեզ բան։* (*Բարձրաձայն*)— *Պարոննե՛ր, ես կարծում եմ, որ նամակը երկար է։ Նվ ինչացո՞ւ է, ի՞նչ կարիք կա այդ զզվելի գրությունը կարդալու։*

ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՋ.— *Ո՛չ։*

ՓՈՍՏԱՊՏՏ.— *Կարդացե՛ք։*

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՋ.— *Ո՛չ, հիմա արդեն կարդացեք։*

ԿՈՐՈԲԿԻՆ.— (շարունակում է)— «*Դատավոր Լյապկին-Տյապկինը ծայրաստիճան մովե-տոն*[2] *է...*» (*կանգ է առնում*)։ *Պետք է որ ֆրանսիական բառ լինի։*

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՋ.— *Սատանա՛ն գիտե, թե ինչ է նշանակում։ Լավ է, եթե միայն խարդախ է նշանակում, իսկ գուցե դրանից էլ վատ բան է։*

ԿՈՐՈԲԿԻՆ.— (շարունակելով կարդալ)— «*Սակայն հյուրասեր և բարեհոգի մարդիկ են։ Մնաս բարով, սիրելիդ իմ Տրյապիչկին։ Ես ինքս, քո օրինակով, միտք ունեմ գրականությամբ զբաղվելու։ Տաղտկալի է, եղբայր, այսպես ապրելը։ Մարդ ուզում է, վերջապես, հոգեկան սնունդ էլ ստանալ։ Տեսնում եմ, իրոք, պետք է որևէ վանմ գործով զբաղվել։ Գրիր ինձ Սարատովի նահանգ, այդտեղից էլ Պոդկատիլովկա գյուղը։* (Շրջում է նամակը և կարդում հասցեն)։— *Նորին ազ-*

---

1 *Անթարգմանելի բառախաղ է՝ լուկա անվան և ռուսական лук (սոխ) բառի նմանության վրա կառուցված։*

2 *Մովե-տոն — վատ տոն, անվայելուչ երևույթ կամ մարդ։*

նրվութիյուն, մեծարգո պարոն Իվան Վասիլևիչ Տրյապիչկին, Սանկտ-Պետերբուրգ, Պոչտամտսկայա փողոց, տուն Համար իննսունյոթ, բակն անցնելով երրորդ հարկում, աջ։

ՏԻԿԻՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ.— Այս ի՞նչ անակնկալ ռեպրիմանդ[1] էր։

ՔԱՂԱՔԱՑԻՆ.— Մորթե՛ց, անդանակ մորթե՛ց։ Սպանվա՛ծ եմ, սպանվա՛ծ, բոլորովին սպանված եմ։ Ոչինչ չեմ տեսնում։ Դեմքերի փոխարեն ինչ-որ խոզի մուրթներ եմ տեսնում և ուրիշ ոչինչ... Ե՛տ դարձնել, ե՛տ դարձնել նրանց (Թափահարում է ձեռքը)։

ՓՈՍՏԱՊԵՏ.— Ի՛նչ ետ դարձնել։ Հակառակի պես՝ ես կարգադրել էի հսկիչին, որ լավագույն եռաձին տաս, կաթծես սատանան բորենց ինձ, որ ապահովագիր էլ տամ։

ԿՈՐՈՒԿԻՆԻ ԿԻՆԸ.— Այս իսկապես որ անօրինակ խայտառակություն է։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— Սակայն, գրողը տանի, պարոններ, նա ինձնից երեք հարյուր ռուբլի պարտք վերցրեց։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— Ինձնից չորս հարյուր։

ՓՈՍՏԱՊԵՏ.— (ճառաչելով)— Ինձնից էլ երեք հարյուր ռուբլի։

ՊՈՒՉԻՆՍԿԻ.— Ինձնից և Պյոտր Իվանովիչից վաթսունհինգ ռուբլի քղթադրամով, այո՛։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— (ապշահար, ձեռքերը տարածելով)— Բայց այս ի՞նչ կատարվեց, պարոններ։ Ինչպե՞ս պատահեց, որ մենք այսչափ սխալվեցինք։

ՔԱՂԱՔԱՑԻՆ.— (ձեռքը զարկելով ճակատին)— Ինչպես ե՞ս, ո՛չ, ինչպես ե՞ս, պառաված հիմարս։ Ցնդել, անխելք ոչխար եմ դառել... Երեսուն տարի ծառայության մեջ եմ. ո՛չ մի վաճառական, ո՛չ մի կապալառու չէր կարողանում ինձ խաբել... Խարդախներից ամենախարդախներին խաբել եմ, գող ու ավազակ սրիկաներին, որոնք ընդունակ են ամբողջ աշխարհը թալանելու, ծարավ չուրն եմ տարել ու ետ բերել։ Երեք նահանգապետ եմ խաբել։ Նահանգապետներն ի՛նչ (ձեռքը թափ տալով), նրանց մասին խոսելն էլ ավելորդ է...

---

[1] Ռեպրիմանդ — դաս, խրատ։

ԱՆՆԱ ԱՆԴՐԵԵՎՆԱ.— Բայց այդ չի՛ կարող պատահել, Անտոշա, չէ՞ որ նա նշանվել է մեր Մաշենկայի հետ։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— (բարկացած)— Նշանվել է. գոդդ լայն բաց արա... Ա՛յ քեզ նշանվել է։ Մեջ է ընկնում իր նշանվելով... (Մոլեգնած)— Ահա՛, տեսե՛ք, տեսե՛ք, արա՞ր աշխարհ, ամբողջ քրիստոնյա ժողովո՛ւրդ, բոլորդ տեսե՛ք ինչպես է խաբված ու ծաղրված քաղաքապետը։ Թո՛ւք ու մուր, թո՛ւք ու մուր քավքառած սրիկային։ (Ինքն իրեն սպառնում է բռունցքով)։ Է՛խ, դո՛ւ, հաստադո՛ւնչ։ Ջուխ ու չուվի մեկին կարևոր մարդու տեղ ընդունեցիր։ Ահա սլանում է նա հիմա ճանապարհով՝ զանգակների կարկաչի տակ։ Աշխարհով մեկ կտարածի այս պատմությունը։ Բավական չէ, որ ծաղր ու ծանակի առարկա կդառնաս, կգտնվի թուղթ մրոտող մի գրչակ, կատակերգության մեջ դուրս կբերի քեզ։ Ա՛յ թե որն է վիրավորական։ Աստիճա՛նդ, կոչո՛ւմդ չի խնայի, ու բոլորն էլ՝ սեպերը բացած՝ կծիծաղեն ու ծափ կտան։ Ինչի՞ վրա եք ծիծաղում, ինքներդ ձե՛զ վրա եք ծիծաղում... Է՛խ, դո՛ւք... (Կատաղած, ոտքերը գետին խփելով)— Ես այդ բոլոր թուղթ մրոտողներին... Ո՛ւհ, անիծյալ գրչակներ, ազատամիտներ, սատանայի սերունդ, ձեզ բոլորիդ կկապեի, գունդ-կծիկ-կանեի, փոշի՛ կշինեի, բոլորիդ կտայի սատանային աստառացու, թող դներ գդակի հենց մե՛ջը։ (Բռունցքով թափահարում է օդում և կրնկով խփում գետնին։ Կարճատև լռությունից հետո)։— Մինչև հիմա չեմ կարողանում ուշքի գա՛լ։ Ա՛յ, ճիշտ որ, եթե աստված պատժել կամենա, առաջ մարդու խելքը կառնի։ Դե՛, ասացե՛ք, այդ ցանցառի ի՞նչն էր նման ուժգորիլ։ Ո՛չ մի բանը։ Ա՛յ, պարզապես, կես ճկույթի չափ նման բան չկար, և հանկարծ բոլորը— ուժգո՛ր, ուժգո՛ր։ Ո՞վ էր, որ առաջինը հնարեց, որ նա ուժգոր է։ Պատասխանեցե՛ք։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՉ.— (ձեռքերը տարածելով)— Թե այդ ինչպես պատահեց, թեկուզ սպանեք՝ չեմ կարողանա բացատրել. ինչ-որ մշուշ պատեց բոլորիս, սատանան շշմեցրեց։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ.— Ո՞վ հնարեց, ա՛յ թե ով հնարեց. այս կորիճները։ (Մատնանշում է Խրչինսկուն և Բոբչինսկուն)։

ԲՈԲՉԻՆՍԿԻ.— Աստված վկա, ես չէի, մտքովս էլ չէր անցել...

ԴՈՒՋԻՆՍԿԻ.— Ես ոչինչ, բոլորովին ոչինչ...

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՋ.— Իհարկե, դուք էիք...

ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՋ.— Իհարկե դուք էիք... Խելագարների պես վազեվազ եկաք պանդոկից. «Ծկե՛լ է, ձկե՛լ է և փող էլ չի վճարում...» Մեծ բան էիք հայտարերել...

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Դե իհա՛րկե, դո՛ւք էիք. քաղաքում բամբասանք տարածողներ, անիծյալ ստախոսներ։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՋ.— Գրողի բաժին դառնաք ձեր պատմություններով և ձեր ունիզորի հետ միասին։

ՔԱՂԱՔԱՊԵՏ.— Հենց մի գլուխ վազվզում եք ամբողջ քաղաքում ու բոլորին շփոթեցնում, անիծյալ չալանակներ։ Բամբասանքներ եք սերմանում, պոչատ կաշաղակներ։

ԱՄՈՍ ՖԵՈԴՈՐՈՎԻՋ.— Անիծված ապականողներ։

ԼՈՒԿԱ ԼՈՒԿԻՋ.— Ծաղրածուներ։

ԱՐՏԵՄԻ ՖԻԼԻՊՈՎԻՋ.— Գետնին կպած թզուկներ։

Բոլորը շրջապատում են նրանց։

ԲՈՒՋԻՆՍԿԻ.— Աստված վկա, ես չէի, այդ Պյոտր Իվանովիչն էր...

ԴՈՒՋԻՆՍԿԻ.— Է՛, ո՛չ, Պյոտր Իվանովիչ, դուք առաջինն էիք, որ...

ԲՈՒՋԻՆՍԿԻ.— Ջէ՛, չէ՛. առաջինը հենց դո՛ւք էիք։

ՏԵՍԻԼ ՎԵՐՋԻՆ

Նույնի և ժանդարմ

ԺԱՆԴԱՐՄ.— Բարձրագույն հրամանով Պետերբուրգից եկած աստիճանավորը պահանջում է ձեզ իր մոտ իսկույն ևեթ։ Նա իջևանել է Հյուրանոցում։

Արտասանված խոսքերը կայծակնաճար են տեում բոլորին։ Ջարմանքի միաձուլուն բացականչություն է դուրս թռչում կանանց շուրթերից։ Ամբողջ խումբը, մեկից փոխելով դիրքը՝ մնում է stարացած։

ՀԱՄՐ ՏԵՍԱՐԱՆ

Քաղաքապետը մեջտեղում այնե նման ծռվել է՝ ձեռքերը տարածած և գլուխը նա գցած։ Կինն ու աղջիկը կանգնած են նրա աջ

կողքին՝ ամբողջ մարմնով ուղղված ճրա կողմը: Սրանց ետևում՝ փոստապետը, որ դեպի հանդիսականները թեքված՝ հարցական նշանի տեսք ուներ: Սրա ետևում՝ մանկան պես շվարած Լուկա Լուկիչը: Սրա կողքին, թեմի ճիշտ ծայրին՝ երեք տիկին իրար են հեծվել դեմքերի ամենաանեզնական արտահայտությամբ, որ անմիջապես վերաբերվում է հաղտապետի ընտանիքին: Քաղաքապետի ձախ կողմում կանգնած է գլուխը թեքևակի թեքած և կարծես թե մի բանի ականջ դնող Ջեմլյանիկան: Սրա կողքին դատավորը՝ լայն տարածած թևերով, կմած գրեթե միևչև գետակը և շրթունքների այնպիսի դատավորությամբ, կարծես թե.մտադիր է ասելի կամ թե ասել. «Հազարից մեկ զատիկ, այն էլ նավակատիկ»: Ապա կանգնած է Կոռոբկինը, որը դարձել է դեպի հանդիսատեսները՝ մի աչքը կիսացած, կծու ակնարկով հաղտապետի հասցեին: Ապա բեմի ծայրին գտնվում են Դոբչինսկին և Բոբչինսկին՝ ձեռքերն իրար մեկնած, բերանները լայն բացած և աչքերը չռած: Մնացած հյուրերը անշարժացած են այուների պես: Գրեթե մեկ և կես ռոպե տարացած խումբը պահպանում է այդ դիրքը:

(Վարագույրն իջնում է):

ՎԵՐԸՆԹԵՐՑԵԼՈՎ ԳՈԳՈԼԻՆ

Ռուսական մեծ արձակը սկսվել է Ա. Ս. Պուշկինից, բայց ռուս առաջին մեծ արձակագիրը Ն. Վ. Գոգոլն է։ Պուշկինը հզոր մղում տվեց ռուսական ողջ գրականությանը։ Սակայն մեզ համար նա ամենից առաջ հզոր ու մնում է մեծ բանաստեղծ, ռուսական պոեզիայի արևը», ինչպես նրան անվանել են դեռևս իր ժամանակակիցները։

Ն. Գ. Չերնիշևսկին ռուսական գրականության զարգացման իր ժամանակի փուլն անվանել է «գոգոլյան շրջան» և նշել, որ «վաղուց արդեն աշխարհում չի եղել մի գրող, որն իր ժողովրդի համար այնպիսի կարևորություն ունենար, ինչպես Գոգոլը Ռուսաստանի համարե։ Դա քննադատական ռեալիզմի սկիզբն էր։ Դժվար է նույնիսկ թվարկել ռուս այն բոլոր գրողներին, որոնց վրա ազդեցություն է թողել Գոգոլի ստեղծագործությունը։ Դրա համար էլ Դոստոևսկին ասում էր. «Մենք բոլորս ելել ենք Գոգոլի «Տիննելից»։

Երիտասարդ Գոգոլը համոզված էր, որ իրեն վիճակված է անպայման մեծ բան անել։ Նա փորձեց դառնալ մեծ (մխիթարյան մեծ) պատմաբան, դերասան, նկարիչ, վերջապես՝ բանաստեղծ, գրեց ու առանձին գրքով հրատարակեց «Հանց Կյուխելհարտենն» չափածո պոեմը, բայց, համոզվելով, որ միշտ, իր հանճարին անարժան գործ է սկսել, ոչնչացրեց ամբողջ տպաքանակը։ Որպես գրող բարձր կոչմանը վստահ լինելու հաստատումը եղավ «Երեկոներ Դիկանկայի մերձակա խուտորում» (1831—1832 թ. թ.) պատմվածաշարքը։ Այստեղ նա իրեն դրսևորեց որպես մի գրող, որի խոսքը խայտում է բոլոր գույներով, բոլոր երփներանգներով։ Այս պատմվածաշարում խոսքն ապրում է, շնչում, բրբռում, այն չի ճկվում իմաստային ու ճակատական հակայական քեռի ծանրությունից, այլ կրում է այդ բեռը թե-

քևուքյամբ, ինչպես հեքիաթային դյուցազուններըւ «Երեկոնևրում» ուժեղ է ֆոլկլորային տարերքը։

«Երեկոնևր Դիկանկայի մերձակա խուտորում» շարքը գրողին միանգամից հռչակ բերեց և արժանացավ Պուշկինի գովասանքին։ Ընդհանրապես Պուշկինը մեծ դեր է խաղացել Ն. Վ. Գոգոլի ճակատագրում։ Նա աջակցել ու քաջալերել է Գոգոլին, հենց Պուշկինն է հուշել նրան «Մեռած հոգիների» ու «Ռևիզորի» սյուժեները։

Խորհրդանշական մի բան կա նրանում, որ հանճարի ծաղկման շրջանում հենց Պուշկինն է օգնել և ձեռք մեկնել երիտասարդ Գոգոլին. այդպես է եղել նաև Պուշկինի հետ. գրեթե տասացիորեն նրան էր հանձնել իր քնարը Դերժավինը՝ XVIII դարի ռուս խոշորագույն բանաստեղծը։

Գոգոլի տաղանդն առնականանում էր մեծ արագությամբ։ «Երեկոնևրից» հետո, 1835 թ., միանգամից լույս տեսան վիպակների երկու նոր ժողովածուներ՝ «Միրգորոդը» և «Արաբեսկը»։ «Միրգորոդի» մեջ ամփոփված վիպակները («Հնաոճխարհիկ կալվածատերերը», «Պատմվածք այն մասին, թե ինչպես գժտվեցին Իվան Իվանովիչն ու Իվան Նիկիֆորովիչը», «Վիյը», «Տարաս Բուլբա») մի կողմից կարծես «Երեկոնևրի» շարունակությունն ու զարգացումն էին, բայց նաև բացահայտում էին գրողի տաղանդի նոր կողմերը։ Դա «Հնաոճխարհիկ կալվածատերերի» երկու ծերունիների պարզ ու անպաճուճ, թեպետև «Բուսական» կյանքի սրտառուչ նկարագրությունն է, «Պատմվածք այն մասին, թե ինչպես գժտվեցին Իվան Իվանովիչն ու Իվան Նիկիֆորովիչը» վիպակի անողոք սատիրան, դա նաև «Վիյի» ֆանտաստիկան է ու «Տարաս Բուլբայի» (առաջին խմբագրում) ազատագրական պայքարի պաթոսը։

Թե «Միրգորոդում» Գոգոլը տխուր հեգնանքից մինչև սարկազմ հասնող ծաղրի առարկա էր դարձրել գավառի կալվածատիրական տարերքը, ապա «Արաբեսկի» (ժողովածուի մեջ մտնում էին նաև մի շարք հոդվածներ) վիպակները՝ «Նևսկի պողոտան», «Դիմանկարը» (առաջին խմբագրում) և «Հեթլաֆարի հիշատակարանը», ընկան «Պետերբուրգյան պատմվածքներ» ցիկլի հիմքում, որոնք Գոգոլը գնտեղել էր 1842 թ. իր կենդանության օրոք հրատարակված երկերի ժողովածուի 3-րդ հատորում, և որոնք ոչ միայն գրողի ստեղծագործության, այլ ընդհանրապես ռուս գրականության զարգացման մեջ նոր փուլ էին նշանավորում։

«Երեկոնևրի» երիտասարդական խանդավառությունը, ռոմանտիկական իդեալները և կայծկլտուղ հումորը ծիծ պես չքացան, երբ շփման մեջ մտան ինքնակալական Ռուսաստանի հետ։ Այժմ Գոգոլի ուշադրության կենտրոնում առօրյա, իրական կյանքն էր, որը պարուրված էր մանրուքների տիղմով, աղքատության, աննշան ու ստոր իրականության գորշությամբ։ Վ. Գ. Բելինսկին Գոգոլի արձակի այդ նոր հատկությունը չափազանց ճշգրտորեն ձևակերպել է որպես «կոմիկական շնչավորում, որ մշտապես տանում է տալիս թախծի ու տրտմության խոր զգա-

ցումից։ «Տխուր է այս աշխարհում, պարոնայք», ամփոփում է գրողը կյանքից ստացած իր տպավորությունները, ավարտելով «Պատմվածք այն մասին, թե ինչպես գժտվեցին Իվան Իվանովիչն ու Իվան Նիկիֆորովիչը» գործը՝ «Մի րդոդոդի» ամենից «գոգոլյան» վիպակը։

«Պետերբուրգյան պատմվածքները» համաշխարհային գրականության մեջ այն եզակի դեպքերից է, ուր ամբողջ պատմվածաշարը գլուխգործոցներից է բաղկացած։

«Նևսկի պողոտայում» կտրուկ, դեմառդեմ ընդհարվում են վեհ իդեալիզմն ու «փոքր մարդու» ճղճիմություն։ «Դիմանկարում» Ն. Վ. Գոգոլը հիանալի վարպետությամբ ցույց է տալիս փողի քայքայիչ ազդեցությունը իսկական արվեստի վրա։ Որոշ ուսումնասիրողներ նշում են, որ «Պետերբուրգյան պատմվածքներում» Ն. Վ. Գոգոլը «ծաղրում է, միաժամանակ հաղթահարելով ռոմանտիզմի պոետիկան» (Յու. Վ. Մաննն)։ «Քիթը» վիպակում այդ ծաղրը առաջին պլան է մղվում, ընդունելով անսովոր, գրոտեսկային ձևեր։ «Սայլակը» յուրահատուկ կենցաղային պատկեր է, «Վարպետորեն գրված համորիստական ակնարկ» (Բելինսկի)։ Ջափազանց հետաքրքիր է «Խելագարի հիշատակարանը», հետաքրքիր և՛ բովանդակությամբ, և՛ ձևով։ Ապշեցնում է Գոգոլ-ոճաբանի վարպետությունը. ինչպիսի՛ նրբությամբ ու համոզչականությամբ է նա Պոպրիշչինի գրառումների ոճի էվոլյուցիայի միջոցով ցույց տալիս նրա խելագարության էվոլյուցիան։ Այս վիպակում երևան է գալիս «փոքր մարդու» թեման. գեներալի քեֆեվամիտ ու չնչին դատեր նկատմամբ տածած սերը խելագարեցնում է տիտուլյար խորհրդական Պոպրիշչինին։ Բայց նա ռոմանտիկական հերոս չէ. Պոպրիշչինը ծիծաղելի է ու ողորմելի, քեև խղճահարություն ու կարեկցանք է առաջացնում։ Վիպակի վերջում Պոպրիշչինն ընկնում է մեծամոլական ցնորամտության մեջ։ Խիստ երգիծանքով է նկարագրված և այն աշխարհը, որին այնպես ձգտում էր նա. այդ աշխարհը ներկայացված է գեներալի դստեր շնիկի Մեջիի նամակներով։ «Փոքր մարդու» թեման իր հետագա զարգացումն է ստացել մեկ ուրիշ վիպակում՝ «Շինելում»։

«Շինելն», անշուշտ, ամբողջ շարքի և՛ գեղարվեստական, և՛ գաղափարական գագաթնակետն է։ «Փոքր մարդու» հումանիստական թեման այստեղ տրված է առանձնահատուկ խորությամբ։ Բելինսկին այն համարում էր Գոգոլի ամենախոր ստեղծագործություններից մեկը, իսկ Դերցենը՝ «վիթխարի ստեղծագործություն»։

Վիպակն ունի ընդգծված պրոզաչիկ անվանում՝ «Շինել» և պատմում է ոչնչով աչքի չընկնող ծիծաղելի անուն-հայրանունով՝ Ակակի Ակակիևիչ (ի դեպ, Ակակի հունարեն նշանակում է «հեզաբարո») և զարմանալի, շատ հասարակ ազգանունով՝ Բաշմաչկին (башмак — մաշիկ), մանր մի չինովնիկի անխնամատ կյանքի ու մահվան մասին։

Ըվ, սակայն, «փոքր մարդու» մասին այդ փոքր վիպակի նշանակությունը ռուսական, և ոչ միայն ռուսական, գրականության համար չափա-

զանց ակնմոռու է։ «Շինելը» Գոգոլին ճանաչում բերեց ոչ միայն Ռուսաս-տանում, այլև, հետագայում, համաշխարհային մասշտաբով։

Երբ Վիլյամ Սարոյանը Լենինգրադ էր եկել, եղանակը բավական ցուրտ էր, և ուղեկիցներն առաջարկում են նրան թեթև թիկնոցը փոխարին-նել ավելի տաք մի բանով։ Վիլյամ Սարոյանը հրաժարվում է, ասելով, որ ինքն ուզում է ապրել այն զգացողությունը, ինչ ունեցել է Ակակի Ակա-կիևիչը իր հնամաշ շինելով։ Գոգոլը նույնպես ծանոթ էր այդ զգացողու-թյանը։ Պետերբուրգյան մեր լինովնիկ եղած ժամանակ նա նույնպես ստիպված էր ամբողջ ձմեռ մեկ-մեկ գալ ամառային շինելով (այդ մասին նա 1830 թ. գրել է մորը)։

«Շինելում» դժվար չէ առանձնացնել միահյուսվող մի քանի թեմաներ։ Առաջինը և անմիջապես աչքի զարնողը մանր, շարքային չինովնիկի՝ աննկատելի ու աղքատ, մի քանի կոպեկի համար գրասենյակային իր ծանր լուծը անտրտունջ քաշող մարդու գոյության ողորմելիության, զրժ-գոհության թեման է։ Ժամանակակից ռեակցիոն քննադատությունը, որը չէր ժխտում վիպակի առաջացնող հոգեկան ցնցումը, ճգնում էր սահմանա-փակվել այն բանի ցուցադրմամբ, թե որքան խղճուկ ու ողորմելի կարող է լինել մարդը։ Բայց այդ այդպես չէ։ Վիպակում զրկվողը ոչ թե ծագրն է, այլ կարեկցանքը, խղճահարությունը փոքր մարդու նկատմամբ։

Ակակի Ակակիևիչը ստորացվել ու զրկվել է աղքատությունից, իր ճակատագրի ծանրությունից և ծառայության բուռ միօրինակությունից։ Բայց նրա հոգում պահպանվել են մարդկային բոլոր զգացմունքները, պարզապես հանգամանքները թույլ չեն տվել դրանց դուրս հորդել, և նա ինքն էլ երբեմն գաղափար չի ունեցել դրանց գոյության մասին։ Նոր շի-նել կարել տալու անհրաժեշտությունը Ակակի Ակակիևիչից պահանջում է, անկասկած, լուռ հերոսություն։ Այն զրկանքների ու սահմանափակումների գնով, որին նա ստիպված է դիմել, ցնցում է իր դրամատիրոջը։ Նա նույնիսկ միանգամայն ընտելացել էր «երեկոները քաղցած մնալուն»։

Ակակի Ակակիևիչը այդ զրկանքները կրում է ոչ միայն անտրտունջ, այլ նույնիսկ ոգևորությամբ. «Այդ ժամանակներից նրա բուն իսկ գոյու-թյունը կարծես թե մի տեսակ ավելի լիակատար դարձավ... նա դարձավ մի տեսակ ավելի աշխույժ, նույնիսկ բնավորությամբ ավելի կայուն, որ-պես մի մարդ, որն արդեն որոշել ու դրել է իր նպատակը։ Նրա դեմքից ու ապրումներից ինքնին չքացան կասկածը, անվճռականությունը, մի խոսքով՝ բոլոր տատանվող ու անորոշ գծերը»։

Ոչ պակաս ցնցող ուժով է նկարագրված Բաշմաչկինի ցնծությունն ու երջանկությունը, երբ նոր զգեստը, վերջապես, պատրաստ է։ Ով այստեղ պետք է ասել, որ «Շինելի» մասին եղած հայկական գրականության մեջ շեշտը հիմնականում դրվում է Ակակի Ակակիևիչի դժգունության, նրա մեջ զգացմունքների ու ցանկությունների բացակայության վրա։ Սակայն, ուշա-դիր կարդալով տեքստը, նորից ու նորից տեսնում ենք, որ դրանք պար-զապես խոր ներս են քաշված։ Բավական է, որ Ակակի Ակակիևիչը մի կար-ճին շինել ունենա, և նրա մեջ սկսում է արթնանալ կյանքը։ Եվ ով իմա-նա, թե որքան հետոն կգնար այդ արթնացումը, եթե այդպես արագ, կո-

պիտ ու անգիտորեն չընդհատվեր այն։ Իսկապես, այդ օրը Ակակի Ակակիևիչը տանը «ճաշեց..., ուրախ և ճաշից հետո չգրեց ոչինչ, ոչ մի թուղթ (իսկ չէ որ առաջ դա նրա միակ զվարճությունն էր — Կ. Մ.), այլ հենց այնպես, մի քիչ փափկամոլության տրվեց անկողնում։ Հետո նա հյուր գնաց (թեև այնտեղ իրեն կաշկանդված էր զգում՝ օտարացել էր հասարակությունից) և այն էլ քաղաքի կենտրոն, ուր ծայրամասի խղճուկությունը փոխվում է մեծ քաղաքի նախանշաններով։ «Ակակի Ակակիևիչը այդ բոլորը դիտում էր իբրև նորություն»։ Նա արդեն մի բանի տարի երեկոները փողոց դուրս չէր եկել։ Ակակի Ակակիևիչը հափշտակված նայում էր ցուցափեղկերին, մի բան, որ առաջ երբեք չէր անում։ Ավելին, ետ վերադառնալիս նա «հայտնի չէ ինչու հանկարծ նույնիսկ փորձեց աճապարել ինչ-որ մի կնոջ հետևից, որը կնճռակի նման անցավ կողքից, և որի մարմնի յուրաքանչյուր մասը արտասովոր շարժման մեջ էր։ Բայց, այնուամենայնիվ, Ակակի Ակակիևիչը իսկույն կանգ առավ և շարունակեց չատ դանդաղ գնալ, նույնիսկ ֆեմֆն էլ զարմանալով, թե որտեղից առաջացավ իր այդ աճապարանքը»։

Ու հանկարծ ամեն ինչ փուլ եկավ։ Բայց նրա կամքը, որ սկսել էր շտկվել, անմիջապես չկոտրվեց։ Մինչև «նշանավոր դեմքին» հասնելը այդ ընթացքում չինովնիկի տատապանքների վրա մի տեսակ քիչ ուշադրություն էին դարձնում։ Բայց չէ որ Ակակի Ակակիևիչն այստեղ էլ էր կամք դրսևորել. բավական է հիշել գրագիրների հետ նրա ունեցած խոսակցությունը։ Վերջապես, մի ուրիշ ժամանակ, նա, գուցեև, չհամարձակվեր այդքան բարձր հասնել, մինչև «նշանավոր դեմքը»։ Չէ որ մինչև բուլոդովին վերջերը նա անտրտունջ տանում էր չինովնիկների ծաղր ու ծանակը։ Բայց այն ժամանակ էլ նրա մեջ ինչ-որ մի բան կար, որը զսպում էր նրանց, ովքեր բյուրոկրատական մեքենայի ազդեցությամբ դեռևս մինչև վերջ չէին կորցրել իրենց խիղճը։

Գոգոլը հետու է այն բանից, որ Ակակի Ակակիևիչի տատապանքները վերագրվեն մարդկային խառնվածքի վերացական անկատարելիությանը։ Նվ Պշվաո չինովնիկին, որպես մեկ այլ Պետերբուրգի խորհրդանշան, որպես կյանքի տիրակալների խորհրդանշան, հակադրված է «նշանավոր դեմքը»։ Նրա հետ պատմության մեջ երգիծական հոսանք է մտնում։ Նրանք նախադասությունից կազմված այն արտահայտություններն («Ինչպե՞ս եք համարձակվում։ Գիտե՞ք, թե ում հետ եք խոսում։ Հասկանո՞ւմ եք, թե ով է կանգնած ձեր առաջ»), որոնցով նա սահմանափակվում է առորդյալների հետ խոսելիս, այն ձայնը, որ հատկապես մշակել էր «նախօրոք, իր անկյունում, առանձնության մեջ ու հայելու դիմաց, իր այժմյան պաշտոնը և գեներալի աստիճանը ստանալուց մի շաբաթ առաջ», այն վայրենի շշպտանքը, որ նախանշված էր ներկա եղող իր բարեկամի համար, այն մտքից ստացած կատարյալ արբեցումը, «որ իր խոսքը կարող է նույնիսկ ուշաթափեցնել մարդուն» — այս ամենը չափազանց տիպական է (պատահական չէ, որ «նշանավոր դեմքը» նույնիսկ անունով չի հիշատակվում) և չափազանց սոսկալի՝ իր տիպականությամբ։ Նշանավոր դեմքն իր բնույթով բնավ էլ շատ մարդ չէ։ Չինովնիկական բյուրոկրատիա-

յի անհոգի մեքենան նրան դարձրել է այնպիսին, ինչպիսին նա ներկայանում է Ակակի Ակակիևիչին։ Շրջապատող իրականությունն Ակակի Ակակիևիչին դարձրել է ողորմելի ու թշվառ մի չինովնիկ, այդ նույն իրականությունն է բարոյազրկել նշանավոր դեմքին։ Նա վերջապես այդ իրականությունն իր ծանրությամբ ճզմել է տիտուլյար խորհրդական Բաշմաչկինին։

Ողորմելի ապարդյուն է Ակակի Ակակիևիչի «բունտը», երբ նա հոգեվարքի զառանցանքի մեջ անխնա հայհոյում է «նշանավոր դեմքին, չմոռանալով, սակայն, նրան «ձերդ գերազանցություն» անվանել։ Վիպակն ավարտվում է ունևորների աշխարհի խորհրդանշական դատաստանով։ Պետք է ասել, որ «նշանավոր դեմքերը» շատ լավ հասկացան այդ ակնարկը»։ «Գրքություն և խոհեր» գրքում Գնրցենը բերում է լափազանց հատկանշական մի օրինակ. «Ինչ սարսափելի վիպակ է Գոգոլի «Շինելը», — մի անգամ ասաց Ստրոգանովը Ե. Կորշին,— չէ՞որ կամուրջի այդ ուրվականը ամեն մեկիս վրայից ուղղակի հանում է շինելը։ Ձեզ դրեք իմ տեղը և նայեք այդ վիպակին»։ «Ինձ համար շատ դժվար է,— պատասխանեց Կորշը, — ես սովոր չեմ դիտել իրերն այն մարդու տեսանկյունից, որը երեսուն հազար շուկ ունի»։

Բովանդակության հումանիստական մեծ ուժից բացի, «Շինելն» աչքի է ընկնում նաև կուռ կառուցվածքով։ Այդ կապակցությամբ Բ. Մ. Էյխենբաումը գրել է. «Մանրության կենտրոնը... տեղափոխվում է պատումի գրելաձևի վրա, գլխավոր կոմիկական դերը հատկացվում է բառախաղերին, որոնք իրերին սահմանափակվում են բառերի պարզ խաղով, երբեմն զարգանալով դառնում են փոքր անեկդոտներ։ Կոմիկական էֆկտները արտահայտվում են պատումի գրելաձևի միջոցով»։

«Տարաս Բուլբա» վիպակն առանձնահատուկ. տեղ է գրավում Ն. Վ. Գոգոլի ստեղծագործության մեջ։ Այն առաջին անգամ հրատարակվել է 1835 թ. «Միրգորոդ» ժողովածուում, բայց հետագայում, հենց իր կյանքի գլխավոր գործի, «Մեռած հոգիների» առաջին հատորի վրա աշխատելու շրջանում, Ն. Վ. Գոգոլը վիպակը հիմնական վերամշակման է ենթարկել, և 1842 թվականին լույս է տեսել գրողի երկերի ժողովածուի 2-րդ հատորում նոր, լուրջ ու մանրազնին խմբագրությամբ։

Վիպակի հիմքում դրված է շլյախտայական Լեհաստանի դեմ ուկրաինական ժողովրդի ավելի քան 200-ամյա ազգային-ազատագրական պայքարը։ «Տարաս Բուլբայի» առաջին և գլխավոր հերոսը Զապորոժյան Սեչն է, որ դարձել էր Ուկրաինայի ազատագրության համար մղվող պայքարի առաջամարտիկը, զապորոժյան կոզակության հավաքական կերպարը։ Տարաս Բուլբան հանդես է գալիս որպես կոզակների այդ խստաբարո ու դեմոկրատական հանրապետության ծնունդն ու մարմնացումը։

Գոգոլն իր այդ ստեղծագործությամբ կատարելության է հասցրել մոտ 10 տարվա ընթացքում։ Սակայն վիպակը կարծես գրված է մի շնչով և նրա գեղարվեստական ճշմարտության մեջ եղած պատմական անալիզիզ,

ժամանակաշրջանի կոլորիտը օրգանապես զուգորդում է պատկերման բարձր գնարական տրամադրությանը, ռոմանտիկական պաթոսին։ «Տարաս Բուլբան» պատմա-կենցաղային իրական նյութի վրա կառուցված հերոսական դյուցազներգության յուրահատուկ ձև է։ Նոր ռեալիստականությանը, բարձր ռոմանտիկայի և հյութեղ հումորի զարգացումը վիպակը գարձնում է զարմանալիորեն ինքնատիպ ու գեղող։

Պատահական չէ, որ այնպիսի խիստ սկզբունքային ու զգայուն քննադատն, ինչպիսին Վ. Գ. Բելինսկին էր, Գոգոլի վիպակի մեջ անմիջապես տեսավ էպիկական բարձր մի տիպար, ընդ որում այդ բանը նա կարողացավ նկատել արդեն առաջին խմբագրման ժամանակ, երբ շատ կողմեր, որոնք հետագայում դարձան Գոգոլի վիպակի գեղարվեստական ամենաբարձր արժանիքները, դեռ նոր միայն ուրվագծվում էին։ 1835 թ. «Ռուսական պատմվածքի և պ. Գոգոլի պատմվածքների մասին» հոդվածում նա գրում էր. «Եթե մեր ժամանակներում հնարավոր է հոմերոսյան դյուցազներգություն, ապա ահա՛ մեզ դրա բարձրագույն օրինակը, իդեալը և նախատիպը»։

Զապորոժյան Սեչը և նրա հասարակական կառուցվածքը տրված են այնպիսի հակադրությունների դիալեկտիկական միասնության մեջ, ինչպիսին խիստ կարգապահությունն ու կոզակային ազատ կյանքը, արդարամտությունն ու դաժանությունը (Ն. Վ. Գոգոլը բնավ չի գունազարդում, չի իդեալականացնում Սեչը), խիզախությունն ու անհոգությունն են։ Բայց գլխավորը (մեր առջև հանրապետություն է) եղբայրությունն է, հավասարների ու ազատների միությունը, որտեղ պայքարի դաժան հնոցում կուվում են անողոք ու անընկճելի բնավորություններ, որտեղ չկա շահադիտություն, մեծամարնք աստիճանավորներին, չկան եռուզեռ ու գզվռտոց, որտեղ ամեն ինչ ենթարկված է մեծ նպատակին՝ Հայրենիքի ազատագրության համար մղվող պայքարին։ Ազատություն և ընկերություն — ահա թե ինչն է, որ համախմբում ու միավորում է Ուկրաինայի ասպետների այդ խստաբարո եղբայրությունը, իսկ այն վեհ իդեալը, որի համար նրանք պատրաստ են զոհել ամեն բան, մարդու վրայից սրբում-տանում է այն ամենը, ինչ մանր է, անարժան ու շահախնդիր։

Այդ ամբողջ ընդհանուր հերոսական զանգվածի միջից առաջին պլանի վրա են կանգնում Տարաս Բուլբան ու նրա որդիները։

Ինքը, Տարասը՝ կոզակային ազատ կյանքի հերոսական իդեալների այդ բարձրագույն արտահայտությունը, խստաբարո, անվեհեր, խմաստուն ու շրջահայաց, աթդարադատ ու անողոք այդ մարդը, մոնումենտալ է ու էպիկական։ Նվ դրա հետ մեկտեղ նրան մշտապես ուղեկցում է ժողովրդական զվարթ հումորը։

Բուլբայի երկու որդիները մարմնավորում են այն երկու ճանապարհները, որ իսկական կյանքը գնում էր ուկրաինական ժողովրդի առաջ նրա պատմական զարգացման ընթացքում։ Ավագն ընտրում է ազնիվ ու ողբերգական ճանապարհը՝ օտար կեղեքիչների ու հարստահարիչների դեմ անհաշտ պայքարի ուղին, իսկ կրտսերը՝ ժողովրդի շահերին հակառակ գնացող, այդ կեղեքիչների հետ, նրանց ավելի զարգացած, ավելի էֆեկտա-

վոր ու նրբին, բայց և ավելի անհատապաշտական, դառային, եսասիրական և, որ ամենակարևորն է, իր հարազատ ժողովրդին ուժ ավող մշակույթի հետ մերձենալու, միախառնվելու ուղին։

Օստապը՝ այդ երիտասարդ Տարաս Բուլբան, Սեչի ավանդույթների ժառանգորդն է ու շարունակողը, նա ժայռի պես ուժեղ ու միաձույլ կերպար է։ Պատահական չէ, որ այդքան նման են հոր և որդու մահվան տեսարանները։ Օստապի մահապատժի տեսարանը և Տարաս Բուլբայի հայտնի «Լսում եմ»-ը համաշխարհային գրականության ամենաուժեղ էջերից են։

Բայց դավաճան Անդրին ևս սովորական մարդ չէ, և դա Ն. Վ. Գոգոլի գեղարվեստական ճշմարիտ զգացողության ևս մի ապացույց է։ Ողբերգական կոնֆլիկտը, էպիկական հերոսների բախումը պահանջում էին մի անտագոնիստ, որը հավասարազոր լիներ նրանց։ Անդրիյը հիանալի ռազմիկ է, նա գեղեցիկ է, անվեհեր։ Այդ բանը հենց ինքը՝ Տարասն է ընդունում։ Անդրին իր եղբորից ու հորից ավելի մեղմ է, հուզական։ Հենց առաջին անգամ հանդես գալիս Օստապը բռունցքներով կռվի է բռնվում հոր հետ, իսկ Անդրին գրկախառնվում է մոր հետ։ Գեղեցիկի առաջ խոնարհվելու զգացումը, կնոջ նկատմամբ ունեցած ամեն բան կլանող բուռն կիրքը նույնպես առանձնացնում են նրան ընդհանուր զանգվածից։ Հիշենք, թե ինչ է ասում Ն. Վ. Գոգոլը կնոջ ճակատագրի մասին Տարաս Բուլբայի կնոջ օրինակով։ «Ճշմարիտ որ խղճալի էր, խնչպես այդ ֆախուռն դարի ամեն մի կինն»։

Անդրիի ուժեղ, անձնուրաց սերը համակրանք է առաջացնում, ցույց է տալիս նրա կերպարի խորությունը։ Սակայն կյանքը խիստ ու դաժան կերպով Անդրիին կանգնեցնում է ծանր ընտրության առաջ։ Այդ բանը հասկանում է և գեղեցիկ լեհուհին։ «Ասպետ, մի խաբիր ո՛չ քեզ, ո՛չ ինձ», — ասաց նա,հնդարտ օրորելով իր գեղեցիկ գլուխը... » — «գիտեմ, և ի մեծ վիշտ ինձ, շատ լավ գիտեմ, որ դու չես կարող սիրել ինձ, և գիտեմ, թե դու ինչ ուխտ ու պարտականություն ունես, քեզ կանչում են քո հայրը, ընկերներդ և քո հայրենիքը,— իսկ մենք քեզ թշնամի ենք»։

Եվ այստեղ սպառվում է Անդրիի նկատմամբ եղած մեր համակրանքը, քանի որ «սեր թե պարտականություն» ողբերգական բախման մեջ նա քշտրում է սերը, և, ընդ որում, վայրկենապես, առանց տատապանքի ու տատանումների։ Եվ պատահական չէ, որ հենց այստեղ, առաջին համբույրի ռոմանտիկական նկարագրությունից հետո (և այդ երկուստեք միացած համբույրի մեջ զգացվում էր այն, ինչ մարդ իր կյանքում զգում էր միայն մի անգամ») դառը ամփոփում է կատարվում. «Եվ կոզակը կործանվեց, կորավ կոզակային ողջ ասպետության համար»։ Անդրին ոչ միայն դավաճանեց յուրայիններին, այլև նրանց դեմ կռվի դուրս եկավ։ Եվ ահա Տարասը չէր կարող հանդուրժել այդ անպատվությունը. «Ե՛ս եմ քեզ ծնել, ե՛ս էլ կսպանեմ»։ Անդրիի կործանումը հայրենիքին դավաճանելու հատուցումն է, ամենից լավ դա հասկանում է ինքը՝ Տարասը, որ սովոր է նայել մահվան աչքերին։ «Կորա՞վ, կորավ անպատիվ, ինչպես անարգ շուն»։ Հիշենք, որ երբ Օստապի մահապատժի տեսակլի խոշտանգումներին ներկա էր Տարասը. նա բազմության մեջ կանգնել էր գլուխը խանարհած

և միևնույն ժամանակ աչքերը հպարտությամբ վեր բարձրացրած, նա մյուսն խրախուսիչ ձայնով ասում էր. «Բարի, որդիս, բարի»։

Վիպակի հիմքում չի դրված որևէ կոնկրետ պատմական դեպք կամ հերոս։ Սակայն գեղարվեստական այս ընդհանրացման ստեղծելու համար Գոգոլն ուսումնասիրել է Զապորոժյան Սեչի մասին բազմաթիվ պատմական աշխատություններ, ինչպես նաև տարեգրություններ։ Բայց նրա համար գլխավոր սկզբնաղբյուր և յուրատեսակ կամերտոն է եղել ֆոլկլորը, ամենից առաջ պատմական՝ հերոսական երգերը։ Դրանց ստեղծագործական յուրացումն արտացոլվել է և՛ գործող անձերի պատկերման, և՛ բնանկարի ու հեղինակային շեղումների քնարականության, և՛ ամենից առաջ, վիպական հսկան կատարյալծի, նրա լեզվի մեջ։ Մասնավորապես, տեղ-տեղ հմտորեն ու ասկետով մտցրած ուկրաինաբանությունները ապանձահատուկ երմուքյուն ու գույներ հատոր վիպակին։

Ն. Վ. Գոգոլն ամբողջ կյանքում ձգտել է հրապարակախոսորեն ազդարարել բարու, արդարության ու գեղեցկության իդեալները, ձգտել է հենց բարոյախոսության։ Այդ ձգտումը չէր կարող նրան չբերել թատրոն՝ որպես արվեստի՞ այն ասպարեզը, որն ամենից անմիջականորեն է ներգործում լայն շրջանների վրա։

Ն. Վ. Գոգոլի գրամատուրգիական ժառանգության մեջ կան գոգոլյան հանճարի վրձնին վայել այնպիսի փայլուն փոքր գլուխգործոցներ, ինչպես «Ամուսնությունը» և «Խաղամոլները», նաև փոքր երգիծական պատկերներ («Գործարար մարդու առավոտը», «Դատավճռ», «Մառայանոց»), որոնք արտաքին հատվածականության դեպքում իրենց ներքին ավարտվածությամբ ինչ-որ բանով հիշեցնում են Ա. Ս. Պուշկինի «Փոքր ողբերգություններ»։ Սակայն Ն. Վ. Գոգոլի գլխավոր պիեսը, որ նվաճեց ռուսական, իսկ հետո նաև համաշխարհային բեմը, աննուամենայնիվ, եղել և մնում է «Ռևիզորը»՝ հեղինակի ամենանշանավոր, շատ բաներով հանրագումարային դրամատուրգիական գործը։

Կատակերգության հսկայական մերկացնող ուժը (ընդ որում, դա ընդգծված է նաև նշանավոր բնաբանով՝ «Հայելու մեղքը չէ, որ ռեխգ ծուռ է») հմտորեն քաղարկված է «գործողության ասպարեզի»՝ գավառական փոքր քաղաքի աննշանությամբ, որտեղից «երեք տարի քշիր հա՛ քշիր, ոչ մի պետության չես հասնի»։ Մեզ վկայություններ են հասել, որ «Ռևիզորի» առաջին բեմադրությանը ներկա գտնված Նիկոլայ 1-ինը քահ-քահ ծիծաղել է։ Ինչպես այստեղ ճակատագրի ծաղր չտեսնել էլ ում, եթե ոչ նրան էր ուղղված պիեսի վերջում քաղաքապետի արտասանած քնավոր խոսքը՝ «Ինչի՞ վրա եք ծիծաղում։ Ինքներդ ձե՛զ վրա եք ծիծաղում»։

Կոնկրետ, գոգոլյան ձևով տեսանելի կենցաղագրությունը միաժամանակ դարձել է և բարձրագույն քնհանրացում։ Այստեղ մեր առջև է ցարական վարչակարգի ողջ հավաքածուն՝ քաղաքապետն ու նրա ենթակաները՝ սոսափեռությունը — մասնավոր պրիտավ Ուխովեցվով (ռուսերեն «ухо»

և «вертеть» բառերից — «ականջ» և «լորձն»), ոստիկաններդ, որոնց մասին ամենից լավ պատկերացում է տալիս նրանցից մեկի հատարակ անուն դարձած ապտանունը — Դերժիմորդա (<u>«дёржать»</u>, այսինքն՝ «хватать» և «морда» բառերից — «ճանկել» և «մռութ»), դատավորը — Լյապկին-Տյապկին (<u>«тяп-ляп»</u> նշանակում է «շըփ-ըրփ», անփութորեն, կոպիտ ձևով, հապճեպ մի բան անել), ատամնաբժշկական հաստատությունների հոգաբարձու բժիշկ Գիբները (<u>«гибнуть»</u> բառից — «մեռնել», «կործանվել»), ուսումնարանների վերակացուն, փոստապետը։ Սրանցից յուրաքանչյուրը, բնականաբար, անհանգստացած է ունիզորի գալու առթիվ ու խոսում է իր հաստատության գործերի վիճակի մասին, և մենք տեղեկանում ենք ամբողջ քաղաքի, ինչպես նաև ամբողջ տերության գործերի վիճակի մասին։

Ասենք, ինչպես են գործերը դատարանում՝ արդարադատության այդ միջնաբերդում։ Դրա մասին պիեսում շատ է խոսվում, բայց բավական է սահմանափակվել միայն հենց իր՝ դատավորի գնահատականով. «Ահա տասնհինգ տարի է, ինչ նստած եմ դատավորական աթոռին, բայց հենց որ փորձում եմ խորանալ որևէ գրության մեջ — ա՛հ, իսկույն ձեռք եմ քաշում։ Ինքը, Սողոմանը, գլուխ չի հանի, թե արն է արդարը և որն անարդարը։

Հիվանդանոցում տիրող կարգերի մասին խոսում է նաև տվյալ հաստատության տնօրենը. «Քանկարժեք դեղորայք մենք չենք գործածում։ Հասարակ մարդը ևթե մեռնելու է, այնպես էլ կմեռնի, թե ապաքինվելու է, այնպես էլ կապաքինվի։ Այն էլ ասեմ, որ Երիտասարդ Իվանովիչը խիստ կդժվարանար նրանց հետ բացատրվելու. ռուսերեն ոչ մի բառ չգիտեն մարդը»։

Աստվածահաճո հաստատությունների հոգաբարձուն կարծեցյալ «տնէդրի» հետ զրուցելիս գովաբանում է իր գործունեությունը. «Այն օրից, ինչ ես ստանձնեցի դեկավարությունը,— գուցե ձեզ նույնիսկ անհավատալի թվա,— բոլորն էլ ճանճերի պես ապաքինվում են» (<u>«как мухи выздоравливают»</u>)։ Այս հակիրճ բնութագրությունը գնահատելու համար պետք է հաշվի առնել, որ ռուսաց լեզվում կա մի հաստատուն դարձվածք՝ «мрут как мухи», այսինքն՝ ճանճերի պես կոտորվում են»։

Ուսումնարանների վերակացուի շնորհիվ մենք իմանում ենք, թե ինչպես է գրված աճող սերնդի դաստիարակության գործը։ Իսկ փոստապետին քաղաքացուհիը խորհուրդ է տալիս բացել բոլոր նամակները, բայց պարզվում է, որ փոստապետն ասածը այդ էլ բացում է գրանք։ Փոստապետը չինովնիկների մեջ ամենից անվնասն է, ինքը՝ Գոգոլը, նրա մասին գրել է. «Մի համեստության հասնող պարզամիտ մարդ էր», և նամակները բացում է պարզապես հետաքրքիր նորություններն իմանալու համար։ Ամենահետաքրքիր նամակները նա պահում է իր մոտ, այսինքն, պետական գործին, և գուցե նաև մարդկանց ճակատագրերին վերաբերվում է ինչպես իր ունկան զվարճության։

Ագեվակահների բոլորը մենք իմանում ենք քաղաքագլխի, նրա ընտանիքի և նրա պաշտոնակիցների միջոցով։ Առևտրականները խոսվում

ՀՀ նվիրատվի մոտ չնայած դահլիճին կանգնեցված ատրկտեական (Սվիատունով ու Դերժիմորդա) արձակապատճենին Նրանք նուիրատու փաշտոք են առաջարկում կարծեցյալ ռևիզորին, բողոքում են քաղաքապետից, քնգ որում, բնորոշ է, որ բողոքում են ոչ թե կաշառակերությունից, այլ կաշառակերության չարաշահումներից. «Նրա անվանակոչության անունը ուրբ Անտոնի օրն է լինում, ու էլ ինչ ասես, որ չենք բերում թափում, ոչ մի բանից կարող չենք թողնում: Չէ, էլի պիտի տանես տաս: Օնուփրիի օրն էլ, ասում է, իր անվանակոչության անն է: Ի՞նչ պիտի անես, Օնուֆրիի օրն էլ ես տանում»: Այսինքն, առևտրականները, արտարադատության փոխարեն, դարձյալ կաշառքի են դիմում և խնդրում քաղաքապետից ազատել իրենց, որը չափից ավելի է կաշառք պահանջում: Կաշառքի հենց սկզբունքն այնպես էր արմատացել, որ ուղղակի կասկածի տեղիք չէր տալիս:

Ամեն հանրապետության բերելով այդ համընդհանուր կաշառակերությունը, քաղաքապետիկը (քաղաքի գլխավոր իշխանությո՞ւնը) նկատում է. «Մարդ չկա, որ հոգու վրա մեղք ունեցած չլինի: Այդ պրեն ասվածի համմանել, և վոլտերականներն իսկույն են դրա գեմ խոսում»: («Վոլտերական բառը» XIX դարի ցարական Ռուսաստանում «ազատամտականի», քաղաքականապես անբարեհույս մարդու խորհրդանշան էր): Գլխավորը բարեհուսությանն է: Պատահական չէ, որ քաղաքապետը, վիճաբանելով դատավորի հետ, որն իրեն անշահասեր մարդ է համարում, որովհետև որպես կաշառք վերցնում է միայն «որոշ չան ձագեր» (պատահական չէ, որ քնավոր խոսք է գործածել), որպես գլխավոր հազվագեպ ատրճ է քաշում իր ձևական բարեպաշտությունը՝ բարեհուսության ամենակարևոր բաղադրամասը. «Բայց որ ատածուն չեք հավատում, եկեղեցի երբեք ոտք չեք գնում: Ես դեռևս հավատքի մեջ հաստատ եմ և ամեն կիրակի եկեղեցի եմ գնում»:

Քաղաքապետի հայածանքների գեմ բողոքելու են գալիս նաև հասարակ մարդիկ: «Ինձ որտե՞ղ մոտ քննել հաշտվում է միայն երկու հոգու՝ փականագործի կնոջը և եղբայրպատի այրուն: Փականագործի կնոջ ամուսնուն քաղաքապետը 25 տարով զինվոր էր ուղարկել տեղական հանցագործների համար, որովհետև նրանից առաջ եղած երկու զինվորականները առատ նվերներ տալով փրկագնվել էին: Ննջեցյալի այրուն ծեծել էին սխալմամբ: Հոյակապ է, սակայն, քաղաքապետի ասած բացատրությունը. «Ննջեցյալի այրին ատել է ձեզ, ին իրր ես նրան ծեծել եմ: Սուտ է, ստոված վկա, առատ է: Նա ինքն է իրեն ծեծել» (այս տրտահայտությունը նույնպես բնորոշ խոսք է դարձել): Միյուս բողոքավորներն ու խնդրատուները չափազանց շատ են: Նրանց դռներից ներս չեն թողնում, նրանք լուսամուտով են ներս խցկվում...

Գրականության մեջ կարծիք է հայտնվել, որ Ն. Վ. Գոգոլի պիեսում Ճարտասիրական իրավունքի թեման բոլորովին շրջանցվել է: Դա այնքան էլ ճիշտ չէ: Մի կողմից, քննիչցյալը հնչուտիյամբ կարող է գլխի ընկնել, թե ինչ վիճակում էին ապրում հորաները, երբ բացարձակ կամայա-

կանությունն էր տիրում նույնիսկ ազատ մարդկանց նկատմամբ (հիշենք առևտրականների պատմածները քաղաքագլխի սարքած ծաղր ու ծանակի մասին)։ Մյուս կողմից, Ն. Վ. Գոգոլը հեռու էր մուժիկին իդեալականացնելու և նրան որպես միայն տառապյալ հրեշտակ ներկայացնելու գաղափարից։ Նա հասկանում էր, որ ճորտական ստրկությունն անբարոյականացնում է ոչ միայն կալվածատիրոջը, այլև ծառային, հատկապես ճորտ ապասավորին։ Այս տեսակետից չափազանց կարևոր ու հետաքրքրքիր է Օսիպի՝ Խլեստակովի ծառայի, կերպարը։ Մի կողմից, նրա մեջ արտացոլվել են հասարակ ռուս մարդու բազմաթիվ լավ գծերը՝ նա անշուշտ ավելի խելացի է, քան իր տերը, և ընդհանրապես լավ «դիմագետ է» ու հոգեբան (բավական է վերընթերցել Օսիպի զրույցը քաղաքագլխի ու նրա ընտանիքի հետ)։ Բայց նա ևս արդեն բարոյազրկվել է՝ արտոնյալ ծառայի իր դրության պատճառով, ու, դրա համար էլ, ինչպես Գոգոլն է գրում հեղինակային նշումներում, նա «լուռ խաբեբա» է և դրա հետ էլ պաշտում է քաղցր բարք ու վարմունքը» (բավական է հիշել նրա առաջին մենախոսությունը)։ Նա ամենից առաջ հետաքրքրվում է արդյոք իրենց սենյակը պահետի ելք ունի, թե՝ ոչ, նա շատ արագ գլխի է ընկնում, թե բանն ինչ է ու ճշտորեն զգում, երբ պետք է հեռանալ։

Գոգոլն անշուշտ հրաժարվել է պիեսի մեջ արատը հավասարակշռող գրական հերոս կամ հերոսներ մտցնելուց, մի բան, որը նախագոգոլյան գրամատուրգիայի պարտադիր պայմանն էր։ Այգպիսի հերոսի մուտքը կնշանակեր բացասական գործող անձերի անձնական մեղքի չափազանց սրում, որը չէր մտնում հեղինակի խնդրի մեջ, քանի որ մանրացնում էր նրա մտահղացումը։

Ամենաատարածված հասարակ անունն է վաստակել գործող անձերից այն, որի հայտնվելն իսկ պիեսում արդեն նոր խոսք էր գրամատուրգիայի մեջ։ Խոսքը Խլեստակովի մասին է։

Մի կողմից, «նշանավոր գեմքեր», կարևոր ատիճանավորի գերում նա զարձել է պիեսի շարժիչ ուժը, նա կատարում է (և պետք է ասել՝ մեծ նմանազոլությամբ) ստախոսի ռեիզորի պարտականություն, բայց նա ռեիզոր չէ, նա կարծեցյալ ռեիզոր է։ Եվ քանի որ այդպես է, նշանակում է, նա սրիկա է, խաբեբա, բայց նաև կարծեցյալ խաբեբա է։ Խաբեբան, որպես ինտրիգի շարժիչ ուժ, գրականության մեջ զարավոր ավանդույթ է ունեցել, սակայն «Ռևիզորում» այն վերիմաստավորվել է. Խլեստակովն ամենևին չի էլ փորձում խաբել չինովնիկներին, և չէր էլ կարողանա խաբել, եթե նույնիսկ ուզեր։ Այդ գերտերի աչքերը մթագնած վախն է, որ ստիպել է փորձված սրիկա քաղաքագլխին ու նրա ոչ պակաս փորձված գործակիցներին թեթևամիտ ֆանֆարոնի յոթաքանչյուր արատերը մեկնաբանել որպես խոր ու նրբին խաղ և գնալով ավելի ու ավելի հավատալ իրենց պիղծ հոգու հորինած պատրանքին։ Մյուս կողմից, Խլեստակովը ստում է արտասովոր համոզչականությամբ հենց այն պատճառով, որ դա կեսխամաճածված սուտ չէ, այլ ի՛ զրվիգացիա, որին ինքն էլ է այդ պահին հավատում, նրան ոգևորում է փայլելու, մարդկանց աչքերին թոզ

փչելու հնարավորությունը և նա օգտագործում է դրանք որպես ինքնահաստատման միջոց։

Ինչպես Գոգոլի մյուս հերոսները, Խլեստակովը ևս «չի կորցրել իր մարդկային կերպարանքը», նա կենդանի մարդ է։ Այո, նա չափազանց փուլ մի պարծենկոտ է, քեփևսոլիկ, նա «մտքի արտասովոր քեփևություն» ունի (նույնպես քևավոր խոսք է), բայց, հավանաբար, ծառայության մեջ այնքան էլ բախտավոր չի եղել, և ցանկանում է իրեն մարդ զգալ, իսկ ցարական Ռուսաստանում դրա իրավունքը միայն «նշանավոր դեմքերն» ունեին։ Հենց դրա համար էլ նա այնպես համոզիչ կերպով ներկայացնում է կարևոր աստիճանավորին։ Այդ ենթատեքստը մեծ խորաթափանցությամբ բացահայտել է հենց ինքը՝ Խլեստակովին ստեղծողը, այն ծանուցման մեջ, որն ուղղված է նրանց, «ովքեր կցանկանային խաղալ «Ռևիզորը» ինչպես հարկն է». «Ինքը հաճախակի շշմեցված լինելով, նա պետք է վարպետորեն ներկայացնի շշմոց ասածը»։

Խլեստակովի մեջ, ասես մի ոսպնյակում, հավաքվել է այն ամեն մանրը, չնչինը, սնապարծը, որ ծնել էր Նիկոլաևյան Ռուսաստանը։ Խլեստակովի երազները, փուլ ու ցնորական, որ մի պահ կարծես իրականություն դարձան, ողջ չինովնիկական միջավայրի երազներն են, միջավայր, ուր տեղի է ունենում պիեսի գործողությունը։ Եվ պատահական չէ, որ նույնիսկ քաջաքաղաքացիությունը, որը քվում է, քե բոլոր կողմերից Խլեստակովի անատագոնիստն է, գեներալության ու Պետերբուրգի մասին իր երազներում գրեթե կրկնում է նրան։ Այսպես Խլեստակովի կերպարի հավաքականությունը հասցվում է բարձրագույն աստիճանի՝ ծնվում է խլեստակովականության հասկացությունը, որը գոգոլյան դարաշրջանից շատ ավելի երկար ապրեց։ Խլեստակովի կերպարի մեջ ամփոփված ընդհանրացման չափն արտահայտում էր ինքը՝ Գոգոլը. «Ծ՛վ, ճարպիկ գավարիական ազգի կարող է երբեմն Խլեստակով լինել, և՛ պետական գործիչը կարող է ևը քեմի՞ Խլեստակով լինել, և՛ մեզ նմանը, մեղավոր մի գրող կարող է մեկ էլ Խլեստակով լինել»։

Այս միտքը, կարծես ձայնակցելով միմյանց, կրկնում են XIX դարի նշանավոր շատ մարդիկ։ Ծ՛վ Խլեստակովը, և՛ խլեստակովականությունը քևավոր խոսքեր են գտել, և դրանք գործածում են նույնիսկ նրանք, ովքեր չգիտեն դրանց սկզբնաղբյուրը և չեն կարողացել Գոգոլի կատակերգությունից։ Քեև, այդպիսի մարդ գտնել, երևի, պարզապես հնարավոր չէ։

* * *

«Ռևիզորը» ընթերցողների բուռն ռեակցիա առաջացրեց Ռուսաստանում։ Սակայն գա ոչ մի համեմատություն չէր կարող ունենալ այն փոթորիկի հետ, որը բարձրացավ «Մեռած հոգիների» պոեմի առաջին մասի հրատարակությունից։

«Մեռած հոգիների» առաջին հատորի վրա Ն. Վ. Գոգոլն աշխատել է հինգ տարի և ավարտել 1840 թ., բայց գրաքննչական արգելքների պատ-

ճառով պոեմը լույս է տեսել միայն 1842 թ.։ Թեև պոեմը հրատարակվել էր փոփոխություններով՝ կատարված գրաքննության պահանջներով (մասնավորապես Ն. Վ. Գոգոլն ստիպված էր զգալիորեն քուլացնել «Պատմվածք կապիտան Կոպեյկինի մասին» հատվածի երգիծական ուղղվածությունը, որ «ցնցեց ամբողջ Ռուսաստանը» (Գերցեն)։

Մեծ էր պոեմի երգիծական պոտենցիալը։ Այդ ստեղծագործությունը քննադատական ռեալիզմի բարձրագույն նվաճումներից մեկը դարձավ։ Բնական է, որ ստեղծագործությունը կանգնեց գրական պայքարի ուղիղ էպիկենտրոնում։

Անաարբեր մարդիկ չկային։ Հասարակության առաջադեմ մասը պոեմը դիմավորեց հիացմունքով, իսկ ռեակցիոն մասը՝ վրդովմունքով. «Պոեմի տարբեր կերպարներում նա ճանաչեց իրեն»,— գրում էր ժամանակակիցներից մեկը (Ա. Տ. Ակսակովը)։

«Մեռած հոգիների» ու «Ռևիզորի» միջև ընդհանուր շատ բան կա։ Ընդհանուր շատ բան կա պատկերման նյութի կամ, ավելի ճիշտ, մերկացման նյութի մեջ։ Երկու դեպքում էլ մեր առջև սոցիալական մի ամբողջ կոլեկտիվ է, որն իր հերթին փոքրապատկերում կրկնում է ավելի խոշոր ընդգրկման հասարակական-քաղաքական միավորներին, երկու դեպքում էլ մեր առջև առաջինում կանգնում են չինովնիկներ ու կալվածատերեր, երկրորդում՝ կալվածատերեր ու չինովնիկներ։ Ծ՛վ մեկում, և՛ մյուսում բավականաչափ ինքնամփոփ շրջան է, և՛ մեկում, և՛ մյուսում «հանգստության վրդովիչը» դրսից ժամանած մարդ է։ Իհարկե, պետք չէ չափազանցնել այդ նմանությունը. ստեղծագործությունները տարբեր են և՛ ժանրով, և՛ ընդգրկումով։ Սակայն նույնիսկ այնքան աչքի ընկնող իրավիճակի արտաքին նմանությունը, որքան քաղաքապետի աշխարհի և երևելիների աշխարհի նմանությունը։ Ալեստակովին չինովնիկները ևսիզորի տեղ են դնում, Չիչիկովը նույնպես ենթադրությունների հարուստ սնունդ է տալիս. նրան պատրաստ են դնել և՛ զգեստափոխված Նապոլեոնի տեղ, և՛ դրամանենգի, և՛ ավազակի, և՛ գեներալ-նահանգապետական գրասենյակի չինովնիկի, և՛ կապիտան Կոպեյկինի տեղ։ «Մեռած հոգիներում» կա մի գործող անձ, որը «մտքի արտասովոր թեթևությամբ» շատ նման է Խլեստակովին. դա Նոզդրյովն է։

Սակայն «Մեռած հոգիները» ռուսական կյանքի շատ ավելի լիակատար և, որ ավելի կարևոր է, շատ ավելի խոր երգիծական հանրագիտարանն էր Ա. Ս. Պուշկինը, որի հետմահ Գոգոլը հասցրել էր կարդալ առաջին խմբագրման առաջին մի քանի գլուխները, հենց իր՝ Գոգոլի հիշողությունների հիման վրա, սկզբում, սովորականի պես, ծիծաղում էր, իսկ հետո ավելց աստիճանաբար ավելի ու ավելի մռայլվել, մռայլվել, ու վերջապես բոլորովին խոժոռվեց։ Իսկ երբ ընթերցումն ավարտվեց, նա թախծոտ ձայնով արտասանեց. «Աստվա՜ծ իմ, ինչ տխուր է մեր Ռուսաստանը»։

«Մեռած հոգիները» կարծես բաղկացած են երեք համակենտրոն շրջանակից՝ կալվածատերեր, չինովնիկներ և ինքը՝ Չիչիկովը, որպես ծնունդ առնող բուրժուական գործարարի տիպ։ Եվ Գոգոլն այդ բոլոր երեք հասարակական ուժերին էլ երգիծական հզոր հարվածներ հասցրեց։

Գոգոլյան խարազանի գլխավոր թիրախը զարձավ իր գարն ապրած, հասարակական զարգացման արգելակի վերածված կալվածատիրական, ճորտատիրական սարքերը։ Մեր աչքով անցնում է կալվածատերերի ջարանը, և այդ պատկերասրահի յուրաքանչյուր նոր նմուշը բարոյական անկման, հոգևոր ազգասպանման մի նոր աստիճան է այն մարդկանց, որոնց ձեռքում գանվում է հարյուրավոր ու հազարավոր մարդկային հոգիների՝ ամկրտված անմահական», և վերջին հաշվով՝ պետության ճակատագիրը։ Այդ պատկերասրահն ակսվում է համեմատաբար անվնաս Մանիլովով։ Նրան հետևում են զգերանապլուխ Կորոբոչկան, չվայր Քղհամով, ստախոս ու ընկճանրապես ապատամական մարդ» Նոզդրյովը (նա շարունակ ընկնում էր մի որևէ պատմության մեջ), կուլակ ու ռեստոշ արշ, խորամանկ խաբեբա Սոբակևիչը, արը, սակայն, միայն իրեն էր կարգին մարդ համարում («Բոլորը քրիստոսավաճառներ են։ Մեկը մեկայն կարգին մարդ է այնտեղ. դատախազը, բայց նա էլ ճիշտն ասենք, խոզ է»), և վերջապես որպես մարդկային անկման վերջնակետ՝ իր վայրենացման մեջ սոսկալի ու գրեթե խորհրդանշական Պլյուշկինի կերպարը։

Կալվածատերերի պատկերասրահի այս բոլոր նմուշները հասարակ անուն են դարձել։

Առաջին հայացքից պոեմը «Մեռած հոգիներ» էր կոչվում այն պատճառով, որ այդպես էին անվանվում այն մեռած ճորտ գյուղացիները, որոնք դեռևս չէին հանվել համապատասխան ցուցակներից։ Սակայն պատմության ամբողջ ընթացքում Գոգոլը բերում է այն եզրակացությանը, որ «Մեռած հոգիներըե ոչ թե մեռած գյուղացիներն են, այլ ամենից առաջ աշխարհն աննպատակ կերպով ծանրաբեռնող ճորտատերերը՝ ցարական իրավակարգի հենարանը։ Գոգոլի ժամանակակիցների կողմից պոեմի այս ընդհանուր ընկալումը շատ ճիշտ կերպով արտացոլված է երիտասարդ Գերցենի օրագրական հայտնի գրառման մեջ. «Մեռած հոգիներ» — այս վերնագիրն ինքնին իր մեջ կրում է ինչ-որ սարսափազդու մի բան։ Նվ այլ կերպ նա չէր էլ կարող անվանել. ոչ թե ուխտականմեռած հոգիները, այլ բոլոր այդ Նոզդրյովները, Մանիլովները և tütti quanti-ները են մեռած հոգիները, և մենք ամեն քայլափոխի հանդիպում ենք նրանց»։

Գոգոլի մյուս թշնամին, որի հետ նա մաքրեց հին հաշիվները իր նոր ստեղծագործության մեջ, քարտկան Ռուսաստանի բյուրոկրատական չինովնիկական ապարատն էր։

Մինչ Գոգոլը, ոչ ոք ռուսական գեղարվեստի մասին այդպիսի լիակատար պարզությամբ անատոմիական դասընթաց չէր կարդացել։ Քաջքերը չուրթերին նա անողոքաբար թափանցում է լիովնիկական անմաքուր, ոտնահալ հոգու ամենանվիրական ծալքերը։ Գերցենն այս խոսքերն ասել է ոՒնիզորի». և «Մեռած հոգիների մասին, բայց, խե՛ղ խոսք, արձակ ստեղծագործությունը դրա համար զգալիորեն ավելի լայն հնարավորություններ էր տալիս, քան պիեսը։ «Մեռած հոգիներում», թերևս, չի մեջբեր չինովնիկական ապարատի գործունեության և ոչ մի ճեղք, որը դրսից

լաւատեղեր իր՝ արտաքինից բարեհոգի, բայց սպանող ծաղրի անողոք լուսով։

Ահա, օրինակ, կաշառք ընդունելու անատոմիան. չինովնիկ Իվան Անտոնովիչը ձեռացնում է, քե իբր ամբողջովին խորասուզված է աշխատանքի մեջ, և նույնիսկ չի լսում իրեն ուղղված հարցը, քեև արդեն հասցրել է աննկատ կերպով զննել խնդրատուին։ Հոյակապ է ակնարկների այն սիստեմը, որից հետո կողմերը համաձայնության են գալիս։ Դրանից հետո «Չիչիկովը գրպանից հանեց թղթադրամը, գրեց այն Անտոնովիչի առջև, որը բոլորովին չնկատեց այդ և իսկույն գրքով ծածկեց։ Չիչիկովն այն է՝ ուզում էր ցույց տալ նրան այդ, սակայն Իվան Անտոնովիչը գլխի շարժումով հասկացրեց, որ հարկավոր չէ ցույց տալ։

Իսկ ահա մի քանի փաստեր Չիչիկովի չինովնիկական կարիերայից, որը եղել է մեր հովերիս ժամանակներում, երբ կաշառակերությունը իբր հետապնդվում էր։ «Գործը ահա քե ինչպես էր կազմակերպված. հենց որ գալիս էր խնդրատուն և ձեռքը գրպանն էր տանում, որ այնտեղից հանի գեյտոնի հանձնարարական նամակները իշխան Հովանոկու ստորագրությամբ (այսինքն՝ թղթադրամները. իշխան Հովանոկին ֆինանսների մինիստրն էր — Կ. Մ.), «ո՛չ, ո՛չ»,— ասում էր նա ժպտալով և բռնելով նրա ձեռքերը. «Դուք կարծում եք որ ե՛ս... ո՛չ, ո՛չ։ Սա մեր պարտականությունն է. մեր պաշտոնն է, մենք պարտավոր ենք առանց որևէ վարձատրության կատարել։ Այդ կողմից արդեն հանգիստ եղեք. հենց վազը ամեն ինչ արված կլինի»։ Դրանից հետո գործն այնպես էր ձգձգվում, որ խնդրատուն տեղեկություններ էր հավաքում և պարզում, որ պետք է գրագիրներին տալ, և շատ՝ նրանք կփոխանցեն ավելի վեր՝ չինովնիկներին»։ «Փոխում է ճակատին անհասկացող խնդրատուն և սաստիկ հայհոյում նոր կարգերն էլ, կաշառքների հետապնդումն էլ, պաշտոնյաների քաղաքավարի, ազնվացած վարվեցողությունն էլ»։

Ծամանակին քաղաքագլուխը պնդում էր, որ բոլորն են կաշառք վերցնում, որ «այդ արդեն աստված է սահմանել»։ Դրա համար էլ հանցագործության մեջ բռնված չինովնիկն իրեն անկեղծորեն համարում էր արդարության համար տուժած մարդ. «Ինչո՞ւ համար ես տուժեցի, ինչո՞ւ փորձանքն իմ գլխին եկավ. ո՞վ է հիմա բերանը բաց նստում իր պաշտոնի մեջ. բոլորը շահում են։ Ո՛չ ոքի են չեմ դժբախտացրել, այսինքն՝ չեմ կողոպտել, ո՛չ ոքի մուրացկան չեմ դարձրել, օգտվել եմ ավելցուկներից, վերցրել եմ այնտեղ, ուր ամենքը կվերցնեին, չօգտվեի ես, ուրիշները կօգտվեին։ Ինչո՞ւ համար՝ ուրիշները երշանիկ կյանք են վարում, և ինչո՞ւ համար ես պետք է կորչեմ որդի պես։ Ով ի՞նչ եմ ես հիմա։ Ինչացո՞ւ եմ ես։ Ինչ աչքերով հիմա ես պետք է նայեմ ընտանիքի յուրաքանչյուր պատվարժան հոր աչքերին։ Ինչպե՞ս խղճի խայթ չզգամ, գիտենալով, որ ղուռ տեղը բեռ եմ եղել երկրի վրա, և ի՞նչ գտանեն հետո իմ զավակները։ Ահա՛, կառնեն, մեր անատուն հայրը մեզ ոչ մի կարողություն չթողեց»։

«Հաստատակամության բարեմիտ անդամը» այդ այլասերված արամաբանությունը, ընդ որում, ոչ թե կեզծ բարեպաշտության, այլ անկեզծ հա-

մոլմունքի տրամաբանությունը, որտեղ այն ծնած սխտեմի մահվան դատավճիռն էր։ Նախ և առաջ այն պատճառով, որ օբյեկտիվորեն այն ցույց էր տալիս, որ մաքրման վերանորոգմամբ գործը գլուխ չէր գա, պետք էր հիմնական վերանորոգում։

Ցարական Ռուսաստանի վարչական ապարատը Գոգոլին ներկայանում էր այնպիսի փտած վիճակում, որ նույնիսկ ազնիվ պետը, եթե հանկարծ այդպիսին հայտնվեր, նրա մեջ ոչինչ չէր կարող փոխել։

Եղրակացությունները թելադրվում էին ինքնաբերաբար, և ընթերցողներն ու՞մ էին այդ եղրակացությունները։

Դիշատիչների բուրգը պատկում է նոր ժամանակի հերոսը՝ Պավել Պետրովիչ Չիչիկովը։

Պատահական չէ, որ Գոգոլն այդպիսի մանրամասնությամբ բացահայտում է Չիչիկովին և՛ կալվածատեր ազնվականության, և՛ չինովնիկության հետ ունեցած շփումների միջոցով ու տալիս, ընդ որում հենց վերջում, որպես «Մեռած հոգիների» պատկերասրահի եզրափակում, նրա մանրամասն կենսագրությունը։ Ծորտատերերի ու չինովնիկների մասին նա կարող էր ըստ էության կրկնել նույնը, ինչը ժամանակին ասել էր «Ռևիզորում»։ Այնինչ պատմական այդ նոր տիպը մանրամասն վերլուծություն ու լիակատար ծագումնաբանություն էր պահանջում։ Ավելին, ցույց տալով գավառական ճահճի մեջ բորբոսնած ծորտատիրական հրեշների նկատմամբ ճարպիկ, եռանդուն, ձեռներեց «նոր մարդու» գերազանցությունը, Գոգոլը մեղադրական դատավճիռ կայացրեց և՛ նրանց, և՛ նրանց փոխարինելու եկողներին։ Չիչիկովի կերպարն անմիջապես հասարակ անուն դարձավ։

Գերցենը գրեց, որ «Մեռած հոգիները» զգարմանալի գիրք է, դառը, բայց ոչ անհույս նախատինք ժամանակակից Ռուսիային։

Պոեմի այդ ընդհանուր լավատեսական տրամադրվածության մեջ կարևոր դեր է խաղում միջանցիկ եղանակով գրված «Պատմվածք կապիտան Կոպեյկինի մասին» հատվածը, որը կարծես թե քիչ բանով է կապված բուն սյուժեի հետ։ Գրաքննությունը բաց չէր թողնում «Պատմվածքը», բայց Գոգոլը աներևակայելի համառությամբ պաշտպանում էր այն (կան պատմվածքի երեք խմբագրություններ) և, այնուամենայնիվ, հասավ իր նպատակին, թեև ստիպված էր խիստ թուլացնել նրա մերկացնող պաթոսը։ Մյուս կողմից Կոպեյկինի կերպարը (որն, ի դեպ, ծագում է ժողովրդական երգերից) բերում է, թեկուզև թուլացիկ կերպով, հայրենիքին ծառայելու թեման, հերոսության ու մարդկային արժանապատվության թեման, որն այնպես անհագի կերպով ասնահարվում էր «Մեռած հոգիների» կողմից։ Վերջապես, Կոպեյկինի հետ պոեմ էր մուտք գործում ափոքր մարդը», որոշ խմաատով, ժողովրդից եկած մարդը։

Ըստ էության «Մեռած հոգիներում» ժողովուրդը հավաքական ու միասին անցողակի է հանդես գալիս, բայց այդ epizodները շատ կարևոր են. դրանց հետ են կապված ստեղծագործության բնաբարական չքերը, նրա լավատեսական տրամադրությունը և հայրենասիրական պաթոսը։

Գոգոլը չի դադարում ընդգծել ճորտ վարպետների քաշութիւնը, համարձակութիւնը, շնորհալիութիւնը, վարպետներ, որոնց վաճառում ու գնում են ինչպես իրը (հմմտ. օրինակ, կոշկակար Տելյատնիկովի մասին ասվածը. «Ինչ բան բղով մին կծակի՝ դուրս էր գալիս սապոգ, մի սապոգ դուրս կբերի որ, ասա՝ շնորհակալ եմ»։ Այս բնութագրումները նախապատրաստում և հիմնավորում են ռուս ժողովրդի մասին քնարական շեղումները, որոնք միասին վերցրած ստեղծում են Ռուսաստանի՝ ժողովրդական Ռուսաստանի քնարական պատկերը։

Իր արտահայտչականութիւնամբ ու պատկերաւոր ուժով հրաշալի է «Քուչուն-տրոյկայի» առաջին հատորը եզրափակող նկարագրութիւնը. «Է՛յ, տրոյկա, քուչո՛ւն տրոյկա, ո՞վ հնարեց քեզ, երեւում է ժիր ժողովրդի մէջ միայն կարող էիր դու ծնվել, ա՛յն երկրում, որ չի սիրում կատակել, այլ հարթ հավասար մեկնվել է կես-աշխարհքով մին, դե գնա՛ ու հաշվիր վերստերը, մինչև աչքերդ շաղվենև Եվ քվում է՝ ճանապարհորդական մի դժվարին գործից չէ, երկաթե պտուտակով չի բռնված, այլ հազիվ մի կացնով ու դուրով սարքել է քեզ յարոսլավլցի ժիր մուժիկը։ Ջիչիկովի տրոյկայի նկարագրութիւնից Ն. Վ. Գոգոլն աստիճանարար աննկատելիորեն անցնում է տրոյկային՝ ընդհանրապես, և այնուհետև այդ «քուչուն-տրոյկան» ընթերցողի համար նույնանում է Ռուսաստանի հետ։

«Ռուսիա-տրոյկան» այ սովորական ու տպավորիչ կերպար է, մի կերպար, որը բնականորեն ներգծվում է ստեղծագործութեան մեջ, սակայն, ընդամէնը գրան, խիստ հակադրութեան է կազմում «Մեռած հոգիների» աշխարհի հետ։ Ն. Վ. Գոգոլը հավատում է Ռուսաստանի երջանիկ ճակատագրին, հավատում է ռուս ժողովրդի ուժերի անսպառ հարստութեանը, նրա բարձր կոչմանը։ Այդ հավատն առանձնապես հատուկ իմաստ ունի այն պատճառով, որ մանրամասն կերպով մեր բերած լայներն հայտնի քնարական շեղումն իրենով եզրափակում է պոեմի առաջին հատորը, որտեղ ընթերցողների առջև կանգնում են Ջիչիկովը, Մանիլովը, Կորոբոչկան, Սոբակևիչը, Պլյուշկինը, Նոզդրյովը, քաղաքային չինովնիկների աշխարհը, երևելիների աշխարհը, ուզղակի հաճելի տիկիններից և բոլոր անախտներից հաճելի տիկիննների աշխարհը։ Եվ, չնայած դրան, չկա, անցման մտացածինութեան զգացում. առաջին հատորի վերջում լուսավոր ու մաքուր այդ նոտան ներդաշնակորեն ավարտում է այնո Օրգանական այդ միահյուսման պատճառն այն է, որ Ն. Վ. Գոգոլի խարազանող երգիծանքը արմատավորված է ոչ թե այն ամենի ժխտման վրա, ինչը որ ոտրատական է, այլ ընդհակառակը, հիմնվում է իր ժողովրդի, իր երկրի ծկնամամբ, այն ամենի նկատմամբ, ինչը որ ռուսական է, գրողի ունեցած չերմ սիրո վրա։ Ն. Վ. Գոգոլի համոզմամբ, հենց ժողովրդական, ռուսական էությունն է, որ պետք է Ռուսաստանը դուրս բերի այն անուրախ վիճակից, որի մեջ նա ընկել էր։

«Մեռած հոգիների» երկրորդ հատորում Ն. Վ. Գոգոլը փորձեց տալ իր ժամանակի հասարակության իդեալական պատկերը, փորձեց այն

ներկայացնել այնպիսին, ինչպիսին իր կարծիքով պետք է լիներ այդ հասարակությունը։ Գոգոլն ուզում էր միավորել այն միավորելին, իդեալական հարաբերություններ ցույց տալ ամենևին ոչ իդեալական հասարակության մեջ։ Հենց դրա համար էլ, չնայած հանճարեղ գրողի հակայական վարպետությանը, իդեալական կալվածատերը կամ նույնիսկ իդեալական վարձակալի կերպարները համոզիչ չստացվեցին, և չէին էլ կարող ստացվել օբյեկտիվ պատճառներով։

Հեղինակային դիրքորոշման այդպիսի էական փոփոխությունները առաջացել էին գրողի աշխարհայացքից։ Կյանքի մայրամուտին Ն. Վ. Գոգոլը ծանր հիվանդ էր և ընկել էր կրոնական-միստիկական, ռեակցիոն տրամադրությունների ազդեցության տակ։ Այդ տրամադրություններն արտացոլում գտան, մասնավորապես, «Ընտիր էջեր բարեկամների հետ ունեցած նամակագրությունից» գրքում (1847 թ.)։ Այդ գիրքը կազմվել էր, երբ գրողը գտնվում էր Հայրենիքից հեռու, և հնարավոր է, որ նա լրիվ չէր պատկերացրել, որ դա կարող է այդպիսի բացասական ձեր խաղալ Ռուսաստանի հասարակական պայքարում։ Վ. Գ. Բելինսկին Գոգոլին գրած իր նամակում զայրագին պատասխան տվեց նրան։ Ռուսաստանում բժանված այդ նամակի պայծուցիկ ուժն այնքան հզոր էր, որ ցարական կառավարությունը դժվարորեն պատժում էր այն ընթերցողներին ու տարածողներին։ Հայտնի է, օրինակ, որ Ֆ. Մ. Դոստոևսկին այդ նամակը կարդալու համար մահապատժի էր գատապարտվել։

«Մեռած հոգիների» երկրորդ հատորը մշակույթի պատմության մեջ մտավ իբրև մեծ գրողի ոգու ողբերգության։ Գոգոլն այն գրել է մի քանի տարվա ընթացքում, և 1845 թ. այրել պատրաստի ձեռագիրը։ Ուժեղ ցնցումից հետո, որի պատճառը «Ընտիր էջեր բարեկամների հետ ունեցած նամակագրությունից» գրքի առաջացրած հասարակական արձագանքն էր, Գոգոլն արտասահմանից վերադարձավ Ռուսաստան, որպեսզի անմիջականորեն շփվի հայրենիքի հետ ու նորից սկսի աշխատել երկրորդ հատորի վրա։ Այդ աշխատանքը, որ իսկապես անձնվեր էր, որովհետև գրողի հոգեկան և ֆիզիկական ուժերն օր-օրի հալվում էին, ավարտվեց 1852 թ.։ Սակայն այդ տարբերակը ևս չբավարարեց Գոգոլին։ 1852 թ. փետրվարի 12-ին նա նորից այրեց պատրաստի ձեռագիրը։ Մեզ են հասել (և այն էլ պատահաբար) երկրորդ հատորի քեղամաններ հինգ տեսակեր պլուխներ։

Ինն օր անց Գոգոլը մահացավ։

Գրականության մեջ հաճախ կարծիք է հայտնվել, որ ձեռագրի այրումը կրոնական մոլուցքի ու ուշեղի մթագնման արդյունք է, երբ Գոգոլը, գտնվելով իրեն շրջապատած կրոնական մոլեռանդների ազդեցության տակ, գրողի իր աշխատանքի մեջ սոսկալի մեղք է տեսնել։ Սակայն կան Գոգոլի բարեկամների բազմաթիվ վկայություններն այն մասին, որ գրողին երկրորդ հատորը չի բավարարել, որովհետև այն առաջինից քիչ է ստացվել։

Վերջին ժամանակներս սկսել են կարծիք հայտնել, որ Գոգոլը երկ-

րորդ հատորն այրել է ոչ թե մթագնման, այլ ընդհակառակը, մտքի պայծառացման պահին, ըմբռնելով իր մոլորությունների ողջ կործանարարությունը։ Սակայն այս հիպոթեզին ևս հակասում են ոչ քիչ թվով փաստեր ու վկայություններ։ Պարզ է մի բան. հիվանդությունը, հոգեկան ճգնաժամը, մոտեցող վախճանի նախազգացումը գրողին դրդել են ոչնչացնել ձեռագիրը, իսկ կործանումը այն գործի, որին ընդհանուր առմամբ տրվել էր կյանքի տասը տարին, մոտեցրեց և դրա ստեղծողի վախճանը։

Մեզ հասած գլուխները նույնպես չափազանց հակասական են։ Կոստանժոգլոյի և Մուրազովի անկենդան սխեմաները հարևանություն են անում գոդոլյան այնպիսի լիարյուն գործող անձերի հետ, ինչպիսիք են Պետուխը կամ Խլոբուևը։ Վերջապես, արժե հիշել Չիչիկովի բանտ ընկնելու առիթը և կհասկանանք, թե ինչու այնպիսի խորաթափանց ու գեղագիտական զգայուն միտք ունեցող մարդն, ինչպիսին Չերնիշևսկին էր, դտնում էր, որ «Պահպանված հատվածներում չափազանց շատ են այնպիսի էջեր, որոնք պետք է դասվեն այն լավագույնների շարքին, որ երբևէ տվել է մեզ Գոգոլը»։

Գոգոլն ստեղծում է իր աշխարհը՝ անակնկալ ու գրոտեսկային մի աշխարհ, «մեռած հոգիներին» առաջին իսկ էջերից մի ինչ-որ անորսալի տարօրինակություն, մանրամասների, և ոչ միայն դրանց մեջ եղած, անսովորություն, ապշեցնում է մեզ։ Բավական է հիշել, թե ինչպես են արձագանքում մուժիկները Չիչիկովի մուտքը քաղաք. «Տեսնո՞ւմ ես»,— ասաց մեկը մյուսին, «մտիկ էն ակին. խելքդ ինչ է կտրում, էդ ակը տեղն եկած տեղը մինչև Մոսկվա կհասնի՞, թե՞ չի հասնիլ։ — «կհասնի»,— պատասխանեց մյուսը։ «Իսկ կազան հո՝ իմ խելքով, վայ թե չհասնի»։ «Կհազան չի հասնիլ»,— պատասխանեց մյուսը։ Մուժիկները ոչ միայն ուշադրություն չեն դարձնում իր՝ Չիչիկովի վրա, այլ նույնիսկ ուշադրության չեն արժանացնում նրա սայլակառքը. հենց միայն անիվն է գտնում դրանց քննարկման առարկա, ընդ որում, այնպես, կարծես թե այն գոյություն ունի ինքնին, սայլակառքից. առավել ևս Չիչիկովից անկախ։ Այս բանը խիստ բնորոշ է Գոգոլին. նա ամբողջ ժամանակ բորբոքում է ընթերցողին, հանգիստ չի տալիս նրան, որովհետև տեքստի ֆոնի վարմունքի ու իրավիճակների տարամարանության այդպիսի տարօրինակությունները բորբոքուն են և հաճախ անբացատրելի։ Գոգոլի այս գործը հագեցած է այդպիսի տարրերով, ընդ որում, նա տեքստը միայն ալոգիզմներով չի հագեցնում, այլ, լինելով նուրբ ճաշակ, այդ տարօրինակությունը մտցնում է լեզվի մեջ ու գրում՝ «ինչպես քնում են միայն այն բախտավորները, որոնք չգիտեն, թե ինչ է ո՛չ հեմորոյը, ո՛չ լուն, ո՛չ էլ չափազանց ուժեղ մտավոր կարողություններ»։

Գոգոլն ընթերցողին պահում է չթուլացող լարվածության մեջ, թույլ չի տալիս սահել իրերի ու բառերի մակերեսով, «ընտելանալ» գրանց, բացառում է ընկալման ավտոմատիզմը։

* * *

Ն. Վ. Գոգոլի ստեղծագործությունների չխամրող ուժը նրա մեջ է, որ մեծ գրողի ստեղծած կերպարները ժամանակի ընթացքում չեն խուճանում։ Գոգոլյան հանճարի հսկայական ընդհանրացնող ուժի շնորհիվ այդ կերպարներում համամարդկային գծեր են արտացոլվել։ Ով քանի դեռ լուսավորի հետ միասին աշխարհում գոյություն կունենա խավարը, քանի դեռ գոյություն կունենա մարդը, Գոգոլի գրական ժառանգությունը չի կորցնի իր թարմությունը։

Կ. ՄԿՐՏՉՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մեռած հոգիներ

Հատոր առաջին, թարգմանությամբ Դ. Դեմիրճյանի 5

Հատոր երկրորդ, թարգմանությամբ Ա. Փալանճյանի 299

Տարաս Բուլբա, թարգմանությամբ Ա. Բակունցի 450

Շինելը, թարգմանությամբ Հ. Մազմանյանի 583

Ռևիզոր, թարգմանությամբ Լ. Քալանթարի 626

Վերջաբանը գործին Կ. Լ. Մկրտչյան 728

Նիկոլայ Վասիլևիչ Գոգոլ

ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

Николай Васильевич Гоголь

ИЗБРАННЫЕ ПРОИЗВЕДЕНИЯ

(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван, 1982

Խմբագիրներ՝ Գ. Գ. Սարգսյան, Է. Բ. Թոռոսյան
Նկարիչ՝ Ռ. Ս. Ջուլճակյան
Գեղ. խմբագիր՝ Վ. Ա. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Տ. Կովկասյան
Վերատուգող սրբագրիչներ՝ Մ. Գ. Ստեփանյան,
Ն. Վ. Ազատյան

ИВ 4460

Հանձնված է շարվածքի 4. 08. 82։ Ստորագրված է տպագրության 4. 11. 82։ Ձևաչափ 84×108 1/32։ Թուղթ՝ տպագր. № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 39,48 պայմ. տպ. մամ., 34,8 հրատ. մամ.։ Տպաքանակ 50 000։ Պատվեր 2021։ Գինը 3 ռ. 10 կ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան 65։

Типография № 1. Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван, ул. Алавердяна, 65.